ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ



ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
XIV ՀԱՏՈՐԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ
ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԲԱՐՆԵՐ
ՄԻՔԱՑԵԼ ԵՎ ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆՆԵՐԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՏԱՍՆՋՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ԱՐՎԵՍՏԻ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՏՈՐ ՏԱՍՆՋՈՐՍԵՐՈՐԴ

ՆԱՄԱԿՆԵՐ

(1924-1957)

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 2021

ՀՏԴ 821.19-6 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)
Ի 755

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ
Ա. Վ. Իսահակյան (գլխավոր խմբագիր), Վ. Գ. Դևրիկյան, Վ. Ա. Կիրակոսյան, Ա. Լ. Մանուկյան, Է. Գ. Միլիտոնյան, Ա. Վ. Մուշեղյան, Ս. Պ. Մուրադյան

Բնագրերը հավաքապրեց և վերջաբանը գրեց
ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ

Բնագրերը հրատարակության պատրաստեց, ծանոթագրեց և
ցանկերը կազմեց ԼԱՈՒՐԱ ՎԻՐԱԲՅԱՆԸ

Հատորի խմբագիրներ՝
Վ. Գ. ԴԵՎՐԻԿՅԱՆ, Ա. Վ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Իսահակյան Ավետիք

Ի 755 Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով: Հատոր տասնչորսերորդ: Նամակներ (1924-1957)/ Ավ. Իսահակյան.– Եր.: «Էդիթ Պրինտ» հրատ., 2021, 1136 էջ:

ՀՏԴ 821.19-6 Իսահակյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-75-615-8

© «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2021
© Մ.ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ, 2021
© ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔ, 2021



ՆԱՄԱԿՆԵՐ

(1924–1957)

1924

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, 5 Հունվարի, Վենետիկ

Սիրելի պրն Հովհ. Ավագյան.

Մեծ ուրախությամբ կարդացի Ձեր նամակը. չնորհակալություն Ձեր անկեղծ գնահատության համար «Լիլիթի»[1] համար:

[Գրության] նամակիս հետ ուղարկում եմ այս փոքրիկ գրությունը՝ «Մի անմոռ. հայացք»[2] «Կոչնակի» համար. ցավում եմ, որ սրտիս ուզածի պես դեռ չեմ կարողացել նյութեր տալ «Կոչնակին». գրեթե մի տարի կա, զբաղված եմ մի վեպի (մեծ վեպ է) գրությամբ ու մշակումով, և ազատ ժամեր չեն մնում ուրիշ բաներ գրելու, թեև չա՛տ բան ունեմ դեռ ասելու, չա՛տ բան անմշակ, գրել-թողել եմ, այնպես որ երբ վեպս վերջացնեմ, հանկարծ մեկեն շատ բան պիտի լույս ընծայեմ:

Հանձնեցի պ. Ն. Պեչիկթաշլյանին[3] Ձեր նամակը. նա հիմա ավելի լավ գրության մեջ է, Մ. Ռաֆայելյան դպրոցում հսկիչի պաշտոն ստացավ. հացն ու սենյակը ապահով է:

Շնորհավորում եմ Ձեր «Նոր-Տարին» սրտագին բարեմաղթություններով:

Մնամ Ձեր անկեղծ
Ալեքսիք Իսահակյան

2. ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1924, 16 Հունվ<արի>, Վենետիկ

Սիրելի տիկին Վավա.

Շնորհակալությամբ և ուրախությամբ նստացա Ձեր նամակը. երևում է որ ոչ միայն դիտեք գրել, այլև չա՛տ լավ եք գրում. և Ձեր ասածի պես, բոլորովին լավ գրել պետք չէ, կիսատ գրածից ավելի կարելի է չա՛տ բան երևակայել. երազելու պատճառ է ստեղծվում[1]:

Շնորհակալություն Ձեր գովքի խոսքերի համար — գովասանական — Լիլիթի մասին. այո՛, չա՛տ լավ կլինի եթե Սարգիսը պատկերազարդեր, և բոլորովին համոզված եմ, որ չա՛տ չքնաղ կերպով պիտի նկարե, որովհետև Սարգիսը ահագին տաղանդ ունի. խնդրում եմ, ազատ ժամերը նվիրե Լիլիթին, ուղղակի ոսկով ու լույսով ու բոցերով պիտի նկարե այդ իսկական կնոջը, հոգի և մարմին այրող: Եվ միշտ երազ, միշտ կարոտ մնացող. ինչպես Դուք էիք գրել, որ փափագները լավ են, որ անկատար մնան:

Մենք լավ ենք, ես թեև ձանձրանում եմ այս ջրերի վրա, սակայն մի, գրեթե մի տարի պիտի կորսվիմ ու խեղդվիմ, և այս տարիս պիտի անցնի վայրկյանի չափ, եթե կես ճամբուն հանկարծ չմեռնիմ, քանի որ ինձ թվում է, թե վերջս մոտենում է. նախազգացում չհամարեք սա, ամեն տարի նույնն եմ զգում, բայց չեմ մեռնում:

Ցավում եմ, որ Վիեննայից հեռանում եք[2], որովհետև Վիեննա մոտիկ էր և միշտ հույս ունեի գալ՝ Ձեզ տեսնելու. եթե Փարիզ կամ Լոնդոն գնաք, ի՞նչպես գամ:

Գրում եք, որ ծովին կարոտցել եք. կիրակի օրը հրաշալի արև կար. գնացի ծովափ (Լիդո), չրջում էի ու Ձեզ հիշում. չէ որ Դուք թույլ տվիք որ ծով գնալուս Ձեզ հիշեմ, անշուշտ Ձեզ միշտ հիշելու իրավունք ևս ունիմ,

սակայն ինչո՞ւ չեք որոշում Իտալիայում ապրել, օրինակ՝ Վենետիկ կամ Հռոմ, ուր նկարելու հարուստ նյութ կա, երկինք, ջուր, դաշտեր, շենքեր, դույներ, ամեն բան. ձմեռը – տաք, գարունը – վարդերով ու բույրերով լեցուն, ամառը – պտուղներ, աշունը՝ ավելի դեղեցիկ. ի՞նչ կա մռայլ Լոնդոնում և աղմկալից Փարիզում – բայց չեք գա, գիտեմ, ուրեմն Ձեր նամակները, կուզեմ ասել, Ձեր անուշ նամակները, անպակաս արեք. նրանք մի տեսակ սիրելի այցեր են, վիզիտներ այս օտար երկրում:

Անցյալ անգամ մոռացա գրել Սարգսին, թե՝ «Նոր չարժուման»[3] թերթը ես չեմ ստանում. վանքում կարդացի:

Ամենաջերմ բարևներ կնոջս և իմ կողից Ձեզ՝ երկուսիդ:

Մնամ Ձեր միշտ անկեղծ՝
Ավետիք Իսահակյան

3. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

1924, 25 Հունվարի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Մի երկու օր առաջ ստացա «Հայրենիք» ամսագիրը: Դերենիկի (Դեմիրճյան) բանաստեղծությունը[1] անակնկալ էր. չափազանց հուզիչ: Եվ ի՛նչ դեղեցիկ է ստեղծել – պարզ ու խորունկ: Ի՞նչ ճանապարհով է ուղարկել քեզ: Թիֆլիզի՞ց, Երևանի՞ց: Կարո՞ղ ես ինձ հասցեն ուղարկել՝ գրեմ նրան:

Ես շատ զբաղված եմ խոշոր բաներ գրելով. ստվար, մեծ. այնպես որ երկար ժամանակ չպիտի կարողանամ քեզ բան ուղարկել: Ուզում եմ այս տարի մի երկու բան վերջացնեմ և տպեմ, ու մյուս տարի՝ 1925-ից, եթե չմեռ-

նեմ, երթամ հայրենիք: Անսահման կարոտցել եմ մեր հողին ու ժողովրդին: Միակ փափագս է՝ մի-երկու տարի ապրեմ այնտեղ և հետո՝ ինչ կլինի, թող լինի:

Ես այն ճակատագրական տարիքին եմ հասել, ուր որ մեր մեծ ընկերները մեռան — ես էլ եմ վախենում, ուրեմն չտապում եմ: Երևակայի՛ր, մի-երկու տարի հետո 50 տարեկան կլինեմ: Սարսափելի է: Այնինչ՝ երբ կովկասը թողի, դեռ խենթ ու խելառ, հույսով և հոգու հույզով լիքը երիտասարդ էի: Հիմա, թեև ճերմակ մազ քիչ ունեմ, բայց սիրտս սուգ է:

Համբույրներով՝ քո Ավետիք

4. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 28 Հունվարի, Վենետիկ

Սիրելի Արման.

Եթե Վարանդյանին նամակ գրելու կլինես, խնդրեմ չմոռանաս հայտնել, որ արկղը գրքերի նույն օրն իսկ ստացել եմ ապահով կերպով:

Ձեր ընտանիքին հասած դժբախտության մասին լսել էի, սակայն իմաստ չունի, որ դրա մասին միշտ մտածես. ջղերդ քայքայելուց զատ՝ ուրիշ ո՛չ մի շահ չես ունենա. պիտի արհամարհել. պիտի առողջ ու զվարթ լինել՝ հաղթելու համար չարիքը:

Շատ ուրախ պիտի լինեի պ. Մուրադյանին[1] մոտիկուց ճանաչել. այն նկարները որ տեսա՝ մեծ տաղանդի հաստատուն գրավականներ են:

Ջերմ բարևներ կնոջս և իմ կողմից:

Մնամ Ձեր՝ Ավ. Իսահակյան

5. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 4 փետրվ<արի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Այսօր օր. Սիրարփի Կոնդայանը եկավ մոտս և ցույց տվեց Ամերիկայից իր հոր հեռագիրը, ուր հայտնում է որ Բոստոնից քո անունով դրամ կա եկած՝ օրիորդին տալու: Խնդրում ենք՝ իսկույն բարի լինես ուղարկել Վենեցիա,

Sirarpi Condajian,

Domus Civica (S. Rocco).

Օրիորդը հետո գալու է Հռոմ. այդ մասին կգրենք:

Բարևներով՝ քո Ավետ. Իսահակյան

6. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

1924, 12 փետրվ<արի>, Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Հազար անգամ ներողություն, որ նամակիդ ուշ եմ պատասխանում. օրեցօր էի ձգում, ուրիշ ոչինչ – չնորհակալ եմ քո դեպի ինձ ունեցած համարումի համար. (գեշ ոճ). փոխադարձ է:

Շատ ցավացի դառն ապրումներիդ[1] համար. Աստված տա, որ այդ չարիքից օգուտներ քաղես՝ ստեղծագործական մարզում. սակայն զարմանում եմ, ինչպե՞ս չես կարողանում ոտքիդ տեղ անել, ուր Փարիզում 100-ավոր ճղճիմներ տեղ են բռնել. գործնական եղի՛ր, Հանդուգն, մի քիչ բոլշևիկ, արհամարհի՛ր – և գործդ տես. Ջեյլինիից[2] մի մազ միայն առ – հերիք է:

*Մի՞թե իմ [գր] դիմած պարոնները, որոնց նամակ տա-
րար, բանի պետք չեկան, կեղծ դրամներ եղան, ի՞նչ է:
Մի մանրամասն գրի՛ր թե ի՞նչ ես անում, ինչպե՞ս ես
ապրում, ի՞նչ ես նկարել, ի՞նչ գործեր ես տեսել:*

*Բարևներդ հաղորդեցի, Ժորժիկը[3] հասցեդ առավ՝ քեզ
նամակ գրելու. ինձ պես նա էլ օրեցօր է ճգում: Ո՞ւր ես
մնալու, ինչքա՞ն ես Փարիզ մնալու, ե՞րբ ես Ռուսիա
դառնալու:*

*Գալով ինձ, ինչպես թողել ես, այնպես եմ. միայն
այն տարբերությամբ, որ սկսել եմ «Ուստա Կարոն»
գրել. ամբողջ ժամանակս նրան եմ տված, բառացի
գրում եմ, գրում եմ, ջնջում եմ, գրում եմ, գրում եմ,
ջնջում եմ, բայց գրում եմ... Մինչև չվերջացնեմ, վե-
նետիկից դուրս գալու չեմ. հակառակ քո փափագին,
մեծ է դուրս գալիս. թո՛ղ մեծ լինի, թե՛ նյութապես, թե՛
էապես. Հռոմը տեսնելուց հետո, պստիկ բաներ էլ չեմ
սիրում (կանայք բացառություն են. նրանք առհասա-
րակ միշտ բացառություն են): Այսպես, տեսնենք, ի՞նչ
է լինելու:*

*Հովսեփ վարդապետը[4] վիրավորված է, որ նամակ չես
գրում նրան. Վրթանես վարդապետը հասցեդ առավ. բո-
լորս լավ ենք, առողջ: Վենետիկը նույնն է, բան չի փոխ-
ված. նույն կաֆեները, նույն մուզիկը, նույն աղջիկները,
և նույն աղավնիները:*

*Կովկասից լուր չունեմ, այսինքն՝ նամակ. եկած լրագ-
րական լուրերը գեչ չեն. կուշտ են. խաղաղություն կա:
Գրի՛ր խնդրեմ, մի ծուլացիր: Վիգենից բարևներ:*

Բարևներով և համբույրներով՝

քո Ավետիք Իսահակյան

7. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

1924, 21 փետրվարի, Վենետիկ

Սիրելի Վարդգես.

Վերջապես նամակդ ստացա. տեսնում էի թերթերից, որ չա՛տ զբաղված ես, ոչինչ. լավ է, փորձ շատ ձեռք կբերես, մարդիկ կճանաչես. լավ ժամանակդ է գործելու:

Շնորհակալ եմ տված տեղեկություններիդ համար, թերթերից և ուրիշ բերաններից չա՛տ էի լսել ամերիկահայ գործավորների կյանքի դժոխքը. բայց ո՞ւր գնալ. Հայաստանը չատ փոքր է, աղքատ է, և լավ տեղերը խլած ձեռքից:

Ես կարծում էի, թե բոլշևիկները մի-երկու տարվա մեջ կջնջեն Բրեստ-Լիտովսկի խայտառակ դաշինքը[1] (Կարսի դաշինքը[2] նրա հիման վրա է) կընդարձակեն մեր հայրենիքը գոնե 1914 թ. սահմանը. գոնե ինձ այդպես էին նրանք ասել, և այդպես էին հուսադրել ռամկավարականներին. բայց բոլոր նշաններից այնպես է երևում, որ բոլշևիկները մտադիր չեն թուրքերի հետ գեչանալու, և եթե մեր ունեցածը չտան, թուրքերի խլածից մի թիզ հող խլելու չեն. սա պարզ է ինձ:

Եվ հենց սրա համար արժե որ բոլշևիզմը ընկնի և իմպերիալիզմ-ցարիզմ գա, բայց սա էլ չուտով չի լինելու: Դրությունը մռայլ է, բայց գլուխ չպետք է կորցնել. գլուխ կորցնողը ամեն բան կկորցնե. համբերենք, սպասենք և գործենք:

Անցնենք մեր անհատական գործերին:

Շնորհակալ եմ, որ մտածում ես հոգալ Ուստա Կարոյի հրատարակության մասին: Այս վեպը ուղղակի պատիժ դարձավ գլխիս. գրել էի, վերջացրել, նորից փոխում եմ, ո՛չ էապես, բայց չա՛տ բաների մեջ. մի տեսակ վերագնահատում ի տես բոլոր անանկությանց, որոնք եղան մեծ

պատերազմի ընթացքին, և հետ-պատերազմի շրջանում — անանկուրթյուն պետուրթյուններին, դեմոկրատիայի, սոցիալիզմի, կոմունիզմի, հումանիտեի և այլն — այն բոլոր ապրումները, որ ունեցա՝ պիտի բյուրեղանան Ուստա Կարոյի և Օրթե Հարուրթի մեջ. դա է վեպս, որ հիմքում փիլիսոփայական է և գերազանցապես ազգային-հայկական: Հիմա երկու ամիս է լուրջ և անընդհատ աշխատում եմ, ուզում եմ մինչև աշուն վերջացնել վերջնականապես. հետո կմտածեմ տպել. կարծում եմ որ այդտեղ չի լինի, որովհետև իմ ներկայությունը անհրաժեշտ է սրբագրելու, քանի որ ոճերի մի ծով է վեպը, և այդտեղ չա՛տ հասկացող չկա ժողովրդական ոճից: Երևի Վիեննայում պիտի տպեմ, դա էլ փողի խնդիր է, փող ձեռք բերելու մասին տակավին չեմ մտածել. և բավական մեծ գումար է պետք. վեպը լինում է մոտ 7-800 էջ: Իսկ եթե Ամերիկա տպեն, ի՞նչ կարող են տալ ինձ, բայց իրապես տան և ոչ թե խաբեն, ինչպես խաբում են Կ. Պոլիս «Արձակ էջերը»[3]... գնեց 1000 ֆրանկի-լիրեթ և սանտիմ չտվեց: Եթե կարող ես մարդ գտնել, որ վճարն և խնամքով տպե, կարելի է երկու հատորի բաժնել, 350-400 էջանոց: Ուրիշ ի՞նչ գրեմ. այդ էլ հազիվ մի չորս ամսվա մեջ պատրաստեմ, որովհետև արտագրությունը շատ ժամանակ է խլում, գրելուց ոչ նվազ. քանի որ պիտի խնամքով, վճիտ, որոշ գրել, իսկ Վիեննայում՝ ես գլխին կանգնած՝ դյուրին կլիներ տպելը: Զգիտեմ ինչքա՞ն գնահատեմ. դու այդտեղի չուկան և գները գիտես, մոտավորապես մի նախահաշիվ տուր. սխալ ասացի, այլ՝ թե ի՞նչ են վճարում առհասարակ:

Ասում ես, թե՝ ես կարող եմ Հայաստան դառնալ. անշուշտ. առաջ նույնիսկ պաշտոնապես հրավիրեցին, ճամբու ծախքերս հոգալով, թեև նրանից հետո դժգոհ են ինձնից, որ իրենց կողմը չանցա. դրա համար չէին պահանջում ինձնից ո՛չ Քաջազնունու[4] կամ Զալխուշ-

յանի[5] պես մեղայականներ ու ստորություններ, այլ լոկ դրել նրանց թերթերում, նրանց ուղղագրությամբ (ո՛չ թե ուղղությամբ) և լինել Երևանում, կամ Թիֆլիզ: Ի-հարկե ես չեմ կարող բարոյապես ինձ թաղել ու խայտառակել, ես հանդուցյալ Հովհ. Թումանյանի խմորից չունիմ, բավական թարս էլ մարդ եմ, և վերջապես ես հայրենիք, ազգ, լեզու, Հայաստան անբաղդատելի չափով ավելի եմ սիրում, քան բանվորն ու միջազգային իլլյուզիան և համաշխարհային հեղափոխության բըլբ-ֆը. հա, եթե բոլշևիկները դեթ 1914 թ. սահմանին հասնեն, այն ժամանակ կներեմ նրանց և կհաշտվեմ. ես ինդիվիդուալիստ եմ այն մտքով (ո՛չ Շոայների), որ ինչ որ իմ մտքերին ու տենչերին է համապատասխանում՝ նա լավ է, ես նրա հետ եմ. ես կապված չեմ կուսակցությունների հետ, կուսակցությունների համար չեմ ես ստեղծված, այլ կուսակցությունները՝ ինձ համար. ով որ Անին ու Կարսը, Կողբն ու Նախճավանը ինձ կուտա, նա իմ աչքի լույսն է.— եթե ցարը տա, ես մոնարխիստ եմ:

Բացի այդ, եթե գնամ Ռուսիա, արդյոք հանդիստ պիտի թողնեն ինձ նրանք, թե՞ պիտի լրտեսեն ու երբեմն էլ լակոտ բոլշևիկները ծաղրեն, քանի որ Լենինն ասած հրեշը ռուս երիտասարդությունը փչացրեց ամբարտավանությամբ, լրբությամբ, նախալությամբ: Առայժմ չեմ գնա, դուցե մյուս տարի, 1925, թերևս չատ բան փոխվի:

Վիգենը[6] մեծացել է բավական, սովորում է Մ. Ռաֆայելյան դպրոցում. լավ դպրոց չէ, բայց ուրիշ հնար չկա, ո՞ւր գնալ:

Մենք լավ ենք, ապրում ենք, քայլում ենք դեպի ծերությունը. հայրենիքից հեռու, հայրենիքի կարոտով, հայրենիքի համար տանջվելով, հուսալով. իմ կարծիքով հայությանը այնքան չհարվածեց ո՛չ Սուլթան Համիդը,

ո՛չ Գերմանիան, ո՛չ Իթթիհատն ու Միլլին, ո՛չ Ցարիզմը, ո՛չ Անտանտը, ո՛չ մեծ պատերազմը, որքան, գուցե ակամայից, բոլշևիզմը. եթե բոլշևիզմը չգար, Ռուսները հիմա ամուր նստած էին Մուշ ու Երզնկա, և մենք էլ մեր տանը, և Հայոց հարցն էլ իր միակ տրամաբանական ելք-լուծումը ստացել էր. վերջապես, ֆատալ[7] էր. սոցիալիզմը մարդկութեան դեռ բարիք չտված, մեր տունը քանդեց:

Վերջացնում եմ նամակս. ի՛նչ գրեմ, ի՛նչ որ գրես, Հայոց հարցը պիտի մեյդան գա և բոլոր ցավերս (մեր) նորոգվին:

Բոլորս բարևում ենք քեզ և Արմենուհուն, որի զգացված վերջին ոտանավորները կարդում եմ սիրով. ես վաղուց է՛ էլ ոտանավոր, բանաստեղծութիւն չեմ գրում. այդ տեսակ ապրումներ չունիմ, երևի ծերացա. ահա՛ բանալիքը:

Մեր Կոլյայի[8] մասին. եթե ժամանակ ունիս նրան մի նամակ գրիր և իմացի՛ր ի՞նչ է անում. լսելովս օտոմոբիլ է քշում, շոֆյոր, և հաճախ արկածի ենթարկվում. չե՞ս կարող արդյոք, խաթերս համար, նրան մի անվտանգ գործ գտնես. կարծում եմ, որ կապեր ունիս, թերևս հաջողիս. ես ուզում եմ, որ նա տուն դառնա, արդեն Գեղամը[9] ներվել է, տուն է դարձել. միասին բան կանեն և կապրեն, բայց չի ուզում, աչքը վախեցել է. փորձի՛ր մի բան անել. գործը փորձից է ծնում:

Ահա նրա հասցեն...

Բարևիր, եթե պատահես Ջամալյանին[10], Զարիֆյանին[11], Աբելյանին[12], Վերածինին[13] և բոլոր բարեկամ-ընկեր-ծանոթներին:

Համբույրներով քո Ավետիք

Գրի՛ր մեկ-մեկ. մի ծուլանար:

8. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

<1924>[1], 23 փետրվ<արի, Վենետիկ>

Սիրելի Երվանդ.

Շտապ եմ գրում, որ փոստին հասցնեմ. ուղարկում եմ խնդրածներդ: Գրի՛ր հաջողություններիդ մասին, հետո ո՞նց ես ապրում, հետո նամակներս՝ Գ. Կոստանյանին[2], Ն. Ադոնցին[3] տվի՞ր, մի՞թե նրանք մի բան չարին քեզ համար, գոնե ինձ մի տող անգամ չգրեցին: Մեծ պատերազմը ոչ թե կոտորեց միայն մարդկանց, այլև հոգեպես այլանդակեց:

Հովսեփ[4] վարդ<ապետին> անպատճառ *նամակ գրե, չա՛տ վիրավորված է. հասցեն.* Collegio Armen. [Padowa] Padova. Guseppe Markarian, *տիտղոս* R.P.[5] *առաջը կդնես անունի:*

Բարևներ քեզ, բոլորիս կողմից:

Ի՛նչ նամակներ ունիս Թիֆլիզից:

Կարծես, Համլիկի հետ լավ չես, ինձ թվում է[6]:

Քո Ավետիք

2266 Dorsoduro
de Marchi

9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, 9 մարտի, Վենետիկ

Սիրելի պարոն Հովհ<աննես> Ավագյան.

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և 20 դոլարը:

Արդարև, թեպետ չա՛տ զբաղված եմ, որովհետև վեպս կլանում է բոլոր ժամերս ու ուշադրությունս, սակայն պիտի չմոռանամ «Կոչնակը», որ գնահատելի թերթ է և նրա մեջ հյուրասիրվելը պատվաբեր:

Շտապում եմ, գոնե մինչև ամառային տաքերը վեպիս առաջին հատորը (երկու հատոր է լինելու) վերջացնեմ, մյուսը՝ աշնանը:

Արդեն դադարել եմ ուրիշ [տեղեր] թերթերի մասնակցելը՝ բացի «Կոչնակից» և «Հայրենիքից»:

Հուլս ունեմ չուտով մի բան հասցնել:

Ջերմ հարգանքներով – բարևներով մնամ Ձեր անձնվեր՝

Ավ. Իսահակյան

10. ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

1924, 11 մարտի, Վենետիկ

Սիրելի Սարգիս.

Փետրվ<արի> 29-ին գրած նամակդ առա. երնե՛կ Ձեզ, որ կարող եք թափառել. ես այս ճահիճների մեջ փթա. ինչքան էլ որ գեղեցիկ է Վենետիկը, բայց ամեն օր նույնը տեսնել այլևս զզվեցրել է, և ինձ համար ամենավատն այն է, որ մենակ եմ այստեղ – անընկեր, մենակ, միշտ ինձ հետ, իմ մտքերիս, իմ վշտերիս, իմ ստվերիս հետ...

Կուզեի այս նամակի հետ տիկ. Վավային ևս գրել, բայց տխո՛ւր եմ շատ, և տխուր սրտով ի՛նչ գրեմ. ես գիտեմ, որ տիկ. Վավան բարի և սիրող սիրտ ունի, ինչո՞ւ վշտացնել. երբ տրամադրությունս պայծառանա, այն ժամանակ կգրեմ. ես գիտեմ, որ նա կներե իմ երկար լռությունը, թեև ինձ ուղղակի գեղեցիկ հաճույք է նրա հետ

նամակներով խոսակցելը, բայց կան չըջաններ,— և հատկապես իմ աններդաչնակ հոգուս մեջ,— որ ամենասիրած էակների հետ իսկ, որոնց հաչվի մեջն է և սիրելի տիկին Վավան,— չեմ ուզում մի խոսք փոխանակել:

Գրի՛ր գործերիդ մասին, հաջողություններիդ, և Լիլիթի մասին, նույնպես: Եվ եթե հետաքրքիր բաներ, լուրեր կան Փարիզի գաղութի մեջ:

Կխնդրեի անպատճառ գրեիր, թե քանի ժամանակ մնալու եք դեռ Փարիզում. ուզում եմ կնոջս մի ամսով Փարիզ ուղարկել. տիկնոջդ հետ կլինի, մենակ չի լինի:

Ջերմագին բարևներով իմ և տիկնոջս կողմից Ձեզ երկուսիդ, իսկ ես հատկապես համբուրում եմ տիկին Վավայի երկու ձեռքն էլ:

Ձեր Ավետիք Իսահակյան

Issakian
2266, Dorsoduro
Venezia

11. ԳԵՎՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑԻՆ

1924, 22 մարտի, Վենետիկ

Սիրելի պարոն Գեորգ Կառվարենց.

Մեծ չնորհակալությամբ ստացա Ձեր գրքույկը՝ «Գերեզմանի ծաղիկներ»[1], որ պատվել էիք ինձ՝ ուղարկելով այն:

Ուշադիր մի-երկու անգամ կարդացի, և թույլ եմ տալիս ինձ իմ համեստ կարծիքը ասելու:

Ձեր տեքնիկը, արվեստը, ձևը չա՛տ լավ է, նուրբ է ու նոր. հանգերը ավելի քան ճոխ են, և այս առավելությունը հաճախ թերություն է:

Պոեզիներիդ մեջ կան հայտ բերած քնքուշ, խորունկ ապրումներ, ո՛չ այս-աշխարհից:

Եվ կուզենայի, որ ավելի մտերիմ զգայիք Ձեզ կյանքին և նրա դեղեցկություններին, արևին ու լույսին, աղջկան և սիրո լիրիկ վշտերին:

Ուրիշ անգամներ Պոլսի թերթերի մեջ հանդիպել եմ Ձեր անունով՝ ուրիշ ծաղիկներ, ավելի բուրիչ, ինչպես պ. Թեոդիկի տարեցույցի մեջ եղածը.—

Վա՛յ մեզ կերտող, վա՛յ մեզ կոտրող բըրուտին[2]*:*

Թո՛ղ բանաստեղծության Աստվածը Ձեզ ավելի ներչնչումներ տա: Դուք դեռ երիտասարդ եք, և կյանքը Ձեր առջև — չհնձված արտ:

Լավագույն բարևներով,

մնամ Ձեր Ավետիք Իսահակյան

12. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿՑԱՆԻՆ

1924, 24 մարտի, Վենետիկ

Սիրելի ընկեր, պ. Շավարշ Միսակյան.

Ընկերական բարևներից հետո, խոսքս «Արձակ էջեր»[1] *գրքիս մասին է: Անցյալ տարի, 1923 թ. հունվարի մեջ ստացա Ձեր քրոջից 15 օրինակ «Արձակ էջեր» և մի քարտ, ուր տիրող կացության մասին գանգատվելով՝ հայտնում էր, որ հետագայում նորից պիտի գրե: Սակայն ավելի քան մի տարի անցավ, բայց ունայն. ո՛չ մի լուր չառա:*

կարծեմ՝ ներկայիս դրությունը համեմատաբար լավ է, և մանավանդ որ «Արձակ էջերը» վաճառքի է հանված Ամերիկայում. օրինակի համար. «Արաքս» գրատունը վաճառում է 75 ս<ենտ>, իսկ «Կիլիկիան»՝ 1 դոլլար, հե-

տևապես, ընկերաբար դնելով խնդիրը, ի վիճակի է «Հայկաչեն» դրատունը վճարելու ինձ հասանելիք 1000 իտ<ալական> լիրեթը: Խնդրում եմ Ձեզ, բարի լինիք իրականացնելու այս, մանավանդ որ հիմա կարիքի մեջ եմ. և ի՞նչ պիտի լինի առհասարակ հայ դրագետի կացութիւնը, երբ նա չպիտի իր աշխատանքի վարձը ստանա, կարծես, կոչված լինելով հրատարակիչներին ծառայելու համար: Գրում եմ այս ձևով, որովհետև դառն դասեր ունիմ հատկապես Կ.Պոլսի հրատարակչական տուներից:

Փաստեր.

I. Ձեր «Արծիվ»[2] դրատունը 1912 թվին հրատարակեց «Աղա-Նազարը» և ո՛չ մի սանտիմ չվճարեց՝ պատճառաբանելով 1914 թ. պատերազմը:

II. «Զարդարյան»[3] դրատունը հրատարակեց «Աբու-Լալաս». ո՛չ միայն ոչինչ չվճարեց, այլև դիմումներիս չպատասխանեց, նույնիսկ մի օրինակ դրքույկիցս չուղարկեց:

III. «Կիլիկիա»[4] դրատունը նույնպես հրատարակեց «Աբու Լալաս», բայց գերմանական մարկեր ուղարկեց, որ բռնեց 20 ֆրանկ: Երևի այսպես են Պոլսի վարքերը:*

Այս դասերից հետո ես միայն այն նկատումով համաձայնեցի «Հայկաչենին» տալ, որովհետև Ձեզ հետ գործ ունեի, որ<ի> վրա միշտ համարում կտածեմ:

Մինչդեռ պ. Տիգրան Չավենը[5], դիրքս կազմելիս, 1922 թվի մայիսին այստեղ էր, առաջարկեց, որ իրեն տամ, ինքը Պոլիս ծանոթ հրատարակիչ ունի, և լավ գնով ու կանխիկ կվաճառե. բայց ես ուղեցա Ձեզ տալ (Պարոն Տ<իգրան> Չ<ավենը> այդտեղ է, կարող է վկայել):

---

* *Անշուշտ սրա քննադատութեան[6] համար «արևմտահայ նշանավոր կրիտիկ» էշականը ավելի դրամ ստացավ, քան ես՝ բոլոր հրատարակութիւններից (ծանոթութիւնը՝ Ավետիք Իսահակյանի):*

Այժմ լիահույս եմ, որ հավատս չի բեկվելու այս անգամ, մանավանդ որ Ամերիկայում ամենաշատը 100 գրքի վաճառումից է, որ պիտի հանեք իմ արդար մասը: Սպասում եմ Ձեր չուտափույթ պատասխանին:

Ջերմ բարևներով և հարգանքներով մնամ Ձեր՝

Ավետիք Իսահակյան

A.Issahakian.
2266 Dorsoduro,
de Marchi
Venezia

13. <ԱՐՄԱՆ> ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 26 մարտի, Վենետիկ

Սիրելի Սարյան.

Պ. նկարիչ Մուրադյանը[1] եկավ,– և հիմա մոտս է, ու չա՛տ բարևներ բերեց Ձեզնից:

Սրա հետ ուղարկում եմ բանաստեղծ Նշան Պեշիկթաշլյանի անցագիրը. երիտասարդը՝ փախած Պոլսից, մի առժամ պատսպարված Կոռֆու, վերջերս՝ հոս, պիտի Փարիզ գնա, այնտեղ գործ գտնելու համար, որով խնդրում եմ այս անցագիրը, եթե հնարավոր է, և կարծեմ հնարավոր է, որ մի տարով հետաձգես ժամանակաշրջանը և վկայես. bon pour le France[2].

Բայց էականը այն է, որ gratis[3] *լինի. դրամ չառնես, որովհետև, հասկանալի է, որ չունի. և փախստական, և բանաստեղծ, ուրեմն շատ և շա՛տ խնդրում եմ իրականացնես դիմումս: Իսկ եթե նորոգել պետք է անցագիրը, գրի՛ր խնդրեմ:*

Շատ բարևներով մնամ

Ձերդ՝ Ավետիք Իսահակյան[4]

14. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՑԱՆԻՆ

1924, 31 մարտի, Վենետիկ

Սիրելի Հայր Սուրբ.

Նորից հարկ եղավ Ձեզ նեղություն պատճառելու. խնդրում եմ ներող լինիք:

Բանն այն է, որ մտածում եմ վեպս[1] *տպել – և Վիեննա, Ձեզ մոտ. մի-երկու բարեկամ հաճություն են հայտնել ծախսերը հոգալ, եթե մատչելի լինի իրենց գրպանին. ուստի ուզում են վաղօրոք գիտենալ նախահաշիվը. գիրքս լինելու է 700-750 էջ. Րաֆֆիի «Սամվելի» էջերի չափով. երկու հատորի բաժանված, կես առ կես:*

Թուղթը միջակ (կարելի՞ է այս բառով բան հասկանալ)՝ ո՛չ լավը, ո՛չ գեշը. միջակը՝ Կոնֆուցիոսի[2] *սիրած ձևը:*

Գրքերի քանակը (օրինակը) լինելու է 1000-1200-ի չափ. չա՛տը չի ծախվի, կմնա: Տպագրությունը սկսվելու է հավանաբար սեպտեմբերից. թե նրանք դեռ պատրաստ չեն, թե ես չեմ արտագրել՝ կարդալու համար. սակայն նրանք ավելի չուտ պատրաստ կլինին, քան թե ես. միայն ծախսը պիտի նրանց տարողության չափ լինի: Թերևս թղթի նմուշ՝ գնի հետ միասին բարի լինիք ճամբելու:

Սիրելի Հայր Սուրբ, թե Դուք զբաղված կլինեք,– որ եք անշուշտ,– հանձնեցեք Ռուբեն Թերլեմեզին[3] *ամ Աբրամ Երեմյանին*[4]*, նրանք հոգան այդ. արդեն Հայր Մեսրովբի հետ է գործը:*

Ուզել էիք իմ նկարը. մի նկարիչ (պորտրետիստ) նկարում է ինձ. հույս ունիմ, որ հաջող պիտի դուրս գա.

նրանից ուզում եմ կլիշե չինել տալ և Ձեզ ևս կղրկեմ, որ պահեք իմ մահազդի համար. եթե լավը չեղավ, անպատճառ նկարվելու եմ, քանի մազերս ան են, և դեմքս՝ թարմ, որ այդ պատկերը ասպարեզ նետեմ....

Վերջերս Ռ. Թեր<լե>մեզի վրա (վանքի հասցեով) նամակներ էի ղրկել և ներամփոփ մի նամակ՝ Հ. Սաղաթելյանին[3] Ռիգայից ղրկած.– չգիտեմ, ստացվեց նամակս. այդ մասին Ռուբենը դեռ չի գրած, անհանգիստ եմ: Ես մի 10 օրով գնում եմ թափառելու. Վերոնայի կողմերը. հոգնած եմ, գլուխս թմրել է. ապա դարձիս պիտի սկսեմ վեպս արտագրել և սրբագրել միաժամանակ:

Մենք լավ ենք, կինս բարևում է Ձեզ:

Մի շաբաթ առաջ վախճանվեց Ս. Ղազարի միաբան հայր Միքայելը, հունգարացի. լավ մարդ էր, կրթված, բարի, բայց թուլ, անազդու, 67 տարեկան, չաքարախտից:

Հարգալիր բարևներով բոլոր պատվելի հայրերին և Ձեզ, սիրելի Հայր Սուրբ:

Մնամ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

15. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1924>[1], 3 ապրիլի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Այսօր նամակդ ստացա: Հարցնում ես քեֆ ու հալիս մասին: Գեչ է, ընդհանուր առմամբ, տխուր եմ: Եվ տխրության բազում պատճառներ կան – անհատական և հասարակական-ազգային, որ իրենց հերթին դառնում են անձնական վշտեր: Ութը-ինը տարի է անցել սոսկալի թվականից՝ 1915, և ջարդերի ազդած վիշտը չի մեղմացել,

հաճախ հուսահատության ու կատաղության է մղում: Անսահման թույն կա իմ մեջ ընդդեմ մարդկության և տիեզերքի, և այս թանձրացնում է իմ բնածին պեսիմիզմը: Այս տրամադրության տակ պետք է ապրել ու գրել...

Զարմանում ես անշուշտ, որ իմ գրությունների մեջ բնավ արձագանքը չկա այդ հոգեվիճակի: Բայց ես գրում եմ, գրում եմ միշտ, խտացնում իմ այդպիսի ապրումներս մի քանի տարբեր տեսակի գրությունների մեջ.— 3-4 հատ (վեպ, պոեմ, օրագիր և հուշեր՝ ոչ իմ կողմից, այլ ուրիշի, ու մի անանուն ձևի բան): Սրանք պիտի լույս աշխարհ գան, հենց որ օձիքս ազատեմ «Ուստա Կարոյից»:

Բոլշևիզմի տևողությունը չատ է ջղայնացնում ինձ: Նրա դիմանալը չեմ կարող բացատրել, թեև հակառակ է իմ լսած ու կարդացած սոցիոլոգիկ տեսություններին: Մինչև ե՞րբ պիտի մնա: Ափսոս չէ՞ր ցարիզմը: Ի՞նչ բռնեց սրա տեղը — թաթարական հեգեմոնիա Կովկասում: Երևի, մինչև որ վերջին բոլշևիկ-կոմիսար չունը չսատկի Լենինի պես, օր չենք տեսնելու: Փչանում է նրանց չնչի տակ ամեն բան, մանավանդ երիտասարդությունը...

Ի՞նչ է մնում մեզ անել: Երևի համբերել, որովհետև ոչ մի հնար չկա այն տապալելու: Դարտակ բան են դրսի ուժերը, ինքնախաբեություն:

Ես չատ կարոտցել եմ մեր երկրին, և՛ հարազատներիս, և՛ հին ընկերներիս, թեև առաջիններից ու վերջիններից չատերը չկան այլևս այս աշխարհում: Մեր տնից չորս հոգի չկան, և ամենեն սիրելիներս — մայր, քույր, եղբայր և ամենասիրելի եղբորս որդին[2], որ 23 տարեկան սպանվեց Կարինին տիրելու ժամանակ: Բայց գնամ, վախենամ՝ ղղջամ և նույնիսկ տուժեմ: Լրտեսների ախտ կա, որից չես կարող ազատվել: Սպասում եմ, բայց մինչև ե՞րբ: Ուղիղ 13 տարի եղավ, որ ղարիբ եմ: Եվ վերջապես, գեչ է ազդում գրելուս վրա: Մանավանդ այնպե՛ս ձանձրացել եմ Վենետիկից, և փող չունեմ ավելորդ, ճամփորդելու

գնամ՝ մի քիչ թարմանալու համար: Մնում է՝ սրտիդ քար սեղմելով նստել սեղանի առաջ...

«Հայրենիք» ամսագիրը լավագույնն է ներկայիս նշածների մեջ, և՛ դուրսը և՛ թե ներսը: Հայաստանում նշածը՝ «Նորք», որ ձեռքս անցնում է, երբեք լավ չէ «Հայրենիք»ից... Եվ վերջապես, մեր կյանքը (մտաչխարհը) այդքան կարող է տալ: Ս. Հակոբյանի «Արեգը», բոլորովին բոլշևիկ դառնալով, շատ բան կորցրեց. «Կոչնակ»ն էլ դատարկ բան է:

Կարդում եմ շատ բան «Հայրենիք» ամսագրից, շատ բան էլ հոտ եմ քաշում: Գեղարվեստականը բոլորը կարդում եմ:

Համաստեղը[3] դիտելու չնորհք ունի, անալիտիկ հակում էլ, բայց շատ հեռու է իմ ուզածից. թե՛ չափը, թե՛ ճաշակը դեռ թերի են, բայց կզարգանա, ջահել է դեռ:

Այվազյանը[4] շատ է ենթարկված Դոստոևսկուն, բայց իր ամբողջ քրտինքը թափում է չնչին բաների վրա. ֆոկուսնիկ է: Բացի այդ՝ շատախոս է, ունի դիտողություններ, նոր ձևեր, բայց այդքան:

Օշականի Շահպազը[5] համ լավ է, համ գեչ: Ամենից առաջ՝ շատ սուտ բան կա, ոչ-հոգեբանական: Երկրորդ՝ դժվար է կարդացվում, շատ է պրկված լեզուն, ոճը: Նոր անկյուններից նայած՝ հետախուզող է: Բայց այս լույսերի հետ՝ ստվերները շատ են և ապրող գրականություն չէ. հստակ, բյուրեղացած չէ, և մանավանդ անկեղծ չէ. նման է ֆուտուրիստներին, որ ասում են թե՝ գրականությունը անկեղծ չպիտի լինի, այլ՝ կեղծ, արվեստական, այսինքն՝ արվեստով չինված...

Ես ոչ մի դպրոցի չեմ հետևում. ինչ որ ինձ լավ է թվում, այն եմ անում: Բայց այդ չի նշանակում, որ կատարյալ եմ. բնավ, երբեք: Ես չա՛տ եմ դժգոհ ինձնից, և դրա համար էլ «Ուստա Կարոն» չի վերջանում: Խոսքս ոճի մասին է, ոչ թե նյութի: Ոճ, ձև — սա է ինձ զբաղեց-

նողը: Բայց ոչ պետք է փուտուրիստ դառնալ, ոչ էլ չաբլոնիստ. պետք է դանել իրենը, իր ոճը: Երկարացրի:

Վ. Ահարոնյանը ինձ գրել էր մի-երկու չարաթ առաջ, որ գրամ է հավաքել Ա. Ջամալյանի հետ «Ուստա Կարոս» հրատարակելու համար: Մի՞թե այդպես լավ չէ: Եթե ծախսերը տան (և նվեր է ծախսը), ուրեմն՝ ինչ որ ծախսեմ, իմս կլինի և կշահիմ: Փող. հենց այդ է, որ ինձ հիմա պակասում է, փող: Եթե չեղավ, ուրիշ բան:

Շնորհակալ եմ հոգացողությանդ համար: Բայց չե՞ս գտնում, որ քիչ է 400 տոլարը ավելի քան 700 էջի համար: Հարկավ, քանակը չէ բանը, բայց և այնպես, քիչ է: Հետո կխոսինք դրա մասին:

«Ուստա Կարո»ից գրկածս կտորը[6] դեռ լավ մշակվածներից չէ, շատախոսություն կա. պետք չէր գնել ժողովրդական երգերը, բացի «Լաչեմ- Նանայից», որի մեծ մասը իմ չինածն է: Բայց թո՛ղ տպվի, վնաս չունի:

Պերճուհու[7] ոտանավորները դեչ չեն, բայց ինքը հազար անգամ ավելի լավ է. մեղա Աստուծո:

Բարևներ տիկ. Նադիային[8]: Բարևներ և համբույրներ քեզ:

Մնում եմ միշտ քո՝ Ավ. Իսահակյան

16. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1924, 3 ապրիլի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Շնորհակալությամբ ստացա գիրքդ՝ ի պատասխան Քաջազնունու[1]. վերջինիս գիրքը կարդացի, և երբ քոնը կարդամ, կարծիքս կգրեմ, թեև մի քանի հատվածներ սկզբից կարդացել էի «Յուսաբեր»ի մեջ:

Զարժեր այդքան աղմկել Քաջազնունու չուրջը. այդ մարդը, ես ճանաչում եմ նրան 1904 թվից – (առաջ էլ ճանաչում էի, բայց այդ թվից՝ մոտիկից) – նա մեծամիտ, փոփոխական մարդ է (թեև տաղանդավոր). ողորմելին մի՞թե չգիտե, որ բոլշևիզմը՝ բոլոր սոցիոլոտիկ տեսությունների հակառակ՝ մի քրդական մտայնություն է, որը պիտի անցնի, թերևս երկար տևելով, որովհետև ռուս ժողովուրդը հոգնել է կռիվներից, բայց մնալու ապրանք չէ. պետք է որ նրա չեֆերը Լենինի պես սատկին, պե՛տք է դեռ քաշենք: Քաջազնունին մի՞թե կարծում է, թե առաքինություն է ենթարկվել բռնությանը, և մի՞թե իր հարվածներով կարող է մի օրում ոչնչացնել պատմությունից ծագած կուսակցությունները, որոնք իրենց իդեոլոգիան ունին և իրենց նահատակներն ու իդեալները: Եթե մենք չքանանք, ապա ռուսական մեր նման հոսանքները, մենշևիզմը, սոցիալ-ռևոլյուսիոնիզմը... իսկ Բ ինտերնասիոնալիզմի գոյությունը: Տղա է այդ մարդը, կամ թե չէ, մտածված կերպով է արել՝ թողության թուղթ ձեռք բերելու համար վերադարձի. եթե այդպես է, լավ, բարի ճանապարհ, թող երթա Հայրենիքում[2] մեռնի: Դոնե այդպես արեց Զալխուչը[3]: Ըստ իս, թող Հայաստանում մեր ընկերները ներս թափանցեն բոլշևիզմի մեջ, որով նրանց ջերմության աստիճանը կիջեցնեն, բայց արտասահմանի դաշնակցականները պիտի հավատարիմ մնան, և պայքարեն, քննադատեն, մանավանդ Մոսկովա նստած սրիկաներին՝ ավազակ Ռադեկներին ու Զինովիևներին և ընկ., որոնց չնորհիվ այսօր Կովկասում հեգեմոնիան իսլամի ձեռքն է, և թող ոչ մի հայ չհուսա, թե քանի բոլշևիզմը կա, Հայաստանի հողի վրա մի թիզ հող կավելնա, երբեք. դեռ պիտի խլեն: Ղարսը, Իգդիր և այլն, կորած են, մինչև Սովետների անկման օրը:

Հայ բոլշևիկները ոչինչ տղերք են՝ կույր, վախկոտ և կաշառված, բայց վերի նստողները, այդ թրքոֆիլ սիո-

նիստները և մյուսները, դրանց օձիքից պիտի բռնել. բայց գրել ռուսերեն, հայերեն ո՞վ է կարդացողը:

Դուք լավ չեք պաշտպանում հաճախ ձեր վրա եղած հարձակումները, օրինակ, Ալեքսանդրապոլի դաշնագրի[4] նկատմամբ. այդ տխուր դաշնագիրը զավակն է ավելի տխուր ու ամոթալի դաշնագրի՝ Բրեստ-Լիտովսկի, որով Սովետները գրաված հայ նահանգները (Վան, Բիթլիս, Էրզրում...) և Կարսը, Բաթումը... տվեց Թուրքին: Եվ հիմա էլ՝ Մոսկովայի խողովակով կարաբեքիր եկավ ստանալու խոստացածը. դուք այդ պիտի միշտ նրանց երեսին տաք, միայն այդ հերիք է. և իմ կարծիքով՝ ոչ Իթթիհատը[5], ոչ ցարիզմը, ոչ Գերմանիան ու Անտանտը ավելի հիմքով չկործանեցին մեր տունը, ինչքան բոլշևիզմը, այս գազանական չարժումը, որ մուկ դարձած թուրքերին հասցրեց մինչև Բագու:

Իհարկե Դաշնակցությունը անսխալական չէ, և նրա մեծագույն սխալը ընկնում է իմ սիրելի Համոյի վրա, Օհանջանյանի[6]. նա, որ ուզեցավ զսպել Մայիսյան Բոլշևիկյան ապստամբությունը. մերոնք պետք է իսկույն Ատրպեյջանի պես հանձնվեին. և Համոյին մեղադրում եմ, որովհետև նա նոր էր վերադարձել Փարիզից և գիտեր իրերի վիճակը. այն որ Եվրոպայից սպասելիք չկա, այդ Եվրոպան – (Անտանտը) ուզում է մեծ Թուրքիա ստեղծել. ինքը՝ Համոն այդ լավ գիտեր, և ինձ էլ ասաց, 1919 թվի Դեկտեմբերին, ուրեմն ինչո՞ւ կառչեց սպասելիք Սևրի դաշնագրին[7], որը փորեց մեր գերեզմանը: Ահարոնյանին չեմ մեղադրում, որովհետև նա հավատում էր, կամ կեղծում էր, վերջապես բըլըֆիստ մարդ էր, բայց Համոն, որ առաքինի և խելացի մարդ էր, չպիտի սայթաքեր. եթե մնար Փարիզի իր մտքերի վրա՝ թերևս Կարսը չէինք կորցնի, իսկ Իգդիրը՝ երբեք... ինչևիցե...

Հիմա պիտի դիմանալ, գործել, քննադատելով սովիեթը, լայնորեն օգնել հայ ժողովուրդին, որ մեր արյունից

և ոսկրից են, այնպես, ինչպես օգնած են մյուսները, ռամկավարները... Հագուստ, գործիքներ, փող, որբեր, գաղթականներ լցնել Հայաստան:

Շա՛տ բան կարելի է գրել, բայց դիտես արդեն:

Ես չափազանց զբաղած եմ, վեպեր եմ գրում. ուզում եմ վերջացնել մի-երկու վեպ այս տարի և գնալ Հայաստան, աչքովս տեսնեմ երկիրը, հետո դառնամ ու սկսեմ պայքարը. թերևս մինչ այդ չատ բան փոխվի, խելոքնան հիմարները՝ Մոսկովայից սկսած:

Ներիր, որ քեզ բան չեմ կարող ղրկել, գոնե այժմս. իսկի «Հայրենիք»ին էլ չեմ կարող լիապես աշխատակցել, թեև կանխավճար եմ ստացել. վեպերս չղթայել են ինձ:

«Յուսաբեր»ը սիրով կարդում եմ. կենդանի թերթ է:

Ես ողջ և առողջ եմ և հավատով լի: Համբույրներ իմ կողմից մանչուկիդ, որին նվիրած տողերդ սրտառուչ էին:

Բարևներ կնոջդ, բարևներ սիրելի Համոյին[8], տիկ. Ռուբինային, Ն. Աղբալյանին և Ս. Պալըճյանի[9] ընտանիքին բոլորին:

Համբույրներով՝ միշտ քո

Ավետիք Իսահակյան

17. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1924, 14 ապրիլի, Բերգամո>[1]

Իմ սիրելի Սոֆի ջան.

Քարտդ ստացանք այս առավոտ, ուրախ եղանք որ լավ եք... իրավ ալ ճիշտ խնդալու վրա էինք ասկից անկից խոսելով. ալ կարգը քուկդ է գալու:

Միշտ սիրով և համբուրիվ քույդ Սիրվարդ[2]

Սիրելիք.

Երեկվանից հյուր եմ տիկ. Սիրմարդի մոտ. լավ ժամանակ ենք անցկացնում:

Համբուրներով՝ Ավետիք

18. ԱՐՄԱՆ <ՍԱՐՑԱՆԻՆ>

1924, 29 ապրիլի, Վաննաւիկ

Սիրելի Արման.

Շա՜տ ներողութիւն եմ խնդրում, որ քո ո՛չ մի գրութեանդ մինչև օրս չեմ պատասխանել. պատճառը ո՛չ թէ վիրավորված լինելն է, ինչպես դու ես կարծում, այլ այն, որ ապրիլի 4-ից մինչև Զատկի ուրբաթ օրը բացակա էի Վաննաւիկից, և վերադարձա մրսած ու պլխի ցավով, այնպես որ մի ողջ շաբաթ չէի կարող անել:

Հիմա լավ եմ, բնավ վիրավորված չեմ քեզնից, և մաքիս ծայրովն էլ չի անցած՝ վիրավորված լինել. այդ՝ միայն քո նուրբ, քնքուշ բնութիւնն է պատճառը:

Շնորհակալ եմ քեզնից ու Վարանդեանից, որ հարցել եք խնդիրս Պեշիկթաշլեանի վերաբերմամբ. ահա ուղարկում եմ նրա երկու նկարները և սպասում եմ անցագրին:

Առհասարակ դրող-նկարիչ և այլն մարդկանց նկատմամբ զիջող պիտի լինել երկու պատճառով. մեկ՝ որ դրամ չունեցող մարդիկ են, և երկրորդ՝ որ չպիտի թշնամացնել նրանց:

Ինչպե՞ս է առողջութիւնդ. քննութիւններդ և տրամադրութիւնդ. երբ է Վարանդեանը Իտալիա գալու. չէ՞ որ գարնանը պիտի գար. ո՞ւր մնաց:

Կինս բարևում է քեզ, Զատիկդ չնորհավորում, ինչպես և ես:

Բարևներով քո Ավետիք Իսահակյան

19. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿՑԱՆԻՆ

1924, 14 մայիսի, Վենետիկ

Սիրելի ընկ. Շավարշ Միսակյան.

Ձեր նամակը ստացված էր իմ բացակայության ժամանակ. ես ապրիլի 4-ից գնացել էի մի գյուղ՝ հանգստանալու, գլխի ցավեր ունեի, որ ջղայնության արդյունք էր. խնդիրն այն է, որ Վենետիկը թեև հանգիստ քաղաք է, բայց քայլելու տեղ, պարտեզներ, հո՛ղ, հո՛ղ չունի. քար է և ջուր. իսկ ինձ համար պետք էր հող, անտառ, դաշտ, օդ... [զբոզնե] զբոսնել բաց օդում, անվերջ զբոսնել. մի ամիս մնալուց հետո, կազդուրված վերադարձա:

Գրում եք թե, սիրտ ունի՞մ աշխատելու. հարկավ — չունիմ. ի՞նչ սիրտ կարող է լինել, ի տես ի՞նչ բաների. բնաջնջված հայ ժողովրդի մի մասի, թե՞ մնացած բոլշևիկյան անբարոյացած մյուս մասի... Հարկավ հուսահատ չեմ, բայց կորով, եռանդ չունեմ, և ոգևորության աղբյուր. և այդ է պատճառը, որ քիչ եմ գրում և երևի լավ չեմ էլ գրում. (թեև հիմա ո՞վ է որ լավ է գրում. ամենքն էլ հին, մաշված [հույսերով] հուշերով են ապրում):

Սակայն անգործ էլ չի կարելի նստել, մի բան պիտի անել, ավելի քիչ տանջվելու համար: Վեպս վերջացած է, բայց մշակում եմ, և ինչքան մշակում եմ, այնքան տեսնում եմ նրա թերինները. զզվելի բան է և դրագետ լինելը — միշտ դժգոհ իրենից, իր գրածներից. մի խոսքով... Էհ, կյանքը մի բան է, որ ընկել, քաշ ենք տալիս, կերթանք, և երևի ամենաերջանիկ օրը այն օրն է, երբ էլ գոյություն չենք ունենա:

Գրում եք, որ փեսա եք դարձած. չնորհավորում եմ, երևի բախտավոր եք զգում Ձեզ, քանի որ այդ լուրջ հասակում լծի տակ եք մտել՝. Աստված տա, ավելի բախտավոր լինիք. ինձ համար՝ ամուսնական կյանքիս մեջ զա-

վակն է միակ իրական բանը, որի համար տանում եմ այս անհամ գոյությունը: Հաճախ, երբ մաքովս անձնասպանություն է անցնում, զավակիս որը չթողնելը ինձ կապում է կյանքին...

«Ճակատամարտ» Զմյուռնիայի աղետից[2] հետո դադրեցին ինձ ուղարկել. երբեմն Ս. Ղազար գնալիս կարդում եմ թերթերը, սակայն «Հայրենիք», «Հուսաբեր» ստանում եմ և «Կոչնակ». և իրազեկ եմ որոշ չափով մեր գժոխքին. մի ամիս թերթ չկարդացի և ավելի լավ էի զգում ինձ. հայ թերթերը թունավորում են մարդու հոգին: Չլինեն, ավելի լավ է: Թերթերի [ստացած] պատճառած չզադրգռությունը հյուծում է մեր վերջին ուժերը. «որբություն, սով, անտերություն, ազգերի ամարդություն, անարտություն, Վան, Մուշ, Անի, բոլշևիզմ, թուրք, քուրդ, վրացի, Զիչերին, արևելքի հեղափոխություն, տեղահանություն, միսիոներ... և այլն, և այլն». մղձավանջներ են անվերջանալի, ուղեղը կրծող որդեր...

Թողնենք սա:

«Արծիվ» դրատան պարտքը. (Ադա Նազարը) չա՞տ հնացած բան է, և իբրև հնացած բան անարժեք է ինձ համար. սպասեմ քաշենք վրան. սակայն կխնդրեմ Ձեզնից «Արձակ էջերի» հատանելիքը – 1000 լիրեթ, մի կերպ իրականացնենք. այս ամառ գյուղ պիտի գնամ, և դրամ պիտի հայթայթեմ դրա համար. դրամ, մի բան, որ չա՞տ դժվարավ եմ ձեռք բերում:

Պոլսից դեռ նամակ չեմ առել. խնդրում եմ, բարի լինեք նորեն հիշեցնել Ձեր հարգելի հայրիկին:

Հարց եք տալիս, թե արդյոք գիտե՞մ իտալական նոր, ժողովրդական մի վեպ՝ Ֆրանսերենի թարգմանած. ամոթ է խոստովանելը որ չգիտեմ. հայտնի են ինձ միայն դ'Ա-

նունցիոյի[3] վեպերից. ես տակավին դժվարությամբ եմ կարդում սրանց հեղինակները. և մեծ բաներ չունեն առանձնապես, այնպես որ ավելի սիրով կարդում եմ գաղղիական-գերմանական-ռուսական հեղինակները: Արժեքավոր է Pirandello[4], ֆրանսերեն կան բաներ (le Livre rouge)[5] Librairie Stock.

Ավելի լավ դրականություն ունեն հյուսիսի ժողովուրդները, արժե նրանց թարգմանել:

Տիկին Պերճուհին ի՞նչ զգայուն բաներ ունի. կխնդրեի բարևեիք նրան իմ չնորհավորություններով:

Ջերմ բարևներով – հարգանքներով

Ձեր Ավետիք Իսահակյան

20. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

<19>24, 2 Հունիսի, Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Հազար անգամ ներողություն եմ խնդրում, որ մինչև այսօր լուռ մնացի. պատճառները... տիեզերքի պես մեծ բաները առանց պատճառի են. մեծ խոսք եղավ ասածս, սակայն, սիրելիս, Ջատկից առաջ ես մի քանի օրով Վենետիկից դուրս էի գնացել և մրսած ու երկարատև գլխի ցավով վերադարձա տուն. նոր էի լավացել, եղբորս որդին եկավ, և ողջ ժամանակը զբաղված էի նրանով, չգիտնալով, թե օրերը ոնց թռան...

Ուղարկածդ հանդեսները[1] թե ես, և թե Զաքարյանը[2] ստացել ենք իր ժամանակին, և անհուն կերպով ուրախացել, որ այդ փարիզյան քաոսի մեջ աստղի պես երևացել ես. թեև մենք «գեղարվեստ» չենք, բայց ուրախացանք ու հպարտացանք. ես տարա դպրոց, ցույց տվի թե վար-

դասեանների և [ձեռ տղոցը: Պայանը][3] առավ՝ ցույց տվեց աշակերտներին և նկարչության ուսուցչին: Հետո տարա վանք, ցույց տվի վարդապետներին: Բոլորի վրա էլ լավ ազդեց. [ձեռ՝ պարծանք է մեզ համար, ազգային պարծանք և այլն, և այլն:

Ես քո մասին գրեցի Փարիզ՝ Վարանդյանին, որ օգնե, ինչպես և [մեր] մի կերպ հասկացուցի պ. Ղուկասյանին[4]. չգիտեմ, ի՞նչ եղավ: Փիրումյանին չէի կարող գրել, որովհետև հետը լավ չեմ: Ուրիշ ո՞ւմ գրեմ, ո՞վ կա:

Քո նկարներիդ (պլրոցում [ձողած) մասին ինձ չէիր գրել. տեսա Ժորժիկին, չա՜տ զբաղված է խեղճը քննություններով. ժամանակ չունի. ես կաշխատեմ հետաքրքրվել այդ գործով և ուղարկել քեզ. դժվարը Ակադեմիայից [ուլլտվություն ձեռք բերելն է արտասահման նկարներ դուրս հանելու համար. այդ էլ մի կերպ կանենք:

Միայն Մայիսի 31-ին եկավ Սարյանը[5]. երեկ պատահմամբ տեսա, այսօր ժամադիր ենք. նամակդ կուտամ այսօր: Ինքը կգրե քեզ, երևի:

Իմ տրամադրությունս լավ ու գեչի խառնուրդ է: «Ուստա Կարոն» գրեցի բավական բան, նորից խանգարվեցավ, տեսնենք՝ երբ եմ վերսկսելու: Քանի ուշ, այնքան լավ, միայն [ձե՝ հանկարծ չմեռնիմ...[6]

Նամակդ տվի Սարյանին. կարդաց և մտածեց. լուռ, խելացի մարդ է. առանց մտածելու բան չի անե. հիմա չա՜տ զբաղված է. երևի, երբ ժամանակ ունենա, կգրե:

Նամակս բերում է քեզ եղբորս որդին՝ Նիկողայոս Իսահակյանը. կծանոթանաս հետը, և բարի կլինես մի քիչ հետը [ափառես, մի-երկու տեղ ցույց տաս. այս մասին հատուկ կխնդրեմ:

Մենք բոլորս լավ ենք, և ջերմագին բարևում ենք քեզ. ցանկանալով հաջողություն և առողջություն:

Քո Ավետիք Իսահակյան
Issakian
2266 Dorsoduro

21. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

<1924, 4 *Հուլիսի*>[1], Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Հուլիսի 13-ին, կիրակի օրը Փարիզ կհասնի դերձակ կարապետը (Գեորգ վարդապետի եղբայրը, ճանաչում ես նրան), և հետը կբերե քո նկարները. այնպես որ դիմավորիր նրան կայարանում (Gare de Lion)[2]*, համ նկարներդ առ, համ օգնի՛ր նրան, լեզու չգիտե. կարծում եմ, որ առավոտուն կհասնի Փարիզ. կարող ես իմանալ. եթե կայարան չերթաս, նկարներդ դժվարավ պիտի կարողանաս ձեռք անցնել. ի՞նչպես պիտի գտնի քեզ և հանձնե. դու պիտի նրան տեսնես:*

Մենք լավ ենք, բայց չա՛տ ձանձրանում ենք. ամառը մնում ենք Վենետիկ, ո՞ւր գնանք. փող չկա:

Բարևներով Ձեր Ավետիք

22. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

<1924>[1], 15 *Հուլիսի*, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Վաղուց է քեզ նամակ չեմ գրած: Այս տարի ամեն տարվա վրա քեֆս գեչ է: Պատճառները բազում են: Բայց բոլորը

մի ակնաղբյուր ունեն – չատ երկար տևեց զարիբուԹյունը, և ծերանում եմ ժողովրդից հեռու... և այլն, և այլն: Մնալ չի լինում, գնալ չի լինում, ի՞նչ պիտի լինի սրա դեղը:

Ամեն տարի հուլսերս մյուս տարվա վրա ենք ձգում և միչտ խաբվում: Այս վերջին տարին է, որ ես պիտի համբերեմ: Մյուս տարի այլևս չեմ մնալու դուրսը. կամ հայրենիք, կամ Թափառել բոլոր լայնուԹյունների վրա, բայց ավելի չուտ՝ հայրենիք: Ասում են, որ լավ է, կարելի է ապրել, հաճելի է նույնիսկ, գնալ և սեփական աչքերով տեսնել իրականուԹյունը:

Այստեղ է նկարիչ Սարյանը: Հաճախ տեսակցում ենք իրար: Բոլշևիկ չէ: Պատմում է նրանց դրական ու բացասական կողմերն ու գործերը: Ասում է, որ եԹե խաղաղուԹյուն լինի, մի քանի տարուց հետո (5-6) չատ լավ երկիր կլինի՝ Թեև պզտիկ, բայց բարեկարգված: Հույս չունի, որ Կարսը և Սուրմալուն հետ գրավեն Ռուսները, որովհետև Ռուսները և նրա բաղկացուցիչ Սովետները չատ ավելի Թրքասեր են, քան Հայասեր, և հետո բոլշևիկ զինվորը չի կռվի Հայաստանի սահմանները մեծացնելու համար: Հույս չունի, ԹեԹ բոլշևիզմը ընկնի, որովհետև զինված կուսակցուԹյուն է և չատ խիստ ու սարսափեցնող ռեժիմ: Պետք է գիտնալ այս և մեր ազգային չահերը հարմարացնել դրան: Հայրենասեր մարդ է և հասկանում է ԴաշնակցուԹյան պահանջները...

Ստացա երեկ «Հայրենիք» ամսագրի Թիվը[2]: Միայն ոտանավորները կարդացի դեռ և Շիրվանզադեի գրածը. ոտանավորներից կային լավ բաներ, Վազգեն Շուչանյանի կտորներից...

Ուղարկում եմ Սարյանի մասին գրածս[3] «Հայրենիք» ԹերԹի համար: Ամսագրի համար հետո բան կուղարկեմ. հիմա այնպիսի չոգ է, տաք, որ անկարելի է պարապելը. սովերի մեջ 30-32 աստիճան...

Համբույրներով և բարևներով – քո Ավետիք

23. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

<19>24, 30 Հուլիսի, Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Զարմանում եմ դերձակի հիմարության վրա, եթե չասեմ վատության. նա խոստացավ ինձ տանել, և դիտեր, որ վաճառքի համար չէ, և մաքսի բան չէր կարող լինել: Ես ու Աճեմյանը[1] միասին գնացինք Ակադեմիա և թղթերն առանք, որով իմացվում էր որ նկարները ծախելու համար չեն: Զգիտեմ ինչո՞ւ այդ կերպ դասավորվեց. հիմար մարդկանց հետ գործ ունենալը միշտ փորձանք կբերե: Եթե չհամաձայներ տանել, փոստով ուղարկեի, հավանականորեն այդ փորձանքին չէինք հանդիպի:

Շատ բարևներ մեր բոլորից. Վենետիկը չափազանց դառնաձանձրալի է եղել ինձ համար:

Համբույրներով քո Ավետիք

24. <ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ>

<1924>[1], 4 օգ<ոստոսի>, Վենետիկ

Ջերմ բարևներս

Ադեք<սանդր> Մարտունի[2], Կարեն Միքայել, Գար<եգին> Լևոնյան, Դ. Դեմիրչյան, Թումանյանի ընտանիքին, Ս. Խանոյան, Սուրխաթյան, Շարբաբչյան, Հակոբ Հակոբյան, Նար-Դոսին, Սիսակ Տեր-Սիմոնյան, Սարգիս Վարդանյան, Գրիգոր Վարդանյան, բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյան, Միշա Մանվելյան, Սիրական Տիգրանյան, Հ<ակոբ> Մանանդյան, Կար<ապետ> Մելիք-Հովհաննջանյան, Հր<աչյա> Ալյառյան, Մ<անուկ> Աբեղյան, Խաչատուր Աստվածատուրյան, Վահան Թոթո-

վենց, Մկրտիչ Ջանյան (Ջանան), Գեորգ Աստվածատուրյան, Մամիկոն Գևորգյան, Տիգրան Ռաշմաչյան, Սիմոն Հախումյան, Զաքո Եղիազարյան, Պողոս Մակինցյան, Աս<անազ> Մռավյան, Դրաստամատ Տեր-Սիմոնյան (Մոսկվա՝ հորը՝ Ասքանազին, Սիսակին, Արշավիրին), Արսեն Տերտերյան, Դավիթ Անանուն, Երվանդ Շահազիզին, Վահան Արծրունուն, տիկին Լուսիկին, Ստ. Զորյան:

Հարգանքներս բարևներս՝ Թամանյանին, Տարագրոս[3], Ախիկյան[4], Մռավյան, Լուկաչին, Աչոտ Հովհաննիսյան և Յ. Խանզադյան.

Սևան՝ Երվանդ Գասպարյանին:

Ձեր Ավետիք Իսահակյան

4 [Հուլիս] օգ<ոստոս> Վենետիկ

25. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 5 օգոստ<ոսի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Ընկեր Մ. Վարանդյանի[1] աղջիկների հետ եկավ և մի կին (հայի կին) սովիեթական անցագրով, ուզենալով Գաղղիա մեկնել, եթե վիզա աներին, բայց վիզա չարին. հիմա, ուրեմն պիտի գնա հայկական անցագրով: Վարանդյանը այստեղ եղած ժամանակը նրան խոստացավ այդ դեպքում անցագիր տալ. այսօր տիկինը թեև նամակ գրեց Վարանդյանին, որ նա էլ Ձեզ իմացնե, և մինչև ժամանակ ես էլ գրում եմ Ձեզ, որ ժամանակ չկորցնելու համար անցագիրը ուղարկեք. դրամը կստանաք լիակատար. անցագրի հետ կուղարկեք ստացագիրը, կամ ինչպես որ հարկն է՝ որ անցագիրը տանք և փողն առնենք. կուղարկեք իմ հասցեով:

Նա (տիկինը) անհրաժեշտ է համարում իր սովիետական անցագիրը իմ մոտ պահել, որովհետև դրամ ունի ստանալու Ռուսիայից:

Անունը Պոլինա-Մագդալինա.

Հոր անունը Սիմեոն, մոր՝ Տատիանա.

ազգանունը (մականուն) Գյուլ-Նազարյան,

ծնած է Բաքու, 1889 թիվ:

Եթե ծննդաքաղաքը նպաստավոր չէ, դրեք Հայաստանի մի քաղաքի անուն՝ Վան, Երևան... Մի տարի ժամանակով. Ֆրանսիայի համար:

Մի հայ, որին երկու տարի առաջ անցագիր էիք տվել՝ Գրիգոր Բաբայան, ուզում է երեք ամսով Ավստրիա գնալ-գալու անցագիր ունենալ՝ ի՞նչ կարժենա, կամ ուղղակի՝ տարեկան ի՞նչ կարժենա. դա էլ գրեցեք ինձ. այս նամակը նրա տանն եմ գրում, այդ պարոնի, և այդ հարցը տվեց:

Ուղարկում եմ տիկնոջ 2 նկարը ևս: Կարծում եմ, որ կհավատաք ինձ և առանց սպասելու Վարանդյանի նամակին, կուղարկեք անցագիրը, որովհետև տիկինը չա՛տ երկար սպասեց Վենետիկում. անշուշտ, օրեր հետո կստանաք և Վարանդյանի հաստատող նամակը:

Ջերմ բարևներով և շնորհակալությամբ

Ձեր Ավետիք Իսահակյան

26. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

<1924>[1], 9 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Արման.

Խնդրում եմ անցագիրը esspresso *ուղարկես, հապճեպով:*

Տիկինը՝ Պոլինա (Մագդելա) Սիմոնյան – Գյուլ-Նազարյան.

գլխի մազերը չագանակագույն՝ chatain,

աչքերը՝ նույնպես chatain

քիթը՝ փոքրիկ, բերանը՝ փոքրիկ,

ոտքերը՝ փոքրիկ

հասակը՝ միջակ.

իր զբաղմունք – ոչինչ, ամուսին է ինժեների. տանտիրուհի:

Անցագրի թիվն է 716027, տրված է Բագու, գնում է Ֆրանսիա, մորը և քրոջը տեսնելու:

Շուտով ուղարկեցեք:

Բարևներով Ձեր Ավ. Իսահակյան

Լուսանցքում՝

կոշիկի № 34. չծիծաղեք: Շատ ու շատ բարևներ Ձեզ և տիկ. Մարտիրոսյանին[2]: Դեռ փողը չի եկել նորան:

27. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԻՆ

1924, 9 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Վարդգես.

Ձեմ հիշում, թե քեզ վերջին անգամ երբ եմ նամակ[1] գրել, սակայն այս տողերը գրում եմ հիմա չնորհակալությունս հայտնելու այն ջանքերի համար, որ գործ ես դրել ինձ օգնելու. այս տարի վիճակս լավ չէ, աստիպենդիաս կիսվել է, և մի օր էլ, անշուշտ, կվերջանա. իսկ այս շատ է խանգարում զբաղմունքներիս, վրդովելով հոգեկան դրությունս:

Եթե միջոցներից զրկվեմ, ստիպված եմ հայրենիք վերադառնալ, որ չի ժպտում ինձ, թեև շատ կարոտցել եմ. միայն ի՞նչ պիտի անեմ այնտեղ, այն ընդհանուր խեղա-

դարուքյան մեջ, և վերջապես ո՛չ բնակարան կա, ո՛չ հացի աղբյուր. կենսաթոշակ ասված բանը, իմացա, որ ամսական 30 րուբլիի մեջ է, նա էլ կանոնավոր չի վճարվում. ուրեմն ի՞նչ կարող եմ այնտեղ անել. ո՛չ մամուլ կա, ո՛չ մի ուրիշ բան. ինչևէ:

Ինդիան Հարբըրից[2], ընկ. Վարդան Մաթոսյանից նամակ առա, որ քո դրդումով ինձ համար 70 դոլլար է հավաքած՝ գրքերիս հրատարակության համար և ղրկված է Բոստոն՝ Ար<չակ> Ջամալյանի[3] վրա, դեռ չեմ ստացել:

Գիրք հրատարակելու պայմանները Եվրոպայում չա՛տ ծանր են: Վեննատիկ բան չի կարելի անել. համ սուղ է, համ վանքը ցենզուրա ունի՝ աշխարհիկ գրվածքներ չեն տպում: Վիեննայի պայմանները առասպելական են: Թուղթը իրենց վրա, Րաֆֆիի «Սամվելի» դիրքով, (միջակ թուղթ), 1000 օրինակի համար, տպագրական բոլոր ծախսերով միասին, 16 էջը (մի <մամուլ>) կարժենա 24 դոլլար: Այսպես ուրեմն, «Ուստա Կարոս» որ մոտ 700 էջ է, կբռնե 1000 դոլլար, մի լեռնաչափ գումար: Գրել եմ Փարիզ՝ իմանամ պայմանները. եթե հարմար լինի, թերևս մի բան տպեմ: Ուրեմն, կարծիքովս, անկարելի է այդտեղ 1000 դոլլար հայթայթել. մնում է, վեպս մաս-մաս տպել ամսագրում, մինչև մի լույս ծագի, բայց մի բան ինձ համար անհրաժեշտ է, որ մոռացա Դարբինյանին գրել. եթե պետք եղավ՝ կգրեմ. իմ բյուճեն լրացնելու համար, այսինքն ապրելու համար, իմ ստիպենդիայից և երբեմնակի հոնորարներից դուրս, պետք է ամսական 20 դոլլար. դա պետք է դառնել, որ է ամսական 400 լիրեթ, դոնե մի-երկու տարի, մի կամ երկու տարի, մինչև հայկական իրերի դրությունը պարզվի. չորս կողմից Հայաստանից եկողները ասում են թե, Ռուսները բախվելու են սրիկա թուրքերի հետ, կարսը հետ են գրավելու. կարսը առնելուց հետո, ո՞ր հիմարը կհամառի Եվրոպա մնալ, եթե իրավունք ունի տուն դառնալու. անշուշտ սա հույս է, բայց մարդիկ հույսով են ապ-

րում, հետևապես հույսը ամենադրական բանն է (Ուստա Կարոն էլ ուրիշ բառերով նույն կարծիքը ունի), քանի որ առանց հույսի չի կարելի ապրել: Հիմա տեսնեմ, կարո՞ղ ես մի բան անել. լսել եմ, որ մեր Շիրակեցիները չա՜տ կան, հարստացածներ. նրանց համար ոչինչ բան է. դժվար է բանվորի համար, որոնցից չեմ ուզում կտրել նրանց բերնի հացը՝ քրտինք-արյունով ձեռք բերած: Խոսիր դրա մասին Դարբինյանի և ուրիշների հետ: Եթե համաձայնում եմ այս <խնդրով> դիմել, նշանակում է ուրիշ ելք չունիմ. չեմ ուզում բոլշևիկներին դիմեմ ստիպենդիայիս համար, երևի սիրով կուղարկեն, բայց հետո կշահագործեն անունս:

Ուրիշ էլ ի՞նչ գրեմ. լավ ենք, ապրում ենք, առողջ ենք առայժմ. լավ չեմ պարապում, բայց պիտի ճիգ թափեմ, պարապեմ:

Դուք ո՞նց եք, ինչպե՞ս է Արմենուհու առողջությունը. նրա գրվածքների մեջ հայրենաբաղձություն չատ կա. տակավին չի հնազանդվել ճակատագրին:

Մեկ-մեկ գրեցեք ինձ, իմ ծուլությանը մի նայեք, դուք երիտասարդ կորովի տեր եք, ես հոգնած եմ՝ գրեթե ոչինչ չարած:

Շատ բարևներ մերոնցից:

Համբույրներ քեզ և Արմենուհուն:

Ձեր Ավետիք

28. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1924>[1], 9 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Այսօր ստացա Հուլիս 26-ի թվակիր նամակդ: Մի 20 օր առաջ քեզ մի նամակ էի ճամբել՝ նկարիչ Սարյանի մասին գրելով. հիմա ստացած ես անշուշտ:

Սիրելիս, գրեթե երեք ամիս է որ ես մի տող գրած չունեմ զանազան պարագաների բերումով: Մեկ որ՝ անտանելի տաք է, Վենետիկի չիրոկո կոչված մեղկ, անդամալուծող չոգը: Հետո ընտանեկան բաներով գլուխս խառն էր (եղբորս որդին էր եկել մոտս, հիմա էլ՝ նրա նշանածը): Եվ երրորդ՝ տնտեսական վիճակս այս տարի մտահոգիչ է. իսկ իմ թուլյլ բնավորությունը, եթե մտահոգված է, անընդունակ է բան անելու: Ուրիշը կխթանվեր կարիքից, իսկ ես ընկճվում եմ: Նյութապես անհոգ սիրտ լինեմ, որ կարողանամ գրել: Բայց և այնպես, հենց որ այս տաքերն անցնեն, սկսելու եմ պարապել:

Ուրախ եմ, որ «Ուստա Կարոյի» [2] *հատվածը այդտեղ հետաքրքրություն է առաջ բերել: Բանն այն է, որ այդ գլուխը մշակվածներից չէ տակավին: Իմ հոգսը միշտ այն է, որ վեպս խտացնեմ, ավելորդ խոսք չլինի: Սա դժվարին գործ է, բայց կարողացածիս չափ սիրտ անեմ: Երբեմն գլուխներ կուղարկեմ, որ տպես: Թերևս այս տարի առաջին կեսը, մոտ 300 էջ, լույս տեսնի:*

Այո՛, վերջին տողը սխալ էր. պետք է լիներ՝ «Էս էլ էսման», ինչպես և «Հայաստանին» [3] *ոտանավորի մեջ մի սխալ կար՝ «եղեռով», որ պետք է լիներ «եղեռներով»: Մի վանկ պակաս էր:*

Հարցնում ես, թե ինչպե՞ս են «Հայրենիք» ամսագրի վերջին թիվերը: Անկեղծորեն ասում եմ, որ միշտ լավ են, և միակ լավ հանդեսն է ներկա հայության մեջ: Ջանք սիրտ չխնայել, որ շարունակվի:

Հայրենիքից նամակներ առնում եմ, ընտանեկան են: Լավ են, սակայն ընդհանուր կացության մասին չեն գրում: Արդեն ամեն ոք այնտեղ զբաղված է հաց ճարելու խնդրով: Ասում են եկողները թե՝ մեծ հավանականություն կա թուրքերի հետ բախվելու, կարսը հետ գրավելու: Ես հավատացող չեմ: Բոլշևիկներից անկարող եմ այդ սպասել. նրանք քաջ են՝ տան մեջ մարդ խեղդելու, դուրսը՝ հավ են:

Ստացա Համաստեղի «Գյուղը»[4]: Նորից կարդացի մի քանիսը: Նրան պիտի գրեմ տպավորություններս: Շա՛տ լավ բաներ կան, հիանալի է նրա ռեալ դիտողության կարողությունը: Հոգեբանական ճիշդ հոտառություն ունի, բայց ոչ անասունների նկատմամբ. դա ենթադրություն է, ոչ անհերքելի իսկություն: Գիրքը լրիվ և դրական պատկեր տվեց նրա տաղանդի մասին, քան ինչ որ առաջ կարդացել էի: Բայց ո՞վ է նա, անունը, ո՞րտեղացի է, քանի՞ տարեկան է...

Ջերմ բարևներով և համբույրներով – քո Ավետիք

29. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 19 օգոստ<ոսի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Նորից անցագիր! այս անգամը հարսս է, եղբորս տղայի կինը, որ Ամերիկա պիտի երթա:

Անունն է Lousik Esagian *(փակագծի մեջ* Issakian*). եղբորս տղան Ամերիկայում* Issakian-*ը դարձրել է* Esagian. *դուք էլ այդպես գրեցեք՝* Esagian (Issakian)*:*

Ծնվել է 1901 թ. նոյեմբ<երի> 10, Թավրիզ (Պարսկաստան)

պսակված 1921 թիվ

տիկին Լուսիկը միջահասակից բարձր է, ունի սև աչքեր, սև մազեր

զբաղմունքը – կնիկություն

Անցագիրը, որի հիման վրա պիտի տաք, Սովիեթական է, և ներկայացած է դեսպանատունը Ռուսական, թիվն է 6519. դա չի ներկայացնում Ձեզ, 1923-ին տված է:

Հետո ինչ-որ վարքի ու բարքի (մորալի) վկայական են պահանջում, որ նույնպես դուք եք ի զորություն տալու,

ինչպես ասաց ինձ Քերովբե վարդապետը: Մի խոսքով՝ ինչ որ կարևոր է:

Խնդրում եմ ծախսերը մի չափով ղիջես, որովհետև չա՛տ ծախսեր ունինք:

Անշուշտ ստացաք ուղարկածս դրամը 155՝ տիկ<ին> Գյուլնազարյանի կողմից:

Ո՞ւր մնաց տիկ<ին> Մարտիրոսյանը. այդտե՞ղ է, թե գնաց Սիցիլիա. ստացա՞վ Ամերիկայի բանկից իր դրամը. մենք դեռ թուղթ չենք ստացել բանկից:

Տիկին Լուսիկի հոր անունը Բալասան է, իսկ ամուսինի անունը՝ Նիկողոս Իսահակյան (Nikogos Esagian):

Ջերմ բարևներ մեր կողմից Ջեզ և տիկ. Մարտիրոսյանին:

Ջեր՝ Ալեքսիք Իսահակյան

P.S. *Եթե լուսանկարի պետք եղավ, գրեք, կուղարկեմ:*

30. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

<1924>[1], 24 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Վերջին նամակդ ստացա և պատասխանեցի՝ Խաչմանյանի[2] տարեցույցի համար երկու փոքր բան ներփակելով:

Հիմա ուղարկում եմ մի բոլորովին երիտասարդ տղայի դրվածք «Հուդիթ»[3] անունով՝ «Հայրենիք» ամսագրի համար: Հեղինակի անունն է Փոլուգյան Սլինդ[4]: Բուն անունը առայժմ թաքցնում ենք, որովհետև Մուրատ-Ռաֆայելյան ստիպենդեատ է. վարդապետները լսեն, կարող են վնասել այսպիսի հեթանոս գրվածքի համար:

Գրողը 19 տարեկան է, սովորում է Վենետիկի գեղարվեստից դպրոցում: Շատ ընդունակ ուսանող է, միշտ ա-

առջինը: Լավ նկարում է և, ինչպես որ կտեսնես այս պրոմոքով, լավ պրոդ է: Պակասությունները իր տարիքինն են: Անշուշտ, վերջ չէ ապագայությունների, որ բնական է:

Գրոմոքը լիքն է գյուտերով, գեղեցիկ պատկերներով և անսահման տաք պատմությամբ: Ներշնչված պրոմոք է: Երկար ժամանակ աշխատել է պատմական փաստերի, ծանոթությունների վրա, սովորույթների, պիցարանության վրա... Գրքեր է քրքրել, Հերոդոտոսից[5] և Ասոմածաշնչից սկսած:

Այս պրոմոքը ևս շատ սիրեցի, և իմ աչքերի տակ կազմվեցավ – կատարվեցավ:

Հիմա ուզում եմ, որ անպատճառ մրցանակարաշխության ժյուրիին ներկայվի, և խնդրում եմ նրանց ուշադրությանը հրավիրես «Հուդիթ»ի վրա: Իհարկե, դուք միայն պրոմոքի արժեքը պիտի նկատի ունենաք: Իսկ եթե կոմմունակի բաներ էլ հաշվի առնեք, իմ կարծիքով երկու տեսակետով էլ նա (Փոյուդյան Արինդը) կշահի. այսինքն՝ պատանի, առաջին փորձ, և այլն:

Շատ ուրախ կլինեի, որ տղան առանար 50 դոլարը: Նրա համար կլիներ ոգևորության մեծ ազդակ:

Գրոմոքը ուղարկում եմ Հոկտեմբերի թիվի համար: Եթե չհասավ էլ, դուք ի նկատի պիտի ունենաք մեր ուղարկած օրը, Օդոստոսի վերջերին: Կարծում եմ, որ Սեպտեմբերի սկիզբներին կհասնի ձեռագիրը, և Հոկտեմբերի մեջ կտպվի: Իհարկե, մրցանակի հարցից դուրս, արժանի է, որ լույս տեսնի սա: Եվ բարի կլինիք տպված ամսագրից մի օրինակ ուղարկել ինձ՝ հեղինակին տալու համար: Անշուշտ, իբրև ձեռագիր ևս, նա կարող է ժյուրիի առջև պրծել:

Համբույրներով քո Ավետիք

31. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1924, 28 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Ստացա նամակդ, և մի երկու օր առաջ էլ [նամակները] քո[1] և հանդ<ուցյալ> Բաշխիի[2] գրքերը. չատ չնորհակալ եմ: Բաշխիի այդ գրուքյունը իր ժամանակին կարդացել եմ, հիմա կարդացի քո նախաբանը: Իսկ քո գիրքը դեռ չեմ կարդացել (թերթեր). ուղղակի մարդ գրքախեղդ է, ուզում է ամեն բան կարդալ, բայց ոչինչ չի կարող կարդալ. սեղանիս վրա դիզված են գրքեր, և նորից դիզվում են. և սակայն մի օր էլ սիրտդ ուզում է, կարդում ես:

Եվ այդ կարդալն էլ ինձ չա՛տ է վնասում գրելու. օրերով կարդում եմ և չաբաթներով դրիչ չեմ բռնում. այնքան լավ գրքեր կան, որ մարդ երբեմն մտածում է, էլ բնավ չգրել, բայց կարելի չէ. գրողները հիվանդ մարդիկ են:

Հայաստան գնալս տեսականորեն վճռել եմ, բայց՝ երբ, չգիտեմ. այս տարի անցավ, մինչև գնամ ձմեռ կլինի, մնում է մյուս տարի, բացի այդ ձեռքիս տակ գրուքյուններ ունեմ, որ կուզեմ վերջացնել, հետո գնալ, որովհետև գիտեմ, որ Հայաստանում չպիտի կարողանամ բան անել — հյուր գնալ, թափառել, քեֆեր և այլն. ժամանակ պիտի չտան. և եթե ժամանակ էլ ունենամ, անշուշտ մի-երկու ամսից հետո, հավանական է նոր երևույթներ դիտեմ ու վերարտադրեմ:

Ուրեմն, եթե գնամ, գարնանը պիտի գնամ: Գրում ես թե գուցե «գնալս փոշմանեմ»: Ինչո՞ւ. ես հիացած չեմ, որ փոշմանեմ. ես գնում եմ ժամանակավոր, մի տարով, մենակ՝ ընտանիքս Վենետիկ թողնելով. գնում եմ տեսնելու կարոտացածս երկիրը, ժողովուրդը, մերոնց և հին ըն-

կերներս, և լսեմ փող ու զոռնան, ինչ որ սրտիս մոտիկ են, և ո՛չ թե գնում եմ Սովիեթական կարդերով հիանամ. և վերջապես 14 տարի է հեռացել եմ հայրենիքից, բավական է:

Նյութ ես ուզում. իսկապես ցավում եմ, որ չկարողացա ընդառաջ գալ քո փափագին. բայց ի՞նչ անեմ. եթե գրում եմ մի բան, նա էլ «Հայրենիքն» է տանում, և առհասարակ քիչ եմ գրում. ժամանակս կլանված է այն երկերիս վրա, որոնք ուզում եմ ավարտել անպատճառ. և դժվար են, մեծ են, իսկ ես այնքան էլ եռանդուն աշխատողներից չեմ, գիշեր ու ցերեկ իրար խառնող: Հանգիստ եմ պարապում, և մանավանդ շատ եմ կարդում, զգալով միշտ, որ տգետ եմ կատարյալ երկ տալու համար. պետք է լեցնեմ թերիներս, քանի դեռ ընդունակ եմ կարդալու, որովհետև մի քանի տարի հետո ուշ կլինի:

Սակայն այս նրա համար չեմ ասում, իբրև չքմեղանք, իրողություն է. բայց և այնպես հենց որ մի լավ նյութ գտնեմ, երկար, մի քանի թերթերի համար, կիրականացնեմ փափագդ:

Տղամարդու խոսք եմ տալիս:

Վերջ ի վերջ չեկան Համոյի զավակները. կարծեմ մայրը (նախկին կինը) հիվանդ է, այս պատճառով մնացին: Վարանդյանի երկու աղջիկները եկան մի ամիս առաջ, և գնացին Ժնև:

Շնորհակալ եմ քո դեպի ինձ ունեցած ուշադրության համար. ջերմ բարևներ քեզ, կնոջդ և երեխայիդ պաչիկներ: Բարևներ Համոյին, Ռուբինային և Էլզային, և Ն. Աղբալյանին, և Սեդրակ Պալըզճյանին՝ ընտանիքով:

Մենք լավ ենք, բայց դու ո՞րտեղից ես հնարել թե երկու երեխա ունեմ. դժբախտաբար մի հատ ունեմ: Մի տղա, 13-14 տարեկան:

Համբույրներով Ի. Ավետիք

32. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

1924, 28 օգոստ<ոսի>, Վենետիկ

Սիրելի Սարյան.

Շնորհակալությամբ ստացա անցագիրը և թղթերը, սակայն քնավ հույս չունիմ որ հարսիս հաջողվի երթալ Ամերիկա. փորձեր ենք անում միայն:

Երեկ ուղարկեցի 105 լիրեթ:

Նորից մի դիմում: Մի տարեց հայ, կովկասցի, հին հարուստ, այժմ նավաբեկ, գնում է Փարիզ՝ հուսալով թե իր կալվածական թղթերը վաճառե, մի բան ստանա: Անցագիր է պետք նույնպես. երաշխավորում եմ՝ գիտնալով, ճանաչելով նրան: Անունն է՝

Հովհաննես Խաչատուրյան Եղիազարյան,

ծնված է Շամախի (Կովկաս), 1863 թ. հիմա 61 տարեկան է:

Հասակը միջակ

մազերը՝ սպիտակ, թեև այլևս մազ չունի, սափրում է. անշուշտ որ բուսնի, սպիտակ է լինելու

աչքերի գույնը – շագանակագույն

բնակատեղին հիմա Ագոլո (prov. de Trevin)

անցագիրը՝ հայ սովիետական, թիվ 3456

մեկնում է Ֆրանսիա:

Կարող է վճարել անցագրի դնի կեսը՝ 75 լիրա միայն:

Կարծում եմ և խնդրում եմ համաձայնիս՝ չունի մարդը:

Ինձ և մանավանդ կնոջս շատ ուրախացրեց Ձեր քրոջ ամուսնությունը. բախտավոր լինին, բարով կարգը մյուս քրոջդ հասնի, և հետո՝ քեզ – դա դյուրին է:

Բարևներով Ձեր Ավետիք Իսահակյան

Հ.Գ. Ով որ գալիս է՝ ինձ է դիմում անցագրի մասին: Վարանդյանն ասում էր՝ մեր վերջին օրերն է, մի լավություն անենք և հեռանանք. ճշմարիտ է:

Նույն

33. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1924, 30 օգոստ<ոսի>, Վենետիկ

Սիրելի պ. Հ. Ավագյան.

Խնդրում եմ չա՛տ, ներողամիտ լինիք այսքան ժամանակվա լռությանս համար:

Վերջին ամիսները այնքան տաք էին, որ անկարելի էր գրեթե զբաղվիլ. գրություններս երեսի վրա էի ձգել. հիմա հովացավ, սկսել եմ զբաղմունքներս:

Գարնանը մտադիր եմ Հայաստան վերադառնալ. կառավարությունը (մեր) քանիցս հրավիրել է ինձ, վերջապես դրական խոսք տվի. հիմա ուզում եմ մինչև գարուն ձեռքիս տակ եղած մեծ գրություններս ավարտել, ապա մեկնել, դիտնալով, որ Հայաստանում երկար ժամանակ պիտի չկարողանամ լուրջ զբաղվիլ. օրերս պիտի անցնին այնտեղ բարեկամական և ընկերական, կովկասին հատուկ խնճույքների մեջ, թափառումների մեջ. և վերջապես, նոր նյութեր պիտի հավաքեմ նոր բաներ գրելու համար:

Ձեռքիս տակ երկու մեծ վեպեր ունեմ, որ փոխնեփոխ մշակում եմ. հույս ունեմ մինչև գարուն ավարտելու:

«Կոչնակի» համար ուղարկում եմ այս երկու կտոր բաները[1]. սրանից հետո կաշխատեմ ամիսը մի բան հասցնել. աշնան և ձմեռվա ամիսները, առհասարակ, լավ եմ աշխատում:

Վշտով կարդացի ողբացյալ պրոֆ. Անանիկյանի[2] մահը. չա՛տ ափսոս. դիտուն մարդ էր...

«Կոչնակը» շարունակում է մնալ իր բարձրության վրա. փափագելի է որ միշտ տևե և միշտ օգտակար հանդիսանա. նրա դիրքը դեպի Սովիետ սիտի լինի, իմ կարծիքով, և խարազանող, և դովաբանող, ո՛չ թե ուրիշների նման՝ կամ բոլորովին խարազանող, կամ բոլորովին դրախտ ներկայացնող:

Մնամ ջերմ բարևներով և հարգանքներով

Ձեր անձնվեր՝ Ավետիք Իսահակյան

34. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

<1924, 5 սեպտեմբերի[1]>, Թրիեսթ

Համբույրներս:

Քո հայրիկ

35. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

<1924, 8 սեպտեմբերի>[1], Պոստումիա[2]

Համբույրներս Վիգենին:

Քո հայրիկ

7.X. Պոստեմիա

36. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

1924, 12 սեպտեմ<բերի>, Վենետիկ

Սիրելի Արման.
Այսօր ստացա Ձեր նամակը՝ տիկնոջ վրա. նա դեռ չի եկել:

Ներողություն, որ քեզ նեղություն պատճառեցի Եղիազարյանի անցագրի համար: Կնոջս հայտնի էր, որ այլևս պետք չէր անցագիրը. նա էր հետ ուղարկել: Ես բացակա էի, գնացել էի Թրիեստ՝ մեր գյուղացիներին տեսնելու, որ եկել էին Ամերիկա գնալու և մնում են: Այնտեղ էլ լսեցի, թե պարսկաստանցիների քոթան[1] դեռ չի լցվել. խնդրում եմ, եթե կարող ես, Հռոմի ամերիկ<յան> կոնսուլից (հայ է՝ կարծեմ) իմանաս, թե ի՞նչ վերաբերմունք ունեն դեպի պարսիկները. մեր հարսը[2] թավրիզցի է. եթե թույլ կտան պարսիկներին, նա ունի իր աղջնակ ժամանակվա պասպորտը, որով եկել է Ռուսիայից: Այստեղի կոնսուլը մի խիստ մարդ է, և բոլոր պատասխանները բացասական են: Ուրեմն այս. իմանալ, թե պարսիկների (երկսեռ) քոթան ի՞նչպես է, կարող են վիզե ստանալ:

Ջերմ բարևներով և հարգանքով

Ձեր Ավետ. Իսահակյան

37. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1924, 12 սեպ<տեմբերի>, Վիեննաից

Սիրելի Կարեն.

Մեծ ուրախությամբ ստացա քո և Սարյանի[1] գրությունները. անմիջապես չկարողացա պատասխանել, որովհետև մի երկու օր հետո մեկնեցի Թրիեստի կողմերը՝ մի բարեկամի մոտ հյուր և ամբողջ երկու շաբաթ միասին թափառեցինք բնության մեջ. նոր եմ վերադարձել և ձեռնարկել եմ զբաղմունքներս:

Զգիտեմ ի՞նչ գրեմ, ինչո՞ւց սկսեմ. ա՛յնքան շատ բան կա ասելու, որ անհնար է դրան մոտենալ. անշուշտ մի օր մեծ բախտ պիտի ունենամ հայրենիք դառնալու Մոսկվայից և կհանձնիմ քեզ...

Մխիթարված և հպարտ եմ զգում ինձ, որ ընկերներս, դու և շատերը, այսքան դաժան, անմարդկային տարիներից հետո կարոտել են ինձ, փափագում են ինձ տեսնել, ես էլ. ուղիղն ասած՝ իմ վերադարձիս ամենալիրիկ մասն է կազմում դա: Դու գրում ես թե՝ չա՞տ ուրախանալու բան կա տեսնելու. անշուշտ հավատում եմ — հայ հող, հայ լեզու, հայ կուլտուրա, Շիրակի ջրանցք[2]. մյուս բաների վրա աչք կգոցեմ, բայց ամենից անուշը ընկերներիս գրկելն է, նրանց հետ գիշերը լուսացնել զրույցով ու քեֆով, մանավանդ թառով ու փողով (դուդուկ):

Ինձ արտասահմանը բնավ «չի կլանել»[3] (քո խոսքն է), բնավ չեմ փոխվել, և սիրտս երիտասարդական բոլոր ավյունով բաբախում է հայրենյան համար: Հայրենյուն. ուրիշ ոչինչ. մյուս բանները՝ «Նաիրյան աշխարհը» իր նոր լոզունգներով դարդակ հրացան է ինձ համար, որ երեխաներին է հիացնում: Գործ պիտի տեսնել, չինել ու մեծանալ, և բնավ չխաբվել. երբեք չզոհել նույնիսկ հայ գյուղացու սատկած էշը տիեզերական հեղափոխությունների և այլ էքսպերիմենտների համար: Խելացություն չէ մի ռոմանտիզմից ընկնել ուրիշ ռոմանտիզմի մեջ:

Իմ գալը կապված է դժվարությունների հետ դեռ, որին մենակ չեմ կարող հաղթահարել. ամենից առաջ ձեռքիս տակ մի-երկու գրվածքներ ունեմ, որ պիտի ավարտեմ գալուցս առաջ՝ գիտնալով, որ հայրենիքում երկար ժամանակ մլջոց ու հարմարություն պիտի չունենամ զբաղվելու. հետո կինս և տղաս պիտի մնան Եվրոպայում. տղաս պիտի վերջացնե սկսած դպրոցը. հետո դրամական խնդիրներ կան, որ պիտի կարգավորել, սակայն և այնպես հույս ունեմ գարնանը ճամբա ընկնելու, քանի որ մինչև գարուն հազիվ հաջողեցնեմ այս ամենը:

Սիրելի Կարեն, լսել եմ, որ ամուսնացել ես և երկու երեխա ունիս, ապրի՛ս: Գրո՞ւմ ես արդյոք քո պատմվածքները, որոնք հիմա ավելի խորացած պիտի լինին, մանա-

վանդ որ սկզբից քո տաղանդը օգտագործում էր այն տարրերը[4], որոնք ներկա օրերումս Ռուսիայում տիրողն են: Ձեռքս քիչ են ընկնում Հայաստանի հրատարակութիւններից: Ջարենցին եմ միայն մասամբ ճանաչում և չեմ սիրում. կամ համարյա չեմ սիրում, բացի մի-երկու հին ոտանավորներից նրա: Անսահման մեծամտութիւն կա նրա էութեան մեջ, անճաշակութիւն և բնավ ինքնուրոյնութիւն[5]:

Նոր գրողներ չեն երևում աչքիս: Գրիչ չարժողները լեզու չգիտեն, և քարոզած գաղափարները հին են և ձանձրալի, և մոնոտոն:

Մի խոսքով, աստված բարի տա բոլորին:

Շատ ուրախ կլինեի, եթե մեկ-մեկ գրեիր:

Շատ համբույրներով ու կարոտի բարևներով քեզ և բոլոր ինձ հիշողներին:

Մնամ քո Ավետիք Իսահակյան

Լուսանցքում՝

Հասցեդ նոր ռուսերենով գրեցի. ճիշտ եղա՞վ արդյոք:
Issakian, 2266, Dorsoduro, Venezia

38. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ

1924, 19 սեպտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի տիկին Վերժին և Երվանդ.

Վերջապես ստացանք ձեր երկտողը. հազար գեղ բաներ էր մտքովս անցնում. ի՞նչ եղան, ո՞ւր մնացին: Հիմա իմանում եմ, որ այնպես լավ ժամեր եք անցընում, որ մոռացել եք անցյալն ու ապագան:

Վայելեցեք, օգտվեցեք, քանի երիտասարդ եք. առողջ և ուրախ. իմաստութիւնը դա է. գրքերի մեջ չէ իմաստութիւնը, այլ դեղեցիկ ուրախութեան մեջ:

Ես ձեր մեկնելուց մի քանի օր հետո մի շաբաթով գնացի դեպի Թրիեսթի կողմերը. մի քանի լավ բաներ տեսա, որ միշտ ուզում էի. և շատ գոհ եմ:

Հիմա սկսում է աշունը, և սկսում է զբաղմունքը. մինչև գարուն դրեմ պիտի, մինչև ձեր չնորհած գրչի բթացումը: Այս տողերն էլ նույն գրչով եմ գրում. յուղի պես սահում է, մաքերս չեն հասնում հետևից՝ նման այն ձեռքին, որ չի կարող սանձել ձին, որ այս դեպքում սև փրփուր է ցայտում:

Մի շաբաթ է, այստեղ է Սուտանաբենակ[1] տիկին Սևումյանը. օպերայի մեջ երգում է «Բոհեմը»[2]. դեռ չենք եղել. կլինենք: Տեսա իրեն. Սիրիայից է գալիս. տեղիս թերթերը գովեցին ձայնն ու խաղը:

Ի՞նչ տպավորություն ձգեցին ձեր վրա Փարիզն ու Լոնդոնը. երևի բժ. Ալյանոքը խելքը թռցրեց:

Սիրելի Երվանդ, ցավում եմ, որ այդ գրքերը չգտար: Փոխարեն ուղարկում եմ այս ցուցակը, բայց ոչ այն պայմանով, որ բոլորը առնես, այլ մի 4–5 հատ: Այսքան մեծ ցուցակ[3] կազմեցի, մտածելով որ հազիվ մի քանիսը գտնվի. ամենեն փափագածներս են երկու խաչանիշներովը, իսկ մեկ խաչովը – երկրորդական. մի խոսքով, որը որ գտար, իսկ եթե ոչ մեկը չգտար՝ նորից լավ, մի տրտմիր. քանի քիչ կարդանք, այնքան ավելի խելոք ու զվարթ կլիննենք: Կարդալն էլ մի ցավ է, որ չի բուժվում:

Մենք լավ ենք, փափագում ենք ձեզ ուրախություն և առողջություն, բժիշկների ձեռքը չընկնեք, այլ ուրիշներ ձեր ձեռքը ընկնեն:

Ջերմ բարևներ-համբույրներով տիկին Վերժինին, քեզ և Լուիվիկին:

Միշտ ձեր՝ Ավետիք Իսահակյան

39. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

1924, 28 սեպ<տեմբերի>, Վիեննաիկ

Սիրելի Մարտիրոս ջան.

Շնորհակալությամբ ստացել եմ բոլոր նամակներդ՝ Բերլինից, Մոսկվայից և քաղցը Երևանից: Երեկ էլ ստացա ուղարկածդ փողը՝ 103 լիր. 70 սանտիմ:

Ուրախ եմ համենայն դեպս՝ որ առողջ հասել ես տուն. վնաս չունի կորուստդ[1], թեև ցավալի է:

Այսօր պատվիրեցի նկարներիդ[2] 25 հատ. կդնեմ ուղածներդ. բայց պիտի մտածել ուղարկելու մասին. փոստով վախենում եմ տեղ չհասնի. երևի Բերլին կղրկեմ. տեսնենք դեռ:

Իտալ<ական> «il Mondo» *թերթը (Նեապոլի) գրել էր քո և նկարներիդ մասին[3], պահել եմ, ինչպես և իմ գրածը[4], որ վաղուց է եկել. նրանք էլ վախենում եմ ուղարկել նամակիս հետ. թող ուշ լինի, բայց տեղ հասնի: Այսքան քո գործերիդ մասին:*

Երկու պատճառով մինչև այսօր չեմ գրել քեզ.

1) Մի 15 օրով գնացել էի Թրիեստի կողմերը թափառելու. հետաքրքիր վայրեր էին. գեղեցիկ բնություն, ծով, անտառ, լեռներ. տեսա Ակուլեայի նշանավոր տաճարը, բյուզանդական չենք. այդ հին քաղաքում է իշխել հայ զորավար Ներսեսը. այդ քաղաքը կործանել է Աւտիլան. (Կարա-Բեկիրի մեծ հայրը). տեսա Միրամարի չքնաղ պալատը. վերջին պատերազմի վայրերը. խրամները. և մի հսկա և վսեմ ու գեղեցիկ զինվորական գերեզման, ուր թաղած են 30.000 իտալական զինվորներ...

Իսկ ամենից հրաշալին էր Պոստոումիայի (Ադելսբերգի) քարայրերը, ստալակտիտ. սա երկրագնդի ամենամեծ այրն է, 28 կիլոմետր մեծությամբ, գրեթե Հայաստանի չափ վայր. [միջեն] միջից գետ է անցնում... գեղեցիկ և զարհուրելի բան:

2) Վերադարձա տուն. սկսեց աչ բույթս (ձեռքիս բթամատը) ցավել. այնպես որ չէի կարող բան գրել. չգիտեմ րևմատիզմ էր թե, բանի էի զարկել. բայց հոգիս հանեց. այս քանի օր է՝ լավ է. կարող եմ գրել, բայց գրիչը չեմ կարող ամուր բռնել, տառերը փախչում են...

Շնորհակալություն որ բարևներս տեղ ես հասցրել. շնորհակալություն Ա. Հովհաննիսյանի[5] փոխ-բարևին:

Կարդացի մեծ ուրախությամբ Շիրակի ջրանցքի բացման մասին. մեծ գործ է. գրեթե առաջին անգամն է որ կոմունիստական թերթերը այսպիսի հրճվանքով կարդացի: Ես հայ թերթերը կարդում եմ վրդովվելու, հայհոյելու համար. կարծեմ, սիրելիս, ազնիվ Մարտիրոս, դու բավական ուսումնասիրեցիր քարաքտերս, որ անզուսպ է, ջղայնացած, անհավասար. և պիտի ներես, որովհետև վերջիվերջո հիվանդ մարդ եմ. — տեսնել հայկական աղետը և առողջ մնալ՝ անկարելի է. հա, ասացի, որ հայ թերթերը կարդում եմ ու կատաղում. դաշնակցական թերթերը կարդում եմ, դաշնակցականներին հայհոյում, կոմմունիստական թերթերը կարդում՝ սրանց հայհոյում. իսկ ռամկավար-հնչակ թերթերը անպատիվ եմ համարում կարդալ:

Վերջերս կարդացի «Նոր ակոսի»[6] մեջ Զորյանի հոդվածը «Սկսնակ հանցավորները»[7], սարսափելի էր...

Շա՛տ գեղեցիկ էր Թոթովենցի «Սեղբոսը»[8], և հասկացա ո՛վ էր. իմ հին Պողոսը, Աբելյան[9]:

Կ. Զարյանի հետ տեսնվում եմ. ինքը մոտեցավ. դեռ այստեղ է. ի՞նչ գրեմ նրա մասին. դու ավելի լավ ես ճանաչում նրան: Այստեղ էր մի ամիս առաջ Բերլինից՝ Սաչա Բեկզատյանը[10]. հին բարեկամս. լավ տպավորություն թողեց վրաս. չափավոր էր, փորձված, և մանավանդ հակառակ էր նոր ուղղագրությանը:

Իմ գալու մասին կգրեմ քեզ: Փիրումյանին[11] դեռ չեմ գրել, բայց գրելու եմ:

Դու ի՞նչ ես անում. սկսեցի՞ր աշխատանքներդ: Այստեղ հիմար վրացիները չա՜տ աղմուկ հանեցին[12]. դրանք չօգտվեցին հայերի գործած սխալներից. եվրոպացիների՝ այդ լրբերի վրա հենված՝ կոտորել են տալիս իրենց ժողովրդին. ի՞նչ են պահանջում նրանք Սովիետից. (Մոսկվայից) ամեն բան առան. չեն քաղաքները, դանձեր ու հարստություններ, Ախալքալաքն էլ վրան. անչուշտ եթե մեր դրության մեջ լիներին՝ լռեին պիտի: Ուրիշ անգամ երկար կգրեմ: Շատ բարևներ կնոջդ, երեխաներիդ, և ընկերներ ու բարեկամներիս: Բարևներ կնոջիցս, հարսիցս[13] և մեր ընդհանուր ծանոթներից քեզ: Վիդենը դեռ դյուղումն է. կարոտով համբուրում եմ քեզ:

Մնամ միշտ քո անձնվեր՝ Ավետիք Իսահակյան

40. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՅԱՆՆԵՐԻՆ

1924, 3 Հոկտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի տ. Վերժինն և Երվանդ.

Նորից ստացա ձեր ղրկած չորս դրքերը. շատ և շատ չնորհակալ եմ. այլևս չուղարկեք. և այսքանը հազիվ մի տարվա մեջ կարդամ, որովհետև միանգամայն մխրճված եմ գրության (վեպիս) մեջ: Օրական մի-երկու ժամ ունենամ-չունենամ ընթերցանության համար:

Սակայն սկսեցի Մետալնիկովի[1] գիրքը կարդալ. նորություն է:

«Ուստա Կարոյի» առաջին գլուխը գնաց. երևի «Հայրենիք»ի Դեկտեմբերի կամ Հունվարի թվին մեջ կլինի. և հետզհետե մյուսները ասպարեզ կգան. տեսնենք ինչ է դուրս գալու:

Երևի ձեր մեկնման օրերը ևս մոտեցան. եթե վենետիկով պիտի անցնիք, մեզ չմոռանաք իմաց տալ. բայց ինչ

գծով էլ որ երթաք, Հռոմը տեսնելիք, չատ կուրախանայի. գոնե Նապոլին՝ Վեզուվն ու Պոմպեյը. հրաշքներ են:

Այստեղ սկսվել են խոնավ և տխուր օրերը. բայց ինձ համար արև է, տաք ու պայծառ. որովհետև միայն ստամոքսով (ներողություն անքաղաքավարության) եմ կապված իրական աշխարհի հետ. ամբողջապես վեպիս հերոսների հետ եմ, մեր արևին մոտիկ՝ Հայաստանում, լսում եմ զանգակ աղբյուրների ձայնը, զգում եմ լեռների ծաղիկների բույրը և ապրում եմ հին լավ օրերս: Իմ ուստա Կարոն ասում է, թե «արևը աղքատի վերարկուն է», իսկ իմ վեպս — իմ կյանքս ու սերս ու մեծագիր հաճույքս: Ջնախանձիք ու աչքով չտաք:

Այսօր այնքան եմ գրել, որ այլևս գրիչիս տեր չեմ, տառերը վազում են, խուսափում և երևի դժվարով պիտի կարդաք գիրս:

Սպասում եմ Ձեր սիրելի նամակներին. հիմա մաղթելով ձեզ ուրախություն ու բարիք, համբույրներով բոլորիդ, մնամ Ձեր անձնվեր

Ավետիք Իսահակյան

41. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 8 Հոկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Մի նամակ գրել եմ Երևան քեզ. երևի ստացար արդեն: Դրամն ստացել եմ: Պատվիրել եմ 24 հատ նկարներդ, և առել եմ 4 հատ ալբոմներ. ուղարկելու մասին կմտածեմ: Մի երկու օր առաջ լսեցինք և տեսանք, որ նկարդ՝ «Երևանը», ծախվել է. թե ի՞նչ գնով, չկարողացա իմանալ. մարդ չկար որ հարցնեի: Երևի քեզ հայտնել են արդեն:

Վերջապես պարզվեցավ, որ Խաչ<ատուր> Աբովյանի արձանը ողջ է. կոտրված չէ (փչրված), և պիտի Երևան ուղարկվի[1]: Հիշում ես, որ ես քեզ ասի՝ թե ականատես էի նրա գնելու պատմությանը:

Անցյալ անգամ մոռացած էի ուղարկելու Զոբանյանի և Քոչարյանի հասցեները. հիմա հիշեցի:

A. Tchobanian, 9 Rue Say.

E. Kotcharian, 6 Rue de l'Ecole Polytechnique, Paris, V.

Ուրախությամբ կարդացի թերթերի մեջ Ղարաբաղի գյուղերի ցուցակը, մոտ 200 հատ. Շուշի քաղաքն էլ մեջը. չա՛տ կխնդրեի մեր երկրի կամ ողջ Կովկասի քարտեզը ուղարկեիր. մանավանդ Հայաստանի և Ղարաբաղի. եթե տպածը չկա, մի թղթի վրա քո ձեռքով նշանակիր. պետք չէ որ մանրամասն լինի. միայն սահմանները, կմախքը:

Մենք կանք, ինչպես որ թողիր. մի օր ուրախ, չորս օր տխուր, ձանձրացած. անպայման ինձ ձգելու եմ Երևան. պատրաստվում եմ վիճել Թոթովենցի Սեղբոսի[2] հետ: Բարևներ մեր բոլորից քեզ և տ. Լյուսիին:

Համբուրյրները, քո Ավետիք

8 Հոկտեմբ. 1924
Վենետիկ

42. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1924>[1], 14 Հոկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Վերստին աշունն եկավ, և Վենետիկի մեռած ձմեռը, խոնավ ու տխուր: Մնում է փակվել չորս պատերի մեջ և գրելով ու կարդալով մոռացվել ու մոռանալ:

Այս ձմեռ պիտի վերջացնեմ վեպս, և մյուս տարի, եթե Հայաստան չգնամ, անպատճառ, գոնե ես, պիտի հեռանամ Վենետիկից: Զզվել եմ անսահմանորեն. միապաղաղ կյանք է, և ընկեր բնավ չունեմ: Մնում եմ միայն տղայիս համար, որ Մխիթարյանների դպրոցն է այցելում, լավագույնը չլինելու պատճառով: Իսկ ապրել ժնևա, Փարիզ, Վիեննա կամ Բերլին անկարելի է, չատ սուղ են, իսկ իմ միջոցները Հայտնի են Սուրբ Հոգուդ...

Մի պարոն, որ վախենում է անունը տալ, խնդրում է քեզ հայտնել (ինքը Հայաստանից է եկել), որ Դավիթ Անանունը[2] փող է խնդրում քեզնից, ինչ-որ գիրք է ուզում հրատարակել: Անանունը միակ մարդն է, որ ժայռի պես կանգնել է համատարած ստրկամտության մեջ, քննադատում է, և վախենում են նրանից: Հիմա դու գիտես, թե ի՞նչ կերպով փողը պիտի հասցնես Երևան, երևի Պարսկաստանի միջոցով:

Երեկ ստացա «Հայրենիք» ամսագիրը: Դեռ չեմ սկսել կարդալ: Ցավում եմ, հանճնարարածս պատանու՝ Աճեմյանի[3] դրաման՝ «Հուդիթը»[4], չեք տպել: Երևի ուշ ստացաք: Միայն պիտի խնդրեմ, որ եթե չպիտի տպվի, անպատճառ հետ ուղարկեք, որովհետև տղան մաքուրը չունի: Խաթերս համար ականջի հետև մի ձգի՛ր և ուղարկիր:

Ուղարկում եմ այս կտորը՝ «Առարկան ինքնին»[5]: Մի բանի նմա՞ն է թե ոչ: Սակայն, ապրել եմ այդ:

Մյուս թվերի համար կուղարկեմ «Ուստա Կարոյից»: Ինչքան տպվի՝ թող տպվի: Ուրիշ բան չեմ կարող ղրկել, ամբողջապես նրանով եմ զբաղված:

Էլ ի՞նչ գրեմ: Դուք ինչպե՞ս եք – քեֆ, հալ, առողջություն: Մերանում ենք հայրենիքից դուրս, կամ ճիշտը, ծերացանք, կամ ավելի ճիշտը, ծերացա: Ի՞նչ պիտի լինի մեր վերջը...

Ջերմ բարևներ տիկ. Նաղիային և մյուս ընկերներին:

Համբույրներով – միշտ քո Ավետիք

43. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 20 Հոկտեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Կանխապես ջերմ բարևներով ուղարկում եմ ներփակ տիկ. Մարտիրոսյանի դոկումանները՝ իրեն պահանջի համաձայն: Ձեզ մոտ պիտի պահեք, թե ինչ, երևի ասած կլինի Ձեզ, իսկ նա ամսույս վերջերին կամ նոյեմբերի սկիզբներին Հռոմ կլինի. կարծեմ պիտի ինքը Ռուս<աստանի> դեսպանատուն ներկայացնե:

Միևնույն ժամանակ խնդրում եմ մի բան ևս. մեր հայ բարեկամներից մեկը՝ Արդավազդ Լազարյան Ardavast Lazzarian *պետք ունի (կարծեմ որսորդության համար, վանքի կալվածքներում է ապրում)* certificato penale dal R. tribunale di Roma[1], *այդ վկայականի. խնդրում եմ բարի լինիս դիմելու, ստանալու և ուղարկելու ինձ: Նա լավ տղա է, ապա թե ոչ՝ չէի կատարի նրա դիմումը: Եվ ինչքան որ ծախսեր անես՝ դիմումի և ուղարկելու, գրի՛ր ինձ, կուղարկենք: Հույս ունիմ, չես մերժի:*

Մենք լավ ենք. տիկինս բարևում է քեզ:

Մնամ միշտ քո Ավետիք Իսահակյան

44. ՎԵՐԺԻՆԵ ԵՎ ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ

1924, 25 Հոկտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի բարեկամներ Վերժին և Երվանդ.

Վերջապես ձեզնից նամակ ստացա և գոհ եմ, որ ուրախ եք և բախտավոր:

Քո լռությունը, Երվանդ, համարել էի ոչ թե չկամություն, ինչպես դրել էիր դու, այլ այն ինքն, որ Փարիզը մարդակուլ է:

Մեծ չնորհակալությամբ ստացա ուղարկածդ վերջին կապոցը՝ երեք գրքերի, և առաջին անգամվա՝ երկու գրքերը: Թանկագին նվերներ են, և իմ սիրած հեղինակները:

Սիրելի Երվանդ, գրում ես նոր ապագրանքներ անեմ. – եթե երկրագնդի բոլոր գրքերը ինձ տաս, նորեն գոհ չեմ լինի. հիվանդ եմ այս ցավով. թեև հաճախ ատում եմ գրքերը բոլոր, որովհետև որդերի պես (բացիլներ) մտնում են հոգուցդ ներս և կրծում հոգիդ, և նորից թողնում անբավարար. ոչ մի խնդիր չի լուծվում գրքերով, այլ ավելի է կնճռոտեցնում աչխարհը, որ առանց գրքերի պարզ մի հրախաղ էր առաջ, և ուրիչ ոչինչ, իսկ հիմա լաբիրինթ, թոհուբոհ: Բայց և այնպես, քանի որ ըստ Սողոմոն Իմաստունի, Աստված մարդկանց տանջելու համար այդ զբաղմունքը տվեց – խորհելը, ուրեմն՝ չալակենք ամբողջ տիեզերքը՝ տիտաններուի նման, խորհենք՝ մինչև մի օր տարրալուծվենք տիեզերքի տարրերի մեջ և հանգստանանք:

Վերջին անգամ՝ ի չարն եմ գործ դնելու քո դեպի ինձ ունեցած բացառիկ սերն ու համակրանքը, և խնդրում եմ այս գրքերը ուղարկես, և վերջ.

1. Բինե – Հոգին և մարմինը[1] 2. Բոհն – Իմացականության ծնունդը[2] 3. Պիկար – Արդի գիտությունը[3] 4. Ժելիքս լը Դանտեկ – Անաստվածությունը[4]:

Եթե այս գրքերը չեղան՝ հետևյալները.

1. Գոլտամիթհ – Հեղաշրջումի տեսությունները[5] 2. Դեպերե – կենդանական աչխարհի կերպարանափոխությունները[6]:

Միայն չորս գիրք՝ այդ վեց անուններից. որը գտնես: Ես ֆրանսական մտքի հետ նոր եմ ծանոթանում, գերմանականը լավ գիտեմ և հետաքրքիր է ֆրանսերենը. պարզ է և թռիչքով. Լը Դանտեկը չատ սիրեցի. նա կարծես ինձ համար է գրել, նրա գիտական-օբժեկտիվ պեսիմիզմը իմ

սրտով է: Ջե՞ս գտնում զարմանալի, որ ես իբրև «բանաստեղծ»(՞) հետաքրքրվում եմ գիտությամբ (մանավանդ բիոլոգիայով) և ոչ մի գրական գիրք չեմ ապսպրում: Միշտ այդպես եմ եղել. ուսանող ժամանակս էլ հանապազ գիտական գրքեր եմ կարդացել. ինչո՞վ բացատրել. կարծես նման եմ այն գինեվաճառին, որ գինի ծախում է միայն ուրիշների համար, ինքը ուրիշ բանից է համ առնում: Պատահում է:

Այս տարի սիրելի Վերժինը և դու պատված պիտի լինեք ինձ՝ «Հայրենիք» ամսագրում «Ուստա Կարոյից» կարդալու. առաջին գլխից սկսել եմ տպել. բայց վեպս մեծ է, հազիվ մի մեկ չորրորդը հանդես գա. մնացածը՝ ամբողջը առանձին գրքով:

Ուստա Կարոյի մեջ պիտի գտնես այն բոլոր մտքերը, որ ինձ հուզում են, հուզել են՝ ազգ, հայրենիք, ազատություն, կուլտուր, պատերազմ, Աստված, տիեզերք, նյութ, ուժ, կին, սեր, մորալ, մարդ, մահ և այլն, և այլն. դա մի գրվածք է լինելու՝ կա՛մ չատ արժեքով, կա՛մ – վիժվածք: Հանձնում եմ ձեր աղոթքներին, որ առաջինը հաջողվե:

Մենք լավ ենք. կինս և օրիորդը[7] կարոտով բարևում են ձեզ. համբույրներով՝ սիրո և ընկերական սիրելի Լուիֆիկին, Վերժինին, քեզ և Լյուիֆիին[8]:

Մնամ միշտ քո անձնվեր՝ Ավետիք Իսահակյան

45. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

<1924>, 26 Հոկտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Ես ուղղակի ներկայանում եմ իբրև փոխ-Հյուսպատոս: Խնդրում եմ անմիջապես, այս անցագիրը[1] ևս մի տարի

Նորոգես, ուղղակի գրես երկարացրած մի տարի: Այլևս մի՛ մտածիր թե կընդունվի թե ոչ. պարոնը պիտի դնա Ռումանիա. այդ կետն էլ կնչանակես. և կուղարկես ինձ espresso: *Բոլոր ծախսերը կգրես, Լազարյանի հաշիվները հետ կուղարկեմ: Ստացա բացիկդ.*

կանխիկ չնորհակալութիւններով՝ քո
Ավետիք Իսահակյան

Leon Eghiazarian
n. 1409, Paris

46. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

1924, 29 հոկտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Այս Եղիազարյանները ինձ [որագ] որոգայթի մեջ ձգեցին. ոչ մի սանտիմ չեն ուզում տալ. այս անցագրի տիրոջ հետ, Լևոնի հետ, ես 6 ամիս է՝ կռված եմ և չեմ խոսում, որովհետև թե իմ ներկայութիւնը և թե բացակայութիւնը չարունակ հայհոյում էր դաշնակցականներին՝ իբրև «սրիկաներ, ավազակներ», և նույն տիտղոսներով Վարանդյանին:

Ես խղճացի (դիմից ինձ եղբայրը՝ Կոստան Զարյան) և դրեցի քեզ. հիմա այս նամակն է ուղարկել Վարանդյանի անունով: Ես անցագիրը չեմ տվել, ասել եմ թե չեմ ստացել. Հռոմ է, սպասում է վճարին:

Հիմա դու գիտես. ուզում ես նամակը ուղարկել Վարանդյանին՝ որ թույլ տա, թե՞ դու ինքդ կկարգադրես, որ հանձնեմ: Ես չար մարդ չեմ, բայց այս անգամ չարութիւնս բռնել է. ուզում եմ, որ մի չաբաթ քաշ տաս և հե-

տո ձրի տաս, որ նա տուժե. իրավ է, որ փող չունի, բայց այստեղ մի շաբաթ կամ մի քանի օր [տուժելով] մնալով՝ ձեռքի փողի մի մասը կուտե, և քիթը կկոտրվի:

Իմ կարծիքս է, որ այս նամակս ստանալուդ պես մի բաց քարտ գրես ինձ, հետևյալ մտքով. թե՝ պ. Իսահակյան, հայտնեցեք պ. Եղիազարյանին, որ իր նամակը ղրկեցի Վարանդյանին, Փարիզ. սպասում եմ հետևանքին: [իսկ եթե լուրջ] Մի քանի օրից հետո նրա հրահանգով կստանաք անցագիրը: Ես կհասկանամ, որ մի քանի օր հետո կհանձնեմ անցագիրը նրան:

Իսկ եթե իրոք ուզում ես ուղարկել նամակը Վարանդյանին, այն ժամանակ գոց նամակ գրիր նույն իմաստով: Ուրեմն — բաց քարտ՝ և ես կհանձնեմ նրան մի քանի օր տանջելուց հետո, փակ նամակ — երբ դիմելու կլինես Վարանդյանին: Սակայն Վարանդյանը, գիտեմ, որ պիտի համաձայնի. ուրեմն ավելի լավ է, որ բաց քարտը գրես. նրանց խրատ լինելու համար:

Տեսնում ես, ի՞նչ չար մարդ եմ, բայց սրիկաները նույնիսկ չեն ուզում փոստի ծախսերը վճարել և հայհոյում են աջ ու ձախ...

Ներփակ ուղարկում եմ և Լազարյանի թուղթը. ղվվել եմ այս դիմումների համար, բայց հոգիս հանում են, և ես էլ փափուկ-սիրտ մարդ եմ, չեմ կարող մերժել:

Նամակ եմ գրում, ժամանակ եմ կորցնում, դրամ եմ ծախսում և ո՛չ մի շնորհակալություն. իհարկե անազնիվ մարդկանց կողմից, որոնց թիվը շատ է: Նամակս գրում եմ ջղայնացած, և դրա համար երևի սխալներ կան ու անկապ է: Սրիկաները (Եղիազար<յանները>) ասում են թե՝ ի՞նչ իրավունքով են փող ուզում, կպահանջենք դատարան և այլն, թերթում գրելու սպառնալիքներ: Մի շաբաթ պատժել պետք է:

Ք*ո* Ա*վետիք*

47. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

1924, 8 նոյեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Երեկ տիկ. Մարտիրոսյանը եկավ Ձեր բարևներով, և նույն օրը մեկնեց:

Ստացա վերջին նամակդ: Ի միջի այլոց Ա. Լազարյանը մեր Գարեգին վարդապետի եղբայրն է, և ուրեմն՝ ծախսերից մի վախեցիր. ես պատասխանատու եմ:

Իսկ հիմա ուղարկում եմ երեք անցագրի համար պատկերներ. յուրաքանչյուրի համար ստացել եմ 100 ական լիրեթ, ուրեմն երկուշաբթի (կիրակի դրամ չեն ընդունում) կտեղափոխեմ 300 լիրը: Ինդրում եմ համաձայնես, որովհետև մի ընտանիքից չի կարելի ավելի վերցնել. սկսենք անձերի նկարագրությունը.

առաջին solo նկարը. Նա պիտի մնա Վենեցիա, առայժմ դործեր ունի, իսկ ընտանիքը գնում են Ֆրանսիա:

solo *նկարը.*

Գրիգորիս Արկադյան Բաբաև[*]

տարին – 36

ծնված. Շուշի, Հայաստան

կոչումը. Հայ բանակի հին սպա (Հակաբոլշևիկյան)

Հասակը. միջակ

մազերը. չագանակագույն (chatain)

աչքերը. chatain

ամուսնացած

---

[*] *Բաբաև կգրես, որովհետև մյուս դոկումանները այդպես են* (ծան. հեղինակի՝ Ավետիք Իսահակյանի):

Բ. Նկարը
ամուսիններ-զույգ
Ադոլֆ Արկադյան Բաբաև
տարին 34
ծնված Շուշի, Հայաստան
կոչումը – հայ բանակի հին սպա (Հակաբոլշևիկյան)
մազերը. սպիտակախառն (չուտ է ծերացել)
հասակը. միջակ
աչքերը. chatain
Կինը – Անտոնինա Անտոնյան Բաբաև
տարին 22, ծնված՝ Թիֆլիզ
հասակը՝ բարձր
աչքերը chatain
մազերը chatain

Հիմա խմբանկարը.
Սկսենք պառավից.
Նինա Եգորյան Բաբաև
տարին 58
ծնված Թիֆլիս
հասակը՝ կարճ
մազերը՝ ճերմակ
աչքերը՝ chatain
մոտը կանգնածը իր աղջկա տղան է՝ թոռը, որը
Վարդան Տեր Սարգիսյան
հայրը՝ Կարապետ
տարին 15
ծնված Ալեքսանդրոպոլ, Հայաստան:

Հետո՝ պառավի հարսը և թոռները.

Մարիա Հովսեփյան Բաբաև
տարին 33
ծնված Թիֆլիզ
հասակը բարձր
մազերը սև
աչքերը կապույտ:
Նրա երեխաները.
Եվգենիա Գրիգորյան – 11 տարեկան
Լուսիկ Գրիգորյան – 9 տարեկան
Ռոբերտ Գրիգորյան – 6 տարեկան
Կնոջ ամուսինը Գրիգորիս Բաբաևն է:

Այժմ դու դիտես, թե ինչպես այս 6 հոգին մի անցագրի մեջ պիտի ամփոփես:

Սրանք և զույգը՝ ամուսինների դնում են Ֆրանսիա, իրենց ազգականների մոտ:

Իսկ Գրիգորիսը պիտի մնա Իտալիա, գործեր ունի:

Դու ավելի փորձված ես «սպա» գրելու հարցի մեջ. նրանք կռվել են բոլշևիկների դեմ, և փախել են 1921 թվին Կ.Պոլիս, և հետո՝ Իտալիա:

Եթե հարմար չես գտնում, գրիր՝ հայկական զինվորական նախկին Հայաստանի Հանրապետության:

Խնդրում եմ չա՜տ շուտով կատարես և ուղարկես իսկույն espresso *և* recommandո.

Ներփակում են 5 լիր. պոստի ծախսերի համար: Իսկ դրամը արդեն մոտս է. կանխիկ: Այդպես վարվեցի՝ խրատվելով Եղիազարյաններից:

Խնդրում եմ չտապես, որովհետև նրանք էլ են չտապում:

Ջերմ բարևներով ու սիրով ու հարգանքով

քո Ավետիք Իսահակյան

48. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 12 նոյեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Երկու նամակ եմ գրել քեզ, որով հայտնել եմ քեզնից ստացած նամակները և փողը: Գնումները կատարել էի, և ուղարկելու մասին հարցուփորձից պարզվեց, որ ավելի ապահով ճամբան է տեղ հասցնելու համար՝ մարդու միջոցով ուղարկել – (թեև դու էլ էիր մարդ և տղամարդ միևնույն ժամանակ, բայց կորցրիր). ուստի ես էլ որոշեցի ուղարկել մարդու միջոցով (այս անգամ կնիկմարդու միջոցով, մտածելով որ սրանք ավելի աչքաբաց են նյութեղենի նկատմամբ, և ավելի գործնական). ուղարկեցի տիկին Մարտիրոսյանի հետ, Շիրակի ջրանցքի ինժեների[1], ճանաչում ես նրան: 24 պատճեն է նկարներիդ, 2 կատալոգ, և 4 ալբոմ Վենետիկի. 2 քննադատական թերթիկներ, իմը և մի ուրիշինը և 2 հատ մեր լուսանկարներից: Հույս ունեմ, որ կհասնին. եթե չհասան, այս անգամ նորից կառնեմ, և ես կբերեմ հետս:

Իսկ ես մտածում եմ գարնանը գալ. մենակ, կինս չի ուզում տեղից շարժվել. կանանց խոսք չի կարելի հասկացնել. նրանց տրամաբանություն չի տրված, այլ ինստինկտ, ինտուիտիոն, որ խելքից ավելի խելոք է:

Մոռացա ասել, որ տիկ. Մարտիրոսյանը 4–5 օր է՝ որ մեկնել է, Մոսկվայի վրայով:

Աշունը գալուց ի վեր սկսել եմ պարապել. ամառը անկարելի էր բան չինել:

Մի երկու օր առաջ վարդապետներից լսեցի, թե Հայկական Համալսարանի լեկտոր Կոստան Զարյանը կոնսուլ է նշանակվելու Խորհրդային պետությունների կողմից Վենետիկ կամ մի այլ տեղ. չգիտեմ: Դիմում է արել, միջնորդներ կան... Զգիտեմ, դա պատիվ է հայոց Համալսա-

բանին և նրա կոլեգիային, որ իր դասախոսը հյուպատոս է դառնում, սակայն, Զարյանի համար դա աստիճանի անկում է այն պատճառով, որ նա 1919 թվին ձգտում էր Հռոմի դեսպան դառնալ, երբ չհաջողվեց, գժտվեց այն ժամանակվա իշխանների հետ. թեև մի կողմից՝ այն դեսպանությունը հավասար է ներկա կոնսուլության...

Մի խոսքով, ժողովրդի ասածով. «Ձին չեղած տեղը էշը թագավոր է»:

Ես տեսնվում եմ հետը. բայց ինձ բան չի ասել, և բնական է. ես «գաղափարի ընկեր» չեմ հետը, ինչպես և «գրչի ընկեր» չեմ:

Մարտիրոս Ջան, մի պստիկ խնդիր ունեմ. եղբորս տղան Արաս Իսահակյան, ուսանում է համալսարանում, նրան նամակ եմ գրել, բայց պատասխան չունեմ. բարի եղիր Վահան Թոթովենցի[2] միջոցով իմանալ, թե նա այս տարի ևս ուսանում է թե՞ ո՛չ. և եթե Երևան է, տեսնեիր նրան, խրատ խոսեիր, տնտեսականի մասին հարցնեիր և ինձ գրեիր. և իրան էլ ասեիր որ գրեր: Հավատացած եմ, որ կկատարես:

Ուրիշ ի՞նչ գրեմ, տրամադրություն դեչ չէ, չա՛տ ուրախ եմ, որ Ֆրանսիան ճանաչեց Սովիետները. Ռուսիան կուժեղանա և թշնամիների աչքը կհանե:

Շա՛տ ուրախ եմ նույնպես, որ հայերից մասնակցող չեղան վրացիների ավանտյուրային. Ռուսական մի կարմիր զինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա, արժե 1000 Վիլսոն[3] ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ[4] ու Հերիո[5]. սա բացարձակ ճշմարտություն է:

Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երևանից եկած թերթերը կարդում եմ). միայն մի բան է դեչ — ուղղագրությունը. աշխատեցեք վոխել: Մ. Աբեղյանի Նորդարականորեն փթած գլխից ի՞նչ ուղիղ բան կարելի էր սպասել:

Կարդացի Ս. Զորյանի «Յանկապատից»[6] մի երկու պատմվածք. լավ բաներ են. իրական, ճշմարիտ: Ափսո՛ս

լրիվ ձեռքս չընկավ Թոթովենցի Սեղբոսը[7]. ինչո՞ւ վանքը չուղարկեցին. շատ կխնդրեի իմ անունով ուղարկեիք վանքին հանձնելու համար (որպեսզի առաջ ես կարդամ) հետևյալ գրքերը. Դերենիկի Քաջ Նազարը[8]. 2) Սեղբոսը. 3) Զորյանի Տխուր մարդիկ[9]. 4) Կարմիր արև դասագրքերը[10] և այլն — ասա ուր որ տեղն է, որ ուղարկեն:

* * *

Վենետիկը հիմա դատարկվեցավ.— էն «լավերը» որի «ախն» էի քաշում քեզ հետ միասին (կինդ չիմանա՛) էլ չկան. մեկ-մեկ պատահում են ուշացած ծաղիկների պես, բայց փաթաթված են հաստ-հաստ տերևներով (պալտոներով) և էլ չեն ցույց տալիս իրենց նկարչական (պիտորեսկ[11], պլաստիկ, դեկորատիվ, էքսպրեսիոնիվ-իմպրեսիոնիվ) հրապույրները: Պիտի երևակայությամբ լրացնես՝ հիմք ունենալով ծովափի ապրումները:

Դու ո՞նց ես, կինդ, երեխաներդ, բարեկամներդ... դրիր մանրամասն: Այստեղ էր նկարիչ Կոնչիալովսկին[12]. լավ տպավորություն թողեց, իբրև մարդ: Քո մասին խոսում էր սիրով:

Տերնովեցը[13] մոտ օրերս գոցելու է ցուցահանդեսը և Մոսկվա գնալու:—

Վարդապետ-եպիսկոպոսի[14] (այդտեղ) հանած աղմուկներն ու բրոշյուրները կարդացի և զզվեցի, ինչո՞ւ. նախ, որ դրանք սրիկա մարդիկ են, գարշելի, ավազակ, բոզ. և երկրորդ՝ փորի ցավեր ունին — անկեղծ չեն: Իսկ գալով «կենդանի եկեղեցի» չինելուն, անմիտ բան է. մեռածը կենդանացնել չի կարելի. եկեղեցին դիակ է, մումիա, և որպես այնպիսին միայն արժեք ունի. հին մումիա...

Բարևում են կինս և Վիգենը կնոջդ, երեխաներիդ և քեզ: Իսկ ես համբուրում եմ բոլորիդ.

մինչ քո Ավետիք

49. ՎԱՎԱ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ

1924, 1 դեկտեմբ<երի>, Վենետիկ

Շա՛տ սիրելի տիկին Վավա և Սարգիս.

Վերջապես Ձեր մասին մի բան լսեցի. սուզվել էիք ուղղակի և ձայներդ ու հետքերդ խորունկ թաղել: Այսօր եղա լոնդոնցի մի ծեր տիկինի մոտ, Mm Mocheles[1], *նաև նկարչուհի, օր. Զ. Պոյաճյանի[2] ընկերուհին, որ Լոնդոն ծանոթացել է Ձեզ հետ. և չա՛տ գովեստով խոսեց նկարներիդ մասին, և հայտնեց, որ բավական հաջողություն ունեցել ես: Ասաց, որ նույնպես մի չա՛տ գեղեցիկ ռուս կին ունի. ես վիրավորված ուղղեցի նրա սխալը, նաև հպարտությամբ՝ թե հայուհի է և բարեկամուհիս է: Տիկինը խորհուրդ տվավ, որ փախցնեմ ս. Վավային, ես էլ ասացի, թե զարմանալի կերպով գուշակել եք հոգիս. մտադիր եմ փախցնել... միայն եթե ամուսինը համաձայնի[3]: Այս խոսքի վրա տիկինը ինձ բոլորովին հուսահատեցրեց:*

Ի՞նչ եք անում, ո՞ւր էիք մինչև հիմա, ինչպե՞ս անցավ պատկերահանդեսդ, ո՞ւր պիտի մնաք առայժմ և ո՞ւր պիտի երթաք. այսպես մի շարք հարցեր:

Իսկ ես միշտ Վենետիկ եմ և իմ դժբախտ գոյությունը լցնում եմ միայն գրելով ու կարդալով. և ուրիշ ոչինչ:

Լավ չի լինի, որ մի անգամ էլ մեզ մոտ գաք. այս տարի անթիվ նկարիչներ կային Վենետիկ, աշխարհի ամեն կողմերից. դու էիր բացակա: Հիմա եկեք, գոնե:

Հետո, ի՞նչ եղավ Լիլիթիս պատմությունը. էլ ոչինչ չլսեցի նրա մասին. երևի անցավ ոգևորությունդ. միշտ այդպես է լինում, երբ բանը հնանում է:

Ինչպես է երկուսիդ տրամադրությունն ու առողջությունը: Ձեր եղբայրիկը՝ կարապետը[4], չա՛տ լավ է, ահագին տղա է դարձել: Մի՞թե չեք ուզում տեսնել:

Կինս ջերմաջերմ բարևում է Ձեզ. բարևում է և լոնդոնցի տիկինը[5]*:*

Ես էլ ունեմ կարոտալի բարևներ:

Սպասում եմ անհամբեր Ձեր նամակներին:

Մնամ միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

50. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 9 դեկտեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Ստացել եմ չնորհակալությամբ անցագրերը և որսի հրամանը. և ուղարկել եմ դրանց փոխարեն 310 լիրեթ, որ անկասկած ստացել ես:

Մինչև հիմա չէի գրել՝ սպասելով պ.պ. Բաբայանների թղթերը՝ ուզածդ, բայց մինչև հիմա չեղավ, որովհետև Ազոլո են նրանք, դեռ չեն եկել:

Դուք ի՞նչ ջրի եք. քննություններդ հիմա վերջ գտած են, անշուշտ: Արդյոք նամակ ունի՞ք տիկին Մարտիրոսյանից. մի ամիս է՝ գնացել է, լուր մը չառանք. եթե ունիս՝ գրիր, թե ինչ եղավ, տեղ հասա՞վ ողջությամբ, կորուստներ չունեցա՞վ հետը տարած իրերի. Ռուսիայում հիմա միշտ այդ դողությունները կատարվում են:

Կինս բարևում է քեզ. նույնպես և ես:

Ջերմ բարևներով քո Ավետ. Իսահակյան

51. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1924>[1], 10 դեկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Այսօր ստացա նամակդ, 25 դոլարը և «Գրելու արվեստ»ը[2]: Շնորհակալություններս:

«Ուստա Կարոյի» երկրորդ և երրորդ դլուխները ստացած կլինես: Միշտ ապահովագրված սլիտի ղրկեմ, որ հանգիստ ղգամ ինձ: Կտպես Փետրվարի մեջ: Զորրորդ դլուխը պատրաստ է, բայց ուղարկելու եմ մի դրության հետ՝ Արսեն վրդ. Ղազիկյանի վրա[3]: Նրա հոբելյանն է: Պետք է տպես ամսագրի մեջ, Մարտին, ոչ ուշ: Հոբելյանը Ապրիլ ամսու սկզբին է:

Միջոցներս լավ չեն, այս տարի՝ մանավանդ: Ինձ օգնողը հոգնեց, և բնական է:

Ա. Ջամալյանը մի առիթով նամակ դրեց և հայտնեց, թե հավաքած 70 դոլարը դտնվում է Կ.Կոմիտեի մոտ...

Վա՛յ ես փող կտրողին ի՞նչ ասեմ: Ոչ ոք չկարողացավ այս կնճիռը բանալ: Բոլշևիզմը ավելի մուռտրեց, հոնքը չինելու տեղ՝ աչքը հանեց:

«Ուստա Կարոն» շատ հետաքրքրական է, բայց ոչ սկիզբները, այլ քանի գնա... Իմ տեսլի մեջ նշանավոր վեպ է լինելու: Բայց, ո՛վ դիտե. ագռավն էլ իր ձագը սիրում է՝ ամենից սիրունը համարելով: Բայց ես հավատացած եմ: Միայն մեծ է դուրս գալու: Էպոպեա: Մոտ 750-800 էջ է, Ռաֆֆիի «Սամվել»ի չափ:

Համբույրներով՝ քո Ավետիք

52. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

1924, 10 դեկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Սիմոն.

Ձեր ձեռնարկած հոբելյանական դրահանդեսի[1] հրավերը, Հոկտեմբ<երի> 31 թվակիր, ստացա Նոյեմբերի 25-ին. վանքում ընկել մնացել էր: Եվ այդ օրվանից

անթիվ մտահոգություններ մեջ սուզվեցի, մինչև որ այս ելքին կարողացա գալ իմ մասնակցության նկատմամբ:

Հայտնի լինի ընդմիշտ բոլոր դաշնակցական ընկերներին, ինչպես հայտնի է և կոմունիստներին, որ ես քաղաքական-ազգային խնդիրների իմ ըմբռնումով մնում եմ և կմնամ դաշնակցական, որովհետև նրա ավանդներն ու նպատակների էությունը համապատասխան են իմ հոգուն ու գաղափարներին[2]:

Սիրում եմ Դաշնակցությունը, նրա անցյալը, որ իմ անցյալն է եղել միաժամանակ և նրա նահատակները իմ հավերժական սիրելիներն են, սակայն հրաժարվում եմ բաժինը բերել ժողովածուին,— անկեղծորեն պիտի ասել, — որովհետև չեմ կամենում Հայաստան վերադառնալու իմ առջև բաց դուռները գոցել. հաստատ գիտեմ, որ եթե Դաշնակցության պաշտոնական արտահայտությունների մեջ երևամ, պիտի ձեռք քաշեմ Հայրենիք դառնալու ամեն մտքից, և դառնալու դեպքում պիտի դիմեմ անցագիր ձեռք բերելու համար դժբախտ Քաջազնունու մեթոդին, այսինքն թքեմ իմ ու իմ ընկերների վրա. բայց քանի որ այդ հարկի մեջ չեմ, ինչո՞ւ մի երկու գրություններով վատնգեմ դրությունս:

Բանը այն է որ, կոմունիստները բարեմիտ են դեպի ինձ, այն պատճառով որ 14 տարի է հեռու եմ եղել Կովկասի իրերից և թշնամանք չկա իմ հանդեպ. շարունակ հրավեր եմ ստանում վերադարձի, և ես էլ մտադիր եմ դառնալու, մենակս, այս եկող տարի, որովհետև այլևս Եվրոպայում բարոյապես և նյութապես հնարավորություն չունեմ մնալու: Տնտեսական կացությունս օր օրի վրա վատանում է. ինձ օգնող բարեկամս[3] անվերջ չի կարող շարունակել. իսկ նրա օգնությունից դուրս ուրիշ ղգալի հասույթներ չունեմ. թերթերում գրելով չի կարելի ընտանիք պահել, և ես էլ այն տարիքի մեջ եմ, որ այլևս

ընդունակ չեմ կարիքի մեջ ապրելու, մանավանդ որ վզիս կին ու երեխա կա: Եվ կամ մինչև ե՞րբ մնամ դուրսը: Ծնրացա հայրենիքից հեռու. իսկ Հայաստանումն է վերջի-վերջո թե՛ իմ հացը, գործը և երեխայիս ապագան: Պիտի գնամ մեր ընտանեկան գործերս կարգավորեմ և այնտեղից դրամ ղրկեմ, որ ընտանիքս ապրի, մինչև երեխան դիմնազիոնը ավարտե:

Այս էլ իմացած լինես, որ թեև Հայկական Խորհուրդը ինձ կենսաթոշակ է նշանակել, սակայն սկզբունքով իրավունք ունի նա՛ առանալու, ով այնտեղ է ապրում: Եթե այստեղ տային, մի բան էր: Զարմանում եմ որ բացառություն են կազմել Շիրվանզադեի համար, երբ Թիֆլիզում ապրողներին չեն տալիս. երևի ծեր է, դրա համար: Ինձ համար դառն է այս ամենը գրելը, բայց մեր իրականությունը ինքն է այս. հայ կյանքը:

Բոլշևիկները խստաբարո մարդիկ են, և նույնիսկ «Հայրենիք» ամսագրին մասնակցելուս համար՝ ծուռ աչքով են նայում. թեև ես նրանց հասկացրել եմ թե՝ դրագիտը իրավունք ունի գրական ամեն հանդեսի մասնակցելու (չէ՞ որ գրել եմ և գրում եմ «Արեգին», «Կոչնակին»: Չէ՞ որ Շիրվանզադեն էլ է գրում «Հայրենիքին». իսկ նրանց հարցին թե ինչո՞ւ «Նորքին» չեմ մասնակցում, պատասխանել եմ՝ թե ուղղագրությունը սրտովս չէ. և գոհ են մնացել այս բացատրությունից):

Ուրեմն, սիրելի Սիմոն, հույս ունեմ, որ ինձ պիտի հասկանաք և չեք մեղադրելու. իսկ եթե կմեղադրեք, այդ էլ ապագան ցույց պիտի տա, թե ինչքան եմ հավատարիմ այն գրոշին, որի համար իմ ուժերիս չափ պայքարել եմ ու տառապել:

Սրտի խորունկ ցավով եմ գրում այս տողերը...

Ընկերական սիրո բարևներով մնամ միշտ ձերդ՝

Ավետիք Իսահակյան

53. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 16 դեկտ<եմբերի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Շնորհակալությամբ ստացել եմ քարտդ. և չա՛տ առաջ էլ Ավ. Մուրադյանի նկարներով տպված թերթը: Ոչ մի տրամադրություն չունեի նամակ գրելու. Վենետիկը ինձ անդամալույծ արավ: Եթե այդ երիտասարդ նկարիչը այդտեղ է դեռ, իմ կողմից շնորհավորիր նրան, չա՛տ տաղանդավոր նկարիչ է, և մեծ ապագա խոստացող:

Հարցնում ես թե՝ Հայաստան կուզեմ երթալ. այդպիսի մտադրություն ունեմ, բայց ոչ վճիռ. սպասում եմ դեռ: Պ. Վարանդյանը սխալ է քեզի տեղափոխել իմ խոսքերը. այո՛, չատ լավ կլիներ, օր առաջ բոլորս էլ Հայաստան երթայինք: Ջերմ բարևներ կնոջիցս քեզ, և իմ կողմից ևս. բարևներ Վարանդյանին, եթե դեռ Հռոմ է:

Ջեր Ավետ. Իսահակյան

54. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1924, 18 դեկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Վերջին նամակդ ստանալուց առաջ Շիրակի ջրանցքի ինժեներ Մարտիրոսյանի հետ ուղարկեցի ուզածդ նկարներն ու ալբոմները: Դա մոտավորապես նոյեմբերի 8-9-ին էր: Բայց արդեն 40 օր է անցել, տիկնոջից ոչ մի նամակ չունենք: Զգիտենք՝ ինչ եղավ, տեղ հասավ, ո՞ւր մնաց, հասցրե՞ց ձեզ թե՞... ամեն բան կորցրեց ու լռեց: Անխելքություն արի՝ Փիրումյանի[1] վրա չղրկեցի, վերջապես, ի՞նչ գիտենաս:

Թեև ցուցահանդեսը փակվել է, բայց Տերնովեցը դեռ այստեղ է. անցյալ օրն ասաց, թե Փարիզ պիտի գնա, որովհետև Լունաչարսկին[2] Փարիզ է գալու. բարևում է քեզ:

Մոռացա ասել, որ ես քեզ տիկին Մարտիրոսյանի հետ իսկույն նամակ գրեցի, բայց ձայնը դեռ չի լսվում. հասարակ նամակ էր, ոչ պատվիրված. երևի կորել է, բայց չեմ կարծում:

Հիշում ես, որ ասում էի, թե Աբովյանի արձանը ողջ է, և զարմացա ու զայրացա, երբ լսեցի փշրել էին[3]:

Ա. Երզնկյանի[4] մասին կարդացի Փարիզի թերթերի մեջ, որ լավ ընդունվել է, բայց թե փող կուտան, դրան վստահ չեմ: Թուրքահայ հարուստը մարդու բան տվող չէ: Էլի տվողը ռուսահայն էր, որ հիմա ինքը քաղցած է:

Սիրելիս, մի 10 օր առաջ մի պառավ նկարչուհու մոտ ծանոթացա գերմանացի նկարիչ Sautner*-ի հետ (Զաուտները)[5], հիշո՞ւմ ես, որ ցուցահանդեսի օրը շատ ոգևորված էր քո նկարներով: Ինքը միշտ Լոնդոն է ապրում: Վերջերս կինը մեռել էր, որ գրողուհի էր եղել[6]: Խոսք բացի քո նկարների մասին, շատ գովեստներով խոսեց և ասաց՝ «Եթե Հայաստանն այդպես արև ու գույներ ունի, այդպիսի լեռներ, ուրեմն շատ գեղեցիկ երկիր է»: Ցույց տվեց իր նոր նկարները՝ Թիրոլի լեռներ և Վենետիկ... Շատ լավ էին. գնաց Սիցիլիա՝ ձմեռը հոն մնալու:*

Մենք լավ ենք, առողջ ենք: Ես պարապում եմ, որ վերջացնեմ վեպս և Հայաստան գամ: Գրել եմ Փիրումյանին, բայց պատասխան չունեմ դեռ:

Առաջին նամակիս մեջ գրել էի, որ Կոս<տան> Զարյանը ձգտում է կոնսուլ դառնալ, թեև Թերնովեցին ասել է, թե իրեն առաջարկում են, բայց չի ուզում: Գրել էի, որ 1919 թվին ուզում էր Հռոմի դեսպան լինել դաշնակցականների կողմից, բայց մերժեցին, և ինքը կատաղեց: Հիմա թե մերժեն, չի կատաղի... Խելոք է բավական: Երկու

չարամիտ կա գնացել էր Փարիզ՝ Կրասինին[1] տեսնելու: Իր կինն ասում է, որ Կրասինը կանչել է: Բնկպատյանը՝ ամառն այստեղ էր և ծանոթացրեց նրան Կրասինի հետ (որ Լիպո էր ապրում), միասին վանք գնացին...

Եվժն այս տարի, 1925 թ., չհաջողվեց ինձ Հայաստան-Երևան գալ, պիտի երթամ Ամանիա, մայրիկին կամ տեսնեմ, իսկ եվժն 1926-ին էլ չհաջողվեց գալ, էլ չեմ գա: Գևորգյանիս համար հոգ կառնեմ և կապահովեմ մեռնելու օրիս:

Շատ բարևներ քեզ՝ կնոջդ, Վիգենից, Բարիկյանից և մի երկու վարպետներից: Շատ բարևներ ինձանից՝ կնոջդ, երեխաներիդ, Սիմոն Հակոբյանին և բոլորին՝ հարցնողաց: Նամակս կհասնի երևի Նոր տարուն ձեռքդ: Ուրեմն, չնորհավորում եմ Նոր տարիդ: Ասեմած տա (ձև է խոսքի) Նոր տարվա մեջ իրար տեսնենք հայրենիքի հող<ին>:

Համբուրյուններով՝ քո Ավետիք Իսահակյան

55. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՑԱՆԻՆ

1924, 24 դեկտեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի եղբայր.

Արտապինս ցավում եմ, որ հակառակ փափագիս, անկարող եղա անձամբ նեղիկ գանվելու Ձեր հոբելյանին[1] և Ձեզ գնահատողների հետ միասին բաժակ բարձրացնելու Ձեր թանկագին կյանքի համար:

Եվ հիմա հեռվից, հոգվով մասնակից եմ Ձեր տոնին, և համաստրուկ սրտով բոլորի սրտերի հետ:

Սիրելի եղբայր, ա՛յնքան մեծ է Ձեր գործը, ա՛յնքան ակնհայտնի է և հանրության վաղուց բաժին Ձեր անունը, որ ավելորդ եմ զգում իմ կողմից և նույնիսկ վիրա-

վորիչ Ձեզ համար էլ՝ հազարների հետ կրկնելու այն անգին ծառայությունները, որ բերել եք դժվարին, տքնաջան պայքարների միջից՝ հայ գրի փառքի և հայ մշակույթի կատարյալ ձևավորման համար:

Երկա՛ր, և հերոսակա՛ն, և գեղեցի՛կ է եղել Ձեր անցած ուղին, և արդար են Ձեր վաստակները, և լիուլի արժանի եք հայրենիքի երախտագիտությանը:

Մաղթում եմ բոլոր հոգվովս Ձեզ, սիրելի եղբայր, երկար կյանք, առողջություն, ուրախություն, և նորից Տոն Ձեր անունին՝ հայրենիքի ավելի նպաստավոր մի ժամանակաշրջանում:

Սեղմում եմ խորին հարգանքներով Ձեր ձեռքը:

Եղբայրական համբույրներով,

միշտ Ձեր անձնվեր՝ Ավետիք Իսահակյան

Շա՛տ սիրելի և շա՛տ հարգելի
Արշակ Զոպանյանին,
Մեծանուն հոբելյարին:

24 դեկտեմբ. 1924
Վենետիկ

56. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ

1925, 18 Հունվարի, Վենետիկ

Սիրելի Վարդգես.

Նամակդ ստացել եմ՝ մի երեք չաբաթ կա, և այսօր միայն կարողացա պատասխանել. ինչպես անցյալ տարինները, այս տարին էլ չբերեց ինձ մի վառ տրամադրություն, միշտ մռայլ եմ. ամեն պանդուխտ Հայի (մեր տեսակի) հոգեկան վիճակն է այս: Վերջապես ձանձրալի է միշտ դրա մասին խոսել:

Հայ Սովխեթը սրանից մի 3 տարի առաջ ևս գրել էր՝ թե ինձ (ուրիշների կարգին) կենսաթոշակ է նշանակել, և հիմա էլ նորից կրկնում է. չեմ իմանում, իմաստն ինչ է:

Այս տարի նկարիչ Սարյանն այստեղ էր[1]. ասում էր, որ այդ թոշակը ամսական 30 րուբլի է, մի դումար, որ Հայաստանի ներկա պայմաններում՝ չնչին բան է, և տալիս են միայն երկրում եղողներին: Գրում է, թե չձանձրացա՞ր Վենետիկից, և չե՞ս ուզում Հայաստան դառնալ: Ձանձրացել եմ, զզվել եմ, բայց ո՞ւր գնամ. ամենուրեք նույն բանն է. իսկ Հայաստան... ես կուզեի սիրով գնալ, կինս չի գալիս, երեխայի պատճառով. և բանից երևում է, որ Երևանում բառի բուն իմաստով ո՛չ բնակարան կա, ո՛չ կարգին դպրոց: Սարյանը գրում է ինձ թե՝ երկու տարի հետո միայն կարելի է հուսալ բնակարան գտնելու համար, և խորհուրդ է տալիս 1926 թվին դառնալու: Այո, բոլշևիկ չեֆերը հրավիրում են ինձ, ասում են՝ ե՛կ, տե՛ս, չես հավանի, հետ դարձիր. բայց պիտի հավանես և պիտի չուզենաս վերադառնալ:

Զգիտեմ ո՞ւմ հավատամ: Նամակագրություն չունիմ ո՛չ մեկի հետ, բացի Սարյանից. և մեր տան հետ: Մերոնք բան չեն գրում, իհարկե վախից, բայց երևում է, որ լավ չեն ապրում: Եկողները նույնպես լավ չեն խոսում, և հավանական է որ շատ լավ չէ. կործանված երկիր է, ի՞նչ ես սպասում: Իմ տրամադրությունը բոլշևիկների հանդեպ երկու տեսակ է. համակրանք ունիմ հայ սովիետի հանդեպ, ևատելություն՝ Մոսկվայի հանդեպ[2]: Հայ վարիչները իրոք հայրենասեր են, և թրքատյաց, և շովին, բայց հնար չունին, ձեռքերը բան չկա, կեղծում են և իրենց հանձնել են երկրի վերաշինության. երազում են հետ գրավել Կարսը, բայց Մոսկվան – թրքասեր է, և կեղծավոր լեզու ունի հայերի հանդեպ: Մեր փրկությունը բոլշևիզմի անկման մեջ է, ազգայնական Ռուսիո մեջ, որ հարվածե թուրքերին. բայց այդ ազգայնական Ռուսիան ե՞րբ է գալու և մի՞թե գալիք ունի. ինձ թվում է, որ բոլշևիզմը չա՜տ ամուր է նստած. ո՞ւր է այն ուժը, որ խորտակե նրան: Ուրիշ ինչ գրեմ: Ռամկավարականները Դաշնակցության աստելությունից է որ համակիր են ցույց տալիս իրենց բոլշևիզմի հանդեպ, բայց իրենց ներքին անկեղծության մեջ ցաւր են երազում: Այս էլ է քեզ հայտնի:

Սիրելի Վարդգես, ես հիմա լրջորեն զբաղված եմ «Ուստա Կարոյի» վերջնական ձևը տալով. մաս-մաս պիտի տպվի «Հայրենիքի» մեջ, իսկ ամբողջ գիրքը մեծ փողի հարց է. մոտ 700-800 երես է. դրա համար պետք է 1000 դոլլար, որ անկարելիություն է: Թող թերթի մեջ տպվի, մնացածը հետո: Շնորհակալ եմ, որ մտածել ես իմ մասին: Վ. Սարգսյանից (Դիտրոյիտից) ստացել եմ 70 դոլլար, իսկ մյուսը, Ինդիանա Հարբորից չեկավ ու չեկավ: Ջամալյանը գրում է ինձ, թե Եվրոպա դարձին դրամը (չեքը) հանձնել է Բոստոն Կ<ենտրոնական> Կոմիտեին, որ ինձ ուղարկե, բայց Կ. Կոմիտեն լռել է:

Հայկական ճարտարապետության դիրքը դեռ լույս չի տեսել, հայտարարված է թեև, դոնե այդպես ասացին ինձ Վանքում, իրենք չեն ստացել և «Հանդէս Ամսօրեայ»ի մեջ էլ չկար հայտարարություն: Սակայն եթե իմանամ որ լույս է տեսել, կկատարեմ փափագդ:

Դու ինչո՞ւ ես հիվանդ, գլխի-ցավ. երևի ջղային մի հիմք ունի, սրտնեղություն կամ մտավոր հոգնություն, քաղաքե քաղաք թափառել, խոսել, վիճել, պայքարել... իսկապես որ գլխացավանք է: Լավն այն է, որ մի հաշտության միջոց գտնել և բոլորով վերադառնալ մեր անիծված, բայց սիրելի հայրենիքը: Այդ կողմից գոնե ես բախտավոր եմ, ոսկորներիս համար տեղ ունիմ, եթե միայն շուտ չմեռնիմ:

Ի՞նչ է անում Արմենուհին[3], լռել է կարծես. թող արձակ գրե, հուշեր, վիպակներ. բանաստեղծության չրջան չէ:

Շատ բարևներ մերոնցից: Վիգենը արդեն մեծ տղա է, 14 տարեկան, խելք ունի, բայց տաղանդ, չնորհք չի նկատվում մեջը, կարծեմ՝ ավելի լավ իրեն համար:

Շատ համբույրներով քո Ավետիք

Շուտ-շուտ գրիր:

57. ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻՆ

1925, 29 Հունվարի, Վենետիկ

Սիրելի եղբայր Չոպանյան.

Շնորհակալությամբ ստացա Ձեր նամակը. և մեծ ուրախությամբ թերթերի մեջ կարդացի Ձեր պսակումը:

Երբ մի ժողովուրդ դիտակցաբար գնահատում է իր վաստակավորներին, նշան է՝ որ նա ապագա ունի և կրելիություններ պայքարի ու հաղթանակի:

Շա՛տ գեղեցիկ է Ձեր մտադրությունը Վենետիկ գալու. և կհանգստանաք, և նյութեր կհավաքեք Ս. Ղազարի «գանձարաններից», որոնք մեր հայրերի համար յոթն կնիքով կողպված գանձեր են այլևս...

Ինձ համար առավել ևս շա՛տ փափագելի է Ձեր ներկայությունը, որովհետև կարոտ եմ մարդու, և մանավանդ Ձեր նման բարձր մշակույթ և սիրտ ունեցող մարդու:

Կգրեք, որ ապրիլին եք ուզում գալ, սակայն, մայիսը այստեղ հրաշալիք է. արդյո՞ք լավ չի լինի, որ եթե Նափոլի-Հռոմ-Ֆիրենցիա չեք եղած, գոնե մի ամսով — ապրիլ ամիսը — այցելեիք այդ հոյակապ և զարմանալի քաղաքները, որոնց չտեսնել և մեռնել, արդարև, մեծ կորուստ է: Ի սեր Աստծու, դնացեք, տեսեք, և իմ աչքերս թող Ձեզ հետ լինեն՝ նորից վայելելու այդ հրաշքները:

Ձեր գալուց առաջ բարի կլինեիք ինձ [գրել] հայտնելու օր-առաջ:

Հայտնի է Ձեզ, որ այս տարի լրանում է Հ. Արսեն Ղազիկյանի քահանայական և դրական գործի հոբելյանը[1]. ես մի բան գրել եմ Ամերիկա «Հայրենիք» ամսագրի մեջ. այնտեղ նա հայրենակիցներ ունի. թերևս օգնին դրամապես. վարդապետը իր ընտանիքի համար դժվար կացության մեջ է. վանքը, որ հարուստ է, չի կարող և չի կամենում օգնել. իրար նախանձում են վարդապետները և իրար վնասում. հայությո՞ւն է թե մարդկայնություն. փաստը մնում է փաստ:

Կխնդրեի Ձեզ, — ինքը արդեն, վարդապետը, դրած է Ձեզ իր վիճակի մասին, — խորհեիք, թե ի՞նչ կարելի էր անել Փարիզում. անշուշտ, Ձեզ անհարմար է հիմա զբաղվել այդ հարցով. միայն ուրիշին թելադրեիք, մի ուժեղ, եռանդուն բարեկամի, — մի խմբակ կազմել՝ հանձնախումբ և այլն, հոգային նրա հոբելյանով, մի հանգանակության...

Շա՛տ դժվար է այդպիսի մի հարց հարուցանել. իսկույն պիտի պատասխանեն. վարդապետ մարդ, կին-երեխա չունեցող, հարուստ վանքի միաբան... այլևս ի՞նչ կուզե, Աստծուց կրա՞կ... երբ ուրիշները չոր հաց չունին... Բայց պիտի հասկացնել թե... Հետևից մայր և քույր կա, քրոջ զավակներ, որոնց ինքն է խնամում:

Ես, մասնավորապես, հույսեր չեմ տածում, եթե մի բան անում եմ, ավելի շուտ թե իբրև փորձ, և թե խղճիս անդորրի համար:

Նամակս երկար եղավ և ձանձրալի:

Սիրելի եղբայր, անշուշտ, հասկացաք միտքս. կարելի՞ է արդյոք մի բան անել... Կխնդրեի շատ գետինը չոշափեիք: Ներողություն՝ որ Ձեզ դլխացավանք եմ պատճառում:

Թերթերում կարդում եմ, որ Ա. Երզնկյանի առաքելությունը[2] հաջողություն չի գտնում, հարուստ դրամատերները քսակների բերանը չեն բացում:

Ռուսահայ հարուստ չմնաց. եղողն էլ այնպես է այրվել բոլշևիկներից, որ անուններն անգամ չի ուզում լսել. մնում են թրքահայ հարուստները... նրանց համար էլ Ա-րագածի (և ո՛չ Արարատի) լանջերին փռված Հայաստանը ավելի շուտ մի ֆիկցիոն է, քան թե զգացում: Եվ վերջապես տասնյակ հազարներով այրիներ, որբեր, մերկ ու քաղցածներ թափառում են ամենուրեք, և նվազ կամ ավելի հույսերով աչքն են հառել իրենց բախտավոր հայրենակիցների (նեղ իմաստով, որ սակայն ավելի իրականն է) վրա:

Սրտագին ողջույններով ու համբույրներով

Ձեր անձնվեր՝ Ավ. Իսահակյան

29 Հունվարի 1925 թ.
Վենետիկ

58. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

1925, 2 փետրվարի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Ուղարկում եմ «Ուստա Կարոյի» Ե. գլուխը[1]: Սա նրանց բնույթագիրն է: Երկար եղավ, որովհետև ուրիշ կերպ չէը լինի. մի վեպ, որ 700-800 էջ է, պիտի հանդուրժես այդ:

Աշխատի՛ր՝ սխալներ չլինեն:

Ուշ ուղարկեցի, որովհետև տրամադրություն պետ է դանազան պատճառներով, բայց մոտիկ պատճառը տնտեսականն է: Այս տարի լավ չեմ, նեղն եմ... Եթե դրությունս այսպես տևե, վերադառնալու եմ Հայաստան. գոնե հաց և տուն են տալիս: Ուստա Կարոյի ասածով՝ «Սարի քուրդն էլ որ ինձ լավություն անե, աղբերս նա է»:

«Հանապազօրյա հացից» ավելի մեծ չնորհ չկա, որ մի մարդ կարող է տալ մյուսին: Մյուս բաները սուտ են, կեղծ են: Քաղցած չի կարելի ապրել: Այս դու էլ ես փորձել, անշուշտ: Ուստի, սրանով դիմում եմ քեզ, որ մի բան ձեռնարկես ինձ համար — ոչ թե հանգանակություն՝ երբե՛ք, երբե՛ք, այլ մի բան հանձնես մի հրատարակչական տան կողմից՝ կանխիկ վճարումով կամ կեսկանխիկ, թարգմանելու: Օրինակ՝ Նիցշեի Also Sprach Zarathustra, *կամ Անաթոլ Ֆրանսից, և կամ «Հայրենիք»ում լույս տեսած պատմվածքներից լավերը մի դրքով ամփոփել:*

Մտածում եմ դիմեմ Հայաստանի Սովետներին՝ կենսաթոշակ տալու: Սակայն, լսում եմ, որ նրանք միայն Հայաստանում ապրողներին են տալիս, ասելով թե՝ եթե դուրսը ապրում է, ինչանակն միջոց ունի ապրելու: Իսկ իմ մասին այն կարծիքը կա, թե Դաշնակցությունն է ինձ պահում: Բայց այնքան տգետ են այն կոմիսարները, որ

չգիտեն թե՝ Դաշնակցությունը եթե մարդ կարող է պահել – հերոսներին է պահում, չեֆերին…

Ուղարկում եմ ներփակ նամակը, կխնդրեմ հանձնես Համաստեղին[2]*:*

Հա, օր. Զաբել Պոյաճյանը[3] *Լոնտոնի* The Contemporary Review*-ի Հունվար թվի (1925 թ.) մի հոդված է գետեղել իմ մասիս, հատվածներ է դրել Աբու-Լալայից: Այժմ ինձ գրում է, որ անգլիացիները հավանել են և խորհուրդ են տալիս թարգմանել ամբողջը: Ես չունեմ «Աբու Լալա» գրքից (մի հատ ունեմ ինձ համար), ուստի խնդրում եմ մի օրինակ անպատճառ ուղարկես նրան, սակայն իմ հաշվից դուրս դաս, և խնդրում եմ անպատճառ դուրս դաս, նվեր չանեք: Ահա նրա հասցեն…*[4]

Ուղարկում եմ և մի ոտանավոր Սար-Մենի[5]*: Բանից երևում է, որ 1921 թ. Դեկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլի ամերիկյան որբանոցում, աշխարհի ամենամեծ որբանոց-քաղաքում, որբերը տոնել են իմ գրական 25ամյա հոբելյանը մի սրտառուչ տոնով… Այս ոտանավորը գրել ու կարդացել է մի որբ Ռշտունցի, այն ժամանակ 15-16 տարեկան՝ Սարգսյան Արմենակ, աշակերտ որբանոցի չորրորդ դասարանի: Դպրոցը ունի մինչև վեց դասարան:*

Կտեսնես, որ լավ ոտանավոր է, և չնորհքով տղա: Ուզում ես գետեղել, գետեղիր. չես ուզում, դու գիտես, մի խոսքով: Եթե գետեղես, ապա՝ ամսագրի մեջ: Կարծեմ էլ բան չունիմ դրելիք:

Համբույրներով, բարևներով՝ քո Ավետիք

59. ՀԱՄԱՍՏԵՂԻՆ

1925, 2 փետրվ<արի>, Վենետիկ

Սիրելի Համաստեղ.

Վաղուց է ստացել էի Ձեր գեղեցիկ գործը՝ Գյուղը[1]: Շնորհակալությունները այդ պատվի համար: Ժամանակին գրել էի ընկ. Դարբինյանին ստանալիս:

Երբ Ձեր պատկերները լույս էին տեսնում «Հայրենիքի» մեջ, կինս կարդաց և ասաց, որ չա՛տ շնորհքով բաներ ունի «Համաստեղը»: Ես «Հայրենիքի» բոլոր նյութերը չեմ կարող հասցնել կարդալու, քանի որ չա՛տ բան կա կարդալու — ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն թերթեր...

Առաջին պատմվածքը, որ կարդացի «Ջալոն» էր: Ոճը՝ պատկերավոր ու իրական, պատմվածքը հանդարտ ու ս<р>տադին, շատ հավանեցի, բայց ընդհանուր առումով՝ դժգոհ մնացի, որովհետև անասունների հոգեբանությամբ զբաղվողներին այնքան չեմ հավատում. այդ հոգեբանության ստուգումի միակ կրիտերիումը ինքը մարդն է. ուրիշ ոչ մի միջոց չկա. այնպես որ կենդանիներին մենք մարդեղացնում ենք, հետևապես ավելի երևակայական, ենթադրական, քան իրական մարզի մեջ ենք: Հետո կարդացի «Վարդանը» և չա՛տ գնահատեցի Ձեր իրական, մեծ տաղանդը:

Այժմ գիրքը առջևս է. նորից կարդացի բոլորը. ոճը հոյակապ է, անկեղծ, և ապրված՝ միջավայրը:

Սակայն կան, իմ կարծիքով, փոքրիկ թերություններ. երբեմն գործ ենք ածում անպատշաճ նմանություններ ու դարձվածքներ: Օրինակ.

— Բեզասով հավիշտակված (անտեղի է այս՝ գյուղական միջավայրում) էջ 28.

— Ներվանայի հավիտյան... էջ 49.

— Դժվար թե հայ գյուղացին երգեր «թրալալա» («Փիլիկ աղբարը»).

— Վարդանի բերանը, խորհրդածության պահերին, դնում ենք իրեն մշակույթին անդաչն խոսքեր՝ ֆոսֆորային, հեթանոս: Թեև դուք եք կարդում նրա մտքերը, բայց այդ ձևով չի դրված.

– և այլն.

Եվ այսպիսի մանր-մունր բաներ:

Երբեմն էլ հեղինակը մատնում է իրեն թե համակրութ-յամբ ու հակակրութ-յամբ, և թե խորհրդածութ-յուններ է անում, որ պետք չէ: Ամեն խորհրդածութ-յուն պիտի լինի հերոսների կողմից կամ հեղինակն է պատմում իր բառե-րով նրանց խոհերը:

Մի-երկու անբնական թվացող բաներ.

– Փիլիկ աղբոր հուղարկավորութ-յանը ձիի մասնակ-ցութ-յունը:

– Միջո, եթե 13 տարու էր, անկարելի էր, այդ տարի-քին, այդքան ուժեղ զարթնումը սիրո բնազդին:

– Հետո տեղին չավարտված. օրինակ.

«Աղավնիներ»-ի սքանչելի պատմվածքը պիտի վերջա-նար Խաչիկի մահով, հոր լացի հետ:

Մյուսները՝ ծիրանի լափվելը կատվից և այլն, ավելորդ էին: Սա ինձ երևցող բացասական փոքրիկ գծերն էին, որ ես պարտք զգացի, իբրև ավագ դրչի եղբայր, Ձեզ ասելու, գիտնալով որ գովեստից ավելի նկատումները կօգնեն գրողին, մանավանդ թարմ գրողին: Եվ բացի այդ, որ դուք Ձեր գիրքը ինձ չնորհ բերելով՝ պետք է որ սպա-սեիք մի-երկու անկեղծ խոսքի:

Իսկ դրական կողմերը Ձեր մեծ չնորհի՝ չա՛տ են ու ան-վիճելի: Ահա սրանք.–

ճիշտ և հարուստ դիտողութ-յուններ.

հզոր հիշողութ-յուն.

իրական միանգամայն – ռեալիզմ.

ո՛չ մի ճիգ, սեթևեթանք, և ձգտումն նոր, արտառոց երև-նալու՝ մարդկանց զարմացնելու համար, խեղաթյուրումն բնական հոսուն լեզվի՝ մինչ օրս չասած ձևով ծամածռվելու.

զուսպ, ողջախոհ, համեստ, բնական մակդիրներ.

կարճախոս, բնութ-յան նկարներ մի-երկու տողով, և այլն, և այլն:

Սրանք այնպիսի անգնահատելի հատկություններ են, որոնց շնորհով Դուք, Աստված տա, որ շա՛տ ապրիք, բարձրանալու եք շա՛տ բարձր, դառնալու մեր գրի փառքերիցը:

Սիրում եմ Ձեզ, և Ձեր տաղանդը, շատ սիրելի Համաստեղ:

Մնամ Ձեր Ավետիք Իսահակյան

60. ՎԱՎԱ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ

1925, 3 փետրվ<արի>, Վենետիկ

Սիրելի տիկին Վավա և Սարգիս ջան.

Վաղուց մեծ ուրախությամբ ստացել եմ նամակդ. ուշ պատասխանեցի, որ դու էլ ստիպված չլիներես իսկույն պատասխանել. այնպես լինի, որ ամիսը մի անգամ իրարից լուր ունենանք: Ես նամակ գրելու մեջ ծույլ եմ (ո՞ր բանի մեջ ծույլ չեմ) և մանավանդ որ շատ տեղերի հետ նամակագրություն ունեմ. թեև շատ սիրով եմ գրում Ձեզ, անկեղծորեն ասած:

Շա՛տ շնորհակալություն քո ընկերական հյուրասիրության համար, Լոնդոն գալու. իսկապես շա՛տ կուզենայի, մանավանդ որ Լոնդոն տեսած չունիմ, բայց, սիրելիներս, շա՛տ դժվարություններ կան. վիզա, թույլտվություն և այլն. դրամն էլ իր կարգին: Մնում է որ Դուք ամառը գաք, և շա՛տ լավ կանենք:

Ձեր փոքրիկ Կարոյի[1] մասին խոսեցի տեսուչի հետ. այս տարի լավ է սովորում, կփոխվե: Առհասարակ դպրոցի կուրսը հիմա ավելի ծանրացրել են. իմ տղաս էլ այս տարի մնաց. մաթեմատիկան շա՛տ դժվար էր: Հնար չունենանք, պիտի համբերենք, ուրիշ տեղ դպրոցներ չկան. եղածը սա է, լավ թե գնչ, ավելի՝ գնչ, քան թե լավ:

Ես սոսկալի ձանձրացել եմ այս քաղաքից. եթե զբաղումներս չլինին, կխենթանամ. չա՛տ զբաղված եմ,— դրանով թռչում են օրերը:

Լսել եմ որ հաջողություններ ունես. Աստված է՛լ ավելին տա:

Լսել եմ, թե Արշակ խանի՝ Գորոյանի աղջիկը... մեռել է Նիցցայում. չա՛տ ցավալի է, եթե ճիշտ է. խեղճ աղջիկ: Ի՛նչքան ցավալի էր նույնպես խեղճ Անահիտ Տեր-Օհանյանի մահը. երիտասարդ լինել և մեռնել... ի՞նչ կա ավելի ողբալի, քան այս...

Ի սեր Աստծու Վավայիդ (կամ Վավայիս) լավ պահի՛ր. այդ անպիտան Լոնդոնը գեչ օդ ունի, բայց մեր Վավան ֆլամանդական-ռուբենսական ֆեաների կազմվածքն ունի. և հանգիստ եմ այդ մասին:

Ես մտադիր եմ, ապրիլին, մի ամսով Իսպանիա գնալու. տեսնենք կհաջողվի թե՞ ոչ. եթե եղավ, մեծ բախտ է. չա՛տ եմ հետաքրքրվում այդ երկրով: Դու զուր չես գնում այնտեղ. չա՛տ մոտիվներ ու ներշնչումներ կունենաս — Մադրիդի մուզեյը[2], Սևիլիայի և Անդալուզիայի[3] աղջիկները, որ գինու բույր ունին, Ալհամբրայի[4] պալատները և Գրենադայի[5] նռներն ու Կորդովայի[6] աղջիկների պարերը և հովիվների երգերը:

Մենք լավ ենք, առողջ ենք այսինքն. ուրիշ լավ բան չկա. կամաց-կամաց ապրում ենք և արագ-արագ ծերանում. ի՞նչով պիտի վերջանա — չգիտեմ. կամ չեմ ուզում գիտենալ:

Ի՞նչ կա Լոնդոնի գաղութում, ի՞նչ է անում Հովհաննես խանը[7], կտեսնեք եթե, խնդրեմ բարևեք, նույնպես օր. Զ. Պոյաճյանին և տիկ. Moschelles-ին[8]:

Կարդացի թե՝ ժեներալ Բագրատունիի[9] կինը գնացել է մի հարուստ անգլիացու հետ, և ժեներալը կնոջ փոխարեն ստացել է 30.000 ֆունտ. այնքան գայթակղիչ դումար է, որ մտքովս գեչ խորհուրդներ <են> անցնում և համա-

ձայն եմ ավելի պակաս գնով իրականացնելու խոր-հուրդս:

Բարևներ կնոջից բոլորիդ:

Սիրալիր բարևներով տիկ. Վավային և քեզ:

Մնամ միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

61. ԵՐՎԱՆԴ ՔՈՋԱՐԻՆ

1925, 3 փետրվ<արի, Վենետիկ>

Սիրելի Երվանդ.

Պ. Օհան Կարոյի[1] *նամակի հետ ստացել եմ և քո նա-մակդ. սպասում էի խոստումիդ կատարումին – քննադա-տական խոսքերը արվեստիդ մասին. չուղարկեցիր: Այո՛, երբ մարդ միանգամից Լեոնարդո և Դյուրեր դառնա, այլևս նրանից խեր չկա. բարև էլ որ տա, նորից մեծ բան է: Բարևը քեզ լինի և քո տիկինիդ, միայն իսկապես ա-ռանց բըլըֆի և իլյուզիոնի, հասնիս այդ կատարներին: Անկասկած մեջդ ժենի*[2] *կա, բայց այդ քիչ է – պետք է ջանք, ճգնություն, կուլտուր, համբերություն և գլուխ չկորցնել դովեստներից:*

Ժորժի մոտ կարդացի նամակդ, շատ ուրախացավ և կարծեմ քեզ գրեց:

Մեր տղա՛, տարուց ավել կա՝ որ լսել ենք թե՝ չորս ոտ-նանի ես եղել – կնիկ ունիս: Ամուսնացել ես[3]*. ասում են, աղջիկ ես փախցրել. ասում են, շատ լավն է. ս. Մարկոսի ա-ղավնյակ՝ սիրունիկ, պստլիկ, կարմիր-տոտիկ... տո՛, ինչո՞ւ մեզ չես հայտնել. վախենում էիր թե՝ աչքով տալինք... եթե ճիշտ է, բարով վայելես. միայն գրի՛ր այդ մասին. ես էլ եմ հետաքրքրվում, բայց մանավանդ կինս, որ ամեն օր ասում է, և երազում տեսնում է, և հետաքրքրությունից հիվան-դանում է...*

Ի՞նչ գրեմ իմ մասին. ձանձրացել եմ այս քաղաքում, իհարկե, բայց զբաղված եմ. գրում եմ, ջնջում եմ, նորից եմ գրում, և ծերանում եմ: Սրանից ավելի տխուր խոսք չկա. մահը ավելի տխուր բառ է, բայց մեռնողը չէ որ ասում է, ինքը չգիտե: Գիտենք միայն ծերանալ բառը, և նրա զգացումը...

Դու, որ դեռ տղա ես, քչե գնա, ի՛նչ կլինի՝ թող լինի:

Ժորժը ծանր մելանխոլիայի մեջ է: Մի հայ պզտիկ աղջիկ էր գտել una picola cosa nera[4]. *պստիկ, սևուլիկ, մի պատառ, զակուսկի: Խեղճ տղան սիրեց, սիրեց, նիհարեց, և աղջիկը գնաց Բոստոն. հիմա նրանց մեջ սառն ու մեծ Ատլանտյան օվկիանոսն է ձգվում, ու անտարբեր դալարվում այդ խեղճ երեխաների վշտի ու կարոտի հանդեպ, իսկ Ամերիկայի՝ Վաշինգտոնի դաժան քոթան[5], որ օվկիանոսից անգութ է, որովհետև մարդու գործ է: Խնդրում եմ մխիթարես նրան:*

Ուրիշ ի՞նչ գրեմ, սիրելի Երվանդ, – ոչինչ:

Շատ բարևներ ու համբույրներ քեզ. բարևներ կնոջդ[6] – և իմ կնոջից, բարևներ և Վիգենից:

Քո Ավետիք Իսահակյան

62. ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

1925, 10 փետրվարի, Վենետիկ

Վ<ահան> Ն<ավասարդյան> – Ամերիկայի կեդրոնական կոմիտեն ընկ. Արմեն Գարոյի[1] միջոցով ե՞րբ և որքա՞ն գումար ուղարկած է ձեզ:

Ավ<ետիք> Ի<սահակյան> – Ուղարկել է 1919 թ. սեպտեմբերին 7000 ֆրանկ զվիցեր<ական>:

Վ. Ն. – Ի՞նչ եք արած այդ գումարը:

Ավ. Ի. – *Ծանոթ գործի[2] վրա ծախսված է 2007 ֆր. զվիցեր.*

Վ. Ն. – *Ի՞նչ եք արած մնացյալ գումարը:*

Ավ. Ի. – *Հայրենիքից կտրված լինելով և գտնվելով չափազանց անճոռնի և անհույս պայմաններում, ծախսել եմ ընտանեկան անհրաժեշտ պետքերիս վրա, այն մտածումով, թե պիտի կարողանամ շատ չուտով վերադարձնել:*

Վ. Ն. – *Այդ գումարից ուրիշներին տվա՞ծ եք արդյոք:*

Ավ. Ի. – *82 ֆրանկ ուղարկել եմ Մյունխենն, հանգուցյալ Վռամյանի[3] մորը՝ իր խնդրած գումարը:*

950 ֆրանկ տվել եմ Պարսկաստանի Եփրեմի[4] աղջկան, օր. Աստղիկին, հայրենիք վերադառնալու համար. քաղցած վիճակի մեջ էր, անկարելի էր արտասահմանում պահել:

1400 ֆրանկ տվել եմ Թիֆլիզի հայտնի հարուստ Աղ. Մելիք Ազարյանի[5] աղջկան, տիկ. Արփինեին, որ գտնվում էր հիվանդ և անհույս վիճակի մեջ (թոքախտ ուներ, որով և վախճանվեցավ) այն մտածումով, որ գումարը լրիվ պիտի ստանամ. դժբախտաբար այդ գումարի հաշվին ոչինչ եմ ստացած մինչև օրս: Այս դեպքի մասին (մասնավորապես միանվագ վճարած 1000 ֆրանկի մասին գիտե ընկեր Համո Օհանջանյանը, ինչպես նաև բժշկուհի տիկ. Մ. Պաստուրմաճյան):

Վ. Ն. – *Ի՞նչ եք մտածում ձեզ մոտ մնացած գումարի մասին:*

Ավ. Ի. – *Ես պատրաստ եմ իմ վրա պարտք նկատելու այն գումարը, ինչ որ կորոշե կուսակցությունը: Ուրախությամբ կվճարեի այսօր, սակայն դժբախտաբար միակ հարստությունս իմ գրիչս է, որ այդպիսի գումարներ չի տալիս. սակայն ես հայրենիքում ունիմ կալվածքներ, որոնց վաճառումից պարտք նկատված գումարը ես դյու-*

րութեամբ կարող եմ վճարել: Այդ կալվածքները, թեև այսօր մեր ընտանիքի ձեռքն է, սակայն Ձեզ ծանոթ պայմանների պատճառով վաճառքի պարագային կարող են տալ շատ աննշան դումար: Ինչպես գիտեք, այդ կալվածքները կարելի է վաճառել ոչ-այսօրվա պայմաններում:

Ավետիք Իսահակյան
Վ. Նավասարդյան

10 փետրվար 1925
Վենետիկ

63. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

1925, 12 փետրվարի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Այս նամակը պիտի չգրեի, եթե Մ. Պարսամյանի[1] գրախոսականը («Հայրենիք» ամսագրի մեջ)[2] առիթ չտար:

Ես առհասարակ ուշք չեմ դարձնում իմ մասին եղած գրախոսականների վրա: Ամենալավ քննադատը ես ինքս եմ իմ գրվածքների մասին: Դրա համար էլ, օրինակ, երբեք ականջ չեմ կախում Օշականի տարիներից ի վեր իմ մասին գրածներին: Նախ և առաջ՝ գիտեմ թրքահայ գրողների փչացած, ֆրանսացած ճաշակը: Գիտեմ Օշականի ամբարտավան բնավորությունը, նրա հատվածական աչառությունը և իմ դեմ ունեցած թշնամությունը, որ վաղուց է, այն օրվանից, երբ Պոլիս էի և քննադատում էի նրանց սիմբոլիզմն ու ֆրանսական գրականության կողոպուտը՝ նրանց մեծ ու փոքր գրողների կողմից:

Ճշմարտությունն այն է, որ եթե ես, Հ. Թումանյանը կամ Հ. Հովհաննիսյանը օգտվում ենք հայ ժողովրդի ոճերից, ձևերից, այն մտածումով թե՝ հայ տոհմիկ գրականություն ենք մշակում, իսկ թրքահայ գրողները նույնը անում են ֆրանսական և օտար գրականություններից: Եթե ժամանակ ուննեմ, ցույց կտամ, թե Վարուժանը, Սիամանթոն, Մեծարենցը և մյուսները, նրանց մեջ էլ մեր սիրելի Վ. Տերյանը, ի՛նչքան են կողոպտել Վերհարնին, Վերլենին, Բոդլերին, Կարդուչիին, Լեոպարդիին, իսկ Վահան Տերյանը, բացի այդ, նաև ռուս Բալմոնտին, Բրյուսովին, Մերեժկովսկիին ևն.:

Զարժե այդ մասին խոսել: Թո՛ղ հրճվեն, ճաշակի հարց է: Ինձ համար Գյոթեի «Ueber allen Gipfeln ist Ruhe»ն[3] ամենաթանգ գոհարն է տիեզերական գրականության. դրան չի հասել ողջ ֆրանսական գրականությունը: Եվ դա իմ իդեալն է, կաղապարը: Դրան եմ բերում աչքիս առաջ, երբ մի բան եմ գրում: Պարզ, անպաճույճ, նաիվ, բայց՝ խորն ու զգացած...

Սակայն, Պարսամյանի գրախոսականն ինձ զայրացրեց... Երկինք հանել Օշականի բռնազբոսիկ Շահպազը իր անբնական հանգույցով – ելքով, անբնական նյութով (ո՞ւր է տեսնված, որ այր մարդը էգ դառնա վշտից), իր անհասկանալի ոճով ու լեզվով, և ոչ միայն անտեսել իմ Լիլիթի գեղեցկությունը, այլև թեթև սրտով խարանել այն, որպես «անհաջող նմանողություն»[4] Կուպրինի[5] Սուլամիթին, որ բոլորովին տարբեր բան է: Մի՞թե միայն այն է պատճառը, որ ես Աստվածաշնչի ոճից եմ օգտվել[6], ինչ որ բնական էր, ինչ որ նյութն էր ուզում այդ ձևը. ո՞վ չի օգտվել այդտեղից – Նիցշե, Սլովացկի, Օ. Ուայլդ, Լամբնե և այլն: Իմս տարբեր բան է, թե՛ իր խորքով, թե՛ գաղափարով, թե՛ ձևով: Ի՛նչքան վիրավորական է նմանվել մի երկրորդական ռուս գրողի, մանավանդ որ նրան կարդացել եմ 1908 թ. և մոռացել, իսկ Լիլիթը գրել եմ 1921 թվին:

Ես զարմանում եմ, որ դու ուշք չես դարձրել այդ դառն խոսքի վրա — նմանողություն: Խնդրում եմ և պահանջում եմ, որ երկուսն էլ կարդաս և համեմատես անաչառ կերպով և դաս տաս քո քննադատ-աշխատակցին:

Ի միջի այլոց, Լիլիթը թարգմանվում է իտալերեն: Շատ դովեստի նամակներ ստացա նրա առիթով, և նկարիչ Ս. Խաչատրյանը թույլտվություն է խնդրում պատկերազարդելու այն:

Իսկ Մելքոն վարժապետը[7], իմ աֆորիզմները... Պարսամյան Թլկատինցիի[8] անունն է տալիս: Ո՞վ է դա, որից դրեթե բան չեմ կարդացել... Վա՛յ ինձ, վա՛յ: Խարբերդցի մի անճաշակ վարժապետ՝ ինձ ուսուցիչ:

Եվ այդ Պարսամյանը ոչ մի խոսք, օրինակ, չի ասում իմ «Հայաստանին»[9] նվիրած ոտանավորի մասին, որի համար ոչ միայն դովքեր ստացա չատ-չատերից, օրինակ, Շանթից, Վարանդյանից, Ազբալյանից, այլև Երևանից: Ուղղակի հուսահատական բան է: Ինձ մնում է այլևս չգրել արևմտյան հայերի մասուլի մեջ, ուր այլ ճաշակ է տիրում, աստեղության հետ միասին և ուր զուր տեղը ես ծաղրի եմ մատնվում, երբ Կովկասի հայերի մեջ սիրված եմ, հասկացված ու գնահատված:

Այստեղ էր Վահան Նավասարդյանը, երեկ գնաց Եդիպտոս. ասում էր, թե Օշականը իր թրքահայ խմբով աստելով աստում է ռուսահայերին և նրանց գրողներին, ու բղավում է թե՝ «մոխիր պիտի դարձնեմ Իսահակյանին. նա ո՞վ է, որ իրեն մարգարե է ծախում, անապատ գնում...»

Անշուշտ, գլուխ չունեմ նրանց հետ բնկնելու: Բայց սիրտս ցավում է, որ գանվում եմ այս անպիտան մթնոլորտում, գաղութում, ուր իշխում է այս ստոր մտայնությունը:

Սակայն, եթե դու համամիտ ես նրանց հետ, իբրև խմբագիր «Հայրենիք» թերթերի, ուր արդար վերաբերում

չկա իմ դեմ ազատ կարծիքի դիմակի տակ, ստիպված եմ իմ անունը հանել նրանց էջերից, որքան էլ որ դա ցավ պատճառե քեզ: Եվ, վերջապես, քեզ համար էլ, իբրև խմբագրի վիրավորական է, որ դու առաջնակարգ տեղ ես տալիս մի գրողի, որի գրվածքները մյուս էջերում ժխտվում են: Ո՞ւր է մնում խմբագրի աչքը, ճաշակը, գիտությունը: Խմբագիրը ո՞րի հետ է համաձայն, ի՞նչ է նրա կարծիքը:

Վերջապես, Աստված բոլորիդ բարի տա: Հայությունը երկու ազգից է կազմված՝ իրար ատող, իրար չհասկացող: Սա գալիս է միանգամայն ինձ համոզելու, որ իմ տեղը Արագածի լանջերի վրա է, ինձ ծնող ու ինձ հասկացող ժողովրդի մոտ...

Քո Ավետիք Իսահակյան

64. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

1925, 23 փետրվ<արի>, Վենետիկ

Սիրելի Արման.

Ուղարկում եմ ներփակ նամակը՝ գրված Գ. Խատիսյանի[1] կողմից (Խատիսյանի եղբայրն է)՝ մեր ընկեր Համո Օհանջանյանի երեխաների[2] համար՝ Իտալիա մտնելու վիզա ձեռք բերելու: Նամակը ուղղված է ընկ. Վարանդյանին, բնականաբար, ուստի հարկ չկա նրան հարցնել:

Եթե կարող եք մի բան անել, խնդրում եմ ձեռնարկեք անհապաղ գործի: Պետք է ստանալ իտալական արտաքին և ներքին գործերի մինիստրությունների թույլտվությունը, եթե հնարավոր է՝ հեռագրով կարգադրել թույլտվությունը Թիֆլիզի իտալական կոնսուլին:

Երեխաները գալու են Իտալիա (Պադովա) համալսարանի համար, ուսանող. տակավին պատանիներ են.

տղան՝ Արմեն անունով, աղջիկը՝ Գալիա (Գայանե). ապրում են Թիֆլիզ. ահա նրանց հասցեն.

Armen, Galia Ohandjanian,
(30, Beboutowskaia)
Tiflis (Georgia)
U.R.S.S.

Կանխավ հայտնում ենք մեր չնորհակալությունները Ձեր քաչելիք ջանքերի համար:

Երևի տեսաք Նավասարդյանին. արդյոք դոհ մնա՞ց, մի բան տեսա՞վ. դեռ ինձ չի գրել:

Դուք ի՞նչ բանի վրա եք, ի՞նչ եք մտադիր անելու:

Ես վերջին օրերս չա՛տ տխուր էի. եղբորս[3] մահվան լուրն էի առել...

Շատ բարևներով մնամ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

65. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 6 մարտի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Այսօր ստացա նամակդ և չեքը. չնորհակալություն: Ուրախ եմ, որ գոհ հեռացար Իտալիայից և բավական բան տեսար. եթե միտք ունեիր ավելի երկար մնալու Իտալիայում, կարող էի այստեղ փող պարտք առնել (կային փող տվողներ, կգտնվեին դյուրին՝ մինչև 800-1000 լիրա), բայց անցած է, ուրիշ անգամ:

Մի երեք օր է՝ այստեղ է Զարենցը: <Անցած> օրը եկել էր ինձ տեսնելու: Շատ հարգանքով արտահայտվեց <1 անընթ. բաւ> դեպի ինձ:

Քո գնալուց հետո ես շատ տխուր լուրեր առա. եղբորս մահը, այն որ իմ այն նամակը բերել էր քեզ և Շահխաթունուն, մեռել է, և նույնպես քրոջս տղայի մահը... շատ

է կոտրած սիրտս, և ձեռքս չի դնում աշխատանքի. և կամազուրկ վիճակին այս էր պակաս. լրացրեց դառնության բաժակը:

Բարևներով, համբույրներով քո Ավետիք

66. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 16 մարտի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Ստացա ուղարկածդ չեքը և պատասխանեցի:

Ի՞նչ գրեմ. հեչ սիրտ չկա բան գրելու. ինչպես որ ինձ թողիր, ինչ հոռի տրամադրության մեջ, նրանից 40 անգամ գեչ երևակայի՛ր ինձ:

Դու երազում ես Հավիտյան ապրել կամ կես-Հավիտյան. տո մարդ, իսկի մի 60-70 տարի չենք կարող բախտավոր ապրել, ո՞ւր մնաց քո ուզածի չափ... Կարծում եմ, որ մի լավ օր կա մեր կյանքում — դա մեր մեռած օրն է, որ մեր ընտանիքի համար դառն է լինելու, բայց մեզ համար — քաղցր օր:

Դու ինձ ներչնչեցիր թե՝ բոլշևիզմը իր վերջի սկիզբն է ապրում, իսկ Ջարենցը դլուխս է տանում, թե՝ ավելի ամուր ենք, քան ամենաամուր պետությունը՝ օրինակ՝ Անգլիան:

Ես երկուսիդ էլ չեմ հավատում. երկուսդ էլ երազում եք... Իրականությունը ոչ ոքի հասկանալ չի տված: Միակ ուրախ լուրը, որ կա — քրդերի չարժումն է, որ եթե վիժե էլ, բավական կցնցե թուրք գազանավարությունը, և բավական արյուն հանել կուտա, երկուստեք:

Էլ ինչ գրեմ: Ուրիշ անգամ կդրեմ:

Միայն խնդրում եմ «Աստվածների ծագում»[1] թերթոնից (ինչպես հայտնեցի քեզ) երկու թերթ պակասում է՝ 4

և 5 թերթոնները... բարի եղիր և ուղարկիր, որ կարդամ. ուզում եմ կարդալ, որովհետև գովված վեպ է:

Բարևներ մերոնցից ձեզ բոլորիդ և իմ կողմից:

Համբուրներով քո Ավետիք

67. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 25 մարտի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Մտածեցի, որ քեզ էլ մի-երկու տող գրեմ և ներփակ նամակը՝ Համոյին. իսկույն հասցրու, որովհետև լավ լուր կա մեջը — նրա երեխաներին թույլ տրվեց Իտալիա մտնելու:

Ա. Մյասնիկյանի մահը[1] ինձ չա՛տ ցավ պատճառեց. չա՛տ պետքական էր մեր դժբախտ ժողովրդին. և չա՛տ ցավեցի, իբրև հին ընկերի. լավ մարդ էր, չզայրանաս: Խնդրեմ վրան գեչ չխոսես: Նա ձեռքի տակով չա՛տ բարիքներ է մատուցել հայերին:

Եղիշե Զարենցը այստեղ էր, գնաց: Եվ խնդրելով ինձնից հետը տարավ քո բոլոր ինձ տված գրքերը. չա՛տ հետաքրքրվում էր. ես ուրախությամբ բոլորը տվի. թեև վրան ինձ նվեր էիր գրել. հույս ունիմ որ չես նեղանա, գիտնալով, որ ուզում ես գրքերդ նրանք կարդան. հետը տանելու է Մոսկվա:

Հետևյալ գրքերն էին — 1. Դաշնակ<ցության> լիկվիդացիան[2] 2. Դաշն<ակցության> անելիքը[3] 3. Հայաստանի ազատությունը[4] 4. Դեմոկրատիա[5] և 5. Բ. Իշխանյանի գիրքը[6]:

Շա՛տ ուրախ կլինեի եթե ինձ նորից ուղարկեիր. եթե չկա — վնաս չունի:

Ես չա՛տ տխուր եմ. մեր ընտանիքից անհուն գեչ լուրեր ստացա...

Հետո, ինձ չա՜տ է ճնշում իմ պարտքս. օր ու գիշեր մտածում եմ թափել այդ պարտքը. բայց ի՞նչ կերպ: Մտածում եմ ինձ Հայաստան ձգեմ և կալվածքներիս մի մասը ծախեմ եղբայրներիս վրա, և փող ստանամ, կամ տեղում մի կերպ ձեռք բերեմ, որովհետև արտասահմանում անհնար է այդքան փող ձեռք բերելը:

Գրական վաստակ չկա, փող պարտք տվող չկա. և առհասարակ ո՛չ մի լույս, ո՛չ մի հույս չկա: Կարծում եմ, որ բարեկամս էլ մոտ ապագայում դադրեցնելու է իր նպաստը. կմնամ ջրից հանած՝ դուրսը ձգած մի ձուկ: Մի խոսքով, իմ վերջը լավ չեղավ: Այսպիսի հոգով հիմա աշխատանք էլ չեմ կարող կատարել. երկու ամիս է, քո գալու օրից սկսած՝ մի տող գրած չունեմ. վեպս մնաց կիսատ: Անհնարին ուժ պիտի թափեմ վրաս, ի կատար ածելու թեր ի բաներս. ո՛վ գիտե, ի՞նչ է լինելու. մահ կա, հիվանդություն կա, հազար չարիք կա մարդուն դարան մտած: Վերջապես:

Շա՜տ բարևներ մերոնցից ձերոնց:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

68. ՎԱՀԵ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻՆ

1925, 1 ապրիլի, Վենետիկ

Սիրելի՛ Վահե.

Հայրիկիդ հետ 1900-1901 թվերին ուսանող էինք Յյուրիխում: Ուզեցինք մի օր ձմերուկ գնել, սակայն ձմերուկի գերմաներեն անունը չէինք հիշում: Մտածելով գնում էինք, Հակոբ Աղասերն[1] էլ մեզ հետ էր, երբ հայրիկդ, որ միշտ սրամիտ էր և կատակող, դարձավ մեզ, ասելով.

– Հիշեցի ձմերուկի անունը:

– Ինչպե՞ս է, հարցրինք մենք:

– Das *ամերուկ,– հանգստությամբ պատասխանեց հայրիկը:*

Մեր զվարթ ծիծաղին այլևս վերջ չկար:

Ա՛խ, իմ երիտասարդության անգին օրեր...

Ա՛խ, իմ երիտասարդության սիրելի ընկերներ, հավերժ ողբալի Միսա՛կ[2] և Աղասե՛ր...

Ավետիք Իսահակյան

1.IV.1925
Venezia, 2266, Dorsoduro.

69. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, 22 ապրիլի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Շա՛տ ժամանակ է որ նամակդ ստացել եմ, բայց, ներող եղիր, սիրելիս, որ մինչև այսօր չեմ պատասխանել. տխուր եմ չատ, սրտաբեկ, անտրամադիր. այսպես դնաց մեր սերունդի կյանքը...

Վերջապես այսօր գրում եմ քեզ. Երևանը ծաղկել է հիմա, գուցե կեռասը հասել, Արարատյան դաշտը կանանչին է տալիս, լեռներից իջնում են զարնան հորդ ջրերը, և Աղեքսանդր Մյասնիկյանը չկա. նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը, և ամենախելացի ու ամենաբարի բոլշևիկը:

Ամենաանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը. նա ամեն հայի սրտի մեջն էր ապրում, և հիմա ամենքը ողբում են նրան: Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում. ո՞վ պիտի փոխարինե նրան. դա է նույնպես չատ մտածել տալիս ինձ...

Ափսոս, անհուն ափսո՛ս, ի՞նչ կարճ կյանք[1] ունեցավ և ի՞նչ մեծ գործ կատարեց:

Անձնապես ցավ եմ զգում, որ Հայաստան գալով՝ երջանկությունը չպիտի ունենամ նրան տեսնելու. իմ միակ մեծ բարեկամ-ընկերն էր նա ներկա իրավակարգի մեջ. մյուսները բացի Մակինցյանից[2], անծանոթ մարդիկ են ինձ:

Համոզվում եմ, որ հայ ժողովուրդը անբախտ աստղի տակ է ծնվել. գոնե խնայե, ով որ խնայելու է նրա ազնիվ ընկերներին. հույս ունեմ, որ կան. գոնե Լուկաչինի[3] մասին շատ լավ են խոսում. այդ լավ ընկերները թո՛ղ ապրեն հայրենիքի համար, ինչ դրոշի տակ ուզում է լինի, միայն թե ծխա հայի օճախը:

Սիրելի Մարտիրոս, մարտ ամսին այստեղ էր Ե. Զարենցը[4]. ամեն օր միասին էինք. շատ քիչ կովեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով: Նրա մասին շատ դեչ, չար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է: Երիտասարդական [հասակին վայել] տարիքի պատճառով թերություններ ունի – մեծամիտ է, երեստված է և անհանդուրժող է. սակայն խեղճը չա՛տ ջղային է. հիվանդ տղա է ուղղակի. անչուշտ տարիների մեջ այս ամենը կանցնի: Առաջին չրջանի գրվածքները նրա կարդացի. գեղեցիկ բաներ են. տաղանդավոր է, բայց բոլշևիկյան – ֆուտուրիստական գրվածքները չկարողացա սիրել. երևի հին մարդ եմ և չեմ հասկանում:

Տարիքից ավելի զարգացում ունի և կարդացած ու կարդալ [սիրով] սիրող տղա է. չա՛տ հառաջ կգնա:

Սիրելիս, ստացել եմ Մռավյանի[5] ղրկած «Արևները» և Ս. Զորյանի «Տխուր մարդիկը»: Շնորհակալություններս անպատճառ հայտնիր նրանց, չմոռանաս:

Զորյանը չա՛տ լավ բաներ ունի – պարզ, ճչմարիտ: Ուրախ եմ, որ դեռ երիտասարդ է[6] և հառաջ գնալու ժամանակ ունի:

Ի՞նչ ես անում դու. աշխատում ե՞ս, թե կոտրված ես. ինչպե՞ս են կինդ ու երեխաներդ: Ինչպե՞ս է Երևանի տնտեսական դրությունը, ժողովրդի ապրուստը:

Շատ բարևներ բոլոր քո և իմ լավ բարեկամներին և ընկերներին. հատկապես բարևներ Դերենիկին, Դեմիրճյան. ասա իրան, որ ամեն օր կարոտով անունը տալիս եմ նրա, բայց չեմ գրում, որովհետև եթե գրեմ, մի ողջ գիրք պիտի գրեմ, այնքան բաներ ունիմ նրան ասելու. 14 տարվա մեջ սրտիս մեջ հավաքված բաներ. ինչպե՞ս գրեմ նամակով. երբ աստված կամենա իրար տեսության արժանանանք, ամիսներ պիտի խոսինք, որ վերջ ունենա...

Մերոնք լավ են. բարևում են սիրով քեզ և ձերոնց:

Իսկ ես ջերմ բարևելով տիկ. Լուսիկիդ[7], համբուրում եմ քեզ, երեխաներիդ և Դերենիկին:

Միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

70. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

1925, 20 մայիսի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Ստացա Մայիս 6 թվակիր նամակդ երեկ և այսօր ուղարկում եմ «Ուստա Կարոյի» վեցերորդ գլուխը[1]:

Քեզ շատ սիրելուցս է, որ վճիռս լուծեցի[2], և նույնպես Համաստեղի խաթերը, որ այդպես գնահատում է գործս: Այլապես ի՞նչ միտք ուներ դրել այս հասարակության համար, որ մեռած սիմվոլիզմով է տարվում և ֆուտուրիզմով ոգևորվում: Անմահը ռեալիզմն է — Հոմերոս, Սերվանտես, Գյոթե, Տոլստոյ, Դոստոևսկի, և ո՛չ Բոդլեր կամ Օ. Ուայլդ...

Սակայն Օշականը անշուն գյուղ է գտել, առանց փայտի ման է գալիս, կլլացնել տալիս հասարակությանն իր հիվանդ պիլյուլները, և մարդ չկա նրան ծակը գնող: Իսկ դու բոլորովին ասիմիլյասիոնի ես ենթարկվել Թրքահայ մտայնության: Մի խոսքով...

Հետո նորից կգրեմ, չտապում եմ...

Ջերմ բարևներ տիկ. Նադիային և Համաստեղին և համբույրներս քեզ: Համաստեղին պիտի գրեմ:

Քո Ավետիք

Հ.Գ. «Ուստա Կարոն» բռնելու է 1000 մեծադիր էջ, ընդգրկելու է մեր ողջ կյանքը, բոլոր դասերը, մտքերը, հոսանքները: Էպոսը այս գլխից սկսած է ավելի մշակված դուրս գալ՝ բարբառով, բոլորովին ֆոտոգրաֆիկ: Առաջին գլուխները հին էին գրված, վերջերս մշակեցի:

Գիտես, սարսափելի դժվար գործ է – 1000 էջի վրա խաղալ, ուր հարյուրավոր մարդիկ կան, գյուղ ու քաղաք իրար խառնված, անկիրթ ու կրթված մարդիկ, անթիվ գավառաբարբառներ, մանրակրկիտ ճշդությամբ գրված, ոչ թե հիշողությամբ գրված, այլ բազմաթիվ հում նյութեր նայելով:

Անթիվ մտքեր, անթիվ գաղափարներ, հոսանքներ կան այնտեղ – Դաշնակցությունը, Հնչակը, Սոցիալ-Դեմոկրատը, կղերականը, պեսիմիզմ, օպտիմիզմ, քահանա, վարդապետ, ինժեներ, վարժապետներ, քուրտեր... մի խոսքով՝ մի քաոս, բայց ներքին մի հզոր կապով կապված:

Հաջող է: Ում մոտ որ կարդացել եմ, հավանել են: Միակ պակասությունը լեզուն է, հեղինակի պատմած մասը, ոչ թե հերոսների դիալոգը: Հեղինակի լեզուն պետք է մշակեմ, որովհետև վեպս էպոս է, լեզուն պետք է լինի օբիեկտիվ, իսկ ես շատ եմ սուբիեկտիվ: Բայց դրան էլ կհաղթեմ. քանի առաջ է գնում վեպս, այնքան լեզուն կաղապարվում է:

Համենայն դեպս մի տարվա չափ շա՛տ ծանր աշխատանք ունեմ: Մի տարի ևս կյանք ունենամ, հետո ինչ կլինի՝ թող լինի:

Ես մյուս անգամին կղրկեմ Համաստեղի «Գյուղ»ի մասին (լեզվի) իմ արած նկատողությունները՝ նրան, բայց

դու էլ կկարդաս ու կտեսնես, թե ի՛նչ դաժան և՛ խիստ, և՛ ճիշդ նկատումներ, պահանջներ ու տեսակետներ ունեմ: Շատ դժվար բան է լավ գիրք գրելը:

Քո՝ Ավետիք

71. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

<1925>[1], 26 *մայիսի*, Վենետիկ

Շա՛տ սիրելի Մարտիրոս.

Նամակդ ստացել եմ իր ժամանակին, և ուզածդ իրերի պատվերը տվել եմ, բայց մինչև այսօր փողը չստացա, ուղարկածդ փողը. պոստան Հայտնեցի նույնպես՝ դեռ չի ստացվել: Ի՞նչ է եղել, չգիտեմ, դու ևս հետաքրքրվիր՝ իմանալու. գուցե կորել է...

Քո նամակը ստանալուց առաջ քեզ Երևան գրել էի արդեն, երևի հիմա ստացել ես:

Ջարենցը եկավ, գնաց, և անչնորհքը մի տող չգրեց. չգիտեմ ո՞ւր է հիմա:

Ես լավ եմ, բայց չա՛տ տխուր եմ. ի՞նչ պիտի լինի օտար երկրում ապրող մարդու կյանքը. ո՛չ այս ենք, ո՛չ այն. քաշ ենք գալիս:

Բարևի՛ր Մոսկվա եղող իմ բարեկամներին[2]: Լսում եմ որ այս տարի մեր հայրենիքի բերքը դեչ է. մրսել են ցանքերն ու այգիները. սով չլինի՞, ի սեր աստծու...

Շատ և շատ ջերմ բարևներ մեզնից:

Համբույրներով քո՝ Ավետիք

Xped[3] A. Issakian, 2266.
Dorsoduro, de Marchi
Venezia

72. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, 10 Հունիսի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս ջան.

Ստացել եմ 5 դոլլարը. ամսուս 6-ին ուղարկեցի տվածդ հասցեով հետևյալ գրքերը.

1. Ugo Nebbia[1], 2. Nuova Antologie[2] *3. մի կատալոգ, 4. Թինտորիտո[3], 5. Տիցիան[4], 6. Մ<իքել> Անջելո[5], 7. Թիեպոլո[6], 8. Վերոնոջե[7], 9. Վատիկանը:*

Կատալոգները և լրացուցիչը՝ ռուսականը սպառվել են, իսկ «Renaissance de l'art française»[8] *դեռ չստացա, նորից պատվիրեցի որ գտնեն, երբ ստանամ իսկույն կղրկեմ: Քեզ պարտք եմ դեռ մոտ 10 լիրեթ:*

Մակինցյանը այստեղ էր, մի քանի օր մնաց կնոջ հետ, երեկ գնաց Հռոմ:

Հանձնել, խնդրեմ, Մ. Սարյանին

73. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 21 Հուլիսի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Երեկ ստացա նամակդ, ներփակ 200 լ<իրա> ընկ. Սեդրակի[1] կողմից. դրանով ուզեցիր պարտավորեցնել թերթիդ համար գրել: Քո թերթը կինս և ես չա՛տ ենք սիրում և կարդում ենք սիրով. կենդանի, ջղուտ, ավիշոտ թերթ է, իսկ եթե մինչև օրս չեմ գրել, դա ոչ հոնորարի հարց է, ոչ էլ բոլշևիկների վախը, այլ ուղղակի ծուլության իներցիան. հազիվ կարողանում եմ «Ռւստա Կարոյի» տակից դուրս գալ, ամսե ամիս մի-մի դլուխ հասցնելով «Հայրե-

նիք»ին. հազիվ եմ ասում, որովհետև այդ սարսափելի «Ուստա Կարոն» բռնում է մոտ 1700-2000 էջ, սակայն այդ 2000 էջը գրել եմ 5-6000 էջերի մեջ, ու այդ քաոսից ու ծովից կազմում եմ գլուխները. չես իմանում, թե ինչ տաժանելի աշխատանք է, բայց ես ոգևորված եմ, որ անկարելի, մեծ, հզոր գործի եմ ձեռնարկել. մարդ պետք է հզոր գործեր կատարե, անպարտելի դժվարությունների հաղթե, подвиг (սխրագործություն) կատարե իր կյանքում. իմացած եղիր, որ «Կապիտան Ղազար», «Մելքոն վարժապետ» չմշակված գլուխներ են «Ուստա Կարո»ից — և նույնիսկ «Հայրենիքում» տպված գլուխները դեռ վերջնականապես չեն մշակված. տպվելուց հետո եմ մշակում, մշակված գիրք պիտի դառնա, երկու հատոր: «Ուստա Կարո»ի մեջ մեր կյանքի վերջին 20-25 տարին է ամփոփված, սկսած 1904 թվից, մինչև այսօր, մինչև վերջացած տարին, իսկ վեպս կվերջանա 2-3 տարուց հետո. առաջին հատորը՝ մի տարուց հետո, 1000 էջը, իսկ մնացած... հետո... ա՛յ, թե վեպս ավարտված լինի բոլշևիզմի փլումով, դու տե՛ս Զատիկը: Վեպիս մեջ հյուսած են դյուղ ու քաղաք, Դաշնակցություն, ռուս հեղափոխություն, Թրքահայ ժողովրդի չարդն ու փչացումը, տեղահանություն, բոլշևիզմ և այլն, և այլն: Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլիսոփայական և չա՛տ տարրեր կան մեջը՝ էպոս, բոման, լիրիկա, հումոր... դա օվկիանոս է, վեպ չէ:

Զարենցը հիացավ, զարմացավ, և դասեց հավասար Դոն-Քիշոթի, «Война и мир», Հոմերոսի հետ: Միայն թե ապրիմ մի երեք տարի և հաց ունենամ: Այդ վեպի համար անսահման բան եմ կարդում — բարբառներ, ազգագրական նյութեր, դիտական դրքեր, սոցիոլոգիա, պատմություն և վեպեր, քննադատություններ: Ոճի խնդիր կա, ոճ պիտի ստեղծեմ ինձ համար և բազմատեսակ վեպ:

Սրանից դուրս էլ մի՞թե ժամանակ ունեմ, մանավանդ որ ծույլ եմ բնությունից և հաճախ մելանխոլիա... Այդ

վեպիս համար պետք է մի 6 ամսով լինեմ Հայրենիք, և դրա համար բոլշևիկների հետ կապեր եմ պահում, իսկ վեպիցս հետո նրանք գլուխս կտրելու հրաման պիտի արձակեն, որովհետև անտիբոլշևիկ վեպ է (այս չասացի Զարենցին, մյուս կտորները կարդացի):

Ինձ Հայաստան կթողնեն իբրև գրողի, որովհետև նրանք համարում են ինձ ռեակցիոներ, նացիոնալիստ: Զարենցն ասաց, եթե այսօր Նավասարդյանը իրեն հայտարարե կոմունիստ, երկու ձեռքով կգրկենք և կընդունենք, որովհետև նա մարքսիստ է, սոցիալիստ է, իսկ եթե ես ինձ կոմմունիստ հայտարարեմ, վրաս կխնդան, որովհետև ծովերով հեռու եմ սոցիալիզմից:

Տեսնո՞ւմ ես վերաբերմունքը: Թեև ուզում եմ և պետք է Հայաստան գնամ, բայց կարծում եմ, որ չեմ գնալու: Մինչդեռ չափազանց կարոտցել եմ հայ հողին ու ժողովրդին:

Երկարեցավ նամակս: Թերթիդ կաչխատակցեմ երբեմն-երբեմն, թե քո և թե Սեդրակի խաթեր համար. բայց իսկույն բան չեմ կարող ղրկել. չունեմ պատրաստի: Հիմա էլ անհուն չոգ է այստեղ, կրակ է թափվում, օրը հազիվ մի քանի ժամ կարող եմ սեղանի առաջ նստել, միշտ ծովափն եմ: Վարանդյանը այս երեք շաբաթ է՝ փախավ գնաց Ալպյան լեռները. նա մենակ է, կարող է, իսկ ես չեմ կարող և պիտի մնամ այս հնոցում:

Քաղաքական հոդվածներ չեմ կարող գրել, դրա շնորհը չունեմ, այդ քո և Դարբինյանի գործն է. երկուսդ շա՛տ ուժեղ եք այդ հարցերում, և փառավոր եք գրում, և վերջապես պատրաստուԹյուն ունեք այդ հարցերում. իմ գիտցածները սիստեմատիկ չէ, վեպի մեջ կարող եմ այդ մարզանքները անել. Թող որ վեպիս մեջ դաշնակցական, սոցիալ-դեմոկրատ, բոլշևիկ ճառերը քիչ փոփոխված արտագրում եմ այդ ուղղուԹյունների լիդերների բերաններից. այս ամենալավագույն ձևն է րեալիզմի. ամեն հերոս պիտի խոսի իր մտայնուԹյամբ և իր տերմինոլոգիայով:

Սրա համար խնդրում եմ քո գրած բոլոր գրքերը ինձ նորից ուղարկիր, նաև վերջին գիրքդ[2], որ Վարանդյանին ղրկեցիր, ինձ մոռացար. նաև Հանգուց<յալ> Բ. Իշխանյանի գիրքը (2 ամիս)[3]: Դրանք տվի, և ուրիշ գրքեր էլ հետը, Ջարենցին. հետը տարավ Հայաստան, չա՛տ էր հետաքրքրվում: Ես կարծում էի, թե դու կուրախանաս, քանի որ գրչիդ տենչացող կա Հայաստանում, բայց երևում է, դու վշտացել ես՝ նվեր տվածներդ ուրիշին եմ տալիս: Վարանդյանը արդարացրեց ինձ, մնացածը (նվերի հանգամանքը) սենտիմենտալիզմ համարելով:

Խնդրում եմ ուղարկես, եթե ոչ՝ քո ճառերից չեմ դնե վեպիս մեջ:

Էլ ի՞նչ գրեմ: Հա՛, կարդացի Օ. Մխիթարյանի հոդվածը[4] իմ մասին. դեռ լրացած չէ, որ կարծիք հայտնեմ: «Պարունակի» մասին նկատածը ճիշտ է, փութիկոտ գրեցի, առհասարակ չեմ մշակում, այդ ես էլ գիտեի: «Պարունակի քարվան կտրելը» իրողություն է (հանգ. Արմեն Գարոն է պատմել ինձ), բայց ես պիտի փոխեի, որ աննկատ գույն չառներ: Վնաս չունի, կփոխեմ: Նույնը և Գուրգեն Մխիթարյանն[5] էր նկատել դեռ 1923 թվի իր չաբաթաթերթի մեջ («Նոր չարժո՞ւմ»)[6]: Կարծեմ Օ. Մխիթարյան Ֆենիքսն[7] է, տաղանդավոր բանաստեղծ է:

Բարի եղիր Համոյին (Օհանջանյան) ասա, որ Մխիթարյան վանքը պետք չի գտնում ուրիշ թուղթ ստանալու, այն թուղթից բացի, որ ղրկեցի Համոյին: Եթե թուղթը չբռնեց, նորից դիմում կանի:

Վերջապես մեր տան աղջիկը[8] գնա՛ց, կինս չա՛տ ուրախ է: Մենք լավ ենք և բոլորով կբարևենք կնոջդ, քեզ, Բեգլարին[9], Սեդրակին, կնոջը, երեխաներին, Համոյին, կնոջը, Էլլային և Նիկոլին Աղբալ:

Ինչո՞ւ չի գրում նա, ափսոս չնո՛րհք, որ վատնում է զուր տեղը:

Համբույրով քո Ավետիք Իսահակյան

74. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

1925, 28 Հուլիսի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Բավական ժամանակ կա ստացել եմ քո նամակը և հետո էլ «Նորքը». սրտագին չնորհակալություններս երկուսի համար էլ:

Վերջերս գնացել էի Միլան. տեսա Պ. Մակինցյանին, լծված է մի գործի, որ իր գործը չէ – վաճառականությո՛ւն. այնինչ իր տեղը գրականությունն է[1] ու համալսարանի ամբիոնը:

Զարենցը գնաց, և ո՛չ մի տող չգրեց. դավաճան մարդ դուրս եկավ: Ես սիրեցի նրան. լավ ընկեր է, և նույնիսկ հայ մարդ է, չնայելով իր համայնավարական տրուբային, որ փչում է չարունակ՝ ձանձրացնելով թե իրեն և թե լսողներին: Ափսո՛ս տաղանդ, որ ծուխ է դառնում:

Սիրելի Մարտիրոս, կարդացի գրածդ հոդվածը[2]. չնորհակալություն ինձ նվիրած տողերի համար. հաճույքով կարդացի գրածդ:

Մեծ ցավով լսեցի Երևանին հասած աղետի[3] մասին. դժբախտ ժողովուրդ ենք, ինչ կուզես ասա:

Սիրելի Մարտիրոս ջան, քո ուղած գրքերը, ինչ որ կարողացա ձեռք բերել, հունիսի 6-ին ուղարկել եմ Մոսկվա, Կուսիկյանի հասցեին, ապահովագրած. երևի արդեն ստացար: Պատկերահանդեսի ցուցակից միայն մի օրինակ գտա, ռուսականից՝ ոչ մի հատ. սպառվել են: Մոտս ունիս դեռ մի 10 լիրա էլ. գրել էի այդ մասին, հիմա չեմ գտնում մանրամասն հաչիվը, բայց գրել եմ քեզ, նույնպես, թե ինչ եմ ուղարկել:

Մի բան եմ խնդրում քեզ, սիրելիս, կարո՞ղ ես ինձ ուղարկել այն «Նորքի» համարները, ուր տպված է Դերենիկի Քաջ Նազարը[4]. երկու գրքի մեջ է. առանց քեզ վիրա-

վորելու գրում եմ, որ փոխարենը քեզ կղրկեմ խելքս կտրած գրքեր, պատկերներ արվեստի մասին: «Քաջ Նազարից» մի կտոր կարդացի և համը բերանս մնաց. սքանչելի բան էր. կեցցե՛ Դերենիկը:

Ուրախությամբ կարդացի Մոսկվայում տարած քո հաջողության մասին[5]:

Գրում ես որ մյուս տարի գալու ես Իտալիա. ողջ մնանք, նորից տեսնենք իրար, և ծով դնանք՝ «լավերը» տեսնելու. այդ ապրանքից այս տարի էլ չա՛տ կան. գնում եմ, բայց մենակ եմ. նայում եմ և միշտ հիշում քեզ. ճիշտ որ՝ անցած օրին օր չի հասնի...

Իսկ մյուս տարի հետդ կդառնամ Երևան. այլևս անկարող եմ սպասել, հոգիս ելավ օտարության մեջ:

Մարտիրոս Ջան, երեք ամիս է՝ այստեղ է նկարիչ Լ. Հազարապետյանը[6]. քեզ մատաղ, մեկ գրի՛ր տեսնեմ, թե դա ի՞նչ նկարիչ է. բան չեմ տեսել նրանից, բայց ասում է, որ ինքը մեծ բան է... Ի՞նչ էր անում Թիֆլիզ, ի՞նչ դիրք ուներ, չա՛տ եմ հետաքրքրվում, ուզում եմ ճանաչել նրան. չա՛տ տարօրինակ մարդ է:

Այստեղ սարսափելի չոգեր են, տաք-կրակ. հազիվ կարողանում եմ մի քիչ պարապել. ծովն է փրկում: Մտադիր ենք Օգոստոսի վերջերը Հռոմ գնալ, դուցե և Նապոլի. տոմսերի մեծ զեղչ կա, որովհետև այս տարի «Սուրբ տարի» է կոչվում, ուխտագնացության տարի դեպի ս. Պետրոսի քաղաքը:

Մենք լավ ենք, և սիրով ու կարոտով հիշում ենք քեզ, և բարևում ենք քեզ, տիկնոջդ և երեխաներիդ: Բարևիր Դերենիկին, Մուշեղին, Ա<չոտ> Հովհաննիսյանին, Գ<աբեգին> Լևոնյանին, Դ<ավիթ> Անանունին, և բոլորին, բոլորին:

Երբ տրամադրություն կունենաս՝ գրիր, մանավանդ թե ստացա՞ր ուղարկածներս:

Համբույրներով քո՝ Ավետիք

75. ԵՐՎԱՆԴ ՔՈՋԱՐԻՆ

<1925>[1], 31 Հուլիսի, Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Ստացել եմ քո երկու նամակն էլ և տիկնոջդ փոքրիկ պատկերը, որից կարելի է ենթադրել, որ համակրելի աղջիկ է: Բարով վայելեք միմյանց:

Ոչ մի առիթ չունես հոռի մտածումներ ունենալ իմ չպատասխանելուս համար. քեզ առաջվա պես սիրում եմ, միայն ծուլությունն է պատճառը, որ փափագներս չի իրագործում նամակներին իսկույն պատասխանելու: Շա՛տ եմ սիրում նամակներ ստանալ, բայց պատասխանել՝ ուղղակի տաժանք է:

Բռնի, զոռով եմ պարապում, այսինքն «Ուստա Կարոն» գրում, այնքան ստվար գործ է, 1000 էջ, այնքան դեմքեր ու դեպքեր կան, որ խճճվել եմ մեջը, և դուրս չեմ կարող ելնել: Հիմա էլ Վենետիկի ամառն է՝ մի սպանիչ, մեղկացուցիչ տաքություն, բաղնի՛ք, որ թմբիր է տալիս՝ թե կամքին, թե մտքին, թե զգացումներին:

Հնար չունեմ այս համամիտ[2] դուրս գալու. սիրտս լեռներ է ուզում, կապույտ ու զով. բայց ո՞վ է տվել մեղավորին արքայություն:

Այո՛, Զարենցը անկեղծ ոգևորված էր «Ուստա Կարոյով». նա ճիշտ ըմբռնեց իմ հղացումը — տալ էպոս, ուր ամեն բան կա մեջը և պիտի լինի ամեն բան, ողջ դարը, մտայնությունը, դասակարգեր, մարդիկ՝ կենդանի, ռեալ և մտքերի, գաղափարների հորդ ծով...

Խնդիրը հաջողության մեջն է. պիտի հաջողի՞մ այսքան անհնարին ծանրության ձեռք զարկելուս: Տեսնենք. ես լավատես եմ:

Զարենցը հետաքրքիր տղա է, և տաղանդավոր է, և զարգացած է, և լավ ընկեր է: Սիրեցի նրան:

Այնպես որ, սիրելիս, ներողամիտ եղիր չպատասխանելուս համար. քեզի մոռանալու կամ արհամարհելու նշան չէ դա, բնավ երբեք, այլ ասացի արդեն. ամենակարևոր նամակներ – հացի հետ կապված, շաբաթներով երեսի վրա են մնում. իմ տարիքիս և իմ գործիս տեր մարդը պետք է որ մի քարտուղար ունենա: Ուստա Կարոն խեղդում է ինձ, ամեն բան ես եմ անում, և արտագրությունը, որ սպանիչ է, նույնպես ես... և ժամանակ չի մնում նույնիսկ անհրաժեշտ գրքեր կարդալը[3]:

Դու ի՞նչ ջրերի վրա ես, կարո՞ղ ես գլուխդ պահել. այսինքն՝ ավելի դյուրին կերպով: Կարծում եմ որ արդեն մի ճամբա բացած կլինես քեզ համար: Ժորժը և Մենոն ծանր օրեր են ապրում – հարցաքննություն, օր ու գիշեր ղբաղված, նիհարել են, ցամաք ձորի աղվես դարձել:

Հիմա պիտի ավարտեին, չկարողացան. մնաց աչնանը:

Մերոնք լավ են, և հիշում ենք միշտ քեզ, ինչպես երբ Ժորժի և Մենոյի հետ հանդիպելիս:

Բոլորն էլ ջերմ բարևում են քեզ:

Քաջ եղիր, լավ եղի՛ր, առողջ և ուրախ:

Սրտագին բարևներ տիկնոջդ:

Համբույրներով քո Ավետիք

76. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 3 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Այսօր ստացա «Հուսաբեր»ի վերջին երկու թիվն էլ. լրիվ կարդացի Օ. Մխիթարյանի քննադատականը[1] դրածներիս վրա. ճիշտ նկատողություններ կան, երևում է՝ որ շատ բան է ասել, կրճատել ես և մտքի թերիներ կան. կուզեի նրա հասցեն իմանալ և մի երկու հարց տալ նրան մի-

երկու մուխ բան բացատրելու: Մի բացիկով գրի՛ր հաս-ցեն:

«Հուսաբեր»ի համար պատրաստում եմ մի նյութ, հրեից Դավիթ Թագավորի կյանքից, Աբիսակ Սոմնացին[2]. հիմա Աստվածաշունչն եմ կարդում և Թալմուդը. գեղե-ցիկ բան է լինելու, բայց պիտի խնամքով գրեմ, որով-հետև ճշմարիտ է, որ ես չտապ եմ գրում, ջղային լինե-լուս պատճառն է ծուլությունը. արտագրել և նորից ար-տագրել: Լ. Տոլստոյը Վայնա ի Միրը[3] 8 անգամ է ծայրե-ծայր արտագրել, և դրա համար էլ չի խունանում գործը:

Քո Ավետիք

77. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ

1925, 23 հոկտեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի Հակոբ.

Հուսամ որ ողջ-առողջ. հասած եք Լայպցիգ, և լծված աշխատանքի:

Ես նոր եմ սկսել զբաղմունքներս. վերջերս Միլան էի: Հայր Արսենը նույնպես ձեռք է զարկել իր եգիպտական աշխատանքին[1]:

Տեղս ո՛չ մի նորություն չկա: Քաղաքը թափուր է, սկսվել են տխուր օրերը, Վենետիկին գորշ կյանքը, իրեն հնօրյա պատյանի մեջ – չկան օտարները, ծովի հյուրերը, աշխույժն ու կյանքը:

Սիրելի Հակոբ, վերջապես գտա ուզածս գրքի ճշգրիտ անունը.

Herman Hesse Siddharta[2].

Fischer Verlag

Նույն հեղինակը ունի և մի ճառ՝

Zarathustras Wiederkehr[3]

նույն Verlag-ը:

Կխնդրեի բարի լինեիք այդ երկու գրքերը ինձ ուղարկելու. եթե սուղ լինեն, կվճարեմ: Չգիտեմ ինչ <կ>արժենան: Դուք առեք և ուղարկեցեք՝ գները գրելով ինձ: Շատ պարտավորեցրած կլինիք:

Ջերմագին բարևներով տիկին Մայրիկիդ, անծանոթ հայրիկիդ, ձերոնց բոլորին և Ձեզ:

Պարոն Միհրանին <Ալլալիմճյան>[4] կբարևեք. 1894-95 թթ. ուսանող, ամենեն երիտասարդը, ամենեն աչքի չընկնողը, մեր խմբանկարին մեջ հատակին նստածը, «բանաստեղծը»[5]...

Բարևներով միշտ Ձեր՝ Ավետ. Իսահակյան

Issakian
2266 Dorsoduro
de Marchi
Venezia

78. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

1925, 17 նոյեմբերի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Ստացա նամակդ և 30 դոլարի չեկդ: Շնորհակալությունն:

Նամակ չգրելուս կամ նյութ չուղարկելուս համար հարցումներ ես անում, տեսակ-տեսակ, «հիվա՞նդ ես»:

Հիվանդ եմ, բայց ոչ մարմնով, այլ հոգվով: Ջանբրուխթ, մելանխոլիա, կամքի ոչնչացում, էներգիայի ջնջում:

Չորս տարուց ավելի է որ Վենետիկ եմ: Այս քաղաքը հետաքրքրական է՝ մի-երկու ամիս ապրելու համար, իսկ

երկար մնացողի համար մարմարյա գերեզման է, չքեղ գերեզման:

Բացարձակ մենակ եմ այստեղ, ընկեր չունեմ, բարեկամ չունեմ, խոսակից չունեմ: Օրերով մարդու հետ չեմ խոսում, օրերով մռայլ եմ, լուռ, անքուն, ջղային: Պառկում եմ անկողնուս վրա և ծխում, միայն ծխում: Ամիսներից ի վեր ընդհատել եմ իմ «Ուստա Կարոն»: Աչքիս բան չի երևում: Զզվել եմ կարդալուց էլ, գրելուց էլ, ամեն բանից... Մտքիս մեջ մահվան գաղափարն է սևեռված, զգացումներիս կեդրոն է դարձել նա՝ մահը:

Այս դրությունից դուրս գալու համար մտածում եմ ինձ Փարիզ նետել: Տեսնեմ, կարո՞ղ եմ այնտեղ փոխադրվել: Եթե ոչ, ուրիշ ելք չունեմ: Վենետիկ այլևս չեմ կարող ապրել: Փող չունեմ ճանապարհորդություններ անելու, թարմանալու, ցրվելու համար, իսկ այստեղ մնալ՝ կարող է վատ վերջանալ ինձ համար: Դու չգիտես, թե սա ի՛նչ մեռելություն է, ի՛նչ ճահիճ, և մանավանդ ձմեռը – կղերական քաղաք, մի պարահանդես չկա, մի ժամանցի տեղ: Ամբողջ օրը տանը, տանը, տանը՝ կնոջ չունչի տակ...

Եթե Փարիզ չկարողացա հաստատվել, ուրիշ տեղ չի մնում, եթե ոչ՝ թողնել կինս ու երեխաս ու գնալ Հայաստան: Ինձ ժողովուրդ է պետք, ընկերներ, կենդանի չունչ և գոլ, գուռնա-դավուլ, խորոված, գինի, երգ, չրջան, թա՛ռ, բայաթի և խորոված ու թուրչի[1], դարդման ընկերներ և ոչ թե վարդապետներ...

Մոտ ժամանակներս կմեկնեմ Փարիզ: Տեսնեմ՝ կարելի՞ է այնտեղ հանգստանալ հոգով ու թարմանալ:

Հարցնում ես, թե ի՞նչ է ասում Մակինցյանը[2]: Հայաստանի և բոլշևիզմի մասին ասում էր այն, ինչ որ դուք գիտեք: Ասում էր, շատ հաստատուն է բոլշևիզմը, նրա էվոլյուցիան հօգուտ իրեն է՝ բոլշևիզմին. դա նրա դինամիկան է: Անվերադառնալի է բուրժուազիայի կամ

մենշևիզմի իշխանությունը: Մեղադրում էր Դաշնակցությունը, որ վրաց մենշևիկների և մուսավաթականների հետ է գործում: Մի վայրկյան ընդունենք, որ հաղթեն: Այդ կնշանակե վրացու և թուրքի հեգեմոնիան հայերի վրա... Տեսնում ես, քեզ ծանոթ բաներ: Նկարագրում էր վառ գույներով Հայաստանի վերաշինումը — համալսարան, կոնսերվատորիա, թատրոն, նոր շենքեր, փողոցները ասֆալտած, Երևանը՝ մտավորականության կեդրոն, միշտ ժողովներ, խմբումներ, պարեր, համերգներ, ազգային սեփական կյանք, ամեն տեղ հայոց լեզու, հայոց երգ... Ասում էր, թե Դաշնակցության չարքերը հալչում են օր-օրի վրա. մնացել են ծերացած փտած Դաշնակներ... Ոչ մի անունով Դաշնակցականներին թույլ չեն տա հայրենիք դառնալու, նույնիսկ եթե զղջան... Քաջազնունին բավական է: Ահարոնյան, Խատիսյան, Աղբալյան, Շանթ, Օհանջանյան, Ռուբեն, Դարբինյան, Գյուլխանդանյան, Վրացյան մուտք չունեն: Վարանդյանի հանդեպ կիրք չունեն:

Իհարկե, Մակինցյանը չատ կրքոտ մարդ է և անսանձ լեզու ունի: Բացի մի քանիսից (ըստ Զարենցի՝ դու, Վ. Նավասարդյան, Ա. Ահարոնյան, Վրացյան, Ջամալյան, Ռուբեն), մյուսներին կթողնեն՝ Քաջազնունու օրինակով տուն գնալ: Ամենից ատելին նրանց համար Ա. Ահարոնյանն է:

Ինձ համար ճանապարհը միշտ բաց է: Ամեն տարի պաշտոնապես դիմում անում են: Ես քաշ եմ տալիս միշտ: Մանավանդ Մյասնիկյանը չատ էր ուզում, որ գնայի: Այդ խումբը[3] միշտ բարեկամ-ընկերներ մնացին ինձ, սկսած 1903 թվից:

Փարիզից վերադառնալուց հետո նյութ կուզարկեմ. մեկ տեղավորվեմ, հանգստանամ, հետո:

Կինս հարցնում է քեզ, ի՞նչ խորհուրդ կտաս ինձ՝ Հայաստան գնա՞մ թե ոչ: Պատասխանիր անպատճառ:

Ջերմ բարևներ տիկ. Նադիային, Համաստեղին և Մանվելյաններին:

Համբույրներով՝ քո Ավետիք

79. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ

1925, 19 նոյեմբերի, Վենետիկ

Սիրելի Հակոբ-Գրիգոր.

Շնորհակալությամբ ստացա ուղարկածդ գրքերը. կարդացի: Զարմանում եմ, որ գերման<ական> մամուլը այդքան գովել էր այս միջակությունները: Մի նոր ապացույց, որ քննադատությունը սուբժեկտիվ բան է, եթե ո՛չ – անպետք:

Ուշ պատասխանեցի, որովհետև ուզում էի Ձեզ իմ գրքերից մի քանիսը ուղարկել, բայց չկարողացա ճարել:

«Երգեր ու վերքերը»[1] *և «Աղա Նազար»*[2] *վաղուց սպառված են: «Հայրենի աղբյուրից»*[3] *Փարիզում կան մի պարոնի մոտ, գրեցի, ուզեցի, պատասխան չեկավ:*

Իսկ «Աբու Լալան»[4] *նույնպես չունեի: Ուղարկում եմ, ինչ որ ունեմ: Ներող եղեք, ուրիշ անգամ պարտահատույց կլինեմ:*

Աբու Լալայի գերմաներեն թարգմանությունը[5] *առանձին գրքով չկա լույս տեսած, այլ հանդեսի մեջ.*

«Der Neue Orient», Berlin, W.[6] 50

1919 թվի վերջերին կամ 1920 սկիզբներին: Իմ ունեցածը կտրված է հանդեսի միջից, և տարեթիվը չկա: Թարգմանությունը կատարված է Heinrich Noeren *և* L. Nasariantz:

Ես մտադիր եմ մոտ օրերս Փարիզ մեկնել. թերևս փորձեմ այնտեղ բնակիլ, եթե հնարավոր լինի: Շատ զզվել եմ Վենետիկից, բացարձակ մենակ եմ:

Հայր Արսենը լավ է, կաշխատի:
Ջերմ բարևներ հայրիկիդ, մայրիկիդ և բոլորիդ:

Միշտ Ձեր բարեկամ Ավետիք Իսահակյան

19 նոյեմբ. 1925, Վենետիկ

80. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

1925, 23 նոյեմբերի, Վենետիկ

Սիրելի Պողոս,

Ստացել եմ թե՛ հեռագիրդ, թե՛ նամակդ, բայց լրագրները — ոչ:

Սպասում էի Դավիթի[1] դրքի մասին վերջնական կարգադրության, սակայն ուրբաթն ավելի շուտ եկավ, քան չաբաթը:

Կարծում եմ, որ գիրքը չի տպվելու այստեղ, եթե ուզենաս էլ:

Տպարանի վարդապետը տեղափոխվում է Միլան, ուրիշն է նստելու նրա աթոռին, բայց սա երկրորդական է, անշուշտ: Ցավալին այն է, որ հայերեն չարող երկու դրաշարներից մեկը խենթացավ. հիվանդանոցումն է: Շարող չունեն: Պոլսից սպասում են դրաշարի, որ այս վեց ամիս է՝ պիտի գա, և դեռ պիտի գա: Իրանք էլ չեն իմանում, թե ե՞րբ պիտի գա:

Այդ դժվարությունից դուրս, հիմա առաջարկում են ինձ (երբ սկսեն գիրքը շարել), որ պայմանը կապենք իտալ<ական> լիրեթի վրա, որովհետև ֆր<անսիական> ֆրանկը ընկնում է, և, ըստ իրենց ակնարկին, 100-ին 50 տոկոս հավելումն պիտի անեն: Առհասարակ սրանց հետ դործ ունենալը — դժվարին բան է:

Նոր վարդապետը, որ ստանձնե գործերը, կխոսիմ հետը, եթե ուզենաս, որ տպվի, և եթե գրաշարն էլ գա...

Խերյանի կտակը[2] ստացա. այժմեութի՞ւն ունի գործը հիմա քեզ համար, ուզո՞ւմ ես, որ ուղարկեմ, պատճեն առնելու համար: Գրի՛ր:

Քեֆս չա՜տ գեչ է, և տրամադրութիւնս ու գլուխս՝ քաոս:

Բարևներ տիկ. Սեբարին, համբույրներ քեզ և աղջկանդ:

Քո՝ Ավետիք

81. <ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ>

<1925, 1-12 դեկտեմբերի, Վենետիկ>

Բյուրեղացած սրտից բղխած թանկագին նամակդ ամենաքաղցր ձայներ զարթնեցրեց հոգուս մեջ. – մեր անհետացած, կորած ժողովրդի ձայնն էր, կորած ընկերների ձայնն էր, մանկութեան ժամանակի գեղի ժամի զանգի ձայնն էր և բոլոր անուշ ձայները մեր լեռների աղբյուրների բյուրեղյա[1]: Արցունքով կարդացի ամեն տողը, և արցունքով գրում եմ այս տողերը:

Հայրենիք, ընկերներ, մոր գերեզման, ժողովուրդ, մայրենի լեզու, գյուղացու արտեր... ի՞նչ կա սրանցից բարձր. ոչինչ չկա: Դու գիտես այս բոլորը, բայց չես կարող գիտենալ թե ի՞նչ կզգա պանդուխտ, 15 տարի էմիգրանտը...

Քո նամակը՝ բարձր նմուշ զգացմունքի, ազնիվ մտքի ու ոճի, եղավ ինձ համար՝ Անուշ բանտի մեջ մոռացված Արշակին իր թագավոր լինելը հիշեցնող Դրաստամատը: Ես օտարել էի ինձ, ես մոռացել էի ինձ, ես ոչինչ էի դարձել՝ ջարդված, հուսահատ հայ ժողովրդի զարհուրելի բախտից, գազազած ու դառնացած, դու վերադարձրիր ինձ իմ թագը. դու ասում ես թե՝ հայ ժողովուրդ կա՝ իր

սուրբ լեզվով ու հողով, որ հիշում է ինձ. ընկերներ կան, ուզում են ինձ. տեղ կա ինձ համար ժողովրդի և ընկերների սրտի մեջ — ադամանդյա գահ:

Դո՛ւ եղար իմ բախտի դարբնոցը, ոչ թե ես: Հավիտյան պիտի սիրեմ քեզ, ավելի, չատ ավելի, որքան մեջս զգամ ուժերս. սիրում եմ քեզ իբրև ազնվության մի կայուն սյուն, կանգուն մնացած պղտոր հեղեղների առաջ, իսկ հիմա — իմ վերածնողին...

15 տարի է հեռացել եմ հայրենիքից և կորցրել եմ իրականության ճանաչողական զգացումը. բթացել է նաև ինտուիցիաս. կարդացել եմ [հազար ու մի] գրքեր՝ Ռուս<ական> հեղափոխությունը վարկաբեկող. դեչ էի տրամադրած. բավական է հիշել երկու գիրք՝ մեկը Ռուսական իրականության, մյուսը հայ — Մերեժկովսկու Антихрист[2] և Հանգուցյալ Բախչու[3] գիրքը — Բանտեր:

Չկարծես թե դաշնակցականների ազդեցության տակ եմ. երբեք. նրանք ինձ իրենցը չեն համարում վաղուց ի վեր: Թուրք սահմանադրությունից հետո ես օտարության մեջ եմ եղել. դեմ եմ եղել Թուրքիայի հետ գժտության, դեմ եմ եղել 1912-13 թվերին հայկական չար հարցի վերազարթեցման, դեմ եմ եղել այդ թվականներին ծայր տալ Ռուսական օրիենտացիային, այդ պատճառով գնացել եմ Գերմանիա և Հայագերման ընկերության մեջ եմ գործել, որի նպատակն էր Թուրքական ու Գերմանական օրիենտացիա ունենալ — սխալ թե ուղիղ.— այդ ըմբռնումից ծագեց իմ և մի քանի ընկերների <հասկացությունը> կամավորական չարժման: Ապա 1919-ից սկսած մեծամասնական օրիենտացիա եմ ունեցել փրկելու մեր ֆիզիկական դոյությունը... Սրանք փաստեր են, որոնց վկաները կան և Երևանում: Բայց բան չեմ կարողացել անել, որովհետև պայքարող, աչառու մարդ չեմ. Աստված զրկել է ինձ այդպիսի հատկություններից, որոնցով կարող է մարդ քաղաքական գործիչ լինել:

Դաշնակցությունը վրաս ազդեցություն չունի, բայց երկրից եկողներ կան, երևի գիտես, որոնց տեսա անցյալ տարի Թրիեսթ. 40ի չափ. վատ էին նկարագրում երկրի վիճակը [իշխանավորներին]... Չկարծես թե բոլորովին հավատացի, բայց իր հետքերը թողին...

Բանն այն է, որ ես մեծամասնական չեմ, անչուշտ հավակնություն չունեմ ոչ միայն քեզ հետ չափվելու քաղաքական-ընկերային [հարցերի] գիտության մեջ (դու սակավությունների մեջ ես), այլև գործող կոմունիստներ հետ. բայց այս գիտեմ, որ մեծամասնականն էլ, դաշնակցականների պես համաշխարհային մասշտաբով կնկան ռոմանտիզմի մեջ – համաշխարհային հեղափոխություն, <1 անընթ. բառ> սոցիալիզմ – արժանի՞ էր դրանց համար ամեն դիկտատուրա, ջարդ, կախաղան, արյուն...

Անցած են այդ ամենը հիմա, մեծ մասով, բարեբախտաբար. նրանք էլ խելքի եկան:

<...> Արդար չէ Մոսկվայի այժմյան քաղաքականությունը և անմարդկային է. չեմ ներում Բրեստ-Լիտովսկը...

Բայց դրանք էլ մի կողմ թողնենք:

Մեր Երևանի խնդիրները: Հանգուցյալ Մյասնիկյանին, Շահումյանին ընկեր էի, սիրում և հավատում էի նրանց. գիտեմ նրանց մեծ պատմական դերը – գիտեմ որ առանց խորհրդայնացման հիմա Երևանն էլ կարս ու Վան դարձած կլիներ, բայց ինչո՞ւ համար են զանազան անտեղի հալածանքները – եկեղեցու դեմ: Ես հավատացյալ չեմ, բայց թող եկեղեցին ինքն իրեն մարի...

Ինչու թույլ տալ սրիկա մարդկանց՝ նախկին եկեղեցականների, որ եկեղեցին օգտագործելուց հետո քար քցեն նրա վրա[4]:

Ինչո՞ւ այդպես խեղաթյուրեցին լեզվի ուղղագրությունը[5]. Մ. Աբեղյանի դեմ կան ոչ պակաս հեղինակավոր ձայներ...

Ինչո՞ւ հալածել դաշնակցականների հավետ տարագիրներին[6], ինչո՞ւ ստիպել որ մարդիկ կեղծեն, խաբեն, հավա-

տուրաց լինեն, որով ժողովուրդը կանքարոյականանա: Ես չեմ բաժանում դաշնակցականների ներկայի մասին խոսքերը, գործունեությունը, մտքերը – «միացյալ, անկախ, ազատ Հայաստանի» անկար, վնասակար ցնորքները – բայց ես չեմ կարող երբեք, բնավ, թքել Դաշնակցության վրա – այնտեղ են թաղած իմ հոգու մեջ միշտ կենդանի ընկերներս – Քրիստ<ափոր>, Սիմոն, Ռոստոմ, Ա. Մուրադ, Գևորգ Առաստամյան, Թուման, Մուրատ, Գ. <Ալտուն>, Դուման, Արամը...

Սակայն այս բոլորը նվիրված էին այն մեծ գործին, որ կատարում է հիմա Հայաստանի իշխանությանը – երկիրը վերաշինել, հայրենիքը չենացնել, չենքեր շինել, տնտեսական կյանքի մեքենայացումը, ջրանցքներ, գյուղատնտեսության տարածում, ազգայնացում, երկրի հայացում, կովկասյան <տարաբնակում>, հայ ժողովրդի դուրս գալը ծիսական ազգայնամոլությունից և սպանող մեկուսացումից, ազգայինի և միջազգայինի ներդաշնակումը: Այս անուրանալի դրական գործոնները, որոնք պիտի կերտեն Նոր Հայությունը. թող փոքր լինի մեր երկիրը, մենք մեր սահմանները կխորացնենք դեպի երկրի խորքը և դեպի երկնքի խորքը:

Անշուշտ ներկա սահմանները սահման չեն. տալ թուրքի բերան, բայց հավատում եմ, որ եղբայրների դաշնությունը պիտի չլքե հայ ժողովրդին, ինչպես եղավ 1918-ին:

Վերջերս Վենետիկ էր եկել Սիմոնիկ Փիրումյանը[7]: Նա ևս սրտապնդեց ինձ և ավելի վճռական եղա:

Հայրենիքում քաղցած մնալը, որ գրել էի առաջին նամակում, բոլորովին չէր արտահայտում այն, ինչ որ ուզում էի ասել. մարդիկ սովորաբար ժողովներից հետո են խելոք խոսում, այդպես եղավ և նամակիս նկատ-

---

* դաշնակցականների ղինակցությունը վրացի մարտական մենշևիկների և արյունարբու մուսավաթի հետ (ծանոթությունը՝ Ավետիք Իսահակյանի):

մամբ: Իմ արյունը ձերինից կարմիր չէ, և գրածներս բոլորը ճշմարիտ են, որ երբեք ապահով չեմ եղած և արյուն-աղքատությունը մեր ամենուն մաշկն է: Ես այն կուզեի ասել, որ պետության հովանավորությունը, ստիպենդիան և այլն, վախենամ կաշկանդե խիղճս ու միտքս. կուզենայի ավելի անկախ լինել: Բայց ընդունակ չեմ ես ուրիշ գործերի, գիտության աշխատանքի, պաշտոնի. [մի տեսակ] այսպես կամ այնպես, մի տեսակ պարազիտ եմ լինելու հաց չուտեցող ժողովրդի ջանին, որ արդեն շատ բեռ ունի իր վտիտ ուսերի վրա. բայց այդպես պետք է լինի. գլուխը միշտ ապրում է փորի հաշվով, ինչպես որ դու հավաստում ես, թե ես էլ հայ ժողովրդի գլուխների մեջն եմ:

Ջեմ կարող երևակայել թե ինչպես պիտի մոտենամ հայ երկրի սահմաններին, սարսափում եմ և միևնույն ժամանակ բերկրանքից սիրտս ցնծում է. ինչ թանկագին կորուստներ պիտի գիտենամ և ավելի պիտի սիրտս արյունի, բայց և պիտի տեսնեմ «Նոր Հայաստանի» [Հին ու նոր..] Արարատյան գծուխ ծխանին գործարանների

Նավասարդյան նոր առավոտով[6]*:*

Պիտի տեսնեմ հայոց լեզուն հառնած մոխիրներից, պիտի տեսնեմ հայ չենքեր լայնընկեց, երկիրը ազատ գար ու քարից, <1 անընթ. բաւ>, հայկական փոքր ածուն իր տերն ունեցող ոչ թե բեկն ու աղան, այլ մշակ գյուղացին...[9]

82. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1925, 12 դեկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Քեզ պես կամք ու եռանդ ունեցող մարդուն դժվար կլինի հասկանալ, որ անհաղթելի գեչ տրամադրությամբ

եմ բռնված ամիսներե ի վեր. ճանճրանում եմ, մելամաղձոտ եմ, ձեռքս բանի չի գնում: Վենետիկի ճահիճները ինձ խեղդեցին, եռանդիս մնացածն էլ չքացրին:

Պիտի հեռանամ Վենետիկից, բայց դրա հետ դժվար լուծելի խնդիրներ կան. երեխաս: Ուզում եմ մոտ ժամանակներս Փարիզ գնալ, փորձելու համար թե կարող եմ այնտեղ հաստատվել, որովհետև ուրիշ հարմար վայր չկա. ամբողջ հոգով ձգտում եմ Հայաստան: Նա միայն կարող է ինձ կենդանացնել, ժողովրդի հետ, նրա մեծ չնչով չնչել: 15 տարի եղավ որ պանդուխտ եմ. 15 դար... բավական է: Դ. Անանունին գրեցի, խորհուրդ հարցրի գնալուս մասին, գրում է «ե՛կ, ե՛կ, քեզ ինչ, թե ով է իշխում, դու քո գահն ունես ժողովրդի ու մեր սրտում»: Այդ մտքերն եմ որոճում օր ու գիշեր, 50 տարիս լրացրի, հո, չպիտի 60 տարեկան ծերունի դառնամ՝ գնամ, այն էլ եթե ապրեմ... Եթե գնամ, ընտանիքս պիտի թողնեմ Եվրոպա. մենակ գնամ, աչքովս տեսնեմ, ականջովս լսեմ, սրտովս չոշափեմ — զգամ մարդիկն ու իրերը: Եվ բացի այդ ընտանեկան խնդիրներ ունիմ, կալվածներ, հավաքեմ, ծախեմ կամ մի ձևի կապեմ, որ հասույթ ստանամ... Եղբայրներիս որբերը կան, նրանց հոգամ, տեղավորեմ...

Այս ամենը ջղայնացնում են ինձ, մտահոգում և բառացի ասած, բան չեմ կարող անել:

Թերթիդ համար մի մեծ բան էլ պատրաստում, չկարողացա տակից ելնել. ինչպես և «Ուստա Կարոյի» մշակումը երեսի վրա թողի: Իմպուլս չկա, ոգևորություն չկա, ո՞ւմ համար ես գրում, չուրջս մարդ չկա, հետը խոսեմ:

Վերջապես այս հուշը[1] չինեցի թերթիդ համար, մի երկու բան էլ կուղարկեմ, այլևս բան մի պահանջիր ինձնից:

Հովակիմի[2] «Հայրս»[3] դեռ չեմ կարդացել, թերթոնները հավաքեցի, որ կարդամ. խեղճ Հովակիմ, չատ ցավում եմ:

Դուք ի՞նչ ջրի վրա եք: Ջերմ բարևներ քեզ, կնոջդ, Երեխայիդ, Համոյին, ընտանիքին, Ս. Պալըգճյանին, Նիկոլին, Շանթին:

Համբույրներով Ի. Ավետիք

83. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆԻՆ

<1925, 25-30 դեկտեմբերի, Վենետիկ>[1]

Սիրելի Երվանդ.

Ստացել եմ այս նամակդ և նրանից առաջ գրածդ էլ: Ամենից առաջ՝ դիմումիդ մասին. տեսուչ վարդապետին տեսա և խոսեցի. նա ասաց, որ արդեն քեզ դրական պատասխան է գրել: Կընդունին երեխաներ և հայերեն կսովորին:

Սակայն հազար ներողություն, որ նամակիդ չեմ պատասխանել – պատճառ – ոչ մի օբժեկտիվ պատճառ, այլ ներքին, հոգեկան – տրամադրությունս անբուժելիորեն գեչ է. բան չեմ կարող անել. օտարությունը խեղդում է ինձ, ցամաքեցնում, լրջորեն մտածում եմ հայրենիք վերադառնամ, վերանորոգվելու համար, ամեն դյուրություն տրվում է ինձ դառնալու, բայց դեռ չեմ վճռել, վախենում եմ թե այնտեղից հիասթափվեմ, թեև զանազան ընկեր-բարեկամ գրում են, խորհուրդ տալիս, որ օր առաջ վազեմ-գնամ:

Եթե գնամ, մենակս եմ գնալու, կինս և տղաս մնալու են Եվրոպայում, քանի որ տղաս ուսում է առնելու, թող Եվրոպայում առնի:

Հայաստանում ապրելը, հարկավ, հաճելի է – հայրենի միջավայր, հարազատներ, հին ընկերներ, մանկության անուշ վայրեր (թեև կեսը կորած ու ավերած), ընտանի վարք ու բարք, երգեր, սովորություններ, այդքան. մյուս

կողմից տհաճելի չատ բան կա – աղքատություն, դիկտատուրա, չղթայակապ մամուլ, ձանձրալի մարքսիստական ֆորմուլներ, վրդովեցուցիչ ռուս-թրքական մթնոլորտ, բարեկամություն... և այսպես օրոցքի մեջ օրորվում – վեր-վար, գնամ-չգնամ: Մյուս կողմից զզվել եմ Եվրոպայից, թեև Եվրոպան չեմ վայելում, անշուշտ, եթե դրամ ունենամ, գնամ թափառելու, կկազդուրվեմ, նոր էներգիայով կլցվեմ. օրինակ, եթե գնայի Սպանիա, Հունաստան, կամ գայի ձեր հարևան երկիրները՝ Եգիպտոս, Սիրիա, Պաղեստին, թե չէ – մահու չափ տաղտկալի է նստել-մնալ Վենետիկ, և չունենալ ընկեր, անգամ խոսակից, բացի մեռած վարդապետներից: Ուրեմն՝ կզդաս հոգեվիճակս: Հիմա մտադիր եմ մոտ ժամանակներս գնամ Փարիզ, խորհրդակցեմ, գուցե վճռեմ այնտեղ՝ Փարիզ տեղափոխվել, ուր չրջան կա, մարդիկ կան: Վերջապես:

Իսկ դու, սիրելի երվանդ, չատ լավ կանես, եթե տակավին նստես Սուտանում, դրամ հավաքես, քանի երիտասարդ ես, ապա երբ քեզ անկախ ու ամուր զգաս, տեղափոխվես հայկական մի ջավայր, նույնիսկ Հայաստան, որ հույս ունենանք մինչ այդ իր դեմքը փոխի, մարդակերպ պատկեր և հոգի ստանա:

Հիմա, որ դուք և ձեր սիրելի տիկինը այլևս մենակ չեք, տան մեջ թռչնակ ունիք, որ ձեզ պիտի մխիթարե և բույներդ ավելի պիտի տաքցնե (թեև երանի ձեզ, որ տաք կլիմայում եք ապրում, մենք այս ձմեռ սառանք այստեղ):

Աչխարհում ապրող էակների համար երեք բան կա սարսափելի, մահի ընկերները – քաղց, ցուրտ և խավար. փա՛ռք Աստծու, այդ երեքը չունիք, կուշտ եք, կրակի չափ այրող երկիր ունիք և արևի անսահման լույս. ուրեմն, ուրեմն աճեցեք և բազմացարուք[2]. մանավանդ սա Աստծու հաճելի գործ է:

Մենք առ այժմ ողջ-առողջ ենք. կինս չատ սիրով բարևում է քեզ և տիկնոջդ. սրտանց ուրախ եղավ, որ զավակ ունիք, համբույրներ է ուղարկում անթիվ:

Ո՞ւր մնաց կնոջդ եղբայրը, բան չես գրում նրա մասին՝ պ. Լուտվիկի (Լութֆի) Լյութֆի Ալյանաք[3]:

Մեր հարսը[4], չկարողանալով Ամերիկա երթալ, վերադարձավ Թիֆլիս, իր հորը տունը:

Ժամանակ կունենաս, երբեմն-երբեմն ինձ հիշիր:

Ուրեմն կուզեննեդ աչխատիր հանել Ռուսիայից, այնպես որ գարնանը, ամռանը այստեղ լինին, որ պատրաստվեն դասերի համար:

Հաջողութիյուն գործիդ ու քաջ բազուկիդ: Երկար և առողջ ու բախտավոր կյանք սիրելի տիկինիդ, քեզ և Սեդայիս, և համբույրներս:

Շնորհավորում եմ Նոր տարինեդ:

Մնամ միչտ ձեր Ավետիք Իսահակյան

84. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

1926, 4 Հունվարի, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Շնորհավոր քո և տիկ. Սեբաստի նոր տարին, ցանկանում եմ Ձեզ բախտավորություն և չա՛տ փող:

Երկու օր առաջ տպարանի հետ վերջացրի պայմանը Դավիթի գրքի[1] տպագրության վերաբերմամբ. նույն պայմանն է, նույն թղթով ու ձևով, ինչ որ քեզ հայտնել են նրանք, միայն ֆրանսիական ֆրանկը վերածեցինք դոլլարի հաշվով: Դոլլարը իբրև կայուն դրամ:

Կսկսվի տպագրությունը իսկույն, երբ համաձայնես, երբ – նոր առաջարկ – կանխավճար ուղարկես 100 դոլլար: Գիտեմ, չկարողացա բացատրել այս պահանջի դրդապատճառը, բայց կանխավճար պահանջում են սկսելու համար:

Եթե ուղարկելու ես դրամը, ուղարկի՛ր նրանց, վանքի վրա, իսկ եթե չես համաձայնում, դրիր ինձ, որ ձեռագիրը ետ ստանամ:

Դու ի՞նչ բանի վրա ես, ի՞նչ եք անում, ինչպե՞ս է Ձեր առողջությունները և տրամադրությունները:

Իհարկե, խնդիրը կանխավճարի մեջ չէ, եթե առհասարակ չես ուզում գիրքը տպվի, որովհետև այդ մասին ինձ վարանոտ բաներ էին հայտնել:

Բեֆս չա՛տ գեչ է, չա՛տ տխուր եմ: Ծանր է կյանքը, և քանի գնում ավելի է ծանրանում կյանքը իմ ուսերիս վրա: Նեղանում է սիրտս չա՛տ, ջղային եմ և մռայլ... Դատարկության մեջ խարխափում եմ:

Էլ ի՞նչ գրեմ, ո՛ղջ լեր:

Համբուրյներով քո՝ Ավետիք Իսահակյան

Ջմոռանաս հասցես ճիշտ գրել.
2266 Dorsoduro

85. ԴԱՎԻԹ <ԱՆԱՆՈՒՆԻՆ>

<1926, 15 հունվարի, Վենետիկ>[1]

Սիրելի Դավիթ.

Մոտ մի ամիս առաջ քեզ նամակ գրեցի գրքիդ տպագրության համար, բայց մինչև օրս չեն ձեռն զարկած, և Պողոսից էլ կարգադրություն չկա սկսելու. ինչ-որ հրահանգի է սպասում: Լավ կլիներ, որ սկսած լիներ, քանի ես այստեղ եմ, որովհետև Հայաստան գալուց առաջ պիտի Փարիզ գնամ, բարեկամներ ունիմ տեսնելու և հարցեր պարզելու:

Առհասարակ իմ Հայաստան [գնալ] գալս ինձ համար դժվար խնդիրների հետ է կապված: Շատ եմ ուզում գալ, կարոտել եմ անսահման, բայց մյուս կողմից էլ չեմ կարող վճռել, վախենամ...

Ես չգիտեմ ում դիմեմ խորհրդի. ով կասե անկեղծ կերպով և ամեն մարդ էլ պիտի ասե, թե՝ մենք ապրում ենք, դու էլ եկ, քո արյունը մերինից կարմիր չէ. իրավունք ունին:

Բայց դուք արդեն հարմարվել եք և ոտքներդ ամուր դրել, կլիման տանում եք:

Չգիտեմ ինձ հետ ինչ կարող է լինել:

Իհարկե ես մեծամասնական[2] չեմ. այդ արդեն որոշ է: Դաշնակցական եմ եղել, հիմա էլ – և՛ եմ, և՛ չեմ.– հարազատ է ինձ Դաշնակցությունը իբրև ազգային ապրում,

մտայնություն, բայց չեմ բաժանում նրա, թե այսօրվա մասին է խոսքը, հետապնդած դաղափարները՝ «Անկախ, Միացյալ, Ազատ Հայաստան»*, որոնք ցնորքներ են, և վնասակար ցնորքներ: Հրաժարվում եմ դրանից:

Ես բոլշևիկներին չեմ հարում – ռոմանտիզմ է մարքսիզմը և նրա համաշխարհային հեղափոխությունը, կոմունիզմը: Զայրացնում է ինձ նրանց բարեկամությունը Մ<ուստաֆա> Քեմալի հետ, Մոսկվայի քեմալականների հանդեպ համակրանք չունեմ: Հատկապես չեմ ներում նրանց Բրեստ-Լիտովսկի և Կարսի դաշնագիրը և հայկական ջարդերի ոճիրը հայերի վրա նետելը, երբ [առաջին] մեղադրական առաջին սեղանի վրա նստելու էին Թուրքն ու ցարը, և Սովետները: Ինձ համար ցարիզմ, բոլշևիզմ, մենշևիզմ... միևնույն քաքն է երեք կտոր եղած...

Բայց թողնենք այդ:

Ասում են, որ Հայաստանը ինքնուրույն երկիր է, և մենք մեր տան տերն ենք, և ճանաչում ենք մեր թշնամին ու բարեկամը (եթե ունենք բարեկամ):

Շատ լավ, եկա Հայաստան: Սիրում եմ Հայաստանը, հայ ժողովուրդը, նրանց մեջ ապրելը երջանկություն է: Սիրում եմ հայ խորհրդային գործիչներին, շատերի հետ ընկեր եմ, հանգուցյալ Մյասնիկյանին շատ էի սիրում, և ուրիշներին ևս: Հայկական սովետների շատ սկզբունքներ սրտովս են, գյուղացու չահերի պահում, ազգբազում, կռիվ հոգևորական վատնումի դեմ, կռիվ ազգամոլության, մեկուսացման դեմ: Համակիր եմ ազգերի համերաշխության, կովկասյան համադաշնության, Թուրքերի հետ «բարի» դրացիության. բայց այս բոլորով հանդերձ, հնարավո՞ր է այդտեղ չունչ քաշել, երբ ազատ մամուլ չկա,

---

* կամ նրանց համաձայնությունը վրացի և թաթար՝ մենշևիկ և մուսաֆատ դաղանների հետ (ծանոթությունը՝ Ավ. Իսահակյանի):

երբ դրութ֊յան տեր են լպստած կոմմունիստները և ամբարտավան պրոլետ֊գրչակները:

Այդտեղի միջավայրում կարո՞ղ եմ ապրել, հաց ունենալ և աշխատել. վախենամ քաղցած մնամ, երբ ուզենամ անկախ մտածել, գլուխ չծռել, պանեգերիկ[3] չլինել:

Պ. Մակինցյանը և Ս. Փիրումյանը ոգևորում են ինձ, վառ գույնով նկարում երկիրն ու պայմանները: Ասում են կենսաթոշակ ունես, գործ կունենաս, թոշակ, գրքերի վարձատրութ֊յուն, թարգմանութ֊յուն, օրինակ, Ս<իմոն> Հակոբյանը ամսական 400 րուբլի է վարձատրվում, Յուլակ Խանզադյանը 500: Ես դրանց կեսին էլ համաձայն եմ, բայց կասկածում եմ, վախենամ, այստեղ քանդեմ տուն ու տեղս, և գամ ու սիրած֊կարոտած հայրենիքի մեջ ոչ թե քաղցած լինել, այլ կուշտ ստրուկ, վաճառված:

Շիրվանզադեն ջորի է, նա՝ ուրիշ. նա երբեք չի եղել սկզբունքի մարդ: Լեո, Հանգ<ուցյալ> Հ<ովհաննես> Թումանյան – կարողացել են միշտ ճայնակցել իշխող մուզիկին: Ես նրանց պես խոշոր մարդ չեմ, նրանք թերևս հենի են, բայց ես համեստ մարդ եմ, և վերջապես նրանց [չափ խելոք չեմ] դրսի ու ներսի խելքը չունեմ: Անկեղծորեն խոստանում եմ (ես լավ եմ ճանաչում ինձ), որ եթե խորամանկութ֊յուն էլ ուզենամ գործ դնելու, մի֊երկու օր կտևի: Հետին մտքերս ամենից առաջ կասեմ: Երեխամտութ֊յուն է այս, բայց այսպես է:

Թերևս այս ամենը երևակայութ֊յուն է, Ֆիկցիոն: Ես 15 տարի է հեռացել եմ հայ կյանքից և այլևս չեմ ճանաչում մեր իրականութ֊յունը: Բթացել է ինտուիցիաս... բայց հայրենիքից դուրս էլ անկարելի է ապրել բացառապես – միշտ էմիգրանտ, միշտ անհող, անտուն, անհայրենիք... սոսկալի է:

Ես չա՛տ կխնդրեի քեզ, մի՛այն մի երկու բառ գրես ինձ (ես չատ եմ հավատում քեզ) սիրելի Դավիթ՛ – արի կամ մնա:

Եթե ձանձրացրի քեզ, եթե տղայամիտ ես գտնում նամակս, խնդրում եմ ներիր: Մարդիկ միշտ արժանի են ներման և օգնության:

Քո Ա. Իսահակյան

86. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1926, 15 հունվարի, Վենետիկ

Սիրելի Կարեն.

Անսահման ուրախություն բերեց ինձ նամակդ: Շատ զգացված եմ որ հիշեցիր ինձ: Թերթերի միջոցով [հետևեցի] հետևում էի Ձեր առաքելության ընթացքին[1]*:*

Գրում ես, որ Ձեր առաքելությունը հույսեր ներշնչում է հաջողության մասին. բնական է, որ մեծ հաճույքով կուզենայի հավատալ այդ խոստումներին: Մեծ գործ կատարած կլինեք, եթե գաղութները կապեք հայրենիքի հետ, ցիրուցան հայերը ներշն<է>վեն մեր թշվառ ժողովրդի սիրով և իդեալով:

Ինչքա՜ն բարոյական և նյութական օգուտներ կարող է ստանալ հիմա և ապագայում մեր դժբախտ, աշխարհից ծեծված ու արհամարհված հայությունը:

Պետք չէ հուսահատվել, չարունակեցեք սիրով ու կարոտով Ձեր քայլը: Բոլոր հոգով ցանկանում եմ Ձեր գործին հաջողություն, բարի ճանապարհ, բարի վերադարձ:

Հարցնում ես իմ Հայաստան դառնալու մասին: Վճռել եմ վերադառնալ. չգիտեմ լավ քայլ է արածս, թե վատ,— բայց պիտի դառնամ, թեև առջևս կան շատ դժվարություններ պատնեշված:

Կարոտել եմ շա՜տ հայ ժողովրդին, ընկերներիս և մեր ցորենի արտերին: Բայց չգիտեմ, պիտի կարողանամ այնտեղ ապրել — ես կոմունիստ չեմ — բայց համակրում եմ նրանց՝ հայ մեծամասնականների վարքագիծը և հավա-

տում եմ մեր երկրի ապագային, մեր ժողովրդի բնածին իմաստությանը, նրա առողջ բնազդին:

Կինս և երեխաս մնալու են Եվրոպայում, որովհետև երեխաս սովորում է և միտք չունի նրան դպրոցից դպրոց տեղափոխել. չա՛տ կվնասվի...

Սակայն պիտի կարողանա՞մ թե ես Երևանում ապրել և թե նրանց միջոցներ հայթայթել... այդ հարցը պիտի լուծվի Երևանում: Դա է ինձ մտահոգությունն պատճառողը: Կարծում եմ, որ Երևանում կհասկանան ինձ և կստեղծեն պայմաններ, եթե չեղավ,– ուրեմն քայլս կլինի կործանարար ընտանիքիս համար:

Եվ վերջապես, Երևանում այնպես պիտի լինի իմ կեցվածքը, որ պատվաբեր լինի ինձ համար և վրաս մուր չքսվի: Ես ինձ վաճառել չեմ կարող...

Ջմռռանամ ասել, որ անցյալ տարի, երբ դու ինձ թերթ և նամակ ուղարկեցիր Մոսկվայից, ես քեզ իսկույն պատասխանեցի, անշուշտ ստացած կլինես իր ժամանակին:

Ո՞ւր ես թողել կինդ և երեխաներդ. Մոսկվա՞ թե՞ Երևան: Ո՞ւր ես ապրում մշտապես:

Բարևներ սրտագինս՝ Գր. Վարդանյանին[2] և բժ. Կամսարականին[3], որին եթե չեմ սխալվում, տեսել եմ 1907 թվին Մոսկվայում, հանգուցյալ Կ. Կուսիկյանի[4] մոտ:

Ջերմ բարևներով և համբույրներով

միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

87. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

<1926>[1], 26 Հունվարի, Վենետիկ

Սիրելի Վահան ջան.

Ստացել եմ իր ժամանակին քո նամակը: Ամենից առաջ կարոտի բարևներ քեզ, երեխայիդ, տիկինիդ, Համոյին, իրեններին, Ս. Պալըգճյանին և հարցնողաց:

Ուղարկում եմ այս պատմվածքը[2], որ աղոտ կերպով ցոլացնե մեր քաղցր Կովկասի ռոմանտիկական մթնոլորտը. ա՛խսոս, որ հայերիս մեջ չկան Բայրամ-Ալիի պես մարդիկ. դրանք հին տեսիլներ են, անչուշտ, հիմա թուրքերի մեջ էլ չկան, բայց գոնե եղել են:

Դեպը, ըստ էութեան, իրական է, մյուս բոլորը՝ Քյարիմի պատմութիւնը, աչըղի երգը — ֆիկցիոն է: Ցավում եմ, որ չտապ գրեցի, սա ավելի մշակելու պետք կար, մանավանդ երգը... Ղայինն եմ, թուխս չեմ կարող նստել. բացի այդ, որ բոլոր ուժերս կեդրոնացած են «Ուստա Կարոյի» վրա, որ նորից եմ գրում և պիտի անպատճառ իրական միջավայրով ներշնչվիմ — Հայաստանում. տեսնեմ ցորենի արտերը, մեր ոչխարները, աչըղները, դեղացինները, մեր մեծասքանչ լեզուն լսեմ, փոչոտ ուղիներով ոտքով քայլելով գյուղե գյուղ... ինձ թվում է, հավատում եմ, թե Հայաստան գնալով, կուժեղանամ, կլցվեմ, կկրկնապատկվեմ...

Գրել էի Դավիթ Անանունին, խորհուրդ էի հարցրել վերադարձիս մասին. գրում է — ե՛կ, ե՛կ, ե՛կ: Քեզ պես մարդոց պետք ունենք, մի՛ վախեցիր, քանակը որակ է դառնում, երբ չատանանք, սոցիալիզմն ու Սիոնը իրար կզոդենք:

Հիմա լուրջ ուզում եմ գնալ: Քո երկյուղներդ իմ մասին իրական չեն. ես գնում եմ հավատարիմ իմ Եսիս և մեծամասնականները ինձ հարգում են, հենց դրա համար: Ես արդեն նրանց հայտնել եմ, թե գալիս եմ հայ ժողովրդի մոտ և ոչ թե ձեզ մոտ. ես ինձ հատուկ տեսակով սիրում եմ հայ ժողովուրդը և ոչ մի «համաշխարհային մասշտաբ» չեմ ճանաչում. ես պիտի երգեմ հայ բուխերիկը. իմ առջևս մի ցցեք Նյու Յորքի ծխնելույզները: Հայաստանը միայն ձերը չէ, և ում սրտի մեջ որ կա Հայաստանը, նա էլ դլուխ դնելու տեղ պիտի ունենա այնտեղ: Եվ նրանք ասում են — «Եկ, մենք սիրում ենք քեզ, թե

հներն են սիրում քեզ և թե կոմսոմոլը: Մենք ուզում ենք, որ քո անկեղծ սիրտը լինի այստեղ, քո համով խոսքն ու զրույցը, դու երիտասարդ գրողների նահապետը լինես, և մեր սեղանների թամադան: Մենք գիտենք, որ 1903 թվին երբ Դաշնակցությունից հեռացան անջատողականները, դու հալածում էիր Մարքսին: Դու 1907 Վիեննայի 4րդ ժողովին, պայքարել ես սոցափլիզմին դեմ. մենք գիտենք, որ դուն նույնիսկ սոցիալիստ չես, բայց գիտենք, որ դու բանաստեղծ ես, խորամանկ չես, կեղծավոր չես, ընկերներից սիրված ես, և ամեն ոք երևանում ամեն մտավորական՝ Եր. Շահազիզ, Լեո, Ա. Տերտերյան, Եր. Լալայան, Մանանդյան, Աբեղյան, Ս. Զորյան, Դ. Դեմիրճյան, Մ. Մանվելյան, Գ. Լևոնյան և կումմունիստներս՝ Ա. Հովհաննիսյան, Կարինյան, Մռավյան և այլն, և այլն, ուզում ենք որ գաս, փափագում ենք քեզ ունենալ մեր մեջ՝ մեր սեղաններին, մեր թեյարաններում, մեր պտույտներում, և եթե մի որևէ բանով քեզ հաճելի չի լինի հայրենի միջավայրը, նորից դարձի քո վենետիկդ»:

Այսպես են գրում նրանք:

Ինչպես չգնամ. 15 տարի է՝ հեռացել եմ, կարոտը խեղդում է ինձ, ոչ մի երկիր չի քաշում ինձ, ո՛չ Փարիզը, ո՛չ Բերլինը, ո՛չ Գահիրեն, հասկանո՞ւմ ես այս: Ո՛չ մի երաժշտություն, ո՛չ բալետ, միայն մեր թառը, չվին, զուռնան, մեր աղջիկների պարերը... մեր խորովածը, քյուֆթեն, մեր թարխունը, լավաշ հացը... Դու այդ լավ ես հասկանում, և գիտեմ որ պիտի նախանձես: Այս էլ իմացիր, որ իմ բոլոր լավ ընկերները այնտեղ են. նույնիսկ դաշնակցական ընկերները (չվիրավորվիս, քո մասին չէ խոսքը), Արտասահմանի դաշնակցական ընկերներից չատերը չեն գնահատել ինձ, նրանք բոլորը Ահարոնյանի համհարզներն են, իսկ իմ դաշնակցական ընկերները գավառի տղաներն էին և ես գավառի, դյուղերի գործիչ էի: Թողնենք այս, հին դարման է, թող մնա փեթի:

Միայն մինչև գնալս դեռ կան խոչընդոտներ, կինս չի գալու. նրան պիտի ապահովել այստեղ. և ուրիշ նյութական հարցեր, որ ես պիտի լուծեմ, այդ խնդրում մեծամասնականները ինձ հետ գործ չունին: Նրանք պիտի միայն ինձ Երևանում ապրեցնեն. կենսաթոշակ, տուն և այլն: Հույս ունեմ իմ կալվածքներս ծախեմ, թե տղայիս ուսման համար և թե պարտքերս վճարեմ:

Առայժմ այսքան, դեռ ամիսներ այստեղ եմ, մինչև որ քակեմ այդ հանգույցները:

Համբուրրով քո Ավետիք

88. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1926, 31 Հունվարի, Վենետիկ

Սիրելի հայրենակից Հովհաննես Ավագյան.

Մեծ գոհունակությամբ ստացել եմ Ձեր «Գրական դեմքերը»[1] և հետո Ձեր նամակը:

Սրտագին չնորհակալություններս Ձեր իմ հանդեպ ունեցած ուշադրության համար:

Սակայն ուշացրի պատասխանը, որովհետև հարկ էր ամբողջ գիրքը կարդալ՝ տպավորությունս Ձեզ հայտնելու համար: Ամենից առաջ չնորհավորում եմ Ձեզ դրական-քննական Ձեր կարողության համար: Անուրանալի հատկություններ ունեք թափանցելու հեղինակի ապրումներին, հասկանալու նրանց ներաշխարհը, գնահատելու լավը, այն՝ ինչ որ կարողացել է մի հեղինակ իր հոգեկան բավիղից ու թնջուկից առարկայացնել և հայտ բերել թերինները, բայց միշտ սրտացավ բարեկամի պես և ո՛չ թե չարախնդությամբ:

Հիանալի է Ձեր ոճը. պարզ է նա, ըմբռնելի, բայց և ճոխ, և նուրբ, և մշակված: «Կոչնակի» հոբել<յանական>

թվի[2] մեջ տեսնելով Ձեր նկարը, ավելի զարմացա, որ տակավին ա՛յդքան երիտասարդ՝ ձեռք եք բերել այդպիսի մի սուր և հաջող գործիք, Ձեր լեզուն:

Կփափագեի՝ չլքվեիք երբեք և չարունակեիք Ձեր գործը: Ապերախտ է մեր իրականութեան մեջ գրական ուղին: Մենք ամենքս էլ այդ ուղիի վրա չա՛տ ենք տառապել և մնացել ենք միշտ նյութով աղքատ, բայց հարուստ մեր այն գիտակցութեամբ, որ Աստվածութենից մեզ չնորհած մեծ կամ փոքր քանքարը չենք թաքցրել:

Ի՞նչ օգուտ ուրիշին, եթե, օրինակ, ես հիմա մի հարուստ, դրամատեր մարդ լինեի և գրած չլինեի նույնիսկ մի ոտանավոր... մի ոտանավոր. այո՛, եթե, իրոք, իմ հարյուրավոր գրածներից միայն մեկը պիտի ապրի մեր լեզվի մեջ,— բավ է. կնշանակե արդարացած է իմ գոյութիւնը և իմ տագնապները լիուլի վճարված:

Միլիոնավոր մարդիկ են ծնվում ու մեռնում առանց մի հետք թողնելու, ստվերի պես, որ անցնում է ժամանակի անապատի վրայով, բայց մի «Անտունի», բայց «Ջանգյուլումի» մի քառյակ մի անմահ հաղթանակ է ժամանակի վրա:

Քննադատութիւնը չա՛տ մեծ դեր ունի. նա տատմայրն է, դայակը գրականութեան: Հայ գրողները ավելի արժեքավոր երկեր կիրականացնեին, եթե ունենային այնպիսի քննադատ-ուղեցույցներ, ինչպիսին եվրոպական ազգերը ունեն: Մեր մեջ քննադատութիւնը նոր է քայլ առնում:

Թողնելով Ձեր պատվական գրքի մեջ մյուս հեղինակներին նվիրած Ձեր գրածի մասին խոսելը, ես թույլ եմ տալիս ինձ՝ իմ մասիս [խոսածին] գրածին մի-երկու խոսք ասել:

Համաձայն եմ Ձեզ հետ, որ «աչուղը» հորջորջումը իմ մասիս՝ հեգնանք չեմ ընդունել ես, այլ արժանիք: Ք<ուչակ> Նահապետն էլ էր աչուղ, Սայաթ-Նովան էլ. երանի՛

չէր նրանց փառքին ու մեծությանը ես էլ հաղորդ լինեի...

Սիրելի բարեկամ, ասացեք, խնդրեմ, ինչո՞ւ պիտի բանաստեղծ կոչվելու համար հետևել Վերլենին[3] կամ Մալարմեին[4], Վերհարնին[5] կամ Ալ. Սըմենին[6], փոխ առնել նրանց ձևերն ու եղանակները, և պարծենալ, իսկ ոտնահարել մեկին, երբ նա հետևում է հայ հանճարի դարևոր ստեղծագործություններին այն հավատով, թե չարունակում է ազգային-ինքնատիպ թելը, մեր ինքնուրույն աշխարհազգացումը և աշխարհապատկերացումը: Այլ բան է, թե ես չեմ հաջողել, բայց մտածումը ճշմարիտ է: Յուրաքանչյուր ազգ պիտի ունենա իր ուրույն, ինքնահատուկ ոճը. միայն ոճ ունեցող ազգերն են ապրում, և չեն ջնջվում ո՛չ ջարդերով, ո՛չ հրով ու սրով. ոճը ազգի նկարագիրն է: Արարատի սովերի տակ ապրող հայ ժողովուրդը իր երգով ու իր ճարտարապետությամբ պերճախոս կերպով ցույց է տալիս աշխարհին, որ ինքը դեմք ունի, իր ձևը ունի, իր սեփական-անհատական ըմբռնումն ու առարկայացումը աշխարհի, նրա իրերի և նրա խորհուրդների:

Ի՞նչ կա ավելի բարձր, քան մի ազգի մշակույթը, նրա հոգու դրսևորումը:

Ես աչքս բացել եմ այնպիսի մի աշխարհում, որ զուտ հայացի է, Շիրակը, ուր ամեն անկյունը հայկական կնիք ունի: Անի՛ն... և չուրջը հոծ, կենդանի հայություն, երգ, լեզու, պար, իմաստություն. մի երկիր, ուր ժամադրավայրն է եղած հայկական բոլոր հատվածների. խոյեցու կողքին երզնկացին, մշեցու կողքին կարնեցին, վանեցին, նույնիսկ արաբկիրցին: Ինչո՞ւ պիտի խուսափեի ես բնաշխարհիկ ներշնչումներից... Ես վաղ հասակից (18 տարեկան) եվրոպա եմ եկել ուսանելու, և մի օր չեղավ, որ ոգևորվեի Շարլ Բոդլերի[7] պոեզիայով, որ իրոք ինձ համար «չարության ծաղիկներ» էին: Ինձ հա-

մակել են այն բանաստեղծները, որ ազգային, ֆոլկլորի տարրեր են ունեցել – Հ. Հայնե, Գյոթե, Ռոբերտ Բուրնս:

Երբե՛ք էդգար Պո[8], երբեք Մալարմե – ատում եմ նրանց:

Գրում եք, որ աղքատ է իմ բառամթերքս:

Ես գիտակցաբար եմ վարվել այս խնդրում. իմ կարծիքով քնարականի (լիրիկայի) լեզուն պիտի լինի չա՛տ պարզ, անսեթևեթ, աղքատ, նախնական (լիրիկան արդեն գրականության սկիզբն է), միայն սրտի անպաճույճ լեզու: Իմ նախատիպարը եղել է ժողովրդի երգը մեր և ուրիշ ազգերի. և իմ տեսությամբ – ամենակատարյալ լիրիկան ժողովրդի երգն է: Նրանից հետո եկածը – արհեստ է՝ արվեստ, տեխնիք, ձեռնածություն: Ամենահաջող դեպքում – ռիտորիկա, ճարտասանություն:

Խոստովանում եմ, որ լեզվիս մեջ, անտեղի կերպով, չա՛տ թրքական բառեր կան, որ դյուրավ կարելի էր փոխանակել հայ-ռամկական բառերով, բայց պատանի տարիքումս եմ գրած նրանց մեծ մասը: Այլ բան էր, եթե ուշ գրած լինեի, կբյուրեղացնեի. թերևս, եթե մի օր նորից բոլորը հրատարակեմ, մաքրեմ այդ բարբարոսությունը:

Զգաստ և պարկեշտ մարդիկ ամենալավ քննադատներն են իրենց արժեքի: Ես մեծամիտ մարդ չեմ, և իմ ներքին անկեղծության մեջ ինձ պզտիկ տեղ եմ տալիս. գիտեմ, որ չա՛տ և չա՛տ թերիներ ունեմ, գիտեմ, որ մեր գրականության մեջ ինձնից չա՛տ բարձրերը կան, որ կատարելությունից անչափելի հեռու եմ, բայց առանց համակնության համամիտ եմ Ձեր այն գնահատանքին, որով պատվել եք ինձ և մխիթարել – «Հայ բանաստեղծության ամբողջ երկու հատվածներուն մեջ չիկա ուրիշ մը»... էջ 144 և

«Իսահակյանի երգերն ու վերքերը կըլլան նաև մեր ալ երգերն ու վերքերը...» էջ 147:

Այսքանը բավ է, որ ինձ հալալ համարեմ հայ նվիրական ժողովրդի տված արդար հացը:

Գալով Աբու Լալա Մահարիին, սիրելի Հ. Ավադյան, իմ հոգու զավակն է նա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը:

Արաբ նշանավոր բանաստեղծի գրությունների մի փոքր գիրք, գերմաներեն, ձեռս անցավ. կարդացի և գտա իմ հոգիս նրա հոգուն նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածին, – քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն,– ընտրեցի նրան իմ հույզերս մարմնացնող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ո՛չ մի բառ, ո՛չ մի պատկեր, որ չլինի վերարտադրություն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. աղքատ է եղել նա, կույր, Բաղդադից դուրս չի եկել. միայն էությունն եմ [պահել] առել, իմ էությունը միևնույն ժամանակ:

Հաջողած է թե ո՛չ, չգիտեմ. ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար, չա՛տ տառապած մարդ եմ, երկար ժամանակ հիվանդ եմ եղել, և հիմա ջղերով քայքայված, բանտեր նստած, աքսորված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ չա՛տ թանգագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ Մահարին դրանց արդյունքն է:

Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը. (Սիամանթոյից հետո դժվար է երգել). սակայն Աբու Լալայիս ռուս[9] և գերման[10] թարգմանությունների մասին գրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, պարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել մի հոգի, հայ մարդու հոգին...

Այսքա՛ն, սիրելի բարեկամ:

Հիմա մտադիր եմ գարնանը Հայաստան գնալ. թերևս ներշնչվեմ նոր, պայծառ իրականությամբ, և եթե վիճակված է ինձ ապրել այս աշխարհում, ի կատար կածեմ մի-երկու բան, որ տարիներից ի վեր ամբարվել է մտքիս մեջ, որոնք գրել եմ, սակայն դեռ չեմ մշակել:

Նորից չնորհակալություն հայտնելով Ձեր սրտագին վերաբերմունքի համար իմ հանդեպ,

մնամ միշտ Ձեր անձնվեր՝ Ավետիք Իսահակյան

89. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1926, 9 փետրվարի, Փարիզ>[1]

Սիրելի Սոֆի.

Ներողություն, որ մինչև օրս չգրեցի. օրերը այնպես են անցնում Փարիզում, որ չես իմանում՝ ե՛րբ լուսացավ, ե՛րբ մթնեց:

Հաջող տեղ հասա: Հյուրանոցում մի փոքր սենյակում, տաք ջուր. վճարում եմ 15 ֆրանկ, ծառայությամբ 16,50.

Ճաշեր – միշտ հյուր եմ:

Գաբոյին[2] տեսա. լավ է, բայց չսիրեցի: Ոտքից գլուխ սուտ: Ամիսը 17.000 ֆրանկ է շահում...

Ադոնցը[3] սառն ընդունեց սկզբում (ո՛չ համբույր, ո՛չ ուրախություն). չուզեցավ միջնորդել Ղուկասյանի[4] մոտ: Մեկնելիս՝ հրավիրեց նորից գնամ, ասացի, թե՝ ես բարե-կամների մոտ միայն կարող եմ երկրորդ անգամ գալ: Այդտեղ լեզուս բացվեց և ասացի.— Սա ի՞նչ ընդունե-լություն է. եթե դուք լինեիք ուրեմն Ղուկասյանի տեղ՝ դռնից պիտի դուրս նետեիք...

Լեզուն բռնվեց. դես-դեն, թե տրամադրությունս դեչ էր, կինս[5] հիվանդ էր (հարբուխ. երեսը դեռ չեմ տեսել):

Բարեկամ է շատ Ահարոնյանին և... Կ. Զարյանին: Իսկ այս երկուսը իրար հետ են միշտ: Ես Ադոնցին ասացի, որ չա՜տ լավ երրորդություն եք կազմում. մերժեցի նրանց թերթին[6] գրել:

Գնացի Ղուկասյանի մոտ. մենակ. չա՜տ լավ ընդունեց. երկար խոսեցինք, ասաց, դնա, եթե կարող ես այնտեղ ապրել և ընտանիքդ ապրեցնել, շատ լավ, եթե չես կարող՝ վերադարձիր. միայն այնպես անես, որ կարողանաս վերադառնալ: Ես կօգնեմ կնոջդ նույնչափով, ինչպես որ օգնել եմ:

Դուրս եկավ, որ Ադոնցը ո՛չ մի անգամ իմ մասին նրա հետ խոսակցություն չէ ունեցել՝ թե Փարիզ բերենք, և այլն: Սուտ (այդ ձեր ցեղի հատկությունն է, չնեղանաս). սուտ խոսող: Ադոնցը ինձ ուզում է հավատացնել, որ ինձնից մի տարի է մեծ. 51 տարեկան է[7], մազերը ճերմակ, երեսը կնճռոտ...

Փիրումյանին[8] դեռ չեմ տեսել: Վաղն եմ տեսնելու:

Գեղամ Կոստանյանը[9]... երեկ մոտն էի. գրկեցի, գրկել է ինձ և լալիս ենք: Լավ կին ունի, խելոք, տնտես, զարգացած, լավ ուճիկ է ստանում, և աղախին չունին, ազգականներին փող է ուղարկում, քույրերին...

Ասում է՝ դնա տե՛ս և ե՛կ:

Տեսա Սամսոն Թադեոսյանին[10] թշվառ, խեղճ, աղքատ, կինը թողել է իրեն, հեռացել:

Դաշնակ. չեֆերին չեմ տեսել:

Հա, Ղուկասյանն ասաց. Փիրումյանից խորհուրդ հարցրու, ընկերաբար, ինչպես և Կարեն Միքայելյանից (Բելճիկա է, գալու է վաղը). լավ մտածիր, և նորից արի մոտս: Ասաց՝ Ադոնցի հետ խորհուրդ արա: Ասացի՝ նա ինձ վա՜տ ընդունեց, ոչ ընկերաբար. ասաց — փող չտեսած մարդը այդպես կլինի...

Հիմա գնում եմ Բալաքյան եպիսկոպոսի[11] մոտ ճաշի: Հայտնել եմ, որ օր. Էլիզեն, Աշխենը ժամադրություն տան: Լիզայի հասցեն չեմ գտնում:

Եկեղեցի գալիս են թրքահայերը, ռուսահայերը չեն գալիս:

Ստիպված եմ վերջացնել, մյուս օրը նորից կգրեմ:

Համբույրներով քեզ և Վիգենիս:

Քո՝ Ավետիք

90. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 15 փետրվարի, Փարիզ

Սիրելի Սոֆիկ.

Այսօր ստացա նամակդ և պատասխանում եմ իսկույն:

Փարիզը մի վիշապ է, որ օրերդ կլանում է՝ անձդ կլանելու չափ: Լրագիր եմ առնում և չեմ կարողանում կարդալ: Գիշերը ժամը 2-ին եմ տուն գալիս, և առավոտ 8-9-ին ոտքի եմ: Վաննա եմ ընդունում, որ ջղերս հանգստանան:

Հսկա քաղաքի մի ծայրից մյուս ծայրը կանչում են ինձ. ճաշե՛ր, ճաշե՛ր, ճաշե՛ր: Մինչև հիմա մի անգամ եմ ճաշել իմ փողով, այն էլ դերասան Հարութի[1] հետ, որին ես եմ հյուրասիրել, փող չուներ:

Ճաշել եմ Բալաքյան եպիսկոպոսի մոտ, Աննա Բուդաղյանի[2], Փիրումյանի, Գեղամի մոտ՝ երկու անգամ (քեֆ սարքեց իմ պատվին), նկարիչ Խաչատրյանի մոտ, վերջապես Ադոնցի մոտ, բայց կինը տանը չէր. Ադոնցը ինձ փառավոր ընդունելությունից հետո՝ փոխվել է...

Գաբոյին դեռ չեմ տեսել, երկրորդ անգամ: Ջերևաց: Ճաշի են կանչում Ծատուրյանը, Թումանյան Համբարձում[3], Վաչյան[4], Իշխ<ան> Արղության[5], Գեղամն ու Փիրումյանը անվերջ. նույնիսկ Համբ<արձում> Մելիքյանը[6], որին չեմ տեսել, բայց կանչել է. չեմ գնալու: Խնդրեցի, որ թերթերի մեջ՝ «Հառաջի» և «Երևանի» մեջ մասիս

բան չգրեն: Բոլորը գոհ են, որ ես ինձ պահում եմ պատվավոր ոչ թե Շիրվանզադեի[7] պես:

Եղա ճաշի Կարեն Միքայելյանի մոտ. չա՛տ տեղեկություններ տվեց Հայաստանի մասին, լավ և գեչ: Նրա կինը հետն է (Զարենցի գովածծ կինը), սիրուն է:

Շիրվանը Նիցցա է, աղջկա մոտ, երևի այնտեղից էլ կերթա Հայաստան:

Տեսա նկարիչ Քոչարյանին. կինը հիվանդանոցն է. ուրեխան մեռել է. քեֆը տեղը չէր[8]:

Սամսոնի[9] քուրը սպանվել է, մյուսները կովկաս են, ապրում են մի կերպ:

Դեռ չեմ տեսել Լիզային (Հ. Խունունցին[10] ասացի, որ ժամ նշանակե):

Ղուկասյանին նորից պիտի տեսնիմ, ժամ եմ խնդրում. գուցե գնամ նրանց մոտ: Ես նրան իր կանտորում եմ տեսնում:

Թումանյաններին չեմ տեսել, ինչպես և Վարանդյանին (խնդրեց նամակով որ տեսնվենք), Փափազյանին, Զավոյին և մյուսներին: Իսկ Վրացյանին, Զամալյանին, Ռուբենին, Շահան Նաթալիին, Խատիսյանին տեսել եմ Delegation-ում:

Չեմ տեսել Ս. Ադամյանին[11]. չա՛տ նեղությյան մեջ է: Բոլորի կանայք կար են անում. Ասրի-Բեկյանի[12], Սուրենի[13], նույնիսկ իշխ. Արղությանի[14]:

Դեռ չեմ տեսել Պապաջանյանին[15], Զոպանյանին, տիկ. Եսայանին, Տիգրան Զավենին և չա՛տ չատերի, որ պիտի տեսնիմ՝ ամենքն էլ կամք են հայտնել տեսակցելու:

Չեմ տեսել Աբել վարդապետին[16]:

Էլիզին լուր ղրկեցի, որ տեսնվենք. խեղճը ժամանակ չունի, բայց կտեսնինք:

Աչխենն[17] եկավ մոտս, չալը տարավ:

Բժ. Թորգոմյանին[18] տեսա ժամի բակում:

Երիտասարդները պիտի թեյասեղան տան:

Ամենքը, ամենքը զբաղված են հաց գտնելով. անգործները սոսկալի վիճակի մեջ են:

Տեսա կաֆեում Ահարոնյանի տղային՝ Վուրիկին[19], անգործ է, մեծացել է շատ:

Համլիկ Թումանյանը այստեղ է, գուցե մոտ օրերս տեսնեմ, թեյի սեղանին:

Ինչքան պիտի մնամ. երևի մի 8-10 օր ևս:

Ղուկասյանին պիտի տեսնեմ վերջնականապես: ՀՕԿ-ի անդամներին՝ Գրիգոր Վարդանյանին, բժ. Կամսարականին[20] տեսա:

Պիտի դաշնակցականների հետ հաշիվս մաքրեմ, որ վրաս գեչ չխոսին: Լավ են տրամադրված իմ հանդեպ:

Դեռ ո՛չ մի տեղ չեմ եղել. միայն մի գիշեր Շատլե անունով մի թատրոն:

Հայկական երեկույթին չեղա, և ժամանակ չկար: Գեղամի մոտ էի. հյուրեր ուներ, բացի այդ՝ չէի դնա, Ահարոնյանն էր խոսողը: Նա Փարիզի մեջ մի կողմից սարսափելի ատած է, մյուս կողմից՝ սիրված. խաչագող, խելացի մարդ է...

Տեսա Արմենակ Բուդաղյանին: Դեռ նրա ճաշը չեմ կերել. խոստացել եմ:

Փիրումյանի տանը, ճաշին, ուր կային 15 հոգի, հայտնեցին նրանք՝ մեծամասնականները, թե Քաջազնունու և Ս<իմոն> Հակոբյանի գալով մենք այնքան ուրախ չենք, որչափ քո, որովհետև դու հայ ժողովրդի մի կտորն ես, նրա ոսկորից ու նրա մարմնից, և Թումանյանի կողքին հավասար տեղ ունիս. սիրում ենք քեզ հիմա, որովհետև սիրել ենք միշտ:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Բարևներ վարդապետներին:

Համբույրներ քեզ և Վիգուշին:

Ձեր՝ Ավետիք

Եթե չտեսնիմ չտեսած մարդկանցը՝ չա՛տ պիտի վիրավորվին, որ լավ չի լինի:

Թեև ճաշի փող չեմ տալիս, բայց փողերս հալչում են՝ ծաղիկների, բոնբոնների և ավտոմոբիլի մեջ: Հիմա եմ զգում, որ ես չա՛տ մեծ տեղ եմ դրավում: Մեծամասնականներն էլ, բուրժուաներն էլ, դաշնակներն էլ ասում են — ամենախելացին դու ես, որ մնում ես կոչմանդ վրա, պատվավոր, և խոսքդ արժեք ունի:

Ավետիք

91. ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ

<1926>[1], 18 փետրվարի, Փարիզ

Սիրելի տիկին Իզաբելլա.

Շնորհակալությամբ ստացած եմ Ձեր երկու նամակները էլ: Ես նույնպես կփափագեի Ձեզ տեսնել: Ձեր առաջին նամակին կամեցա իսկույն պատասխանել, որովհետև մտածում էի ազատ օր գտնել մեր տեսակցության տրամադրելի: Բոլոր օրերս գրավված են, ազատ եմ երկուշաբթի:

Կխնդրեի, երկուշաբթի կեսօրից հետո քաղաքիս մեջ մի տեղ նշանակեիք, [մի կաֆե] մի սրճարան, Ձեզ հարմար վայրերում: Երկուշաբթի 22-ին փետրվարի:

«Երևանի»[2] *համար ժամանակ չունիմ նյութ տալու, սակայն եթե ունենայի, նույնպես պիտի չտայի, որովհետև որոշել եմ ոտքս Հայաստան չդրած՝ չդրել խորհրդային թերթերի մեջ. բացարձակ որոշում է:*

Սիրալիր բարևներով

Ձեր՝ Ավ. Իսահակյան

92. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ

1926, 19 փետրվ<արի>, Փարիզ

Սիրելի եղբայր Արշակ Ջոպանյան.

Շա՛տ կփափագեի Ձեզ հանդիպել, մի քանի հոգեկան վայելքի ժամեր անցկացնել Ձեզ հետ:

Ես ազատ եմ փետրվարի 23-էց (երեքշաբթի օրէց). կխնդրեի քաղաքի մեջ մի սրճարան, մի որևէ տեղ նշանակեիք հանդիպելու:

Ժամը և ժամադրավայրը գնալու Metro, *և այլն:*

Սրտագին բարևներով և համբույրներով

Ձեր Ավետիք Իսահակյան

93. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 25 փետր<վարի, Փարիզ>

Սիրելի Սոֆի.

Դու չարունակ երեխայական նամակներ ես գրում, կարծես թե Փարիզը վայելեցի, քեզ բան չմնաց:

Ես այնպիսի հարցի առաջ եմ կանգնած, որ կյանքի և ճակատագրի խնդիր է, և լուծելը մի օրվա, մի չաբաթվա բան չէ:

Անթիվ մարդիկ տեսա, ամեն տեսակի, որոնք բոլորն էլ խորհուրդ չեն տալիս, երևակայիր, որ միայն դաշնակցական ընկերներս են խորհուրդ տալիս, իսկ ուրիշները, երկրին ավելի տեղյակները, խորհուրդ չեն տալիս: Ո՛չ Ղուկասյանը, ո՛չ Գեղամ Կոստանյանը, ո՛չ Կարեն Միքայելյանը, ո՛չ Բալաքյան եպիսկոպոսը, ո՛չ Ադոնցը, ո՛չ Վաչյանը, Տիգրան Բեկզադյանը[1] (որ նրանց պաշտոնյան է Գեղամի պես), և բոլորը, բոլորը... Երկար է գրել նրանց պատճառաբանությունը:

Փիրումյանին վերջնականապես չեմ տեսել (չա՜տ դժվար բան է նրան տեսնելը, ինչպես և Ղուկասյանին. ժամադրություն են տալիս, գնում ես՝ զբաղված են, հետաձգում են ուրիշ օր):

Երևի չեմ գնա: Դեռ ոչ ոքի չասես:

Այստեղ փոխադրվելու հարցն եմ խորհում: Եղա Վահան Փափազյանի[2] մոտ. լավ տուն ունի, քաղաքից մի ժամ հեռու, պարտեզի մեջ: Երկու հարկանի, վերին հարկում Ջավոն[3] է ապրում, 300 ֆրանկից ավելի... այստեղ էժան է Վենետիկից, բայց միևը թանկ է:

Մեր փողը չի բավականացնի այստեղ: Ղուկասյանը երբեք միտք չունի ավելացնելու: Երբեք:

Մտածում եմ, և դիմեցի Ադոնցին՝ մի երկու ոսկի գտնել, խոստացավ մտածել:

Բոլորը, բացի մի քանիսից, մեծ նեղությամբ են ապրում. կար, կար, ամբողջ օրը կար: Փարիզի երեսը ամիսներով չեն տեսնում:

Ղուկասյանը խորհուրդ չի տալիս Փարիզ գալ, ասում է՝ կծուլանաս, բան չես գրի, իսկ ես ապրեցնում եմ քեզ, որ գրես — «Ուստա Կարոն» գրես:

Եթե չեղավ, դու կգաս մի-երկու ամիս կապրես, կկշտանաս Փարիզից, և նորից Վենետիկ, մինչև վիզենը վերջացնես:

Համենայն դեպս, Ադոնցը դեռ չպատասխանեց:

Լիզային տելեֆոն արեցի, տանը չէ. նամակ գրեցի՝ տեղ ու ժամ նշանակե. պատասխան չունիմ:

Ճաշերս վերջացան: Նոր մարդ էի, տեսան, հագեցան:

Գաբոն մի օր եկավ մոտս, ու գնաց: Մի անգամ էլ տեսա Մայիլյանի կնոջ հոգեհանգստին:

Ղուկասյանների տունը չեմ գնում և չեմ գնա: Նա չի սիրում կեղծավորություն: Պետք չէ. ծանր, անմատչելի մարդ է:

Շատ աղքատություն կա ռուսահայերի մեջ: Կանայք են մարդկանց պահում:

Իշխան Արղությանի կինը կարում է:

Սուրեն Ադամյանի կինը կարում է:

Մայիլյանները[4] կարում են, մածուն են չինում:

Ադոնցի[5] թերթի գործը գլուխ գալու բան չէ:

Երեկ եղա Տեր-Օհանյաններին[6]: Գնացել էին Նիցցա, նոր եկան, չա՜տ վշտահար են:

Մոլորված է գլուխս. ժամեժամ տրամադրությունս փոխվում է: Բայց «Ուստա Կարոն» պիտի գրել ինչ գնով որ ուզում է լինի:

Ամենքը խեղճ, ծերացած, լքված... ես եմ միայն մեջերը փայլում:

Բուդաղյան Արմենակը այսօր հետս էր. նա էլ խորհուրդ չի տալիս: Եվ ասում է՝ Ղուկասյանի աչքին չա՜տ չերևաս, թարս մարդ է, տեսնի, որ պարապ ես... կկտրե...

Ջավենի եղբոր հասցեն անհնարին է գրել. ճանաչող չկա:

Ջարյանը[7] ուզում է Կիպրոս գնալ պաշտոնով...

Ես ամենաուշը մի չաբթից կուգամ. կվերջանա ամեն բան:

Վ. Փափազյանի տունը աչնանն է դատարկվում, Ջավոն աշնանն է տեղափոխվում:

Մնացածների տները – ծակեր են, մութ, զզվելի, կգամ մանրամասը կպատմեմ. 5 հարկ, ոտքով ելնել. խոհանոցները մի բուռն տեղ, արտաքնոցները՝ հոտած...

Վարանդյանի տունը... խոզի բուն:

Լավ տուն ունի Ադոնցը, Ծատուրյանը, Տեր-Օհանյանը...

Համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք

P.S. Հազարապետյանը[8] այստեղ է, իջել է Քոչարի մոտ (նկարչի), քնում է հատակի վրա: Ջեմ տեսել և չեմ էլ ուզում տեսնել:

Նկարիչ Սարյանը ուզում է Եվրոպա գալ:

94. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 1 մարտի, Փարիզ

Սիրելի Սոֆիկ.

Բարտզ հիմա ստացա: Ես քեզ գրել էի, որ ժամե-ժամ տրամադրությունս փոխվում է: Վերջապես վճռեցի գնալ Հայաստան: Սիմոնիկի[1] հետ երկար խոսեցի. այդ մարդը անկեղծ է, և բարեկամ, ասաց. — Եթե գնում ես իբրև քաղաքական գործիչ, մի՛ գնար: Եթե գնում ես իբրև բանաստեղծ, գրող, իսկույն գնա՛ և բախտավոր կլինես, և երբ ուզենաս, դուրս կգաս: — Մի խոսքով, գնում եմ:

Գործերս վերջացան: Շաբաթ օրը Ղուկասյանին էլ տեսա, նորություն չկա. հիմա մնում եմ մի քանի օր, մի քանի մարդիկ տեսնելու, բացի այդ, երեկ, այսօր և վաղն էլ տանն եմ նստած, հարբուխ եմ սաստիկ և հոգնել եմ այսքան վազվզելուց, աղմուկից, և այլն:

Վերջապես, Լիզայից նամակ առա, վաղը երեկո ժամադրություն տվեց: Ադոնցի մոտ վաղուց է չեմ եղել: Պիտի գնամ, մի անգամ ևս:

Համբարձում Թումանյանները ուզեցել են ինձ տեսնել: Պիտի գնամ: Սեյլանյան Արշալույսը[2] (Ժընևի) այստեղ տեսա Գեղամի մոտ. չա՜տ սիրուն կին ունի, Շադինովի[3] աղջիկը:

Օվաննես խան Մասեհյանը, այստեղ է. մի քանի օրից հետո գնում է Պարսկաստան: Վիճակը գեչ է, փող չունի: Գնում է պաշտոն ձեռք բերելու:

Կաշխատեմ գտնել Զարյանի եղբոր հասցեն. բայց դրանցից փող դուրս չի գա: Վանքին այդպես կխաբեն, թեև վանքը լավ գիտեր:

Վ. Փափազյանի տունը լավ է. քաղաքից ¾ կամ մի ժամ, տրամվայով. կա և երկաթուղի: Բայց դու որ գաս, երևի Լիզայի մոտ պիտի իջնես, կամ Ջավոյի մոտ, կամ

Վահանի: Լիզայից կիմանամ մանրամասնությունները: Գաբոյից խեր չկա. հույսդ կտրի՛ր. թերևս Ադոնցը մի-երկու ճաշ տա:

Քեզ բարեկամ կլինեն իմ հին ընկերները և բոլշևիկները, ուրիշ ոչ ոք: Լավ կընդունեն նույնպես Տեր-Օհանյանները:

Գլուխս ցավում է, հերիք գրեմ: Ծանր հարբուխ եմ:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Բարևներս բոլորին:

Քո՝ Ավետիք

95. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ

1926, 18 ապրիլի, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Այստեղ շատ հարցուփորձ արինք, աղախին գտնելու համար:

Վերջապես, ասացին, որ Միլանում մի հայ կին կա, մոտ 40-45 տարեկան, աշխատասեր, խանում կին, Թրքահայ, գաղթական, լավ տանից:

Եթե լավ վճարես, կմնա մոտդ և ամեն բան կանե:

Շուտով, հենց նամակս ստանալուդ պես, պիտի գրես, որովհետև մոտ օրերս նա Վենետիկ է գալու:

Անունն է Սկուհի (Իսկուհի) Իսրայելյան. ապրում է մի բարեկամի տանը, Ալեմչահի[1]*: Ահա հասցեն.* Alemchah (Alemcia), via sta Radegonda N 7, Milano (III): *Քաղաքի արվարձան է, կենտրոնից մի ժամ, կես ժամ հեռու:*

Իսկ Լիտո ապրելու մասին, պիտի ասես, թե՝ ինչքա՞ն կարող ես վճարել. բնակարանները թանկ են այնտեղ. ամսական, սովորաբար, 1000 լիրից սկսած, երեք սենյակ:

Կարծում եմ, որ ի վիճակի չես: Լավ որոնելով, մի քիչ հեռուները, կարելի է, 7-800 լիր: Գրի՛ր, թե ինչքա՛ն կարող ես տրամադրել: Լավ իմացիր, որ Լիտոն բուրժուազիայի վայրն է՝ անգլո-ամերիկյան, գերմանո-չեխ...

Դ. Անանունից նամակ առա. իր գրքի մասին է գրում, և իմ մասին: Սպասում եմ Մոսկվայի կարգադրությանը, որ մեկնեմ:

Գրում է, որ քեզ բարևեմ, և ասեմ, որ դու չես ըմբռնել նրա նամակի իմաստը և իզուր ես նեղացել:

Զգրեցիր, թե «Մարտակոչը»[2] ի՞նչ էր գրել, որով հետաքրքրվեմ փնտրել վանքում և կարդամ:

Զարմանալի է, որ թերթերը (ուղարկածդ) տեղ չեն հասնում. երևի, ծառանները նիշերի փողը գրպանում են, եթե նրանց ես փող տալիս, որ նամականիշեր առնեն:

Պատմական: Ժ. Սանդի[3] նամակները՝ Ա<լֆրեդ> դը Մյուսեին ուղարկած, տեղ չէին հասնում. իտալական հոտելի ծառան... Իտալացիք միշտ նույնն են, պզտիկ գողեր՝ պզտիկները, մեծ գողեր՝ մեծերը:

Ջերմ բարևներ տ. Սեբարին և քեզ: Այս նամակն էլ չտապ գրեցի:

Քո՝ Ավետիք

Հ. Գ. Սրբուհի Իսրայելյան: Ուղիղը:

96. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1926, 30 ապրիլի, Վենետիկ

Սիրելի Վահան.

Մտադիր էի քեզ մի երկար նամակ գրել Հայաստան գնալուցս առաջ, երբ կարտդ ստացա:

Վերջերս մի քանի օրով բացակա էի Վենետիկից, և հիմա էլ չա՛տ զբաղված եմ՝ իրերս կարգի դնելով: Բանն

այն է, որ 15 տարի է Եվրոպայումն եմ, ահագին մի չրջան կյանքի, այնքան բան է ժողովված չուրջս — թո՛ւղթ, թո՛ւղթ, թո՛ւղթ: Նամակներ, թերթեր, դրքեր: Բոլորը վերստին նայում եմ և զտում, պահելիքները պահում, մնացածը ոչնչացնում: Հետո ձեռագիրներս կան, անսահման հում նյութ: Դասավորում եմ, որովհետև հետս բան չեմ տանելու. ոչ ձեռագիր, ոչ գիրք: Բոլորը թողնում եմ այստեղ՝ կնոջս և տղայիս հետ:

Որոշել եմ գնալ, մի 6 ամիս թափառել Հայաստանում, տեսնել իրերն ու մարդիկ, վերջացնել տնտեսական հարցերս, առկախ խնդիրները եղբայրներիս հետ, և «Ուստա Կարոյիս» համար վերջնականապես ստուգել պատկերներն ու տիպերը, և բարբառները:

Եվ եթե վեց ամսվա մեջ, աչքովս տեսնելուց հետո երկիրն ու կարգերը, գտա, որ կարող եմ ապրել այնտեղ՝ համաձայն ու ներդաշնակ իմ զգացումների ու խղճի ու մտքերի ձևին, գտա, որ կարող եմ ինձ լավ զգալ, բարոյապես և նյութապես, ապա նորից կգամ Եվրոպա, ունեցած-չունեցածս և ընտանիքս հետս նորից վերադառնալու եմ հայրենիք:

Իսկ եթե գտա, որ ես անպետք եմ հայրենիքում, որ այլևս իմ տեղը չէ այնտեղ, դարձյալ կվերադառնամ Եվրոպա և կմնամ մինչև... օրերիս վերջը:

Վերջին ելքը, վերջին կարելիությունը կլինի ինձ համար մեծ դժբախտություն, իսկ առաջինը — մեծ բախտավորություն:

Առայժմ դեռ վիզա չունեմ, սպասում եմ օրեցօր: Գնում եմ մենակ, թեթև բեռով և ծանր սրտով: Դժվար բան է 15 տարի հեռու լինել և գնալ. ի՛նչքան տխուր բաներ պիտի տեսնեմ, մեր տանը և դուրսը... բայց հույս ունեմ, որ լավ բաներ ևս տեսնեմ, որոնք պիտի ամոքեն վիշտս ու դառն ապրումները:

Փարիզ մնացի ամիս ու կես. ամեն օր, գրեթե, մեր ընկերների հետ էի: Ամենքն էլ՝ Ս. Վրացյան, Ռուբեն, Ջա-

մալյան, Շ. Նաթալի, Վ. Փափազյան, բժ. Տեր-Դավթյան, Խաչիկյան... ամենքն էլ անկեղծ, ընկերական խորհուրդ տվին վերադառնալու, կապվելու երկրի և ժողովրդի հետ: Եվ նախանձեցին, որ կարող եմ գնալ, երանի տվին, և խրախուսեցին:

Հիմա զարմանում եմ, որ դու վրդովում ես և զանազան հարցեր ես տալիս ինձ: Եվ դուր աղմուկ ես բարձրացնում իմ շուրջը, այս մոմենտիս... ո՞ւմ օգուտ և ի՞նչ նպատակ:

Ես պատասխանատու չեմ, ինչ որ գրում են իմ մասին: Եվ ես ո՛չ ժամանակ ունեմ, ո՛չ տրամադրություն և ո՛չ էլ հարկ եմ տեսնում լրագրական չփոթի մեջ մտնելու: Լրագրությունը եղել է, կարծես, վճիտ ջրերը պղտորելու: «Հառաջ» թերթը որ իրազեկ է ամեն բանին, ձայն չի հանում, հիմա դու ես ուզում խոչընդոտ կանգնել առաջս: Բայց և քո կամքն է, ի՛նչ ուզում ես՝ մտածիր և գրիր: Ես սկզբից գիտեի, որ լրագրները իրենց քեֆին ու ախտին պիտի գրեն ու մեկնաբանեն իմ երթը, բայց ես բնավ ուշ չպիտի դարձնեմ, և գնամ պիտի իմ ուղիով: Ես գնում եմ տուն, հայրենիք. ո՞ւմ ինչ, ուրիշին ի՞նչ, ո՞ւմ եմ վնաս տալիս:

Մանավանդ, որ Հայաստանի իշխանությունը առանց մի որևէ պայման դնելու իմ առաջ, առանց մի որևէ թուղթ ստորագրել տալու, ազատ մուտք է տալիս, և դյուրություններ, և միայն հարգանք ու գնահատում, ուրիշ ոչինչ:

Ապա մարդիկ, դու էլ մեջը, թող ինչ ուզեն մտածեն ու գրեն: Ուղտը իր հաշիվն ունի, ուղտապանը՝ իր: Ես էլ մարդ եմ, իմ կամքն ունիմ և իմ պատասխանատվությունը իմ ժողովրդի, իմ խղճի և իմ անցյալի առջև: Այս էլ իմացիր, որ իմ մեջ դեռ չա՛տ երկաթ կա, որ գնում եմ իմ առաջադրած նպատակին, և ոչ ոք չի կարող ծռել ինձ:

Տո՛, ի՛նչ դժվար բան է եղել «մեծ մարդ» լինելը, որպիսին ներկայացնում եմ ես այս օրերս, այս պարագային: Հակոբ Քոչարյանն էլ է գնում, Յամոյանն էլ է գնում. ո՛չ մի խոսք, ո՛չ մի շշուկ. իսկ իմ չուրջս՝ իրարանցում:

Բայց ես ուշք չեմ դարձնում՝ որ այսպես կեդրոն եմ դարձել, գնում եմ ճամբով, զուլալ ջրի պես:

Փարիզում, Ռուբենի և Փիրումյանի[1] միջև տեսակցություն սարքեցի, իցիվ թե կարողանամ ավելի մեծ մասշտաբով իրերահասկացողություն ստեղծել, և միացնել բաժանված ձեռքերը մեր թշվառ երկրի բարիքի համար:

Գնալիս նորից կգրեմ:

Ջերմ բարևներ քեզ, Համոյին, Շանթին, Նիկոլին և մյուսներին:

Քո Ավետիք Ի<սահակյան>

97. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ

1926, 12 մայիսի, Վենետիկ

Սիրելի բարեկամ դոկտոր Գ. Ամատյան.

Շա՛տ չնորհակալ եմ Ձեզնից, որ հիշել ու պատվել եք ինձ՝ Ձեր գրքերից[1] ուղարկելով:

«Հոգեվերլուծության» վարդապետությանը բավական ծանոթ եմ. Ֆրոյդի մի քանի գրվածքները կարդացել եմ արդեն: Անշուշտ, իրազեկ չեմ քննադատելու, բայց չա՛տ բաներ խելքիս նստում են, չա՛տ բաներ էլ չափազանցություններ եմ գտնում. սիստեմ ստեղծելու սովորական-գերմանական ձգտում:

Անկասկած, դարիս ամենամեծ գյուտերից մեկն է:

Հաճույքով կարդացի Ձեր գրքույկը: Առավելությունների կողքին այն թերիները ունի.— որ համառոտ է, այդ

մտադավառին անծանոթ մարդուն չա՛տ քիչ հասկանալի, որ օրինակները քիչ եք բերել դրուբյուննները, տեսուբյուննները պարզելու համար:

Սակայն, իբրև անդրանիկ փորձ մեր գրականուբյան մեջ, չնորհավորելի է: Կցանկանայի Բ. տպագրուբյունը ավելի ճոխացնեիք:

Սիրելի բարեկամս, ես մոտ օրեն Հայաստան պիտի մեկնեմ: Լավ չէր լինի, որ Դուք ևս այդպիսի դիտավորուբյուն որոճայիք[2]: Պետք է որ կարող մարդիկ, երիտասարդ ույժեր հավաքվին հայ ժողովրդի մոտ:

Հաջողուբյուն Ձեր գործին, ջերմ բարևներ Ձեզի և ընկերներիդ: Մնաք բարյավ:

Ձեր Ավետիք Իսահակյան

98. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

1926, 29 մայիսի, Վենետիկ

Սիրելի Պողոս.

Ստացա նամակդ: Ստացել եմ ուղարկած թերթերը. եթե կուզես, քեզ ճամփեմ, կամ վանքին տամ:

«Նորքը» կարդացի, վանքը ունի. բայց եթե քեզ հարկավոր չէ, ուղարկիր ինձ, ես կպահեմ Զարենցի դրածի[1] համար:

Զարենցի դրուբյունը լավն էր, մանավանդ սկիզբը, բայց չա՛տ երկարացրել է, և տավտալոգիա է դուրս եկել, անվերջ կրկնուբյուններ: Եվ մի տեսակ սինթեզ է իր գաղափարների: Մյուս կողմից էլ՝ ես և նա, հինն ու նորը, սիմբոլներ են դարձել. ամբողջ հին մտայնուբյունը իմ վրա է կուտակել: Բայց և այնպես, տագանդավոր տեղեր չա՛տ կան: Շատ դեղեցիկ էր Դերենիկի «Կավի դաշտումը»[2]. ոճը — հատու, որոշ, ճշմարիտ դիտողուբյուններով:

Սակայն վերջը թույլ էր – «էյի» հոգեբանությունը, մտածումները. մեռնողը առանց ցավի, տանջանքի, մեռնում է փիլիսոփայելով. ճիշտ չէ: Ալազանի[3] գրությունը անեկդոտային էր. արվեստը – հասարակ:

Ակսել Բակունցը ավելի վարպետ գրիչ է. ռեալիստ, դիտող, բայց պատմվածքը[4] ծայրե ծայր կրկնությունն էր Գոգոլի «Հին պոմեչչիկների» հայտնի կտորի, դու երևի լավ պիտի հիշես. այն ծեր մարդն ու կինը, մյուրաբանները, կնոջ մահը, մարդու մահը: Հար և նման: Մյուս բաները չկարդացի, ժամանակ չունեցա:

Լավ կլինի, որ դուք գայիք մի քանի օրով, նկարչական ցուցահանդեսը տեսնելու, բայց հառաջիկա չաբթուն – ո՛չ, ես բացակա եմ մի քանի օրով: Հունիսի 6-ից Վենետիկ եմ:

Դոլլարների փոխման հարցը. երբեք 30 չի դառնա նա, գոհ կլինիմ, եթե 26-27-ի ժամանակ փոխես: Ուրեմն հիմա, որովհետև կընկնի. չի կարող բարձրանալ, բայց ընկնել հավանական է:

Դավիթի գրքի[5] 5-րդ թերթն է տպվում. կուղարկեմ քեզ:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Ուշացավ վիզաս. գոնե սեպտեմբերից հայրենիք լինեմ, բաղերի քաղցրությունը վայելեմ:

Կինս ջերմապես բարևում է Սեբարին[6], քեզ և աղջկանդ պաչում, այդ չնորհին ես էլ եմ մասնակցում:

Համբույրներով քո Ավետիք

99. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1926, Հուլիս>[1], Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Նամակդ ստացել եմ վաղուց և պատասխանը ծանր քարի պես ճնշում էր սիրտս: Ի՞նչ պատասխանեմ,

Ի՞նչպես պատասխանեմ, որ լիովին հասկացնեմ: Անկարելի է հասկացնել:

Իմ հոգում մի ողբերգություն կա, որ լեզու չունի: Ես ինքս էլ չեմ հասկանում. ջարդված եմ, կոտրված եմ, գրեթե հուսահատ մարդու մեկն եմ:

Ի՞նչ են պատճառները — չա՛տ ու չա՛տ, անհատական, հասարակական, ազգային: Եվ այս ամենի վրա թանձրացած իջնում է պանդուխտ, անհայրենիք, ամայի կյանքս և անապահով կյանքս: Պետք է վերջ տալ այս ամենին, քանի նրանք չեն վերջ տվել ինձ:

Առայժմ միակ ելքը հայրենիք վերադառնալն է: Գնում եմ բարդ նպատակներով — տեսնել ժողովուրդը, իրերը, հեռանկարները, ոգևորվել, ներշնչվել, թարմանալ: Տեսնել՝ կարելի՞ է ամփոփվել այնտեղ, տուն ու հաց ունենալ, կարելի՞ է աշխատել ու ավարտել գրվածքներս, ամենից առաջ՝ «Ուստա Կարոն»:

Ես այստեղ, Վենետիկում, այս պայմանների մեջ չեմ կարող ավարտել այն: Հոգնել եմ, զզվել եմ Վենետիկից, որ խեղդում է ինձ: Ընկեր չունեմ, ինձ հասկացող չունեմ: Եվ անկարող եմ տեղափոխվել մի նպաստավոր միջավայր: Չեմ կարող պարապել:

Շարունակե՛լ «Ուստա Կարոն»: Ես դժգոհ եմ եղածից: Դժգոհ եմ նրա ոճից. մշակված չէ, ձանձրալի է: Ես նորից եմ գրում այն, 1000 էջ նորից եմ գրելու: Բայց պետք է լինել Ուստա Կարոյի միջավայրում, տեսնել, ստուգել նորից տիպերն ու պատկերները, երկիրն ու օդը, բարբառները: Ահա թե ինչո՛ւ դադարեցրի Ուստա Կարոյի հրատարակությունը. նա չեղավ իրականացումը իմ մտածումներիս, իմ տեսիլի:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը ինձ դյուրություններ է ընծայում հայրենիք դնալու և վերադառնալու, երբ կամենամ: Նա շատ հարգանքով է վերաբերվում դեպի ինձ. ոչ մի վիրավորական խոսք, ակնարկ,

պայման: Ես խորհուրդ էի հարցրել Դ. Անանունից. գրում է, որ վերադառնամ: Խորհուրդ հարցրի Փարիզ, մեր ընկերներին, բոլորն էլ խորհուրդ տվին գնալու և չ՛ափ ուրախացան:

Գնում եմ մոտ ժամանակներս: Դեռ վիզա չեմ ստացել: Կինս և երեխաս մնում են Եվրոպա. գնում եմ միայնակ և կվերադառնամ մի կարճ 6-8 ամսից հետո, և այն ժամանակ կորոշվի ինձ համար, թե կարո՞ղ եմ ընդմիշտ մնալ Հայաստանում, թե ոչ: Եթե հնարավոր եղավ ինձ համար մնալ հայրենիքում և գործել, ապա ընտանիքով կվերադառնամ: Իսկ եթե ոչ – սարսափելի է անշուշտ, – ստիպված պիտի լինեմ նորից Եվրոպա ապրել՝ այսպես ջարդված, նկուն, կիսատ, հաշմանդամ:

Իսկապե՛ս չատ հետաքրքրական է աչքով տեսնել Հայաստանը, խոսել պատահողի հետ, լինել գյուղերը, տեսնել, լսել, մանավանդ մեկի համար, որպիսին ես եմ, 15 տարի բացակայությունից հետո: Շատ բան փոխված պիտի տեսնեմ, չատ բան հիմնովին փոխված, և չատ լավ ու գեչ բաներ: Ես պիտի գտնեմ, պիտի որոնեմ սրտապնդիչ երևույթներ. երևույթներ, որ լավ ապագայի խոստումներ ունենան թաքցրած իրենց ծոցում:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը ինձ ամեն դյուրություններ պիտի տա երկիրը թափառելու, տեսնելու: Ե՛վ Ախալքալակ պիտի երթամ, և՛ Հին Նախիջևան, և՛ Ղարաբաղ, և՛ Գանձակ, ուր որ հայկական հոծ բազմություններ կան:

Ո՛րքան նյութ պիտի հավաքեմ և ի՛նչքան պիտի թարմանամ. ձի նստել, կանաչ արտերի ափերով անցնել, աղբյուրների գլուխը հացի նստել, հայրենի, փոշոտ, վաղեմի ճանապարհներով գնալ, իջնել վանքերի պատերի տակ ու հանգչել, լսել աշուղի երգերը, պառավների զրույցները, տեսնել հովիվներին, հնձվորներին... և մնացածը դու երևակայիր: Ի՞նչ կա սրանից ավելի նվիրական բաներ, ո-

րոնցից զրկված ենք և դեռ կարողանում ենք ապրել ու գրել... Գոնե ես այլևս չեմ կարող գրել. թափս, խանդս անցել են: Պետք է թոթափել, թափ տալ իրեն և նորոգվել:

Համաստեղին շատ ջերմ բարևներ, և ասա, որ Խորհրդային Հայաստանում շատ են սիրում և դնահատում նրա արվեստը: Եվ եթե կամք ունենա Հայաստան գալու մի ժամանակի համար՝ տեսնելու մարդիկը, հավաքելու նյութեր, ես կարող եմ դյուրությամբ նրա համար թույլտվություն ձեռք բերել: Ես կուզենայի, որ նա գար ժողովրդի մեջ. իր գրականության արմատները ժողովրդի մեջն են, ժողովրդից դուրս նա կցամաքի և կընկնի կեղծիքի մեջ կամ իր տարերքին ոչ հարմար նյութերի մեջ: Թո՛ղ մտածե այդ առթիվ:

Վերջացնում եմ նամակս: Արդյոք բախտ պիտի ունենա՞նք իրար տեսնելու հայրենի հողի վրա: Ի՞նչ պիտի լինի մեր բոլորի վերջը, առհասարակ: Խոսքս մահի մասին չէ, այլ երկրային տեսակցության, երկրային պարագաների ձևակերպության:

Սիրելիս, մնացիր ողջ և առողջ, կենսուրախ և էներգիայով: Բարևներ բոլորին, ընկերներին, բոլորին:

Համբույրներով – միշտ քո Ավետիք

Հ. Գ. Մեկնելուց առաջ կգրեմ:

Նույնը

100. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

<1926, 2 օգոստոսի>[1], Վենետիկ

Սիրելի Պողոս.

Գրում ես, որ թույլտվություն կա: Ուրեմն՝ կարգադրեմ: Ի՞նչ կարգադրեմ. ինձնից ի՞նչ է կախված. գրիր՝

ի՞նչ պիտի անեմ: Շո՛ւտ, չո՛ւտ չարժվիր. անցագիրս չուտով ձեռքս անցնի, որ Հռոմ ուղարկեմ իտալական կառավարութ֊յունից visa *առնեմ, Իտալիա մտնելու համար, համենայն դեպս:*

Գրեցի, որ գաս. աչխատիր գալ:

Հետո, եթե Մոսկվայի վրայով գնամ տոմսակի գները: Եվ ո՞ր կառավարութ֊յան մոտ վիզա պիտի ունենամ:

Մեր տանից գեչ լուր ունեմ. Ալեքսան-եղբայրս[2] հիվանդ է. արդյոք հիվա՞նդ է թե... Ա՛խ, գոնե նրան տեսնեի...

Շուտով գրիր:

Համբույրներով քո Ավետիք

101. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

<19>26, 3 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Մարտիրոս.

Շատ ուրախացա, որ Փարիզ ես եկել[1]: Լավ ես արել, չա՛տ կօգտվիս: Փափագելի է որ մեր նոր և նույնպես հին, մտավոր գործիչները հնար ունենան երբեմն Եվրոպան տեսնել: Նկարիչներ, քանդակողներ, գրողներ, դերասաններ և այլն:

Մյուս կողմից էլ ցավում եմ, որ քեզ պիտի Երևանում չգտնեմ: Տեղափոխութ֊յուն: Ոմանք գալիս են, ոմանք գնում: Վերջիվերջո, մղված միմիայն հայրենիքի կարոտից, վճռեցի գնալ, տեսնել հայրենիքը: Ականջով հազար ու մի հակասող բաներ եմ լսել, և ո՛չ մեկին էլ չեմ հավատացել, և ինչպես հավատալ, երբ իրար ջնջում են ասածները: Լինել Թովմաս առաքյալ[2]: Տեսնել, շոշափել, և ոչ թե հավատով խաբել կամ խաբվել:

Իմ գնալը, անճնապես, չա՛տ դժվարութ֊յունների հետ է կապված: Կինս չի ուզում գալ, և տղաս էլ դեռ պիտի սո-

վորի, այսպիսով իմ վերադարձը լիովին չեղավ. առայժմ այսպես: Կգնամ, որոշ ժամանակ կմնամ, հետո կգամ և ամբողջապես կտեղափոխվեմ:

Իմ տնտեսական կացությունը ապահով էր, բայց գնալովս խախտվում է նա, և եթե չիրականանա կառավարության խոստումը թե որոշումը, ապա ուրեմն գործած քայլս հիմարությունից ավել մի բան կլինի:

Հույս ունեմ, որ այդպես չի լինելու:

Դու մենակ ես եկել, թե՞ ընտանիքով: Թվում է թե, չպիտի կարողանայիր ընտանիքով գալ. թերևս տիկինն Լուսիկը հետդ լինի, երեխաները մայրիկիդ մոտ:

Ես որ Փարիզ էի, լսեցի գալուդ մասին, որ գրեթե մի տարվա չափ մնալու ես:

Շուտով կգնամ ես. երեկ նամակ առա Պողոսից, որ հրամանն եկել է: Վերջապես, 5 ամիս սպասելուց հետո:

Սիրելի Մարտիրոս, խնդրում եմ գրես, թե երկաթուղու տոմսը Բերլինից Մոսկվա, Մոսկվայից Թիֆլիզ[3], II կլաս, ի՞նչ արժենա, դոլլարի հաշվով: Ուզում եմ Մոսկվայով գնալ: Շա՛տ է հետաքրքիր ողջ Ռուսիան անցնել, զգալ, տեսնել իրերի ներկայությունը, առարկայությունը: Եվ քանի տեղ վիզա է պետք:

Եթե դու մոռացել ես, դեսպանատունը կարող է իմանալ, այդտեղ գիտցողներ չա՞տ կան:

Ուրիշ ինչպես ես, ինչպե՞ս է առողջությունդ, քեֆդ, ընտանիքդ, և վերջապես Երևանը, մեր ընդհանուր բարեկամ – ընկեր – ծանոթները:

Ասում ես որ Փարիզ գամ: Սիրելի՛ս, այս տարի մոտ երկու ամիս մնացի: Բավ է:

Կինս ու տղաս չա՛տ բարևում են քեզ:

Իմ կողմից ջերմ բարևներս հայտնիր Սիմոնիկին[4] և տիկնոջը, Զուբարին[5] և տիկնոջը, կամ ավելի քաղաքավարի լինելու համար, տիկին Զուբարին և Զուբարին...

Համբույրներով քո՝ Ավետիք

Հ. Գ. Քանի՞ օրվա ճանապարհ է, Բերլինից Մոսկվա, և Մոսկվայից Թիֆլիզ: Այդ էլ չմոռանաս գրել:

102. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

<1926, 1-5 օգոստոսի>[1] Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Երևի մոտ ժամանակներս կմեկնեմ Երևան:

Ուղարկում եմ քեզ ոտանավորը[2]. տպիր այս ստորագրությամբ:

Եթե իմանան, որ իմս է, գլխիս փորձանք կբերեն, իհարկե՝ ոչ հայերը: Ուրիշները: Անին թուրքինն է: Խնդրում եմ գաղտնիք պահես:

Ես գնում եմ: Նպատակներ ունեմ: «Ուստա Կարոյի» համար վերստուգել միջավայրը, իրերը, մարդիկ, լեզուն: Եվ աչքովս տեսնել՝ ո՞ւր է գնում հայ ժողովուրդը, ո՞ւր են տանում նրան: Ի՞նչ է սպասում, ի՞նչ է լինելու:

Ես հին հայրենասեր եմ, համառ, անվերապահ: Սոցիալիզմը այնչափով եմ ընդունում, ինչ չափով որ նա չի վնասելու ազգային իդեալներին:

Դու խելացի տղա ես, կհասկանաս ինձ:

Համբույրներով – քո Ավետիք

ԱՆԻ[3]

Այստեղ երկնել են նախնիքները իմ,
Այստեղ դարձել է նյութը գաղափար.
Այստեղ հագել է երազը մարմին,
Ջքնաղ երազը՝ գեղեցկի կոպար:

Անի, դու չես լոկ հողեղեն մի գանձ,
Դու ինքդ ես Ոգին, – մի ողջ ժողովուրդ,

Ամեն ձև այստեղ ոճ է գերազանց,
Այստեղ ամեն ինչ՝ իմաստ ու խորհուրդ:

Ես հոգուս աչքով անցած ու ներկա
Վիճակդ եմ տեսնում՝ հենված մի սյունի,
Որ մարտնչելով դարեր ոտընկա,
Մեռնում է կանգնած, եթե մահ ունի:

Սաղավարտակիր, ձեռքիս՝ տեղ ու նետ,
Կանգնել եմ բարձր, բուրգիդ կատարին,
Ոստանիկներիդ, ռամիկներիդ հետ,
Լսում ենք վառված սեզ հրամանատարին:

Տափաստաններից խուժանը վայրագ
Հորդել է եկել – հեղեղ զայրագին,
Ուզում է, Անի, ընկճել լուծի տակ
Քո ստեղծագործ, թևավոր ոգին:

Խաժամուժ, խուժան՝ անծայր, անքանակ,
Դարեր խուժում են խժդուժ, խոլաբշավ,
Ճըչում խժաձայն, ղընում են բանակ
Քո ցորենաչատ դաշտերում անբավ:

Եվ որոտում է չեփորը ռազմի,
Կռվում ենք՝ մտած արյուն ու քրտինք,
Դարեր կռվում ենք ատամ-ատամի,
Մեռնում ենք կանգնած, եթե մահ ունինք:

Քո հին թշնամին, Անի, չե՞ս տեսնում,
Խուժել է նորից քո դաշտերի մեջ:
Բայց վառվում է դեռ մեր ակուբներում
Հինավուրց ուխտի կրակը անշեջ:

Դու, հին դրոշակ, դու, բագին փառքի,
Հենվել եմ նորից քո անմահ սյունին,
Եվ սպասում եմ, և դարեր՝ ոտքի,
Քո իրավաբեր չեփորիդ ձայնին:

103. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1926, 6 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Վահան ջան.

Օգոստոսի 20-ին կմեկնեմ Հայաստան[1], եթե անակնկալ արգելքներ չպատահեն:

Ուրեմն՝ մնաք բարև. չա՜տ կարոտով բարևներ բոլորիդ – քեզ, կնոջդ, երեխայիդ, Համոյի ընտանիքին, Ս. Պալըգճյանին, Շանթին, Նիկոլին: Խնդրեմ այլևս թերթ չուղարկես: Շնորհակալություն քո ջերմ և բարձր վերաբերմունքի համար ինձ հանդեպ:. Տեսնենք՝ բախտը ի՞նչ է վերապահել ձեզ և ինձ:

Համբույրով քո Ավետիք Ի.

104. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

1926, 6 օգոստոսի, Վենետիկ

Սիրելի Արտաշես.

Օգոստոսի 20-ին կմեկնեմ Հայաստան, եթե խանդարիչ պարագաներ չցցվին առաջս:

Տեսնենք բախտը ի՞նչ է վիճակել ինձ:

Ուրեմն, մնաք բարև քեզ և բոլորին: Խնդրում եմ այլևս չուղարկես «Հայրենիքները». թերթ և ամսագիր:

Շատ չնորհակալ եմ քո սիրո և հարգանքի համար, որով լցված ես եղել միշտ դեպի ինձ:

Ջերմ ու սրտագին համբույրներս քեզ:

Միշտ քո Ավետիք

105. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1926, 15 օգոստ<ոսի>, Վենետիկ

Սիրելի բարեկամ Հ. Ավագյան.

Շա՛տ ներողություն եմ խնդրում այսպես ուշ պատասխանելուս համար Ձեր պատվական նամակին – խճճված էր գլուխս չատ. 5 օր հետո ամենամեծ հաճույքը ունիմ, բախտը – Հայաստան դառնալու: Հայաստանից կգրեմ, անպատճառ «Կոչնակին»:

Եթե Ա<ստվա>ծ հաջողե, սեպտեմբերի առաջին օրերը կլինեմ Երևանում. ի՛նչպիսի ապրումներ, հուզումներ պիտի ունենամ... զգում եմ ինձ երիտասարդ և թևեր են բուսել թիկունքիս. տեսնել հայրենի թանգ, անգին հողը, լսել հայոց լեզուն, գյուղացու դերանդիի զնգոցը, հոտերի մայունը... Թոնիրի հացը ուտել և Այրարատի գինին խմել: Ի՞նչ կա սրանցից բարձր ու նվիրական բաներ – ոչի՛նչ, ոչի՛նչ:

Շնորհակալությամբ ստացած եմ 5 դոլլարը: Կխնդրեմ դադարեցնեք «Կոչնակի» առաքումը Վենետիկի հասցեիս: Այլևս տուն չունիմ Վենետիկ: Հայաստանից կգրեմ հասցես: Բարի եղեք, խնդրեմ, ջերմ և հարգալիր բարևներս հաղորդել «Կոչնակի» ազնիվ խմբագիրներին:

Մնացեք բարև, սիրելի հայրենակիցներ, գրկում եմ Ձեզ բոլորիդ:

Մնամ միշտ Ձեր անկեղծ բարեկամ և հարգող՝

Ավետիք Իսահակյան

106. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆԻՆ

1926, 15 սեպտեմբերի, Վենետիկ

Սիրելի Երվանդ.

Ուրախությամբ ստացա նամակդ: Ուշ պատասխանելուս պատճառն այն է, որ գլուխս չատ խառնված էր: Գնում եմ Հայաստան և գնում եմ ամսիս 17ին. իրերս արդեն նավի վրա են: Շատ բարևներ կտանիմ քեզանից և ձեզանից Հայաստանին: Ես գնում եմ մենակ: Կինս և տղաս կմնան Եվրոպայում: Երևի մի 7-8 ամսից հետո կվերադառնամ, կտեսնվենք Փարիզում, եթե մնաք մինչ այդ ժամանակ:

Կինս ու տղաս հիմա գյուղումն են, և ձեր բարևները հաղորդեցի նրանց: Սրտագին բարևներս սիրելի տիկնոջդ և անուշ Սեդային, փոխադարձ պաչիկներով: Ջերմ բարևներս կհղես Լուբվիկին:

Մենք միշտ սիրով տվել ենք ձեր անուննները մեր տան մեջ. կինս միշտ ասում էր – «ինչ լավ, զգացումով մարդիկ էին». ձեր մասին է խոսքը: Նույն զգացումները ունիմ ձեր հանդեպ: Հայաստան գնալ... լավագույն է միերկու տարի ևս սպասել:

Գրքերի մասին ես խոսում. գրքեր – իմ կրքերս են նրանք: Ջեմ կարող դիմանալ այդ խայծին, և խնդրում եմ հետևյալ գրքերը ձեռք բերես և ուղարկես կնոջս, նա էլ ինձ կուղարկե Հայաստան:

– Ղուրան (Մահմետի ղուրանը), նրա թարգմանված Մարդրուսի[1] միջոցով, հասարակ տպագրությունը:

– Լեոն Դոդե[2] (հայտնի Ալֆոնս Դոդեի որդին). նրա վերջին վեպը, որ ես անունը չգիտեմ, մերով այսպես պիտի լինի «Արթուն երազ». էրնսդ Ֆլամարիոնի մոտ է տպված:

– Պոեմ դը Կաբիրու[3] (Կաբիրու, հնդիկ բանաստեղծ):

– Պոեմ դը Ուիտման[4] (ամերիկացի մեծ բանաստեղծ, անունը սխալ գիտեի. երկուսն էլ տպված են Ն. Ռեվյու Ֆրանսեզ. (Թագոր և Ժիդ թարգմանություն) հասարակ տպագրությունները կառնես:

Էլ ուրիշ – ոչինչ: Խնդրում եմ գրես, թե դու ինչ կուզես Հայաստանից՝ որ քեզ ուղարկեմ: Այս է Հայաստանի հասցես.

Ավետիք Իսահակյան, «Խորհրդային Հայաստանի» խմբագրության:

Նորից չատ և ջերմ բարևներով և մաղթանքներով՝ որ հաջողակ լինես և առողջ լինեք և զվարթ, և սիրով ու խաղաղությամբ:

Մնաք բարև, սիրելիներս:

Համբույրներով միշտ Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

107. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926, 15 սեպ<տեմբերի>, Լիպո[1]

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Գնացի Միլան, մի-երկու-երեք օր Միլան մնալուց հետո պարզվեցավ, որ նավը մեկնում է Վենետիկից: Երեկ հասա Վենետիկ, այսինքն դարձա Վենետիկ, իրերս տեղավորեցի նավի վրա («Resso» նավը). հիմա միայն հանդիստ եմ: Նավը կմեկնի կամ վաղը, կամ ուրբաթ, և վերջապես անպատճառ չաբաթ օրը: Մեծ, ահագին նավ է: Ճաշը պիտի վճարեմ, որովհետև աղքատներին են ճաշ տալիս, չունևորներին: Նավը կանգնած է Ալբերոնի: Շատ չարչարվեցի: Միլան գնալ-գալս, և մինչև իրերս նավը հասցնելը վրաս նստեց 450 լիրեթ:

Առաջին անգամ գիշերեցի Կ. Բաբայանի տանը, իսկ այս անգամ Հ. Արսեն Ղազիկյանի քրոջ տանը, տիկ.

Սրբուհիի: Domus civica[2] *լիքն է, տեղ չկա: Առհասարակ հոտելները լեցուն են:*

Տիկ. Սիրվարդին տեսա, չա՛տ լավ է. բարևում է: Առողջ է բոլորովին:

Այսօր տիկ. Սեբարի մոտ ճաշեցի: Շա՛տ բարևում է, աղջիկը արդեն քայլում է:

Ս. Ղազարի վանքը Միլան գնալիս ինձ պատվի և երթաք բարևի ընթրիք տվեց: Այսքան: Մնաք բարև, այս անգամ լուրջ գնում եմ:

Բարևեցեք բոլորին: Ջերմ ու ջերմ համբույրներ քեզ և Վիգենին:

Առողջ և ուրախ եղե՛ք:

Ջեր Ավետիք

Փարիզից Խաթանասյանը մի-երկու գրքեր պիտի ուղարկե Կ. Բաբայանի հասցեով. ստացիր և պահիր, գուցե ուզեմ, ուղարկես Պողոսի[3] միջոցով, Երևան:

108. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926, 26 սեպտեմբերի, Սև ծովի վրա[1]

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Այսօր վերջին օրն է ծովի վրա: Վաղը առավոտ կլինինք Բաթում: Ծովը մինչև հիմա շատ լավ էր. խաղաղ, հանգիստ, լուսնյակ գիշերներ: Քնելու տեղս լավ է, և սնունդը նույնպես լավ: Նավապետի հետ լավ բարեկամացանք: Կյանքիս մեջ այսքան իտալերեն չէի խոսել, հասկանում եմ և հասկացնում: Ֆրանսերեն գիտցողներ էլ կան: Ամբողջ ծառայողների թիվը – 35 հոգի է, և միայն ես ուղևոր[2]: Պոլիս կանգ առանք մոտ 10 ժամ. իրավունք չկար դուրս ելնելու: Շահվերդյանը[3] մի ուրիշի

հետ եկան այցի: Հեռագիր ունեին Պողոսից[4]: Տեսնենք Բաթում ինչպես պիտի վերաբերվին:

Այս նամակը ձեռքդ ուշ կհասնի. Իտալիայից պիտի պոստին հանձնեն: Միևնույն ժամանակ կստանաս մի կապոց լրագրական կտրոններ, կկարդաս և կպահես. հետաքրքրական բաներ կան:

Նամակիս հետ ղրկում եմ հայր Գաբրիելի ինձ հանձնած «երթաս բարևի» ճառը[5]: Նույնպես պահիր:

Էլ ի՞նչ գրեմ: Շատ համբույրներ քեզ և Վիգենին:

Ջերմ բարևներ Սահակ վարդապետին, Հ. տեսչին, Սրապիոնին[6], Պայանին[7], Գաբիկյանին[8] և բոլորին: Մանավանդ Բաբայաններին:

Ջեր՝ Ավետիք

109. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1926, 12 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Վերջապես Երևանումն եմ: Ես ինձ շատ բախտավոր պիտի զգայի, եթե չլիմանայի այն ծանր հարվածները, որ հասել են մեր ընտանիքին: Թիֆլիզում իմացա, որ Ալեքսան եղբայրս մեռել է ապրիլ ամսում: Մեռել է և՛ տերտերանց Գևորգը[1], Վիգոն[2] (Աքայի աղջիկը) և չա՛տ շատերը մեր բարեկամներից և իմ ընկերներից...

Հանգիստ հասա Բաթում. լավ ընդունեցին: Մի երկու օր մնալուց հետո գնացի Թիֆլիս, ընդունելությունը սրտագին էր և անկեղծ: Ճաշեր, ընդունելություններ: Սկզբում հյուրանոց իջա, բայց Հովհ. Թումանյանի ընտանիքը չթողեց դուրսը մնայի. տարան իրենց տունը: Լավ են նրանք: Աչխենը, Նվարդը, Սեդան և Թամարան Երևանումն են ապրում: Տանն էր Մուշեղը, Համլիկը, որ

ամուսնացել է, Անուշը և Արփիկը: Օլյան չատ չի ծերացել: Նրանց մոտ իմ տանս էի զգում: Քնում էի Օհաննեսի սենյակում:

Շատ բարեկամներ տեսա. ուրախացա և տխրեցի. այդ է կյանքը:

Երևան եկա Դիլիջանով և Սևանով, Սիմոնիկ Փիրումյանի հետ, օտոմոբիլով: Հրաշալի ճանապարհ էր. պայծառ, տաք, գեղեցիկ: Տեսա Խորհրդ. Հայաստանի չինուԹյունները, պանրագործարանը. հրաշալի էր: Երևանը չա՛տ է փոխված, եռուզեռ, կենդանի, բազմամարդ: Անվերջ քանդում են ու չինում, մեծ աչխատանք են թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը, ապրելու ընդունակ, լալիս է, բայց նորից չինում ու ստեղծում, քարից հաց հանում:

Ավելորդ է խոսել իմ մասին: Ամեն տեղ գրկաբաց ընդունելուԹյուն: Բայց սիրտս կոտրած է:

Լենինական դեռ չեմ մտել. ո՞ւմ գնամ տեսնիմ. բայց, իհարկե, պիտի գնամ: Սակայն դեռ Երևանում չատ պիտի մնամ, վաղը գնում եմ չրջակաները, օտոմոբիլով. հետո էջմիածին: Եղանակները չա՛տ լավ են. տաք, պայծառ: Հրաշալի ջուր ունի Երևանը, և մրգեր, պտուղներ:

Ապրում եմ Հոտելում. սենյակ պիտի ստանամ մոտ ապագայում:

Շատ չատերը բարևում են քեզ. բժ. Ասլանյանը[3], Վիկտորյան[4] (հիվանդ է խեղճը, ոտքերը ուռել են). բժչկվում է:

Բոլորը գտնում են, որ ես լավ եմ մնացել, ինչպես և դու: Վիգենով հիանում են:

Ծովի վրայից քեզ նամակ գրեցի. Բաթումից հեռագրեցի: Նամակ չէի գրում, որովհետև ժամանակ չունեի, և սիրտ միևնույն անգամ: Ստացա քո գրած նամակը:

Մեր ծանոթները, բարեկամները, ընկերները բոլորն էլ խեղճ վիճակի մեջ են. գրեթե ամբողջ ժողովուրդը խեղճ

է. աղքատ, քանդված, ավերված, թալանված երկիր է եղել, զարհուրանքներ տեսել, անհուն, անսահման: Հիմա նոր-նոր է ոտքի կանգնում. տեսնում ես այս բոլորը և սիրտդ կտոր-կտոր է լինում. ուզում ես հոգիդ տալ նրանց, այնքան խղճում ես: Ախ՛ղճ, անբա՛խտ հայ ժողովուրդ, գնացել է մահի դուռը ամբողջովին, և կիսով՝ մերկ ու քաղցած, զարհուրած հետ է դարձել: Եթե Ռուսաստանը չհասներ 1921 թ.-ին, ջնջված էր հայությունը: Հիմա կուշտ են. սով չկա: Բայց բնակարանի մեծ կրիզիս կա. թափված են իրար վրա, բառիս բուն նշանակությամբ: Անվերջ չինում են տներ, բայց ծով կարիքին հասնել կարելի չէ. Եվրոպայի հայությունը պիտի օգնե, չա՛տ օգնե, եթե սիրում է նա հային ու հայ լեզուն: Ամբողջ քաղաքը լծված է աշխատանքի: Կառավարության դլուխ կանգնածները ընտիր, խելոք երիտասարդներ են (մոտ 40 տարեկան մարդիկ), աշխատող, եռուն, եռանդով, զարդացած: Գործի, աշխատանքի երկիր է Հայաստանը: Գլուխները կախ աշխատում են, համբերանքով և հույսով: Անշուշտ, մի 10 տարի հետո, Հայաստանը, եթե ունենա խաղաղություն և աջակցություն դրսից, չա՛տ գեղեցիկ, լավ երկիր է լինելու: Հիմքերը լավ են դրված: Երանի՛ երիտասարդ լինեի և ընկնեի գործի, սև, չարքաշ գործի ծովում: Թող Վիգենս իմ տեղը կատարե իմ ուզածն ու չկարողացածը:

Բաթում-Թիֆլիզ գրեթե չինարարական գործ չտեսա, նրանք արդեն չեն են ու հարուստ. խեղճը, աղքատը մենք ենք:

Էլ ի՞նչ դրեմ: Դերենիկին տեսա, դժբախտ է, մի հիվանդ, ապուշ երեխա ունի: Անարը[5] ամուսնացել է դերասան Աբելյանի աղջկա հետ: Հիմա մի աղջիկ ունի: Սիմոն Հակոբյանին[6] դեռ չեմ տեսել, մի տղա ունի:

Սիսակը[7] լավ է, զվարթ ու ազնիվ գործող: Շիրվանզադեին, Քաջազնունուն դեռ չեմ տեսել:

Ով որ ճանաչում է քեզ, բարևում է:

Թիֆլիզում տեսա Անահիտին՝ Զիթողցոնց. իր մարդուց բաժանված չէ. լավ տղաներ ունի: Տեսա և Սոֆիկ Աբովյանին. լավ զավակներ ունի: Խեղճ են, բայց: Ամեն մարդ աշխատում է. պարապ լինել – քաղցած լինել կնշանակե:

Գրիր Վիգենի մասին, ինչ եղան քննությունները, հաջող տվե՞ց: Ասա, որ լավ աշխատե, որ ապագայում հաց ունենա: Իր հասակի տղաները հա՛մ աշխատում են, հա՛մ սովորում: Օրինակ, Վիկտորյայի տղան[8] և ուրիշները:

Ռուբեն[9] ախպերը չա՛տ հիվանդ է եղել. հիմա լավ է: Տերտերը[10] պարալիչ է ընկել. խե՛ղճ մարդ: Մնացածները լավ են:

Շատ ջերմ և կարոտով բարևներ վանքին ու դպրոցին, հայր տեսչին, Անտոն վարդապետին, Սահակին, Սրապիոնին, Պայանին, Գաբրիկյանին, Աջեմին, Խոջային:

Վանքը: Հայր աթոռակալին, հայրեր Գաբրիելին[11], Հովսեփին[12], Ավետիքին, Հակոբին, Արսենին, Վարդանին, Օհանին, Քերովբեին, Վրթանեսին, Վահանին[13], Եղիային, և այլն, այլն: Սիրով եմ հիշում նրանց, և կարոտով եմ պատկերացնում վանքը:

Բարևիր Բաբայաններին[14], քեռուն, Հ. Արսենին[15], մորը, քրոջն ու Զոնին, Մարիին, Աստղիկին – ծնողներին (Շիրինյան), Ծովիկյաններին[16] և բոլորին:

Երբ հանգստանամ, նամակ կգրեմ վանքը[17], և ում որ խոստացել եմ:

Գարեգին Լևոնյանը, Միշա Մանվելյանը, Մամիկոն Գեորգյանը[18] – ամենը լավ են ու բարևում են:

Մտադիր եմ ձմեռը Մոսկվա գնամ. ձերոնց դեռ նամակ չեմ գրել, կգրեմ: Ժամանակ չունեմ, անվերջ տեսակցություններ, խոսք ու ճաշ: Եվ երբեք մենակ չեմ գտնվում:

Երվանդ Լալայանը[19] ամուսնացել է Զարիկի հետ (Սահակ Մատինյանի[20] քրոջ աղջկա):

Թիֆլիզ չկարողացա շատ մարդ տեսնել, քո և իմ բարեկամներից: Ժամանակ չկար:
Համբույրներով քեզ և Վիգենին:

Քո Ավետիք

Via Berlin-Moscau, U.R.S.S.
Эриван, Армения
Ашот Иоанисян.
Աշոտ Հովհաննիսյան,
Րաֆֆիի փողոց
Հանձնել ինձ:

110. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 30 Հոկտեմ<բերի>, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացել եմ նամակներդ, և մի նամակ էլ ես եմ գրել: Տրամադրությունս լավ էր, բայց երկրաշարժի[1] պատճառով շատ փչացավ: Մեր քաղաքը ավերակ է. 75 տոկոս բնակարանները քանդված են, ժողովուրդը դուրսն է քնում: Մարդկային կորուստներ քիչ են: Մեր տունը քիչ է վնասվել. Ռուբեն ախբերը ծանր հիվանդ է: Իսկ Ալեքսան ախբերը, ինչպես գրել էի, մեռել է: Մեր դյուղը բոլորովին քանդված է, ջաղացը հիմնահատակ եղել: Մեծ փող է պետք նորոգելու, իսկ փող չկա: Գյուղի տները — ավերակ, հողին հավասար: Մենք մարդկային կորուստ չունենք: Ամբողջ գավառը մոտ 360 մարդու կորուստ ունի: Սարսափելի երկրաշարժ էր, զարհուրելի: Եղբորդ՝ Սմբատին տեսա. լավ է, հաջողակ է:

Հիշում ես մեր ժրնևի ծանոթ Թամարան, այստեղ է ամուսնացած. բնավ չի փոխվել: Շա՛տ բարևում է քեզ:

Էլ ի՞նչ գրեմ. չա՛տ տխուր եմ, վաղը գնում եմ մեր քաղաքը, կմնամ մի չաբաթ, նորից կդառնամ Երևան: Առայժմ չա՛տ բարևներ մեր բոլոր բարեկամներին:

Համբույրով քո Ավետիք

111. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ

1926, 30 հոկտեմ<բերի>, Երևան

Սիրելի Ն. Ադոնց.

Որոշել էի Հայաստան գալուս Ձեզ մխիթարական բաններ գրել մեր ժողովրդի հոգեկան և նյութական վերելքի մասին, բայց հազիվ մի 10 օր անցած, պատահեց տարերքի հարվածը – և Ալեքսանդրոպոլը բազմաթիվ գյուղերով դարձավ ավերակակույտ՝ թաղելով հողի ու քարի տակ հարյուրավոր մարդիկ, կենդանիներ և հարստություններ: Ահագին, զարհուրելի ավեր ու աղետ: Տասնյակ միլիոն րուբլիի ավեր: Ոչ մի չափազանցություն խոսքերիս մեջ: Քաղաքի տների 70-75 % կործանված կամ այլևս անբնակելի:

Հիշո՞ւմ ես մեր գյուղը (իմ գյուղը) ջրաղացը, մեր տունը – բոլորը, բոլորը ավերակ, բառացի, քարի ու հողի կույտ. հիմքից պիտի վերանորոգել, եթե դրամ լինի, այդպես է բոլոր մյուս վայրերը:

Ժողովուրդը, 70-80.000 ապրում է բացօթյա, սարսափած, զարհուրած: Ինչքա՛ն խելագարության դեպքե՛ր:

Վախենում ենք որ Շիրակը գեղ ու քաղաք, փախչի, ամայանա. հարյուրավորներով մարդիկ փախչում են, արդեն լքելով ամեն բան, եթե օգնություն չհասնի, հայկական այս գավառն էլ կորած պիտի համարել:

Մխիթարականը այն է, որ առաջին ահակոչին Խորհրդային Միության երկրներից սկզբնական օգնություն

հասավ, Մոսկվայից մոտ մի միլիոն րուբլի, Թիֆլիզից, Բագվից, Ուկրաինայից, Բելառուսիայից, Դաղստանից փող, սնունդ, դործիքներ, փայտեր և այլն, և այլն: Լայն չափերի օգնութիւն հիմա պիտի կազմակերպվի[1], սակայն կարիքը բարձր է, դերազանց է բոլոր չափերից: Արտասահմանը անպատճառ և անհապաղ օգնութիւն պիտի հասնի, անվերապահ, բոլորանվեր:

Դժբախտ ժողովուրդ ենք, չնչավոր և անչունչ իրերից հարվածված, բայց և շա՛տ քաջ և տոկուն ենք. աղետի վայրերը եկած վրացիները զարմանում են տեսնելով, որ մեր դյուղացիները ավերակների տակից հանելով իրենց սիրելիներին՝ մի ձեռքով թաղում են, մյուս ձեռքով հյուղակներ են չինում. ուրիշ մի ժողովուրդ մեր տեղը՝ բոլորովին կլքեր հայրենիքը և չունչը կառներ Ռուսական հեռավոր տափաստանները:

Սիրելի Ադոնց, ես կարճ եմ դրում, դուք արդեն հիմա լրագրներից իմացած կլինեք մանրամասնութիւնները:

Խնդրում եմ Ձեզ, սակայն հարկ չկա խնդրելու Ձեզ, դուք ամենքդ լավ եք հասկանում և խորապես զդում — օգնութեան հասնելու հրամայականը:

Ես եկա իմ տնտեսութիւնը կազմելու, բայց մի-երկու րոպեի մեջ ամեն ինչ փոշի դարձավ: Մի երկու ամիս առաջ մեծ եղբայրս մեռել էր, և հիմա էլ մյուս եղբայրս չա՛տ ծանր հիվանդ է, և նրանց ընտանիքները՝ հիմա խեղճ, անտուն, աղքատ: Ջրաղացը, տունը անկարող եմ վերաչինել, և անկարող եմ նրանց էլ պահել, մոլորվել եմ... իսկ վրա հասնողը ձմեռն է՝ ցուրտ ու դաժան, քաղց, հիվանդութիւններ... դժոխք կատարյալ:

Բարևներով քո Ավետիք Իսահակյան

30 Հոկտեմբ. 1926
Երևան

112. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ

<1926, 23 նոյեմբերի>[1], Երևան

Հակոբ ջան.

Ներողություն, սիրելիս, որ ուշ եմ պատասխանում նամակիդ: Ինդրեմ ծուլության կամ մոռացության չվերագրես:

Լենինականի աղետը ամենքին չփոթացրեց, ամենքը գլուխները կորցրին: Ընկեր Մռավյանը շարունակ բացակայում էր, հետո էլ ես էի մի չաբաթով բացակա:

Վերջապես տեսա և խոսեցի ընկեր Մռավյանի հետ: Շա՛տ պատճառաբանություններ առաջ բերեց. – որ քանի անգամ դրվել է հարցը և մերժվել. որ հիմա տնտեսական տագնապի մեջ ենք... վերջապես խոստացավ հարցը նորից դնել ժողովին:

Ինչ որ ինձ էր վերաբերում՝ ասացի, խնդրեցի: Ուզում եմ ասել, որ քեզ տված խոստումս[2] կատարել եմ, և խիղճս հանգիստ է: Շա՛տ խոսեցի, չա՛տ պատճառաբանեցի:

Մոտ օրերս գնում եմ նորից Լենինական: Մերոնք չա՛տ տուժել են, մերոնց տնտեսությունը բոլորովին քայքայված է. ջրաղացս, տունս – կործանված:

Շա՛տ բարևներ ընկերներին և քեզ, բարև ու համբույր:

Քո Ավետիք Իսահակյան

113. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 7 դեկտեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆյա.
Նամակներդ ստացել եմ:

Տրամադրություն չունեի նամակ գրելու: Գնացի, տեսա մեր քաղաքն ու գյուղը: Գյուղի տունը, ջաղացը կործանված են. գարնանը պիտի սկսել վերաշինել: Կառավարությունը պիտի օգնե:

Ռուբենի վիճակը ծանր է: Մի բժիշկ ասում է, որ ռակ է, մյուսները, թե՝ վերք է ստամոքսի, բայց խեղճը հալումաշ է եղել:

Աքայի և Սաթենիկի տնտեսական վիճակը գեչ են, ես եմ օգնում:

Աբասը[1] լավ տղա է, բայց իր հիմարության զոհն է դարձել. բանտարկված է, իմ գալուցս առաջ: Կառավարությանը հակառակ է իր կարճ խելքով. սխալ, վնասակար ընթացք: Այն, ինչ որ անում է կառավարությունը, նրանից ավել ի՞նչ կարող է անել. երկիրը աղքատ, քանդած, անընդհատ պատերազմներ տեսած: Ի՞նչ է, եթե մի ուրիշը լիներ, ուրիշ կառավարություն՝ ավելի՞ն պիտի դործեր: Երբե՛ք:

Անվերջ նոր, հսկա չենքեր են շինում, տներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ֆաբրիկաներ, ջրանցքներ և հաղարումեկ բաներ:

Վրաստանն ու Ադրբեջանը ժառանգեցին չեն ու հարուստ երկիր, քաղաքներ, ճանապարհներ, իսկ Հայաստանը — միայն ավերակներ, որբեր և հիվանդություններ, սով և մերկություն: Ուրիշ ով որ լիներ սրանց տեղը, պիտի փախչեր: Բայց աբասները հիմար են և, ցավալին այն է, որ գործիքներ են անհայտ ուժերի ձեռքին, որոնք գտնում են անձնուրաց, աղնիվ երիտասարդներ ու գործադրում:

Խնդիրն այն է, որ մայրը մնացել է անտեր. ես պիտի պահեմ մորը, մինչև տղայի ազատվիլը, որ հույս ունեմ չուտով լինի:

Դու չարունակ գրում ես իմ գալու մասին: Իհարկե, ես երբ ուզենամ կարող եմ գալ, բայց գալու մասին ես տա-

կավին չեմ մտածում, որովհետև չա՛տ բաներ ունիմ անելիք: Ջաղացը պիտի վերաշինեմ, դյուղերը պիտի թափառեմ, նոր նյութեր պիտի հավաքեմ, նոր կենցաղը պիտի ուսումնասիրեմ: Շատ բան ունեմ կարդալիք, ահագին գրականություն կա նոր ու ինձ անծանոթ: Երևանը ունի չափազանց հարուստ գրադարաններ՝ ազգային[2], համալսարանի[3], էջմիածնի[4]:

Հետո, չա՛տ հաճելի կյանք կա Երևանում, չա՛տ ընտիր, բարձր հասարակություն: Ես չա՛տ սիրված եմ ու հարգված: Կառավարությունը ամեն դյուրություն է տալիս ինձ երկիրն ու ժողովուրդը ճանաչելու: Սա իմ տեղն է ու իմ տարերքը: Ի՞նչ պիտի անեմ Եվրոպայում: Զզվել եմ ու երբեք փափագ չունիմ նորից այդտեղ ձանձրանալու, բայց երբ պետք կլինի գալու, Վիգենին համալսարան դնելու համար կամ այլ անհրաժեշտ գործի համար, իսկույն կարող եմ գալ. դրա մասին մի՛ մտածիր: Աչխատիր Վիգենի համար համալսարան մտնելու ստիպենդիա ճարել, որովհետև ես դեռ չեմ կարող ձեզ դրամ ուղարկել, չա՛տ եմ ծանրաբեռնված: Հիմարություն ունեցա, և դրա մեջ Պողոս Մակինցյանն էլ չա՛տ մեղավոր է, գուցե միակ, որ հետս չբերի ձեռագրերից և մշակված «Երգեր ու վերքերը» և ուրիշ գործեր («Սասմա Մհեր»), որ այստեղ հրատարակեի և փող ստանայի: Հիմա նոր բաներ պիտի գրեմ: Տեսնենք:

Իմ իդեալս է — ապրել Հայաստանում մշտապես և երբեմն գալ Եվրոպա, կարճ ժամանակով: Դու գիտես, թե ինչքա՛ն էի զզվել Եվրոպայից և ինչքա՛ն էի տխուր:

Դեռ բնակարան չունիմ. հյուրանոցումն եմ. սա շատ ծանր խնդիր է — բնակարան: Բառացի ասած՝ բնակարան չկա. երբ ինձ տուն տան, խոստացել են երկու սենյակով նոր բնակարան, այն ժամանակ կգաս, թե չէ միտք չունի, ապրել կարելի չէ. այդ մասին հետո, դու Վիգենի հարցը լուծիր մեր բարեկամների՝ Աբրահամի և Ադոնցի միջոցով,

Թեև դեռ ժամանակ կա, բայց այդ ուղղությամբ գործիր: Քեզ չատերն են բարևում. հիշո՞ւմ ես ժընևի Թամարան, այստեղ է և քեզ բարևում է. ամուսնացած է: Ում կորցրել ես, այստեղ կգտնես: Կորգանովին[5] բարևիր, ասա քեռին Թիֆլիզ է. դեռ չեմ տեսել: Բարևիր Կորգանովներին, Ադոնցին, Գաբոյին, Փիրումյանին, Զուբարին, Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին և բոլորին, Լիզային և այլն:

Համբուրներով քո Ավետիք

Նամակներս ուղարկիր Վենետիկ[6], Վիգենին:

114. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 7 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Ներողություն, որ ահա երկու ամիս է, որ Հայաստանի մեջն եմ, բայց քեզ մի նամակ դեռ չեմ գրած: Բայց չկարծես, թե քեզ մոռացել եմ. մայրիկիդ[1] դրել եմ չարունակ և հարցուփորձ արել քո մասին:

Հայաստան ոտ կոխելուս, իսկույն, չա՛տ ցավալի, չափազանց տխուր բաներ լսեցի մեր ընտանիքի մասին. մեծ եղբայրս (Ալեքսան) մեռած գտա և մյուս եղբայրս, Ռուբենը (Կոլյայի հայրը) ծանր հիվանդ, որ անհույս է և օրերի հարց է նրա կյանքը: Եվ ուրիշ չա՛տ թանկագին կորուստներ մեր ընտանիքից և իմ ընկերներից: Մեր ազգականներից 25 հոգի կան մեռած. այս բոլորը չա՛տ վշտացրին ինձ, և եռանդս ցամաքեցրին. ո՛չ մի սիրտ չունեի նամակ գրելու: Հայրենիք գալուս ուրախությունս փոխվեց ինձ համար ծանր սուգի:

Այդ տակավին չէր անցել, երբ զարհուրելի երկրաշարժը գրեթե կործանեց մեր քաղաքը և չա՛տ դյուղեր:

Մեր գյուղը, մեր ջրաղացը, մեր տունը բոլորովին կործանված են. հողին հավասար: Իհարկե կառավարությունը պիտի վերաշինե, թերևս ավելի լավը, բայց մի աղքատ ժողովրդի համար, որպիսին մենք ենք, անչափելի կորուստ էր: Մի 3-4 տարի է պետք, որ քաղաքը վերաշինվի:

Ես հիմա Երևանումն եմ: Լավ եմ, գոհ եմ, որ գտնվում եմ հայրենակիցներիս հետ: Ամեն երեկո մի տեղ եմ – թատրոն, կոնցերտ, ժողով, երեկույթ: Շա՛տ մեծ կյանք կա Երևանում և չա՛տ ընտիր, կրթված հասարակություն:

Այցելում եմ ամեն տեղ – հիվանդանոցներ, համալսարան, դպրոցներ, ֆաբրիկաներ, զորքի մոտ: Եվ ամեն տեղից հեռանում եմ գոհ և ոգևորված: Հայրենիք ունենք, պետություն, զորք և ամեն բան:

Պիտի գնամ գյուղերը թափառեմ, տեսնեմ գյուղացուն իր հողի վրա. ի՞նչ է անում, ինչպե՞ս է ապրում, ի՞նչ է մտածում:

Գալով քեզ, սիրելի տղաս, լավ աշխատիր, լավ սովորիր: Դու արդեն մեծ տղա ես և ամեն բան հասկանում ես: Աշխատի՛ր մարդ դառնալ, լավ մարդ, քաջ, զարգացած, պատրաստված, որ թե քեզ պետք գաս և թե հայ ժողովրդին:

Մի՛ մտածիր, որ քեզնից հեռու ենք. սրտով և հոգով միշտ քեզ հետ ենք: Ինչ որ կախված է մեզնից՝ կանենք, որ ուսումդ ավարտես, համալսարանը վերջացնես: Երբ համալսարանը ավարտես, գիտություն ունենաս, այն ժամանակ միայն կարող ես օգտակար լինել քո հայրենիքին:

Սիրիր և հարգիր տեսուչիդ, ուսուցիչներիդ և ընկերներիդ:

Առողջությունդ լավ պահիր, լավ, ազնիվ ընկերների հետ եղիր և ազնիվ մտածիր, ազնիվ զգա՛ և ազնիվ գործի՛ր:

Սիրելի Վիգենս, ես չա՛տ լավ եմ: Ինձ այստեղ չա՛տ հարգում են ու սիրում:

Բախտավորություն է հայրենիքում ապրելը: Ուզարկում եմ այն պրոգրամմը, որով կիմանաս, թե ինչպես ընդունեցին ինձ ու տոնեցին[2] իմ գալը:

Բարևիր իմ կողմից հայր տեսչին, Հ. Հ. Սահակին, Սրապիոնին, Անտոնին, աբբե Ժյուստին[3], պարոններ Պայանին, Գաբրիկյանին, Խոջային[4], Ահեմյանին[5], Գեորգ Պալըքչյանին[6] և Պագանիններին[7], Դե-Մարքիներին[8] և բոլոր քո ընկերներին:

Ներփակ նամակը կհանձնես Հ. Սահակին:

Կարոտալի համբույրներով, քո հայր՝
Ավետիք Իսահակյան

Հասցես. URSS, Erivan-Armenie, Achot Iohannissian.
Ռուբենի փողոց, Երևան
Աչոտ Հովհաննիսյան
Հանձնել Ավոյին

115. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 26 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի.

Վերջերս իրար վրա քեզնից երկու նամակ ստացա: Երևանից երկու շաբաթի չափ բացակա էի. գնացել էի Լենինական: Ռուբեն ախբերն էլ մեռավ... ամսուս 17-ին. գիշերը: Աչքերը ես փակեցի. խեղճը չա՛տ տառապեց ու տանջվեց. ռակ ուներ ստամոքսում. 4-5 ամիս պառկած էր. մաշվել, կմախք էր դարձել: Գրեթե մինչև վերջին ժամերը դիտակցությունը տեղն էր ու պայծառ:

Այսպես — ես մնացի հիմա մեն-մենակ, այլևս ո՛չ մայր, ո՛չ քույրեր, ո՛չ եղբայրներ...

Լենինական գնալուցս առաջ քեզ նամակ գրեցի, նույնպես Վիգենին՝ նամակիդ հետ: Երևի ստացար: Կ.

Միքայելյանից [ստացա] առա տեղեկություններ քո մասիդ: Ես լավ եմ, առողջ եմ: Դեռ չեմ սկսել պարապել. տրամադրություն չկա: Մեր քաղաքը թեև կիսավեր վիճակ ունի, բայց ժողովրդի քեֆը տեղն է. միշտ էլ դավուլ-զուռնա կա, այնինչ Երևանը ավելի լուրջ է. զուռնայի ձեն չի լսվում:

Շատ և շատ բարևներ Կորգանյաններին, Գեղամին, Ադոնցին՝ իրենց տիկիններով, Գաբոյին, <Դերբեդարյաններին>, Տեր Օհանյաններին, Խաչատրյան զույգերին, Ս. Փիրումյանին, Լիզային և այլն:

Ես ապրում եմ հյուրանոցում. Մասիսի դիմացը մի փոքր սենյակ ունեմ, տաք և արևը մեջը: Շատերը բարևում են քեզ, մանավանդ Ռիպա Մամյանը, այն սիրուն աղջիկը, որ հիմա մի հայ բժիշկի կինն է: Հիվանդ է խեղճը:

Համբույրներով քո Ավետիք

116. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1926, 26 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Մամայիդ նամակ գրեցի, որ քեզ ուղարկե: Ես չա՛տ տխուր եմ: Ամսիս 17-ին Կոլյայի հայրը մեռավ, Ռուբեն եղբայրս: Մնացի ես հիմա մենակ. էլ ո՛չ եղբայր ունեմ, ո՛չ քույր. մնացիք դու և եղբորս որդիները: Դու քեզ լավ պահե. առողջ եղիր:

Այս նամակս ստանալուդ պես ինձ իսկույն նամակ գրե. ի՞նչպես է առողջությունդ, ի՞նչպես են դասերդ:

Հետո ջերմ բարևներս հաղորդիր Հայր տեսչին, Սահակ վարդապետին[1], Սրապիոն վարդապետին, Հայր Անտոնին, աբբե Ժյուստին, Պայանին, Գաբրիկյանին, և բոլոր ընկերներիդ:

Նույնպես դուրսը. Պագանիններին, դե-Մարքիններին, Խոջային, Աճեմյանին, Գեորգ Պալըքչյանին (Գեղարքունի)[2]. և բոլոր նրանց, որոնք հիշում են ինձ:

Համբույրներով քո հայր Ավետիք

Հասցես Via Berlin-Moscow,
U.R.S.S., A. Issakian
Ավետիք Իսահակյանին
Эриван, Армения
Կենտրոնական Հյուրանոց,
Նալբանդյան փողոց

117. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

1927, 14 Հունվարի, Երևան

Սիրելի փոքրիկ ընկեր, Վարդգես Սարգսյան.

Ձեր շատ հուզիչ և սրտաբուխ նամակը ստացել եմ վաղուց, բայց շատ զբաղված էի և գրեթե ժամանակ չունեի պատասխանելու: Դրա համար շատ ներողություն եմ խնդրում: Միայն վերջերս, այս ինը օրը հիվանդ լինելով — հարբուխ — ազատ ժամեր ունեցա գրել քեզ և քեզ ուրիշ շատ հեռավոր ընկերների՝ Ձեզ նման աշակերտներին:

Շատ ուրախ եմ, որ այսպիսի մեծ և վառ սեր ունեք հայ գրականության համար,. և այսպես խանդավառված եք քեզ ինձնով, և քեզ մեր գրականության մեծագույն վարպետներով — Հովհաննիսյան, Թումանյան, Տերյան և այլն:

Անպատճառ գալու եմ իմ սիրելի Լենինականը, իմ հինավուրց ծննդավայրը, ուր մեծացել եմ և սիրել եմ մինչ: Անպատճառ գալիս կտեսնեմ Ձեզ և Ձեր ընկերներին, միայն չգիտեմ, քեզ երբ եմ գալու. մոտ օրերս կորոշեմ. անհապաղ գործեր ունեմ, որ պիտի վերջացնեմ. հետո մի քիչ ցրտերը անցնեն (որովհետև մրսած եմ) և մեր այս դժբախտ երկրաշարժը դադարի, երկիրը հանգստանա, որ միամիտ սրտով կարողանամ գալ Ձեզ մոտ և հանգիստ սրտով ուրախանալ:

Հայտնում եք ինձ, որ բանաստեղծություններ եք գրում.— հոգով և եռանդով ուսումնասիրեցեք հայ և ուրիշ ազգերի մեծ բանաստեղծներին ու ժողովրդի երգերը

և, իհարկե, առանց նրանց կույր-կույր նմանվելու – դրեք ապրած, կրած զգացմունքներ, մտքեր, պատկերներ՝ ինքնուրույն և թարմ:

Կարծում եմ, չատ տխրած պիտի լինեք, որ այսքան ուշ պատասխանեցի Ձեր նամակին. ցավում եմ չատ, որ ակամա Ձեզ և ընկերներիդ վիշտ եմ պատճառել: Ես էլ պատանի եմ եղել, ես էլ նամակներ եմ գրել ինձնից մեծերին և աչքս ծով կտրած սպասել եմ պատասխանի, և տխրել եմ, որ ուշ են պատասխանել: Բայց դա անտարբերության հետևանք չէ, այլ խճճված գործերի, ժամանակի սղության:

Վախենամ գիրս չկարողանաք լավ կարդալ. չա՛տ փոքր է և մաշված: Ջերմագին բարևներ Ձեզ, Ձեր ընկերներին և ուսուցիչներին:

Միշտ Ձեր անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

118. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 23 հունվարի, Երևան

Սիրելի Սոֆի.

Վերջին գրած նամակներդ բոլորն էլ ստացել եմ: Դու պիտի աշխատես չուտ-չուտ գրել, տեղեկություններ տալով ձեր մասին: Ես չա՛տ զալմաղալի մեջ եմ. անթիվ նամակներ ունեմ գրելու, անթիվ մարդկանցից նամակներ եմ ստանում, որոնք տեղեկություններ են ուզում Հայաստանից. այստեղ գալիս էլ չատերին խոստացա գրել: Իսկ գալու օրվանից մինչև այսօր դեռ չեմ կարողացել ամփոփվել. հին աշխարհը իրեն մարդկանցով փոխվել է. նոր աշխարհ, նոր մարդիկ, նոր խոսքեր, նոր հայացքներ, նոր կարգեր: Պետք է ծանոթանալ, ուսումնասիրել, դիտել, կարդալ, լսել: Հարյուրավոր մարդիկ եմ տեսել, անհուն չափով տպավորություններ, պատմություններ:

Եվ վերջապես երկրաշարժը իր ծանր հետևանքներով: Քանդված է ջրաղացը, գյուղի տները – ամբողջ պիտի վերաշինել, չորս կողմս – կարիք, պիտի հասնել: Ռուբեն ախբոր մահից հետո, և իմ բոլոր եղբայրների մահից հետո ես եմ մնացել մեր տան մեծը, նահապետը. ծանր պարտականություններ ունիմ: Եվ միևնույն ժամանակ ամեն կողմից նյութ են ուզում. հիմարի պես, նյութերս թողի Վենետիկ, հիմա այս չփոթի մեջ, ե՛կ բաներ գրիր:

Այս բացիկը գրում եմ, որ մի քանի օր չահեմ, հետո քեզ երկար նամակ գրեմ: Այսօր-վաղը նամակներ կգրեմ Պ. Մակինցյանին, Գեղամին, Ադոնցին: Առայժմ համբույրներ, բարևներ քեզ և բոլորին:

Ավետիք Իսահակյան

Լուսանցքում՝
Մի չաբաթ է՝ Լենինական էի. նորից պիտի գնամ:

119. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 23 Հունվարի, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Հայր տեսչին և հայր Սահակին կհայտնես, որ պատիվ ունեցա ստանալու հեռագիրը և նամակը: Շուտով կգրեմ նրանց և վանքին:

Գալու օրիցս մինչև այսօր ազատ ժամանակ չունեցա: Երկրաշարժը, եղբորս մահը, և առհասարակ. բոլոր եղբայրներիս մահից հետո ես եմ մնացել մեր ընտանիքի մեծը, և բոլորի հոգացողությունը վրաս է իջել:

Շնորհակալություններս կհայտնես նույնպես հայր Հովսեփին և Խ. Գաբիկյանին իրենց քարտերի համար: Բոլորին ևս կպատասխանեմ, երբ որ մի քիչ ազատ ժամա-

նակ գանեմ: Հիմա մի ոտքս մեր քաղաքումն է, մյուս ոտքս՝ Երևան: Ջրաղացը և գյուղի տները պիտի վերաշինենք, կառավարության աջակցությամբ. այդ պրակտիկ բաները չա՜տ ժամանակ և եռանդ են խլում ինձնից: Մի տաս-քսան օրից հետո կազատվեմ և կսկսեմ իմ սիրած պարապմունքներս: Շա՜տ բան ունիմ դրելիք և ասելիք: Առողջությունս լավ է: Դու ևս քեզ լավ պահիր, չմրսես, չհիվանդանաս, և լուրջ աշխատիր:

Ջերմագին բարևներս բոլոր Հայրերին, ուսուցիչներիդ, ընկերներիդ և մեր բարեկամներին և Pagani*-ներին:*

Համբույրներով քո հայր Ավետիք

120. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 31 Հունվարի, Երևան

Սիրելի Սոֆի.

Նամակ ստացա Վիդենից և հ<այր> Սահակից: Շա՜տ ուրախացա և հանգստացա այդ մասին, որ Վիդենը առողջ է և լավ է սովորում:

Նիկողայոսից[1] նամակ ստացա. իրեն ասա, որ չուտով կպատասխանեմ:

Հա՛, ես զարմանում եմ, որ դրածս հոդվածի[2] այն տողը լավ չես հասկացել, և իմ էությանն ու մտքերիս հակառակ բացատրություն ես տվել: Գիշատիչ անասունը մեր մեջ, այսինքն մեր հոգում, դա մարդկային էգոիզմն է, որին պիտի գետին տապալե դիտումը, կրթությունը, զարդացումը հոգեկան և նյութական:

Այդպես եմ դրել, պետք է ուշադրությամբ կարդալ:

Նկարիչ Աղաջանյանը[3], քեռիդ, շատ է բարևում քեզ: Իմ կողմից կարոտով բարևներ բոլոր բարեկամներիս:

Համբույրներով քո Ավետիք

121. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՋԱՆԻՆ

1927, 5 փետրվարի, Երևան

Սիրելի Ռոմանոս.

Մորքուչրիս թոռի մասին է խնդիրս.— Հեղինե Մազմանյան, որ սովորում է քեզ մոտ:

Նրանց տնտեսական վիճակը տխուր է. հայրները մեռավ, և ամբողջ ընտանիքը մեծ քույրն է պահում, որ ծառայում է այստեղ, Հիվանդանոցում:

Ռոճիկը հազիվ է բավարարում իրենց. էլ ո՞ւր մնաց հոգալ ուսման ծախսերը:

Ուստի սրանով չատ խնդրում եմ քեզ — անես կարելին. առանց վարձատրության սովորի մոտդ, և մանավանդ որ ընդունակ աղջիկ է:

Եթե գիտնայի որ միջոցներ ունին, բնականաբար քեզ չէի դիմի:

Ամիսներ է, այստեղ եմ և դեռ հնարավորություն չունեցա Թիֆլիզ գալու: Սակայն մտադիր եմ մի ամսից հետո գալ Թիֆլիզ մի քանի ժամանակով:

Այստեղ ես ինձ տակավին լավ եմ զգում:

Ջերմ բարևներ և հարգանքներ սիրելի տիկնոջդ:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

122. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 16 փետրվարի, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Վաղուց է քեզնից նամակ չունիմ: Գլուխս այնքան խառն է, որ չեմ ամփոփվում Նիկոլային[1] և մեր բարեկամին[2] նամակներ գրելու: Միշտ զբաղված եմ ջրաղացի

գործերով: Նոր պլանով պիտի չինվի, տեխնիկները քննում են, տեղը դուցե փոխվի, որովհետև գյուղի տեղը պիտի փոխադրվի վերև: Մի ոտքս չարունակ Լենինական է. գարունը սկսվել է, և սկսվում է քաղաքի ու գյուղերի վերաշինումը: Մեծ աշխատանքներ են տեղի ունենալու:

Գեղամին Կոստ<անյանին> նամակ էի գրել. ստացա՞վ, ինչո՞ւ չի գրում:

Դու ոնց ես, ինչպե՞ս ես ապրում, սովորելդ[3] առաջ գնում է, թե ոչ: Առողջությունդ ո՞նց է: Վերջերս սիրտս վատ էր գործում Հայաստանի օդը բարձր է, ուժեղ սիրտ է պետք, իսկ ես Եվրոպայում սովորել էի ծովային օդին, ցած երկրների օդին: Հիմա լավ եմ:

Ազատ ժամերիս բանաստեղծություններիս և ազատ գրվածքներիս մի-մի փոքր հատոր եմ կազմում, մինչև մայիս կտպվի: Շտապում եմ Մոսկվա գնալ, բայց երկրաշարժը խանգարեց. մնաց մայիսին: Նամակդ այս հատցեով ղրկիր. կենտրոնական Հյուրանոց, Նալպանդյան փողոց:

Բարևներ բոլորին:

Համբույրներով քո Ավետիք Իսահակյան

123. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 27 փետրվարի, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Փետրվ<արի> 9-ի գրածդ նամակը երեկ ստացա: Լենինական էի գնացել, երեկ վերադարձա: Ջրաղացի գործերով. պետք է բոլորովին նորը չինենք, կառավարությունը փող պիտի տա երկար տարիներով և չնչին տոկոսով, այնպես որ մեր քաղաքը պիտի չինվի՝ ունենալով և կանալիզացիա, և ամեն տուն՝ ջուր. Հայաստանի ամե-

Նալավ քաղաքը պիտի դառնա մի 3-4 տարվա ընթացքում: Փող կա. Խ<որհրդային> Միությունը որոշել է տալ 16 միլիոն ռուբլի[1]: Թող սա ամբողջ աշխարհը լսե և ըմբռնե, թե հայ ժողովուրդը ի՛նչ մեծ և իրական բարեկամ ունի իր կռնակին կանգնած. «սարի պես մեջքիդ կանգնած յար ունես»: Ես չա՛տ զբաղված եմ: Այս ամսիս երկու գիրք[2] պիտի լույս ընծայեմ: Պողոսին ասա, որ մոտ օրերս իրեն թե՛ նամակ կգրեմ, թե՛ նյութ կուղարկեմ: Իմացիր, որ Պողոսը, թեև խելառ է, բայց մեր ամենաազիզ բարեկամն է, ընկերը՝ գաղափարի բուն իմաստով: Մոտ օրերս քեզ էլ, Վիգենին էլ, վանքին էլ և բոլորին էլ նամակներ կգրեմ: Տրամադրությունս հիմա լավ է. վշտերին հաղթեցի: Առողջ եմ: Ամեն տեղ ընդունված և սիրված: Գալու մասին դեռ չեմ մտածում, որովհետև գործեր ունեմ. երկիրը գարնանը պիտի տեսնեմ: Տխուր բաներ շատ կան, իհարկե, բայց ընդհանուր դումարը — չա՛տ լավ է և պայծառ: Խորհրդային կարգերին ուրիշ կարգեր չեն կարող փոխարինել, միակ հնարավոր լավ դրությունը սա՛ է, և հայերիս համար ամենանպաստավորը: Այս խոսքերս ամեն՝ տեղ կարող ես ասել և ամեն մարդու ցույց տալ: Գեղամին[3] ասա, որ իզուր է ինձնից վիրավորվել. ես կամեցել եմ իր բարեկամներին ուրախացնել իր վիճակով, իսկ ռոճիկի մասին որոչ բան չեմ ասել, որովհետև ինքս էլ չեմ իմացել: Մ. Սարյանից[4] մի նեղացիր<....> Այս Պողոսին ասա, թող կատաղի. վնաս չունի:

Համբույրներ ու բարևներ Պողոսին[5], Սեբարին, բալիկին, Ադոնցին[6], Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին[7], Դերբեդարյաններին:

Ջերմ բարևներ Ս. Փիրումյանին, Ե. Զուբարին, Ե. Քոչարին ու Գաբոյին[8]:

Համբույրներով քո Ավետիք

124. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1927, 1 մարտի, Երևան

Սիրելի Վիգեն ջան, ստացել եմ նամակդ, ինչպես և Հ. Սահակի նամակը: Վերջերս բացակա էի Երևանից, նոր եմ դարձել և չ՛ոտ զբաղված եմ, դրա համար էլ երկար չեմ կարող գրել. չուտով երկար նամակներ կգրեմ բոլորին (վանքին)[1]:

Ես զբաղված եմ հիմա երկու գիրք հրատարակելով և մեր ավերված ջրաղացի վերաշինության գործերով: Գարուն է արդեն, և ջրաղացը պիտի սկսել չինել նոր և գեղեցիկ կերպով. փողը կառավարությունն է տալիս: Մեր Շիրակը և քաղաքը Մոսկվայից ստանում է այս տարի 6 միլիոն րուբլի, ուրեմն հիմա կա մոտավորապես 8-9 միլիոն րուբլի փող, որ ասել է ավելի քան 100 միլիոն լիր իտալական: Մոսկվան տալու <է> նորից 10-11 միլիոն: Տեսնում ես, ինչպե՞ս է օգնում Ռուսիան իր դաշնակից փոքրիկ Հայաստանին: Քաղաքը պիտի չինվի նոր պլանով և բոլոր հարմարություններով. կլինի Հայաստանի ամենալավ քաղաքը: Աշխատանքները կտևեն մի երկու-երեք տարի: Իսկ մեր ջաղացքը մինչև ամառ պատրաստ կլինի:

Ես Մոսկվա չուտով չեմ կարող գնալ, գործեր շատ ունիմ: Նամակիս մեջ կդնեմ մի քանի պոստ-կարտեր. առհասարակ քիչ կան. այդպես բաներով դեռ չեն զբաղվում. զբաղվում են պրակտիկ գործերով. չինում են կանալներ, ֆաբրիկներ, ճանապարհներ, տներ, էլեկտրական կայաններ:

Բարևիր բոլոր հայրերին, մեր գաղութի բարեկամներին և ընկերներիդ, և բոլոր մեր ծանոթներին. հայ և իտալացի:

Համբույրներով քո հայր Ավետիք

Հասցես.

U.R.S.S., Armenie. Erivan, A.Issakian,

Կենտրոնական Հյուրանոց, Նալպանդյան փողոց:
Բոլորը ֆրանսերեն, սրանք հայերեն:

125. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927, 1 մարտի, Երևան>[1]

Տեսնում ես, Վիգեն ջան, որ պոստ-կարտերը լավ չեն, որովհետև Հայաստանը մինչև վերջերս մտահոգված է եղել տնտեսական դրությամբ ժողովրդի: Սովից և մահից ազատել մի ժողովուրդ: Այդ պատճառով էլ ուշք չի դարձրած գեղեցիկ պոստ-կարտեր չինելու: Հիմա նոր-նոր են սկսում այդ գործը:

126. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927, 1 մարտի, Երևան>[1]

Երևանում կան ուրիշ չա՛տ լավ մեծ չենքեր, հիվանդանոցներ, թանգարանը, գրադարանը, տրոպիկական ինստիտուտը և ուրիշ շատ մեծ չենքեր, բայց դեռ չկան կամ չգտա նրանց պոստ-քարտերը:

127. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927>[1], 5 ապրիլի, Երևան

Սիրելի Սոֆի.
Ստացա նամակդ, Վիգենի նկարով: Վիգենիս նամակ գրել եմ, զարմանում եմ, որ ինձ չի պատասխանում:

Պատկերը լավ տպավորություն է թողնում – առողջ և խելացի:

Մոտ օրերս երկար նամակ եմ գրելու Վենետիկ՝ վանքին: Զարմանում եմ, որ Վիգենին չեն թողնում Փարիզ գալ. այդ ի՞նչ է նշանակում. եթե Իտալիան մտածում է պատերազմի մտնել և պահում է երիտասարդներին, բայց ինչ իրավունք ունի Վիգենին պահելու, երբ նա իտալական հպատակ չէ: Այս մասին խոսիր ընկ. Ս. Փիրումյանի հետ և սովիետական քաղաքացի-հպատակի անցագիր հանիր նրա համար: Գուցե հարմար լինի դա, երբ Իտալիա մտնես, այնտեղ ձեռնարկես այդ բանը, որովհետև գուցե քեզ էլ չթողնեն մտնել Իտալիա, խորհրդային անցագրով, լավ է որ Հռոմից ստանաս, տեղն ու տեղը, Իտալիայում: Խորհրդակցիր Սիմոնիկի հետ: Կաշխատեմ քեզ փող ղրկել, գուցե դրքերիս համար (տպվելու է բանաստեղծություններիս մի ժողովածու, և մի քանի արձակ բաներ) կանխավճար ստանամ և ղրկեմ:

Փողի խնդիրը միշտ ամենադժվար խնդիրն է եղել, մանավանդ ներկայումս, աղքատ մեր երկրում: Շուրջդ կան միայն չքավորներ: Աբբասը դեռ նստած է, նրան եմ օգնում, Աքային եմ օգնում, տերտերին եմ օգնում, որ ընկած է պարալիչ վիճակում, և այլն, և այլն:

Այս նամակս անձամբ տար մեր բարեկամ Աբրահամին և խոսիր մեր դրության մասին, կամ Նիկոլայի հետ գնա:

Մոսկվա հիմա չեմ կարող գնալ. ժամանակ չկա, փող էլ չկա: Եվ ջաղացի հարցը կա: Ուզում ենք Թամարի և հարս խանումի մասերը գնել, որովհետև նրանց հետ անկարելի է գործ տեսնել. Թամարը լիրբ է, իսկ Սաթենիկը երկու տղա է որդեգրել. ուրեմն երկու նոր եղբայրներ, արի և նրանց հետ յոլա գնա: Նույնիսկ արժե թքել ջաղացի վրա, զահլեա գնացել է:

Եղբորդ՝ Սմբատին դուրսն եմ տեսել, տունը չեմ գնացել. կինը ռուս-հրեա է, գարշում եմ այդ տեսակ ամուսնությունից:

Վերջերս քեֆս էլի խարաբ եղավ: Կ. Միքայելյանը չի կարող գալ. թուլլտվություն չունի, կարծեմ Ֆրանսիան վիզա չի անում:

Բարևներ մեր բոլոր բարեկամներին:

Համբույրներով քո Ավետիք

128. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 3 մայիսի, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Ստացա երկու նամակդ էլ, և Վիգենիս նամակն էլ: Շա՛տ ուրախ եմ, որ լավ եք:

Զարմանում եմ, որ Վիգենի նամակը ետ են դարձրել: Պատճառն ի՞նչ է:

Ես էլ այն կարծիքին եմ, որ լավ կլինի Վիգենին բերես Փարիզ, թող տեսնի, որ տպավորվի: Միայն վերադարձը դեպի Վենետիկ պիտի ապահովվի, այնպես չլինի, որ հետո չթողնեն վերադառնա և զրկվի դպրոցից, մանավանդ որ վերջին տարին է:

Իսկ եթե չես բերելու Փարիզ, այն ժամանակ տար Հռոմ, Ֆլորենցիա, գոնե այդ երկու քաղաքը տեսնի: Ես մի չաբաթ հետո գնում եմ Թիֆլիզ, գրքերս այնտեղ պիտի տպվեն, և փողն էլ այնտեղ պիտի ստանամ, այնտեղից քեզ փող կտեղափոխեմ. կարծում եմ, որ առնվազը մի 200 դոլլար կուղարկեմ: Թիֆլիզ մնալու եմ մի չաբաթ կամ 10 օր: Ամառը Հայաստանում թափառելու եմ, և տպավորություններս գրելու, ձեռքս փող կանցնի: Իսկ աշնանը գնալու եմ Մոսկվա: Այդ ժամանակ էլ կորոշվի Եվրոպա գալուս հարցը:

Ջրաղացով գրեթե այլևս չեմ հետաքրքրվում: Շննոց է դառել. ուզում ենք, որ Գեղամը, Աբասը և ես գնենք

ջրաղացը, բայց Սաթենիկն ու Թամարը չեն համաձայնում. այսպես էլ մնում է գործը: Իսկ նրանց հետ միասին՝ անկարելի է գործ բռնել և օգտվել: Զահլես դնաց դրանցից. զզվելի բան է: Աբասը դեռ նստած է, երևի կաքսորեն Ռուսաստան: Ոչինչ չեմ կարող անել:

Մոտ օրերս մեր տերտերը[1] մեռավ. ազատվեց Թշվառ վիճակից. խիղճս հանգիստ է, որ վերջին ամիսները օգնության հասա: Գրեթե երեսի վրա էր մնացել: Խեղճ աղջիկները՝ Հեղինեն, Դչխունը[2] ազատվեցին. անտանելի բան էր պարալիչ մարդուն պահելը, դրա հետ միասին աղքատությունը... Գիտե՞ս, որ մեռավ և խեղճ Ռիպա Մամյանը. չա՛տ ցավալի էր, երիտասարդ հասակում: Պլևրիտից մեռավ և՛ Հ. Թումանյանի աղջիկը, Անուշը[3], հենց Զատկի կիրակի օրը:

Այդպիսի ցավալի բաներ:

Գրում ես Զ<ապել> Եսայանի մասին, թե նա ասում է, որ Հայաստանը արքայություն է: Սխալ մեթոդ է այդ. ոչ ոքի էլ չի կարող խաբել, և դրանով վնասում է ժողովրդին: Վերքերը ծածկելով չեն բժշկում հիվանդին, այլ ցույց տալով: Հայաստանը վերքերով ծածկված հիվանդ է, բայց սրտացավ բժիշկների ձեռքին է դանվում նա, որ օր ու գիշեր աշխատում են բժշկել ծանր վիրավորին, և եթե խաղաղությունը տևե, մի քանի տարիների ընթացքում ոտքի կկանգնի նա, որովհետև չատ են աշխատում, և առողջ հիմքերի վրա է դրված գործը:

Նամակներիդ մեջ փիլիսոփայություն մի՛ անիր. դրի՛ր ինձ միայն քո և Վիգենի մասին, բարեկամների մասին և դաղութի մեջ անց ու դարձի: Ինձ միայն փաստեր և դեպքեր են պետք: Դատողություններդ մի կողմ թո՛ղ: Պ. Մակինցյանը դեռ Երևան չեկավ, բայց տիկինը եկավ և չատ բաներ պատմեց քեզնից:

Դրքերը, պատկերները դեռ չեմ ստացել:

Ներփակ պոստ-կարտերը ուղարկիր Վիգենին:

Գրում ես, որ ասում են, թե այստեղ ես ուրախ ու քեֆով կյանք եմ անցնում, իսկ նամակները տխուր եմ գրում: Ճիշտ է և ճիշտ չէ: Երբ լինում եմ ընկերների և հասարակության մեջ՝ բնական է, որ ուրախ եմ լինում, բայց երբ մենակ եմ լինում, իհարկե, տխուր: Այդպես եմ եղել միշտ, այդպես էի և՛ Վենետիկում, և՛ ամեն տեղ: Տխուր լինելու շատ պատճառ ունիմ, բավական է՝ հենց մեր ընտանիքին հասած աղետները:

Էլ ի՞նչ գրեմ. բարևներ Գեղամին, կնոջը, Նիկոլային, կնոջը, Զուբարներին, Փիրումյաններին, Տեր-Օհանյաններին, Խաչատրյաններին, Պապաջանյաններին, Լիզային, Էլիզին, Զավենին, մի խոսքով բոլոր բարեկամներին և հարցնողներին:

Համբույրներով՝ Ավետիք

129. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 12 մայիսի, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Վաղուց է՝ քեզնից նամակ չունիմ, թեև մաման միշտ քո նամակները ուղարկում է ինձ:

Լսեցի, որ լավ ես սովորում. շա՛տ և շա՛տ ուրախ եմ:

Լավ եղիր, առողջ եղիր:

Ես շա՛տ զբաղված եմ զանազան բաներով. այս երկու օրս էլ Թիֆլիզ եմ գնալու մի քանի օրով. հետո շա՛տ ժամանակ կունենամ, և ընդարձակ նամակներ կգրեմ վանքի վրա, հայր սուրբերին:

Մամայիդ գրեցի, որ քեզ Փարիզ տանի, մի քիչ հանգստանաս, Փարիզը տեսնես, ֆրանսերենդ նորոգես:

Հիմա քննություններդ մոտենում են. աչխատիր դասարանդ փոխես, և կմնա մի տարի: Մինչև այդ ես կգամ և կմտածենք քեզ ո՛ւր դնել. ինչ սովորես և որտեղ:

Ես լավ եմ, առողջ եմ:

Շատ կարոտով և հարգանքի բարևներ հայր տեսչին, հայր Աթոռակալին, հայր Գաբրիելին, հայր Հովսեփին, Սահակին և բոլոր հայրերին. և ուսուցիչներիդ և ընկերներիդ:

Համբույրներով քո՝ Ավետիք

A.Issakian, Erevan, Armenia (URSS)
Կենտրոնական Հյուրանոց.
Նալբանդյան փողոց

130. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1927, 17 մայիսի, Երևան

Կարեն ջան.

Այսօր ստացա նամակդ, չնորհակալություն, որ ինձ չես մոռացել: Վաղը-մյուս օրը գնում եմ Թիֆլիզ. դրքերս այնտեղ են տպվելու. վերադարձիցս հետո քեզ երկար նամակ կգրեմ, առայժմ ընդունիր կարոտի բարևներս և համբույրներս:

Միշտ քո Ավետ<իք> Իսահակյան

131. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1927, 26 մայիսի>[1], Թիֆլիզ

Սիրելի Սոֆի.

5 օր է Թիֆլիզ եմ, վաղը դառնում եմ Երևան: Եկել էի դրքերս այստեղ տպելու համար[2]. բանաստեղծություններ և արձակներ:

Հիմա չա՛տ պետք եղավ իմ «Աբու Մահարին»[3], բայց Ամերիկայի հրատարակությունը. պետք է հրատարակենք այստեղ: Այնպես որ մի կերպ ձեռք պիտի բերես, չա՛տ չուտով, առանց Ամերիկա գրելու և ուղարկես. կամ եթե գտար, գուցե արտագրես և ղրկես: Կհանձնես Ս. Փիրումյանին[4], որ նա ուղարկե Պ. Մակինցյանի հասցեով. կառավարության միջոցով, որ տեղ հասնի:

Այսօր-վաղը կղրկեմ քեզ 300 րուբլի. տեղափոխելու միջոցի մասին եմ մտածում. դժվար բան է հիմա. կարելի է միայն 100-ական ղրկել. ամիսը:

Ես լավ եմ, բարեւի՛ր բոլորին, սարսափելի չոգեր են անում այստեղ:

Համբույրներով քո Ավետիք

132. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

.<1927>[1], 8 Հունիսի, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Նամակդ հիմա ստացա: Նիկոլային մանրամասն նամակ եմ գրում, որ վաղը կվերջացնեմ: Զարմանում եմ, որ նամակս չստացար: Թիֆլիզից բաց քարտ ղրկեցի, որ Աբու Մահարիս, Ամերիկայի տիպը, արտագրես ու ղրկես Ս. Փիրումյանի միջոցով: Հիշո՞ւմ ես, տիկին Նինայի (Բեկլարյան-Զավրյան) մոտ կա. ես տվի:

Ամսիս 1-ին քեզ 50 դոլլար ղրկեցի: Իրավունք չկա ավելին ղրկելու. ամսական միայն 100 ռուբլի: Ամսական այդքան կարող եմ ղրկել: Ստացա Մակինցյանից գրքերն ու նկարները և տետրակները, բայց Հեղուշի մոր կապոցը ես չեմ ստացել. և չեմ էլ լսել նրա մասին: Քոչարի պատկերները ծախելու մասին կհոգամ:

Կարծեմ, քեզ գրել էի մեր տերտերի մահը, նույնպես Անուշ Թումանյանի և Ռիպա Մամյանի մահերը: Մեր Աբասը[2] աքսորվեց: Աքան այստեղ է և խնամքիս տակ: Նրանք վրաս ամսական 30-35 ռուբլի են նստում: Ամսիս վերջին գնում եմ Ղարաբաղ և Զանգեզուր. Շուշի, Գորիս, Տաթև, Մեղրի, հանքերը: Վիգենին նամակ եմ գրել, բայց պատասխան չունիմ:

Կարոտով բարևներ բոլոր մեր բարեկամներին:

Համբույրներով քո Ավետիք

133. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1927, 10 Հունիսի, Երևան

Վիգեն ջան, քեզ նամակ էի գրել, բայց պատասխան չառա: Մայրիկիդ նամակ ստանում եմ և նույնպես նրան գրած նամակներդ: Շատ ուրախ եմ, որ առողջ ես և լավ ես սովորում:

Ուրախ եմ, որ Փարիզ պիտի երթաս. լավ մանարի, դիտիր Փարիզը, մուզեյները, նշանավոր շենքերը և կարդա ընտիր, բան սովորեցնող գրքեր: Անգլերենի մասին լուրջ վերաբերվիր:

Երեկ նամակ գրեցի վանքը. Հայր Աթոռակալի[1] վրա. իմացիր, ստացել են, թե ոչ: Իտալիա նամակ, ասում են, չի հասնում: Ֆրանսիա ազատ գնում-գալիս են նամակները: Մայրիկիդ հասցեով քեզ համար ուղարկել էի պոստ-քարտեր[2], Հայաստանի նկարներ. գրում է, որ դեռ չի ստացել:

Համբույրներ քեզ և ջերմ բարևներ հայրերին, ուսուցիչներիդ և ընկերներիդ:

Քո Ավետիք Իսահակյան

134. ԼՈՒՍԻԿԻՆ

1927, 21 Հունիսի, Օշական

Սիրելի Լուսիկ.

Մարդ այնքան մեծ է, ինչքան ընդունակ է ուրիշներին սիրելու: Երբ սիրում ես քո ընկերին, ավելի մեծ ես, քան եթե սիրեիր միայն քեզ: Երբ սիրում ես մի ամբողջ ժողովրդի, սիրտդ մեծանում է նրա չափ: Ողջ մարդկությունը սիրես — մարդկության չափ մեծ ես:

Սիրի՛ր — և կմեծանա, կխորանա և կհարստանա քո սիրտն ու կյանքը և կդառնա քո և ուրիշների երջանկության ակն-աղբյուր:

Ավետիք Իսահակյան

21.VI.1927
Օշական

135. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 9 Հուլիսի, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա նամակներդ. Սիմոն Փիրումյանը եկել է, բայց դեռ Երևան չէ. մոտ օրերս կգա և կբերե գիրքը[1]:

Հեղուչի կապոցի մասին կգրեմ Մակինցյանին: Պատկերների գործը կուշանա. ամառ է, բացակայում են:

Երեկ տեղափոխեցի քեզ 30 դոլլար (60 րուբ.): Հիմա այդքան է թույլ տրվում ամսական Միությունից փող դուրս ուղարկել: Այժմ այդպես է, գուցե ապագայում փոխվի:

Մակինցյանը չատ և չա՛տ չափազանցրել է՝ ասելով թե գրքիս այդքան կվճարեն. համարյա նրա քառորդը ոչ ա-

վելի: Այդքան վճարել են Թումանյանին՝ ընտանիքին: Նրա ասածներից մեծ մասը քամի է, ինչպես ինքն է:

Ես մոտ օրերս կթողնեմ Երևանը, կգնամ Լենինական. գործեր ունեմ. հետո՝ եթե ժամանակ մնա՝ Ղարաբաղ-Զանգեզուր. օգոստոս ամսին: Այս երկու օրս ընդարձակ նամակ կգրեմ՝ թե ոնց վարվես՝ Փարիզ թե Վենետիկ գնաս:

Վիգենիս չա՞տ համբույրներ: Բարևներ բոլորին:

Գրի՛ր այս հասցեով՝ Leninakan
Լենինական, փողոց 27, տուն 73, Ավ. Իսահակյանին:
Համբույրներով՝ քո Ա. Իսահակյան

136. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 21 հուլիսի, Երևան

Սիրելի Սոֆիկ.

Ստացա նամակդ, ուր գրում ես թե գնում ես Զավենի[1] մոտ: Շատ բարևներ նրանց: Ես դեռ Երևանից չեմ մեկնել: Եղա միայն Գեղարդ-Գառնի, Աշտարակ և շրջաններըը, Ծաղկաձոր և այլն: Ղարաբաղ և Զանգեզուր՝ ավելի ուշ: Հիմա պիտի գնամ Լենինական, ջրաղացի հարցը դեռ չի լուծված: Երևի մի 15 օր կմնամ այնտեղ:

Ես սպասում եմ նամակիդ՝ Վիգենիս Փարիզ հասնելու մասին հայտնող, որ հեռանամ Երևանից: Նամակներդ կղրկես Լենինական. իմ հասցեով. Լենինական, փողոց 27, տուն 73:

Նիկոլային[2] ասա, որ մի մարդ ունի Զոհրապյանի Ասուպածաչունչը[3] մի հատորի մեջ. ծախում է 100 ռուբլու՝ ճամբու ծախսը իր վրա: Եթե ուզում է գնեմ, փողը քեզ վճարի: Ես այստեղ կվճարեմ, բայց կարծեմ թանգ է:

Մոտ օրերս ղրկեցի քեզ 30 դոլլար: Ս<իմոն> Փիրումյանի հետ խոսեցի, կարելի է ղրկել 50 դոլլար: «Աբու-Լալան» դեռ չեմ ստացել. Թիֆլիզ էր թողել:

Քոչարի նկարների մասին՝ աշնանը: Մակինցյանը գալու է Կ. Պոլիս. այդտեղից կվերջացնես քո գործը նրա հետ: Ես գլուխ չունիմ նրա հետ:

Համբույրներ քեզ և Վիգենին, և բարևներ բոլորին:

Քո՝ Ավետիք Իսահակյան

137. ՍՈՓՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 3 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջապես ստացա ձեր նամակները: Երկար ժամանակ է, նամակ չունեի և չա՛տ էի տանջվում: Դրա համար էլ հեռագրներ տվի: Քո պատասխանը հեռագրով մինչև օրս տակավին չստացա, բայց սիրելի Գեղամը[1] հեռագրեց, և վերջ ի վերջո հանգստացա:

Ես թեև Երևան էի, բայց չարունակ, կարճ միջոցներով թափառում էի՝ երկիրը և ժողովուրդը տեսնելու համար: Հիմա այլևս Երևանումն եմ և սկսում եմ պարապել:

Ջաղացի գործը չա՛տ խառն է. մինչև օրս մի քար քարի վրա չենք դրել. ուզում ենք հարցը պարզել: Ես, Գեղամը և Աբասը (նրա կողմից, իհարկե) ուզում ենք Սաթենիկից և Թամարից ջաղացը գնել. նրանք չէին ուզում ծախել. մենք առաջարկում էինք, որ կամ նրանք ծախեն իրենց բաժինները՝ մենք առնենք, կամ մենք ծախենք, իրենք առնեն: Ջէին ուզում ո՛չ առնել, ոչ ծախել. վերջապես գործը ընկավ դատարան, որ երկար քննությունից և վեճերից հետո՝ տրամադրություն ստեղծվեց մեզ վրա թողնելու, բայց դեռ վերջացած չէ: Հակառակ դեպքում

իմաստ չունի ջաղացը չինելու այս պայմանների մեջ, ուր կան անթիվ տերեր, որոնք իրարից քաշում են չարունակ, և կռիվների անսպառ աղբյուր է: Ի՞նչ միտք ունի պարտքի տակ ընկնել, ջաղաց չինել և չօգտվել:

Մեր վրա մնալու և մեր ջանքերով չինելու դեպքում տարիներով մենք ի վիճակի չենք օգտվելու, որովհետև պարտքերը պիտի տանք: Բայց հետո, կալվածք է, կմնա Վիգենի համար:

Մերոնք էլ հիմա մտադիր են Ամերիկա գնալու, Կոլյան կանչում է նրանց: Եթե գնան, չգիտեմ ի՞նչ է լինելու ջաղացի ապագան և նրա հարցը:

Գրում ես մի շարք ծանր հարցերի մասին. — Վիգենի բժշկությունը, դպրոցի հարցը, ստիպենդիայի մասին, իմ վերադարձի մասին և այլն:

Ամենից առաջ չա՛տ ուրախ եմ, որ Վիգենը բժշկվում է. տա՛ աստված, որ հաջողվի: Օպերացիան դարդակ բան է, պիտի անմիջապես անել, չսպասել իմ վերադարձին, որ կարող է ուշանալ: Իսկ ստիպենդիան. պիտի խնդրես Նիկալային, որ մեր բարեկամին հասկացնե, որ ես այստեղ ոսկու հանք չեմ գտել, որ վերաս պարտք կա եղբորս կնոջն ու որդուն օգնել, իսկ ձեզ կարող եմ ուղարկել ամսական 30 դոլլար. այնպես որ նա գոնյա պիտի բարի լինի հանձն առնել Վիգենի կրթության մասին, մի քանի տարի, վճարելով այնքան, որքան նա հիմա տալիս է քեզ, նախկինն տվածի կեսը, ոչ թե դեկտեմբերին վերջացնե, այլ չարունակե. չա՛տ եմ խնդրում այդ ձևով խնդիրը լուծել: Եթե Վիգենի ուսման փողը լինի, մնացածը դյուրին է, ես կլրացնեմ: Ուրեմն թող Վիգենին առնի իր ուսանողների թվի մեջ: Այս մասին խնդրում եմ և՛ Նիկալային:

Գալով Մուրադ-Ռաֆայելյան դպրոցի վճարին, դա հեշտ է, մաս-մաս կարելի է տալ. կհամաձայնեն: Իսկ Վիգենը անպատճառ վերադառնա Վենետիկ, իր դպրոցը. մի տարի է մնացել. ափսոս է, որ մի տարվա համար իր բոլոր

աշխատանքները ջուրն ընկնին. մի տարին ի՛նչ է, որ մարդ չդիմանա, մի վկայական ձեռք բերե, հետո ո՞ւր ուզում է՝ թող մտնի, ի՞նչ ուզում է թող սովորի: Նա մեծ տղա է արդեն և պիտի լուրջ մտածե իր ապագայի մասին, իր հացի մասին, եթե ուսում չառնի ի՛նչ պիտի լինի նրա դիրքը հասարակութեան մեջ: Վերաքննութիւն ունի, թո՛ղ աշխատի: Վերաքննութեան պատճառով հո՞ մարդ չպիտի զրկվի ուսումից: Ամո՛թ է:

Իսկ քո Փարիզ կամ Վենետիկ մնալու կամ գնալու մասին, ես ի՞նչ կարող եմ ասել. դու գիտես, որտեղ որ քեզ լավ ես զգում, և մանավանդ, որտեղ որ կարող ես մի քիչ փող չահել, այնտեղ էլ մնա: Իմ կարծիքով Փարիզ ավելի լավ է: Ինչ վերաբերում է իմ Եվրոպա վերադարձին, դրա մասին մտածում եմ. նախ, որ ձեզ տեսնեմ և վերջնականապես որոշեմ, կարգի դնեմ ամեն բան, հետո ձեռագրներս և գրքերս հավաքեմ ու բերեմ Հայաստան: Բայց գալս իսկույն չի հաջողվի. նախ, որ վիզաների հարց կա. այստեղից արգելք չկա, միայն կուշանա, բայց Ֆրանսիան էլ պիտի վիզա տա. այդ մասին դու պիտի աշխատես՝ վիզա առնել, իսկ եթե Իտալիա ես գնում, իտալական վիզա պիտի ձեռք բերես:

Ես կարող եմ գալ Եվրոպա կարճ ժամանակի համար. ես չեմ ուզում Եվրոպայում ապրել, որովհետև թե՛ հոգնած եմ եվրոպական գաղթականի կյանքից և թե ի՞նչ միտք հայրենիքից միշտ հեռու լինել: Ես հայրենիքում չա՛տ հարգված եմ ամեն կողմից. երկրի իշխանութիւնները ինձ սիրում են ու հարգում. ես չեմ կարող այդ կապերը խզել: Բացի այդ, օրեցօր սիրտս կապվում է երկրի և խորհրդային կարգերի հետ, և տեսնում եմ, որ այստեղ, Հայաստանում միայն կարող եմ ինձ բախտավոր զգալ և նպաստակահարմար: Ինչքան էլ որ խորհրդային իշխանութիւնը բացասական կողմեր ունենա (և ունի անշուշտ), բայց և այնպես նրա դրական կողմերը գերակշ-

ռում են, և մեր երկրի ապագան այս կարդերի մեջ է՝ ապահովված և լավ: Երկրի, այս ավերված, թալանված և բնությունից աղքատ ու չոր երկրում, ամեն անկյունում տեսնում ես նոր իշխանության ստեղծագործ չունչը. անհուն եռանդ է թափվում երկիրը բարձրացնելու տնտեսապես. ջրային աշխատանքները չտեսնված դործեր են նույնիսկ ամբողջ Միության մեջ, քանի կանալներ են չինել և չինում են, հիդրոկայաններ, որոնց վրա 10-13 միլիոն փող է ծախսվում: Եվ ուրիշ բազմաթիվ չենքեր – հիվանդանոց, դպրոց, համալսարանի չենքեր, թատրոն, կայարաններ, ճանապարհներ, դործարաններ և ուրիշ շատ բաներ: Եվ այս ամենը տեսնելով, հրճվում է հոդիդ, և համոզվում ես, որ ներկա իրավակարդը ամենանպաստավորն է մեզ համար, և ուրիշ մի պետականություն չի կարող և միտք էլ չունի փոխարինելու սրան:

Հայերիս գլխին թափված պարհուրանքներից հետո ներկա դրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի չտալ և պիտի պաշտպանել:

Ես այսպես եմ դդում ու մտածում, և այսպես լինելով՝ ես չեմ կարող երկար ժամանակ հետու լինել Հայաստանից: Եվ ուր էլ որ լինեմ, պիտի պաշտպանեմ այն, լավին լավ ասելով, վատին՝ վատ, ձգտելով իմ ներկայությամբ և իմ խոսքով վատը չեզոքացնել, ուղղել սխալները:

Ես խնդրում եմ շատ բաների ականջ մի կախիր. ո՛չ հավատ ընծայե չափազանց դովեստներին, ո՛չ էլ հավատա չարամիտ քննադատներին. ճշմարտությունը այն է, որ երկրի բախտը ուղիղ ճանապարհի վրա է, և ապագան մխիթարիչ: 5-10 տարվա մեջ չէր կարող մի երեսի վրա լքած երկիր Զվիցարիա դառնալ, բայց այդ կարճ միջոցում, դու հիմա կարող ես երկրի մի ծայրից մյուս ծայրը դնալ, լեռները բարձրանալ, լինել թունքերի և քրդերի մեջ – և ամեն տեղ ապահով, անվտանգ. սա մի երազ է, որ առաջ միայն գիշերները քնի մեջ կարող էիր ունենալ:

Դու կարո՞ղ էիր երևակայել, որ Սևանի վրա ամեն օր նավագնացություն, չոգենավակներ են բոլոր ափերը: Հիմա փաստ է:

Նամակս վերջացնում եմ:

Ջերմ բարևիր Նիկալային, Գաբոյին, Զուբարին ու կնոջը, ընկեր Դանուշին[2], Գեղամին և կնոջը, հայտնելով բոլորին և վերջիններին սրտագին շնորհակալություններս: Մակինցյանը, կարծեմ, դեռ Կ. Պոլիս չի գնացել. Աբասթուման պիտի լինի: Հեղուշի կապոցի մասին լուր չունիմ:

Երկու գիրք եմ տպում. մեկը շուտով պատրաստ կլինի, մյուսը կտպվի աշնանը: Նրանցից շա՛տ փող ստանալիք չունիմ, որովհետև արտատպումներ են. ստանալու եմ 1200 ռուբլի: Ա. Մահարին[3] ստացել եմ:

Համբույրներ և կարոտալի բարևներ քեզ և Վիգենին:

Ավետիք

138. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 8 սեպտեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Մի քանի օր առաջ մի ապահովված նամակ գրեցի Ջեզ: Ինչպես հայտնի է՝ ես հիմա Երևանումն եմ. առողջությունս լավ է: Սկսել եմ աշխատել: Շուտով փող կղրկեմ 30 դոլար: Առաջին գիրքս, կարծեմ, վերջացել է. շուտով սկսվելու է երկրորդ գիրքը:

Հարցնում ես թե Ե. Քոչարի իմ նկարից[1] պոստ-կարտ չինեն թե ոչ: Ջգիտեմ: Այստեղ նկարին էնքան չհավանեցին. ասում են, որ ինձ ծեր է դուրս բերել: Իմիջիայլոց. այս երկու օրս Քոչարի ուղարկած նկարները կներկայացնեմ մուզեյին:

Այդ ինչ քիմիական դպրոցի մասին է որ դրել էիր և Վիգենը ուզում է մտնել. այնինչ առաջ դրել էիր, թե նա ուզում է բժշկութիւն սովորի Սորբոնում: Դա ինչ փոփոխական տղա է: Վերջիվերջո չստացա ե. Զուբարի[2] հեռագիրը, ինչ եղավ, չգիտեմ:

Աչխենի[3] մոտից եմ գրում (Թումանյան). շատ բարևում է քեզ: Համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք

139. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

<1927, սեպտեմբեր, Երևան>[1]

Սիրելի Վիգեն ջան.

Շատ ուրախ եմ, որ գտնվում ես Փարիզում՝ մայրիկիդ մոտ և մանավանդ բժշկվում ես: Մայրիկդ դրել է, որ [չեմ] չես ուզում Վենետիկ վերադառնալ: Այս չա՜տ մեծ ցավ է պատճառում ինձ: Մի տարի է մնացել ավարտելու համար, ի՜նչ խելք այնքան նեղութիւն կրել, տարիներ սովորել, հետո կիսատ թողնել: Լա՛վ մտածիր: Քեզ հարկավոր է մի վկայական, լավ-վատ դա ձեռք բեր, նրանից հետո ի՞նչ ուզում ես սովորիր, ո՞ւր ուզում ես եղիր: Եթե հակառակն անես, շատ կվնասվես, կզղջաս, բայց ուշ կլինի: Ուրիշներին մի լսիր, դու գլուխդ կախիր, դասերդ սովորիր, մինչև ավարտես. քեզ ի՞նչ՝ թե դպրոցը այնքան էլ լավը չէ. քեզ համար միևնույն է, վերջին տարիդ է: Իսկ ես հիմա կարծում եմ, որ այնքան էլ վատ դպրոց չէ, սովորեցնում է, ինչ որ պէտք է. մնացածը դու ինքդ կլրացնես և կուղղես համալսարանում:

Լսի՛ր, Վիգի ջան, գնա նորից Վենետիկ, վերջացրու այդ տարին էլ և կհամոզվես, որ չես փոշմանի, լավ դործ արած կլինես:

Դժվարը դպրոց ավարտելն է. համալսարանը դյուրին է: Ուժ, կամք, եռանդ գործ դի՛ր և ամեն բան կհաջողվի: Քաջ եղի՛ր և միշտ անվախ: Մտածի՛ր ապագայիդ մասին: Հայրդ ու մայրդ միշտ ողջ չեն լինի, դու ինքդ պիտի մտածես քո ապագայի մասին: Ամեն մարդ ինքն է իր բախտը չինողը: Քանի դեռ չատ ջահել ես, աշխատիր քեզ լավ ճանապարհի վրա դնել. սովորիր, աշխատիր, դիմացիր... քեզ համար ոչինչ չենք խնայում, ինչ որ մեր ձեռքիցը գա: Ծնողներդ չունևոր մարդիկ են, անում են և արել են, ինչ որ կարողացել են:

Շատ համբույրներով քո հայրդ՝ Ավետիք

140. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 3 Հոկտ<եմբերի>, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա հիմա նամակդ: Վալիսով ուղարկածդ չեմ ստացել: Վիգենը ի՞նչ կոլեժ է մտնելու. քննութիյուն պահանջում են, ե՞րբ է ավարտելու: Վախենամ սխալ քայլ լինի արածը: Աշխատիր որ անգլիերեն սովորի և լավ սովորի: Այդ ի՞նչ օպերացիայի մասին ես գրում, որ պետք է Վիգենին: Մի՞թե Պադովայում ունեցած օպերացիան վերջնականապես չբուժեց. ինչո՞ւ այդ մասին որոշ չես գրել: Եթե անհրաժեշտ է, անել տուր, իմ գալուս մի սպասիր. այդ կարող է ուշանալ, ամիսների հարց է. իսկ օպերացիան քանի հնաց<ն>ես, այնքան դժվար է: Ինձ մի սպասիր դրա համար:

Այս օրերս կգրեմ ընկ. Դանուշին, բայց եթե Նիկալայը գլուխ բերե Վիգենի ստիպենդիայի հարցը մի կերպ, ավելի լավ կլինի, ավելի որոշ և հաստատուն: Ես կգրեմ և Նիկոլային: Այսօր հյուրանոցը թողնում եմ, ուրիշ սենյակ ստացա. շատ լավն է. Սիսակի[1] սենյակին կից:

Համբույրներով Ձեր Ավ. Իսահակյան

141. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1927, 3 Հոկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի, սա առաջին բաց նամակիս չարունակությունն է: Նոր սենյակ ստացա, չա՛տ լավ տեղ է. մաքուր օդ, Մասիսի դիմացը. Սիսակի հետ ենք ապրելու: Հասցե՝ Աբովյան փողոց, 87, անունս:

Մոռացա գրել, որ սեպ<տեմբերի> 24-ին քեզ տեղափոխեցի 40 դոլլար: Ինձ գրի՛ր, թե ամսական ի՛նչ եք ծախսում, ինչքան ես չահում. ես ամենաշատը կարող եմ ամսական 80-100 րուբլի ուղարկել. ավելին անկարող եմ: Ուրիշ բան, եթե ստիպենդիան հաջողի, կթեթևանա բանը:

Վիգենին պիտի հասկացնես, որ լավ պիտի աշխատե ու բան սովորի, որովհետև հիմա, աշխարհի ներկա պայմաններում չա՛տ դժվար բան է եղել գլուխ պահելը: Թող անգլիերեն լավ սովորի. հետո, երբ ժամանակ ունենա, նույնպես գերմաներեն, իսկ ռուսերեն այստեղ կսովորի: Առայժմ այսքան:

Ջերմ բարևներ բոլորին, և համբույրներով

Ջեր Ավ. Իսահակյան

142. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1927>[1], 29 Հոկտեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Երեկ և առաջ<ին> օրը ստացա Ձեղնից երկու նամակներ. բայց Ձեր ուղարկած երկու վալիս-նամակները դեռ չեմ ստացել:

Շա՛տ ուրախացա, որ ստացա Վիգենի դպրոց ընդունվելու լուրը: Վիգեն ջան, չա՛տ լավ սովորիր, որ ամոթով չմնաս:

*Ես երեկ խնդրեցի ընկեր Մռավյանին որ Վիգենին թո-
չակավորների մեջ առնի. խոստացավ կատարել խնդիրս.
այդ մասին կհայտնե ուր որ պետք է:*

*Երեկ էլ Սիսակը նամակ գրեց ընկեր Դանուշին՝ Վիգե-
նի մասին:*

Այս օրերս, նոյեմբ<երի> սկզբին փող կուղարկեմ:

*Իմ գալս այսպես չուտով չի կատարվի. գործեր կան որ
պիտի կարգադրվի, հետո միայն կարող եմ գալ:*

*Առայժմ դրա մասին չեմ կարող հայտնել: Նոյեմբերին
կտպվի գիրքս և կղրկեմ:*

*Կարեն Միքայելյանի առողջությունը հիմա լավ է.
մոտ օրերս դուրս կգա հիվանդանոցից:*

*Շտապ եմ գրում. մի վարչության միջից եմ գրում. հե-
տո ավելի երկար եմ գրում:*

*Կարոտով բարևներ Նիկոլային, Գաբոյին: Նույնպես
Տեր-Օհանյաններին:*

Շատ համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք

143. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 4 նոյեմբերի, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

*Ամսուս 2-ին տեղափոխեցի ձեզ վրա քառասուն (40)
դոլլար:*

*Գրեցեք Վիգենը ինչպե՞ս տեղավորվեց: Դպրոցը տա-
նը մոտիկ է, սիրով է գնում դպրոց թե՞ ոչ. եթե դժվար է,
թող վերադառնա Վենետիկ:*

*Մոտավորապես ամսական ինչքան պետք է երկուսիդ:
Վիգենի ծախսերը որքան են: Պարզ չէիր գրել. կարծեմ
500 ֆրանկ: Ընկ. Մռավյանին խնդրեցի, որ գլուխ բերե
ստիպենդիան:*

Նույնպես գրած է ընկ. Դանուշին: Այս բոլոր դիմումներից մի բան դուրս կգա:

Տրամադրությունս չատ վատ է. տան կողմից ոչ <մի> մխիթարություն չկա. Աբասը Մոսկվա է. տեսնենք ի՞նչ պիտի լինի:

Կարոտալի համբույրներ՝ Ձեր Ավետիք

Մխիթարությունս Վիգենս է:

4 նոյեմբեր 1927, Երևան

144. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1927, 10 նոյեմբերի, Երևան>[1]

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Հոկտեմբ<երի> 26-ի նամակդ ստացա. ուրախ եմ, որ ողջ-առողջ եք: Բախտավոր եմ, որ Վիգենը իրեն լավ է զգում, լավ սովորում է և ուշադիր է: Մանավանդ որ ուշադիր միտքն է պահում խրատներս ծխախոտի և մանավանդ աղջիկների մասին: Թող Թեթև կերպով չվերաբերվի կանանց մասին. մի անգամ որ վարակվի՝ կորած է. լավ կլինի հիվանդությունների մի դիրք առ՝ կարդա, հասկանա, քանի ուշ չէ:

Իմ Եվրոպա գալս այդպես չուտ գլուխ չի գա. մի գիրքս հիմա տպվեց[2] (այսօր-վաղը կդրկեմ) մյուսն էլ նոր պիտի տպվի. երևի ամիսներ կքաշե. դու պիտի աշխատես իրավունքը չկորցնել, վիզայի իրավունքը:

Հետո փողի հարց կա, պետք է հաջողեցնել ո՛չ միայն ստիպենդիա այլև իմ կենսաթոշակի խնդիրը:

Շուտով կարդին նամակ կգրեմ: Մակինցյանը Թիֆլիզ է մնալու:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Ձո Ավետիք

145. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 11 նոյեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Երեկ մի բաց նամակ գրեցի: Չգիտեմ ի՞նչ գրեմ Նիկոլային, նա ինքը ամեն բան գիտե: Վերցնենք թե մեռել եմ, միթե մի տղայի չեք կարող կրթություն տալ, ի՞նչ մեծ բան է:

Ընկ. Մռավյանը խոստացավ կարդադրել այդ. այսօրվաղը նորից կտեսնեմ, կհիշեցնեմ:

Թող Զուբարը նրան մի նամակ գրե, թե ի՞նչ գումարից կարելի է տրամադրել. Զուբարի գրությունը կազդե, անպատճառ թող գրե:

Ես վերջերս հիվանդացել էի, գրիպ ուներ, չատ խիստ տեսակի: Ձեռքերս դողում էին, չէի կարող գրել. հիմա էլ վատ եմ գրում:

Կազդուրվելուց հետո պիտի Թիֆլիզ գնամ, գիրքս տպագրեմ, մինչ այդ պատրաստվեմ գալու. բայց դու վիզայիս իրավունքը չկորցնեք, այստեղից չա՛տ ժամանակ է պետք մեկնելու համար: Ինձ համար ձեռնտու է կ. Պոլսով գալ. Մոսկվայից 500 կնստի, իսկ Մարսելյով 300 րուբլի: Աչխատիր թուղթը ստանալ Թիֆլիզ:

Համբույրներով քո Ավետիք

146. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 17 նոյեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Գրել էի, որ ավելի հարմար չի՞ լինի ծովով գամ, թե ցամաքով. այդ բանը դու լավ կարող ես տեղեկանալ, քան ես:

Միայն բանն այն է, որ թեև մեր կառավարությունը իրավունք տվեց Փարիզ գալու, և բոլոր դյուրություններըը, բայց կուշանամ. թե գիրքս պիտի տպեմ, և գործեր ունեմ: Վերջերս էլ քիչ հիվանդ էի, դեռ լավ չեմ կազդուրվել. գրիպ էի:

Շուտով Փարիզ կգա Երևանից ինժեները Միհրդատյանը[1], որ Երևանում շենքեր է չինում: Լավ մարդ է, խելացի, Հայաստանի բարեկամ: Միքայելյանի (լոնդոնցին) պես դատարկ մարդ չէ. իմ մասին կպատմե քեզ: Այսօր էլ տեսա Փարիզից եկած երիտասարդ ինժեները Ղազարյանին, որ տեսել է քեզ և Վիգենիս Մանյայի[2] տանը (Զուբարի):

Վիգենի ստիպենդիայի մասին դեռ չի լուծվել հարցը. միայն ես որ գամ, կենսաթոշակս տալու են և Փարիզում: Առայժմ այսքան. գլուխս ցավում է. թույլ եմ:

Համբույրներով ձեր Ավետիք

147. ՍՈՓՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1927>[1], 21 նոյեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Անցյալ օրը հեռագրեցի Վիգենիս տարեդարձի համար: Անհամբեր եմ դարձել՝ ուզում եմ գալ Փարիզ, թեև եվրոպային քնավ չեմ կարոտել, այլ միայն ձեզ:

Բայց գալս հետաձգվում է, միայն իմացած եղիր միանգամից, որ ո՛չ մի արդելք չկա, սակայն ջրաղացի դատը նոր վերջացավ, փող պիտի ստանանք կառավարությունից: Սաթենիկին և Թամարին վճարեցինք, և սկսենք չինել. մնացել ենք ես և Գեղամը: Աբբասը դեռ նստած է: Հետո բանաստեղծություններս տպեմ, որ ձեռքս մի քիչ փող անցնի:

Գրել էի, որ հիվանդ էի. հիմա լա՛վ եմ. գրիպից հետո սիրտս հիվանդացավ. Հայաստանը չա՛տ բարձր է ինձ համար. ցածր երկիր պետք է, այնպես՝ որ փոխեփոխ պիտի ապրիմ, Հայաստան և Եվրոպա: Հայաստանից չեմ կարող բոլորովին բաժանվել. թե հոգով եմ կապված, թե տնտեսապես:

Շարունակ բաց նամակներ գրել եմ. ստացած կլինեք: Վիգենի ստիպենդիայի հարցի լուծումը իր վրա առավ Մակինցյանը:

Ինձ որոշ գրիր, թե ամսական ի՞նչքան եք ծախսում, միասին և զատ-զատ: Ի՞նչքան եք վճարում ամիսը Վիգենի համար:

Վիգենը ի՞նչպես է սովորում, վարժապետները գո՞հ են արդյո՞ք. դպրոցը հեռո՞ւ է ձեր բնակա<րա>նից. ի՞նչ լեզուներ են սորվեցնում, մաթեմատիկան, ֆիզիկան լավ է՞: Հիմա քննությամբ ընդունվեց, թե առանց քննության:

Դեկտեմբերի սկզբին փող կղրկեմ:

Ներփակ նամակը կհանձնես Նիկալային, գրել եմ, որ Աբրահամին խնդրե իմ կողմանից:

Ջերմ բարևներ Գաբոյին, Տեր-Օհանյաններին, Լիզային, Զուբարին, նկարիչ Սարգսյանին[2] և բոլորին, Տ. Զավենին, տիկ. Զաբել Եսայանին:

Համբույրներ ձեզ, կարոտով՝ Ավետիք

148. ՍՈՓՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1927>[1], 30 նոյեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երկու օր առաջ նամակդ ստացա: Վիգենիս պատկերը սքանչելի էր... Ի՞նչքան ուրախացա, երբ կարդացի նրա լավ սովորելու մասին, ապրի, զորանա:

Գրել էի, որ հիվանդ էի, հիմա լավ եմ, բայց դեռ թույլ եմ: Արդեն հայտնի էր քեզ, որ սիրտս էլ լավ չէ. Հայաստանը բարձր է, նպաստավոր չէ. սրտիցս բժշկվում եմ, և չա՛տ հաջող: Վտանգ չկա, միայն խմել և չա՛տ ուտել արգելված է: Ավելի լավ:

Վիգենիս ստիպենդիան չի մերժված, միայն Եվրոպա փող ուղարկելը սահմանափակված է: Ընկ. Մռավյանը սկզբունքով ընդունել է, հիմա բացակա է նա Երևանից, 15 օր է չուտով: Բայց Պողոսը (Մակինցյանը)[2] հանճն առավ այդ հարցը հաջողեցնել, և կլինի: Ի միջի այլոց, նա չի դառնալու Փարիզ. Թիֆլիզում լավ պաշտոն ունի, գիրքս տպելու համար Թիֆլիզ գնալուս մոտը պիտի ապրիմ. լավ բնակարան ունի:

Սեբարին հանճնել եմ նամակդ:

Աղջիկը լավ խոսում է, լեզուն բացվել է: Ջուպարը նույնպես Փարիզ չի դառնալու. Երևան է գալու, այդպես լսեցի: Ինժ. Միհրդատյանը Փարիզ եկավ. հետը մի գիրք ուղարկեցի, բայց Վիգենիս ուզածը չեղավ, որովհետև մի օր առաջ մեկնել էր: Եթե ընկ. Դանուշը Փարիզ է արդեն, կարող ես նրանից պարտք վերցնել: Իմ խնդրանքով: Վաղը կտեղափոխեմ 40 դոլլար, ամիսը մի անգամ մի այն կարելի է:

Իմ գալը կուշանա մինչև մարտի վերջը. ապրիլին ուրեմն կլինեմ Փարիզ: Այսինքն, որքան հաշվում եմ, մարտի վերջին կարող եմ թողնել Երևանը:

Այսօր գրեցի Մոսկվա Հովսեփին[3], որ գնա հարցնե կոնսուլին, իմանա թե օրենքն ինչ է: Դու էլ գրիր: Բայց դուք Փարիզում ավելի լավ կիմանաք օրենքը: Ով որ միջամտել է վիզայիս համար, սրտագին չնորհակալությունները հայտնելով նրան, խնդրիր այդ իմանա, և հետաձգման իրավունք ձեռք բերե: Պատճառիվ հիվանդությունս, ցուրտ ձմեռին դուրս գալու անկարելիությունս: Կարծում եմ, որ կհաջողվի: Մի անգամ, որ տվել են, հետ չեն առնի: Սիսակի

Հետ ապրում ենք, ես տնից քիչ եմ դուրս գալիս, երեկոները միշտ տանն եմ, և ընկերներս միշտ լիքն են մոտս:

Շտապում եմ ճաշի. մի ընկերի տանը կերակուր են չինում ինձ համար. դիետա, որոշ տեսակի – թեթև:

Շատ և շատ համբույրներ քեզ և Վիգենին. բարևներ չատերից: Բարևի՛ր իմ բարեկամներին:

Ձեր Ավետիք

149. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 6 դեկտեմ<բերի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա Ձեր նոյեմ<բերի> 19 գրած նամակներդ: Շատ ուրախ եմ, որ լավ եք:

Ես ձեզ չա՛տ նամակներ եմ գրել, հիմա ստացած կլինեք. այնտեղ կա ամեն բան: Կրկնեմ:

Հոկտեմբերի մեջ ես գրիպով (խիստ տեսակի) հիվանդացա. երբ անցավ գրիպը, նկատվեց սրտի հիվանդություն (արիտմիա), անկարգ զարկեր, չափից անց արագ, և ջղերի քայքայում: Պատճառները սրանք են: Եվրոպայում ապրել էի կանոնավոր, խաղաղ կյանք, մանավանդ Վենետիկ. ցած երկրներում, ծովափում տարիներ և չափավոր կյանք: Իսկ այստեղ. չատ բարձր երկիր, խիստ կլիմա. չատ քեֆեր արեցի, խմեցի, կերա ծանր կերակուրներ և չատ թափառեցի: Սարերը ելա-իջա: Այսպիսով սիրտս վնասեցի: Իսկ ջղերս քայքայվեցին չա՛տ տխուր բաներ լսելով անցյալից: Զարհուրելի բաներ են տեղի ունեցել. սով, մահեր, ջարդեր. և այս ամենը Դաշնակցության օրով. միայն բոլշևիկները եկան, և վերջացավ:

Ընկերներիս, բարեկամներիս կեսը չկան, ողբերգական վերջ են ունեցել: Գյուղերը դատարկվել են, մեր քաղա-

քի [բնակչության] հին բնակչության մի մասը չկա. մեր ազգականները նույնպես... իսկ մեր ընտանիքից, դիտես, բան չի մնացել: Սրանք բոլորը խիստ ներգործեցին վրաս:

Ջմռռանամ ասեմ, որ գրիպը չա՛տ թուլացրեց ինձ: Բժշկվում էի, հիմա բոլորովին լավ եմ, բայց թուլլ եմ դեռ: Խորհուրդ չեն տալիս ձմեռը ճամբա ընկնել: Այստեղ լավ խնամք ունիմ. ընկերներս միշտ մոտս են. քաղաքի հայտնի բժիշկները պարտք համարեցին հասնել. համալսարանի պրոֆեսոր բժիշկներն էին խնամում: Կառավարությունը օգնում էր ամեն կերպ. եթե ամառ լիներ, կղրկեին հանքային ջրերը. դրա փոխարեն ուղարկում են Եվրոպա ճամբու ծախսը հոգալով:

Բայց, բացի բժիշկ<ական> խորհուրդից, ես ստիպված եմ մնալ դոնե մինչև մարտ ամսի վերջը, որովհետև հիվանդությանս պատճառով դործերս հետաձգվեց:

Գիրքս չտպվեց: Եվ ջրաղացի համար փող չստացանք, որովհետև վեճ ունեինք իրար մեջ. պիտի վերջանար՝ որ փողը տային: Հիմա գրեթե վերջացավ. Սաթենիկը, Թամարը բողոքել են, բայց արժեք չունի:

Ամռուս վերջին գնում եմ Լենինական, կատանանք ջաղացի փողը: Հունվարին Թիֆլիզ եմ, կտպեմ դիրքս: Հյուր եմ Մակինցյանի մոտ: Փետրվարին Երևան. մի քիչ կհանգստանամ և կպատրաստվեմ մեկնելու. Մոսկվա կմնամ, այնպես որ ապրիլ ամիսը կլինի: Ընկ. Ս. Փիրումյանի ասածը ճիշտ է գրեթե: Փետրվարին նյութեր պիտի հավաքեմ, որ այդտեղ գրեմ Հայաստանի մասին, ցույց տալու համար փաստերով, որ ներկա կառավարությունը բարիք է մեր երկրի համար և այլն:

Վիգենի ստիպենդիայի հարցը Պողոսն իր վրա առավ լուծելու Թիֆլիզում. փողը չէ որ խնայում են, այլ որոշ սահման կա արտասահման փող դուրս հանելու: Վերջ ի վերջո կլուծվի Վիգենի օգտին: Հանգիստ մնացեք:

Մոտ օրերս ուղարկեցի ձեզ 50 դոլլար. երբեմն թույլ են տալիս. հիմա էլ ուզում եմ խնդրեմ թույլ տան Վիգենի ծախսերի համար հագուստ, գիրք, մի 40 դոլլար ղրկեմ, այս ամսիս, իբրև բացառություն:

Դու պիտի [աշտա] աշխատես Փարիզի վիզան հետաձգել տալ մի 6 ամսով, պատճառաբանելով հիվանդությունն, նրա հետևանքով տնտեսական գործերի խանգարում:

Եղբայրդ լավ է. Լենինական է աշխատում հիմա: Ես ո՞նց պիտի ապրեմ ցուրտ, խոնավ Փարիզում: Ես լավ եմ հագնված[1]. ամեն վատ լուրի մի հավատա. Հայաստանը դուրսը չա՜տ անարդար, անիրավ թշնամիներ ունի: Դրանց մասին հետո:

Համբույրներով Ավետիք

Լուսանցքում՝

Քոչարի նկարներով հետաքրքրվող չկա. բայց որից որ կախված է, նա այնտեղ չէր. կգա մոտ օրս և կլուծի հարցը:

150. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1927, 23 դեկտեմբերի, Երևան

Ստացա և վերջին նամակդ. ինչպես և բոլոր նամակները ստացել եմ իր ժամանակին:

Ես հիմա չա՜տ լավ եմ, բայց սրտիս համար մշտական հսկողության պետք ունիմ:

Լենինական և Թիֆլիզ դեռ չեմ գնացել, որովհետև ում հետ որ գործ ունեմ, Կոմիսար ընկերները դեռ չեն վերադարձել Մոսկվայից, ուր ամսից ավել է գնացել են համագումարի համար, մեծ համամիության ժողովի[1] համար:

Նրանք կդառնան մոտ օրերս: Հունվարի առաջին օրերը կգնամ Լենինական, ապա Թիֆլիզ: Փետրվարին՝ Երևան, հետո կմեկնեմ Մոսկվա՝ Փարիզ գալու համար: Մինթե Կարեն Միքայելյանը Փարիզ է եկել, մենք չենք լսել այստեղ:

Հովսեփին (եղբորդ) գրել էի, նա ֆրանսիական կոնսուլից ստացավ և ուղարկեց ինձ անկետայի թղթերը. թղթի մեջ հարց է տված թե Փարիզում ով է երաշխավորել ինձ համար «References en France» – որի հետ որ պետք է, խոսիր, և մի ֆրանսացու (նրա հավանությամբ) անուն և հասցե գրիր:

Ես հաղիվ մարտի սկզբներին Մոսկվա լինեմ, չեմ էլ ուզում չուտ լինել, որովհետև ցուրտ է այնտեղ, իսկ ես չսիրի մրսեմ:

Վիգենի ստիպենդիան[2] էլ մինչև այսօր մնաց անորոշ, որովհետև բոլոր պատասխանատու ընկերները Մոսկվա են. բայց վերջիվերջո կհաջողվի. փողը չէ, որ խնայում են, այլ պիտի դասավորեն, մանավանդ որ խնայողաբար են արտասահմանում փող բաց թողնում: Եթե ես կարողանամ ձեզ 40 դոլլար և երբեմն 50 դոլլար ղրկել, դա էլ իմ խաթերս համար է. ուրիշներին 15-30 դոլլարից ավել չեն թուլլ տալիս:

Առհասարակ կառավարությունը իմ խաթրս չա՛տ է պահում. երախտապարտ եմ ուղղակի նրանց հանդեպ:

Ի դեպ ո՛չ մի նամակի մեջ չես գրել՝ թէ ստացել ես նոյեմբերին ղրկած 40 դոլլարը:

Դեկտեմբերին ղրկեցի 50 դոլլար, կաշխատեմ հունվարին էլ այդքան ղրկել: Ջաղացից երկար ժամանակ, մի երկու տարի, ոչ մի օգուտ ստանալու չենք. պարտք առած գումարը պիտի վճարենք: Ինչևիցե. չինում ենք ապագայի համար:

Եր. Քոչարի [նկարը] նկարները չեն հավանում, բայց գլխավորը այստեղ չէ. նա կգա և կորոշվի: Դեռ իրեն բան մի ասիր:

Այստեղ սպասում են Զուբարին, ինչպես է, որ Մանյան քեզ ոչինչ չի ասել: Նույնիսկ «Երևան» թերթի համար լսեցի, որ նոր խմբագիր է ճամփա ելել:

Ջերմ բարևներ չա՜տ չատերից և ջերմ բարևներ իմ կողմից Նիկոլային, բժ. Թորգոմյանին, Զոպանյանին, Զավենին և կնոջը, Տեր-Օհանյաններին, նկարիչ Խաչատրյանին, Սարյանին, բարևներ տ. Մանյային, Եր. Քոչարին, Գաբոյին և բոլորին:

Կարոտով համբույրներ քեզ և Վիգենին:

Վիգեն ջան,

դուն ինձնից հարսնացու ես ուզում, դեռ չա՜տ կանուխ է: Դու քո ինձ տված խոսքդ կատարի, մինչև 20 տարիդ քեզ լավ պահիր և լավ սովորիր: Ես էլ կկատարեմ իմ խոստումը:

Համբույրներով՝ քո Հայրիկը

151. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 5 Հունվարի, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացել եմ նամակներդ: Այդ ո՞ր Միքայելյանի[1] մասին ես գրել: Կարենը Մոսկվայումն է:

Այսօր գնում եմ Լենինական մի չաբաթով, հետո կգամ նորից Երևան, և կգնամ Թիֆլիզ և կպատրաստվեմ մեկնել: Եղբայրդ՝ Վանյան[2] մի քանի օրով այստեղ էր եկել գործով և վերադարձավ. ձերոնք բոլորը ողջ և առողջ են:

Ամսուս 3-ին քեզ ուղարկեցի 25 դոլլար. վերադարձիս Լենինականից դարձյալ կղրկեմ 25 դոլլար:

Անշուշտ ստացել ես Նոյեմբ<երի> ղրկածս 40 դոլլարը և Դեկտեմբերի 50 դոլլարը: Գրի՛ր դրանց մասին:

Ես հիմա լավ եմ բոլորովին, առաջվա պես, բայց միշտ պիտի զգույշ լինեմ սրտիս նկատմամբ. կերուխումից և հանգիստ պահելուց: Այստեղ մենք էլ լավ ցրտեր ունեցանք. հիմա տաք է: Ուրիշ բան չունեմ գրելու:

Շատ բարևներ բոլոր մեր բարեկամներին, և համբույրներ քեզ և Վիգենին:

Շնորհավոր Ձեր բոլորիդ Նոր-տարին:

Ավետիք Իսահակյան

A. Issakian. *Աբովյան փողոց 87*
U.R.S.S.
Erivan. Armenia

152. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 16 Հունվարի, Լենինական

Սիրելի Սոֆի.

Այսօր 10 օր է այստեղ եմ. վաղը-մյուս օրը մեկնում եմ Երևան:

Մերոնք լավ են, մնացածները իհարկե: Աբասը Մոսկվա է[1]: Ես էլ լավ եմ, բայց չատ տխուր եմ. հայրենի քաղաքում ես միշտ տխուր եմ:

Այստեղ մի նոր սինեմա կար, հրաշալի մի չենք, բոլորովին եվրոպական. հոյակապ: Հազիվ երեք ամսվա կյանք ունեցավ. հրդեհի զոհ գնաց. մնացին միայն պատերը: Բայց նորից կչինեն. ցավալի էր չատ:

Քո վերջին նամակը եկել է Երևան, Սիսակը[2] տեղափոխել է այստեղ. դեռ չեմ ստացել: Այնպես որ չգիտեմ ի՞նչ գրեմ:

Երևանից գնում եմ Թիֆլիզ գիրքս տպեմ, և կձեռնարկեմ ձեզ մոտ գալու գործին: Երևան հասնելիս անմիջապես կտեղափոխեմ լրացուցիչ 50 րուբլին:

Մանրամասն նամակ կգրեմ Երևանից: Առայժմ այսքան:

Ջերմ բարևներ մեր բարեկամներին:
Նույնպիսի բարևներ մերոնցից:
Համբույրներ քեզ և Վիգենին:

Ջեր Ավետիք

А. Исаакян
ул. Абовян. 87 Эривань
U.R.S.S. Armenie. Erivan.

153. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 13 փետրվ<արի>, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա Թիֆլիզ ուղարկած նամակդ. բայց չա՛տ ուշ. այնպես որ բավական մտահոգված էի նամակ չստանալուս համար: Ես Թիֆլիզ դեռ չեմ գնացել. ամսուս վերջին կարող եմ գնալ միայն: Գալուս հարցը ձգձգվում է որոշ անձնավորությունների բացակայության պատճառով. ինչպես և Վիգենիս ստիպենդիայի հարցը:

Ամենադժվար խնդիրը փող տեղափոխելու խնդիրն է. սահմանափակ չափով է թույլտրվում. այդ հարցը պիտի լուծե երկրի նախագահը[1], որ բացակա է: Այդ պատճառով հունվարին և փետրվարին կարողացա քեզ տեղափոխել 50-ական րուբլի (ամիսը 50): Ե. Զուբարը խոսք տվեց մոտ օրերս հաջողեցնել մի 150 տեղափոխելու իրավունք առնել:

Ի՞նչ գրեմ. ես բավական լավ եմ: Սոսկալի ցրտեր են այստեղ. Սիբիրիայի ցրտեր:

Դու նամակները Երևան ուղարկիր, Թիֆլիզ ուշանում է:

Շատ բարևներ – համբույրներ քեզ և Վիգենին, և ջերմ բարևներ մեր բարեկամներին և ընկերներին:

Քո Ավետիք

154. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 25 փետրվ<արի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան,

Ստացա վերջին նամակդ, ուր գրում ես թե Գեղամից ստացար 50 դոլլար, լավ ես արել. եթե այդպիսի միջոցներ

գտնես, չա՛տ կհեչտանա փողի գործը: Ես այս երկու օրս փողը կհանձնեմ տիկ. Տիրուհուն[1]:

Հունվար և փետրվար ամիսներին ուղարկել եմ ձեզ 50-ական ռուբլի: Թիֆլիզից չեմ ղրկել, այլ փողը պահել են Թիֆլիզ և այնտեղից էլ ղրկել. մի մասի փողը հետ եկավ:

Ես Թիֆլիզ դեռ չեմ գնացել, մի 15 օր հետո կերթամ, դու նամակներդ ղրկիր Երևան: Թիֆլիզ ղրկած նամակներդ չեմ ստացել, բայց գրեցի, որ պահեն: Ինչպես և չեմ ստացել վալիս դիպլոմատիկով ղրկած նամակներդ: Ջուբարը չա՛տ զարմացավ, երբ լսեց:

Ընկեր Դանուշը եկա՞վ թե ոչ, եթե գա, փողի գործը կհեչտանա. նա սքանչելի մարդ է:

Վիգենի ստիպենդիայի հարցը լուծվելու համար սպասում ենք, որ Մոսկվայից գա ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյանը[2], որ պետուβյան նախագահն է լինելու: Նրան են սպասում ուրիշ խնդիրների նկատմամբ, որ կապված են ինձ հետ:

Իմ գալը մի քիչ էլի կուշանա: Կոնսուլին խնդիրք գրեցի, որ հետաձգե. եթե չեղավ, պիտի նորից դու դիմում անես, նոր վիզայի համար: Ջղայնանալ պետք չէ, այլ համբերել և գործել: Կհեռագրեմ վիզայի համար:

Առողջուβյունս հիմա վատ չէ, բայց չա՛տ եմ տխուր, վախենում եմ չա՛տ. սրտի հետ խաղալ չի լինի. գոնե Վիգենին ապահովվեի, և վեպս վերջացնեի (Ուստա Կարոս), հետո ինչ կլիներ, թող լիներ. մի օր եղել ենք, մի օր պիտի մեռնենք:

Դու այդտեղ մի հայտնիր ոչ ոքի, թե գալս կուշանա մի-երկու ամսով, վատ ձևով պիտի բացատրեն, որովհետև չեն հասկանում իրերի դրուβյունը, մանավանդ չիմանա Նիկալայը, որ կհայտնի ուրիշներին: Գրում ես, որ հետս մեր խալիչաներից մեկ հատ բերեմ. ի՛նչ խալիչա, ի՛նչ բան: Ոչ ոք չի իմանում, թե քո իրերը ո՞ւմ մոտն են մնա-

ցել, ինչ են եղել: Մեր տանից ոչ ոք չի մնացել, որ գիտե-նա. Գինովաբեն կգիտնար, նա չկա, նույնպես Մկրտիչը:

Ձերոնց գրեցի, թե ո՞ւմ մոտն են Սոֆիի իրերը — ո՛չ մի պատասխան: Դու այդտեղից իսկույն գրիր, ես էլ այս-երկու օրս կգրեմ:

Էլ բան չունեմ գրելու: Շտապում եմ դուրս գնալ, գոր-ծեր ունեմ:

Շատ բարևներ Գեղամին, կնոջը, Գաբոյին, Մանյային, Տեր-Օհանյաններին, նկարիչ Խաչատրյանին, բժ. Թոր-գոմյանին և այլն:

Համբույրներ քեզ շատ և Վիգենին:

Ձեր Ավետիք

155. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 2 մարտի, Երևան

Սիրելի Սոֆի.

Վերջին գրած նամակս երևի ստացար: Ոչ մի խալի, և առհասարակ ոչինչ չունենք. ամեն ինչ կորած է անհետ, չենք էլ իմանում ո՛վ է ծախել: Վերջապես:

Գեղամին չա՛տ բարևներով հայտնիր, որ փողը, այս երկու օրս կգնամ Լենինական ու կհանձնեմ[1]:

Եղ. Զուբարը այս երկու օրս Մանիային փող ուղարկեց, որից 100 րուբլին քոնն է (50 դոլլար). կստանաս և կգրես թե ինչքան ստացար: Երևի «Կոչնակից»[2] ստացար 20 դոլ-լար. գրել էի որ 50 դոլլար ղրկեն, բայց այդքանն են ղրկել:

Վերջապես մեզ մոտ ձմեռը վերջացավ. չա՛տ ծանր ձմեռ էր:

Ինչպես է սովորում Վիգենը և ինչպես է ձեր առող-ջությունը: Մերոնք բոլորը լավ են, նույնպես Աքան: Ա-բասը երեք տարի բանտի վճիռ ստացավ:

Ինքն էր մեղավորը:

Ե՞րբ է գալու ընկեր Դանուշը, չա՛տ բան է կախված նրանից Վիգենի թռչակի մասին: Առայժմ այսքան:

Համբույրներով Ձեր Ավետիք

156. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ

1928, 2 ապրիլի, Երևան

Italia Sorrento,
Maxim Gorkiy,

Творцу ярких, смелых образов, певцу сокола и буревестника, прекрасному рассказчику и стилисту в день 60-летия его жизни, шлет сердечные поздравления Армянское литературное общество.

Аветик Исаакян

2/ IV, 1928,
Эривань, ул. Налбандян, 16
Кв. С. Айвазян □Аветик Исаакян

157. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 5 ապրիլի, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա վերջին նամակդ: Շատ ցավ պատճառեց Ալիսի մահը. խեղճ աղջիկ...

Սրանից առաջ մի նամակ գրեցի, որ նոր վիզայի թույլտվություն խնդրես. ինչպես առաջ էիր խնդրել և

ստացել. նույնչափ ժամանակով: Երևի մինչև մայիս կստանամ անցագիրս: Մոսկվա դիմել եմ ֆրանս<ական> կոնսուլին, որ հետաձգե, բայց պատասխան չունիմ: Այնպես որ ավելի ապահով կլինի, որ դու այդտեղ գործը հոգաս:

Մի 10 օր առաջ ուղարկեցի 30 դոլլար: Որոնում եմ միջոցներ փող ղրկելու. տեսնենք:

Ես հիմա բավական լավ եմ. գարնան գալը լավ ազդում է վրաս:

Շատ բարևներ բոլոր մեր բարեկամներին:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Քո Ա.Վետիք

A.Issakian.
Erivan. U.R.S.S.

158. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 25 ապրիլի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա ձեր նամակը և լուսանկարը: Զարմանում եմ որ իմ նամակները չեք ստացել: Գրել էի, որ նոր վիզա խնդրես: Գալս մի քիչ ուշացավ, որովհետև գործերը վարիչ ընկերները բացակա էին Երևանից: Հիմա վերադարձել են և շուտով կվերջանա: Սոֆի, քո նամակները ինձ ջղայնացնում են. և դուր ես ինձ մեղադրում:

Փող ուղարկելը դժվար է. ավելին անկարող եմ ղրկել, մի կերպ յոլա գնա մինչև գալս: Ընկեր Դանուշը որ գա, կհեշտանա ամեն բան:

Այս տարի վատ տարի եղավ Հայաստանի համար. սոսկալի ցրտեր և ձյուն. հիմա էլ ամառվա տաքեր և հեղե-

ղումներ. գետերը մի-երկու մետր սովորականից բարձրացել են, և ողողել են դաշտերն ու գյուղերը: Անասուններըի չա՛տ կորուստ եղավ. դարձյալ միլիոնների վնաս:

Ես հիմա բավական լավ եմ: Շատ բարևներ բարեկամներին. և կարոտալի համբույրներ ձեր երկուսիդ:

Ավետիք

Այսօր տեղափոխեցի 30 դոլլար. նույնպես մարտին:

159. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 21 մայիսի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Նամակներդ որ ստանում եմ՝ ուղղակի հիվանդանում եմ. կարծում ես թե կարող եմ անմիջապես ճանապարհ ընկնել և չեմ ուզում: Միանգամից լավ իմացիր, որ Խորհրդային երկիրները մտնելը և ելնելը չափազանց դժվար բաներ են: Հիշում ես, որ 6-8 ամիս քաշեց մինչև թույլտվություն ստացա ներս մտնել:

Ուշանում է կամ ուշացնում են ինձ համար անբացատրելի պատճառներով: Մի կողմից էլ այն է, որ կառավարության կարևոր անձնավորությունները փոխվեցին, հիմա նորերն են եկել, և նոր են գործի սկսել: Համբերել պետք է, ուրիշ հնար չկա: Ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյանը գործունյա, լավ մարդ է, նա կկարգադրե:

Ցավն այն չէ, որ դալս մի քիչ ուշանում է, այլ այն, որ չոգերը սկսվում են, այս հիվանդ սրտովս վախենում եմ մեծ ճամփորդություն անել. հետո ձեր նյութական դրությունը սաստիկ ճնշում է ինձ: Իմ նյութականն էլ վատ է, որովհետև փող չեմ կարող աշխատել, մեկ՝ որ բժիշկները արգելել են երկար և լուրջ պարապել, երկ-

որպէս, որ իմ գրականութիւնը հին է, այստեղի չուկայի ապրանք չէ: Բանաստեղծութիւններս որպես թէ պիտի տպվեն Թիֆլիզում, բայց մի տարի է, պիտի տպվեն. այնտեղից հույս ունեի փող ստանալ, բայց ոչ այնքան, ինչքան քաղցրաբերան Պողոս Մակինցյանն էր ասում, չնչին բան:

Բացի այն իրավունք չկա փող ղրկելու, նամակ գրեցի Բաքու, տեսնենք ի՞նչ կգրեն, արտասահման մեկնողը կարող է հետը միայն 150 դոլար վերցնել:

Ապրիլի համար ուղարկել եմ 30 դոլար, մի երկու օր առաջ էլ, մայիսին, ուղարկեցի նույնպես 30 դոլար:

Գրում ես նամակ գրեմ մեր բարեկամին: Ինչ գրեմ, ինչ ասեմ: Զարմանալի մարդ է դա: Ոչինչ չեմ կարող գրել. մնա՝ ես կգամ կտեսնեմ: Բայց ինչպե՞ս Նիկալայը մի բան չի կարող անել: Գոնե Վիդենի ստիպենդիան: Առայժմ մի կերպ պարտքերով յոլա գնա, մինչև գալս. նամակ գրիր Լոնդոն Հովհաննես Մասեհյանին, որ մի բան անե, օգնե մինչև գալս: Բժ. Թորգոմյանը, Նորատունկյանը, Զոպանյանը և այլն, և այլն: Ասա, պարզիր նրանց, մի՞թե չպիտի հասկանան:

Բանի Շահվերդյանը չի եկել Փարիզ, Վիգենի ստիպենդիան չի հաջողվի: Խոստացողները ոչինչ չկարողացան անել:

Գալս երևի, մի ամսից հետո կլինի ամենաչուտը: Շատ հոգնել եմ, ջղայնացել խնդրելուց, դիմելուց, դռները քաշ գալուց: Վիգենիս մի նեղացրու, եթե քննութիւնները վատ անցնեն: Պետք է հասկանալ պատճառները և դեմն առնել:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Ավետիք Իսահակյան

Ուղարկում եմ չարժանկարս, որ մի 16 տարեկան աղջիկ է նկարել փողոցով անցնելիս. ծաղրանկար է:

160. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 31 մայիսի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Հիմա հաստատ կերպով կարող եմ հայտնել, որ իմ Փարիզ գալս մինչև սեպտեմբեր կհետաձգվի. հանգիստ կացեք և մի ջղայնացեք: Ես առողջ եմ և ամառը կգնամ Հայաստանի Արզնի կուրորտը՝ վաննաներ ընդունելու սրտիս համար:

Վիգենի ստիպենդիայի հարցը այսպես լուծվեց. նա Բերլինից կստանա ամսական 25-30 դոլար. առայժմ այսքան, և երբ Հայաստանի նյութական գործերը ավելի լավ գնան, կավելացնեն: Ես էլ կուղարկեմ ձեզ ամսական նույնպես 30 դոլար, ուրեմն կունենանք ամսական 60 դոլար: Իսկ երբ ձեռքս ավելի փող անցնի, կուղարկեմ ձեզ: Գիրքս պիտի տպվի, այնտեղից կղրկեմ: Ուրիշ ո՛չ մի հնարավորություն չունեմ: Մնացածը մի կերպ դու այդտեղ գտիր:

Երևի ստացար սրանից առաջ գրած նամակս, ուր կարծաղրանկարս:

Կարգադրվեց որ Բեռլինից ձեզ անմիջապես ուղարկեն 100 դոլար, իսկույն գրիր՝ երբ ստանաս:

Ցավում եմ որ չկարողացա հասնել Վիգենի քննություններին. եթե հաջող տվեց, պիտի մտածել թե ի՞նչ ճյուղ սովորի: Քիմիա, էլեկտրո-քիմիա, ինդուստրիալ քիմիա, հիդրավլիկա (որ շատ պետք է Հայաստանում), բժշկություն, բակտերիոլոգիա. մի խոսքով, մի գործնական բան, որ ապագայում ապահով լինի: Այդ մասին խորհրդակցիր հասկացող մարդկանց հետ:

Հետո գրիր, թե ինչքան են ձեր մաքսիմում և մինիմում ծախսերը, ինչքան փող է հարկավոր ձեզ:

Ուրիշ ի՞նչ գրեմ: Ջրաղացը միայն այս տարի կարելի է չինել. զզվեցի այդ գործից, եթե չինվի էլ, մի քանի տարի

Նրանից օգուտ չկա. պարտքով պիտի չինվի և պարտքը պիտի տրվի:

Հայաստանում հիմա գարուն է, չա՜տ լավ եղանակ է. մոտ օրերս մի չաքթով գնում եմ Լենինական:

Պողոս Մակինցյանը այստեղ է մի քանի օրով, բարևում է քեզ: Կինն ու աղջիկը լավ են:

Զուբարը պաչտոնով գնաց Բաքու[1], ափսո՛ս, լավ ընկեր էր: Շատ բարևներ Մանյային:

Իմ կողմից կբարևես դոկտոր Թորգոմյանին, Զոբանյանին, Նիկալային, Գաբոյին, Տեր-Օհանյաններին, Զավենններին, Խաչատրյաններին և բոլոր բարեկամներին:

Համբուրներով երկուսիդ մնամ կարոտով՝

Ավետիք Իսահակյան

Լուսանցքում՝

Ստացար երևի, մայիսին ղրկած 30 դոլլարը: Եթե Վիգենը վատ քննություն տվեց, մի նեղիր, վնաս չունի: Միայն թե առողջ լինի:

161. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ

1928, 15 Հունիսի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երևի արդեն ստացար Բեռլինից 100 դոլլար: Դա մեր կառավարությունը ուղարկեց իր կողմից. սրանից հետո Վիգենը ամսական 25-30 դոլլար կստանա իբրև ստիպենդիա: Կառավարությունը ամեն կերպ տրամադիր է օգնելու ինձ, բայց դե՛հ, դիտես, թալանված երկիր, հազար ու մեկ կարիք կա, ո՞ւմ հասնել, ո՞ւմ թողնել. պահանջը չատ, միջոցը՝ քիչ: Արտասահմանի հարուստ հայերն էլ քարի պես անտարբեր, անզգա:

Այս աղքատ միջոցներով ինչ որ արվում է, դարձյալ մեծ բան է: Եթե երկիրը խաղաղ մնա, Եվրոպան պատերազմ չփաթաթե Ռուսաստանի վզին, ապագայում լավ կլինի, որովհետև պետության հիմքերը լավ են դրված, ճգտումները լավ են, վարիչները եռանդուն և ժողովրդասեր. կարգադրությունները՝ առողջ, օգտակար, բայց երկիրը աղքատ է, պատերազմը քանդել, ջախջախել է ամեն բան:

Երկու օր առաջ ուղարկեցի 30 դոլլար, Հունիսի համար: Երևի ստացար մայիսին ուղարկածս – 30 դոլլարը: Ջեռքս որ փող անցնի, մի կերպ կուղարկեմ:

Վաղը գնում եմ Լենինական, կմնամ մի 10 օր, հետո կգամ նորից Երևան և կաշխատեմ գնալ Կիսլավոդսկ, բժշկվելու, Նարզանի ջրերով: Նամակներդ ուղղիր Լենինական, փողոց 27, տուն 73. անունս միշտ սխալ ես գրում, ռուսերենը, գրում ես I տառով, գրի՛ր. Исаакян Аветик, Ленинакан.

Առաջին նամակում գրեցի, որ իմ գալը կլինի աշնանը. հանգիստ եղեք և մի՛ ղայնացեք:

Գրում ես, որ Վիգենը ուզում է բժշկություն սովորել. իր կամքն է: Բայց լավ կլիներ քիմիա, էլեկտրականություն, հիդրավլիկա սովորեր, կարողանար չաքար չինել սովորել, բայց խորհրդակցիր ուրիշների հետ, իր ուսուցիչների հետ և այլն:

Եթե չկարողացավ դպրոցն ավարտել, մի՛ ճնշիր, մի՛ նեղացրու, թող մի տարի էլ ուշ ավարտե: Վնաս չունի, միայն թե առողջ լինի:

Շատ ցավացի խեղճ Արմենակի և Թեոդիկի[1] մահերով, ափսոս էին: Ցավում եմ տիկ. Օհանյանի հիվանդության վրա, բարևի՛ր նրանց հատկապես:

Եր. Քոչարին ասա, որ նկարները մոտս են: Թանգարանի պատկերներ գնող և գնահատող անձը՝ Դրամբյանը[2], 10 ամսից ի վեր Մոսկվա-Լենինգրադ է. նա պիտի գա, որ

մի բան անենք: Ուրիշները չեն խառնվում այդ գործի մեջ: Խելքս չի կտրում, թե առնեն: Եթե մերժեն՝ կհանձնեմ քրոջը՝ Թիֆլիզ:

Շատ բարևներ Գեղամին, կնոջը, Զոբանյանին, Նիկալային, Գաբոյին և բոլոր բարեկամներին:

Համբույրներով քեզ և Վիգենին՝ ձեր Ավետիք

162. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ

1928, 24 Հունիսի, Լենինական

Սիրելի Գարեգին.

Այս երկու օր է, որ լավ եմ. եկած օրից հիվանդացա. մրսել էի: Կմնամ դեռ մի շաբաթ ևս: Սիսակին հարցրու, նամակ կա՞ ինձ համար եկած. ավելի լավ է՝ պահել մինչև գալս, տեղափոխելիս կարող է կորչել: Իսկ եթե տեղափոխել է, գրի՛ր ինձ, որ հետևեմ այստեղ փոստատանը: Այստեղ կարգն այսպես է:

Դուք ընկերներով ի՞նչ եք անում. ի՞նչ նորություններ կան: Երևի լավ տաքեր են այդտեղ: Այստեղ դեռ տանելի է, միայն փոշի, փոշի:

Համբույրով և բարևներով Ավետիք

Լենինական, փողոց 27, տուն 73,
Ա. Իսահակյան.

163. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 9 Հուլիսի, Լենինական

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Զարմանում եմ որ մինչև հունիսի 27, ինչպես գրում ես այդ թվով նամակիդ մեջ, 100 դոլլարը չես ստացել: Երևանից կառավարությունը կարգադրեց և հեռագրեց Բերլին, որ ուղարկվի քեզ այդքան փողը: Դիմիր Բեռլին, Միշա Կարաբեկյանին[1], նրան է հեռագրած: Նրա հասցեն առ Դրաստամատից[2]: Եվ գրիր որ ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյանի կարգադրությունն է: Ուղարկիր և հասցեդ:

Ես այս երեք շաբաթ է Լենինական եմ. մի քանի օրից հետո կգնամ Երևան մի կարճ ժամանակով, այնտեղ կորոշվի, թե ո՞ւր պիտի գնամ ամառը անցկացնելու: Դու նամակները միշտ Լենինական ուղարկի՛ր:

Վիգենի մասին ի՛նչ գրեմ: Թող աշխատե, քննությունները լավ տա: Ջտվեց, վնաս չունի, մի նեղիր: Ինչ որ ուզում է, թող այն սովորի, միայն սրտանց սովորի. բժշկությունն էլ լավ է, քիմիան էլ լավ է: Էլեկտրական գիտություններն էլ լավ են: Միայն թե մի բան սովորի, մարդ դառնա, խեղճ չմնա աշխարհում:

Քննություններից հետո, լավ ես մտածել ծովափ ուղարկելու մասին: Թող լավ կազդուրվի: Գլխավորը առողջությունն է. եթե առողջ ու զվարթ լինի, երբ ասես կավարտե, մի բան կսովորի:

Շատ ուրախացա, որ մեր սիրելի Գեղամին և Սիրանուշին երեխա է եղել: Իսկույն հայտնեցի տիկին Տիրուհուն, որ նույնպես ուրախացավ չա՛տ և չա՛տ: Իմ կողմից ջերմագին շնորհավորություններ: Աչքերը լույս, հորով-մորով լինի, աստված պահե, զորացնե: Բարով արժանանանք իրար տեսնելու:

Մերոնք լավ են, Կոլյայից նամակ կա. ուզում է բոլորին Ամերիկա տանել, մերոնք էլ պատրաստվում են[3]. չգիտեմ պիտի հաջողվի թե՞ ոչ: Դժվարություններ շատ կան:

Ես առայժմ լավ եմ, որովհետև ինձ հանգիստ եմ պահում, քիչ եմ ուտում, բնավ չեմ խմում, ոչ ալկոհոլ, ոչ սուրճ: Քիչ եմ ծխում: Եթե կարողանայի չուտ գալ, ավե-

լի լավ կդառնար առողջությունս: Բայց պիտի համբերել, չպիտի հուզվել, ջղայնանալ:

Պ. Մակինցյանի մասին այդպիսի լեզվով մի՛ գրիր: Նա բարի սիրտ ունի, սիրում է ինձ, բայց ջղային, խենթ ու խելառ մարդ է: Ժամը ժամին չի համապատասխանում: Կայուն բնավորություն չունի: Եվ դեր էլ չունի: Հայաստանում ուժեղ անձնավորություններ շատ կան, ինչպիսին են Սահակ Տեր-Գաբրիելյանը[4], Արամայիս Երզնկյան[5], Լուկաչին[6], Հ. Նազարեթյան[7], Ս. Կասյան[8], և այլն: Նրանք են ղեկավարում, և նրանց խոսքը արժեք ունի, նրանք են գործ տեսնողները: Եվ սրանք ազնիվ, ժողովրդասեր մարդիկ են:

Էլ ինչ գրեմ:

Շա՛տ բարևներ մեր բարեկամներին. Նիկալային, Ղևոնդյանին, Մեծատուրյանին:

Բարևներ Գաբոյին, Տեր-Օհանյաններին, Լիզային, Զավենին (անպատճառ), բարևիր Դրաստամատին, կնոջը և անչուշտ Ա. Զոբանյանին:

Համբույրներ ձեզ՝ Ավետիք Իսահակյան

164. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 2 օգոստ<ոսի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն.

Վերջին նամակդ՝ քո և Վիգենի գրած ատացա:

Այս երկու օրս ես Երևան եմ. չուտով կլուծվի հանքային ջրերը դնալուս հարցը. եթե չեղավ, կմնամ Լենինական:

Կառավարությունը պնդում է, որ 100 դոլլար [ղրկված է] կարգադրված է Բերլին Ղարաբեկյանին, որ հանձնի ձեզ: Ինչո՞ւ է ուշացել, զարմանում եմ:

Մի քանի օր առաջ ուղարկեցի 30 դոլլար: Եվ երկու օր առաջ ՀՕԿի միջոցով 50 դոլլար. կդիմես Փարիզի ճյուղին ՀՕԿ-ի, Եսայի Կարիքյանին[1], որ հանձնե ձեզ 50 դոլլարը: Կարիքյանը կամ Փարիզ է լինում, կամ Բրյուքսել:

Նամակ գրիր Լենինական:

Ես լավ եմ: Համբույրներով

Ձեր Ավ. Իսահակյան

165. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 29 օգոստոսի, Լենինական

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացել եմ բոլոր նամակներդ, և վերջին նամակը՝ Վիգենի բացիկով (Էֆֆելի):

Ես հիմա Լենինական եմ. գնացել էի մի 10 օրով Լոռի, Գարեգին Լևոնյանի հետ. լավ ժամանակ անցրինք: Մոտ օրերս մի քանի օրով գնում եմ Երևան. գուցե հաջողվի Կիսլավոդսկ գնալու: Կառավարությունն է ուղարկում, բայց որովհետև տեղերը առաջին հերթին տրվում են հիվանդ բանվորներին, այդպիսով մեր հերթը ուշանում է:

Վիգենի ստիպենդիան, կարծում եմ, պետք է հաշվել մայիսից կամ հունիսից: Այդ կպարզվի Երևանում, երբ գնամ: Կգրեմ այդ մասին:

Լավ ես հասկացել, որ Վարդանյանը սուտ է խոսում: Աշնանը, ուրեմն մինչև նոյեմբեր, կհաջողվի Եվրոպա գալս, մեր նախագահի խոստման համաձայն: Շա՛տ հույս ունեմ, տեսնենք: Դու մի՛ ջղայնացիր, ուրիշների խոսքին էլ մի՛ հավատար և նամակներդ հանգիստ տոնով գրիր:

Ես այնպիսի անցագիր պիտի առնեմ, որ դյուրին լինի մի տարուց հետո վերադառնալ, որովհետև ես չեմ ուզում

մշտապես Եվրոպա մնալ, զզվել եմ Եվրոպայից. գամ գործերս վերջացնեմ և դառնանք միասին:

Ուրախ եմ, որ Վիգենին ուղարկում ես ծովափ: Միայն որոշ չգրեցիր ի՞նչ քննություններ մնացին, և արդյոք կհաջողվի՞ նրան համալսարան մտնել: Ինձ թվում է, որ նամակիդ մեջ մի բան ծածկում ես. մի խոսքով պարզ գրիր: Կարծում եմ, որ եթե վենետիկ մնար, հիմա վերջացրած կլիներ: Բայց անցածն անցած է:

Երևի արդեն իմացած կլինես, որ Գեղամ Կոստանյանի տունը քանդվեց, փուլ եկավ. անցած երկրաշարժի հետևանքն էր: Լավ էր, որ մարդկային զոհ չեղավ: Խեղճ հարսիկը մոլորվել է, չգիտե ինչ անե:

Զգրեցիր, թե ի՞նչ եղավ Ավետիսը. աչքերը ինչպե՞ս են, լավի դառնո՞ւմ են, արդյոք:

Շատ ցավեցի Քոչարի կնոջ համար, մխիթարիր Քոչարին[1] իմ կողմից:

Նամակներդ գրիր Լենինականի հասցեով:

Ջերմ բարևներս արա Գեղամենց, Ջավոյենց, Տիգրան Ջավենենց, Նիկոլային, Գաբոյին, Տեր-Օհանյաններին, փոքրիկ Ջավենին, բարևիր հատկապես Համաստեղին և բոլորին:

Բարևներ մերոնց կողմից:

Համբույրներով քեզ և Վիգենին:

Քո՝ Ավետիք

166. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 13 սեպ<տեմբերի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վերջին նամակդ ստացա Լենինականում: Մի շաբաթ է Երևան եմ. ամսիս 8-ին տեղափոխեցի 30 դոլլար. նախկին հասցեովդ: Կհարցնես:

Վիգենի ստիպենդիան հաստատ է և որոշ. կանոնավոր կերպով կստանա Բերլինից. կառավարությունը այդ մասին կարգադրել է Մ. Կարաբեկյանին, այնպես որ դու նրան կգրես: Մեր նախագահը, ընկեր Սահակն[1] ասաց, և ուրեմն հարցը վերջացած է:

Հավանական է որ մոտ օրերս գնամ Կիսլավոդսկ. սպասում ենք հեռագրի. հենց որ հեռագիրը եկավ և տեղը պատրաստ լինի, գնալու եմ մի ամսով, գուցե մի քիչ երկար բժշկվելու վաննաներով:

Կիսլավոդսկ գնալուց առաջ կգրեմ:

Առայժմ նամակները Լենինականի վրա ուղարկիր:

Փարիզ գալու մասին խոսք կլինի վերադարձիցս հետո. ամենից առաջ պետք է բժշկվել. Փարիզ երբ լինի՝ կգամ:

Գալով Վիգենի ինչ մասնագիտություն ընտրելու մասին, այստեղից չեմ կարող [կարգա] հրահանգներ տալ. դուք խորհրդակցեք բարեկամների հետ. թե ի՞նչ ընդունակություններ ունի Վիգենը, ի՞նչ է սիրում, ի՞նչ է կարող: Թող լինի իր կամքի և ընդունակությունների համաձայն:

Ես լավ եմ, և հույս ունիմ ավելի լավանալու:

Ջերմ բարևներ բոլոր բարեկամներին:

Ջուբարի մասին լուր չունիմ. միայն գիտեմ, որ առողջ է, հիվանդ չէ:

Համբույրներ քեզ և Վիգենին:

Ձեր Ավետիք

167. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1928, 19 սեպտեմբերի>[1], Երևան

Սիրելի Սոֆի.

Ես այսօր մեկնում եմ Կիսլավոդսկ. մի ամսի չափ կմնամ. հոկտեմբերի վերջերին կլինեմ Երևան և կառա-

վարուքթյան խոստման համաձայն՝ ուրեմն ուշ աչնանը ճանապարհ կընկնեմ ձեզ մոտ: Ավելի չուտ չէր կարելի:

Սրանից մի չաբաթ առաջ նամակ գրեցի քեզ նոր հասցեովդ: Գրեցի, որ Վիգենի ստիպենդիան, ինչպես հայտնեց ինձ մեր նախագահը, հաստատ է. ամեն ամիս Վիգենը կստանա ստիպենդիան Բեռլինից: Դու գրիր կարաբեկյանին այդ մասին:

Իսկ մի 10 օր առաջ ուղարկեցի քեզ հին հասցեովդ 30 դոլլար:

Գրիր Լենինականի հասցեով. նրանք կղրկեն ինձ: Կիսլավոդսկից կգրեմ անմիջապես քեզ:

Շատ համբույրներ – բարևներ քեզ և Վիգենին, և բարևներ բոլոր բարեկամներին:

Քո Ավետիք Իսահակյան

168. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1928>[1], 25 սեպտեմբերի, Կիսլովոդսկ

Սիրելի Գարեգին.

Զորրորդ օրն է այստեղ եմ: Լավ սանատորիա է, լուրջ և սոլիդ: Պրոֆեսորների, դիտնականների, ինժեներների տեղ է: Հասարակ մարդիկ չկան: Բոլորս էլ լուրջ, տարիքով և հիվանդ: Մինչև հոկտեմբերի վերջը կմնամ:

Անցա ռազմավիրական ճանապարհով[2]. շա՛տ լավ էր, և շա՛տ գոհ եմ. լավ եղանակ էր:

Մնացածը կլսես Պողոսի նամակից, որ իսկույն կհանձնես նրան:

Շատ բարևներով, քո՝ Ավետիք

169. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 26 սեպտեմբերի, Կիսլովոդսկ

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Մոտ մի շաբաթ է այստեղ եմ, մի նշանավոր սանատորիայում. ուղարկված եմ կառավարության կողմից: Պիտի մնամ մինչև հոկտեմբերի վերջը:

Հույս ունեմ սիրտս ամրացնելու վաննաներով, դիետով և այլ միջոցներով:

Երևանից արդեն գրեցի քեզ գնալուս մասին: Սեպտեմբերի սկզբներին ուղարկեցի 30 դոլլար: Հոկտեմբերի վերջերին կարող եմ նորից ուղարկել 30 դոլլար: Բեռլինից կանոնավոր կերպով կստանաս Վիգենի ստիպենդիան. գրիր այդ մասին Կարաքեչիյանին, Միշա[1]:

Արտասահման գալս նորից ուշացավ այստեղ լինելուս պատճառով. մնում է, որ, երբ Երևան դառնամ, սկսեմ նորից խնդիրս, և հույս ունիմ, որ մեր նախագահի խոստման համաձայն, անցագիր կստանամ: Ջղայնանալու պետք չկա, ամեն ինչ լավ կլինի. պետք է համբերել և առողջությունը պահել:

Հոգս տար և խիստ հսկիր Վիգենի առողջության մասին. Փարիզը մեծ և վտանգավոր քաղաք է. իհարկե գիտես՝ ինչ եմ ուզում ասել: Նա հասկացող տղա է, բայց նորից հիշեցրու և հսկիր:

Գալով նրա մասնագիտության ընտրությանը՝ թող սովորի այն, ինչ որ ուզում է, ինչ որ կարող է, ինչ որ սիրում է: Բժշկություն — թո՛ղ լինի բժշկություն, միայն թե լավ սովորի, աշխատի, տքնի, ուժ ու եռանդ թափե:

Մի խոսքով՝ մարդ դառնա պետքական թե՛ իրեն և թե՛ հասարակության համար:

Նամակները ուղղիր նորից Լենինական՝ մեր տան վրա. կղրկեն ինձ:

Ես այստեղ ապրում եմ գիտնականների և պրոֆեսորների սանատորիայում՝ Кисловодск, санаторий Цекубу[2].

Շատ բարևներ Գեղամին, կնոջը, Զավենին, Սիրանուշին, փոքր Զավենին, Նիկոլային, Տեր-Օհանյաններին, Զավոյենց, Գաբոյին և բոլոր հարցնողաց, ինչպես և Զոբանյանին, Համաստեղին և այլն:

Համբուրներով քեզ և Վիգենին, Ավետիք

<Հ. Գ.> Իհարկե, մանրամասն կգրես Վիգենի քննությունների մասին: Առանց թաքցնելու:

Ավետիք

170. ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆԻՆ

1928, 8 հոկտեմբերի, Կիսլովոդսկ

Հարգելի ընկեր Ասքանազ.

Սրանով պատիվ ունեմ հայտնելու Ձեզ, որ չնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած 100 ռուբլին:

Բժշկությունս չարունակում եմ, և ամսիս վերջերին կլինեմ Երևան:

Նորից հայտնելով խորունկ չնորհակալություններս, մնամ բարևներով և հարգանքներով

Ձեր անկեղծ Ավետիք Իսահակյան

171. ՍՈՓՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 22 հոկտեմբ<երի>, Կիսլովոդսկ

Սիրելի Սոֆիկ և Վիգեն ջան.

Ստացա Լենինական ուղարկած ձեր նամակները: Ես այստեղից արդեն մի նամակ գրել եմ ձեզ Շավիլի հասցեով: Իսկ սեպտեմբերին ուղարկել եմ փող՝ 30 դոլլար Bois de Boulagne-*ի հասցեով:*

Ամսիս 25-ին կթողնիմ Կիսլովոդսկը, Թիֆլիզ և Լենինական մի քանի օր մնալով կերթամ Երևան. և կսկսեմ Փարիզ գալու համար դիմումը կրկնել. կարծում եմ, որ խոստումները կկատարվեն:

Երևանից փող կտեղափոխեմ: Ձե՞ս կարող Գեղամից էլի մի 50 դոլլար ստանալ, ես այստեղ կվճարեմ: ՀՕԿ-ը այլևս չի ընդունում:

Առողջությունս հիմա բավական լավ է, բայց ես արդեն ծեր մարդ եմ. խիստ դիետ. ծխել չկա, խմել չկա. քիչ ուտել, շուտ-շուտ ուտել, ծանր ման գալ, քիչ ման գալ. շուտ քնել, գիշերը չպարապել, չհուզվել, մի խոսքով ծերացած մարդ:

Ձերոնց մասին միամիտ եղի՛ր, լավ են, վատ բան չեմ լսել: Մերոնք էլ լավ են:

Երևանից կղրկեմ պատկերս, նոր նկարված:

Ինչպե՞ս անցավ Վիգենի քննությունները: Բեռլինից ստացա՞ր թռչակը, գրի՛ր իսկույն դրանց մասին:

Գրիր Երևանի հասցեիս:

Դիմիր՝ նոր ֆրանսական վիզա ստանալ, եթե հարկավոր է. գուցե հնով կարելի լինի գալ. մի խոսքով լավ տեղեկացիր. դիմի՛ր դարձյալ մեր բարեկամի միջոցով: Դու լավ գիտես արդեն, թե ում պիտի դիմես:

Ի՞նչ պիտի անե Վիգենը, եթե քննությունը չկարողանա բռնել. դրա մասին չես գրում. անչուշտ մտածել ես: Դրա մասին էլ գրիր, եթե կտրվեց քննությունից:

Շատ բարևներ բոլոր բարեկամներին. Ջավոյենց, Նիկոլային, Գաբոյին, Ջավենին, կնոջը, տիկին Երվանդյանին, փոքր Ջավենին, վարդապետներին Ս. Ղազարի, բժ. Թորգոմյանին, Տեր-Օհանյաններին, Համաստեղին, Զոբանյա-

նին, Դավիթ-Բեկին, Մանյային: (Զուբարը կարծեմ հիմա Բաքու է, վաղուց է չեմ տեսել նրան, Կիսլավոդսկ գալուս՝ նա մի քանի օր առաջ Թիֆլիզումն է եղել): Եվ բոլորին, որոնց չեմ հիշում այս րոպեիս:

Համբույրներով քեզ և Վիգենին:

Ջեր Ավետիք

Մ՚ը մասումն եք Փարիզի, 5 թե 14 (երկուսն էլ դրել ես):

172. ՍՈՓՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 17 նոյեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա վերջին նամակդ, ուր գրում ես թե Բերլինից գրում են, որ ստիպենդիայի մասին կարգադրություն չկա:

Ուղղակի չափազանց զարմանալի է դա: Նախագահը՝ Սահակը, անթիվ անգամ հայտնել է ինձ, որ դա կարգադրած է: Հիմա նա այստեղ չէ, Մոսկվա է, մի քանի օրից հետո կգա, և խնդիրը կպարզվի:

Բայց ավելի լավ կլիներ, որ դու այդտեղ դտնեիր մի ստիպենդիա: Այնքան գտնում են ուրիշները, մի՞թե դու չես կարող: Աշխատիր:

Իմ գալն էլ կախված է նախագահի վերադարձից. խոստացել էր աշնանը. հիմա արդեն ժամանակն է: Տեսնենք ի՞նչ դուրս կգա:

Կիսլովոդսկից գրել էի, որ նորից վիզա հանեիր Ֆրանսիա մտնելու համար. երևի, աշխատում ես և կհաջողես:

Հիմա այլևս բանկը փող չի տեղափոխում. երեկ փող պիտի ուղարկեի, մերժեցին: Փող տեղափոխելու իրավունքը պիտի Փարիզից գա: Պետք է դիմես Փարիզի Ռուսա-

կան Միության դեսպանատանը, երևի կոնսուլին, հայտնես-ապացուցես, որ դու և Վիգենը ապրում եք իմ միջոցներով, գտնվում եք իմ խնամքի տակ, և նրանից թուղթ առնես այդ բանը հաստատող և ուղարկես ինձ, նոր այդ թղթի հիման վրա բանկը կհամաձայնի փող տեղափոխել: Շուտով արա այդ բանը:

Առայժմ դու Գեղամից 50 դոլլար վերցրու, այն պայմանով որ ես այստեղ վճարեմ ում որ նա կկամենա:

Ջմռռանաս Գեղամին ասել, որ իր եղբայրը՝ Հովհաննեսը[1] ողջ և առողջ է, և ուսուցչություն է անում Բաքվում:

Տրամադրություն չունիմ երկար գրելու. հույս ունեմ որ Վիգենի քննությունը լավ անցավ, և լավ է ձեր երկուսիդ առողջությունը:

Համբույրներով Ձեր Ավետիք

Սեպտեմբերին ուղարկածս 30 դոլլարը Bois de Boulogne*-ի հասցեով ստացա՞ր թե ոչ:*

173. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1928, 8 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի ջան.

Անսահման ուրախացա Վիգենի հաջողության համար: Մի ծանր քար ընկավ սրտիս վրայից:

Խորհուրդս գյուղատնտեսությունն է, որ մեծ ապագա ունի Հայաստանում, իսկ Վիգենը պիտի Հայաստանում գործե, իրեն ժողովրդի մեջ և իրեն ժողովրդի համար: Պիտի ապրի Հայաստանում, պիտի սիրե մեր ժողովուրդը, նրա կուլտուրան, նրա զարգացումը, նրա ապագայի համար աշխատե: Սրանից դուրս երջանկություն չկա – ո՛չ մի տեղ, միայն հայ ժողովրդի ծոցում, նրա հետ:

Իմ արտասահման գալս, եթե խոստումները կատարվեն, չուտով գլուխ կգա. մի կամ երկու ամսվա հարց է: Սպասում եմ ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյանին, որ վերադառնա Մոսկվայից և վերջացնե: Ջեմ կարծում, որ արգելքներ լինեն. ամենաչատը մեկ տարի կմնամ, հետո միասին կդառնանք, իսկ Վիգենը կմնա, կսովորի:

Հեռագրեցի Մոսկվա ընկեր Սահակին, որ ձեզ փող տեղափոխելը կարգադրե. մոտ 20 օր կա:

Հետո գրեցի, որ Մխության կոնսուլին դիմես, ցույց տաս, որ տղան ուսանող է և դուք կարիքի մեջ եք, որ ես Երևան եմ, և այստեղից եք փող ստանում, ինձնից. նա թուղթ կտա քեզ, և կղրկես ինձ: Այդ դեպքում բանկը փող կտեղափոխե:

Բայց այս երկու օրս մի ուրիշ ճամփա ցույց տվին ինձ. վաղը պիտի փորձեմ, գուցե հաջողվի:

Փողի հարցը չա՛տ է տանջում ինձ. դա որ լուծվի, մնացածը ոչինչ:

Առողջությունս բավական լավ է. երբ ջղերս լավ են լինում, հոգիս հանգիստ և քիչ եմ տանջվում, այն ժամանակ սիրտս էլ լավ է աշխատում:

Մեկ գայլ ձեզ մոտ, Վիգենի դրությունը բոլորովին ապահովեի, «Ուստա Կարոն» էլ վերջնականապես ավարտեի, տպեի, հետո ինչ կլիներ, թող լիներ: Մահը մերն է, մենք՝ մահինը:

Ուղարկում եմ այս երեք լուսանկարս քեզ և Վիգենի համար:

Շատ սիրով կբարևես Գեղամին, Սիրանուշին, կհամբուրես երեխային: Կբարևես մեր թանկագին բարեկամներին՝ Նիկոլային, Զավեններին, փոքրիկ Զավենին, Տեր-Օհանյաններին, բժիշկ Թորգոմյանին, Զոբանյանին, Զուբարի կնոջը, Դրաստամատին և կնոջը, կբարևես Դանիել-Բեկին, Զավոյենց, Մխիթարյաններին և բոլորին:

Ընկեր Դանուշը գուցե հիմա այդտեղ է, բարևիր. նա քեզ չա՛տ պետք կգա. չա՛տ ազնիվ մարդ է:

Շատերը բարևում են քեզ՝ Սիսակը, Գարեգին Լևոնյանը, Միշոն, կինը, Վիկտորյան և շատերը:

Համբույրներով, քո՝ Ավետիք

Ներփակ նամակը հանձնիր տիկ. Դրաստամատին:

174. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1928, 8 դեկտեմբերի, Երևան>

Շա՛տ սիրելի Վիգեն ջան.

Երբեք կյանքիս մեջ այնքան չէի ուրախացել, որքան ուրախացա, լսելով հաջող քննություն բռնելդ և դիպլոմ ստանալդ: Ապրի՛ս, տղաս, չա՛տ ապրիս: Հիմա քո բախտդ որոշ է և վճռված է. կյանքը առաջդ է, մնում է նույն սիրով և հաջողությամբ չարունակես: Մի քանի տարի էլ լուրջ աշխատանք, և կլինիս կյանքիդ տերը, կամքիդ իշխանը, իսկական մարդ:

Աշխատի՛ր, պարապի՛ր և քեզ առողջ պահիր, և եղիր քաջ, համարձակ, և մի՛ վախեցիր արգելքներից ու խոչընդոտներից:

Ազատ ժամերիդ հետևիր հայկական կյանքին, Հայաստանի իրականությանը և սիրի՛ր Հայաստանը և նրա ազնիվ, աշխատավոր, չա՛տ տառապած ժողովրդին, ու պատրաստվիր նրան ծառայելու՝ Հայաստանում, ազնիվ և անկեղծ կերպով:

Իմ խորհուրդս է սովորես գյուղատնտեսություն՝ agriculture, agronomie *և հատկապես նրա պտղագիտական, մրգեր հասցնելու մասը,* fruit conserve[1] *չինելը, չորացնելը, պտուղների նոր տեսակներ առաջ բերելը,*

ազնվացումը պտուղների՝ խաղողի, դեղձի, ծիրանի, խնձորի, տանձի և այլն:

Եվ առհասարակ գյուղատնտեսություն:

Ֆրանսիայում չա՜տ զարգացած է պտուղների այդ գիտությունը, որովհետև պտուղներ կան Եվրոպայում միայն Ֆրանսիայում, Իտալիայում, Սպանիայում, իսկ այդ մշակման ճյուղը գիտնականորեն՝ միայն Ֆրանսիայում:

Հայաստանում շատ մեծ ապագա ունի պտուղների գործը, ո՛չ միայն Հայաստանում, այլև ամբողջ Խորհրդային Միության մեջ: Շա՜տ քիչ մասնագետներ կան այդ ճյուղի մեջ. Հայաստանում դրեթե չկան, այլ կան պանիրի, յուղի, գինու:

Հիմա Հայաստանում պիտի ջրվեն նոր 40.000 հեկտար հողեր Երևանի մոտ, հատկապես միայն այգինների համար — պտուղների համար: Գյուղատնտեսություն-այգեգործությունը չա՜տ գեղեցիկ գիտություն է և գեղեցիկ գործ, և առողջարար է, և բանաստեղծական: Բնության մեջ պիտի լինես՝ հողի, ջրի, արևի հետ, դյուզացիների, մշակների, բանվորների հետ, որ չա՜տ սիրելի մարդիկ են: Գործ կունենաս ձիերի, եղների հետ, անասուննների հետ, որ ավելի լավ է, քան հիվանդների հետ:

Բացի սրանից, չա՜տ ապահով գործ է. ամեն տեղ այդ մասնագետների մեծ պահանջ կա:

Բժշկություն խորհուրդ չեմ տալիս. ծանր գործ է, բարդ, դժվար: Բժշկական գիտությունը, երկարատև բան է նրա սովորելը. կասկածելի է նրա արժեքը, մինչև փորձված բժիշկ լինելը, չա՜տ մարդ պիտի մեռցնել. շատ չառլատանություն կա բժշկության մեջ, և վերջապես, անթիվ բժիշկներ կան ամեն տեղ, որոնք աղքատ վիճակի մեջ են. միայն անվանի բժիշկներն են հաց [աչխ] վաստակում: Եվ վերջապես, դու հոգով նուրբ տղա ես, քնքուշ ես. բժիշկի համար պետք է լինել պինդ ջղերով մարդ, գործ

ունենալ դիակների, մեռնողների հետ – չա՛տ ծանր բան է, քո գործդ չէ: Բժիշկը մի քիչ չառլատան, աֆերիստ պիտի լինի. դու այդ չես կարող լինել և պետք չէ, որ լինես:

Գյուղատնտեսությունը ազնիվ գործ է, խաբեբայություն չկա:

Ատամնաբուժությունը դատարկ բան է. գուցե չահավետ է, բայց չեմ ուզում այդ սովորես. հասարակ բան է, ինչքան ուզում են գովեն: Ես չեմ ուզում: Ինչ գործ ունես հոտած բերանների հետ:

Եղիր գյուղատնտես, կլինես առողջ, կլինես հասարակական գործիչ և մեծ գործ կկատարես մեր նոր ոտքի կանգնող Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Կմտցնես նոր գիտական մեթոդներ, կուլտուրա, մեքենաներ, և ազատ բնության մեջ չա՛տ ժամանակ կունենաս կարդալու, մտածելու և ուսումնասիրելու բնությունը, բնական գիտությունները, բոտանիկա, զոոլոգիա, գեոլոգիա, բիոլոգիա:

Կարոտալի համբույրներով քո հայր՝ Ավետիք

175. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 12 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Մի երկու օր առաջ ապահովված նամակ գրեցի, և ուղարկեցի երեք հատ պատկերներ:

Փողի հարցը այս երկու օրս կորոշվի: Նույնպես ընկ. Ս. Տեր-Գաբրիելյանը կգա և դրությունս կորոշվի: Գլխավորը ձեզ փող հասցնելն է. իմ գալը վնաս չունի՝ թե մի քիչ էլ ուշանա:

Գրել էի, որ Վիգենը գյուղատնտեսություն սովորի, բոլոր կուրսը և մասնավորապես Pommelogie[1]*, բայց դուք տեղում ավելի լավ կարող եք ընտրել. քիմիա, քիմիա ինդուստրիել, էլեկտրական դիտուԹյուններ, և վերջապես ինչ որ ինքը սիրում է, կարող է և սրտովն է:*

Ռուբենի ընտանիքը ուզում է Ամերիկա գնալ, անցագրի դիմում տվել են, բայց դեռ պատասխան չկա:

Ջրաղացը չինվել է, բայց պարտքեր պիտի տալ: Առայժմ օգուտ չունի: Բայց էլի լավ եղավ, որ չինվեց:

Այս տարի Հայաստանում չա՞տ մեղմ ձմեռ ունենք, տեսնենք ինչպե՞ս կլինի:

Բոլորս լավ ենք, առողջ և աշխատում ենք:

Եթե խաղաղություն լինի երկրում և դուրսը, լավ կլինի Հայաստանի վիճակը. օրեցօր առաջ է գնում, տնտեսապես և կուլտուրապես: Շատ նոր, մեծ շենքեր են չինված ու չինվում են: Լենինականը հիմա ունի էլեկտրականյան, փարթամ լույս:

Արթիկի տուֆը մեծ ապագա է խոստանում, Լենինականից մինչև Արթիկ, Ալագյազի տակը, երկաթուղու դիծ են չինում: Իսկ Երևանի մոտ չոր (ղրու) տեղերի ջրումը, որի վրա առնվազն 14 միլիոն ռուբլի են ծախսում, բոլորովին կփոխե Հայաստանի վիճակը. այդ բոլորը, մոտ 44.000 հեկտար հող, այդիներ պիտի տնկվին. Հայաստանը պարտեզ կդառնա:

Մի 10 տարի հետո անճանաչելի կլինի մեր երկիրը: Երանի՛ երիտասարդներին, որ պիտի տեսնեն ու վայելեն:

Մոռացա առաջին նամակի մեջ գրել, որ Փանոս Թերլեմեզյանը[2] նկարում է ինձ. մի-երկու օրից հետո կվերջացնե. չա՞տ հաջող նկար է: Բարևում է ձեզ:

Շատ սիրով բարևներ Գեղամին, կնոջը, համբուրիր եղբեխային և բարևներ Նիկոլային:

Շա՛տ համբույրներով Ձեր Ավետիք

176. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 19 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն.

Մոսկվայից վերադարձել է ընկ. Սահակը. այսօր մի վայրկյան տեսա նրան և ինձ հայտնեց, որ Մոսկվայից կարգադրել է Բեռլին, որ ուղարկեն Վիգենի ստիպենդիան: Եթե մինչև իմ նամակիս հասնելը չես ստացել, իսկույն գրիր [Բերլին] Բեռլին և հայտնիր, որ կարգադրված է:

Ընկեր Սահակը չա՜տ զբաղված է, այս երկու օրս նորից կտեսնեմ նրան և այդ կկարգադրենք վերջնականապես:

Երևի արդեն Խ. Միության (URSS) կոնսուլից ստացել ես այն թուղթը, որ գրել էի քեզ մի ամիս առաջ: Ստացիր և իսկույն ուղարկիր ինձ: Կրկնեմ. կոնսուլը պիտի մի թուղթ տա, ուր պիտի վկայե թե դուք կարիքի մեջ եք, թե ես եմ ձեզ փող ուղարկում և թե Վիգենը ուսանող է՝ և իմ միջոցներով (իրեն հոր) է ուսանում: Այդ թուղթի հիման վրա միայն բանկը կարող է փող տեղափոխել:

Ես այստեղ ուրիշ միջոցների եմ ձեռնարկում, տեսնենք՝ կհաջողվի, թե ո՛չ: Արսեն քեռուց[1] նամակ ստացա, ուր գրում է թե Մոսկվա իր եղբոր որդուն 50 դոլլար ուղարկեմ, որ նա էլ ձեզ 50 դոլլար տա: Այդ անկարելի է. երկրում դոլլար չկա, իսկ չուկայից չա՜տ թանկ գնով գուցե կարելի լինի ձեռք բերել. բայց դա սպեկուլյանտների գործ է, և ինձ անվայել. այդպիսի բան չեմ կարող անել:

Եթե Գեղամի պես կհամաձայնվի, որ Մոսկվա 100 րուբլի ուղարկեմ, և ինքը ձեզ 50 դոլլար տա, չա՜տ լավ, իսկույն կանեմ:

Արսենը ուզում է վաճառականություն անե. արդեն ուրիշ բանի չնորհք չունի. իր ողջ կյանքը չանտաժ և

խաբեբայություն է եղել և այդպես էլ կերթա: Շանտաժիստը միշտ չանտաժիստ կմնա: Իմ գնալը, [երևի] այսինքն ձեզ մոտ գալը, երևի, մի-երկու ամսվա հարց է դեռ. ուշանալը վնաս չունի, միայն թե ձեզ կարողանամ փող հասցնել: Ի՞նչ ընտրեց Վիգենը սովորելու՝ բժշկություն, գյուղատնտեսություն, քիմիա, թե՞ մի այլ բան: Գրեցեք:

Համբույրներով՝ Ձեր Ավետիք

177. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1928, 29 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Այսօր ստացա նամակդ, և արդեն պիտի գրեի:

Այսօր ուղարկեցի Վիգենի անունով 30 դոլլար. հիմա իրավունք տվին փող ուղարկել ամսական 30 դոլլար, Վիգենի անունով, իբրև ուսանողի:

Իսկ մի-երկու օր առաջ ընկեր Սահակը հեռագրով 100 դոլլար կարգադրեց, որ Փարիզի Խորհրդային торгпред*-ը քեզ հանձնի 100 դոլլար. երևի արդեն ստացար:*

Վիգենի ստիպենդիան որոշ է, բայց ցավն այն է, որ ամեն չորս ամիսը մեկ՝ կարգադրություն է լինում. այդպես է բոլոր ստիպենդիաների դրությունը: Դրա համար գրել էի, որ մի փոքր բան գտնեիր Վիգենի համար մինչև գալս: Իսկ իմ գալս խոստանում են և հույս ունեմ, որ կհաջողվի:

Գլխավորն էն է՝ որ կարողանամ ձեզ փող հասցնել:

Կոլյայից հույս չունիմ, թե փող ուղարկե. նա իր հոր տղան է[1]:

Վիգենը, ինչպես գրել էի, չա՛տ լավ կանե, որ սովորի գյուղատնտեսություն, կամ քիմիա, ո՛չ թե բժշկություն:

Իսկ սինեմատն – դրա մասին գաղափար չունիմ. լավ կլինի գյուղատնտեսություն կամ քիմիա սովորի, հետո սինեմայի արվեստը: Դեռ պատանի է, չ՛ոտ բան կարող է սովորել:

Ես լավ եմ. Երևանը այս տարի տաք է անցնում, մրսել չկա: Ապրում եմ, միայն տրամադրությունս անհանգիստ է, լավ չեմ կարող աշխատել:

Բայց պետք է հուսալ, սպասել, տոկալ, վերջը լավ կլինի:

Շնորհավորում եմ բոլորիդ նոր տարին, ջերմ բարևներ Գեղամին, Սիրանուշին, բժ. Թորգոմյանին, Զուբարին, Նիկոլային, Քոչարին, Զավեններին, Գաբոյին, Դրաստամատին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենին:

Ձեր Ավետիք

Նամակդ անսովոր կերպով չ՛ոտ ուշ եկավ. Փարիզում չ՛ոտ էին պահել:

178. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1929, 25 Հունվարի, Երևան

Սիրելի Սոֆի.

Ստացա վերջին նամակդ: Երևի արդեն ստացար 100 դոլլարը և դեկտեմբերին Վիգենի անունով ուղարկած 30 դոլլարը, ինչպես և հունվար ամսին ուղարկածս 30 դոլլարը:

Սիրելի Գեղամին ասա, երբ և ում որ կուզե՝ իսկույն կուղարկեմ 100 ռուբլին:

Արսեն քեռուն ասա, որ հիմա ոչ մի հնարավորություն չկա նրա պայմանը կատարելու. Ռուսաստանը մի երկիր է, ուր խիստ կերպով արգելված է ամեն մի սպեկուլյացիա: Վերջին դեկրետով, դոլլարը ամեն տեղ արժե 2 ռուբլի. այդպես գնվում և ծախվում է: Թո՛ղ նա միջոցներ դտնի 50 դոլլար հասցնելու, ում որ ուզում է, բայց ո՛չ իմ միջոցով, ես ոչ սպեկուլյանտ եմ, ո՛չ էլ մութի, արգելված գործերով զբաղվող:

Ասում ես՝ Փարիզում խիստ տարածված է դրիպը. լավ պահեցեք ձեզ. շատ վախենում եմ: Ես արդեն Փարիզից այդ բանի մեջ չա՛տ եմ վախենում. մտածում եմ՝ երբ դամ, ի՞նչ պիտի անեմ, որ ազատվեմ այդ սարսափելի հիվանդությունից, որ մահացու կլինի իմ թուլլ սրտի համար:

Ընկեր Ա. Եսայանին[1] հարևանցի կերպով տեսա. նոր է եկել, չա՛տ զբաղված է, կտեսնեմ:

Բարևներս հայտնիր Գեղամին, կնոջը, բժ. Թորգոմյանին, տ. Արաքսուն և իր ամուսնուն, Գաբոյին, Նիկոլա-

յին և բոլոր բարեկամներիս, նույնպես չնորհակալություններս:

Համբույրներով Ավետիք

179. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1929, 25 Հունվարի, Երևան

Սիրելի Վիգեն ջան.

Գրում ես, որ սովորելու ես արխեոլոգիա, մուզեոգրաֆիա և իր ճյուղերը: Շա՛տ լավ բաներ են, լավ է ևս ֆիլմը, բայց ինչ որ սովորելու ես, կարգին, հիմնավոր, լուրջ սովորիր: Ես ո՛չ մի բան ստիպմունքով չեմ ասել կամ պահանջել: Ինչ որ սիրտդ ուզում է, այն էլ սովորիր: Ես ուզում էի այնպիսի բաներ սովորեիր, որ պետք գայիր Հայաստանին և կապվեիր հայ ժողովրդի, նրա կուլտուրայի հետ: Արխեոլոգիան և իր ճյուղերը քեզ կկապեն մեր երկրի հետ. Հայաստանը, և դրացի երկրները, արխեոլոգիայի անսպառ մուզեյ են:

Լավ ես անում, որ սովորում ես անգլերեն և ռուսերեն. հիմքը դիր, մանավանդ ռուսերենի, հետո Մոսկվայում կկատարելագործես:

Այստեղ շատերը ուրախացան, որ այդ մասնագիտությունն ես ընտրել: Դե՛հ, ուրեմն, հաջողություն, աշխատի՛ր: Երևի հիմա լսում ես Սոլոմոն Ռայնախին[1], Շարլ Դիլին[2] և այլն:

Փարիզում երկու նշանավոր մարդիկ կան, ուսուցիչ և իր աշակերտը – Սորբոնի պրոֆեսոր Henri Facillon[3], *որ հայ արխիտեկտուրայով է կարծեմ պարապում, և իր աշակերտը,* Jurguis Baltrusaitiz[4]*-ը երկու անգամ, թե մի անգամ արդեն Հայաստան է եղել, և այս տարի էլ, կարծես, ուզում է գալ. երիտասարդ տղա է. ծանոթացիր հետը –*

ահա հասցեն. 5 villa Virginie, Paris, XIV: Համալսարանից կգտնես ավելի ճիշտ հասցեն:

Առողջ եղիր, լուրջ եղիր, սովորիր, ապագան առաջդ է, քեզ մի փչացրու:

Հազար համբույրներով, քո՝ Ավետիք

Շա՛տ ուրախ եմ, որ լավ բարեկամ ես Երվանդ Քոչարի հետ: Նա հանճարեղ տղա է, օգտվիր նրա խրատներից, խորհուրդներից: Շա՛տ բարևիր նրան և մյուս ընկերներիդ:

Քո Հայրդ

180. ՀԱԿՈԲ ԽԱՆԼԱՐՑԱՆԻՆ

1929, 28 Հունվարի, Երևան

Սիրելի կոլլեգա Հակոբ Խանլարյան.

Երբ Ձեր սիրալիր նամակը և ինձ նվիրած դողտրիկ բանաստեղծությունը ստացա՝ գտնվում էի հոգեկան մի մռայլ և ծանր վիճակում, և ինչպես արևի մի կտոր ջերմացրեց ու պայծառացրեց լքված սիրտս: Մխիթարվեցի չա՛տ, որ կան հեռավոր, ընտիր հոգիներ, որոնք սիրում են ինձ, հիշում են ինձ, որոնց համար թանգ եմ ու արժեք ունեմ:

Շա՛տ և շա՛տ շնորհակալություն, հոգուս խորքից շնորհակալություն, սիրելի ընկերդ իմ: Նվերդ կարդացի մի քանի մտերիմ ընկերների մոտ, հավանեցին և ուրախացան ինձ հետ:

Ընդունեցեք, խնդրեմ, սիրելի Խանլարյան, սրտագին բարևներս: Միշտ պիտի սիրով և կարոտով հիշեմ Ձեզ:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

28.I.1929
Երևան

181. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 5 մարտի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ձեր վերջին նամակը ստացել եմ փետրվարի 18-ին, որ գրել էիք նույն ամսի 3-ին: Մինչև օրս ուրիշ նամակ չունեմ: Զիմացա, թե վերջնականապես Վիգենը, որ ընտրել է արխեոլոգիա, հաճախո՞ւմ է, թե՞ փոխել է իր միտքը: Յանկալի է չա՛տ, որ մի բան միանգամից ընտրե և հաստատ հետևի:

Գրում ես, որ ստացել եք դեկտեմբերին ուղարկածս 30 դոլլարը Վիգենի անունով, իբրև ուսանողի, նրանից հետո ուղարկել եմ հունվարի 10-ին, փետրվարի 5-ին և երեկ մարտի 4-ին, 30-ական դոլլար, ուրեմն միասին 120 դոլլար: Գրեցեք ստանալներիդ պես:

Առողջությունս լավ է. այնքան գրիպ կա, բայց դեռ չեմ հիվանդացել: Դուք ինչպե՞ս եք. վախենում եմ՝ հիվանդացած լինեք...

Մի-երկու օր հետո գնում եմ մի քանի օրով Լենինական և Թիֆլիզ, երևի մինչև մարտի վերջերը այնտեղները կանցկացնեմ: Հետո կվերադառնամ Երևան և, կառավարության խոստման համաձայն, կձեռնարկենք անցագրի հարցին:

Նիկոլային ասա, որ էջմիածնում հանդիպեցի իրեն քրոջը՝ Շուշանիկ Սարգսյանին: Տեղեկություններ հարցրեց եղբոր մասին: Եվ գոհ եղավ. միայն խնդրեց, որ իրեն նամակ գրե:

Բուենոս-Այրեսում (Արգենտինա) տպվել է իսպաներեն լեզվով իմ «Աբու-Լալա-Մահարին»[1]: Մի օրինակ ուղարկված էր ինձ թարգմանչի կողմից: Նրան նամակ գրեցի, որ ձեզ էլ մի օրինակ ուղարկե. եթե չստացաք, գրեցեք և մի օրինակ խնդրեցեք, ահա հասցեն՝ A. S. Agayan, Paragnay

1877, Buenos Aires (Argentina). *Լավ տպագրություն է, պատկերազարդ, իմ պատկերս էլ վրան: Էլ ուրիշ բան չունիմ գրելիք: Շա՛տ բարևներ Դրաստամատին, իր տիկնոջը, Մանյային և մեր բոլոր բարեկամներին: Շտապում եմ նամակս վերջացնել, փոստին հասցնելու:*

Համբույրներով և կարոտներով, ձեր՝ Ավետիք

Մի չա՛տ ցավալի լուր. Գեղամի քույրը, Թագուհի քույրիկը, Շուշիկի մայրը, մի 10 օր առաջ՝ գրիպի հետևանքով՝ թոքերի բորբոքումից մեռավ: Գեղամին դու մի՛ հայտնիր: Կնոջը հայտնիր: Թո՛ղ տխուր լուրը քեզնից չլսե:

Քո Ավետիք

182. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 13 ապրիլի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Վաղուց է ձեզնից նամակ չունիմ: Վերջին նամակդ գրված է մարտի 1-ին. ինչո՞ւ եք լռել, ի՞նչ կա:

Այս երկու-երեք օր է, որ ես Երևանումն եմ: Լենինականից գրել եմ ձեզ նամակ, երևի ստացաք:

Երեկ մեր նախագահը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը, հեռագրով փարիզ մեր դեսպանատան վրա՝ կարգադրեց ձեզ տալ 150 դոլլար, եթե դեռ չես ստացել, գնա ստացիր: Մարտին ուղարկել եմ ձեզ 30 դոլլար, մոտ օրերս էլ կուղարկեմ նույնչափ:

Ես վիզա կստանամ Փարիզ գալու համար մայիսի սկզբներին. այդ ժամանակ միայն հնարավոր է, որովհետև կառավարությունը չա՛տ զբաղված է նոր ընտրություններով[1]: Հարցը լուծված է վերջնականապես,

մնում է տեխնիկական կողմը: Հունիսի սկզբներին կլինեմ Փարիզ: Հիմա հանգիստ սրտով Վիգենը կպարապի, և դու էլ չես ջղայնանա:

Դու մի՛ լսիր դաշնակցական թերթերին. նրանք իրենց քաղաքական հաշիվներն ունեն և ուզում են իմ դեպքը օգտագործել:

Ես Հայաստանին, նրա ժողովրդին և նրա կառավարությանը բարեկամ եմ, և վերջին հաշվով նրանց հետ եմ: Արդեն դրանցից դուրս էլ ոչինչ չունենք, որով ապրենք ու ոգևորվենք: Դրանցից դուրս մենք՝ հայերս, կլինենք մի թափառական և արհամարհված ազգ:

Ես շատ եմ կապված մեր երկրի հետ և դժվար թե երկար կարողանամ հայրենիքից դուրս ապրել: Սակայն առանց ձեզ էլ անտանելի դժվար է մենակ, անընտանիք ապրել. այդ հարցը պիտի լուծել: Երևի, Վիգենին կթողնենք մինչև համալսարանն ավարտելը մենակ Փարիզում, մի լավ ընտանիքում, իսկ մենք կվերադառնանք և ընդմիշտ կտեղավորվենք Երևանում:

Այստեղ լավ չրջան ունիմ. մեր ինտելիգենցիան Երևան է հավաքված: Գարունն՝ու աչունը չա՛տ գեղեցիկ են Երևանում, ամառները դուրս կգանք: Իսկ ձմեռը, եթե լավ [բնարա] բնակարան ձեռք բերենք, նույնպես լավ կանցնի:

Փարիզ կգամ Մոսկվայով, կմնամ այնտեղ մի քանի օր, և մի քանի օր էլ Բեռլին: Բեռլին թողած գրադարանս կմաքրեմ և լավ գրքերը կամ կտեղափոխեմ Երևան կամ պահ կտամ՝ մինչև գրուբյունս որոշելը:

Վերջացնում եմ նամակս: Շատ բարևներ մեր լավ բարեկամներին, Գեղամին, կնոջը, Քոչարին, Գաբոյին, բժ. Թորգոմյանին, Զոբանյանին, <Զավեններին> և այլն, Հ. Գաբրիելին:

Կարոտալի համբույներ քեզ և Վիգենին:

Ավետիք

183. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 25 ապրիլի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա վերջին նամակդ: Սխալվում ես՝ որ գրում ես թե նամակ չեմ գրել: Բոլոր նամակներս հասել են. գուցե մի-երկու նամակ կորել են, որ կարող է պատահել, ինչպես ձեր՝ Գեղամի տնից գրած բացիկը չեմ ստացել մինչև օրս:

Գրել եմ նամակ, կարծեմ ապրիլի 14-15, որ մեր նախադահը Փարիզ դեսպանատան վրա տեղափոխել է 150 դոլլար, երևի ստացար: Ապրիլին չկարողացա ձեզ 30 դոլլար տեղափոխել բանկի մի թյուրիմացության պատճառով:

Գրել էի, որ մայիսի սկզբներին վիզան կստանամ Փարիզ գալու, լավ կլինի, որ դու էլ աշխատես իսկույն ֆրանսական վիզա առնել, որ Բերլին չմնամ կամ մի-երկու օր դրադարանիս համար: Մոսկվայում մի շաբաթ կմնամ, կամ 2 շաբաթ, այնպես լինի, որ Մոսկվա եղած օրերս վիզան ստացված լինի: Ես երևի մայիսի վերջերին կլինեմ Մոսկվա, հազիվ կարողանամ ավելի չուտ շարժվել:

Գեղամին ասա, ո՞ւմ հանձնեմ 100 րուբլին (50 դոլլար). իսկույն գրիր, որ կարգադրեմ. եթե ոչ կթողնեմ այստեղ մեկի մոտ 100 րուբլի, որ երբ կարգադրե՝ ուղարկվի հասցեին:

Միաժամանակ. Մոսկվա ձերոնց նամակ գրի՛ր, որ Մոսկվա լինելիս՝ ձեր մասին տեղեկություն ունենամ:

Ուրիշ ոչինչ: Խնդրում եմ Զոպանյանին ներողություն խնդրիր, որ մինչև օրս չպատասխանեցի, նկատի ունենալով գալս, ավելորդ հաշվեցի դրելը:

Համբույրներով և բարևներով՝ Ձեր Ավետիք

184. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 20 մայիսի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երեկ ստացա բաց նամակդ: Ստացել եմ ապրիլի 29-ի նամակդ, մայիսի 1-ինը չեմ ստացել դեռ: Ստացա և վիզայի հեռագիրը:

Անպատճառ ստացած կլինես 150 դոլլարը. մենք հեռագիր ունենք բանկից, որ հանձնված է. իսկ չգիտեմ ստացա՞ր մարտ ամսին ուղարկածս 30 դոլլարը: Իմացած եղի՛ր որ ապրիլին և մայիս ամիսներում փող չեմ ուղարկել:

Գրիր, գուցե մինչև այդ ժամանակ դեռ Հայաստանում լինեմ, թե վիզան ի՞նչքան ժամանա<կա>միջոց ունի – նորից 6 (վեց) ամիս:

Անցագիրս կստանամ մոտ օրերս, անպատճառ: Կարծում էի, որ մինչև մայիսի վերջերը Մոսկվա կլինեմ, չեղավ. մի քիչ կուշանա: Վնաս չունի. հազիվ կարողանամ հավաքվել. բացի այդ, մի-երկու կարևոր ընկերներ բացակա են Երևանից. նրանց պիտի անպատճառ տեսնեմ. վերադարձիս հարցը հաստատուն որոշեմ և այլ գործեր:

Կնշանակե հունիսին կլինեմ ձեզ մոտ: Անցյալ նամակովդ գրած առաջարկդ չեմ կարող կատարել փող չլինելու պատճառով: Ինչքան որ ունենամ՝ հազիվ օգտե ճանապարհածախսին և մի քիչ էլ մուտս լինի, երբ Փարիզ գամ:

Առողջություն վատ չէ առայժմ:

Շտապում եմ վերջացնեմ նամակս: Առայժմ այսքան: Հետո կգրեմ:

Համբույրներով ձեզ՝ Ավետիք

185. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 10 Հունիսի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Տեսնում եք, որ դեռ Երևանումն եմ: Գալս ուշացավ բոլորովին կողմնակի պատճառներով: Երևան հյուր եկան Ադրբեջանի և Վրաստանի գրողները՝ բանաստեղծներ և վիպասաններ, 40 հոգի, թե՛ ծանոթանալու Հայաստանի հետ և թե՛ բարեկամական-ընկերական դաշինքներ կնքելու Հայաստանի գրողների հետ: Մի շաբաթ է նրանցով ենք զբաղված՝ դիմավորեցինք նրանց մինչև Ղարաքիլիսե՝ ավտոմոբիլներով, Սևանի վրայով: Պատցրեցինք նրանց մեր երկրի մի քանի վայրեր. ժողովներ, ընդունելութիւններ, հանդեսներ, ճաշեր: Այսօր մենք՝ հայ գրողներս մոտ 17 հոգով, նրանց հետ գնում ենք Լենինական, այնտեղից էլ Վրաստան և ապա Ադրբեջան: Այս կտևե մի 15 օր, հետո կվերադառնանք նորից Երևան:

Շա՜տ ուրախ և բովանդակալից օրեր ենք անցկացնում:

Երևան վերադարձից հետո իմ գալու թղթերը պատրաստ կլինեն, ապա մի քանի օր էլ իմ մնաս-բարևը կտևե, և ճանապարհ կընկնեմ դեպի Մոսկվա:

Վնաս չունի որ մի քիչ կուշանամ. ամեն բան պիտի կարգին լինի: Շատը գնաց, քիչը մնաց: Իմ հարաբերութիւնները իշխանութեան հետ լավ են եղել, բայց այս տարի շա՜տ և շա՜տ լավացել են: Նրանք ինձ հիմա հասկացել են, ամեն թյուրիմացություն պարզվել է և ես նրանցն եմ, նրանք էլ իմը: Այս մասում ես շա՜տ ուրախ եմ: Այլևս պարզ է, որ ես կապված եմ Հայաստանի հետ և նրա իշխանութեան հետ: Իմ մնալը բարիք եղավ ինձ համար:

Իմ արտասահմանում մնալը կլինի ժամանակավոր, մի տարվա չափ, և նորից կդառնամ Հայաստան ու կհաստատվեմ: Հայրենիքից դուրս չկա կյանք և բախտավորութիւն:

Հիմա տպում եմ երկու գրքույկ՝ «Աբու-Լալա-Մահա-րին»[2] և մի քանի պատմվածքներ[3]: Իմ բացակայության ժամանակ կտպվեն բանաստեղծություններս: Արսենն[4] ե-կավ և տեղեկություններ բերեց ձեզնից: Շատ ուրախ եմ:

Ուրեմն՝ մի քիչ էլ համբերեցեք, ամեն բան լավ կլինի:

Շա՛տ և շա՛տ բարևներ մեր բոլոր բարեկամներին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենիս:

Ձեր Ավետիք

186. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ

1929, 17 Հունիսի, Թիֆլիզ

Սիրելի ընկեր Էփրիկ.

Այսօր գնում ենք Բագու. կմնանք մինչև, երևի ամսիս 23-24ը: Հետո ես կլինեմ Լենինական և կմնամ մի շաբաթ: Եթե պատրաստ կլինի մինչ այդ Աբու-Լալան, խնդրում եմ երկու օրինակ ուղարկես ինձ՝ այս հասցեով. Լենինա-կան, փողոց 27, տուն 73:

Շատ բարևներ հայրիկին, տ. Թամարին և Ձեզ:

Ձեր Ավ. Իսահակյան

187. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 2 Հուլիսի, Լենինական

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Երևանից ձեզ գրեցի, որ Հայաստան հյուր եկան, Հու-նիսի 5-ին, Վրաստանի և Ադրբեջանի բանաստեղծներն ու գրողները, մի շաբաթ մնացին և հայ գրողներիս հետ-ները վերցրին և հյուր տարան: Եղանք Թիֆլիսում, նրա

չրջակաները և Կախեթիա. չա՜տ բան տեսանք, նոր շինուԹյուններ, ֆաբրիկներ: Հրաշալի ընդունելուԹյուն, հանդեսներ: Ապա գնացինք Բաքու, Գանձա: Նորից մեծ հանդեսներ, և տեսանք չա՜տ նորուԹյուններ, շենքեր, ֆաբրիկներ և կուլտուրական ու տնտեսական նվաճումներ: Շա՜տ հետաքրքիր էր և չա՜տ ուսանելի: Բայց այս ճամփորդուԹյան չնորհիվ գալս ուշացավ: Ջմասնակցել չէի կարող, չա՜տ կարևոր էր ինձ համար, մերժելը վատ տպավորուԹյուն կԹողներ ԹԷ՛ իմ ընկերների և ԹԷ՛ Վրաստանի և Ադրբեջանի գրողների վրա: Այսքան ուշացել է գալս, Թող մի քիչ էլ ուշանա:

Հիմա մի-երկու օրից հետո գնում եմ Երևան, և հավատացած եմ, որ պասպորտս պատրաստ կլինի, և շուտով կմեկնեմ[1]:

Քեզ արդեն հայտնի է, որ այլևս ո՛չ մի խոչընդոտ չկա Փարիզ գալուս համար: ԿառավարուԹյունը (իմացիր, որ ներկա մեր կառավարիչները հինը չեն, նոր ղեկավարուԹյուն է) չա՜տ բարյացակամ է դեպի ինձ և իմ գալու մի քիչ ուշանալը ավելի օգտակար եղավ ինձ համար: Շատ ԹյուրիմացուԹյուններ պարզվեցին՝ ի նպաստ ինձ: Այժմ ես ԹուլյտվուԹյուն ունիմ արտասահման գալու և վերադառնալու, և երբ ուզենամ՝ նորից գնալու և դառնալու:

Պողոս Մակինցյանը գալու է Փարիզ Торгпред*-ի մեջ աշխատելու, երևի միասին կգանք, կամ նա ինձնից մի քիչ շուտ, կամ մի քիչ ուշ, բայց անպատճառ: Դուք այսքան դիմացել եք, մի քիչ էլ դիմացեք. պարտքեր արեցեք, կգամ, կվճարեմ: Իսկ եԹե տեսնեմ, որ մի քիչ կուշանամ, իսկույն փող կտեղափոխեմ ձեզ:*

ԱռողջուԹյունս լավ է, միայն ճամփորդուԹյունը, հանդեսները, քեֆերը, անքնուԹյունները չա՜տ հոգնեցրին ինձ, սիրտս մի քիչ վատացավ. հիմա Լենինականում հանգստանում եմ. ամբողջ օրը պառկում եմ, քնում եմ, և բարեկամների այցելուԹյուններն ընդունում և վերանո-

րոգում հին հուշերը, հին մարդկանց կյանքը, որոնք չա՛տ պետք են «Ուստա Կարոյիս» համար:

Վերջապես չա՛տ և չա՛տ բաներ ունիմ ձեզ պատմելու, և մանավանդ գրելու:

Հույս ունիմ, որ լավ եք, առողջ և հանգիստ:

Համբույրներ քեզ և Վիգենին, բարևներ բարեկամներին:

Ձեր՝ Ավետիք

«Աբա-Լալան» արդեն լույս տեսավ. մնում է մյուս գրքույկը, նա էլ մոտ օրերս:

Ավետիք

188. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ

1929, 3 Հուլիսի, Լենինական

Սիրելի Միսակ.

Բաքվից վերադառնալով՝ տեսա «Աբու-Լալան»[1] – չա՛տ ուրախացա: Վերջապե՛ս:

Ես դեռ մի քանի օր կմնամ Լենինական: Կուզենայի քա-նի դեռ չեմ մեկնել՝ «Ջիբուխն»[2] էլ լույս տեսներ, միամտեի:

Շատ բարևներ Թամարային[3] և քեզ: Նույպես մյուս ընկերներին:

Ձեր Ա. Իսահակյան

189. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 23 Հուլիսի, Երևան

Սոֆի և Վիգեն ջան.

Երևի ստացել եք Լենինականից գրած նամակս՝ Բաքվից վերադառնալիս: Ահա երեք շաբաթ է՝ Երևանումն եմ, և ա-

մեն օր սպասում եմ անցագրիս դալուն, Թիֆլիզից: Հիմա հույս ունեմ, որ մոտ օրերս դա, և ճանապարհ ընկնեմ:

Սակայն ուրախ եմ, որ կարողացա մի քանի օր առաջ ձեզ ուղարկել 200 դոլլար: Երևի արդեն ստացաք, հեռագրով ուղարկվեց Eurobank*-ի միջոցով, այն բանկի, որի միջոցով անցյալ անգամ ստացար 150 դոլլարը: Այս աջողեցրեց նույնպես մեր նախագահը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որ անսահման լավ, բարի մարդ է:*

Այսօր Բաքու տ. Զիլինկարյանին ուղարկեցի 100 ռուբլի: 2 ամիս առաջ ուղարկել էի, բայց ետ դարձավ. դու հասցեն մանրամասն չէիր գրել: Հիմա կստանա. հասցեն ճիշտ է:

Մամայիդ էլ նամակ էի գրել, երեկ պատասխան ստացա: Խեղճը սպասում է ինձ:

Ինչպե՞ս է ձեր առողջությունը: Ես բավական լավ եմ: Սարսափելի չոգեր եղան այստեղ. հիմա մեղմացավ: Միերկու օրով գնում եմ Արսեն քեռու մոտ Հյուր, հետո էլ, եթե անցագիրս ուշացավ, մի մոտիկ տեղ, այսպես, մինչև որ անցագիրս ստանամ:

Շատ համբույրներ ձեզ:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

190. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 6 սեպտեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացել եմ թե Մոսկվա և թե Երևան գրած նամակներդ: Վերջերս Լենինական էի, հով էր: Առաջարկեց կառավարությունը, որ նորից գնայի Կիսլավոդսկ. մերժեցի՝ թե էս է անցագիրս կստանամ և կմեկնիմ. բայց անցագիրս ուշացավ և ես էլ զրկվեցի Կիսլավոդսկից:

Հիմա ամեն օր սպասվում է անցագրիս թույլտվությունը Մոսկվայից. ամեն ինչ լուծված է. թիֆլիզն էլ համաձայն է, մնում է Մոսկվան, որը չի մերժի: Գոնե այդպես ենք կարծում: Ուրեմն շատը գնացել է, քիչն է մնացել: Առողջությունս վատ չէ, ոչինչ:

Ուրախ եմ, որ իր ժամանակին փողն ստացել եք և հնար կունենանք մի կողմ գնալու, գոնե մի քիչ Փարիզից դուրս գալու:

Քեռու վրա մի բարկացեք. ուրիշ հնար չկա. դրությունն այդպես է:

Ուրախալի լուր. Աբասին արձակել են բանտից. հիմա երեք տարով աքսորել են, բայց տղան հիվանդ է և կարիքի մեջ. հնար եղածի չափով օգնում եմ:

Ս. Խանոյանը[1] տեսավ ինձ. ուրախացա, որ եղել էր ձեզ մոտ: Նա նպաստեց իմ գործին: Ընկեր Դանուշը այստեղ է, նա էլ ձեռքի եկածն անում է իմ գործիս համար:

Ե. Զուբարը վերադարձավ սանատորիայից. հիմա լավ է, մի քիչ նիհարել է, սիրտը լավ է: Բարևիր Մանիային:

Շա՛տ ցավում եմ տիկին Տեր-Օհանյանի մահվան համար. խե՛ղճ կին, շա՛տ տանջվեց Անահիտի համար... Ցավակցությունս հայտնիր պ. Վարդգեսին և Աստղիկին ու Արտեմիսին: Շա՛տ և շա՛տ բարևներ բոլոր բարեկամներին:

Կարոտալի համբույրներ քեզ և Վիգենիս:

Ձեր Ավետիք

Լուսանցքում՝

Զմոռանամ ասել, որ մարտ ամսվա 30 դոլլարը հետ ստացա:

191. ՏԻՑԻԱՆ ՏԱՔԻՋԵԻՆ

1929, 19 սեպտեմբերի, Երևան

Душевная дружба трех крупных народов Закавказья □ грузин, тюрок и армян всегда была моей заветной мечтой. Взаимную ненависть и вражду этих вековых братьев я считал всегда историческим абсурдом. Помимо экономических и политических факторов, объединяющих народы, существует и еще один необходимый фактор □искусство вообще и в частности литература.

Я полюбил далекого испанца с тех пор, как прочитал «Дон-Кихота». Сервантес властно заставил меня полюбить свою родину, землю и людей своего отечества.

Благодаря «Элгуджи» Казбеги и ашугу Нахапету Кучаку я полюбил грузина, и благодаря им Грузия и грузины стали мне столь родственными.

Ибо своеобразный стиль, одежда и формы различных народов скрывают человеческое сердце и это сердце □ человеческое □объято одинаковыми чувствами, горестями и радостями. Наше личное сердце является неотемлемой частицей этого всемирного, общечеловеческого сердца.

Денационализировавший и ассимилировавший народы царский деспотизм ставил тысячи преград перед идеей братства народов. Молот великой октябрской революции разрушил это зло □царский деспотизм □и открыл широкий путь к взаимному пониманию, взаимному сочувствию и любви, к объединению народов.

Художественное слово □лучшее орудие для этой цели. Прекраснейшей симфонией родных языков мы воспоем всечеловеческое отечество. в котором ни один народ не будет больше притеснять другой, где человек больше не

будет эксплоатироваться себе подобным, где единым самодержцем будет справедливость.

Я чувствую мне счастливым, видя «Абу Лала Маари» на бессмертном языке великого Шота Руставели. Я <в истинности> рад, что мне представляется случай сообщить, что мой старший брат Бараташвили[1] вдохновлял меня. Его [в юношестве я сидел на коленях] прекраснейший Мирани увлек меня. Караван Абу Лала следует по следам коня Бараташвили…[2]

Аветик Исаакян

19. IX. 1929
Ереван

192. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 29 հոկտեմբ<երի>, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Բավական ժամանակ է ձեզնից նամակ չունիմ, ինչպես և ես չեմ գրել: Իմ նամակը ուշացնելու պատճառն այն էր, որ ամենօրվա սպասողական դրության մեջ եմ, թե այսօր-էգուց վերջնական մի բան կլինի և կգրեմ: Հարցը նրանումն է, որ իմ արտասահման մեկնելու թղթերը ուղարկված են Մոսկվա և այնտեղից ամեն օր սպասում ենք պատասխանի: Եվ ուշանում է: Կարծում եմ, որ չուտով կլուծվի այս հարցն էլ:

Կարծում եմ, որ չատը գնաց, քիչը մնաց. համբերել, չվայնանալ, հանգիստ մնալ: Դուք էլ այդտեղ հանգիստ կացեք, մի վրդովվեցեք:

Հայաստանից երկու պրոֆեսոր բժիշկներ են եկել Փարիզ, եթե ուզում ես նրանց տես, նրանք կհուսադրեն քեզ:

Արսեն վարդապետը[1] արդեն եպիսկոպոս է և գնաց Պարսկաստան. հայտնիր նրա աղջկան:

Բանաստեղծություններս տպում ենք այստեղ, այնպես որ չուտով հնարավորություն կգտնեմ ձեզ փող ուղարկելու. մի կերպ յոլա գնացեք:

Այս ամիսը մեզ համար չա՜տ տխուր անցավ. հանկարծամահ եղան բանաստեղծ Հ. Հովհաննիսյանը[2] և մեր լուսավորության կոմիսար Ասքանազ Մռավյանը[3]: Շա՜տ ցավալի կորուստներ, մանավանդ վերջինս, որ դեռ երիտասարդ էր և եռանդով լիքը:

Աբասը բանտից ազատվել է. հիմա աքսորված է: Լավ է:

Իմ առողջությունս վատ չէ. եթե ձեզ մոտ լինեմ, կլավանամ, որովհետև ինձ հոգեկան հանգստություն է պետք և կանոնավոր կյանք և դիետա, մի բան, որ առանց ընտանիքի չի գլուխ գալիս:

Ինչպե՞ս է ձեր առողջությունը, ձեր վիճակը. վիգենը ի՞նչ է անում. դասերն սկսվեց թե դեռ ոչ:

Համբույրներով՝ ձեր Ավետիք

193. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ

1929, 30 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Կարա.

Ստացա նամակդ և ուղարկեցի երկու հատ Աբու-Լալա. մեկը քեզ համար, մյուսը՝ Տաբիձեի համար: Ուզում եմ իմանալ – երբ է տպվելու Աբուլը, և Տիգիանոն ո՞ր տեղից է թարգմանել, ո՞ր հրատարակությունից և ո՞վ է օգնել նրան թարգմանելիս:

Շատ բարևիր նրան և չնորհակալություններս հայտնիր:

Քո՝ Օշականից գրած նամակը՝ խմբագրության հաստեով, չա՜տ ուշ ստացա: Ցավում եմ, որ այդպես եղավ. թե չէ կգայի ու քեֆ կանեինք: Տրամադրությունս չա՜տ վատ է:

Բարևներ տիկնոջդ և քեզ:

Քո Ավետիք

194. ԽՈՐՀՐԴԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՑԻՆ

1929, 13 նոյեմբերի, Երևան

Ընկերներ.

Սրանով խնդրում եմ Ձեզ՝ ընդունել ինձ Հայաստանի գրողների ֆեդերացիայի մեջ, իբրև անհատ անդամ:

Հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

195. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ

1929, 19 նոյեմբերի, Երևան

Սիրելի Կարա.

Ներողություն որ ուշ եմ գրում, որովհետև վերջին օրերս գրիպով մի քիչ հիվանդ էի: Ձեի կարող թղթի նայել:

Ուղարկում եմ ինչ որ ուզել էիր[1]: Թույլ եղավ, բայց վնաս չունի: Բավական է այսքանն էլ:

Խնդրում եմ հանձնես սիրելի Տիգիանոյին:

Գրիր թե՝ թարգմանությունը լրի՞վ է կատարված արդյոք: Այսինքն եթե Վ. Բրյուսովից է թարգմանված[2] միայն՝ թերի է. լավ կլիներ որ հայերեն վերջին տպագ-

րությունից թարգմանվեր: Սա լրիվ է և մշակված: Ո՞վ է օգնել Տիցիանոյին հայերենի մեջ:

Ընկեր Տիցիանոյից նամակ չստացա: Թերևս մի քանի օրով Թիֆլիզ գամ, եթե ժամանակ գտնեմ, որովհետև բանաստեղծություններիս ժողովածուն հրատարակում ենք մեր Պետհրատով. դրանով եմ զբաղված:

Շա՜տ և շա՜տ ջերմ բարևներ Գ. Ռոբակիձեին[3], Տիցիանոյին, Յաշվիլուն[4], Գրիշաշվիլուն[5] և քո տիկնոջը և քեզ:

Քո Ավետիք Իսահակյան

196. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1929, 25 նոյեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի.

Այսօր Eurobanc*-ի միջոցով ընկեր նախագահ Տեր-Գաբրիելյանը տեղափոխեց քեզ 300 դոլլար. եթե ստացար մինչև նամակս՝ լավ, եթե ո՛չ գնա, ստուգիր բանկը և Միության դեսպանատանը կամ տորգպլրեդը:*

Իմ Եվրոպա գալը Մոսկվան դրականապես վճռել է. այնպես որ գալս օրերի խնդիր է: Սպասում ենք թղթերին: Մի քիչ կուշանամ, որովհետև գիրքս (բանաստեղծություններիս հատորը)[1] հրատարակում ենք: Հետո Մոսկվա կմնամ մի քանի օր:

Ձեզնից չա՜տ վաղուց է՝ նամակ չունեմ, ավելի քան երկու ամիս կա:

Շա՜տ անհանգիստ եմ, որ չեք գրում:

Ես լավ եմ, առողջությունս նույնն է, այսինքն վատ չէ:

Համբույրներով Ձեր Ավետիք Իսահակյան

197. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1929, 5 դեկտեմբերի, Լենինական

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ահա երկու ամիս ու կես եղավ, ձեզանից նամակ չունեմ. վերջին ձեր նամակը գրված է սեպտեմբերի 19-ին: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ եք լռում: Այս քանիերորդ նամակն է՝ գրում եմ:

Նոյեմբերի 25-ին տեղափոխեցի Eurobanc*-ի վրա, ձեր հասցեով 300 դոլլար. հույս ունեմ, որ ստացել եք և պատասխանը գրել: Հայտնել եմ ձեզ նույնպես, որ Մոսկվան արգեն որոշել է արտասահման մեկնելս, այնպես որ էլ արգելք չկա: Հիմա զբաղված եմ գրքիս հրատարակչությամբ, հենց որ վերջանա գիրքս, ճանապարհ կընկնեմ դեպի Փարիզ. երևի հունվարի մեջ: Մի քանի օր Մոսկվա կմնամ:*

Գրեցեք, տեսնեմ ի՞նչ եք անում, ինչպե՞ս է առողջությունները. Վիգենը հաճախում է դասերին թե ծուլությո՞ւն է անում: Զարմանալի բան է, որ այսքան երկար ժամանակ լուռ եք:

Շատ բարևներ բարեկամներին և կարոտալի համբույրներ Ձեզ՝ երկուսիդ:

Ձեր Ավետիք Իսահակյան

1930

198. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ

1930, 2 Հունվարի, Երևան

Սիրելի Հակոբ.

Այսօր տեսա Լուսժողկոմին՝ Արտոյին[1]. ասաց, որ ամսիս 13-ին խնդիրդ[2] կդրվի կոլեգայի ժողովին, որից հետո՝ մեկ կամ երկու օր հետո, կներկայացվի ժողկոմխորհի նախագահին: Խոստացավ հաջողեցնել: Վաղը քեզ կտեղափոխե 100 րուբլի ծանր դրուֆյունդ մի քիչ մեղմելու (պատմեցի որ 100 րուբլի կորցրել ես) համար: Նամակս դրում եմ փոստում: Գրիչը վատ է, հազիվ եմ դրում: Հույս ունիմ, որ լավ կվերջանա:

Բարևներ հաղորդիր տիկնոջդ և քեզ, և մեր վրացի ընկերներին:

Քո Ալեքսիք Իսահակյան

87, Աբովյան փողոց
Երևան

199. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1930, 29 Հունվարի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ձեր գրած փակ նամակները չեմ ստացել, դուցե դուք էլ իմ փակ նամակները. բայց երեք հատ բաց նամակ ստացել եմ ու պատասխանել: Ստացել եմ նույնպես հե-

ռագիրը: Մոսկվայից էլ մամայից նամակ ստացա և Վիգենի փոքրիկ մի նկարը:

Իմ գնալու, ձեզ մոտ գալու հարցը լուծված է դրականապես. միայն մի քիչ ուշանում եմ որովհետև գիրքս եմ տպում, բանաստեղծություններս[1]. մոտ 330 երես. երևի մի 10-15 օր կտևե:

Տոնելու ենք Շիրվանզադեի հոբելյանը[2], այդ բոլորից հետո ճանապարհ կընկնեմ, երևի փետրվարի վերջերը, անպատճառ: Համբերել, չատը գնաց, քիչը մնաց: Մոսկվա կմնամ մի 10 օր, ոչ ավելի. մի խոսքով գարնանը ձեզ հետ եմ: Շա՛տ բարևներ բարեկամներին, և կարոտով համբույրներ ձեզ, երկուսիդ:

Համբույրներով Ավ. Իսահակյան

[բացիկի դարձերեսին՝ չարունակութ֊յուն]

Արսեն եպիսկոպոսը վաղուց է մեկնել Թեհրան, բայց նամակ չունեմ: Վերջին անգամ նրան չտեսա, ես Թիֆլիզ էի այդ ժամանակները:

Եղանակները այս ամեռ զարմանալի է. դեռ ձյուն չունենք. տաք ու պայծառ, Եգիպտոսի կլիմա: Նույնիսկ Լենինական — տաք:

Համբույրներով Ա. Իսահակյան

200. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ

1930, 11 փետրվ<արի>, Երևան

Սիրելի Կարա.

Քեզնից երկու բացիկ եմ ստացել. չէի պատասխանում, որովհետև ընկեր Ա. Եղիազարյանը[1] այստեղ չէր: Եկավ, եղա մոտը, ասաց. — սկզբունքով չի ընդունվում, որ երկու տեղից թոշակ ստանալ[2]. դրա համար հարցը սկզբունքով մերժվեց:

Իմ հարցիս թե՝ այն գումարը, որ պիտի տայիք, չի կարելի տարվա մեջ մի-երկու նվագով տրվի. ասաց, հնարավոր է, այդպես կանենք, կօգնենք, և դրանով կփոխարինենք կենսաթոշակը:

Ես էլ պատրաստվում եմ մեկնելու ընտանիքիս մոտ: Ուզում ես Երևան գալ. ինձ մոտ ո՛չ մահճակալ կա, ո՛չ անկողին. ինչպես քնեցնեմ քեզ. կգաս և կտեսնես աչքովդ:

Ջերմ բարևներ քեզ և տիկնոջդ:

Ջեր Ավետիք Իսահակյան

201. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1930, 7 մարտի, Երևան>[1]

Սիրելի Սոֆիկ և Վիգեն.

Ստացա ձեր վերջին բաց-նամակը:

Երեկ ստացա անցագիրը, այսինքն արտասահման մեկնելու պասպորտս: Այնպես որ հարցը վերջացավ. առածը ուղիղ է ասում. վերջը լավ, ամեն բան՝ լավ: Վերջին հաշվով չահ[վ]ողը ես եղա. այս տարի երեք հատ դիրք տպեցի: Խմբով, չա՛տ մեծ պատիվներով դնացինք Վրաստան ու Ադրբեջան: Ամեն թյուրիմացություն իմ շուրջը չքացավ. հիմա բաժանվում եմ Հայաստանից լավ զգացումներով և մեր կառավարության բարեկամեցողական տրամադրությամբ:

Մի չաբաթ հետո կմեկնեմ Երևանից, մի-երկու օր կմնամ Լենինական, մի երկու օր էլ Թիֆլիզ՝ երկաթուղու համար և կմեկնեմ Մոսկվա. մինչև նամակս ստանաս, ես Մոսկվա կլինեմ. լավ կանես Ֆրանսիա մտնելու վիզա վերցնես և հեռագրես Մոսկվա, եթե ոչ՝ ստիպված պիտի լինիմ Բեռլին մնալ, որ թանկ կնստի վրաս: Առայժմ այսքան:

Համբույրներով՝ ձեր Ավետիք Իսահակյան

202. ՎԱՐՅԱ ՔՈՋԱՐՅԱՆԻՆ

1930, 7 մարտի, Երևան

Սիրելի մամա.

Երեկ ստացա պասպորտս Ֆրանիսիա գնալու համար: Մի շաբաթ հետո Երևանից դուրս կգամ, մի-երկու օր կմնամ Լենինական, մի-երկու օր էլ Թիֆլիզ, ու կգամ Մոսկվա: Թիֆլիզից դուրս գալուս կհեռագրեմ Ձեզ. մարտի վերջերին ուրեմն կլինեմ Մոսկվա:

Սոֆիին գրեցի, դուք էլ գրեցեք: Հույս ունիմ, որ ձեզ բոլորիդ ողջ և առողջ կտեսնեմ Մոսկվայում:

Ես լավ եմ, կարոտով [սպասում եմ] անհամբեր՝ Ձեզ տեսնելու և գնալու ընտանիքիս մոտ:

Համբույրներով Ձեր Ավետիք

203. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1930, 19 մարտի, Երևան

Սիրելի Սոֆի և Վիգեն ջան.

Ստացա ձեր ուղարկած երկու հեռագիրը՝ վիզայի և փողի համար:

Կարգադրվեց ձեզ Բերլինից ուղարկել 200 դոլլար, ընկեր Գարիբյանին, տորգպրեդստվոյից: Երևի արդեն ստացաք. եթե ո՛չ, գրեցեք Բերլին, հարցրեցե՛ք:

Ես վաղը գնում եմ Լենինական մնա բարևի, մի-երկու օր կմնամ ապա նորից կգամ Երևան, և այստեղից, մարտի վերջերին, առանց մի որևէ տեղ կանգ առնելու կմեկնեմ Մոսկվա, այնտեղից կստանամ վիզաներ (լեհական-գերմանական, բելգիական) և ճամբա կընկնիմ Փարիզ:

Ես լավ եմ, ուրախ և բավական առողջ. հույս ունիմ որ ողջութեամբ կհասնեմ Փարիզ և ձեզ կգտնեմ առողջ և ուրախ:

Համբույրներով՝ Ձեր Ավետիք Իս.

204. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, 1 ապրիլի, Թիֆլիս

Սիրելի Գարեգին.

Ընկեր Պ. Մակինցյանից պարտք եմ վերցրել 50 րուբլի, խնդրեմ պարտքը հատուցանես նրան: Ես մի-երկու օրից հետո կմեկնեմ Լենինական, ապա Երևան:

Բարևներով՝ Ավետիք Իսահակյան

1 ապրիլի 1930
Թիֆլիզ

205. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, 21 մայիսի, Բեռլին

Գարեգին ջան.

Այսօր երկու օր է, Բերլին եմ: Մոսկվա շատ մնացի, երեք չաբաթ: Շատ հետաքրքիր էր Մոսկվան: Նոր չենքեր, հսկա չենքեր: Բերլինն էլ չա՛տ է փոխվել. անճանաչելի է:

Փարիզից կգրեմ, ուր կգնամ մի-երկու օրից: Շատ բարևներ ընկերներին:

Ձեր Ավետիք

206. ՍՏԵՓԱՆ ՋՈՐՑԱՆԻՆ

1930, 14 Հունիսի, Փարիզ

Սիրելի Ստեփան.

Այսօր երեք շաբաթ է՝ Փարիզ եմ, բայց ժամանակ չգտա մի-երկտող գրելու ընկերներիս-բարեկամներիս: Անվերջ այցեր ու այցելուներ: Այս ու այն կողմը հսկայական քաղաքի: Երևանի անդորրության կարոտն եմ զգում:

Առայժմ ջերմագին բարևներ Ձեզ, ընտանիքին և ընկերներին:

Ձեր՝ Ա. Իսահակյան

17 rue Denfert Rochereau, Paris, 5

207. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, 14 Հունիսի, Փարիզ

Սիրելի Գարեգին,

Հազիվ ժամանակ ու տրամադրություն գտա մի երկու տող գրելու: Գալու օրվանից գլուխս իմս չեղավ: Անվերջ սա ու նա: Ընտանիքս գտա ավելի լավ վիճակի մեջ, քան կարծում էի: Թահմազին[1] բարևներդ տվի:

Հետո կգրեմ:

Համբույրներ:

Բարևներ ընկերներին – Ավետիք

17 rue Denfert Rochereau, Paris 5

208. Ս<ԱՐԳԻՍ> ՊՈՂՈՍՑԱՆԻՆ

1930, 24 Հունիսի, Փարիզ

Հարգելի պարոն Ս. Պողոսյան.

Յուր ժամանակին ստացել եմ Ձեր նամակը, որով կհայտնեիք Ռամկավար կուս<ակցու>թյան մեծարգո անդամների ինձ հայտ բերած պատիվը՝ լսելու Հայաստանի չինարարության մասին:

Խնդրելով Ձեր ներողամտությունը՝ մինչև օրս Ձեր նամակին պատասխանած չլինելուս համար, այժմ, սրտի ցավով, ստիպված եմ հաղորդելու Ձեզ, որ ինչ-ինչ պատճառներով հրաժարվում եմ հասարակության առաջ հանդես գալու Հայաստանի դրության մասին արտահայտվելու նկատմամբ:

Խորին չնորհակալություններս մեծարգո անդամներին՝ ի պատիվ ինձ տրվելիք թեյասեղանին համար: Վերստին խնդրում եմ Ձեր բոլորի ներողամտությունը իմ հանդեպ:

Մնամ հարգանքներով Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

209. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ

1930, 15 Հուլիսի, Փարիզ

Սիրելի Ար<շակ> Ջոպանյան.

Խնդրում եմ, հինգշաբթի օրը առավոտ մինչև ժամը 11-ը բարի լինեք տանը մնալ, Ձեզ մոտ ենք գալու, անհրաժեշտ գործով — ես և Մ. Մելիք-Հակոբյանը՝ Բաֆֆիի ազգականը:

Բարևներով Ձեր՝ Ավ. Իսահակյան

210. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՅԱՆԻՆ

1930, 2 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Կարեն.

Ներողություն ուշ պատասխանելուս համար:

Հազիվ կարողացա մի որոշ բան գրելու քեզ:

Սիրելիս, անկարելի է պարտքս ուղարկել, որովհետև փող չկա: Ամենուրեք հիմա փողի կրիզ է, այնպես որ պիտի հաշտվես այդ մտքի հետ, որ փողդ չես ստանալու: Վերադարձիս կստանաս:

Ես շատ մռայլ եմ, տրամադրությունս շատ գեշ է: Գաղութահայությունը կորած բան է. ամեն մարդ իր ապրուստի հոգսով է բռնված: Պլատոնական չռնդալից խոսքեր ինչքան կուզես թափվում է Հայաստանի համար, բայց ոչ մեկի ձեռքը գրպան չի գնում մի կոնկրետ գործ տեսնելու համար: Ռամկավար, բարեգործական, ՀՕԿ, Կարմիր Խաչ — սնամեջ անուններ են: Հույսը և ապավենը Արագածի շուրջը ապրող ու աշխատող հայ ժողովուրդն է, մնացածը դատարկ բաներ են: Երբ կերթաս[1] Հայաստան՝ շատ կարոտալի բարևներ բոլորին, ընկերներին, քարին ու հողին: Բարևներ տիկնոջդ:

Քո Ավետիք

A.Issakian, 17 rue Denferd,
Rochereau, Paris 5

211. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1930, 11 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Վահան.

Վաղուց է նամակդ ստացել եմ, բայց այնպիսի մի ընկած տրամադրության մեջ եմ և էներգիայից զուրկ՝ որ

անկարելի է դարձել ճիգ գործ դնել վրաս – նստել մի բան անելու...

Ամենից առաջ քո հարազատներիդ մասին – և հազար ներողություն, որ հիմա եմ գրում – մայրիկիդ չատ և չատ անգամ եմ տեսել, տեսա և գալուս օրերին: Խեղճը միայն քո կարոտով է ապրում և քեզ տեսնելու հույսով: Քանի դեռ Դավիթ Անանունը[1] աքսորված չէր, երկու անգամ եղել ենք մայրիկիդ մոտ, ճաշել ենք (քյուֆթա ենք կերել), քո կենացը խմել: Երբ մի երկու տարի առաջ սիրտս հիվանդացավ և պառկած էի՝ մայրիկդ եկավ ինձ այցի և մոտս նստած լաց եղավ: Մայրիկդ և քույրիկդ ողջ առողջ են, մայրիկդ ունի Սպանդարյան փողոցի վրա երկրորդ հարկում մի սենյակ, ապրում է և քեզ երազում, նրա մխիթարանքը քո նամակներն են:

Համոյին կասես, որ աղջկան՝ Գոլիային, տեսել եմ մի քանի անգամ – Երևանում, Ջալալօղլիում, և գալուս օրը Թիֆլիզում, լավ է, առողջ է, չատ լավ ամուսին ունի, սիրով են ապրում:

Գալով իմ մասին – ի՞նչ գրեմ: 3 ու կես տարի տանջվելուց հետո թուլլտվություն ստացա արտասահման գալու: Եկա և զղջացի: Այնտեղ տառապանքը ծովածավալ է, բայց մխիթարված ես, որ հայրենի հողի վրա ես, ժողովրդիդ հետ խմում ես դառնության բաժակը, մենակ չես, պայքարում ես, հալածվում ես, բայց համակիր աչքեր սիրով հսկում են քեզ և նրանց սրտերի մեջ պատսպարան ունես: Իսկ այստեղ – օտար ես ու մենակ, գոյությունդ՝ աննպատակ, օրերդ – տժգույն և չնչին հոգսերով վիչացած: Գաղութում հայությունը այլասերվում է, կորչում է: Բուրժուազիան խոզացած, անտարբեր, անասուն: Նրանց գրողների (ռամկավար) գրչի ծայրն է միայն Հայաստանը:

Սիրտս ճմլվում է, թևերս վար ընկնում:

Ձգիտեմ՝ ի՞նչ ալիտի անեմ: Հայաստանից մեկնելուց ինձնից խոսք առան վերադառնալու համար: Խոսք տվի:

Վերադառնալ ուզում եմ և չեմ ուզում: Ջեմ ուզում խոսքս դրժել, սա ծանր կգա տեղում ապրող ինտելիգենցիային, վատ կանդրադառնա, բայց գնալ և ընկնել նորից բռնության տակ, գազազվել, իրար ուտել, գալարվել իր վրա և լռել — այդ էլ չեմ ուզում, բայց մնալ այստեղ, այս զզվելի Փարիզում, սա ևս անհանդուրժելի է, և հետո ինչո՞վ ապրել, ի՞նչ միջոցներով պահել ընտանիքս և գրականութիւն անել (հին կապերը կտրված են, և ինքնասպանութիւն է նորից դիմել հին կապերին). իհարկե խոսքը ձեր մասին չէ՝ դաշնակցական ընկերներիս, այլ ուրիշ — բուրժուական կապերը:

Գրելիքներ ունիմ, նոր և հին, «Ուստա Կարոն» մնաց անկատար, բայց ո՞ւր պիտի ավարտեմ, Հայաստանում կարելի չէ — չեն հրատարակի այնտեղ, իսկ եթե հանուն այդ գրութիւնների մտնեմ էմիգրանտի ծանր լծի տակ, ինչո՞վ ապրեմ, տնտեսական ի՞նչ ռեսուրսներ ունեմ, որ ինձ ազատ ժամանակ տա գրականութիւնամբ զբաղվելու... Բարոյական սահմանագծեր կան, որոնցից չեմ կարող անցնել, կան պատասխանատվութիւններ — ժողովրդի առջև, իտեալների առջև, խղճմտանքի առջև: Այսպիսի ծանր հարցերի տակ ճզմված եմ և տակավին ելք չեմ գտնում: Նույն դրութեան մեջ էի և Հայաստանում... Ինձ համար մի բան է ցանկալի — միայն մի բան — լինել աշխարհի մի հեռավոր անկյունում, չտեսնել հայութեան տառապանքը, չլսել հայութեան ձայնը, բայց մինչև այնտեղ էլ անշուշտ պիտի երկարին նրանք, որովհետև իմ մեջն են նրանք: Ո՞ւր պիտի փախչեմ ես ինձանից: Կուզենայի լինել քեզ մոտ և երկար խոսեինք, երկար ու անվերջ, թերևս մի ելքի հասնեի:

Կարոտով համբուրներ քեզ, Համոյին, Սեդրակին, Ստեփանին, Լիբարիտին և բոլոր ընկերներին:

Միշտ ձեր Ավետիք Իսահակյան

212. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1930, 8 սեպտեմբերի, Փարիզ

Հարգելի ընկեր Սահակ.

Շատ չնորհակալություններով ստացել եմ ուղարկածդ փողերը: Օգոստոսի 14-ին 250 դոլար, օգոստոսի 22-ին՝ 550 դոլար. գումարը՝ 800 դոլար: Անմիջապես չպատասխանեցի՝ սպասելով թե գուցե նրանց հետևից նամակ գա: Այսպիսով, ներողություն, որ ուշ եմ հայտնում խորին չնորհակալություններս: Օգտվելով Փարիզում լինելու հանգամանքից՝ սկսել եմ սրտիս բժշկությունը:

Քննում են ամեն կողմից. լաբորատորական խիստ քննություններ: Դրանցից հետո կանցնեն բժշկությանը: Սրտիցս բացի ներվերս էլ շատ վատ են:

Ինչպես երևում է, մի քանի ամիս բժշկվելու պետք ունեմ:

Թեև սկսել եմ գրական պարապմունքներս, բայց այս հիվանդություններս շատ են զբաղեցնում միտքս, ահագին հոգսեր են՝ կլինիկաներում սպասել, քննություն, հուզումներ և ծախսեր...

Մի քիչ հանգստանալուց հետո երկար նամակ կգրեմ գաղութի և իմ մասին. առայժմ ընդունեցեք հարգալից բարևներս, սիրելի ընկեր Սահակ:

Միշտ ձեր անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

213. ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

1930, 6 Հոկտ<եմբերի>, Փարիզ

Հարգելի հայրենակից.

Փարիզաբնակ խումբ մը գրողներ ունեցան նախնական խորհրդակցություն մը «Հայ գրողներու ընկերություն»[1] հիմնելու նպատակով:

Պաշտոն ունենք հրավիրելու նոր և ավելի ստվարաթիվ ժողով մը, ուր մանրամասն քննութեան պիտի ենթարկվին ընկերութեան նպատակը և կանոնադրական խնդիրները:

Ուստի, կխնդրենք Ձեզ, հարգելի եղբայրակից, որ հաճիք ներկա գտնվել այդ խորհրդակցական ժողովին, որ տեղի պիտի ունենա հառաջիկա Բ.չաբթի, 13 հոկտ., երեկոյան ժամը 9-ին, քաֆե Վոլթերի գետնահարկը:

Ընդունեցեք, հարգելի պարոն և եղբայրակից, մեր անկեղծ հարգանքները:

Ավ. Իսահակյան, Վահան Թեքեյան[2], Ղևոնդ Մելոյան[3]

214. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ

1930, 17 նոյեմբերի, Փարիզ

Սիրելի Նիկոլ.

Երբ երկար տարիներ չարունակ ընդհատած են լինում ընկերների, բարեկամների հարաբերութիւնները, անկարելի է վերստին կապել չոր ու ցամաք նամակով: Պետք է լինել միասին, մի տեղ, բավարար ժամանակ խոսել, խոսել երկար հնութիւնից, անցյալի հուշերից, ամեն բանից, որ դառնա հինը, քաղցրը, անգնահատելին: Սպասինք այդ տեսակցութեան:

Ներիր, որ միայն այս երկտողը գրում եմ, այն էլ առիթ եղավ Փափազյանի կնոջ մոր թախանձանքը, որ գրել են ինձ Երևանից:

Արդեն եկած օրերիս տ. Ջավոյին[1] ասացի, որ քեզ գրեր քո երեխաների մասին: Գիտեմ, որ գրել է: Ես չ՛ե՛տ հաճախ էի լինում քո ընտանիքի մոտ: Հրարփին[2] մեր չրջանում էր, Թամանյանի, հաճախ ճաշել ենք քո տանդ: Երեխաներդ առողջ են և լավ սովորում են: Կուկուն լավ նվագում է, աղջիկդ նույնպես. աղջիկդ չ՛ե՛տ սիրուն և

չնորհալի աղջիկ է: Երկուսն էլ երազում են քեզ մոտ լինել, մի կերպ թռչել գալ մոտդ: Հայ են և համեստ, տղաք որ բոլորովին անաղարտ է մնացել տիրող դաղափարներից: Ռուբչիկը աչխույժ, աչքաբաց տղա է: Երեք երեխաներդ էլ պարծենում են իրենց հորով, որ համենայն դեպս քաջութիւն է տվյալ պայմաններում: Մի խոսքով, հանդիստ եղիր: Զոքանչդ չատ բարևեց քեզ՝ «իմ իսկական փեսայիս»: Փեսաների մեջ ամենից չատ քեզ է սիրում:

Բագրատ Սերոբյանը իր կնոջով և երեք աղջկանով լավ են, թիֆլիզ են. բարևում են քեզ կարոտով: Հրանուշը[3] Ջալալօղլի է: Աստվածատուր Խաչը[4] եղիչեի որդու հետ Երևան է. լավ են:

Շատ-չատերից քեզ բարևներ:

Համբույրներով քեզ և Շանթին:

Ավետիք Իսահակյան

215. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1930, 23 դեկտեմբերի, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Վերջապես քեզնից նամակ ստացա. հասկանալի է, որ չա՛տ ուրախացա Երևանից հաղորդածդ տեղեկութիւնների մասին. թե ընկերների և թե հասարակական դործերի մասին: Սիրտս անբաժան կապված է Երևանի հետ. միչտ նրա մասին եմ մտածում, և չա՛տ կարոտցել եմ Երևանին ու ընկերներին:

Տիկինդ ուզել էր մոդաների ժուռնալներ. մի չաբաթ առաջ, պատվիրած պակետով, դրավաճառը ուղարկեց քո հասցեին երկու ժուռնալ, վերջին մոդայի, դեկտեմբեր ամսին: Պիտի իմանաս, որ Փարիզում մոդան փոխվում է ամիսը մի անգամ: Պատերազմից առաջ տարին մի անգամ

էր մոդան, իսկ 19-րդ դարի վերջերին մոդան 10 տարին մի անգամ էր. հիմա – ամեն ամիս: Թռչունի թևով չես կարող հասնել նրան:

Ես լավ եմ, ամբողջ երկու ամիս բժշկվում էի, հիմա դադար է, նորից պիտի բժշկվիմ, հետո բոլորովին լավ կլինեմ:

Սկսել եմ պարապել, բայց Փարիզում ժամանակը չա՛տ արագ է թռչում: Կարծես, մարդ բան չի անում, բայց բանից էլ չի պրծնում: Մեծ քաղաքը կլանում է: Անթիվ հետաքրքիր բան կա, և գլուխդ կորցնում ես:

Հա՛, անցյալ օրը մի բանախոսության մեջ լսեցի, որ Արփաչայ կամ Արպաչայ (Շիրակի գետը) չի նշանակում Գարեգետ[1], այլ Սահմանագետ: Պարսկերեն արպա կնշանակե սահման: Թուրքիայի և Պարսկաստանի միջև սահմանագետ: Հարցրո՛ւ մեր լեզվագետներին և նայիր գրքերի մեջ: Ես էլ նույնը պիտի անեմ:

Տ. Զարուհուն ասա, որ ես գրել եմ Հեղուշին, թե մայրիկը տ. Թամարայի միջոցով ուղարկել է ընտանեկան հիշատակներ ու նվերներ. բայց Հեղուշը ինձ գրեց, որ տ. Թամարան մինչև այսօր նրան չի հայտնել մայրիկի ուղարկածի մասին: Սա անհասկանալի [բան է] վարմունք է, բայց փաստ է, անշուշտ, վերջը պիտի հանձնե: Հեղուշը արդեն գրել է Թամարայի բարեկամին, չուտով կպարզվի: Թո՛ղ մայրիկը հանգիստ լինի. վերջը լավ կլինի:

Հետո, Հակոբին[2] էլ ասա, որ կարծեմ բան գլուխ չի գա, բայց դեռ վերջնական չէ: Թո՛ղ սպասի առայժմ:

Շա՛տ ուրախ եմ, որ հիմա ազատ ժամանակ ունես, և պիտի կարողանաս բոլոր ուժով նվիրվել գրական գործերիդ: Անհամբեր սպասում եմ Սայաթ-Նովայիդ լույս տեսնելուն[3]. միայն կուզենայի իմանալ, բնագիրը[4] ամբողջ կա՞, այն, որ Հայտնի է մեզ Գ. Հախվերդյանի[5] տվածով և այն ինչ որ լույս են տեսել զանազան հանդեսների մեջ:

Հետո, աշխատի՛ր բառարանդ[6] վերջացնել. գոնե մի մասը: Դա չա՛տ կարևոր գործ է:

Այստեղ, առհասարակ, գրական մարզում, աչքի ընկնող մի բան չկա, ծուռի-պռտի բաներ են. չապրված, չինծու բանաստեղծություններ ու պատմվածքներ. կեղծ ու ռոկոկո:

Եվ ուրիշ բան էլ անկարելի կլիներ սպասել – հայրենիքից ու ժողովրդից հեռու ի՛նչ իրական ստեղծագործություն կլինի. մյուս կողմից էլ ֆրանսական գրականությունը ճզմում է ամեն բան:

Ես, հավանական է, եթե արտաքին ու ներքին արգելքներ չծագին, 1931 թվի ընթացքին կվերադառնամ հայրենիք: Փարիզը լավ է, բայց հայրենիքը ամեն տեղից լավ է: Լավագույնն է:

Կնոջս և տղայիս կողմից շատ բարևներ քեզ. իմ կողմից բարևիր կնոջդ, և բոլոր ընկերներին.– Դերենիկին, Միշոյին[7], Պողոս Աբելյանին[8], Սիսակին, Յոլակին, Էփրիկյաններին[9], տ. Ուրարտուին[10] և ամուսնուն, Արշակ Տոնյանին[11] և կնոջը, Փանոսին[12], Կոճոյանին[13], և այլն-այլն. բոլորին, բոլորին:

Համբույրներով քո Ավետիք

Մեկ-մեկ գրիր, չա՛տ մեծ հաճույք կպատճառես նամակնիդ:

Ավետիք

216. <ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ>

1931, 28 Հունվարի, Փարիզ

Հարգելի հայրենակից.

Ի<որհրդային> Հայաստանի տասնամյակին առիթով, ֆրանսահայ գաղութի անկեղծ համակրանքի չոչափելի ապացույցը տալու համար մեր ժողովուրդին, որ մեծ զոհողություններու գնով ապահով, բարգավաճ, չեն հայրենիք մը կկերտե, հանձնախումբս որոշած է քանի մը օթոպյուս ղրկել Հայաստան, ինչպես ամերիկահայ գաղութը թրաքթերներ կղրկե, նկատի ունենալով որ, այս րոպեիս, փոխադրության միջոցներու դյուրացումը զգալիորեն պիտի նպաստե երկրի չինարարական աշխատանքներուն:

Այս նպատակին իրագործման համար իրենց մասնակցությունը բերած են մեր հասարակական և կուլտուրական բոլոր հիմնարկությունները:

Ձեր աջակցությունը անհրաժեշտ դատելով, կփափաքինք խորհրդակցություն մը ունենալ ձեզ հետ, այս խնդրին շուրջը: Կխնդրինք որ հաճիք գալ «ՀՕԿ»ի կեդրոնատեղին, 23, rue N.D. de Lorette, *հառաջիկա Բշ. Գշ. կամ Դշ.*[1] *ժամը 3-են 5:*

Հարգալից բարևներով

Նախագահ՝ Ավ. Իսահակյան[2]
Քարտուղար՝ Տ. Զավեն

217. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1931, 20 փետրվարի, Փարիզ

Մեծարգո ընկեր Սահակ Տեր-Գաբրիելյան.

Սիրելի ընկեր, վաղուց Ձեզ բան չեմ գրած. առանձնապես բան էլ չկա գրելու: Շաբաթը մի անգամ Փարիզի արվարձաններում և բանվորների մեջ հանդեսների անվան տակ ժողովներ կունենանք, կխոսենք, կբացատրենք, կներկայացնենք Խորհրդային Հայաստանը, նրա չինարարությունը, հնգամյա պլանի մասին և <այլ> հարցերի մասին:

Սակայն առանց օրգան-թերթ ունենալու բան չի կարելի անել: Հիմա անհամբեր սպասում ենք Ձեր կարգադրությանը՝ թերթը վերսկսելու համար[1]: Եթե օրգան չունենանք՝ բանվորական մասսաներից շատ կկորցնենք, արդեն բավական կորուստ ունեցել ենք: Ասպարեզը մնացել է դաշնակցությանը, հակահարված տալու հնարավորություն չունենք: Խորհրդային Հայաստանի կողքին կանգնած բանվորների մշտական հայտնած ցանկությունն է՝ ունենալ իր սեփական օրգանը:

Այստեղ կազմել ենք մի հանձնախումբ՝ Խորհրդային Հայաստանին օժանդություններ նվիրելու համար, հանձնախմբի նախագահը ես եմ: Ձեռնարկում ենք հանգանակություն Փարիզում և ֆրանսիական ուրիշ քաղաքներում, ուր հայեր կան: Ուզում ենք գոնե երկու օժանդություս ուղարկել Երևան՝ գաղութի հայերի կողմից նվեր Հայաստանի խորհրդայնացման տասնամյակի առթիվ: Այդ գաղափարը բերվեց ՀՕԿ-ի հայրենակցական մի միության կողմից: Մեզ աջակցում են Կարմիր խաչը, ՀՕԿ-ի մասնաճյուղերը, կառուցողների միությունը, հայրենասիրական միություններ և ուրիշներ:

Թեև հիմա պայմանները շատ վատ են կրիզի հետևանքով, բայց հուսահատ չենք:

Սիրելի ընկեր Սահակ, ես սկսեցի սրտիս բժշկության երկրորդ կուրսը: Բժշկությունը, զգում եմ, վրաս լավ է ազդում, բայց թանկ է նստում, ամեն կուրսը 80 դոլար:

Ձեզանից ստացած դրամը՝ 800 դոլլար, արդեն սպառվել է, երկու ամիս է՝ պարտքով եմ ապրում: Դժվարանում էի Ձեզ գրել, գիտենալով, որ ներկա պայմաններում հեշտ չի Հայաստանից փող դուրս հանելը, բայց մի ֆորմուլա պիտի գտնվի իմ դրության համար. ինչ էլ որ լինի, Հայաստան վերադարձիս անպատճառ սիրտս բժշկած պիտի վերադառնամ, որ այլևս միշտ հանգիստ լինեմ երևանում:

Կենսաթոշակս հունվար-փետրվար, ուրեմն և մարտ ամիսները չեմ ստացել: Շատ խնդրում եմ, բարի լինեք, թոշակս ուղարկել, նույնպես, եթե կարող եք, մի քիչ ավելի ուղարկե՛ք, բժշկությանս ծախսերի համար:

Խորին հարգանքներով և ջերմ բարևներով Ձեզ և ընկերներին:

Միշտ Ձեր անկեղծ Ավետիք Իսահակյան

218. ՏԵՆՃՅԱՆԻՆ

1931, 9 մարտի, Փարիզ

Տոքթ. Տենճյան
Նախագահ ՀՕԿ-ի Լոնդոնի մասնաճյուղին
Լոնդոն

Հարգելի ընկեր Տենճյան.

Խ. Հայաստանի տասնամյակի առթիվ ՀՕԿի Ֆրանսայի կեդր. վարչությունը որոշեց մեկ երկու օթոպյուս ղրկել Երևան, նկատի ունենալով, որ ներկայիս հաղորդակցության միջոցներու զարգացման պետքը մեծապես զգալի է:

Գիտեք, որ Ամերիկահայ գաղութը մեր երկրի չինարարութեան կնպաստե հոն ղրկելով տասներկուքեն ավելի թրակթորներ:

Ծրանոայի մեջ հանգանակութիւնը գլուխ հանելու համար կազմված է հանգանակիչ հանձնախումբ մը, որը հրապարակեց ներփակ կոչը և սկսած է արդեն գործի:

Հակառակ տիրող տնտեսական ծանր տագնապին ՀՕկի բանվոր անդամները մեծ ոգևորութեամբ ընդառաջեցին մեր ձեռնարկին և իրենց մասնակցութիւնը կբերեն նվիրելով իրենց մեկ օրվա աշխատավարձը:

Կասկած չունինք, որ Լոնդոնի գաղութն ալ պիտի ուղե նույն եռանդով նպաստել այս գործի հաջողութեան: Հետևաբար պիտի խնդրենք, որ այս մասին հարկ եղածը տնօրինեք:

Կիրակի օր Լոնդոն մեկնեցավ պ. Հարութիւն Նալպանդյան, որուն հետ ղրկեցինք հանգանակութեան թերթ մը: Պ. Նալպանդյան իր՝ քաղաքդ գտնված միջոցին պիտի զբաղվի հանգանակութեան գործով: Անտարակույս պիտի հաճիք օգնել իրեն: Ջեզի կղրկենք հանգանակութեան թերթերեն երեք օրինակ, որպեսզի չարունակեք Լոնդոնի գաղութի նպաստի հավաքման աշխատանքը:

Կեդր<ոնական> հանգանակիչ հանձնախմբի

քարտուղար՝ Տ<իգրան> Զավեն

նախագահ՝ Ավետ<իք> Իսահակյան

219. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ

<1931>, 27 ապրիլի, Փարիզ

Սիրելի բարեկամ Ար. Զոպանյան.

Ուրեմն իմ հավաքածուիս պակասում է «Անահիտի» հետևյալ երկու թիվը.

Բ. տարի. N 4.

Ե. տարի N 2.

Կխնդրեի չորեքշաբթի հետևյալ բերեիք «Ապագայի» խմբագրատուն. ես էլ կբերեմ ինձ մոտ եղածները (4 համար):

Բարևներով Ավետ<իք> Իսահակյան

220. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

1931, 25 Հուլիսի, Փարիզ

Սիրելի Սիմեոն.

Նամակդ[1] *այսօր առավոտ ստացա: Քանի որ քեզ համար այնքան ցանկալի է և այնքան պաթետիկ իմանալը իմ դիրքորոշումը*[2]*, կուզենայի քեզ անձամբ տեսնել և երկարորեն խոսել: Գրելով կարելի չէ սպառել նյութը, և հավատացնում եմ, որ ժամանակ էլ չունեմ նստելու և հանգամանորեն գրելու իմ* apologie-*ն:*

Ուրեմն, խնդրում եմ, երկուշաբթի երեկոյան 29 / 7, ժամը 8 1/2-9 հանդիպել Cafe Lilas, *այնտեղ ուր էինք Ուրբաթ գիշեր:*

Ավ. Իսահակյան

221. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ

<19>31, 13 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Ամատյան.

Ներողություն, որ նամակիդ մինչև այսօր չպատասխանեցի. գլուխս չա՛տ խառն էր, հետո էլ գնացի Մարսեյլ, ամբողջ 15 օր է՝ այն կողմերն էի:

Երևի ձեռքդ անցավ «Մեր ուղին»[1], տակավին իր կանոնավոր հունի մեջ չի մտել, դժվար է տեխնիկապես կարգավորել գործը: Բայց չուտով կկարգավորվի:

Ստացվեց գրածդ հոդվածը[2] և հառաջիկա թվերից մեկում կհրատարակվի: Շա՛տ ուրախ պիտի լինեինք, որ միշտ բաժին հանեիք մեր աշխատավորության համար Ձեր մտքի հարուստ պաշարից:

Առայժմ այսքան. հետո կգրեմ մանրամասն:

Ջերմ բարևներով՝ Ձեր Ավ. Իսահակյան

222. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

1931, 29 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Վահան.

Ինձ ասացին, որ իմ դեմ բան ես գրել թերթիդ մեջ. դեռ չեմ կարդացել: Սակայն ցավում եմ, որ դու էլ ընկար «Հառաջ»ի պրովոկացիայի մեջ՝ Ս...ի[1] կողմից հիմարաբար և նենգաբար կազմված:

Մանրամասների մասին գրիր իմացիր Ռուբենից, Աբրահամից, Ջամալյանից:

Ս...ը գլուխը կորցրել է՝ ձգտելով զանազան ուղիներով կուսակցության գլուխ դառնալ:

Բարևներով՝ Ավետիք Իսահակյան

223. ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ

1931, 16 սեպտեմբ<երի>, Փարիզ

Մեծարգո պ. Գ. Կյուլպենկյան.

Թեև պատիվ չունեմ Ձեզ անձամբ ճանաչելու, սակայն հարկադրված եմ Ձեր բարձր ուշադրությունը խնդրելու մի հարցի նկատմամբ:

Լենինական քաղաքի (Ալեքսանդրոպոլ) բնակիչ Եղիշե Բաբիկյան, գյուղատնտես, Հայաստանի վարչապետ Սահակ Տեր-Գաբրիելյանի կարգադրությամբ visa-*ն ստացավ, սակայն ճանապարհածախս չունի: Այդ պարագան հայտնի եղավ հիմա: Նա դրամ ուներ ստանալիք իր պարտապաններից, որոնք անկարող եղան վճարելու այս պահիս:*

Եթե վարչապետի այստեղ եղած ժամանակը հայտնի լիներ, նա, անշուշտ, պիտի հոգար: Այժմ, եթե նա ստիպված լինի մնալու, թե visa*-ի ժամանակամիջոցը կլրանա և թե դրամ չունի ապրելու:*

Սրանով պատիվ ունեմ Ձեզ խոնարհաբար խնդրելու, որ հաճեիք հոգալ նրա ճանապարհի ծախսը՝ Փարիզ – Մարսեյլ – Բաթում, 1.200 ֆրանկ:

Կանխավ հայտնելով իմ չնորհակալությունները հաճեիք ընդունել խորին հարգանքներիս հավաստիքը:

Ձերդ՝ Ավետիք Իսահակյան[1]

16 սեպտեմբ. 1931
Փարիզ

224. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

1931, 7 հոկտեմ<բերի>, Փարիզ

Սիրելի Վահան.

Գրեթե մի տարի կլինի քեզ նամակ չեմ գրել: Այս բոլորը այն է ցույց տալիս, որ ժամանակը, կյանքը, իրերը գնում են ո՛չ մեր ուզածով. տրամադրություն չի մնում, մի խոսքով – գոյություն քարշ տալ:

Ամիսներից ի վեր ուզում էի նամակ գրել, բայց ասում էի ինչ գրեմ, բան չկա գրելու, կամ եթե կա, և իրոք չա՛տ բան կա, բայց դրա համար պետք է միասին լինել և խոսել, երկար խոսել:

Շա՛տ կուզենայի մի ամսով Բերլին լինել, բայց ներկա պայմաններում անկարելի է տեղից չարժվել:

Գրում եմ, իմանալու համար, սիրելի Վահան, քո քեֆը, հալը, առողջությունը, տրամադրությունդ, ի՞նչ ես անում, ինչպե՞ս է ընտանիքդ, կինդ:

Գրում եմ իմանալու համար սիրելի Հայկի[1] մասին, ի՞նչ է անում, տրամադրություն, առողջություն, վիճակ. ի՞նչպես է, ի՞նչ է անում: Ինչպե՞ս է նրա աղջկա – Նորա<յի> վիճակը, առողջությունը:

Ի՞նչ է անում Գրենֆիլդը, վիճակը, և այլն:

Շա՛տ կխնդրեմ բարևես Հայկին և Գրենֆիլդին:

Գալով ինձ՝ ես լավ եմ հիմա, առողջության տեսակետից, քանի որ Հայաստանից եկա. համեմատաբար լավ եմ: Կինս և տղաս էլ լավ են: Տղաս սինեմայի մի ստուդիայի մեջ աշխատում է՝ սովորում է բեժիսորություն՝ նրա արվեստը, տեխնիկան. ասում են՝ չնորհք ունի: Տեսնենք, ի՞նչ պիտի դուրս գա:

Ես, երևի, այս վերջին ձմեռն է, որ պիտի անցկացնեմ Եվրոպայում: Գարնանը կմեկնեմ Հայաստան, կնոջս հետ. դուցե տղաս էլ գա հետս. կամ մնա Եվրոպայում, եթե սինեմայի մեջ գործ գտնի, իրեն հարմար: Եթե ո՛չ, նա էլ կգա հետս և կաշխատե սովետական սինեմայի մեջ՝ Հայաստանում և Մոսկվայում:

Լսում ենք, որ Բերլինի կյանքը չա՛տ ծանր է, գործ չկա, կրիզ, աղքատություն, թանգություն: Ինչպե՞ս եք յոլա գնում:

Ափսո՛ս, ի՞նչ լավ էր պատերազմից առաջ: Բայց աշխարհը այդ չհասկացավ, չգնահատեց և ձգեց իրեն դժոխքի մեջ:

Այստեղ, թեև տակավին լավ է, բայց սպասում են կրիզին, անգործության, թշվառության: Արդեն բավական դժվարություն կա ապրելու և գործ գտնելու մեջ: Ավելի վատ պիտի լինի օտարների, հայերի վիճակը:

Գրի՛ր ուրիշ ծանոթ-բարեկամների մասին:

Կարծում եմ, որ Բերլինում հայ գաղութի կյանք չկա. այստեղ այդ նկատմամբ՝ լավ է: Անվերջ ժողովներ, հանդեսներ, երեկույթներ. թեև ես քիչ եմ հաճախում:

Սպասում եմ նամակիդ:

Համբույրներով և բարևներով, քո՝
Ավետիք Իսահակյան

A. Issakian.
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

225. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ

1931, 19 Հոկտեմբ<երի, Փարիզ>

Հարգելի տիկին Աննա.

Ստացա Ձեր նամակը և երեկոյան ժամը 9-ին և 9 1/2 տելեֆոն արեցի Ձեզ, բայց տանը չէիք: Ես չգիտեմ թե վաղը կպատահեմ Արամ Չարըքին[1] թե ո՛չ: Նա ապրում է քաղաքից դուրս:

Ահա նրա հասցեն –
Montrain S/B.
213 rue d l'Ermitage
Aram Tchareck Vederanty.

Բարևներով և հարգանքներով
Ձեր՝ Ավետիք Իսահակյան

226. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ

<1931>[1], 25 Հոկտեմբ<երի>, Փարիզ

Սիրելի բարեկամ.

Ստացա Ձեր նամակը, սակայն չկարողացա անմիջապես գրել, որովհետև Մեհրաբյանը[2] և Տ. Զավենը[3] շատ զբաղված էին այս երկու օրերս «ՀՕկի» պատգամավորական ժողովի առիթով: Նրանց կտեսնեմ այսօր կամ վաղը:

Թահմազյանը[4] նույնպես հեռագիր է ստացել Փափազյանից[5], և չգիտե անելիքը. ինձնից խորհուրդ հարցրեց: Ես ևս մոլորված եմ: Անկասկած առանց ապրուստի միջոցները ապահովելու՝ ռիսկ է Փարիզ ընկնելը. ես չգիտեմ, ո՞վ կարող է նրան օգնել: Ես այդ շրջաններում կապեր, բարեկամություններ չունիմ, թերևս ինքը ավելի ունենա – հարուստների մեջ բարեկամներ: Համաձայն եմ Ձեզ հետ, որ նույնպես հույս չի կարելի դնել ներկայացումների վրա: Հեռվից Փարիզը չա՛տ հրապուրիչ է – էլդորադո[6]: Անշուշտ, Փափազյանը իր մեծ տաղանդով արժանի է որ գնահատվի, [խնամքներ] հնարավորություններ ստեղծվեն բուժվելու, բայց միայն մեր բարի բաղձանքներով բան գլուխ չի գա:

Խորհենք Մեհրաբյանի, Զավենի, «ՀՕկի» հետ, տեսնենք ի՞նչ կասեն:

Յտեսություն:

Սիրով և հարգանքով Ձեր՝ Ավ. Իսահակյան

25 Հոկտեմբ. Փարիզ
A. Issakian
17, Denfert Rochereau

227. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ

<1931, Փարիզ>

Սիրելի Ա. Ջոպանյան,

ժամը 3½ եկա Ջեզ մոտ, տանը չէիք: Կուզենայի Ջեզ տեսնել, մի կերպ ժամադրվենք: Բերի գիրքս, խնդրեմ ստանաք:

Ավ. Իսահակյան

228. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

<1932>[1], 19 մայիսի, Փարիզ

Իմ չա՛տ սիրելի ընկերս.

Այնքա՛ն տխուր եմ, այնքա՛ն տխուր եմ, որ եթե դիտենայիր, իսկույն պիտի վազեիր գայիր մոտս: Եվ միա՛յն դու: Ամբողջ աշխարհի մեջ միայն քեզ եմ տենչում ինձ մոտ տեսնել, միայն քո ձեռքը՝ իմ ձեռքիս մեջ և միայն քո քնքուշ ափի տակ՝ իմ ճակատը:

Ամբողջ աշխարհի մեջ քեզնից ավելի մոտիկ, մտերիմ, հարազատ հոգի չունեմ. միայն քեզ մոտ կարող եմ սիրտս բանալ, միայն քեզ խոստովանել, քեզ հավատալ, հոգով քեզ հանձնվել:

Քաոս է հոգիս այժմ՝ տակնուվրա, պայքարով, հակասություններով լի, խռովակոծ, մրրկածեծ, միայն քո մոտ կխաղաղվեմ և կպայծառանամ:

Ի՛նչքան եմ սիրում քեզ, ի՛նչ ցավագին զգացումով, ի՛նչ անհույս սիրով: Կորցրել եմ կյանքիս ռիթմը, չվարել եմ և ուսերս օրեցօր ավելի են կքում վար:

Ման եմ գալիս այս հսկա քաղաքում, փողոցեփողոց, տեսնում եմ հազարավոր դեմքեր. բոլորը խորթ են ինձ, անտարբեր, թերևս չար. մենակ եմ այս միլիոնավոր մարդկանց մեջ. — և այս միլիոնավոր դեմքերի մեջ միայն մի նվիրական դեմք կա, որի հայացքը ինձ ապրեցնում է, որի անուշ ձայնը փայփայում է հոգիս, վերստին ստեղծում է ինձ. իմ մխիթարությունը, իմ հացն ու օդը: Եվ նրան չեմ տեսնում... և քայլերս մոլորվում են և ուր գնալս չեմ իմանում...

Ա՛խ, եթե զգայիր իմ զգացմունքների քառորդը...

Երեկ քեզ չգտա, բայց խնդրում եմ վաղը, ուրբաթ բարի լինես ներկա լինել «Բյուրակնի»[2] ժողովին, ժամը 8½-9, Ֆլորիան ճաշարանի[3] վերնահարկը, ժողով կա. գոնե այս չաբաթ քեզ տեսնեմ, հիվանդագին կարոտս առնեմ:

Գրում եմ չտապ, դողդոջուն սրտով և դողդոջուն ձեռքերով:

Միշտ քո, միշտ քեզ նվիրված Ավ. Իս.

229. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1932, 4 Հունիսի, Սևր[1]

Սիրելի Արշալույս, սիրելի Լուլու[2].

Ջեմ կարող հանգիստ զգալ ինձ առանց քեզ մի երկու տող գրելու: Երբ գրում եմ, ինձ թվում է, որ քեզ հետ զրույց եմ անում, քո արքայական կեցվածքդ աչքերիս առաջն է, և քո քաղցր ու շնորհով լի աչքերը նայում են հոգուս մեջ:

Սքանչելի պարտեզ ունի այս դպրոցը[3], իշխանական պարտեզ՝ վարդերով ու ծաղիկներով վառված շրջում եմ նրանց մեջ և քեզ եմ երազում, քո բույրն եմ առնում... Ա՛խ, ինչքա՜ն բախտավոր կլինեի, անհունորեն երջանիկ՝ ինձ հետ լիներիր... Լինեինք միասին մի հեռավոր երկրում, ծովերի ափին, պարտեզների մեջ, դղյակի պարտեզում... Թևս թևիդ ձգած շրջեինք՝ իրական երազով և իրարով հարբած...

Գրում եմ... և թռչունները երգում են ծառերի միջից սիրո և կարոտի երգեր: Ինձ թվում է, որ նրանք են իսկապես, անսխալ, անթերի թարգմանում իմ զգացումը դեպի քեզ, քան թե այս դժգույն տողերս, որ անկարող են ար-

տահայտել սերս, որ ունեմ քեզ համար, այն կրակը, որ այրում է ինձ, միայն ինձ...

Իսկ եթե լսելիր այս թռչունների երգը, թերևս ինձ հասկանայիր:

Մեր վերջին տեսակցության ժամանակ դու չա՛տ ծանրակշիռ բաներ ասացիր որոնց վրա հիմա եմ անդրադարձել: Այդ խոսքերիդ խորքում ես մի բան եմ զգում — ինձ հզոր, մեծ սիրով չես սիրում, տիեզերք չկա քո սիրո մեջ. տարերք, բնության ուժեր չկան, սառը մտածում չա՛տ կա: Ափսո՛ս և հազար ավա՛ղ: Սերը պիտի լինի ճակատագիր, рок, լավա, հրաբուխ, մահ... Ջես սիրում:

Իսկ ինձ համար դու ամեն ինչ ես — լինի մի վրան դաշտի մեջ, դու և ես, և տիեզերքը մեզ հետ կլինի... Երբ պիտի այս զգաս դու, ի՛մ թագուհիս, իմ տիրուհիս:

Այս չաբաթ՝ եթե քեզ չտեսնեմ, քարտեզ, թվաբանություն, քերականություն, ամեն բան կմոռանամ, իսկ եթե մյուս երկուշաբթի ժամը 3-ին իրար չգտնենք, այլևս ինչ լեզվով խոսիս՝ բան չեմ հասկանալու...

Համբույրներով քո անձնվեր Ա.վ.

230. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1932, 6 Հունիսի, Փարիզ

Սիրելի Կոլյա Ջան.

Ստացա նամակդ և 25 դոլլարի չեքը: Շնորհակալություն: Իրավ որ վաղուց է իրար չենք գրել: Մարդկային է: Երբ իրարուց հեռանում են, ժամանակն ու տարածությունը գրեթե մոռացնում են մարդկանց սրտերը իրարուց: Տնից էլ երկար ժամանակ է նամակ չունեմ: Զգիտեմ, ի՞նչ են անում: Ո՞ւր մնաց Աբասը, նույնպես չգիտեմ: Եվ վախենում եմ հարցնել նրա մասին:

Լավ է, որ դու այս կրիզին[1] կարողանում ես ոտքի վրա կանգուն մնալ: Այստեղ շատ ծանր է հայերի դրությունը:

Ես գնալու եմ Հայաստան, բայց դեռ որոշ չէ. եթե ո՛չ աշնանը, գարնանը՝ անպատճառ:

Փողի պատմությունը հետևյալն է: Մամուլյանները Փարիզ եղած ժամանակ, իրենք, իբրև իմ հին բարեկամներ, դրությունս տեսնելով, իրենց կողմից խոստումներ տվին ինձ: Խոստացան Վիգենի համար միջնորդել իրենց որդու մոտ, որպեսզի կանչե Հոլիվուդ իրեն մոտ, իր ձեռքի տակ. ես էլ գրեցի, խնդրեցի Ռուբենին[2], բայց կրիզի պատճառով դեռ չկարողացավ մի բան անել: Վիգենը սինեմայի համար շատ ընդունակություն և սեր ունի, լավ էլ հասկանում է գործը: Սինեմայի մասին գրում է հայ և ֆրանսական թերթերում. աշխատում է այստեղ սինեմայի մի ստուդիայի մեջ, բայց դեռ ձրի:

Փողի կողմից չա՛տ նեղ ենք, որովհետև կառավարությունից ստացած իմ կենսաթոշակը չի բավականում. կյանքը թանկ է. ես էլ հիվանդ եմ, սիրտս թույլ է, բժշկվում եմ: Եվ ուրեմն չա՛տ ծախսեր:

Մամուլյանները ինձ հույսեր տվին թե՝ որ Ամերիկա գնան, իրենք կապեր ունեն, ծանոթություններ, կդիմեն և մի գումար ձեռք կբերեն ինձ համար, որպեսզի մի վեց ամսով հեռանամ Փարիզից, վերջացնելու համար իմ դժբախտ Ուստա Կարոն, և [վեր] հանգիստ վերադառնամ Հայաստան:

Այս վեպի գլխին մեծ փորձանք եկավ. տարիներով մնաց անավարտ. պատերազմը, հեղափոխությունը, Հայաստան գնալս ու այնտեղ 3 ու կես տարի մնալս (և վեպս թողել էի Եվրոպայում. որոշել էի մի վեց ամիս մնալ Հայաստան, բայց 3 ու կես տարի մնացի, հիվանդացա և այլն). այնպես որ հնար չունեցա այդ մեծ գործը վերջացնելու. և հետո էլ միշտ փողի կարիք, ուրիշ բաներով զբաղված, մի խոսքով միշտ խանգարված: Հայ գրողի վիճակ:

Մամուլյանների խոստումներով սիրտ առած վերջերս դրեցի նրանց, որ չտապեն, բայց ինչպես երևում է, կրիզի պատճառով ջուրն ընկավ այդ ամենը:

Ես չգրեցի քեզ, գիտնալով, որ դու դժվար թե կարողանայիր օգնել:

Ի՞նչ գրեմ հիմա... եթե դու կարողանաս ինձ 100 դոլլար ուղարկել (ուրեմն 75 դոլլար էլ) մի քանի ամսվա մեջ, ես Հայաստանում կվճարեմ մայրիկիդ՝ փոխարենը մի քանի անգամ ավելի, քան որ բանկը տալիս է. դոլլարին 4 րուբլի. բանկը կարծեմ դոլլարին տալիս է 2 րուբլի: Իսկ եթե չես կարող, բնավ մի նեղվիր. գրիր ինձ, ամոթ բան չէ: Ուրեմն սպասում եմ պատասխանիդ և մնացած 25 դոլլարին: Հայաստանում փող չա՛տ է անցնում ձեռքս, բայց անկարելի է երկրից դուրս հանել:

Ահա՛, տեսնում ես, Կոլյա ջան, ի՛նչ ժամանակի հասանք:

Մենք Հայաստան ընտանիքով ենք վերադառնալու. Վիգենը այնտեղ կաշխատե հայկական սինեմայի մեջ:

Մերոնք սիրով բարևում են Շուշիկին[3] և քեզ. իմ կողմից էլ ջերմ համբույրներ և սրտագին բարևներ Շուշիկին և քեզ:

Քո Ավետիք

A.Issakian.
17 rue Denfert Rochereau,
Paris 5.

231. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

1932, 5 Հուլիսի, Փարիզ

Մեծարգո բարեկամ պ. Վ. Մալեզյան,

Գրաբերս, պ. Ստեփան Շուշանյան, շատ ծանր կացութեան մեջ է: Փարիզում չի կարող ապրել: Ուզում է Մար-

սեյլ գնալ, ուր ծանոթներ ունի և կարող է այնտեղ, նավահանգստում աշխատիլ: Իրեն չար բախտից, ուր որ դիմել է, մերժած են: Ես հազիվ կարողացա մի 50 ֆրանկ ձեռք բերել, որով կարողացավ մեր հայրենակիցը մի քանի օր ապրել:

Նրան անհրաժեշտ է մի տոմսակի դրամ Մարսեյլ գնալու համար:

Խնդրում եմ չա՛տ, Ձեր միջոցները ի գործ դնեք մի տոմսակի դրամ հայթայթելու համար, ամենաչատը 200 ֆրանկ:

Պարոնը հուսահատական վիճակի մեջ է: Նորից թախանձում եմ բարի լինելիք չմերժելու իմ և մեր հայրենակցի խնդիրքը:

Հարգանքներով Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

232. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1932, 7 օգոստ<ոսի>, Փարիզ

Շա՛տ սիրելի Գարեգին.

Նամակդ ստացել եմ իր ժամանակին: Իսկույն ուզում էի պատասխանել, բայց հետաձգեցի, և այսպիսով չա՛տ հետաձգվեց: Հետաձգվելու գլխավոր պատճառն այն էր, որ ուզում էի հաստատապես հայտնել, որ նյութ կուղարկեմ ժողովածուի[1] համար, բայց դեռ մինչև հիմա գլուխ եմ կոտրում և չգիտեմ ինչ գրեմ: Սահմանած նյութին հարմար սյուժե չունիմ. ծանոթ չեմ նոյեմբերյան անց ու դարձերին. ներկա չեմ եղել, չեմ ապրել: Ձգիտեմ ինչ գրեմ, մոլորվել եմ: Հազար նյութ է անցնում մտքովս, և ոչ մեկը հարմար չեմ գտնում: Սակայն նորից մտորում եմ: Տեսնենք:

Շա՛տ չնորհակալ եմ ուղարկածդ թանկագին նվերի համար – Սայաթ-Նովայի[2]: Շա՛տ լավ հրատարակություն

է: Լիակատար, սպառված ուսումնասիրություն է քո առածը: Հաճույքով կարդացի:

Մակինցյանի գրությունը[3] սարից-ձորից, դեսից-դենից բաներ է. մի տեղ մտքի, թե փաստի, թե բացատրության կոպիտ սխալ կար, բայց գիրքը մոտս չէ, որ ցույց տամ. (մի ընկեր տարավ կարդալու): Ի միջի այլոց «մինատրել» չի նշանակում «խալխի [ծառա] նոքյար» այլ ուղղակի ծառայող, պաշտոնյա, որից և ծագել է մինիստր բառը: Թերևս Մակինցյանը սխալ չէ, որովհետև ամեն մի պաշտոնյա վերջ ի վերջո հասարակական նոքար է: Սայաթ-Նովայի երկրորդ օրինակը ուղարկեցի, ուր որ ուզեցել էիր:

Սիրելիս, ինձ վրա էլ մի մեծ ծուլություն է իջել. կամ ուրիշ խոսքով ասած, ուժերս, ժամանակս կուլ է գնում հասարակական գործերով[4]: Այստեղ գործող անձեր չունինք, դիրքով, անունով անձեր, որ կանգնած լինին ի. Հայաստանի կողքին և պաշտպանեն թշնամական հարձակումների դեմ: Այստեղ չա՜տ գործ կա անելու, մեծ պայքար կա մղելու. երիտասարդ, եռանդուն մարդկանց տեղն է: Ես հոգնած եմ, մտքերով ցրված. սակայն ի՞նչ արած, պետք է գործել. «ձեռքս ի բան, ոտքս ի գերեզման», ինչպես ասում էին մեր հայրերը:

Շա՜տ զբաղված եմ արտաքին գործերով, և գրական աշխատանքներս բառացի մտքով ասած՝ երեսի վրա են ընկած: Փարիզն էլ, գիտես, չա՜տ մեծ քաղաք է, վիշապի նման բան է, և սպառում ու կլանում է մարդու օրն ու եռանդը: Վայրերը հեռու, խճճված, հոգնեցնող, աղմկալից, քաոս: Մի մարդու տեսնելը, մի տեղ գնալը ամբողջ օրդ ուտում է: Եվ միշտ ժողովներ, խմբեր ղեկավարել, արվարձաններ գնալ, հանձնաժողովներ, և այլն, և այլն:

Երազս է՝ չուտով Երևան ընկնել, ընտանիքովս ունենալ մի-երկու սենյակ և ամփոփվել, սկսել պարապել, ականջս՝ հանգիստ, սիրտս՝ խաղաղ: Զգիտեմ, ե՞րբ է այդ ի-

րականանալու: Ի դեպ առողջությունս հիմա բավական լավ է:

Գարեգին Ջան, նամակդ չատ ուրախացրեց ինձ և տեղափոխեց Երևան: Զափազանց կարոտել եմ Երևանին և ընկերներին և ամբողջ բնակչությանը, կարելի է ասել: Մարդ միայն հայրենիքում իրան երջանիկ կզգա, ինչքան էլ այդ հայրենիքը անշուք և խեղճ լինի. իր ժողովրդի հետ, իր լեզվով խոսող մարդկանց մեջ: Այդ միջավայրում միայն կա քաղցրություն, սրտաբացություն, հարազատություն:

Ցոլակի հիվանդության մասին վաղուց է լսել էի. չա՛տ և չա՛տ ուրախ եմ, որ փրկվել է: Իսկ ի՞նչ է պատահել Միշոյին (Մանվելյանին), ինչո՞ւ է հիվանդացել: Հանգիստ եմ, որ գրում ես, թե՝ լավի է դառնում: Լսել եմ, որ Աբու-Լալաս վրացերեն լեզվով լույս է տեսել[5]: Խնդրում եմ, մյուս նամակովդ գրես դրա մասին:

Բարևներ բոլոր-բոլոր ընկերներին, Ցոլակին, Պողոս Աբելյանին, Դերենիկին, Սիսակին, Միշոյին, Փանոս Թերլեմեզյանին, Մ. Սարյանին, Հակոբ Խաչատրյանին[6], Թ. Ավդալբեկյանին[7], Արշակ Տոնյանին[8], Թ. Թորոմանյանին[9] և մյուս սիրելի ընկեր, բարեկամներին:

Կնոջս, Վիգենի և իմ կողմից կարոտով բարևներ քեզ և տիկին Ռիմային[10]:

Համբույրներով միշտ քո Ավետիք Իսահակյան

233. ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ

1933, 1 ապրիլի, Փարիզ

Սիրելի ընկերներ.

Թախանձագին ներողություն եմ խնդրում հարգելի հասարակությունից և սիրելի ուսանող ընկերներից, որ հիվանդությանս պատճառով անկարող եղա բանալու այս հանդեսը, որի նախագահության պատիվը մատուցեց ինձ Փարիզի հայ ուսանողական միությունը:

[Հայտնում եմ սրտագին շնորհակալություններս ինձ մատուցած հարգանքի համար և խնդրում եմ թույլ տալ ինձ մի-երկու խոսք ասել ուսանողական դերի և կոչման մասին]:

Ուսանողությունը միշտ դեպի իդեալն է թևերը թափահարել. խոսքս նրա լավագույն տարրերի մասին է. նրանց, որոնք կյանքի իմաստը բնազդային հաճույքների մեջ չեն գտնում, այլ կյանքի մեջ տեսնում են վեհ իմաստ և բարձր նպատակ:

Այդ ուսանողությունը իբրև թարմ, երիտասարդ և դյուրազգաց տարրը հասարակության մեջ ներկայացել է առաջին կրողն ու մուննետիկը դարաշրջանի ամենանեղ հառաջադեմ և լուսավոր գաղափարների:

Նրա թևավոր հոգին՝ ընդունակ իդեալով խանդավառվելու, զգացել է և հավատացել այդ քանդիչ և ստեղծիչ գաղափարներին, որ փայլատակել են հասարակական ճահճացած և քարացած կարգերի և դրույթների վրա:

Նա ոգևորված նետվել է կռվի ասպարեզ՝ ընդդեմ մարդկային զարգացումը կասեցնող և կաշկանդող ուժե-

րի և որպես հառաջամարտիկ զինվոր ընկել է այդ կռվի մեջ, բայց հաղթանակելով:

Այսպես է եղել բոլոր ժողովուրդների մեջ և այսպես է եղել մեր հայկական պատմության մեջ:

Հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների մեջ ուսանողությունն է եղել հայ կյանքի խմորողը. Դորպատի, Պետերբուրգի, Փարիզի և այլ համալսարանների հայ ուսանողներն[1] են եղել Խ. Աբովյան[2], Ս. Նազարյան[3], Մ. Նալբանդյան[4], Ռ. Պատկանյան[5], Գ. Արծրունի[6], Ռուսինյան[7], Մամուրյան[8], Ոսկան[9], Գր. Օտյան[10], Ծերենց[11], որոնք ներշնչված ժամանակի առաջավոր գաղափարներով, հեղափոխության, դեմոկրատիայի, ազատագրման, սոցիալիզմի տեսիլներով մտել են հայ իրականության մեջ և հուզել մեր կյանքի բորբոսնած ճահիճը:

Պայքար են մղել ամեն տեսակ բռնության, խավարամտության, հետամնացության դեմ:

Պայքարել են միջնադարյան կղերի, ամիրաների, էֆենդիների, բուրժուաների դեմ, օտար բռնակալների և նրանց չարաշահության դեմ: Կռվել են գրիչով, կռվել են խոսքով, իրենց վսեմ գաղափարները իրականացնելու համար կրել են բանտ, չղթա, աքսոր, հազար տեսակ զրկանքներ:

Երբեք չեն ընկրկել, երբեք չեն դավաճանել, այլ միշտ բարձր են բռնել մարդու ազատագրման և երջանկացման դրոշակը, որ մարդկության ազնիվ ներկայացուցիչները սկսած մեծ մարգարեներից, մեծ բարոյախոսներից, մեծ փիլիսոփաներից, բարձրացել են դարերի խավարի միջից և հանճնել են սերնդեսերունդ, մինչև մեր օրերը:

[Այդ վսեմ դրոշակն է՝

Մարդկայնություն,

Կատարելագործություն,

Ազատագրում մարդը մարդու կողմից չահագործումից,

Ազատագրում ճնշված ժողովուրդների,

Ազատագրում սեռերի, դասակարգերի, ցեղերի՝ առանց դույնի խտրության,

Ժողովուրդների եղբայրություն,

Անհատների ազատություն, հավասարություն, եղբայրություն:]

Մեր առաջամարտիկ ուսանողներն են եղել մեր վերածնունդի վարպետները, ռահվիրաները: Նրանք են կերտել մեր նոր մշակույթը, մեր նոր լեզուն, գրականությունը:

[Նրանք են չարժման մեջ դրել մեր հասարակական կյանքի զարգացման անիվը:

Եվ դուք, ներկա ուսանողներդ, նրանց որդիներն եք և ժառանգորդները:]

Ձեր առաջ, սիրելի ուսանող ընկերներ, բացվում է ավելի մեծ և կոնկրետ ասպարեզ, քան որ ձեր նախակարապետներին էր վիճակված:

Այս երկրագունդը, որ ընչաքաղց կապիտալիզմը արյունի ծովերով չաղախեց, ուր խողխողվեցին բազմամիլիոն երիտասարդ կյանքեր և մեր չարաշանչ ժողովրդի կեսը, այս երկրագնդի մի վեցերորդի վրա ծագեց և բարձրացավ դարերով երազած փրկության Արեգակը [որի ճառագայթները վաղ թե ուշ պիտի ողողեն ամբողջ երկրագունդը, որ գալարվում է չահագործման և սարկության ճիրանների մեջ:], վերաստեղծ հեղափոխության մեծ Արեգակը, որի չնորհիվ կենսագործվեցավ նաև մեր բազմաչարչար ժողովրդի հին երազը: Մեր ազգային ազատությունը իջավ, մարմնացավ մեր երկաթե լեռների և ցորենի դաշտերի վրա:

Այսօր մենք ունենք մեր հայրենիքը, Խորհրդային Հայաստանը, իրավահավասար ընկերը՝ մեծ Միության և նրա քույր հանրապետությունների:

Այնտեղ կառուցվում է մի դրություն, ուր վերջ է դրել մարդկային չահագործումը, ուր իշխում է աշխատանքը

և դարբնում բախտավորություն բոլոր նրանց համար, ով աշխատում է և ստեղծագործում:

Այնտեղ իրականացնում են մեծ գործեր՝ ազգային և համամարդկային իմաստով: Ստեղծում են նոր, արդար իրավակարգ, նոր մարդկություն:

Այնտեղ ունենք մեր մշակույթը՝ հոգեկան և նյութական բոլոր մարզերի մեջ, իր բոլոր ազդակներով՝ համալսարան, բազմաթիվ դպրոցներ, կոնսերվատորիա, թատրոն, օպերա, թանգարան և այլն:

Մեր աշխատավոր ընկերները՝ բանվոր և գյուղացի, գործակից ունենալով լավագույն մտավորականները, տքնաջան, զոհողություններ կրելով կառուցանում են հսկա շենքեր, գործարաններ, ջրանցքներ, ճանապարհներ, էլեկտրակայաններ... Մշակում են նոր տեխնիկայով հանքերը, անտառները, դաշտերը: Կերպարանափոխում են երկիրը, հաղթահարում են բնության տարերքը՝ բոլորի բարեկեցության համար:

Ունենք մեր գիտակից բանակը՝ պաշտպանելու համար աշխատավորական հայրենիքը:

Դուք, ուսանող ընկերներ, ձեր ուսանողության տարիներում, թաթախված և վառված վերածնվող և վերակերտվող հայրենիքով, պիտի այստեղ ամենայն տոկունությամբ կրծեք գիտության ապառաժը, ամբարեք մարդկության նվաճած գիտելիքներն ու տեխնիկան, այն բոլոր մտավոր դիսցիպլինները, որոնցով հզոր է ներկա մարդը և զինված, գոտեպնդված այդ թանկագին պաշարով՝ դառնաք հայրենիք:

[Դառնաք հայրենիք և լծվեք անձնվիրաբար ստեղծագործ աշխատանքի ձեր ժողովրդի հետ կողք կողքի, և ուր պիտի գտնեք ձեր բարձր պահանջների լիուլի բավարարությունը և ձեր անձնական երջանկության զոհացումը միաժամանակ:]

Աշխատող կամքերի համար գրկաբաց է մեր հայրենիքը:

Գնահատեցեք ձեր թանկ ժամանակը և պատրաստվեցեք այդ փայլուն ասպարեզի համար:

Իմ չնորհակալություններս Ձեզ, սիրելի ընկերներ և քաղաքացիներ, որ այսօր եկել եք այստեղ մասնակցելու Ձեր հարազատ ուսանողների ուրախությանը:

Ես համոզված եմ, որ Դուք լավ կգիտակցեք ուսանողության դերը, և ինչքան բախտավոր պիտի զգաք Ձեզ, եթե ավելի գուրգուրանքով, բարոյական և նյութական միջոցներով պաշարեիք Ձեր մատաղ հայրենակիցներին՝ ուսանելու իրենց կարիքավոր տարիներում:

Ջէ՞ որ նրանք են մեր վաղվան իրականության տերերը լինելու և մեր փայփայած հույսերի մարմնացնողները:

Կեցցե Փարիզի հայ ուսանողությունը:

Ընկերական բարևներով Ձեր՝ Ավետիք Իսահակյան

234. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1933, 5 օգոստոսի, Փարիզ

Սիրելի ընկեր Սահակ.

Վաղուց է Ձեզ նամակ չեմ գրել. հիմա էլ այս տողերը գրելուս ժամանակ գլուխս չա՛տ խառն է. կինս երկու շաբաթ կա հիվանդ է, նեֆրիդ ունի воспаление почек. *դեռ անկողնու մեջ է: Երևի մի-երկու շաբաթ էլ այս դրությունը պիտի տևի:*

Ընկ. Գրիգոր Վարդանյանը ամսիս վերջերին հավանական է [վօր], որ ճանապարհ ընկնի դեպի Երևան, ու Ձեզ մանրամասն կպատմի մեր այստեղի գործերի մասին:

Ահագին աշխատանք թափեցինք թե մենք, թե ընկ. Գ. Վարդանյանը ներգաղթի[1] բնակարանային ֆոնդ կազմելու մասին: Ինչպես գիտեք, բարեգործականի[2] և ՀՕԿ-ի

միությամբ կազմվեց մարմին (կենտրոնական մարմին) Պողոս Նուպարի[3] որդու՝ Զարեհ Բեյի[4] նախագահությամբ և իմ փոխ-նախագահությամբ: Հանդես-երեկույթ կազմեցինք, հանգանակություն բացինք, բայց արդյունքը չնչին եղավ: Հույսներս աչնան վրա է, երբ բուրժուաները կվերադառնան ամառանոցներից և նրանց կդիմենք: Հանգանակության գործը մշտապես պիտի շարունակվի, բայց տնտեսական կրիզիսի պատճառով ես կարծում եմ, որ մի զգալի գումար չի գոյանալու: Համակրություն շատ կա, բայց միջոցներ չկան: Հանգանակություն բացինք նույնպես «Արմենիա» հյուրանոցի[5] համար, դա էլ կաղում է, սաստիկ կաղում է:

ՀՕԿ ամսագիրը շարունակում ենք դժվարություններով, հազիվ ծախսերը ծածկենք: Տեսնում եք, սիրելի ընկեր, որ մխիթարական բան կա: Գոնե առայժմ:

Ինչ որ իմ ձեռքում կա, ես անում եմ գործի համար, բայց իմ ուշադրության կենտրոնը իմ դրական գործն է, որով վերջին ժամանակներս շատ մտահոգված եմ. ուզում եմ լրացնել կիսատ բաներս: Ո՛վ գիտե ինչ լինի, ինչ չլինի – պետք է շտապել:

Գր. Վարդանյանը վիզա չկարողացավ ձեռք բերել Ամերիկա գնալու համար. դեռ հույս ունի: Մյուս կողմից էլ մտածում է, որ այնտեղ անելիք չունի, նույն կրիզիսը. փողի չգոյությունը ամեն տեղ է:

Սիրելի ընկ. Սահակ, ապրիլ ամսից սկսած մենչև հիմա, ուրեմն 5 ամիս, ես կենսաթոշակս չեմ ստացել. դիմեցի Բարեգործականին, կարծելով թե՝ դուք նրան հայտնել էիք, որ ամսե-ամիս կամ պերիոդներով վճարեն ինձ, ինչպես հեռագրով իմացրիք ինձ Ձեր որոշմունքը՝ թոշակս պարբերաբար ստանալուս համար: Բայց Բարեգործականը պատասխանեց, որ Ձեզնից հրահանգ չունի:

Ձեզ վաղուց պիտի գրեի այդ մասին, բայց գլուխս կորցրել էի, դրա վրա մտածելու ժամանակ չունեի:

Հիմա չա՛տ խնդրում եմ Ձեզ, որ Բարեգործականին կարգադրեք՝ կանոնավոր ստանալու համար ամսականները, և մինչև այժմ չստացածս: Ավելի հարմար է փրանկով ստանամ, որովհետև դոլլարի կուրսը ընկել է և կայուն չէ:

Ջերմագին և կարոտալի բարևներով մնամ Ձեզ հարգող և սիրող

Ձեր անձնվեր Ավետիք Իսահակյան

235. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ

1933, 18 օգոստ<ոսի>, Փարիզ

Սիրելի Գարեգին, նամակիդ անմիջապես չպատասխանեցի, որովհետև ուզում էի Պարույրից[1] նամակ ստանալ: Հիմա միասին ուղարկում եմ: Ինձ էլ էր գրել, որ լավ է դառնամ. չա՛տ ուրախացա: Նույնպես հայտնել էր, որ իր ժամանակին ստացել է ուղարկածս «Սայաթ-Նովան», որի մասին զլացել էր ինձ գրել:

Հիմա սպասում եմ քո ընդարձակ նամակին: Դու չա՛տ բան ունես գրելու ինձ, ոչ թե ես՝ քեզ: Իրականությունը ձեր մոտն է, չինարարություն, գործեր. մենք ապրում ենք երազով: Գրիր չա՛տ և չո՛ւտ-չո՛ւտ:

Իմ վերադարձը միշտ ձգձգվում է. երևի, հառաջիկա գարնանը անպատճառ կվերադառնամ. գոնե ես այդպես եմ կարծում: Կարոտել եմ Երևանին, ընկերներին, և ձանձրացել եմ Եվրոպայից. բայց այդ՝ Փարիզում չի կարելի աշխատել. մեծ քաղաք է, կլանում է մարդու ուժերը և չա՛տ հոգնեցնում: Շա՛տ ժամանակ է խլում երթևեկը, հասարակական գործունեությունը, ժողովներ, վճճեր, պայքար: Եվ գրական գործերս երեսի վրա են մնում: Համոզված եմ, որ Երևանում ավելի հանգիստ կլինեմ, ա-

վելի ժամանակ կունենամ գր<ական> աշխատանքներիս նվիրվելու:

Առողջությունս գեշ չէ – բավարար է: Կինս վերջերս չատ ծանր հիվանդացավ, հիմա լավ է: Տղաս հաջող գործի մեջ է, Սինեմայի մեջ է աշխատում, առաջ է գնում. ապագան փայլուն է:

Հիմա վերջացնում եմ նամակս և խնդրում եմ բարևներս տեղ հասցնես – բարևներ Դերենիկին, Սիսակին, Պողոս Աբելյանին, Ցոլակին, Միշա Մանվելյանին, Արշակ Տոնյանին, կնոջը, Վ. Թոթովենցին, Զ. Եսայանին, Ալազանին, Գ. Մահարուն, Փանոս և Ռուբեն Թերլեմեզյաններին, Եղ. Զուբարին, Վ. Նորենցին, Մ. Սարյանին, Հ. Կոճոյանին, Թ. Թորոմանյանին. և այլն, և այլն: Ում որ գիտես, բարևիր:

Բարևիր և կնոջդ ու ձերոնց:

Մյուս թերթը կհանձնես նկարիչ Ստեփան Աղաջանյանին: Բարևներ մերոնց բոլորի կողմից:

Համբույրներով քո Ավետիք Իսահակյան

236. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ

1933, 22 օգոս<տոսի>, Փարիզ

Սիրելի ընկեր Զապել Եսայան.

Չգիտեմ, ի՞նչ խոսքերով ներողություն պիտի խնդրեմ Ձեզանից այն ծուլության, այն դանդաղկոտության և չգիտեմ ուրիշ ինչ տգեղ պատճառի համար, որոնցով ընդարմացած եմ ես, և չկարողացա իր ժամանակին Ձեր սիրալիր, ուշադիր նամակներին պատասխանել: Մի խոսքով, ներո՛ղ եղեք:

Ամենից առաջ կինս չափազանց չնորհակալ է, որ այնպես խնամքով հանձնել եք նրա մորը տրվելիք իրե-



Ավետիք Իսահակյան, 1957 թ.,
Լուսանկարի հեղինակ՝ Իդա Կար

Քրիստափոր Միքայելյան

Վահան Նավասարդյան

Կենտրոնում՝ ձախից աջ՝ Կոմիտաս Վարդապետ,
Լևոն Շանթ, Ջավահիր Ներսիսյան

Բանաստեղծ, նկարիչ, թարգմանիչ՝
Չապել Պոյաճյանը



Գարեգին Լևոնյանի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1912 թ.

Շնորհակալություն ենք հայտնում Մարտիրոս Սարյանի ընտանիքին, այս հատորին սարյանական գործեր տրամադրելու համար:

Մասնավոր շնորհակալություն Մ. Սարյանի տուն-թանգարանի տնօրեն Ռուզան Սարյանին Ավ. Իսահակյանի ակադեմիականի XIII և XIV հատորների ձևավորման աջակցության համար:

Դավիթ Անանունի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1926 թ.

Ձախից աջ՝ Ավ. Իսահակյան, Վավա Խաչատրյան, Սոֆյա Իսահակյան, Տիգրան Չավեն, Սարգիս Խաչատրյան, Վենետիկ, Սուրբ Մարկոսի հրապարակ, 1922 թ., 23 մայիսի



Նկարչուհի Վավա Խաչատրյանի դիմանկարը՝
գործ Սարգիս Խաչատրյանի, Վենետիկ, 1922 թ.



Մարտիրոս Սարյանի ինքնադիմանկարը,
Երևան, 1933 թ.

Լուսիկ Սարյանի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, Երևան, 1933 թ.



Գեղանկարիչ Ռաֆայել Շիշմանյանի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1955 թ.

Սրեփան Զորյանի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1945 թ.

Արշալույս Գրիգորյան (Լուլու), Փարիզ, 1932 թ.

Ավետիք Իսահակյան, Փարիզ, 1932 թ.

Ավետիք Իսահակյանը ընտանիքով Կիսլովոդսկի իր սիրած առանձնատան շեմին, 1950 թ.

րը: Շա՛տ չնորհակալ եմ, որ այդքան զբաղումների, հոգերի մեջ չեք մոռացել ինձ գրել և երկրորդել նամակները:

Ես այստեղ խրված եմ ապարդյուն գործերի մեջ. ՀՕԿ-ի փոխ-նախագահ, «ՀՕԿ» թերթի խմբ<ագրական> կոլեգիայի անդամ. ապարդյուն եմ ասում, որովհետև ահագին չանք և ժամանակ ենք սպառում և արդյունքը՝ չնչին: Ինչպես միշտ և հիմա էլ ես չփոթված եմ և չվարած: Եղբա՛յր,. ինձ պետք է մի խաղաղ անկյուն, մի գրասեղան, մի կտոր հաց, նստեմ և գրեմ, լավ թե դևչ, գրեմ, գրեմ: Սակայն այդ բացակայում է: Այս տարի Ձեր հեռանալով, Տ<իգրան> Զավենի[1] հեռանալով, ավելի խճճված եմ հասարակական գործերի մեջ. – ժողովներ, ժողովներ, ներգաղթի մարմին, (նրա փոխ-նախագահն եմ), և օրեցօր ավելի եմ հեռանում գրասեղանից: Մինչև ե՞րբ պիտի տևե այս սրամաչուկ վիճակը: Հույսս՝ Երևանն է, որ գամ և վերջնականապես ամփոփվեմ իմ սիրած գործով...

Շա՛տ ուրախ եմ, որ գոհ եք Ձեր վիճակից և անվրդով աշխատում եք: Շա՛տ լավ արիք, որ թողեցիք[2] Փարիզը, այս քաոսը: Անկեղծորեն նախանձում եմ:

Մի քանի օրեն Տ. Զավենը կմեկնի, սեպտեմբերի մեջին կլինի Երևան:

Երկու օր առաջ Ձեր որդուն՝ Հրանտին[3] իր նշանածի հետ տեսա «ՀՕԿ»-ի օֆիսում: Գյուղից էր գալիս, և նշանածի հետ մեկնելու էր Նիս՝ նշանածի ծնողների մոտ: Հարսդ՝ կենսուրախ, աչքաբաց աղջիկ է. հնդիկի տիպ է. (ինդուս): Շա՛տ բարևներ ուղարկեցին: Հարսիդ հարցրի, թե ի՞նչ կուզես գրեմ սկեսուր-մայրիկիդ: Ասաց թե՝ գրիր, որ կուզենայի, որ նա ինձ սիրեր:

Հրանտը չա՛տ առողջ և զվարթ տեսք ուներ;

կինս երեք չաբաթ հիվանդ էր երիկամունքից. հիմա լավ է, ոտքի ելավ: Շատ տանջվեցինք:

Մի քանի օր հետո կնոջս հետ մեկնում ենք Ժընևի մոտ, սահմանին կից մի գյուղ: Այնտեղ մի ընկեր ունեի, որ այս տարի մեռավ. նրա մոտ թողել էի գրադարանս, գնամ որ հավաքեմ, տեղափոխեմ Փարիզ, և այստեղից էլ Երևան: Կամաց-կամաց պատրաստվում եմ Երևան գալու:

Վիգենը լավ է, աշխատում է նույն տեղում:

Գր. Վարդանյանը կամ Ամերիկա կմեկնի, կամ կգա Երևան, դեռ որոշ չէ: Բայց գալը որոշ մարդկանց կողմից հուսացած արդյունքը չտվեց: Նույնը լինելու է և Ամերիկայում: Սկզբից գիտեմ: Կրիզի ծանր տարիներ են, դրամ չկա, և այլն, և այլն: «ՀՕԿ»-ի գրասենյակի և «ՀՕԿ» հանդեսի ծախսերը հազիվ թե կարողանանք ծայրը ծայրին հասցնել: Բախտավոր օրս պիտի լինի այն օրը, որ «ՀՕԿ»ի հոգերից պիտի ազատվիմ:

Սիրելի ընկեր, նյութ եք ուզել «Խորհ<րդային> արվեստի»[4] համար և տեղական բնույթի նյութ: Երբեմն խորհում եմ դրա մասին, բայց տակավին սրտովս նյութ չեմ գտել: Նորեն կմտածեմ. թերևս մուսաս անակնկալի բերե ինձ: Գնամ Ժընև գամ, ամփոփվեմ, տեսնեմ. «ՀՕԿ»ի համար էլ նյութ պիտի տամ...

Ձեք գրում թե ի՞նչ է անում ընկ.-օր. Սոֆին[5], ինչպե՞ս է զգում իրեն և ինչո՞վ է զբաղվում:

Հիմա խնդրում եմ այս բարևներս տեղ հասցնեք – բարևներ՝ Դերենիկին, Մ. Մանվելյանին, Փ. Թերլեմեզյանին, Վ. Թոթովենցին, Ս. Հակոբյանին, Եղիա Ջուլարին և Մանյային, պրոֆ. Հով. Հակոբյանին[6], Մամիկ. Գեորգյանին[7], Դրաստամատին, կնոջը, Ա. Բակունցին:

Բարևներ կնոջս կողմից Ձեզ և օր. Սոֆիին:

Եվ իմ կողմից շատ ջերմ և հարգալիր և սիրո բարևներ Ձեզ և Սոֆիին:

Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

237. ԱՐՄԵՆԱԿ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ

1933, 2 սեպտեմբերի, Փարիզ

Սիրելի ընկեր Արմենակ.

Ստացա հեռագիրդ և Բարեգործականից նույնպես երկու հարյուր դոլլար: Շնորհակալությունները: Սակայն հեռագրիդ համաձայն՝ թե կարգադրված է, որ Բարեգործականից պարբերաբար ստանամ ամսականները, դեռ նրանց հայտնի չէ:

Այդպիսի որոշմունք արդեն ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյանը նմանապես հեռագրել էր ինձ դեռևս ապրիլ ամսին, բայց Բարեգործականը հրահանգ չուներ: Խնդրում եմ այս անգամ, բարի լինեիք չմոռանալու այդ և հրահանգավորեիք Բարեգործականին:

Հետո, ես գրել էի ընկ. Սահակին, և երևի քեզ էլ հայտնի կլինի, որ ես ամսականները չեմ ստացել ապրիլից մինչև սեպտեմբեր (ապրիլ-սեպտեմբեր, 6 ամիս): Հիմա ստանում եմ միայն երկու ամսականները. ինչո՞վ ծածկեմ չորս ամսվա պարտքերս: Իրողությունն այն է, սիրելի Արմենակ, որ ես միշտ ստացել եմ ամսականները՝ ամիսներ՝ ստանալուց հետո չորս, վեց, երբեմն ութ ամիս անցած:

Եվ ստեղծվել է մի տեսակ mauvais[1] *իմ և տանտիրոջս և պարտատերերիս հետ: Ապրում եմ ամիսներով պարտքեր անելով, ստանում եմ ամսականները միանվագ, վճարում եմ և նորից սկսվում է կրեդիտ. — և այսպես մինչև հիմա:*

Բայց հիմա կարգը խանգարվեց երկու կողմից, երկու պատճառով: Մեկ, որ չորս ամսականները չստացա և երկրորդ՝ դոլլարը կորցրեց իր արժեքի մեկ երրորդը: Սրանով ստեղծվեց ինձ համար ծանր կացություն:

Ես խնդրել էի ընկ. Սահակին, որ դոլլարը նախկին արժեքով՝ ֆրանկով հաշվի, սակայն եթե այս ընդունելի չէ,

չեմ պնդի, հուսալով, որ մի բան կլինի վերջ ի վերջո. առայժմ այսպես դիմանանք, որովհետև փաստն այն է, որ ներկա հարյուր դոլլարով Փարիզում կարելի չէ ապրել, և մանավանդ ինձ համար, որ դիրքիս, պաշտոններիս բերումով շատ կողմնակի ծախսեր ունեմ... վերջապես: Բայց գոնե անցյալ չորս ամսականներս ստանամ անպատճառ, որ պարտքերս թոթափեմ:

Խնդրում եմ այս իմաստով խոսես ընկ. Սահակի հետ և իհարկե, նամակս կարդաս:

Ինձ համար չա՜տ ծանր և անախորժ բան է՝ միշտ գրել և փող ուզել: Սա կնմանի Եր. Օտյանի «Մպլվարի»[2] հերոսին, որ միշտ կգրե՝ «Մի քիչ փող ուղարկեցեք»:

Իմ Փարիզում մնալը ցանկալի է ինձ համար. երևի վերջին ձմեռն է լինելու. գարնանը կմեկնեմ Խորհրդային Հայաստան: Հիմա անկարող եմ, պատրաստված չեմ և ձմեռը առաջներս է: Բացի այդ՝ այստեղ խճճված եմ հասարակական գործերի մեջ: Միակ մարդն եմ Խորհրդային Հայաստանը ներկայացնող, իբրև սովետական քաղաքացի, իբրև կենտգործկոմի անդամ և իբրև բնիկ Խորհրդային Հայաստանցի: ՀՕԿի վարչության փոխնախագահն եմ, Ներգաղթի Ֆոնդի մարմնի փոխնախագահ և ուրիշ մանր ու խոշոր բաների նախագահ, գանձապահ, ՀՕԿ ամսագրի[3] խմբագրական կոլեգիայի անդամ և այլն, և այլն:

Այս բոլոր պարտականությունները պետք է մի ելքի հասցնեմ և ապա հեռանամ: Սա ժամանակի կարոտ հարց է՝ լիկվիդացիայի ենթարկելու:

Սիրելի ընկեր, չա՜տ կխնդրեի ինձ գրեիր, թե ի՞նչ են մտածում ղեկավար ընկերները՝ ընկեր Սահակն ու Աղասին[1], իմ գալու մասին: Ինչքան կարելի է չուտ գրիր և հանգամանորեն, կոնկրետ, որ ժամանակ ունենայի պատրաստվելու մեկնելու համար:

Սպասում եմ նամակիդ և վերև գրած առկախ հարցերի կարգադրման մասին:

Ջերմագին և կարոտով բարևներ քեզ և ընկերներին:
Սիրով և հարգանքով միշտ ձեր Ավետիք Իսահակյան

238. ՋԱՐԵՀ ՈՐԲՈՒՆՈՒՆ

1933, 5 հոկտեմբերի, Կոլլոնժ

Սիրելի ընկեր Որբունի.

Շա՛տ ներողություն եմ խնդրում մինչև օրս Ձեզի պատասխանած չլինելուս և շնորհակալություն չհայտնելուս համար: Բանն այն է, որ Ձեր նամակն ու գիրքը ստանալուս օրերը մեկնեցի այս գյուղը հանգստանալու համար, չա՛տ հոգնած էի և սիրտս (ֆիզիկական) թուլլ էր:

Գլուխս այնքան խառնված էր, որ մոռացա Ձեր գիրքը[1] հետս առնել, այստեղ կարդալու համար: Առաջին օրերս՝ այստեղ գրեթե բան չէի անում, և հետաձգում էի Ձեզ գրել՝ մտածելով, որ Փարիզից կգրեմ և գրքիդ ընթերցումի տպավորության մասին էլ, միասին: Հիմա, տեսնելով, որ ուշացավ պատասխանս, չտապում եմ այս երկու տողը գրել:

Փարիզից կգրեմ Ձեզ ընդարձակ:

Ինչ որ բան էիք հարցրել ինձ, Երևան նյութ ուղարկելու մասին: Ես բնավ տեղեկություն չունեմ, թե ինչ մասնավոր հրատարակության մասին է խոսքը. միայն թե տիկ. Զ. Եսայանի վրա, «Ազ. Հայաստան»-ի հասցեով կարող եք ուղարկել, ինչ որ կամենաք և ապահով հասցե է:

Շա՛տ շնորհակալ եմ նվերիդ համար:

Հույս ունեմ, որ լավ եք, առողջ եք ու չարունակում եք գրել: Երևի լույս տեսավ Ձեր գիրքը, որի մասին խոսեցիք ինձ և Հրաչի[2] հետ:

Լավագույն բարևներով, Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

239. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1933, 26 հոկտեմբերի, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Նամակդ ուղարկեցի Պարույրին[1], իսկ Պարույրից ստացած այս նամակը մի քանի օր առաջ էի ստացել, որի առաքումը ուշացավ, որովհետև Թամարայի[2] քույրը նամակ պիտի բերեր և ուշացրեց. հիմա, ուրեմն, երկու նամակները միասին եմ ուղարկում: Էփրիկյանին[3] կհանձնես ներփակը:

Դու ինչքան որ նամակ ես ուղարկել ինձ, բոլորն էլ անպատճառ ուղարկել եմ Պարույրին. միամիտ եղիր:

Պարույրի մասին էլ միամիտ եղիր. այս նամակի հետ ուղարկված լուսանկարը ցույց է տալիս, որ տղան զվարթ է և կենսուրախ, առողջ:

Առաջին նամակներումդ մեկի մեջ գրել էիր Շարականի[4] մասին: Այստեղ մի ունևոր հայ գրավաճառ կա. նա էլ տրամադրություն չունի գնելու: Ուրիշ մարդկանց հարցրի, որոնք ասում են, թե ամենից առաջ գիրքը պիտի ներկա լինի, որ գնողը տեսնի:

Այս հին պատասխաններն էին, որ մոռացել եմ քեզ իր ժամանակին գրել:

Երեկ մի մարդու տեսա, որ սովորաբար այդպիսի գրքեր հավաքող է. ասաց, որ ներկա կրիզի ժամանակ ո՛չ ոք այդպիսի քայլ չի անի, զորօրինակ, ինքը, հրաժարվում է:

Իսկ ուղարկելը գիրքը այստեղ առանց նախորոշ, անպայման գնողի – արկածախնդրություն է: Վազն անցի՛ր, առայժմ:

Ես բան չունիմ գրելու, գաղութում կյանք չկա, այսինքն, ստեղծագործ աշխատանք, միայն իրար միս ուտել, իրար հայհոյել, ծեծ, արյունհեղություն և ուրիշ ո-

չինչ: Ինչ որ կա՝ լավ և պայծառ բան՝ այդտեղ է, ձեզ մոտ, ի<որհրդային> Հայաստանում:

Սեդրակ Աբգալյանը[5] եկավ և չա՛տ ոգևորիչ բաներ է պատմում, սիրտս բաբախեց, քաղցր բան է հայրենիքը և հավիտյան ապրեցնող և հուզող:

Բարևներ սրտով և սիրով բոլոր ընկերներին և ձեզ՝ զույգիդ:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

240. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

<1934, փետրվար>[1] Փարիզ

Սիրելի ընկեր Կարեն.

Հունվարի սկզբներին ստացա նամակդ, բայց ների՛ր, որ մինչև հիմա չկարողացա պատասխանել: Շատ կլանված էինք Դուբյան եպիսկոպոսի սպանության[2] առիթով ծագած աղմուկով, հարցերով: Ամբողջ գաղութահայությունը սաստիկ հուզված է այս տմարդի, անմիտ, զզվելի ոճիրով: Բողոքի միտինգ կազմեցինք և այլ ժողովներ: Դաշնակցականները ծակերը մտած՝ սպառնալիքներ են կարդում, բայց իզուր. նրանց վախճանի վերջին գալարումներն են, որ ի հայտ են գալիս: Անփառունակ վախճան:

Սիրելիս, առաջարկիդ համար ժողով ունեցանք: Խմբագրությունս (ՀՕԿ) գտնում է, որ հոդվածդ երկար է և մեր թերթի համար անհարմար. մենք հրատարակում ենք կարճ հոդվածներ: Այնպես որ խնդրում ենք հակիրճ գրություններ՝ մեկ կամ ամենաշատը երկու հանդեսների մեջ զետեղելու համար: Կխնդրենք ուղարկես պատմվածքներ, առավելությունը նրանց տալով, կամ Մոսկվայի իրականությունից (կառուցում, ժողովներ, հարցեր, կուլտուրական-գրական-գեղարվեստական կյանք):

Շատ չնորհակալ կլինենք, եթե տաս մի հոդված համամիության գրական նշանավոր գրական երկերի մասին — մանավանդ հայկական: Օրինակ, շատ գովում են Զարենցի վերջին գործը[3]. մի՞թե լավ չէր լինի նրա մասին գրախոսեիր:

Սիրելիս, ես էլ ուզում եմ Երևանում լինել, ընկերներիս մոտ, ժողովրդի հետ, բայց զանազան գործեր պահում են ինձ այստեղ. դուրս է գալիս, որ անհրաժեշտ մարդ եմ այստեղ, իսկ այնինչ իմ մուրազս է՝ մի անդորրը անկյուն ունենամ և պարապեմ, գրական թերի գործերս ավարտեմ: Վախենում եմ մեռնեմ և գործերս անկատար մնան: Առողջությունս գեչ չէ, բայց սիրտս թույլ է... Զգիտեմ, Հայկական բարձրավանդակի ցուրտ, խիստ օդը ի՞նչ ներգործություն պիտի ունենա սրտիս վրա: Եվ վերջապես երիտասարդ չեմ, ծերացա:

Որոշել եմ այս տարի մի գյուղ քաշվեմ, վերջացնեմ գործերս և ապա վերադառնամ Հայաստան: Այս ՀՕկը և հարակից գործերը (թերթ, ժողովներ, զանազան հանձնառումներ) կլանում են բոլոր օրերս և եռանդս:

Զգրեցիր թե ի՞նչ են անում Յոլակը, Պողոսը (Աբելյան), Դերենիկը, Մանվելյանը: Առո՞ղջ են արդյոք, ո՞նց են ապրում:

Ինչպե՞ս են ձերոնք, կինդ և երեխաներդ: Դու ինչո՞վ ես զբաղված, պաշտոն ունե՞ս:

Մենք ապրում ենք մի կերպ, տղաս շատ լավ գործ ուներ (Պարամոնդ Սինեմայի[4] մեջ), բայց այս երկու ամիս է՝ գործազուրկ է, գործ չկա: Հույս ունենք, որ չուտով գործերը բացվեն:

Դժվար և ծանր ժամանակների մեջ ենք ապրում և չեմ կարծում, որ չուտով բարվոքվի դրությունը. խոսքս Եվրոպայի և Ամերիկայի ծանր կրիզի մասին է:

Գաղութահայ գրականությունը գրեթե ոչ մի աչքի ընկնող բան չտվեց. եղածը չինծու, ֆրանսիական գրականության ազդեցությամբ հերյուրված բաներ են: Եվ ի՞նչ կարող են տալ հողից, ժողովրդից կտրված, արմատները չորացած մարդիկ:

Կոստան Զարյանը[5] չարունակում է հայհոյել, ծաղրել Խ. Հայաստանը, նրա գործիչներին, նրա բարեկամներին

և դաշնակցությունը հիացած է նրանով: Բոլոր սրիկաների մեծ սրիկան՝ Ս. Վրացյանը[6] նրան հանճար է անվանում: Զզվելի է գաղութների մեջ կյանքը:

Շա՛տ բարևներ կնոջս կողմից և իմ կողմից Արմինե Ավետովնային[7] և քեզ և երեխաներիդ:

Բարևիր ինձ հիշողներին:

Խնդրում եմ ներփակ նամակս հանձնես Աշոտ Հովհաննիսյանին:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

241. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1934, 29 մարտի, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ստացա նամակդ և վերջին անգամ ուղարկածդ նամակը լուսանկարով միասին. ուղարկել եմ իսկույն Պարույրին, բայց մինչև օրս նրանից պատասխան չունեմ: Սակայն վատ բաներ չմտածես, որովհետև չկան. հասցեն փոխել էր, գնացել էր մի նոր տեղ, նոր սանատորիա, ուր արդեն լավ դարձածներն են գնում: Հանգիստ եղի՛ր. «ՀՕԿ»-ի միջոցով կգրեմ, տեղեկություն կստանամ:

Սիրելիս, չես գրում թե ստացա՞ր Պարույրի ուղարկած լուսանկարը. վաղուց եմ ուղարկել: Հետո գրել էիր «Յայսմաւուրքի» մասին: Այդ առթիվ էլ էի գրել – որ առնող չկա, կամ եթե առնող էլ լինի, պետք է ապրանքը, առարկան տեսնեն: Ո՛չ մեկի մասին չգրեցիր:

Ներփակ ուղարկում եմ ռումանական «ՀՕԿ»-ի վկայագիրը, Պարույրի մասին[1]: Մեր «ՀՕԿ»-ի թղթերից ելավ. մոռացած էին իր ժամանակին ուղարկել: Թերևս պետք դա:

Շնորհակալ եմ, սիրելի Գարեգին, տված լուրերիդ համար: Եթե մի բան կատարվում է հայության մեջ, դա էլ

Հայաստանումն է կատարվում: Ստացանք «Կապիտալը». ի՛նչ հոյակապ գործ. կեցցե Թ. Ավդալբեկյանը[2]. ո՞նց հերոսաբար հաղթահարել է Մարքսի դժվարահաղթ լեզուն. երբ Թադեոսը սորվեցավ այդքա՛ն գերմաներեն. զարմանալի մարդ է. հանճարեղ մարդ է Ավդալբեկյանը. հազար անգամ կեցցե:

Գրականության պատմությունը[3] դեռ չեմ կարդացել. կարդամ, կդրեմ նրա մասին: Երևի կստանանք Բունիաթյանի «Գառնին»[4], չա՛տ եմ հետաքրքրվում: Կեցցեք երևանցիներդ. ի՛նչ մեծ գործեր եք կատարում: Գաղութահայության մեջ բան չկա. չուր ծեծել է. զավզակություն, բառեր, ածականներ – թրքահայկական դրականություն. գոռոշ է արժեքը:

Շա՛տ և շա՛տ ցավեցի Թորամանյանի կորստի[5] վրա. չա՛տ համով մարդ էր, և իհարկե եղակի մասնագետ: Այսպե՛ս, սիրելիս, գնում են մեր սերունդի խոշորները, մեր ընտիրները[6]: Անհունորեն ցավալի է այս օրենքը:

Ես էլ չուտ-չուտ հիվանդանում եմ. սիրտս լավ է, բայց պիտի չարունակ խնամել: Այս մոտ օրերս գյուղ եմ գնում, Փարիզի մոտիկ մի գյուղ. այնտեղ պիտի մնամ մի քանի ամիս, որպեսզի թե հանգստանամ Փարիզի այս տենդից ու աղմուկից, ժողովներից, վեճերից, և ամփոփվեմ, գրեմ: Շա՛տ եմ ուզում գրել, բայց միշտ խանգարվում եմ: Էնքան չմևռնեի, կիսատ գրուբյուններս ավարտեի, վերադառնայի Երևան, և այնտեղ դոցեի աչքերս: Ծերուբյունը արդեն փաթթում է մեզ...

Դու ինչպե՞ս ես. ինչպե՞ս է առողջությունդ. գրել էիր մի անգամ, թե սիրտդ սկսել է մի քիչ թուլանալ. հիմա ինչպե՞ս ես: Լավ պահիր քեզ: Ինչպե՞ս է Դերենիկի առողջությունը. գրի՛ր, ամեն անգամ նրան բարևներս տո՛ւր, և մեր բոլոր ընկերներին: Շա՛տ ուզում եմ բոլոր սրտագին ընկերներին գրել՝ Դերենիկին, Միշոյին, Պողոսին, Յոլակին, բայց չի լինում, ժամանակ չկա:

Լսեցինք, որ Ե. Զարենցը մի նշանավոր գիրք[7] է գրել, բայց չտեսանք. մեկն ու մեկին, որ ունեն, ասա, որ մի հատ ուղարկեն մեզ, «ՀՕԿ»-ին:

Սիրելիս, երբ մեր քաղաքացի Լյուդվիգ Սարգսյանին տեսնես, ասա, որ «ՀՕԿ»-ի վրա (քո նամակիդ հետ մեկտեղ) նամակ եմ գրել իրեն, գնա, ստանա:

Շա՛տ բարևներ բոլոր մեր ընկերներին, սիրո և կարոտի բարևներ: Բարևիր կնոջդ, բարևներ մերոնցից:

Ի՞նչ եղավ Ա. Թամանյանի ժողովրդական տան[8] չենքը. բարձրանո՞ւմ է, արդյոք: Կառուցվո՞ւմ է Մելքոնյան «գրադարանը»[9]:

Համբույրներով, քո՝ Ավետիք

242. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

<1934>, 25 ապրիլի, Փարիզ

Սիրելի Վահան.

Այստեղ Արշակ խան Գորոյանը և բարեկամդ՝ պ. Վռամ Փիլոսյան[1] հանձն առան միջամտել Պարսից դեսպանատանը, որ տղայիս անցագիր տան հենց որ ստացվի Բեռլինի կոնսուլատից proces-verbal-ի[2] *պրոտոկոլը և մի վկայական այդ արձանագրության հիման վրա, որ նա պարսկական քաղաքացի է:*

Նրանց խորհրդով, և տրամաբանական է, որ տղաս դրե խնդիրը տեղուդ կոնսուլի վրա, և այսօր խնդիրը ուղարկեց արդեն:

Խնդրի մեջ գրված է, որ նրա հայրը, մայրը և ինքը՝ Վիգեն Իսահակյան, ծնված 1910 թվին, ստացել են անցագիր, լինելով պարսիկ հպատակներ. այնուհետև նա (որդիս) պատերազմի տարիներում և հետո մինչև 1927 թիվը սովորել է Վենետիկ Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում, և

այդ ժամանակաշրջանում անցագրի պետք չունենալով և փոքր լինելով, կորցրել է անցագիրը: 1927 թվին դպրոցի վարչության միջամտությամբ ստանալով laissez-passer[3], իհարկե իտալական, և դրանով եկել է Փարիզ Սորբոնի համալսարանում ուսումը շարունակելու: Ամեն անգամ, որ ուզեցել է վերահաստատել իր պարսկական քաղաքացիությունը, հարկավոր դոկումենտները չունենալով, ետ է դարձել այդ մտքից և մնացել է առանց անցագրի: Հիմա մտածում է և հավատացած է, որ երբ ստանա 1914 թվի proces-verbal-ի պատճենը և certificat իր քաղաքացիությունը հաստատող (հենց պասպորտ տալու փաստի վրա), այստեղ կստանա պարս<կական> դեսպանատնից անցագիր և կվերահաստատվի իր իրավական դրությունը:

Սա է գրված. և դու սա պիտի պաշտպանես. և, չա՛տ պիտի խնդրեի, որ արագացնես: Մեր բարեկամները այստեղ մնացածը կլրացնեն: Զինվորության հարցն էլ կլուծեն. դեռ որդիս սովորում է, ուրեմն հետաձգում. և բացի այդ ասում են, որ մի հատիկ որդուն չեն տանում զինվոր:

Երկրորդ կարևոր կետն էլ այն է, որ ես չպիտի երևամ. ես բացակա եմ: Որդիս չափահաս է և ջանք է գործ դնում վերագտնել իր nationalitn – Պարսկաստանի քաղաքացի լինելը:

Քո հանճարը նրա մեջ պիտի լինի, որ արագացնես և անսպասելի արգելքներ, ձևականություններն հաղթահարես:

Որդուս ապագան, երևակայիր, այդ անցագրից է կախված. եթե այդ մոգական թուղթն ունենա, Սպանիայում իսկույն հաց կունենա և ուրիշ տեղեր էս, Իտալիա, Ամերիկա և այլն:

Քո տված հարցի մասին հետո կխոսիմ: Հավատացած եղիր, որ այս տողերը չա՛տ զոռով գրեցի. հիվանդ եմ, դողդոջում եմ, մրսել եմ. ամբողջ մարմինս ջարդված է:

Առայժմ շատ բարևներ և համբույրներ:

Քո՝ Ավետիք

17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

243. ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

1934, 25 ապրիլի, Փարիզ

Սիրելի Արմիկ և Աբաս ջան.

Նամակդ, որ ստացա մի-երկու օր առաջ, չա՛տ և չա՛տ ուրախացրեց ինձ, միևնույն ժամանակ տխրեցրեց և հուզեց: Ուրախացա, որ վերջապես քեզնից բարի լուր առա, տխրեցի, որ դեռ տառապում ես: Ջորս տարի է անցել, ինչ որ թողել եմ Միության սահմանները. քո մասիդ սկիզբները հարցրել եմ, պատասխան չեմ առել և ընկել եմ չա՛տ տխուր ենթադրությունների մեջ՝ ի նկատի ունենալով քո վիճակը, առողջական դրությունդ, և հետո վախենում էի քո մասին հարցնել. վերջերս Կոլյային[1] գրեցի, որ մի լուր առնեմ քեզնից, դեռ չունիմ:

Լուր չունիմ մայրիկիդ և Օլիկի մասին, ո՞վ գիտե, արդյոք ի՞նչ եղան...

Շա՛տ ուրախ եմ, որ Արմիկի հետ ես և միասին կմխիթարվիք. չափազանց հուզվեցա, որ տղա[2] ունես և անմահ Իսահակի անունով. գրում ես, որ առողջ երեխա է. լա՛վ պահիր: Միշտ հոգ տար և քո առողջության վրա. չգիտեմ Մինուսինսկ[3] քաղաքը ի՞նչ մեծության է. ունի լավ բժիշկներ, որ միշտ նրանց դիմես, նրանց հսկողության տակ լինես:

Արդյոք չ՛ոտ պիտի մնաս դեռ Սիբիրում. մի՞թե չես կարող դիմում անել, դառնալ Երևան: Դու, երևի, դիտես, որ ես Հայաստանի կենտգործկոմի անդամ եմ, член ЦИКа Армении[4]. *որպես այդպիսին չե՞մ կարող միջնորդել, արդյունք կունենա՞, ի՞նչ ես կարծում:*

Եթե չեղավ, երևի, մի տարուց հետո ես Հայաստան կլինեմ, թերևս մի բան արվի:

Դուք ի՞նչ եք անում, ինչո՞վ եք ապրում, ո՞ւր եք աշխատում, ինչպես է բոլորիդ առողջությունը:

Գալով մեր մասին.— ես Հայաստանի օդնության (ՀՕԿ) կոմիտեի փոխ-նախագահն եմ, աշխատում եմ այդ գծով, նույնպես ներգաղթի մարմնի փոխ-նախագահն եմ, որ դրամ է հավաքում գաղթականներ փոխադրելու Հայաստան: Գիտակցաբար և սիրով աշխատում եմ Խորհր<դային> Հայաստանի բարձրացման համար:

«Ուստա Կարո» վեպս տպված չէ, և տպվելիք էլ չունի. չ՛ոտ մեծ գումար է պետք, և որովհետև չի տպվում, ուստի չի էլ վերջացել. միշտ մշակում եմ, և քաոս է դարձել. չ՛ոտ ուշացավ, հնցավ, փոխվեցին ժամանակներն ու տրամադրությունները. դարձավ պատմական վեպի պես մի բան, բայց եթե մի-երկու տարի կյանք ուննենամ, իր վերջնական ձևը կգտնի:

Այդ վեպի գլխին չ՛ոտ փորձանքներ եկան, տարիներով կտրված էի նրանից և հեռացած էր ինձնից:

Վիգենը թողեց համալսարանը[5], չուզեցավ վերջացնել, տարված է սինեմայի (կինո) արվեստով և մինչև վերջերս աշխատում էր Փարիզի ստուդիոների մեջ. իհարկե, ոչ — դերասան, այլ ստեղծող, տեխնիկ, պատրաստվում է ֆիլմեր հանել. չնորհք ունի, գրում է թերթերում սինեմայի մասին, ծանոթ է հայտնի ռեժիսյորների հետ, ինչպես Այզենչտեյնի[6] հետ: Հիմա ընդհանուր կրիզի պատճառով գործ չունի. առաջարկում են Սպանիա գնալ, դեռ չի որոշված. գուցե գնա Մոսկվա, Совкино-ում *աշխատելու:*

Համալսարանում գրականություն և փիլիսոփայություն էր լսում, բայց բոլոր ուշքը Սինեմայի վրա էր. թող գնա՛ իր սիրած ճանապարհով. սինեման մեծ արվեստ է, մասսայական է, և մեծ ապագա ունի:

Ուղարկում եմ քեզ 300 ֆրանկ, որից 100 ֆրանկը Վիգենը տվեց սիրելի Իսահակի համար, որ հագուստ առնի՛ք: Ջեռքս որ փող անցնի, քեզ նորից կհասցնեմ. միամիտ եղիր, մանավանդ, երբ Վիգենը գործի անցնի:

Խորհուրդ տվեց՝ Փարիզի բանկը, որ торгсин-*ի գործով է զբաղվում, այս կերպ վարվել. ուրեմն չեքով* торгсин-*ից ամեն բան կառնես:*

– Իսկույն կգրես ստանալուդ մասին:

Կարծեմ 300 ֆր. կբռնե մոտ 23 ռուբլի:

Եթե այս ձևը հարմար չէ, գրիր ուրիշ կերպ ուղարկեմ:

Շա՛տ բարևներ և համբույրներ Սոֆիի և Վիգենի կողմից:

Համբուրում եմ երկուսիդ և Իսահակին հատկապես:

Քո Ավետիք Իսահակյան

A.Issakian.
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

Հ.Գ. Մոռացա ասել, որ Վենետիկ ուղարկած քո նամակներդ երբեք չեմ ստացել:

244. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1934>[1], 30 ապրիլի, Փարիզ

Սիրելի Գարեգին ջան.

Ներփակ կստանաս Արտաշեսի նամակը, որ երեկ ստացա:

Ի՞նչ անես, հոգիս, այս է վիճակված մեզ բոլորիս, և ավելորդ եմ գտնում մխիթարանքի խոսք ասելու քեզ:

Խեղճ Պարույրը[2] չա՛տ էր ուզում Հայաստան գալ, երևի, հոգին վկայում էր, հողը քաշում էր, բայց բախտը այլ էր կամեցել:

Ամիսներ առաջ հայտնի էր ինձ, որ վիճակը օրեցօր վատանում է, օրհասական ելքին ավելի շուտ էին սպասում... ես քեզ չէի գրում. գրելու բա՞ն էր, որ գրեի:

Ափսո՛ս Պարույր, ի՛նչքան դեռ հույսեր, երազներ, եռանդ հետը տարիր, հավիտյան անդարձ: Ռումանիայում սիրված էր, և թաղումը կատարված է չքով...

Սիրելիս, դու քեզ լա՛վ պահիր, ջանք դիր չատ չընկճվելու. տար, դիմացիր. մեզանից ամեն մեկը սոսկալի կորուստներ են ունեցել. հայտնի է քեզ:

Լսած եղաք, որ երեք ամսից ի վեր Ա. Ահարոնյանը[3] անդամալույծ ընկած է. ո՛չ կարողանում է չարժվել, ո՛չ խոսել, ո՛չ էլ նույնիսկ գիտակցել ամբողջովին: Մի վիճակ, որի համեմատաբար մահը փառք է, երջանկություն է... Ընկնել անգիտակից, անզգա, բույսի պես միայն չնչել. սխալվում եմ, բույսը լավ է, ծաղկում է, բուրում է, այլ մեքենայի պես... մի երկու օր էլ առաջ նրա կնոջ եղբայրը՝ Մ<այել> Վարանդյանը[4] կաթվածք ունեցավ և մեռավ. նրանից ավելի բախտավոր եղավ:

Սիրելի Գարեգին, մի ամիս առաջ «ՀՕԿ»-ի վարչության հասցեով ուղարկեցինք Արամ Զարրքի կողմից նվիրված «Օ<մար> Խայամի» թարգմ<անած> գրքերից[5]. միմի օրինակ նվեր կա քեզ, Դերենիկի, Զարենցի, Ա. Կարինյանի. գնացեք, ստացեք, չկորսվի:

Շատ բարևներով և համբույրներով քո Ա.վետիք

Հ.Գ. Ներփակ նամակս հանձնիր Տիգրան Զավենին. նրա նամակի մեջ (գրած մարտի 31-ին)[6] քեզ վրա նամակ էի գրել, ստացիր: Մի՞թե ձեռքդ չի հասել:

245. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

<1934>, 21 մայիսի, Ռուաասի[1]

Սիրելի Արշալույս.

Ահա երեք շաբաթ է գյուղումն եմ. երբեմն մի օրով իջնում եմ քաղաք անհրաժեշտ գործի պատճառով: Գյուղը քաղաքից մի կես ժամ հեռու է:

Իսկական բնության ծոցում եմ. դաշտ և անտառ. խաղաղություն, անդորրություն, ու ես պարապում եմ: Երևի մինչև հունիսի վերջը կմնամ գյուղում:

Ճշմարիտ է ասած, թե գյուղը աստված է չինել, քաղաքը՝ մարդիկ: Մաքուր օդ, բուրալից ճանապարհներ, ծառ ու ծալիկ, թռչունների անսպառ երգ: Թափառում եմ և խորհում. նայում եմ խորունկ ու խորհրդավոր բնությանը – կանանչ երկիր, կապույտ երկինք, ոսկի արև և թռչունների սրտաբուղխ երգ – և երազ է դառնում աշխարհը հոգուս մեջ, կարծես, իրականություն չէ, այլ երազում եմ...

Ընկեր կուզեի, որ թևս դնեի թևին, և թափառեինք միասին, խորհեինք, զրուցեինք. – մանավանդ սիրեինք. այնքա՜ն բնական է սերը բնության մեջ, այնպես ներդաշնակվում է բնության մեծ սիրո հետ, թռչունների, բույսերի սերերի հետ, նրանց մասը կազմելով և ամբողջացնելով:

Շա՜տ և շա՜տ կուզենայի մի օր, մի երկուշաբթի գայիր այստեղ, ոչ թե գյուղս, այլ մոտերը, ուր կան սքանչելի անտառներ, դաշտեր... Կգրեմ քեզ և եթե ուզենաս, կժամադրվենք:

Գրիր, սիրելիս, եթե կամես գալ, ժամը նշանակեմ քեզ դիմավորելու կայարանում: Գրի՛ր մի-երկու տող. չէ՞ որ ես քեզանից բնավ մի տող չեմ ստացել: Սպասում եմ նամակիդ:

Համբույրներով՝ քո Ավ.

Հասցես. Անունս.
515, Ave. Mozart (Lotissement)
Roissy-en-Brie
(S. et. M.)

246. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ

1934, 6 Հունիսի, Roissy

Սիրելի Վահան.

Շնորհակալությամբ ստացա նամակդ և կոնսուլից էլ թուղթը: Բայց կարծում եմ, որ տղայիս անունը պիտի լիներ. թերևս մարտ-ապրիլ ամիսներում, 1914 թ.: Ինչ որ է. տեղիս կոնսուլատը խորհուրդ տվեց նորից դիմել Բերլին և խնդրել, որ պատճենը պարակերեն տան և կնիքով, տղաս գրել է: Շա՛տ հույս ունինք ստանալու: Վռամ խանը[1] ժրնև էր, որ գա մի բան կանե. դեսպանի քարտուղարը խոստացավ, տղայիս հետ ծանոթացավ և բարեկամացան. երիտասարդ տղա է, և իհարկե, համոզված է, որ պարսկահայ է:

Հարց էիր տվել գաղութների հայության հարատևության մասին: Շա՛տ բարդ հարց է, կախված է պանպան պայմաններից, ըստ երկրի, մշակույթի (կուլտուրայի),

քանակի և որակի: Մոտավորապես 600.000 հայեր կան՝ սփռված աշխարհի չորս կողմերը: Նրանք, որոնք գտնվում են, օրինակ, Ֆրանսիայում, մոտ 60.000, ուշ կամ կանուխ ձուլման են դատապարտված: Նոր սերունդը հայերեն չի ուզում սովորել, նույնիսկ ամաչում է դուրսը հայ երևալ: Վերջապես, հացի խնդիրը կա, որ հարկադրում է իշխող լեզվի լավ գիտնալու անհրաժեշտությունը: Հետո ֆրանսական մեծ կուլտուրան կա, մեծ գրականությունը և ֆրանսուհիները: Սրանք ամենքը ձուլող մեծ մեքենաներ են:

Մենք կարող ենք այս դաժան երևույթի դեմ պայքարել, գոնե մահը հետաձգելու համար հետևյալ միջոցներով՝ հայ գրականություն տարածելով, հայ լեզվի դասընթացներով, պատմության, անցյալի և ներկայի մասին, և մանավանդ ոգևորելով Հայաստանի փաստով: Այս փաստը, ինչքան նկատել եմ, խանդավառող հատկություն ունի: Քանի ուժովնա Հայաստանը, գաղութահայությունը այնքան կհուսալցվի, կապրի այդ ներշնչող իրականությամբ: Եվ վերջապես ներգաղթը կա: Թեև հիմա ներգաղթը տկար է, ցանկալի չափերով չէ, բայց Հայաստանի վերելքի հետ զուգընթաց սա էլ թափ կառնի:

Նույն վիճակն է ամերիկահայերի վերաբերմամբ:

Ուր որ հոծ բազմություն կա, իրար գլխի հավաքված, ավելի երկար կյանք կունենան: Օրինակ, Կալիֆորնիա, Բուենոս-Այրես և այլուր. բայց Նյու-Յորք, Ջիկագո՝ հոգեվարք է:

Իսկ այն երկիրները, ուր տիրող կուլտուրան թույլ է, հետամնաց երկրներում, և հայ գաղութները համեմատաբար հոծ և հին տվյալներով, չա՜տ երկար կապրեն: Այստեղերը ձուլումը չա՜տ դանդաղ է ընթանում, օրինակ, Ռումանիա, Բուլգարիա, Հունաստան, Եգիպտոս և մանավանդ Սյուրիա, ուր կա մոտ 140.000 հայություն: Վերջին վայրում ձուլման, այլասերման նշաններ ա-

ռայժմ չկան: Կան հայկական բեկորներ, 70-80.000 հոգի Թյուրքիայում. այնտեղ ձուլում, Թյուրքացում չկա, բայց տնտեսական հյուծում: Ես լավատես չեմ նրանց նկատմամբ:

Հետո, քո Պարսկաստանը, որ դու լավ գիտես, պարսկացում չկա, բայց տնտեսական քայքայում: Ռիզա խանի ձուլման քաղաքականությունը հայերի դեմ չի ուղղված, այլ Թուրքերի՝ Ատրպատականի: Եվ պարսկահայերը, իբրև հին գաղութ, ունին տրադիցիաներ, ավանդություններ, սովորույթներ՝ տակավին ամուր և ազգապահ: Իսկ Ատրպատականի և Թավրիզի հայերը մոտիկ լինելով Հայաստանին, կտաքանան և կներշնչվեն վերջինով:

Այս է իմ համեստ կարծիքը:

Սիրելի Վահան, դ<ոկտո>ր Ջեմսի[2] մոտ ունիմ մի կապոց նամակներ, հետաքրքրական, պատմական բաներ, կարծեմ կան, և մի չարք գրքեր: Խնդրեցի, որ քեզ մոտ Թողնե, ինքը գնում է Պարսկաստան: Խնդրում եմ մի տեղ դիր մնա, ես կգրեմ Երևան, որ տեղափոխեն: Առհասարակ, ձեռքդ որ գիրք կընկնի, հայերեն, գերմաներեն, եթե քեզ պետք չեն, պահիր Հայաստանի համար. չարունակ ես հավաքում եմ նվերներ և ուղարկում ենք պետական ազգային գրադարանին: Օտար լեզուներով գրքերի և հին հայերեն գրքերի (որոնք այլևս չեն վերատպվում) մեծ կարիք կա: Ես իմ գրադարանները բոլորը տվել եմ պետ<ական> գրադարանին: Այսօր մեր պետակ<ան> գրադարանը (Biblioteque nationale) ավելի քան 800.000 հատոր գիրք ունի. հայերեն, ռուսերեն, կան ֆրանսերեն, բայց գերմաներեն՝ քիչ:

Համենայն դեպս հավաքիր, իբրև նվերներ, և գրիր ինձ, կկարգադնենք:

Ես դեռ այս տարի այստեղ եմ:

Ի միջի այլոց. ամիսից ավել է այս գյուղումն եմ. եկել եմ հանգստանալու և պարապելու. Փարիզից գ ժամ հե-

ռու է. իջնում եմ պետք եղած դեպքում. մի ամիս ևս կմնամ: Հետո Փարիզ: Հասցես Փարիզինն է:

Գրի՛ր երբեմնապես:

Շա՛տ բարևներ Հայկին:

Ներփակ նամակս, բարի եղիր հանձնել դր. Ջեմսին:

Հարգանքի բարևներ տիկնոջդ:

Համբույրներով, քո Ավետիք Իսահակյան

247. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1934, 6 Հունիսի, Roissy

Սիրելի Կարեն.

Նամակդ վաղուց է ստացել եմ. ներողություն, որ ուշ եմ պատասխանում: Պատմվածքդ կտպվի մոտակա թվերի մեջ: Մինչև հիմա «ՀՕԿ»ի Բ. տարվա 4-րդ թիվը լույս է տեսել, զարմանում եմ, որ քեզ չի ուղարկված: Կստանաս:

Ես ամսից ավելի է գյուղում եմ ապրում, շատ ջղային էի դարձել և սիրտս անհանգիստ էր: Բժիշկս գյուղ ուղարկեց. հիմա լավ եմ և կմնամ դեռ էլի մի ամիս կամ ավելի: Փարիզը չա՛տ սպառող քաղաք է:

Վերադարձս զանազան պատճառներով հետաձգվում է: Մնաց մյուս տարվան:

«Поэзия Армении» *Բ. հրատարակությունը[1] լավ միտք է, անշուշտ լավ կանես Սայաթ-Նովայից շատ դնել, ինչպես և Վ. Տերյանից, Դ. Դեմիրճյանից, թյուրքահայ բանաստեղծներից և նորերից (Գ. Մահարի). Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի...» անպատճառ դրեք և նրա հին լիրիկայից մի քանի ընտիրները, արդեն լավ բան շատ չունի:*

Ես իմ մասին ոչ մի առաջարկ չունեմ, բացի այս խնդրից. շատ կուզենայի նորերիցս զետեղել այս ոտանավորը

«Արարատի ծեր կատարին
Դար է եկել վայրկյանի պես
Ու անցել...»

Գիրքս ունես. խորագիրն է «Ռավեննայում»[2]:

Հին հրատարակության մեջ «П<оэзия> Ар<мении>ն[3] իմ երկու ոտանավորները իրար են խառնված, կարծեմ «Որսկան ախպերը» մի ուրիշի հետ: Ուղղել: Թերևս նորի մեջ այդ կտորները չեն մտնելու, թերևս չատ բան դուրս են նետվելու: Բնավ պետքս չէ:

Զոպանյանը մի՛ջնադարյան երգեր, լավ, նոր բաներ չունի, սակայն մեծ քանակությամբ Քուչակ Նահապետ ունի, որ պիտի լույս ընծայե չուտով. դիմում է արել Հայաստանին, Մելքոնյան Ֆոնդին:

Գրում ես Զարենցի «երկիր Նաիրի» դրքի ռուսերեն թարգմանության[4] մեծ հաջողության մասին: Զարենցը մեր բոլշևիկների Ա. Ահարոնյանն է. նրա պես Զարենցին էլ փչեցին, չատ ուռցրին, մեծացրին: Այդ վեպը սրանից 10 տարի առաջ, չատ դժվարությամբ և մեծ ձանձրույթով, մի կերպ վերջացրի: Հայ գրականության մեջ այդպիսի զզվելի գիրք չեմ տեսել, թե իդեապես և թե գաղափարապես: Ռուսները փառաբանում են, որովհետև այդտեղ ծաղրված է հայությունը. Մ<ուստաֆա> Քեմալին հաճելի լինելու համար են թմբկահարում ու տարածում: Ռուսները Եվրոպայի հետ միասին չաքարի պես լիզում են թյուրքերին, իսկ բախտավոր թյուրքը բոլորին ատում է, արհամարհում և օգուտ քաղում...

Ներկա ռուս գրականության մեջ չատ քիչ լավ բան կա. Զարենցի գիրքը կարող է նրանց չարքին դասվել: Բացի «Тихий Дон»[5] «Вазир Мухтар»[6] և մի երկու բան էլ, մնացածները ոչնչություններ են: Մ. Գորկու վերջին բաներն էլ արժեք չունեն:

Արտասահմանի հայ գրականությունն էլ աչքի ընկնող բան չունի. ամեն տեղ սնանկություն:

Դու և Ա. Խանջյանը չատ գովեցիք Զարենցի վերջին գիրքը՝ «Ճանապարհի գիրքը». ձեռքս չընկավ, երևի թաղեցին: Նույնիսկ չի խոսվում նրա մասին: Իրոք, ի՞նչ եղավ:

Ի՞նչ հալի են մեր Երևանի ընկերները – Ցոլակը, Պողոսը, Միշոն[7], Դերենիկը. գրիր, եթե տեղեկություններ ունես: Ո՞ւր մնաց Դավիթը[8]:

Ի՞նչ են անում երեխաներդ. լա՞վ են, լա՞վ սովորում են, ինչպե՞ս է տիկինդ: Դու թարգմանելով[9], գրելով կարո՞ղ ես ապրել: Ասում են կյանքը չատ սուղ է Մոսկվայում և հեչտ է ապրելը Торгсин-ի բոներ վալյուտա ունեցողների համար:

Լսեցի՞ր, որ Ա. Ահարոնյանը այս 4 ամիս է, որ անդամալույծ է ընկել, ո՛չ ապրում է, ո՛չ մեռնում. գրեթե անգիտակ, անզգա, անլեզու: Սարսափելի է: Իսկ Մ. Վարանդյանը մի երկու ամիս առաջ կաթվածահար եղավ, մեռավ: Դաշնակցությունը հոգեվարքի մեջ է բարոյապես, նյութապես սնանկ:

Լավ չեմ պատկերացնում, թե ի՞նչ է կատարվում Երևանում. առաջ գնո՞ւմ է Թամանյանի թատրոնի շենքը, Աղասթաֆա երկաթուղին[10], կաուչուկի ֆաբրիկան[11]: Սրտի անհուն ցավով կարդում եմ Սևանը դատարկելու[12] խոլական, խենթ ծրագիրը. արժե՞ մի քանի տասնյակ հազար հեկտար հողի համար Հայաստանի ջրամբարը ցամաքացնել, կամ ավելորդ էլեկտրական ուժ ստանալու համար, որ մեզ պետք չէ, պիտի վաճառվի:

Շա՜տ մռայլ եմ ու տխուր այս հարցերի առաջ: Մարդ մեռնի և չտեսնի հայրենիքի կատարյալ ավերումը: Մխիթարականը այն է, որ 50 տարի պիտի քաշե Սևանի հոգեվարքը…

Արաքսը հոսում է, ջրերը առատ, բայց չեն կարող թյուրքին համոզել, որ թույլ տա ջուր վերցնելու և Սևանն են չորացնում: Ե՛կ և դիմացիր:

Էհ, բավական գրեցի:
Շա՛տ բարևներ մերոնցից:
Ջերմ բարևներ Հարգելի տիկնոջդ:

Համբույրներով՝ քո Ավետիք

Հ.Գ. Հասցես Փարիզն է: Շաբաթը մի անգամ գնում եմ Փարիզ: 1/2 ժամ հեռու է:

248. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

<1934, 9 Հուլիսի, Փարիզ>[1]

Հարգելի ընկեր Սուքիասյան.

Ընկ. Գ. Լևոնյանից չա՛տ ուշ ստացա Ձեր նամակը. միայն մի 20 օր առաջ: Թե ինքը ուշ էր ուղարկել, և թե ես բացակա էի Փարիզից: Թանկագին Վահանից[2] պատահական կերպով մոտս կա միայն մի նամակ իր բազմաթիվ նամակներից. նրանց մի մասը վենետիկ է, դրադարանիս հետ, որ անկարող եմ ստանալ, մնում է, որ ես անձամբ գնամ, հանեմ: Մյուսները գոհ են գնացել աղետին և տարերքին: Լենինական եղածները թուրքերը փչացրել են, իսկ Բերլին[3] գրքերիս հետ, ում մոտ որ պահ էի տվել, գոհ է գնացել հրդեհին:

Հիմա պիտի գրեմ հուշերս. ձեռքիս տակ ոչ մի մատենրիալ չունեմ: Բայց և ո՛չ ժամանակ ունեմ, ո՛չ տրամադրություն: Այստեղ գոյություն ունիմ «ՀՕԿ» ասված մի կազմակերպության իր ամսագրով. և իմ բոլոր ժամանակը կլանված է այդ, ինձ համար, տհաճ գործերով. (նրանց մեջ գործուն պատասխանատու անդամ եմ): Ինձ համար ոչինչ չեմ կարող անել, և իմ գրվածքները երեսի վրա են մնում: Բայց ժամանակ և տրամադրություն պիտի ստեղծեմ Ձեզ մի բան հասցնելու մինչև ամսիս վերջը:

Ներող եղեք:

Բարևներով, հարգանքներով Ավ. Իսահակյան

A. Issakian.
17 Denfert Rochereau,
Paris

249. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934, 27 Հուլիսի, Փարիզ

Հարգելի ընկեր Սուքիասյան.

Երևի ստացած կլինիք բաց նամակս, որով հայտնել էի Ձեզ, թե չուտով կուղարկեմ հուշերս[1]: Վերջապես կատարեցի խոստումս. չա՜տ դժվարությամբ եղավ, որովհետև չա՜տ զբաղված էի և միևնույն ժամանակ՝ հիվանդ.: Մի խոսքով՝ այսպես եղավ, ավելի լավ կարող էր լինել:

Վահանից ունիմ մոտս միայն այս նամակը. մյուսներից կան Վենետիկ՝ պահված: Մնացածները կորած պիտի համարել: Ի՜նչ չկորավ մեծ պատերազմի չնորհիվ և թուրքերի արշավանքով, որ Վահանի նամակները չկորսվեին:

Ուղարկում եմ այս նամակը, սա վերջին նամակն էր խեղճ Վահանի: Կխնդրեմ չա՜տ, որ այս նամակը, ինչ չափով որ կուզեք օգտագործեք, այսինքն՝ լուսանկարել, արտագրել, քաղվածքներով տպել, – հետո ինձ ուղարկեիք заказное, որ չկորսվի: Հիմա ուղարկելուս էլ վախենում եմ, որ փորձանք պատահի: Կխնդրեմ լավ պահեք:

Հարգանքներով Ձեր Ա.վետ. Իսահակյան

250. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1934, 30 օգոստոսի, Փարիզ

Սիրելի ընկ. Ս. Սուքիասյան.

Այսօր, չնորհակալությամբ ստացա Ձեր նամակը և Վահանի ձեռագիր-նամակը, և իսկույն պատասխանում եմ:

«Խառնակությունն» բառի անպատշաճության մասին լիովին իրավունք ունիք: Հենց գրելիս էլ զգացի նրա անհարմարությունը, բայց սահեցի անցա վրայից: Խնդրեմ այսպես փոխարինեք — «հեղափոխության հուզումնալից իրադարձությունների հետևանքով, ժամանակ...» [կամ պատճառով]:

Գալով՝ «վերջին երգիչը հայ քնարի» արտահայտությանս, — դրա մասին չա՛տ եմ մտածել և հասել եմ այդ տխուր եզրակացությանը: Մեր քնարերգությունը, արևելահայերիս մեջ, ծագում առավ Ս. Շահազիզից և բոլորեց 50-ամյա մի շրջան մինչև Վահան Տերյանը: Այդ շրջանի մեծ և փոքր լիրիկները մշակելով լեզու, եղանակներ, ձևեր, պատկերներ՝ պատրաստեցին Վ. Տերյանի հողը.— և Տերյանը իր հայտնությամբ դլխավորեց մեր լիրիկան: Վահանը ինձ համար կատար է, բարձունք. նրա երգերը ո՛չ պակաս հավասար են Գյոթեի, Հայնեի, Լերմոնտովի, Վեռլենի լիրիկական երգերին: Վահանից սերածները էպիգոններ են: Ե. Չարենցը, անշուշտ, մեծ բանաստեղծ է, բայց ո՛չ կարկառուն լիրիկ: Նրա քնարական երգերը, մի-երկու բացառությամբ, չա՛տ աղոտ բաներ են, Վահանի նսեմ հետևողություններ, ճապաղ, ջրալի: Նրա «Տաղարան»ը չա՛տ գեղեցիկ է, իսկ «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ...»ը ունիկում՝ մեր դրականության մեջ, աննախընթաց հրաշակերտ: Միայն այսքան նրա լիրիզմից:

Հզոր է պոեմների մեջ – «Դանթեական առասպելը», «Խմբապետ Շավարշը» և «Ամբոխները խելագարված», և «Հոգիս ռադիոակայան է», և այլն:

Սրանց մեջ կան չա՞տ տարերք, կիրք ու կորով, թափ ու բոց, չռինդ ու չառաչ, բայց և չա՞տ մտածում ու քարոզ: Լավագույն անունով՝ լիրիկական էպիկա, բայց երբեք՝ մաքուր լիրիկա, բյուրեղային լիրիզմ:

Այնպես որ, ես չեմ կարող Զարենցին համարել Տերյանի լիրիկան զարգացնող, կատարելագործող, ինչպես վերջինս զարգացրեց, կատարելագործեց Ս. Շահազիզին, Հ. Հովհաննիսյանին, Լ. Մանվելյանին, Ա. Ծատուրյանին, Դ. Դեմիրճյանին և ինձ՝ մեր լիրիկան. (Հ. Թումանյանը լիրիկ չէ. նա մեծ էպիկ է, հետևապես համեմատության եզր չի հանդիսանում նա): Ընդհակառակը, անկում կրեց մեր լիրիկան:

Եվ Զարենցից հետո եկողները – Գ. Մահարի, Գ. Սարյան, Ս. Տարոնցի, և այլն, չնորհալի բանաստեղծներ, – բայց չանցան. – [չգերազանցրին] բնավ երբեք չկարողացան մոտենալ նրա պատվանդանին:

Վահանը մնում է, կրկնում եմ, կատար, լեռ-բարձունք, և այդ իմաստով է, որ ասում եմ. «վերջին երգիչը հայ քնարի»:

Դժբախտաբար այս օրենք է գրականության մեջ. գալիս է մի հանճար և ծծում է, չորացնում է չուրջը, ինչպես կաղնին, որ մոտը չի հանդուրժում ուրիշ կաղնիի աճելուն, այլ մանր-մունր թփերի: Հանճարը սպառում է իր դարը,– և պիտի անցնի երկար ժամանակ մինչև որ հող պատրաստվի նորի հայտնության, երբեմն դարեր... Գյոթեից և Հայնեից հետո Գերմանիան չունեցավ նրանց հավասարը, ուր մնաց գերազանցողը. Պուշկինից և Լերմոնտովից հետո անկում է՝ Տյուտչևն[1] էլ մեջն առած՝ Նեկրասով[2], Նադսոն[3], Բայլմոնտ[4], Բրյուսով[5], նույնիսկ Ֆեթ[6] և Եսենին[7]:

Պիտի հարցնեք. ապա Մայակովսկի՞ն[8]: – Մայակովսկին մեծատաղանդ պրոպագանդիստ է. Զարենցը նրա հայկական մասշտաբով՝ երկվորյակը:

Մնաց որ, ամբողջ քաղաքակիրթ աշխարհում այժմ լիրիկան տեղի է տալիս: Այսօր ո՛չ Գերմանիայում, ո՛չ Ֆրանսիայում, ո՛չ Իտալիայում, ո՛չ Անգլիայում չկան մեծ լիրիկներ: Արձակի դար է: Պրոզա:

Այս տեխնիկական-ինդուստրիել-մեքենապաշտ-պրագմատիկ դարում, այս դինամիկ դարում, ուր ընկերական մեծ պրոբլեմների լուծման արյունահեղ պայքարն է բռնկված – ո՞ւմ սրտին կխոսի Գյոթեի

Ueber allen Gipfeln ist Ruh...
(Горные вершины)

Իմ ասած լիրիկան – սա է:

Երանի՛ իմ հոռետեսությունը չարդարանա, և մեր որդիները բախտ ունենան ողջունելու մի նոր վ. Տերյան, որ լեռների աղբյուրների պես՝ աստղերի մաքուր լույսով օծուն, կարկաչէ իսկական բանաստեղծությունը, երազ տա և մոռացում տառապանքների և մահի հանդեպ և ստեղծե գերզգայական, գերիրական երջանիկ աշխարհ...

Կխնդրեի սիրալիր բարևներս հայտնել ընկ. Աչոտ Հովհաննիսյանին, Վարվառա Կարպովնային, Վ. Վահանյանին[9], Ներսեսին[10] (Վահանի եղբորը):

Կխնդրեի նույնպես, ներփակ նամակս հասցնել կարեն Միքայելյանին. հասցեն չեմ գտնում, բայց հիշում եմ փողոցը՝ Сверчков переулок, *թիվը չեմ հիշում. ընկ. Աչոտը գիտե:*

Սիրով և հարգանքով, բարևներով՝

Ձեր՝ Ավետ. Իսահակյան

Exp. A.Issahakian,
17 rue Denfert Rochereau,
Paris, 5.

251. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

1934, 31 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Կարեն.

Քո նամակին վաղուց եմ պատասխանել, և միևնույն ժամանակ սպասում եմ չատունց քո խոստացած նոր մի գրվածքը: Առաջին ուղարկածդ,— որ հետո գրեցիր՝ չտպեմ,— պահում եմ, իսկ նորը չեկավ ու չեկավ: Թերևս նամակս ձեռքդ չի հասել. հնարավոր է, կամ տրամադրություն չունիս գրելու:

Հասցեդ կորցրել եմ, այսինքն նամակդ թղթերիս մեջ սուզվել է, ուստի ընկ. Ս. Սուքիասյանի[1] հասցեով գրում եմ այս երկտողը:

Այստեղ ստացանք Գուլիվերի ճանապարհորդությունը, թարգմանածդ[2] և դեռ չեմ կարդացել. մի քիչ թերթեցի. երևի մի օր կկարդամ՝ մանկությունս վերապրելու համար: Խնամքով տպագրություն է: Ուրիշ ի՞նչ ես անում հիմա, ի՞նչ գրական գործեր ունես՝ թարգմանական և ինքնուրույն:

Ինչ եղավ «Поэзия Армении» *գրքի հրատարակությունը. նախկին նամակիս մեջ դրա մասին էի գրել, որովհետև հարց եք տվել ինձ:*

Ես էլ ասում եմ. — արեք, ինչ ուզում եք, ինձ բնավ չի հետաքրքրում:

Երևի մտերիմ լուրեր կունենաս Երևանից, մեր ընկերների կյանքից, գրի՛ր, տեսնենք:

Այսօր արտասահմանի լրագրներում կարսից հեռագիր կար, որ թրքական գիտական մի հանձնաժողով գիտական արշավանք է կատարում Անին ուսումնասիրելու (sic[3]): *Ականջը կանչե պրոֆ. Մառի: Աչխարհը լավ է հասկանում թուրք ուսումնասիրությունները. պեղումները այնպես խորունկ պիտի կատարեն, որ քար քարի վրա չմնա: Այդպիսի ուսումնասիրություններ արդեն նրանք կատարել են Մրեն[4], Տեկոր[5], Աղթամար[6], Ս. Կարապետ[7], որ ապագա ուսումնասիրողների համար այլևս նյութ չի մնացել:*

Լավ կլինի, որ պրոֆ. Մառին իմացնես այս հետաքրքիր երևույթը:

Բան չունեմ այլևս գրելու և ոչ էլ տրամադրություն:

Ջերմ բարևներ տիկնոջդ, երեխաներիդ, Աշոտ Հովհաննիսյանին և քեզ:

Նամակիդ սպասելով մնամ՝ Ավետ. Իսահակյան

252. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1934, 13 սեպտեմբ<երի>, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ջայնդ չէ լսվում, ի՞նչ ես անում, ինչո՞ւ ես լռել. վաղուց է նամակ չես գրում. իսկ եթե ինձնից ես սպասում, քեֆս չա՛տ վատ է, բնավ տրամադրություն չունիմ, տխուր եմ չատ, թեև առողջությունս վատ չէ:

Ստացել եմ քեզնից մեր սիրելի Հ. Կոջոյանի մասին գրածդ[1], որ կգետեղեմ «ՀՕկի» մեջ: Շա՛տ ուրախ եմ, որ Կոջոյանը հիմա, վերջապես, գնահատվեց. արժանի է, խոշոր տաղանդ է: Լավ կլիներ, որ Ս. Աղաջանյանի մասին էլ մի բան գրեիր, նա էլ է անտեսված:

Լսեցի, որ չուտով հրատարակում ես մամուլի պատմությունը[2]. կեցցե՛ս: Իսկ երբ ես ձեռնարկելու էնցիկլոպեդիայիդ հատորները: Ուրիշ ի՞նչ բաներ ունես, որ ինձ հայտնի չեն:

Մի երկու օր առաջ լսեցի, որ Հր. Աճառյանի Երուսաղեմի մրցանակին ներկայացրած գիրքը – «Հայոց լեզվի պատմությունը»[3] չահել է 100 ստերլինկ (8000 ֆր.). բավական լավ գումար է, մանավանդ торгсин*-ի համար. Հրաչյան նրանով մինչև մահը (Աստված չանե) լավ կապրի: Շա՛տ ուրախ եմ, չնորհավորի՛ր:*

Ի՞նչ են անում մեր ընկերները – գրող, նկարող, երգող, խաղացող, վերջապես, մեր ընկերները: Լա՞վ են, առողջ են, զվա՞րթ են:

Ինչպե՞ս է Դերենիկը, Միչոն, Յոլակը, Պողոսը, Սիսակը, Մ. Սարյանը, քանդակագործ Ուրարտուն և իր ամուսինը, Փանոսը...

Բոլորին ջերմաջերմ բարևիր:

Ամենքի մասին տեղեկություն ունիմ, միայն չգիտեմ ողջ է մեր Արամ Վիրապյանը[4]. բարևիր և գրիր նրա մասին: Բարևներ և մեր Ալեքսանին Ջատրճյան, մորքուրիս տղային:

Ի՞նչ գրական-գիտական նորություններ կան. տեսա Ա. Խաչատրյանի գիրքը «Սեպաձև... գր. պատմությունը»[5]. Հոյակապ գործ է:

Բարևիր կնոջդ:

Մեր բոլորի կողմից սիրով և կարոտով բարևներ:

Համբույրներով քո՝ Ավետիք

253. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

1934, 7 դեկտեմբերի, Փարիզ

Սիրելի ընկեր Խորեն Սարգսյան.

Սրտագին շնորհակալություն Ձեր այն ուշադրության համար, որ հայտ եք բերել իմ հանդեպ՝ ուղարկելով Ձեր կազմած հայոց գրականության դեղեցիկ քրեստոմատիան[1]:

Ներողություն մինչև այժմ ստացած լինելս չհայտնելու համար, որովհետև, իրոք, չա՛տ զբաղված էի և մանավանդ մի-երկու շաբթով բացակա էի Փարիզից: Իսկ Փարիզը վիշապ քաղաք է՝ կլանում է մարդու ժամանակը, ուժը, եռանդը:

Իմ ոտանավորների ընտրությունը, ընդհանրապես, հաջող եք կատարած, բացի մի-երկուսից:

«Ի՞նչ ես գազազում» ոտանավորը երկու անգամ է տպված: Անուշադրություն տպագրական:

Ցանկալի էր, որ «Աբու Լալան» քրիստոմատիայի մեջ լույս տեսներ մշակված վարիանտով:

Ես, սիրելի ընկեր, թաթախված եմ գրականության հետ կապ չունեցող ուրիշ գործերով (Հասարակական). միայն ազատ ժամերս, որոնք եթե թունավորված չեմ մշտադո հիվանդությամբս (սրտի կրիզներ), տալիս եմ գրական թերավարտ գործերիս, որոնք, ավա՛ղ, չափազանց շա՛տ են և հարատև երկյուղ են պատճառում ինձ՝ մի գուցե անկատար մնան, չիրականանան: — Հունական այն նշանավոր յոթն հին իմաստասերներից մեկը (մոռացել եմ անունը՝ Թալեսի, Հերակլիտի չարքից[2] է) ասել է թե՝ մարդիկ երբեք չեն հասնում իրենց նպատակներին...

Կատարյալ երկ տալու համար պետք է երկար ապրել և մանավանդ առողջ լինել:

Ներկա առիթից օգտվում եմ Ձեզ հայտնելու, որ տաբրիներ առաջ Ձեզնից մի նամակ առա Ռաֆֆիի[3] ձեռագրերը Հայաստան տեղափոխելու[4] նկատմամբ: Ես գրեցի Ռաֆֆիի որդուն, Լոնդոն, և պատասխան չառա. ուրիշի միջոցով (Արշակ Սաֆրաստյանի[5]) դիմեցի, նույնպես անպատասխան մնացի: Այդ մասին Ձեզ, իր ժամանակին,

Երևանի «ՀՕԿ»-ի գրասենյակի միջոցով գրել եմ, որ Դուք պաշտոնապես դիմեք նրան: Ուրիշ աղբյուրից լսել էի, որ նա (Արշակ Ռաֆֆի[6]) հավատ չի ընծայում՝ թե ձեռագրները լավ կարող են [պահպ] պահվել, որովհետև նրան հասկացրել են՝ թե Ռաֆֆին հալածված է Հայաստանում, և այլն, և այլն:

Երբեմնապես, Երևանի թերթերում պատահել եմ Ձեր գրական-քննադատական հոդվածներին. հմտությամբ, էրուդիցիայով հագեցած, զգացա՛ծ և խորհած բաներ էին: Ցավալի է, որ ուշ-ուշ եք երևում:

Զարմանում եմ, թե ինչո՞ւ քրիստոմատիայի մեջ տեղ չեն գտել Հ. Հովհաննիսյանը, Դ. Դեմիրչյանը — պետք էր, որ նրանք էլ լինեին, նույնիսկ մի-երկու բաներ կարող էիք առնել Ռ. Պատկանյանից, Ս. Շահազիզից: Ռաֆֆիից, Մուրացանից — նույնպես:

Ջերմագին բարևներ Ձեր տիկնոջը և քրոջը. հույս ունիմ, որ չեն մոռացել ինձ:

Ջերմ բարևներս ընկեր Մ. Մկրյանին[7]:

Սիրով և հարգանքով Ձեր՝ Ավետիք Իսահակյան

7 դեկտեմբերի 1934
Փարիզ

254. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ

1934, 11 դեկտեմբերի, Փարիզ

Սիրելի ընկեր Սահակ.

Վաղուց է Ձեզ նամակ չեմ գրել, թեև ինձ միշտ մեծ հաճույք է պատճառում Ձեզ նամակ գրելը, բայց մի կողմից էլ ավելորդ բան եմ համարում Ձեր բազմազբաղ ժամանակը խլել: Ես լավ գիտեմ, որ Դուք այնքան զբաղված

եք, որ Ձեր զահլան պիտի գնա ավելորդ բաներ կարդալով:

Բայց առիթ կա հիմա գրելու, օգտվում եմ հանգամանքից՝ մի քիչ չատախոսելու:

Ֆրանսիայի հայ գաղթականների, մեր բանվորների, աշխատավորների դրությունը չա՛տ ծանր է այս տարի գործազրկության պատճառով: Անվերջ արձակում են ֆաբրիկաններից իբրև օտարականների և զրկում են այն չնչին նպաստից, որ կառավարությունը վճարում է գործազուրկներին: Վերջերս ֆրանսիական գավառն էի գնացել Հայաստանի խորհրդայնացման հանդեսները նախագահելու — չա՛տ ցավալի դեպքերի ականատես եղա: Շատ մեծ նեղության մեջ են մեր աշխատավոր մասսաները, և բոլորի աչքը դարձած է Խ. Հայաստանի վրա՝ իբրև միակ հույսի ու ապավենի — ներգաղթի վրա:

Արտասահմանի թերթերի մեջ չրջան է առել այն լուրը, որպես թե 1935 թվականին ներգաղթ կա. ոգևորված են մասսաները և դիմում են մեզ, «ՀՕԿ»ի վարչությանը, բայց մենք տեղեկություն չունենք: Ի՞նչ աղբյուրից են եկած այդ լուրերը... Լավ կլիներ, որ մի կերպ իրագեկ դարձնեիք:

Շատ և շատ լավ կլիներ, որ այս տարի ձեռնարկեիք ներգաղթին. թե Հայաստանի պրեստիժը կբարձրանար և թե բավական աշխատավորներ կազատվեին այս տառապալից դրությունից:

Այս նամակիս հետ ուղարկում եմ մի խնդրագիր:

Վազգեն Շուշանյանը[1] նախկին դաշնակցական է, որ մի երեք տարի առաջ կռիվներով բաժանվեց դաշնակցությունից: «Մարտկոց» թերթի հրապարակողների մեջ էր. հեռացավ և նրանցից: Հիմա բոլոր կապերը կտրել է նախկին ընկերների հետ և զգացմունքով ու դիտակցությամբ փափագում է Խ. Հայաստան գալ, միշտ ապրել Հա-

յաստանում և իր ուժերը ծառայեցնել Հայաստանին: Նախկին որբերից է, տաճկահայ է, ավարտել է գյուղատնտեսական դպրոց Ֆրանսիայում և հիմա էլ գավառում մի ֆրանսիական դպրոցում պաշտոնավարում է: Երիտասարդ, չնորհքով գրող է, նույնիսկ կարելի է ասել սոցիալիստական հակումներով: Նրան ճանաչում են ընկերներ Զ<ապել> Եսայանը և Տիգրան Զավենը. իբրև երիտասարդ մարգ Ի. Հայաստանի մթնոլորտի մեջ չուտով կփոխվի, կուղղվի և օգտակար գրող ու գործիչ կդառնա:

Ես կարծում եմ, սիրելի ընկեր, որ հավանություն կտաք նրա գալուն և կհաջողացնեք այս գործը: Սա նույնպես մի ապտակ է իր հին կուսակիցների երեսին:

Ընկ. Ա. Խանջյանին[2] էլ եմ դիմում այս խնդրի համար, և այս ներփակ նամակը բարի լինեիք ընկեր Աղասուն հանձնել:

Գանք հիմա իմ մասին:

Ես զբաղված եմ «ՀՕԿ»ի գործերով, – հասարակական մի չարք գործերով նույնպես: Գրեթե իմ աշխատանքներիս համար չա՛տ քիչ ժամանակ է մնում: Իսկ իմ երազն է ամբողջապես նվիրվել իմ գրական գործերին: Օրեցօր ծերանում եմ, եռանդս մարում է, իսկ աշխատութիւններս մնում են երեսի վրա ընկած: Առողջութիւնս էլ այնքան լավ չէ. արյանս ճնշումը (давление крови) միշտ բարձր է և միշտ բժշկի հսկողութեան տակ եմ:

Գոնե հիվանդ սիրտս, այս մաշված մեքենան, այնքան դիմանար, մինչև կիսատ գրութիւնները վերջացնեի:

Որդիս չա՛տ լավ գործ ուներ սինեմա Պարամոնդի ստուդիայի մեջ, բայց իբրև օտարականի հանեցին. հիմա անգործ է: Մոսկվա, հայտնի արվեստագետ Ս. Այզենշտայնին նամակ գրեց (հետը լավ ծանոթ է), որ իրեն մոտ կանչեն: Ս. Այզենշտայնը պատասխանեց, որ այս տարի ֆիլմ չի դարձնում ինքը:

Իմ վերադարձի մասին կգրեմ հաջորդ նամակով: Ձեզ նախապատրաստելու համար ասեմ, որ վերադարձս կապված է բավական ծախսերի հետ:

Առայժմ մինչև «ՀՕԿ»ի նոր կոմիտեի ընտրությունը ես ստիպված եմ մնալ:

Հույս ունեմ, որ Ձեր առողջությունը հիմա լավ պիտի լինի, որովհետև թերթերի մեջ չարունակ կարդում եմ, որ միշտ չրջում եք գավառը և միշտ դործի վրա եք: Սա շատ է ուրախացնում ինձ:

Սիրելի ընկեր Սահակ, այս տարի, գարնանից սկսած, դաշնակցականները մեր հոգին հանեցին այն չար լուրով — որը տարածեցին իրենց մամուլի միջոցով, տարածեցին իրենց ճառերով — որպես թե Միության կառավարությունը, Մոսկվան, երբ պատերազմի բռնվի Ճապոնիայի հետ, Անդրկովկասի պաշտպանությունը հանձնելու է Թուրքիային: Իբրև թե այս որոշված, պայմանագրված բան է: Նույնիսկ հայտնեցին, թե անցյալ տարի, երբ ընկեր Լիտվինովը[3] դտնվում էր Վաշինգտոն, նախագահ Ռուզվելտի[4] մոտ, Ռուզվելտը հայտնել է Լիտվինովին՝ թե իրենց հայտնի է Թուրքիայի հետ կնքած այդ համաձայնությունը և խորհուրդ է տվել այդպիսի քայլ չանել, որովհետև այդ կնշանակե հայ ժողովրդի վերջին մնացորդի մահը, և երկրագնդի վրայից կջնջվի մի ազգ՝ իր անունով ու հայրենիքով: Եվ դա հավիտենական նախատինք կլինի Միության համար:

Դաշնակցության այս չարամիտ լուրը թափանցել է դաղութահայության բոլոր խավերի մեջ, սարսափի է մատնել բոլորին, և մեր դեմ, Խ. Հայաստանի կառավարության ու Մոսկվայի դեմ զարհուրելի թշնամական զգացմունք է առաջ բերել և խորին հուսահատություն: Մենք չա՜տ աշխատեցինք և աշխատում ենք հերքել այդ չինծու, պրովոկացիոն լուրը, բայց նորից չատ հավատացողներ կան ոչ-դաշնակցականների մեջ էլ: Սա չատ է

խանգարում մեր գործին և գաղութահայության ջերմ վերաբերմունքին Հայաստանի հանդեպ: Շատ է դժվարանում մեր գործը:

Սա գրում եմ Ձեզ, որ գիտենաք, և տեղն եկած ժամանակ հերքեիք՝ զինաթափ անելու համար դաշնակցության այս պրովոկացիոն զենքը, որ մինչև հիմա գործադրվողներից ամենից սուրն ու խոցողն է եղել:

Ես կարծում եմ, որ Ձեզ հայտնի կլինի նրանց թերթերից: Բայց ավելորդ չէր գրածս:

Մոռացա ասել, որ ներգաղթի լուրը բարեգործականի չրջանակից է դուրս եկել, ուրեմն Երևանից է գրված: Այդ ինչպե՞ս է, որ Երևանի «ՀՕԿ»ի վարչությունը մեզ իմաց չի տվել:

Կարոտով և ջերմ բարևներով, մնամ խորին հարգանքներով:

Ձեր միշտ անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

Հ.Գ. Շատ կխնդրեի, ինձ հայտնեք Ձեր որոշումը: Դրական դեպքում ի՞նչ ձևակերպություններ պիտի անե վ<ազգեն> Շուչանյանը – ո՞ւմ և ո՞ւր պիտի դիմե և ի՞նչ բովանդակությամբ:

Ա.Ի.

255. ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻՆ

<1934, դեկտեմբեր, Փարիզ>[1]

Սիրելի ընկեր Ալազան.

Հաստատում եմ երկու վերջին նամակներիս ստանալը: Բազում չնորհակալություններ քո ընկերական չա՛տ սրտառուչ և նվիրված վերաբերմունքի համար ինձ հանդեպ: Ստացել եմ նույնպես «Գրական թերթերը», նույնպես Մե-

ծարենցի հատորը[2], որ սքանչելի իրականացած է: Այդ մասին, ինչպես և Պետհրատի մյուս հրատարակությունների մասին, գրելու եմ «ՀՕԿ»-ի համարներից մեկի մեջ[3]:

Ներփակ նամակների մասին: Կհանձնեք Պետհրատ, ընկ. Ռ. Աթայանին[4], գրել էր ինձ, որ հրատարակենք «Աբու-Լալա Մահարին», ես էլ մի քանի ուղղումներ եմ արել: Մյուս նամակը՝ նույնպես Պետհրատ, ընկ. Խորեն Սարգսյանին. ուղարկել էր իր կազմած գիրքը, գրական քրեստոմատիա: Հետո մի խնդրանք, որը և ուղղում եմ քեզ: Նախկին դաշնակցական, ապա նրանցից բաժանված մարդկանցից – Վ<ազգեն> Շուշանյանը, որ, գիտես անշուշտ, երիտասարդ չնորհքով գրող է, ուզում է Հայաստան գալ, ընդմիշտ ապրելու և գործելու: Դիմում է տվել Ս. Գաբրիելյանին, ես էլ խնդրել եմ Սահակ Տեր-Գաբրիելյանին և Ազասի Խանջյանին, որ արտոնություն տան: Ընկ. Զարենցի հետ քեզ էլ եմ խնդրում, որ միջնորդեք. երիտասարդ գրող է, ընկերական ձախ հակումներ ունի. – Զարենցը լավ է հասկանում. կարող է Խորհրդային Հայաստանի հրաշագործ իրականության մեջ փոխվել, պետության մարդ-գրող դառնալ: Խնդրում եմ Զարենցի հետ մտածեք այդ հարցի մասին՝ երկուսիդ միջամտությունը ավելի արդյունավետ դարձնելու համար:

Գալով իմ երկերի ժողովածուի հրատարակությանը, այդ ձեռնարկը ինձ նետել է չա՛տ տխուր և մռայլ մտածումների մեջ: Թափառական կյանքիս չնորհիվ, հարատև հիվանդանալուս չնորհիվ, և գրականության հետ կապ չունեցող այլ գործերով զբաղվելու չնորհիվ թերավարտ, կիսատ են մնացել բազմաթիվ գրություններս՝ վեպ, վիպակ, պոեմներ, և հիմա, երբ երևակայել է իմ կյանքը, հաշվի եմ նստում, տեսնում եմ որ, վերջ ի վերջո, ստեղծվածների գումարը չնչին է... Գոնե կարողանայի մի երկու տարվա մեջ, քանի դեռ ողջ եմ, լրացնել մի քանի կարևոր բաներ: Գոնե «Ուստա Կարոն», որ մղձավանջ դարձավ:

Շատ և շատ լավ պիտի լիներ, որ այս տարի, իսկապես, հաջողեցնենք ներգաղթը, թե՛ մեր պրեստիժը չատ կբարձրանար և թե՛ բավական աշխատավորներ կազատվեին տառապանքներից...

Բոլոր ցանուցիր իրերս՝ Վենետիկ և այլուր, պիտի հավաքել, մեծ գրադարանս տեղափոխել, ցավում եմ ոչնչացնել...

Այս մասին մանրամասն պիտի բացատրեմ ընկ. Ս. Տեր Գաբրիելյանին և Խանջյանին:

Այս դժվարությունները ղղայնացնում են ինձ, առանց էն էլ չատ ղղային եմ, թունավորում են տրամադրությունս և աշխատանքի ունակությունս քայքայում...

Առողջությունս միչտ մտահոգիչ է, սիրտս միչտ վատ է գործում և արյան ճնշումս բարձր է: Ասենք, դու չես հասկանա և բախտ ունենաս երբեք չհասկանալու: Մարդ ապրում է կիսամեռ, սա կյանք չէ, թքած մի գդալ արյան մեջ, բավական է, որքան տանջվեցի...

Շատ ձեռագիրներ ունեմ թողած Վենետիկի իննչքերիս մեջ, չգիտեմ՝ երբ պիտի հավաքեմ: Վերջապես պիտի անպատճառ <...>

Ավետիք Իսահակյան

256. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

<1935>[1], 4 ապրիլի, Փարիզ

Սիրելի Արշալույս.

Վերջին անգամ, ինձ թվաց թե դու դժգոհ բաժանվեցիր ինձնից, այսինքն, կարծես այնպես դնացիր, որպես թե էլ չես ուզենալու ինձ տեսնել. քո աչքերի մեջ այլևս սիրո ներկայությունը չեմ տեսնում, ավելի պարզ, սովորական լեզվով ասած՝ էլ ինձ չես սիրում, և նույնիսկ տրամաբանում ես, թե ինչու չես սիրում. անհուն ցավ է այդ ինձ համար, իսկ ես այնպես սիրում եմ քեզ... Հիմա դարուն է, ծառերը կանաչում են և այնպես ուզում եմ ես քեզ, ուզում եմ հետդ լինել, խոսել, աչքերիդ նայել, քո բույրը շնչել, մոտդ այրվել, հուզվել...

Երկու շաբաթ է քեզ չեմ տեսել, անկարելի եղավ տեսնելը, չարունակ ժողովներով եմ զբաղված և ուրիշ տեսակի արգելքներով:

Այս երկուշաբթի օրը, ամսիս 9-ին, կսպասեմ քեզ, լավ լսիր. Mosqune-*ի (ալժիրական Մոսքեի) սրճարանում*[2]*, ժամը 4-ին. միասին լինենք, լսենք արևելյան երգ ու նվագ. եկ, հոգիս, անպատճառ եկ:*

Եթե նույնիսկ այս վերջին անգամը լինի՝ ի պատիվ հին սերերի, հին երազների և համբույրների ե՛կ այս անգամ, կատարի՛ր խնդիրս. եթե չգաս, անսահման կդառնանամ և չպիտի կարողանամ մոռանալ այդ ժխտումը, այդ ցավը և չպիտի կարողանամ ներել քեզ:

Կարոտով և համբույրներով Ավ.

257. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ

1935, 2 մայիսի, Փարիզ

Սիրելի տիկին Աննա.

Թեև ուշ, բայց կատարում եմ խոստումս, ուղարկելով Մ. Սարյանի մասին կենսագրական ճիշտ տեղեկություններ. վերցված է իր ավտոբիոգրաֆիայից:

Մարտիրոսը ծնվել է 1880 թվականին, փետրվարի 16-ին, Նոր-Նախիջևանում: 1895 թ.-ին ավարտել է քաղաքային դպրոցը: 1897 թվին մտել է Մոսկվայի նկարչության դպրոցը և ավարտել է 1903 թվին: Մի տարի աշխատել է Վ. Սերովի[1] և Կ. Կարովինի[2] արհեստանոցում:

Ճանապարհորդել է Կովկաս, Կրիմ (Ղրիմ), Վոլգայի վրայով չրջել է. Կ.Պոլիս, Եգիպտոս, Պարսկաստան, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա:

1921 թվականից հաստատվել է Երևանում:

Ունի երկու տղա, և իհարկե, միայն մի կին:

Շա՛տ բարևներով Ձեզ, պ.պ. Տիգրանին[3] և Ֆարհատին[4]:

Ձեր Ավ. Իսահակյան

258. ԵՐՎԱՆԴ <ՔՈՉԱՐԻՆ>

1935, 22 մայիսի, Փարիզ

Սիրելի Երվանդ.

Երեկ, մոռանալով որ քեզ չորեքշաբթի հրավիրել ենք մեզ մոտ, ես խոսք տվի նույն երեկոն լինելու այլ տեղ:

Այնպես որ ներողութիւն խնդրելով այս մոռացման համար, խնդրում ենք որ ուրբաթ երեկո բարեհաճեիք մեզ մոտ գալու, իսկ եթե դուք զբաղված եք, ապա ուրիշ օր (ո՛չ շաբաթ և կիրակի) նշանակեցե՛ք:

Եթե նամակ չգրես, ուրեմն կընդունենք, որ ուրբաթ եք գալու:

Շատ բարևներով Մելինեին[1] և քեզ:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

259. ՊԵՏՐՈՍ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ

1935, 6 Հուլիսի, Փարիզ

Մեծագույն բարեկամ Պ. Տոնապետյան.

Շատ ներողութիւն եմ խնդրում, որ նամակս այսպես ուշացրի, վերջերս չափազանց խանգարված էի. օրինակի համար, երեկ ամբողջ օրը տունը մնացի նամակներ գրելու համար, բայց չկարողացա մի տող գրել, անընդհատ մոտս բարեկամներ մտան ու ելան:

Երեկ երեկո մեկնեցավ Ալազանը[1] և այսօր վերջապես ազատ եմ:

Շնորհակալութեամբ ստացանք Ձեզնից թեյը, շատ լավ թեյ է և առատ. խորապես շնորհակալ է տիկինս. ուրիշ թեյերի հետ խառնելով պատվական բուրմունք ստացվեց:

Ձեր ուղարկած գրքերի[2] երկրորդ մասի նկատմամբ Ալազանը ոչ մի տեղեկութիւն չուներ: Առաջին առաքումի մասին, որի բացման և դասավորման համար կազմված հանձնախումբի անդամ է եղել ինքը, շատ մեծ հիացմունքով էր խոսում. բոլոր գրասերներն էլ ուրախացել են և հիացել:

Հիմա նոթեր առավ, որ հարց ու փորձ անի գրքերի ստացած լինելու մասին և գրե ինձ և նույնպես Ձեզ իմաց

տան: Պատճառ չկա որ ստացած չլինի. անհանգստանալու տեղիք չպիտի ունենաք:

Մեծարգո բարեկամ, կարծում եմ, որ Փարիզում խոսած մեր նյութի մասին – գրի առնել Ձեր հուշերը[3], – մոռացած չեք լինի և կամաց-կամաց կիրականացնեք: Եթե օրը մի կամ երկու էջ գրեք, մի տարի հետո կունենաք մի 5-600 էջնոց արժեքավոր մի գործ մեր նոր հասարակայնությանը ծանոթացնելու համար Տիգրանակերտի կյանքը, ժամանակի մտայնությունը, Ձեր պատանեկությունը, Ձեր բանտերը, աքսորը, փախուստը (Գևորգյան ճեմարանի այն ժամանակի կյանքը, Էջմիածինը, Կովկասահայերի մտային վիճակը, հուզող հոգեկան հարցերը և այլն, և այլն) և հայկական չարաբաստիկ հարցի փուլերը: Ա՛րդ, գոտեպնդվեցեք և գործի անցեք: Պատմությունը այդպիսի հուշերի վրա է հիմնված և մանավանդ երբ վավերական տվյալներից են բղխում: Ես շատ եմ սիրում հուշեր կարդալ, երբ նրանք գրված են լինում պարզ, անկեղծ կերպով համեստ, խոհուն և փորձված անձերի կողմից:

Ջերմագին բարևներ կնոջս և իմ կողմից:

Ձերդ անկեղծ Ավետիք Իսահակյան

260. <ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ>

<1935>, 1 օգոստոսի, Փարիզ

Սիրելի Լուլու ջան.

Երեկ չկարողացանք իրար հետ խոսել: Այսօր ժամը 4-ից ես քեզ կսպասեմ Palais Royal *Լուվրի առաջը. Կոմեդի Ֆրասեզի դեմը* Regence/*Ռեժանս սրճարանում: Այնտեղ կգնանք պարտեզը շրջելու, Լուվրի պարտեզները:*

Հույս ունեմ, որ բախտ կունենամ քեզ տեսնելու: Մինչև 5-ը եկար՝ լավ, չեկար – մի արդարացնող պատճառ կունենաս:

Ջմոռանաս հետդ բերել Возрождение[1] *հոդվածը Լիլիթի[2] մասին:*

Միշտ քո Ա.վ. Իս.

261. ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ

1935, 23 Հոկտեմբերի, Փարիզ

Հարգելի տիար.

«ՀՕԿ» ամսագրի խմբագրական մարմինը որոշած է Հայաստանի խորհրդայնացման 15-րդ տարեդարձի առիթով բացառիկ թիվ մը լույս ընծայել 128 կամ 160 էջով:

Խմբագրական Մարմինը վստահ է, որ Խորհրդային Հայաստանի բարեկամ ֆրանսահայ բոլոր գրագետները, արվեստագետներն ու հասարակական գործիչները սիրով պիտի ուզեն իրենց մեծարանքի ու դնահատանքի տուրքը բերել այս հոբելյանական փառավոր տարեշրջանի հավերժացման նվիրված «ՀՕԿ»ի բացառիկ թիվին մեջ և այդպիսով պանծացնել հաղթանակը այն հերոսական ջանքերուն, որոնցմով Խորհրդային Հայաստանի աշխատավորությունը 15 տարիներու ընթացքին նվիրումով կերտեց մեր Խորհրդային Հայրենիքի հոյակապ վերելքը:

Այս վստահությամբ կդիմենք ձեզ և կխնդրենք որ առավելագույն տպագրական երկու էջի բովանդակությամբ հոդվածով մը (տաղաչափյալ կամ արձակ) ճոխացնեք «ՀՕԿ»ի բացառիկ թիվը, որ լույս պիտի տեսնի հառաջիկա նոյեմբեր 25-ին:

Հաճեցեք ձեր հոդվածը խմբագրության հասցնել ամենաուշ մինչև նոյեմբերի 5-ը:

Կանխահայտ չնորհակալութ֊յամբ և խորին հարգանք֊ներով

Ի դիմաց խմբագրական կոլլեգիայի

Տքթ. Հ. Գալճյան[1]
Ա. Իսահակյան

262. ԳԵՂԱՄ ԱՖՐԻԿՅԱՆԻՆ

1935, 1 նոյեմբերի, Փարիզ

Սիրելի Գեղամ ջան.

Եկողը որդիս է, Վիգենը: Շատ կարոտով բարևներ և համբույրներ բերել է իմ կողմից քեզ, Հեղինեին[1], Դոչո֊յին[2], Մարտինին[3] և երեխաներին:

Խնդրում եմ ծանոթացնես քո արվեստի ընկերների հետ: Որդիս բավական հասկանում է արվեստից:

Հետո, եթե դու ժամանակ ունես, տանես Լենինական և ներկայացնես մեր բոլոր ազգականներին և քաղաքին: Իսկ եթե ժամանակ չունիս՝ գրես Մարտինին և ուղարկես մոտը:

Վիգենը պիտի մնա Մոսկվա, թե՛ ռուսերեն սովորելու և թե՛ Սովկինոյի մեջ աշխատելու համար:

Ես էլ, երևի, մինչև գարուն կկարողանամ իմ վերա֊դարձը հաջողեցնել: Սոֆին դեռ վիզա֊պասպորտ չունի:

Ես Մարտինին մի երկու ամիս առաջ նամակ գրեցի, ստացած կլինի անպատճառ, որովհետև заказное *էի ուղարկել: Խնդրում եմ հարցնես նրան:*

Հույս ունեմ, որ առողջ ես, լավ և հաջողակ: Քո մասին երբեմն կարդում եմ լրագրերի մեջ:

Շա՛տ կարոտով բարևներ քեզ և բոլոր հարցնողաց:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

263. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

1935, 3 նոյեմբերի, Փարիզ

Սիրելի Գարեգին.

Ահա տղաս՝ Վիգենը գալիս է Միության երկրները: Երևան գալիս է տոներին ներկա լինելու. կմնա մի քանի օր, ապա կգնա Մոսկվա՝ Սովկինոյի մեջ աշխատելու:

Կխնդրեի նրան ընդուներիր իմ տեղս և ծանոթացներիր ընկերներին, բոլոր իմ բարեկամներին:

Իմ վերադարձս տակավին քաշքշվում է. կինս դեռ վիզա չունի. հույս ունեմ, որ սառնա: Հետո տեղափոխվելու հոգսերը կան, փող է հարկավոր:

Դուք ի՞նչ եք անում, հույս ունեմ, որ լավ եք:

Շա՛տ և շա՛տ, խորապես ցավեցի սիրելի Յոլակի[1] մահվ. հազա՛ր ափսոս:

Այս տարի մեծ կորուստներ ունեցանք. Ռոմանոսը[2], Սիսակը[3]... դեռ մղկտում է սիրտս նրանց պատճառած վշտով:

Ինչո՞ւ այլևս ինձ նամակ չես գրում. թերևս ես եմ մեղավորը. բայց դու ավելի հավասարակշռված մարդ ես, դու պիտի չընդհատես գրելը:

Սիրելիս, իմ կողմից սրտագին կբարևես Դերենիկին, Միշոյին, Պողոս Աբելյանին, Թերլեմեզյաններին, Սարյանին, Կոջոյանին, Վ. Թոթովենցին, մորքուրանցս Ալեքսանին[4], Արագիին[5] և բոլոր իմ ընկեր-բարեկամներին:

Այստեղ լուր է տարածվել, թե Խնկո-ապերը[6] մեռել է. մի՞թե. չա՛տ ցավալի է:

Բարևիր իմ և կնոջս կողմից քո կնոջը՝ Ռիմային:

Համբույրներով, քո՝ Ավետիք

264. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ

1936, 28 փետրվարի, Փարիզ

Շա՛տ սիրելի ընկեր Սարգիս Ալթունյան.

Ձեր սիրալիր նամակը ստացել եմ իր ժամանակին: Ամենից առաջ հազար ներողություն այսքան ուշ պատասխանելուս համար: Միշտ սեղանի վրա էր Ձեր նամակը և վարանում էի որոշակի մի բան պատասխանել. և այս մտմտուքի մեջ օրերը սահեցին, թռան – մինչև որ այսօր ստացա «Հայ սիրտը»[1], որն առիթ տվեց իսկույն ևեթ պատասխանելու Ձեր նամակին:

Սրտագին շնորհակալություններս Ձեզ, սիրելի ընկեր, Ձեր իսկական ընկերական մտերմության և ուշադրության համար, որ ունիք ինձ համար. սրտագին շնորհակալություններս մեր ընդհանուր սիրելի ընկերներին և պատվական հայրենակից պ. Տիրան Թեքեյանին[2] (որին պատիվ չունիմ, թեև, անձամբ ծանոթ լինելու, բայց շատ լավ բաներ լսած եմ նրա մասին) [ինձ] իմ հանդեպ տածած լավագույն զգացումների համար:

Սիրելի ընկեր, գրում եք իմ հոբելյանի[3] մասին: Անկեղծորեն խոստովանած՝ ամենից քիչ ինձ է հետաքրքրում այդ հոբելյանը: Փարիզ էլ որոշել են տոնելու, բայց ես դիմադրում եմ[4]: Կյանքիս մեջ ես ո՛չ մի վայրկյան չեմ կորցրած ինձ ռեկլամ անելու, փառք գտնելու, ծափ չահելու: Սկզբունքով հակառակ եմ անհատի չուրջը ամեն խանդավառ ցույցի ու գովքի, մանավանդ իմ ներկայությանը: Իմ բացակա եղած վայրում ինչ ուզում են անեն: «Թո՛ղ ինձ ծեծեն այնտեղ, ուր ես չկամ», ասում է հին առածը: Իմ հա-

վանութիւնը բացասական է, սիրելի ընկերներ: Եթե Դուք Ձեր չըվանում համեստ կերպով կատնեք իմ գրական գործունեութիւնը, իմ լավի մասին խոսելով, այն լավ, պայծառ բանի մասին, որ ես իմ կարողութեան չափով տվել եմ իմ պաշտելի հայ ժողովրդին և նրա գեղարվեստական խոսքին, — Ձեր գործն է. բնական է, որ չեմ կարող խանգարել և իրավունք չունիմ: Ինչպես չէի կարող խանգարել, որ Հայաստանում, Վրաստանում տոնեին իմ տարեդարձը:

Շա՛տ եմ խնդրում իմ թանկագին հայրենակիցներին, որ չվիրավորվեն իմ այս տեսակի վարմունքի համար:

Նորից սրտագին չնորհավորութիւններս պ. Տ. Թևքեւյանին, իմ հին բարեկամ Ե. Թորոսյանին՝ իր աղնիվ խոսքի համար իմ նկատմամբ և Ձեզ և բոլոր սիրելի ընկերներին:

Սիրելի Ալթունյան, «Հաճընը»[5] սիրով կարդացի, տակավին մնում են մի քանի հոդվածներ: Սրտառուչ էջեր կան: Մի տեսակ փոքր համայնագիտարան է եղերաբախտ Հաճընի կյանքի, ճակատագրի, նրա ոդորումների: Որքա՛ն հուզիչ վերապրումներ պիտի տան նրանց, որոնք ապրել են Հաճընում, որոնք անունով գիտեն Հաճընի նվիրական մամիկներին, նրա հինավուրց քաջ ժողովրդին...

Տպագրական մի մեծ սխալ գտա — դր. Ա. Մանկրյանի[6] հոդվածը անհասկանալի կերպով ընդհատված էր, և հաջորդը անկապ կերպով մեջ տեղ եկած. (էջ 956). Թերևս իմ օրինակն էր այդպես:

Ջերմագին բարևներով, միշտ Ձեր՝

Ավետիք Իսահակյան

265. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ

1936, 22 ապրիլի, Փարիզ

Շա՛տ սիրելի ընկեր Ս. Ալթունյան.

Ձեր սիրալիր նամակը ստացած եմ իր ժամանակին: Պատասխանը ուշացնելուս միակ պատճառը այն էր, որ գրեթէ մի ամիս ամբողջ հիվանդ էի՝ գրիպով, չա՛տ թուլլ էի զգում ինձ, անտարբեր տրամադրութեամբ, և օրերով անկողնուս մեջ էի: Միայն մի քանի օր է, որ ոտքի եմ կանգնել:

Այսօր կարդացի «Ապագայի»[1] մեջ, որ լրջորեն ձեռնարկել եք տոնելու իմ հոբելեանը: Խորին չնորհակալութեանից բացի՝ ուրիշ զգացում չի կարող արթնանալ սրտիս մեջ Ձեր բոլորիդ հանդեպ. բայց այս էլ պիտի ասեմ, առանց թաքցնելու, որ փորձանքի մեջ նետեցիք ինձ ձեր տածած մեծ հարգանքով և սիրով իմ անձի համար: Անկեղծորեն կփափագեի այս բաժակը հեռացնեիք ինձնից: Բոլորովին հակառակ եմ, որ անձիս չուրջը աղմուկ ծագեր: Միանգամայն ավելորդ բան եմ համարում և հոբելեան, և մեծարանք: Միշտ խուսափել եմ այդպիսի երևոյթներից: Ջանացի Փարիզում խանգարել հոբելեանս և որոշ չափով հաջողեցա:

Բայց եղածն եղած է. Ձեր ինքնաբուխ զգացումի առաջ տեղի եմ տալիս:

Սիրելի ընկեր, չա՛տ կխնդրեի իմ կողմից սրտագին չնորհակալութիւններս հայտնել իմ ազնիվ հայրենակիցներիս – պ.պ. Հ. Սահաթճեանին[2], Տիրան Թեքեյանին, տոքթ. Մ. Քեչեանին, տոքթ. Աթթարեանին, Հ. Սուքիասեանին, Կ. Փոլատեանին[3] և Վահան Թապաքեանին[4] և բոլոր մյուս սիրելի բարեկամներիս, որոնք, բոլորդ, այսչափ գնահատում եք, կարող եմ ասել, գերագնահատում եք իմ գործն ու անձը[5]:

Այո՛, մտադիր էի վերահրատարակել Աբու-Լալա-Մահարին, սրբագրութիւններով, բայց բնավ ժամանակ չունիմ դրանով զբաղվելու: Շուտով, մի-երկու ամսից, մեկնում եմ Երևան և գլուխս խառն է, պատրաստութիւններ եմ տեսնում: Երևանում կհրատարակեմ:

Ջերմագին բարևներով միշտ Ձեր անկեղծ՝

Ավետ. Իսահակյան

Մոտավորապես այս գրքերն են հրատարակված.

1 «Երգեր ու վերքեր», երրորդ տպագրություն. Թիֆլիզ, 1908

2 «Հայրենի աղբյուրից», Բոստոն, 1920

3. «Աչնան ծաղիկներ», Վենետիկ, 1922

4. «Բանաստեղծություններ», Երևան, 1922

Սրանք ոտանավորներ են:

5. «Աբու-Լալա-Մահարի», վեցերորդ տպագրություն. Երևան, 1929

6. «Արձակ էջեր» (պատմվածքներ) Կ.Պոլիս, 1922

7. «Աղա Նազար» (հեքիաթ). Կ. Պոլիս, 1912

8. «Սասմա Մհեր» (քերթված). Վիեննա, 1922

9. «Լիլիթ» (պատմվածքների ժողովածու). Երևան, 1927

10. «Համբերանքի Ջիբուխը» (պատմվածքներ). Երևան, 1929

Եվ թերթերի, ամսագրերի մեջ ոտանավորներ, պատմվածքներ:

Անտիպ՝ պատրաստ և ոչ-բոլորովին պատրաստ պատմվածքներ, վեպ և այլ գրվածքներ:

Ավ. Իսահակյան

266. ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ

<1936, մայիս, Փարիզ>[1]

Սիրելի ընկեր Շիշմանյան.

Շահվերդյանի[2] *մոտ գնալուց առաջ կխնդրեի ինձ տեսնելիք, իմ վերաբերյալ բաներ ունիմ ասելու: Հետո պետք չէ Շահվերդյանին ներկայացնել մեր պահանջած հինգ ընկերների անունները: Նրա համաձայնվելուց հետո կարելի է ընտրել, իսկ իմ անունը բացարձակապես պետք է չդնել: Կգաք և ես Ձեզ ցույց կտամ պատճառները:*

Սիրով և բարևներով

Ձեր՝ Ավետ. Իսահակյան

267. ԿՈՍՏԱՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1936, 28 Հունիսի, <Փարիզ>

Սիրելի Զարյան.

Նամակդ վաղուց է ստացել եմ. պատասխանը կհետաձգեի, որովհետև որոշմունք չէի կայացրել. հիմա որոշ է. վճռել եմ աշնանը Հայաստան դառնալ. ներկա սովետ<ական> կառավարությունը չա՛տ լավ ուժերից է կազմված, նույնքան հայրենասեր, քան դ<աշնակ>ցականները, և ավելի պատրաստված, ավելի խելոք: Գրեթե բոլորին ճանաչում եմ, և մի քանիսի հետ ընկեր եմ, մտերիմ:

Ուրեմն այլևս կարիք չկա քեզ մոտ գալու, քանի որ դու էլ մտադիր ես մեկնելու: Ամառը հոս չեմ անցկացնի. մտադիր եմ գյուղ գնալ այս-երկու օրս:

Շնորհակալ եմ հոգացողությանդ համար. ջերմաջերմ բարևներ իմ և կնոջս կողմից հարգելի տիկնոջդ, քեզ և երեխաներիդ:

Քո՝ Ավետիք Իսահակյան

Գյուղից կգրեմ:

268. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ

1936, 29 Հուլիսի, Փարիզ

Շա՛տ սիրելի բարեկամ Արշակ Ջոպանյանին.
անմոռանալի քաղցր հուշերով

Ավետիք Իսահակեան

29.VII.1936, Փարիզ

269. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ

1936, 7 սեպտեմբերի, Վենետիկ

Սիրելի Հայկ Պերպերյան.

Օգոստոսի 27-ին Ձեզ նամակ գրեցի գրադարանիս տեղափոխման արտոնագիրը – licence[1] ստանալու համար: Բայց դեռ Ձեզանից պատասխան չունեմ: Ենթադրում եմ, որ բացակա եք Փարիզից:

Ավելորդ չեմ համարում կրկնել, որ գրադարանս կազմված է 8 արկղերից, բոլորը միասին կկշռեն 530 կիլո, բայց թոկերի, կապերի ավելումով՝ 550 կիլո: Տեղափոխությունը և ապահովագրական ծախսերն միասին 500 ֆրանկից ավելի, երևի: Արտոնագիրը պիտի ուղարկվի Բաթումի վրա. Հայաստանի Սովնարկոմին, նվեր պետ<ական> գրադարանին՝ Բարեգործականի կողմից: Երկու օրինակ արտոնագիր. մեկը ուղարկվելու է Բաթում՝ մաքսատան վրա, մյուսը՝ Երևան գրադարանին, գրադարանի վարիչ Ա. Մարտիկյանին[2]:

Ստամոքսիս դարմանումը դեռ չարունակվում է. մի 8 անգամ էլ պիտի լինի, մինչև սեպտեմբերի 15-ը:

Զգիտեմ մինչև այդ օրը կստանա՞մ արտոնագիրս, որ արկղերս հանձնեմ տրանսպորտի ընկերությանը:

Մեկնելս կախված է այդ արտոնագրից: Հետո նավերը մեկնում են չաբաթը մի անգամ և վաղօրոք պիտի դրվել, հերթի սպասել: Բաթումի հետ ուղղակի կապ չկա, պիտի մի քանի տեղ փոխենք նավերը:

Այս բոլոր դժվարությունների վրա ավելացավ և մի ուրիշը: Նավային ընկերությունները օտարներից միայն օտար դևիզով են տոմսեր վճարում: Մենք օտար դևիզ չունենք. ունեցածներս լիրա են և չի ընդունվում:

Այս բոլորը ի նկատի ունենալով դրեցի պ. Վ. Մալեզյանին, որ բարի լինի սեպտեմբերի ամսականս[3] ուղարկե-

լու ինձ, հեռագրով, և այն պայմանով, որ ինձ այստեղ ֆրան<սական> ֆրանկ վճարեն հետևյալ բանկը – Banca Francese et Italiana per l'America de sud – *որը կապ ունի* Banca commerciale Italiano:

Այդ բանկը Փարիզի Մեծ օպերայի մոտն է գտնվում: Եթե ուղարկեք ամսականս, որ կասկած չունիմ (որով-հետև քանի դեռ ճամփու վրա եմ, Երևանից կարգադրություն չի լինի, ստույգ գիտեմ, որ դադարեցնեք վճարումն ինձ), գրադարանիս տեղափոխման ծախքերը կհոգամ այդ գումարից:

Խնդրում եմ փութացնես արտոնագրի ստացումը, իմացնես ինձ իսկույն և պ. Վ. Մալեզյանին նույնպես պարզես կացությունս:

Սիրով և բարևներով Ջերդ Ավետիք Իսահակյան

270. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

1936, 7 սեպտեմբ<երի>, Վենետիկ

Մեծարգո պ. Վահան Մալեզյանին, Փարիզ

Սիրելի պարոն Վ. Մալեզյան.

Ավելի քան մի ամիս է Վենետիկ եմ, տակավին չեմ կարողացել ճամփա ընկնել. դեպի Երևան: Վենետիկի վրայով մեկնելուս պատճառն այն էր, որ մեծաքանակ գրքեր ունեի այստեղ. պիտի լեցնեի սնդուկների (արկղների) մեջ և ուղարկեի Երևան՝ պետական գրադարանին նվեր: Նաև ունեի չա՛տ ձեռագրեր և տան իրեր. [Վենետիկում 5-6 տարի ենք ապրել]:

Փարիզից մեկնելիս նորից արթնացել էր ստամոքսիս հին հիվանդությունը և Վենետիկում առաջին օրերը չա՛տ տառապեցա: Այստեղ ունենք նշանավոր հայ բժիշկ

Հ. Պարտիզյանը[1], վաղեմի բարեկամ, որ սկսեց դարմանել ինձ էլեկտրականությամբ ու ռադիոակտիվիտեով. մոտ մի ամիս է դարմանվում եմ և մի չաբաթ ևս պիտի տևե. ինձ լավ եմ զգում և ցավերս անցել են:

Գրադարանս կարգի բերեցի, բայց տակավին արտոնագիր-licence չեմ ստացած Միության առևտրական վարչությունից: Այդ հոգը հանձն առավ մեր սիրելի բարեկամ Հայկ Պերպերյանը: Նրան նամակ գրած եմ 13 օրից ի վեր. բայց պատասխան չունեմ: Հետո մխրճված եմ ուրիշ դժվարությունների մեջ. ուղղակի Բաթում գնացող նավ չկա. պիտի հանգույցս-հանգույց գնանք. – Վենետիկից Աթենք, հետո ուրիշ նավ դեպի Կ. Պոլիս, այնտեղից էլ Օդեսա, հետո Բաթում: Եվ այդ բոլոր դժվարությունների վրա, նավային ընկերությունը տոմսերը վաճառում է օտարներին օտար դևիզով (ֆրանկ, դոլլար, ստեռլինգ), իտալական լիրա չի ընդունում, և իմ դրամները իտալական են և ոչ մի բանկ չի փոխարկում. բացի այդ նավերը մեկնում են Աթենք, Կ. Պոլիս՝ չաբաթը մի անգամ և լեցված են ուղևորներով. առաջուց պիտի գրվել, հերթի սպասել: Ես կարծում էի թե օգոստոսի վերջերը կմեկնեի և կենսաթոշակիս օգոստոսի ամսականը դանձեցի Բարեգործ<ական> միությունից. հիմա ստիպված եմ խնդրելու Ձեզ, որ բարի լինեիք սեպտեմբերի ամսականս 100 դոլար ուղարկելու ինձ: Միայն կխնդրեի, որ դրամը տեղափոխեիք հեռագրով, Փարիզի Banca Francese et Italiana per l'America del sud, որը կապ ունի Banca Commerciale Italiana-ի հետ, այն պայմանով, որ ինձ ֆրանս<ական> ֆրանկ վճարեն, որպեսզի կարողանամ տոմս առնել:

Թերևս հարկ է ասել, որ ես քանի դեռ ճամփու վրա եմ, դուք կարող եք և արդելք չկա կենսաթոշակս վճարելու: Ես ստույգ դիտեմ, որ երևանը մինչև իմ տուն հասնելը չի կարող կարգադրություն անել դադարեցնելու ամսականներիս վճարումը:

Խորին հարգանքներով ու ջերմ բարևներով
միշտ Ձեր անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

A. Issahakian
Angelo Parteciparto, Lido, Venise

271. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ

1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ

Սիրելի Հայկ Պերպերյան.

Շնորհակալությամբ ստացա նամակդ և արտոնագիրը. նորից չնորհակալություն:

Հիմա էլ զբաղված եմ իտալական կառավարությունից արտոնություն ստանալու՝ երկրից դուրս ապրանք ուղարկելու համար: Դա սանկցիոների կոնտր սանկցիոն է. մի երկու օր էլ այդ կքաշե:

Ձկարողացանք երեկվա մեկնող նավով գնալ, որովհետև թե՛ դարմանումս է շարունակվում (թերևս մի 8 օր էլ) և թե՛ գրքերի և իրերի պատմությունը և թե՛ օտար դևիզի հարցը: Հաջորդ նավը կմեկնի սեպտեմբերի 23-ին, տոմսերը վաճառված են. տոմսեր կարելի է գտնել միայն սեպտ<եմբերի> 30-ի նավին:

Շա՛տ տառապեցի թե՛ հիվանդությանս պատճառով, թե՛ գրքերի և գույքերի և թե՛ այդ տոմսերի. դևիզների, արտոնագրերի. – և գիտցիր, որ նավերը ուղիղ Բաթում չեն գնում, այսինքն՝ ուղղակի, այլ նավից նավ պիտի փոխվենք – Աթենք, Կ. Պոլիս, Կոստանցա...

Լավագույն բանը այն եղավ այս տառապանքներիս մեջ, որ հիվանդությունս անցավ, և մեկ էլ՝ Պարթենոնը[1] պիտի տեսնեմ, գոնե մի անգամ:

Սիրելի Հայկ, երկրորդ նամակիս մեջ գրել էի, որ սեպտեմբ<երի> ամսականս ուղարկեիք: Պատվիրած նամակ էլ նույն իմաստով գրել էի պ. Մալեզյանին, որ ինչպես գրում եք, բացակա է: Եթե վերադարձել է, կխնդրեի արագացնեիք առաքումը: Եթե ինչ-ինչ նկատառումներով կդժվարանան վճարել ամսաթոշակս, խնդրում եմ հեռագրեք Երևան, հայտնեցեք կառավարությանը, որ Իսահակյանը խնդրում է սեպտեմբերի ամսականը Վենետիկից, ճամփու վրայից:

Ջարժե իհարկե սար ու ձոր ընկնել: Խնդիրը չա՜տ պարզ է: Գրքերի առաքումը, հարակից ծախսերը և ակամայիցս իմ դեգերելը Վենետիկ. չա՜տ ներգործեց իմ նիհար միջոցների վրա: Կխնդրեի չուտով մի երկտողով իմաց տալ ինձ:

Ջերմագին բարևներով Ջերդ Ավետիք Իսահակյան

272. ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ

1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ

Սիրելի ընկեր Ռ. Շիշմանյան.

Սիրով կարդացի Ձեր նամակը և չատ չնորհակալ եմ ընկերական սրտագին խորհուրդիդ համար, բայց քանի տրամադրությունս գեչ է, չպիտի հետևիմ խորհրդիդ: Եկանք Վենետիկ և բռնեցինք-մնացինք: Լավ բանն այն եղավ, որ հիվանդությունս բուժվում է: Շատ դժվարություններ և սրտնեղություններ ունենք. հույս ունեմ, որ չուտով անցնին. ամսուս վերջին կմեկնենք. երևի հոկտեմբերի վերջին կհասնենք:

Սիրալիր բարևներ ընկեր Ալիսին[1] և բոլոր մեր ընկերներին թե՛ ինձնից և թե՛ տիկնոջս կողմից:

Միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

273. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ

1936, 19 սեպտեմբ<երի>, Վենետիկ

Մեծարգո պ. Վ. Մալեզյան.

Հարգելի բարեկամ.

Շնորհակալությամբ ստացա Ձեր ուղարկած սեպտեմբ<երի> թոշակս – 1500 ֆրանկ: Ներփակ ուղարկում եմ ստացագիրը:

Թույլ եմ տալիս ինձ անդրադառնալու Ձեր հետևյալ նախադասության վրա – «Թեև Երևանեն մեզի հրահանգված չէ այդ վճարումը չարունակել»:

Բնականաբար, քանի ես Եվրոպայումն եմ, Երևանից ո՛չ մի հրահանգ կարող է լինել կենսաթոշակս չարունակելու կամ դադարեցնելու համար: Երևանի համար միանգամայն միևնույն է՝ թե ես թոշակս ստանում եմ Փարիզում, Վենետիկում, թե Երևանում: Ուղևորության ընթացքին հազարումեկ անակնկալներ կարող են պատահել, և ես չպիտի ստիպված լինիմ քաղցած մնալ կամ պարտքեր անել, որ նորեն Երևանը պիտի վճարե:

Երևանից ինձ կանչած չեն. ես եմ ինքնաբերաբար, իմ կամքով վերադառնում և, հետևապես, ինձնից է կախված մեկնման ժամանակը:

Այս իրողությունը պատիվ ունիմ հայտնելու Ձեզ, որ ավելորդ մտահոգության չմատնվեք:

Առողջությունս բավական լավ է, դարմանում<ը> դեռ չարունակվում է:

Եթե անակնկալներ չպատահեն և նավը իր խոստումը կատարե – մեզ համար տոմսեր վերապահելու մեջ – սեպտեմբերի 30-ին կմեկնենք դեպի Աթենք, այնտեղից էլ նավ առնելու դեպի Կ.Պոլիս, Օդեսա:

Ամբողջ Միության մեջ փոթորկվող իրադարձությունների[1] մասին որոշ բան չեմ կարող ասել: Լուրերը չա՛տ հակասական են և իրար ջնջող: Մինչև հիմա չեմ ըմբռնել իրերի իմաստը: Երկու կողմն էլ իրար մեղադրում են նացիոնալիզմի և հակահեղափոխության մեջ: Երևանում, մասնավորապես, պայքարը չա՛տ տգեղ ձև է ստացել: Թվում է ինձ՝ անհատական վրեժխնդրությունը մեծ դեր է խաղում, մանավանդ գրական գործիչների մեջ, ուր անտաղանդ մարդիկ ստոր միջոցներով հարվածում են տաղանդավորին: Ցավալի է չա՛տ, որ համերաշխություն չկա հայերիս մեջ. մի պատմական ունակություն, որից չարաչար տուժել ենք:

Հույս ունեմ, որ չուտով կիրքը տեղի տա գգաստության, կյանքը մտնի իր հունի մեջ, խաղաղվի հուզված երկիրը և ստեղծագործ աշխատանքը չարունակվի:

Ջերդ անկեղծ հարգանքով՝

Ավետիք Իսահակյան

274. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ

1936, 26 սեպտեմբերի, Վենետիկ

Սիրելի Հայկ.

Ստացել եմ նամակներդ և խորապես չնորհակալ եմ քո իսկական բարեկամական վերաբերմունքի համար: Ջեմ մոռանա:

Բաղձանք ես հայտնում, որ ինչքան հնարավոր է՝ ուշ գնամ երկիր և գգուշ լինեմ: Վերջինը հասկանում եմ. բնական է, որ մարդ չրջահայաց ու զգուշ պիտի լինի՝ գործի իսկ հաջողության համար: Զգուշությունը անբարոյական երևույթ չէ. ծագում է — արդյունք է փորձառության և խելքի, բայց «ուշ գնալը» համաձայն չեմ.

չատ եմ ցավում, որ հակառակ իմ կամքիս այսպես եղավ, իմ ուշացման ամեն մի ժամը պատճառաբանված է և խղճմտանքի ընդդեմ քայլ չեմ արած: Լուրջ հիվանդ էի, և պրոֆ. Պարտեզյանը փրկեց ինձ. եթե ուշացներ դարմանումը, ծանր կացութ֊յան պիտի մատնվեի՝ ստամոքսիս դժվարին հիվանդութ֊յան. հարկ պիտի լիներ վիրաբուժական գործողութ֊յան, բարդութ֊յունների – և Երևանում... 3-4 տարի է՝ տառապում էի և Փարիզում չէին հասկանում:

Ես կուզեի վաղուց Երևան լինել, թերևս պետք է գնայի և անվախորեն.– երբեք չեմ վախեցել. – կկատարեի իմ քաղաքացիական պարտքը հայրենիքիս հանդեպ: Այժմ էլ երբ հասնեմ և հարկ եղավ՝ չեմ ընկրկի: Համոզված եղիր՝ ինչ որ անեմ Հայաստանում, արած կլինեմ արիութ֊յամբ, բարոյականութ֊յամբ, խղճմտանքով, միմիայն հայրենիքի գերագույն շահերի համար:

Սիրելի Հայկ, վերջապես հիմա ամեն ինչ պատրաստ է. առողջութ֊յունս լավ է, սեպտեմբերի 30-ին նավ կառնենք դեպի Աթենք, այնտեղից էլ Կ.Պոլիս, Բաթում: Հոկտեմբերի վերջերին կլինենք Երևանում:

Ապսպրանքդ կկատարեմ, ինչ որ ասել ես, նոթագրել եմ: Երևանից կգրեմ քեզ:

Մի չաբաթ առաջ, երբ ստացա 1500 ֆր<անկ>, գրեցի պ. Վ. Մալեզյանին. եթե այդ նամակս ձեռքդ անցավ, կտեսնեիր, թե ինչպիսի՛ քաղաքավարութ֊յամբ հասկացրել եմ պարոն վարիչին, որ ավելորդ մտահոգութ֊յան մատնվելու տեղիք չուներ, որովհետև ես իմ իրավունքն էի, որ խնդրում էի: Երևանը ինձ չի կանչել, ես եմ գնում իմ կամքով, և երբ ուզենամ, այն օրը կմեկնեմ և որտեղից էլ որ ուզենամ... վերջապես: Հանցավորը ես եմ, որ իմ պահանջին այնպիսի ձև էի տվել, որպես թե չնորհ է, որ կխնդրեմ պ. վարիչից:

Հոգեբանութ֊յուն, նրբութ֊յուն չհասկացող մարդիկ են:

Նորից չնորհակալություն:
Ջերմագին բարևներով, մնամ սրտով
քո Ավետիք Իսահակյան

275. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ

1936, 3 Հոկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Հայկ Պերպերյան.

Պիտի զարմանաք, անշուշտ, որ տակավին Վենետիկում եմ:

Ամեն բան պատրաստ էր՝ նավը, գույքերը հանձնված... Բայց Միլանի կոնսուլատի անփութության պատճառով, ստիպված եղանք մի չաբաթ հետաձգելու մեկնումը. կմեկնենք 7 Հոկտեմբերի: Կարծում եմ, որ այլևս արգելքներ չեն ծագի:

Արդ, եթե Երևանից մի որևէ կարգադրություն ստացած լինեք ինձ համար, կխնդրեի հեռագրով ինձ իմաց տալ:

Ջերմագին բարևներով

Ձեր Ավ. Իսահակյան

276. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1936, 5 Հոկտեմբերի, Վենետիկ

Սիրելի Լաս.

Շա՜տ ներողություն պիտի խնդրեմ, որ մինչև օրս Ձեզ մի-երկու տող չգրեցի: Եկած օրվանից հիվանդ էի՝ ստամոքսային ցավերով և բժշկվում էի. բացի այդ բնավ տրամադրություն չունեի. «սիրտ չունեի» ինչպես աս-

վում է: Հիմա լավ եմ. մի-երկու օրից հետո մեկնում եմ Աթենք. այնտեղից պիտի նավ առնեմ: Ուղղակի նավ չկա՝ Բաթում:

Աթենքից կգրեմ Ձեզ. հույս ունիմ, որ տրամադրություններս բարձրանա: Ջերմ բարևներով բոլորիդ:

Ձեր Ավետ. Իսահակյան

277. ԱԶԱՏ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ

1936, 13 Հոկտեմբ<երի>, Վենետիկ

Սիրելի ընկեր Ազատ Մարտիկյան.

Վերջապես վաղը մեկնում ենք Աթենք և այնտեղից էլ Կոստանցա և ապա Բաթում: Շնորհիվ նավային այս տեղափոխությունների՝ հազիվ նոյեմբերի սկզբներին հասնենք Բաթում:

Գրադարանս, 8 արկղ գրքեր, 540 կիլո ծանրությամբ արդեն հանձնել եմ տրանսպորտին, ապահովագրված են:

Ստացել եմ Ձեր խորհուրդների համաձայն, խորհրդային առևտրական ներկայացուցչությունից թույլտվություն, մաքսից ազատ են, իբրև նվեր պետական գրադարանի համար: Թույլտվությունը ձեռք բերեց Բարեգործական միությունը և նվիրատվությունը իր կողմից է: Առաքումը կատարված է Վենետիկից. հասցեագրված է Հայաստանի սովնարկոմի անունով պետ<ական> գրադարանին (պալատի համար):

Երբ որ հեռագրեմ նրան (որդուս միջոցով կհայտնեմ), Բաթում հասնելուս օրը, խնդրեմ, Ձեր օգնությունը, որ մի պաշտոնական մարդ կառավարության, գրադարանի կամ ՀՕԿ-ի կողմից գա Բաթում ընդունելու գրքերը: Այս մասին գրել եմ Ձեր նամակի հետ նաև ընկեր Ա. Գուլոյանին[1] (ժողկոմխորհի նախագահ) և Ա. Եսայանին[2] (ՀՕԿ-ի

նախագահ). ուրեմն իրագեկ են նրանք և կդիմեք ուր որ հարկն է: Դուք այդ լավ գիտեք:

<Լիցենզիայի> թղթերը և տրանսպորտի թղթերը հետս կբերեմ:

Սիրով և հարգանքով՝ Ձեր Ավետիք Իսահակյան

278. ՎԻԳԵՆ ԻԱՆՀԱԿՅԱՆԻՆ

1936, 13 Հոկտեմբ<երի>, Վեննատիկ

Սիրելի Վիգեն ջան.

Վերջապես վաղը ճամբա ենք ընկնում դեպի Աթենք. այնտեղից էլ նավ ենք առնում դեպի Կոնստանցա (Ռումինիա), այնտեղից էլ՝ Բաթում. ուրիշ ճամբա չկա. նավերը ուղիղ Բաթում չեն գնում, միայն թե Կոնստանցայի նավը գա: Շա՛տ ուշացանք, հազիվ նոյեմբերի սկիզբներին հասնենք Բաթում, որովհետև ես հիվանդացա՝ ստամոքսիս հին ցավերը նորոգվեցին, բայց սա պատճառ է, որ արմատապես բժշկվիմ. պրոֆեսոր Պարախիչյանը կարգին բժշկեց. հիմա չա՛տ լավ եմ, բոլորովին առողջ, դոնե ստամոքսիս կողմից:

Շա՛տ եմ ցավում, որ դու հետներս չէիր՝ Աթենքը տեսնելու համար, բայց երիտասարդ ես, ժամանակ և առիթ կունենաս տեսնելու: Երբ որ հեռագրենք քեզ թե երբ Բաթում կհասնենք, հեռագիրը կհայտնես ընկերներ Ա. Գուլոյանին (ժողկոմխորհի նախագահին), Արսեն Եսայանին և Ազատ Մանուկյանին[1]: Նրանց գրել եմ, որ մարդ ուղարկեն Բաթում մեզ ընդունելու՝ այսինքն՝ դրքերը՝ 8 արկղ, մեր իրերը և ձեռագրերս: Դու էլ կմիանաս եկողի հետ:

Պիտի աշխատես, որ մեր դույքերի, ձեռագրերի քննությունը կատարվի ո՛չ թե Բաթումի մեջ, այլ Հայաստանում, Երևանում կամ Լենինականում:

Շատը գնաց, քիչը մնաց. չուտով կլինենք սիրելի հայրենիքում:

Համբույրներ քեզ և Գեղամին, բարևիր ջերմապես բոլոր իմ ընկերներին և բարեկամներին. նամակներս չուտով, անձամբ հասցրու ում որ ուղղել եմ:

Համբույրներով՝

քո Ավետիք Իսահակյան

279. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1936, 27 Հոկտեմբերի, Աթենք

Սիրելի տ. Լաս.

Երկու շաբաթ է Աթենք եմ, և բնավ ժամանակ չեմ գտնում մի-երկու խոսք գրելու բարեկամներիս: Այնքա՛ն զբաղված եմ, այնքա՛ն բան կա տեսնելու մոտիկն ու հեռուն, և հայե՛ր, հայե՛ր...

Մի շաբթից հետո կմեկնիմ Հայաստան: Շատ ուշացա. չտապում եմ. ջերմագին բարևներ բոլորիդ.

Ավետիք Իսահակյան

280. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ

1936, 26 Նոյեմբերի, Կոստանցա

Սիրելի Հայկ Պերպերյան.

Նամակս գրում եմ Ռումանիայի նավահանգստից, ուր մնալու ենք ամբողջ 30 ժամ: Հիմա այստեղ ձմեռ է, ձյուն և ցուրտ, և ծովը փոթորկահույզ: Պարագաները այնպես դասավորվեցին, որ ուշ աչնան հասավ հայրենիք գնալս:

Արդեն 13 օր է ծովերի վրա ենք՝ սկսած Աթենքից, ուր ասե՛ս չեղանք՝ հունական կղզիներ, Զմյուռնիա, Վոլո, Սալոնիկ, Ալեքսանդրոպոլիս, Ստամբուլ, Վառնա, սրանից հետո էլ Օդեսա, ապա Բաթում. տակավին 6 գիշեր ունենք ծովի վրա անցկացնելու, իսկական մի ամբողջ ոդիսական:

Սիրելի Հայկ, Վենետիկից չկարողացա Ջեզ նամակ գրել, այնքա՛ն զբաղված էի: Աթենքից մի պոստ-քարտ գրեցի 300 դոլարն գանձած լինելս իմացնելու համար, բայց չուզեցա երկար գրել, որովհետև Հունաստանում, դիվտատուրայի չնորհիվ, չա՛տ խիստ գրաքննություն կա, գրաքննիչը հայ է (հայերենի համար) և դաշնակցական մեկը, որ, ուղղակի չար ոգի է հանդիսացել ոչ-դաշնակցական հայերի գլխին և լրտեսի դեր է կատարում: Նամակների իմաստը խեղաթյուրում է և նամակների բովանդակությունը դաշնակցական շրջանների սեփականություն դարձնում:

Ուզում էի գրել, թե պ. Վ. Մալեզյանի Երևան տված հեռագիրը, թե կարելի՞ է ամսաթոշակս վճարել, կառավարությունը տույժ է տվել և կարդադրել միանվագ տալ 400 դոլար: Ես լուր չունեի այդ մասին. Աթենք նամակ առա որդուցս, որ բացատրել էր եղելությունը: Եթե պ. Մալեզյանը չհեռագրեր, այդ անակնկալը տեղի չէր ունենա: Այդ տեղից ինչ մորալ ուզում է թո՛ղ հանե պարոն վարիչ-քարտուղարը: Ռուսն ասում է այդ առիթով. չկա չարիք, առանց բարիքի:

Սիրելի ընկեր Հայկ, Աթենք մնացի չորս շաբաթ, առաջին օրերը չա՛տ թախառեցի, չա՛տ տեղ եղա, չա՛տ բան տեսա: Ամբողջապես չրջապատված էի հայերով, ծանոթանծանոթ թեյասեղան կազմակերպեցին, բայց կառավարությունը արգելեց դաշնակցականների ցուցմունքների վրա, որպես թե ես համայնավար եմ և եկել եմ պրոպագանդի: Հակառակի պես այդ օրերը ՀՕԿ-ի ընդհանուր

(մասնաճյուղերի) ժողով էր, ուր հավաքված էին Հունաստանից չո՛ւ հօկիստներ: Նույնիսկ արգելեցին հույն թերթերի մեջ իմ մասին գրել գալուս և մեկնելուս մասին[1]: Դաշնակցականները իրենց «Նոր օր»[2] թերթով պարզապես լրտեսի գործեր են կատարում, ամո՛թ:

Դժբախտաբար, թափառումներիս հետևանքով ծանր տեսակի հարբուխ (գրիպ) ունեցա՝ կոկորդի և քթի բորբոքում, նույնիսկ վիրաբուժական թեթև գործողություն ունեցա: Բայց լավ վերջացավ:

Գնում ենք դանդաղ, մի թափառող, բեռներ ընդունող իտալական նավով (ուրիշ նավ չկա Բաթում գնացող): Ժամերս անցնում են ընթերցումով, գրելով և դիտելով:

Եթե տարերքը ուզենա, հին խոսքով, եթե Աստված կամենա, դեկտեմբերի 1-ին կհասնենք Բաթում: Հայ<աստանի> կառավարությունը առանձին վագոն է ուղարկելու մեզ՝ գրքերը և մեր իրերը ընդունելու: Որդիս և ուրիշները դիմավորելու են մեզ: Հաջորդ նամակը բախտ կունենամ Երևանից գրելու, որտեղից հույս ունեմ լավ բաներ հաղորդելու Ձեզ:

Մնաս բարյավ, սիրելի ընկեր Հայկ: Հատկապես չո՛ւ և չո՛ւ չնորհակալ եմ քեզանից քո լավ զգացումների համար, որ հայտ ես բերել իմ նկատմամբ միշտ:

Սիրով քո անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

281. ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎԻՆ

<1937, 19 ապրիլի, Երևան>[1]

Սիրելի ընկեր Գ. Աբով.

Շատ եմ ցավում, որ չեմ կարող ներկա լինել ժողովին[2]: Գլուխս և մեջքս ցավում են: Ջդիտեմ՝ մրսել եմ, թե հոգնել: Համենայն դեպս — Старость не радость.

Ուզում էի մի երկու խոսք ասել, ուստի գլխի ցավով բռնված, հապճեպ [գրում] դրեցի այս[3]: Ներողամիտ լինեն թո՛ղ ընկեր ժողովականները:

Խնդրեմ բարի լինես կարդալ ժողովի առաջ:

Ընկեր<ական> բարևներով՝ Ավ. Իսահակյան

Հ.Գ.— Ներողություն, որ գրում եմ հակաաբեղյանական ուղղագրությամբ[4]: Ժամանակ չունեի նորով գրել. դժվար է ինձ համար:

Ա. Իս.

282. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1937, 10 մայիսի, Երևան

Սիրելի Սոֆի.

Նամակդ ստացանք, վիգենը պատասխանից: Մեզ չա՛տ մեծ վիշտ պատճառեց մամայի հիվանդությունը: Հեռագրեցինք, որ պատասխանես վիճակի մասին, բայց դեռ լուր չուվիր: Հույս ունենք, որ կլավանա:

Մեր Գեղամն էլ, Աֆրիկյանը, մի քանի օր է հիվանդ է. բարձր տաքություն ունի. դեռ որոշ չէ, թե ի՞նչ է հիվան-

դուքյունը: Դչխունը՝ քույրը, եկավ: Իհարկե, վտանգ չկա, երևի, գաղտնի մալարիա է:

Մենք լավ ենք, մի կերպ կառավարվում ենք: Ջեկն էլ լավ է. չա՛տ մեծացել է: Ես չա՛տ և չա՛տ զբաղված եմ, ուղղակի ժամանակ ասած բանը չունեմ, անվերջ ժողովներ, ելույթներ, կռիվ, վեճ, և ամեն կողմից նյութ են խնդրում: Ջեռքիս տակ 14 բան ունեմ, որ պիտի հասցնեմ: Իսկ Պետհրատին տրվելիք ժողովածուս դեռ չեմ կազմել:

Սիմոն Հակոբյանը իմ դեմ կատաղի կռիվ է սկսել, բայց տակը պիտի մնա: Կգաս կիմանաս:

Կարճ եմ գրում, չտապ, հիմա գնում եմ ժողովի: Գրողների Ընկերության վարչության անդամ ընտրվեցա, առանց քվեարկության, ուղղակի, ծափահարությամբ: Ես բացակա էի:

Այստեղ դեռ չենք գտել կերոսինկա, եթե դու գտնես, մեկ հատ առ, մի լավ կերոսինկա. մենք էլ կառնենք, թող ավելորդ լինի, վնաս չունի:

Շատ բարևներ ուղարկողներ կան քեզի:

Մեր կողմից էլ շատ բարևներ. համբուրիր մամայի ձեռքը. ջերմ բարևներս Ռոզային, Նինային, Հարսներին, Պավլին, Վանյային[1] և բոլոր հարցնողներին:

Համբույրներով՝ Ավետիք

Ուղարկում եմ Վարիայի, Ատրունու նամակները:

Հասցեն չես մոռացել՝ 26:

283. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ Վ.-ԻՆ

1937, 2 Հունիսի, Երևան

Дорогой товарищ В. Мусаэлян

Давно получено мною письмо от 23. IV 1937 г. (за С-4) в ответ на мое письмо от 11. II-37 г. Моя болезнь и пере-

груженность работой, к сожалению помешали мне своевременно ответить Вам, за что извиняюсь перед Вами.

Хотя и с таким запозданием, я отвечаю на Ваше письмо по пунктам затронутых в нем вопросов по переводу и изданию на русском языке моих «Избранных стихов».

1. Я полностью согласен с принятым в Гослитиздате порядком подбора переводчиков, редактирования и, вообще, решения всех вопросов, связанных с переводом и изданием произведений писателей народов СССР на русский язык.

2. Уже установлена деловая связь между мною и редактором моих произведений, тов. Тер-Мартиросяном[1].

3. За неимением времени и возможности я вынужден отказаться от реализации представленного Гослитиздатом мне права авторизации переводов моих произведений.

4. Мною уже получен для подписания текст договора на издание моих «Избранных стихов», которых я при сем возвращаю Гослитиздату подписанным, с просьбой к Вам передать его Договорно-Расчетной части, откуда и получен договор.

5. Лишь последнее время я, наконец, раздобыл экземпляр моей книги (изд. 1930 г.)[2] и ныне занят установкой даты (написания) под каждым стихотворением. По окончании этой работы вышлю Вам книгу с датами, вероятно, через 10 дней, как и через 10 дней пошлю также мою краткую биографию. Два фотография. карточки прилагаю при сем-же.

С товарищеским приветом *А. Исаакян*

2-го июня 1937 года
г. Ереван

284. ԱՀԱՐՈՆ ՋՈՒԱՆՅԱՆԻՆ

1937, 30 օգոստոսի, Սևան

Հարգելի ընկեր Ահարոն.

Ձեր սիրալիր նամակը ստացա Սևանում, ուր հանգստանում եմ ամսից ի վեր: Վաղը-մյուս օրը վերադառնում եմ Երևան և նամակս Երևանից եմ հանձնում փոստին:

Շատ զգացված եմ Ձեր՝ իմ հանդեպ հայտ բերած հարգանքի և սիրո համար: Ուրախ եմ, որ իմ գրուքյունները արձագանք են գտնում հեռավոր սրտերում: Հեղինակի համար սրանից ավելի մեծ վարձ ու փառք գոյություն չունի:

Ուրախ եմ նաև, որ գրականությամբ եք զբաղվում և արտահայտվելու փափագ ունիք: Ձեր առջևն է Ձեր երիտասարդ կյանքը — և համաչխարհային գրականությունը: Կարդացեք մեծ հեղինակներին, մեծ ստեղծագործողներին — Գյոթե, Հայնե, Բայրոն, Շելլի, Պուշկին, Լերմոնտով, և մեր Հայ գրականությունը: Սովորեցե՛ք, աշխատեցե՛ք տոկունությամբ, սիրով, համբերանքով: Գրեցեք Ձեր զգացածը, խորհածը: Եղեք անկեղծ, որպես թե խոստովանություն եք անում:

Սիրեցեք մեր հայրենիքը, մեր ժողովուրդը, մեր լեզուն, ամբողջ մարդկությունը և ամբողջ տիեզերքը և արտահայտեցեք այն բոլոր հույզերն ու խոհերը, որ ներշնչում են Ձեզ այս էությունները:

Այս է լավ, մեծ բանաստեղծ լինելու ուղին:

Երբ Երևան կգաք, աշխատեցեք ինձ տեսնել, կխոսենք ավելի մանրամասն: Դժբախտաբար ես չա՛տ զբաղված եմ և քարտուղար էլ չունեմ, որ ավելի <երկարաբար> գրեմ և թղթակցեմ, ինչպես ունեն ռուս և օտար գրողները:

Սիրով և հարգանքով՝ Ավետիք Իսահակյան

285. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ

1937, 30 օգոստոսի, Սևան

Սիրելի Շիրազ.

Ստացել եմ սրտագին նամակդ. ներիր որ ուշ եմ պատասխանում. այսօր-վաղն էի ձգում. վերջապես այսօր գրում եմ և մի-երկու օրից հետո Երևան եմ գնում, այնտեղ կհանձնեմ փոստին:

Շա՛տ ծույլ եմ նամակ գրելու մեջ. ներո՛ղ եղիր:

Նախանձում եմ քեզ, որ թափառում ես իմ սիրելի Արփաչայի ափերում, Ալագյազի հովիտներում, Շիրակի երկնքի տակ. նախանձում եմ նաև, որ սիրո վիշտ ունիս – դրանից ավելի բան չպիտի ունենա իսկական բանաստեղծը – սեր, վիշտ, բնությունն, հայրենիք և գաղափարական մտաշխարհ: Այդ բոլորը դու ունես, և վրան էլ ավելցրու մատաղ հասակ, նոր բղխող աղբյուր. – ուրեմն ստեղծագործի՛ր, սավառնի՛ր, թռի՛ր:

Սևանում բավական լավ ժամանակ անցրի, թեև շատ խըժռըբըժ կար, շա՛տ աղմկող երեխաներ, բայց նորից դեչ չանցավ: Զքնաղ ծովակ, հրաշալի երկինք, անհամար ադամանդային աստղեր – և այդ բոլորը իմս էր, կարող էի վայելել և վայելեցի:

Գրեցի մի փոքր պոեմա և մի-երկու փոքր ոտանավորներ: Սակայն շա՛տ կարդացի: Լողացա, շատ թափառեցի լճի վրան ու կղզու շուրջը, կարդացի, խորհեցի:

«Մհերի» վերջը վաղուց է ավարտել եմ և հանձնել եմ «Խորհ<րդային> գրականությանը»[1]. այս ամսում կեսը կհրատարակվի, կեսն էլ՝ մյուս ամսում. հետո՝ առանձին գրքույկով: Հարցնում ես, թե գո՞հ ես. երևակայիր, որ գեչ դուրս չեկավ, բավական հաջող է և գոհ եմ: Ինչ որ գրում ես «Ուսուա Կարոյի» մասին, ճշմարիտ է, բայց պիտի ժամանակ ստեղծեմ՝ որ ինքնամփոփ, բոլորանվեր

դրանով զբաղվեմ և չտրվեմ մանր-մունր բաներով, ժողովներով, վեճերով և այլն, և այլն:

Հույս ունեմ, որ գլուխ բերեմ այս իմ խորին տենչանքս: Այս տարի, ո՛չ ուշ:

Սևանից վերադարձիս մի քանի օր կմնամ Երևանում և կգամ Լենինական. քեզ կհայտնեմ. եթե դու այդտեղ լինես, և ոչ թե՝ Երևանում:

Ջերմագին բարևներով՝ Ավետիք Իսահակյան

Հ.Գ. – Այսօր եկա Երևան և կարդացի «Բևեռի առումը»[2] գրվածքդ. շա՛տ և շա՛տ լավն է. մեծ թափով ես գրել. չքեղ պատկերներ կան. հոյակապ բան է. միայն մի քիչ երկարախոսուԹյուն կա, մի-երկու անտեղի, ավելորդ բաներ:

Ապրիս, զորանաս:

Ա. Ի.

286. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ

1938, 25 օգոստոսի, Ծաղկաձոր

Սիրելի ընկեր Արամ.

Ստացա Ձեր սիրալիր նամակը, և չտապում եմ պատասխանել: Շատ ուրախ եմ և նախանձում եմ, որ այդպիսի լավ օրեր եք ապրում Հայրենի հարկի տակ, հարազատների մոտ,— որոնցից ես, ավա՛ղ, զրկված եմ, հիմա ո՛չ մայր ունեմ, ո՛չ քույր, ո՛չ եղբայրներ, ո՛չ էլ հայրական տուն...

Սրտագին բարևներ Ձերոնց բոլորին և սիրելի Մանիկին, որին չա՛տ կարճ տեսա, բայց չատ երկար և քաղցր հիշատակ ունեմ:

Ինձ հայտնի չէ, թէ ընկ. Հ. Մելիքյանը[1] իմ մասին պիտի զեկուցեր, սակայն լսել էի, որ «Գրական թերթի» մի համար իմ գրականութեանը պիտի նվիրվեր: Ինչո՞ւ չեղավ, չգիտեմ, և, ճշմարիտն ասած, չեմ էլ հետաքրքրվում իմանալ:

Սիրելիս, հարցնում ես թե՝ ի՞նչ չափով կապված համարում եմ ինձ հայ նախորդներին, առանձնապես Հ<ովհաննես> Հովհաննիսյանի հետ:

Իմ մանկութեյան ժամանակ, 80-ական թվականներին, երբ հայերենից բացի գրեթե ուրիշ լեզու չգիտեի — խորին տպավորութեյուն է թողել իմ վրա մեր ժողովրդի երգը, դեղջկական երգը, այն, որ Շիրակի ցորեն արտերի հետ ծփում է, ծաղիկների հետ բուրում, ամեն տարի նոր ու նոր, և Ախուրյանի ալիքների հետ կարկաչում:

Առաջին ընտիր գիրքը, որ ընկել է ձեռքս, երախտավոր Միանսարյանի[2] սքանչելի «Քնար Հայկականն» է, որի նման ժողովածու, նրանից հետո, տակավին մեր գրականությունը չունեցավ: Այնտեղ կարդացի Ս. Պալասանյանի չատ հմտալից գրական ներածությունը, որ նորից մնում է հետաքրքրաշարժ:

Այնտեղ սիրեցի, հափշտակվեցի Սայաթ-Նովայով, մեր ռամկական երգով, Գամառ-Քաթիպայի «Մայր Արաքսի»-ով և նրա այլ գործերով. հայր Ղ. Ալիշանի քերթվածներով, արևմտյան հայերի պոեզիայի մի քանի ընտիր նմուշներով և վերջապես Ս. Շահ-Ազիզի «Ես լսեցի մի անուշ ձայն» չքնաղ բանաստեղծությունով:

Սրանք բոլորը, անշուշտ, մեր պոեզիայի հին և մշտական գոհարներն են, որոնք վճռական, բարի ազդեցություն են ունեցել իմ վրա և կաղապարել են ինձ:

Նրանցից հետո, երբ 1889 թվին ծանոթացա Հ. Հովհաննիսյանի բանաստեղծություններին — զգացի, հասկացա՝ թե ինչն է իսկական լիրիկան,— և գծվեց իմ ուղին:

Բացի այդ՝ պիտի նկատի ունենալ և այն հանգամանքը, որ Գևորգյան ճեմարանում 1889 թվից Հովհաննիսյանը իմ ուսուցիչն է եղել, իմ սիրելի ուսուցիչը և ես նրա սիրելի աշակերտը:

Նրան չատ և չատ պարտական եմ ես, և ի՞նչ խոսք, որ խորապես կրել եմ Նրա ստեղծագործիչ ազդեցությունը, մանավանդ իմ սկզբնական շրջանում:

Քննադատներին է մնում պրպտել և գտնել Նրա հետքերը իմ բանաստեղծությունների մեջ:

Առայժմ այսքանով բավականացիր.— Երևանում, ուր ես կլինեմ սեպտեմբերի սկզբներից, կխոսենք ավելի հանգամանորեն:

Նորից սրտագին բարևներ ձեզ բոլորիդ, իմ թանկագին բարեկամներ, բարևներ նաև մերոնցից:

Միչտ ձեր՝ Ավետիք Իսահակյան

287. ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆԻՆ

1938, 31 օգոստոսի, Ծաղկաձոր

Սիրելի ընկեր Գուրգեն Բորյան.

Ձեր սիրալիր նամակին ավելի շուտ կարող էի պատասխանել, բայց ուզում էի որոշ բան գրել:

Իմ սրտին շատ մոտ է մի որևէ գրության արձագանքել կոմունիստական երիտասարդության տարեդարձին: Այդ ուղղությամբ խորհում եմ, բայց տակավին նյութ, սյուժե չեմ գտել: Ամիս ու կես չարունակ, պիոներների զվարթ կյանքը հոսում է իմ [առջի] առջևից, դիտում էի և հաճախ ներկա էի լինում խարույկներին ու հանդեսներին: Տեսակցում էի ջոկատավարների հետ, մի երկուսին կանչեցի մոտս, խոսացրի, խնդրեցի նյութ տալ, հերոսական դեպքեր, բայց չկարողացան, չունեին: Պիոներների կենցաղը տեսնում եմ, առավոտից սկսած մինչև նրանց քնելը, բայց դա պատմվածքի օբյեկտ չէ: Դեպքեր, հանդույցներ, ակտեր չկան, որպեսզի կենդանի մարդ հայտ բերես, հոգեբանություն տաս, վերլուծումներ անես:

Իսկ կոմերիտների կյանքին, դժբախտաբար, բնավ ծանոթ չեմ: Մնում է, որ Երևանում ընկերներին ինձ օգնեն, նյութ տան, բովանդակություն, փաբուլա տան: Ես նոր մարդ եմ մեր նոր իրականության մեջ, ինձ պիտի օգնեն. թեև խոստանում են որոշ ընկերներ, բայց խոստումները խոստում են մնում: Կարմիր բանակի տարեդարձին նույնը եղավ. խոստացան սյուժե տալ և չավին. երևի պահում են իրենց համար: Իմ դրությունը Պիրոնդելոյի[1] դրամայի հերոսների հակառակ վիճակն է – յոթ հեղինակներ որոնում են իրենց հերոսին, որ գրեն:

Ընկերներից նրանք, որոնք 20 կամ 10 տարիներ չարունակ ապրել են խորհրդային իրերի մեջ, ահագին պաշար ունեն նյութերի կամ նրանք, որ եղել են պիոներ և

կոմերիտ, պիտի ընդառաջեն և նյութեր տան, ինչպես կիրառվում է ուրիշ տեղեր. այլապես՝ ռուսների ասածի պես՝ մատը ծծելով կարելի չէ իրականություն վերարտադրել:

Իմ տեսած և ապրած կյանքը – 63 տարեկան մարդու – նախապատերազմյան չրջանն է Ռուսաստանում և նրանից հետո Եվրոպայում. այդ կյանքից ինչքան ուզվի՝ կարող եմ տալ, բայց այժմեական արժեք չունի: Դրա հետևանքով իմ կացությունը, իբրև հին գրողի, նախանձելի չէ, մանավանդ մի գրողի, թո՛ղ ներվի ասել ինձ, որը ուզում է իր անունը ստորագրել ոչ-խալտուրային գրության ներքո:

Սիրելի ընկ. Բորյան, իմիջիայլոց, իմ՝ այստեղ կատարած աշխատանքներից դժգոհ չեմ. վերջացրի մի պոեմ «Հայրենի հողը»[2] վերնագրով. մի վիպակի սխեման կազմեցի, որ Երևանում պիտի ձեռնարկեմ գրել. և վերջացնելու եմ մի անախորժ գործ – Ստենդալի «Սև և կարմիր»[3] վեպի թարգմանության համեմատությունը բնագրի հետ:

Մոտ օրերս կվերադառնամ Երևան:

Ցավում եմ, որ ժամանակ չունեցաք Ծաղկաձոր գալու:

Ջերմ բարևներ ընկ. Հրաչյային[4] և Ձեզ իմ և տիկ. Սոֆիկի կողմից:

Ջեր՝ Ավետիք Իսահակյան

31 օգոստոսի 1938
Ծաղկաձոր

288. ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻՆ

1938, 23 սեպտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Նաիրի.

Վաղուց է՝ սպասում էի քո վերադարձին Երևան, բայց, լսում եմ, որ դեռ մնալու ես:

Մի պարտք ունեմ հատուցանելու քեզ և, լավ է ուշ, քան երբեք.— ընկեր Հրաչ Քոչարը[1] կարդաց ինձ այն նամակդ, ուր խոսում էիր իմ մասին.— քո գրույցը մեր չատ սիրելի ու հարգելի ընկեր Ա. Միկոյանի[2] հետ — նրա՝ իմ հանդեպ հայտ բերած այն բարձր ուշադրությունն ու գնահատանքը, որ արել է մեր սիրելի ընկերը:

Խորապես չնորհակալ եմ քո ընկերական ազնիվ վերաբերմունքի համար, որ մեր Երևանի ճղճիմ իրականության մեջ բացառիկ երևույթ է: Ես միշտ այն մտածումն ունեմ, թե իրեն գնահատող մարդը կգնահատի և ուրիշին: Եվ իսկական տաղանդը կուրախանա իսկական մի այլ տաղանդի գոյությամբ:

Այսօր Մոսկվա էին մեկնում մեր ընկեր Հրաչիկ Գրիգորյանը[3], որին նոր եմ սկսել ճանաչել. և կարծում եմ, որ լավ հատկություններ ունեցող երիտասարդ է:

Խնդրում եմ հետաքրքրվես, թե ի՞նչ եղավ իմ ոտանավորների թարգմանության հրատարակման գործը[4] (քեզ հայտնի է այդ վաղուց), ուզել էին լուսանկարս և հառաջաբան, ուղարկել եմ չա՛տ և չա՛տ առաջ. ինչո՞ւ է ուշանում, չեմ հասկանում:

Բարի եղիր, պարզիր, և եթե հարկ կլինի պարզիր ընկ. Հրաչիկի հետ. նա խոստացավ հետաքրքրվել և ինձ լուր ուղարկիր թերևս ընկ. Հրաչիկի հետ:

Կարոտով սպասում ենք քեզ:

Ընկերական բարևներով քեզ սիրով՝

Ավետ. Իսահակյան

289. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1939, 12 հունվարի, Երևան

Պետհրատի վարչությանը
Հարգելի ընկեր Ռ. Զարյան.

Կարդացի Ա. Ֆրանսի «Սպիտակ քարի վրա» նշանավոր վեպի թարգմանությունը, որ բնագրից կատարել է ընկ. Ս. Տիրատուրյանը[1]*:*

Նախապես ասեմ, որ թարգմանությունը չեմ համեմատել բնագրի և ոչ մի էջի հետ: Ընդհանուր տպավորությունս բարենպաստ է – կարդացվում է դյուրությամբ. պարզ է, սահուն, հստակ: Երբեմն անհասկանալի նախադասություններ կան, որոնք նշել եմ: Կան մի քանի գռեհիկ բառեր, որոնք չեն ներդաշնակվում վեպի այն հատվածներին, ուր խոսվում է կլասիկ աշխարհի մասին: Կան ֆրանսիական տերմիններ, բառեր, որոնք թեև գործածական են մտավորական բարձր շրջաններում, բայց, կարծում եմ, մատչելի չեն միջին ընթերցողին:

Ցանկալի է, որ այս մեծ արվեստով գրված գիրքը հրատարակվի, իհարկե, բնագրի հետ համեմատելուց հետո:

Հարգանքներով՝ Ավետ. Իսահակյան

290. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1939, 13 հունվարի, Երևան

Պետհրատի վարչությանը
Հարգելի ընկեր Ռ. Զարյան

Լը Սաժի «Ժիլ Բլաս»[1] վեպի առաջին հատորի թարգմանությունը ինձ հանձնված էր Պետհրատի կողմից համեմատելու բնագրի հետ և ուղղումներ կատարելու: Պատահական էջեր՝ զանազան գլուխներից, համեմատելով բնագրի հետ՝ տեսա, որ շատ մեծ դժվարություններ կան հաղթահարելու: Թարգմանությունները կատարված են տարբեր անձերի կողմից, և լեզվի ու ոճի միանմանություն չունենալով հանդերձ՝ անհավասար արժեք ունեն: Մեկը թարգմանել է, համեմատաբար ընդունելի չափով, երկրորդը թույլ, երրորդը՝ ավելի թույլ: Սրանց մի հայտարարի բերելը դժվար գործ է: Հետո՝ զանազան անձեր ձեռք են զարկել, ուղղել.— և ստեղծվել է քաոս: Օրինակի համար. մեկը ուղղել է, ըստ իր ճաշակի, մի պարբերություն, մի նախադասություն, երկրորդը եկել է նրանց վրա իր ուղղումն է դրել: Նոր սրբագրողը արդեն կանգնում է ոչ թե դիլեմայի առաջ, այլ տրիլեմայի, կամ երեքից մեկն ու մեկը պիտի ընդունել կամ նորը պիտի դնել: Եվ հետո՝ թվում է, որ մեկը թարգմանել է բնագրից, երկրորդը ռուսերենից:

Նորը (նորից) թարգմանելն էլ դժվար ձեռնարկ է, որովհետև Լը Սաժը լինելով 17-18 դարի գրող՝ լեզուն հնացած է, ունի արխայիկ ձևեր, որով ընտիր թարգմանություն տալու համար թարգմանիչը նախապես պիտի զբաղվի էպոխայի լեզվով,— նախապատրաստվի:

Թույլ եմ տալիս մի առաջարկ անելու — աչքի առաջ ունենալով, որ Պետհրատը իր պլանի մեջ ունի շատ ավելի նշանակալից, ընտիր թարգմանական գործեր և, նաև թղթի պակասություն, կարծում եմ, լավ կլիներ՝ «Ժիլ Բլասի» հրատարակությունը հանվեր պլանից: Ռուսական գրական օվկիանոսի համար թերություն կլիներ նրա պակասը, բայց մեր գրականության համար նա չդայլություն է: Ի դեպ, նրա թարգմանությունը[2] հայերեն կամ արևմտահայերի բարբառով Կ.Պոլսում թե Զմյուռնիայում տպված է:

Հարգանքներով՝ Ավետ. Իսահակյան

291. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1939, 3 փետրվարի, Երևան

Սիրելի Հակոբ ջան.

Ամենից առաջ սրտագին ուրախությունս հայտնիր թանկագին Մարիետային իր բարձր պարգևատրության[1] համար: Իրեն սիրողներին և գնահատողներին այստեղ մեծ ուրախություն պատճառեց այս: Վաղուց արժանի էր:

Ուրախ եմ նույնպես չատ, որ Гослитиздат*ը նրան է հանձնել թարգմանելու «Մհերս»[2] – կարծում եմ, որ Մարիետան՝ իբրև մեծ էրուդիցիայի տեր խելք, նուրբ և խորունկ պիտի հասկանա իմ կոնցեպցիան և հնարավոր չափով ադեկվատ հասցնել ռուս հասարակությանը: Հավատացած եմ դրան, և խնդրում եմ գործին սրտով կպչի:*

Հակոբ ջան, ես էլ քեզ շա՛տ կարոտել եմ, և ինչպես կուզեի մի-երկու չաբաթ միասին անցկացնեինք, քեֆ ա-նեինք, խոսեինք: Զգիտեմ ժամանակ և առողջություն պիտի ունենա՞մ գալ Մոսկվա տեսնելու թե քեզ, թե Մարիետային, թե բարեկամներիս և թե նոր Մոսկվան: Գուցե դու քեզ ճգես Երևան, որին չատ կարոտցած կլինես, գիտեմ: Գարնանը, Սասունցի Դավիթի հանդեսներին[3] արի:

Ես լավ եմ, պարապում եմ, հիմա կազմում եմ գրվածքներիս մի մեծ ժողովածու, չուտով կհանձնեմ տպագրության:

Առողջությունս վատ չէ, բայց լավ էլ չէ. սիրտս միշտ թուլլ է:

Ուղարկում եմ ահա «Մհերը» և այս բառացուցակը: Ներիր, որ ուշացրի. չա՛տ եմ խանգարվում զանազան ստիպողական գործերով[*]*: Ջմոռանամ քեզ խնդրել, որ հե-*

---

[*] *Ի դեպ, նամակդ ուշ հասավ ձեռքս. վաղարշը ուշ տեսավ ինձ* (ծանոթությունը՝ Ավ. Իսահակյանի):

տաքրքրվես իմանալ թե բանաստեղծութիւններիս փոքր ժողովածուն, որ տպում է Гослитиздат*ը, և պիտի լոյս տեսներ հունվարին, ինչո՞ւ ուշացավ[4]: Երբ վերջապես լոյս պիտի տեսնի:*

Ջերմագին բարևներ սիրելի Մարիետային, Լուսիկ Սարյանին, Աչխեն և Սաչա Բարխուդարյաններին[5], իրենց որդիներին, Նաիրի Զարյանին և համբուրներ քեզ:

Միշտ քո Ավետիք Իսահակյան

Հասցես
А.Исаакян
улица Г. Гукасяна, 12, кв. 10.

292. Մ<ԿՐՏԻՉ> ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1939, 10 փետրվարի, Երևան

Սիրելի ընկեր Մ. Ասլանյան.

Սպասեցի, որ գայիք մոտս՝ այս հոդվածը տանելու համար, չեկաք – հասկացա, որ մեկնել եք:

Ահա ուղարկում եմ խոստացածս:

Ձեր գնալուց հետո՝ առանձին նորութիւն չկա, միայն «Գրական թերթի» հին կազմը փոխվեց, խմբագիր է հանդիսանում հայ գրողներին առաջնորդող ընկ. Հրաչյա Գրիգորյանը:

Տեսնենք՝ ինչ արգասիք կունենա և այս չրջանը:

Հր. Գրիգորյանը եռանդուռ մարդ է, երիտասարդ ուժերին կարող է գործի լծել և սկսնակներից տաղանդներ հայտ բերել: Մեր գրականութիւնն էլ այսպիսի մի մարդ էր պետք, և եղավ:

Ջերմ բարևներով Ավետ. Իսահակյան

10.II.1939
Երևան

293. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ

1939, 19 ապրիլի, Երևան

Սիրելի Շիրազ.

Հին խոսք է, որ դաբաղը (կաշեգործը) սիրած կաշին շատ է գետնեգետնին տալիս: Դու մեծ տաղանդ ես, բայց պիտի բյուրեղանաս, որ անմահ բաներ թողնես:

Պիտի խտացնես, պիտի չա՛տ կարդաս – և կդառնաս մեր պոեզիայի հրաշալի ապագան:

Ա.Ի.

39 թ. ապրիլի 19

294. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՐՆԵՅՉՈՒԿԻՆ

1939, 30 ապրիլի, Երևան

Председателю правительственного шевченковского комитета тов. Корнейчуку

Киев

Глубокоуважаемый товарищ Корнейчук!

Приношу свою глубокую благодарность и признательность за присылку мне юбилейного Шевченковского издания[1], столь дорогого для меня, как память о тех чудесных дней[2], которые были посвещены юбилею гениального украинского поэта и кобзаря □Г. Г. Шевченко[3].

С товарищеским приветом

А. Исаакян

30/IV 39 г.

Ереван, Г. Гукасян, 12

295. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1939, 28 մայիսի, Երևան

Սիրելի Օլյա.

Երևի արդեն Նվարդը[1] գրեց քեզ, որ ես տեսել եմ ընկեր Հովիկ Մելիքյանին[2]: Ներողություն, որ մինչև հիմա չգրեցի քեզ, պատճառն այն էր, որ նոր բան չունեի ասելու:

Հովիկն ասում է այն, ինչ որ միշտ ասել է: Այսինքն,— որ ես իրավունք չունեմ օրենքից դուրս գործելու, ով որ լինի իմ տեղը, նույնը պիտի անեն, կամ ավելի վատը, քանի որ ես չատ բարյացակամ եմ և խորին հարգանքով լցված Օհաննեսի հիշատակի[3] հանդեպ:

15 տարի անցել է Օհաննեսի մեղնից հեռանալուց հետո. ամբողջ Միության համար հաստատված օրենքի համաձայն, որ ոչ մի բացառություն չի ընդունում, ժառանգները կորցրել են իրենց իրավունքները և Օհաննեսի գրական ժառանգությունը պատկանում է հիմա ժողովրդին: Եթե ես հակառակ գործեմ, ինձ դատի կտան և կպատժեն:

Իմ հարցին՝ թե ինչո՞ւ տիկին Թումանյանի նվերի մասին չհայտարարեցիք ո՛չ մի տող և ո՛չ մի ձևով, պատասխանեց այսպես.— քանի որ մեր ձեռքը չի անցել արխիվը, չէինք կարող հայտարարել. բայց երբ մեր ձեռքն անցնի, անպատճառ, հրապարակով կհայտնենք և կշնորհակալություն:

Ընտանիքը նվիրում է, և մեր կառավարությունն էլ ի նկատի ունենալով Օհաննեսի մի-երկու ժառանգի նեղ պայմանները, 50.000 ռուբլիով օգնություն է հատկացնում, իսկ եթե չեն ուզում նվիրել և չեն ուզում ընդունել նաև 50.000 ռուբլին, այլ ուզում են որ մենք գնահատենք թե մնացած անտիպ գրությունները և թե արխիվը, հավատացնում եմ քեզ, ասում է ինձ ընկ. Հովիկը, որ 10-15.000 ռուբլուց ավելի չի բռնե:

Այսպես ուրեմն, Հովիկի վերջնական խորհուրդն է, որ համաձայնեք Ձեր նախկին որոշումին, այսինքն՝ նվեր տալ. ամբողջ արխիվը հանձնել[4]: Դրա համար կուղարկենք մեկին՝ Նվարդին կամ մի ուրիշին՝ բոլոր ծախսերը հոգալով, որ գա և մանրամասն գրանցե թղթերն ու գրությունները, իսկ 50.000 ռուբլի կվճարվի երեք տարվա ընթացքում:

Սիրելի Օլյա, վերջիվերջո ամեն բան կախված է քեզնից: Եթե ինձ էլ խոսք կհասնի, կարծում եմ, որ ուրիշ ելք չկա, գոնե Երևանում այդպես է նրանց տրամադրությունը: Թերևս դիմեք Մոսկվա, Օհաննեսի մեծ հարգողին[5], եթե նա էլ հետաքրքրվի և նոր լուծում տա: Նրան պետք է լավ իրազեկ դարձնել:

Բարևներ մեր բոլորից:

Սրտագին բարևներով, միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

296. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<1939>[1], 29 Հուլիսի, Ծաղկաձոր

Սիրելի Գարեգին.

Գրում եմ չատ չտապ, որովհետև ավտոմեքենան սպասում է ընկեր Հուսիկին:

Խնդրում եմ, անպատճառ գաս մի քանի օրով մեզ մոտ հյուր: Գիտես, որ հրաշալի վանքեր կան:

Հարմարություններ կան հյուր ընդունելու, այնպես որ չես նեղվի և չենք նեղվի: Տունդ պահելու համար պատրաստ է ընկեր Հուսիկը. կարող է քնել տանդ և պահել. կամ, գտիր քո կնոջ ազգականներից:

Բարևներով Ավետիք

29.7. Ծաղկաձոր

297. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1939, 30 Հուլիսի, Ծաղկաձոր

Սիրելի ընկ. Ռուբեն.

Անցյալ Հանգստի օրը, կարծեմ, եկել եք այստեղ, ես Սևան էի գնացած և ցավում եմ, որ չկարողացա Ձեզ տեսնել:

Երևանից 15 օր է հեռացել եմ, թվում է, թե մի տարի է անցել, այնքան հարուստ տպավորություններով լցվից ժամանակս – Մարտունի, Վայոց Ձոր, Սյունիք տեսնելով, միայն ափսոս, չատ մակերեսային եղավ:

Հիմա անցնենք իմ գրքի մասին: Ամենից առաջ լսեցի, որ լույս է տեսել Սասմա Մհերը (թարգմանված)[1], եթե իրականություն է, խնդրում եմ, Ծաղկաձոր եկողների հետ կամ փոստով մի օրինակ ուղարկեք: Եվ հետո, ինչ վիճակումն է ժողովածուս[2]: Որքան հիշում եմ՝ ասացիք, որ օգոստոսի սկզբները ներքև կիջնի: Լավ կլիներ, որ վերջին սրբագրությունը ես տեսնեի, երևի այդ կլինի սեպտեմբերին: Ես չատ ուրախ կլինեմ, որ դանդաղ ընթանա գործը, իմ աչքս տեսնի և վերջապես արագության պաֆոսին չդոհվի:

Հույս ունեմ, որ մի օր նորից միջոց կգտնեք Ծաղկաձոր գալու, թերևս կարողանայիք մի քանի օր մնալ, լավ եղանակներ են զբոսնելու, սիրուն վայրեր կան:

Ջերմագին բարևներով Ձեր՝ Ավետիք Իսահակյան

298. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀՈՒԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

<1939>[1], 4 օգոստոսի, Ծաղկաձոր

Հարգելի ընկ. Ա. Ֆադեև[2].

Ձեր նամակն ստացա ուշացումով, որովհետև Երևանից բացակա էի (գտնվում էի Զանգեզուրում):

Յավոք, Մոսկվայի խորհրդակցությանը չեմ կարող մասնակցել, բայց պատրաստում եմ զեկուցում պլենումում[3] կարդալու համար:

Զեկուցման թեզերն են՝

1. Էպոսի դիցաբանական գծերը.

2. Փոքր Մհերի տիպը.

3. «Սասմա Մհերի» իմ մշակման կառուցվածքը[4]:

Հարգանքով՝ Ա. Իսահակյան

299. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

1939, 27 հոկտեմբերի, Մոսկվա[1]

Սիրելի Օննիկ.

Շնորհակալությամբ ստացա ուղարկածդ «Խ<որհրդային> գրականությունը» և ժամանակ գտա այս ջրապտույտի մեջ կարդալու հոդվածդ[2]: Ամենից առաջ ասեմ, որ թուղթ չունենալու պատճառով բաց-նամակի վրա եմ գրում: Գրել ես չա՛տ սրտանց, ջերմությամբ, սիրով – դրա համար հատկապես շնորհակալություններս: Քննադատը պիտի սիրե հեղինակին, որ հասկանա նրան. երբ սիրում ես, հասկանում ես. երբ հասկանում ես, կսիրես:

Հետո, երևում է, որ իմ մասին նախկին դրածները բոլորը կարդացել ես, նաև իմ գրեթե բոլոր գրածները: Շատ լավ ուսումնասիրություն է, լրիվ և լուրջ. միայն մի-երկու կետի մասին խոսք ունիմ ասելու, դա էլ Երևանում կասեմ: Առայժմ ջերմ բարևներ քեզ, Արամին[3] և Հակոբին[4]:

Ձեր Ավետիք Իսահակյան

300. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1939, 16 դեկտեմբերի, Բաքու

Սիրելի Սոֆիկ.

Այսօր գիշերը, ես, Հռիփ<սիմե> Պողոսյանը[1] և Նայիրին[2] մեկնում ենք Թիֆլիս: Նրանք գալիս են Երևան, իսկ ես մի քանի օր պիտի մնամ Թիֆլիզում, մի քիչ գործ ունեմ – վրացիների հետ, Ակակիա Ծերեթելի[3] թարգմանության[4] կապակցությամբ, և նաև Շալվա Դադիանիի[5] հետ:

Ես ողջ և առողջ եմ, ի՞նչ լուր կա Վիգենից և առհասարակ ի՞նչպես եք անում, ինչպես է բոլորիդ առողջությունը: Բագրատ Սերոբյանի մոտն եմ հյուր լինելու Թիֆլիզում:

Համբույրներ բոլորիդ –

Ավետիք

Թիֆլիզի հասցես՝ Тбилиси
Ул. Мачабели. 9
Баграт Серобяну

1940

301. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1940, 25 հունվարի, Երևան

Սիրելի ընկեր Ս. Սուքիասյան.

Շնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը և մանավանդ այս թանկագին նկարները՝ հավերժ սիրելի Վահանի տան[1] և նրանց գեղեցիկ գյուղի: Նայեցի տանը և սիրտս լցվեց «թախծանուշ» (Վահանի բառն է) հուշերով. այդ՝ երկու պատուհաններ ունեցող սենյակումն եմ ապրել 1905 թվին ամբողջ մի չաբաթ. աչքերս խփում եմ, և տեսնում եմ տերտերին, Վանիկին, եղբայրներին. և բոլոր օրերը կենդանանում են հոգուս մեջ. տեսնում եմ Վահանի պատանի դեմքը և լսում եմ նրա մեղմ ձայնը...

Հոդվածիդ[2] մասին խոսեցի «Գր<ական> թերթի» պատասխանատու [քարտուղա] խմբագրի՝ ընկեր Գ<ուրգեն> Բորյանի հետ. նույնիսկ որոշ տեղեր կարդացի մոտը. պատասխանեց թե՝ մենք չենք կարող ամբողջապես տպել, թերթը այդքան տեղ չի կարող տրամադրել, և այլն, և այլն:

Եվ եղավ այն, ինչ որ կտեսնիք:

Վահանին նվիրած երեկոն[3] շատ և շատ լավ անցավ. ահագին բազմություն կար և նույնչափ էլ ետ դարձան տեղ չլինելու պատճառով:

Երիտասարդ քննադատ Օնիկ Ղանալանյանը կարդաց Վահանի պոեզիայի մասին մի շատ գեղեցիկ, լավ ըմբռնած վերլուծում թե ցուցաբերում-ներկայացում, միայն կարճ էր: Հուշեր պատմեցինք՝ ես, Գ. Լևոնյանը և Ս. Զորյանը[1]. եղավ ընթերցում Վահանի պոեզիայից, երգ,

նվագ: Մի խոսքով չատ լավ անցավ. մի անգամ էս պարզվեց, որ Վահանը տակավին, և չատ երկար ժամանակներ, խոսում է հայ հասարակության հոգուն, կենդանի է, սիրով և վշտով, հայ մարդու սրտի մեջ:

Հոդվածդ կառնեմ և կկարդամ, հետաքրքրական է. ի միջի այլոց, այսօր տեսա նրա եղբայրների[5] հուշերի տետրակները. կարդում էին, երևի, հրատարակելու միտք ունին: Տպվում է Վահանի բանաստեղծությունները 20 մամուլի ծավալով[6]: Տպվում է և իմ բանաստեղծությունների և արձակ փոքր պատմվածքների[7] մի սուվար հատոր, մոտ 40 մամուլ. երևի մի-երկու ամսից հետո լույս կտեսնի:

Ես դեկտեմբերին մի քանի օրով եղա Նիզամիի[8] հոբելյանական նախապատրաստական խորհրդակցության համար: Թարգմանելու ենք «Խոսրով և Շիրին» պոեման, 14.000 տող. ես էլ եմ խմբագրական կազմի մեջ:

Այս տարի հոբելյանների մի չարք ունենք – Մայակովսկի, Ղ. Աղայան[9], Ա. Ծերեթելի[10], Լենինի 70-ամյակ՝ ծննդյան, Հայաստանի խորհրդայնացման[11] 20-ամյակ... մի խոսքով ժամանակ չպիտի ունենանք մեր անձնական ստեղծագործությունների համար:

Լավ եղեք, առողջ և ուրախ:

Բարևներով Ձեր Ավետիք Իսահակյան

302. ՊԱՀԱՐԵԻՆ

1940, 26 հունվարի, Երևան

Շատ սիրելի Պահարև.

Մեծ չնորհակալությամբ ստացել եմ քո սիրալեզ նամակը և լուսանկարները, որոնք կմնան լավ հուշերի[1] համար:

Նամակիդ ուշ եմ պատասխանում, որովհետև մոտ տասն օր հիվանդացել էի գրիպով և գրեթե չէի պարապում, հենց որ թղթի էի նայում՝ փռշտում էի: Հիմա լավ եմ, արդեն փողոց եմ ելնում և գործ եմ տեսնում: Այս տարի տպվում է, այսինքն՝ հենց հիմա մամուլի տակ է Բանաստեղծություններիս և արձակներիս մի մեծ հատոր[2], մոտ 40 մամուլ (600 էջ), երևի մի-երկու ամսից հետո լույս աշխարհ կելնի: Շատ նորություններ կգտնես այս հատորի մեջ:

Քաղաքիս նորությունն այն է, որ այս երկրորդ գիշերն է ապրում ենք մթության մեջ, քաղաքը դիմակավորված է, միայն կապույտ լույսեր են վառվում, կապույտ լապտերներ. երկու գիշեր ևս պիտի ապրենք դիմակավորված: Շատ խորհրդավոր է դարձել քաղաքը, – կապույտ տրամվայներ, կապույտ ավտոներ, կապույտ պատուհաններ: Մի ուրիշ զգայնություն ես ստանում, կարծես, գտնվում ես մի մթնա-կապույտ հեքիաթային աշխարհում:

Սրտագին չնորհակալություն քո և Մկրտիչի[3] այն ջերմ զգացմունքների համար, որ ունեք իմ հանդեպ. ես այդ վաղուց գիտեմ և անկեղծորեն զգացված եմ (զգացված ճիշտ ձևն է тронут*):*

Փոխադարձ բարևներ կնոջս կողմից:

Ջերմագին բարևներս քեզ, Մկրտիչին, նրա կնոջը, բոլոր ընկերներին և սիրելի հորաքույրերիդ:

Միշտ ձեր՝ Ավետիք Իսահակյան

Հ. Գ.– Քեզնից և Մկրտիչից մի բան եմ խնդրում:

Իմացած եղեք, ով հայ ժողովուրդ, որ մենք Երևանում տոնելու ենք Ա. Ծերենցի 100-ամյակը (ծննդի), ես էլ հոբելյանական նախագահ եմ առաջարկված մեր Գրողների միության կողմից. բայց այդ չէ կարևորը, այլ այն, որ հոդվածներ պիտի գրեմ Ա. Ծերենցի մասին, սակայն

նյութեր չունեմ, շատ բան պետք չէ – միայն խնդրում եմ, որ եթե հոդվածները կլինի «Заря Востока»[4] և «Խորհ<րդային> Վրաստանի»[5] մեջ, կտրեք և կտրոնները ուղարկեք ինձ, որովհետև այդ թերթերը մեզ մոտ հազվադեպ են: Այսքան:

Նորից Ձեր՝ Ա. Խաչակյան

303. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ

1940, 20 փետրվարի, Երևան

Սիրելի Օննիկ.

Ուղարկում եմ, ուրեմն, «Աբովյանը»[1], «Գրակ<ան> թերթն» էլ է վերցրել. չգիտեմ ամբողջական պիտի տպեն, թե պիտի խուզեն. ուզում եք այն տեսեք և ներդաշնակեք. միատեսակ լինի. սակայն չազ չշինեք. ուրիշից բաներ առնել, հագցնել նրա հետ. (մեղադրանքը քո հասցեով չէ):

Ես ճառիս ձեռագիրը չունեմ, լավ կլիներ որ դոնե այս մեքենագրածդ ունենայի, եթե՝ իհարկե՝ փոփոխություն պիտի կրե:

Ընդ սմին, սրա հետ միասին ուղարկում եմ «Հայրենիքիս»[2] ոտանավորը, կուզեի որ տպեիք «Խորհ<րդային> գրականութ<յան>» մեջ. ընկեր Վահանի[3] հետ խոսել եմ, համաձայն է. բանաստեղծությունս ուղղված է. այդ աչքի առաջ կունենաք:

Երկու օր առաջ Թբիլիսիի ռադիոն հաղորդել էր այս բանաստեղծությունս:

Այսօր տնից դուրս գալու չեմ, կոկորդս բորբոքված է: Եթե ժամանակ ունես, շատ ուրախ կլինեի երեկոյան 6-7 ժամերից հետո անցնել ինձ մոտ:

Բարևներով Ավետ. Խաչակյան

304. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1940, 7 մարտի, Երևան

Սիրելի Հակոբ ջան.

Ներողություն, որ մինչև հիմա, գնալուցս ի վեր[1], մի երկտող չգրեցի քեզ – ծուլություն, ջանջալություն, հետաձգում, և վերջապես գիրքս տպում էի, ուզում էի վերջացած ուղարկել քեզ, բայց ուշացավ:

Հենց որ ստացա ընկ. Սուզաննա Խիթարովայից[2] հեռագիրը՝ որ չտապեցնեմ նյութերի առաքումը, հավաքեցի ուժերս ու բարկությունս և կարողացա Պետհրատից ստանալ այս ОТТИСК*-ները[3] և ճամբել քեզ:*

Սիրելի Հակոբս, այն ոտանավորներս որ կարմիր նշան ունին, դրանք չկան քո ունեցած գրքի մեջ (իմ բանաստեղծություններիդ), որոշ մասով հին են, որոշ մասով նոր են. սրանցից որը հավանում եք թարգմանեցեք. թողնում եմ ձեր ճաշակին:

Ներողություն խնդրիր ընկեր Խիթարովայից և շատ ջերմ բարևներ հաղորդիր նրան, նաև ընկ. Եվգենովին[4]:

Ես լավ եմ, պարապում եմ: Շուտով լույս կտեսնի գրվածքներս երկու հատորով՝ չափածո և արձակ:

Քույրդ ինձ ասաց, որ մարտին-ապրիլին ուզում ես գալ Երևան. չեմ հավատում, բայց քաղցր է հուսալ և սպասել:

Կինս և տղաս բարևում են քեզ և թանկագին Մարիետային:

Ուրիշ ի՞նչ գրեմ. կանք, էլի՛. որ գաս, մի փոքր աշխուժություն կբերես մեր թմրած կյանքին. մի-երկու լավ քեֆ անենք:

Սրտագին բարևներ Մարիետային, Լուսիկին[5], Աչխենին, Արփիկին[6] (Թումանյան), Սարիկին[7]. համբուրում եմ քեզ:

Միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

Հ. Գ. Ջմոռանաս բարևել Դերենիկին և Ն. Զարյանին: Գրիր այս թղթերը ստանալուդ մասին:

Ավետիք

Հասցես
А. Исаакян
12 ул. Г. Гукасяна, кв. 10.
Ереван

305. ԱՇՈՏ ԳՐԱՇԻՒՆ

1940, 24 մարտի, Երևան

Սիրելի Գրաշի.

Իր ժամանակին ստացել եմ սիրալիր նամակդ և բայաթիներիդ չքնաղ գիրքը[1]:

Շատ և շատ չնորհակալ եմ քո հարգալից ուշադրության համար:

Վերջերս չափազանց զբաղված էի «Ընտիր երկերիս» հրատարակության գործով. վերջապես առաջին հատորը լույս տեսավ պահանջին անհամապատասխան տիրաժով (5000), որ իրար գլուխ կոտրելով մի երկու օրում սպառվեց: II հատորը, որի մեջն է «Աբու-Լալան», մի քանի օրից լույս կտեսնի:

Դա ուղղած օրինակն է:

Ինչպե՞ս պիտի կազմակերպել «Աբու-Լալայի» թարգմանությունը. արդյոք տողացի թարգմանությունը ինչպե՞ս պիտի լինի. ռուսերե՞ն թարգմանել, թե՞ դու կամ մի ուրիշը՝ ուղղակի հայերենից աղբյնջանական լեզվի: Այս հանգամանքը պիտի պարզել: Իհարկե այստեղ կա լավ ռուսերեն գիտցող: Բայց ո՞վ պիտի տա նրա հոնորարը: Թե՞ դուք բաքվում այդ գործը կկատարեք: Գրիր այս մասին:

Հիմա դառնանք քո թարգմանություններին՝ բայթիներին: Բոլորը կարդացի և շատ-շատ հավանեցի, և մի հոդված եմ պատրաստում, մի գնահատական, «Գրական թերթի» համար[2]: Թարգմանություն չէ, այլ, շատերի նկատմամբ, կարող եմ ասել, որ ստեղծագործություն է, հայացրած միանգամայն: Ապրե՛ս, զորանա՛ս: Զգացված, ապրած, էմոցիոնալ հագեցած գեղեցկություններ են դարձել:

... Բարևներ մեր հայ ընկերներին, բոլորին:

Սպասում եմ նամակիդ և, մանավանդ, քո գալուն:

Սիրով և կարոտով Ավետիք Իսահակյան

306. ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ

1940, 10 ապրիլի, Երևան

Издательству Детской литературы «Детиздат»
Москва

Уважаемые товарищи!

Подтверждая получение Вашего письма от 13.II с.г., я очень извиняюсь за задержку моего ответа, что можно обьяснить моей чрезмерной перегруженностью работой.

К моему великому сожалению, я принужден отказаться от Вашего лестного для меня предложения[1], о чем более подробно и мотивированно я пишу тов. М. Л. Атабекян.

С искр. уважением *А.И.*

10/IV 40 г.
Ереван

307. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

1940, 10 ապրիլի, Երևան

Глубокоуважаемая Маргарита Леоновна.

Ваше письмо от 14/II - с.г. я получил своевременно. Извиняюсь за долгое молчание. Был очень занят выходом моих сочинений в 2-х томах. И сейчас я крайне перегружен очередными своими работами, которые я обязан выполнить к сроку, так как правительство всячески идет мне навстречу.

Я весьма сажалею, что принужден отказаться от участия в сборнике, но я уже беседовал об этом с Д. Демирчяном, который охотно согласился взять на себя составление вступительного слова и помочь Вам всячески. Он великолепно справится с этим делом, так как предмет ему и близок, и хорошо знаком.

Т. Д. Демирчян вчера выехал в Москву. Вы можете договориться там с ним. Вероятно он остановится в гост. «Москва», в противном случае адрес его можете добыть в Союзе Писателей.

Снова извиняюсь за невольный отказ от своего слова. Мои лета и здоровье, к сажалению, не дают мне возможности быть столь перегруженным работой.

С сердечным приветом

Ваш *А<ветик> И<саакян>*

10. IV. 40 г.
Ереван

308. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1940, 17 մայիսի, Երևան

Սիրելի Մկրտիչ.

Սիրալիր նամակդ վաղուց ստացել եմ և միշտ սեղանիս վրա էր՝ պատասխանելու համար (և այս էլ իմացիր, որ անթիվ նամակներ նույն վիճակումն են, հազիվ եմ կարողանում գործի հետ կապված նամակներին համեմատաբար չտապ պատասխանել) միշտ ուշանում էր, նամանավանդ որ ապրիլի վերջերին ուզում էի Թբիլիսի և Վրաստան գալ, մի փոքր շրջագայելու համար. Քութայիսին, Կախեթիան տեսնելու, որը ձգձգվում է զանազան կարևոր գործերի պատճառով, սակայն անպատճառ գալու եմ, թերևս այս ամսու վերջին: Մի խոսքով՝ ներողություն, որ այսպես ուշ եմ պատասխանում:

Առհասարակ չա՜տ եմ զբաղված կարևոր և մանավանդ անպետք գործերով. օրերը հալվում են, շատ գրելիքներ ունիմ, բայց չեմ կարող կենտրոնանալ: «Գործ չեմ անում, գործից էլ չեմ պրծնում» – ահա այսպես եմ բանաձևել իմ դրությունը և իմ պատասխանը:

Այս դրության մեջ են նաև Միության շատ ուրիշ գրողները. չեն թողնում ամփոփվել իր գրական գործերով, իր ստեղծագործությամբ տարվել, ստիպում են հասարակական գործունեության, կարծես գրելը հասարակական գործ չէ: Արդյունքը այն է լինում, որ աստպարեզում բարձր գեղարվեստական գործ չկա, չի ծագում:

Գրքերիս հրատարակությունը[1] շատ ժամանակ կլանեց. ամեն բանի մասին պիտի հոգալ, որպեսզի արտաքինով էլ գեղեցիկ գործ հրապարակ գար, սակայն ես դժգոհ եմ – կան վրիպակներ, ջնջված տառեր, մրոտ տեղեր:

Գրքիս տիրաժը չա՜տ քիչ է – 5000-ական, իսկ պահանջը չափազանց մեծ, եթե 40-50.000 լիներ, հազիվ բա-

վարարեր պահանջին, որ տեղում է մեծ Միության բազմաթիվ վայրերից:

Նույնիսկ ինձ դրամով չէին վաճառում մի քանի օրինակից ավելի, ասելով որ՝ պլանավորված է, պետք է հասցնել, ստիպված, պայմանով, զանազան վայրեր և հիմնարկների:

Ուրախալի, չափազանց ուրախալի երևույթ է, որ հայ հասարակայնությունը այսպիսի ահռելի սեր ունի դեպի գրականությունը, հացի ու չաքարի հավասար հերթեր կային գրախանութներում և ապակիներ չարդել, սեղաններ տապալել:

Ուրիշ ի՞նչ գրեմ, սիրելիս, ես առայժմ լավ եմ, առողջ եմ բավարար, և եթե հաջողվեց գալ Թբիլիսի, երկար կխոսինք:

Ջերմագին բարևներ ձերոնց բոլորին և ընկերներին:

Սրտագին բարևներով,

միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

17. V. 40.
Երևան

309. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, 18 Հունիսի, Բուրթայլիսի

Սիրելի Սոֆի.

Այս քանի օր է Բուրթայլիսումն եմ. լավ ընդունեցին վրացիները ինձ. դյուրություններ են տալիս, ուր որ ուզում եմ գնալ տեսնելու: Պիտի գնամ Գելատի և ուրիշ վայրեր, այստեղից էլ Բորժոմ, Բակուրիանի և այլն, և այլն:

Ուրեմն, Փարիզն ընկավ[1], ափսո՛ս:

Տեսնես ի՞նչ եղան մեր մոտիկները և մեր Մուսան[2]: Բարևներ, համբույրներ բոլորիդ:

Ավ. Իսահակյան

18/VI 40
Քութայիսի

310. ՔՈՒԹԱՅԻՍԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

1940, 18 Հունիսի, Քութայիսի

Ողջույն Քութ<այիսի> Դրամատիկական Թատրոնի 60-ամ<յա> հոբելյանին.

Ինձ համար անձնապես չատ հաճելի և չոյիչ է [лестно], *որ իմ առաջին այցը Իմերեթիայի չքնաղ մայրաքաղաքին՝ գուգադիպում է նրա թատրոնի գոյության 60-ամյակի հետ[1]:*

Քութայիսի հասարակայնությունը խնդությամբ և երախտագիտությամբ տոնում է փառավոր անցյալը իր թատրոնի, որ սերունդներին [մոտ] մատակարարել է [մեծատաղանդ արվեստագետների] արվեստի բարձր ճաշակ, ստեղծագործական [իլիուզ] իլյուզիա, որ դաստիարակել է [բարձր] անձնազոհ հայրենասիրությամբ, դեմոկրատիայի և համամարդկային գաղափարներով:

Մեծատաղանդ Մեսխիեշվիլի[2], Մարջանաշվիլի[3], Աբաշ<իձե> Վասոյի[4], Կ. Մեսխիի[5] պայծառ անուններն են զարդարել այդ անցյալը:

Բոլոր սրտով ողջունում եմ Ք<ութայ>իսի թատրոնի 60-ամյա հոբելյանը և ցանկանում եմ, որ նա՝ զինված բոլոր Վրաստանին սիրելի այն մեծատաղանդ արտիստների

տրադիցիաներով, ավելի խոշոր նվաճումներ ունենա, մեր մեծ էպոխայի՝ սոցիալիզմի գաղափարների բեմերից մեկը հանդիսանա, ծաղկի և բարգավաճի և դիմավորի չա՛տ և չա՛տ հոբելյանների:

Կեցցե՛ Քութայիսի վաստակավոր թատրոնը:

Կեցցե՛ն նրա մշակները:

Կեցցե՛ ազատ, գեղեցիկ Խ. Վրաստանը:

Ավետիք Իսահակյան

18.VI.40
Кутаиси

311. ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ

1940, 22 Հունիսի, Բորժոմ[1]

Թբիլիսի, Գրողների միությանը.

Վրաստանում ճամփորդելիս հիվանդացա և, ցավոք, զրկված եմ հնարավորությունից՝ անձամբ մասնակցելու վրաց ժողովրդի լուսավոր ապագայի բանաստեղծ-մարտիկի հիշատակի մեծարմանը:

Երջանիկ եմ, որ գտնվում եմ նրա փառավոր հայրենիքում:

Ամենուրեք, որտեղ եղա՝ Կախեթիայում, Իմերեթիայում՝ լսեցի ժողովրդի կողմից երգվող Ա. Ծերեթելու բանաստեղծությունները:

Ա. Ծերեթելու նվիրական երազանքը կատարվեց...

Կեցցե՛ վրաց դրականությունը:

Կեցցե՛ ժողովուրդների եղբայրությունը:

Ա. Իսահակյան

312. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՑԱՆԻՆ

1940, 24 Հունիսի, Բորժոմ

Շա՛տ սիրելի Արամ.

Ես մոտ մի ամիս է թողել եմ Երևանը՝ Վրաստանում ճամբորդելու համար, տեսնելու երկիրը, ժողովուրդը, կենցաղը և հնութիւնները ու նորութիւնները. եղա Կախեթիա, Իմերեթիա – նամակդ հասավ ինձ ճանապարհին՝ Թիֆլիզում, Կախեթիայից վերադարձիս:

Հիմա քո կարոտած ծննդավայրի չեմքի առաջ պատասխանում եմ սրտագին նամակիդ՝ գրված միշտ անկեղծութիյամբ և մեծ սիրով:

Արամ ջան, ամենից առաջ թե ես և թե բոլոր ընկերները շատ և շատ ուրախ ենք, որ ողջ և առողջ ես[1], և մեծահույս ենք քեզ չուտով տեսնելու: Դու, անշուշտ գիտես, թե որքա՛ն էինք մտահոգված քո ճակատագրով, բայց վերջը լավ՝ ամեն բան լավ: Ես միշտ սրտի տրոփով հետաքրքրվել եմ քո բախտով և մեր սիրելի Կարոյից միշտ ստացել եմ տեղեկութիյուններ քո մասին:

Շատ ուրախ եմ, որ բարձր տրամադրութիյուն ունես, չես ընկճվել, և հիմա այնպես եռանդով և ոգևորութիյամբ հետաքրքրվում ես քո տարերքով՝ գրականութիյամբ, զբաղվում ես, կարդում, ուսումնասիրում: Վերջապես լույս տեսավ մի ամիս առաջ «Ընտիր երկերիս» երկու հատորները՝ չքեղ տպագրութիյամբ. 5.000-ական տիրաժով. և մի քանի օրվա մեջ ձեռքեձեռք խլեցին, հազիվ, օրինակի համար, մի 20 հատ կարողացան Թիֆլիզ հասցնել. բոլորը սպառվեցին Երևանում և մասամբ Լենինականում: Հազվագյուտ օրինակներ կարելի է ձեռք բերել ուրիշներից կրկնակի գներով: Եթե բախտ ունենանք քեզ մեր մեջ տեսնելու, կարծում եմ, որ Պետհրատի պահեստից, թերևս պոկենք մի-մի օրինակ:

Ինչքան որ ինձ տվին, մի քանի անգամ էլ տվածից ավել գնեցի, նվիրեցի բարեկամներին, նորից չատերը դժգոհ մնացին ինձնից:

Սիրելի՛ս, ուզեցել ես իմ «Արձակ էջերը»[2] – հենց որ Երևան հասնեմ, մի օրինակ կուղարկեմ քեզ: Գրական նորություններ Երևանում, երևի լսած կաս, հետևյալներն են.– Րաֆֆիի «Սամվելը»[3] 8000 տիրաժով, որ նույնպես գոլորշիացավ, Հ. Մանանդյանի «Տիգրան Մեծը»[4], որը դեռ կա հրապարակում, դանդաղ է վաճառվում. Խաչիկ Սամվելյանի «Հայ իրավունքի պատմությունը»՝ հմուտ ուսումնասիրություն, որ նորից դանդաղ է վաճառվում: Հիմա լույս պիտի տեսած լինի Վահան Տերյանի «Բանաստեղծություններ»[5] լիակատար հավաքածուն, որի խմբագիրը ես էի. հավաքել ենք մի մեծ հատորի մեջ (29 մամուլ) Վահանի բոլոր տպված ու անտիպ բանաստեղծությունները, վարիանտները, մի խոսքով ինչ-որ կարողացել ենք գտնել: Ես որ ճամբու ընկա, վերջին էջերն էին տպվում:

Մոտ օրերս նույնպես լույս էր տեսնելու Խաչ. Կանայանի մի ուսումնասիրությունը – «Ա. Իսահակյանի բառարանը թե լեզուն»[6] լավ չեմ հիշում. այնքան գիտեմ, որ իմ գործածած բառերի քանակի և որակի մասին էր. նոր և յուրահատուկ ուսումնասիրություն:

Ջմոռանամ ասել. որ այս տարի լույս տեսավ մեր Օննիկ Ղանալանյանի մոնոգրաֆիան «Իսահակյանի լիրիկան»[7], սրտով, սիրով գրված գործ, երիտասարդ քննադատի առաջին, հաջողված մի փորձ:

Լույս են տեսել նաև՝ Ս. Տարոնցու[8], Շիրազի[9], Վահան Գրիգորյանի[10], Նաիրի Զարյանի[11] բանաստեղծությունների հավաքածուները, նաև Վեսպերի[12] և Սարմենի[13] ժողովածուները:

Տեսնում ես, բավական առատ հունձ կա:

Արամ չան, ուզում եմ Ախալցխա անցնել մի-երկու օրով. անպատճառ ձերոնց կտեսնեմ. միայն լսել եմ թե «пропуск» է հարկավոր. եթե այդ չեղավ, կամ դյուրին եղավ ձեռք բերելը կգնամ. տեսնեմ՝ ի՞նչ վիճակի մեջ է իմ

վաղեմի ծանոթ Ախալցխան, ուր անցկացրել եմ չատ լավ օրեր ու ժամեր, իմ բուռն երիտասարդության օրերին:

Շա՛տ և շա՛տ չնորհակալ եմ, որ միչտ գրում ես ինձ. և ներողություն եմ խնդրում որ ուշ կամ քիչ եմ պատասխանում. ժամանակ չեմ հասցնում, չատ եմ զբաղված կարևոր և անկարևոր գործերով: Այս տարի ձեռնարկում եմ «Ուստա Կարոն» ավարտելու, թեև չատ հուզված ժամանակ է, չեք իմանում — ե՞րբ է խաղաղվելու և ինչպե՞ս: Այդ բոլորը ազդում է իմ ներվային սիստեմի վրա և հետևապես հանգիստ աչխատելու վրա:

Ցանկանում եմ քեզ առողջություն, տոկունություն, արիություն. ի սրտե ցանկանում եմ քեզ չուտափոյթ վերադարձ:

Համբույրներով միչտ քո՝ Ավետ. Իսահակյան

313. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ

1940, 24 Հունիսի, Բորժոմ

Սիրելի Ռուբեն.

Վերջապես երկար թափառելուց հետո՝ կանգ առա Բորժոմում: Մի քիչ հիվանդ եմ, «ջրփոխ» եմ եղել, ստամոքսս խանգարվել է: Ուրեմն եղա Կախեթիա, Իմերեթիա, կգնամ Ախալցխա, հետո էլ Աղ-Բուլախ, Ծալկա: Ուստա Կարոն եղել է վերջին վայրերը: Հուսով եմ, որ առողջությունդ լավ է: Բարևիր ընկերներին և ինձ հարցնողներին:

Եթե գրական նորություններ ունես անհապաղ ասելու, գրիր Թիֆլիզ՝ Մկրտիչ Ասլանյանի վրա N 6 կամ Մարտին Քարամյանի վրա: Քութայիս գնացի Մ. Քարամյանի հետ, լավ տղա է:

Լույս տեսա՞վ, արդյոք, Վ. Տերյանը և Խ. Կանայանի գրքույկը Իսահակյանի մասին:

Կարոտալի բարևներով քո՝ Ավետ. Իսահակյան

314. ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻՆ

1940, 25 Հունիսի, Բորժոմ

Սիրելի Գեղամ.

Ինչպես տեսնում ես, հիմա Բորժոմ եմ. Վրաստանում թափառելով «ջրփոխ» եղա, ստամոքսս խանգարվեց, հիմա քաջառողջ եմ և մեկնում եմ Ախալցխա և Աբաստուման. այնտեղից էլ կդառնամ Թիֆլիզ, գնալու եմ Ապ-Բուրախ և Ծալկա[1]. Հույների և հայերի մի փոքր գավառակ է, ուր աշխատել է Ուստա Կարոս, հույների մոտ, նրանցից որմնադրական արհեստ սովորելու ընթացքին. աչքովս ուզում եմ տեսնել այդ վայրը. եթե Ուստա Կարոս փչում է, գոնե ես ճիշտ խոսեմ, նկարագրեմ:

Վրաստանում եղա Կախեթիա, Իմերեթիա. շատ լավ ընդունեցին վրացի ընկերները և իշխանության մարդիկ. կառք ու ավտո տվին, հետս մարդ դրին, կերանք-խմեցինք: Լավ տպավորություն ստացա:

Ցավում եմ, որ հիվանդությանս պատճառով չկարողացա Թիֆլիզում ներկա լինել Ա. Մերեթելու հանդեսներին. թեև խոստացել էի, բայց հեռագրեցի Բորժոմից և չնորհավորեցի:

Սիրելի Գեղամ, նամակիդ հետ գրեցի նաև ընկեր Վահան Գրիգորյանին, հուսալով, որ մեկնումեկդ կլինեք Երևանում: Դրամս հատնելու վրա է, Թբիլիսի դարձիս գրեթե բան չեմ ունենա, ուստի խնդրում եմ լիտֆոնդից փոխառության և կամ ինչ անունով լինի, ինձ հասցնեք 400-500 ռուբլի՝ հետևյալ հասցեով Тбилиси, ул. Дзержинская 6, Микиртич Асланян. *Հանձնել ինձ:*

Եթե հնարավոր չէ, խնդրում եմ մի երկու տողով հայտնեք ինձ և Թբիլիսում փոխառություն կանեմ:

Երևանում կլինիմ հուլիսի 8-10-ին. ուրեմն մի ամիս ու կիսու չափ կլինի բացակայությունս. բավական կարոտել եմ Երևանին, նրա բովանդակությանը, մեր տանը, ընկերներին, ջրին ու Ջեկոյիս՝ չանս:

Հուսով եմ, որ լավ-լավ եք: Ջերմ բարևներ բոլոր ընկերներին և քեզ ու կնոջդ:

Սիրով միշտ ձեր՝ Ավետ. Իսահակյան

315. ՄԱՐՏԻՆ <ՔԱՐԱՄՅԱՆԻՆ>

1940, 29 Հունիսի, Բորժոմ

Սիրելի Մարտին ջան.

Շա՜տ ուրախացա, որ պիտի գաս: Ի՜նչ լավ եղավ, միասին կգնանք: Հենց ուզում էի վաղը գնալ. ուրեմն կսպասեմ գալուդ. չուտ արի:

Մեկ էլ – տես Մկր<տիչ> Ասլանյանին, բարևիր և ասա, որ Երևանից թերևս փող տեղափոխեն ինձ համար. նրա հասցեն եմ տվել, թո՛ղ պահի, մինչև վերադարձս. փողերս հատնելու վրա է:

Շտապում եմ:

Ջերմ բարևներով բոլորի կողմից և իմ կողմից:

Քո Ավետիք Իսահակյան

29-6-40
Բորժոմ

316. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, 2 Հուլիսի, Աբաստումանի[1]

Սիրելի Սոֆի.

Քութայիսից եկա Բորժոմ, Ցաքվերա, Լիբանի, Բակուրիանի[2] *– հրաշալի վայրեր են. մի տաս օր թափառելուց հետո Աբաստուման եմ, ամսուս 4-ին կգնամ Ախալցխա,*

ուր եղա մի օր, հիմա կմնամ մի քանի օր, խոստացա: Վարսիկի Նարեկը կբերեմ, եթե գտնեմ ծերուկին: Նամակդ ստացա: Ի՞նչ գործ ունեի Հոբելյանին: Ախալցխայից, եթե Ախալքալակ չգնացի, Բորժոմի վրայով կգառնամ Թիֆլիզ. մի տեղ էլ պիտի գնամ – Բելի-Կլյուչ[3]. Հետո կգամ տուն: Ինչպես երևում է, նամակներս չես ստացել. չորս հատ նամակ եմ գրել, փակ և բաց: Բարևներ և համբույրներ բոլորիդ:

Ավետիք

317. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, 7 Հուլիսի, Ախալցխա[1]

Սիրելի Սոֆյա.

Մի քանի օր է Ախալցխայումն եմ. ամբողջ քաղաքը ոտքի վրա է. տնից տուն են <տանում>. մեծ հարգանքներ և մեծ սեր. չեն թողնում, որ գնամ. Աբասթումանիից սկսած արքայական ընդունելություն: Նվիրեցին մի հրաշալի արծաթագործ, նուրբ գրիչ: Կանչում են գյուղերից և Ախալքալաքից, բայց վերջին տեղը չեմ գնա: Մի-երկու գյուղ պիտի գնամ, կառավարությունը տրամադրել է ավտոմոբիլ: Երեկ տեղի ունեցավ այստեղ Ա. Ծերեթելու հոբելյանական հանդես: Ես ևս ելույթ ունեցա, լավ անցավ:

Շա՜տ հոգնած եմ, թե՛ կերուխումից, թե՛ չրջագայելուց. երևի 11-12-ին ամսիս, կմեկնեմ այստեղից, մի երկու օր կմնամ Բորժոմ, և կգնամ Թիֆլիզ. մինչև Բորժոմ երեւտասարդներ պիտի գան հետս՝ ուղեկցելու...

Համբույրներ բոլորիդ՝ Ավետիք

318. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1940, 9 Հուլիսի, Ախալցխա

Սիրելի Մկրտիչ.

Որքան հիշում եմ՝ քեզ մի նամակ գրել եմ, բաց-նամակ. հիմա գրում եմ, որ երևանից քո հասցեով փող պիտի գա՝ ինձ համար. չգիտեմ եկել է թե չի եկել. խնդրում եմ ինձ տեղափոխես 200 ռուբլի հետևյալ հասցեով.

Боржом-Ликани
Санат. В.Ц.С.П.С.
Корпус , Доктор София
Георгиевна Мазманова

Բժշկուհի Մազմանովա: Հեռագրով տեղափոխիր:

Հետս է Մարտինը[1]: Մոռացա ասել, որ հեռագրի հասցեն կարճ է՝

Боржом. Санатория ВЦСПС
Доктор Мазманова

Կանխապես չնորհակալութ<յամբ> և համբույրով

քո Ավետիք Իսահակյան

319. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, 13 Հուլիսի, Բորժոմ

Սիրելի Սոֆյա.

Ախալցխայից եկա Բորժոմ. չատ մեծ պատիվներ տվին այնտեղ. ուղարկում եմ տեղական թերթի կտորը: Նվիրեցին գրիչ-թանաքամանի արծաթե-ոսկեջրած գարնիտուր, չատ մեծ արվեստով չինված. հրաշալի գործ, 1000 ռուբլուց ավելի արժեքավոր:

Ի միջի այլոց – գնել եմ 10 պակետ լավ տեսակի սուրճ, մոկկա. Բելայի[1] համար մի օձե բրասլետ՝ թևի համար, և մի քիչ էլ չորեղեն, Վիգենի համար խակի կտոր, ինձ մի չիվիոտ[2] չալվարցու և չապիկի նուրբ կտորներ, չիֆոն[3]:

Աբասթումանի և մանավանդ Բորժոմի կլիման շատ լավ է ներգործում սրտիս. թեթև եմ շնչում, թրթռոց չունեմ, մեղմ կլիմա է, ամբողջապես сосна (sapin) *անտառներ շուրջը: Վաղը գնում եմ մոտիկ Տաբուցիայի[4] լիճը, ուր հայ գյուղ կա, հրավիրված եմ. այնտեղից էլ գնում եմ Սուրամ[5], որ Թիֆլիզի և Բաթումի մեջտեղն է, նշանավոր թունելի բերանը, հին բերդ ունի, և շատ հայ կա: 17-ին Թիֆլիզ կլինեմ: Ուզում էի Բելի-Կլյուչ գնալ, բայց ուշ է արդեն:*

Շատ նյութ եմ հավաքել. արդեն նյութերի մեջ խեղդված եմ, բայց նորից ագահ եմ նոր բան տեսնելու և լսելու:

Վրացիք լավ ընդունեցին ինձ ամեն տեղ. ավտո տվին, և ուղեկիցներ, երբեք մենակ չեմ ճամփորդում, այլ միշտ ընկեր կա հետս, օգնում է, տոմսի, տեղավորելու, և այլն, և այլն: Վրացի ուսանողներն էլ ճանաչեցին ինձ և խորապես հարգում են, իսկ հայերը՝ գյուղ ու քաղաք՝ ուղղակի խելագարվեցին:

Վարսիկի հորեղբորը չգտան. Նարեկը ձեռք չընկավ, գոնե պիտի անունը ասեր, տունը և կամ մի հայտնի ազգականի անուն տար, որ գտնեին. 15.000 հայություն կա Ախլցխա, ո՛նց իմանային:

Բարևներ բոլորիդ՝ Վիգենին, Բելային, Գյուլիզարին:

Համբույրներով՝ Ավետիք

320. ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ

1940, 15 Հուլիսի, Բորժոմ

Սիրելի Մարտին.

Հենց հիմա ստացա բացիկդ: Շնորհակալությամբ ստացա դրամը՝ 200 ռուբլի:

Որոշմունքիս համաձայն, ուզում էի ամսի 16-ին մեկնել, բայց Հեղինեն էլ ուզում է Թբիլիսի գալ իրենց գործով. և կարող է գալ միայն ամսի 18-ին. այնպես որ [մի] երկու օր հետաձգեցի, որ միասին գանք. ուրեմն՝ 18-ին ճաշին կմեկնենք՝ քո գնացած ժամանակին: Հարկ չկա կայարան գալու. 19-ին ձեզ բոլորիդ կգտնեմ: Ես էլ եմ շատ չտապում գալ՝ տեսնելու թե ի՞նչ կա, ինչո՞ւ է ուշանում այն, որով ապրում եմ և չնչում[1]*:*

Համբույրներով քո՝ Ավետիք

321. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ

1940, 15 Հուլիսի, Բորժոմ

Սիրելի Մկրտիչ.

Հենց հիմա ստացա բացիկդ. զարմանում եմ, որ բացիկս չես ստացել. և կարծեմ երկրորդ բացիկն է, որ գրում եմ:

Ստացա դրամը՝ 200 ռուբ., չնորհակալ եմ: Ես էի Երևան գրել ու հասցեդ տվել և միևնույն ժամանակ քեզ էլ իմաց տվել:

Ամսի 18-ին անպատճառ կմեկնիմ Բորժոմից: Շտապում եմ գալ, որ տեսնեմ ի՞նչ կա, ի՞նչ չկա. հոգիս ելավ սպասելով՝ գիտես՝ ինչ բանի համար. չատ ուշացավ[1]*, վախենում եմ՝ վիժի. հայ ժողովուրդը բախտ չունի: Վախենում եմ՝ քո օպտիմիզմը չհաղթե, այլ իմ պեսիմիզմը:*

Կանխապես չնորհակալ եմ կայարան գալու համար. պետք չկա, մենակ չեմ:

Ջերմ բարևներ Օֆիկին[2] *և ընկերներին:*

Համբույրներով քո Ավ. Իսահակյան

322. ՊԱՀԱՐԵԻՆ

<1940, 25-27 հուլիսի, Թիֆլիզ>[1]

Սիրելի Պահարե.

Ժամը 8-ին եկա, տանը չէիր. մի կես ժամ մնացի. հանգստացա և [գնացի] գնում եմ Юзбашян-*ի մոտ,* Коджорская ул. 3[2].

Մնաս բարև, չա՛տ և չա՛տ չնորհակալ եմ քո հյուրընկալությունից:

Քո Ավետիք

Պահարե ջան.

Վաղը գնում եմ Սուխումի (կամ Երևան). դեռ կտեսնվենք:

Վերցրի ունեցածս:

Շա՛տ և չա՛տ չնորհակալ եմ: Կինս գրում է և բարևներ է ուղարկում քեզ և Տանյային[3]:

Քո Ավետիք

323. ՊԱՀԱՐԵԻՆ

<1940, 29 հուլիսի, Երևան>

Սիրելի Պահարե.

Ընկեր Մկրտչյանի հետ ուղարկում եմ այս երկտողը, հայտնելով, որ ողջ և առողջ հասանք Երևան: Ընկեր Մկրտչյանը չա՛տ ուշադիր եղավ դեպ ինձ, որով չա՛տ չնորհակալ եմ նրանից:

Գիշերը բավական լավ քնեցի. թեև նորից չա՛տ հոգնած եմ:

Բարևներ քեզ, Տանյային, Սերյոժային և բոլոր ընկերներին:

Միշտ քո Ավ. Իսահակյան

324. ՀԱՅԿ ԴՌՆՈՅԱՆԻՆ

1940, 6 օգոստոսի, Երևան

Հարգելի ընկեր Հայկ Դռնոյան.

Այսօր հեռախոսեցի Ձեզ մի խնդրի առիթով, զբաղված էիք. գրում եմ այս երկտողը, որովհետև Ծաղկա-Ձոր գնալուս պատճառով՝ անձամբ Ձեզ չէի կարող տեսնել:

Իմ ընկերներիցս մեկը – հին ուսուցիչ՝ Սմբատ Վիրապյան, որ լավ գիտի ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և ատրպեյջաներեն, խնդրում է, որ նրան, եթե պետք ունիք, գործեր տաք – թարգմանություններ, ուղղումներ, սրբագրություններ, մի խոսքով՝ գրական աշխատանքներ: Երաշխավորում եմ նրա լավորակ [աշխատունակության] գործ տեսնելու մասին, բարեխղճության և այլն:

Խնդրում եմ ի նկատի ունենաք:

Հարգանքներով և բարևներով

Ձեր Ավետ. Իսահակյան

325. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ

1940, 12 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Գրաչի.

Շնորհակալությամբ միչտ ստանում եմ «Խորհրդ<ային> գրող»[1] Ձեր ամսագիրը: Կարծում եմ ավելի պերճախոս կերպով չպիտի կարողանայի ապացուցել իմ շնորհակալությունը, քան ոտանավորներ ուղարկելով: Հույս ունեմ, որ մեկ-մեկ նյութ կուղարկեմ Ձեզ. առայժմ այս երկու փոքրիկ ոտանավորներս[2] «Խ<որհրդային> գրողի» համար:

Ես նոր եմ վերադարձել Սևանից, ուր ընկերներիս հետ լավ ժամանակ անցկացրինք: Նրանից առաջ մոտ երկու ամիս թափառեցի Խ<որհրդային> Վրաստանում: Երևի մյուս տարի էլ կթափառեմ Ադրբեջանում, հատկապես՝ Ղարաբաղում:

Ջերմ բարևներ ընկերներին, Սևունցին[3], նրա տիկնոջը, Հուրյանին[4] և բոլորին: Բարևիր նաև ընկերներ Սամեդ Վուրղունին, Ռ. Ռզային և մյուսներին:

Սիրով միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

326. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՑԱՆԻՆ

1940, 12 սեպտեմբ<երի>, Երևան

Սիրելի ընկեր Սուքիասյան.

Ձեր թանկագին նամակը Հաշտարխանից[1] շատ ուշ ստացա, որովհետև գտնվում էի Սևանում: Շատ հուզեց ինձ այն բոլորը, ինչ որ գրել էիք. հավերժ անմոռանալի Վահանի նվիրական գերեզմանը և նրա մասին վերջին՝ ականատեսների հուշերը[2]... Շա՜տ հուզիչ էր, մանավանդ, Ձեր այդքան արդյունավետ հոգացողությունը մեծ և տարաբախտ բանաստեղծի հանդեպ:

Ձեր նամակը կմնա մի շատ թանկագին վավերաթուղթ, և լավ եք արել շատ, որ գրել եք ինձ՝ անմիջապես այն տեղերից, ուր թշվառ և մշտապես արտասվելի բանաստեղծը վերջին անգամ տեսավ արևը և իր աչքերը փակեց...

Ես ուզում էի Ձեզ իսկույն գրել, նամակդ սեղանիս վրա էր, բայց սպասում էի, որ մի մոտիկ տեղից՝ Թիֆլիզից կամ Ախալքալաքից (գրել էիք այդ մասին) կստանայի մի-երկու տող Ձեզնից: Այսօր ընկեր Նշանը[3] հայտնեց Ձեր մասին և տվեց Ձեր հասցեն: Շտապեցի մի քանի տող գրել Ձեզ:

Հայտնում եմ չնորհակալությունս Ձեր այնքան սրտագին նամակի համար:

Խնդրում եմ, երբ գաք Երևան առանց ինձ տեսնելու չմեկնիք:

Երևի լսած կլինեք, որ հրատարակվեց Վահանի բանաստեղծությունների գրեթե լրիվ մի հատոր, իմ խմբագրությամբ. աշխատել ենք, որ ինչքան հնարավոր է լրիվ լինի: Տպագրությունը վատ չէ. թուղթը լավ-որակ է, տիպը՝ մաքուր: Իհարկե՝ ավելի լավ կարելի էր հրատարակել, բայց ներկա պայմանների համաձայն սա միանգամայն գոհացուցիչ է:

Բարևներ ինձնից Ախալքալաքի հայրենակիցներիս:

Այս տարի, հուլիսին, Ախալցխա եղա, ուզում էի Ախալքալաք էլ գալ, բայց չհաջողվեց. հաղորդակցությունը դժվարին էր. մնաց հաջորդ տարին:

Ջերմ բարևներով Ձեր Ավետ. Իսահակյան

327. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1940, 18 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Հայկ.

Քո բոթաբեր նամակը չատ ուշացումով ձեռքս անցավ, միայն ամսուս 12-ին, որովհետև բացակա էի Երևանից:

Անհուն ցավ պատճառեց ինձ մեր չատ սիրելի Արամի[1] կորուստը. — ամբողջ մանկությունս, պատանեկության երազային օրերը — բոլորը հյուսված էին Արամի հետ: Ինչքա՜ն ենք միասին երազել և ոգևորվել. եղել ենք միասին Ղազարապատում, հայրս, մայրս, գնացել ենք Անի, Շիրակի գյուղերը, և հազար ու մեկ դեղեցիկ հիշողություններ... Ուղղակի չչմել եմ և հաչիվ չեմ կարող տալ ինձ, չեմ հավատում, նորից ու նորից կարդում եմ նա-

մակդ ու մտածում, ի՞նչքան դաժան բան է մտերիմների կորուստը: Ավելի խորն ես զգում մահի ուժը և կյանքի ոչնչությունը՝ մի վայրկյան միա՛յն – ահա մեր ողբալի գոյությունը. երեկ և այսօր. երեկ՝ կյանք, սեր, ուրախություն, թռիչքներ, այսօր՝ լռություն, դատարկություն...

Ես որ մտքով միշտ հաշտվել եմ մահի հետ, իբրև մի անխուսափելի անհրաժեշտության հետ – հիմա այս թանգագին կորուստի առաջ համարում եմ մահը մի անբնական երևույթ, անտրամաբան անմտություն, բռնության գործ, ոճրագործություն:

Ափսո՛ս, հազար ափսո՛ս Արամիս...

Հայկ Ջան, ի՞նչ խոսք կարող եմ գտնել մխիթարության համար սիրելի Բագրատ[2] եղբորը, քեզ, Նունիկին[3] և երեխաներին... Դարդակ բան է մխիթարությունը, դարդակ բան է փիլիսոփայությունը: Ժամանակը միայն կարող է թմրեցնել կսկիծի սրությունը, ուրիշ ոչ մի բան:

Մենք էլ ծերացել ենք արդեն և ուրիշ սպասելիք էլ չունինք աշխարհից. գլուխներս պիտի խոնարհենք անհաղթելի բնության ահեղ օրենքի առաջ և լռենք: Ուրիշ իմաստություն չկա:

Համբույրներով բոլորիդ:

Ձեր վշտակիր Ավ. Իսահակյան

18/IX 40 թ.
Երևան

328. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՍՄԱՆՅԱՆԻՆ

1940, 27 սեպտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Արաքսման.

Շնորհակալությամբ ստացա ուղարկածդ հոդվածը[1]. կարդացի ընկերների մոտ, հավանեցին:

Նաիրի Զարյանին դեռ ցույց չեմ տվել, առիթ չի եղել: Կանեմ:

Նորից հայտնեմ շնորհակալություն և գոհունակություն: Եվ ինչ խոսք, որ կպահեմ արխիվիս մեջ:

Հույս ունեմ լավ ես և քաջառողջ:

Բարևներ մայրիկիդ, կնոջդ ու հարցնողաց՝ ընկերներին:

Ջերմ բարևներով ու հարգանքներով

Ավետ. Իսահակյան

329. ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ

1940, 2 հոկտեմբերի, Երևան

Ваше письма от 5 сентября 40 г. я получил довольно поздно, так как меня не было в Ереване.

Я очень сожалею, что вопреки моему желанию □быть Вам полезным □должен отказаться от Вашего лестного предложения написать вступительную статью и взять на себя редактирование[1] задуманной Вами антологии армянской литературы.

Я слишком занят своими текущими весьма срочными литературными делами, что лишает меня возможности взяться и за предложенную Вами работу, да к тому же мои лета уже дают себя чувствовать. Поэтому к великому моему сожолению я должен отказаться от Вашего предложения.

С тов<арищеским> приветом

Аветик Исаакян

330. ԱՇՈՏ ԳՐԱՇԻՆ

1940, 15 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Գրաչի.

Այս առավոտ ստացա նամակդ, առաջ սպասում էի նամակիդ, բայց հետո իմացա Հուրյանից, որ Բորժոմ ես, հանգստացա:

Լավ ես արել, գնացել ես. այս տարի ես էլ եղա թե՛ Բորժոմ, թե՛ Աբասթուման և թե՛ Ախալցխա, ոչ երկար ժամանակով, ամեն տեղ մի քանի օր միայն: Շտապում եմ գրելու այս նամակը՝ հայտնելով, որ «Հայրենի հող» պոեմաս, որ հավաքել եք և ուզում եք տպել, կարծում եմ, որ լավ կլինի մի առ ժամանակ հետաձգեք: Այստեղ ինչ-ինչ պատճառներով, ինձ համար անհասկանալի և անհեթեթ պատճառներով, թերևս ոմանց քմահաճությամբ, մերժեցին. կարծում եմ, որ դլխացավանք պիտի պատճառի նրա հրատարակումը թե՛ ձեզ և թե՛ ինձ: Անհարմար է, թերևս. լավագույնն է՝ թողնել առայժմ, եթե ուշ չէ արդեն:

Ուղարկում եմ նորից չորս ոտանավոր և թողնում եմ խմբագրությանդ բարեհաճությանը[1]:

Ասում ես, որ գալ տարի գնանք Ադրբեջան, Ղարաբաղ, թափառենք: Լավ միտք է. ուրախությամբ. օրը գա, բարին հետը. կամ հին հասկացողությամբ՝ եթե աստված կամենա: Գոնե լիներինք Նուխի, Շամախի և Ղարաբաղ:

«Կարոտ մանկության»[2] բանաստեղծությունը չատ և չատ լավն է. անկեղծ, էմոցիոնալ և նոր, ոչ չաբլոն. սա դասվում է «Ախ, միտս ընկավի» կողքին: Ապրե՛ս:

Գրաչի ջան, հույս ունեմ, որ նամակս ստանալուդ պես՝ կպատասխանես:

Նկատում ես, անշուշտ, որ գրում եմ նորագույն ուղղագրությամբ[3]. այս նորամուծումը՝ կիսատ-պռատ, լավ բան է:

Ձեր թերթը (ամսագիրը) լավ է խմբագրվում: Հետաքրքրական է, և որ գնահատելի է՝ ժամանակին է լույս տեսնում:

Ջերմագին բարևներ ընկերներին՝ Գ. Սևունցին, Ս. Գրիգորյանին, Հ. Սահյանին, Հ. Ամիրխանյանին[4] և մյուսներին: Նաև Ռասուլին, Սամեդին և այլոց:

Սրտագին բարևներով՝ Ձեր Ավետիք Իսահակյան

331. ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

1940, 17 Հոկտեմբերի, Երևան

Սիրելի Արշալույս.

Ձեր սրտագին նամակը ստացել եմ իր ժամանակին: Շատ և շատ շնորհակալություն Ձեր՝ դեպ ինձ ունեցած անկեղծ զգացմունքների համար:

Ձեր նամակը ստանալուց առաջ գործով եղա ընկ. Բալ<աբեկ> Մարտիրոսյանի[1] մոտ, սակայն նա ինձ բան չասաց Ձեր բանաստեղծությունների նկատմամբ: Հենց որ ժամանակ գտնեմ, կգնամ նրա մոտ և կստանամ. մնացածը հետո:

Սիրելի աղջիկս, ես առհասարակ, և մանավանդ այս տարի չատ զբաղված եմ. բառացի՝ ազատ ժամանակ չունեմ, թե իմ գրական գործերիս և թե զանազան պարտավորությունների (խմբագրումներ, հոդվածներ) հետևանքով:

Ես կարծում եմ, որ բոլորովին անտեղի է այդպես ընկճվել՝ մենակության և գյուղական ամայության մեջ գտնվելուդ համար[2]. ավելի լավ Ձեզ համար – լուրջ կպրապվեք, ինքնազարգացման համար անհուն հնարավորություններ կունենաք, կկարդաք և կխորհեք: Դուք դեռ չատ երիտասարդ եք և Ձեր ողջ կյանքը տակավին Ձեր

առաջն է: Զվարթ եղեք և որ դլխավորն է՝ ժամանակ մի կորցրեք – աշխատեցեք և աշխատեցեք:

Սիրելիս, դրում եք Սանահինի հոյակապ վանքերի այդ տեսակ լքված վիճակի մասին. դեռ պիտի շատ դոհ լինենք, որ չեն քանդել կամ չեն քանդում դոմ կամ ամբար շինելու համար, ինչպես ուրիշ տեղեր եղել են: Մեր սերունդը, մեր ժողովուրդը, դեռ շատ է տգետ, չի կարող հասկանալ մեր հին կուլտուրական գանձերի, ճարտարապետության արժեքը. մեր նախնիքների այդ անգնահատելի ժառանգությունը ճնշում է մեր նոր սերունդի ուսերին, բայց շատ չի քաշե, կգա ժամանակը, կզարթնի ազգային գիտակցությունը և մեծապես կգնահատեն մեր անցյալի գանձերն ու փառքերը: Դրանց համար էլ չպետք է հուսահատվել:

Ներողություն, սիրելիս, որ նամակիդ ուշ եմ պատասխանում: Ջմռռանամ ասել, որ ստացա նաև նկարիակ լուսանկարները. շնորհակալություններս և ղրանց համար:

Գրեցե՛ք ինձ, երբ սրտներդ ելած կլինի և կուզեիք խոսել ինձ հետ. շատ ուրախ կլինիմ:

Հույս ունեմ, որ հունվարյան արձակուրդներին Երևան գալով՝ կգաք ինձ մոտ:

Սիրով և ջերմ բարևներով

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

332. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1940, 6 դեկտեմբերի, Երևան

<Անին>[1] մեծ հաճույքով կարդացի: Այնքան հրապուրիչ է գրված՝ ամեն տեսակետից, որ մի անգամ սկսելով՝ անկարող եղա բաժանվել գրքից.– այնքան հափշտակեց ինձ: Մինչև այսօր Անիի մասին այսքան սպառիչ, լիա-

կատար գործ չէի կարդացել – միանգամայն գիտական ու պոպուլյար՝ հանրամատչելի: Մանրամասն, նյութով հարուստ, բովանդակալից, բազմակողմանի:

Սկզբում խոսվում է Անի այցելող ճանապարհորդների և հետազոտողների գրքերի մասին, նրանց բովանդակությունը, գնահատականները, հեղինակների կարծիքները, ոչ մի անուն գիրք բաց չեն մնացել:

Հետո Անին. մանրամասն նկարագրված է ամեն մի կոթողը (ճարտարապետական), ամեն մի բեկորը, հայոց պատմական արձանագրությունները: Առասպել, ավանդություն, պատմական տվյալներ՝ բոլորը հրաշալի կերպով հյուսված են իրար հետ:

Նույնպես Հոռոմոսի վանքերը, աչխարհիկ չենքերը, Մարմարաչենի[2] վանքերը, Վահրամ սպարապետի Վահրամաչենը[3]. ի դեպ, Վահրամ սպարապետի, այդ մեծագույն հայ դեմքի կյանքն ու արարքները ուղղակի վիպական-բանաստեղծական մի դրվագ է, գրված վարպետի սրտով ու գրչով: Եվ վերջապես՝ Շիրակի դաշտի նկարագրությունները:

Մեր անցյալի այս պանծալի փառքը՝ Անին գտել է հանճին Լեոյի իր ոգևորված երգչին, նրանից լավին մենք չենք պատահել: Նույնիսկ հեղինակի «չատախոսությունները, դատողությունները» հաճույքով են ընթերցվում:

Շա՛տ և շա՛տ ցանկալի է, որ այս անզուգական գիրքը լույս տեսնի, նա կդառնա մեր պատանիների, երիտասարդների և ժողովրդի սիրած գրքերից մեկը: Ընթերցողի հոգում Անին կկենդանանա և կլցնե արդար հպարտությամբ: Մանավանդ լավ կլինի, որ պատկերազարդվի:

Բոլոր սրտով հանճնարարում ենք Հայպետհրատին, որ լույս ընծայե այս աչխատությունը, և չա՛տ եմ խնդրում, իրականացնել հանգուցյալ մեծ հեղինակի[4] կամքը և փափագը:

Սիրով և հարգանքով՝ Ավետիք Իսահակյան

333. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>40, 8 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Խորապես չնորհակալ եմ քո այդ անձնվեր վերաբերմունքի և սիրո համար իմ հանդեպ, չնորհակալ եմ նաև շատ ու շատ հայրենի քաղաքիս սովետից:

Նամակիդ բովանդակությունը, իհարկե, ոչ ոքի չեմ ասել, և հարկ էլ չկար ինձ վաղօրոք հայտնելու. ես այս վերագրում եմ քո անհամբեր սիրուն, որ փութացել ես ինձ ուրախացնելու[1]:

Սիրելիս, որոշված է, որ 23-ից հետո ես հանդես գամ հիմնարկներում և ուրիշ վայրերում: Ես կգամ անպայման Լենինական, ուրեմն ամսիս 23-ից հետո: Կգրեն օրվա մասին, որովհետև մենակ չեմ գալու. հետս լինելու են և ուրիշ ընկերներ:

Անշուշտ, լավ կլիներ և իմաստ կունենար, որ իմ ծնված ու մեծացած փողոցը կրեր իմ անունը, բայց եթե անկարելի է, ի՞նչ անել. պիտի համակերպվել. միայն կուզենայի գիտենալ, որն է այդ չարաբաստիկ 27-րդ փողոցը, որ պիտի կրե իմ անունը. ես չեմ կարող պատկերացնել. եթե ժամանակ ունես, գրիր այդ մասին:

Մնացած բոլոր բաները ձեր գործն է. ես ոչ մի իրավունք չունիմ միջամտելու:

Ջերմագին բարևներով քեզ, մայրիկիդ, կնոջդ և ընկերներին:

Քո՝ Ավետիք Իսահակյան

Երևան,
12 փ. Ղ. Ղուկասյանի

334. ՍԱՐԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ

1940, 9 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Սարիկ ջան.

Քո սրտագին նամակը հայրիկդ հանձնեց ինձ մի փոքր ուշացումով: Խորապես չնորհակալ եմ քո այնքան ջերմ, խանդավառ վերաբերմունքի համար իմ պոեզիայի հանդեպ, ուրախ եմ, որ երիտասարդներդ այդպիսի սիրով, հայրենասիրությամբ եք թևավորված, վաղվա օրը ձերն է, և երբ այդ բարձր զգացմունքներով համակված պիտի մտնեք հայկական կյանքի մեջ գործելու, ուրեմն, մեր ժողովրդի ապագան՝ նրա կուլտուրան ապահովված է: Սիրեցե՛ք հայ լեզուն, հայ կուլտուրան, և հայ ժողովուրդը չի կորչի. ազգերը ֆիզիկապես չեն ոչնչանում, ֆիզիկապես նրանց չեն կարող ոչնչացնել, ազգերը ջնջվում են միայն ինքնասպանությամբ:

Ներողություն եմ խնդրում ուշ պատասխանելուս համար, սակայն այդ ուշ պատասխանելը ինձնից կախված չէր. թերևս լսած լինիս, որ հոկտեմբերի վերջերից մինչև նոյեմբեր անգործության էի դատապարտված աչքերիս հիվանդության պատճառով. վարակվել էի կոնյուկտիվիտ ցավով, կոպերի, ներքին լորձունային թաղանթի բորբոքումով. աչքերս լցված էին լերդ-լերդ արյունով. հիմա լավ եմ, բուժվեցի և սկսել եմ պարապել: Լսել ես, անշուշտ, որ դեկտեմբերի 23-ին տոնում են[1] Հոբելյանս՝ 65-ամյակս մեծ չուքով են տոնում. բոլորը լծված են աշխատանքի, և սկսել են արդեն իմ մասին զեկուցումներ, դասախոսություններ, իմ ժամանակս էլ կլանված է դրանով՝ նյութեր, տեղեկանքներ տալով, և այլն:

Սիրելի Սարիկ, հարցիդ ի՞նչ պատասխանեմ, այդ նոր հայ լեզվին խորթ, տգեղ տերմիններին համար, մենք բոլորս էլ զայրացած ենք. դու խո՞ տղա չես, ի՞նչ կարող

ենք անել. գրես էլ՝ ոչ մի արդյունք չի ունենա և երևի, չեն էլ տպագրի. պետական որոշմունք է: Պիտի համբերատար լինենք և փրկենք, ինչ որ կարող ենք, և չատ բան կարող ենք անել: Գլուխները քարը, դրանով մի առանձին հարված տված չեն մեր լեզվական կուլտուրային: Մի՛ հուսահատվեք, այլ ավելի լծվեք ներքին, ստեղծագործ ուժերով. ներքնապես չպիտի ընկնել, պարտվել:

Համաձայն եմ, որ «Պեպոն»[2] պիտի բերել Մոսկվա, բայց դեռ Մոսկվա գալու խոսք չկա:

Հայրիկդ այս տարի նկարեց ինձ. դա մի գլուխ-գործոց է, հավիտենական արժեք ունեցող գործ, պատմական փառավոր կոթող. նույնիսկ նկարիչները, օրինակ, Հ<ակոբ> Կոջոյանը նույն հիացմունքն է հայտնում: Դրված է յուցահանդեսում, բոլորը հիացած են. նրա բացիկն է պատրաստվում Հոբելյանի օրը և իհարկե, միշտ, վաճառելու համար: Իհարկե, պատկերը կգնվի մուզեյի[3] կողմից:

Խեղճ Հովիկ Թումանյանը[1] վախճանվեց, ինձ չատ մեծ վիշտ պատճառեց. երբեք չեմ մոռանալու նրան. չատ ազնիվ. խելացի տղա էր, հազար-հազար ափսոս: Քեզ լավ պահիր, չմրսես, չատ չհոգնես, լավ կեր, լավ քնիր, չատ մի՛ աշխատիր, որ ուժասպառվիս. ամենից առաջ առողջ կյանք, հետո մնացած բանները:

Ջերմ բարևներ մայրիկիդ և բոլոր քո ընկերներին:

Սիրով և բարևներով, քո՝ Ավետիք Իսահակյան

335. ԱՇՈՏ ԳՐԱՇԻՆ

1941, 4 Հունվարի, Երևան

Սիրելի Գրաչի.

Գնացիր և լռեցիր:

Այն խնջույքը[1], որ տեղի ունեցավ իմ տանը, շատ լավ անցավ, ափսո՛ս, որ չմնացիր. կենացդ խմեցինք: Իսկ Մարգարիտը[2] չարունակ քեզնից էր խոսում, կարծես, զառանցում էր: Նա էլ մեկնեց, գնաց Մոսկվա:

Ես հիմա լավ եմ, վաղը գնում ենք Լենինական՝ ներկա լինելու հայրենի քաղաքում կազմված իմ հոբելյանական հանդեսին: Նրանից հետո, կարծում եմ, որ կազատվեմ և կհանգստանամ. չա՛տ հոգնեցի. բանկետ, հյուրասիրություններ:

Շնորհավոր Նոր տարի բոլորիդ, մեր բոլոր ընկերներին, քեզ, Սևունցին, Թաթուլին, Վ. Աղասյանին[3], մի խոսքով՝ բոլորին:

Սիրելի՛ Գրաչի, մի նեղություն պիտի պատճառեմ քեզ և սա է՝ խնդրում եմ այն համարները թերթերի, որոնց մեջ գրված կան իմ մասին, ուղարկես ինձ. «Կոմունիստը», ադրբեջանական թերթերը, «Սովետ[ական] գրողը» և այլն:

Ջերմագին բարևներով՝ Ավ. Իսահակյան

336. «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1941, 13 Հունվարի, Երևան

«Գրական թերթի» հարգելի խմբագրությանը.

Իմ 65-ամյա հոբելյանի առիթով ստացած բազմաթիվ հեռագրներին և նամակներին անկարող լինելով յուրաքանչյուրին առանձին պատասխանել, ուստի խնդրում եմ թույլ տաք Ձեր թերթի միջոցով հայտնելու իմ սրտագին շնորհակալությունները բոլոր այն հասարակական հիմնարկներին, ընկերներիս, բարեկամներիս և համակիրներիս, որոնք հեռագրով, նամակով չնորհավորեցին իմ հոբելյանը:

Հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

13.I. 41 թ.
Երևան

337. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>41, 27 հունվարի, Երևան

Սիրելի ընկեր Անդրանիկ.

Իմացած եղիր, որ Լենինականից[1] դարձած մյուս օրը հիվանդ էի. կարծում եմ, որ ճանապարհին մրսեցի, վագոնը տաքացրած չէր: Ստամոքսի նյարդային բորբոքում ունեցա և ունեմ (թեև արդեն թուլացել է). ամեն օր դնում եմ հիվանդանոց, էլեկտրական հոսանք եմ ընդունում: Լավանալուց հետո՝ Թբիլիսի պիտի գնամ: Իհարկե Մոսկվա չեմ գնալու, եթե նույնիսկ բոլորովին լավացած էլ լինիմ. վախենում եմ մրսելուց և հիվանդությունս կրկնվելուց:

Սիրելիս, ասացիր, որ դու էլ ես հիվանդացել. այդպես էլ կարծում էի, շատ էիր հոգնած և թույլ: Ուրախ եմ, որ լավ է վերջացել, առողջացել ես:

Առայժմ շատ զբաղված եմ և չեմ կարող ճառս[2] արտագրել, բայց հենց որ մի փոքր թեթևանամ գործերից (անհրաժեշտ գործերից) իսկույն կարտագրեմ և կուղարկեմ. միամիտ եղիր, մի տարակուսիր:

Մոսկվա գնալը[3] դեռ որոշ չէ, սակայն գնալու եք. բայց պատրա՞ստ եք արդյոք. հարցը դա է:

Խնդրում եմ ջերմ բարևներ հաղորդես ընկերներին, մայրիկիդ, կնոջդ, եղբորդ:

Ջերմ սիրով քո՝ Ավետ. Իսահակյան

338. ՊԱՀԱՐԵԻՆ

1941, 29 մարտի, Երևան

Սիրելի Պահարե,

Ներողություն, որ մինչև այսօր քեզ նամակ չգրեցի: Պատճառներ չկան, միայն իրողությունն է, որ վերադարձիցս[1] հետո ամբողջ 8 օր պառկեցի, համ չատ հոգնած էի, համ մրսեցի. հիմա լավ եմ:

Շնորհակալությամբ ստացել եմ խմբա-լուսանկարը. լավ է դուրս եկել. ստացա և Քյուրքչյանից իմ նկարը, վատ չէ: Թումանյանի նկարը մոռացա, բայց լավ որ մոռացա, ո՞նց պիտի բերեի – պահիր մոտդ կամ նվիրիր ում որ կուզես. ես տանը կախելու տեղ չունեմ. նոր տներում պատ չկա, եղածն էլ բռնված է:

Բարևներ կնոջս կողմից և իմ՝ քեզ, Տանյային, Սերյոժային, Սուսիկին ու ընկերներին:

Քո Ավետիք

339. ԱՇՈՏ ԳՐԱՇԻՆ

1941, 2 ապրիլի, Երևան

Սիրելի Գրաչի.

Երկու նամակ ստացել եմ քեզնից. I – երբ գնում էիր Մոսկվա II – վերջին նամակը:

Լսել էի, որ նշանվել էիր Մարգարիտի հետ, բայց լուրջ հավատ չէի ընծայել. լուրն ինքը կասկածելի ձևով էր տարածված՝ ավելի շատ՝ ենթադրությունն:

Շա՛տ ուրախ եմ, կինս էլ նույնպես, և ես բոլոր սրտով չնորհավորում եմ և բարեմաղթում անվերջ սեր, ներդաշնակություն, երջանիկ կյանք և առողջություն. ապրեք, բախտավոր լինեք:

Բարևներ և «աչքի լուսանք» տուր մայրիկին՝ Մարգարիտի, և ձերոնց:

Սիրելիս, քո առաջին նամակը ստացա այն պահին, հենց այն օրը, երբ գնում էի – փետր[վարի] 5-ին – Թիֆլիս: Վրաստանի Գրողների միությունը, վրացիները հրավիրեցին ինձ, որ իրենք էլ տոնեն իմ հոբելյանը: Գնացի. շատ մեծ սիրով, շքեղությամբ, անկեղծությամբ մեծարեցին ինձ. քեֆեր գրողների տները, բանկետ և փոքրիկ բանկետներ...

Ամբողջ 20 օր մնացի Թիֆլիս, վերադարձա Երևան և նորից հիվանդացա. վեր կացա և նորից հիվանդացա. այսօր նորից ոտքի վրա եմ և հույս ունեմ, որ լավացել եմ: Պատճառը ճմռան գրիպն էր, որ թողել էր հետևանքներ թոքերիս և ստամոքսիս վրա: Հիմա որ գարուն է, կարծում ենք, որ կկազդուրվեմ:

Ընկեր Ս. Խիթարովան դիմել էր ինձ, որ մի քանի խոսք[1] գրեմ քո հրատարակվելիք ռուսերեն թարգմանության մասին, իբրև ներածություն: Գրել-ուղարկել եմ արդեն, չգիտեմ՝ գոհ կլինես, թե ոչ:

Ոտանավորներիս մնացած համեմատությունները այսօրվանից կսկսեմ և մի երկու օրից կուղարկեմ Խիթարովային. և հույս ունեմ, որ սրանով կարճ-երկայն կվերջանա գրքիս գործը և կտպագրեն[2]. և թե ես կազատվեմ և թե նրանք այս բանից, որ խիստ երկար տևեց. ես ձանձրացա, երևի՝ նրանք էլ:

Գրաչի չան, գրում ես, որ գամ Մոսկվա, որովհետև մտադիր են ինձ մի գրական երեկո նվիրելու: Ավելացնում

ես, որ դրանով ես հեղինակություն ձեռք կբերեմ ռուս բանաստեղծների աչքում: Շնորհակալ եմ քո հոգածության համար իմ հանդեպ. դա բխում է այն մեծ սիրուց, որ ունես իմ նկատմամբ. սակայն ես դա (Մոսկվա գալն ու...[3]) ավելորդ և ապարդյուն եմ համարում. ինչի՞ս է պետք այդ ամենը: Դժվար թե ես գամ Մոսկվա մեր գրական գաստրոլի թե դեկադայի հետ կամ դրա կապակցությամբ: Ժամանակ չեմ ուզում կորցնել իզուր տեղը: Ինձ ոչինչ չի հետաքրքրում այլևս — ո՛չ փառք, ո՛չ պատիվ. ես ուզում եմ ապրել իմ գրական ծրագիրների համար, նրանց կենսագործելու համար և ցանկանում եմ, որ չխանգարեն ինձ իրենց անիմաստ ծափերով ու ցույցերով: Ես կուշտ եմ այդ բոլորից: Մի երկու հասկացող մարդու կարծիքն ավելի շատ արժեքավոր է ինձ համար, քան թե հազարների կարծիքը:

Սիրելի Գրաչի. ի՞նչ է մտադրությունդ. ուզում ես միշտ Մոսկվա մնալ, այդտեղ բնակվել ու գործել, թե նորից Բագու կամ... Երևան. ի՞նչ է ծրագրում Ձեր զույգը, հետաքրքիր է իմանալը:

Նորից սրտագին բարևներ Մարգարիտին, մայրիկին և քեզ:

Միշտ ձեր՝ Ավետ. Իսահակյան

Հ.Գ. Այստեղ ստացվել էր մի քանի օրինակ «словарь поэтичес. терминов»[4], բայց սպառվեց. կարծես լավ կազմված գործ է, խնդրում եմ մի օրինակ ինձ վերադիր վճարով ուղարկես:

Ավ. Իս.

340. ՍՈՂՈՄՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

1941, 2 մայիսի, Երևան

Մեծարգո բարեկամ Ս. Մելիք-Շահնազարյան.

Ներողություն եմ խնդրում Ձեզնից այսպես ուշ հայտնելուս համար, որ ստացել եմ Ձեր նամակը և պատմվածքը: Մեկ՝ որ հիվանդացա Թբիլիսից վերադառնալուցս հետո և երկրորդ, որ ուզում էի Ձեզ որոշ բան գրել:

Ձեր պատմվածքը ես կարդացի՝ խոսրով պապը և հավանեցի, միայն պետք է կրճատումներ անել այն մասերում, ուր մանրամասն խոսվում է գյուղատնտեսական ինչ-որ հարցերի մասին և այն տեղերից, որ երբ պապը քնած է, Ձեր խմբի երիտասարդի երկար զրույցը:

Պատմվածքը ես հանձնեցի «Սովետական գրականություն»ի խմբագրությանը. ի նկատի ունեն տպագրել ամսագրի մեջ, միայն ժամանակի և հերթի հարց կա:

Կրճատումը կնպաստի պատմվածքին՝ ավելի հակիրճ և նպատակասլաց դարձնելու նրան:

Գալով Ձեր հին գրվածքների հրատարակության Պետհրատի կողմից, նրա վարիչը սկզբունքով համաձայնվեց, բայց նրան պիտի կոնկրետ կերպով ներկայացնել ամբողջ նյութը՝ պատմվածքները:

Դժբախտաբար այն ընկերը, որ անմիջապես վարիչն է գեղարվեստական նյութերի հրատարակության — մոտ երկու ամիս է հիվանդ է, մոտ օրերս դուրս կգա հիվանդանոցից. և նա է, որ պիտի զբաղվի դրանով և խմբագրի: Այդ էլ ժամանակի հարց է, թե՝ երբ ի վիճակի կլինի գործի անցնելուն:

Ես էլ ամսուս 4-ին մեկնում եմ Մոսկվա՝ հայ գրականության դեկատին մասնակցելու համար, և կվերադառնամ մայիսի վերջերին:

Կգրեմ Ձեզ իր ժամանակին Ձեր օգնության, խորհուրդների և Ձեր համաձայնության և պայմանագրության մասին:

Համենայն դեպս, ինչ որ կախված կլինի ինձնից, ես կանեմ: Կարծում եմ, որ Ձեր հին պատմվածքներից մի փոքր հատոր լույս կընծայենք[1]:

Ջերմագին բարևներ Ձեզ, Ձեր դստերը և փեսային:
Հարգանքներով մնամ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

341. ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻՆ

1941, 15 մայիսի, Մոսկվա[1]

Սիրելի Հրաչ.

Այսօր ստացա գիրքդ[2]. չափազանց ուրախացա և շատ հուզվեցի, որ հիշել ես ինձ. ոչ միայն հիշել ես, այլ անմիջապես ուղարկել ես. շատ և շատ չնորհակալ եմ: Բոլոր իմ սիրած կտորները – «Պատմվածքները – հեքիաթ(նե-րը», «Այուենեցինները», «Ժամանակները», «Դուստրը»... ամփոփված են ժողովածուիդ մեջ, որ դժբախտաբար անխնամ, գեղեցիկ չեն տպված:

Ես չափազանց զբաղված եմ – դես ու դեն, հոդվածներ գրելով. շատերը իմ վիճակումն են: Նաիրին քեֆ է անում. նրա երեսը չեմ տեսնում. ձուկը ծովումն է:

Դեկադան լավ է անցնում. ցավում եմ և զայրանում, որ դու չկաս: Անկեղծաբար ասած՝ շատ տեղ եմ բողոքել դրա համար, քո և Ա. Վչտունու[3] համար. լսողն ո՞վ է: Բայց դու արհամարհիր:

Բարևներ քեզ, կնոջդ և պաչիկներ՝ աչիկիդ:

Քո Ավ. Իսահակյան

342. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ

<19>41, 9 Հունիսի, Մոսկվա

Սիրելի Գարեգին.

Վաղուց ուզում էի քեզ նամակ գրել, բայց, ուղիղն ասած, ժամանակ չէի գտնում. այնքան կլանված էր ժամա-

նակս մանր-մունր բաներով – ժողովներ, հոդվածներ գրել[1], երեկույթներ, հյուր գնալ, մարդ ընդունել, դեսդեն գնալ, գիշերները ուշ տուն գալ, անքնություն, ջղայնություն. ուղղակի հոգիս բերանս է եկել, հոգնել եմ չափազանց, մանավանդ նկարվելուց և ժուռնալիստների հետապնդումներից...

Վերջապես ժամանակ գտա քեզ այս երկտողը գրելու:

Ո՞նց ես, քեֆդ, առողջությունդ, նույնպես սիրելի Ռիմայի – հույս ունեմ, որ լավ եք: Եղբորդ՝ Լևոնին[2], երկու անգամ տեսա հայկական ներկայացումներին, և իր ավտոյով տարավ մեզ տուն: Գրականության դեկադային Մոսկվայում չէր և չկարողացավ, այսպիսով, ներկա լինել: Լավ է, առողջ է, հաջողակ է:

Շատ բան ունեմ քեզ պատմելու, բայց, երևի, ուշ պիտի տեսնեմ քեզ, որովհետև որոշել եմ ամսուս 20-ին գնալ Կիսլավոդսկ հանգստանալու. Սոֆիան կգա Երևան, կմնա մի քանի օր, գործերը մեր տան կարգի կբերե, և կգա Կիսլավոդսկ. ամառը ուզում ենք հանքային ջրերում անցկացնել: Ինչքա՜ն լավ կլինի, որ դուք էլ գաք, գեղեցիկ ժամանակ կանցկացնենք. մտածիր դրա մասին, իմ հասցեն սա է.– Ессентуки, санатория N 10,

Седа Туманян[3] Сафразбекян. *Հանձնել Ա. Իսահակյանին:*

Ես քեզ այնտեղից կգրեմ, երբ տեղավորվիմ:

Մոսկվան մեր եկած օրից մինչև հիմա ցուրտ է. երբեմն չատ ցուրտ. մինչև հիմա չեմ տաքացել. երևի, դուք այրվում եք, իսկ մենք մրսում ենք:

Գարեգին Ջան, մի բան եմ խնդրում. Советская большая энциклопедия-*ի*[4] *հաջորդ համարը, եթե ստացվել է այդտեղ, Կիրակոսյանից ստանաս իմ անունով և պահես. վախենում եմ՝ մինչև գալս սպառված լինի. Համարը (N) կարծեմ լինելու է 49: Վերջինը ստացել եմ, կարծեմ, ապրիլ ամսում:*

Սիրով և սրտագին բարևներ քեզ և Ռիմային: Նաև Ուբարտուին, Վարսիկին, Ռուբեն Զարյանին և բոլոր հարցնողաց:

Ջերմագին բարևներ Սոֆիից ձեզ բոլորիդ:

Համբույրներով քո՝ Ավետիք Իսահակյան

343. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ

1941, 19 Հունիսի, Մոսկվա

Սիրելի Մարգարիտ.

Կարդացի Գրաչիի պոեման. անհավասար է. տեղ-տեղ լավ է գրված, հուզմունքով (էմոցիա), թարմ, ոչ չաբլոն – սակայն ընդհանրապես երկար է, ձգձգված: Սյուժետը քիչ է, իսկ խոսքը՝ չատ:

Իմ կարծիքով՝ պետք է մշակել, սեղմել, չաբլոն, սովորական տեղերը բաց թողնել:

Ես այսքանը կարող եմ ասել. մնացածը Ձեր կամքն է:

Մնաք բարև: Առավոտը վերջապես գնում եմ Մոսկվայից:

Բարևներ մայրիկիդ և բարեկամներին:

Ձեր Ավետ. Իսահակյան

19. VI. 41
Մոսկվա

344. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1941, 26 Հունիսի, Էսենտուկի

Սիրելի Սոֆիկ.

Վերջապես եղավ այն, ինչ որ անսպասելի էր, գոնե ինձ համար, և սարսափելի, մենք չէինք ուզում պատե-

բազմ[1], և մեր վզին փաթթեցին: Գազան Հիտլերը արյան ծարավի է, իբրև նոր Աթիլլա և վերջ ի վերջո պիտի խեղդվի իր ծովերով թափվող արյան մեջ: Ես մտածում էի, թե նա այնքան խելք կունենա, որ չի կռվի մեզ հետ. բայց ելավ, ի՞նչ անենք. ամեն միջոց պիտի գործ դնել, հաղթանակով դուրս գալու այս սոսկալի փորձությունից:

Ուրախալին այն է, որ Անգլիան և Ամերիկան մեզ հետ են, և Թուրքիան էլ առայժմ չեզոք է. իսկ մենք էլ, իհարկե, ուժեղ ենք և տակը մնացողը չենք:

Ես առաջին օրերը գլուխս կորցրել էի, և չգիտեի թե ինչ անեմ. հիմա մի փոքր հանգստացել եմ: Մեր բոլոր ծրագրները ջուրն ընկան. այլևս կիսալավոդակ դես-դեն գնալ չի լինի. ո՛չ տոմսակ տվող կա, ո՛չ էլ իմաստ՝ անից հեռանալու: Ես ուզեցա նույն օրը, մյուս օրը ճամփա ընկնել դեպի տուն, անկարելի եղավ. մինչև այսօր դեռ տոմսակ չեն ծախում դեպի Բաքու – Թիֆլիզ. երկաթուղիները միայն զինվորականների համար է, իսկ ե՞րբ թույլ կտրվի մեզ՝ հայտնի չէ: Ես շատ անհանգիստ եմ Վիգենի համար. կանչե՞լ են արդյոք նրան, ի՞նչ վիճակի մեջ է: Խեզճ Գյուլիզարի տղան, երևի, արդեն կռվի մեջ է. երևակայում եմ, թե Երևանը ի՛նչ հուզված վիճակումն է: Կարծում եմ, որ Բելլան[2] դերասաննների հետ, մի կերպ, կդառնա տուն, երևի նրանց համար դյուրություն կտան:

Իմ վիճակը այսպես է.– ես արդեն 15 օրվա համար պարտական էի վճարել ըստ պայմանի, և վճարեցի մինչև հուլիսի 5-ը: Օրը 40 ռուբլի է և մանր ծախսեր, տվի 650 ռուբլի: Լավ սանատորիա է, թանկանոց. լավ սնունդ, լավ բժիշկներ: Ինձ քննեցին – արյան ճնշումս բարձր է՝ 170/120. թոքերս թուլացել են, և մանր-մունր բաներ: Հավատացնում են, որ եթե մի ամիս կուրս անեմ (սովորա-

բար մի ամիս է կուրսը), բուժվեմ, ճնշումը կիջնի, թոքերը կուժեղանան. մչտական նասմորկս (քիթս-կոկորդս) կբուժեն...

Ջեմ իմանում ի՛նչ անեմ: Բժ. Սաֆրազբեկյանը[3] խորհուրդ է տալիս, որ մնամ, ուրեմն եղածից մի 15-17 օր ավել, մինչև հուլիսի 22-25. կարծում են, որ ճանապարհներն էլ կբացվին տուն գալու համար: Բայց փող պետք է, թե՛ սանատորիայի համար, թե՛ ճամփու ծախս, դիմիր լիտֆոնդին, որ այդ ծախսերը հոգա, ո՛չ պակաս 1000 ռուբլի, թերևս ավելի, ո՞վ գիտե ինչ անսպասելի դեպքերի առաջ ենք կանգնած, և մանավանդ ես, հեռու հայրենիքից, տնից: Ա՛յ քեզ կուրորտ գնալ, ա՛յ քեզ խաթաբալա. ինչո՞վ պիտի վերջանա, ո՞ւր պիտի գնա էս դժբախտությունը՝ մասնավոր և ընդհանուր:

Փողը հեռագրով տեղափոխել սանատորիայի վրա՝ Есентуки, санатория 5, ученых. Իմ բախտից Սեգային երեկ ուղարկեցին Վորոշիլովսկ, ռենտգենոլոգիայի մեջ ծառայելու, զինվորական պարտավորություն. եթե բժիշկն էլ գնա՝ ամուսինը, երեխաները կմնան անտեր, ծեր մոր հսկողության տակ:

Մորքուրիս աղջիկն էլ տեղափոխվում է Կիսլավոդսկ՝ ինչ-որ զինվորական հիվանդանոց, այնտեղից էլ, երևի, ուրիշ տեղ:

Ո՞նց գտնեմ բժ. Արծրունու[4] հասցեն՝ կոչիկները տալու, դեռ Կիսլավոդսկ չեմ գնացել, և առհասարակ տրամադրություն չունեմ ոչ մի բանի. միևնույն ժամանակ անսպասելի էր թոքերիս թուլացման փաստը ինձ համար, նաև ճնշման բարձրությունը:

Շուտով գրիր, հեռագրիր Վիգենի, Բելայի, բոլորի մասին: Մոսկվա գրեցի, որ Բելային հոգան:

Համբույրներով բոլորիդ՝ Ավետիք

345. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<19>41, 1 Հուլիսի, Էսենտուկի

Սիրելի Սոֆիս.

Երևի ստացած կլինես նամակներս: Ես՝ ուղղակի մոլորվել եմ, երկաթուղու տոմսակ դժվարությամբ կարելի է ձեռք բերել Հուլիսի 10-15-ից հետո. այն էլ՝ իհարկե, չոր, մինչև Բագու, այնտեղից էլ Թբիլիսի. գրել էի, որ հեռագրով փող տեղափոխես: Մոսկվա գրել էի Բելայի մասին. հույս ունեմ, որ դերասանների հետ նա ճամբա ընկած կլինի. մի խոսքով՝ անիծյալ հիտլերը աշխարհը թաթախեց լաց ու կոծի մեջ, երբ պիտի կործանվի այդ դահիճը:

Ավետիք

346. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1941, 3 Հուլիսի, Էսենտուկի

Սիրելի Սոֆյա.

Երկու հեռագիրդ էլ այսօր ստացա. հիմա բավական հանգիստ եմ, բժշկվում եմ, թեև ոչ մի տրամադրություն չկա բուժվելու: Ընկեր Բենիկ Պետրոսյանից ստացա երկու հարյուր (200) ռուբլի, նրան կվերադարձնես դումարը: Նա քեզ կպատմե իմ մասին և թե այդտեղից՝ պաշտոնապես ինձ հրավիրելու հեռագրի մասին: Նամակներ գրել եմ, երևի, հիմա ստացած կլինես:

Համբույրներ բոլորիդ:

Ձեր Ավետիք Իսահակյան

347. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1941, 10 Հուլիսի, Էսենտուկի

Սիրելի Սոֆյա.

Երեկ ստացա փողը՝ 1000 ռուբլի, որ ուղարկել էիր հեռագրով: Ստացել եմ նաև երկու հեռագրերը. հիմա մի փոքր հանգիստ եմ, բայց դեռ նամակդ չեմ ստացել: Այստեղ նույնպես ժողովուրդը հանգիստ է և ինքնավստահ, զգում ես, որ ռուսը չա՛տ մեծ և հանգիստ ժողովուրդ է. ջղայնություն չի ցույց տալիս, հավատացած է վերջնական մեր հաղթանակի մասին: Ես բուժվում եմ. երևի ճամփա կընկնեմ դեպի տուն ամսիս 20-ից հետո:

Համբույրներ բոլորիդ, Ավետիք

348. ԱՐԱՔՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

<19>41, 6 օգոստոսի, Երևան

Սիրելի ընկեր Արաքս.

Այս ելույթս[1]*, իհարկե, թույլ է. ես ավելի լավը կարող էի ասել, բայց պատրաստված չէի, հավաքված հասարակության որակն էլ չէի հասկացել:*

Սա կարող եք տպել, իբր մի կտոր «ելույթից» սղագրած. իսկ հաջորդ թվի համար կտամ մի լավ հոդված «Սովետական Հայաստանի» մեջ հոդվածս[2] *տպվելուց հետո: Անմիջապես, միաժամանակ՝ լավ չէ. թող չարունակաբար լինի, ոչ <թե> մի անգամ ասել և կտրվել, սպառվել:*

Ջերմ բարևներով Ավետ. Իսահակյան

6/VIII 41
Երևան

349. Վ<ԱՐԴԱՆ> ԱՏՐՑԱՆԻՆ

1941, 9 օգոստոսի, Երևան

Սիրելի ընկեր Վ. Ատրյան.

Նամակդ ստացա և գնացի թանգարանը. դիրեկտորը բանակ է գնացել. տեսա նրա փոխանորդին՝ ընկեր Ղաֆադարյանին[1]. Նա գործով հետաքրքրվեց և մի-երկու օրից պատասխանեց հետևյալը. – Նյութերը գտնվում են Սմբատ Ավետիսյանի[2] մոտ, որին դու հանձնած ես եղել. Նա դեռ ցուցակը չի ներկայացրել. երբ այդ կատարի և գնահատենք նյութերը, նրան (քեզ) կդոհացնենք: Հիմա աչքս որոնում է Սմբատին՝ երբ տեսնեմ, կասեմ, որ չատպի: Ես նորից կդիմեմ նրանց: – Ասաց տեղակալը՝ կարո Ղաֆադարյանը, որ քո դալդ ավելորդ է:

Ջերմ բարևներով՝ Ավետիք Իսահակյան

Նամակդ հանձնեցի Կ. Ղաֆադարյանին:

350. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

<19>41, 15 հոկտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Էնիկոլոպյան.

Մի փոքր ուշացումով ստացա Ձեր գեղեցիկ գրքույկը. М. Лермонтов «Ашик-Кериб»[1]: *Շատ և շատ շնորհակալ եմ Ձեր ուշադրության համար իմ հանդեպ:*

Կարդացի Ձեր դիտողությունները և ուսումնասիրությունը[2] *– և չա՛տ գոհ եղա: Գրքույկը ճաշակով է տպված, կոլորիտը, ոճը (տեղային, կովկասյան-արևելյան) լավ արտահայտված են նկարների մեջ:*

Խորին սիրով ու հարգանքով սեղմում եմ Ձեր ձեռքը, թանկագին բարեկամս՝

Ձեր Ավետիք Իսահակյան

351. <ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ>

1942, 3 Հունվարի, Երևան

Սովետական Հայաստանի Պետհրատի վարչության.

Անցյալ տարվա սեպտեմբերին վարչությունդ ինձ հանձնեց խմբագրելու համար ընկեր Հ. Շիրազի «Սիամանթո և Խճե-Ջարե»[1] պոեման: Սիրով կարդացի այդ գործը:

Շիրազի այս վերամշակված իդիլլիան գեղեցիկ, որակավոր գործ է, լիրիզմով զեղուն, բնության չքեղ պատկերներով զարդարված, թարմ լեզվով գրված, նաև թարմ մետաֆորներով:

Շատ ցանկալի եմ համարում այս գործի առանձին հրատարակությունը:

Հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

352. ԺԵՆՑԱՅԻՆ

1942, 4 Հունիսի, Երևան

Շատ կարևոր է հիմա, մի գործի համար Շիրազի «երգերի գիրքը»[1]:

Խնդրում եմ մի օրինակ բարի լինիք հանձնելու հեղինակին՝ ինձ համար:

Հարգանքներով՝

Ձեր՝ Ավետ. Իսահակյան

4.6.1942
Երևան

353. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1942, 8 Հուլիսի, Երևան

Սիրելի Հայկ.

Իր ժամանակին ստացել եմ քո բոթաքեր նամակը և ամեն օր որոշել եմ պատասխանել նամակիդ, բայց չեմ կարողացել:

Աստծուն հայտնի է, որ ես մեր մեծ եղբորը՝ թանկագին Բագրատին[1] շատ էի սիրում և հարգում էի շատ, իբրև խելացի և պատվասեր, թասիբ պահող մարդու: Քանի նա կար՝ ես զգում էի, որ մեր տոհմի մեծը կա, և արժանավոր մեծ է: Անսահման ցավ պատճառեց ինձ մեր սիրելագույն Բագրատի կորուստը, ուղղակի անմխիթարելի, անմոռանալի վիշտ: Մեր ընկեր խեղճ Արամի[2] կորուստն էլ խորունկ ցավ պատճառեց, բայց Բագրատի ցավը շատ ավելի ազդեց Հոգուս վրա: Գուցե պատճառը այն է, որ ես այս տարի շատ տխուր եմ և ընկճված. անողորմ պատերազմը ահավոր ծանրությամբ ճնշում է ինձ. ինչքա՜ն վիշտ, տխրություն կա նրա հետևանքով. ամեն մարդու հարվածել է նա, և դեռ վերջը չի երևում: Ես խորապես զգում եմ թանկագին Բագրատի վիշտը. – գրում ես, որ միակ որդուց ոչ մի տեղեկություն չէր ստանում: Այս երկու տողը ինձ շատ բան հասկացրեց. խե՛ղճ, խե՛ղճ Բագրատ ջան – ի՛նչ տխուր, վշտապին ապրումներ է ունեցել:

Սիրելի Հայկ, ուզում եմ մի քանի օրով Լենինական գալ, բայց որ մտածում եմ, թե Բագրատին չեմ տեսնելու – սարսափում եմ. սակայն ուժ պիտի գործ դնեմ վրաս և գամ: Կարոտցել եմ մեր քաղաքին, ո՛վ գիտե, մեկ էլ տեսնիմ, թե ոչ – մենք բոլորս էլ – ես էլ, դու էլ, ծերացել ենք արդեն:

Խնդրում եմ, Հայկ Ջան, իմ կողմից մխիթարիր խեղճ Թագուհի քույրիկիս, Անահիտին և բոլորին: Կինս էլ շատ տխրեց. հերու տեսավ Բագրատին և շատ համակրեց:

Համբույրներով բոլորիդ:

Քո՝ Ավ. Իսահակյան

354. ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ

1942, 10 Հուլիսի, Երևան

Թանկագին ընկեր Կոնստանտինե.

Շնորհակալությամբ ստացել եմ նամակդ, սիրելի Կոտե, և ուրախ եմ, որ ողջ-առողջ Ձեր տանն եք հիմա, Ձեր նազելի տիկնոջ և սիրելի երեխաների մոտ: Նաև շատ ուրախ եմ, որ Հայաստանում ապրած Ձեր օրերը այնքան լավ հուշեր են թողել Ձեր սրտի մեջ, և գոհ ու ուրախ վերադարձել եք նրա քրոջ մոտ՝ Վրաստան...

Բոլոր մեր բարեկամները, որոնց հետ ծանոթացաք, Սարյանները և մյուսները քաղցրությամբ ու հարգանքով հիշում են Ձեզ և անկեղծ փափագ ունեն հաճախակի Ձեզ տեսնել Երևանում — որպեսզի մի քանի ժամերով լինել բարձր, վեհ մտքերի, գաղափարների այն մթնոլորտում, որ ստեղծվում էր Ձեր ներկայությամբ — զրույցներ գեղարվեստական գրականության, փիլիսոփայության մասին, իսկական մեծ կուլտուրայի մասին, բարձր ճաշակի մասին:

Ես հատկապես կարոտով եմ վերապրում այն պտույտները Հայաստանում՝ Բջնի, Գառնի, Գեղարդ, մեր այդ չքնաղ վայրերի պես չքնաղ զրույցները՝ թաթախված կյանքի փորձով, գիտությամբ, բազմակողմանի էրուդիցիայով: Դրանք բանաստեղծական-փիլիսոփայական չրջագայություններ էին...

Սիրելի ընկեր, Աստուծով մեծ Միությունը կհաղթի ֆաշիզմին – Հիտլերին, և ցանկանանք, որ այդ չուտով լինի – Դուք նորից կգաք Հայաստան և այս անգամ ավելի ուրախ սրտով կչրջենք Սևանի ափերում, ուր այնքան միստիկական գեղեցկություն կա, կչրջենք զարմանալի Զանգեզուրում, Սյունյաց առնական աշխարհում:

Ես Ձեր բարևները հաղորդեցի Սարյաններին, մերոնց ու բոլորին: Նրանք բոլորը սիրով բարևում են Ձեզ: Գ<ևորգ> Աբովը մտահոգվեց անմիջապես իրականացնել, ինչ որ Ձեզ խոստացել էր:

Սիրելի Կոտե, խնդրեմ հաղորդեցեք սիրելի տիկին Միրանդային իմ սիրո և հարգանքի ողջույնները:

Ընդունեցեք ջերմագին ողջույններս:

Միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

355. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

<19>42, 10 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Հակոբ.

Ո՞նց է քեֆդ. Մոսկվայից հատ ու կենտ նկողներից հարցնում-իմանում եմ քո մասին. այն տպավորությունն է ստացվում, որ՝ վատ չես: կարևորը դա է – հավատալ մեր գործերի վերջնական լավ ելքին, պատերազմի հաղթանակին և տոկալ, համբերել, դիմանալ:

Մենք, մեր՝ քո ծանոթ ընկերները նույնպես լավ են, դիմանում ենք: Բուլբերդ էլ լավ են, առողջ են:

Այս տողերիս դրելու դրդապատճառը իմ սրտագին չնորհակալությունն է, որ ուզում եմ հայտնել քեզ, «Октябрь» ամսագրի մեջ քո թարգմանությամբ լույս տեսած իմ երեք պատմվածքների համար: Ոչ դեղեցիկ նախադասություն կազմեցի, բայց դու էությունը հաս-

կացիր – չնորհակալություն քո հաջող, որակավոր թարգմանությանդ[1] համար:

Երբեմն-երբեմն գրի՛ր մեզ կենցաղիդ, առողջությանդ մասին. Մարիետայի մասին. ո՞ւր են, ի՞նչպես են:

Բարևիր Մոսկվայի մեր բարեկամներին – Սեյֆուլինային[2], Անջելիկային, Քոչարյան ընտանիքին[3] (Վանյային և Ռոզային), մեր Ռուստավցի[4] նկարիչ բարեկամին, որի անունը, հենց գրելիս, միտքս չեկավ, բայց գիտեմ:

Ե՞րբ պիտի նորից հանդիպենք իրար. ե՞րբ պիտի վերադառնան խաղաղության այն չքնաղ օրերը, նորից գանք սիրելի Մոսկվան, ուրախանանք, ուտենք-խմենք, գրքեր գնենք – ափսո՛ս, ափսո՛ս ժամանակներ:

Եթե Ս. Մ. Խլեբարովան այդտեղ է, ջերմապես բարևիր:

Մերոնք՝ կինս, տղաս և հարսս կարոտով բարևում են քեզ, իսկ ես սրտագին համբուրում եմ քեզ՝ ցանկանալով առողջություն և երջանիկ օրերի վերադարձ:

Քո Ավետիք Իսահակյան

356. ՊԱՀԱՐԵԻՆ

1942, 30 դեկտեմբերի, Երևան

Շատ սիրելի Պահարե.

Երբ ստացա Հուսիկի[1] ձեռքով ուղարկածդ նամակդ և պոեմդ[2], առաջին նվագ կարդացի նամակդ: Պիտի ասեմ որ, Պահարե ջան, նամակդ չատ տխուր տպավորություն թողեց վրաս. բացարձակ հուսահատ մարդու, որ միայն ինքնասպանության միջոցով կարող է ելք գտնել ներքին և արտաքին դաժան իրականությունից. այո՛, հուսահատ մարդու ծանրագին տրամադրություն կար, որ երկյուղ էր ներշնչում ինձ, և եղբորդ ասացի, որ չատ լավ կանես Պահարեին բերես Երևան[3], մենակության մեջ չթողնես: Ա-

սաց, որ չի ուզում թողնել Թիֆլիզը, իր տունն ու դրադարանը, ունեցած-չունեցածը: Սակայն, երբ սկսեցի կարդալ փիլիսոփայական պոեմդ, ուրախացա, որ վերկված ես: Որովհետև դու քեզ տանջող, վոթոթրկող մտքերն ու զգացմունքները, այդ ներքին թուլյնը, առատորեն թափել ես, — դեղթափ ես եղել. — արտահայտել ես քեզ. դատարկել ես վերքիդ ժահրը և հանգստացել ես, այլապես այդ ժահրը կմաշեր, քեզ կուտեր: Այդպես է եղել և է, և կմնա բոլոր անկեղծ զգացողների, հուզվողների համար. և դա է պոեզիայի, արվեստի էությունը, նպատակը. արտահայտել, դրսևորել ներքինը — ասել, խոսել, անիծել, հայհոյել, գոռալ, լաց լինել — և դրանք հանգստացնում են, բուժում են, մխիթարում են: Գյոթեն պատմում է, որ երբ նրան իր սիրած տիկին Շտայնը մերժում է, Գյոթեն նստում է ձին, երեկոյան, և Շտայնի մոտից կատաղորեն [քշում] քշում է դեպի Վայմար, չափազանց հուսահատված, իջնում է [ծա] ձիուց և նստում է մի ծառի տակ... և հանկարծ ինքնաբուխ կերպով, անմիջապես մի փոքր ոտանավոր է գրում, դնելով այնտեղ իր վիշտը, տառապանքը, մեռնելու փափագը, և հանգստանում է, մխիթարվում է, ու ձին նստած հանգիստ, անդորրացած դնում է տուն:

Այսպես է եղել և քո ներաշխարհի համար. դու փրկված ես քո պեսիմիզմից: Սիրելի՛ս, մի տխրիր այլևս, զվարթ եղիր, ամեն բան լավ կվերջանա. դիմանալ պետք է, տոկունություն, համբերություն: Հաղթանակը մերն է: Անկասկած:

Հիմա քո գեղման մասին: Գրություն դ — այուժետային պոեմա չէ, այլ գեղմունք, փիլիսոփայություն, ողբ, բողոք, զայրույթ. ոտանավորդ ներդաշնակ է, հանգերը ճոխ են, [ըն] ընթացքը բնական է, դժվարությամբ չի կարդացվում, բռնազբոսիկ չէ, ճիգ, ղոռ չկա.— սրանք առավելություններ են:

Թեև պոեմադ մասսայական չէ, առայժմ չի ընդունվում, չի տպվի, բայց նա ամբողջապես ժամանակակից է. մեր դառն ու դաժան ժամանակը արտացոլված է: Բոլոր խոհերը, մտածումները, որ կարող է այս պատերազմը, այս անհուն, զարհուրելի սպանդը զարթնեցնել զգացող ու խորհող մարդու մեջ, առատորեն կան դրսևորված. – բողոք, զայրույթ, հուսահատություն, տենչանք՝ խաղաղ բարի կյանքի, հոգեկան կուլտուրայի, հումանիզմի – բոլորը կան՝ ապահովելու չափ: Ապագայում, պատերազմից հետո, երբ պոեմադ լույս աշխարհ ելնի, հասարակությանը պատկանի, ապագայի մարդը կտեսնի, թե ի՞նչ է զգացել-խորհել պատերազմի օրերին արձագանքող մարդը:

Հուզիչ տեղեր շատ կան, և դրվագների մեջ, և հրաժեշտի մեջ. այս բոլորը շատ լավ է, սակայն թերությունը այն է, որ կրկնություններ շատ կան. երկարախոսություն – խոշոր պակասություն է դա: Հեղինակը այնքան հուզված է, նրա հոգին այնքան խռովված է, այնքան ալեկոծված – որ չի հագենում ասելուց, և նորից ասելուց. կրկնում է և նորից կրկնում: Պահարե ջան, պիտի պոեմադ սեղմես, խտացնես, ամփոփես, դարձնես ավելի կուռ ու կոփ. ավելորդաբանությունները հեռացնելով գրվածքդ շատ կշահի: Գիտեմ, որ դա շատ դժվար է. հեղինակն իր գրվածքը, որ բղխել է հոգուց, դժվարությամբ է ձեռք զարկում մաղելու, դուրս ձգել, կրճատելու: Բայց ժամանակ անցնելուց հետո, երբ գրվածքը կհեռանա հեղինակից, այն ժամանակ, [երբ] իբրև օտար մի գործի վրա կնայի օբյեկտիվորեն – և քննադատի աչքով կնայի – և դյուրին կլինի այն ժամանակ կրճատելը, տաշելը, խուզելը. այսինքն՝ խտացնել: Իմացիր, որ տեխնիկա բառը և մեր տաշել բառը միևնույն արմատից են, միևնույն [իմատ] իմաստն ունեն: Այսքան:

Առողջ եղի՛ր, զվարթ եղի՛ր. ջերմագին բարևներ մեր բոլորից և համբույրներ ինձնից:

Միշտ քո՝ Ավետիք Իսահակյան

Լուսանցքում՝

Շնորհավոր Նոր տարի. ցանկամ որ այս Նոր տարին վերջ տա մեր բոլոր ցավերին: (կարծեմ Գ. Քաթիպայի խոսքերն են)[1]:

357. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 5 մարտի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Մեծ չնորհակալությամբ ստացա ընկեր Աչիկի միջոցով ուղարկածդ պանիրը և հիսուն ձուն: Սակայն ցավով պիտի ասեմ, որ այդ զինվորական Գարեգին Սարգսյանից բան չեմ ստացել, որովհետև չի բերել, չի երևացել. արդյո՞ք լավ ճանաչել ես նրան, որ ուղարկել ես հետը. չա՛տ անգամ յուրացնում են բերողները: Հետաքրքրվի՛ր ով է նա, ո՞ւր է ապրում, ի՞նչ չտաբումն է գործում:

Զարմանում եմ, որ Արաքսմանը[1] մերժել է բերել. ի՞նչ մեծ դժվարություն էր, որ մերժել է... Երևի նա վրեժ է հանել այն բանից, որ ես նրա թխած պիեսները՝ որ մի-երկու տարի առաջ ուղարկել էր արվեստի վարչության ժյուրիին,— ես բրակ արեցի:

Անդրանիկ ջան, այս տարի՝ հենց որ գարունը բացվի, գալու եմ Լենինական. և սիրելի Կարոյի[2] հետ կշրջենք:

Գրաբերս չտապում է, գրում եմ կարճ. նորից չնորհակալություն բոլորիդ մեր բոլորի կողմից՝ կնոջս, Բելայի, Վիգենի:

Ջերմ և կարոտալի բարևներով քեզ, մայրիկիդ, կնոջդ և ընկեր Կարոյին:

Համբույրներով քո Ավետիք

358. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 3 ապրիլի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Ջայնդ էլ չի լսվում. ինչո՞ւ ես լռել: Ընկեր Ստեփանյանը բերեց ուղարկածդ պանիրը և հավկիթը. ինչպես գրել էի քեզ, պանիրը պակաս էր (2 կիլո էր). եթե ուզում եք լրացնել, շատ ուրախ կլինեմ, և կուղարկես ընկ. Սուրեն Հարությունյանի[1] հետ: Գրել էի, որ գինվորականի՝ Գարեգին Սարգսյանի հետ ուղարկածներիդ երեսը մինչև օրս չտեսանք. այդ քաջը, ինչպես երևում է, յուրացրեց. հետաքրքրվեցեք: Հայրենի քաղաքս հազիվ մի բան ասթեց, նա էլ ավազակի որկորը մտավ:

Դրությունս չա՛տ վատ է...

Եթե կարտոֆիլ կա, գրիր մի կերպ բերել կուտանք:

Գրում ես, թե ե՞րբ ես գալու Լենինական. գամ, ուր ապրեմ, ինչպես ապրեմ. բայց կգամ, երբ пропуск *ձեռք բերեմ:*

Ջերմ բարևներ մայրիկիդ, կնոջդ, ընկեր Կարոյին և քեզ:

Ջեր Ավետիք Իսահակյան

3/IV 43
Երևան

359. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 12 ապրիլի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Մեծ չնորհակալությամբ ստացա ընկեր Կիրակոս Օհանյանից[1] ուղարկածդ – պանիրը՝ 2 կիլո և բրինձը՝ 2 կիլո 300 գրամ:

Ընկեր Օհանյանը ասաց, որ հիվանդ ես, հույս ունեմ, որ անցողակի բան է: Իմ առողջությունը վատ չէ, բայց ստամոքսս չարունակ հիվանդ է՝ վատ, անորակ սննդի պատճառով: Այդ էլ կանցնի, գարունը կգա, օդն ու ջերմությունը և պտուղները կվերակազդուրեն:

Հարցնում ես գրական աշխատանքների մասին – մեծ բաներ չեմ անում, մանր-մունր բաներ եմ գրում: Եվ բացի այդ – տրամադրություն չկա մեծ կտավներով աշխատելու:

Շատ չնորհակալ եմ, որ հրավիրում ես կամ հյուրընկալում ես ինձ, եթե գամ՝ կիջնեմ մոտդ: Սակայն երբ եմ գալու, դեռ որոշ չէ. սպասում ենք օրերը լավ տաքանան՝ հետո:

Ջերմագին բարևներ մայրիկիդ, կնոջդ, քեզ և ընկ. Պետրոսյանին. նաև կնոջս և մյուսների կողմից:

Ջեր Ավետիք

360. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆՑԻՆ

<19>43, 12 Հուլիսի, Երևան

Վաղուց էի ուզում քեզ նամակ գրել, ծուլանում էի և տրամադրություն չէր ստեղծվում:

Վերջապես գրում եմ մի քանի տող:

Առհասարակ մենք, ընկերներովս, լավ տրամադրության մեջ չենք. ապրուստի պայմանները ծանր են, ճարպային և շաքարային մասերը քիչ են, նիհարում ենք և թուլանում, աշխատունակությունից զրկվում: Պատերազմը չատ երկարեց և հոգնել ենք, միակ հույսը որ մեզ պահում է – դա այն բացարձակ ճշմարտությունն է, որ հաղթանակը մեր կողմն է, ուշ թե չուտ Գերմանիան ծնկի է գալու: Դիմանանք մինչև այդ մեծ օրին:

Սիրելի Հակոբ, ես մի 18 օրով գնացել էի Լենինական, շրջեցի ռայոնները, լավ ժամանակ անցրի, մի քիչ թարմացա, վերադարձա, բայց գրիպով մի քանի օր պառկեցի, հիմա լավ եմ. մի քանի օրից հետո գնում եմ Արագած՝ Սասունցիների մոտ հյուր. հրավիրել են ինձ. հույս ունեմ, որ լավ օրեր պիտի ապրեմ:

Այս տողերը գրում եմ մի խնդիրով առ քեզ — կարո՞ղ ես արդյոք իմանալ իմ թարգմանված և չտպագրված բանաստեղծություններիս[1] բախտի մասին. հարցնես Гослитиздат-ի խիտարովայից՝ ի՞նչ վիճակի մեջ են թղթերս, պահվա՞ծ են արդյոք թե կորած են, և վերջապես տպվելո՞ւ են երբևիցե: Այդքան: Իմացիր և գրիր ինձ:

Հետո, սիրելիս, դու գրել էիր Ն. Զարյանին ընկեր Ա. Ժադեևի ինչ-որ ասածի մասին. ինչ-որ թյուրիմացության մասին ինձ պարգևատրության համար: Ի՞նչ բան է այդ. ի՞նչ թյուրիմացություն է և ո՞ւմ կողմից: Շատ հետաքրքիր է այդ իմանալ:

Ո՞նց ես դու, առողջություդ, ապրուստդ, ո՞նց ես յոլա գնում. ո՞ւր է Մարիետան, աղջիկդ. ողջ առո՞ղջ են, ինչպես են:

Գալու մտադրություն չունե՞ս մեր կողմերը. թերևս մեզ մոտ ավելի լավ լինի. ո՞վ դիտե:

Դերենիկը մի կերպ քաշ է գալիս: Մի վեպ է գրել «Վարդանանց պատերազմը»[2] և չի կարողանում վերջացնել:

Նախրին ռայոն գնաց կոլխոզում աշխատելու համար:

Գրական նորություններ չկան:

Մերոնք լավ են և բարևում են քեզ:

Համբույրներով քո Ավետիք Իսահակյան

12. VII. 43 թ.
Երևան

361. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1943, 28 Հուլիսի, Իրինդ[1]

Սիրելի Սոֆիկ.

Արդեն 10 օր է այստեղ եմ. ժողովուրդը շատ լավ ընդունեց և լավ պահում, պատվում է. միայն խեղճ Արուսի[2] մահը տրամադրությունս շատ փչացրեց, չա՛տ ազդեց վրաս, և մի վայրկյան չեմ կարողանում մոռանալ: Ափսո՛ս, չա՛տ ափսո՛ս:

Ուրեմն դեռ մի 20 օր էլ կմնամ. ուրիշ գյուղերից հրավիրում են, հյուրասիրելու համար, մի-երկու գյուղ կգնամ:

Այս գրաբերիս՝ ընկեր Արշակից հետո պիտի Երևան գա Խաչիկ Դաշտենցը[3], նա կպատմե մանրամասնություններ: Պիտի մտածել վերադարձի համար — ավտո, ավելի լավ, թեկուզ գրուզավիկ, պիտի գտնել, թե չէ երկաթուղիով ինչպես պիտի բերել այն, ինչ որ Խաչիկը մեզ խոստացավ: Ո՞ւմ ավտոն: Թերևս Աշոտ Մարտիրոսյանի, կամ մեր Գրողների տան: Մի խոսքով, սա շատ ծանր խնդիր է:

Խաչիկը կգա, կխոսեք:

Ուղարկում եմ կինոյի՝ «Դավիթ Բեկի» համար, այս երկու ոտանավորը[4]. կհանձնեք Մխիթարին, Դավթյանին[5]: Սրանից լավը չեմ կարող գրել, բանաստեղծություն չկա մեջը, որ գրեի. ճառային բան է, որի համար ես չնորհք չունեմ: Չեն հավանում (եթե չհավանեցին), թո՛ղ ուրիշին տան, ես չեմ վիրավորվում: Ես առաջին պատվերը սիրով և պատվով կատարել եմ, սա երկրորդ պատվերն է, որը սրտովս չէ:

Էլ բան չունեմ գրելու, համբույրներ և բարևներ բոլորիդ:

Ավետիք

362. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1943, 16 օգոստոսի, Իրինդ

Սիրելի Հակոբ.

Նամակդ, որ գրել ես 2/VI, ստացա չորս օր առաջ այստեղ, Արագածի վրա, Իրինդ գյուղում, սասունցիների մոտ: Շատ ուրախացա՝ որ դիրքս տպվում է. բոլորովին հավատալս չի գալիս թե՝ դա իրականություն է. բնավ հույս չունեի. շատ ուրախ եմ և շատ չնորհակալ քեզնից և Ս. Խիթարովայից:

Արդեն սրանից մի ամիս ավելի առաջ քեզ նամակ եմ գրել, պատվիրած կվիտանցիան մոտս է (квитанция 233. Ереван 13/7) — *եթե չի հասել, կարող ես պահանջել. և խնդրել էի նամակովս, որ հետաքրքրվիեր դրքիս բախտով: Ուրեմն այդ եղավ:*

Հակոբ ջան, նաև խնդրել էի, որ դրեիր ինձ հետևյալ լուրի մասին. Նաիրի Զարյանը քեզնից նամակ էր ստացել (ես չկարդացի նամակը), որ դու ինչ-որ բաներ էիր հայտնել իմ մասին՝ ընկեր Ա. Ֆադեևի կողմից, ինչ-որ թյուրիմացություն վերաբերմամբ[1]... այդ ի՞նչ թյուրիմացություն է, ո՞ւմ կողմից, ով է մատ խառնել. վերջապես, եթե կարող ես ավելի որոշ բան դրել: Հետաքրքիր է:

Հիմա իմ այստեղ լինելուս մասին. այս շրջանը ունի 19 գյուղ սասունցիներով բնակված. մոտ 10-12.000 մարդահամարով: Ես նրանց հյուրն եմ. մի ամիս է այստեղ եմ, և նորից մի 15 օր էլ ապրելու եմ: Նրանցից պատգամավոր եկան և հայտնեցին ժողովրդի ցանկությունը՝ հյուր լինել իրենց մոտ, ընտանիքով. կինս չէր կարող գալ, ես եկա. հրաշալի պահում են, բառացի յուղ ու մեղրի մեջ եմ, ձիով շրջում եմ գյուղերը, Արագածի յայլանները, աղբ-

յուրները... Ահա իսկական գնահատանք ժողովրդի կողմից: Ես էլ պարապում եմ և թափառում:

Հա՛, արձակիս թարգմանությունները, որ թողեցիր Հրաչի՛ մոտ, – ձգձգում է, քաշ է տալիս, իրապես, նպատակ չունի հրատարակելու. նույնիսկ Կուսիկյանի հոդվածը թաղեց: Նա միայն խոստումներ տալ գիտե, և երբեք չկատարել: Վնաս չունի, պատերազմից հետո կլինի:

Ամսուս 12-ին Երևան, Գրողների տանը Մարիետային նվիրված երեկո է եղել 40-ամյակի առթիվ. ափսոս. ես բացակա էի: Քաղաք վերադարձիս կկարդամ «Новый мир» *մեջ նրա հոդվածը:*

Զգիտեմ, երևի կինս գրաբերիդ միջոցով քեզ գրած կամ հայտնած կլինի նամակդ ստանալներուս համար:

Համբույրներով և բարևներով քո Ավետիք Իսահակյան

Հ.Գ. Ջերմագին բարևներ Ս. Մ. Խլեբարովային – անպատճառ:

Ա. Ի.

363. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1943, 22 օգոստ<ոսի>, Իրինդ

Սիրելի Սոֆի.

Ստացել եմ ուղարկածդ բոլոր նամակները և թերթերը:

Ես ողջ և առողջ եմ: Եթե խանգարիչ հանգամանքներ չծագեն, շաբաթ օրը, ամսիս 28-ին, կդառնամ դեպի տուն: Խոստացել են ավտո տալ:

Մնացածի մասին ընկեր Դաշտենցը կպատմե:

Համբույրներ բոլորիդ

Ավետիք

364. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 30 օգոստոսի, Երևան

Սիրելի ընկ. Մաթեոս.

Լավ կանեի, եթե մնայի մի քանի օր էլ և իրերը հետս բերեի. վախենում եմ թե՝ իրերը ձեռքեձեռք անցնելով՝ կորին և ձեր բոլոր աշխատանքները զուր գնան. մի քանի դառն փորձ ունեմ, որ Լենինականից, Թիֆլիսից, Սարդարապատից ուղարկած մթերքները՝ ինձ հանձնելիք, կորան գնացին: Նույն խաղը չգա և սրանց գլխին:

Եթե ընկ. Անդրեյը հանձն առնի մեքենան ինքը բերի մեր դուռը — այն ժամանակ ուղարկել. իսկ չոփերի հույսին թողնել, կարող է կորչել:

Մի խոսքով այնպես արեք, որ փորձանք չպատահի, ափսո՛ս են:

Սիրելի Մաթեոս, եկա տեսա կինս հիվանդ պառկած. 15 օր է՝ հիվանդ է եղել, հիմա լավ է. և ուժեղ անունդ է պետք նրան՝ մեղր ու կարագ. մեկը կա, մյուսը չկա:

Խնդրում եմ ցորենի 8 փութը ալյուր կաղաս, մնացածը — 2 փութը՝ բլղուր (դընկով): Ուրիշ ոչինչ:

Շատ չնորհակալություն բոլորիդ, և ջերմ բարևներ Հմայակին, Արմենակին, Հակոբին, Խաչիկին (Խեչոյին), Մխիթարին, Հարությունին, Ղազարին, Գալուստին, ուստա Միհրանին, Հլոյին, տիկիններ Նվարդին, Մարիամին, Արուսին, և բոլորին՝ երիտասարդներին, և բոլոր իմ բարեկամներին:

Ջմռռանաք քաղաք գալուս ինձ այցելելու:

Միշտ Ձեր Ավետ. Իսահակյան

365. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 31 օգոստ<ոսի>, Երևան

Սիրելի Մաթեոս.

Մի կերպ հասա տուն. չատ նեղվածք էր: Լավ կլիներ, որ մնայի և իրերը հետս բերեի. հիմա չգիտեմ ինչպես պիտի անել, որ տեղ հասնեն. մի քանի անգամ փորձ ունեմ, որ ուրիշներին հանձնված բանները տեղ չեն հասցրել, մանավանդ չոփերները: Եթե ընկեր Անդրեյը հանձն կառնի, որ մեքենան բերի մեր դուռը կամ իր տունը տանի, մեզ իմաց տա՝ մենք գնանք բերենք, այն ժամանակ ուղարկիր նրա հետ, եթե ո՛չ, թո՛ղ մնա ձեզ մոտ, Դաշտենցը կբերի: Խնդրում եմ՝ ցորենի 8 փութը ալյուր աղաս, մնացած 2 փութը՝ բլղուր:

Եկա, տեսա կինս հիվանդ պառկած. 15 օր է հիվանդ է եղել, հիմա լավ է և ուժեղ սնունդ է պետք՝ մեղր ու կարագ. մեկը կա, մյուսը չկա: Սրա հետ գրում եմ և փակ նամակ:

Բարևներով Ձեր Ավ. Իսահակյան

366. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 14 սեպտեմբերի, Երևան

Սիրելի ընկ. Մաթեոս.

Երեկ ընկեր Անդրեյի միջոցով ստացա ուղարկածդ մեղրը, պանիրը, բլղուրը: Շատ և չատ չնորհակալ եմ: Մի վստահելի մարդու միջոցով կամ, եթե դուք կուղարկեք, գյուղ կուղարկեմ Հարությունի չայնիկը և վեդրոն:

Հիմա ընկ. Խաչիկ Դաշտենցին ասա ինձ մի նամակ գրե և ուղարկե հետևյալ ընկերների ազգանունները, որոնք թեև գրել էի, բայց կորցրել եմ թուղթը.

1. Աղջաղալեի[1] (Վերին Աղջաղալա) կոլխոզի նախագահի՝ Հարությունի ազգանունը.

2. Վերին Ղարաղորմազի[2] նախագահի՝ Գրիգորի,

3. Ներքին Ղարաղորմազի նախագահի՝ Աբրահամի ազգանունը

Ջմռռանաք:

Խնդրում եմ՝ մեր բարեկամներից ով որ քաղաք իջնի, ինձ մոտ գա, գրույց անենք: Ջխզվեն ընկերական-բարեկամական կապերը:

Սասունցիներին իմ տված այցելության մասին երկու հոդված[3] գրեցի. մեկը՝ Ամերիկայի և արտասահմանի մասին, ուղարկեցինք Մոսկվա. մյուսը արմենտատին[4] այսինքն հայկական հեռագրական գործակալության, որ պիտի տպվի ռայոնական թերթերում. բացի դրանցից գրում եմ շատ ընդարձակ մի օչերկ՝ պատմվածք-հոդված բոլոր տեսածիս, լսածիս մասին, գյուղերի, սարի, ջաղացների, մարդկանց մասին «Սովետական գրականություն» ամսագրի մեջ:

Ջերմագին բարևներ քեզ, Նվարդին, Հակոբին, Համայակին, Հարությունին, Գալուստին և Խաչիկին, ուստա Միհրանին, Հլոյին, Արմենակին, Մխիթարին, Դաշտենցին, իմ տանտիրուհուս՝ Արուսին, և բոլորին, բոլորին:

Ջեր Ավետ. Իսահակյան

367. ՆԱԻՐԻ ՋԱՐՅԱՆԻՆ

1943, 23 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Նաիրի.

Ես սասունցիների մոտ շատ լավ ժամանակ անցկացրի: Թափառեցի մի քանի գյուղեր, եղա Թալիշի ամառանոց-

ներում, աղբյուրների մոտ նստեցի, մտածեցի, երազեցի, հաց կերա: Հրաշալի ժողովուրդ է սասունցի ժողովուրդը՝ առողջ հոգով ու մարմնով, տղամարդ են՝ ազնի՛վ, աչխատասե՛ր, պատվո՛վ և հայրենասե՛ր: Ես հաճախ ասել եմ, որ արևմտյան (թուրքահայ) հայությունը չատ կողմերով բարձր է արևելյան հայությունից և այդ տարիների տեղեկությունը դառնում է ինձ համար կուռ համոզմունք:

Պարիլլիի[1] «Արա Գեղեցիկը» գրեթե կարդացել եմ և կարծեմ, իմ բերած գիրքն է, որ նվիրել էի Հայաստանի գրադարանին, ձեռքդ է անցել:

Լավ ես անում, չատ լավ, որ գրում ես «Արա Գեղեցիկը»: Լավ կստացվի (սա ասորական ոճ է), եթե մանավանդ որ ոգևորված ես խոսում, ուրեմն ապրում ես դրանով:

Ավ. Իսահակյան

368. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻՆ

1943, 26 սեպտեմբերի, Երևան

Սրբազան Հայր.

Դուք ինձ ասացիք թե Արսեն արքեպիսկոպոսի[1] սպասավորուհին տիկ. Հայկանուշը Ձեզ հետևյալն է հայտնել, որպես թե Արսեն սրբազանը 1943 թ. ապրիլ ամսին սբ. Էջմիածնից Երևան գալիս հետը վերցրել է 50.000 ռուբլի ու վերադարձրել է միայն 1.400 ռուբլի: Տիկինը այդ բանի վրա հրավիրում է Ձեր ուշադրությունը – ի՞նչ է եղել այդ գումարը (եթե իրոք եղել է), ո՞ւմ է տվել և ո՞ւմ փողն է եղել:

Որովհետև իբրև ազգականներ՝ Արսեն սրբազանը և ես, իրար մոտիկ ենք եղել. կարող է պատահել, որ ապագայում մարդիկ հանդես գան, գուցե նաև նրա հարազատնե-

րի միջից [նաև], և կապեն իմ անունը այդ ենթադրյալ գումարի և կամ այլ գումարների հետ, ուստի խնդրում եմ չատ, որ ամեն մի միջոց գործ դնեք այդ հարցը պարզելու իմաստով՝ կանխելու ապագա անախորժությունները:

Ավելորդ չի լինի, կարծում եմ ասելու Ձեզ հետևյալը. կատեգորիկ կերպով հայտնում եմ, որ ես կամ կինս, մի խոսքով մենք, ոչ մի դրամական առնչություն — տալ և առնել, փոխառություն չունենք Արսեն սրբազանի հետ:

Խորին հարգանքներով

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

369. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 1 նոյեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Նամակներդ ստացել եմ. ներողություն, որ ըստ իմ սովորության, նամակիդ ուշ եմ պատասխանում, թեև վերջերս գլուխս խառն էր, և քիչ էի գտնվում տանը: Մի քանի օրից հետո գնում եմ Մեղրի. մի չաբաթով. նրանից հետո՝ դժվար թե կարողանամ Լենինական գալ կամ Ղազարապատ գյուղը, որ չարունակ կանչում են: Ուշ կլինի, ցուրտ կլինի, վախենում եմ մրսել, հիվանդանալ:

Գալով կարտոֆիլին՝ եթե կարող եք մի կերպ ուղարկեք, եթե ոչ, գրիր մերոնցից մեկը դա, վերցնի, բերի: Բայց մի՞թե միայն կարտոֆիլ:

Սիրելի Ջեման նամակդ և արձակ բանաստեղծությունդ բերեց և խոսք տվեց նորից գալու մեր տունը և չեկավ. պիտի գար, որ պատասխանը տաներ: Արձակ բանաստեղծությունդ չա՛տ հուզիչ բան է, դեղեցիկ գրված.

զգացմունք կա և պատկերավոր է. փաստը ինքնին սրտամորմոք է, և համոզիչ, իրական է, ռեալիստական: Լավ բան է. միայն ցավում եմ, որ չպիտի տպվի. այսպիսի պեսիմիստական բան թուլլ չեն տա, մանավանդ հիմա: Բայց թո՛ղ մնա, մի օր կտպվի:

Մեղրիից վերադարձիս նամակ կգրեմ քեզ. թերևս, եթե եղանակները լավ լինեն, մի-երկու օրով գամ: Առայժմ ցտեսություն:

Ջերմագին բարևներ ընկեր կարոյին, մայրիկիդ, կնոջդ, եղբորդ, հարսիդ, ժանին և հարցնողաց. բարևներ մեր բոլորից:

Քո՝ Ավետիք Իսահակյան

370. Լ<ԵՎՈՆ> ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

<19>43, 28 նոյեմբերի, Երևան

Սիրելի բժիշկ Լ. Կ. Մելիք Շահնազարյան.

Ներողություն, որ Ձեզ մի փոքր անհանգստություն եմ պատճառում:

Գրաբերս իմ լավ բարեկամներիցն է. նա Ձեզ մոտ է գալիս մի խնդրով, որ, եթե կարելի է, չատ եմ խնդրում, որ բավարարեիք:

Նա Ձեզ կպատմի գործի մասին: Կխնդրեի նորից խորհուրդներ տայիք, թե ի՞նչ է հնարավոր անել: Վերջիվերջո փաստ է, որ տղան կատարյալ առողջ չէ, և հետևապես ընդունակ չէ, կամ սահմանափակ ընդունակ է: Ջնայելով որ թյուրիմացություն է պատահել, թերևս կարելի է ուղղել:

Խնդրում եմ՝ չխնայել հնարավոր աջակցությունը:

Խորին հարգանքներով

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

371. <ՎԱՀԵ ՎԱՀՑԱՆԻՆ>

1943, 1 դեկտեմբերի, Երևան

Մեծարգո Հայրենակիցդ Բ. Մարգարյան,

Ձեր գեղեցիկ նամակը՝ գրված Հուլիսի 1-ին[1], ուշացումով ստացել եմ:

Ամենից առաջ չնորհակալ եմ Ձեր՝ իմ հանդեպ հայտ բերած ջերմ զգացումների համար:

Հայրենիքի կարոտով գեղուն Ձեր նամակը, որ մեր աշխարհասփյուռ եղբայրների և քույրերի հայրենաբաղձ սրտերի թարգմանն է միանգամայն, կարդացի մեր կառավարության շատ ներկայացուցիչների, իմ ընկերների և բարեկամների մոտ: Նրանք բոլորն էլ շատ ուրախացան Ձեր այն սրտագին հետաքրքրության և խանդավառ վերաբերմունքի համար, որ ունիք հանդեպ մեր մեծ Հայրենիքի՝ Սովետների Միության, հանդեպ Ս<ովետական> Հայաստանի, մեր նվիրական իդեալների և մեր անօրինակ պայքարի և մեր հաղթանակի:

Մեծ Միությունը կյանքի և մահի կռիվ է մղում աշխարհը փրկելու նոր մոնղոլական բռնապետության, հայ մարտիկները՝ հերոսական կարմիր բանակի շարքերում և հայ ժողովուրդը թիկունքում, անձնվիրաբար կռվում են այն խորին գիտակցությամբ, որ մեծ Միության հաղթանակը իր հաղթանակն է և Միության անսասանությունը իր հայրենիքի անսասանությունը: Բովանդակ հայ ժողովուրդը գիտակցում է, որ այս ահեղ պատերազմը բախտորոշ, ճակատագրական շրջադարձ է իր բազմադարյան պատմության մեջ – դրա ելքից է կախված մեր կուլտուրայի, մեր լեզվի, մեր նորանվաճ պետության գոյությունը և մեր ֆիզիկական գոյությունն իսկ:

Հաղթանակը մերն է, – և հայ ժողովրդի ֆիզիկական և կուլտուրական գոյությունը ապահովված է սրանով ընդմիշտ ամեն տեսակետներից և ամեն կողմերից:

Մենք բոլորս չատ ուրախ ենք, որ գաղութահայությունը մեզ հետ[2] է իր զգացումներով և իր հավատով, ապրում է մեր դժվարությունները ու մեր պայքարը, և գալիս է օժանդակելու մեր մայր հայրենիքի գոյամարտը հաղթանակով պսակելու համար: Գաղութահայը իր հայրենասիրական պարտքը կատարելով՝ միաժամանակ բարձր պատիվն ունի մասնակցած լինելու հայ մարտնչող ժողովրդի դժվարին գործին և նրա փառապանծ հաղթանակին:

Սրտագին ու կարոտալի ողջույններ մեր բոլոր հեռավոր սիրելի հայրենակիցներին:

Միշտ Ձերդ՝ Ավետիք Իսահակյան

Հ. Գ. – Մեր «Վոքսի»[3] *վարչությունը սիրով ընդառաջելով Ձեր դիմումին՝ անհապաղ ուղարկում է Ձեզ ինչ որ առայժմ հնարավոր է – երգեր, նոտաներ, դրականություն: Ինդրում ենք միշտ կապ պահել մեզ հետ, սիրով կկատարվեն Ձեր դիմումները:*

Ավ. Իսահակյան

Հասցե՝
Երևան, փողոց Ղ. Ղուկասյանի 12, Ավ. Իսահակյան

Լուսանցքում՝ ձեռագիր նշում
Պատասխանված՝ 6 սեպտ<եմբերի> 1944-ին Հայաստ<անի> Բարեկ<ամների> Միության Գործ<ադիր> վարչ<ության>[4] *նամակին*

372. Տ<ԻՐԱՆ> ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

1943, 1 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Տ. Մարության.

---

* *Վոքս – համամիութենական հիմնարկ կուլտուրական կապի արտասահմանի հետ* (ծանոթությունը՝ Ավետիք Իսահակյանի):

Շնորհակալությամբ ստացա Նորայրի միջոցով ուղարկածդ նվերները, բայց, նամանավանդ, չատ ուրախացա, որ ողջ և առողջ եք. խիստ մտահոգված էի Ձեր մասին. գիտեի, որ գնացիք[1], թե ո՞ւր, Աստված գիտեր. մի խոսքով, չատ ուրախացա: Ձեր գրածները[2] ուրախությամբ պահում եմ, միամիտ եղեք: Խնդրում եմ, որ Երևան գաք, անպատճառ մոտս գաք, սպասում եմ:

Սիրով միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

373. ՊԱՀԱՐԵԻՆ

<19>43, 29 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Պահարե.

Ամենից առաջ բոլոր սրտով շնորհավորում եմ քո, եղբորդ, հարսիդ և մայրիկիդ Նոր տարին և ցանկանում բոլորիդ առողջություն, հաջողություն, երկար կյանք:

Ընկեր Գուրգեն Հովնանը[1] երեկ ինձ հայտնեց, — ինքն եկել էր Թիֆլիզից, — որ դու և այլ ընկերներ, որոնց անունը չեմ հիշում, շնորհավորել եք իմ ակադեմիկական կոչում ստանալու համար[2]. կարծեմ լավ չկազմվեց նախադասությունը. կարճ, շնորհավորել եք ինձ, որ Հայկական գիտակ<ան> ակադեմիայի անդամ եմ եղել:

Սիրելիս, այդ հեռագիրը չեմ ստացել, ինչպես և ուրիշ հեռագրներ՝ նույնիսկ մոտիկ վայրերից: Այս նամակը գրում եմ՝ նախ հայտնելով խորին շնորհակալությունս ինձ հարգող ընկերներին, երկրորդ՝ որ չար մտքեր չանցնեն քո և ընկերներիդ մտքով. գիտեմ, որ լավ տղաներ եք և գիտեք, որ ես էլ վատ չեմ: [Ի դեպ]

Ի դեպ ասեմ, որ ես չատ զարմացա, որ քեզնից հեռագիր կամ նամակ չառա. սպասում էի բնականաբար և տրամաբանորեն. սակայն այնքան փորձ ունեի, որ այդ վերագրում էի հեռագրատան կամ փոստային մեղքին:

Իմ կողմից ընկերներին Նոր տարվա բարեմաղթություններ հաղորդիր:

Ես լավ եմ, բայց չատ զբաղված եմ. կուզենայի ավելի հանգիստ լինել և իմ գրական գործերովս զբաղվել. տեսնենք, թերևս այդ [ցակալի] ցանկալի չրջանը գա:

Սիրելի Պահարե, դու ի՞նչ ես անում, ո՞նց է առողջությունդ, գործերդ: Ի՞նչ է անում Մարտինը, բարևիր նրան, կնոջը, զոքանչին:

Բարևիր Իսահակ Ալիխանյանին[3], կնոջը,
բարևիր Արմեն Տիգրանյանին[4], կնոջը,
բարևիր Մարիամիկին՝ Մոճոռյանին[5]:
Եվ բոլոր ինձ հիշողներին և բարեկամներին:
Ջերմագին բարևներ մերոնց բոլորի կողմից:
Սրտագին ողջույններով՝

միշտ քո Ավետիք Իսահակյան

374. ԿՈՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ

1943, 29 դեկտեմբերի, Երևան

Թանկագին ընկեր Կոնստանտինե.

Մեծ ուրախությամբ ստացա Ձեր չնորհավորական հեռագիրը: Շնորհակալություն Ձեր եղբայրական զգացմունքների համար:

Վաղուց է Ձեզանից ոչ մի լուր չունեի: Շատ ամիսներ առաջ Ձեզ նամակ էի գրել՝ Ձեր այն նամակին պատասխան, որով Դուք ինձնից թարգմանելու համար նյութեր էիք ուզել, նաև կենսագրական տեղեկանքներ: Ես որքան հիշում եմ, գրել էի, որ այդ ժամանակ չատ զբաղված էի և հետաձգել էի առժամանակ:

Ես, իմիջիայլոց, այս տարի չատ թափառեցի Հայաստանում, եղա իմ հայրենի Շիրակում, հայրենի քաղաքում՝ Լենինականում, մի ամբողջ ամիս, եղա Ալագյազ՝ Արագած սարում, լեռնային բազմաթիվ գյուղեր՝ ամիս ու կես ժամանակով, եղա նաև Մեղրիի շրջանում՝ Զանգեզուրի չքնաղ լեռներում, Արաքսի ափերում՝ Իրանի սահմաններին անմիջապես կից: Հետաքրքիր էին այս բոլորը՝ պատմական, էտնոգրաֆիական տեսակետներից:

Հիմա էլ զբաղված ենք Ակադեմիայի կազմուԹյան գործնական հարցերով[1]*:*

Շատ կուզենայի մի կարճ ժամանակով Թբիլիսիում լինել, բայց ձմեռ է՝ դժվարուԹյուններով լիքը: Հենց որ գարունը գա՝ կփորձեմ ինձ նետել Թբիլիսի:

Ամբողջ սրտով ու լավագույն զգացմունքներով չնորհավորում եմ Նոր տարին, Ձեզ ու Ձեր աղնիվ ու գեղեցիկ տիկնոջը՝ Միրանդային և Ձեր Թանկագին երեխաներին: Ողջույններ մեր բոլորի կողմից՝ կնոջս, Հարսիս, որդուս:

Ողջ լեր, սիրելի Կոտե, միշտ Ձեր՝

Ավետիք Իսահակյան

375. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>43, 29 դեկտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Մաթևոս.

Վաղուց է ձեր բոլորից ո՛չ մի տեղեկուԹյուն չունեմ. ինչպե՞ս եք, լա՞վ եք, առո՞ղջ եք: Զարմացած եմ և վիրավորված, որ Երևան եք եղել, և մոտս չեք եկել: Նվարդը և Մարիամը խոստացել էին գալ և չեկան: Գոնե մյուս անգամ, անպատճառ գաք:

Ես միշտ հիշում եմ ձեր բոլորիդ, և կարոտացել եմ. ի՞նչ լավ օրեր անցըրինք. ալբյուրների գլուխը, սարում, ջաղացների դռանը: Մոռանալու օրեր չեն:

Հիմա այս երկու տողով ամբողջ սրտով չնորհավորում եմ բոլորիդ Նոր տարին և ցանկանում եմ բոլորիդ առողջություն, երկար կյանք, հաջողություն. բարով ձեր սիրելիները պատերազմից ողջ և առողջ և հաղթան<ակ>ով տուն դառնան:

Սրտագին բարևներ քեզ, Նվարդին, հայրիկիդ, Հակոբ Պետրոսյանին, Գալուստ և Խաչիկ Քոթանյաններին, Համայակին, Արմենակին, կնոջը, Հարություն Հարությունյանին, ուստա Միհրանին, Ղազարին, Գևորգ Հեբոյանին, Հլոյին, բոլոր մեր բարեկամներին, իմ տնտեսուհի Արուսին և մեր աղջիկներին: Մի խոսքով բոլոր իրինդցոց. նաև ձեր դրացի գյուղերի իմ ծանոթ, բարեկամներին: Ջմռռանաս ամենքին բարևս հաղորդել:

Ջերմ և սիրո բարևներով

միշտ Ջեր՝ Ավետիք Իսահակյան

376. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>44, 31 մարտի, Երևան

Սիրելի ընկեր Անդրանիկ.

Վաղուց է ձայնդ չի գալիս. ի՞նչ ես անում, հո, հիվանդ չե՞ս: Երբ օրերը տաքանա, մի կարճ ժամանակով ուզում եմ Լենինական գալ: Կգրեմ վաղօրոք գալուս մասին:

Քեզ գրել էի, որ Թոռանս՝ Իսիկ Իսահակյանին[1], մի երեք փութ գետնախնձոր տայիք. այդ երեխան իմ խնամքի տակ է. ես եմ նրան պահում: Հիմա խնդրում եմ կատարես այդ. եթե դժվար բան է (ինչո՞ւ է դժվար՝ չեմ հասկանում) դիմիր ընկեր Կարոյին:

Ահա երեխայիս հասցեն – փողոց N 23, տուն 65, Աչիկ Ալոյան. Իսիկը մոտն է ապրում, մորաքույրն է: Կանչիր նրան և տուր:

Կանխիկ շնորհակալություններով և ջերմագին բարևներով ընկ. Կարոյին, քեզ, մայրիկիդ և բոլոր բարեկամներին:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

31/III 44 Երևան

377. Լ<ԵՎՈՆ> ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ

<19>44, 5 մայիսի, Երևան

Մեծարգո բժիշկ Լ. Կ. Մելիք Շահնազա<ր>յան.

Սիրելի բժիշկ!

Ներողություն, որ ես անձամբ չեկա Ձեզ մոտ, որովհետև չատ զբաղված էի. գրաբերս իմ հարսն է, տղայիս կինը: Նրա եղբայրը Ձեր լազարեթումն է հիմա, հիվանդ և չատ մաշված. կարմիր բանակային՝ Հակոբ Կպրիյան[1], III էտաժում, II պալատում. բժիշկ Սադոյանի անմիջական խնամքի տակ է և գիտե նրա հիվան<գ>ային դրությունը:

Շատ և չատ եմ խնդրում Ձեզ, սիրելի բժիշկ, բարի լինեք նրան արձակուրդ տալ, ինչքան հնարավոր է երկար ժամանակով, և առհասարակ [օգնինք] օգնիք, ինչով կարող եք, նկատի առնելով նրա մաշված վիճակը: Նրա ծնողները մեծ որդուց երեք տարի է լուր չունին, պատերազմի հենց սկզբից ֆրոնտումն էր. ծնողները ուզում են, որ իրենք որդուն իրենց մոտ տանեն, որ լավ խնամեն, լավ պահեն, փրկեն: Շատ հասկանալի է ծնողների հոգեբանությունը:

Նորից և նորից չատ խնդրում եմ չմերժեք խնդիրս և հավատացած եմ, որ այդպես էլ կանեք:

Խորին հարգանքներով և սիրով

Ձեր անկեղծ՝ Ավետիք Իսահակյան

5/V 44
Երևան

378. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ

1944, 4 Հուլիսի, Երևան

Սիրելի Ռուբեն.

Բացիկդ ստացել եմ, չնորհակալություն «հաղագս ամենայնի»: Երեկ էլ դրամն ստացա:

Հիվանդությունս չատ կարճատև եղավ. դեռ Աստծու աչքը վրես է. նույնը բոլոր սրտով ցանկանում եմ քեզ:

Սիրելագուլն Հովհաննիսյանի[1] *մասին կսկսեմ գրել, թեև չափազանց չոգ է: Մտածում եմ մի կողմ գնալ, չգիտեմ ո՞ւր: Ամեն տեղ անհարմարություններ կան կենցաղային տեսակետից:*

Դժվար թե կարողանամ հուշերս քեզ[2] *մինչև ամսի 10-ը հասցնել և վախենում եմ ճանապարհին կորչի: Տեսնենք:*

Այստեղ առանձին նորություններ չկան, տրամադրություն փչացնող չոգից դուրս:

Բարևներ մեր բոլորից քեզ և տիկնոջդ:

Քո՝ Ավետիք Իսահակյան

379. ՌՈՒԲԵՆ ԳՅԱՆՋԵՑՅԱՆԻՆ

1944, 14 հուլիսի, Երևան

Սիրելի Ռուբեն.

Երեկ եկա մի խնդրանքով մոտդ, բայց կա էիր, թեև Հարությունյանը խոստացավ գործը կարգավորել, բայց ինքը լավ չի հասկացել գործի էությունը:

Հարցը սա է – հարսիս եղբայրը՝ Հակոբ Կպրյանը[1]*, Ձեր ուսանողն է եղել (բժշկական) 1942 թվին, սովորել է երկու ամիս, հետո բանակ են տարել: Հիմա ազատված է բանակից և, բնականաբար, ուզում է նորից շարունակել ընդհատված ուսումը, բայց քննություն են պահանջում: Նա արդեն մի անգամ քննություն է տվել ու ընդունվել է, հիմա մի՞թե ավելորդ չէ երկրորդ անգամ քննությունը տալը և, քանի որ բանակում երկու տարվա ընթացքում, գրեթե իր ծառայությունից դուրս ուրիշ գիրք ձեռքը չառած, մոռացել է գիտցածը կամ կիսով մոռացել: Անհուն դժվարություն է նորից սկսել անցածը սովորել և ժամանակ կորցնել...*

Շատ եմ խնդրում, նկատի առնել նրա բանակային ծառայությունը, կորցրած ժամանակը և հնարավորության

սահմաններում զիջել և ընդունել առանց վերաքննության: Կարծում եմ, որ հնարավոր է և տրամաբանական է:

Ներողություն եմ խնդրում քեզ նեղություն պատճառելուս համար. երկուսիս համար էլ:

Հույս ունեմ, որ լավ ես, առողջ ողջ ընտանիքով:

Ջերմ բարևներով և սիրով միշտ Ջեր

Ավետիք Իսահակյան

380. ԽՈՐԵՆ <ՍԱՐԳՍՅԱՆԻՆ>

1944, 8 օգոստոսի, Վաղարշապատ

Սիրելի Խորեն.

Երիտասարդ Լևոն Բադիկյանը, որին ճանաչում եմ, որպես լուրջ, աշխատունակ տղայի, ջերմ փափագ ունի նվիրելու հայ նոր գրականության ուսումնասիրելուն և մասնագիտանալուն:

Հավատացած լինելով, որ նա կարդարացնի մեր հույսերը, առաջարկում եմ նրան, իբրև իմ թեկնածուն գրական ասպիրանտուրայի համար:

Խնդրում եմ չատ, որ ընդառաջես իմ և երիտասարդի դիմումին: Հուսով եմ այդ առթիվ:

Սիրով և ջերմ բարևներով քո Ավետիք Իսահակյան

8/VIII 44
Վաղարշապ<ատ>

381. ԱՇՈՏ <ԳՐԱՇԻԻՆ>

1944, 22 օգոստոսի, Երևան

Սիրելի Աշոտ.

Ինչպես մեր երջանիկ պապերն են սկսել իրենց նամակները, նույնպես էլ ես եմ սկսում – նախ և առաջ ունեմ սիրով և կարոտով բարև քեզ, սիրելի Մարգարիտին, մայրիկին, մեծին ու փոքրին և բոլոր հարցնողաց. թե մեր կողմանն կհարցնեք՝ մենք ողջ և առողջ ենք և ձեր տեսությանն ենք կարոտ. ամեն:

Սիրելի, կարոտալի Աշոտ, չնորհակալությամբ ստացել եմ գիրքդ՝ «Կռունկը»[1], չատ ուրախ եմ, որ չես մոռացել ինձ և թանկագին գիրքդ ուղարկել ես ինձ:

Գիրքդ միշտ սեղանիս վրա է, կարդում եմ և վայելում: Կարդում են և մերոնք, և բոլոր ինձ այցելողներին ցույց եմ տալիս իմ սիրած բանաստեղծությունները:

Գեղեցիկ են չատ «Ղարաբաղի կապույտ լեռներում» շարքի բանաստեղծություններից չատերը: «Վերադարձրեք իմ մանկությունը», «Ախ, միտս ընկավ» – սրանք գոհարներ են. զգացմունքով, գեղեցկությամբ, թարմությամբ լի:

Շնորհակալություն ինձ նվիրված երկու սիրուն բանաստեղծությունների համար: Ապրես, զորանաս, ավելի և ավելի առաջ գնաս, երգես նորանոր չքնաղ, լիրիզմով թաթախուն տաղեր. անսպառ լինես:

Գիրքդ վատ չի տպված՝ նկատի ունենալով պատերազմի պայմանները: Շուտով պատերազմը կվերջանա, երկիրը չունչ կքաշի և բախտ կունենանք լավ թղթի վրա կարդալու երգերդ:

Սիրելիս, առողջությունս վատ չէ, բայց էնքան էլ փայլուն չէ. սիրտս լավ չի գործում: Բայց կդիմանամ մինչև խաղաղության բարիքները տեսնելու օրերը և վայելելու մեր երազների իրականացման ոսկե պահը, որ ուշ չէ: Անին տեսնելու եմ անպատճառ[2]...

Վիգենը գալիս է մոտդ, կպատմի իմ մասին. կօգնես տոմսակ առնելու մեջ: Երևի այս տարի, աշնանը, ես Մոսկվա կգնամ, կանդ կառնեմ Բաքու և բոլորիդ կտեսնեմ:

Առայժմ ջերմ բարևներ բոլորիդ, մեր Բաքվի գրող ընկերներին և Ադրբեջանի գրող ընկերներին՝ Սամեդին (Վուրղունին), Ռզային և այլոց:

Բարևներ մերոնցից՝ Սոֆիկից և Բելայից:

Քո՝ Ավետիք Իսահակյան

382. ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

1944, 29 օգոստոսի, Երևան

Սիրելի ընկ. Հովիկ Մելիքյան.

Ընկեր Աչֆալի[1] թարգմանությունները Կռիլովի առակների, իբրև առաջին փորձ, ցույց են տալիս, որ նա կարող է թարգմանել: Համեմատաբար հաջող են, հետագայում պիտի մշակե:

Ուրեմն խնդրում եմ նրան հանձնես մի 15-20 առակներ, որպեսզի թարգմանի:

Բարևներով՝ Ավետ. Իսահակյան

29/VIII 44
Երևան

383. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1944, 15 <սեպտեմբերի>, Լենինական

Սիրելի Սեդա.

Գրում եմ Լենինականից. հասա թե ոչ՝ հեռախոսեցի Երևան և սրտի ցավով իմացա, որ մինչև ամսուս 20-ը կարող էի մնալ, որովհետև Զանգեզուր գնալներս հնա-

բավոր է նրանից (20-ից) հետո: Կարող էի մի-երկու օր էլ Դսեղի գեփյուռը վայելել. ափսո՜ս, հազար ափսո՜ս...

Հիմա անվերջ կրկնում եմ՝ անցած օրին օր չի հասնի, և երեկ լավ էր, քանց որ էսօր[1]: Մնաք բարև Ծովերի, Կաթնաղբյուրի և ս. Գրիգորի աղբյուր, երջանկալից պահեր, իմ կյանքիս վերջալույսի չքեղ ժամեր, անցաք անդառնալի:

Լենինականից գնում եմ կիրակի օրը մեր գյուղը՝ Ղազարապատ, որը ջրի տակն է անցնելու՝ ծրագրված և իրականացվելիք լճի հետևանքով. իմ մանկության վայրերը էլ արև չեն տեսնելու. թաղվելու են խավարի և խոնավության մեջ, ինչպես մի օր էլ ինձ է վիճակված այդպես թաղվելու:

Հիմա՛ր սենտիմենտալիզմ: Դո՛ւ ողջ լինես՝ մի՛շտ լավ, ջահել և գեղեցիկ:

Շնորհակալություն ձեր բոլորից, և՛ Արմենակից. և սրտագին բարևներ ձեզ բոլորիդ:

Միշտ քո՝ Ավետիք

384. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1944, 20 սեպտեմբերի, Լենինական

Սիրելի Սեդա.

Ինչպես տեսնում ես՝ դեռ Լենինականումն եմ և կմնկնեմ Երևան, երևի, կիրակի օրը: Ընկերները չթողին գնալ, պահեցին: Դու էլ ինձ արդեն ճանաչում ես, Համլետի ասածի պես, ես մի այնպիսի սրինգ եմ՝ (Ֆլեյտա), որի վրա ամեն ոք կարող է նվագել, և դրանով, կարծես, ավելի կատարյալ է լինում հարմոնիան (ներդաշնակությունը):

Մի խոսքով՝ չտապեցի եկա. ցավում եմ, որ չուտ թողեցի Դսեղը. չքնաղ էր, գեղեցիկ էր, անուշ էր Դսեղը ամեն կողմերով, ամեն խորություններով, բարձրություններով և լայնություններով. 16-17 տարուց ի վեր այսպիսի հաճելի,

քաղցր մոմենտներ, պահեր չէի ապրել, ինչ որ ապրեցի գեղեցիկ Լոռիի գեղեցիկ գրկում: Դսեղի համը բերանս մնաց, բախտ ունենամ և ժամանակ նորից կգամ:

Սեղա՛ջան, ինձ հյուրընկալող Արմենակի սեղանի վրա մոռացա, թողեցի մի տետրակ. եթե Նվարդի[1] հետ չեք ճամփել ինձ հանձնելու համար, խնդրում եմ չատ՝ որոնիր, գտիր և մոտդ պահիր:

Ջերմագին բարևներ Արմենակին, Ռեբեկային, Աստղիկին և տանտիրուհուդ:

Համբույրներ աչիկիդ և քեզ:

Միշտ Ձեր բարեկամը՝ Ավետիք Իսահակյան

Հասցես՝ Երևան, կամ մեր տունը, կամ Գրողների տունը, կամ Նվարդին:

385. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ

1944, 27 <սեպտեմբերի>, Երևան

Սիրելի Սեդա.

Արդեն մի շաբաթ է, որ Երևանումն եմ. Զանգեզուր գնալներս այս տարի չաջողվեց. ինձ տանողը բնավ ժամանակ չունեցավ: Ցավում եմ, որ չտապեցի Դսեղից հեռանալու, ուր վայելի չատ քաղցր և գեղեցիկ օրեր և վայրկյաններ: Անմոռանալի էին Ծովերը, Կաթնաղբյուրը, Ս. Գրիգորը: Անցած օրին օր չի հասնի և իրոք, որ երեկ լավ էր, քանց որ էսօր:

Եղա մեր գյուղը. չատ լավ ընդունեցին, բայց և չատ տխուր էր ինձ համար:

Լսեցի՞ք, որ մեռավ Մանուկ Աբեղյանը[1]. մեծ կորուստ էր. չա՛տ ափսոս:

Դուք ո՞նց եք, հուսով եմ, որ առողջ եք և լավ. կարծեմ Թիֆլիզ գնալուց առաջ մի-երկու օրով ուզում էիր Երևան գալ. չա՜տ լավ կլիներ:

Ջերմ բարևներ:

Ջեր Ավետիք

Լուսանցքում՝

Նորից խորին չնորհակալություն հյուրասիրության համար:

386. ԿԱՐԱՊԵՏ <ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ>

<19>44, 19 հոկտեմբեր, Երևան

Շատ սիրելի ընկեր կարո.

Բարևներդ չնորհակալությամբ ստացա ընկեր Անդրանիկի[1] միջոցով: Հույս ունեմ, որ լավ եք, առողջ և ուրախ:

Կարո ջան, խնդրում եմ այս տարի ևս մի քիչ օգնեք ինձ կարտոֆիլով և մյուս բանջարեղեններով: Երևի մյուս տարի լենը դուրս եկած կլինենք:

Ջերմ բարևներով ու կարոտով միշտ Ջեր

Ավետիք Իսահակյան

387. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1944, 28 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Լյուսի Թարդյուլի[1] միջոցով իմացա Շուշիկի[2] նկատմամբ քո և Կարոյի[3] ցույց տված մարդասիրության մասին: Խորապես զգացված եմ, որ հոգ եք քաշել, որպեսզի

հանգուցյալ տիկին Շ. Միրաքյանի թաղումը չքեղ լինի, որ անտեր չեք թողել: Հուր հավիտյան, մինչև մահ, գերեզման չեմ մոռանա ես նրան: Հիմա կարող եմ ասել, որ իմ կեսը մեռել է:

Քո՝ Ավ. Իսահակյան

388. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>44, 11 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Շնորհակալությամբ ստացա կարտոշկան՝ 15 փութ և մեղրը 5 կիլո:

Ուրեմն ջերմ բարևներս և խորին շնորհակալություններս սիրելի ընկեր Կարո Պետրոսյանին:

Սիրալիր բարևներ քեզ, մայրիկին, կնոջդ և բոլոր ընկերներին:

Ջեր՝ Ավետ. Իսահակյան

11/XII 44, Երևան

389. ՊԱՀԱՐԵԻՆ

<1945, փետրվար, Երևան>[1]

Сердечно поздравляем пятидесятилетие твоей дорогой для нас жизни. Желаем долгой плодотворной работы и счастливых дней.

Аветик Исаакян с семьей

390. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

1945, 29 մարտի, Երևան

Սիրելի Օննիկ.

Եթե, ուրեմն ընկ. Արեշյանը[1] հետ է տվել գիրքը, եթե ուրեմն ընկ. Հ. Մկրտչյանը[2] կամենում է, որ այս գիրքը անպայման տպվի, և ես է, որ հակառակվել եմ հառաջաբանի[3] պատճառով, մի բան, որին համաձայնել եմ այս խառնափնթորությունից առաջ – ուրեմն ես էլ եմ համաձայն: Ես ամեն բանի համաձայն եմ, միայն թե վերջանա այդ գլխացավանքը, և ինձ չղբաղեցնի:

Քո՝ Ավետիք Իսահակյան

29. III. 45
Երևան

P.S.[4]

«Մեծ ճշմարտությունը»[5], «Ամենապիտանի բանը»[6] հեքիաթները ի՞նչ սկզբնաղբյուր են ունեցել, որտեղից է

լսել, կամ կարդացել Իսահակյանը դրանք: Ի՞նչ ինքնատեղծ տարրեր է մտցրել նա այդ հեքիաթների մեջ:

– «Մեծ ճչմարտությունը» ինձ պատմել է հանգուցյալ դրամատուրգ Էմին Տեր Գրիգորյանը[7]. բայց ես ճոխացրել եմ:

– Իսկ «Ամենապիտանի բանը» չատ վաղուց եմ գրել, 1905 թվին. նյութը հայկական, ֆոլկլորից: Բայց մոռացել եմ, որովհետև վրայից անցել է ավելի քան 40 տարի: Շատ բարակ բաների հետև մի ընկնիր:

Բարևներով Ավ. Իսահակյան

391. ԼՈՒՍԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ

<1945, 27 մայիսի, Երևան>[1]

Սիրելի Լուսիկ ջան.

Սրտագին բարևներս քեզ, Մարտիրոսին, Սարիկին և Զարիկին: Ի՞նչպես եք, երբ եք գալու:

Զգիտեմ ինչո՞ւ տողերս ուղիղ չեն գնում, բայց սիրտս ուղիղ է:

Սիրելի Վարսիկը[2] քեզնից խնդրում է (նեղությունն պատճառելով քեզ), որ ձեռք բերես իմ լուսանկարներից 12 հատ. հույս ունեմ, որ ջանք կթափես:

«Փողի մասին էլ ամոթ է, մեր մեջ խոսելն էլ ավելորդ է» – եթե ուզում ես՝ ուղարկենք դրամը կամ այստեղ հաշիվը կմաքրվի:

Համբույրներով Ձեր Ավետիք Իսահակյան

[Նամակի դարձերեսին Վարսիկ Յուզբաշյանի նամակն է՝ ուղղված Սարյան ամուսիններին.]

Սիրելիք՝ Լուսիկ և Մարտիրոս.

Բարևներ արևոտ Հայաստանից: Երկտողս գրում եմ մեր սիրելի Վարպետի սեղանի վրա, նրա գրչով. այսօր հավաքվել ենք փոքրիկ Ավետիքի կես տարին լրանալու առթիվ[3]: Հիշեցի, ինչպես միասին, Լուսիկ ջան, Մոսկվայում փնտրում էինք այն լուսանկարչին, որի մոտ Վարպետը նկարվել էր պրոֆիլ, ձեռքերը ծալած: Լուսիկ ջան, ինչ գնով էլ լինի, Վարպետի, իմ և Այծիկի[4] խնդրանոք գտիր լուսանկարչին և մի 12 հատ գնիր այդ լուսանկարից և հետդ բեր անպայման:

Շատ բարևներով և համբույրներով՝ քո Վարսիկ

392. «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1945, 10 Հուլիսի, Երևան

Մենք գիտենք, որ ձեր հայրենաբաղձ հայացքները ուղղված են Հայաստան: Հայ ժողովուրդը անձնվիրաբար մասնակցեց հայրենական սրբազան պատերազմին ընդդեմ ֆաշիզմի և ռեակցիայի, իր ավագ եղբոր՝ ռուս սխրագործ ժողովրդի կողքին կանգնած նա կռվեց քաջի պես՝ պաշտպանելով մեծ հայրենիքը և իր կուլտուրան: Սովետների Մեծ Միությունը հաղթանակեց: Հայաստանն այսօր ցնծության մեջ է և լցված է հավատով մոտալուտ պայծառ ապագայի հանդեպ[1]:

Ֆաշիզմը չախչախումով ճնշված, ստրկացած ժողովուրդները ոտքի կանգնեցին, հերոսական կարմիր բանակը ազատագրեց ոտնահարված ժողովուրդներին: Առաջին իմպերիալիստական պատերազմի գործած անարդարությունը հայ ժողովրդի նկատմամբ պիտի վերանա. ռուս ազնիվ ժողովրդի աջակցությամբ բարբարոսների սրից մազապուրծ փրկված՝ թափառական, հալածական Հայերը պիտի ստանան իրենց անկապտելի իրավունքը — ազա-

տագրված հայրենիքը: Եվ պիտի իրականանա մեր դարերի բաղձանքը – մեր հայրերի նվիրական հողերում կարողանալ աշխատել և վայելել հայրենիքի քաղցրությունը:

Արտասահմանի հայությունը բոլորանվեր՝ մի սիրտ ու մի հոգի, պիտի նպաստեն այս վսեմ, այս ամենաարդար գործին:

Անձնական հավատ, տոկունություն և հաջողություն Ձեզ՝ բոլորիդ և քաջամարտիկ «Ժողովուրդ» թերթին:

Սիրով և կարոտով՝ Ավետիք Իսահակյան

393. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

<19>45, 11 օգոստոսի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Զարմանում ենք որ Սուրենը[1] ձեզ չի կարողացել համոզել որ հիվանդությունս ծանր է և ոչ չուտ անցնող – թեև վտանգը անցել է, բուժման պրոցեսը տևում է երկար. դեռևս Մասկվա կտեղափոխեն:

Եթե հիվանդությունս այլ ընթացք ստանա որ Մասկվա տանելու կարիք չի լինի, ես սեպտեմբերի վերջերին հազիվ ոտի կանգնեմ:

Ամեն մի չտապողական քայլ կարող է հիվանդությանս ծանր ընթացք տալ:

Շատ եմ ցավում որ մի անգամից չեք վերջացրել[2]:

Սրտագին բարևներ ընկ. Շ. Առուչանյանին[3], Կարո Պետրոսյանին և բոլոր ընկերներին:

Ցավում եմ, որ ակամա ձեզ նեղություն եմ պատճառել:

Բարևներով սրտագին քեզ և ընտանիքիդ մեզնից:

Իսկականի հետ ճիշտ է՝ Ավետիք Իսահակյան
11/VIII 45

394. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

1945, 1 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Օննիկ.

Ռուսերեն թարգմանութիւնների գրքույկս[1] մի-երկու օրով տարար և մինչև հիմա չվերադարձրիր, այնինչ բազմաթիվ ուզողներ կան՝ որ տեսնեն, օգտվեն:

Խնդրում եմ, գրքույկս հանձնես ընկեր Ամատունուն[2], որին անհրաժեշտ հարկավոր է:

Բարևներով՝ Ավետ. Իսահակյան

1. X. 45 թ.
Երևան

395. ՌՈՒԶԱՆՆԱ <ՎԱՐԴԱՆՑԱՆԻՆ>

<19>45, 28 դեկտեմբերի, Երևան

Երազական ու սիրելի Ռուզանին.

Մարդ այնքան մեծ է, որքան մեծ են նրա երազները: Արվեստը երազի իրականացումն է: Իրականութիւնը անցնող կյանքն է. արվեստն է հավերժականը ու ճշմարիտը:

Ավետ. Իսահակյան

28. XII. 45
Երևան

396. ՋԱՊԵԼ ՊՈՅԱՃՅԱՆԻՆ

1946, 6 հունվարի, Երևան

Մեծատաղանդ բանաստեղծ և նկարիչ Զ. Պոյաճյանին, Լոնդոն.

Շատ սիրելի բարեկամ օր. Զապել Պոյաճյան.

Ձեր նամակը չատ մեծ ուրախություն պատճառեց ինձ, կնոջս և որդուս և Ձեր բարեկամներին՝ Գարեգին Լևոնյանին և տիկին Աղավնուն[1]: Արդեն Ձեր առողջության և հաջողությունների մասին ինձ մանրամասն տեղեկություն տվեց պ. Ս. Քյուրքչյանը[2]: Պատերազմից ի վեր Ձեր վերաբերմամբ ոչ մի լուր չունեինք:

Հաճախ ենք հիշել Ձեզ մեր տանը՝ սիրով և կարոտով: Ձեր մասին խոսել ենք մեր շրջանում: Ձեր գեղեցիկ գիրքը՝ հայ լեգենդներն ու պոեմները անգլերեն[3], որ նվեր էիք ուղարկել ինձ Լոնդոնից, տակավին 1918 թ. Երևանում չատերին եմ ցույց տվել, որոնց մեծ հիացում է պատճառել և արդեն նրանք դրանով ծանոթ են Ձեր անձի և Ձեր գործի հետ:

Բնավ չեմ մոռացել հանգուցյալ տիկ. Մոշելեսին[4]. աչքիս առջև են նրա երկու փոքրիկ կազմած ալբոմները՝ նշանավոր մարդկանց ձեռագրերով:

Շատ ուրախ եմ, որ այս ահավոր պատերազմից դուրս եք եկել անվնաս և, մանավանդ ժամակորույս չեք եղել, բեղմնավոր աշխատանք եք տարել, այնքան գրական և նկարչական գործեր եք ավարտել:

Հիանում եմ Ձեր անսպառ եռանդի և ստեղծագործական մեծ հնարավորությունների վրա, որ իրոք եզակի է և

զարմանալի, մանավանդ Ձեր հայրենասիրությունը և նվիրումը հայկական արվեստի և կուլտուրայի հանդեպ ամեն գնահատանքից դերիվեր է:

Կփափագեի, մեծարդո բարեկամս, բոլոր սրտով կփափագեի, որ դուք երկար ու երկար ժամանակ լինեիք քաջառողջ՝ Ձեր բոլոր երազները իրականացնելու կարողությամբ, և բախտ ունենայինք Ձեզ տեսնելու մեզ մոտ, մեր պաշտելի հայրենիքում, որին այնքան նվիրված եք և սիրում եք այնքա՜ն անչեզ ավյունով, դիտակցորեն և բանաստեղծորեն:

Թանկագին բարեկամ, դրել եք, որ թարգմանում եք անգլերենի իմ «Աբու-Լալա-Մահարին»[5]*, չատ գգացված եմ և չոյված, կանխապես հավատացած եմ, որ հաջող և գեղեցիկ կլինի, գիտնալով Ձեր տաղանդը, փորձը և համառությունը, միայն կխնդրեի բարի լինեիք նկատի ունենալու հետևյալը, եթե թարգմանում եք Բոստոնում 1922 թվի տպագրված օրինակից, այնտեղ մի սխալ է սպրդված. 8-րդ տողում տպագրված է «Դու յավետ գթոտ, համը խորտակող...», պիտի լինի այսպես. «Դու յավետ գթոտ, մահը խորտակող...»: Եթե արդեն ուշ չէ, կխնդրեի՝ ուղղեիք. նաև չատ կխնդրեի, որ երկու օրինակ ինձ հասցնեիք:*

Ջերմագին բարևներ կնոջս, որդուս և իմ կողմից:

Սորին հարգանքներով միշտ Ձեր՝

Ավետիք Իսահակյան

Հ.Գ. – Կխնդրեի բարևս հաղորդեք պ. Ս. Ռյուբքչյանին:

Հասցես – URSS, Erevan, Armenie, 12 *փող.* Ղ. Ղուկասյանի:

Ավ. Իսահակյան

397. ԹԲԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԹԻՎ 5 ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

1946, 8 Հունվարի, Երևան

Հարգելի ուսուցիչներին և աշակերտներին.

Սիրելի ընկերներ.

Շատ եմ ցավում, որ Ձեր հեռագիրը, որով պատվել էիք ինձ շնորհավորելով իմ 70-ամյա հոբելյանը – ես մինչև այսօր չեմ ստացել: Ապահո՛վ եղեք, խնդրում եմ, ում որ չկարողանայի պատասխանել ժամանակ չունենալուս պատճառով կամ այլ հանգամանքի բերումով, Ձեզ անպատճառ կպատասխանեի՝ իմ անունը կրող դպրոցի վարչությանը և ուսանողությանը:

Սրանով, ուրեմն թեև ուշ, հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը Ձեր ուշադրության և Ձեր հարգանքի համար, որ տածում եք իմ անձի և գործի հանդեպ:

Բոլոր սրտով ցանկանում եմ Ձեզ՝ ամենքիդ, առողջություն. ցանկանում եմ հաջողություն և առաջադիմություն Ձեր ուսման մեջ. ապրեք մեր մեծ հայրենիքի համար: Ձեր սրտերում թո՛ղ միշտ վառ մնա սրբազան սերը հայ ժողովրդի հանդեպ, նրա լեզվի և գրականության հանդեպ, նրա բարօրության հանդեպ և Ձեր հավատը երբեք չտատանվի նրա լուսավոր ապագայի հանդեպ:

Խորին հարգանքներով և ջերմ բարևներով,

միշտ Ձեր անկեղծ Ավետիք Իսահակյան

8. I. 1946 թ.
Երևան

398. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ

1946, 3 ապրիլի, Երևան

Սիրելի Վեհափառ.

Հուսով եմ, ողջ-առողջ եք:

Ջատիկի կիրակի օրը կգամ սբ. Էջմիածին:

Նամակս բերողը՝ Գևորգ Վաթյանը[1], նախկին քահանա էր, որին Դուք տեսել եք. թերևս մոռացել եք: Ես նրա հետ ծանոթացել եմ 1940 թվականին Թելավ քաղաքում, ուր նա հայոց դպրոցի տեսուչ էր: Դպրոցը հենց նույն թվին փակեց վրաց կառավարությունը և նա անցավ վրացական դպրոցը ուսուցչի պաշտոնով:

Որքան ճանաչեցի նրան, կարող և դիտուն մարդ է:

Խնդրում եմ նրան թույլ տալ Ձեզ տեսնելու և դիմելու Ձեզ իր խնդիրքով:

Նա ուզում է նորից հայոց եկեղեցուն ծառայել և վարդապետության կարգ ընդունել: Իմ կարծիքով շատ հարմար անձ է. գիտի հայերեն, ռուսերեն, վրացերեն և տակավին երիտասարդ է:

Ջերմագին բարևներով և խորին հարգանքներով

Ավետիք Իսահակյան

399. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ

1946, 20 ապրիլի, Երևան

Համառոտ ինքնակենսագրություն

Ծնվել եմ Ալեքսանդրապոլում, 31 հոկտեմբերի, 1875 թ.: Հորս անունը Սահակ էր, մորս՝ Ալմաստ: Միջակ, բարեկեցիկ ընտանիք էինք:

Մանկությունս անցել է քաղաքում և Ղազարապատ գյուղում, ուր հայրս ջրաղաց ուներ և տնտեսություն:

Սիրում էի գյուղական միջավայրը, յայլա գնալը, հովվությունը, ժողովրդական երգերը, թափառական գուսաններին, որոնց նմանողությամբ 11-12 տարեկանից սկսել եմ ոտանավորներ գրել:

Սկզբնական կրթությունս ստացել եմ մայրենի քաղաքիս հայկական դպրոցում, որի փակումից հետո, 1885 թ. անցել եմ պետական քաղաքային դպրոցը, ուր դասերը կատարվում էին ռուսերեն լեզվով, միայն կրոնի դասերն էր հայերեն: Մի տարի այդտեղ մնալուց հետո, գնացել եմ Ղփչախ գյուղի Հառիճա վանքի երկդասյա դպրոցը, որ էջմիածնի Գևորգյան ճեմարանի նախադուռն էր: Այդ դպրոցն ավարտելուց հետո, գնացել եմ Գևորգյան ճեմարանը և երեք տարի աշակերտել եմ Կ. Կոստանյանին[1], բանաստեղծ Հ. Հովհաննիսյանին[2], Լ. Մանվելյանին[3], Ս. Լիսիցյանին[4]: Լավ աշակերտ եմ համարվել, բայց լսարանցիների հարուցած խռովությանը մասնակցելու հետևանքով վտարվեցի ճեմարանից, դպրոցական կուրսը չավարտած, 1892 թվին:

Գրական ասպարեզ եմ մտել «Տարազի» մեջ 1892 թ. դեկտեմբերին, մի ոտանավորով «Ծաղիկ էի նորաբողբոջ» վերնագրով:

1893 թվին մեկնել եմ Եվրոպա, գիտություն, լեզուներ ձեռք բերելու համար: Վիեննայի անտրոպոլոգների մուզեյում աշխատել եմ և լսել անտրոպոլոգիայի դասընթացները: Ապա տեղափոխվել եմ Լայպցիգ (Գերմանիա): Երկու տարի Եվրոպա մնալուց հետո 1895 թվին վերադարձել եմ հայրենիք: Հայ ազատագրմանը մասնակցելու հետևանքով բանտարկվել եմ ցարական կառավարության կողմից, մի տարի բանտ նստել, հետո աքսորվել:

Առաջին գիրքս լույս է տեսել «Երգեր ու վերքեր» խորագրով, 1897 թվի հունվարի 1-ին:

1900 թվին նորից մեկնել եմ Եվրոպա, այս անգամ՝ Յուրիխ, Ժնև: 1901 թվին վերադարձել եմ, վերստին բանտարկվել եմ, Թիֆլիսում: Դատավարությունից խուսափելու համար գաղտնաբար փախել եմ Թուրքիա, ապա Շվեյցարիա, Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա. 1911 թվից մինչև 1936 թ.: 1936 թվի դեկտեմբերի 5-ից գտնվում եմ Սովետական Հայաստանում: Սովետական քաղաքացի եմ:

Հրատարակած գրքերս

1897-1902 – Բանաստեղծությունների ժողովածու՝ «Երգեր ու վերքեր»
1903 – Նոր բանաստեղծությունների ժողովածու
1908 – «Երգեր ու վերքեր» լրիվ ժողովածու
1911 – «Աբու-Լալա Մահարի», պոեմա
1911 – «Աղա Նազար», պատմվածք
1920 – «Հայրենի աղբյուրից» բանաստեղծությունների ժողովածու
1920 – «Արճակ էջեր», պատմվածքներ
1922 – «Աչնան ծաղիկներ», բանաստեղծություններ
1922 – «Սասմա Մհեր», պոեմա
1929 – «Բանաստեղծություններ», ժողովածու
1929 – «Համբերության չիբուխը», պատմվածքներ
1932 – «Նրանք դրոշակ ունեն», պատմվածք
1940 – «Ընտիր երկեր», 2 հատոր
1943 – «Հատընտիր», բանաստեղծություններ

Սիրելի Հովնան.
Ահա այն, ինչ կարող էի գրել իմ մասին, ներիր, որ ավելին չեմ կարող գրել, ի վիճակի չեմ:

Ավ. Իսահակյան

20 ապրիլի 1946
Երևան

400. ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆԻՆ

1946, 6 հունիսի, Երևան

Հարգելի հայրենակից պ-ն Վահե Վահյան.

Սույն տարվա սեպտեմբերին Երևանում տեղի է ունենալու Հայաստանի Սովետական Գրողների Միության համագումարը՝ Ռուսաստանի և եղբայրական մյուս ռեսպուբլիկաների անվանի գրողների մասնակցությամբ:

Համագումարի[1] նպատակն է ամփոփել սովետահայ գրականության ձեռք բերած արդյունքները և նշել նրա զարգացման հեռանկարները:

Համագումարում զեկուցում է լինելու նաև արտասահմանյան հայ արդի գրականության մասին (համագումարի օրակարգը կցվում է սույն նամակին):

Հայաստանի Գրողների Միության Նախագահությունը հրավիրում է Ձեզ մասնակցել մեր համագումարին:

Խնդրում ենք հեռագրով հաղորդել Ձեր համաձայնությունը, ինչպես նաև մեկնելու օրը: Ցանկալի է, որ Դուք Երևան ժամանեք ոչ ուշ, քան սեպտեմբերի 15-ը:

Ուղևորության անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը կարող եք ստանալ Սովետական հյուպատոսությունում, որին կտրվի համապատասխան ցուցմունք մեր կառավարության կողմից:

Հայաստանի Սովետական Գրողների Միության
նախագահ՝ Ս.Վ. Իսահակյան[2]

Հայաստանի Սովետական Գրողների Միության
պատասխանատու քարտուղար՝ Հր. Գրիգորյան

401. ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՅԱՆԻՆ

<19>46, 12 Հուլիսի, Երևան

Սիրելի Հովսեփ ջան.

Մեծ ուրախությամբ ստացա սրտագին շնորհավորանքդ Ստալին<յան> լաուրեատի կոչումիս[1] առիթով: Զգացված եմ:

Սիրելի Հովսեփ, Մոսկվա է գալիս ընկեր Օննիկ Ղանալանյանը, որն իմ գրականության մասին մի հաջող մոնոգրաֆիա է գրել: Այդ գրությամբ ուզում է նա դոկտորության[2] քննություն բռնել Մոսկվայում: Շատ եմ խնդրում, որ աջակցես[3] նրան այդ պաշտպանությունը կազմակերպելու գործում, խորհուրդներ տաս և Ձեզնից կախված բոլոր միջոցները չխնայես: Դուք լավ գիտեք, թե ինչ է հարկավոր անել: Ծանոթություններ, կապեր, որ անհրաժեշտ են, նա իհարկե չունի կամ գրեթե չունի, հետևապես այդ պիտի անեք:

Կանխավ հայտնում եմ շնորհակալություններս:

Դուք Երևանից հեռացաք հանկարծակի և չկարողացանք իրար մի լավ տեսնել: Մնաց ուրիշ անգամին:

Ջերմագին բարևներով՝

միշտ Ձեր Ավետ. Իսահակյան

402. ՄԱՇԱ <ՄԻՐՋԱՅԱՆԻՆ>

1946, 10 Հոկտեմբերի, Երևան

Շատ սիրելի Մաշա.

Այնքան խոսք ունեմ ասելու քեզ և զգացմունք արտահայտելու, [որ] որի համար պետք կլինի տասնյակ էջեր գրել, սակայն բավականանամ մի միայն մի խոսքով

– չա՛տ և չա՛տ կարոտցել եմ քեզ, կուզեի մնացած կյանքիս մեջ գոնե մի անգամ տեսնեի քեզ:

Ուրախ եմ, որ ողջ և առողջ ես, և չես մոռացել ինձ, եղբոր և քրոջ սիրով:

Շնորհակալությամբ ստացել եմ Աշոտ Աբրահամյանի[1] միջոցով ուղարկածդ արծաթե մատիտը և այս անգամ էլ Արամ Երեմյանի[2] միջոցով՝ տապակերկան: Սրանք գուրգուրանքով պահում եմ քեզ միշտ հիշելով:

Ես տակավին առողջ եմ և աշխատելու ընդունակ: Ապրում եմ հայ ժողովրդի լավագույն ապագայի հավատով, և եռանդով մասնակցում եմ Սովետ<ական> Հայաստանի կուլտուրայի վերելքին:

Ամբողջ սրտով ցանկանում եմ քեզ և երեխայիդ երկար, առողջ կյանք, բախտավոր լինեք:

Ջերմաջերմ բարևներ կնոջս կողմից:

Համբուրում եմ ձեռքերդ:

Միշտ քո՝ Ավետ. Իսահակյան

10/X 46 թ.
Երևան

403. <ԴԱՆԻԵԼ> ԴԶՆՈՒՆՈՒՆ

1946, 31 Հոկտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր <Դ.> Դզնունի[1].

Տոմսս բերողը ներգաղթողներից է՝ Հակոբ Գրքեչարյան, ջութակահար է: Բնականաբար ուզում է աշխատել իր արվեստի գծով. ամեն կերպ պիտի ընդառաջել նրան: Արդեն դիմել է Ձեզ, որ ընդունենք օպերետի նվագողների մեջ:

Սրանով խնդրում եմ աջակցեք նրան և քննությունից հետո տեղավորեք:

Մնացածը կհասկանաք: Ներանց ընտանեկան դրությունը չա՛տ ծանր է:

Կանխահայտ շնորհակալություններով և ջերմ բարևներով

Ձեր Ավետիք Իսահակյան

31/X 46.
Երևան

404. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ

1946, 15 նոյեմբերի, Երևան

Սիրելի վեհափառ Տեր.

Գրաբերս այն անձնավորությունն է (իմ ընկեր քիմիկոս Արշավիր Գասպարյան), որի մասին պատիվ ունեցել եմ Ձեզ մոտ խոսել: Կբարեհաճեք նրա հետ մանրամասն խոսել և ծանոթանալ նրա բաղձանքների հետ:

Խորին հարգանքներով ու ջերմագին բարևներով

միշտ Ձեր Ավետիք Իսահակյան

405. ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻՆ

<1946, Երևան>[1]

Բոլոր սրտով ուրախ եմ Ստալինյան լաուրեատի բարձր կոչումիդ համար, որին իրոք արժանի էիր:

Ջերմ բարևներ տիկնոջդ, երեխաներիդ:

Ավետիք Իսահակյան

406. Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻՆ

1947, 9 հունվարի, Երևան

Երևանի դազգահ-գործիքային տեխնիկումի դիրեկտոր ընկեր Վ. Փափազյան

Հարգելի ընկեր.

Այս տոմսակս բերողները հայրենադարձ[1] պատանիներ են՝ Մասիսյան Հակոբ Պողոսի, 17 տարեկան և Ինճեյան Լազար Խաչիկի 18 տարեկան:

Նրանց հայրերին ես արտասահմանից եմ ճանաչում, մեր լավ, գաղափարական ընկերներիցն են: Մի-երկու ամիս առաջ են ներգաղթել Երևան:

Մասիսյան և Ինճեյան մեր պատանի ընկերները երկու տարի հաճախել են Փարիզի մեխանո-տեխնիկական մասնավոր դպրոց:

Հիմա շատ եմ խնդրում Ձեզ, հարգելի ընկեր, ամեն ջանք գործ դնել և ի նկատի ունենալ նրանց բացառիկ դրությունը, ընդունել Ձեզ հանձնված դպրոցում, որպեսզի տղաները իզուր ժամանակ չկորցնեն: Մանավանդ խնդրում եմ զիջողաբար վարվել նրանց լեզվի նկատմամբ, որովհետև գաղութահայերը հնարավորություն չունեին լրիվ հայերենով սովորել տեխնիկայի լեզուն, տերմիններըը:

Մեծ հույս ունեմ, որ կընդառաջեք իմ դիմումին. անձամբ պիտի գայի Ձեզ մոտ, բայց հիվանդացա և դեռ հիվանդ եմ:

Հարգանքներով Ավետիք Իսահակյան

407. ԽԱՃՐ ԷԼ ԴԻՆ ԷԼ ԱՍԱԴԻԻՆ

1947, 12 մարտի, Երևան

Kheir el Din el Assadi
Alep

Մեծարգո պրոֆեսոր, անգուգական բարեկամ.

Անհուն ուրախություն ունեցա ստանալու Ձեր երկրորդ սիրալիր նամակը Հալեպից 15/XI 1946 թվականին:

Ձեր առաջին նամակը և «Աբու Լալայի» թարգմանությունը[1] չորս օրինակ ստացել եմ 1941 թվի սկզբին և պատասխանել եմ հայտնելով Ձեզ իմ խորին շնորհակալությունները և հիացումը, որ արաբական ազնիվ և մեծահանճար ժողովրդի մի գիտնական և տաղանդավոր զավակը հոգով և սրտով հասկացել և զգացել է ինձ, և իմ գործը արաբական հին և հարուստ լեզվով վերարտադրել (փոխադրել):

Ցավում եմ շատ, որ այդ նամակը Ձեր ձեռքը չի հասել:

Վերստին հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը և հիացումս Ձեր պատվական անձնավորության և ջանքերի հանդեպ:

Արաբական գրականությունը, որին համեստ չափով ծանոթ եմ ֆրանսական, ռուսական և գերմանական թարգմանությունների միջոցով, շատ ոգևորել է ինձ, և մանավանդ մարգարեական հանճարով լցված անմահ Աբուլ Ալա Մահարին, որի կյանքով և գործով ներշնչված գրել եմ իմ քասիդը, որպես պաշտամունքի և հիացմունքի տուրք իմ կողմից հավիտենական Աբուլ-Ալային: Մահարայի մեծ մարգարեի ոգին եղբայրացրել է մեզ և եղբայրացնում է արաբ և հայ ժողովուրդներին: Այս շատ մեծ գրական գործ է երկուսիս կողմից արված:

Մեծարգո և շատ սիրելի բարեկամ, Սիրիայից և Լիբանանից ներգաղթող իմ հայ հայրենակիցները մեծ դժվա-

տով են խոսում Ձեր անձի մասին, նաև արաբ ժողովրդի մասին, որի հանդեպ ունեն երախտագիտության ջերմ զգացմունքներ:

Դուք փափագ եք հայտնում այցելելու Սովետական Հայաստանին: Հայ գրողներս և մտավորականները չատ խանդավառությամբ ընդունեցինք Ձեր փափագը: Մենք անսահման ուրախ կլինենք Ձեզ ունենալ մեր մեջ: Ձեր փափագի իրագործելը բնավ դժվարին բան չէ: Միայն Դուք պետք է Ձեզ մոտ գտնվող Սովետական Միության դեսպանությանը և կամ կոնսուլատին (ներկայացուցիչներին) դիմում կատարեք Սովետական Հայաստան (Սովետական Միություն) գալու վիզա (թույլտվություն) ստանալու համար և մեր անունը և հասցեն տալով միաժամանակ: Մենք այստեղից չենք կարող սկսել, դուք գործը այդտեղից պիտի սկսեք: Մենք սիրով կնպաստենք այստեղից:

Կցանկամ չուտ հաջողի այդ գործը և մենք բախտ ունենանք Ձեզ ողջունելու Երևանում:

Խնդրում եմ ընդունեք իմ սրտագին բարևները և խորին հարգանքները, մաղթում եմ Ձեզ երկար և բախտավոր կյանք և հաջողություններ Ձեր ազնիվ, մարդկային գործունեության մեջ:

Ավետիք Իսահակյան

12/III 47
Երևան

408. Ս<ԱՀԱԿ> ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ

1947, 29 մարտի, Երևան

Սիրելի ընկեր Ս. Մանվելյան.

Ստացա Ձեր նամակը: Իհարկե Ձեզ հիշում եմ, չեմ մոռացել: Շտապում եմ Ձեզ հայտնել, որ անհարմար է Ձեր

մի անտիպ գրվածքի հիման վրա խնդրել Վ<րաստանի> Ս<ովետական> Գ<րողների> Միությունը[1] Ձեզ անդամ ընդունելու համար: Խնդրում եմ մի քանի պատմվածքներ ուղարկեիք, որ կարդանք և ըստ այնմ վկայենք Ձեր մասին: Մանավանդ որ, ընկերներ Ա. Կարինյանի[2] և Թորգոմյանի[3] վկայություններն էլ բավական հնացել են. պետք է դրանք վերանորոգել:

Ջերմ բարևներով Ավետ. Իսահակյան

409. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ

1947, 21 ապրիլի, Երևան

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտին.

ինստիտ<ուտի> դիրեկտոր ընկ. Ա. Ղարիբյանին

Ընկ. Գ. Հովնանը չնորհակալ գործ է տեսել՝ ի մի հավաքելով XIX դարի մեր կլասիկների հայացքներն ու կարծիքները մեր գրական լեզվի մասին: Նյութերը վերաբերվում են արևելահայ գրական լեզվին:

Խ. Աբովյանի, մեր գրական լեզվի հիմնադիրներից ամենակարկառունի գրությամբ սկսվում է ժողովածուն: Ապա ժամանակագրական կարգով հետևում են հեղինակները մինչև Վ. Տերյան:

Հայ նոր գրական լեզվի (աշխարհաբար) զարգացման ընթացքը արտացոլված է մեր հեղինակների հոդվածների, բանավեճերի, առաջարկների և հարցադրումների մեջ:

Մենք տեսնում ենք աշխարհաբարի հաղթանակը գրաբարի վրա, ապա աշխարհաբարի կազմավորումը, և նրա պայքարը և հեռանկարը տիրապետող, ընդհանրական՝ գրելու և խոսելու լեզու դառնալու համար, գրաբարի և

բարբառների ձևերից և բառարաններից ի՞նչ չափով օգտվելու ծանր, դժվարին հարցերը՝ աշխարհաբարի հաստատման համար: Ինչքան պիտի հեռանալ գրաբարից գռեհիկ չդառնալու համար կամ ինչքան պիտի հեռանալ բարբառներից գրքային չդառնալու համար:

Մի կողմում՝ ժողովրդական (ժողովուրդի) կենդանի, պատկերավոր, ոճավոր, հյութալի լեզուն, մյուս կողմում՝ ջերմոցային, արվեստական, բայց զտված, էսպերանտոյի նման ոճից ու պատկերներից զուրկ լեզու[1]:

Օտար լեզուներից փոխառյալ բառերի և ձևերի հարցը:

Այսպիսի շահեկան հարցերով – ապրող լեզու չինելու հարցերով – լի է այս ժողովածուն, որը ցանկալի է տպագրվի, միայն նոր լրացումներով, եթե հնարավոր է, օրինակի համար՝ Րաֆֆիի, Պռոշյանի, Մուրացանի և ուրիշների տեսություններով ճոխացած:

Այդպիսի ժողովածուն՝ շատ օգտակար գիրք կլինի գրողների, ուսուցիչների և ուսանողների համար, նաև ընթերցող լայն հասարակության համար:

Ավետիք Իսահակյան

21. IV. 47
Երևան

410. Տ<ԻԳՐԱՆ> ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ

1947, 29 օգոստոսի, Երևան

Հայպետհրատի տնօրենին.
«Մուսա-Դաղի քառասուն օրերը»

Սիրելի ընկ. Տ. Ալեքսանյան.

Այսքանը կարող եմ ասել Ֆրանց Վերֆելի[1] և նրա վեպի մասին:

Ֆ. Վերֆելը ծնվել է 1890 թվին, հրեա ընտանիքում: Վիեննայի բնակիչ է: Գրում է գերմաներեն: Գրել է բանաստեղծություններ, վեպեր, դրամաներ. վերջիններից կան ռուսերեն թարգմանություններ: Եվրոպական գրականության մեջ համբավ ունի վաստակած: Առաջավոր դաղափարների կրող է:

Մեզ հետաքրքրող նրա վեպը Սուետիայի (Կիլիկիայի մի մասի) հայերի կյանքից է – նրանց օրհասական կռիվը ջարդարար թուրք կառավարության դեմ, 1915 թ.:

Թուրք ջարդարարները պաշարեցին Մուսա լեռը՝ հայերին կոտորելու, իրականացնելու իրենց հայաջինջ ծրագիրը, ինչպես իրականացրին Մեծ Հայքում և ամենուրեք:

Այս վեպի լրիվ խորագիրն է. «Հայկական հերոսապատում. Մուսա լեռան քառասուն օրերը, բախտորոշ դյուցազներգություն»: Բաղկացած է երկու ստվար հատորից, մոտավորապես 900-1000 էջերից:

Ի՞նչն է դրդել անվանի հեղինակին գրել այս հուզիչ վեպը հայ ժողովրդի գոյամարտի մասին, մի ժողովրդի, որի դատի հանդեպ ոչ մի համակրանք չունեին ոչ գերմաններ, ոչ ավստրիացիք:

Հեղինակը գրեթե բացառություն է գերմանական լեզվով գրողների մեջ, հայկական տրադեդիայով հետաքրքրվելու տեսակետից, և այս հանգամանքով նա մեզ համար շատ սիրելի է և հարազատ:

Հեղինակը այսպես է գրում այդ դրդապատճառի մասին.– «Այս գործը ծրագրվեցավ 1929 թ. մարտին, հեղինակին Դամասկոս բնակության միջոցին: Գորգի գործարանի մը մեջ աշխատող խեղանդամ ու սովատանջ մանուկներուն սրտաճմլիկ տեսարանը վճռական մղումը եղավ սովորական դեպքերու կարգեն խլելու և պատմականորեն դասավորելու համար հայ ժողովուրդին անտանելի ճակատագիրը: Այդ փոքրերը փախստականներուն զավակներն էին...»:

Այնուհետև հարգելի հեղինակը ձեռնարկում է հայ ժողովրդի պատմությունը, հայոց հարցը ուսումնասիրելու: Վիեննայի Մխիթարյանները[2] օգնում են նրան, և այլն, և այլն...

Այս վեպի մասին ես առաջին անգամ լսեցի 1933-34 թթ., Փարիզում: Պատահաբար կարդացի մի թերթում 1933 թվին գերմաներեն լեզվով լույս տեսած աչքի ընկնող գեղարվեստական գրքերի մասին. հոդվածը ստորագրել էր նշանավոր գրող Ստ. Ցվայգը: Ստ. Ցվայգը նշում էր 2-3 գրքերի անուններ, որոնք ամեն դրվատանքի արժանի էին. մեկը Ֆր. Վերֆելի վեպն էր. «Հայկական հերոսապատումը»:

Ես ձեռք բերի վեպը, կարդացի և հիացա: Օտար ականավոր հեղինակի կողմից գրված այս վեպը մեր արդար դատին նվիրված անգնահատելի գանձ է, եզակի, նմանը չունեցող: Մենք խորին երախտագիտությամբ պետք է մեր սրտերում ունենանք հեղինակի սիրելի անունը: Վեպը գրված է զգացմունքով, մեծ սիրով ու սրտով, և դեպի հայերն ու մեր դատը խորին համակրանքով:

Այս վեպը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Կուլտուրական ժողովուրդ չի մնացել, որի լեզվով փոխադրված չլինի հայ ժողովրդի դատը նվիրագործող այս երկը: Միայն տմարդի, նյութապաշտ դիվլոմատիան է, որ ամեն միջոցներով ուզում էր արգելակել նրա տարածումը Եվրոպայում և Ամերիկայում և չնչել նրա ներգործությունը:

1930-ական թվերին Ամերիկայի Մետրո-Գոլդվին[3] կինոֆիրման ձեռնարկեց այս վեպի նկարահանումը: Գործը հանձնված էր հայազգի հայտնի ռեժիսոր Ռ<ուբեն> Մամուլյանին[4]: Ռեժիսորը պատրաստություններ էր տեսնում, հայեր հավաքում. թերթերը խոսում էին դրա մասին: Հանկարծ լսեցինք, որ կինոֆիրման <դադարեցր>եց ձեռնարկը[5]:

Պարզվեց, որ թուրք կառավարությունը դիմել է Ամերիկայի կառավարությանը, որ վերջինս արգելի նկարահանումը՝ սպառնալով բոյկոտ հայտարարելու Ամերիկայի կինոնկարներին: Սակայն Մ. Գոլդվինը չհամաձայնեց: Այնուհետև թուրքերը դիմեցին Ֆրանսիային և փոքր Անտանտի պետություններին (Ռումինիա, Բուլղարիա, Հունաստան) նույն խմաստով: Նրանք միջամտեցին և խափանեցին ձեռնարկը: Փոքր Անտանտը և Ֆրանսիան պատճառաբանել էին, թե հայկական ջարդերը արդեն մոռացված պատմություն է, և անմտություն է եվրոպական խաղաղության տեսակետից նորից բորբոքել ժողովուրդների զգացմունքները, և դրգռել թուրքերի դեմ, և այլն, և այլն: Թուրքերը խոշոր գումարներ ծախսեցին այս նպատակի համար, կաշառեցին ժուռնալիստների, թերթերի:

Ջմոռանամ ասել, որ Հիտլերը արգելեց այս վեպի վաճառումը Գերմանիայում:

Սակայն վեպը իր հաղթանակը տարավ, թարգմանվեց 24 լեզուներով: Երկու անգամ չեխերեն լեզվով:

Մի ամերիկացի ընթերցող գրում է, թե՝ «Այս զարմանալի վեպը կարդալիս 4-5 օր ես կտրվել էի աշխարհից և ապրում էի հայերի տառապանքով և նրանց հերոսությամբ»:

Վեպը հայերեն թարգմանվել է[6] 1935 թվին հանդուցյալ գրականագետ Երվանդ Տեր-Անդրեասյանի ձեռքով (արևմտահայ բարբառով) և տպագրվել է Սոֆիայում: Որքան գիտեմ՝ ռուսերեն լեզվով չկա. ցանկալի է, որ այդ լեզվով էլ լինի[7]:

Շատ և շատ բաղձալի է և, մանավանդ շատ այժմեական և անհրաժեշտ, որ մեր Պետհրատը առանց հապաղելու ձեռնարկե այս չքնաղ վեպի թարգմանությանը[8] արևելահայ բարբառով և լույս ընծայի:

Ավետ. Իսահակյան

411. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

1947, 10 սեպտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Արա.

Նամակաբերս՝ ներգաղթած Թորգոմ Սեֆերյանը, վարպետ գորգագործ է (մարդկային դեմքը նկարող գորգի վրա): Կտեսնես նրա գործերը և կհամոզվես, որ իրոք չնորհալի արվեստագետ հյուսող է:

Խնդրում եմ շատ, քո աջակցությունը բերես նրան, միջնորդես, միջամտես, ուր որ հարկն է, գտնես նրա համար պատշաճ գործավայր: Ես լավ չգիտեմ այդ տեղերը. կարծում եմ, որ դու լավ գիտես:

Հույս ունեմ, որ կընդառաջես նրան և կանես, ինչ քեզնից կախված է:

Իմիջիայլոց՝ Գարեգին կաթողիկոսի նկարը[1] հիանալի էր:

Լրացուցիչ ասեմ, որ նրանք երկու եղբայր են, մասնագետ վարպետներ:

Ջերմ բարևներով՝ Ավետիք Իսահակյան

412. Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

1947, 7 հոկտեմբերի, Երևան

Հարգելի տիկին Ն. Համբարձումյան.

Հայտնում եմ իմ խորին չնորհակալություններս Ձեր խնամքի համար, որից շատ օգտվեցի:

Հույս ունեմ, որ մեզ մոտ բարի կլինեք հաճախելու ոչ իբրև բժիշկ, այլ բարեկամ:

Ջերմ բարևներով՝ Ավետ. Իսահակյան

413. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ

1947, 29 դեկտեմբերի, Երևան

Մեծարգո պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկ.

Սիրելի բարեկամ.

Սրանով հայտնում եմ Ձեզ, որ ստացել եմ իմ մասին Ձեր կարդացած զեկուցման ափիշը և «Ն. Բարաթաշվիլին և հայ գրականությունը» խորագրով Ձեր էսքիզը:

Խորապես չնորհակալ եմ Ձեր հատուկ ուշադրության [հանդեպ] համար, որ հայտ եք բերել իմ պոեզիայի հանդեպ[1]:

Շատ չոյված եմ, որ այդպիսի ընդարձակ զեկուցումով ներկայացրել եք իմ գրականությունը մեր հինավուրց բարեկամ վրաց հասարակությանը: Ժողովուրդները միմյանց գրականության հետ ծանոթանալով՝ կսկսեն ճանաչել իրար, գնահատել և մանավանդ սիրել: Սա ամենաազնիվ ճանապարհն է իրար մերձեցնելու: Դուք կուլտուրական գեղեցիկ գործ եք կատարել:

Մի-երկու խոսք «Աբու-Լալա-Մահարիի» մասին:

Սիրելի բարեկամս, ես չեմ հիշում[2] թե ո՞ւր և ե՞րբ եմ հայտնել թե Ն. Բարաթաշվիլիի անմիջական ազդեցության ներքո եմ գրել «Աբու-Լալան»: Ես «Մերանին» կարդացել եմ 1890-ական թվականներին Իվան դը Մաբիեի[3] թարգմանությամբ, ռուսերեն. իսկ Աբու – Լալան գրել եմ 1909 թվին: Դժվար թե ազդեցությունը այդքան երկար մնար, որով խոսք չի կարող լինել անմիջականի մասին: Սակայն կան բանաստեղծներ, որոնց ես շատ եմ սիրել և սիրում եմ.– Բայրոն, Հայնե, Միցկևիչ, Լերմոնտով և դրանց շարքում՝ Ն. Բարաթաշվիլի:

Աբու-Լալան Բայրոնի Ջայլդ Հարոլդի, Միցկևիչի Ցարիսի[4] և Բարաթաշվիլիի Մերանիի ոգուն շատ մոտիկ է,

ինչպես և նրանք չատ հարազատ են իմ տրամադրութ-յուններին. հոգեկան հարազատություն կա:

Ուրիշ ի՞նչ ազդեցության և նմանողության խոսք կա-րող է լինել: Գալով մեթրիկային – դա հայտնի քասիդի ձևերից մեկն է և պարսկա-արաբական բեյթը:

Երևի ասել եմ այդպիսի բան, և ենթարկվել է հիպերբո-լայի: Սակայն ոչինչ, սա հարց չէ. ժամանակ կա և քննա-դատություն, կպարզվի մի օր:

Վերստին հայտնելով սրտագին շնորհակալությունս, մնամ սիրով և բարևներով՝

Ավետիք Իսահակյան

29/XII 47
Երևան

414. ԱՐԵՎԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

1948, 26 ապրիլի, Երևան

Սիրելի ընկեր Արևիկ Գ. Բաղդասարյանին.
Ձեր չանքերի շնորհիվ տեղի ուեցավ իմ գրականութ-
յան պատվին այս գեղեցիկ երեկույթը:
Ձեր Ավետիք Իսահակյան

26. IV. 48

415. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

1948, 1 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Աշիկ.
Ես այս երեկո մեկնում եմ Թիֆլիզ, այնտեղից էլ Սոչի.
այս գրելով ուզում եմ ասել, որ ժամանակ չունեմ այս ե-
րիտասարդին անձամբ ներկայացնելու քեզ: Երիտասար-
դը Հունաստանից է ներգաղթել՝ Սիմյոն Գրքյաչարյան[1].
լավ հունարեն գիտե՝ հին և նոր. կարող է թարգմանութ-
յուններ անել. կլասիկներից: Հենց փորձի համար հանձ-
նիր Համբարձումյանի[2] թարգմանածներից մեկը՝ համեմա-
տելու համար: Դրանով շատ բան կպարզվի:
Երիտասարդը հայերենից շատ բան թարգմանել է հու-
նարեն՝ որոնք տպվել են Աթենքում: Իմ Աբու-Լալան
թարգմանել է, որից հատվածները լույս են տեսել հույն
թերթում:

Հիմա այսքան. վերադարձիս ավելի մանրամասն կխոսենք:

Բարևներով Ավետ. Իսահակյան

416. ՀՄԱՑԱԿ ՍԻՐԱՍԻՆ

1948, 28 Հոկտեմբերի, Սոչի

Սիրելի Սիրաս.

Վահանը[1] բերեց քո նամակը, չատ չնորհակալ եմ քո ուղարկած լավ լուրերի համար: Վահանն արդեն հեռագրեց քեզ ընկ. Համազասպյանի[2] հարցի մասին: Ես չատ մոտիկից չեմ ճանաչում նրան, բայց միշտ լավ եմ լսել նրա մասին. աշխատասեր է և ընդունակ: Այդ էլ մեզ պետք է: Այնպես որ, լիակատար համամիտ եմ բոլորի հետ նրան ընկերակցելու մեր աշխատանքներին, որպես քարտուղարի:

Ես (կամ մենք) լավ եմ (լավ ենք), սակայն խիստ կարոտել եմ Երևանին, մեր միջավայրին և գրասեղանիս: Առողջությունս նույնն է, միայն արյան ճնշումս 20 աստիճանի իջավ. հիմա 180 է: Բայց հիվանդությունս բացարձակապես նույնն է — ծերություն և հոգնածություն, որի առաջին մասը անբուժելի է, երկրորդը կարելի է մի փոքր մեղմացնել:

Նոյեմբերի 7-ին լրանում է սանատորիայում մնալու մեր ժամկետը: Եթե Աստծուց դուրս չգիտեմ ինչը կամենա, նոյեմբ<երի> 10-12-ը կլինենք տանը:

Ջերմ բարևներ մեր կողմից քեզ, Քոչարին[3], տիկնոջդ և հարցնողաց:

Միշտ Ձեր Ավետիք Իսահակյան

417. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

1948, 24 նոյեմբերի, Երևան

Սիրելի Իվան Կոնստանտինովիչ.

Ձեր և տիկին Մարտիրոսյանի նամակները ստացել եմ, թեև ուշ եմ պատասխանում, որովհետև նոր եմ վերադարձել Երևան: Այս երկու օրս Ձեր հասցեով կուղարկենք 1000 ռուբլի տիկնոջ համար և նորից Գրողների միության անունով դիմում կանենք կառավարությանը կենսաթոշակ նշանակելու համար:

Սրտագին բարևներով՝ Ձեր Ավետիք Իսահակյան

418. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1948, 4 դեկտեմբերի, Երևան

Սիրելի Հակոբ.

Վաղուց ուզում էի քեզ նամակ գրել, բայց տրամադրություն չէր ստեղծվում: Ամբողջ տարին, գրեթե ամբողջ տարին հիվանդություններից աչք չենք բացել.— ես հիվանդացա, թոռս երկու անգամ հիվանդացավ, հիմա էլ կինս է հիվանդ: Աշնանը գնացել էինք կնոջս հետ Սոչի (Сочи), *կինս հիվանդ վերադարձավ: Մի խոսքով, հիմա լավ ենք:*

Լսեցի, որ ուզում էիր գալ Երևան. սպասեցինք. չէ՞ որ ռիթմը սա էր — քո ռիթմը — ամեն աշուն Երևանում երևալ:

Շա՜տ և շա՜տ չնորհակալություն քո տարած արժեքավոր աշխատանքների համար՝ ի նպաստ հայ գրականության. նովելլաների թարգմանությունը՝ շա՜տ մեծ գործ է, երախտավոր աշխատանք: Այս երկու օրս տղաս բերեց

«Знамя надежды»[2] *պատմվածքներիս ժողովածուն, «Огонек» հրատարակությամբ. սա արդեն նվաճում է՝ հայ գրականության նվաճում. քիչ բան չէ. բարեկամները շատ են ուրախացել:*

Միայն զարմանամ եմ, թե ինչո՞ւ «Гарибальдиец»ի սկիզբը կրճատել եք և հանկարծակի սկսվում է պատմությունը ո՛չ մի բանի հետ չկապված, կարծես օդի մեջ է: Ով կարդաց, ով կարդացել է, նույն նկատողությունն է արել:

Սիրելի Մարիետայի հոբելյանը[3] *չնորհավորող մի նամակ էի գրել, որ վերադարձել էր և մեր քարտուղարը նորից հետ էր ուղարկել: Զգիտեմ, վերջիվերջո ստացել եք թե ո՛չ:*

Սրտագին բարևներ քեզ և Մարիետային:

Ձեր Ավետիք Իսահակյան

419. Վ<ԱՂԻՆԱԿ> ՄՌԱՎՑԱՆԻՆ

1948, 7 դեկտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Վ. Մռավյան.

Գրաբերներս բանաստեղծուհի Արշալույս Մարգարյանի քույրը և ամուսինն են[1]*: Արշալույսը երեխայի վրա՝ արյան վարակում է ստացել. պենիցելին սրսկել են, բայց նորից պետք է սրսկեն. հիվանդի կյանքը վտանգի մեջ է. անհրաժեշտ է նորից պենիցիլին 600.000 – խնդրում եմ շատ բարի լինեք կատարելու մեր խնդիրքը՝ պենիցիլին բաց թողնել:*

Սիրով և բարևներով՝ Ձեր Ավետիք Իսահակյան

420. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

<19>49, 14 փետրվարի, Երևան

Սիրելի բարեկամ Իվան Կոստանտինովիչ.

Սով<ետական> Հայաստանի Գրողների Միությունը առաջարկում է Ձեզ հետևյալը և խնդրում է, որ այդ իրականացնեք:

Դուք որոշել եք, որ հանգուցյալ մեր մեծ գրողների՝ Րաֆֆիի, Գ. Սունդուկյանի, Հով. Թումանյանի գերեզմանները առանձին լինեն՝ հատուկ դամբարաններով և նրանց չուրջը տեղավորեք մյուս գրողներին[1]:

Գրողների Միությունը նկատի ունենալով հանգուցյալ բանաստեղծ Հակոբ Հակոբյանի[2] դրաված տեղը հայ գրականության մեջ, իբրև առաջին պրոլետարական խոշոր բանաստեղծի, անհրաժեշտ է գտնում, որ նրա գերեզմանն էլ մեծ գրողների պես առանձին շիրիմով նշանակվի:

Խնդրում եմ այդ մասին բարի լինեք դրելու մեզ, որ իմանանք թե հասել է Ձեզ մեր դիմումը, նաև Ձեր ձեռնարկի մասին:

Խորին հարգանքներով Ձեր՝ Ավետ. Իսահակյան
Ս. Հայաստանի Գրողների Միության նախագահ

421. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1949, 16 փետրվարի, Երևան

Հակոբ ջան.

Նամակդ ստացա՝ Սևունցի ձեռքով ուղարկված: Հարցդ դրինք մեր ժողովի առաջ. որոշեցինք քեզ հրավիրել մարտ

ամսի վերջերին կամ ավելի շուտ. դրա մասին քեզ կհեռագրենք: Ներողություն որ ուշ ենք պատասխանում, որովհետև շատ անհետաձգելի հարցեր ունեինք. հիմա էլ մերոնք զբաղված են և պիտի նյութեր պատրաստեն քեզ համար:

Մենք լավ ենք. անցյալ շաբաթ ես հիվանդ էի. մրսել էի, բայց հաջող վերջացավ, բարդություն չառաջացավ:

Սրտագին բարևներ մերոնց կողմից քեզ, Մարիետային և աղջկադ:

Համբույրներով քո Ավետ. Իսահակյան

422. ՄԵՐԻ <ՍԱՂՅԱՆԻՆ>

<19>49, 15 մարտի, Երևան

Սիրելի Մերի.

Խնդրում եմ գրաբերիս, ընկեր Յոլակ Դավթյանին հանձնես «Փորձ»[1] ամսագիրը և ինչ որ մի կողմն էինք դրել, Ս. Էջմիածնի դպրոցի[2] համար:

Բարևներով քեզ, մայրիկին, Սուրենին:

Ավետ. Իսահակյան

15. III. 49.
Երևան
Հասցե. Սուրեն Սաղյան
Սպանդարյան փողոց 21

423. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

1949, 8 Հունիսի, Երևան

Սիրելի Հակոբ.

Նամակդ ստացա մի քանի օր առաջ, բայց Պուշկինի Հոբելյանի[1] գործերով շատ զբաղված լինելով, պատասխանը մի քիչ ուշացավ:

Երեկ տեսա Պետհրատի դիրեկտոր ընկեր Աչիկ Ղազարյանին, ծանոթացա գործին[2], խնդրեցի, որ բանը դատարանի չանցնի, խաղաղությամբ լուծենք: Խոստացավ դատարանի չդիմել:

Դու ուզում ես քո ծախսով Երևան գալ. լավ ես անում. գալդ կարևոր է, իսկ ես խոստանում եմ իմ միջամտությունը՝ վեճը քաղցրությամբ լուծելու համար. ուրեմն սպասում ենք քո գալուն:

Ջերմ բարևներ սիրելի Մարիետային, և քեզ համբույրներ:

Քո Ավետիք Իսահակյան

8/VI 49 թ.
Երևան

424. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1949, 15 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆի.

Արդեն մի չաբաթ է որ տանն եմ. Մոսկվա գնալ-գալուց[1], ժողովներից, մարդկանցից այնքան հոգնել էի, որ հազիվ հիմա հանգստացել եմ:

Վիդենը վաղը-մյուս օրը կմեկնի դեպի քեզ. խեղճին թույլ չէին տալիս չուտ գալու: Հույս ունեմ, որ հիմա բավական լավացած կլինես. գոնե հանգստացած:

Տան խնդիրը[2] ուղղակի ծերացրեց ինձ. մի օր միայն պարսպի համար քար թափեցին, նորից կանգ առավ, իսկ կենտրոն<ական> տաքուբյունը՝ ընկ. Գրիգորյանը խոստացավ տեսնել Ե. Վարդանյանին[3], որ նյութեր տան՝ անմիջապես սկսելու. դեռ նշան չկա: Մյուս բաները վերջացած են՝ ներքևը, բակը:

Բոլորս լավ ենք, Ավիկը[4] սարսափելի չար է, ուղղակի հոգի է հանում:

Համբույրներով Ավետիք

425. <ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔԶՅԱՆԻՆ>

1949, <24 սեպտեմբերի>[1], Երևան

Էջմիածին Մայր Տաճար
Վեհափառ կաթողիկոսի<ն> ամենայն հայոց.

Պատիվ ունեմ չնորհավորելու Ձեր անվանակոչության տոնը. ցանկանում եմ Ձեզ երկար և գործունյա կյանք:

Ավետիք Իսահակյան

1949 թ.
Երևան

426. ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ

<19>49, 4 հոկտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Վարդան-Աչոտ[1].

Շատ ուրախ եմ, որ վիպակդ այդպես գնահատվում է, մնում է որ լավ թարգմանվի և ընդունվի:

Ես խոսեցի «Սովետական գրականության» ժուռնալի փոխ-խմբագրի[2] հետ (խմբագիրը բացակա է Երևանից): Նա ասաց, որ իրեն հայտնի չէ, բայց քանի որ Պետհրատի[3] մոտն է, ուրեմն կառնենք նրանց մոտից, կկարդանք և այնուհետև կարող ենք ասել՝ կընդունենք թե ոչ:

Չի խանգարի, որ առաջ ռուսերեն լույս տեսնի, հետո հայերեն բնագիրը. նույնիսկ լավ կլինի, որ օտարներն ա-

վելի են ուշադիր, գնահատում են և հասկանում, քան մեր-ոնք: Անկախ դրանից դու աշխատիր որ Մոսկվայում լույս տեսնի, որքան կարելի է՝ շուտ:

Ես չարունակ կհիշեցնեմ նրանց, որ չտապեն, ականջի հետև չձգեն:

Ջերմ բարևներով հարգելի տիկնոջդ, քեզ և ընկերներին:

Ջեր՝ Ավետիք Իսահակյան

427. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

1949, 29 Հոկտեմբերի, Երևան

Սիրելի ընկ. Վահան.

Երևակայում եմ, թե ինչքան պիտի մտահոգված լինեք, որ մինչև հիմա չեմ պատասխանել շատ սիրելի Մ. Ռիլսկու սիրելի նամակին[1], նվերին և առաջարկին, թեև վրայից մի ամիս է անցել: Պատճառները ինձնից անկախ էին: Ռիլսկու և քո նամակները ստանալուց մի երկու օր հետո ես շատ ծանր հիվանդացա, մոտ մի ամիս անկողնում էի, հիմա եմ միայն ոտքի կանգնելու և դեռ դուրս չեմ գալիս տնից:

Ուրեմն միայն հիմա կարող եմ զբաղվել ընկ. Ռիլսկու առաջարկով՝ թարգմանական նյութեր ուղարկելու համար: Տպված գրքերիցս եմ որոնում: Հազիվ կարողացա գտնել 1940 թվին Երևանում հրատարակված երկու հատորս, պիտի մեքենագրել տամ մի շարք բանաստեղծություններ, որոնք չկան այդ հատորների մեջ և դրանցից հետո գրված:

Այնպես որ, ես կարող եմ ուղարկել Ձեզ այդ երկու հատորները, մեքենագրված նյութեր և ռուսերենի թարգմանությունները (հատընտիր) լույս տեսած 1945 թ.[2]:

Այս երկու օրս նամակ կգրեմ ընկ. Ռիլսկուն: Առայժմ բարի եղեք հայտնելու թանկագին ընկեր Մ. Ռիլսկուն իմ սրտագին շնորհակալությունները, նաև ընկ. Ա. Մալիշկոյին[3], որոնք բարի են եղել թարգմանելու իմ ոտանավորները մեծ ուկրաինական ժողովրդի բանաստեղծական լեզվով: Դա մեծ պատիվ է բերում ինձ:

Ներողություն եմ խնդրում Ձեզ սպասել տալու համար:

Ջերմ բարևներով իմ կնոջս կողմից, որ Մամիկոնյանների թոռն է, քեզ և ձերոնց:

Միշտ ձեր անկեղծ Ավետիք Իսահակյան

Հասցեն՝ Երևան
Ав. Исаакяну, ул. Баграмяна 87.

428. ՎԵՍՊԵՐԻՆ

<1949, աշուն, Երևան>[1]

Սիրելի Վեսպեր.

[Նամակները] Բացիկները, կարծեմ, բոլորն ստացել ենք:

Դու կարծում ես թե՝ ես հոգ չեմ տարել գործիդ[2] նկատմամբ: Ինչ որ ձեռքիցս եկել է՝ արել եմ:

Ընկեր Մացակին[3] տեսել եմ. քո դիմումը դեռ չի ստացել: Խնդրեցի, ասաց, որ իմ իրավասությունից վեր է: Ոչինչ չեմ կարող անել. նույնը Ջավենը[4] գիտեր: Մացակի խորհրդով գնացի Մ.Գ.Բ.ի (М.Г.Б.)[5] ընկեր նախագահի[6] մոտ: Շատ սիրալիր ընդունեց. խոստացավ գործը վերանայել: Սրանից ետ բարձր կայան չկա: Մնացածը կախված է ընդհանուր վերատեսչությունից – Մոսկվա: Ուրեմն կհասկանաս, որ ես սպառել եմ բոլոր հնարավորությունները:

Մերոնցից չատ բարևներ <Բ...ին>, Շահենին և քեզ: Համբերատար եղեք, գիտակցաբար նայիր. դուք սովետ քաղաքացիներ եք. դա ինքնին չատ մեծ բան է: Ես Մոսկվայի խաղաղության կողմնակիցների կոնֆերանսին[7] էի Ս. Հայաստանի կողմից: Ամեն բան կախված է պատերազմից[8]: Մեծ հույս ունեմ, որ պատերազմ չի լինի, և նորից ամեն բան լավ կդառնա. կսկսվի հին լավ կյանքը:

Ջերմ բարևներով Ա. Խաչակյան

429. ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<19>50, 12 սեպտեմբերի, Կիսլովոդսկ

Կարոտալի սիրելիներ.

Սիրելի Աբաս ջան, նամակդ ստացա մի-երկու օր առաջ, շատ և շատ ուրախացա, որ ողջ և առողջ եք: Մենք մոտ երկու ամիս է Կիսլովոդսկի ենք՝ Սոֆիկը բժշկվում է, ես հանգստանում եմ. Ավիկն էլ հետներս է. խելացի և չար տղա է: Լավ խորհուրդներ ես տալիս իմ առողջությունը պահպանելու համար. գիտեմ, բայց հնար չկա, ընկած եմ մեքենայի բերանը և գնում եմ. գիտեմ, որ մի օր պիտի կտրվի, սակայն ի՞նչ ուզում է լինի... առայժմ լավ եմ, աշխատում եմ, ապրում եմ, զգում եմ, կենդանի մարդ եմ. անտարբեր չեմ սիրելի ընտանիքի հանդեպ: Ուրախ եմ, որ Իսիկը[1] հետաքրքրվում է այդ ֆուտբոլով. ողջ Երևանը՝ մեծ, փոքր, տղա-աղջիկ գժված են դրանով. թո՛ղ Իսիկն էլ հետ չմնա ընդհանուր ոգևորությունից, թո՛ղ ապրի բոլորի հետ, հետո իրան կգտնի:

Զարմանում եմ, որ Արմիկը[2] հիվանդ է. այստեղ, ինչքան հիշում եմ, լավ էր: Թո՛ղ լավ խնամի իրեն:

Մենք բոլորս լավ ենք, Վիգենը մնաց Երևանում, Հարսը՝ Բելան, մեզ հետ էր, գնաց: Հա, նամակդ Երևանից ստացանք, ուշացած:

Գեղամը[3] մի երկու նամակ գրել էր ինձ. ես պատասխանել եմ, բայց փոխադարձը չունեմ. երևի տեղափոխված է. հասցեն մոտս չէ, Երևան է. այնտեղ կհայտնեմ քեզ:

Գարուշից, մորից, տղայից լուր չունեմ. այնքան գիտեմ, որ կիևումն են. Գեղամի կինը վաղուց մեռել է:

Նրանց հետ կապ չունեմ, մի-երկու անգամ փոքր-ինչ օգնեցի, բայց Գարուշին չեմ սիրում, վրեժ չեմ հանում, բայց չուրջս իմ մտերիմ ընկերները, հին բարեկամները՝ որոնք կարիքի մեջ են, նրանց եմ հասնում, թեկուզ հենց երախտագիտական պարտք կատարելով:

Իմ անմիջական ազգականներից մարդ չի մնացել. գրեթե բոլորը մեռել են – մորքուրանք, քեռանք, հորեղբրանք: Օրինակի համար, Սիմոն հորեղբորս բոլոր տղաները մեռան՝ Բագրատը, Համոն, Արամը, Հայկը, Տիրունին (Սիմոնը): Մեր գյուղի հին մարդկանցից ո՛չ ոք չի մնացել: Ի միջի այլոց մեր գյուղը հիմա կոչվում է «Իսահակյան» գյուղ[4], պաշտոնապես:

Այս նամակը փորձի համար եմ գրում՝ տեսնելով հասնում է քեզ: Ապահովված չեմ գրում, որովհետև փոչոը չատ հեռու է և բարձրում: Զգիտեմ տեղդ «Авиа» փոստ կա՞:

Գրի՛ր քո տնտեսական դրության մասին. ես կարող եմ քեզ (Իսիկին) միշտ օգնել, քանի ողջ եմ. գրիր անպատճառ:

Ես վերջացնում եմ նամակս, Սոֆին էլ առանձին կգրե: Ամսուս 16-ին մեկնում ենք Երևան: Շատ բարևներ մայրիկին և ջերմագին համբույրներ քեզ, Իսիկին, Արմիկին:

Ջեր Ավետիք Իսահակյան

430. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

1950, 20 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Վահան.

Ամենից առաջ ջերմ բարևներս մեծանուն ընկ. Ռիլսկուն և քեզ:

Հետո դառնանք գործին: Սիրելիս, ոչ մի նամակ չգրեցիր, թե ինչպե՞ս է դնում բանաստեղծությունների թարգմանական գործը: Արդյոք կատարվո՞ւմ է, թե

գլխին քար ընկավ. եթե խանգարված չէ գործը, ապա ի՞նչ վիճակումն է, ո՞ւր եք հասել և ե՞րբ է վերջանալու:

Ես ծուլլ եմ նամակ գրելուն և բավականին էլ անտարբեր գործիս վերաբերմամբ, բայց գոնե դու չպիտի լռեիր: Ինչ որ է, անցած բան է, հիմա խնդրում եմ բարի լինես մանրամասն հաղորդելու ձեր աշխատանքների մասին:

Ընկ. Հակոբ Խաչատրյանը[1] քեզ գրած կլինի իմ համաձայնության մասին: Ես այս տարի չատ ծանր և երկար հիվանդացա: Հիմա լավ եմ: Նոր եմ վերադարձել Կիսլովոդսկուց:

431. ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒՆ

1950, 21 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Սողոմոն.

Ընկեր Բարսեղյանի բանաստեղծություններից մի քանիսը կարդացի, լավ էին. ժամանակ չունիմ բոլորը կարդալ և ընտրել:

Այժմ խնդրում եմ քեզ նրա չեֆությունը վերցնես, ներկայացնես բանաստեղծ<ական> սեկտորին. դու էլ կարդաս, ընտրես, այնպես որ մի քանի բան լույս տեսնի մամուլում. մի խոսքով ասպարեզ մտնի. երիտասարդը մեր նահատակ սիրելի Գեղամ Բարսեղյանի[1] եղբոր որդին է:

Ջերմ բարևներով՝ քո Ավ. Իսահակյան

432. ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՑԱՆԻՆ

<1950, սեպտեմբեր, Երևան>[1]

Կեցցե՛ս Մարիետա...

Հիանալի գիրք[2] ես գրել՝ խոր գիտական, լիքը մեծ էրուդիցիայով, գրական կուլտուրայով. կարդացող օտարները կսիրեն ու կհարգեն Հայաստանը և նրան իմաստավորող ժողովրդին: Ուրիշ ռեսպուբլիկաները ներկայացնող նման գիրք չեմ կարդացել:

Գրել ես սիրով, ջերմ զգացումով:

Ես չգիտեմ՝ ուրիշներն ի՞նչ են ասել. երկու ամիս այստեղ չէի, կտրված Հայաստանից և հիվանդ էի: Բայց համոզված եմ, որ բոլոր ազնիվ ընթերցողները նույնը պիտի ասեին:

Դժվար թե մեր ինտելիգենցիայի մեջ գտնվի մեկը, ես էլ մեջն առած, այդչափ լավ ճանաչի Հայաստանի աշխարհագրական կազմը, գիրքը, տնտեսությունները, ինչպես դուք. ամեն տեղ եղել եք՝ ոտքով, ձիով, չոշափել եք երկիրը, զգացել, ապրել, սիրել ու ցավել:

Հատկապես շնորհակալություն իմ մասին գրածներիդ համար, շատ և շատ զգացված եմ:

Ավ. Իսահակյան

433. ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1950, 5 նոյեմբերի, Երևան>[1]

Սիրելի Աբաս.

Բոլոր նամակներդ էլ ստացել եմ. թե վերջինը և թե նախավերջին ընդարձակ նամակը: Հանգիստ եղիր: Երբ ժամանակ ու տրամադրություն գտնեմ, կպատասխանեմ: Կոլյայից[2] լուր չունիմ: Շամոնեն կա և ուսուցչուհի է: Գեղամից ստացել եմ նամակ: 500 ռուբլի տեղափոխել էի՝ ստացել է. այդքան էլ նորից կփոխադրեմ: Գարուշով չեմ հետաքրքրվում: Եվ չեմ սիրում, որ մերոնց անցյալի մասին խոսում ես. կաշմար է ինձ համար:

Բոլորս լավ ենք, բարևում ենք, համբուրում ենք:

Ավետիք

434. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

1950, 9 նոյեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Արա Սարգսյան.

Նախ և առաջ չնորհավորում եմ սովետական մեծ տոնով[1] և ցանկանում եմ քեզ առողջություն և հաջողություններ:

Այս տողերս բերող երիտասարդը եկել է Սոչիի չրջանի հայ գյուղից՝ Գրիգորյան, մի հանձնարարականով իմ վրա՝ խնդրելով իմ միջնորդությունը: Երիտասարդը ուզում է նկարչություն սովորել, ուրեմն մտնել նկարչական ինստիտուտ[2]. ինքը գիտե, որ ուշացել է զինվորության պատճառով: Շատ մեծ փափագ ունի ուսանելու. հենց սրա համար պետք է օգնել: Խնդրում եմ, սիրելի Արա, ընդառաջես նրան, ինչքան քեզնից կախված է և կարող ես:

Հեռու վայրերից Հայաստան են գալիս հույսով ու մուրազով. պետք է որ չհուսախաբվեն: Մնացածը դու գիտես. էլ ինչ կարող եմ գրել:

Ջերմագին բարևներով Ավետիք Իսահակյան

435. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1950, 2 դեկտեմբերի, Երևան

Շա՛տ սիրելի Կամսար.

Ջգիտեմ ինչ խոսքերով արտահայտեմ իմ խորունկ և սրտագին չնորհակալությունը քո մչտական և անթառամ

ուշադրության համար իմ հանդեպ: Տարիներ ամեն խնամքով և սիրով ուղարկում ես ինձ թերթեր, ժուռնալներ և քո աշխատությունների, գրությունների, ինչ որ հետաքրքրել է ինձ:

Այս էլ ասեմ, որ տարիների ընթացքում ինչ որ ուղարկել ես՝ բոլորն ստացել եմ և սիրով ընթերցել. նախավերջին ուղարկածդ «Вестник Ленинград<ского> университета» Վահանի մասին[1], ինչպես և երկու-երեք օր առաջ Հ. Թումանյանի մասին ահագին մոնոգրաֆիադ[2]:

Սկսել եմ կարդալ (մոնոգրաֆիադ), բայց անհամբերությունից թերթել եմ մինչև վերջը և ծանոթությունները կարդացել: Ռուս ընթերցողի և ռուսերեն ընթերցող հասարակության համար շատ արժեքավոր գիրք է՝ մեր գրականությունը, մեր կուլտուրան ճանաչելու տեսակետից[3]: Ապրես, զորանաս:

Հուսով եմ, որ առողջ ես և վիշտդ[4] էլ բավական ամոքված:

Ցանկանում եմ քեզ ավելի եռանդ, հաջողություն և լավ օրեր:

Բարևներով ու ջերմ սիրով՝ Ավետիք Իսահակյան

436. ԷԴՎԱՐԴ ԱՂԱՑԱՆԻՆ

1951, 31 մայիսի, Երևան

Սիրելի ընկեր Է. Աղայան.

Ֆիլոլոգիական ֆակուլտետի I կուրսի ուսանողուհի <Սովիետ> Ինգան անգլիական լեզվից անհաջող քննություն է տվել: Շատ խնդրում եմ, որ բարի լինիք՝ խոսել, համոզել անգլերեն լեզվի ուսուցչուհի Ալմագուլյանին, եթե հնարավոր է (և իհարկե հնարավոր է), որ ընկ. Սովիետի անգլ<երեն> լեզվի зачет*-ները ընդունի:*

Հատկապես պարտավորացրած կլինիք ինձ:

Բարևներով և սիրով՝ Ավետիք Իսահակյան

437. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

<19>51, 13 հունիսի, Երևան

Մեծարգո բարեկամ Իվան Կոստանտինովիչ.

Իր ժամանակին ստացել եմ Ձեր հոդվածը. իսկույն դիմեցի Հար. Մկրտչյանին[1], որ հոդվածը, եթե չի տպագրի, տա ինձ. նա պատասխանեց, որ նորությունն չի պարունակում հոդվածը: Հազիվ երկու օր առաջ դտան հոդվածը և տվին ինձ. գրեթե կորցրել էին:

Ես ուշադրությամբ կարդացի Ձեր գրածը[2] և անկեղծորեն հայտնում եմ Ձեզ, որ հոդվածը սխեմատիկ է, և հարևանցորեն եք անցել, չեք խորացել և ծավալվել: Խնդրում եմ ավելի մանրամասն գրեք, կարող եք անել, ո-

ըովհետև հարուստ նյութ է. մանավանդ Մ. Վագների[3] և Հակստհաուզենի[4]. էլ չեմ ասի Բոդենշտեդի[5] մասին:

Մավզոլեի մասին հայտնել եմ կառավարությանը, սակայն չգիտեմ ինչ են որոշել, իսկ Թումանյանների ընտանիքը, կարծեմ, արդեն դրամ ուղարկել են Ձեզ:

Ջերմագին բարևներով Ձերդ Ավետ. Իսահակյան

438. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ

1951, 18 Հունիսի, Երևան

Իմ թանկագին բարեկամ Մաքսիմ Ֆադեևիչ.

Մեծ ուրախությամբ ստացա Ձեր խմբագրությամբ հրատարակված իմ բանաստեղծությունների հատընտիր ժողովածուն[1]: Ես շատ երջանիկ եմ, որ Դուք այդքան շատ ջանք ու եռանդ եք գործ դրել ուկրաինացի ընթերցողին ծանոթացնելու իմ բանաստեղծությունների հետ:

Ինձ ներեցեք, որ ես այսքան ուշացումով եմ պատասխանում Ձեզ, մի ամսից ավել է հիվանդ էի: Բացի այդ, ես շատ էի ուզում, որ այդ ժողովածուն կարդային ինձ (իսկ դրա համար անհրաժեշտ էր գտնել մեկին, որը տիրապետեր ուկրաիներեն լեզվին) և օգներ ինձ նամակ գրելու Ձեզ Ձեր մայրենի լեզվով: Եվ այժմ ես համոզվեցի, որ Դուք, Ձեր ու իմ բարեկամները իմ բանաստեղծությունները թարգմանել են ճիշտ, կարողացել են իմ խոհերն ու զգացմունքները, այն բոլորը, ինչ թանկ ու հարազատ է իմ սրտին, հաղորդել գեղեցիկ, նուրբ ու հարուստ լեզվով, այն անմոռաց, սրտալի երգերի լեզվով, որոնք ես սիրում եմ երկար տարիներ ի վեր:

Մեծ երջանկություն է ինձ համար, որ հերոսական ու պոետական ուկրաին ժողովուրդը կկարդա իմ բանաստեղծությունները, և ուզում եմ հավատալ, որ կհավանի դրանք:

Իմ անկեղծ շնորհակալությունը Ձեզ, թանկագին Մաքսիմ Ցադեևիչ, շնորհակալություն սիրելի Պավլո Գրիգորևիչին[2], ինչպես և Վ. Սոսյուրային[3], Լ. Պերվոմայսկուն[4], Օ. Նովիցկուն[5] և բոլոր նրանց, ովքեր թարգմանել են իմ բանաստեղծությունները:

Ջերմորեն, ամբողջ սրտով ողջունում եմ Ձեզ, ցանկանում եմ երկար կյանք, առողջություն և ուժ, նոր հաջողություններ աշխատանքում:

Ավետիք Իսահակյան

439. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ

<1951, հունիս, Երևան>[1]

Սիրելի Վահան.

Մոտ մի ամիս առաջ ուրախությամբ ստացա ուկրաինական լեզվով թարգմանված գրական գործերս: Գիրքը բերել էր ընկեր Արշալույս <Սարոյանը[2]>: Ես հիվանդ էի դեռ, նամակ ևս չէի կարող գրել. նրան խնդրեցի որ պատասխաներ իմ շնորհակալություններն էլ հետը:

Ցավում եմ, որ <1 անընթ. բառ> բացակայում է և տիրաժն էլ շատ քիչ է... բայց եղածի համար էլ շնորհակալ եմ, որովհետև գիտեմ, որ իմ թանկագին բարեկամ-ընկերը Մ. Ռիլսկին արել է, ինչ որ կարողացել է:

Ջերմ բարևներս Մ. Ռիլսկուն և քեզ:

Հ.Գ. Հոնորարի[3] նկատմամբ. խնդրեմ վերցնես այնքան, ինչքան օրինավոր է:

440. Ա<ՆՏՈՆ> ԿՈՒՉՑԱՆԻՆ

<19>51, 3 հուլիսի, Երևան

Սիրելի ընկեր Ա. Կուզյան.

Թանկագին, անմոռանալի և չատ սիրելի Զուրաբի[1] անունը չատ նվիրական հուշեր զարթնեցրեց հոգուս մեջ... Ցավում եմ, որ Ձեզ չեմ հիշում: Երկար տարիներ են անցել:

Ձեր գրությունները[2] ստացել եմ (երեք հատ). «Խելառ Սարգիսը» կարդացի. մյուսները, դժբախտաբար ժամանակ չունեցա կարդալու: Հանձնում եմ Հայ գրողների Միության քարտուղարությանը, որ համապատասխան սեկտորում կարդան և զեկուցեն ինձ:

«Խելառ Սարգիսը» իբրև հուշ և մի անձնվեր, մարդասեր անձի մասին չատ հուզիչ էր, բայց, իհարկե գրված է ոչ մասնագետ-գրող մարդու կողմից, որպիսին դուք եք հանդիսանում: Եթե սեկտորը հավանեց, թերևս տանք մի գրողի՝ վրայից անցնի, մշակի: Անշուշտ, հին նյութ է, բայց որպես իրական հուշ արժեք կունենա:

Հիմա ամառ է, ընկերները ցրվել են և աշնանը կվճռենաք արդյունքի մասին:

Ջեռքերիցս եկած լավ բանը կանեմ Ձեզ համար:

Ջերմ բարևներով Ձեր՝ Ավետ. Իսահակյան

441. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ

<19>51, 3 Հուլիսի, Երևան

Սիրելի ընկեր Լ. Մելիքսեթ-բեկ.

Ուրախությամբ կարդացի Հայկական Ակադեմիայի տեղեկագրի (N 4, 1951 թ.)[1] մեջ Ձեր դրած հոդվածը – «Ա. Իսահակյանը և վրաց գրականությունը»: Շնորհակալությունն Ձեր սիրալիր ուշադրության համար իմ հանդեպ:

Շատ դեղեցիկ գործ եք արել, որ երկու դարավոր հարևանների գրականությունների հոգեկան-բարոյական կապերը հայտ եք բերում և լուսաբանում:

Ցավում եմ, որ Ձեր հոդվածի մեջ մի սխալ[2] է սպրդվել. ես գրել էի «Ձոր Նահապետ Քոչա» (Կազբեկի պատմվածքը), բայց տպագրվել է «Աչուղ Նահապետ Քուչակ» – որ ոչ մի աղերս չունի նյութի հետ:

Այստեղ պիտի ասեմ, որ Ձեր հիշատակած նամակս, որքան հիշում եմ, գրել եմ 1929 թվին «Աբու-Լալա Մահարիի» թարգմանչին[3] և որի մեջ, նույնպես որքան հիշում եմ, գրել եմ թե... իմ պոեմի ներչնչողները եղել են Միցկևիչի «Ֆարիսը» և Բարաթաչվիլիի «Պեգասը»:

Չգիտեմ ինչո՞ւ է Միցկևիչի անունը դուրս մնացել[4]: Կխնդրեի, եթե հնարավոր է, ստուգեիք նամակս: Թերևս ես եմ սխալվում. կարող է պատահել, որ մոռացել եմ, շատ ժամանակ է անցել: Այսքան:

Ջերմագին բարևներով,

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

442. ՀԵՂԻՆԵ <ՇԻՐԱԶՅԱՆԻՆ>

1951, 23 հուլիսի, Կիսլովոդսկ

Սիրելի Հեղուշ.

Ամենից առաջ ջերմ բարևներ մեր բոլորի կողմից. դժվարությամբ վերջապես հասանք տեղ և մեր հին գեղեցիկ վիլլայում տեղավորվեցինք:

Բոլորս էլ առայժմս լավ ենք:

Այստեղ շատ հայեր կան և՛ ուրիշ տեղերից, և՛ Երևանից, թեև անցյալ տարի ավելի շատ էին: Մենք այնպիսի նորություններ չունենք քեզ հաղորդելու, այնպես որ, դու պիտի նորություններ մեզ հաղորդես. Գրողների տան մասին, ի՞նչ արիք, լավ սարքեցիք, ի՞նչ են անում ընկեր գրողները, ի՞նչ կա քաղաքում, ի՞նչ չկա. մի խոսքով դիտես, թե ինչ է հետաքրքրում մեզ:

Իր ժամանակին սպասում ենք քեզ, սիրով և ջերմությամբ. այս էլ ասեմ, որ այս տարի կուրսովկա հեչտությամբ են տալիս, որովհետև եկողները քիչ են: Ի՞նչ եղավ Դերենիկի «Վարդանանք»ի[1] թարգմանության հարցը, ռուսախոս հայերը չատ են հետաքրքրված, ուզում են կարդալ:

Սիրելի Հեղուշ, ուղարկում եմ Հայկ. ՍՍՌ սոցիալական ապահովության մինիստրության այս թուղթը. խնդրում եմ, եթե քո ձեռքդ է, քեզնից է կախված՝ պատասխանիր. կամ անձամբ տես (Հասցեն՝ փողոց Նալբանդյան 32) և ասա, որ տվյալ անձը կլինի Երևանում ոչ չուտ սեպտեմբերի 10-ից, այնինչ պատասխան սպասում են մինչև օգոստոսի վերջը: Ես այստեղից բան չեմ կարող անել: Հետևանքի մասին կգրես ինձ:

Բարևներով, համբույրներով քո՝ Ալեքսիք Իսահակյան

Հ.Գ. Այդ հարցաթուղթը հիմա ստացա:

Кисловодск.
Нижегородский переулок.
ул. Цитровича 3. Ав. Исаакян

443. ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ

<19>51, 2 օգոստոսի, Կիսլովոդսկ

Սիրելի ընկեր Մարգար Դավթյան.

Ամենից առաջ՝ չնորհակալությունս եմ հայտնում Ձեր ջերմ հոդվածի[1] համար իմ գրքի առթիվ, «Կոմունիստի» մեջ:

Ընկեր Արշավ<իր> Դարբինին[2] դեռ ապրիլ ամսին հայտնեց ինձ՝ Ձեր կողմից հաղորդած ինձ համար չատ

ուրախալի լուրը՝ ադրբեյջանական լեզվով գրվածքներիս հրապարակումը[3]*: Այնուհետև աչքս ծով դարձավ սպասելով նրա երեսը տեսնելու, մինչև որ հուլիսի 9-ին կամ 10-ին չատ համակրելի Քովսար Խանումը բերեց մի օրինակ ինձ նվեր՝ գեղեցիկ ձոնով: Գիտես, անչուշտ, Քովսար Թաղիվերդիևան*[4]*:*

Թարգմանությունները, ինչքան կարողացա հասկանալ, մեծ մասով հաջող են, կան և անհաջող թարգմանություններ[5]*: Նյութերի ընտրության մասին էլ նույնը կարող եմ ասել:*

Խնդրում եմ, ջերմ շնորհակալություններս հաղորդել ընկեր Մ. Ռահիմին[6] *իր սրտագին աշխատության համար:*

Այստեղ լսեցի, որ «Бакинский рабочий» *թերթում եղել է գրախոսական, բայց չեմ տեսել: Երևանում, երևի, կհաջողվի տեսնել:*

Հիմա գործնականին – խնդրում եմ մի քանի օրինակ ձեռք բերես կամ կարգադրես ինձ հասցնելու Երևան այս հասցեով. Ереван, [ул. Баграмяна] ул. Плеханова, N 32, Ав. Исаакян.

Հեղինակին հասանելիք օրինակներ կամ վերադիր վճարով: Հոնորարի մասին – ո՛չ պայման ունենք, ո՛չ էլ մի բան գիտեմ. Հով. Թումանյանի ասածի պես՝ «Դրա մասին խոսել՝ էլ ամոթ ա» (կամ ճիշտը – «Դրա մասին ավելնորդ ա, մեր մեջ խոսելն էլ ամոթ ա»:

Հոդվածիդ մեջ գրում էիք՝ լուսանկարիս մասին, սակայն տիկին Քովսարի նվիրած գրքիս մեջ լուսանկարս չկա: Զհասկացա:

Շատ ուրախ կլինեի, եթե մի-երկու տող գրեիք ինձ, թե ի՞նչ տպավորություն է թողել գիրքս ադիրբեյջանական հասարակության վրա. ադիրբեյջանական մամուլում ե-ղա՞վ խոսք[7] դրա մասին...

Ներողություն, որ վատ եմ գրել. գրիչը շատ փչացած էր, ձեռագիրս էլ, ծերության հետևանքով փչացել է: Երևի հազիվ պիտի կարողանաք կարդալ:

Սիրով և բարևներով Ավետ. Իսահակյան

444. ՀՄԱՅԱԿ ՍԻՐԱՍԻՆ

1951, 28 օգոստոսի, Կիսլովոդսկ

Սիրելի Սիրաս.

Շնորհակալություն նամակիդ համար, որի ընթերցումը շատ ուրախություն պատճառեց ինձ: Ուրախ եմ, որ բոլորդ սկսած Դերենիկից, առողջ եք և քաջաբար դիմադրում եք Երևանի այս տարվա չոգերի լեգենդական տաքությանը, ինչպես պատմում են Երևանից այստեղ եկողները:

Հարցնում ես առողջությանս մասին — շատ չնորհակալ եմ — լավ է, սիրտս հանգիստ է, բայց հոգեպես նախանձելի չեմ. ամենից առաջ ձանձրանում եմ, իմ գրասեղանը չկա, իմ գրադարանը չկա... Հետո ամեն կողմից եկած հայությունը՝ Բաքվից, Թբիլիսիից, և այլ տեղերից, մեծ մասով ինձ մեծ վիշտ է պատճառում իրենց այլասերությամբ[1]... Սրանք հայտնի բաներ են, բայց պատճառած ցավը միշտ թարմ է, միշտ թարմացնում է վիշտը:

Ես ամենաուշը մինչև սեպտեմբերի 20-ը կլինեմ Երևանում: Սոֆին մինչև այդ ժամանակը կվերջացնի իր բու-

ժումը. Նա Երևանից արդեն հիվանդ նստեց գնացք և այստեղ էլ ամբողջ երկու շաբաթ հիվանդ պառկած էր, այնպես որ, ուշ սկսեց իր կիսլովոդսկյան բուժումը:

Ավիկը[2] լավ է և օրեցօր ավելի լավ է լինում:

Ես օրս անցկացնում եմ ընթերցանությամբ և պարկում (պարտեզներում) թափառելով: Մի փոքր պատմվածք եմ գրել և մի առակ: Հավաս չկա բան գրելու:

Սիրելիս, քո ուժերի ամենածաղկման շրջանի մեջ ես. կես դար գրեթե, հիմա եռանդիդ, հավասիդ բուռն վիճակն է, բնական է, որ պիտի աշխատես, ստեղծագործես[3], բոլոր սրտով ցանկանում եմ հաջողություն, հղացումներիդ իրականացում, անկեղծորեն արտահայտվելու՝ գեղարվեստի միակ պայմանի ներկայություն:

Հայ ժողովուրդը այլասերումից կարող է ազատվել իսկական գեղարվեստի ստեղծագործություններով. պետք է բարձրարժեք գրական երկեր մայրենի լեզվով, հայրենի սիրով, համամարդկային և տիեզերական գաղափարներով...

Բելլան հիմա Երևանումն է, երևի տեսած կլինես նրան:

Սրտագին բարևներ իմ և կնոջս կողմից քեզ, Թամարային[4] և աղջիկներին:

Համբույրներ Ավիկի կողմից փոքրիկ աղջկադ:

Ցտեսություն՝ Ավետիք Իսահակյան

445. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

1951, 3 սեպտեմբերի, Կիսլովոդսկ

Սիրելի ընկեր Վահան.

Վաղուց ապրիլ ամսի վերջերին, մեծ չնորհակալությամբ ստացա մի օրինակ ուկրաիներեն թարգմանված գիրքս: Այդ օրերը ես շատ հիվանդ էի, մոտ ամսից ավելի պառկած էի անկողնում: Երբ առողջացա, մի չնորհակա-

լական նամակ գրեցի թանկագին ընկ. Մ. Ռիլսկուն: Սակայն Ձեզ՝ վահանիդ, նամակ գրելս օրեցօր էի գցում՝ հուսալով, որ Ձեզանից մի ընդարձակ նամակ կստանամ և հեղինակային մի քանի օրինակներից. չգիտեմ ուղարկել եք, թե ոչ, որովհետև ես հուլիսի սկզբներից գտնվում էի Կիսլովոդսկ բժշկվելու համար: Կմնամ մինչև սեպտեմբերի 15-ը, ուրեմն տանը՝ Երևանում կլինեմ սեպտեմբերի 20-ից ոչ վաղ:

Սիրելի Վահան, եթե նամակ չեք ուղարկել մինչև հիմա, խնդրում եմ մի նամակ գրեք ինձ Երևանի հասցեով:

Գրեցեք, թե ինչ ընդունելություն գտավ դիրքս ուկրաինական ընթերցողների կողմից, հասարակության կողմից, ինչ կարծիքներ հայտնվեցին մամուլի մեջ[1], մի խոսքով՝ այդպիսի բաներ:

Ընկեր Հակոբ Սամսոնովիչ Խաչատրյանը ինձ հայտնել էր վաղուց, թե Ձեզ հետ խոսել է հոնորարի մասին և այն վարձատրության մասին, որ կատարվել է տողատակ թարգմանությունների համար, որ կատարել եք Դուք, և ձեր աշխատանքի համար առհասարակ: Զգիտեմ մնացածը, իսկ ինձ համար չատ անհարմար է հիշեցնել հոնորարի մասին: Կարո՞ղ եք ինձ այդ մասին գրել, թե ոչ: Կամ ի՞նչ խորհուրդ կտայիք:

Խնդրում եմ նաև մի քանի օրինակ գրքից ուղարկել, եթե մինչև հիմա չեք ուղարկել:

Ջերմ բարևներ Ձեզ և Ձեր հարգելի տիկնոջը:

Սիրով՝ Ա.Վեստ. Իսահակյան

446. ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ

<19>51, 9 նոյեմբերի, Երևան

Սիրելի Ատրյան!

Նամակդ ստացել եմ իր ժամանակին, բայց հիվանդությանս պատճառով՝ անկարող եղա քեզ անմիջապես պատասխանել: 15 օր ծանր գրիպով պառկած էի:

Հիմա գործն այսպես է. մոտ օրերս քո պատմվածքներից մի քանիսը կընտրեն և կթարգմանվեն դեկատայի համար: Ես կարագացնեմ գործը:

Հետո – ընկեր Գ. Բորյանը ինձ ասաց, որ Պետհրատին[1] կթելադրենք վերջնականապես գրքիդ մասին որոշ պատասխան տան, մինչև նոյեմբերի վերջը լուծեն տպագրելու հարցը: Ես էլ կխոսեմ այդ առթիվ նրանց հետ:

Ջեմ կարող երկար գրել, որովհետև ճերմակ թերթին չեմ կարող նայել. անվերջ հազում եմ և աչքերս ջրով լցվում են:

Ջերմ բարևներ տիկնոջդ, ձերոնց և ընկերներին:

Միշտ քո՝ Ավ. Իսահակյան

9/XI 51.

Երևան

Շնորհավորում եմ Ձեր Հոկտեմբերյան տոներդ:

Ա. Ի.

447. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

<19>51, 27 նոյեմբերի, Երևան

Հարգելի ընկեր Խաչերես.

Շատ ներողություն եմ խնդրում, որ այսքան ուշ եմ գրում Ձեզ:

Երևան հասնելուց հետո թե շատ զբաղված էի, և թե հիվանդացա գրիպով, որ կարճ չտևեց: Իհարկե՝ Ձեր դիմումը, խնդիրը, հայտնեցի մեր Գրական ինստիտուտին և էտնոգրաֆիկ սեկտորին. երկար պրպտումներից հետո հայտնեցին, որ հանգուցյալ Եր. Լալայանի[1] գործերի մեջ

չեն գտնում Խաչ<ատուր> Փ<որքչեյան>ի ձեռագրները: Մի քանի օր առաջ ինձ ասացին, որ Եր. Լալայանը սովորություն ուներ հեղինակների անունը վերացնել, չքացնել և իր անունով պահել: Ասացին ինձ, որ թող Խ. Փոր<քչեյանը>, եթե հիշում է՝ գրե իր նյութերի անունները, որ այդ անուններով որոնումներ կատարեն Լալայանի թղթերի, տետրակների մեջ, որ չա՛տ մեծ քանակությամբ կա, իբրև Լալայանի գործեր:

Հարգելի ընկեր, ես Ձեզ խոստացա հանգուցյալ Խաչ. Սամվելյանի[2] հայոց իրավունքի այն հատորը ուղարկել, որ մոտս կար. սակայն նայեցի տեսա, որ մոտս եղածը «Հին Հայաստանի կուլտուրան» երրորդ հատորն է:

Ես մեր բուկինիստներին հանձնարարեցի, որ ձեռք բերեն ինձ համար իրավունքի մասին գրածը: Խոստացան: Հայաստանում գիրք չի մնում, իսկույն վաճառվում է. մանավանդ, երբ տիրաժը չատ քիչ է 1000-2000 օրինակ և էժան գներով:

Գրեցեք ինձ, ի՞նչ գրքեր կուզեք, թերևս կարողանամ գտնել. նորերը չուտ կարելի է, իսկ հները՝ դժվար է:

Գրեցեք Ձեր մասին, ի՞նչ եք անում, ինչպես է Ձեր առողջությունը, Ձեր աչքի վիճակը:

Ես առայժմ լավ եմ, կարողանում եմ երկար աշխատել:

Զորեքչյանը[3] գնաց Մոսկվա, քթի վերքը բուժելու: Քթի վերքը մեր տեղիս բժիշկները բարի պերսպեկտիվա (հեռանկար) չէին տեսնում:

Բարևներ կնոջից:

Ջերմ բարևներով՝ Ձերդ Ավետ. Իսահակյան

Հասցես՝
Ереван, ул. Плеханова, N 32,
А. Ис.

448. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ

<19>52, 14 հունվարի, Երևան

Սիրելի ընկեր Գուրգեն Հովնան.

Շատ տարիներ առաջ (կարծեմ, 1902 թվին)[1] Յուրի Վեսելովսկուն ուղղած իմ նամակի մեջ գրել եմ, որ՝ «իմ ներքին աչխարհի վրա ուժեղ տպավորություն է գործել Գոգոլը իր անմահ «Մեռած հոգիներ» վեպով»:

Հիմա, սիրելի Գուրգեն, Դուք դիմել եք ինձ, որ եթե հնարավոր է մի քիչ ավելի մանրամասն անդրադառնայի իմ այս տողերի մտքին: Ես Գոգոլին կարդացել եմ առաջին անգամ Գևորգյան ճեմարանում աշակերտ եղած ժամանակս 1891-92 թթ.: Շատ սիրել եմ, հիացած եմ եղել նրա հանճարով, կարդացել եմ «Ռևիզորը», «Տ<արաս> Բուլբան» և «Մեռած հոգիները»: Եվ նույնիսկ, սիրուցս դրդված հանդգնել եմ այն տարիքիս և ռուսերեն թույլ գիտնալով հանդերձ, թարգմանել նրա «Կյանք» պատմվածքը:

Յ. Վեսելովսկուն նամակ գրած ժամանակը ես արդեն լույս էի ընծայել «Երգեր ու վերքեր» ոտանավորների գրքույկս, և տակավին գրեթե ոչ մի արձակ բան չէի գրել, – և իմ ոտանավորների մեջ երբեք չկա Գոգոլի ազդեցությունը, նրա սատիրան, նրա դառն վիշտը: Ուրեմն ի՞նչ հիմք ունի իմ արտահայտությունը՝ Գոգոլի ազդեցության մասին: Ինչո՞վ բացատրել... Ես սիրել եմ Գոգոլի տիպերի, կերպարների պատկերասրահը, ռուսական կյանքի նկարագրությունները, պեյզաժները, լիրիկական զեղումները, նրա ցավագին ծիծաղը, ծաղրը արցունքի միջով:

Միայն հետագայում ինձ համար պարզվեց, որ այդ հին մեծ տպավորությունը (Գոգոլից կրած) ապրելով իմ ենթագիտակցության մեջ իր արտահայտությունը գտել է տարիներ հետո՝ «Ուստա Կարո» վեպիս մեջ, նրա որոշ անձնավորությունների մեջ և թերևս այլ մոմենտների մեջ:

Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել:

Միշտ Ձեր՝ Ավետիք Իսահակյան

449. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ

1952, 14 Հունվարի, Երևան

Սիրելի Գուրգեն.

Ձեր երկրորդ հարցին – նախաուևոլուցիոն հայ գրականության Գոգոլից[1] կրած ազդեցության մասին, այսքանը կարող եմ ասել: Բաֆֆիի, Սունդուկյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի մեջ ես չեմ նկատել Գոգոլի ազդեցությունը: Տաղանդավոր գրող Դ. Դեմիրճյանի վրա միայն նկատել եմ Գոգոլի բարերար ազդեցությունը: Դեմիրճյանին ես ճանաչում եմ նրա պատանեկության օրերից. նա այդ ժամանակ (ինչպես և միշտ) Գոգոլին շատ և շատ էր սիրում. «Մեռած հոգիներից» էջեր գիտեր անգիր, առօրյա խոսքի մեջ, ամեն պատեհ առիթով մեջբերումներ էր անում Գոգոլի զանազան գործերից, աֆորիզմներ, սուր, կծու, սատիրիկ ասումներ, մտքեր: Հայկական իրականության մեջ որոնում էր Գոգոլի կերպարների նմանողություններ:

Բնավ սխալ գործած չեմ լինի, որ ասեմ թե՝ դեպի Գոգոլն ունեցած Դեմիրճյանի երկար տարիների սերը իր արտացոլումը գտել է իր գրվածքների մեջ: Գոգոլի Ոգին, Գոգոլի Հումորը, սատիրան ակնբախ են Դեմիրճյանի

բազմաթիվ ֆելեյտոնների մեջ, պատմվածքների մեջ, «Քաջ Նազարի» և մյուս կոմեդիաների մեջ:

Վերջապես Դեմիրճյանի հմուտ ճանաչողությունը Գոգոլի գրականության հետ՝ նրան մղեց թարգմանելու հանճարեղ «Մեռած հոգիների» I հատորը շատ գեղեցիկ, շատ հաջող կատարումով[2]:

Ջերմ բարևներով՝ Ավետիք Իսահակյան

14. I. 52 թ.
Երևան

450. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

1952, 17 Հունվարի, Երևան

Սիրելի ընկեր Վահան.

Վաղուց ստացել եմ Ձեր նամակները և մինիստրության գրվելիք դիմումի պրոյեկտը: Ձեր չնորհավորական հեռագրին պատասխանել եմ, անչուշտ, ստացել եք:

Ես ամիս ու կես հիվանդ էի, հիմա լավ եմ: Մինիստրությանը չուզեցի դիմել, դա վիրավորական[1] էր ինձ համար... Լեոնձեին[2] տալիս են հոնորար, իսկ ես պիտի խնդրեի, որ բացառություն անեին: Դա շատ վիրավորական էր, որ ուկրաինական (թե Ուկրաինայի) մինիստրը որոշեր հանճարեղության հարցը: Ինձ համար ամեն բան հասկանալի է... իհարկե:

Իմ փոխարեն դիմեց մեր դրամկոմը (արվեստագետների, գրողների շահերի պաշտպանը) մինիստրությանը, իսկ Հայ գրողների միության քարտուղարությունը՝ Ուկրաինայի գրողների միությանը, սակայն երկու ամիս է անցել, պատասխան չկա:

Մոտ օրերս Մոսկվայից մի ընկեր էր եկել, նրան ասել էր մի ուկրաինացի գրող, թե ընկ. Ռիլսկին դիմել է մի-

նիստուԹյանը և իբրև Թե համաձայն են վճարել հոնորարը, բայց մինչև այժմ մեջտեղ ոչինչ չկա: Խնդրում եմ, եԹե այդպիսի բան կա, գրեք ինձ:

Ջերմագին բարևներ հարգելի ընկ. Ռիլսկուն, քեզ, կնոջդ և Վարդանի աղջկան՝ Ալլային, որին մեծ ուրախուԹյուն ունեցա Թիֆլիսում տեսնելու սեպտեմբերին:

Ջեր՝ Ավետ. Իսահակյան

451. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ

1952, 1 փետրվարի, Երևան

Սիրելի Վահան.

ՇնորհակալուԹյամբ ստացա նամակդ և պայմանագիրը երեկ և այսօր ուղարկել եմ քեզ:

Ստացել եմ հեռագիրդ:

Ուրեմն, կստանաս պայմանագիրդ՝ ստորագրած և 8.000 ռուբլի վավերագիրդ, Թե վստահագիրդ՝ քո անունով:

Հայտնիր ջերմ բարևներս և խորին շնորհակալուԹյունս ընկեր և բարեկամ սիրելի Ռիլսկուն և քեզ:

Բարևներս տիկնոջդ:

Բարևներով՝ Ավետ. Իսահակյան

452. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

1952, 2 փետրվարի, Երևան

Շատ սիրելի ընկեր Խաչերես.

Ինձնից անկախ պատճառով մինչև այսօր չկարողացա Ձեր նամակներին պատասխանել — դեկտեմբերի 5-ից մինչև մի չաբաթ առաջ ծանր հիվանդուԹյամբ պառկած

էի անկողնում, անսպասելի կերպով հիվանդացա ցիստիտով՝ միզապարկի բորբոքումով, շատ սուր ցավերով հիվանդություն: Միլիոնավոր դոզաներով պենիցելին և ստրեպտոմիցին սրսկեցին. հիմա լավ եմ, երրորդ օրն է, որ փողոց եմ ելնում:

Մեկ-մեկ պատասխանեմ Ձեր հարցերին և Ձեր ուզածներին:

Ամենից առաջ ստացել եմ Ձեր դեկտեմբերի գրած երկու նամակն էլ, Ժողովրդագրական տետրակը[1] և Գարաքաշյանի[2] «Հայոց պատմությունը»: Ջերմ շնորհակալություն:

Կաթողիկոսը վերադարձավ Մոսկվայից. հենց երեկ մոտն էի. շատ լավ լսում է հիմա, իսկ քթի վերքը չարունակում է այստեղ բուժել:

Ձեզ համար գրվեցի «Սովետական գրականություն և արվեստ» ամսագիրը, որ չուտով կստանաք 1952 թվի I համարը: Այդ իմ կողմից նվեր. և առհասարակ, եթե Ձեզ հետաքրքրող գրքեր լույս տեսնեն, կուղարկեմ Ձեզ. պետք չկա վճարել: Հայաստանում շատ գրքեր են լույս տեսնում, բայց դրանք Ձեզ չեն հետաքրքրի:

Հանգուցյալ Ե. Շահազիզը[3] կազմել էր Պատկանյանի արխիվը, բայց լույս չտեսավ, ինչպես նրա գրվածքները, որոնք որոշված էին, բայց Ձեզ հասկանալի պատճառով առայժմ խափանվեց:

Լալայանի[4] արխիվը [նրանց] նորից նայել կտամ. գուցե լավ, բարեխիղճ կերպով չեն նայել: Աբրահամյանի[5] աշխատանքը «Հայերի պատմությունը Ղրիմում» և ռուսերեն լեզվով «Արմավիրի պատմությունը»[6] կհարցնեմ մեր գրադարաններում — Մատենադարան, Հանրային գրադարան և կհայտնեմ Ձեզ: Անպատճառ:

Կգրեմ նաև Ս. Խաչ վանքի տպարանի մասին. Ալամդարյանի[7]:

Տարիներ առաջ Սահակ Մյասնիկյանը[8] կազմել էր Պատկանյանի պատմվածքների (Նախիջևանի բարբառով)

և ուզում էր տպել Երևանում, ես էլ միջամտեցի, բայց արդյունք չունեցավ:

Գրեցի Ե. Շահազիզի կազմած Պատկանյանի արխիվի մասին, որ չտպվեց, բայց հիմա կարծես հիշում եմ, որ պատմվածքների մի ժողովածու[9] լույս տեսավ. բայց եթե տպված էլ լինի, գրավաճառներում չես գտնի. գիրքը Հայաստանում մի-երկու ամսվա մեջ սպառվում է: Տիրաժը քիչ է (5.000) բայց պահանջը շատ ու շատ: Տերյանի և Հովհաննիսյանի գրվածքները գտնել անկարելի է: Շիրազից կխնդրեմ մի գիրք նվիրե. իսկ Թումանյանից հրատարակում են Ակադեմիական կոչված հատորներ[10], սակավաթիվ, որոնցից ես նույնիսկ մի հատորը ունեմ:

Ես կուղարկեմ Ձեզ իմ հատորների IV գիրքը[11], որ նոր լույս տեսավ և կա աստպարեզում:

Դեկադան լինելու է անպատճառ ո՛չ ուշ հունիս ամսուց, ո՛չ առաջ [Մայի] մայիս ամսուց:

Առայժմ այսքան:

Ջերմ բարևներ Ձեր տիկնոջը և Ձեզ, բարևներ կնոջս կողմից նաև:

Ձեր Ավետիք Իսահակյան

Հ.Գ. – Ձեր հրատարակած «Լուսաբերը»[12] ձեռագի՞ր է, թե տպված: Երևի ձեռքով եք գրել, իբրև աշակերտական գործ:

– Վերադիր վճարի մասին. հարցնեմ տեսնեմ կհամաձայնեն: Երևանից դժվարությամբ են գիրք ճամբում:

Ա. Իս.

453. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ

1952, 15 մարտի, Երևան

Ջերմագին չնորհավորում եմ Ձեր գրական, հասարակական բեղմնավոր գործունեության 40-ամյակը[1]: Ձեր տաղանդավոր հայրենասիրական երկերը, հանուն խաղա-

ղութ յան և դեմոկրատիայի հաղթանակի խորապես ոգևորում են ինձ: Ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը իբրև Սովետական Միության բարեկամի: Ցանկանում եմ Ձեզ առողջություն և գրական, հասարակական գործունեության մի նոր փայլուն քառասունամյակ ևս:

Ավետիք Իսահակյան

454. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՁՇԵՑԱՆԻՆ

1952, 3 ապրիլի, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Մարտ ամսի 18-ին Ձեր հասցեով ուղարկեցի մի կապոց. ապահովագրած. իմ հատորներից[1] 2 գիրք, և երկու (2) համար (I, II) «Սովետական գրականություն»: Մինչև հիմա պատասխան չստացա Ձեզնից. տեղ հասել է կապոցը թե՞ ոչ:

Սպասում եմ անհամբեր:

Բարևներով Ավ. Իսահակյան

455. ՀԱՑԱՍՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

1952, 17 մայիսի, Երևան

Դուք խնդրում եք ինձ, որ ձեզ մի քանի խորհուրդներ տամ, ձեր ապագա կյանքի համար ղեկավար մտքեր: Դրանք հեշտ բաներ չեն: Ես կասեմ ձեզ իմ անձնական կյանքի փորձերից ստացածը:

Ամենից առաջ, պետք է բնավ ժամանակ չկորցնեք, ոչ մի վայրկյան իզուր չպետք է վատնեք: Ժամանակ՝ նշանակում է կյանք. ամենաթանկ բանը, որ մարդ ունի: Ուրեմն՝ կյանքը պիտի լավ օգտագործել, պետք է սովորեք, կարդաք,

պարապեք, դասերը լավ սովորեք, ամբարեք գիտություն և տեղեկություններ՝ անցած սերունդների փորձերը: Գիտությամբ, զարգացմամբ զինված մարդը կյանքում չի կորչի:

Երկրորդ՝ պիտի սիրեք, հարգեք ձեր ծնողներին: Ծնողները մարդու ամենաանկեղծ և ամենաբարի բարեկամներն են: Հետո՝ ձեր ուսուցիչներին, որոնք ձեզ սովորեցնում են, տալիս են գիտություն, փորձ, նրանց հանդեպ պիտի երախտագետ լինեք:

Կյանքում մեծ, հզոր ուժ է սերը: Սիրել բոլորին, ընկերներին, բարի լինել բոլորի հանդեպ, օգնել, թեթևացնել նրանց բեռը, հոգսերը...

Այս բոլորի հետ միասին՝ իբրև պսակող սեր հայրենասիրությունը, սիրել հայրենիքը. ամենանվիրական բանը աշխարհում, սիրել հայրենիքի ժողովրդին, աշխատել հայրենիքի ուժեղացման, հառաջադիմության համար, ոչինչ չխնայել հայրենիքի համար, պարծենալ նրանով, նրա հերոսներով, նրա կուլտուրայով, անցյալով: Սիրել մայրենի լեզուն և բոլոր լեզուներն էլ լավ տիրապետել:

Խոսքս վերջացնում եմ մի անհրաժեշտ խորհրդով. հայրենիքը կառավարում է պետությունը: Հարգել պետությունը, նպաստել նրա հզորացմանը, աչքի լույսի պես պահել նրան, որովհետև պետություն չունեցող ժողովուրդները փոշի են, ցնցոտի ուրիշ ժողովրդի տակ: Սիրեցեք մեր պետությունը և նրա քաջ բազուկը՝ բանակը, զորքը:

Ապրեք, զորանաք, սիրելի, փոքրիկ ընկերներ:

Ավ. Իսահակյան

456. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ

1952, 26 մայիսի, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Հազար ներողություն պիտի խնդրեմ նամակս այսպես ուշ գրելուս համար: Ձեր բոլոր նամակները ստացել եմ. ես շատ զբաղված եմ մանր-մունր գործերով, որոնք թե՛ շատ ժամանակ են խլում ինձնից, թե՛ շատ եռանդ, և մանավանդ փչացնում են տրամադրությունս: Ոչ մի գործ չեմ կարողանում իր ժամանակին վերջացնել, միշտ խանգարվում է, միշտ հետաձգվում: Եվ տարին լրանում է՝ տեսնում եմ, որ չոշափելի կամ մի մնայուն գործ չեմ տեսել: Եվ մեջեմեջ էլ միշտ հիվանդանում եմ, կամ գրիպ է, կամ աչքի ցավ, և այլն, և այլն:

Ձեր հարցերին պատասխանում եմ. վերջապես որոշվեցավ, որ դեկադան պիտի լինի հունիս ամսի վերջին, ուրեմն մի ամիս հետո: Ես վճռել եմ՝ չգնալ, հոգնած եմ, թուլլ եմ, առողջությունս չի ներում՝ այսքան ճանապարհ գնալ ու դառնալ, օրերով Մոսկվայում անհանգիստ, հուզված կյանք վարել: Իհարկե՝ ցավում եմ, որ չեմ գնալու:

Որոշել եմ նույնպես ամառը Հայաստանից դուրս չգնալու. զզվել եմ երկաթուղիներից, կայարաններից, ուզում եմ Հայաստանում անցկացնել և շատ տաք օրերը գնալ լեռները, հով տեղերը: Իսկ մերոնք կգնան՝ թերևս Կիսլովոդսկ կամ ուրիշ տեղ:

Պարզապես ծերացել եմ, հավաս, եռանդ մարել են. հանգստություն եմ ուզում, լավ զրուցընկերներ, և կարդալ, մտածել, կարդալ, խորհել:

Ես վաղուց գիտեի, որ Շամիլի[1] կինը հայ է եղել, և ամենասիրելի կինն է եղել. իհարկե, լավ չէ, բայց շատ ավելի վատ է, որ եղբայրը լրտես է եղել (այդ փաստը ես չգիտեի). ես չեմ սիրում դավաճան, անհավատարիմ մարդկանց: Մարդ պետք է հավատարիմ լինել իրեն, իր խոսքին, իր բարեկամին, ընկերին, ազգին, հայրենիքին: Արաբական առակն ասում է. «Մի դավաճանիր այն մարդուն, որը քեզ հավատում է, եթե դու նույնիսկ պաշտոնով լրտես լինես»:

Ուխտադրուժը ամենամեծ մեղքն էր արիական կրոնի և ժողովուրդների մեջ:

Շամիլի կնոջ եղբորը չեմ սիրում և պատիվ չեն բերում հայ ժողովրդին ո՛չ քույրը և ո՛չ եղբայրը – Ալիխան:

Այս մեծ պրոբլեմ է, որի մասին նամակով, կիսատ-պռատ չի կարելի խոսել. դրանով չի սպառվում խնդիրը: Իմ կարծիքով մորալի մեջ, էտիկայի նկատմամբ, ռելատիվիտե[2] չպետք է լինի, այլ բացարձակություն, աբսոլյուտ: Չպիտի խաբել, ուրեմն չպիտի խաբել. չպիտի սպանել, ուրեմն չպիտի սպանել: Այսպես խիստ, ռիգորիստ[3]: Իհարկե, մենք բոլորս էլ աբսոլյուտ մորալ չունենք, համեմատական է մեր չափը, հարաբերական: Մարդը անկատարյալ արարած է, ծնված կենդանական չար, վատ բնազդներով, և մարդը չի կարող բացարձակ բարոյական լինել. թերևս բացառիկ հերոսներ: Հետևապես մարդկային մորալը կիսատ է, անլրիվ. մենք ռելատիվիստներ ենք:

Դուք դեռ ծեր չեք, կարող եք Երևան դալ. եկեք տեսեք թե Երևանը ի՛նչ է դառել, ի՛նչ գեղեցիկ քաղաք է դառել: Երևի, պատերազմ չլինի (հույս ունենանք, որ չի լինի), և Հայաստանի շինարարությունը անարգելք կզարգանա:

Ով որ գալիս է Ռուսաստանից և Եվրոպայից, Ամերիկայից, ոչ հայեր, այլ օտար ազգեր, հիանում են Երևանի շինարարությամբ և ճարտարապետությամբ:

Սիրելի Խաչերես, ասենք, ես ուշացա պատասխանելը նամակիդ, բայց դուք էլ լռեցիք. ինձ միշտ հաճելի է Ձեր նամակները ստանալ և կարդալ, այնպես որ Դուք մի կապվեք իմ պատասխանի հետ:

Ձմռանալ ասել, որ «Սովետական գրականություն» ամսագրի 3, 4 համարները վաղուց է լույս են տեսել. արդյոք ստանո՞ւմ եք, հասել է Ձեզ, եթե չեք ստանում, հայտնեցեք խնդրեմ, որ պահանջեմ ուղարկել:

Շնորհակալ եմ Թիֆրովայի Ժենյա[1] հասցեի համար. բայց դեռ չեմ գրել. և չգիտեմ ի՞նչ գրեմ, հաճելի կլինի իմ նամակը նրան: Աստված հետը:

Ջերմ բարևներ Ձեր տիկնոջը. ջերմ բարևներ կնոջս և իմ կողմից Ձեզ:

Ավ. Իսահակյան

457. ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

<19>52, 6 հուլիսի, Երևան

Սիրելի Համազասպ.

Շատ դժգոհ եմ և վոդովված, որ իմ կամքի հակառակ չկարողացա ներկա լինել քո դիսերտացիայի պաշտպանությանը. ինձ ասել էին, որ երեկոյան է կատարվելու պաշտպանությունը, այնինչ ցերեկով է եղել. և զարմանում եմ, որ ինձ չէին հայտնել: Մի խոսքով շատ ցավում եմ, որովհետև գտնում եմ, որ շատ հետաքրքիր կլիներ:

Հետո, շարունակ հեռախոսում եմ տունդ՝ շնորհավորելու համար, ո՛չ մի կենդանություն չի հայտ բերվում տնիցդ:

Ուրեմն, բոլոր սրտով, բոլոր անկեղծությամբ, սիրով հայտնում եմ քեզ իմ խնդակցությունը, երկար-երկար տարիներ ապրես առողջ, աշխատունակ և նվաճես գիտական բարձունքները:

Զարմանում եմ, ո՛չ թե քո էրուդիցիայի համար, որ իրոք շատ զարմանալի է, այլ առավել և առավել զարմանում եմ քո անսպառ եռանդի վրա, քո հավեսի վրա, կեցցե՛ս, ջահել, մշտագարուն, ավիշով ու ավյունով լի մարդ ես. այդպես էլ մնաս, որպես ոգևորիչ հեռանկար նորահաս սերունդի համար:

Կինս, որդիս և բոլորս սրտանց չնորհավորում ենք դոկտորության աստիճան ստանալդ:

Ջերմագին բարևներով տիկնոջդ, Վիկտորին և քեզ:

Քո Ավետ. Իսահակյան

6/VII 52
Երևան

458. ԲԵՐՍԱԲԵ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

1952, 4 օգոստոսի, Երևան

Մեծարգո ընկեր Բերսաբե Գրիգորյան.

Խնդրում եմ ընդունեք իմ այս փոքրիկ նվերը՝ բանաստեղծություններիս ժողովածուն[1], որի ընթերցումը, հույս ունիմ, որ Ձեզ հաճույք պիտի պատճառե հիշեցնելով Ձեր մանկության վայրերը՝ Շիրակը և Արագածը:

Հետո, խնդրում եմ ներողամիտ լինեք Ձեզ մի փոքր անհանգստացնելու համար: Ուզում էի անձամբ Ձեզ տեսնել, բայց չհաջողվեց: – Այս գրությունը (ռուսերեն) հանձնել է ինձ ընկեր Սրբուհի Լիսիցյանը[2], որպեսզի ես այս գրության իմաստով միջնորդեմ Ձեզ մոտ Ս. Լիսիցյանի բնակարանային հարցի վերաբերմամբ:

Այս հարցը Ս. Լիսիցյանի ասելով Ձեզ հայտնի պիտի լինի ճարտարապետ Է. Տիգրանյանի[3] կապակցությամբ:

Շատ սիրելի ընկեր, խնդրում եմ բարի լինեք կարդալու այս գրությունը, և եթե հնարավոր է բավարարեիք նրան՝ Ս. Լիսիցյանին: Իմ կողմից ես էլ խնդրում եմ շատ դրա համար:

Ջերմ բարևներով ձեր՝ Ավետ. Իսահակյան

4. VIII. 52.
Երևան

459. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

<19>52, 5 օգոստոսի, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Շա՛տ ներողություն, որ այսպես ուշ եմ պատասխանում նամակիդ: Երկու ամիս է, որ ընկերներով թափառում ենք Հայաստանում. ուր ասես, որ չեղանք: Հենց այսօր էլ գնում եմ Լենինական: Այս տարի Հայաստանից դուրս չելա ամառը (այսինքն ամառանոց), որ Հայաստանում չրջեմ. մինչև սեպտեմբեր պիտի վերջացնեմ չրջելս:

Հույս ունեմ, որ ամսագիրը[1] արդեն ստանում ես նոր հասցեովդ, եթե ոչ՝ գրիր իսկույն:

Մի երկու վայր էլ Մարտիրոս Սարյանի հետ գնացի (Վայոց Ձոր՝ Դարալագյազ). Մարտիրոսը էտյուդներ արավ: Նա հիմա Լոռի է. մի խումբ նկարիչների հետ գնաց:

Հայաստանում այս տարի այնքան տաք չէ. միայն վերջերս ուժեղ չոգեր են լինում: Մինչև այսօր այգիների բերքը լավ է, վնասված չէ, իսկ հացը նույնպես լավ է և առատ:

Կաթողիկոսը, կարծեմ, հիմա Կիսլովոդսկ պիտի լինի. վաղուց է մոտը չեմ եղել: Լսեցիք երևի, որ Կիլիկիայի կաթողիկոսը՝ Գարեգինը[2] վախճանվեց:

Քեզ հետաքրքրող դեկադան հետաձգվեց. ասում են, որ ձմեռը՝ դեկտեմբեր-հունվար ամիսներում պիտի կայանա:

Հիմա ինձ գրիր թե դու ի՞նչ ես անում, ինչպես են գործերդ ու առողջությունդ:

Առայժմ այսքան. աչնանը կվերսկսենք մեր մանրամասն նամակագրությունը:

Հակոբ Խաչատրյանը հունիսին այստեղ էր մի 15 օրով:

Ջերմ բարևներ քեզ և տիկնոջդ:

Ա.վետ. Իսահակյան

460. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

1952, 26 օգոստոսի, Երևան

Սրտի ամենայն ջերմությամբ ողջունում եմ Ամերիկահայ Հառաջադիմական Միության համագումարը և ցանկանում եմ որ նա հաջողությամբ լուծե իր առջև դրված խնդիրները: Խաղաղությունը աշխարհի ամենամեծ բարիքն է, աշխարհի բոլոր դժբախտությունները պատերազմներից են ծագում: Հայ ժողովուրդը միշտ եղել է խաղաղության և ազգերի բարեկամության ջերմ պաշտպանը: Ամերիկահայ Հառաջդիմական Միությունը մաքառելով խաղաղության և ժողովուրդների համերաշխության համար, մարդասիրական վեհ և ազնիվ գործ է կատարում: Հավատացած եմ որ Ամերիկայի հառաջադեմ հայերը այսուհետև ևս հավատարիմ կմնան խաղաղության փրկարար դրոշակին և բազմապատկած եռանդով կպայքարին նոր պատերազմի իմպերիալիստական հրահրումների դեմ հանուն արդարության, հումանիստական խաղաղության:

Ջերմանակի ողջույններով և հարգանքներով

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ
Ավետիք Իսահակյան

461. ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ

1952, 12 սեպտեմբերի, Երևան

Հարգելի ընկեր Գ. Մեհրաբյան.

Մի քանի ամիս առաջ էր՝ մեկը հեռախոսով հայտնեց ինձ, թե Ծալկայից իրեն գրել են, որ Ավ. Իսահակյանին իմաց տալ, որ Ուստա Կարոն մահացել է վերջերս Ծալկայում, կամ նրա գյուղերից մեկում:

Առաջին նվագ ինձ թվաց թե կատակ են անում ինձ հետ: Ես կարճ պատասխանեցի, թե Ուստա Կարոն գոյություն չունի, դա հավաքական տիպ է, իսկ նրա փոքրիկ նախատիպը Թուրքական արշավանքների ժամանակ՝ Կարսում, Կաղզվանում անհայտացել է: Ես խոսափողը վար դրի, և չուզեցի ավելին իմանալ, որովհետև զբաղված էի գրելով, և շատ ջղայնացա, որ խանգարեցին ինձ հեռախոսի մոտ կանչելով: Հետո միայն անդրադարձա, որ մեծ սխալ գործեցի չհետաքրքրվելով այդ լուրի ծագման հանգամանքներով:

Արդեն ուշ էր, և լուրը հայտնողը անհայտ մնաց ինձ, անունը չիմացա: Հարցուփորձ անելով, բախտ ունեցա գտնել Ձեր հասցեն և հիմա Ձեր ներողամտությունը խնդրելով Ձեզ անհանգստացնելուս համար, գրում եմ այս տողերս: Սիրելի հայրենակից, բարի եղեք օգնել ինձ՝ գտնելու այդ լուրի աղբյուրը:

Թերևս Ձեր ծանոթների, բարեկամների միջոցով Ծալկայում և նրա գյուղերում գտնեք, թե ո՛վ է այդ մասին Երևան գրել: Եվ արդյոք հայտնի՞ չէ Ձեզ այդ լուրը, այդ լեգենդան, գուցե կարողանաք իմանալ՝ ո՞վ էր իրեն «Ուստա Կարո» հայտարարել, ի՞նչ արհեստի մարդ էր, որտեղի՞ց էր, քանի՞ տարեկան էր, ընտանիք ունե՞ր: Զարմանում եմ, որ վեպը դեռ չտպված, նրա գլխավոր հերոսը, որ մտացածին է, տիպականացած — արդեն մարմին է առել, ապրել, գործել մինչև օրս և մեռել օտար Ծալկայում: Ինչո՞ւ անպայման Ծալկայում: Ինչո՞ւ անպայման Ծալկայում: Շատ հետաքրքիր է:

Հույս ունեմ, որ կհետաքրքրվեք և բարի կլինեք ինձ պատասխանելու...

Ղուչչիում[1] ունեմ ծանոթներ՝ Մուշեղ Գինոսյանը և դպրոցի դիրեկտոր Հրանուշ Սիմոնյանը:

Սիրով և հարգանքով՝ Ավ. Իսահակյան

ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՑԱՆԻՆ
(երկրորդ տարբերակ)

Խնդրում եմ ներողամիտ լինեք Ձեզ անհանգստացնելուս համար:

Այս տարի, մի քանի ամիս առաջ, ես դրասեղանիս առաջ նստած գրում էի, երբ հեռախոսը [ինձ] ձայնեց. վերցրի խոսափողը, ինձ հետ խոսողը տվեց իր ազգանունը, որ դժբախտաբար չեմ հիշում, և հայտնեց, որ Ծալկայից նամակ է ստացել, որով նամակագիրը հայտնում է թե՝ Ա. Իսահակյանին իմացրեք՝ որ Ուստա Կարոն այս տարի (ի գեղի) Ծալկայում մեռել է. առջի նվագ ինձ թվաց թե՝ կատակ են անում ինձ հետ. ես կարճ պատասխանեցի թե՝ ուստա Կարոն գոյություն չունի. դա ստեղծած հավաքական տիպ է, իսկ նրա միստիկ նախատիպը Թուրքերի արշավանքին Կարսում-Կաղզվանում անհայտացել է: Եվ խոսափողը վայր դրի: Հետո միայն անդրադարձա, որ պիտի մանրամասն հարցնեի՝ թե իր անձը և թե Ծալկայից նամակագիրը. սակայն ուշ էր: Ես արդարացնում եմ ինձ այն բանով, որ ես զբաղված էի, խանգարեցին ինձ:

[Երբոր հարցուփորձ հիմ] Ուզեցի ստուգել այդ լուրը, դուրս դիմեցի: Գոտա Ձեր հասցեն, որով չատ եմ խնդրում Ձեզ, սիրելի հայրենակից, եթե հնարավոր է, հարցրեք Ձեր ծանոթներին, թերևս մի բան հայտնի լինի, գտնեք, և բարի լինեք գրելու ինձ:

Ձեր հասցեից դուրս ունեմ դեռ այս հասցեները, որոնց կարող եք դիմել իմ կողմից:

462. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1952, 17 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Երևեցար և մի վայրկյանում, հավատարիմ քո սովորության, անհայտացար: Այդ երևույթի հետ հաշտ եմ, բայց ինչո՞ւ մի-երկու տող չես գրում, թե ի՛նչ եղավ տապանաքարը[1]. չինեցին, ի՞նչ վիճակի մեջ է:

Եթե վերջացել է՝ գրիր որ փողը ուղարկեմ, կամ եթե չտապ է, դու վճարիր (400 ռուբլի: 200 ռուբլի տվել եմ կանխավճար):

Հույս ունեմ, որ կանես: Երևի մոտ օրերս կգաս Երևան: Սպասում եմ:

Բարևներով Ավետիք Իսահակյան

463. ՄԱՄԻԿՈՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

1952, 12 Հոկտեմբերի, Երևան

Հարգելի ընկ. Մ. Ավագյան.

Այս տարի գարնանը, Երևանում, մի անծանոթ մարդ ինձ զանգարահեց և ասաց թե նամակ է ստացել Ծալկայից, որ Ուստա Կարոն մեռել է Ծալկայում:

Ուստա Կարոն իմ չավարտած վեպի հերոսն է, իրականության մեջ գոյություն չունեցող. այլ մտացածին է, իմ ստեղծածը:

Այս լսելով մի րոպե ինձ թվաց, թե կատակ են անում ինձ հետ. մանավանդ որ ես շատ զբաղված էի (գրում էի այդ միջոցին), չհետաքրքրվեցի մանրամասնաբար, միայն կարճ կապեցի՝ ասելով, որ նա՝ Ուստա Կարոն չինծու տիպ է, գոյություն չունի, ի՛նչ մեռնել, ի՛նչ բան:

Խոսակիցս հեռախոսի փողը վար դրեց և լավ չիմացա նրա ազգանունը: Սակայն անմիջապես զղջացի անտարբերության համար, բայց արդեն ուշ էր. դրանից հետո շատ հարց ու փորձ արի դառնելու խոսակցիս, բայց արդյունք չունեցավ:

Մտածեցի Ծալկա հարցնել: Գուցե Ծալկայում ապրող մտավորական հայերից մի քանի հասցե, մեկը Դուք եք, ընկեր Ավագյան:

Ուստի խնդրում եմ բարի լինեք հետաքրքրվելու Ձեր միջավայրում՝ թե դա ի՞նչ լուր է, ով էր այդ կարծեցյալ Ուստա Կարոն, ո՞ր գյուղումն է մեռել և երբ. ի՞նչ անճանաչելիություն է եղել, ի՞նչ արհեստի տեր, քանի՞ տարեկան է եղել և ո՞ր երկրացի է եղել:

Շատ ներողություն եմ խնդրում Ձեզ այսքան դժվար դրության մեջ դնելուս համար, փորձեցեք, թերևս մի բան իմանաք այդ մասին:

Գուցե ճանաչում եք Երևանում ծալկացիներին, ինձ նրանց հասցեն տայիք, թերևս նրանցից բան լսեի:

Հանդիստ չունեմ. զարմանալի երևույթ է, որ ստեղծված, մտացածին կերպարը ժողովրդի մեջ մարմնանում է, իրական դառնում, փոխանակ հակառակը լինելու՝ կյանքից դեպի վեպը, մանավանդ որ վեպը դեռ լրիվ լույս չի տեսել:

Հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

Ереван, ул. Баграмяна 3
Союз Советских Писателей
А. Исаакян

464. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

1952, 22 Հոկտեմբերի, Երևան

Սիրելի Սաքո Սուքիասյան.

Ստացել եմ քո գեղեցիկ նամակը և շատ ուրախացել եմ, և հուզվել: Շատ հուզիչ էր ախալքալաքցիների սրտագին վերաբերմունքը իմ Ախալքալաք[1] գալու մտադրության հանդեպ... Բնավ մտքովս չի անցել, թե այդպիսի ջերմ, սիրալիր զգացումներ կարող էի արթնացնել իմ հայրենակիցներիս մեջ. ցավում եմ, որ հակառակ իմ կամքին բախտ չունեցա լինել այդ հայրենասեր, հայ, ավանդապահ հոգիների ազնիվ շրջանում: Հին, քաղցր ձայներ եմ լսում այդ բոլորի միջից:

Ջերմ շնորհակալություններս հայտնիր ինձ հյուրընկալող ախալքալաքցիներին. նրանց հյուրասիրության կազմած պլանը ես իրականացած եմ համարում և չա՛տ զգացված եմ:

Նամակիդ ուշ պատասխանելուս պատճառները, թեև չնչին, բայց շատ էին և խանգարիչ. իրար վրա ժողովներ ունեի, և վերջերս էլ հիվանդ էի, մրսել էի:

Երևի, այս ամիսներս Երևան կգաս և շատ բաներ կլսես՝ քեզ հետաքրքրող: Բարևներդ հաղորդեցի Ուրարտուին և Աչոտին[2], սիրով վերադարձնում են բարևներդ: Քեֆները տեղն է, ո՛չինչ...

Գրում ես Կիսլովոդսկում ապրող քո հայ բարեկամների մասին, Կուպեցյանների մասին, որոնց ես էլ իրավունք ունեմ իմ բարեկամները համարելու, քանի որ գրականությունը (հայ, իհարկե) սիրողներ են, միայն զարմանում եմ և դժգոհ, որ Կիսլովոդսկում չեն մոտեցել ինձ, չեն ծանոթացել: Եթե հաջորդ տարի, կամ հետո, գնամ Կիսլովոդսկ, կայցելեմ նրանց. հաղորդիր նրանց իմ բարեկամական բարևները:

Սիրելի Սաքո, երևի դժվարությամբ պիտի կարդաս գիրս, հիվանդությունից և ջերմից հետո ձեռքս դողում է, իհարկե ծերությունն էլ իր կարգին:

Եթե այս ձմեռ հայկական տասնօրյակը կատարվի Մոսկվայում, և եթե ողջ լինեմ, կհանդիպենք Մոսկվա-

յում. առայժմ վերջացնելով նամակս, ցանկանում եմ քեզ առողջություն և բախտավորություն:

Բարևներով Ավետ. Իսահակյան

22. X. 52
Երևան

465. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ

1952, 30 դեկտեմբերի, Երևան

Մեծահարգ Տիար Արշակ Ջոպանյան, Բեյրութ.

Սիրելի և անճնվեր բարեկամ.

Մեծ ուրախությամբ լսեցի Ձեր վաթսունհինգամյա գործունեության կատարված հոբելյանը[1]*, որ տեղի ունեցավ Բեյրութի մեջ, նախագահությամբ Տեղապահի Մեծի Տանն Կիլիկիո Տ. Խադ Արք<եպիսկոպոս> Աջապահյանի*[2]*:*

Մաղթում եմ երկար և երջանիկ տարիներ, որ կատարեք Ձեր կիսատ ձգած գործերը, և նմանապես մաղթում եմ որ Ձեր իսկ ներկայությամբ վայելեք Ձեր անխոնջ աշխատանքի յոթանասունհինգամյա հոբելյանը:

Ձեր անկեղծ բարեկամը

Ավետիք Իսահակյան

466. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ

1953, 3 Հունվարի, Երևան

Հարգելի Սիտալ.

Հայաստանի Սովետական Գրողների Միությունը, մեր գրական հասարակայնությունը ջերմորեն նշեց Ձեր ծննդյան 60-ամյակը[1] և Ձեր բեղմնավոր գրական-ստեղծագործական գործունեության 40-ամյակը: Սովետական Հայաստանի գրողները մեծ գոհունակությամբ նշեցին Ձեր այն ծառայությունները, որ Դուք մատուցել եք հայ ժողովրդին, հայ կուլտուրային և գրականությանը՝ Ձեր բարձրարժեք ստեղծագործություններով:

Դուք՝ հանդիսանալով արտասահմանյան հայ առաջադեմ գրական-հասարակական գործիչներից մեկը, միշտ կանգնած եք եղել Սովետական Միության բարեկամների շարքում: Ձեր ողջ ակտիվ հասարակական գործունեությամբ Ամերիկայի հայ գաղութներում հետամուտ եք եղել մեկ նպատակի՝ պատել մեր մեծ Հայրենիքի թշնամիների հերյուրանքների ու ստահոդությունների վարագույրը և միշտ ճշմարտությունն ասել Սովետական Միության և Սովետական Հայաստանի մասին: Դուք միշտ կանգնած եք եղել և կանգնած եք խաղաղության պաշտպանության դիրքերում, ընդդեմ նոր պատերազմների, որը հրահրում են մարդկության թշնամիները:

Ձեր երկարամյա բեղմնավոր հասարակական գործունեությամբ, Ձեր գրչով Դուք միշտ մեզ հետ եք եղել — Սովետական Հայաստանի գրականության և կուլտուրայի գործիչների հետ, մենք միշտ լսել ենք Ձեր՝ քաջարի հայ-

բենասերի ձայնը և զգացել Ձեր ջերմ ձեռքը՝ հեռավոր Ատլանտյանի ափերում:

Սիրելի Սիտալ, դեռ Ձեր 1946 թ.[2] Երևան այցելելու ժամանակ, Դուք ցանկություն հայտնեցիք Սովետական Հայաստան վերադառնալ, մեզ հետ, հայրենի հողում մասնակցելու այն վիթխարի ստեղծագործական աշխատանքին ու կառուցմանը, որը տեղի է ունենում վերածնված սոցիալիստական Հայաստանում: Դուք արդեն թևակոխել եք Ձեր կյանքի յոթ տասնամյակը:

Ինձ հասած տեղեկություններով Դուք որոշել եք փոխադրվել մշտական բնակության համար Սովետական Հայաստան: Սրտանց ողջունում եմ Ձեր այդ ցանկությունը: Ես կուզենայի, որ Ձեր գալուստը Հայաստան զուգադիպեր Հայպետհրատի կողմից հրատարակվող Ձեր բանաստեղծությունների ժողովածուի[3] լույս ընծայմանը, որը սպասվում է 1953 թ. մայիս-հունիս ամիսներին:

Սրտանց կցանկանայի, որ Ձեր այդ գիրքը նվիրեիք ինձ անձամբ, մեր թանկագին Երևանում:

Ահա այդ անկեղծ ցանկություններով գրում եմ այս նամակը և մաղթում Ձեզ ամենայն հաջողություն և քաջառողջություն:

Խորին հարգանքներով և ողջույններով՝

Ավետիք Իսահակյան

3. I. 53 թ.

467. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1953, 12 Հունվարի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Շնորհավոր Նոր տարիդ. ցանկանում եմ ձեզ բոլորիդ՝ մայր, եղբայր, կին, հարս – առողջություն, երկար կյանք և հաջողություն:

Չգիտեմ ինչո՞վ բացատրեմ քո լռությունը. թերևս նամակդ կորել, տեղ չի հասել. այնպես որ սրանով խնդրում եմ գրես, թե վարպետ Սեմիկին[1] հանձնել ես գումարը. նրանից էլ նամակ չունեմ: Անհանգիստ եմ: Այն կարծիքին եմ հասել, որ ըստ քո սովորության մոռացել ես ինձ գրելը:

Բարի եղիր այս անգամ գրել:

Ջերմ բարևներով Ավ. Իսահակյան

468. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

1953, 12 Հունվարի, Երևան

Սիրելի ընկեր Խաչերես.

Մի երկու օր առաջ ստացա նամակդ և զարմացա, որ նամակս չես ստացել, որը սխալմամբ պատվիրած չէի ուղարկել: Այնտեղ գրել էի երկար լռության համար. բացատրել էի: Հետո գրել էի, որ «Սովետական գրականություն» ամսագիրը նորից գրեցի Ձեր հասցեով, 1953 թվի համար. և նաև, որ ինձ խոստացան Ձեր պակաս թիվը լրացնել: Առայժմ այս նամակը գրում եմ Ձեզ հանգստացնելու համար, չուտով երկար նամակ կգրեմ: Կինս ամսից ավել է հիվանդ է՝ իր հին ցավով (ոտքերի ցավով), բարևում է Ձեզ, և միասին չնորհավորում ենք Ձեր Նոր տարին:

Բարևներով Ա. Իսահակյան

[լուսանցքում]

Նամակս ուղարկված է եղել Ձեր հին հասցեով. Баксанс[1]: *Այդ հասցեով է նաև ամսագիրը:*

469. ԲԱՔՎԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1953, 3 մարտի, Երևան

В виду болезни не имею возможности отозваться статьей на знаменательную дату смерти великого демократа просветителя и мыслителя азербайджанского народа Мирза Фатали Ахундова[1] вместе с его другом единомышленником Абовяном явившемся поборником братства между народами Закавказья и в своем творчестве проводившем идеи солидарности с великим русским народом и отразившем благотворное влияние его бессмертной литературы.

Аветик Исаакян

470. ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ

1953, 28 մարտի, Երևան

Ընկ. Վար. Ղազանչյանին.

Սիրելի Վարդան.

Ընկեր Օլգա Մակեդոնսկայան վաղուց ինձ տվեց քո դրական կարծիքը նրա թարգմանած Զեխովի[1] գործերի մասին. այդ թուղթը կորցրել եմ. խնդրում եմ հիշողությունդ սրես և կրկնես քո գրավոր կարծիքը:

Ջերմ բարևներով Ավետ. Իսահակյան

471. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ

<19>53, 22 Հունիսի, Երևան

Սիրելի ընկեր Քրիստափոր[1].

Բոլոր նամակներդ ստացել եմ. և բոլորին չեմ պատասխանել, որովհետև այս գարնանը մինչև հունիս, ամբողջ երկու ամիս հիվանդ էի, անկողնում. հին հիվանդություններս — երիկամունքի և միզային ճանապարհների: Շատ տանջվեցի և աչքիս ո՛չինչ չէր երևում, ո՛չ մի արժեք չուներին:

Հիմա լավ եմ և կամաց-կամաց կազդուրվում եմ: Ամառը մնալու եմ Երևանում, որովհետև տաք կլիման օգտակար է ինձ:

Ստացար 60 րուբլին. մի՞թե քեզ չէի գրել, որ դա իմ կողմից մի չնչին քաղաքավարական ժեստ է. ի՞նչ արժեք ունի քեզ կամ ինձ համար մի 60 րուբլի, բայց գեղեցիկ է, երբ բարեկամները իրար հանդեպ ուշադիր և փափկանկատ են:

Հիշում եմ, որ դու շարունակ հարցնում էիր թե հայկական դեկադան ե՞րբ է լինելու. հիմա ամենայն հավանականությամբ կարելի է ասել, որ շատ հեռավոր ապագայում, այն էլ եթե լինի: Ուշացավ. ժամանակները փոխվեցին[2]:

Շատ բան կա ասելու և լսելու, որ գրավոր անհնար է գրելը. հատորներ կկազմեն: Ով գիտե՝ կարող է պատահել, որ Մոսկվա գնամ, եթե լավ առողջանամ, այն ժամանակ կարող ենք իրար հանդիպել: Առայժմ ապրենք և հուսանք գալիքի համար լավատես զգացմունքներով:

Դուք հիմա Երևանի թերթերը (մամուլը) կարդում եք և բավական իրազեկ կլինեք մեր կացության հետ, մեր հարցերի հետ (Հայաստանի մասշտաբով):

Կուլտուրապես, մտավորապես շատ առաջ է գնացել մեր ժողովուրդը, գրեթե անգրագիտություն էլ չկա. բացի ծեր գյուղացիներից:

Երևանում և մյուս քաղաքներում տների և շենքերի կառուցումները անընդհատ տեղի են ունենում, մանավանդ շատ բարձր որակով: Եթե այս թափով շարունակվի,

Երևանը կդառնա Միության ամենագեղեցիկ քաղաքներից մեկը:

Կաթողիկոսը[3] դեռ շատ առույգ է, եռանդուն և գործունյա: Այս տարի գալու է Կիսլովոդսկ, երևի, կհանդիպեք:

Տեսնում եք ինչքան վատ եմ գրում, ձեռքս դողում է, գրիչը ակամա վազում է, չեմ կարող իշխել:

Էհ, վերջացնեմ. կինս բարևում է Ձեզ. նա էլ է հիվանդ: Բարևիր Ձեր եղբորը և Ձեզ:

Սիրով Ավ. Իսահակյան

Ереван
ул. Плеханова 32
А. Ис.

472. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1953, 3 օգոստոսի, Երևան

Սիրելի Կամսար.

Մեծ չնորհակալությամբ ստացել եմ գիրքդ՝ «Հ. Թումանյան»[1]: Ամենից առաջ ասեմ, որ արտաքինը գեղեցիկ է, լավ կազմած: Թուղթը լավ է, լավ են և նկարները, պատկերները: Գեղեցիկ, կուլտուրական գործ է:

Բովանդակությունը, ճշմարիտն ասած՝ դեռ լրիվ չկարդացի, սակայն կեսից ավելին կարդացել եմ, և շատ էջեր նայել եմ, թերթել եմ: Պատճառը — մոտ երեք ամիս հիվանդ էի, միայն վերջին ժամանակներս եմ ինձ լավ զգում: Հիվանդությանս անունը ծերություն է, հառաջացած տարիքի արդյունք — սրտի թուլություն, աթերիոսկլերոզ, արյան ճնշում և այլն, և այլն:

Գրքիդ այս նոր հրատարակությունը[2] գրեթե վերենվար նոր մշակված է. անհամեմատ առաջինից շատ առա-

վել, ամփոփ, բովանդակալից, լրիվ: Աչխատեցիր, քննադատություններից օգտվեցիր և մի գեղեցիկ գործ հանդես բերիր:

Ցանկանում եմ գրական նոր գործերիդ հաջողություն:

Ջերմ բարևներով և սիրով Ավետիք Իսահակյան

473. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1953, 10 սեպտեմբերի, Երևան

Սիրելի Սոֆիկ և Աչխեն[1]*.*

Մենք բոլորս ողջ և առողջ ենք. ուրախ ենք, որ լավ տեղավորվել եք, մնում է որ կազդուրված վերադառնաք:

Մեր Հեղինեն մեռավ, ազատվեց. մեռավ աչուղ Սերոբի[2] *տղան, որին բանտից ազատելու համար ինչքա՜ն աշխատեցի. մեռավ տիկին Դարոն (Արուս Թադևոսյանի*[3] *մայրը). մեռավ Խաչ. Կանայանի*[4] *կինը. երևում է մի մահվան ալիք էր, լավ որ այստեղ չէիք, հանկարծ... ո՞վ իմանա... մենք բոլորս առայժմ լավ ենք:*

Բարևներով, համբույրներով Ավետիք

Պալտոդ Հասմիկը կբերե:

474. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

<1953, 23 սեպտեմբերի, Երևան>[1]

Սիրելի Սոֆի.

Բոլոր նամակներդ և բարևներդ մարդկանց միջոցով ստացել ենք: Բոլոր ամառանոց գնացողները արդեն վերադարձել են. նաև Վեհափառը[2]*: Բոլորն էլ լավ լուրեր են բերել քո առողջության մասին:*

Շատ ուրախ ենք բոլորս էլ այդ մասին: Ամբողջ տունը ողջ և առողջ են: Վիգենը այս երկու օրս գնացել է Սևան կինո-նկարահանման: Լավ է:

Վաղը տնով գնում ենք էջմիածին Վեհափառի անվանակոչության տոնին, ուրեմն ամբողջ տնով:

Ավիկը շատ լավ է և կարոտով բարևում է քեզ և համբուրում:

Բելան, Քրիստինեն[3] նույնպես բարևում են:

Եղանակները լավ են, հաճելի է Երևանը:

Փառիկը[4] լավ է. մեր տնից միշտ ճաշ են տանում նրան, բայց պրիտենզիաները շատ են:

Ջերմ բարևներս տուր հյուրընկալներիդ և ինձ հարցնողներին:

Հանգիստ սրտով արի, շտապելու պետք չկա. Բաքուն լավ տես, թատրոն, օպերա, մուզեյ: Երևի Նախճվանի վրայով ես գալու. դա կարճ է:

Համբույրներով Ավետիք

P.S. Այստեղ ասում են՝ կարագ կա, բայց եթե ուզում ես՝ առ Բաքվից. թերևս լավը կլինի: Բայց խավիար կբերես:

Նույն

475. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

1953, 27 հոկտեմբերի, Երևան

Սիրելի Անդրանիկ.

Քեզ տեսնելուց հետո շատ ժամանակ չանցավ՝ տեսակցություն ունեցա ընկեր Վ. Համբարձումյանի հետ, խոսեցի աղջկադ[1] ձգտումների, տենչերի և կարողություններիր մասին. ասաց, որ սիրով կընդառաջեմ, երբ որ ես Մոսկվայում կլինեմ, թող ներկայանա ինձ, խոսեմ հետը, և մնացածը կանենք:

Այժմ դու չարունակ ուշադիր լինես, թե երբ է համբարձումյանը Մոսկվա գնում, որ աղջիկդ տեսնի նրան. հիմա նա Մոսկվայումն է, բայց ուշ է արդեն:

Դա դյուրին բան է. կիմանանք երբ է գնում, – նա հաճախ է լինում այնտեղ՝ Մոսկվա, և ո՞ւր է իջնում: Միայն թե աղջիկդ կայուն որոշմունք ունենա և հաստատուն կամք:

Սիրելիս, էլի պիտի խոսեմ Պոլոզ Մուկուչի գերեզմանի մասին. անցյալ օրերը մեկն ինձ ասաց, որ քաղաքի խուլիգանները կոտրել, փշրել են քարերը: Ինչո՞ւ համար, ո՞ւմ ծանր է նստում այդ խղճուկ գերեզմանը: Ո՞վքեր են այդ սրիկաները:

Ինդրում եմ, տեսնես գերեզմանը և ինձ գրես մանրամասնաբար:

Ջերմ բարևներ մայրիկիդ, կնոջդ, եղբորդ: Ես նորից հիվանդ էի, նոր եմ ամոքվել:

Քո Ավետիք Իսահակյան

476. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԵՎ ՇՈՒՇԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ

<1953>[1]

Սիրելի Շուշիկ և Նիկ-Կոլե ջան.

Սրտիս բոլոր ջերմությամբ համբուրում եմ երկուսիդ, և ցանկանում եմ երկուսիդ էլ երկար և բախտավոր կյանք. ցանկանում եմ նորից տեսնելու իրար: Հույս ունիմ, որ ավելի կհեշտանան ճանապարհները և պիտի կարողանանք իրար շուտ և ավելի երկար տեսնելու:

Ես հիմա բոլորովին առողջ եմ, և զգույշ եմ ապրում. չեմ ծխում, չեմ խմում, միս քիչ եմ ուտում: Ապրենք, տեսնենք ի՞նչ լավ բաներ պիտի պատահեն:

Նորից սիրո և կարոտի բարևներ

Ձեր՝ Ավետիք

477. ԵԿԱՏԵՐԻՆԱ ԴՈՒՐՑԱՆ-ԱՐՄԵՆՑԱՆԻՆ

1953 թ.

Մեր սիրելի Կատյա[1], դուք 50 տարի անձնվեր ծառայել եք հայ բեմին՝ ձեր գեղեցիկ արվեստով օգնելով մեր կուլտուրայի զարգացմանը: Այսօր մեր ժողովուրդը, տոնելով ձեր հոբելյանը, հայտնում է իր երախտիքը ձեզ: Ցանկանում ենք ձեզ երկար, առողջ կյանք, փայլուն հաջողություններ:

Համբույրներով Ավետիք Իսահակյան ընտանիքով

478. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1954, 14 փետրվարի, Երևան

Շա՛տ սիրելի Կամսար.

Մեծ և շատ չնորհակալություններով կարող եմ միայն փոխարինել իմ հանդեպ հայտ բերած քո մշտական ուշադրությանը և սիրուն:

Քո՝ ամիսների ընթացքում ինձ ուղարկած բոլոր նամակները, գրքերը, թերթերը... լրիվ ստացել եմ: Միայն ծուլությունը և ծերությունը չէին պատճառները չպատասխանելուս, այլև երկարատև հիվանդությունը: Այս տարի Հայաստանում գրեթե Երևանի տարեգրությունների մեջ չեղած սառնամանիք էր. քաղսովետը չէր նախատեսել և չէր ապահովել բնակչությանը վառելիքով. գրեթե ամեն տուն և հիմնարկ ցուրտ էր. մեր բնակա<րա>նը նույնպես ցուրտ: Ես դեկտեմբերի վերջերից մրսեցի և հիվանդացա. 5 միլիոն պենիցելինը փրկեց ինձ... հիմա լավ եմ, տնից համարյա դուրս չեմ գալիս. դեռ ցուրտ է, իհարկե ոչ դեկտեմբերի և հունվարի պես:

Դեռ թուլլ եմ, մինչև եղանակները չլավանան, մինչև գարուն չգա, չեմ կազդուրվի:

Երևի գիտես, որ վերջին ամիսներս Հայաստանում մեծ աշխուժություն էր տիրում – ժողովներ, քննադատություններ, տեղաշարժեր. առաջին քարտուղարին[1] հանեցին. Թռան Զավեն Գրիգորյանը[2], Օ. Մամիկոնյանը[3] և ուրիշներ: Բերիայի խայտառակ անկումը[4] և արժանի պատիժը շատ ուրախացրեց մեզ. այլևս հայ ժողովրդի գլխին չարիք նյութող չկա. հայ ժողովրդի դահիճը չկա:

Լսեցիր, որ Դ. Դեմիրչյանին[5] Ակադեմիայի իսկական անդամ ընտրեցինք. արժանի էր:

Էլ էնպես նորություններ չունենք, սակայն սպասում ենք:

Սիրելիս, հատկապես չնորհակալ եմ Սրիս. Բոթևի[6] ոտանավորի համար, որն ինձ շատ հանգստացրեց[7]: Հեղինակները, գրականության պատմությունների մեջ հայտնի, հաճախ ազդվում են ուրիշներից. կամ ժամանակի աթմասֆերան է ներշնչում իրար նման բաներ հեղինակների միջև, բայց այս կոնկրետ դեպքում — ես երբեք չեմ ազդվել Սրիստո Բոթևից. պարզապես չեմ կարդացել նրա բանաստեղծությունները. թեև կարդացել եմ նրա մասին, կենսագրությունը, ոգևորվել եմ նրանով իմ ջահել ժամանակը. թերևս, գուցե կենսագրության մեջ նրա գործերից տողեր բերված լինեին, բայց հաստատապես պնդում եմ, որ իմ ոտանավորը չի կրում, չի կրել նրա չգրված բանաստեղծությունից: Քո բերած ոտանավորն էլ նույնն է ապացուցում: Տիխոնովը[8] ենթադրել է՝ հայդուկի մահը, Բուլղարիա, ազատագրական կռիվներ, ուրեմն հայկական պայքար, հայ հայդուկի մահը: Պրծավ, գնաց: Թերևս նա այս դիտմամբ է արել այդ ոտանավորիս ասպարեզ տալու համար:

Երկարացրի, հերիք է:

Երբ ես գալու նորից Հայաստան: Ես ամառը չեմ որոշել տեղ գնալ, բայց մերոնք կտանեն:

Սրտագին բարևներով՝ Ավետ. Իսահակյան

479. ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՑԻՆ

1954, 13 Հուլիսի, Երևան

Թանկագին Պավլո Գրիգորևիչ.

Ամենաջերմ ողջույններ Ձեզ Երևանից:

Շատ խնդրում եմ ներել, որ մի հարցի առիթով անհանգստացնում եմ Ձեզ: Նամակս Ձեզ հանձնողը, առաջին քուրդ նկարիչ Բագո Կալոևը, որ ավարտել է Երևանի գեղարվեստական ուսումնարանը, ջերմ ցանկություն ունի շարունակելու իր ուսումը, որպես նկարիչ, Կիևի գեղարվեստական ինստիտուտում:

Նա հետաքրքիր կենսագրություն ունի — նախկին հովիվ է, որը: Շատ եմ խնդրում օգնել նրան իր ցանկությունն իրականացնելու՝ ինստիտուտ ընդունվելու գործում:

Նախապես չնորհակալություն եմ հայտնում:

Ջերմագին հարգանքներով

Ձեր՝ Ավ. Իսահակյան

480. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

<19>54, 29 Հուլիսի, Երևան

Սիրելի Աշիկ.

Գրաբերիս ընկ. Ա. Շահխաթունյանին, իմ խնդրով Պետհրատը տվել էր աշխատանք: Նա փորձված լավ թարգմանիչ է՝ հայերենից ռուսերեն և հակառակը, սա՝ իմիջիայլոց: Նրան տվել էին թարգմանելու Տագորի <«Գիտանչերքը»[1]>. մի մասը թարգմանելուց հետո նրան ասում են, որ դա վաղուց թարգմանված է... և այլն. մի խոսքով չեն ուզում վճարել... Սա ո՛չ մի արդարացում չունի, և իբրև փաստ, զայրացուցիչ է:

Խնդրում եմ, սիրելի Աշիկ, վճարել նրան ինչ որ հասնում է, չզրկել, և սրանից հետո էլ նրան աշխատանք տալ[2]. մի բան, որ բազմիցս խոստացել են բոլոր ընկերները՝ Պետհրատի:

Ջերմ բարևներով Ավետ. Իսահակյան

481. ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ

1954, 29 Հուլիսի, Երևան

Հագելի ընկեր Թումանյան.

Հայ Գրողների միության աշխատակից ընկեր Վարդգես Ասլանյանը[1] մինչև հիմա իրավունք ուներ իր տանը ջուր ունենալու. հիմա Ձեր կարգադրությամբ [կտրել են նրա ջուր խմելու] ջրից օգտվելու...

Դարձերեսին[2]
Ինչու խոսել, երբ կարելի է լռել:
Ասի-ըսավ է, դատարկ բան է:

482. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1954, 5 օգոստոսի, Երևան

Սիրելի Սոֆի.

Ձեր գրած բոլոր նամակները ստացել ենք: Ես բնավ ժամանակ չունեի գրելու. օրը երկու ժողով ունեինք, աղմկալից: Խոսքս Համագումարի[1] մասին է: Ես նորից մնացի նախագահ, Ե. Թոփչյանը[2] քարտուղար:

Ես լավ եմ, առողջ եմ, լավ կառավարվում ենք: Վիգենը մի չաբաթ է Թիֆլիզ է, կինոյի գործերով, կմնա մինչև ամսիս 9-10: Բելան Ավիկի հետ Օդեսա է. թելեֆոն և հեռագիր ունինք: Քրիստին լավ է. կատուն նորից երեք ձագ բերեց: Շոգերին դիմանում եմ. լավ ձմերուկ կա:

Աղավնի Մեսրոպը[3] մեռավ, երաժիշտ Կ<ոնստանտին> Սարաջևը[4] մեռավ:

Բարևիր Նինային, Փառիկին, բժ. Ռումյանցևային:
Բարևներով Ավետիք

483. ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՅԻՆ

1954, 7 օգոստոսի, Երևան

Многоуважаемый Павло Григорьевич!

Подательница сего письма Сирануш Сардаровна Казарян является вдовой видного революционера Патвакана Казаряна[1] погибшего в тюрьме в 1937 году.

Сын Марфель Патваканович Казарян, 1926 года рождения, осужден судом и заключен в тюрьму на Украине.

Прошу выслушать мать осужденного и помочь ей.

Ջերմագին բարևներ իմ չատ սիրելի բարեկամին:

Ավետիք Իսահակյան

484. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1954, 5 սեպտեմբերի, Դիլիջան

Շատ սիրելի Կամսար.

Ամենից առաջ ջերմագին բարևներս:

Մեծ չնորհակալությամբ ստացել եմ քո ուղարկած բոլոր նամակները, գրությունները և երեք ծրար նկարները՝ ֆինլանդական, հնդկական և լատվիական. չա՛տ գեղեցիկ էին. անչո՛ւշտ, հնդկականը իր տեղը, բայց ֆիննականները չափազանց լավ էին: Լատվիականների մեջ մի երկուսը տրամադրություն ստեղծող էին: Խնդրում եմ, ներողամիտ լինես չատ ուշ պատասխանելու համար. ամառը չատ զբաղված էի, շոգ էր Երևանում, չափազանց տաք, հոգնեցնող: Համագումարը (գրական) նաև չափազանց հոգնեցնող էր:

Սիրելիս, մի չաբաթ է Դիլիջանում[1] եմ, եկել եմ հանգստանալու, երևի, մինչև սեպտեմբերի 15 կմնամ. հետո, իհարկե, Երևան:

Մեր հայկական գրական կյանքին կհետևես, անկասկած, առանձին նորություն չկա. սակայն Ս. Խանզադյանի «Հողը»[2] ուշագրավ է, արժե կարդալ, գոհ կլինես: «Սովետական գրականություն» ամսագրում տպվում է Աղավնու վեպը՝ «Շիրակ»[3]: Հավանողներ շատ կան, բայց ես ձեռնպահությամբ եմ հավանում. սուտ, սարքովի, կեղծ տողեր շատ կան...

Երևի աշնանը, ուրեմն մոտ ժամանակներս, ըստ քո սովորության, կգաս Երևան: Ուրեմն՝ ցտեսություն:

Սիրով՝ Ավետ. Իսահակյան

485. ՀԱՄԱՉԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

1954, 10 սեպտեմբերի, Դիլիջան

Սիրելի Համազասպ.

Հեռագիրդ ստացա և շատ ուրախացա, և շատ տխրեցի: Տխրեցի, որովհետև 4-5 օրից ի վեր գրիպով հիվանդ եմ, սակայն հույս ունեմ, որ շուտով կլավանամ, համենայնդեպս հինգշաբթի օրը, 16-ին, կլինեմ Երևան՝ շաբաթ օրը Ձեզ մոտ գալու կնոջս հետ չնորհավորելու ոսկե հարսանիքդ. բայց եթե դժբախտություն ունեցա հիվանդ լինելու, հենց որ լավացա՝ կգանք Բյուրական չնորհավորելու: Բայց հավատս մեծ է, որ կառողջանամ:

Բարևներ տիկնոջդ, Վիկտորին և բոլորին:

Քո Ավ. Իսահակյան

486. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ <ԹՈՒՐՇՅԱՆԻՆ>

1954, <20 սեպտեմբերի>, Երևան

Սիրելի Հարություն.

Այս քանի օր է մեր տունը լարված կարդում ենք մեծատաղանդ Ա. Գերցենի քո թարգմանած «Եղելություններ և խոհեր»[1] անկրկնելի գործը:

Գերցենը դժվար է թարգմանել, սակայն դու հաղթահարել ես: Կենդանի չունչ կա թարգմանության մեջ, հարուստ և արտահայտիչ լեզու:

Հայ ընթերցող հասարակությունը պիտի սիրե այս գործը:

Յանկանում եմ ավելի հաջողություն և եռանդ:

Ջերմագին բարևներով Ավետ. Իսահակյան

487. ՀԱՄԱԶԱՍՊ ԴԱԲԱՂՅԱՆԻՆ

1954, 20 հոկտեմբերի, Երևան

Հարգելի ընկեր Հ. Դաբաղյան.

Հիվանդությանս պատճառով, ակամայիցս, ուշացրի Ձեր նամակին պատասխանելս:

Վեսպերին հետ (յետ) դարձնելու դիմումը գրողների կողմից ուր որ պետք է, կատարված է, մոտ մի շաբաթ առաջ: Դեռ մինչև այսօր պատասխան չկա. երևի, չուտ չեն պատասխանի. հարցուփորձեր, քննություններ կկատարվեն, միայն ցանկանում ենք, որ հաջող վերջ ունենա[1], լավ արդյունք ունենանք. թեև վերջիվերջո, հավատացած եմ, ամեն ինչ բարվոք կվերջանա: Վեսպերին իմ կողմից (և տիկնոջը) բարև ուղարկեցեք:

Ավետ. Իսահակյան

488. ՀԱԿՈԲ <ՆԱԶԱՐՅԱՆԻՆ>

<1954, հոկտեմբեր, Երևան>[1]

Սիրելի Հակոբ.

Ուղարկածդ ստացա «Հեթանոս մտքերը»[2]: Խնդրում եմ հայտնիր իմ շնորհակալությունները հեղինակին, և ասա, որ ազատ ժամերիս կկարդամ:

Սիրելի Հակոբ, անցյալ տարի 1953, Երևանում ստացվեց իմ «Աբու Լալա Մահարի»[3] մի քանի գրքերը, Ֆրանս<իայի> Ակադեմիայի կողմից պատվիրած. իմ ձեռքն անցավ միայն 2 օրինակ: Երևան այստեղ <մինիստրությունից> լսեցի, որ դու մասնակից ես «Մահարիի» ֆրանսերեն թարգմանելուն և հրատարակելուն: Խնդրեցի, որ Փարիզից ինձ գրեն մանրամասն, թե երբ է պատվիրվել, ի՞նչ կարծիք կա դրա վրա հասարակության մեջ: Խոստացան և չգրեցին: Հիմա քեզ եմ խնդրում, եթե գիտես գրես ինձ, երբ է Ֆրանսիայի Ակադեմիան նշել «Աբու Լալա Մահարի» գիրքս, ինչ վավերագիր կա, ինչ պայմաններ: Ֆրանսահայ երիտասարդական օգնության ԺԱՖ-ին[4] դիմիր և տեղեկություններ հավաքիր և ուղարկիր: Շատ կուզեի չուտ իմանալ ո՞վ է թարգմանիչս՝ Մինասյանը[5], արդյոք տիկին Իսկուհու[6] որդին է: Մի խոսքով, ինչ որ գիտես գրքիս շուրջը, գրիր, շատ հետաքրքրական է և շատ պարտավորած կլինես ինձ:

Ես նորեն հիվանդություն անցուցի, հիմա լավ եմ:

Ջերմագին բարևներ:

P.S. *Սիրելի Լևոն[7], հին բարեկամ, շնորհակալություն «խթանի»[8] համար: Ցանկանում եմ առողջություն, հաջողություն: Նամակս հասցեագրած <1 անընթ. բաւ> կհանձնես...*

ՀԱԿՈԲ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ[9]

(երկրորդ տարբերակ)

Սիրելի Հակոբ.

Վերջերս ծանր հիվանդություն անցրի և դեռ չեմ կազդուրված: Ձեռագիրս կմատնի առողջությանս վիճակը:

Անցյալ տարի, ամառը իմ ձեռքս հասավ Ֆրանսերեն թարգմանված իմ «Աբու-Լալա-Մահարի»-ն, որտեղից իմացա, որ նա Ֆրանսիական Ակադեմիայեն պատվեր է: Ուրիշ ոչինչ չգիտեմ, այսինքն՝ ե՞րբ է արժանացել այդ պսակադրմանը, ո՞վ կամ ի՞նչ ընկերություն է առաջադրել, ի՞նչ դոկումենտներ կան, այսինքն՝ վճիռ, հայտարարություն:

Լսեցի, որ դու մասնակցած ես թարգմանությանը, և վերջապես, ո՞վ է թարգմանիչս՝ Մինասյանը:

Գրիր մանրամասն՝ ո՞վ տպեց, ինչպե՞ս եղավ, որ ես նրանց նամակ գրեմ, չնորհակալություն հայտնեմ:

Իմացած եղիր, որ դրանով ինձ շատ մեծ պարտքի տակ գցած կլինես:

Ջերմագին բարևներով՝ Ավետիք Իսահակյան

489. ՎԱՐԴԳԵՍ <ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ>

<1954, Երևան>

Շատ սիրելի Վարդգես.

Լենինականցի երկու պատանի աղջիկներ, որոնք ավարտել են Լենինականի տասնամյա դպրոցները, դիմել են [ինձ] իմ միջնորդությանը քեզ մոտ: Ավելորդ է ասելը, որ ծայր աստիճան հուզված, արտասվալից աչքերով [դիմում] խնդրում են ինձ: Նրանց ընտանեկան պայմանները չափազանց [աննպաստ, թեև] տխուր են, կարիքավոր: Մեկը Ռիմա Վարդանյանը, մյուսը Ջյուլետա Գրիգորյանը [խնդրում եմ ընդունես] նրանք ջերմապես ուզում են մտնել մանկավարժական ինստիտուտ:

Խնդրում եմ բարի լինես լսես նրանց: Եթե հնարավոր չէ նրանց անմիջական ուսանողուհի ընտրել, գոնե [պայմանական] հունվարին քննություն տալու պայմանով:

Նրանք կբացատրեն [իրենց] թե ինչ են ուզում: Մանավանդ, հատկապես Ռիմա Վարդանյանի հանգամանքը ի նկատի ունենաս:

Շատ եմ խնդրում, Վարդգես ջան, ընդառաջես նրանց թախանձանքին:

490. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՑԱՆԻՆ

1955, 26 մարտի, Երևան

Սիրելի ընկեր Աչիկ.

Տողերիս բերողը տիկին Մաքրուհի Ադամյան[1] իմ հին բարեկամներից է. Պարսկաստանից հայրենադարձ, տնտեսական տեսակետից կարիքավոր վիճակի մեջ է: Գիտե լավ ռուսերեն և, իհարկե, նաև հայերեն, կարող է թարգմանել. խնդրում եմ շատ թարգմանելու գործեր տաք նրան:

Բարևներով Ավետ. Իսահակյան

26. 3. 55 թ.
Երևան

491. ԵՂԻՇԵ <ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ>

1955, 11 ապրիլի, Երևան

Սիրելի Եղիշե.

Խնդրում եմ Ռ. Թագորի դիրքը[1] (որ տվեցի քեզ) հանձնես կնոջս, պետք է լուսանկարենք. անհրաժեշտ է:

Բարևներով Ավետ. Իսահակյան

11/IV 1955
Երևան

492. ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

1955, 12 ապրիլի, Երևան

Սիրելի՛ հայրենակիցներ.

Ստացա ձեր սիրալիր նամակը, որով հայտնում եք ինձ ձեր որոշումը՝ տոնելու իմ ութսունամյակը[1], որ, ի դեպ, լրանում է 1955 թ. հոկտեմբերի 30-ին:

Շատ և շատ չնորհակալ եմ Ձեր իմ հանդեպ տածած զգացումների և ուշադրության համար:

Սրտիս բոլոր ջերմությամբ ողջունում եմ ձեզ, սիրելի հեռավոր ընկերներ, մաղթում եմ ձեզ հաջողություն, առողջություն, երկար, բախտավոր և բեղմնավոր կյանք:

Թանկագին ընկերներ, կփափագեի հայրենի հողից հեռու, օտար երկնքի տակ ապրող իմ հայրենակիցներին բարձր պահել հայության անունը, խորապես սիրել հայ հրաշալի լեզուն՝ մեր հարատևության անպարտելի զենքը, սիրել մեր դարավոր դրականությունը, ուր բաբախում է հայ ժողովրդի սիրտը, ուր ամփոփված են մեր իդեալները, երազանքները, հայ պանծալի դրականությունը, որ անչեջ կրակի պես ջերմացնում է մեզ, վառում է մեզ պայքարի խանդով, լուսավորում է մեր ուղին:

Կփափագեի հայրենիքը կրեիք ամենուրեք ձեր հոգիներում, սիրեիք Սովետական Հայաստանը և անձնուրաց պաշտպան հանդիսանայիք նրան, որ ձե՛րն է և ձե՛րը պիտի լինի:

Ապրի՛ք, ղորանա՛ք:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

493. ՆԻՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

1955, 12 ապրիլի, Երևան

Սիրելի ընկեր Նինա Ներսիսյան.

Մ. Լերմոնտովը իմ պատանի օրերից մինչև այսօր իմ ամենասիրելի բանաստեղծն է եղել և է – իմ զգացմունքների, իմ մտքերի ամենամտերիմ հոգին:

Առանց խորին վշտի և ներքին արցունքի ես չեմ կարող հիշել այդ անկրկնելի հանճարի այնքա՛ն ողբալի վաղահաս կորուստը:

Ես ամեն տարի վերընթերցում եմ նրա անհունորեն հուզիչ պոեզիան և չքնաղ պրոզան: Ինձ անթառամ հիացմունք է պատճառում նրա «Կալաշնիկովի»[1] հոյակապ պոեման, որի նմանը չեմ գտնում համաշխարհային գրականության մեջ: Պատանի օրերիս նա իշխել է իմ երազանքների և երևակայության վրա: Նրա ազդեցությունը չատ մեծ է իմ վրա, սակայն կոնկրետ իմ ո՞ր բանաստեղծության վրա – չեմ կարող ցույց տալ: Ուշադիր ընթերցողը թերևս կարող է նկատած լինել:

Ավետ. Իսահակյան

12. IV. 55
Երևան

494. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

<1955, ապրիլ, Երևան>[1]

Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսին Ամ<ենայն> Հայոց

Սիրելի վեհափառ.

[Ներողություն եմ խնդրում Ձեզ մի]

Գրաբերս նշան<ավոր> Գարեգին Սրվանձտյան[2] եպիսկոպոս<ի> քույրն է: Ուզում է Ձեզ մի վայրկյան տեսնել իր եղբոր կտակի[3] համար:

Խնդրում եմ ընդունեք նրան, և եթե հնարավոր է, անցընել գործի: [Ես տակավին] Ինձ տակավին թույլ չի տրվում մինչև էջմիածին գալ. եթե ոչ անձամբ կգայի և կխնդրեի:

Հաճեք ընդունել կնոջս և իմ կողմից բարևներս Ձեզ և վեհ<արան>ին:

Բնակարան[1]:

495. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1955, 3 մայիսի, Երևան

Ուրախությամբ ստացել եմ նամակներդ, հեռագիրդ. չնորհակալություն, ուղարկածդ 10 օրինակ դրքիցդ[1]. մի քանի օրինակ տվեցի բարեկամներիս. լավ տպավորություն են ստացել. երևի կարդացիր Վարդապետովայի[2] հոդվածը «Коммунист» մեջ: Երեկ ստացա Չեխո-Սլովակիայի նկարիչների գործերի պոստ-քարտերը. շատ գեղեցիկ գործեր են, տրամադրությամբ լի, ներշնչող. չեխերը իսկական կուլտուրայի տեր ժողովրդի արվեստագետներ են: Վիեննա եղած ժամանակս շատ չեխերի հետ եմ ծանոթացել, ընտիր մարդիկ էին, զարգացած, ազնիվ և հայրենասեր (ո՛չ չովինիստ):

Ես մի տասն օր, վերջերս, պառկած էի, [լիմ] լյումբագո[3] ներվային հիվանդությամբ, հիմա լավ եմ: Ծերությունը, որի մեջն եմ արդեն, ամեն հիվանդությունների ծնողն է... այդ է «կանոնը բնական» ըստ Ջիվանի[4] կուդանք ու կերթանք[4]:

Շնորհավորում եմ Մայիս 1-ի տոնդ. ջերմագին բարևներ քեզ, տիկնոջդ, երեխաներիդ և ինձ հարցնողներին: Բարևներ կնոջս կողմից:

Ջեր Ավետ. Իսահակյան

496. ԱՂԱԱԻ ՎԱՐԴԱՆՑԱՆԻՆ

1955, 1 Հունիսի, Երևան

Սիրելի բարեկամ Աղ. Վարդանյան.

Շատ մեծ շնորհակալությամբ ստացա Ջեր ուղարկած թանկագին նվերը. արժեքավոր գրքեր են, մանավանդ դժբախտ հայկական հարցի վերաբերյալ գիրքը: Նորից շնորհակալություն եմ հայտնում Ջեր ուշադրության և նեղության համար: Այդ գրքերը պատվավոր տեղ կգրավեն իմ գրադարանիս մեջ:

Մնացած գրքերը մարդկանց միջոցով կկարգադրվի: Ջեր քրոջը, իհարկե հիշում ենք, բայց, դժբախտաբար մոտիկ չենք եղել: Խնդրեմ բարևեցեք մեր կողմից նրան:

Դուք գանգատվում եք, թե հայերեն սխալներով եք գրում. երկար տարիներ հեռու լինելով Հայաստանից, դարձյալ լավ եք գրում, և ուրախանալի է որ չեք իսպառ մոռացել. Երևանում նույնիսկ հայ մարդիկ կան, որ Ջեր կիսու չափ էլ չգիտեն:

Բարևներ նորից Բաքվի իմ բարեկամներին:

Ջերմագին բարևներով, Ջեր Ավետիք Իսահակյան

497. ԲԱԲԼՈՒՄՅԱՆԻՆ

<19>55, 23 Հունիսի, Երևան

Հարգելի ընկեր Բաբլումյան.

Այս գրություն բերողին՝ ընկեր Գուրգեն Զարգարյանին, խնդրում եմ շատ՝ ընդառաջեք և դյուրացնեք ընկեր Շ. Առուչանի[1] մոտ լինելու՝ իր խնդիրքի համաձայն:

Ներող եղեք Ձեզ զբաղեցնելու համար:

Ողջույնով՝ Ավետիք Իսահակյան

դեպուտատ <Հայաստանի> գերագույն սովետի[2]

498. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1955, 29 Հունիսի, Երևան

Սիրելի Վիգեն.

Անցյալ կիրակի օրը, ամսի 26-ին մայրիկդ, Ավիկը և Փառիկը ավտոբուսով գնացին Կիսլավոդսկի:

Հեռագիր ստացա, որ շատ լավ հասել են: Միամիտ եղիր: Բայց դեռ նամակ չունեմ, այնպես որ նրանց հասցեն չունեմ, որ հայտնեմ քեզ:

Ես լավ եմ. չոգերը դեռ զորեղ չեն. սենյակիդ երկաթե դուռը չինել ենք արդեն:

Բարևներով, համբույրներով Ավետիք Իսահակյան

499. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

1955, 2 Հուլիսի, Երևան

Հայ պետհրատի դիրեկտոր ընկեր Աշիկ Ղազարյանին.

Ես կարդացի ընկեր Մկրտիչ Խերանյանի[1] «Սասնա տուն» պոեման: Հեղինակը տարիների ընթացքում շատ ջանք է գործադրել մեր էպոսի բազմաթիվ տարբերակներից կազմելու էպոսի ընդհանուր համաբարբառը՝ Սինոպտիկումը:

Հեղինակի նպատակադրումը տալ լայն հասարակութ-յանը մասայական ընթերցանության համար հանրամատ-չելի, լրիվ և մշակված սինոպտիկումը – իմ կարծիքով այդ դժվարին գործը հաջողված է:

Անհրաժեշտ են որոշ կրճատումներ և խտացումներ, ո-րոնք հեղինակը կարող է դյուրավ կատարել:

Պոեման ընթերցվում է հետաքրքրությամբ. լեզուն սահուն է և պատկերավոր:

Ցանկալի է, որ տպագրվի այս գործը:

Ավետիք Իսահակյան

2. VII. 1955
Երևան

500. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1955, 6 Հուլիսի, Երևան

Սիրելի Սոֆի, Փառիկ և Ավիկ ջան.

Ստացել եմ նամակը: Ուրախ եմ, որ լավ հասել եք և լավ տեղավորվել: Ես աշխատում եմ գրքիս տպագրութ-յան[1] վրա:

Դժբախտաբար պրոֆ. Յոլյանը[2] մեռավ, շատ մեծ կո-րուստ էր և մեծ ցավ պատճառեց ամբողջ հասարակութ-յանը: Շքեղ թաղում եղավ:

Դեռ այնքան չոգեր չկան:

Բոլորը բարևում են ձեզ:

Ավետիք

Ավիկ ջան, խաղա, բայց և պարապիր, աշխատիր ռուս-սերեն խոսել սովորել:

501. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

1955, 5 օգոստոսի, Երևան

Սիրելի Սոֆի.

Մենք ողջ և առողջ ենք. չոգերն այնքան ուժեղ չեն. երեկոները միշտ լավ հով է լինում:

Քաղաքում նորություններ չկան:

Մրգերը հասել են, լավ ձմերուկ և սեզ (սեխ) կա. խաղողը կա, բայց խակ է:

Ջերմ բարևներ և համբույրներ բոլորիդ, Ավիկին հատկապես: Գալու որ կլինես, տան բանլիքը Բելայից ա՛ռ բեր. նա մոռացել հետը տարել է:

Բարևներ Խրիստից[1]*:*

Ավետիք

502. ԳԵ ԲԱՈ-ՑՅՈՒԱՆԻՆ

1955, 8 սեպտեմբերի, Երևան

Սիրելի ընկեր Գե Բաո-Ցյուան.

Մեծ չնորհակալությամբ ստացել եմ Ձեր նամակը և ամսագիրը: [Շատ ուրախ եմ, որ ինձ չեք մոռացել] Անչափ ուրախ եմ, որ իմ պոեզիան դրավել է Ձեր ուշադրությունը և Դուք նվիրված աշխատանք եք տանում իմ բանաստեղծությունները ներկայացնել չինական լեզվով:

Ես հպարտ եմ շատ, որ Ձին մեծ ժողովուրդը, մեծ իր հազարամյակների փառավոր պատմությամբ, հարուստ կուլտուրայով, դրականությամբ, համաշխարհային դյուտերով, պետք է լսե իմ անունը, չինական բազմամիլիոն ընթերցողները չքնաղ Լի-Թայ-Պոյի լեզվով պիտի կար-

դան իմ երգերը, և ո՞րքան բախտավոր պիտի լինեմ, եթե նրանք սիրեն և չմոռանան իմ երգերից գոնե մեկը:

Մանուկ օրերից ես հեքիաթների, ճանապարհորդությունների, ճարտարապետության և նկարիչների արվեստների մեջ տեսել եմ չինացուն և Չինաստանը, սիրել եմ և հիացել նրանով:

[Այժմ արդեն միևնույն վեհ գաղափարով և նպատակով վառված]

*Ժողովուրդները պիտի սիրեն իրար, իրար սիրելու համար պիտի ճանաչեն [իրար] միմյանց. դրան հասնելու ամենաազնիվ և ազդու ճանապարհը գրական և գեղարվեստական գրականությունն է**. *երբ կարդան, գրեն, տեսնեն մեկը մյուսի արվեստը, նրանց սրտերը կլցվեն սիրով և հարգանքով իրար հանդեպ:*

Մենք, մեծ և փոքր ժողովուրդների գրական գործիչներս, վառված միևնույն գաղափարով և նպատակով, աշխատում ենք համաշխարհային խաղաղության և եղբայրության համար, համամարդկային երջանկության համար: Բոլոր սրտով ցանկանում եմ աջողություն Ձեր գործին[1]*:*

Կարոտով սեղմում եմ իմ հեռավոր և մոտիկ բարեկամիս ձեռքը:

Ավ. Իսահակյան

503. Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

1955, 22 սեպտեմբերի, Երևան

Հարգելի Գ. Բաղդասարյան.

---

* *Ճանապարհը իրար արվեստների և գրականության ճանաչումն է* (ծանոթությունը՝ Ավ. Իսահակյանի):

Քարտուղարի բացակայության հետևանքով Ձեր օգոստոսի 1-ի վակիր նամակը ստացա միայն երեկ: Բայց զարմանալին այն է, որ հուլիսի 26-ի ուղարկած նամակը պատվիրած, չեմ ստացել:

Խնդրում եմ հետապնդեք իմանալու թե ի՞նչ է եղել նամակի հետ: Ես որքան հիշում եմ չեմ ստորագրել այդպիսի ծրարի ընդունելությունը:

Խնդրում եմ կրկնեցեք Ձեր հարցաթերթը Ներսիսյանի[1] աշխատության մասին: Հետաքրքիր է:

Ավետ. Իսահակյան

22. IX. 55
Երևան

504. ՌԱԴԻՈՆԱՄԱԿ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ

1955, 29 Հոկտեմբերի, Երևան

Թանկագին հայրենակիցներ, մանուկներ, պատանիներ.

Ստացա ձեր նամակը: Շատ ղդացված եմ իմ նկատմամբ ձեր տածած սիրուց, հարգանքից: Հայտնում եմ սրտագին չնորհակալությունս բոլորիդ: Ջափազանց ուրախ եմ, որ դուք այնքան վառ և դիտակից հետաքրքրություն ունեք մայր հայրենիքի՝ Սովետական Հայաստանի հանդեպ, ոգևորվում եք նրա տնտեսական առաջադիմությամբ, նրա մշակույթի վերելքով:

Դուք կանգնած եք ուղիղ և իմաստուն ճանապարհի վրա: Սովետական Հայաստանը բովանդակ հայության հայրենիքն է, նրա գեղեցիկ ապագան: Հայ ժողովուրդը զարդացնելով իր տնտեսությունը, իր գրականությունը, իր արվեստները, իր մշակույթը, միաժամանակ մարտնչում է համաշխարհային խաղաղության և ժողովուրդների եղբայրության համար:

Սիրելի հայրենակիցներ, դուք չարունակ պետք է զգաք ձեզ Հայաստանի հետ, ապրեք նրա կյանքով: Աշխատեցեք և տոկացեք: Օգտագործեք ձեր ժամանակը և սովորեցեք գիտություններ և լեզուներ:

Հարգեցեք ձեր հյուրընկալող սիրիական ազնիվ ժողովրդին:

Կարդացեք հայոց հին ու նոր պատմությունը, սիրեցեք հայ հին և նոր գրականությունը:

Պահպանեցեք մայրենի լեզուն: Երբեք չընկճվեք: Ինչ վիճակի մեջ էլ որ գտնվեք, երբեք չվհատվեք:

Լավ գիտցեք, որ մթամած երկնքից վերև միշտ կա ջերմ ու պայծառ արևը, կա Սովետական Հայաստանը՝ բովանդակ հայության հայրենիքը, որն օրեցօր զարգանում է, աճում, բարձրանում:

Սրտագին բարևներ ձեզ բոլորիդ, սիրելի բարեկամներ:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

505. ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻՆ

1955, 24 նոյեմբերի, Երևան

СОВЕТ МИНИСТРОВ СССР
Анастасу Ивановичу Микояну

Бесконечно счастлив и рад поздравить Вас достойного сына нашего народа в день вашего славного шестидесятилетия. Я был глубоко взволнован вашей телеграммой которая прибавила мне силы бодрости радости. Желаю Вам дорогой Анастас Иванович здоровья, долгой плодотворной жизни на благо нашей великой родины.

АВЕТИК ИСААКЯН

24/XI 55 г.

506. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՑԱՆԻՆ

<1955, դեկտեմբերի վերջ>

Մեծարգո և շատ սիրելի Հովհաննես Խրիստաֆորիչ.

Ամենից առաջ չնորհավորում եմ Ձեր նոր տարին, ցանկանալով Ձեզ երկար և առողջ կյանք, նորանոր հաջողություններ ի փառս մեր մեծ հայրենիքի:

Հայտնում եմ իմ խորին չնորհակալությունը այն գեղեցիկ հեռագրի համար, որով պատվեցիք ինձ իմ հոբելյանի առթիվ:

Շատ ներողություն եմ խնդրում Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Այս գրությունս բերողը XX., իմ բարեկամն է, խնդրում եմ բարի լինեք նրան ընդունելու և լսելու նրան, և ինչքան հնարավոր է, ընդառաջեք նրան:

Հարգանքներով և սրտագին բարևներով
Ա.վ. Իսահակյան

507. ՍԻՐՎԱՐԴԻՆ

<1955>

Հարգելի տիկին Սիրվարդ.

Ուղարկում եմ Ձեր ուզած լուսանկարը:

Մի բան հիշեցի, որ, կարծում եմ պիտի ուղղել.— Սևանի կղզու լուսանկարի տակ պիտի դրվի այսպես. «Ա. Իսահակյանը Սևանի կղզում» և ոչ թե Սևանի լճափին:

Եթե նոր ֆակսիմիլե պետք լինի Ձեզ, խորհուրդ եմ տալիս չորս հատորների[1] վրայի ֆակսիմիլեն օգտագործել:

508. Ա<ՆԴՐԱՆԻԿ> ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

<1955>[1]

Հայկական աշխարհագրական Ընկերության նախագահին

Հարգելի ընկեր Ա. Բաղդասարյան.

Սրտագին չնորհակալությունս եմ բերում Ձեզ, որպես Աշխարհագր<ական> Ընկերության[2] նախագահի այն մեծ հարգանքի համար, որ հայտ եք բերում իմ հանդեպ՝ ընտրելով մեծարգո Ընկերությանդ պատվավոր անդամ:

Խնդրում եմ Ձեզ, որպես Աշխ<արհագրական> ընկ<երության> նախագահի, հաղորդեք Ձեր ձեռքի տակ աշխատող ընկերության հարգելի անդամներին իմ սրտագին չնորհակալությունը, որ հարգեցին ինձ մեծարժեք Ընկերության պատվավոր անդամ ընդունելու համար:

509. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

1956, 12 Հունվարի, Երևան

Շատ սիրելի Հայրենակիցներ, քույրեր և եղբայրներ.

Հայտնում եմ իմ սրտագին շնորհակալությունը Ձեզ՝ բոլորիդ, որ օտար ափերում հիշում եք ինձ և տոնում եք իմ 80-ամյա հոբելյանը[1]:

Սիրտս լցվում է անհուն բերկրանքով, որ, հայրենիքից հեռու, այսպես դուրգուրում եք հայ խոսքը և պանծացնում մայրենի գրականությունը: Սա արդեն հայկական Ոգու հաղթանակն է, ամուր գրավականը հայ ժողովուրդի հարատևության և ապրելու կամքի:

Սիրեցեք հայ գրականությունը. նա Ձեր հոգևոր հայրենիքն է, որ միշտ և ամենուրեք կլինի Ձեզ հետ: Հայ լեզուն և տոհմիկ գրականությունը դարերի երկար ընթացքում պահել-պաշտպանել են հայերիս. այժմ էլ մենք պիտի պահպանենք նրանց, որ նրանք էլ այսուհետև, կատարեն իրենց փրկարար դերը:

Հայ լեզուն և հայ լեզվով գրականությունը այն անխորտակելի ոսկե կամուրջն է որ կա Սովետ. Մայր Հայաստանի և Սփյուռքի միջև, բոլոր հայության միջև:

Սփյուռքը մեր նվիրական արևմտյան Հայաստանն է, նրա ավանդապահ, աշխատասեր, ստեղծագործ ժողովուրդը, որ դարերով հերոսական և անձնուրաց պայքարել է զարհուրելի և խավարակուռ բռնապետության դեմ, այլասերման դեմ՝ հանուն հայրենիքի, մայրենի լեզվի, կուլտուրայի և ազգային իդեալների:

Սրտիս բոլոր ջերմությամբ մաղթում եմ, որ Սփյուռքի հայությունը միշտ վառ պահե հայրենիքի սերը, հավատարիմ մնա մեր բազմադարյան սրբազան ավանդներին, մեր հոյակապ լեզվին, արիաբար բարձր պահե հայ անունը, աշխատե և չվհատի, անհողդողդ հավատա իր լուսապագային և ավելի սերտ կապվի մայր հայրենիքին, որ մեր բոլորինս է, մեր երազների և իրականացումների նվիրական հայրենիքը:

Սիրելի հայրենակիցներ, մաղթում եմ Ձեզ բոլորիդ առողջ և բախտավոր կյանք, տոկունություն և հաղթանակներ:

Խորին չնորհակալություններս հղբելյանական հանձնաժողովի հարգելի հայրենակիցներիս — Ե. Ազնակյանին[2], Զապել Արամին[3], Արմեն Միրջանյանին[4], Օքսեն Սարյանին[5], Արշավիր Շամլյանին[6] և շատ սիրելի ընկեր Սիտալին:

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

12/I 1956 թ.
Երևան

510. ԱՆՏՈՆ ՔՈՋԻՆՑԱՆԻՆ

1956, 12 հունվարի, Երևան

Շատ սիրելի Անտոն.

Տեղեկացա, որ վերադարձել եք Մոսկվայից. օգտվելով առիթից չնորհավորում եմ Ձեր Նոր տարին, ցանկանալով Ձեզ քաջ-առողջություն և նորանոր հաջողություններ Ձեր բարձր և պատասխանատու պոստում:

Սիրելի Անտոն, շատ ուրախ եմ, որ որոշել եք ընկեր Արամ Ինճիկյանին բնակարան հատկացնել, սակայն ցավոք սրտի, պիտի ասեմ, որ Ինճիկյանը քաղսովետում հաշ-

վառման չի ենթարկված, չնայած 1954 թ. նրա դիմումը, համապատասխան մակագրությամբ Դուք ուղարկել էիք քաղսովետ: Այդ հանդամանքը կարող է դժվարություն առաջ բերել:

Ուստի խնդրում եմ, անկախ հաչվառման հանդամանքից, կարգադրեք Ինճիկյանին տալ այն բնակարանը, որ հատկացված է քաղսովետի ֆոնդին, փոխարենը վերցնելով Ինճիկյանի այժմ զբաղեցրած բնակարանը:

Շատ եմ խնդրում Ինճիկյանին այս անգամ անպայման բավարարել. նրա վիճակը տարիներ չարունակ ծանր է եղել, որի պատճառը նրա ծայրահեղ համեստությունն է:

Թե նրա անտանելի վիճակը և թե երկարամյա արդյունավետ գործունեությունը լիովին հիմք են տալիս, որ նա, վերջապես, ունենա իր բնակարանը:

Ջեմ կասկածում, սիրելի Անտոն, որ Դուք չեք խնայի Ձեր ջանքերը իմ խնդրանքը կատարելու համար

Ջերմագին բարևներով և հարգանքներով

Ավետիք Իսահակյան

12.01.1956
Երևան

511. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

1956, 20 Հունվարի, Երևան

Սիրելի Կամսար.

Ներողություն եմ խնդրում, որ այսքան ուշ եմ իմաց տալիս քեզ ուղարկածդ գիրքը և նամակները ստանալուս վերաբերմամբ: Առայժմ այսքանը: Շատ և շատ չնորհակալ եմ, որ միշտ հիշում ես ինձ և հաճախակի ուրախություն ես պատճառում ինձ: <<Русск. нас.>> գիրքը տպա-

վորիչ է և հետաքրքրական գիրք է. կարդացի քո գրածը[1] Դոբրոլյուբովի մասին, շատ լավ էր. եթե ժամանակ գտնեմ, մնացածներն էլ կկարդամ: Ժամանա՜կ. այնքան շատ բան կա կարդալու, թեկուզ հայկական աղքատիկ գրականության մեջ: Իսկ գրասերը կարծում է, թե բոլոր գրքերը իր համար են գրված, պարտավոր է կարդալ: Հարյուր տարին 36.500 օր է, իսկ գրքերի թիվը միլիոննե՛ր... որ տղամարդը կարող է գրքերին հաղթել:

Ջերմագին բարևներով Ավետ. Իսահակյան

512. ИОАННЕ ВРЦОУСОВАЦИН

1956, 14 մայիսի, Երևան

Шлю запоздавшие сердечные поздравления с исполнением восьмидесятилетия. Желаю доброго здоровья, энергии, завершения начатого Вами полезного дела, продолжающего прекрасные традиции дорогого всем нам в Армении Валерия Яковлевича[1].

Ваш *Аветик Исаакян*

513. ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻՆ

<19>56, 25 հուլիսի, Երևան

Սիրելի ընկեր է. Ջրբաշյան.

Ներեցեք ինձ՝ Ձեզ մի պահ զբաղեցնելու համար:

Գրաբերս՝ Հակոբ Հակոբյան քննություն է տալու Ձեզ մոտ համալսարան ընդունվելու համար: Նա ավարտել է «Թումանյանի» դպրոցում. շատ է սիրում գրականությունը և ինքն էլ գրում է բավական հաջող ոտանավորներ: Ուզում է, ուրեմն, սովորել գրականություն:

Արևմտահայ կրթված ընտանիքի զավակ է, հայրը Արմաշական: Արմաշի նշանավոր դպրոցի[1] աշակերտ:

Շատ եմ խնդրում ամեն կերպ աջակցեք նրան, որով պարտավորացրած կլինեք ինձ:

Կանխահայտ շնորհակալություններով և բարևներով

Ավետիք Իսահակյան

514. ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

1956, 12 օգոստոսի, Երևան

Սիրելի Ավիկ ջան.

Նամակներդ ստացել ենք. շատ ուրախ եմ, որ լավ ես զգում քեզ, և աշխատում ես ռուսերեն սովորել: Անվախ և համարձակ խոսիր ռուսերեն, վնաս չունի, որ սխալներ անես. սխալներ անելով և ուղղելով է մարդ լեզու սովորում. խոսիր ամենքի հետ և լսիր լավ խոսողներին[1]:

Մայրիկդ գրել էր, որ բժիշկը քո սիրտը մի քիչ թույլ է գտել. պետք է շատ չխաղաս, մանավանդ ֆուտ-բոլ, շատ չվազվզել, և ջղային չլինել, հանգիստ լինել, և ուրիշ վատ տղաների պես գաղտնի չծխել: Եթե այս խոսքերս լսես և քեզ լավ պահես, բոլորովին կառողջանաս:

Շատ բարևներ մայրիկիդ:

Համբուրում եմ շատ և շատ:

Քո պապիկ Ավետիք Իսահակյան

515. ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

1956, 14 դեկտեմբերի, Երևան

Դատապարտյալ Հովակիմ Ասքանազի Զաքարյանի ընտանիքը շատ թշվառ կացության մեջ է՝ ծանրաբեռնված

երեք փոքր երեխաներով. միակ աշխատավորը երեխաների մայրն է, որի վրա ընկած է նաև ծերունի և պարալիտիկ հոր խնամքը: Խեղճ կինը օրական ապրուստից դուրս պիտի վճարի տան վարձը, որն իր ուժերից վեր է:

Այս խղճալի դրությունը նկատի ունենալով՝ չատ եմ խնդրում Ձեզ. մեծարգո ընկեր, ներման կարգով կամ գոնե պայմանով դատապարտյալին արձակեիք բանտից, որ նա հնարավորություն ունենար աշխատելու և պահելու իր ընտանիքը:

Խորին հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

516. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ

1956, 25 դեկտեմբերի, Երևան

Սիրելի գրչեղբայրներ, սփյուռքի իմ սիրելի բարեկամներ.

Երբ կարդում եմ արտասահմանի հայկական օջախներում լույս տեսած մի լավ գիրք, սիրով ու հպարտությամբ է լցվում սիրտս, և ես ընկնում եմ խորհրդածությունների մեջ: Միտք եմ անում, թե ինչքան կենսունակ է իմ ժողովուրդը, ինչպիսի սիրով է նա պայքարում իր գիրն ու գրականությունը, իր ազգային կուլտուրան, իր գոյությունը պահպանելու համար բոլոր ցամաքամասերում, բոլոր մոտիկ ու հեռավոր հորիզոններում՝ հաղթահարելով անասելի զրկանքներ, բազում դժվարություններ:

Ծանր է եղել հայ ժողովրդի, հայ գրողի ճակատագիրը: Հայ մատենագիրը հարկադրված է եղել հին վանքերի մութ խուցերում, մենության մեջ կանթեղի աղոտ լույսի տակ մի նշխարով և մի կում ջրով մագաղաթի

վրա տքնել, անքուն գիշերներ անցկացնել: Այդ անասելի դժվարություններից այժմ բաժին ընկան ձեզ՝ Սփյուռքի իմ գրչեղբայրներ: Ես գիտեմ, թե ինչպիսի զոհողություններով եք դուք ձեր նվիրական գրիչը ծառայեցնում հարազատ ժողովրդին, ինչպես եք դուք տքնում արտասահմանի պայմաններում, հայ ժողովրդի աստանդական զավակների գոյության հիմնական հենարանը հանդիսացող հայ գիրն ու գրականությունը պահպանելու համար:

Հայրենիքից հազարավոր կիլոմետր հեռավորության վրա, ոչ հեռու անցյալում, մեր հինավուրց գրականության դրոշը բարձր էին պահում հայ գրական համաստեղության անմոռանալի դեմքերը՝ Վարուժանը, Սիամանթոն, Զոհրապն ու Զարդարյանը, հայ գրականության հարյուրավոր մշակներ, որոնց պայծառ կյանքի թելը կտրեցին բարբարոսները: Կտրեցին կյանքի թելը, վայրենի դատաստան տեսան նրանց հետ, բայց հայ գրականությունը Սփյուռքում նոր ծիլեր, նոր բողբոջներ արձակեց, և գետինը չընկավ այն դրոշը, որ արյունոտ ճանապարհներին զոհված վարուժաններն ու զոհրապներն էին պարզել:

Սիրելի բարեկամներ, ինձ համար մեծ երջանկություն է տեսնել, որ այժմ աշխարհում, հատկապես Մերձավոր Արևելքի երկրներում, ուր հոծ հայություն է ապրում, առաջ է եկել գրական մի նոր սերունդ, մի հրաշալի ու տաղանդավոր, որ կոչված է Սփյուռքում բարձր պահելու հայ գրականության դեմոկրատական տրադիցիաներն ու հավատարմորեն ծառայելու հարազատ ժողովրդին:

Մայր հայրենիքից մենք ամենայն ուշադրությամբ հետևում ենք ձեր ստեղծագործական ջանքերին, ուրախանում ձեր հաջողություններով և երախտագիտությամբ ու լավագույն ցանկություններով լցվում ձեր հանդեպ:

Անթառամ պահեցեք Սփյուռքում Մեսրոպյան տառերի փառքը: Սրտով և մտքով ձեզ հետ են Հայաստանի գրողները:

Ավետիք Իսահակյան

517. Գ<ՈՒՐԳԵՆ> ՋՈՒԼԱԽՑԱՆԻՆ

<1956>[1]

Հարգելի ընկեր Գ. Զո<լաղ>յան.

Այս գրությունը Ձեզ ներկայացնողը մեր գրական տան աշխատողներից է. աշխարհի մեջ ամենադժբախտներից մեկը – Ամալ. Մխեյան: Նրա բնակության պայմանները շատ վատ են: Շատ եմ խնդրում ընդառաջեիք նրա բաղձանքին և բավարարեիք նրան:

Հարգ<անքներով> Ավ.Իս.

518. Ա<ԼԵՔՍԱՆ> ԱԼԵՔՍԱՆՑԱՆԻՆ

<1956>

Սիրելի ընկեր Ա. Ալեքսանյան.

Հայաստանի Գերագույն դատարանը որոշել է դատապարտյալ Ռուբեն Հասան Ջալալյանից գանձել 5000 ռուբլի՝ սպանված Ն. Կոլյայի թաղման ծախսերի դիմաց՝ <ի>օգուտ նրա ամուսնու՝ Ռոտովայի:

Վերոհիշյալ գումարը Գերագույն դատարանը պահանջում է Ռ. Հասան Ջալալյանի կնոջից, սպառնում է վաճառել տունը: Ռ. Հասան-Ջալալյանի տունը ունի երկու սենյակ. մի սենյակում ապրում է կինը երեք փոքր երեխաների հետ. մյուսը տրված է վարձով: Նրանք՝ մայրը ե-

Ձախից աջ՝ Ավետիք Իսահական, Լուսիկ Սարյան,
Սոֆյա Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Երևան, 1945 թ.



Մարիեփա Շահինյանի դիմանկարը,
գործ Մարփիրոս Սարյանի, 1919 թ.

Յակոբ Խաչատրյանցի դիմանկարը

Հովհաննես Շիրազի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1945 թ.

Մարտիրոս Սարյանի որդու՝ Սարգիս (Սարիկ) Սարյանի դիմանկարը, գործ Մ. Սարյանի, 1935 թ.

Նաիրի Զարյանի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1960 թ.



Երվանդ Քոչարի դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1953 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս
Գևորգ VI Չորեքչյան, Երևան, 1952 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն I դիմանկարը,
գործ Մարտիրոս Սարյանի, 1959 թ.



Ուկրաինացի բանաստեղծ Մաքսիմ Ռիլսկի,
Կիև, 1954 թ.

Ուկրաինացի բանաստեղծ Պավլո Տիչինայի դիմանկարը, գործ Մարտիրոս Սարյանի, Կիև, 1944 թ.

Հովհաննես Բաղրամյանի դիմանկարը,
գործ Մ. Սարյանի, Ռիգա, 1947 թ.

Ավ. Իսահակյանը, Լուսիկ Սարյանը և Սեդա Թումանյանը, գործ Մարտիրոս Սարյանի, Երևան 1957 թ., օգոստոս



Ավետիք Իսահակյանը իր տան պատշգամբում, Երևան 1957 թ., լուսանկարի հեղինակ՝ Վիգեն Իսահակյան

Ավետիք Իսահակյանն ընտանիքի հետ իր տան այգում, 1957 թ. սեպտեմբեր, լուսանկարի հեղինակ՝ Իդա Կար

Ավետիք Իսահակյան, գործ Մարտիրոս Սարյանի, 1962 թ.

բեք երեխաներով ապրում են երկրորդ սենյակի վարձով: Եթե տունը վաճառվի, ո՞ւր և ի՞նչ միջոցով պիտի ապրեն նրանք: Մի՞թե պիտի փողոց նետել նրանց. ի՞նչ մեղավոր են երեխաները:

Շատ եմ խնդրում, սիրելի ընկեր, ի նկատի ունենալ այս հանգամանքը և երեխաների թշվառ վիճակը, և 5000 ռուբլի գանձել Ռ. Հասան-Ջալալյանի աշխատավարձից:

Ա. Իսահակյան

519. ԼԵՎՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

1957, 12 մարտի, Երևան

Սիրելի հին ընկեր Լևոն Համբարձումյան.

Ամենից առաջ սիրով և կարոտով բարևներ Ձեզ և ինձ հիշող բարեկամներիս:

Սիրելիս, չատ և չատ չնորհակալ եմ, որ ինձ չեք մոռացել և ուղարկում եք Ձեր «Խթան» թերթը: Մենք ուշիուշով կարդացինք «Խթանը». չատ հետաքրքրական է մեզ համար. մենք չատ կապված ենք Փարիզի հետ. ունենք այդտեղ տակավին չատ բարեկամներ. բուռն ցանկություն ունենք իմանալու Փարիզի հայության կյանքը և, առհասարակ, սփյուռքի հայկական իրականությունը – նրա բաղձանքները, նրա վչտերը: Ձեր թերթը բավական չափով արտացոլում է այդ:

Նորից ու նորից չնորհակալություն և ջերմ ողջույններ:

Ձեր Ավետիք Իսահակյան

520. ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ ՏՆՕՐԵՆԻՆ

1957, 26 հունիսի, Երևան

Ներողություն եմ խնդրում Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Շատ ցանկալի կլիներ, որ Հայպետհրատը լույս ընծայեր հանգուցյալ Լևոն Աթաբեկյանի[1] *բանաստեղծութ-*

յուններից մի գրքույկ, մոռացության չտալու համար Լ. Աթաբեկյանի հիշատակը և մանավանդ ընդառաջելու բազմաթիվ ընթերցողների փափագին, որոնք ուզում են ունենալ նրա բանաստեղծությունները:

Լ. Աթաբեկյանի «Բանաստեղծությունները» առաջին անգամ հրատարակվել են Բաքու, 1918 թվին[2]:

Կառաջարկեի այդ գիրքը վերահրատարակել, անշուշտ, խմբագրական որոշ աշխատանքի ենթարկելով: Նա գրել է մի շարք լիրիկական և խոհական քառյակներ և ապրված գեղեցիկ ոտանավորներ, օրինակի համար՝

1) Հե՛յ, սարսարոտ իմ վաթան.
2) Բանտի վերա.
3) Քունը բանտում.
4) Զանգի երգը.
5) Քաղաքի միջով.
6) Բուխարիկում և ուրիշները:

Շատ գեղեցիկ են՝

Մոր նամակը.
Լաց մի՛ լինիլ.
Զորանն ու կարաբաշը[3].

ոտանավորները, որոնք լավ կոլորիտ ունեն և հայտնի են լայն հասարակությանը, չատերը անգիր գիտեն դրանք:

Հարգանքներով՝ Ավետիք Իսահակյան

521. «ԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1957, 26 Հունիսի, Երևան

Կուլտուրական պետությունների մայրաքաղաքները և խոշոր քաղաքները ունեն իրենց սեփական, հատուկ պարբերական թերթերը, օրգանները, որոնք նվիրված են

լինում քաղաքի առօրյային, որոնք հայելացնում են [ժողո] հասարակության կյանքը, չարն ու բարին:

Մեր մայրաքաղաքն էլ այսօրվանից հանդես է գալիս իր հատուկ օրաթերթով «Երևան» անունով:

«Երևանը» պիտի ներկայացնի մեր քաղաքը հուզող հարցերը, խիզախորեն պիտի պայքարե թերություններրի դեմ, հսկե քաղաքի կարգ-կանոնին, կուլտուրական բարքեր ներմուծե փողոցներում, և ամեն ձևով օժանդակե քաղաքի բարեկարգմանը:

Շնորհավորում եմ և ցանկանում հաջողություն մեր «Երևանին» և եռանդ ու տոկունություն նրա աշխատողներին անձնվիրաբար գործելու համար:

Ավ. Իսահակյան

Երևան. 57 թ.

522. Գ<ԵՎՈՐԳ> ԳԱՆՁԱՆԱԿՑԱՆԻՆ

<1957, Հունիս, Երևան>[1]

Մեծարգո հայրենակից, սիրելի բարեկամ Գ. Մ. Գանձանակյան.

Վաղուց է, որ ստացել եմ իմ հոբելյանի առթիվ Ձեր կազմած գեղեցիկ «Հուշամատյան»ը[2]: Խորապես ցավում եմ, որ երկարատև հիվանդությանս պատճառով չկարողացա ժամանակին հաղորդել ստանալուս մասին:

Ուրախ եմ, որ այժմ ի վիճակի եմ հայտնելու բոլոր, բոլոր հայրենակիցներին իմ ջերմ շնորհակալությունը իմ նկատմամբ արտահայտված սիրո և հարգանքի համար, իսկ ամենից շատ խորապես զգացված եմ Ձեր տիկին Նվարդ Ալեքսանյանի բոլորանվեր աշխատանքի համար, որ դուք ջանք չեք խնայել իմ կյանքին և ստեղծագործությանը ծանոթացնելու Դետրոիտի իմ թանկագին հայրենակիցներին:

«Հուշամատյանը» շատ գեղեցիկ գործ է, ով որ գալիս է այցելության տեսնում, հիանում է: Ինձ առանձնապես թանգ է այն, որովհետև իմ հեռավոր հայրենակիցներից շատերն են իրենց անկեղծ զգացմունքներն արտահայտել նրա էջերի վրա: Այս «Հուշամատյանը» մի անգամ ևս վկայում է, թե մայրենի լեզուն և գրականությունը ինչ հզոր կապ է մեր ժողովրդի տարանջատ հատվածների միջև: Սփյուռքի հայությունը և Հայաստանի հայությունը անքակտելի կապերով կապված են միմյանց, քանի կա մեր մայրենի լեզուն ու գրականությունը: Ուրեմն սիրեցեք, փայփայեցեք, անմար ջահի պես միշտ վառ պահեք մեր հոյակապ լեզուն, մեր հայրենաշունչ գրականությունը. դրանով դուք կպահեք մեր ազգությունը օտարացումից և ձուլումից:

Ջերմագին բարևներ Ջեզ, տիկին Նվարդին և բոլոր հայրենակիցներին:

523. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

1957, 23 հուլիսի, Երևան

Ընկեր Կամսարին

Մենք ապրում ենք մահվան դժխեմ
Այս աշխարհում,
Որովհետև չենք հավատում,
Թե երբևէ պիտի մեռնենք.
Սակայն կյանքը, չգիտենք որ,
Հետաձգված մահ է միայն...

Ավ. Իսահակյան

23 հուլիս 1957
Երևան

524. ՍՎԻՐԻԴՈՎ ԳԵՈՐԳԻԻՆ

1957, 27 օգոստոսի, Երևան

Дорогой Г. Васильевич![1]

Получение Вашего письма и ценного подарка Вашей поэмы «Страна отцов»[2] доставило мне огромную радость.

Я счастлив, что благодаря Вашему вдохновенному труду мои стихотворения зазвучат на языке велокого русского народа и станут достоянием всесоюзной общественности.

Болезнь, от которой я лишь недавно оправился, не дала мне возможности сейчас же ответить на Ваше послание.

Еще раз от всего сердца благодарю Вас за Вашу чуткость и прекрасный подарок. Надеюсь, что Вы посетите наш Ереван.

Прошу Вас остановиться в моем доме.

Искренне Ваш *Аветик Исаакян*

Мой адрес: Ереван, ул. Плеханова. 32

29 августа 1957

525. ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊԻՆ

1957, 6 սեպտեմբերի, Երևան

Սիրելի և հարգելի բարեկամ.

Ձեր վերջին երկու նամակներն էլ չնորհակալությամբ ստացել եմ: Իսկ երեկ ստացա հավերժ անմոռանալի Զապել Պոյաճյանի «Էջմիածինը»[1] և Աբու-Լալայի անգլերեն թարգմանությունը[2]: Շատ ուրախ եմ և չատ չնորհակալ Ձեզանից, Ձեր թափած աշխատանքի համար, որով կարողացա վերջիվերջո ունենալ «Աբու-Լալա-Մահարին»: Ուղարկված են եղել զանազան ժամանակներում, բայց

ձեռքս չի հասել: Այս անգամ Ձեր չնորհիվ բախտավոր ճակատագիր ունեցավ:

Սիրելի բարեկամ, ես 1956 թ. Մարտ ամսին ծանր հիվանդացա, սրտի վտանգավոր նոպա ունեցա, և չորս ամիս անկողնում դրեթե անշարժ պառկեցի. թեև ոտքի կանգնեցի, սակայն մինչ օրս բժշկական հսկողության տակ եմ: Այդ, կարծես, քիչ էր, հիվանդացա թոքերի բորբոքումով. այդ էլ հաղթահարեցի, սակայն արգելված են հասարակության մեջ, ժողովներում ստեպ լինել, երկար նստել: Մտավոր աշխատանք թույլ է տրվում կարճ ժամանակով, հաճախակի ընդհատումներով: Բացի այդ՝ աչքերս էլ լավ չեն տեսնում, այնպես որ քիչ եմ կարդում և մանավանդ գրում: Մի խոսքով լրիվ ծերացել եմ:

Այդ ամենը օրինաչափ է. չէ՞ որ 82 տարեկան եմ: Ամեն ինչ արդեն հասկանալի է:

Գիտեի, որ հանգուցյալ տիկ. Աղավնին[3] Ձեզ հաճախ էր գրում և Ձեզ լիովին իրազեկ էր պահում Երևանի և Հայաստանի իրականության: Այդ կորուստը անփոխարինելի է: Իսկ մեր գրչի ընկերները ծույլ են նամակ գրելու մեջ, մանավանդ սովոր չեն արտասահմանի հետ նամակագրություն ունենալու:

Սրտի ցավով պիտի ասեմ, որ վերջիվերջո Ռաֆֆիի (Րաֆֆի) արխիվը[4] Հայաստան չհասավ: Ճանապարհներին կամ կորել է կամ չարամտաբար ոչնչացրած են: Ազգային մեծ կորուստ է:

Ողբացյալ Ա. Զոպանյանի արխիվը հասավ անվթար կերպով: Իհարկե, ճիշտ եք մտածել Ձեր գրքերը և արխիվը[5] նվիրելու Հայաստանին: Սակայն դեռ վաղ է. տակավին դեռ ժամանակ ունեք ստեղծագործելու, արխիվը մեծացնելու:

Նորից չնորհակալություններով և ջերմագին բարևներով իմ և կնոջս կողմից:

Ավետիք Իսահակյան

526. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ

1957, սեպտեմբեր, Երևան

Թանկագին Մաքսիմ Ռիլսկի.

«Օգոնյոկ»-ում տպագրված Ձեր հոդվածն[1] այնպես ինձ հուզեց, որ չգիտեմ ինչպես արտահայտեմ իմ շնորհակալությունը և իմ զգացմունքները Ձեր տաղանդավոր խոսքի համար, թելադրված էր Ձեր ազնիվ սրտից:

Կարդալով Ձեր հոդվածը, ես նորից ու նորից վերապրեցի այն գեղեցիկ ժամերը, որ Ձեզ հետ անցկացրինք Կիևում և Դիլիջանում[2]:

Իմ բարեկամներից ես բազմաթիվ նամակներ եմ ստանում, որոնք խնդրում են սրտագին ողջույններ հաղորդել «Մեր վարպետը» հոդվածի հեղինակին: Պե՞տք է արդյոք ասել, թե ինչպիսի հաճույքով եմ կատարում ես նրանց խնդրանքը...

Ձեր՝ Ավետիք Իսահակյան

527. ԳՈՒՐԳԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ

1957, 2 Հոկտեմբերի, Երևան

Հարգելի ընկեր Գ.Ա. Փահլևանյան.

Ներողություն եմ խնդրում՝ Ձեզ մի պահ զբաղեցնելուս համար:

Իսահակ (Իսիկ) Աբասի Իսահակյանը[1] իմ եղբոր որդին է. նա Տաշկենտից, արդեն պայմանավորված եկավ պաշտոնավարելու Երևանի Պետական բանկում: Նա արդեն աշխատանքի մեջ է: Հիմա Երևանի միլիցիապետը չի ուզում նրան գրանցել Երևանի վրա, ասելով թե՝ «ինչո՞ւ ես եկել Տաշկենտից, մի՞թե այստեղ մարդ չկար...». երևի,

այդպես է մտածում նաև Ուզբեկստանի միլիցիայի պետը՝ ի՞նչ գործ ունես Տաշկենտ, գնա Հայաստան: Իսկ Հայաստանն էլ չի ընդունում իր որդուն... Կարծեմ, ավելորդ չի լինի ասել, որ Ի. Իսահակյանի մայրը՝ բժիշկ Ղևդյան-Իսահակյան աքսորված էր Ուզբեկստան, որդուն տարավ իր մոտ և այնտեղ էլ որդին ավարտեց ինստիտուտը:

Մայրը հիմա արդարացել է և չուտով կվերադառնա Երևան, ուր աշխատում էր որպես բժիշկ:

Հարգելի ընկեր, խնդրում եմ կարգադրեք Ի. Իսահակյանին գրանցել[2]. նա ապրում է այժմ իր մորաքրոջ մոտ, Մուրացան փող. N 28:

Հարգանքներով Ավետիք Իսահակյան

Երևան, Պլեխանով փող. 32

528. ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ

1957

Ձեր գիրքն ստացել եմ հիվանդությանս օրերին, միայն այժմ ծանոթացա բովանդակությանը: Հայտնում եմ երախտագիտությունս և հիացմունքս:

Ավետիք Իսահակյան

529. Զ<ԱՎԵՆ> Վ<ԱՐԴԱՆՅԱՆԻՆ>

<1957>[1]

Սիրելի ընկեր Զ.Վ.

Մեր հայրերը նամակը [գրում] սկսում էին այսպես. – ամենից առաջ ունեմ շատ սիրով և կարոտով բարև, իմ

սիրելի բարեկամին, և հարցնում եմ Ձեր առողջական<ի> մասին. թե մեր կողմիններին կհարցնեք, լավ ենք, շատ լավ ենք:

Մեր անվանի քանդակագործ Ահարոնյանի[2] որդին Վահե Ահարոնյանը[3], որ ավարտել է Երևանի կոնսերվատորիան, Հայաստանի լաուրեատ է, նաև համամիութենական, ոսկի մեդալներով:

Իր երաժշտական կատարելագործության համար ուզում է Մոսկվայի կոնսերվատորիա ասպիրանտ լինել. – խնդրում եմ Ձեր միջամտությունը, որով ինձ շատ պարտավորացրած կլինեք:

ԱՆԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ

530. ԱՐՄԵՆՈՒՀՈՒՆ

Սիրելի Արմենուհի, Ամո ջան.

Վերջերս եղա Լենինականում: Այցելեցի մեր քաղաքի գերեզմանոցը: Գրեթե իմ հին ընկերները, բարեկամները, հարազատները բոլորը արդեն այնտեղ են: Ստուգեցի հայրիկիդ գերեզմանը, իմ չատ սիրելի Վարդան աղբոր: Մոտը մի սև, <1 անընթ. բառ> մահարձան կար, սակայն [վրայի] տապանաքարը (մետաղյա տախտակին երևի գրած) չկար, հանած էր: Կարծեմ <թանկարժեք> մայրիկիդ, ազնիվ Շուշանի եղբոր չիրիմն էր:

Լենինական գնացեք, կամ՝ մի բարեկամի միջոցով, նորից գրեցեք, մի կերպ նշան արեք, որ չկորչի անունը:

Շատ բարևներ քեռիին, ընկեր <Սպոյին> և Ջեզ:

Երևան գալիս խնդրեմ ինձ չմոռանաք այցելելու.

Ջեր Ավո

531. ԱՆԺԻԿԻՆ

Ա՛խ, մաքուր սերը երազ է – միայն[1]...

532. ԻՎԱՆ ԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ

Ժնև

Սա կոչվում է Հառաչանքի կարմունջ – այստեղ էին գլխատում հանցավորներին:

27 մարտի
Վենետիկ

533. <ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ>

Ջանգը չինած է XV դարում.
«Ողբոց իմ կոչնակ,
Մեռելոց ողբակ,
Կայծականց խորտակ[1]»:

ՀԱՎԵԼՈՒՄ XIII ՀԱՏՈՐԻ

Ավետիք Իսահակյանի երկերի ակադեմիական հրատարակության XIII հատորի տպագրությունից հետո բանաստեղծի ընտանեկան արխիվում հայտնաբերվեցին ևս մի քանի նամակ, որ տարիներ առաջ Երևան էր ուղարկել դաշնակցական գործիչ, պատմաբան Երվանդ Փամպուքյանը (ծնվ. 1933 թ., Հալեպ): Վերջինս այդ ինքնագրերը հայտնաբերել է Հայ հեղափոխական դաշնակցության արխիվները ուսումնասիրելու ընթացքում:

1. ՀԾԴ ԱՐԵՎՄՏՑԱՆ ԲՑՈՒՐՈՑԻՆ

1900, 14 սեպտ<եմբերի>, Քյուսնախտ[1]

Սիրելի բարեկամ <...>[2]

Նախ և առաջ գործ ածեմ նամակի չաբլոն ֆորմուլան. ունիմ չա՛տ սիրով և կարոտով <բարևներ>. թե իմ կողմից կհարցանեք, ես հիմա ողջ և առողջ այստեղ Ցյուրիխի մոտ մի գյուղումն եմ ապրում. հազիվ գլուխս առափախա Փարիզից: Իմ մասին հարցանողաց բարևս կմատուցանեք յուրաքանչյուր ժամու:

Պ. Գր. Իսկենդարյանը, որ քեզ նամակ էր գրել և չնորհակալությամբ 25 ֆր. էր ստացել, հիմա պատրաստվում է Փարիզ գնալու: Նրան այնտեղից կանչել է իր ընկեր ֆրանսիացին Միշել անունով, որի հետ մինչև <Մարսեյլ> էր եկել. կանչել է, որ գայ մոտը ապրի, մինչև գործ գտնելը, որը հեշտ կարելի է: Մենք հակադրվեցինք նրա գնալուն, և մեր մեջը ճանապարհ դրստեցինք նրա համար. այժմ խնդրում եմ քեզ, որ «Դրոշակից»[3], եթե կարելի է, եթե տա, մի պարսկական անցագիր հասցնիս. ա-

ռանց անցագրի նրան չա՛տ դժվար կլինի թե ապրել, թե գործի մտնել. այնպես որ դրա մասին խնդրում եմ որ աշխատես և շուտով ուղարկես: Իսկենդարյանը լավ տղա է, պետքական տղա դուրս կգա. ես ճանաչում եմ նրան. հեղափոխական չրջանների մեջ էլ է եղել, զենքեր էլ է տեղափոխել դեպի Պարսկաստան: Պետք է օգնել. մենք մինչև հիմա նրան մի կերպ պահել ենք, փողով էլ որ կարողանանք օգնել, խո՛ չա՛տ լավ կլինի:

Եթե Փարիզում գործ չգտավ, ինձ խոսք տվեց, որ կվերադառնա Պարսկաստան, գյուղական [ուզում են] ուսուցիչ լինելու համար. իսկ Փարիզում կամ Եվրոպայում մնալը աննպատակ չէ, ուզում է զենք պատրաստել, ուժանակ[1], ռումբ չինել սովորել: Այդ դիտավորությունն է խեղճին էս անգութ կողմերը ձգել և դառն կարիքի մեջ հասցրել:

Սիրելիս, տեսնում ես, որ անհայտության մեջ չա՛տ ազնիվ ուժեր կան, որ վառվում են ու իրենց են այրում միայն և մարում:

Ընդունիր հարգանքներս և բարևներս:

Քո Ավետիք Իսահակյան

Հասցես.
Kusnacht bei Zurich
Hotel Falken
A. Isahakyan

2. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

<1901>[1], 22 փետր<վարի>, Վիեննա

Քրիստափոր ջա՛ն.

Երեկ նամակդ ստացա. տեսա որ կողմիցս նամարդություն է բան չգրելը. մեկ էլ, ուղիղն ասած, քու ազիզ

խաթրը պահեցի, թե չէ իսկի սիրտ չունեի: Մի խոսքով, վերցրի թղթերս, կիսատ դրածներս և գնացի cafe Bethoven, *իմ սիրած անկյունը. ուզեցի թանաք, սիգար, սուրճ, կաթ և սկսեցի գրել. երեկ գրեցի, վերջացրի մինչև կես-գիշեր, իսկ այսօր էլի նույն տեղը արտագրեցի և այժմ ուղարկում եմ.— սրա վրա ծախսեցի 4 ֆրանկ, պարտական ես (լուրջ չեմ ասում):*

Կարծեմ լա՛վ բան է[2], էպիկական է, հին ռապսոդիաներ-ի պես: Զգույշ, սխալներ չանենք:

«Ջավահիր սարե՛ր[3]» – Ջավոյի[4] խաթեր համար դրեցի: Նրան կհայտնես դա:

Օրերս վատ են անցնում. մենակ եմ, տխուր. բժիշկը քննեց. ունեմ Ne<v>rasthenie, *սրտի ջղայնություն. ծովում լողանալ խորհուրդ տվեց. կամ Օդեսա կերթամ, կամ Վենետիկ[5], կամ Ժընև կուգամ – լիճը. գոնե բան է: Փող լիներ, կերթայի Վենետիկ, տեսնեմ. հետո կդրեմ: Նամակս ստանալու պես հայտնիր ինձ: Ժողովրդական բառեր կան, չփոխեք. օր<ինակ>, հանց – կնշանակե «ինչպես» և այլն:*

Կարոտալի բարևներ:

Ձեր Ա.վո

Դառավ N 7[6]
Բորիսից[7] խաբա՛ր:

Հ.Գ. Կարո՞ղ ես մի 20 ֆր<անկ> ղրկել. փողերս վերջացել է. Յյուրիխից ստանալիք ունիմ, բայց դեռ չստացա. չա՛տ ղրկես, ավելի լա՛վ: Նեղություն չեմ քաշե այն ժամանակ:

ՆՎԵՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱԿԻՆ

Սազը չթողեց, որ կտրիճ դառնամ,
Թուրը չթողեց, որ գուսան դառնամ...

I

Գողթան քնարը, որ ազատության
Գովքը կը երգեր Մասիս սարն ի վե՛ր,—
Ա՛խ, շա՛տ վաղուց էր լո՛ւռ էր ու անձայն,
Ու գուսանները քուն էին մտեր,
Որոնց սրտերի արտուտն էր ճախրում
Երգելով ազատ Մասիս սարն ի վե՛ր:

Բայց երբ կտրիճի վա՛ռ սիրտը թնդաց
Սիրով, վրեժով հայրենի երկրի.
Երբ հրացանի կոչը որոտաց,
Կոչն ազատության Մասիս սարն ի վե՛ր,—
Գողթան քնարը նորից զնգզնգաց
Ու սիրտս ճախրեց Մասիս սարն ի վե՛ր:

II

ԳՈՒՍԱՆԸ — *Բարո՛վ ձեզի, հա՛յ-ախպրտիք,*
Հանց լեռ ու ժեռ դուք քովե քով.
Բարո՛վ ձեզի, հա՛յ-քուրիկներ,
Հանց զարդ ու վարդ դուք քովե քով:
Մեր աչխարհեն ելլեր, կուգամ —
Մութ սարերեն, խոր ձորերեն,
Կռվի կարմիր տեղերեն:
Հանց կայծակը խոլոր ամպեն՝
Սիրտս օճոտ ու խոցոտ՝
Ձեր սրտի մեջ ահա կուգամ.

Արնոտ սիրտը վրեժ կուզե,
Ով սիրտ ունի՝ դուրս ելնի,
Քանց թեժ-կրակ, վրեժ-կայծակ՝
Ձեր սրտի մեջ ահա կուգամ:
ԺՈՂՈՎՈՒՐԴԸ — Բարո՛վ եկար, Գուսան ախպե՛ր,
Մեր աշխարհի անո՛ւշ բլբուլ,
Մեր աշխարհի հոգն ես կոխեր,
Էդ սուրբ հողին մատաղ լինինք,
Արի, նստի մեր աջ կողքին,
Անուշ ձենով սազ արա՛,
Մեր աշխարհի գովքն արա՛:
ԳՈՒՍԱՆԸ — Հա՛յ-ախպըտիք, հա՛յ-քուրիկներ,
Մեր աշխարհի ի՞նչը մնաց,—
Հուրը գնաց,
Մուրը մնաց:
Ա՛խ, մեր ազգը, վա՛խ մեր աշխարհն
Մոխիր դարձեր, ավեր-ավար.
Մեր արտերում գերնդու տեղ
Յաթաղանն է հիմի զնգում,
Խաս հավքերի ծիվ-ծիվի տեղ
Քոռ բուերն են վայում-վայում.
Քուրդերի հետ սև գելերն են
Մեր դաշտերում գուլում օռնում,
Ա՛խ, ժողովուրդն անտուն-անտեր,
Թափառական ու բնավեր,
Իր քրտինքով չեղջած ցորնեն
Կուտ կը մուրա մեր դյուշմնեն...
Մեր դարդերը ծով են դարձեր,
Խորունկ դարդը երդ չունի,
Սրտիս լարերն են կտրտվեր,
Սիրտս ձեզի երդ չունի:
Մի վայրի հավք մի օր տեսավ
Բլբուլ կուլար պուտ-պուտ արուն,

Ասավ — «Ինչո՞ւ, սիրուն բլբո՛ւլ,
Ինչո՞ւ կուլաս պուտ-պուտ արուն,
Տե՛ս, սար ու ձոր, վարդ ու սմբուլ
Կարոտ քաչեն քու վառ ձենին,
Իսկ դու ինչո՞ւ էս չոր չոլում
Ախ ու վախով կուլաս արուն...»
— «Ի՞նչ կը խոսիս, բլբուլն ասավ,
Խենթ ու անդարդ վերի թռչուն,
Դուն չտեսար դյուչմանն եկավ,
Սևցուց դեմքը մեր արևուն,
Ջմեռ նստեց մեր սարերուն,
Ջորցուց ծիլերն ծաղկըներուն,
Արուննն ելավ, գո՛չ-գո՛չ գնաց
Մեր մայրերուն, ձագուկներուն...»
Է՛յ, ախպրտի՛ք, մեզի համար
Կյանքն էլ ո՛չ մի երգ չունի,
Քանի որ մենք սուգն ենք առնում
Մեր արունոտ աշխարհի,
Քանի որ մենք կոչն ենք լսում -
Կոչն հրեղեն վրեժի
Մեր մայրերի, քույրերի...
Դուք չտեսաք, հայ-ախպրտի՛ք,
Արուննն ելավ, գո՛չ-գո՛չ գնաց
Մեր մայրերուն, ձագուկներուն...
Խոցված սիրտը վրեժ կուզե,
Ճակատ-ճակտի, դյուշմնի դեմ,
Ով սիրտ ունի՝ թո՛ղ ելնի:
ԺՈՂՈՎՈՒՐԴ — Գուսան ախպե՛ր, անուշ բլբուլ,
Մեր ախպրտանց դարդի ծովեն,
Արնոտ ալիք, սգի ձեներ,
Վաղուց է որ մեզ հասեր են,
Մենք մեր կյանքով էնոնց մատաղ,
Մենք ամենքս մեր աշխարհի,

Մեր ախպրտանց սուրբ ուղուրին.
Ա՛խ, վաղուց է, Գուսան ախպեր,
Մեր աշխարհի, մեր սարերի,
Անո՛ւշ դովքը չենք լսեր,
Մեր Մասիսեն, մեր Արագեն,
Փափագ-պապակ կարոտ ենք.
Համով-հոտով սազ արա՛...

ԳՈՒՍԱՆԸ — *Մեր սարերեն, խոր ձորերեն*
Պղտո՛ր-պղտո՛ր կերթաս, Արա՛զ,
Մեր սրտերեն, խոր աչքերեն
Արուն քամեր, կերթա՛ս, Արազ...
Մեր սարերեն, մութ ձորերեն
Ոլո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛զ,
Ա՛յ սարեր, ջան սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր...
Քանի հարուր-հարուր տարի
Մեր սրտերեն ելեր, կերթաս,
Մեր դարդերով, մեր ցավերով
Խոլո՛ր-մոլո՛ր կերթաս, Արա՛զ...
Մեր սարերեն, մութ ձորերեն
Մեր դարդերով կերթա՛ս, Արա՛զ,
Ա՛յ սարեր, հայ սարե՛ր,
Ջան անո՛ւշ սարե՛ր...
Ու դարերով, մեր դարդերով
Էս աշխարհի քար-ապառաժ,
Անգութ խղճին միշտ զարնելով
Տխուր-տրտում կերթաս, Արա՛զ...
Մեր սարերեն, խոր ձորերեն
Արուն քամեր, կերթա՛ս, Արազ...
Ա՛յ սարեր, ջա՛ն ձորե՛ր,
Ջավահի՛ր սարե՛ր...
Ա՛խ, աշխարհը անխղճմտանք
Քեզ չի գթա, Ազիզ Արա՛զ,

Քու բողոքին, քու մորմոքին
Ջի էլ լսի, արնոտ Արա՛զ:
Մեր սարերեն, մութ ձորերեն
Տխուր-տրտում կերթա՛ս, Արա՛զ...
Ա՛յ սարեր, հա՛յ ձորե՛ր,
Ջմրուխտի սարե՛ր...
Դուն էլ, Արազ, մեր արունով
Էս աշխարհի խղճի վրա
Դիզվի՛ր, դարձիր սև-դառն ծով,—
Թո՛ւյն ու արո՛ւն, Ազիզ-Արա՛զ...
Մեր սարերեն, մեր ձորերեն
Արուն քամեր, կերթա՛ս, Արազ...
Ա՛յ սարեր, հա՛յ սարե՛ր,
Ջան անուշ սարե՛ր,
Ալմաստի սարե՛ր:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ — *Գուսան ախպեր, չա՛տ եննք լացեր,*
Հացն ու բարձը աղի թրջեր...
Ո՞ւր է սազդ, ա՛ռ, սրտիդ զա՛րկ,
Կրակ քցե՛ մեր սրտերը,
Կանանչ հուսով սազ արա՛:

ԳՈՒՍԱՆԸ — *Երբ ես տեսա մեր աշխարհի*
Ցավն ու դարդը ծովածավալ՝
Սիրտս խորունկ ձեն տվեց,—
Ջարկի սազս ժեռ քարերին,
Հազար փշուր-փշրանք արի,
Ասի - ամո՛թ, չատ ամո՛թ է,
Էդ փետ-լեզուն իմ ծով սրտին:
Մինչև չըլնի մութ ու գիշեր,
Կարմիր օրը չի չոգա,—
Մինչև չըլանք արուն-արցունք,
Մեր Արևը չի դուրս գա,
Կարմիր-Ջատիկը չի գա:
Է՛յ, ջա՛ն, հա՛, ջա՛ն...—

Հազար սիրտ ունիմ,
Մենակ մի լեզու,
Լեզվով էլ սիրտը չի բացվի
Է՛յ, հա՛յ-ախպրտիք,
Տվե՛ք հրացան –
Սրտիս սերտ սղմեմ.
Մարդ հրացանով չա՛տ լավ կխոսի,–
Հրեղեն խոսքեր, ամպի ճեներով...
Տեսե՛ք, վերև, ամպի փեչով
Երեք տեսակ հավք կանցնի,–
Մեկը Ա՛յ կանչեց,
Մեկը Վա՛յ կանչեց,
Մեկը Հա՛յ կանչեց,
Ու հրացանս էնոնց պարպեցի.
Ա՛յ կանչողը թողեց, փախավ,
Վա՛յ կանչողը զարկվավ, ընկավ,
Հա՛յ կանչողը Հա՛յ, Հա՛յ կանչեց,
Եկավ, նստավ գլխուս վրա:
Ով Հայ կանչե, Հային կանչե,
Թող գա, բազմի գլխուս վրայ...

III

Սիփան սարեն քամին կուգա,
Սիրտս քամուն բացեր եմ,
Ջա՛ն, սարերի ազատ քամի,
Ես էլ ձեզ պես ազատ եմ,
Դուրս եմ եկել, քեզ եմ կանչում,
Դուրս եկ, դյուչման, դեմ առ դեմ,
Գիշեր-ցերեկ քեզ եմ փնտռում,
Ես քեզ սրտանց կարոտ եմ:
Բաց, կուրծքդ բա՛ց, կարոտ եմ քեզ,
Ա՛ռ համբուրս վա՛ռ-վառման –

Իմ երկաթե, ռումբ-համբուրս
Ա՛ռ սրտիդ մեջ, դյուշման չա՛ն:
Ելնինք, հայե՛ր, ոտքի ելնինք,
Կռիվ-հարսնիք մեկտեղ երթանք,
Մասըսից մինչև Առնոս, Տավրոս,
Մի մարդու պես ելնինք, կայնինք:
Մեր «Դրոշակն» ազատ հովում
Բա՛րձր ու հպա՛րտ կը ծփա
Մեր «Դրոշակն» ապրած կենա –
Մեր սրտերում, մեր վրա:
Դեպի կռվի դաշտ մեր Դրոշի տակ,
Մեր դյուշմնի դեմ, մեր պատվի համար.
Ու թե որ ընկնինք, մեր վա՛ռ արյունով,
Մեզնից կը սրբենք այս ամոթն իսպառ:
Ու թե որ ընկնինք, բոցը մեր արնան,
Մրրիկ կը դառնա սերընդի սրտում,
Ու մեր ձեռներեն վար ընկած չղթան
Ամուր կը կապե գազան թշնամուն:
Մեր ընկած տեղեն նոր քաջ կը կանգնի,
Կեցցե՛ մեր մահը, որ կյանք է ծնում.
Մեր գերեզմանը մայրն է նոր կյանքի,
Կեցցե՛ Սուրբ գործը – Հեղափոխությունն:

IV

Գոռգոռալով ամպերն եկան,
Սարն էլ ամպին ձեն կուտա.
Հայ կտրիճներ թևավորան,
Հայն էլ հային ձեն կուտա:
Ջա՛ն ամպերը կռիվ կերթան՝
Կայծակե թուր մեջքերին.
Հայ-արծիվներ կռիվ կերթան՝
Սուր-հրացան ձեռքերին:

Հայ-կտրիճնե՛ր, հայ-արծիվնե՛ր,
Ուր ո՛ր երթանք, ուր որ լինինք,
Մեջ մութ ամպին, մոլոր ճամբին,
Մեր «Դրոշակը» մեր գլխին:
Մեր աչխարհի սերն ու արուն
Մեզ թուր ու թև ու թիկունք.
Բարին մեզ հետ, բարո՛վ երթանք,
Դև-Սուլթանի վրեն երթանք:
Ուր որ հասնինք, ուր որ երթանք,
Թուրքը փուվի մեր ոտաց տակ.
Անապատը աղբուր բղխե,
Մութ գիշերին չողա լուսնակ.
Քուրդը փուվի մեր ոտաց տակ,
Սարը չոքի, գլուխ բանա,
Փակ դռները բացվին արձակ,
Ծովը ճղվի ու ճամբա տա:
Բարին մեզ հետ, բարո՛վ երթանք:
Դև-Սուլթանի վրեն երթանք:
Կեցցե՛, կեցցե՛ միչտ վեհ կեցցե՛
Մեր «Դրոշակը» մեր վրա:
Մեր «Դրոշակն Ազատութեան»
Բա՛րձր, բա՛րձր միչտ ծփա՛...
Քիչ էլ կանցնի՝ Հայու երկնեն
Արև կելնի,—
Հայու Արևն կանա՛նչ-կարմիր,
Հուրն ի հրեղեն,
Այլուն-փայլո՛ն,
Նոր-Արև.
Հայու Արևն
Նչխո՛ւն-չաչխո՛ւն,
Ծին-ծիրանի՛,
Նոր ու նռնի՛,
Վա՛ռ-Արև:

Հայոց Արևին տանք բարո՛վ,
Հազար բա՛րի, հազար բարո՛վ:

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

(Ձափը ոտանավորի մետրիկական է, էպիկական. չխրտնիք, որ զանազան տեղ տարբեր է:)

Սիրելի Քրիստափոր[1]*.*

Երբ Գուսանը վերջացնում է իր ասքը (էպոսը), տանտերերը առհասարակ հետո քեֆ են սարքում.— այժմ էլ այսպիսի քեֆ է տեղի ունենում, որ եթե չեք վերջացրել Դրոշակի չարումը, այս իմ գրության վերջը զետեղեք.

V

ԺՈՂՈՎՐԴԻ ՏԱՆՈՒՏԵՐԸ.—
Է՛յ Հարս-մորպետ[*]*, խաթուն տնտես,*
Գինի ունինք յոթը կարաս,
Յոթը կարսի գինին էլ խաս.
Էն մենձ գավով գինի բերեք.
Նռան-ալվան գինին բերեք.
Գուսանի հետ, դուռ ու դրկից,
Մեկտեղ հայի սեղան նստենք:
ԳՈՒՍԱՆԸ — *Հայ-ախպրտի՛ք, հայ-քուրիկներ,*
Գինին արնան նշանն է.—
Գինի խմենք, արուն թափենք
Հայոց ազգի կենացը:
Է՛յ, Հարս խաթո՛ւն, ողջ մնաս,
Մլիս-ծաղկիս, ծառ դառնաս:

---

[*] *«Մորպետ» — ժողովրդի մեջ ջահել հարսները, որ օգնում են տանտիրուհուն* (ծանոթություն՝ Ալ. Իսահակյանի):

Գլխավորդ ողջ մնա:
Հայ-ախպրտի՛ք, հայ-քուրիկնե՛ր,
Ձեր օճախը միշտ վառ մնա,
Ձեր տունն ու դուռ միշտ չեն մնա,
Յոթը որդով սեղան նստիք,
Յոթը օրոցք միշտ չրըխկա.
Մեկ հյուրն երթա, երկուսը գա,
Տեղը դատարկ չմնա,
Ամբարներդ հացով մնան,
Պատվով մնաք, բարճով մնաք.
Քարը բռնեք՝ լա՛լ դառնա,
Քոլը բռնեք՝ զառ դառնա.
Գինի խմե՛նք, արուն թափե՛նք,
Հայոց ազգի կենացը:
Գինի խմե՛նք զարկե՛նք, զարկվե՛նք,
Հայոց ազգի կենացը:
Հայոց ազգը ապրած կենա՛
Հազար-հազար բարով, տարով.
Հայու «Դրոշակն» ապրած կենա՛,
Հայու արևն ապրած կենա՛
Հազա՛ր, հազա՛ր բարով, տարով...

ՀԱՅ-ԳՈՒՍԱՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ[2]

Մեր Քրիստափորը, որ ինքը ժընև
Սիրտը՝ Հայաստան,
Որ գրիչ ճեռին,
Որ գրիչն էր թաթխում
Իր սրտի միջին,
(Եվ ժողովրդի ծով սրտի միջին)
Եվ սրտի արունով

Գրում էր [անքուն] այրված
Եվ առավոտից մինչև առավոտ:

Մենավոր, անբիծ իր ազիզ սրտից
Անուշ երգում էր գովքը հայրենիքի,
Վիշտը ժողովրդի,
Եվ երգը նորա
Լսվում է մինչև հիմա
Հայոց լեռներում:

Երգում էր նա ժողովրդի սրտից –
Նա երգն էր խորին
Հայ ժողովրդի:
Նա երգն էր խորունկ
Ազգի մեծ զանգի:

Թագ ու ջա՛հ չենք ուզում,
Ազատ կյանք ու ազատ գործ,
Արդար կյանք ու ճշմարիտ օրենք:

Մենք լույս ենք ուզում, ազնիվ աշխատանք,
Մեր հոգու թևերն ազատ սլանան
Եվ ստեղծենք ազատ
Կյանք ու ապագա,
<Միտք ու երազանք>, երկիր ու երկինք:

3. «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

1901, 16 մարտի, Վիեննա

«Դրոշակի» խմբագրությանը.

Սրանով հայտնում եմ իմ վճիռը,– որը երկար ժամանակից ի վեր խորհել, մտածել և այժմ պաշտոնապես

դնում եմ,— որ ես պատրաստ եմ այժմ անձնազոհությամբ կատարելու այն ամեն ծանր գործերը (ցույցեր), որոնք օգտակար են Հայկական դատին:

Ամենից չա՛տ ցանկանում եմ Սուլթանի կյանքի դեմ դուրս գալու կամ մի բարձր պետական ծառայողի:

Գնալ Հայաստան, և երկար ու բարակ աշխատել կազմակերպել,— համաձայն չեմ:

Կհամաձայնեմ նաև, հակառակ դեպքում, մասնակցելու Մակեդոնական չարժման[1] մեջ. իմ համոզմունքով, հարկավոր է հայերի աջակցությունը նրանց չարքերում, մի վերապահությամբ միայն՝ եթե Մակեդոնիան մի որևէ պետության ինտրիգայի բեմ չէ:

Խնդրում եմ չուտով ինձ որոշ պատասխանեք:

Ավետիք Իսահակյան

Վիեննա, 1901

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

ԱԻեԺ 1979 – *Ավետիք Իսահակյան, երկերի ժողովածու, հատոր 6, Նամակներ (կազմող Արամ Ինճիկյան), Երևան, «Սովետական գրող», 1979*

ԱԻՆ 1959 – *«Աւետիք Իսահակեանի նամակները Վ. Նաւասարդեանին, Ռ. Դարբինեանին, Ե. Խաթանասեանին, Վ. Ահարոնեանին», Գահիրէ, «Յուսաբեր» հրատ., 1959*

ԱԻՆ 1996 – *«Աւետիք Իսահակեանի նամակները Բ. Պիլնպիկճեանին, Ն. Ակինեանին, Ս. Յակոբեանին» (կազմող Մարտիրոս Մինասեան), Ժնև, 1996*

ԱԻՆ 2016 – *«Ավետիք Իսահակյանի նամակները» (կազմող Արփիկ Ավետիսյան, ծան. Լիլիթ Ալագյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 2016*

ՍՎՀԹ 1962 – *Սիմեոն Վրացեան, «Հին թղթեր նոր պատմութեան համար», Պեյրութ, 1962*

ԱԻԸԱ – *Ավետիք Իսահակյանի ընտանեկան արխիվ*

ԱԻՏԹ – *Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան*

ԱԻՖ – *Ավետիք Իսահակյանի ֆոնդ*

ԱՀՖ – *Աշոտ Հովհաննիսյանի ֆոնդ*

ԱՋՖ – *Արշակ Ջոպանյանի ֆոնդ*

ԳԱԹ – *Գրականության և արվեստի թանգարան*

ԳԼՖ – *Գարեգին Լևոնյանի ֆոնդ*

ԵՔԹ – *Երվանդ Քոչարի թանգարան*

ԻԵՖ – *Իվան Ենիկոլոպովի ֆոնդ*

ԽՓՖ – *Խաչատուր Փորքչեյանի ֆոնդ*

ԿԳՖ – *Կամսար Գրիգորյանի ֆոնդ*

ՀԱԱ – *Հայաստանի ազգային արխիվ*

ՀԱՖ – *Հովհաննես Ավագյանի ֆոնդ*

ՀԹՏԹ – *Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան*

ՀԹՖ – *Հովհաննես Թումանյանի ֆոնդ*

ՀՑԴ (ՀՀԴ) – *Հայ յեղափոխական դաշնակցություն*

ՄՄԸԱ – *Մարտիրոս Սարյանի ընտանեկան արխիվ*

ՌԶԸԱ – *Ռուբեն Զարյանի ընտանեկան արխիվ*

ՍԽՖ – *Սարգիս և Վավա Խաչատրյանների ֆոնդ*

ՍՍՖ – *Սաքո Սուքիասյանի ֆոնդ*

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
(էջ 7)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հովհաննես Ավագյանի ֆոնդ (այսուհետև՝ ՀԱՖ), 1079:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ավետիսյանը «Սովետական գրականություն», 1971, թ. 1, էջ 138, ապա՝ Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատոր 6, կազմող Ա. Ինճիկյան, Երևան, «Սովետական գրող», 1979 (այսուհետև՝ ԱԻԵԺ 1979), էջ 192:

***Հովհաննես Ավագյան** (1882-1959) – գրականագետ, Նյու Յորքում տպագրվող «Հայաստանի կոչնակ» հանդեսի գլխավոր խմբագիր:*

[1] Ավ. Իսահակյանի «Լիլիթ (Հրեական առասպել)» պատմվածքը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1923, թ. 2, էջ 20-31:

[2] Վերոնշյալ հրատարակություններում տպագրվել է «Մի անմեղ հայացք» վերնագրով՝ «Մի անմոռանալի հայացք»ի փոխարեն: Այս պատմվածքը տպագրվել է «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1924, թ. 6, փետրվարի 9, էջ 170-172:

*[3] **Պեչիկթաշլյան Նշան** (Նշան Հայազատ ծածկ. 1896-1972) – պոլսեցի գրող, դերասան:*

Հ. Ավագյանին 1923 թ. հոկտեմբերի 27-ին գրած նամակում Ավ. Իսահակյանը խնդրել էր օգնել նյութական վատ պայմաններում գտնվող երիտասարդ բանաստեղծ Նշան Պեչիկթաշլյանին:

2. ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ
(էջ 8)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Սարգիս և Վավա Խաչատրյանների ֆոնդ (այնուհետև՝ ՍԽՖ), 465:

Առաջին անգամ հրապարակել է Գոհար Ազնավուրյանը «Գրական թերթ», Երևան, 1974, 7 նոյեմբեր, ապա՝ Ավետիք Իսահակյան,

Նամակներ, կազմող՝ Արփիկ Ավետիսյան, Երևան, ԵՊՀ հրատ., 2016 (այսուհետև ԱԻՆ 2016), էջ 184-185:

Վավա Խաչատրյան *(Վարդանուշ Սարյան. 1895, Տրապիզոն-1984, Նյու Յորք) – նկարիչ Սարգիս Խաչատուրյանի կինը, նույնպես նկարչուհի: Նա եղել է նկարիչ Հանրի Մատիսի բնորդուհիներից մեկը: Տիկին Վավան բացառիկ գեղեցիկ է եղել: «Համարյա ամեն ոք, որ տեսել է Վավային, սիրահարվել է նրան» – գրել է Ավ. Իսահակյանը: Վավան նկարել սկսել է 1935 թ., 1946 թ. նա Փարիզում կազմակերպել է իր առաջին ցուցահանդեսը: Վավա Խաչատրյանը ստեղծել է Ավ. Իսահակյանի հերոսուհու՝ Լիլիթի գեղանկարը, այնինչ ամուսնուն այդպես էլ չհաջողվեց «Լիլիթ» լեգենդը ճևավորելու ծրագիրն իրագործել: Տիկին Վավան ուղեկցել է Սարգիս Խաչատրյանին նրա ճամփորդություններում՝ Հնդկաստան, Եգիպտոս, Պարսկաստան, մասնակցել ամուսնու ցուցահանդեսներին, որոնք կազմակերպվել են Փարիզ, Կ.Պոլիս, Բեյրութ, Թեհրան, Կահիրե, Լոնդոն քաղաքներում:*

[1] Ավ. Իսահակյանը Սարգիս Խաչատրյանի հետ ծանոթացել է Վենետիկում 1922 թ., իսկ Վավա Խաչատրյանի հետ՝ Վիեննայում, 1923 թ. հունվարին: Ինչպես երևում է Իսահակյանի գրած նամակներից և տիկին Վավայի ալբոմում կատարած Իսահակյանի գրառումներից, բանաստեղծը հեռվից հեռու սիրահարված է եղել գեղեցկուհի Վավային. հիշենք նրա տողերը Սարգիս Խաչատրյանին գրած մի նամակից. «Վավային չատ սիրեցի. քնարական, քնքուշ հոգի ունի. երիտասարդ լինեի, կփախցնեի ճեռքիցդ»: Մեջբերենք նաև մի հատված Վավայի ալբոմում Ավ. Իսահակյանի գրառումից.

«Կյանքի իմաստն է երջանիկ լինել: Եվ երջանկությունը կազմված է 100 բաներից: Մենք, այսինքն մարդու հոգին, վայելում է միակ մեկը և երազում 99-ը: Ուրեմն, 1-ը վայելում ենք, 99-ը՝ երազում: Երազում ենք երջանկություն, սեր, գեղեցկություն, հրաշալիքներ, հաղթանակներ, հռչակ, ազատություն և անմահություն...

Պահիր երազելու հատկությունը և կլինես 100 տոկոսով երջանիկ, լիուլի երջանիկ» (տես Վավա Խաչատրյան «Վարպետաց վարպետը», «Սովետական Ղարաբաղ», 1975, 24 հոկտեմբեր):

[2] 1921-1924 թթ. Խաչատուրյան ամուսինները ապրել են Վիեննայում, որից հետո տեղափոխվել են Փարիզ: 1940 թ. Սարգիս և Վավա

Խաչատուրյանները մշտական բնակություն են հաստատում ԱՄՆ-ում, Մանհեթըն քաղաքում:

[3] «Նոր չարժում» (Կահիրե, 1923-1924) – գրական, գեղարվեստական, գիտական շաբաթաթերթ, խմբագիր՝ Դուրգեն Մխիթարյան:

Նախորդ նամակներից մեկում Ավ. Իսահակյանը Ս. Խաչատրյանին տեղեկացրել էր, որ նկարչի փարիզյան ցուցադրության մասին հոդված է տպագրվել «Նոր չարժում» շաբաթաթերթում՝ նկատի ունենալով Հրանտ Բալուկյանի «Նկարիչ Ս. Խաչատուրեանի պատկերահանդեսը» հոդվածը («Նոր չարժում», Կահիրե, 1923, թ. 22, էջ 335-337):

3. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

(էջ 9)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է «Աւետիք Իսահակեանի նամակները Վ. Նաւասարդեանին, Ռ. Դարբինեանին, Ե. Խաթանասեանին, Վ. Ահարոնեանին», Կահիրե, 1959 (այսուհետև ԱԻՆ 1959), էջ 55:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 1, էջ 30-31: Տպագրվել է նաև ԱԻՆ 2016, էջ 186:

***Ռուբեն Դարբինյան** (Արտաշես Զիլինկարյան, 1883, Ախալքալաք-1968, Բոստոն) – հայ հասարակական և քաղաքական գործիչ, ՀՅԴ ղեկավարներից: Սովորել է Հայդելբերգի և Մյունխենի համալսարաններում: 1909 թ., խուսափելով ցարական իշխանությունների հետապնդումներից, աշխատել է Պոլսում, աշխատակցել «Ազատամարտ»ին, 1913 թ. գործել է Գերմանիայում, ուր ձեռք է բերել անձնագիր՝ Դարբինյան Ռուբեն անունով: Բեռլինում մասնակցել է գերմանա-հայկական ընկերության ստեղծման աշխատանքներին: 1914 թվականից հետո աշխատել է Թիֆլիսում, Բաքվում (1917 թ. հրատարակել է «Գործ» ամսագիրը), 1920 թ. եղել է Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարը, 1921 թ. փետրվարյան հեղափոխության պարտությունից հետո փախել է Թեհրան, 1922 թ. տեղափոխվել Ամերիկա, Բոստոնում խմբագրել Դաշնակցության «Հայրենիք» պաշտոնաթերթը և ամսագիրը:*

[1] *«Հայրենիք» ամսագրի 1924 թ. հունվարյան համարում տպագրվել էր Դերենիկ Դեմիրճյանի «Հայրենի հուշեր» բանաստեղծությունը՝ նվիրված Ավետիք Իսահակյանին:*

4. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 10)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

Սարյան Արման (1899, Կ. Պոլիս -1994, Վենետիկ) – 1921 թ. աշխատել է Հռոմում հայկական հյուպատոսարանում Միքայել Վարանդյանի հետ: Մտերիմ հարաբերություններ է ունեցել Վարպետի հետ: Արման Սարյանի հետ նամակագրությունը սկսվել է 1922 թ. սեպտեմբերին Ավ. Իսահակյանի Հռոմ կատարած ճամփորդությունից հետո: 1923-1925 թթ. Ա. Սարյանը օգնել է Ավ. Իսահակյանին և նրա խնդրանքով մի շարք անձանց՝ վիզաներ, հայկական անձնագրեր ստանալու գործում: 1980-ական թթ. Ավ. Իսահակյանից ստացած բոլոր նամակները Արման Սարյանը նվիրել է Վենետիկի Մխիթարյան միաբանությանը:

1991 թ. հոկտեմբերին Վենետիկում Ավիկ Վիդենի Իսահակյանը հանդիպել և զրուցել է 92-ամյա Արման Սարյանի հետ, իսկ նոյեմբերին Ս. Ղազարի Մխիթարյան միաբանությունից Հայաստան է բերել Արման Սարյանին ուղղված Ավետիք Իսահակյանի նամակների լուսապատճենները՝ լուսահոգի հայր Ներսես Տեր-Ներսեսյանի սիրահոժար օժանդակությամբ: Այսօր այդ պատճենները պահվում են Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում:

[1] ***Մուրադյան Ավետիս*** *(1895, Սեբաստիա – ?) – նկարիչ, որը եղել է Դանիել Վարուժանի աշակերտներից մեկը: Պոլսում կրթություն ստանալուց հետո մեկնել է Սիրիա, այնտեղից՝ Երուսաղեմ, ուր ստեղծել է մի շարք հայտնի նկարներ՝ «Հրեուհին», «Օձահման», «Ասորի կինը», «Սուդանուհին», «Հաբեչ ծերունին» և այլն: Իր գեղանկարներով 1922 թ. ներկայացել է Երուսաղեմի, Կահիրեի, 1923 թ.՝ Հռոմի*

ցուցահանդեսներում: Իտալական մամուլում բազմիցս անդրադարձել են տաղանդավոր հայ նկարչին: Ավ. Մուրադյանի 2 գեղանկար պահվում է Հայաստանի Պատկերասրահի ֆոնդերում:

5. ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍԱՆԻՆ
(էջ 11)

[1] *Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ: Տպագրվում է առաջին անգամ:*

6. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
(էջ 11)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 275-I:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1967, թ. 4, էջ 138:

Երվանդ Քոչար (1899, Թիֆլիս -1979, Երևան) – հայտնի նկարիչ, քանդակագործ: 1922 թ. նոյեմբերին եղել է Վենետիկում, ուր մտերմացել է Ավ. Իսահակյանի հետ, կերտել նրա դիմանկարը և դիմաքանդակը:

[1] *Երվանդ Քոչարը 1923 թ. ամռանը (օգոստոսի կեսերին) հաստատվել է Փարիզում: Նա, որպես արվեստագետ, ինքնահաստատման ճանապարհին արվեստների քաղաքում ունեցել է բազում դժվարություններ ու դառն ապրումներ: (Մանրամասն տես Վիգեն Իսահակյան, «Փարիզ. Քոչար. անցած օրեր», Երևան, 2006):*

[2] *Բենվենուտո Զելլինի (1500-1571) – իտալացի հայտնի նկարիչ, քանդակագործ, ոսկերիչ, գրող:*

[3] *Զաքարյան Ժորժ – Երվանդ Քոչարի ընկերներից մեկը, որ հետագայում դարձել է Վենետիկյան մի բանկի կառավարիչ: Երվանդ Քոչարի ստեղծած քանդակներից մեկը՝ Ժորժ Զաքարյանի կիսանդրին, այժմ գտնվում է Երվանդ Քոչարի ցուցասրահում:*

[4] *Հովսեփ վարդապետ Մարգարյան (1855-1939) – Մխիթարյան միաբանության անդամ, գրական գործիչ, թարգմանիչ, նկարիչ:*

7. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԻՆ
(էջ 13)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 113-116:

Առաջին անգամ տպագրվել է Ավ. Իսահակյանի մահից հետո 1957 թ. դեկտեմբերի 2-ին, Կահիրեում տպագրվող «Յուսաբեր» թերթում:

Ահարոնյան Վարդգես *(1888, Իգդիր – 1965, Վաշինգտոն) – ՀՅԴ անդամ, հասարակական գործիչ, իրավաբան, գրող Ավետիս Ահարոնյանի ավագ որդին, ամուսնացած բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի հետ: Փարիզում մի քանի տարի ապրելուց հետո 1923 թ. Ահարոնյան ամուսինները տեղափոխվել են Ամերիկա և այնտեղ ապրել մինչև իրենց կյանքի վերջը: Վ. Ահարոնյանը որոշ ժամանակ խմբագրել է «Հայրենիք» թերթը, Նյու Յորքում հիմնադրել է «Ահարոնյան» դպրոցը, կնոջ՝ Արմենուհի Տիգրանյանի հետ կազմել «Հրազդան» դասագիրքը և երկուսով զբաղվել են մանկավարժական գործունեությամբ:*

[1] Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը ստորագրվել է 1918 թ. Բրեստ-Լիտովսկում, մարտի 3-ին, մի կողմից՝ ՌՍՖՍՀ ներկայացուցիչների և մյուս կողմից՝ կենտրոնական ուժերի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Օսմանյան Թուրքիա, Բուլղարիայի թագավորություն) միջև: Նշվեց Առաջին համաշխարհային պատերազմում Ռուսաստանի պարտության և հեռանալու մասին: Ըստ այդ պայմանագրի նոր իշխանության եկած բոլշևիկները պարտավորվեցին Թուրքերին վերադարձնել ոչ միայն պատերազմի ընթացքում գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները (պայմանագրում «Արևելյան Անատոլիայի նահանգները»), այլև 1878 թվականից Ռուսական կայսրության մաս հանդիսացող «Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերը»:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ է հայտարարվել իրենց իսկ կնքողների կողմից 1918 թվականին՝ սեպտեմբերի 20-ին՝ Ռուսաստանի, հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիայի կողմից (Մուդրոսի զինադադարի 11 հոդվածով):

[2] Կարսի դաշինքը կնքվել է 1921 թ. հոկտեմբերի 13-ին Թուրքիայի և ՌՍՖՍՀ-ի միջև: Սա հաջորդեց Մոսկվայի պայմանագրին և սահմանեց ժամանակակից սահմանները՝ Անդրկովկասյան հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) և Թուրքիայի միջև:

[3] Նկատի ունի իր «Արձակ էջեր» (հատոր առաջին) գիրքը՝ տպագրված Կ. Պոլիս, «Հայկաշեն» գրատուն, 1922, 120 էջ:

[4] Նկատի ունի Քաջազնունու «Հ. Հ. Դաշնակցությունն անելիք չունի այլևս» զեկուցում-գրքույկը, որի մասին շատ է խոսվել Ավ. Իսահակյանի 1923 թ. գրած նամակներում:

[5] Նամակում խոսվում է Ջալխուչյանի 1923 թ. գրած «Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին» ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը վերլուծել է Հայաստանի առաջին հանրապետության անկման քաղաքական և տնտեսական պատճառները՝ մեղավոր համարելով դաշնակցականներին:

[6] Ավ. Իսահակյանի որդին՝ Վիգենը 1922-1926 թթ. սովորում էր Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցում:

[7] Fatal – ճակատագիր (լատ.):

[8] Խոսքը Ռուբենն եղբորորդու՝ Նիկողայոս (Կոլյա) Իսահակյանի մասին է, որը 1922 թվականից ապրում էր Ամերիկայում:

[9] **Գեղամ Իսահակյան** (1898-1982) – Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբոր տղան, որ 20-րդ դարասկզբին կռվել է հայ կամավորական բանակի շարքերում: Նա երկար տարիներ՝ 1941-1954 թթ. եղել է ստալինյան ճամբարներում ու ռուսական աքսորավայրերում:

[10] **Ջամալյան Արշակ** (Իսահակյան. 1882, Գանձակ - 1940, Փարիզ) – ՀՅԴ Բյուրոյի անդամ, հասարակական-քաղաքական, պետական գործիչ: Թիֆլիսում եղել է «Հորիզոն» թերթի խմբագիր: Կռվել է Անդրանիկի կամավորական գնդում, 1918 թ. Հայաստանի Հանրապետության դեսպանն էր Թիֆլիսում, 1919 թ. Հայաստանի խորհրդարանի անդամ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո անցել է Թիֆլիս, Բոստոն, այնտեղից էլ Փարիզ, ուր 1925-1933 թթ. խմբագրել է «Դրօշակ» ամսագիրը:

[11] Հավանաբար նկատի ունի դերասան Հովհաննես Զարիֆյանին (1879, Ալեքսանդրապոլ - 1937, Նյու Յորք), որն Ավ. Իսահակյանի

հայրենակիցն էր, բարեկամը և Գևորգյան ճեմարանի ուսանողական ընկերը: Վաղ տարիքում որբացած Հովհաննեսին խնամել է Ավ. Իսահակյանի քույրը՝ բազմազավակ Փեփրոնեն: Հ. Զարիֆյանը 1916-1920 թթ., որպես կամավոր, մասնակցել է Ալեքսանդրապոլի պաշտպանությանը: 1920 թ., երբ թուրքերը մտնում են Ալեքսանդրապոլ, նա անցնում է Պոլիս, Բուխարեստ, 1921 թվականից ապրում Նյու Յորքում: Այստեղ դերասանը 1923-1925 թթ. կազմակերպել է «Զարիֆյան» թատերախումբը և գործել դերասան Աբելյանի հետ:

*[12] **Աբելյան Հովհաննես** (1865, Շամախի - 1936, Երևան) – դերասան: 1920-1925 թթ. հայկական թատերախմբերի հետ խաղացել է Պոլսում, Փարիզում, Ալեքսանդրիայում, Լոնդոնում, Նյու Յորքում: 1925 թ. Սովետական Հայաստանի կառավարության հրավերով Աբելյանը վերադարձել է Հայաստան և մինչև կյանքի վերջ աշխատել Երևանի պետական թատրոնում (այժմ Գ. Սունդուկյանի անվան):*

*[13] **Գասապյան Մինաս** (Վերածին, Ծարհատ կեղծ. 1882, Պարտիզակ-1945, Սան Ֆրանցիսկո) – ՀՅԴ անդամ, բանասեր, լրագրող, թարգմանիչ: 1919 թ. խմբագրել է «Կիլիկիա» թերթը, ապա Կիլիկիայից բնակության է տեղափոխվել Լոնդոն, 1921 թ. անցել է ԱՄՆ, աշխատել Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, 1939 թ. Կալիֆորնիայում խմբագրել է «Ասպարեզ» շաբաթաթերթը:*

8. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

(էջ 17)

Ինքնագիրը պահվում է Երվանդ Քոչարի թանգարան (այսուհետև՝ ԵՔԹ), 3099-1971-424:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Խոսքը Փարիզում ապրող Գեղամ Կոստանյանի (Իսահակյանի մորաքրոջ որդու) մասին է, որն ուներ համեմատաբար ֆինանսական լավ վիճակ և օգնում էր հայ մտավորականներին:

[3] Նկատի ունի հայտնի հայագետ Նիկողայոս Ադոնցին, որին գրված Ավ. Իսահակյանի նամակները մեզ չի հաջողվել գտնել: Այդ

նամակները, ինչպես վկայում է անվանի պատմաբան և աղբյուրագետ Պետրոս Հովհաննիսյանը (1944-2016), պահվում են Բեյրութի Համազգայինի գրական պահոցում (տես Նիկողայոս Ադոնց, Երկեր, հատոր Է, Նամականի (կազմող Պ. Հովհաննիսյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 6-7):

[4] Նկատի ունի Մխիթարյան միաբանության անդամ Հովսեփ վարդապետ Մարգարյանին:

[5] Reverend Pere *– պատվելի հայր,* Tres Reverend Pere *– գերաշնորհ հայր:*

[6] Ըստ բանավոր վկայությունների՝ Վարդենին է դարձել Համլիկ Թումանյանի և Երվանդ Քոչարի հարաբերությունների խզման պատճառը: Համլիկի և Վարդենիի միջև, մինչև Քոչարի հետ ամուսնությունը, ջերմ համակրանք և փոխադարձ զգացմունքներ են եղել:

9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

(էջ 17)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԱՖ, 1080:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1971, թ. 1, էջ 137, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 193:

10. ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

(էջ 18)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍԽՖ, 465:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 187:

Սարգիս Խաչատուրյան (1886, Մալաթիա-1947, Փարիզ) – հայ գեղանկարիչ, վերականգնող, որմնանկարիչ, Խորհրդային Հայաստանի առաջին փոստանիշների հեղինակ: Կրթություն է ստացել Սանասարյան վարժարանում, Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում, Փարիզի արվեստների դպրոցում: 1915 թ. հայ ժողովրդի ողբերգությունը դարձել է նրա ստեղծագործության հիմնական թեման: Թումանյանը նրան համարել է «Հայց վշտի երգիչ»:

Ս. Խաչատուրյանը 1917 թ. անդամակցել է Թիֆլիսի հայ արվեստագետների միությանը:

1926 թ. Հակոբ Փուչմանի, Ռաֆայել Շիչմանյանի հետ համատեղ Փարիզում հիմնել է հայ նկարիչների «Անի» միությունը, որ գործել է մինչև 1930 թվականը: Ս. Խաչատուրյանը 1934 թ. հիմադրել է Նոր Ջուղայի Հայկական արվեստի թանգարանը:

1977 թ. նկարչի աճյունը Փարիզից տեղափոխվել է հայրենիք և թաղվել Երևանում:

Սարգիս և Վավա Խաչատրյանները, 1921-1924 թթ. ապրելով Վիեննայում, նամակագրական կապ են ունեցել բանաստեղծի հետ:

11. ԳԵՎՈՐԳ ԿԱՒՎԱՐԵՆՑԻՆ
(էջ 19)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է Աիեժ 1979, էջ 193-194:

***Գևորգ Կաւվարենց** (Աբրաքյան. 1892, Բոլու-1946, Միլան) – հայ բանաստեղծ, դրական դործիչ, մանկավարժ, կոմպոզիտոր Ժորժ Կաւվարենցի հայրը: Նա ուսուցչություն է արել Սկյուտարում, 1914-1918 թթ. ենթարկվել բանտի ու աքսորի, պատերազմից հետո աշխատել է Պոլսի Դրամատիկ թատրոնում, «Ճակատամարտ» թերթում, 1922-1943 թթ.՝ Հունաստանի տարբեր քաղաքներում զբաղվել է մանկավարժությամբ և խմբագրական աշխատանքներով, Աթենքի «Արևագալ» գրական հանդեսի խմբագիրներից մեկն է եղել: 1943 թ. մեկնել է Ավստրիա, այնտեղից էլ՝ Միլան: Թաղված է Ս. Ղազար կղզու պանթեոնում:*

[1] Գ. Կաւվարենցի «Գերեզմանի ծաղիկներ» բանաստեղծությունների ժողովածուն լույս է տեսել 1921 թ.:

[2] Գ. Կաւվարենցի «Կյանքը» բանաստեղծությունը, որից մի տող Ավ. Իսահակյանը մեջբերում է անում, տպագրվել է Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1924, էջ 42:

12. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿՑԱՆԻՆ

(էջ 20)

Գրող, գրականագետ Գրիգոր Պլտյանը իր մոտ պահվող այս նամակի լուսապատճենը հանձնել է Ավիկ Իսահակյանին 2007 թ. Փարիզում: Միսակյանին ուղղված Ավետիք Իսահակյանի երկու նամակների ինքնագրերը Գ. Պլտյանին հանձնել էր Շավարշ Միսակյանի դուստր Արփիկ Միսակյանը:

Տպագրվում է առաջին անգամ:

***Շավարշ Միսակյան** (1884, Սիվաս - 1957, Փարիզ) – հրապարակախոս, քաղաքական գործիչ, 1907 թվականից՝ ՀՅԴ կուսակցության գործիչ: Աշխատել է «Սուրհանդակ», «Ազդակ», «Ազատամարտ» թերթերում: 1916-1918 թթ. եղել է թուրքական բանտում: 1924 թ. հաստատվել է Փարիզում, ուր 1925 թ. հիմնել է «Յառաջ» քաղաքական, գրական օրաթերթը: Մահից հետո թերթը հրատարակվել է նրա ավագ դստեր՝ Արփիկ Միսակյանի խմբագրությամբ:*

*[1] **Ավ. Իսահակյան**, «Արձակ էջեր» (հատոր առաջին), Կ. Պոլիս, «Հայկաշեն» գրատան հրատ., 1922, 120 էջ:*

*[2] **Ավ. Իսահակյան**, «Աղա-Նազար» (հեքիաթ), Կ. Պոլիս, «Արծիվ», 1912, 22 էջ:*

*[3] **Ավ. Իսահակյան**, «Աբու-Լալա-Մահարի» (քասիտ), Կ.Պոլիս, «Զարդարյան», 1918, 16 էջ:*

*[4] **Ավ. Իսահակյան**, «Աբու-Լալա-Մահարի» (քասիտ), Դ. տպագրություն, Կ.Պոլիս, «Կիլիկիա», 1920, 24 էջ:*

*[5] **Տիգրան Զավեն** (Զուքասզյան. 1874, Սեբաստիա - 1938, Սիրիր) – հրապարակախոս, հրատարակիչ, քաղաքական գործիչ, թուրքական լծի դեմ ազատագրական շարժման ղեկավարներից: 20 տարի չարունակ աշխատակցել է հայկական տարբեր պարբերականներին, 1921-1923 թթ. Փարիզում խմբագրել է «Զարթոնք» պարբերականը: Տիգրան-Զավենը 1933 թ. ներգաղթել է Հայաստան, ուր հանիրավի մեղադրվել է Ստալինյան ռեժիմի կողմից. նրան համարել են «օտարերկրյա լրտես»:*

[6] Նկատի ունի Հակոբ Օշականի «Աբու-Լալա-Մահարի» պոեմի մասին» հոդվածը, որ տպագրվել էր «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1920, 12 սեպտեմբեր:

13. <ԱՐՄԱՆ> ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 22)

Ինքնագիրը (Ավետիս Մուրադյանի հետ գրած համատեղ նամակ) պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության ձեռագրատանը:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Նկատի ունի նկարիչ Ավետիս Մուրադյանին (տես 4-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը):*

[2] bon pour le France – *բառացի՝ լավ կլինի, պիտանի է Ֆրանսիայի համար (ֆրանս.):*

[3] gratis – *ձրի, անվճար (ֆրանս.):*

[1] *Նամակը չարունակում է նկարիչ Ավետիս Մուրադյանը:*

14. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՑԱՆԻՆ

(էջ 23)

Ինքնագիրը պահվում է Վիեննա, Մխիթարյան միաբանության գրապահոց, Ներսես Ակինյանի թղթապանակ:

Առաջին անգամ տպագրվել է «Բագին», Բեյրութ, 1983, թ. 3, էջ 75, այնուհետև՝ «Աւ. Իսահակեան. Նամակները Բ. Պիլեզիկճեանին, Ն. Ակինեանին, Սիմոն Յակոբեանին», կազմող՝ Մ. Մինասյան, Ժնև, 1996, էջ 24-25 և ԱԻՆ 2016, էջ 188-189:

[1] *Խոսքը «Ուստա Կարո» վեպի մասին է, որն ամբողջությամբ լույս չտեսավ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում հրատարակվեցին միայն առաջին 5 գլուխները:*

[2] ***Կոնֆուցիոս*** *(մ. թ. ա. V դար) – չինացի փիլիսոփա, ուսուցիչ, բարոյագետ, առայսօր մարդասիրության և բարության օրինակ է չինացիների համար:*

[3] ***Ռուբեն Թերլեմեզյան*** *(1898, Վան - 1942, Երևան) – հայ երաժշտագետ: Երաժշտական կրթությունը ստացել է Վիեննայում, 1925 թվականից ապրել է Երևանում, 1933-1936 թթ. ղեկավարել է Հայպետհրատի երաժշտական բաժինը: Ունի մենագրություններ Կոմիտասի, Կարա-Մուրզայի մասին:*

[4] *Արամ Երեմյան (1898, Մարզվան - 1972, Պարսկաստան) – հայ գրող, գրականագետ, արվեստաբան: Նա 1925 թ. տեղափոխվել է Սովետական Հայաստան, որտեղ 1927 թ. խմբագրել է «Հայ նկարիչների ալմանախը», 1929-1933 թթ. Թիֆլիսի «Պրոլետար» թերթի խմբագրությունում աշխատել է Նար-Դոսի հետ, որպես ոճաբան սրբագրիչ: 1930-ական թթ. վերադարձել է Իրան, զբաղվել մանկավարժական և բանասիրական աշխատանքներով:*

Ա. Երեմյանը գրել է մենագրություններ նկարիչներ Սարգիս Պիծակի, Ստեփան Աղաջանյանի, Վանո Խոջաբեկյանի, գրական գործիչներ Ավ. Իսահակյանի, Հովհ. Թումանյանի, Հակոբ Գույումճյանի մասին:

[5] *Սաղաթելյան Հովհաննես (Իվան Յակովլևիչ. 1871-1936) – ՀՅԴ անդամ, 1907 թ. Ռուսաստանի Պետական Դումայում Երևանի նահանգի ներկայացուցիչ-անդամ, 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո մեկնել է Վիեննա և մինչև 1924 թ. ապրել այնտեղ: Հայաստանի սովետական իշխանության հրավերով 1924 թ. եկել է Երևան, հրաժարվել կուսակցական գործունեությունից և աշխատել միայն գործադիր մարմնում՝ զբաղվելով գյուղատնտեսական ու բնապահպանական խնդիրներով: Նրա ջանքերով են հիմնադրվել Նորքի և Երևանի շրջակա անտառները:*

15. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
(էջ 24)

Արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 46-48 (գրքում նամակն անթվակիր է):

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1957, թ. 1, էջ 25-27:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] *Նկատի ունի Միսակ (Իսահակ) Իսահակյանին:*

[3] *Նկատի ունի Համաստեղի (1895-1966) «Պուպրիկը» պատմվածքը, որ տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 3, էջ 1-7:*

[4] *Նկատի ունի Եղիշե Այվազյանի (1890-1993) «Սատանայի մասը» ստեղծագործությունը, որ տպագրվել էր ամսագրի մարտյան համարում («Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 5, էջ 1-16):*

[5] *Արևմտահայ գրող Հակոբ Օշականի (1883-1948) «Շահպազ» պատմվածքը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 4, էջ 6-29:*

[6] *Խոսքը «Ուստա Կարո» վեպից «Բագրանի ուխտը» հատվածի մասին է, որ տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 7, էջ 2-7:*

[7] *Բանաստեղծուհի Պերճուհի Պարսամյանը (Պերճուհի Ծածկ.) իր բանաստեղծություններով ներկայանում էր «Հայրենիք»-ի համարյա բոլոր համարներում:*

[8] *Նադիան Ռուբեն Դալբինյանի կինն էր:*

16. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 27)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 7-9:

Վահան Նավասարդյան *(1886-1956) – ՀՅԴ կարկառուն քաղաքական գործիչ, գաղափարախոս, հրապարակախոս, 1924 թ. ՀՅԴ օրգան համարվող «Յուսաբեր» պարբերականի խմբագիր:*

[1] **Հովհաննես Քաջազնունի** *(1867-1938) – ճարտարապետ, դրականագետ: Հայ Հեղափոխական Դաշնակցության անդամ, քաղաքական գործիչ, 1918 թ. հուլիսից 1919 թ. մայիսը՝ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ: Հայաստանի խորհրդայնացումից հետո հեռացել է Հայաստանից, ապրել Եվրոպայում: Նա լքել է ՀՅԴ շարքերը 1923 թ.՝ գրելով «Հ.Յ. Դաշնակցությիւնը աննկիք չունի այլևս» աշխատությունը, որին անդրադարձել են դաշնակցական շատ գործիչներ: Ի պատասխան այդ աշխատության Վահան Նավասարդյանը գրում է «ՀՅ Դաշնակցութեան անկիքը» (Կահիրե, 1924, 288 էջ) գիրքը, որի մասին խոսվում է նամակում:*

[2] *Ավ. Իսահակյանի զուշակությունը, ցավոք, ճիշտ դուրս եկավ: Քաջազնունին 1925 թ. վերադարձել է Խորհրդային Հայաստան, աշխատել Երևանի պետական համալսարանում, ստացել պրոֆեսորի կոչում: Նա 1937 թ. ձերբակալվել է և 1938 թ. գնդակահարվել բանտում՝ դատնալով ստալինյան բռնության հազարավոր անմեղ զոհերից մեկը:*

[3] **Զալխուշյան Գրիգոր** *(1861, Նոր Նախիջևան - 1939, Դոնի Ռոստով) – հայտնի իրավաբան, դրական, մշակութային գործիչ, 1919 թ.՝*

ՀՀ ներկայացուցիչը Դոնում, 1920 թ. հունվարից՝ Հայաստանի կարմիր խաչի կենտրոնական վարչության նախագահ: 1920 թ. նոյեմբերից անցել է Կ.Պոլիս: Գրել է հայ-թուրքական հարաբերություններին, հայկական հարցին վերաբերող մի շարք արժեքավոր գրքեր, որոնց մեջ առանձնանում է 1919 թ. գրած «Կարմիր գիրքը»: Նամակում ակնարկվում է Զալխուշյանի 1923 թ. գրած «Ի՞նչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին» ուսումնասիրությունը, որտեղ վերլուծել է Հայաստանի առաջին հանրապետության անկման քաղաքական և տնտեսական պատճառները՝ մեղադրելով դաշնակցականներին: Այդ գիրքը նրան իրավունք տվեց վերադառնալ Հայրենիք:

1938 թ. բոլշևիկները գնդակահարեցին Գ. Զալխուշյանի երեք զավակներին: Մեկ տարի անց նա մահանում է փողոցում՝ սրտի կաթվածից:

[4] Ալեքսանդրապոլի դաշնագիրը կնքվել է 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև: Հաշտության պայմանագիրը կնքվել է հայ-թուրքական պատերազմում հայկական կողմի պարտության արդյունքում: Ստորագրել են թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը և հայկական պետության կողմից՝ Ալեքսանդր Խատիսյանը:

[5] «Միություն և առաջադիմություն» Ittihat ve Terakki – երիտթուրքերի քաղաքական կուսակցություն՝ հիմնադրված 1889 թ. մայիսին: 1908 թ. հուլիսի 23-ի հեղաշրջման հետևանքով իթթիհատականները հռչակել են սահմանադրության վերականգնումը: Լինելով պանթուրքիզմի ջատագովները՝ Թուրքիայի կառավարությունը իր տասնամյա կառավարման ընթացքում (1908-1918 թթ.) 3 անգամ ներքաշվել է պատերազմի մեջ՝ նոր տարածքներ գավթելու նպատակով. 1911 թ.՝ Տրիպոլիտանական, 1912-1913 թթ.՝ Բալկանյան, 1914-1918 թթ.՝ Առաջին աշխարհամարտ:

[6] **Օհանջանյան Համազասպ** (Համո Մհերյան. 1873, Ախալքալաք - 1947, Կահիրե) – ՀՅԴ Բյուրոյի անդամ, Կովկասում «Յառաջ» թերթի հիմնադիրներից, Լոզանում ստացել է բժշկական կրթություն, եղել է բժշկության դոկտոր: Ալ. Խատիսյանի հրաժարականից հետո Հայաստանի առաջին հանրապետության վարչապետի պաշտոնը ստանձնել է Համո Օհանջանյանը. նա գեկավարել է 1920 թ. մայիսի 5-ից նոյեմբերի 25-ը: Նրա կառավարության օրոք է ստորագրվել Սևրի դաշնագի-

րը: 1908 թ. նա ձերբակալվել է ցարական իշխանության կողմից և աքսորվել Սիբիր: Օհանջանյանին հետևել է իրեն սիրահարված Ռուբինա Արեչյանը, որի հետ էլ ամուսնացել է աքսորում: Ռուբինան Օսմանյան սուլթան Աբդուլ Համիդի դեմ 1905 թ. իրականացված մահափորձի կազմակերպիչներից մեկն է եղել: Օհանջանյանը աքսորում մնացել է մինչև 1915 թվականը: Վերադառնալուց հետո որպես բժիշկ աշխատել է Թիֆլիսում: 1921 թ. նա հեռանում է Հայաստանից և հաստատվում Կահիրեում: Հ. Օհանջանյանը 1928 թ. դառնում է համազգային հայ կրթական և մշակութային միության հիմնադիրներից մեկը և այն նախագահում մինչև իր մահը՝ 1947 թ.: Նա առաջին կնոջից՝ Օլգայից ունեցել է 3 զավակ (2 տղա, 1 դուստր, զավակներից մեկը զոհվել է 1918 թ. Ղարաքիլիսայի ճակատամարտում), երկրորդ կնոջից՝ Ռուբինայից ունեցել է մեկ զավակ՝ Վիգեն անունով:

[7] Սևրի հաշտության պայմանագիրը ստորագրվել է 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի մոտ գտնվող Սևր քաղաքում Թուրքիայի կառավարության և Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Հայաստան, Չեխոսլովակիա, Սերբերի, խորվաթների և սլովենների թագավորություն, Հեջազ) միջև: Հայաստանի անունից հաշտության պայմանագիրը ստորագրել է Ավետիս Ահարոնյանը: Միջազգային իրավունքի տեսակետից Հայաստանի Հանրապետությունը, որպես պայմանագրի մասնակից, դե յուրե ճանաչվում էր պայմանագիր ստորագրած մյուս բոլոր պետությունների կողմից: Պայմանագրի 88 և 93 հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Ցավոք, հայերին ձեռնտու այս պայմանագիրը մնաց թղթի վրա, ինչն էլ ակնարկում է Իսահակյանը՝ գրելով «որը փորից մեր դերեզմանը»:

[8] Նկատի ունի Համո Օհանջանյանին, որը 1924 թ. աշխատում էր Վ. Նավասարդյանի հետ Կահիրեի «Յուսաբեր» թերթում:

[9] Սեդրակ Պալըգճյանը գրական գործիչ էր, գրող, թարգմանիչ. գրել է պատմվածքներ, թարգմանել Անրի Թրուայային, Վիլյամ Սարոյանին:

1928 թ. մայիսի 28-ին Կահիրեում ՀՅԴ հովանավորությամբ հիմնվել է «Հայ կրթական և հրատարակչական ընկերություն» հետագայում

«Համազգային մշակութային միությունը», որն իրագործում էր կրթական և մշակութային զանազան ծրագրեր: Միության հիմնադիրներն էին Համո Օհանջանյանը, Նիկոլ Աղբալյանը, Լևոն Շանթը, Սեդրակ Պալըգճյանը և շատ այլ դաշնակցական մտավորականներ:

17. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 30)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻՏԹ, 9381:

Համատեղ նամակ է՝ Սիրվարդի և Ավ. Իսահակյանի կողմից գրված: Տպագրվում է առաջին անգամ:

[1] Նամակի տարեթիվը և առաքման վայրը՝ բացիկի փոստակնիքից:

Բացիկի վրա Ս.Վիջիլիոյի միջնադարյան ամրոցն է պատկերված, որը գտնվում է Բերգամոյում՝ Իտալիայում հայտնի հանգստավայր, Պո գետի ափին, Միլանից 50 կմ հեռու:

[2] Ավ. Իսահակյանի նախորդ նամակներում Սիրվարդի անունը հիշատակվել է որպես Թագորից և այլ գրողներից թարգմանություններ կատարող անձի: Վիգեն Իսահակյանի վկայությամբ՝ Սիրվարդի տանը հավաքվել են ժամանակի մտավորականները, հայտնի և երևելի մարդիկ:

18. ԱՐՄԱՆ <ՍԱՐՑԱՆԻՆ>

(էջ 31)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 8725:

Տպագրվում է առաջին անգամ:

19. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱԿՑԱՆԻՆ

(էջ 32)

Ինքնագիրը պահվում է Գրիգոր Պլտյանի անձնական հավաքածուում: (Մանրամասն տես 12-րդ նամակի ծանոթագրությունը):

[1] *Շ. Միսակյանը ամուսնացել է 40 տարեկանում բանաստեղծուհի Պերճուհի Պարսամյանի հետ, ունեցել երկու դուստր՝ Արփիկը և Անին:*

[2] *1919-1922 թթ. հույն-թուրքական պատերազմի շրջանակներում 1922 թ. սեպտեմբերի 9-17-ը թուրքական զորքերը իրագործեցին Զմյուռնիայի (Իզմիր) հույն և հայ խաղաղ բնակչության կոտորած ու ունեցվածքի թալան՝ քաղաքային մեծ հրդեհի միջոցով: Պատմության մեջ այս հրդեհը մնաց Զմյուռնիայի աղետ կամ կոտորած անունով: Դաժանությամբ այս հրդեհը ցեղասպանական մի ակտ էր հայ և հույն ժողովուրդների հանդեպ:*

[3] *Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գաբրիելե դը Անունցիոն (1863-1930) ամենահայանի և ժողովրդականություն վայելող իտալացի գրողն էր: Նրա վեպերում, պիեսներում, բանաստեղծություններում իշխում էր էսթիկուրականության, հերոսականության և հայրենասիրական ոգին:*

[4] *Լուիջի Պիրանդելլո (1867-1936) – իտալացի թատերագիր, բանաստեղծ, արձակագիր, գրականության գծով 1934 թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր:*

[5] *Խոսքը վերաբերում է անալիտիկ հոգեբան Կարլ Գուստավ Յունգի (1875-1961) «Կարմիր գրքույկ»ի ֆրանսերեն հրատարակությանը (Փարիզ, Librairie Stock հրատ.):*

20. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
(էջ 34)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 276-1:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1967, թ. 4, էջ 138-139, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 191-192:

[1] *1924 թ. «Անկախականների սալոնի» կազմակերպած 35-րդ ցուցահանդեսին մասնակցել է նաև Երվանդ Քոչարը իր «Հարություն» և «Փոխակերպում» նկարներով: Այս ցուցադրությանը արձագանքել են «Revue du vrai et de beau», «La Revue Moderne» և այլ ամսագրեր: Պարբերականները մեծ դնահատանքի են արժանացրել նրիտա-*

սարդ հայ արվեստագետին՝ Երվանդ Քոչարին: Նամակում խոսվում է այս ամսագրերի մասին:

[2] *Ավ. Իսահակյանը նկատի ունի իրենց ընդհանուր ծանոթին՝ Ժորժ Զաքարյանին: (Տես նաև 6-րդ նամակի 3-րդ ծանոթագրությունը):*

[3] *Գեորգ Պայան (1860 թ., Փարիզ - 19.., Վիեննա) – Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայ բանասեր, աստվածաբան, Ղ. Ալիշանի թարգմանիչ:*

[4] *Նկատի ունի փարիզաբնակ բարերար, փիլիսոփայության դոկտոր Աբրահամ Ղուկասյանին (1872-1969), որը Բաքվի հայտնի մեծահարուստ նավթարդյունաբերող Ավետիս Ղուկասյանի եղբոր զավակն էր: Նա սովորել է Լազարյան ճեմարանում, ապա Օդեսայի և Լայպցիգի համալսարաններում: 1899 թ. ապրել է Լոնդոնում և ներկայացրել իր երեք եղբայրների նավթարդյունաբերական չահերը: 1918 թ. փոխադրվել է Ֆրանսիա: Այստեղ Ղուկասյանը հիմնել է նավաշինական-նավթատարական ընկերություն, հիմնադրել և հրատարակել է «Վողրոժդենիե» թերթը, եղել ռուս էմիգրացիայի առաջնորդներից մեկը, ստեղծել է հոր եղբոր անունով «Ավետիս Ղուկասյան» հիմնադրամը:*

[5] *Սարյան Մարտիրոս (1880, Նոր Նախիջևան - 1972, Երևան) – աշխարհահռչակ հայ նկարիչ, նորարար, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ, ՍՍՀՄ սոցիալիստական աշխատանքի հերոս, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, 1945-1951 թթ. Սովետական Հայաստանի Նկարիչների միության նախագահ: 1921 թ. մշտական բնակություն է հաստատել Երևանում, 1924 թ. մասնակցել է Վիեննայի Բիենալեի XIV ցուցահանդեսին: Վիեննայում ծանոթացել և մտերմացել է Ավ. Իսահակյանի հետ: Ընկերությունը չարունակվել է մինչև բանաստեղծի կյանքի վերջը:*

[6] *Ավ. Իսահակյանը իր նամակը չարունակել է հաջորդ օրը՝ Մ. Սարյանին հանդիպելուց հետո:*

21. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

(էջ 36)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 277-I:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

[2] Gare de Lion *– Լիոնի կայարան (Ֆրանսերեն), երկաթուղային կայարան Փարիզում:*

22. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ
(էջ 36)

Արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 57 (նամակն անթվակիր է):

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 7:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Խոսքը «Հայրենիք» (Բոստոն, 1924, թ. 4) ամսագրի մասին է, որտեղ տպագրված են Վազգեն Շուշանյանի «Գորշ օրեր» հուշերը, Շիրվանզադեի «Գամառ Քաթիպա» հոդվածը:

[3] Ավ. Իսահակյանի «Հայաստանի նկարները Վենետիկի միջազգային պատկերահանդեսում» հոդվածը՝ նվիրված Մ. Սարյանի վրձնաշխատին, տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, 5 օգոստոս:

23. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
(էջ 38)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԴԱԹ, ԱԻՑ, 279-Ի:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Ահեմյան Հարություն** (Արիել ծածկ. 1904, Բուրսա - 1963, Նյու Յորք) – նկարիչ, քանդակագործ Ստեփան Գալֆայանի որդին: 1919-1923 թթ. սովորել է Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում, 1923-1926 թթ.՝ Վենետիկի Գեղարվեստի ակադեմիայում, 1926-1931 թթ. աշխատել և ստեղծագործել է Միլանում, 1931-1938 թթ.՝ Փարիզում: Նա կատարել է կրոնական թեմաներով մեծ կոմպոզիցիաներ, պատկերազարդել գրքեր: 1938 թվականից ստեղծագործել է Նյու Յորքում, նկարազարդել կաթոլիկ եկեղեցիներ:*

24. <ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ>
(էջ 38)

Ինքնագիրը պահվում է ՄՄԸԱ:

Նամակը դժվարընթեռնելի է, գրված մատիտով և տպագրվում է առաջին անգամ:

[1] *Մարտիրոս Սարյանը 1924 թ. գարնանը մասնակցել է Վենետիկյան Բիենալեին (Գեղարվեստական միջազգային ցուցահանդես) և արժանացել տեղի մտավորականների բարձր գնահատականին: Վենետիկում ապրած ամիսներին մտերմություն էր առաջացել երկու մեծերի՝ Իսահակյանի և Սարյանի միջև: 1924 թ. հուլիսի վերջերին Սարյանը վերադարձել է Հայրենիք: Կարծում ենք, որ Իսահակյան-Սարյան նամակագրությունը սկսվել է այս յուրօրինակ նամակից, որն, ըստ էության, ժամանակի հայ մտավորականների թվարկում է:*

[2] ***Մարտունի*** *– Ալեքսանդր Մյասնիկյանի գրական կեղծանուններից մեկը:*

[3] ***Տեր-Վարդանյան Տարագրոս*** *(1878, Երևան - 1953, Երևան) – հայ մանրանկարիչ:*

[4] ***Ախիկյան Վրթանես*** *(1873, Վան - 1936, Երևան) – հայ նկարիչ:*

25. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
(էջ 39)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԴԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] ***Միքայել Վարանդյան*** *(Հովհաննիսյան, 1870, Շուշի - 1934, Բոմոն) – հրապարակախոս, դաշնակցության տեսաբան, 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Դեսպանը Հռոմում, քաղաքական և գրական հարցերին նվիրված մի շարք գրքերի հեղինակ:*

26. ԱՐՄԱՆ ՍԱՐԳԱՆԻՆ
(էջ 40)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ: Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բացիկի փոստային կնիքի:

[2] Նատալյա Մարտիրոսյան (1889-1960) – Շիրակի ջրանցքի և այլ կարևոր կառույցների նախագծման աշխատանքներին մասնակից ինժեներ:

27. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԻՆ
(էջ 41)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 117-119:

[1] Վարդգես Ահարոնյանի 1921 թ. վհնետիկ կատարած այցելությունից հետո նամակագրական կապ է ստեղծվում Ավ. Իսահակյանի հետ, որ շարունակվում է մինչև 1926 թ.: Ավ. Իսահակյանը մտերիմ է եղել Վ. Ահարոնյանի և նրա տիկնոջ՝ բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանի հետ: Այդ նամակագրությանը հետագայում Վ. Ահարոնյանը անդրադարձել է իր «Ի՞նչ են ասում Ավետիք Իսահակյանի նամակները» («Յուսաբեր», Կահիրե, 1959, 7 հունվար) և «Ավետիք Իսահակյան. Սրտի մարդը» հոդվածներում («Հայրենիք», Բոստոն, 1957, 23 և 24 նոյեմբեր):

[2] Քաղաք ԱՄՆ-ի Ֆլորիդա նահանգում:

[3] Արշակ Ջամալյանը 1924 թ. աշխատում էր Բոստոնի «Հայրենիք» ամսագրում:

28. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ
(էջ 43)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 58-59 (նամակն անթվակիր է):

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 7-8:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Նկատի ունի «Ուստա Կարո»ի «Բագրանի ուխտը» հատվածը՝ տպագրված «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 7, էջ 2-9:

[3] Ավ. Իսահակյանի «Հայաստանին» բանաստեղծությունը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 7, էջ 1:

[4] Նկատի ունի Համաստեղի «Գիւղը» գիրքը՝ տպագրված Բոստոն, 1924, 156 էջ:

29. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 45)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

30. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

(էջ 46)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 50-51 (նամակն անթվակիր է):

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 1, էջ 28:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Խաչմանյան Հակոբ (1888, Պարտիզակ - 1968, Նյու Յորք) – գրող:

Նամակում խոսվում է նրա կազմած «Ամերիկահայ հանրագիտակ. Տարեգիրք» (2 հատորով) աշխատանքի մասին, որոնք հրատարակվել են Բոստոնի «Հայրենիք» տպարանում, 1925 թ. և 1926 թ.: 1925 թ. Ա. տարեգրքում ներառված է Ավ. Իսահակյանի «Աննամ ժողովրդի առակներից» (էջ 218-219) ստեղծագործությունը:

[3] *«Հուդիթ» ստեղծագործությունը (Փոյուդյան Սրինգ ստորագրությամբ) տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 12, էջ 31-41:*

[1] ***Փոյուդյան Սրինգ*** *– մանրանկարիչ Հարություն Ահեմյանի (Արիել) ծածկանուններից մեկը: Ահեմյանը 1924 թ. Վենետիկի Գեղարվեստից դպրոցի սան էր:*

[5] ***Հերոդոտոս*** *– մ.թ.ա. 5-րդ դարի հույն պատմիչ, որը ճանաչված է որպես «Պատմության հայր»: Աշխարհին հայտնի նրա «Պատմություն» գրքի մեջ տեղեկություններ կան նաև հայերի ու Հայաստանի մասին:*

31. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 48)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, անմշակ:

Շնորհակալությամբ ուղում ենք նշել նպիպտահայ բժիշկ Սուրեն Բայրամյանի անունը, ով կահիրեում անհայտ անձից գնել է Վահան Նավասարդյանին ուղղված Ավետիք Իսահակյանի 4 ձեռագիր-նամակները և նվիրել Երևանի Գրականության և արվեստի թանգարանում պահվող Ավ. Իսահակյանի ֆոնդին:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 1959, էջ 10-11:

[1] *1924 թ. Կահիրեում հրատարակվել են Վ. Նավասարդյանի «Հ. Յ. Դաշնակցությեան լիկվիդացիան» և «Հ. Յ. Դաշնակցությեան անելիքը» գրքերը: Սրանցից վերջինն արդեն ուղարկել էր Իսահակյանին (տես 1924, 3 ապրիլի նամակը), հետևաբար այստեղ խոսվում է «Հ. Յ. Դաշնակցությեան լիկվիդացիան» գրքի մասին:*

[2] ***Իչխանյան Բախչի*** *(1879-1921) – հայ հասարակական-քաղաքական գործիչ, տնտեսագետ: 1917 թ. բռնել է խիստ հակախորհրդային դիրք, 1918-1920 թթ. ղեկավարել «Հայաստանի Հանրապետության վիճակագրական բաժնի տնօրենությունը», 1921 թ. անցել Պարսկաստան: Մահացել է Եվրոպա մեկնելու ճանապարհին: Բազմաթիվ մենագրությունների հեղինակ է:*

Այստեղ խոսվում է նրա «Երկու ամիս բոլշևիկյան բանտում» (Կահիրե, 1924) գրքի մասին, որի ընդարձակ նախաբանը գրել է Վահան Նավասարդյանը:

32. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 50)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

33. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
(էջ 51)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԱՑ, 1081:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ավետիսյանը «Սովետական գրականություն», 1971, թ. 1, էջ 140, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 194-195:

[1] *Նամակում հիշատակված են Ավ. Իսահակյանի «Փողի համը» («Հայաստանի կոչնակ», 1924, թ. 41, էջ 1289-1291) և «Վիկինգների կյանքից» («Հայաստանի կոչնակ», 1925, թ. 1, էջ 14-15) պատմվածքները:*

[2] *Անանիկյան Մարտիրոս (1875, Սեբաստիա - 1924, Դամասկոս) – բանասեր, մանկավարժ, Ռամկավար Ազատական կուսակցության հայտի գործիչ: 1897 թվականից հաստատվել է ԱՄՆ-ում, կրթություն ստացել Հարվարդում, ապա Լայպցիգում: 1923 թ. թանկարժեք ձեռագրեր հավաքելու առաքելությամբ Անանիկյանը ԱՄՆ-ից մեկնում է Միջին Արևելք, սակայն գործուղումը ձախողվում է, և 1924 թ. նա հայտնվում է Դամասկոսում, որտեղ և մահանում է սրտի տագնապից: Իր ողջ կյանքում զբաղվել է հին ու նոր կրոնների, տարբեր լեզուների, ազգային հարցերի ուսումնասիրությամբ:*

34. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 52)

[1] *Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:*

Տպագրվում է առաջին անգամ:

Բացիկը Թրիեսթի Միրամար ամրոցի պատկերով է:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

35. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 52)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 879-II:

Տպագրվում է առաջին անգամ:

Այս և նախորդ բացիկները Ավ. Իսահակյանը ուղարկել է որդուն՝ Վիգենին, ով բացիկների հավաքածու ուներ:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի: Իսահակյանը նամակում վրիպել է՝ գրելով 7.X:

[2] Պոստումիան գտնվում է Թրիեսթի մոտ և Հայտնի է «Պոստումիայի ճանապարհ» կոչված քարայրներով: Բացիկը այս քարանձավների պատկերով է:

36. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 52)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] քոթա – արևմտահայերեն՝ չափաբաժին, այստեղ՝ խումբ իմաստով:

[2] Այսպես կոչված «հարսի» գալը վեներտիկ իսկական դվխացավ է դառնում Ավ. Իսահակյանի համար, մանավանդ որ նշանորդի Նիկողայոսը 1924 թ. Լոս-Անջելեսում արդեն ամուսնանում է Շուշիկ անունով մի աղջկա հետ:

37. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ
(էջ 53)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, Աշոտ Հովհաննիսյանի ֆոնդ (այսուհետև՝ ԱՀՑ), թղթ. 244/21, վավ. 61:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 233-234, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 193-194:

Միքայելյան Կարապետ (Կարեն, Կ. Հզորյան, Հզորունի ծածկ. 1883-1941) – հայ արձակագիր, հասարակական գործիչ, թարգմանիչ, ՍՍՀՄ Գրողների միության անդամ: Սովորել է Մոսկվայի համալսարանում, ապա Ենայի համալսարանում: 1910-1912 թթ. աշխատել է Մոսկվայում լույս տեսնող «Գարուն» ամսագրի խմբագրական կազմում, 1920-1923 թթ. Մոսկվայի Ազգությունների ժողկոմի հայկական գործերի կոմիսարիատում, 1925-1927 թթ., որպես Հայաստանի ՀՕԿ-ի և կարմիր խաչի ընկերության ներկայացուցիչ, մեկնել է Եվրոպա և ԱՄՆ: 1937 թ. Մոսկվայում Կարեն Միքայելյանը ձերբակալվել է որպես «Դաշնակցությանը հարող գործիչ», 1941 թ.՝ գնդակահարվել սիբիրյան ճամբարում:

Ավ. Իսահակյանի նամակագրությունը Կ. Միքայելյանի հետ տևել է մոտ 20 տարի՝ 1916-1936 թթ.:

[1] *1924 թ. Վենետիկից Երևան վերադառնալիս Մ. Սարյանը եղել է Բեռլինում, ապա Մոսկվայում, որտեղ հանդիպել է Պ. Մակինցյանի, Կ. Միքայելյանի հետ:*

[2] *Շիրակի ջրանցքը կառուցվում էր 1922-1925 թթ.:*

[3] *1924 թ. Կ. Միքայելյանն աշխատում էր Մոսկվայում, Լազարյան ճեմարանում բացված Հայաստանի կուլտուրայի տանը որպես տեսուչ: Այստեղ նա օգոստոսին հանդիպում է ունենում Վենետիկից Հայաստան վերադարձող Մ. Սարյանի հետ: Վերջինից լսում է նորություններ և տեղեկություններ Ավ. Իսահակյանի մասին: 1924 թ. օգոստոսի 12-ին բանաստեղծին գրած նամակում ունի այսպիսի տողեր. «...եթե արտասահմանը քեզ չի կլանել ամբողջովին, եկ մեր երկիրը, ուրախացրու, շատ բան կգտնես այստեղ...»:*

[4] *Խոսքը XX դարասկզբին գրականության մեջ տարածված գրական ուղղություննների մասին է՝ ակմեիզմ, սիմվոլիզմ, ֆուտուրիզմ:*

[5] *Հետագայում Իսահակյանը վերանայել է իր կարծիքը և ըստ արժանվույն գնահատել մեծ պոետին: Շատ նամակներում խոսել է նրա տաղանդի ու ինքնատիպության մասին:*

38. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ
(էջ 55)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 26-27:

Խաթանասյան Երվանդ (1892, Թամզարա–1980, Բոստոն) – բժիշկ, հասարակական գործիչ, ՀՅԴ երևելի դեմքերից մեկը, փիդայի Աբրոյի քրոջ որդին: Կրթություն է ստացել Պոլսում, ապա գնացել Բեյրութ՝ բժշկություն սովորելու, 1915 թ. միացել է Անդրանիկի բանակին, կռվից հետո վերադարձել Բեյրութ՝ շարունակելու բժշկական կրթությունը, 1920-1940 թթ. բնակվել է Սուդանում, 1941 թ. ընտանիքով հաստատվել Կահիրեում: Կյանքի վերջին շրջանը անցել է ԱՄՆ-ում, 1963-1968 թթ. եղել է Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագիրը, կարդացել դասախոսություններ: Նրա գրքերից հատկապես ուշագրավ են «Հայ յեղափոխական դաշնակցութիւն» (1958), «Հայոց թիւը» (1965) մենագրությունները:

1924 թ. կնոջ հետ Եվրոպա կատարած ճամփորդության ժամանակ Վենետիկում ծանոթացել է Ավ. Իսահակյանի հետ, որից հետո նրանց միջև հաստատվել է նամակագրական կապ (1924-1926):

[1] Լյուսի Սևումյանը (1892-1968) արտագնա համերգներով ուղևորվել է Վենետիկ և ցնցել տեղի երաժշտասեր հանդիսականին, արժանացել երաժշտական քննադատների բարձր գնահատանքին: Ջայնը մշակելու նպատակով 1922 թվականից նա ապրում էր Միլանում:

[2] Ուշագրավ են եղել հատկապես սոպրանո-երգչուհի Լ. Սևումյանի արիանները Ջ. Պուչչինիի «Ջիո չիո սան» և «Բոհեմա» օպերաններում:

[3] Նամակին կից ուղարկված գրքերի ցուցակը չի պահպանվել:

39. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
(էջ 57)

Ինքնագիրը պահվում է ՄՍԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 195-197, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 195-196:

[1] *Ինչպես պարզվում է հաջորդ նամակից, Մ. Սարյանը Վենետիկից Երևան վերադառնալիս դրամ է կորցրել ճանապարհին:*

[2] *Նկատի ունի Մարտիրոս Սարյանի լուսանկարները, որի մասին 1924 թ. սեպտեմբերի 2-ի իր նամակում գրել էր նկարիչը. «...խնդրում եմ վերցնես իմ պատկերների լուսանկարները՝ ամեն մեկից երկու կամ ավել օրինակ...»:*

[3] *Խոսքը ֆուտուրիստ նկարիչ Ջուզեպպե Սպրովիերիի (1890-1988) «Հայ նկարիչ Մարտիրոս Սարյանը» հոդվածի մասին է, որ տպագրվել էր Նեապոլում հրատարակվող «Իլ Մոնդո» թերթում, 1924 թ., 24 օգոստոս:*

[4] *Իսահակյանը նկատի ունի Մ. Սարյանի մասին գրած իր հոդվածը (Բոստոն, «Հայրենիք» թերթ, 1924, 5 օգոստոս):*

[5] *Խոսքը Աշոտ Հովհաննիսյանի մասին է, որին ողջույն էր ուղարկել նախորդ նամակով: Աշոտ Հովհաննիսյանը 1921-1927 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարը և դասախոսել է Երևանի պետական համալսարանում:*

[6] *«Նոր ակոս»ը 1924 թ. հունիսից մինչև 1925 թ. մայիսը Երևանում հրատարակված գրական-գեղարվեստական չաբաթաթերթ է, որի խմբագիրն էր Եղիա Ջուբարը:*

[7] *Ստ. Զորյանի «Սկսնակ հանցավորները» («Նոր ակոս», 1924, թ. 9, էջ 158-161) հոդվածը Երևանում ապաստան գտած մեծաքանակ հայ որբերի ու նրանց ճակատագրի մասին էր:*

[8] *Վ. Թոթովենցի «Սեղբոս» պատմվածքը տպագրվել է «Նոր ակոս», 1924, թ. 9, էջ 163-167:*

[9] ***Աբելյան Պողոս*** *(1877-1943) – հայ ազգային-ազատագրական չարժման գործիչ, մասնագիտությամբ տնտեսագետ, գրող, թարգմանիչ: 1921 թ. Հայհեղկոմի հրավերով հաստատվել է Երևանում, որտեղ 1921-1930 թթ. միչտ պատասխանատու պաչտոններ է վարել: Պողոս Աբելյանը հաճախ էր մամուլում երևում գյուղին, սոցիալիզմի տնտեսական քաղաքականությանը վերաբերող հոդվածներով:*

[10] ***Բեկզադյան Ալեքսանդր*** *(1881, Շուչի - 1938, Մոսկվա) – 1903 թ. ՌՍԴԲԿ անդամ, հեղափոխական, իրավաբան, պետական գործիչ, 1920-1926 թթ. Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար, 1926-1930 թթ. Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահի*

տեղակալ, 1930-1937 թթ. ԽՍՀՄ դեսպան Նորվեգիայում, ապա Հունգարիայում: 1938 թ. նա հայրենիքում ձերբակալվում է և գնդակահարվում՝ դառնալով ստալինյան բռնությունների զոհերից մեկը:

*[11] **Փիրումյան Սիմոն** (Սիմոնիկ. 1888, Ղարաբաղ - 1937, Երևան) – կովկասահայ պետական-հասարակական գործիչ, լրագրող: 1925 թ. Անդրկովկասյան հանրապետությունների և Հայաստանի Հանրապետության առևտրական ներկայացուցիչն էր Փարիզում, Նանսենի հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունը ներկայացրել է Ազգերի լիգայում:*

[12] 1924 թ. օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 5-ը Վրաստանում տեղի ունեցավ մենշևիկյան զինված ապստամբություն, որի պատճառով զոհվեց մոտ 3500 մարդ, մահապատժի ենթարկվեց 12000 մարդ:

[13] Նկատի ունի եղբոր տղայի՝ Նիկողայոսի նշանածին՝ Լուսիկին, որը պատրաստվում էր Ամերիկա գնալ:

40. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 59)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 27-28:

Կրճատումներով արտատպվել է նաև ԱԻՆ 2016, էջ 197:

*[1] **Մետալնիկով Սերգեյ** (1870-1946) – ռուս կենդանաբան, կենսաբանության փիլիսոփա: Զբաղվել է իմունային և նյարդային համակարգերի ուսումնասիրությամբ: 1919 թ. տարագրվել է Ռուսաստանից և աշխատել Ֆրանսիայում: 1924 թ. Բեռլինում տպագրվել է Մետալնիկովի «Անմահության և երիտասարդացման պրոբլեմը ժամանակակից բիոլոգիայում» գիրքը, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել մտավորականների շրջանում: Հնարավոր է, որ այս գիրքն է հասել բանաստեղծին:*

41. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 60)

Ինքնագիրը պահվում ՄՍԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 197-198, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 198:

[1] *Խոսքը քանդակագործ Անդրեաս Տեր-Մարուքյանի Փարիզում կերտած Խ. Աբովյանի արձանի մասին է, որը մեծ դժվարությամբ է հասել Երևան և այժմ դրված է Խ.Աբովյանի տուն-թանգարանի բակում: Դարասկզբի հայ մտավորականության պատվիրած արձանը չի հասել հայրենիք, քանի որ հանգանակած գումարը չի բավարարել ձուլող գործարանին վճարելու համար: Սովետական Հայաստանը տարիներ անց Փարիզ է ուղարկում անհրաժեշտ գումարը, որի շնորհիվ արձանը 1925 թ. սկզբին հասնում է Հայաստան: (Տես Ա.Պատմագրյան «Մի արձանի ոդիսականը», «Սովետական արվեստ», 1967, թ. 7, էջ 35-39):*

[2] *Նկատի ունի տնտեսագետ Պողոս Աբելյանին, ում նմանացրել էր Վ. Թոթովենցի «Սեղբոս» պատմվածքի հերոսին:*

42. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

(էջ 61)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 53-54 (նամակն անթվակիր է):

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 1, էջ 29-30:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] ***Դավիթ Տեր-Դանիելյան** (Անանուն, 1879, Մարտակերտ - 1942, Ասպարխան) — պատմաբան, հասարակական գործիչ, հրապարակախոս: 1920-1926 թթ. նա եղել է Երևանի Հեղափոխության թանգարանի տնօրենը, 1927 թվականից ենթարկվել է քաղաքական հետապնդումների՝ հակասովետական քարոզչություն իրականացնելու մեղադրանքով: Մինչև կյանքի վերջը՝ 1942 թ., եղել է Ռուսաստանի տարբեր աքսորավայրերում:*

Նամակում խոսվում է Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» եռահատոր աշխատության տպագրության մասին:

[3] *Իսահակյանը օգոստոսի 24-ի նամակում «Հուդիթ»ի հեղինակին նշում է ծածկանունով՝ Փոյուգյան Սրինգ, այստեղ՝ Աճեմյան: Խոսքը վերաբերում է հայտնի մանրանկարիչ Հարութիւն Աճեմյանին (1904, Բուրսա - 1963, Նյու Յորք), որն ավելի հայտնի է Արիել ծածկանունով: Նա 8 տարեկանից կրթութիւն էր ստացել Վենետիկի Մխիթարյան միաբանութիւնում, 1919-1923 թթ. սովորել է Մուրատ-Ռափայելյան վարժարանում, 1923-1926 թթ.՝ Վենետիկի Գեղարվեստի Ակադեմիայում, 1926-1931 թթ. ստեղծագործել և դասավանդել է Վենետիկում, Միլանում, 1931-1938 թթ. ապրել և ցուցադրվել է փարիզյան տարբեր ցուցահանդեսներում, 1938 թվականից ապրել է Նյու Յորքում:*

[4] *«Հուդիթ»ը տպագրվել է «Հայրենիք»ի նոյեմբերյան համարում:*

[5] *Ավ. Իսահակյանի «Առարկան ինքնին» պատմվածքը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1924, թ. 2 (դեկտեմբեր), էջ 1-3:*

43. ԱՐՄԱՆ ՍԱՐԳԱՆԻՆ

(էջ 63)

Ինքնագրի լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ԱԻՅ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Հռոմի ռազմական դատարանից՝ քրեական սերտիֆիկատ (իտալերեն):*

44. ՎԵՐԺԻՆԵ ԵՎ ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ

(էջ 63)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 28-29:

Կրճատումներով արտատպվել է նաև ԱԻՆ 2016, էջ 199-200:

[1] ***Ալֆրեդ Բինե*** *(1857-1911) – ֆրանսացի հոգեբան, հոգեբույժ, հոգեվերլուծաբան, ինտելեկտուալ դպրոցի հիմնադիր: Նա է դի-*

տուբյան մեջ մտցրել «ինտելեկտուալ գործակից» (IQ), «մտավոր տարիք», «դժվար երեխա» տերմինները: Մասնագիտական գրքերից մեկն է «Հոգին և մարմինը» աշխատությունը:

[2] *Խոսքը փիլիփոփա Ջորջ Բոհնի (1868-1948)* «La Naissance de l'Intelligence» *(Փարիզ, 1909) գրքի մասին է:*

[3] ***Էմիլ Պիկառ** (1856-1941) – ֆրանսացի հայտնի մաթեմատիկոս, որը զբաղվել է մաթանալիզով, աստղագիտության մեջ հավանականությունների տեսության կիրառությամբ, մաթեմատիկայի պատմությամբ ու փիլիսոփայությամբ: 1943 թ. նրա այրին Էմիլ Պիկառի անունով ֆոնդ է բացել, որը վեց տարին մեկ մրցանակ է շնորհում հայտնի գիտնականներին՝ մաթեմատիկական ձեռքբերումների համար:*

Պիկառի գրքերից մեկը «La science Moderne et son etat actuel» *վերնագրով (Փարիզ, 1905) հետաքրքրել է Ավ. Իսահակյանին:*

[4] ***Ֆելիքս լը Դանտեկ** (1869-1917) – ֆրանսացի հայտնի կենսաբան (վիրուսաբան), փիլիսոփա: Ունի մի շարք մենագրություններ, որոնցից մեկի մասին խոսվում է նամակում* («L'atheisme», 1906):

[5] ***Ռիխարդ Գոլդշմիդտ** (1878-1958) – գերմանացի կենսաբան, որ 1936 թվականից ապրել է Ամերիկայում: Նորարար էր գենետիկայի բնագավառում:*

[6] ***Շառլ Դեպերե** (1854-1929) – երկրաբան, հնէաբան, Ֆրանսիայի Գիտությունների ակադեմիայի անդամ: Նամակում խոսվում է 1909 թ. հրատարակված նրա* «Les transformations du monde animal» *գրքի մասին:*

[7] *Նկատի ունի Լուսիկին՝ Կոլյա Իսահակյանի նշանածին, որ պատրաստվում էր Ամերիկա գնալ:*

[8] *Նկատի ունի բանաստեղծ Մինասյան Լյուդվիգին (Լյութվի կեղծանունով):*

45. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 65)

Ինքնագիրը պահվում է Վենետիկում, ինքնագրի լուսապատճենը՝ ԳԱԹ, Ա.Ի.Ֆ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Խոսքը վերաբերում է Կ. Զարյանի նշյալ՝ Լևոն Եղիազարյանի անցագրին, որի մասին խոսվում է նաև հաջորդ նամակում:*

46. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 66)

Ինքնագիրը պահվում է Վենետիկ, Մխիթարյան Միաբանության ձեռագրատուն, պատճենը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

47. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 68)

Ինքնագիրը պահվում է Վենետիկում, ինքնագրի պատճենը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

48. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 71)

Ինքնագիրը պահվում է ՄՄԸԱ:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Արամ Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 174, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 198-200 և ԱԻՆ 2016, էջ 201-203:

[1] *Շիրակի ոռոգման ջրանցքի շինարարությունը տևել է 1922-1925 թթ.: Այս կարևոր շինարարությունը գլխավորել է հայ ինժեներ-շինարար Հովսեփ Տեր-Աստվածատրյանը (1886, Շուշի - 1938, Երևան): Ջրանցքի նախագծման ու կառուցման աշխատանքներին մասնակցել է նաև ժամանակի հայտնի կառուցողների ինժեներ Նատալյա Մարտիրոսյանը (1889-1960):*

[2] *Գրող Վահան Թոթովենցը 1924 թ. անգլերեն էր դասավանդում Երևանի Պետական համալսարանում, նրա ուսանողներից էր Աբաս Իսահակյանը:*

[3] ***Վուդրո Վիլսոն*** *(1856-1924) – ամերիկացի քաղաքական գործիչ, ԱՄՆ 28-րդ նախագահ (1913-1921), պատմաբան, հայամետ գործիչ:*

[4] ***Ջեյմս Մակդոնալդ*** *(1866-1937) – անգլիացի պետական գործիչ, 1924 թ.՝ Լեյբորիստական կուսակցության առաջնորդ:*

[5] *Հավանաբար նկատի ունի չոտլանդացի մեծահարուստ գործարար, պալատական ընտանիքի ոսկերիչ Ջորջ Հերիոյին (1563-1624), որը պատմության մեջ մնացել է իր մարդասիրական հայացքներով և որի միջոցներով Էդինբուրգ քաղաքում հիմնադրվել է Heriot-Watt հիվանդանոցը և դպրոցը (հետագայում՝ պետական հետազոտական համալսարան): Ուսումնական այս հեղինակավոր հաստատությունն առայսօր ֆինանսավորվում է Ջորջ Հերիոյի հավատարմագրային ֆոնդից:*

[6] *Ստեփան Զորյանի պատմվածքների «Յանկապատ» ժողովածուն առաջին անգամ հրատարակվել է 1924 թ.:*

[7] *Վահան Թոթովենցի «Սեղբոսը» պատմվածքը «Նոր ակոս» չաբաթաթերթում տպագրվելուց հետո տպվել է նաև առանձին գրքույկով:*

[8] *Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» ստեղծագործությունը առանձին հրատարակությամբ լույս է տեսել 1924 թ.:*

[9] *Ստեփան Զորյանի պատմվածքների առաջին ժողովածուն «Տխուր մարդիկ» վերնագրով տպագրվել է Թիֆլիսում 1918 թ.:*

[10] *«Կարմիր արև» – 1920-1930-ական թթ. հայ դպրոցներում գործող մայրենի լեզվի դասագիրքը, որ կազմվել էր Դուրգարյանի և Սուրխաթյանի աշխատասիրությամբ: Դասագրքում ընդգրկված էին Իսահակյանի մի շարք բանաստեղծություններ և հատված «Սասմա Մհեր» վիպերգից:*

[11] *պիտտորեսկ (լատիներեն Pictor գեղանկարիչ բառից) – գեղանկարչությամբ արտահայտված կերպար:*

[12] *Պ. Կոնչալովսկի (1876-1956) – ռուս նշանավոր գեղանկարիչ, վենետիկյան XIV միջազգային ցուցահանդեսի մասնակից:*

[13] **Բ. Տերնովեց** *(1884-1938) – արվեստաբան, կերպարվեստի Վենետիկի XIV յուցահանդեսում սովետական արվեստի բաժնի կազմակերպիչ:*

[14] *Հավանաբար խոսքը վերաբերում է Բենիկ վարդապետին (Տեր-Դանիելյան, 1864-1952), ով որոշ խավերի կողմից չատ ընդունված հոգևոր դործիչ էր, Հայ Առաքելական եկեղեցու օծյալ վարդապետ: Սովետական կարգերի հաստատումից հետո նա հրաժարվել է հոգևոր կոչումից, կարգալույծ եղել, բայց 1945 թ. դիմել է կաթողիկոս Գևորգ Ջ. Ջորեքչյանին՝ վերականդնվելու խնդրանքով և մերժվել: 1920-ական թթ. դրել է բանավիճային բնույթի հոդվածներ հայ եկեղեցու, էջմիածնի հոգևոր առաջնորդների դեմ, բայց ոչ քրիստոնեական հավատքի: Հնարավոր է, որ նամակում հիշատակվում է 1924 թ. մեծ աղմուկ հանած նրա «Կուսակրոնությունը անառակություն է» հոդվածը:*

49. ՎԱՎԱ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ
(էջ 74)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍԽՖ, 465:

Առաջին անդամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 206-207:

[1] ***Մարգարիտ Մոչելես*** *(1861-1924) – անդլիացի գեղանկարիչ, Զապել Պոյաճյանի ընկերուհիներից: Նա Իսահակյանի հետ ծանոթացել է Վենետիկում՝ Զ. Պոյաճյանի և այլ նկարիչների հետ համատեղ հավաքներում: Մոչելեսը չատ է սիրել ստեղծագործել Վենետիկում: Նրա մահից հետո Լոնդոնում 1925 թ. ցուցահանդես է բացվել, ուր ներկայացվել են 1893-1924 թթ. Վենետիկում արված նկարչուհու պեյզաժային գեղանկարները: Նկարչուհու ամուսինը կոմպոզիտոր Ֆելիքս Մենդելսոնի թոռն էր՝ Լոնդոնում հայտնի նկարիչ Ֆելիքս Մոչելեսը (1843-1917), ով աչխարհին հայտնի է իր խաղաղասիրական և ինտերնացիոնալիստական հայացքներով: Մ. Մոչելեսը իր մոտ պահում էր փոքրադիր մի ալբոմ՝ հայտնի մարդկանց ձեռագրերով ու ավտոդրաֆներով լի: Այս մասին հիչատակում է Ավ. Իսահակյանը տարիներ անց՝ 1946 թ. Պոյաճյանին դրած իր նամակում:*

[2] *Զապել Պոյաճյան (1872-1957) – անգլիագիր հայ գրող, թարգմանիչ, նկարիչ, Լոնդոնում ապրող Րաֆֆու ընտանիքի հետ չատ մտերիմ հայ մտավորական:*

[3] *Կրկին և կրկին, կես-կատակ, կես-լուրջ արտացոլվում է Ավ. Իսահակյանի անթաքույց համակրանքը և թաքնված զգացմունքը Վավայի հանդեպ:*

[4] *Խոսքը վերաբերում է Վավայի եղբորը՝ Կարո Սարյանին, ով սովորում էր Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում՝ Վիգեն Իսահակյանի հետ նույն դասարանում:*

[5] *Նկատի ունի նկարչուհի տիկին Մարգարիտ Մոշելեսին:*

50. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 75)

Ինքնագիրը պահվում է Վենետիկում, ինքնագրի պատճենը՝ ԳԱԹ, Ա.Ի.Ֆ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

51. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

(էջ 75)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 49-50:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 1, էջ 27-28:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության («Ուստա Կարո» վեպի երկրորդ և երրորդ գլուխները տպվել են «Հայրենիքի» 1925 թ. հունվար-փետրվար ամիսներին):*

[2] *Նկատի ունի Տեստեկյուլ Նշանի «Գրելու արվեստը (Գրագիտություն և գրականություն)» գիրքը՝ տպագրված Բոստոն, «Հայրենիք» տպարան, 1924:*

[3] *Հ. Արսեն վրդ. Ղազիկյան (1870-1932) – Վենետիկի Ս. Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հայրերից, ականավոր բանասեր, թարգմանիչ:*

Նամակում խոսվում է Ավետիք Իսահակյանի «Հ. Արսեն Վ. Ղազիկյան (Նրա գրական 30-ամյա տարեդարձի առթիվ)» հոդվածի մասին, որ տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1925, թ. 4, էջ 51-56:

52. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

(էջ 76)

Արտատպվում է Սիմոն Վրացյան «Հին թղթեր նոր պատմութեան համար», Բեյրութ, 1962 (այսուհետև՝ ՍՎՀԹ 1962), էջ 362:

Տպագրվել է նաև «Գրքերի աշխարհ», Երևան, 1991, մարտի 31, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 204-205:

***Սիմոն Վրացյան** (1882-1969) – ՀՅԴ գործիչ, 1907 թվականից՝ Բյուրոյի անդամ, Հայաստանի Հանրապետության չորրորդ վարչապետ, 1921 թվականից՝ վտարանդի, 1952-1969 թթ. Բեյրութի Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարանի տնօրեն:*

1924 թ. ապրում էր Փարիզում և խմբագրում «Դրօշակ» թերթը:

[1] *Հայ Հեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթը՝ «Դրօշակ»ը, որը 1893-1914 թթ. լույս էր տեսել ժնևում, որոշ ժամանակ դադարից հետո՝ վերահրատարակվել է Փարիզում՝ Սիմոն Վրացյանի խմբագրությամբ: Հրատարակչական աշխատանքների վերսկսումը 1924 թ. վերջերին նշվել է որպես հորելյանական գրահանդես: 1925-1933 թթ.՝ Փարիզում հրատարակության տարիներին, թերթի խմբագիրներն են եղել Ս. Վրացյանը և Ա. Ջամալյանը: Վերածնված թերթին Ավ. Իսահակյանը չթղթակցեց, քանի որ արդեն հաստատ որոշել էր Հայրենիք վերադառնալ:*

[2] *«Ավետիքը և ես երկար տարիներ եղել ենք գաղափարի և անձնական ընկերներ: Ապրել ենք սիրտ-սրտի, մտածել ու երազել, ուրախացել ու տխրել ենք միասին, ոգևորվել ու պայքարել ենք միևնույն իդեալների համար...», – այսպես է հիշում Ս. Վրացյանը իրենց անցյալը «Հին թղթեր նոր պատմության համար» գրքում (էջ 335):*

[3] Նկատի ունի փարիզաբնակ մեծահարուստ Աբրահամ Ղուկասյանին: (Տես 20-րդ նամակի 4-րդ ծանոթագրությունը):

53. ԱՐՄԱՆ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 79)

Ինքնագիրը պահվում է Վենետիկ, Մխիթարյան միաբանության ձեռագրատուն, ինքնագրի պատճենը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

54. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 79)

Ինքնագիրը պահվում է ՄՄԸԱ:

Նամակն առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 208-209:

[1] *Սիմոն Փիրումյանը այդ ժամանակ Ֆրանսիայում Սովետական Միության դիվանագիտական ներկայացուցչի խորհրդականն էր:*

[2] ***Լունաչարսկի Անատոլի*** *(1875-1933) – գրող, արվեստաբան, խորհրդային պետական գործիչ, 1917-1929 թթ. Ռուսաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսար:*

[3] *Խաչատուր Աբովյանի արձանը պահվում էր այն գործարանում, որտեղ ձուլվել-պատրաստվել էր: Տարիներ անց գործարանատերը սկսեց սպառնալ Հայաստանին, որ հնոցը կձգի, կփշրի բրոնզե արձանը, եթե Հայաստանը իր պարտքը լիովին չվճարի: (Տես 41-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը):*

[4] ***Արամայիս Երզնկյան*** *(1879-1937) – հեղափոխական, կուսակցական և պետական գործիչ: 1922 թվականից անընդմեջ ընտրվել է Հայաստանի և Անդրկովկասի կուսակցական և ղեկավար մարմիններում: 1925 թ. նա Փարիզ էր եկել այն առաքելությամբ, որ համայն հայությանը մոբիլիզացներ՝ ֆինանսապես օգնելու և աջակցելու նորաթուխ պետությանը՝ Սովետական Հայաստանին:*

[5] *Խոսքը ծագումով գերմանացի անգլիական նկարիչ Ջորջ Ջաուբերի (ընանկարիչ, դիմանկարիչ, լիտոգրաֆիստ, 1866-1937) մասին է, որը ստեղծագործել է և՛ Անգլիայում, և՛ Գերմանիայում: 1922-1924 թթ. նա անվանի դիտնականների մոտ 30 դիմանկար է նվիրել Ենայի համալսարանին, որի համար 1936 թ. նրան տվել են Ենայի պատվավոր քաղաքացու կոչում: 1930 թվականից նկարիչն ապրել է Հռոմում:*

[6] *Ջորջ Ջաուբերը 1894 թ. Անգլիայում ամուսնացել է հայտնի գրող, «Ծորսայթների պատմությունը» վեպի հեղինակ Ջ. Գոլսուորդիի քրոջ՝ Լիլիան Գորսուորդիի (1864-1924) հետ: Նրանք ունեցել են մեկ զավակ՝ Ռուդոլֆ Ջաուբեր (1895-1971), որը նույնպես նկարիչ դարձավ, դիմանկարների ու դրքերի պատկերազարդումների հեղինակ:*

[7] ***Կրասին Լեոնիդ*** *(1870-1926) – ռուս հեղափոխական, խորհրդային պետական և կուսակցական գործիչ, 1924-1926 թթ. ՍՍՀՄ Պաշտպանության խորհրդի անդամ:*

[8] *Ալեքսանդր Բեկզադյանը 1922-1926 թթ. աշխատում էր Գերմանիայում, Սովետական Միության առևտրական ներկայացուցչությունում:*

55. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ

(էջ 81)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋՑ, 2766-Ի:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թիվ 2, էջ 167-168, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 200-201:

[1] *1925 թ. հունվարին Փարիզում նշվել է Ա. Ջոպանյանի գրական գործունեության 35-ամյա հոբելյանը, որը նախաձեռնել է դրող Ալեքսանդր Շիրվանզադեն: Ա. Ջոպանյանը հրավիրել է Իսահակյանին՝ ներկա լինելու այդ հանդիսությանը: Հայ մտավորականները Ջոպանյանի հոբելյանը նշել են սփյուռքի զանազան քաղաքներում ու գաղութներում:*

56. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՑԱՆԻՆ
(էջ 83)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 119-120:

[1] Մարտիրոս Սարյանը Վենետիկում եղել է 1924 թ. մարտի 31-ից մինչև ամառվա վերջ:

[2] Այդ ատելության պատճառը դաշնակցականների փետրվարյան հեղափոխությունը ճնշելուց հետո 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի միջև կնքված բարեկամության պայմանագիրն էր, ըստ որի Հայաստանը բաժանվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև:

[3] Վարդգես Ահարոնյանի կինը՝ Արմենուհի Տիգրանյանը բանաստեղծություններով հանդես էր գալիս «Հայրենիք» ամսագրի համարյա բոլոր համարներում:

57. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ
(էջ 85)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋՖ, 2767-1:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թ. 2, էջ 168-169, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 201-203:

[1] Հայտնի բանասեր Արսեն Ղազիկյանի գրական գործունեության 30-ամյա հոբելյանը նշվել է Վենետիկում 1925 թ. գարնանը: Ավ. Իսահակյանը գրել է նրան նվիրված «Հայր Արսեն վ. Ղազիկյան» հոդվածը («Հայրենիք», 1925, թ. 4, էջ 51-56):

[2] Նկատի ունի Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) նախագահ Ա. Երգնկյանի տարածած կոչը, որով խնդրում էր համայն հայությանը ֆինանսապես օգնել և աջակցել նորաստեղծ Հայրենիքի վերակառուցման և զարգացման գործին:

58. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ
(էջ 88)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 59-60:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 1, էջ 30:

[1] «Ուստա Կարո և Օրթն Հարութ» հատվածը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1925, 7 համարներում (թիվ 3, 4, 5, 6, 9, 10 և 11):

[2] Այս նամակը պահպանվում է Գրականության և արվեստի թանգարանում, Համաստեղի ֆոնդում:

[3] Ջապել Պոյաճյանը մի քանի լեզու գիտեր, այդ թվում նաև էսպերանտո: «Արու-Լալա Մահարի» պոեմից մի հատված նա թարգմանել է այդ լեզվով և հրապարակել «Սեննասիսթա ռևվնա» ամսագրում (1926, թ. 12(36), էջ 224-225): «Արու-Լալա Մահարի» պոեմի նրա անգլերեն լեզվով թարգմանությունը հրատարակվել է 1948 թվականին:

[4] Ռուբեն Դարբինյանը նամակի այս հատվածը՝ հասցեն, չի հրապարակել:

*[5] **Սարգսյան Արմենակ** (Սարմեն. 1901, Վան - 1984, Երևան) – սովետահայ բանաստեղծ:*

Սարմենի «Ավետիք Իսահակյանին» բանաստեղծությունը տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1925, թ. 5, էջ 24:

59. ՀԱՄԱՍՏԵՂԻՆ
(էջ 89)

Ինքնագիրը պահվում է ԴԱԹ, Համաստեղի ֆոնդ, 555:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 203-205:

Համաստեղ (Կելենյան Համբարձում, 1895-1966) – հայ արձակագիր, դաշնակցական գործիչ:

[1] Համաստեղի «Գյուղը» պատմվածքների ժողովածուն տպագրվել է 1924 թ. Բոստոնում:

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Սհմ, 465:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 211-212:

[1] *Կարապետ Սարյանը նկարչուհի Վավայի կրտսեր եղբայրն էր, որ սովորում էր Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցում:*

[2] *Մադրիդի Պրադո թանգարանը աշխարհի ամենահարուստ արվեստի թանգարաններից մեկն է, որն ունի ավելի քան 5000 գեղանկար, 2000 գրաֆիկական աշխատանքներ, 700 քանդակ և այլ ցուցանմուշներ: Թանգարանի ֆոնդի հիմքում Իսպանիայի թագավորների հավաքածուներն են, որոնք հետագայում համալրվել են նկեղեցիների հավաքածուներով ու նվիրաբերումներով:*

[3] *Անդալուզիա – ինքնավար համայնք՝ հիմնադրված 1007 թ., որի մեջ մտնում են 8 պրովինցիա (Կորդովա, Գրանադա, Սևիլիա, Մալագա և այլն), մայրաքաղաքն է Սևիլիան: Անդալուզիան գտնվում է երկրի հարավում, Ատլանտյան օվկիանոսի և Ջիբրալթար նեղուցի մոտ:*

[4] *Ալ-Համբրա – մուրիչների պալատն է ու միջնաբերդը, գտնվում է Գրանադայում, իսլամական պատմական ժառանգության հայտնի կառույցներից է՝ իր մշակութային և տեսարժան բազմաթիվ վայրերով:*

[5] *Գրանադա – քաղաք հարավային Իսպանիայում, Միջերկրական ծովի ափից 1 ժամ հեռավորության վրա, 2 գետերի միախառնման վայրում: Քաղաքը ունի մեծ համալսարան, զբոսաշրջային հիմնական կենտրոն է, ունի գյուղատնտեսական արդյունաբերություն. նուռը պատկերված է Գրանադայի զինանշանի վրա: 1492 թ. Իսպանիան միավորվել է Գրանադայի էմիրության հետ:*

[6] *Կորդովա – քաղաք Իսպանիայի հարավում, Անդալուզիայի մարզում, ունի Կորդովայի խալիֆայության շրջանի բազմաթիվ հուշարձաններ, հին կամուրջներ, աշտարակներ, մզկիթ, 15-րդ դարի 11 ջրաղաց:*

[7] *Հովհաննես խան Մասեհյանը դիվանագիտական աշխատանքի բերումով ապրում էր Լոնդոնում, աշխատում էր Պարսկաստանի դեսպանատանը:*

[5] Զապել Պոյաճյանը և նկարչուհի Մարգարիտ Մոշելեսը ապրում էին Լոնդոնում, ուր չրջագայության էին գնացել խաչատուրյան ամուսինները: Ավ. Իսահակյանը դեռ չգիտեր, որ Մոշելեսը մահացել էր օրեր առաջ:

[9] Հավանաբար խոսքը վերաբերում է ռուսական և հայկական բանակի ռազմական-պետական գործիչ գեներալ-մայոր Հակոբ Բագրատունուն (1879, Ախալցխա-1943, Լոնդոն): Նրան 1920 թ. նշանակել են Հայաստանի դեսպան Մեծ Բրիտանիայում, որտեղ ապրել է մինչև կյանքի վերջը:

61. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

(էջ 94)

Ինքնագիրը պահվում է ԵՔԹ, 3100-1972-423:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1967, թ. 4, էջ 139-140, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 213-214:

[1] **Կարապետյան Հովհաննես** (Օհան Կարո, Մուսասիր ծածկ., 1890-1933 Փարիզ) – փարիզաբնակ հայ գրող:

[2] **Ժենի** – տաղանդ, հանճար (ֆրանսերեն):

[3] Երվանդ Քոչարը 1925 թ. հունվարին ամուսնացել էր Վարդենիի հետ, որը Պոլսի հայ հարուստ ընտանիքներից մեկի աղջիկն էր, բանաստեղծուհի:

[4] picola cosa nera – մի փոքրիկ սևուկ (իտալերեն):

[5] Նկատի ունի Ամերիկա դնացող հայ գաղթականների խումբը:

[6] Ընդգծումը հեղինակինն է՝ Ավ. Իսահակյանինը:

62. ՀԱՑ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՑԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

(էջ 95)

Ինքնագիրը պահվում է Բոստոն, ՀՅԴ արխիվ, 122-10, լուսապատճենը պահվում է ԳԱԹ, ՀՅԴ ֆոնդ, անմշակ:

1925 թ. փետրվարին Վ. Նավասարդյանը գտնվել է Վենետիկում, հյուրընկալվել Իսահակյանի տանը: Դաշնակցական երկու գործիչներ համատեղ կազմել են այս հարցուպատասխան- վկայագիրը: Այն իրականում Ավ. Իսահակյանի և Վ. Նավասարդյանի միջև տեղի ունեցած գրավոր խոսակցություն է, հաշվետվության պես մի բան, ինչպես բացատրվում է նամակի սկզբում: Ավ. Իսահակյանի ձեռագրով գրված են միայն իր պատասխանները, իսկ հարցերը գրված են Վ. Նավասարդյանի ձեռքով:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Արմեն Գարոն ՀՅԴ գործիչներից մեկն էր, «Նեմեսիս» գործողության ղեկավարներից:*

[2] *Ակնարկվում է Թալեաթ փաշայի սպանությունը:*

[3] *Խոսքը ՀՅԴ հայտնի գործիչ Արշակ Վռամյանի (Օնիկ Դերճակյանի) մասին է, որը հայտնի էր Վահագ, Վարազ և այլ հեղափոխական ծածկանուններով:*

[4] *Եփրեմ խան Դավթյան (1868-1912) – հայ ազգային-ազատագրական շարժման մասնակից, ՀՅԴ անդամ, ֆիդայի, տաղանդավոր զորավար, Պարսկական 1905-1912 թթ. հակաշահական հեղափոխության ղեկավարներից: Զոհվել է մարտերից մեկի ժամանակ, քրդերի գնդակոծությունից:*

[5] *Հավանաբար խոսքը վերաբերվում է Թիֆլիսում ամենաազդեցիկ և հարուստ մարդկանցից մեկին՝ Ալեքսանդր Մելիք-Ազարյանցին, որը սովետականացումից հետո ապահովության համար իր ընտանիքին ուղարկել էր Փարիզ, իսկ ինքը մնացել Թիֆլիսում՝ իր եկամտաբեր տուն-կառույցը վաճառելու մտադրությամբ: Գործարքը չի իրագործվել քաղաքական իրավիճակների արդյունքում: Նրա ողջ հարստությունը ազգայնացվել է: Ալեքսանդր Մելիք-Ազարյանցը մահացել է Թիֆլիսում, 1923 թ., թշվառության մեջ:*

63. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

(էջ 97)

Արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 60-63:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 9-10:

*[1] **Մկրտիչ Պարսամյան** (1886-1965) – հայ արձակագիր, մանկավարժ, խմբագիր: 1922 թվականից ապրել է Փարիզում, որտեղ եղբոր՝ գրող Մերուժան Պարսամյանի հետ խմբագրել է «Կեանք և արուեստ» (1931-1940 թթ.) պարբերականը:*

[2] Խոսքը վերաբերում է Մկրտիչ Պարսամյանի «Հայրենիք» ամսագիրը. (Բ. տարի, թիվ 1-12)» հոդվածին, որը հատվածաբար տպագրվել է Բոստոնի «Հայրենիք» թերթի 7 համարներում (1925 թ. 27 հունվար-3 փետրվար):

[3] Գերմանացի բանաստեղծ Գյոթեի բանաստեղծություններից մեկն է՝ «Ճամփորդի գիշերային երգը» (1870 թ.):

[4] «Լիլիթ» հրեական առասպելի մասին Մ. Պարսամյանը հունվարի 28-ի համարում գրել էր, որ «անյայտ մէկ նմանութիւնը ըլլալ կը թուի Ռուս գրագէտ Ալեքսանդր Կուպրինի Սուլամիթին...»:

*[5] **Կուպրին Ալեքսանդր** (1870-1938) – ռուս գրող: Հեղափոխությունից հետո 1920 թ. անցել է Ֆինլանդիա, ապա Փարիզ, ուր ապրել է մինչև 1937 թ.: «Սուլամիթ» վեպը գրել է 1908 թ.:*

[6] Լիլիթի անունը հիշատակվել է Աստվածաշնչի պարականոն պատմություններից մեկում: Թալմուդում հրեական առասպելաբանության մեջ, այն դևի կերպար է, Ադամի առաջին կինը:

[7] Մ. Պարսամյանը «Մելքոն վարժապետը» պատմվածքի մասին գրել էր՝ «գիւղերու յատուկ դէմք մըն է վարժապետը, Թլկատինցիին սիրած թիփն է...» («Հայրենիք» թերթ, 1925, 29 հունվար):

*[8] **Թլկատինցի** (Հովհաննես Հարությունյան, 1860, Թլկատին գյուղ- 1915 Եղեռնի զոհ) – 1887 թ. հիմնադրել է Խարբերդի Ազգային կեդրոնական վարժարանը և մինչև կյանքի վերջը եղել է նրա տնօրենը:*

[9] «Հայաստանին» բանաստեղծությունը գրվել է 1921 թ. Վենետիկում, առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», 1924, թ.7, էջ 1:

64. ԱՐՄԱՆ ՍԱՐԳԱՆԻՆ
(էջ 100)

Ինքնագիրը պահվում է Վենետիկում, ինքնագրի պատճենը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 234-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Խատիսյան Գևորգ (1879, Թիֆլիս - 1935, Խարկով) – իրավաբան, Ալեքսանդր Խատիսյանի եղբայրը, Հ. Թումանյանի ավագ դստեր՝ Աշխենի ամուսինը:*

[2] *Համո Օհանջանյանի 3 երեխաներից մեկը զոհվել էր Ղարաքիլիսայի ճակատամարտում, երկուսն էլ ապրում էին Թիֆլիսում: (Տես 16-րդ նամակի 6-րդ ծանոթագրությունը):*

[3] *Խոսքը Ավ. Իսահակյանի ավագ եղբոր՝ Ալեքսանի մասին է (1850-1925):*

65. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 101)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 13-14:

66. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 102)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, անմշակ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 1959, էջ 14-15:

[1] *Դմիտրի Մերեժկովսկի (1865, Պետերբուրգ - 1941, Փարիզ) – ռուս արձակագիր, բանաստեղծ, գրաքննադատ, թարգմանիչ, կրոնական փիլիսոփա, հասարակական գործիչ:*

Նրա վեպերից մեկը «Рождение богов. Тутанкамон на Крите»՝ *«Աստուածներու ծնունդը. Թութ. Անխ. Ամոն Կրէտէի մէջ» հայերեն թարգմանությամբ սկսել է տպագրվել Կահիրեի «Յուսաբեր» թերթում, 1924 թ. նոյեմբերի 27-ից (թերթոնային տարբերակով):*

67. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 103)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, անմշակ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 1959, էջ 15-16:

[1] Քաղաքական գործիչ, Հայաստանի առաջին հեղկոմ Ալեքսանդր Մյասնիկյանը մահացել է 1925 թ. մարտի 22-ին՝ օդային աղետի հետևանքով:

*[2] **Վահան Նավասարդյան**, «Հ.Հ. Դաշնակցության լիկվիդացիան. բոլշևիզմի սնանկության առթիվ», Կահիրե, 1924:*

*[3] **Վահան Նավասարդյան**, «Հ.Հ. Դաշնակցության անկիքը», Կահիրե, 1924:*

*[4] **Վահան Նավասարդյան**, «Հայաստանի անկախությունը (տեսական հիմնավորման թռուցիկ ակնարկ)», Ժնև, 1924:*

*[5] **Վահան Նավասարդյան**, «Ընկերվարությունը և դեմոկրատիան», Կահիրե, 1924:*

*[6] **Բախչի Իշխանյան**, «Երկու ամիս բոլշևիկյան բանտում», Կահիրե, 1924:*

68. ՎԱՀԵ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻՆ
(էջ 104)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Առանձարի ֆոնդ, 11:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 205:

Վահե Գույումճյանը երգիծաբան Առանձարի (Միսակ Գույումճյան) զավակն է:

*[1] **Աղասեր Հակոբ** (1881-1915) – մանկավարժ Պոլսում, հասարակական-քաղաքական գործիչ, Հայոց ցեղասպանության զոհ:*

*[2] **Գույումճյան Միսակ** (Առանձար. 1877, Կեսարիա - 1913, Ադանա) – արևմտահայ գրող, երգիծաբան-նովելիստ: Սովորել է Կարինի Սանասարյան վարժարանում, 1899 թ. Մյունխենի ապա Յուրիխի համալսարաններում, եղել է Ավ. Իսահակյանի ուսանողական շրջանում մտերիմ ընկերներից մեկը: Ուսանելուց հետո վերադարձել է ծննդավայր, աշխատել որպես ուսուցիչ, 1907 թ. եղել է Ալեքսանդրիայի, 1908-1913 թթ.՝ Ադանայի ազգային վարժարանների տնօրենը:*

69. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ

(էջ 105)

Ինքնագիրը պահվում է ՄՍԸԱ:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 175-176, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 206-207 և ԱԻՆ 2016, էջ 218-219:

[1] *Ալ. Մյասնիկյանը (1886-1925) զոհվեց 40 տարին չլրացած, 39 տարեկանում:*

[2] ***Մակինցյան Պողոս*** *(1884-1938) – գրաքննադատ, թարգմանիչ, հրապարակախոս, 1921-1922 թթ.՝ Հայաստանի լուսժողկոմ, 1922-1925 թթ.՝ դիվանագետ Կ. Պոլսում, 1925-1927 թթ.՝ Տորգպրեդի աշխատակից Միլանում, ապա՝ Փարիզում:*

[3] ***Լուկաշին*** *(Սարգիս Լուկաշի Սրապիոնյան. 1884-1937) – քաղաքական գործիչ, 1921 թ. Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար, ապա՝ ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ:*

[4] *Եղիշե Չարենցը իր արտասահմանյան ուղևորության ընթացքում 1925 թ. մարտին եղել է Վենետիկում, ծանոթացել և հանդիպումներ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ:*

[5] ***Ասքանազ Մռավյան*** *(1886-1929) – Սովետական Հայաստանի պետական գործիչ, արտաքին գործերի և լուսավորության ժողովրդական կոմիսար:*

[6] *Արձակագիր Ստեփան Զորյանը 1925 թ. 35 տարեկան էր:*

[7] *Լուսիկը Մարտիրոս Սարյանի կինն էր, Ղազարոս Աղայանի դուստրը:*

70. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

(էջ 107)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 63-64:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 10-11:

[1] *Ավ. Իսահակյանի ուղարկած այս հատվածը տպագրվել է 1925 թ. «Հայրենիք» ամսագրի հուլիս-օգոստոս-սեպտեմբեր (9, 10 և 11) համարներում:*

[2] *Նախորդ նամակում Ավ. Իսահակյանը, վիրավորված լինելով Մկրտիչ Պարսամյանի գրած հոդվածից և խմբագիր Ռ. Դարբինյանի անհասկանալի լռությունից, հայտնել էր իր վճիռը՝ այլևս չեղեթակցել «Հայրենիք» ամսագրին: Պարսամյանն իր հոդվածում գովաբանել էր Օշականի «Շահսպազ» վեպը, Համաստեղի արձակը, արևմտահայ շատ գրողների և թերագնահատել Իսահակյանի արձակը:*

71. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 109)

Ինքնագիրը պահվում է ՄՄԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 207-208, ապա ԱԻՆ 2016, էջ 221:

Այս և հաջորդ նամակները ուղարկվել են Մոսկվա, Հովսեփ Կուսիկյանի հասցեին, քանի որ Մ. Սարյանը այդ օրերին գտնվում էր Մոսկվայում, Հ. Կուսիկյանի մոտ:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] *Մարտիրոս Սարյանը 1925 թ. ապրիլին մասնակցել է Մոսկվայի Գեղեցիկ արվեստների թանգարանում բացված «Ջորս արվեստների» ցուցահանդեսին, որին մասնակցել են 28 նկարիչ՝ 215 գործով: Մ. Սարյանը ներկայացված էր 22 աշխատանքով: 1925 թ. մայիսին Մոսկվայում, պետական Տրետյակովյան պատկերասրահում բացվել է «Գոլուբայա ռոզա» ցուցահանդեսը, որին մասնակցել են 10 նկարիչ, 72 գործով: Մ. Սարյանը ներկայացրել էր 10 ստեղծագործություն, որոնցից մեկը՝ «Լեռները» Հայաստանը նվիրել է Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահին:*

[3] expedier – *ուղարկել (ֆրանս.):*

72. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 110)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ՄՄԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 208:

[1] **Վիրջինիո Ուգո Նեբբիա** *(1880-1965) – իտալացի հայտնի պետական գործիչ, վերականգնող, արվեստի քննադատ:*

[2] «Nuova Antologie» – *Արվեստին և գրականությանը նվիրված եռամսյակային հեղինակավոր ամսագիր, հիմնադրված 1866 թ. Ֆլորենցիայում:*

[3] ***Տինտորետտո*** *(1518-1594) – Վերածննդի իտալացի խոշոր գեղանկարիչ, ծնունդով Վենետիկից:*

[4] ***Տիցիան*** *(1490-1576) – Վերածննդի Իտալիայի 16-րդ դարի վենետիկյան դպրոցի վաղ շրջանի ներկայացուցիչ:*

[5] ***Միքելանջելո*** *(1475-1564) – իտալացի քանդակագործ, գեղանկարիչ, ճարտարապետ և պոետ:*

[6] ***Թիեպոլո Ջիովաննի*** *(1696-1770) – ռոկոկո ոճի իտալացի գեղանկարիչ:*

[7] ***Վերոնեզե*** *(1528-1588) – իտալացի նկարիչ, ուշ Վերածննդի, Վենետիկի դպրոցի ներկայացուցիչ:*

[8] «Renaissance de l' art franҫaise» *(1918-1928, Փարիզ) – մշակութային ամսագիր: 1924 թ. հոկտեմբերյան համարում տպագրվել է Բորիս Տերնովեցի հոդվածը Վենետիկում կազմակերպված ցուցահանդեսի մասին, ուր հիշատակվում է Մարտիրոս Սարյանը:*

73. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 110)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, անմշակ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 1959, էջ 16-19, ապա կրճատումով՝ ԱԻՆ 2016, էջ 222:

[1] *Խոսքը ՀՅԴ գործիչ Սեդրակ Պալըգճյանի մասին է, որն աշխատում էր Վահան Նավասարդյանի հետ «Հուսաբեր»ի խմբագրությունում:*

[2] ***Վահան Նավասարդյան****, «Հ.Հ. Դաշնակցության քաղաքական ուղին», Կահիրե, 1925, 179 էջ:*

[3] *Նկատի ունի Բաշխի Իշխանյանի «Երկու ամիս բոլշևիկյան բանտում» գիրքը (Կահիրե, «Հուսաբեր» տպ., 1924), որի ընդարձակ նախաբանը գրել էր Վահան Նավասարդյանը:*

[4] *Բանաստեղծ և գրաքննադատ Հովհաննես Մխիթարյանի «Ավետիք Իսահակեան. «Հայրենիք»ի արձակագիրները» հոդվածը տպագրվել է «Յուսաբեր», Կահիրե, 1925, 18 հուլիս:*

[5] *Մխիթարյան Գուրգեն (Էթմնքճյան,1890, Ուրֆա–1962, ԱՄՆ) – Ուրֆայի էթմնքճյանների տոհմից, ՀՅԴ ակտիվ գործիչ, գրականագետ, խմբագիր:*

[6] *Խոսքը կահիրեում, «Յուսաբեր»ի տպարանում Օննիկ Մխիթարյանի հրատարակած «Նոր չարժում» (1923–1924) գրական, գեղարվաստական թերթի մասին է:*

[7] *Ցենիքսը Հովհաննես (Օննիկ) Մխիթարյանի գրական կեղծանունն է:*

[8] *Նկատի ունի Լուսիկին՝ Նիկողոս Իսահակյանի նշանածին, որը մոտ մեկ տարի մնաց Վենետիկում՝ ԱՄՆ մեկնելու նպատակով: Ինչպես արդեն ասվել է, Նիկողոսը Լոս-Անջելեսում ամուսնացել էր Շուշիկի հետ, որից հետո Լուսիկը վերադարձել է Թիֆլիս՝ ծնողների մոտ:*

[9] *Բեգլարը Վահան Նավասարդյանի գավակն է:*

74. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 114)

Ինքնագիրը պահվում է ՄՄԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 209–210, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 223–224:

[1] *Հրապարակախոս, թարգմանիչ Պողոս Մակինցյանը 1921–1922 թթ. Հայաստանի լուսավորության ժողկոմն էր, 1925 թ. նա աշխատում էր Միլանում, որպես Սովետական Միության առևտրական (Տորգպլրեդ) ներկայացուցիչ արտասահմանում:*

[2] *Մ. Սարյանի «Ճամբորդական տպավորություններ» հոդվածը տպագրվել է «Նորք», Երևան, 1925, թ. 5–6, էջ 331–343: Այստեղ տպագրվել է նաև Ջուզեպպե Սալռովիչերիի «Մ. Սարյանի մասին» հոդվածը (էջ 343–346):*

[3] *Նկատի ունի 1925 թ. հունիսի 25-ի երևանյան ջրհեղեղը, որի մասին Հայկինոն 16 րոպեանոց, սև-սպիտակ, համր ֆիլմ է նկարահանել («Ջրհեղեղ Երևանում», սցենարի հեղինակ և ռեժիսոր Իլյա Կրասլավսկի, նկարահանել են Հայաստանի պետֆոտոկինոյի օպերատորների խումբը):*

[4] *Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար (Հեքիաթ 5 պատկերով)» կատակերգությունը տպագրվել է 1923-1924 թթ. «Նորք» հանդեսի 3-րդ և 4-րդ համարներում:*

[5] *Մոսկվայում 1925 թ. ապրիլի 26-ին Գեղեցիկ արվեստների թանգարանում բացվել էր «Զորս արվեստ» ցուցահանդեսը, մայիսի 11-ին Պետական Տրետյակովյան պատկերասրահում բացվել էր «Գոլուբայա ռոզա» ցուցահանդեսը, որին մասնակցել էր Մ. Սարյանը: Երկու ցուցահանդեսներում էլ մեծ եղավ հայ նկարչի հաջողությունները: Այդ մասին գրվել էր մամուլում, այդ թվում նաև «Խորհրդային Հայաստան» թերթի մի քանի համարներում, որոնք էլ հասել են Ավ. Իսահակյանին:*

[6] *Հազարապետյան Լևոն (1881, Ախալցխա - 1946, Փարիզ) – հայ նկարիչ, գրաֆիկ, Սրբուհի Լիսիցյանի ամուսինը: 1925 թ. նա հեռացել էր Խորհրդային Հայաստանից և բնակության հաստատվել Փարիզում: Նրա ստեղծագործություններից մի քանիսը պահվում են եվրոպական տարբեր թանգարաններում:*

75. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ

(էջ 116)

Ինքնագիրը պահվում է ԵՔԹ, 3101-1973-425:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*
[2] *Համամ – բաղնիք (պարսկերեն):*
[3] *Ինքնագրում՝ այսպես փխ կարդալու:*

76. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

(էջ 117)

Արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 19:
Արտատպվել է նաև ԱԻՆ 2016, էջ 225:

[1] *Խոսքը Օննիկ Մխիթարյանի «Ավետիք Իսահակյան» հոդվածի («Յուսաբեր», Կահիրե, 1925, 7-23 հուլիս) մասին է, որը հիշատակվել էր նաև նախորդ նամակում:*

[2] ***Աբիսակ Սոմնացի*** *– աստվածաշնչյան հերոսուհի, նրա մասին տես՝ Գ Թագավորաց, Ա, 1-3:*

[3] *Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպը հրատարակվել է 1869 թ.:*

77. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՑԱՆԻՆ
(էջ 118)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 220-I:

Առաջին անգամ հրապարակել է Հակոբ Գրիգորը «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 125, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 225:

Հակոբ-Գրիգորի Ճրճրյան *(1905, Պոլիս -1985, Փարիզ) – հրապարակախոս, թարգմանիչ: Ուսանել է Կ.Պոլսի Պերպերյան և Կենտրոնական վարժարաններում, 1927 թ. ավարտել է Լայպցիգի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և հաստատվել Փարիզում: 1925 թ. աշնանը ուսանող Ճրճրյանը ճամփորդել է Իտալիայում, եղել Վենետիկում, ծանոթացել Ավ. Իսահակյանի հետ, վերադարձից հետո նրա հետ նամակագրական կապ հաստատել:*

Իսահակյանի երկու նամակները՝ ուղղված Հակոբ-Գրիգորին, 1962 թ. Փարիզից ուղարկվել են Երևան, Գրականության և արվեստի թանգարան, Ավ. Իսահակյանի ֆոնդին:

[1] *Նկատի ունի Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ հայր Արսեն Ղազիկյանի (1870-1932) կատարած մեծածավալ թարգմանությունները. 1925 թ. նա թարգմանում էր եվրոպական ժողովուրդների՝ ֆրանսացիների, գերմանացիների դյուցազնավեպերը:*

[2] *Հերման Հեսսեի (1877-1962) «Սիթհարթա» վեպը (2 մասով) հրատարակվել էր 1922 թ. Բեռլինում, Ֆիշեր Վերլագ հրատարակչությունում:*

[3] *Հերման Հեսսեի «Զրադաշտի վերադարձը» ճառը հրատարակվել էր 1921 թ. Բեռլինում, Ֆիշեր Վերլագ հրատարակչությունում:*

Այս գիրքն առայսօր պահվում է Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում (թիվ 8792):

[4] Հավանաբար խոսքը վերաբերում է Իսահակյանի ուսանողական ընկերներից մեկին՝ Լայպցիգում ապրող Ալլալեմճյան Միհրանին, որի ազգանունը ինքնագրում չի եղել, այն ձեռագրով ավելացրել է Հակոբ-Գրիգորը:

[5] Ավ. Իսահակյանը Լայպցիգում ուսանելու տարիներից մի խմբանկար ունի, որտեղ լուսանկարվել են Գարեգին Հովսեփյանը, Գևորգ Զորեքչյանը, Աշոտ Աթանասյանը, Միհրան Ալլալեմճյանը և այլ անվանի գործիչներ: Լուսանկարում Ավ. Իսահակյանը նստած է հատակին:

78. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
(էջ 119)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 64-66:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 11-12:

[1] Թուրչի – բանջարեղենի թթու:

[2] Պողոս Մակինցյանը 1925 թ. աշխատում էր Միլանում: Նա կնոջ՝ Սեբաստի հետ հաճախ լինում էր Վենետիկում, հանդիպում Ավ. Իսահակյանի հետ:

[3] Բոլշևիկյան հայտնի շատ գործիչներ (Պ. Մակինցյան, Ալ. Մյասնիկյան. Դավիթ Անանուն, Յ. Խանզադյան) իրենց քաղաքական գործունեության սկզբին՝ 20-րդ դարասկզբին, հարել են Դաշնակցությանը՝ որպես ազգային-ազատագրական շարժման ամենից ընդունված ուղղության:

79. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ
(էջ 122)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՅ, 221-Ի:

Առաջին անգամ հրապարակվել է «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 125, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 210-211 և ԱԻՆ 2016, էջ 227:

[1] Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքերը» ժողովածուն տպագրվել է Ալեքսանդրոպոլ, 1897 թ. և Թիֆլիս, 1908 թ.:

[2] Ավ. Իսահակյանի «Ադա Նազար»ը տպագրվել է Պոլիս, 1912 թ.:

[3] Ավ. Իսահակյանի «Հայրենի աղբյուրից» ժողովածուն տպագրվել է Բոստոն, 1920 թ.:

[4] «Աբու Լալա Մահարի»ն տպագրվել է Պոլիս 1911 թ., 1918 թ., 1920 թ.:

[5] Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» (Թարգմ. Հ. Նոյերեն և Լ. Նազարյանց) «Der Neue Orient», 1919, թ. 2, հատոր 6, էջ 77-83:

[6] Մինչև 1920 թ. Բեռլինի փոստային ինդեքսները տարանջատվում էին արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ բաժանումներով: Այստեղ նշված է West (արևմուտք) փոստային բաժինը:

80. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

(էջ 123)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 211-212:

[1] Խոսքը Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում» գրքի տպագրության մասին է, որ պիտի իրականացվեր Վեննատիկում, Մխիթարյանների տպարանում:

[2] 1920-ական թթ. ՀԲԸՄ-ի կողմից Հայաստանում գործադրվեց նաև Մատթեոս Խերյանի կտակը, որ կազմում էր 310.000 ֆրանկ: Պողոս Նուպար փաշայի բարեգործական միության փողերով կառուցվել է Երևանի ակնարուժական կլինիկան, Դարուհի Հակոբյանի ուղարկած գումարով՝ Ամերիկահայ տունը, Մ. Խերյանի կտակի գումարով՝ մեղվաբուծական դպրոցը և այլն:

Նամակում խոսվում է պոլսահայ մամուլում տպագրված ինֆորմացիոն տեղեկությունների մասին, որոնք վերաբերում էին եպիսկոպոսահայ գործարար Մատթեոս Խերյանի կտակի պատմությանը: Պոլսի

«Ժամանակ» թերթում 1915 թ. հունվարի 26-ին գրվել էր. «Հանգուցեալ Մատթէոս Խերեան 1914-ի վերջերը տեղւոյս ռուսական հիւպատոսարանին յանձնած կտակով մը իր հարստութեան կարևորագոյն մասը Ազգին թողած էր... Կտակակատար էր նշանակուել Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքը և իր եղբայրը՝ Մուրադ Խերեան...»: Կտակը ուներ աննախադեպ ճակատագիր: Մուրադ Խերյանի անհայտացման պատճառով (ասում էին, որ թուրքերի ձեռքով է կորել) գումարը բանկից չէր հասնում հայ ժողովրդին: Ըստ կտակի՝ բարերարը, որպես հմուտ գյուղատնտես-գործարար, ցանկացել էր երկրագործական երկու վարժարաններ հիմնել Մուշում և Ադանայում: Խերյանի կամքը չիրագործվեց թուրքական կառավարիչների մերժման պատճառով: Պոլսի Սանասարյան Խնամակալության նախագահ Գաբրիել Էֆենդի Նորատունկյանը, ում մոտ տարիներ անց հայտնվեց Խերյանի կտակած 4500 անգլիական ոսկին, որոշում ընդունեց այդ գումարը տալ Սովետական Հայաստանին՝ գյուղատնտեսական ինստիտուտ հիմնելու նպատակով: Այս հարցերով զբաղված է եղել նաև Պողոս Մակինցյանը:

81. <ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ>

(էջ 124)

Ինքնագիրը (սևագիր տարբերակ) պահվում է ԱԻԸԱ: Նամակը գրված է իտալական փոստային հեռագրային բլանկների վրա: Ցավոք. Դավիթ Անանունին Ավ. Իսահակյանի գրած մաքրագիր նամակները չեն պահպանվել, քանի որ հասկանալի պատճառներով չի պահպանվել Դ. Անանունի արխիվը:

Տպագրվում է առաջին անգամ:

Դավիթ Անանուն (Տեր-Դանիելյան, 1879, Մարտակերտ - 1942, Ատրախան) – հրապարակախոս, պատմաբան, 1920-1926 թթ. Երևանի Հեղափոխության թանգարանի տնօրեն: Ավ. Իսահակյանիմոտ ընկերներից մեկը՝ Դ. Անանունը, 1927 թ. դատապարտվեց աքսորի 3 տարի ժամկետով: Հետագայում 1930 թ. սկսած, հակահեղափոխության մեջ անհիմն մեղադրանքով անընդհատ երկարացվել է նրա

պատժաժամկետը: 1939 թ. Աստրախանի չրջանային դատարանը Դ. Անանունին պատապարտում է ևս 10 տարվա ազատազրկման: Նա մահանում է բանտում 1942 թվականին:

Հատկապես արժեքավոր է Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» (Հ. 1-3, 1926 թ.) աշխատությունը, որի մեջ հեղինակը չարադրել է արևելահայերի հասարակական, քաղաքական և մշակութային զարգացման օրինաչափությունները:

[1] Այս պարբերությունը ունի տարբերակ. «այդ հայ ժողովրդի ձայնն էր, այդ կորած, զոհված ընկերների ձայնն էր, այդ մորս ձայնն էր, այդ մանկության օրերի ժամի զանգի ձայնն էր, հայրենի լեռների վճիտ աղբյուրների ձայնն էր...»:

[2] **Մերեժկովսկի Դմիտրի** (1865-1941) – ռուս գրող, բանաստեղծ, պատմաբան, կրոնական փիլիսոփա, ռուս սիմվոլիզմի հիմնադիրներից, 10 անգամ առաջադրվել է Նոբելյան մրցանակի՝ որպես 20-րդ դարի օրիգինալ մտածողներից մեկը: 1890-1902 թթ. գրված նրա «Քրիստոս և Հակաքրիստոս» եռագրության մեջ երևում է հեղինակի տեսակետը մարդկության ապագայի վերաբերյալ: Եռագրության 3-րդ մասը՝ «Հակաքրիստոնեություն. Պետեր և Ալեքսեյ» (1904-1905 թթ.) աստվածաբանական և փիլիսոփայական վիպ է Պետրոս Առաջինի մասին, որին հեղինակը ներկայացնում է որպես մարմնացյալ Հակաքրիստոս:

[3] Նկատի ունի Բաշխի Իշխանյանի «Երկու ամիս բոլշևիկյան բանտում» (Կահիրե, 1924) գիրքը (տես 31-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը):

[4] Խոսքը վերաբերում է Բենիկ վարդապետի չուրջ հանրության մեջ ծագած աղմկոտ վիճաբանություններին (տես 48-րդ նամակի 14-րդ ծանոթագրությունը):

[5] Նկատի ունի 1922 թ. անցկացված ուղղադրական ռեֆորմը, որի հեղինակը եղել է ականավոր բանասեր Մանուկ Աբեղյանը:

[6] Դաշնակցական գործիչները 1921 թ. փետրվարյան հեղափոխության ճնշումից հետո՝ խուսափելով հայ բոլշևիկների հետ քաղաքացիական ընդհարումներից, համատարած լքեցին Հայաստանի սահմանները, հեռացան Եվրոպա, Միջին Արևելք, Ամերիկա և մինչև իրենց կյանքի վերջ ապրեցին տարագրության մեջ, հայրենիքի կարոտով:

[7] *Փիրումյան Սիմոն (Սիմոնիկ. 1888-1937) – պետական-հասարակական գործիչ, լրագրող, 1925 թ. Անդրկովկասյան հանրապետությունների և Հայաստանի Հանրապետության առևտրական (Տորգպրեդ) ներկայացուցիչը Փարիզում:*

[8] *Նամակի այս տողերը Ավ. Իսահակյանը գրել է օգտագործելով Արտաշես Բ. Թագավորի բաղձական երգի բառերն ու տրամադրությունը. «Ո՞ տայր ինձ զծուխս ծխանի և զառաւոտն Նաւասարդի, զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց, մեք փող հարուաք և թմբկի հարկանեաք, որպէս օրէնն է թագաւորաց...» (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 87):*

[9] *Սևագիր նամակը ավարտվում է այստեղ, և չկա հեղինակի ստորագրությունը:*

82. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 128)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 20:

Առաջին անգամ տպագրվել է «Յուսաբեր», Կահիրե, 1957, 26 նոյեմբեր, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 228:

[1] *Խոսքը Ավ. Իսահակյանի «Հոր անեծքը» հուշ-պատմվածքի մասին է, որ տպագրվել է «Յուսաբեր», Կահիրե, 1925, 22 դեկտեմբեր:*

[2] *Հովակիմ Բուդաղյան (1870, Կաղզվան - 1923, Փարիզ) – իրավաբան, խմբագիր, ՀՅԴ անդամ:*

[3] *Հովակիմ Բուդաղյանի «Հայրս» հուշագրությունը հատվածաբար տպագրվել է 1925 թ. «Յուսաբեր» թերթի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:*

83. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆԻՆ
(էջ 130)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 29-31 (նամակն անթվակիր է):

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] *Ադամին և Եվային ստեղծելուց հետո Աստված նրանց դիմեց այս բառերով. «Աճեցեք և բազմացեք» (Հին Կտակարան, Ծննդք, Ա, 22):*

[3] *Լյուդվիգ Ալյանաքյանի (Լյութֆի ծածկ.) բանաստեղծությունները հաճախ տպագրվում էին Բոստոնի «Հայրենիք» ամսագրում:*

[4] *Նկատի ունի իր եղբոր տղայի՝ Կոլյա Իսահակյանի նշանածին՝ Լուսիկին, որին չէր հաջողվել ԱՄՆ գնալ և վերադարձել էր Թիֆլիս:*

1926

84. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ
(էջ 133)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 212-213:

[1] *Դ. Անանունի գրքի տպագրության ծախսերը հոգում էր Տորպլբնեքը, որի աշխատակիցն էր Պողոս Մակինցյանը (տես նաև 80-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը):*

85. ԴԱՎԻԹ <ԱՆԱՆՈՒՆԻՆ>
(էջ 134)

Ինքնագիրը (սևագիր տարբերակ) պահվում է ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] *Մնծամասնական ասելով նկատի ունի բոլշևիկներին:*

[3] ***պանեգերիկ*** *– ներբողական բանաստեղծություն, ճառ՝ նվիրված մի կարևոր անձի կամ դեպքի:*

86. ԿԱՐԵՆ ՄԻՔԱԵԼՑԱՆԻՆ
(էջ 137)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՖ, թղթ. 244/21, վավ. 62:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 235-237, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 231-232:

[1] *1921 թ. Երևանում հիմնադրված Հայաստանի Օգնության Կոմիտեն (վարչության նախագահ՝ Հ. Թումանյան) 1925 թ. պատգամավորություն է ուղարկում արտասահման՝ ՀՕԿ նոր վարչություններ եվրոպայում և ԱՄՆ-ում ստեղծելու նպատակով: Պատգամավորության մեջ էր նաև Կարեն Միքայելյանը: Սովետական Հայաստանում իրականացվող խոշոր շինարարությունների համար կարմիր խաչը, Հայ Օգնության կոմիտեն, Ա. Երզնկյանի գլխավորած հանձնախումբը եվրոպայից և ընդհանրապես ողջ հայությունից, գումարներ էին հայթայթում՝ քանդած երկիրը վերակառուցնելու և չենացնելու նպատակով: 1926 թ. սկզբին Կ. Միքայելյանը աշխատում էր Բելգիայում:*

[2] ***Վարդանյան Գրիգոր*** *(1868-1938) – Հայաստանում հեղափոխական շարժումների և խորհրդային կարգերի հաստատման պայքարի մասնակից. սկզբում եղել է հնչակյան կուսակցության անդամ, ապա, դառնալով մոլի բոլշևիկ, մամուլում հաճախ քննադատել է դաշնակցականներին: 1938 թ. նա, ի թիվս ՀՕԿ-ի շատ աշխատակիցների, դարձավ ստալինյան բռնության զոհերից մեկը:*

ՀՕԿ-ի ստեղծումից ի վեր Գ. Վարդանյանը սփյուռքի տարբեր քաղաքներում բացել է ՀՕԿ բաժանմունքներ, 1924 թ. եղել է ՀՕԿ-ի պատասխանատու քարտուղար, իսկ 1933 թ.՝ ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահ:

[3] ***Կամսարական Սպանդարատ*** *(1876-1942) – բժիշկ, համաճարակաբան, հասարակական գործիչ: Մոսկվայում կրթություն ստանալուց հետո 1918 թ. վերադարձել է Հայաստան և նշանակվել Երևանի գինվորական հոսպիտալի և 1-ին կլինիկական հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Աշխատակցել է ՀՕԿ, կարմիր խաչ ընկերություններին: Նա ամուսնացած է եղել գեներալ Գևորգ Շահխաթունու դուստրերից մեկի հետ, որը Մանուկ Աբեղյանի կնոջ՝ Շուշանիկի քույրն էր:*

[4] *Նկատի ունի Հայտնի գրականագետ, մանկավարժ Կարապետ Կուսիկյանին (1865-1915):*

87. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(Էջ 138)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 11-13:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Խոսվում է «Բայրամ Ալին» պատմվածքի մասին, որ տպագրվել է «Հուսաբեր», Կահիրե, 1926, 18 մարտ:

88. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
(Էջ 141)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԱՖ, 1082:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1971, թ. 1, էջ 137-139, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 213-217 և ԱԻՆ 2016, էջ 233-236:

[1] Հովհաննես Ավագյանի «Գրական դեմքեր» գրքում (1925 թ.) խոսվում է նաև Ավ. Իսահակյանի ստեղծագործության մասին:

[2] Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» ամսագիրը, որի խմբագիրը 1919 թվականից Հովհ. Ավագյանն էր, նշում էր իր հիմնադրման 25-ամյակը: Հորելյանական համարում զետեղված էր Ավ. Իսահակյանի «Բուդդհան թռչուն» լեգենդը (1926, թ. 1, էջ 34-35):

*[3] **Պոլ Վեռլեն** (1844-1896) – ֆրանսացի բանաստեղծ, սիմվոլիզմի ուղղության ներկայացուցիչ:*

*[4] **Ստեֆան Մալարմե** (1842-1898) – սիմվոլիզմի հիմնադիրներից, ֆրանսացի բանաստեղծ, պոետիկայի տեսաբան:*

*[5] **Էմիլ Վերհարն** (1855-1916) – բելգիացի բանաստեղծ և դրամատուրգ:*

*[6] **Ալբեր Սամեն** (1858-1900) – ֆրանսացի բանաստեղծ, սիմվոլիստ:*

*[7] **Շարլ Բոդլեր** (1821-1867) – ֆրանսացի բանաստեղծ, արվեստաբան: Նրա բարձրագույն գեղարվեստական նվաճումը եղավ «Չարի ծաղիկներ» ժողովածուն, որի վրա հեղինակն աշխատել է գրեթե ողջ կյանքում:*

[8] *Էդգար Պո (1809-1849) – ամերիկացի գրող, էսսեիստ, գրաքննադատ, ժամանակակիցց դետեկտիվի ձևի և հոգեբանական արձակի ժանրի ստեղծողը: Սիմվոլիստները նրա պոեզիայից էին վերցրել սեփական էսթետիկայի գաղափարը:*

[9] *«Աբու Լալա Մահարի»-ի ռուսերեն թարգմանությունը կատարել է Վ. Բրյուսովը («Հայաստանի պոեզիան՝ ռուս բանաստեղծների թարգմանությամբ», Մոսկվա, 1916, էջ 367-398):*

[10] *«Աբու Լալա Մահարի»-ի գերմաներեն թարգմանությունը հրատարակվել է Բեռլին, «Der Neue Orient», 1919, թ. 2, հատոր 6, էջ 77-83 (թարգմանիչներ Հ. Նոյերեն և Լ. Նազարյանց):*

89. ՍՈՓՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 146)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 218-219:

Այս և հաջորդ երկու նամակները գրված են Փարիզի Excelsior-Hotel հյուրանոցի բլանկի վրա:

[1] *Թվագրվում է ըստ փոստային կնիքի:*

[2] ***Գաբո, Քոչարյան Գաբրիել** – Սոֆի Իսահակյանի եղբայրը:*

[3] ***Նիկողայոս Ադոնց** (1871, Սիսիան - 1942, Փարիզ) – նշանավոր հայագետ, կյանքի մեծ մասն ապրել է Ֆրանսիայում: Բարեկամ էր Սոֆի Իսահակյանին մոր կողմից:*

[4] *Նկատի ունի ազգային բարերար Ղուկասյան Աբրահամին, որի հովանավորության տակ էր նաև Նիկողայոս Ադոնցը:*

[5] *Ադոնցի կինն էր չնորհալի երգչուհի Օլգա Հովնաթանյանը:*

[6] *1924 թ. Կոստան Զարյանը նորից Փարիզում էր: Նա 1925 թ. հիմնադրել և խմբագրել է արվեստի, դրականության և փիլիսոփայության «Բաբելոնի աշտարակ» ֆրանսերեն ամսագիրը, որին թղթակցում էին Փարիզում բնակվող Ավ. Ահարոնյանը և Ն. Ադոնցը:*

[7] *Ադոնցի ծննդյան թվի մասին կան տարբեր ցուցումներ (1873, 1875)՝ հետևանք փաստաթղթային անճշտության (Պետրոս Հովհան-*

նիսյան «Նիկողայոս Ադոնց. մարդը և գործը», «Էջմիածին», 2011, Ա, էջ 101-119):

[8] Սիմոն Փիրումյանը ՀԽՍՀ դիվանագիտական աշխատանքի բեռնումով ապրում էր Փարիզում:

[9] Գեղամ Կոստանյանը Ավ. Իսահակյանի մորաքրոջ որդին է, Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանի և բանաստեղծ Հովհաննես Կոստանյանի եղբայրը:

*[10] **Սամսոն Թադեոսյան** (1868 Գողթն - ...Փարիզ) – դաշնակցական գաղափարախոս Պապաչայի՝ Լևոն Թադեոսյանի (1865-1935) կրտսեր եղբայրը: Երեք եղբայրները և քույրը վաղ հասակից զրկվել են հորից և գտնվել քեռու՝ Քրիստափոր Միքայելյանի մշտարթուն հսկողության տակ: Եղբայրներից կրտսերը՝ Հովսեփը (1871-1957) մանկավարժ և լրագրող էր ֆրանսահայ գաղութում:*

1925 թ. Սամսոն և Լևոն Թադեոսյաններն ապրում էին Փարիզում:

*[11] **Գրիգորիս վարդապետ Պալաքյան** (1870-1934) – հոգևոր և ազգային գործիչ, 1921 թ. Ս. Թեհլերյանի դատավարությանը հանդես եկավ իբրև վկա և իր համոզիչ ու ազդու խոսքով մերկացրեց թուրքերի հայաջինջ քաղաքականությունը: 1919 թվականից ապրել է Ֆրանսիայում, եղել Մարսելի հայ համայնքի հոգևոր առաջնորդը: Արժեքավոր է նրա «Հայ գողգոթան» (Վիեննա, 1922, հ. 1 և Փարիզ, 1959, հ. 2) աշխատությունը, որը հայոց ցեղասպանության մասին է:*

90. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 148)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 219-221:

[1] Նկատի ունի դերասան Լևոն Հարությունյանին (Հարությունյան, 1894, Վան - 1957, Երևան): Նա 1913-1914 թթ. սովորել է Փարիզի կոնսերվատորիայում, 1915 թ. խաղացել է Կ.Պոլսում, 1915-1917 թթ.՝ Աբելյան-Արմենյան թատերախմբում, 1920 թ՝ Կ. Ջանանի խմբի հետ շրջագայել է Անգլիայում, 1921 թվականից՝ աշխատել է Փարիզի

տարբեր թատրոններում: 1936 թ. հայրենադարձվել է Հայաստան: Լևոն Հարությը 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական պատերազմին, 1946-1953 թթ. եղել է սիբիրյան աքսորում, 1953 թ. վերադարձել է Երևան, 1953-1956 թթ. աշխատել Պատանի հանդիսատեսի թատրոնում:

[2] **Աննա Բուդաղյան** (Նազարյան, 1880, Շուշի - 1964, Փարիզ) – դերասանուհի, թատերական գործիչ, երկար տարիներ Բաքվի հայ թատրոնի ռեժիսոր, 1914-1920 թթ. որբանոցներ է բացել Բաքվում: 1920-ական թթ. բնակություն է հաստատվել Փարիզում: Այստեղ նա Զապել Եսայանի, Շիրվանզադեի առաջարկով կազմակերպել է «Մայրենի բեմ» թատերախումբը: Իր թատերախմբի խաղացանկի համար Բուդաղյանը դիմել է հայ դրամատուրգիային, հատկապես Շիրվանզադեի դրամաներին: Աննա Բուդաղյանի ջանքերով Փարիզում ստեղծել է նաև Ազգային ճակատի թատերական մասնաճյուղը:

Աննա Բուդաղյանի դիմանկարը 1926 թ. կերտել է Մարտիրոս Սարյանը:

[3] **Թումանյան Համբարձում** – պարսկահայ վաճառական:

[4] Խոսքը վերաբերում է ինժեներ և հասարակական գործիչ Աստվածատուր Վաչյանին (1863, Մեղրի-1963, Փարիզ), ով 1920 թ. Բաքվից տեղափոխվել էր Փարիզ՝ մշտական բնակության: Նա եղել է Բաքվի «Արամազդ» նավթարդյունաբերական ընկերության վարչության նախագահը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Փարիզում հանդրվանել է արևմտահայ և արևելահայ խոշոր կապիտալը. 1925 թ. այստեղ բիզնեսով էր զբաղվում մոտ 250 հայ գործարար (մանրամասն տես Խ. Դադայան «Հայերը և Բաքուն», Երևան, 2006):

[5] **Արղության Հովսեփ** (1863, Սանահին - 1926, Փարիզ) – հայ ազատագրական շարժման առաջամարտիկ, ռազմական և պետական գործիչ, Դաշնակցության հիմնադիրներից: Հայտնի է Իչխան կամ Խանասորի Իչխան մականուններով: 1905-1906 թթ. կազմակերպել է հայերի ինքնապաշտպանությունը Թաթար ջարդարարների դեմ, Առաջին աշխարհամարտին եղել է կովկասյան ռազմաճակատի հայկական կամավորական 7-րդ գնդի հրամանատար,

1919-1920 թթ.՝ Հայաստանի դեսպան Իրանում, 1922 թվականից ապրել է Ֆրանսիայում:

*[6] **Մելիքյան Համբարձում** (1861-1932) – նավթարդյունաբերող, 1902 թ. Բաքվում ստեղծված «Բաղաքային վարկային ընկերության» դիտորդական հանձնախմբի նախագահ, Թիֆլիսի «Հորիզոն» օրաթերթի բարերար-հրատարակիչ:*

[7] Հայ վիսլասան Շիրվանզադեն (1858-1935) 1919 թվականից բուժման նպատակով մեկնել է արտասահման, ապրել Փարիզում: 1926 թվականին վերադառնալով հայրենիք՝ հրատարակել է իր երկերի ութհատորյակը:

[8] 1926 թ. փետրվարին հիվանդանոցում մահացել է Երվանդ Քոչարի և Վարդենու նորածին առաջնեկը: Այս ողբերգությունը, ցավոք, կրկնվեց երկու տարի անց: 1928 թ. օգոստոսին Քոչարը կորցրեց իր սիրելի կնոջը, իսկ 2 օր անց՝ նորածին երեխային:

[9] Խոսքը Սամսոն Թադեոսյանի մասին է:

*[10] **Հ. Խունունց** – Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, 1912-17 թթ.՝ Թիֆլիսի Հայ ազգային բյուրոյի փոխնախագահ, դաշնակցական գործիչ, կուսակցության վստահելի անձերից մեկը: 1915 թ. հունվարի 20-ին հրավիրված ժողովում ընդունվել է որոշում, որ ՀՅԴ Բյուրոյի բոլոր դումարները պահվեն բանկերում չորս անձանց անունով՝ Մեսրոպ եպիսկոպոս, Ա. Խատիսյան, Հ. Խունունց և Մ. Քալանթարյան (ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 3, թ. 13): Նա երկար տարիներ աշխատել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում որպես մանկավարժ:*

*[11] **Սուրեն Ադամյան** – ֆրանսագիր դրամատուրգ, արսուրդի թատրոնի հիմնադիր Արթյուր Ադամովի (1908-1970) հայրը:*

[12] Հավանաբար նկատի ունի Հայաստանի առաջին Հանրապետության քաղաքական գործիչ Ալեքսանդր Ասրիելեկյանին, որը 1919 թ. Թերեքում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր և Մինվոդի քաղաքի հյուպատոսը:

[13] Նկատի ունի Սուրեն Ադամյանին:

[14] Նկատի ունի Հովսեփ Արղությանին:

*[15] **Պապաջանյան Միքայել** (1868-1929) – հասարակական-քաղաքական գործիչ, 1912-1917 թթ.՝ Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի անդամ, 1917 թ. եղել է Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի ան-*

դամ, 1919-1922 թ.՝ Հայոց ազգային պատվիրակության անդամ: 1925-1926 թթ. նա ՀՕԿ-ի Փարիզի մասնաճյուղի նախագահն էր:

[16] Աբել Ծ. վարդապետ Նազարյանը դրել է «Ս.Սարգիս եկեղեցի Հայոց Լոնդոնի» (Փարիզ, 1922) դիրքը: 1920-ական թվականներին Լոնդոնի Հայոց եկեղեցու առաջնորդն էր: Նրա մասին խորեն եպիսկոպոս Մուրադբեգյանը մի նամակում այսպես է արտահայտվել. «Նա ամենայն պատվով ներկայացնում է այս արժանքավոր գաղութում հայ հոգևորականությունը» (ՀԱԱ, ֆ. 57, ց. 3, գ. 276, թ. 1):

[17] Աչխեն – Սոֆի Իսահակյանի ընկերուհիներից մեկը:

[18] Խոսքը պոլսահայ բժիշկ Վահրամ Թորգոմյանի մասին է:

[19] Ավետիս Ահարոնյանն առաջին ամուսնությունից ունեցել է չորս զավակ՝ Վարդգեսը, Վրույրը (Վուրիկ), Բարիկը և Արփիկը: 1916 թ. Եվրոպայում մահացել է Ավ. Ահարոնյանի կինը, որից հետո 1917 թ. նա ամուսնացել է Միքայել Վարանդյանի քրոջ՝ տիկին Նվարդ Ժամհարյանի հետ: Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո Ահարոնյանը ապրել է Ֆրանսիայում, սկզբում՝ Փարիզում, ապա՝ Մարսելում:

Վրույր Ահարոնյանը մահացել է դժբախտ պատահարի արդյունքում 1959 թ. մարտին (Այս մասին տես Բոստոնի «Հայրենիք» օրաթերթ, 1959 թ., 3 ապրիլ):

[20] Նկատի ունի համաճարակաբան բժիշկ Սպանդարատ Կամսարականին, ով Գրիգոր Վարդանյանի հետ Փարիզում էր՝ ՀՕԿ-ի բարեգործական աշխատանքների բերումով:

91. ՋԱՊԵԼ ԵՍԱՑԱՆԻՆ
(էջ 151)

Ինքնագիրը (հյուրանոցի բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, Հովսեփ Փուշմանի ֆոնդ, 49:

Առաջին անդամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 222:

Ջապել Եսայան *(1878, Պոլիս - 1943) – նշանավոր դրող, թարգմանիչ, հրապարակախոս: 1892 թվականից ապրել և ուսանել է Փարիզում, 1900 թ. ամուսնացել նկարիչ Տիգրան Եսայանի հետ, աշխատակ-*

ցել հայկական ու ֆրանսիական պարբերականներին, 1902 թ. վերադարձել է Պոլիս: 1915 թ. նրա անունը եղել է հալածյալ մտավորականների նախապես կազմված ցուցակում, բայց նա դիպլոմատով փրկվել է և 3 ամիս փախստականի կյանք վարելով Բուլղարիայում, Ռումինիայում, հասել է Կովկաս: Երևանում դրողը ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել հայ գաղթականներին օգնելու ուղղությամբ: Զապել Եսայանը երկրորդ անգամ Հայաստանում է լինում 1926 թ., մոտիկից ճանաչում խորհրդային պետական և քաղաքական գործիչներին: 1933 թ. մայիսին Զ. Եսայանը Հայաստանի կառավարության հրավերքով դասեր՝ Սոֆիի հետ տեղափոխվում է մշտական բնակության Խորհրդային Հայաստան: Երևանում դասախոսում է պետական համալսարանում: 1937 թ. ձերբակալվում է անհիմն մեղադրանքով և դառնում «անձի պաշտամունքի» հերթական զոհերից մեկը:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Նկատի ունի Փարիզում 1925-1930 թթ. տպագրվող «Երևան» թերթը: 1926 թ. Զ. Եսայանը ապրում էր Փարիզում և աշխատակցում «Երևան» թերթին՝ Սովետական Միության կատարած իր ճամփորդության ու տպավորությունների մասին հոդվածներ գրելով:

92. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ

(էջ 152)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Արշակ Ջոպանյանի ֆոնդ, 2768-I: Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 222-223:

93. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 152)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 223-225:

[1] Տիգրան Բեկզադյանը (1880, Շուշի-1942, Փարիզ) 1926 թ. աշխատում էր Սովետական Հայաստանի առևտրական ներկայացուց-

չուԹյունում: Նա պետական գործիչ Ալեքսանդր Բենկենդյանի եղբայրն էր, որին բոլշևիկները գնդակահարեցին 1939 թ.:

[2] Վահան Փափազյան (Կոմս. 1876, Թավրիզ - 1973, Բեյրութ) – ՀՅԴ ականավոր գործիչ, բժիշկ, լուսանկարիչ, ազգային-ազատագրական պայքարի ակտիվ մասնակից, ՎրԹանես Փափազյանի կրտսեր եղբայրը:

[3] Խոսքը Շանթի կնոջ՝ Ջավահիր Ներսիսյանի մասին է:

[4] Փարիզում Մայիլյանները զբաղվում էին մածունի արտադրությամբ և վաճառքով, ինչը նրանց որոշ ժամանակ անց մեծ հաջողություն բերեց: Այս մասին վկայում է Վիգեն Իսահակյանը իր «Հայրս» գրքում:

[5] Նշանավոր հայագետ Նիկողայոս Ադոնցը 1921-1931 ԹԹ. ապրում էր Փարիզում՝ զբաղվելով գիտական և ազգային գործունեությամբ, համալսարանում հայոց պատմություն դասավանդելով և բազմաթիվ թերթերի թղթակցելով: Նա երազում էր աշխարհի բոլոր հայագետներին համախմբել և հայագիտական հանդես հրատարակել Փարիզում: Գործի հովանավորումը ստանձնել էր ազգային բարերար Աբրահամ Ղուկասյանը, բայց բացառիկ մեծածախս այդ ծրագիրը չիրականացավ, ինչի մասին նամակում հիշատակում է Ավ. Իսահակյանը:

[6] Արմեն Տեր-Օհանյանի և նրա ընտանիքի հետ Ավ. Իսահակյանը մտերիմ է եղել դեռ 1914 թվականից, երբ երկու ընտանիքներն էլ ապրում էին Ժնևում: Տեր-Օհանյանների ընտանեկան վիշտը, որի մասին ասվում է նամակում, 1925 թ. փետրվարին նրանց դստեր՝ երիտասարդ Անահիտի վաղաժամ մահն էր:

[7] Նկատի ունի Կոստան Զարյանին:

[8] Նկատի ունի նկարիչ Լևոն Հազարապետյանին (1882-1946), որին ճանաչում էր Վենետիկից:

94. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 155)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 225-226:

[1] Խոսքը Սիմոն Փիրումյանի մասին է:

[2] Կարծում ենք, որ խոսվում է 20-րդ դարասկզբին Թիֆլիսում հայտնի ծխախոտագործական «Սեյլանյան եղբայրներ» առևտրական տան ֆաբրիկայատեր, գործարար Սեյլանյաններից մեկի մասին (Խ. Դադայան «Հայոց առևտրատնտեսական ներկայությունը Թիֆլիսում», Նորավանք, «21-րդ դար», 2008, թիվ 1):

[3] Բաքվի նավթարդյունաբերող հսկաների՝ Լիանոզովի, Մանթաշյանի անունների շարքում եղել է նաև բաժնետեր Շադինովի անունը:

95. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ

(էջ 156)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 226-227:

[1] Խոսքը վերաբերում է հայ կոմպոզիտոր և խմբավար Գուրգեն Ալեմշահին (1907-1947), ով 1926-1930 թթ. սովորել է Միլանի կոնսերվատորիայում:

[2] «Մարտակոչ», Թիֆլիս, 1923-1927 թթ., հիմնադիր՝ Ալ. Մյասնիկյան:

[3] Ժորժ Սանդ (1804-1876) – ֆրանսացի հանրահայտ գրող: Մտերիմ, սիրային հարաբերություններ է ունեցել Ալֆրեդ դը Մյուսեի հետ:

96. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՑԱՆԻՆ

(էջ 157)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 21-23:

[1] Խոսքը դաշնակցական գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի և Խորհրդային Հայաստանի պետական պաշտոնյա Սիմոն Փիրումյանի մասին է:

97. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՑԱՆԻՆ
(էջ 160)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գարեգին Ամատյանի ֆոնդ, անմշակ: Առաջին անգամ կրճատումներով տպագրվել է Արեւ 1979, էջ 228:

***Ամատյան Գարեգին** (1888, Արաբկիր - 1982, Երեւան) – հայ հոգեբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հասարակական գործիչ: Սովորել է Վիեննայի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանում, Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետում: 1914-1922 թթ. աշխատել է Լոզանի, ապա Ժնյուռնիայի հոգեբուժական կլինիկաններում, 1922-1928 թթ.՝ Բեյրութի որբանոցի բժիշկ և տնօրեն, 1933-1948 թթ.՝ Կահիրեի Գալուստյան ազգային վարժարանի դաստիարակ, 1948-1969 թթ. աշխատել է Երեւանում, Հանրապետական հոգեբուժական կլինիկայում:*

[1] Գ. Ամատյանի ուղարկած գրքերն են՝ «Ալկոհոլիկներն այլասերվա՞ծ են» (ֆրանսերեն, Փարիզ, 1918 թ.) և «Հոգեվերլուծումը» (Բեյրութ, 1925 թ.):

[2] Գարեգին Ամատյանը Հայաստան է եկել հայրենադարձության ալիքով 1948 թ. և աշխատել իր մասնագիտությամբ:

98. ՊՈՂՈՍ ՄԱՆԿԻՆՑՑԱՆԻՆ
(էջ 161)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես», Երեւան, 1962, թ. 4, էջ 178, այնուհետեւ՝ Արեւ 1979, էջ 228-229:

[1] «Նորք» հանդեսի 1926 թ. առաջին գրքում (էջ 73-93) տպագրվել է Ե. Զարենցի «Էլեգիա, գրված Վիեննայում» ստեղծագործությունը, որտեղ ուրվագծված է Ավ. Իսահակյանի կերպարը:

[2] «Նորք» հանդեսի 1926 թ. առաջին համարում (էջ 26-46) տպագրվել է նաև Դերենիկ Դեմիրճյանի «Կռվի դաշտում» պատմվածքը, որի վերնագիրը հեղինակը հետագայում փոխել է՝ դարձնելով «Միայն մեկը»:

[3] Հավանաբար Ավ. Իսահակյանը վրիպել է՝ նկատի ունենալով Աբազիի «Ապրողները» պատմվածքը («Նորք», 1926, գ. 1, էջ 15-27): Ալազանից այս համարում նյութ չկա տպված:

[4] Խոսքը Ակսել Բակունցի «Իվան բեյը» պատմվածքի մասին է («Նորք», 1926, գիրք առաջին, էջ 47-69):

[5] Խոսքը հրապարակախոս և պատմաբան Դավիթ Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը 19-րդ դարում» գրքի մասին է, որը 1926 թվականին տպագրվում էր Ս.Ղազարի տպարանում:

[6] Բարսեղյան Եվգինե (Սեբաթ ծածկանունով, 1900-1974) – Սովետական Հայաստանի վաստակավոր դերասանուհի, Պողոս Մակինցյանի կինը:

99. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ
(էջ 162)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 66-68:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 14-15 (անթվակիր նամակ):

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության:

100. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՑԱՆԻՆ
(էջ 165)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 884-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 229:

[1] Տարեթիվը՝ ըստ փոստային կնիքի:

[2] Ալեքսանդր Իսահակյան (1850-1926) – Ավ. Իսահակյանի ավագ եղբայրը:

101. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 166)

Ինքնագիրը պահվում է ՄՄԸԱ:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, թ. 4, էջ 177-178, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 230-231 և ԱԻՆ 2016, էջ 237-238:

[1] 1926 թ. օգոստոսին Մարտիրոս Սարյանը փարիզ է գործուղվել, ուր մնացել է մինչև 1928 թ. փետրվար ամիսը: Այդ ընթացքում Սարյանը ստեղծագործել է և կազմակերպել իր ստեղծագործությունների ցուցահանդեսը: Հետագայում՝ Սովետական Միություն ուղարկելու ճանապարհին, այդ 40 նկարները այրվել են՝ Կ.Պոլսի նավահանգստում ֆրանսիական չոգենավի վրա ծագած հրդեհի պատճառով:

[2] Թովմասը Հիսուսի աշակերտներից մեկն էր, որը հավատում էր միայն իր տեսածին: Թովմասի անունը հոմանիշ է դարձել «թևրահավատություն, անհավատություն» բառերին:

[3] Իսահակյանը մտադիր էր Երևան հասնել Վենետիկ-Բեռլին-Մոսկվա-Թիֆլիս երթուղիով, բայց հայրենիք վերադարձավ Վենետիկ-Կ.Պոլիս-Բաթում-Թիֆլիս ճանապարհով:

[4] Խոսքը վերաբերում է Ֆրանսիայում Սովետական Միության դիվանագիտական ներկայացուցիչ Սիմոն Փիրումյանին:

[5] Եղիա Ջուբար (1897-1938) – գրական-հասարակական գործիչ, հրապարակախոս: Եղել է չատ պարբերականների խմբագիր: 1926 թ. Փարիզում Ջուբարը խմբագրում էր «Երևան» թերթը: 1938 թ. նա ևս դարձավ ստալինյան բռնությունների զոհ:

102. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՑԱՆԻՆ

(էջ 168)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 69-71:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 12-13:

[1] Ըստ Ռուբեն Դարբինյանի վկայության, Իսահակյանից ստացած իր վերջին նամակը եղել է 1926 թ. օգոստոսի 6-ին. ըստ ամենայնի, այս նամակը նախորդն է:

[2] *«Անի» բանաստեղծությունը (եր. Մովսեսյան ստորագրությամբ) առաջին անգամ տպագրվել է «Հայրենիք», Բոստոն, 1926, թ. 10, էջ 16-17, այնուհետև «Սովետական դրականություն և արվեստ», 1945, թ. 10, էջ 3, ապա՝ հետագա ժողովածուներում: Այն զետեղված է նաև ներկայիս ակադեմիական հրատարակության առաջին հատորում (Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, Երևան, 2003, հատոր 1, էջ 458):*

[3] *Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 9-II:*

103. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ

(էջ 170)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 23:

[1] *Ավ. Իսահակյանը Իտալիայից բեռնատար նավով, որպես միակ ուղևոր, Հայաստան ուղևորվեց 1926 թ. սեպտեմբերի 20-ին: Ցամաք է իջել Բաթումում, այնուհետև ուղևորվել է Թիֆլիս և Երևան է հասել հոկտեմբերին:*

104. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ

(էջ 170)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 71:

Առաջին անգամ հրապարակել է Ռ. Դարբինյանը «Հայրենիք», Բոստոն, 1958, թ. 2, էջ 12-13:

105. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ

(էջ 171)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ՀԱՖ, 1083:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 231-232:

106. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՑԱՆԻՆ
(էջ 172)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 31-32:

[1] ***Ժոզեֆ-Շառլ Մարդրյուս*** *(1868-1949) – ֆրանսացի ռազմական բժիշկ, բանաստեղծ, թարգմանիչ: Մնվել է կահիրեում, ապրել մուսուլմանական աշխարհում, իր մասին ասել է. «Ես մուսուլման եմ ծնունդով, փարիզեցի եմ՝ պատահականության բերումով»: Թարգմանել է «Հազար ու մի գիշեր», «Ղորան» աշխարհահռչակ աշխատությունները:*

[2] ***Լեոն Դոդե*** *(1867-1942) – գրաքննադատ, հրապարակախոս, վիպասան, Ալֆոնս Դոդեի որդին: Այստեղ խոսքը «Le Reve Eveille» գրքի մասին է, որը տպագրվել է Փարիզ, 1926:*

[3] ***Բխակոի Կաբիր*** *(1440-1518) – միջնադարյան հնդիկ միստիկ-բանաստեղծ, վիլլիսոփա, նորարար արձակագիրը: Կաբիրը ծագումով արհեստավորների կաստայից էր, զբաղվում էր մանածագործությամբ:*

Ավ. Իսահակյանը նկատի ունի Ռ. Թագորի «Կաբիրի պոեմները» թարգմանական գիրքը:

[4] ***Ուոլթ Ուիթման*** *(1819-1892) – ամերիկացի բանաստեղծ, հրապարակախոս, գրականության ասպարեզում նորարար-վիլլիսոփա: 1873-1892 թթ. Ուիթմանը ապրում էր կաթվածահար վիճակում, բայց գրում էր լավատեսությամբ փայլող գրական ստեղծագործություններ: 1918 թ. ֆրանսացի հայտնի բանաստեղծ Անդրե Ժիդը թարգմանում և հրատարակում է Ուիթմանի բանաստեղծությունների ժողովածուն, որի մասին խոսվում է նամակում:*

107. ՍՈՖԻԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 173)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

Նամակը գրված է Ristoratore-Pensione «Centrale» *բլանկի վրա:*

[1] *Լիդո կղզին գտնվում է Վենետիկի ծոցի ջրերում, Ս. Ղազար կղզուն մոտ:*

[2] Domus civica – *քաղաքացիական տուն՝ հյուրանոցի տիպի ժամանակավոր կացարան (լատ.):*

[3] *Նկատի ունի Պողոս Մակինցյանին:*

108. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 174)

Ինքնագիրը պահվում է ԱԻՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 232-233:

[1] *Ինքնագրում՝ այսպես:*

[2] *Ավ. Իսահակյանը Սովետական Հայաստան է ուղևորվել իտալական բեռնատար մի նավով, որի միակ ուղևորը ինքն էր:*

[3] ***Դանիել Շահվերդյան*** *(Դանուշ. 1882-1937) – հասարակական, պետական-քաղաքական գործիչ, 1922-1923 թթ. եղել է ՀԽՍՀ Արդարադատության ժողկոմ, ապա անցել է դիվանագիտական աշխատանքի՝ դառնալով Անդրկովկասի Ֆեդերացիայի առևտրական ներկայացուցիչը Կ.Պոլսում և Փարիզում: 1926 թ. նա Խորհրդային Միության ներկայացուցիչն էր Պոլսում: 1924-1926 թթ. նա էր համակարգում արտասահմանի հայության վերադարձը Հայաստան: 1937 թ. նա էլ դարձավ ստալինյան բռնությունների զոհ:*

[4] *Նկատի ունի Պողոս Մակինցյանին:*

[5] *Գաբրիել վարդապետ Նահապետյանը հրաժեշտի պահին Ս. Ղազարում Ավ. Իսահակյանին տվել էր հրաժեշտի նամակ՝ «բարի մաղթանքի ուղերձ»:*

[6] *Հայր Սրապիոնը Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանի ուսումնապետն էր:*

[7] *Նկատի ունի Վենետիկի Մխիթարյան Միաբանության անդամ Գևորգ Պայանին:*

[8] ***Գաբիկյան Խորեն*** *(1891-1973) – մանկավարժ, աշխատել է ուսուցիչ Կ.Պոլսում, ապա Մուրատ-Ռափայելյան վարժարանում:*

109. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 175)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Արամ Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 178-180, այնուհետև՝ Աիեժ 1979, էջ 233-236:

*[1] **Գևորգ Աֆրիկյան** – Իսահակյանի Փեփրոնն քրոջ որդին, բանաստեղծ: Նա մահացել է բծավոր տիֆից Մալկայում, որտեղ օգնում էր գաղթականներին՝ աշխատելով բուժակ:*

[2] Վիգոն Ավետիք Իսահակյանի Գևորգ եղբոր աղջիկն էր, Միսակի քույրը:

[3] Բժիշկ Թովմաս Ասլանյանը Վիկտորիա Աբովյանի ամուսինն էր:

[4] Նկատի ունի Վիկտորյա Աբովյանին:

[5] Նկատի ունի Սիմոն Նաբինյանին, որի կեղծանուններից մեկը Մնար էր:

[6] Սիմոն Հակոբյանը 1926 թ. դասավանդում էր Երևանի Պետական համալսարանում

[7] Սիսակ Տեր-Սիմոնյանը Իսահակյանի երիտասարդության ընկերներից մեկն է, որի հետ եղել են Օդեսայի աքսորավայրում: Սիսակը Սովետական Հայաստանի պետական գործիչ Դրաստամատ Սիմոնյանի հորեղբայրն էր:

[8] Վիկտորիայի միակ զավակը էրիկ Շահխաթունին (ծնվ. 1907 թ.) այդ ժամանակ սովորում էր բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ ինժեների մասնագիտություն ստանալու համար:

[9] Ռուբինը (1857-1926) Ավ. Իսահակյանի ավագ եղբայրն էր:

[10] Տերտերը՝ Մկրտիչ Աֆրիկյանը, Ավ. Իսահակյանի Փեփրոնն քրոջ ամուսինն էր:

[11] Խոսքը Գաբրիել վարդապետ Նահապետյանի մասին է:

[12] Նկատի ունի Հովսեփ վարդապետ Մարգարյանին:

*[13] **Հովհաննիսյան Վահան** (1894, Ախալցխա - 1977, Վենետիկ, Ս. Ղազար) – Հայ գրող, մանկավարժ, հոգևոր գործիչ, 1913 թվականից Մխիթարյան միաբանության անդամ, 1924-1926 թթ.՝ Մուրատ-Ռա-*

Ֆայելյան վարժարանի մանկավարժ, 1930-1931 թթ.՝ վարժարանի տնօրեն, 1957-1960 թթ.՝ վարժարանի տեսուչ: 1929-1930 թթ. եղել է «Բազմավեպ» ամսագրի տնօրենը:

[14] Նկատի ունի հայր Արսեն Ղազիկյանի քրոջ ընտանիքը:

[15] Հայր Արսեն Ղազիկյանը Իսահակյան ընտանիքի մտերիմ և «հավատարիմ բարեկամներից» մեկն էր, ինչպես վկայում է Վիգեն Իսահակյանը «Հայրս» գրքում (Երևան, 2011, էջ 232): Հայաստան մեկնելուց առաջ Իսահակյանը մի քանի օրով մնացել էր Հ. Արսեն Ղազիկյանի քրոջ՝ Բաբայաններից տանը:

[16] Մովիկյանների ընտանիքը Վենետիկում բարեկամություն էր անում Իսահակյան ընտանիքի հետ:

[17] Ավ. Իսահակյանի ձեռագրերն ու գրքերը՝ տեղավորած 4-5 սնդուկի մեջ, պահվել են Ս. Ղազար կղզու գրադարանում մինչև 1936 թվականը, երբ Խորհրդային Միությունն մշտական բնակության գնացող բանաստեղծը հետ վերցրեց դրանք՝ հետը տանելու համար:

*[18] **Գևորգյան Մամիկոն** (1877-1962) – գրական և թատերական գործիչ:*

*[19] **Լալայան Երվանդ** (1864-1931) – ազգագրագետ, բանահավաք, հնագետ: Նա 1921 թ. Թիֆլիսից տեղափոխվել է Երևան՝ մշտական բնակության:*

*[20] **Սահակ Մատինյան** (1870-1942) – 20-րդ դարասկզբին աշխատել է Բաքվի նավթահանքային գրասենյակում, ձերբակալվել ցարական Ռուսաստանի օրոք, 1920-ական թթ. սովետական կարգերի հաստատումից հետո աշխատել է որպես մանկավարժ բուհական համակարգում: Ս. Մատինյանը Հովհ. Թումանյանի մերձավորներից մեկն է եղել: Նրա դուստրը հայտնի նկարչուհի Սահականույշ Մատինյանն է (1921-1993):*

110. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 179)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 21-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 239:

[1] 1926 թ. հոկտեմբերի 22-ին Լենինականը ցնցվեց ավերիչ երկրաշարժից և մեծ կորուստներ ունեցավ:

111. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ
(էջ 180)

Ինքնագիրը պահվում է Բեյրութի Համազգայինի ճեմարան, Ն. Ադոնցի արխիվ: Լուսապատճենը Ավիկ Իսահակյանին ուղարկել է Երվանդ Փամպուքյանը:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Երկրաշարժի հետևանքները վերացնելու նպատակով 1927 թ. կազմվել էր ՀՕԿ-ի «Լենինականի վերաշինության ֆոնդը», որն աղետի գոտում շինարարության համար հատկացրել էր 140.000 ռուբլի:

112. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
(էջ 182)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Կարա Դարվիշի ֆոնդ, 344:

Առաջին անգամ հրատարակել է Դավիթ Գասպարյանը («Հայկական ապագայապաշտություն», Երևան, 2009, էջ 146):

[1] Թվագրվում է ըստ ծրարի փոստակնիքի:

***Գենջյան Հակոբ** (Կարա Դարվիշ, 1872, Ստավրոպոլ - 1930, Թիֆլիս) – ֆուտուրիստ գրող, թարգմանիչ, մանկավարժ, Գևորգյան ճեմարանի սաներից: Հայերենից ռուսերեն է թարգմանել Շիրվանզադեի, Լ. Շանթի և Ա. Ահարոնյանի որոշ ստեղծագործություններ:*

[2] Ավ. Իսահակյանը խոստացել էր Կարա Դարվիշին՝ հայ պետական այրերի մոտ բարեխոսել նրան տրվելիք թոշակի հարցով:

113. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 182)

Ինքնագիրը պահվում է ԱԻՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 236-238:

[1] Իսահակյան Աբաս (1900-1976) – Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր տղան, Միսակ (Իսահակ) Իսահակյանի կրտսեր եղբայրը: Երևանի համալսարանում սովորելու չրջանում կազմակերպում է «Дашсмол»ի (Դաշնակցական երիտասարդական սեկցիա) մասնաճյուղը: 1926 թ. բանտարկվում է և երկար տարիներ՝ 1927-1954 թթ. անցկացնում ստալինյան ճամբարներում ու աքսորավայրերում:

Կյանքի վերջին տարիներին զբաղվել է իր եղբոր՝ Իսահակի և Վարպետի գրքերի հրատարակմամբ:

[2] Հայաստանի ազգային գրադարանը հիմնադրվել է 1921 թ., պաշտոնապես բացվել 1922 թ.:

[3] Երևանի պետական համալսարանի գրադարանը ստեղծվել է 1920 թ., բայց հանդիսավոր բացումը կայացել է 1922 թ. նոյեմբերի 8-ին:

[4] Սուրբ Էջմիածնի Մատենադարանը պետականացվել է 1920 թ. դեկտեմբերի 17-ին: Այնտեղ պահված մոտ 2000 ձեռագրերը 1939 թ. տեղափոխվում են Երևան՝ Հանրային գրադարանի շենքում տեղավորված Մատենադարան:

[5] Նկատի ունի գեներալ Գաբրիել (Գավրիիլ) Կորգանովին (1880-1954), որը 1917-1918 թթ. եղել է Կովկասյան ռազմաճակատի չտաբի պետի տեղակալը: 1919 թ., գալով Փարիզ, նա մասնակցել է ՀՀ պատվիրակության աշխատանքներին՝ որպես ռազմական խորհրդական: 1929 թ. Փարիզում ստեղծվեց «Հայ սպայից միությունը»՝ 1914-1921 թթ. բանակի նախկին սպանների նախաձեռնությամբ. միության նախագահ-հիմնադիրը Գ. Կորգանովն էր՝ մասոնական օթյակի անդամ:

[6] 1926 թ. Սոֆյա Իսահակյանը ապրում էր Փարիզում, իսկ որդին սովորում էր Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցում:

114. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 185)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 238-240:

[1] Սոֆիկ Իսահակյանը 1926 թ. հոկտեմբերից տեղափոխվել էր Փարիզ, իսկ Վիգենը 1 տարի ևս մնալու էր Վենետիկում՝ ուսումը շարունակելու դիշերօթիկ վարժարանում:

[2] Խոսքը վերաբերում է Ավ. Իսահակյանի վերադարձին նվիրված ընդհուպթին, որ կայացել էր 1926 թ. հոկտեմբերի 29-ին Երևանի Կուլտուրայի տանը («Խորհրդային Հայաստան», 1926, 31 հոկտեմբեր):

[3] Աբբա Ժյուստը Վիգենն Իսահակյանի ֆրանսերենի ուսուցիչն էր: Նա ֆրանսիական կառավարության կողմից ուղարկվել էր Վենետիկ՝ դպրոցում ֆրանսերեն լեզու ուսուցանելու առաջադրանքով:

[4] Վենետիկի Մուրատ-Ռափայելյան դպրոցում աշխատում էր Պոլսից եկած մի հայ ուսուցիչ՝ Խոջա Էֆենդին, որը չատ լավ տիրապետում էր ֆրանսերեն լեզվին:

[5] Նկատի ունի նկարիչ Հարությունն Ածեմյանին:

[6] Պալըքճյան Գևորգ (Գեղարքունի ծածկ., 1901, Պոլիս-1974, Պլովդիվ) – բանաստեղծ:

[7] Պագանինների ընտանիքը չատ է օգնել Վիգենին, հյուրընկալել նրան, երբ նրա ծնողները դնացին և երևխան հայտնվեց միայնության մեջ:

[8] Պագանինները և դե-Մարքինները Ավ. Իսահակյանի վենետիկյան բնակարանի (Դուրսոդուրս 2266) տանտերերն էին:

115. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 187)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 21-III:
Տպագրվում է առաջին անգամ:

116. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 188)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 21-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 240:

[1] Հավանաբար նկատի ունի Սահակ Տեր-Մովսեսյանին, որը հեղինակն է «Պատմութիւն հայոց սկիզբէն մինչեւ մեր օրերը» երկհատորանոց դրքի՝ տպագրված 1922-1923 թթ., Վենետիկում:

[2] Տե՛ս 114 նամակի 6-րդ ծանոթագրությունը:

1927

117. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՑԱՆԻՆ
(էջ 190)

Ինքնագիրը պահվում է Վարդգես Սարգսյանի ընտանեկան արխիվում:

Առաջին անգամ հրապարակել է Վարդգես Սարգսյանը «Մի թանկագին մասունք» հոդվածում, «Բանվոր», Լենինական, 1975, 23 սեպտեմբեր:

Վարդգես Սարգսյանը 1927 թ. Լենինականի երկաթուղային դպրոցի աշակերտ էր:

118. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 191)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 22-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 240-241:

119. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 192)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

120. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 193)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 241:

[1] Նկատի ունի Փարիզում բնակվող Նիկողայոս Ադոնցին:

[2] Խոսքը Ավ. Իսահակյանի «Խորհրդային Հայաստանում» վերնագրով հոդվածի մասին է («Խորհրդային Հայաստան», 1926, 27 նոյեմբեր):

*[3] **Աղաջանյան Ստեփան** (1863, Շուշի - 1940, Երևան) – հայ դեղանկարիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, Սոֆյա Իսահակյանի քեռին: Աղաջանյանը հիմնավոր նկարչական կրթություն ստացել է 1886-1890 թթ. Մարսելի նկարչական ստուդիայում, 1897-1900 թթ.՝ Փարիզի Ժուլիանի ակադեմիայում: Շուշիում, Բաքվում աշխատելուց հետո 1921 թ. վերադարձել է Հայաստան և աշխատել իբրև դեղանկարչության դասատու Երևանի Դեղարվեստի պետական ակադեմիայում:*

121. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՑԱՆԻՆ

(էջ 194)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի ֆոնդ, 1074:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 242, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 243:

***Մելիքյան Ռոմանոս** (1883-1935) – հայ երգահան, երաժշտագետ, խմբավար: 1910-1914 թթ. սովորել է Պետերբուրգի կոնսերվատորիայում, ապա աշխատել Թիֆլիսում: 1921 թ. Սովետական Հայաստանի հրավերով Թիֆլիսից տեղափոխվել է Երևան և հիմնել երաժշտական ստուդիան (հետագայում՝ կոնսերվատորիա), 1924 թ. Ստեփանակերտում հիմնել է երաժշտական ուսումնարան, 1925-1927 թթ. Թիֆլիսում գլխավորել է «Հայարտան» երաժշտական սեկցիայի աշխատանքները:*

122. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 194)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱՐ, ԱԻՖ, 22-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 244:

[1] Խոսքը Նիկողայոս Ադոնցի մասին է:

[2] Խոսքը վերաբերում է Աբրահամ Ղուկասյանին, որը շարունակում էր օգնել Ավ. Իսահակյանի ընտանիքին՝ բանաստեղծի Հայաստան գնալուց հետո էլ:

[3] Սոֆյա Իսահակյանը մասնագիտություն ձեռք բերելու նպատակով Փարիզում հաճախում էր Իգա Ռուբինշտեյնի նշանավոր կոմերցիական ինստիտուտի դասընթացներին: Մի քանի ամիս անց նա դիպլոմ է ստանում և աշխատանքի անցնում նույն ինստիտուտում:

123. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 195)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 180, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 242-243:

[1] Սովետական Միությունն այդ գումարը հատկացրել է Սովետական Հայաստանին՝ 1926 թ. հոկտեմբերի 22-ի երկրաշարժից ավերված Լենինականը վերակառուցելու նպատակով:

[2] Ավետիք Իսահակյանի առաջին վերադարձի տարիներին (1927-1930 թթ.) հրատարակվել են գրքերից՝ «Լիլիթ», Թիֆլիս, 1927, «Համբերանքի չիբուխը», Երևան, 1929, «Արու Լալա Մահարի», Երևան, 1929 և «Բանաստեղծություններ» Երևան, 1930:

[3] Խոսքը Գեղամ Կոստանյանի մասին է:

[4] Նկարիչ Մարտիրոս Սարյանը գործուղումով Փարիզում էր 1926-1927 թթ.:

[5] Նկատի ունի Պողոս Մակինցյանին, որն իր կնոջ՝ Սեբաստի հետ 1927 թ. դիվանագիտական աշխատանքով գտնվում էր Փարիզում:

[6] Նկատի ունի պատմաբան Նիկողայոս Ադոնցին:

[7] Խոսքը նկարիչ Սարգիս և Վասիլ Խաչատրյանների մասին է:

[8] Գաբրիել Քոչարյանը՝ Սոֆի Խահակյանի եղբայրը, 1927 թ. ապրում էր Փարիզում:

124. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 197)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 22-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 243-244:

[1] Ս. Ղազար կղզու վանքի միաբանների հետ բանաստեղծը պահպանել է նամակագրական կապ, տպագրության համար ուղարկել իր ստեղծագործություններից: «Արարատի ծեր կատարից» բանաստեղծությունը՝ հեղինակային ձեռագրով, և «Երանելի աբբա Մարկոս» արձակ պատմությունը տպագրվել են «Գեղունի», Վենետիկ, 1927, թ. 1, էջ 1 և էջ 9-14:

125. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 198)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 22-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 244-245:

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության: (Նախորդ նամակում ասվում է, որ նամակի հետ կլինեն պոստ քարտեր: Այս բացիկը Վաղարշապատի Լենինի անվան ջրանցքի պատկերով է):

126. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 198)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 281-I:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության: (Բացիկը Երևանի կոնսերվատորիայի շենքն է պատկերում: Այս և նախորդ բացիկներն ուղարկվել են Վիգենին՝ իր հավաքածուի համար):

127. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 198)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

128. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 200)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 245-247:
[1] Նկատի ունի իր փեսիրոնն քրոջ ամուսնուն՝ Մկրտիչ Աֆրիկյանին:
[2] Հեղինեն և Դշխուհին Ավ. Իսահակյանի փեսիրոնն քրոջ աղջիկներն էին, դերասան Գևոդամ Աֆրիկյանի քույրերը:
[3] Անուշ Թումանյան (1898-1927) – բանաստեղծուհի, գրել է նաև պատմվածքներ:

129. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 202)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 879-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 247:

130. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ
(էջ 203)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՖ, թղթ. 244/21, վավ. 63:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 234, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 245:

131. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 203)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 22-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 246:

[1] Տարեթիվը՝ բացիկի փոստային կնիքից:

[2] Ավ. Իսահակյան «Լիլիթ (Արևելյան տեսիլներ)», Թիֆլիս, Զակկնիգա, 1927, 113 էջ:

[3] Նկատի ունի «Աբու Լալա Մահարի», Բոստոն, «Հայրենիք», 1922 թ. հրատարակությունը:

[4] Սիմոն Փիրումյանը Փարիզում էր գտնվում դիվանագիտական աշխատանքով:

132. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 204)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 248:

[1] Տարեթիվը ըստ բացիկի փոստային կնիքի:

[2] Աբաս Իսահակյանը 1927 թ. ձերբակալվել է, 2 տարի մնացել Մոսկվայում, ապա աքսորվել Միջին Ասիա: Աբասը աքսորում մնացել է մինչև 1954 թվականը:

133. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 205)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 22-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 247:

[1] Վենետիկի Մխիթարյան միաբանության աբբահայր Կյուրեղյանի մահից հետո 1921 թ. աբբահոր պաշտոնը մնում է թափուր, 1921-1929 թթ. տեղապահ է դառնում Հովհաննես վարդապետ Թորոսյանը:

[2] Հիշատակվում է մարտի 1-ին ուղարկված երկու բացիկները:

134. ԼՈՒՍԻԿԻՆ
(էջ 206)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 288-I:
Տպագրվում է առաջին անգամ:

135. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 206)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 248:

[1] Սիմոն Փիլոումյանը Ավետիք Իսահակյանին պիտի հանձներ Փարիզից Սոֆիկ Իսահակյանի ուղարկած գիրքը՝ «Աբու Լալա Մահարի»ի բոստոնյան հրատարակությունը՝ Թիֆլիսում վերատպելու համար:

136. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 207)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 249:

[1] Խոսքը վերաբերում է Զավեն-Տիգրանին:

[2] Նկատի ունի Փարիզում ապրող հայագետ Նիկողայոս Ադոնցին:

[3] Խոսքը Հովհաննես վարդապետ Զոհրապյանի աշխատասիրությամբ 1805 թ. Վենետիկի Ս. Ղազար տպարանում հրատարակված «Աստուածաշունչ (Մատեան Հին և Նոր կտակարանաց)» գրքի մասին է:

137. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 208)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Նամակն առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 180-182, այնուհետև Աիեժ 1979, էջ 248-252:

[1] Խոսքը Փարիզում բնակվող Կոստանյան Գեղամի մասին է:

[2] Դանիել Շահվերդյանը (Դանուշ) 1927 թ. Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր Փարիզում:

[3] Նկատի ունի «Աբու Լալա Մահարի» պոեմի Բոստոնի 1922 թ. հրատարակությունը, որ խնդրել էր Փարիզից ուղարկել՝ Թիֆլիսում վերատպելու համար:

138. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 212)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 250:

[1] Երվանդ Քոչարը 1922 թ. Վենետիկում եղած ժամանակ ստեղծել է Ավ. Իսահակյանի, հայր Կյուրեղյանի, Ժորժ Զաքարյանի, կարդինալ Լաֆոնտենի դիմաքանդակները: Երվանդ Քոչարի հեղինակած Ժորժ Զաքարյանի դիմաքանդակը 2015 թ. ե. Քոչարի թանգարանին է նվիրել Ժորժ Զաքարյանի որդին՝ Պաոլո Զաքարյանը: Ավ. Իսահակյանի դիմաքանդակը երկար տարիներ տեղադրված է եղել Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան հոգևոր կրթարանի ճեմասրահում: Ներկայումս նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Նամակում խոսվում է ե. Քոչարի 1922 թ. Վենետիկում նկարած «Ավետիք Իսահակյան» դիմանկարի (գրաֆիկա, մատիտ) մասին, որից Փարիզում ցանկացել են փոստային բացիկ տպագրվել, բայց ծրագիրը չի իրագործվել:

Այժմ դիմանկարը պահվում է Ե. Քոչարի թանգարանում:

[2] Եղիա Ջուբարը 1925 թ. Փարիզում խմբագրում էր «Երևան» թերթը, աշխատակցում Ֆրանսիայի կոմկուսի հայկական ենթաճյուղ «Վերելք» թերթին:

[3] Թումանյան Աշխեն (1891-1968) – Թարգմանչուհի, Հ. Թումանյանի դուստրը, իրավաբան Գևորգ Խատիսյանի կինը, Հ. Թումանյանի թանգարանի առաջին տնօրենը: 1926-1933 թթ. նա աշխատում էր Հանրային գրադարանում՝ որպես ընթերցասրահի վարիչ, ապա տնօրեն:

139. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 213)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

140. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 214)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-III:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] Նկատի ունի իր վաղեմի ընկերոջը՝ Սիսակ Տեր-Սիմոնյանին (1872-1935):

141. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 215)

Ինքնագիրը (հոկտեմբերի 3-ին գրված երկրորդ բացիկը) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 23-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 251:

142. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 215)

Ինքնագիրը (մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 24-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 252-253:
[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

143. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 216)

Ինքնագիրը (բացիկ, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 24-III:
Տպագրվում է առաջին անգամ:

144. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 217)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 24-III:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] Տարեթիվը և վայրը՝ փոստային կնիքից:
[2] «Լիլիթ – Արևելյան տեսիլներ», Թիֆլիս, 1927, 114 էջ:

145. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 218)

Ինքնագիրը (բացիկ, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 24-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 254:

146. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 218)

Ինքնագիրը (բացիկ, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 24-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 255:
*[1] **Մաքսուդ Միհրդատյան** – բելգիահայ ճարտարապետ և հասարակական գործիչ: Միհրդատյանի նախագծով է կառուցվել Փարիզի հայ ուսանողական տունը և հայկական եկեղեցին: Եղել է ՀՕԿ-ի ակտիվ գործիչ, կապեր է հաստատել Խորհրդային Հայաստանի և Ֆրանսիայի միջև:*

[2] Նկատի ունի Եղիա Ջուբարի կնոջը՝ Մանյա Ջուբարին:

147. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 219)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Հավանաբար նկատի է ունեցել նկարիչ Սարգիս Խաչատուրյանին:

148. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 220)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Պողոս Մակինցյանը այդ ժամանակ վերադարձել էր Փարիզից, որտեղ ապրում և աշխատում էր: 1927 թ. վերջերից նա աշխատել է Թիֆլիսում, ապա Երևանում՝ Գիտությունների Ակադեմիայի Անդրկովկասյան մասնաճյուղում որպես գիտական քարտուղար:

[3] Հովսեփը Սոֆիկ Իսահակյանի եղբայրն էր, որ ապրում էր Մոսկվայում:

149. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 222)

Ինքնագիրը (մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 253-255:

[1] Ըստ ամենայնի Սոֆյա Իսահակյանին լուրեր էին հասել, որ Հայաստանում ամուսինը վատ է հագնվում:

150. ՍՈՖԻԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
(էջ 224)

Ինքնագիրը պահվում ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] 1927 թ. դեկտեմբերի 2-ին Մոսկվայի Կրեմլի պահլիճում սկսվել է կոմկուսի (Բ.) համամիութենական 15-րդ համագումարը, որին մասնակցել են նաև հայ պատվիրակները:

[2] Հայաստանի իշխանությունների կողմից Ավ. Իսահակյանի որդի Վիգենին՝ որպես Սորբոնի համալսարանի ուսանողի, խոսք էր տրված նշանակել մի համեստ չափսի թոշակ՝ 30 դոլարի չափով: Երկուսուկես տարի ձգձգելուց հետո խոստումը չի կատարվում և Վիգենին ուսանողական թոշակ չի նշանակվում:

1928

151. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 227)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Հավանաբար Սոֆիկ Իսահակյանը խոսել է լոնդոնահայ ինժեներ Միքայելյանի մասին, որի անունը հիշատակվել էր նախորդ նամակներից մեկում (146 նամակ 1927 թ. 17 նոյեմբեր):

[2] Վանյա Քոչարյանը Սոֆի Իսահակյանի եղբայրն էր, որ բնակվում էր Մոսկվայում:

152. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 228)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 257:

[1] Ավ. Իսահակյանի եղբոր տղան՝ Աբասը, բանտում էր, որտեղ 2 տարի մնալուց հետո աքսորվում է Սիբիր, ապա Միջին Ասիա:

[2] Նկատի ունի Սիսակ Տեր-Սիմոնյանին, որի հետ Ավ. Իսահակյանը ապրում էր Երևանի հյուրանոցում, նույն բնակարանում:

153. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 229)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] 01.02.1925-30.01.1928 թթ. Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահը Սարգիս Համբարձումյանն էր, որին փոխարինելու եկավ Սահակ Տեր-Գաբրիելյանը՝ 01.02.1928-30.01.1935 թթ.:

154. ՍՈՖԻԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
(էջ 229)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Տիրուհին Գեղամ Կոստանյանի եղբոր՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, հայագետ կարապետ Կոստանյանի (1853-1920) կինն է:

[1] 1928 թ. փետրվարից Հայաստանի ժողկոմխորհի նախագահ դարձավ Սահակ Տեր-Գաբրիելյանը (1886-1937): Նրա պաշտոնավարումը չարունակվեց մինչև 1935 թ.: 1920-1928 թթ. նա աշխատել էր Մոսկվայում և Անդրկովկասյան խորհրդային Ֆեդերացիայում՝ որպես ՀխՍՀ լիազոր ներկայացուցիչ:

155. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
(էջ 231)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 258:

[1] Փարիզում Գեղամ Կոստանյանը դրամով օգնում էր Սոֆիկ Ի-սահակյանին, որի դիմաց Ավ. Իսահակյանը դրամը հանձնում էր Գե-ղամի եղբոր՝ Կարապետ Կոստանյանի Լենինականում ապրող ընտա-նիքին:

[2] «Հայաստանի Կոչնակ» շաբաթաթերթում «Հայ ազգային կեանք» խորագրի տակ կարդում ենք «Ա. Իսահակեանի գրական գործերն ու անոնց վերլուծումը» վերնագրով տեղեկատվությունը. «Հայ Կրթական հիմնարկութեան ժողովը յունուար 31, Գշ. իրիկուն, գրասէրներու համար եղաւ իսկական վայելք մը, զոր հրամցուց պր. Վարդգես Ահարոնեան իր այնքան խնամքով պատրաստած դասախո-սութեամբ (1928, թ. 6, էջ 183):

156. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ
(էջ 232)

Հեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՅ, 253-Ի:

Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, թ. 4, էջ 182, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 255:

***Մաքսիմ Գորկի** (Ալեքսեյ Պեշկով. 1868-1936) – ռուս գրող, ար-ձակագիր, դրամատուրգ: Գորկին 18 տարի եղել է վտարանդության մեջ, որից 15 տարին ապրել է Իտալիայի Կապրի կղզում: Խորհրդա-յին Միություն վերադարձել է 1932 թվականին:*

Մ. Գորկին և Ավ. Իսահակյանը իրար հետ ծանոթացել են 1928 թ. Հուլիսին, Երևանում:

1916 թ. Մաքսիմ Գորկին կազմել և խմբագրել է «Сборник армян-ской литературы» (Санкт-Петербург, изд. Парус, 1916) *դիրքը, որին զուգահեռ Մոսկվայում Վալերի Բրյուսովը կազմում էր* «Поэзия Армении с древнейших времен до наших дней в переводе русских поэтов» (Москва, изд. Московский Армянский комитет, 1916) *դիր-քը: Այս երկու դրքերում էլ տեղ են գտել Ավ. Իսահակյանի բանաս-տեղծությունները:*

157. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 232)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 259:

158. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 233)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 260:

159. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 234)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

160. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 236)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] 1927 թ. հոկտեմբերին Ֆրանսիայի կառավարությունը ճերբակալել է Եղիա Զուբարին և երկրից արտաքսել: Զուբարը եկել է Հայաստան և աշխատել «Խորհրդային Հայաստան» թերթում, ապա նշանակվել Ադրբեջանական ՍՍՀ Լուսավորության մինիստրի տեղակալ:

161. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 237)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 255-257:

[1] Խոսքը հայտնի բանասեր Թեոդիկի (Թեոդորոս Լափչինճյան) 1928 թ. մայիսի 24-ի մահվան մասին է: Քեմալական չարժման հաղթանակից հետո նա մեկնել է Փարիզ և այնտեղ ապրել մինչև կյանքի վերջը՝ պարբերաբար հրատարակելով իր Տարեգրքերը:

*[2] **Դրամբյան Ռուբեն** (1891, Ալեքսանդրապոլ - 1991, Երևան) – արվեստաբան, 1925-1951 թթ. Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրենն:*

162. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 239)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՅ, 1448 ժդ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 257:

***Լևոնյան Գարեգին** (1872, Ալեքսանդրապոլ - 1947, Երևան) – բանասեր, արվեստաբան, աշուղ Ջիվանու զավակներից մեկը, Ավ. Իսահակյանի մանկության ընկերներից: Նա 1908-1922 թթ. եղել է Թիֆլիսի «Գեղարվեստ» հանդեսի խմբագիր-հրատարակիչը, 1925 թ. ընտրվել է ՀԽՍՀ հնությունների պահպանության կոմիտեի անդամ և աշխատել Երևանում: 1932 թ. Գ. Լևոնյանը առաջինն է ստացել արվեստի վաստակավոր գործիչի կոչում, 1939 թվականից Լևոնյանը աշխատել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայում, պատմության ինստիտուտում:*

163. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 239)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] 1928 թ. Մինքայել Կարաբեկյանը Խորհրդային Հայաստանի ՀՕԿ-ի ներկայացուցիչն էր Բեռլինում:

*[2] **Դրաստամատ Տեր-Սիմոնյան** (1895-1937) – հայ կուսակցական և պետական գործիչ, հրապարակախոս, գրականագետ: Նա 1928 թ.*

դարձավ Փարիզի հայկական «Երևան» թերթի խմբագիրը՝ փոխարինելով Ե. Զուբարին: Այս գործիչը, որ աշխատել էր որպես Գրողների միության նախագահ, Հայկական խորհրդային հանրագիտարանի տնօրեն և այլ պատասխանատու պաշտոններում, 1937 թ. անհիմն բռնադատվել է և գնդակահարվել:

[3] Խոսքը Ամերիկայում 1924 թվականից ապրող Նիկողայոս Խաչակյանի մասին է, որի խոստումներն այդպես էլ չեն իրականացել:

[4] **Տեր-Գաբրիելյան Սահակ** (1886-1937) – պետական և կուսակցական գործիչ, 1928-1935 թթ. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ: 1937 թ. նրան ձերբակալել են սին մեղադրանքներով: Հարցաքննության ժամանակ Ս. Տեր-Գաբրիելյանին Երևանի Ներքին գործերի մինիստրության չնչքի պատուհանից դուրս են նետել, և նա մահացել է փողոցի մայթեզրին: Այսպիսի ճակատագիր ուներ «ազնիվ, ժողովրդասեր» գործիչներից մեկը:

[5] **Երզնկյան Արամայիս** (1879-1937) – կուսակցական գործիչ, անընդմեջ ընտրվել է Անդրկովկասի կուսակցական ղեկավար մարմիններում, եղել է նաև Երևանի քաղաքապետ:

1937 թ. նա որպես «ժողովրդի թշնամի» գնդակահարվել է ՆԳԺԿ բանտում:

[6] **Լուկաչին** (Սարգիս Լուկաչի Սրապիոնյան, 1883-1937) – կուսակցական և պետական գործիչ, 1922-1925 թթ. Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ, այնուհետև՝ Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի տեղակալ:

1937 թ. նա ևս գնդակահարվել է բանտում ՆԳԺԿ Եռյակի որոշմամբ:

[7] **Նազարեթյան Հմայակ** (1889-1937) – պետական և կուսակցական գործիչ, Կիրովի և Օրջոնիկիձեի ընկերներից, 1920-1922 թթ. ղեկավարել է Ստալինի քարտուղարությունը, 1923 թվականից՝ «Պրավդա» թերթի բաժնի վարիչ, 1924-1930 թթ. աշխատել է կուսակցության պատասխանատու պաշտոններում: 1937 թ. գնդակահարվել է Ստալինի կարգադրությամբ:

[8] **Կասյան Սարգիս** (Ռոսյան 1876-1937) – Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական գործիչ, 1917-1920 թթ.՝ Կովկասյան երկրկոմի անդամ, 1924-1927 թթ.՝ Անդրկովկասյան կոմունիս-

տական համալսարանի ռեկտոր, 1927-1931 թթ.՝ Անդրֆեդերացիայի և ՀՍՍՀ կենտգործկոմի նախագահ: Նա ևս կոմունիստ քննիչների ո-րոշմամբ դատապարտվել է մահվան:

Նամակում հիշատակված «ուժեղ անձնավորությունները», «գործ տեսնողները», «աղնիվ, ժողովրդասեր» պետական գործիչ-ները 9 տարի անց կնքելու էին իրենց մահկանացուն ԿԳԲ-ի ներք-նահարկում:

164. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 241)

Ինքնագիրը (մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 257-258:

[1] Եսայի Կարիքյանը (19-րդ դար - 1940-ական թթ.) 1928 թ. ՀՕԿ-ի Փարիզի ճյուղի գործիչներից մեկն էր: 1925 թ. նա ընտրվել էր ՀՕԿ-ի Ցրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ, 1926 թ. նրան փոխարինել է Միքայել Պապաջանյանը: Ե. Կարիքյանը ապ-րել է Փարիզում, թղթակցել «Անահիտ» հանդեսին:

165. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 242)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 258-259:

[1] 1928 թ. ամռանը մահացավ Երևանդ Քոչարի կինը՝ Վարդենին, ապա՝ նորածին երեխան:

166. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 243)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է Արեւ 1979, էջ 259-260:

[1] Նկատի ունի ժողկոմխորհի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանին:

167. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 244)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 25-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 261:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

168. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 245)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է Արեւ 1979, էջ 260:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

[2] Ռազմավիրական ճանապարհ – կովկասյան լեռնաշղթայով (հայի լեռնանցք) անցնող, Վլադիկավկազ և Թբիլիսի քաղաքները միացնող ճանապարհի (208 կմ) պատմական անունը:

169. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 246)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է Արեւ 1979, էջ 261-262:

[1] Նկատի ունի ՀՕԿ աշխատակից Միքայել Կարաբեկյանին:

[2] Սանատորիա Կիսլովոդսկում, որ հիմնադրվել է 1923 թ. ամռանը՝ դիտնականների, մշակույթի գործիչների կյանքը բարելավելու նպատակով (Центральная комиссия по улучшению быта ученых): *Այս հանգստավայրը ստացել է Գորկու անունը, գործում է առայսօր:*

170. ԱՍՔԱՆԱԶ ՄՈՒՎԵՑԱՆԻՆ
(էջ 247)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, Ա. Մռավյանի ֆոնդ, 1440, ց. 1, գ. 95, թ. 3:

Տպագրվում է առաջին անգամ:

***Մռավյան Ասքանազ** (1885-1929) – պետական և կուսակցական գործիչ: 1920 թ. եղել է ՀԽՍՀ հեղկոմի կազմում, 1921-1923 թթ.՝ Խորհրդային Հայաստանի Արտաքին գործերի կոմիսար, 1923-1929 թթ.՝ Լուսավորության ժողկոմ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ, միաժամանակ՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր: Ավ. Իսահակյանին ֆինանսապես օգնել է ժողկոմխորհի կողմից:*

171. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 247)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 262-263:
[1] Շավիլը Փարիզի մերձակա քաղաքներից է:
[2] Խոսքը Գեղամ Կոստանյանի մասին է:

172. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 249)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 263-264:
*[1] **Հովհաննես Կոստանյան** (1861-1943) – բանաստեղծ, մանկավարժ:*

173. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 250)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 264-266:

174. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 252)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 268-270:
[1] fruit conserve – *պահածոյածում:*

175. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 254)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 266-267:
[1] pomology (*լատ.* Pomum – *միրգ և դիտություն բառերից*) – *բուսաբանության մի ճյուղ, որ ուսումնասիրում է միրգերը, պտուղները և մրգատու ծառերն ուսումնասիրող բաժին: Այս բնագավառում աչքի ընկած գիտնական էր կենսաբան Իվան Միչուրինը (1855-1935), որը Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո հատկապես մեծ հետաքրքրություն էր առաջացրել այս ճյուղի հանդեպ: Նամակը գրելու ժամանակ՝ 1928 թ., ԽՍՀՄ-ում Միչուրինի փորձարարական տնկարանի հիման վրա հիմնադրվել էր «պտղատու-հատապտղատու կուլտուրաների սելեկցիոն-գենետիկական կայանը», որտեղ ստանում էին մրգերի նոր տեսակներ:*
[2] *1928 թ. Փանոս Թերլեմեզյանը Հայաստանի կառավարության հրավերով վերադարձել է հայրենիք և մշտական բնակություն հաստատել Երևանում: 1928-1930 թթ. նկարիչը ստեղծել է Ա. Բակունցի, Ռ. Մելիքյանի, Հ. Աճառյանի, Ավ. Իսահակյանի և այլոց դիմանկարները:*

176. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 256)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Արսեն Ղլտճյան** (1868-1943) – Ավ. Իսահակյանի քեռու տղան, 1928 թ. ապրում էր Փարիզում:*

177. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 257)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 267-268:

[1] Ժամանակին՝ ընտանիքի հոր մահից հետո, Ավ. Իսահակյանի ավագ եղբայրը՝ Ռուբենը (Կոլյայի հայրը) խանգարել է, որ մայրը Գերմանիայում ուսանող որդուն՝ Ավետիքին դրամական նպաստ ուղարկի:

1929

178. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 259)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 270-271:

*[1] **Եսայան Արսեն** (1898-1938) – կուսակցական գործիչ, 1921-1927 թթ. Ալեքսանդրոպոլի գործադիր կոմիտեի նախագահ, 1928 թ. աշխատել է «Սովետական Հայաստանի» խմբագրությունում, 1929-1934 թթ. աշխատել և գլխավորել է ՀՕԿ-ը:*

179. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 260)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 271-272:

[1] *Սոլոմոն Ռայնախ (1858-1932) – կրոնի պատմաբան, ֆրանսական հնագիտական դպրոցի ներկայացուցիչ, հնագիտական ուսումնասիրություններ ու բացահայտումներ է արել Ռուսաստանում, Եվրոպայում:*

[2] *Շարլ Դիլ (1859-1944) – ֆրանսացի ականավոր գիտնական, արվեստի պատմաբան, բյուզանդագետ:*

[3] *Ֆասիլոն Հենրի (1881-1943) – ֆրանսացի բանաստեղծ և արվեստաբան, Սորբոնի համալսարանի պրոֆեսոր:*

[4] *Ծուրգիս Բալտրուշայտիս (1873-1944) – լիտվացի սիմվոլիստ-բանաստեղծ և նկարիչ, դիվանագետ, Լիտվայի հանրապետության ներկայացուցիչը Մոսկվայում: Նրա որդին՝ արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիս-կրտսերը (1903-1988) ապրում էր Փարիզում 1924 թվականից և սովորում Սորբոնի համալսարանում, պրոֆ. Հենրի Ֆասիլոնի մոտ: Նա ուսանելու տարիներին ուսումնասիրություններ է արել Հայաստանում, Վրաստանում, Իսպանիայում և Իտալիայում: 1929 թ. Փարիզում տպագրվել է արվեստի պատմաբան և քննադատ Յ. Բալտրուշայտիսի* «Edutis sur l'art medieval en Georgie et en Armenie» *դիրքը:*

180. ՀԱԿՈԲ ԽԱՆԼԱՐՑԱՆԻՆ
(էջ 261)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հակոբ Խանլարյանի ֆոնդ, 113:
Տպագրվում է առաջին անգամ:

***Խանլարյան Հակոբ** (1885, Շուշի - 1966, Թբիլիսի) – բանաստեղծ, մանկավարժ: Աչխատակցել է տարբեր պարբերականների, 55 տարի զբաղվել մանկավարժությամբ, մտերիմ է եղել Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Փափազյանի հետ:*

181. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 262)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 272-273:

[1] Ավ. Իսահակյան, «Աբու Լալա Մահարի» (թարգմանիչ՝ Հ. Ազատյան), Բուենոս-Այրես, 1929, 96 էջ, իսպաներեն լեզվով:

182. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 263)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ հրապարակել է Արամ Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 182-183, այնուհետև՝ Աիեժ 1979, էջ 273-275:

[1] Խոսքը Հայաստանի Սովետների VI համագումարի (1929 թ., ապրիլ) պատգամավորների ընտրության մասին է:

183. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 265)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

184. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 266)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

185. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 267)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ հրապարակել է Արամ Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 183-184, այնուհետև՝ Աիեժ 1979, էջ 275-276:

[1] 1929 թ. հունիսի 5-ին Վրաստանի և Ադրբեջանի գրողների պատվիրակությունները բարեկամական այցով եկել են Հայաստան: Հայ պատվիրակությունը, այդ թվում և Ավ. Իսահակյանը, փոխադարձ այցով եղել են Վրաստանում, Ադրբեջանում: Խումբը վերադարձել է Երևան հունիսի 29-ին:

[2] Ավ. Իսահակյան, «Արու-Լալա-Մահարի», Քասիդ: 6-րդ հրատ., Երևան, «Հերմես» տպարան, 1929, 80 էջ:

[3] Ավ. Իսահակյան, «Համբերանքի չիբուխը (պատմվածքների ժողովածու)», Երևան, «Հերմես» տպարան, 1929, 46 էջ:

[4] Նկատի ունի Արսեն Եսայանին, որը 1929 թ. Փարիզից վերադարձել է Երևան և շարունակել աշխատել ՀՕԿ-ում:

186. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՑԱՆԻՆ
(էջ 268)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Միսակ Էփրիկյանի ֆոնդ, 175:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 276:

***Էփրիկյան Միսակ** (1892, Ալեքսանդրապոլ - 1938, Երևան) – դրական գործիչ, հրատարակիչ: 1910 թ. հիմնադրել է «Պատանի» ամանախը, 1921-1925 թթ. եղել է Հայպետհրատի վարիչ, հետագայում՝ նույն հրատարակչության տպարանի տնօրեն, 1929 թ.՝ «Հերմես» հրատարակչության տեսուչ-կարգադրիչ: «Հերմես»-ում են հրատարակվել Ավ. Իսահակյանի երկու ժողովածուները: 1938 թ. Մ. Էփրիկյանը գնդակահարվել է Երևանում, Ներքին գործերի ժողկոմի բանտում:*

187. ՍՈՖԻԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 268)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 276-278:

[1] Այս տողերը գրելիս Ավ. Իսահակյանը չգիտեր, որ միայն 1930 թ. մայիսին իրեն կթուլյատորվի դուրս գալ Հայաստանից, այն էլ միայն Ազասի Խանջյանի միջնորդությամբ:

188. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՑԱՆԻՆ
(էջ 270)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, Միսակ Էփրիկյանի ֆոնդ, 176:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 278:

[1] «Աբու-Լալա Մահարի», (քասիդ), 6-րդ հրատ., Երևան, Հերմես, 1929, 80 էջ:

[2] 1928 թ. դրած «Համբերանքի չիբուխը» պատվածքն առաջին անգամ զետեղվել է 1929 թ. Երևանում տպագրված «Համբերանքի չիբուխը» գրքում (էջ 5-26):

[3] Թամարան Մ. Էփրիկյանի կինն էր:

189. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 270)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 278:

190. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 271)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 279-280:

*[1] **Խանոյան Սարգիս** (1877-1937) – հայ քաղաքական գործիչ, լրագրող, Բաքվում «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագիր: 1921 թ. եղել է ՀԽՍՀ ֆինժողկոմ, 1929-1933 թթ.՝ ՀԽՍՀ Արդարադատության ժողկոմ, ապա ՀՕԿ նախագահ:*

191. ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՉԵԻՆ
(էջ 273)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 267-1:

Տպագրվում է առաջին անգամ:

***Տաբիձե Տիցիան** (1895-1937) – վրացի խորհրդային բանաստեղծ: Նրա վրացերեն թարգմանությամբ «Արու Լալա Մահարին» լույս է տեսել Թիֆլիսում 1931 թ.: Այս մտավորականը ևս 1937 թ. դարձավ ստալինյան բռնությունների զոհ:*

[1] ***Նիկոլոզ Բարաթաշվիլի** (1817-1845) – վրացի բանաստեղծ, ռոմանտիկական ուղղության դասական գրող: Նրա ստեղծագործության գլուխգործոց «Մերանի» բանաստեղծությունը Հովհ. Կոստանյանի թարգմանությամբ առաջին անգամ տպագրվել է 1893 թ., «Տարազ», թ. 15, ապա թարգմանել է Սողոմոն Տարոնցին:*

[2] *Խահակյանի այս տողերը հետագայում որոշ հայ և վրացի գրականագետների կողմից դիտարկվել են որպես Ն. Բարաթաշվիլիի «Մերանի» բանաստեղծության յուրատիպ ազդեցության «Արու Լալա Մահարի» պոեմի վրա:*

192. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 274)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 281-282:

[1] *Խոսքը Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյանի մասին է, որը 1930-ական թթ. եղել է պարսկահայ համայնքի հոգևոր առաջնորդը, 1941-1943 թթ. ղեկավարել է Շիրակի հոգևոր թեմը:*

[2] *Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը մահացել է Երևանում, 1929 թ. սեպտեմբերի 29-ին, 65 տարեկանում:*

[3] ***Մռավյան Ասքանազ** (1885-1929) – կուսակցական և պետական գործիչ, 1915-1917 թթ. բոլշևիկյան «Պայքար» թերթի խմբագիր, 1917-1920 թթ.՝ «Բանվորի կռիվ» թերթի խմբագիր, 1921-1923 թթ.՝ ՀՍՍՀ Արտաքին գործերի կոմիսար, 1921 թ. Պողոս Մակինցյանի հետ ստորագրել է Կարսի պայմանագիրը, 1923-1929 թթ.՝ «Սովետական Հայաստան» թերթի խմբագիր և Լուսավորության կոմիսար:*

Ա. Մռավյանը մահացել է Երևանում, 1929 թ. հոկտեմբերի 23-ին:

193. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
(էջ 275)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, կարա Դարվիշի ֆոնդ, 344:
Առաջին անգամ հրատարակել է Դավիթ Գասպարյանը («Հայկական ապագայապաշտություն», Երևան, 2009, էջ 147), այնուհետև՝ Աին 2016, էջ 262:

194. ԽՈՐՀՐԴԱԾԻՆ ՀԱՑԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՑԻՆ
(էջ 276)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գրողների Միության ֆոնդ:
Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 281:

195. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
(էջ 276)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, կարա Դարվիշի ֆոնդ, 344:
Առաջին անգամ հրատարակել է Դավիթ Գասպարյանը («Հայկական ապագայապաշտություն», Երևան, 2009, էջ 147-148), այնուհետև՝ Աին 2016, էջ 263:

[1] Ավ. Իսահակյանը նախաբան էր ուղարկել Տիգիան Տաբիձեի վրացերեն թարգմանության համար («Արու Լալա Մահարի», Թիֆլիս, 1931, «Երկու խոսք իմ կյանքի մասին» էջ 2-9 և «Իմ «Արու Լալա Մահարի» պոեմի վրացերեն թարգմանության մասին» էջ 10-11, ԱիՏԹ, մմ 731):

[2] Նկատի ունի «Արու Լալա Մահարի» պոեմի Վ. Բրյուսովի 1916 թ. կատարած ռուսերեն առաջին թարգմանությունը:

*[3] **Ռոբակիձե Գրիգոլ** (1880-1962) – վրացի գրող և հրապարակախոս:*

*[4] **Ցաշվիլի Պաոլո** (1895-1937) – բանաստեղծ, հասարակական և գրական գործիչ:*

[5] *Գրիշաշվիլի Իոսիֆ (1889-1965) – վրացի բանաստեղծ: Ավ. Իսահակյանը Գրիշաշվիլուց թարգմանել է մի քանի բանաստեղծություն:*

196. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 277)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 26-III:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] *Ավ. Իսահակյան, «Բանաստեղծություններ», Երևան, Պետհրատ, 1930, 305 էջ:*

197. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 278)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 26-III:
Տպագրվում է առաջին անգամ:

1930

198. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
(էջ 279)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, կարա Դարվիշի ֆոնդ, 344:
Առաջին անգամ հրատարակել է Դավիթ Գասպարյանը («Հայկական ասպագայապաշտություն», Երևան, 2009, էջ 148), այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 264:
[1] ***Եղիազարյան Արտավազդ*** *(1899-1974) – հասարակական գործիչ, մանկավարժ, պատմաբան: 1929-1931 թթ. և 1934-1936 թթ. եղել է Խորհրդային Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսար:*
[2] *Կարա Դարվիշը, ապրելով Թիֆլիսում, Հայաստանի Հանրապետության կառավարությունից խնդրում էր իրեն թոշակ հատկացնել: Այս հարցի մասին է խոսվում նամակում:*

199. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 279)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 26-III:

Առաջին անգամ կրճատումով տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 265:

[1] Ավ. Իսահակյան, «Բանաստեղծություններ» ժողովածու, Երևան, Պետհրատ, 1930, 305 էջ:

[2] Շիրվանզադեն 1926 թ. փարիզից վերադարձել էր հայրենիք: 1930 թ. փետրվարի 8-ին, Երևանում նշվել է նրա գրական գործունեության 50-ամյա հոբելյանը, որին մասնակցել է նաև Ավ. Իսահակյանը:

200. ԿԱՐԱ-ԴԱՐՎԻՇԻՆ
(էջ 280)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, կարա Դարվիշի ֆոնդ, 344:

Առաջին անգամ հրատարակել է Դավիթ Գասպարյանը («Հայկական ապագայապաշտություն», Երևան, 2009, էջ 148), այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 266:

[1] Նկատի ունի Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսար Արտավազդ Եղիազարյանին:

[2] Կարա Դարվիշը 1930 թ. ապրում և աշխատում էր Թիֆլիսում, վրացական կառավարությունից թոշակ ստանում:

201. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 281)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 281-282:

[1] Տարեթիվը և վայրը՝ փոստային կնիքից:

202. ՎԱՐՑԱ ՔՈՋԱՐՑԱՆԻՆ
(էջ 282)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

Վարյա Քոչարյանը Սոֆի Իսահակյանի մայրն էր, որ տղայի՝ Վանյայի ընտանիքի հետ ապրում էր Մոսկվայում:

203. ՍՈՖՑԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 282)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

204. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 283)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ.Ճ, 1448 ժդ.:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 282:

205. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 283)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, Գ.Ճ, 1448 ժն:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 282:

206. ՍՏԵՓԱՆ ԶՈՐՑԱՆԻՆ
(էջ 284)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻԵԺ 1979, էջ 283:

Ստեփան Զորյան (1890, Ղարաքիլիսա - 1967, Երևան) – դրող, արձակագիր, թարգմանիչ: 1920-ական թթ. Խորհրդային Հայաստանում աշխատել է Լուսժողկոմատում որպես պետական հրատարակչության գլխավոր խմբագիր, 1927-1928 թթ. Գրողների միության նախագահի տեղակալ, 1930-1934 թթ. Հայկինոյի կոնսուլտանտ:

207. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 284)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, 1448 ժգ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 283:
[1] Նկատի ունի ՀՕԿ փոխնախագահ Գուրգեն Թահմազյանին:

208. Ս<ԱՐԳԻՍ> ՊՈՂՈՍՑԱՆԻՆ
(էջ 285)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 268-Ի:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 283-284:
Պողոսյան Սարգիս (1886, Կեսարիա - 1946, Փարիզ) – ռամկավար կուսակցության անդամ, լրագրող, ամուսնքող, փարիզահայ մտավորական:

209. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ
(էջ 285)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է՝ԳԱԹ, ԱՋՑ, 2769-Ի:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 284:

210. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ
(էջ 286)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՑ, թղթ. 244/21, վավ. 64:
Առաջին անգամ տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 243, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 267:
[1] Կարեն Միքայելյանը 1925-1927 թթ. որպես Հայաստանի կարմիր խաչի և ՀՕԿ-ի պատվիրակության անդամ մեկնել էր Եվրոպա, ԱՄՆ, իսկ 1930 թվականից աշխատում էր Մոսկվայում:

211. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
(էջ 286)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 23-25:

ՀՅԴ դաշնակցության և հրապարակախոս Վահան Նավասարդյանը (1886-1956) 1922 թվականից ապրել է Կահիրեում և խմբագրել «Հուսաբեր» թերթը, որ Դաշնակցության անպաշտոն օրգանն էր:

[1] Դավիթ Անանունը 1927 թ. դատապարտվել էր 3 տարի ազատազրկման:

212. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
(էջ 289)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 113, ց. 1, գ. 234, թ. 95:

Առաջին անգամ հրապարակել է Է. Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թ. 1, էջ 83-84:

213. ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
(էջ 289)

Ձեռագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 424, ց. 2, գ. 59, թ. 1:

Առաջին անգամ հրապարակել է Է. Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թ. 1, էջ 84:

Այս նամակից ուղարկվել է նաև Արշակ Զոպանյանին (ԳԱԹ, ԱԶՖ, 2770-I):

Դարբինյան Արտակ (1878, Վան-1950, Փարիզ) – հրապարակախոս, ռամկավար-ազատական կուսակցության անդամ, 1920 թվականից հաստատվել է Փարիզում, լավ հարաբերություններ մնջ է եղել Խորհրդային Հայաստանի դևկավար գործիչների հետ:

[1] Փարիզում հիմնադրված «Հայ գրողներու Միության» առաջին նախագահը դառնում է Ա. Զոպայնանը, նրա մահից հետո՝ Մառի Ամմաճյանը:

[2] *Վահան Թեքեյան (1878-1945) – արևմտահայ բանաստեղծ, թարգմանիչ:*

[3] *Ղևոնդ Մելոյան (1883-1967) – ֆրանսահայ արձակագիր, դրամատուրգ, հայտնի իր երկու աղմկահարույց գործերով՝ «Մայրը» ինքնասպան վեպով (1910 թ.) և «Երեք ընկերները» վեպով:*

214. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՑԱՆԻՆ
(էջ 290)

Ինքնագիրը պահվում է Անթիլիասի Մել. և Հայկ Արսլանյանների անվ. ճեմարանի արխիվում, պահարան 2, դզրոց Ա, թիվ 8: Նամակի մեքենագիրը տարբերակը պահվում է ԱԻՐԱ:

***Աղբալյան Նիկոլ** (1875, Թիֆլիս - 1947, Բեյրութ) – դրականագետ, մանկավարժ, «Վերնատան» անդամ, Ավ. Իսահակյանի մոտ ընկերը, ՀՅԴ կարկառուն գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության լուսավորության նախարար, Խորհրդային իշխանության օրոք 1921 թ. բանտարկվել է, ապա տարագրվել հայրենիքից, աշխատել Թավրիզում, Ալեքսանդրիայում, 1930 թ. բնակություն է հաստատել Բեյրութում, որտեղ Շանթի հետ հիմնադրել է Համազգայինի Նշան Փալանճյան ճեմարանը: Մինչև իր կյանքի վերջ ճեմարանում դասավանդել է հայ դրականության պատմություն, դրաբար, հայ մատենագիտություն առարկաները:*

1921 թվականից ապրելով ընտանիքից հեռու՝ տարագրության մեջ, Աղբալյանը կնոջ և երեխաների (Ռուբեն Աղբալյան (1916-2001), Դորիտտա Աղբալյան (1913-1999)) հետ կապ է պահպանել միայն նամակագրությամբ և հեռակա տեղեկություններով:

[1] *Խոսքը Ջավահիր Ներսիսյանի մասին է, ով ապրում էր Փարիզում և նամակագրություն ուներ Աղբալյանի հետ ճեմարանում աշխատող ամուսնու՝ Շանթի հետ:*

[2] *Հրարփի Խաչատրյան-Աղբալյան (1889-1967) – Նիկոլ Աղբալյանի կինը: Նրան Խորհրդային Հայաստանի կառավարությունը թույլ չէր տվել հեռանալ երկրից ամուսնու հետ:*

[3] *Հրանուշ Խաչատրյան (1883-1953) – Նիկոլ Աղբալյանի կնոջ՝ Հրարփիի քույրը:*

[4] *Աստվածատուր Խաչատրյան (Խաչ, 1862, Ալաշկերտ - 1938, Երևան) – հայ պատմաբան, 1925 թ. Պոլսից վերադարձել է Խորհրդային Հայաստան, ստացել պրոֆեսորի կոչում և դասախոսել Երևանի պետական համալսարանում, 1937 թ. բռնադատվել է և 1938 թ. մահացել բանտում: Արժեքավոր է Ուբարյուի մասին «Հին հայերի պատմությունը» ուսումնասիրությունը, որը նա գրել է 1907 թ. ֆրանսացի դիտնական Ն. Դոլենսի հետ համատեղ:*

215. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 291)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, 1448ժէ:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 184, այնուհետև՝ Աիեժ 1979, 284-286:

[1] *Արփաչայ – Գարեգետ (արփա՝ գարի և չայ՝ գետ բառերից. Թուրքերեն):*

[2] *Խոսքը վերաբերում է կարա Դարվիշին, ով ջանում էր Թոչակ ստանալ հայկական կառավարությունից:*

[3] *1931 թ. Երևանում լույս է տեսել Սայաթ Նովայի հայերեն խաղերի լիակատար ժողովածուն՝ Գարեգին Լևոնյանի առաջաբանով, բառարանով, բազմալեզու մատենագիտությամբ և ծանոթագրություններով:*

[4] *Խոսքը Սայաթ-Նովայի «Դավթարի» մասին է, որն աչուղի ժառանգներից ձեռք էր բերել հայ գրողների կովկասյան ընկերությունը և հանձնել Հ. Թումանյանին. վերջինս այն հանձնել է Հայաստանի լուսժողկոմին 1921 թ. հոկտեմբերին: Այժմ «Դավթարը» պահվում է Երևանի գրականության և արվեստի թանգարանում:*

[5] *Ախվերդյան Գեորգ (1818-1861) – հայտնի բանասեր, Սայաթ Նովայի խաղերի առաջին ուսումնասիրողն ու հրատարակիչը (Գ. Ախվերդյան, «Սայաթ-Նովա», Մոսկվա, 1852 թ.):*

[6] *Հավանաբար խոսքը վերաբերում է Գ. Լևոնյանի կազմած Սայաթ-Նովայի խաղերի ժողովածուի բառարանին:*

[7] *Միքայել Մանվելյան (Միշո, 1877-1944) – դերասան և դրող:*

[8] *Աբելյան Պողոս – տնտեսագետ, իրավաբան (տես 39-րդ նամակի 9-րդ ծանոթագրությունը):*

[9] *Նկատի ունի պոլիգրաֆիստ Միսակ Էփրիկյանին և իր կնոջը՝ Թամարային:*

[10] *Խոսքը քանդակագործ Այծմենիկ Ուրարտուի մասին է, որի ամուսինը Աշոտ Հովհաննիսյանն էր:*

[11] *Տոնյան Արշակ (1888-1942) – մաթեմատիկոս, երևանի համալսարանի պրոֆեսոր, թարգմանել է ուսումնական 11 դասագիրք, կազմել տերմինարանական բառարաններ: 1937 թ. դարձել է ստալինյան հերթական զոհերից մեկը, վախճանվել է աքսորավայրում:*

[12] *Թերլեմեզյան Փանոս (1865-1941) – ժողովրդական նկարիչ:*

[13] *Կոջոյան Հակոբ (1884-1959) – ժողովրդական նկարիչ:*

1931

216. <ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ>
(էջ 294)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋՑ, 2771-I:

Արշակ Ջոպանյանին ուղղված նամակը գրվել է «Հ. Հայաստանի օթօպիւսներու կեդրոնական հանդանակիչ յանձնախումբ»-ի պաշտոնական բլանկի վրա: Այն գրված է ընկերության քարտուղար Տիգրան Ջավենի ձեռագրով:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Բշ. – երկուշաբթի, Գշ. – երեքշաբթի, Դշ. – չորեքշաբթի:*

[2] *Ստորագրությունը Ավ. Իսահակյանի ձեռագրով է:*

217. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՑԱՆԻՆ
(էջ 295)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 113, ց. 4, գ.12047, թ. 104-105:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 27-28, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 268-269:

[1] Փարիզում 1925-1930 թթ. հրատարակվել է խորհրդային կողմնորոշում ունեցող «Երևան» թերթը: 1931 թ. Ավ. Իսահակյանը փորձում էր ստանալ Խորհրդային Հայաստանի օժանդակությունը՝ թերթը վերահրատարակելու համար:

1933-1935 թթ. ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչության նախաձեռնությամբ հրատարակվում է «ՀՕԿ» ամսագիրը, որին աշխատակցում էր նաև Ավետիք Իսահակյանը:

218. ՏԵՆՃԵՑԱՆԻՆ
(էջ 296)

Ձեռագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, պ. 2467, թ. 1:

Տպագրվում է առաջին անգամ:

Գրված է Հանգանակիչ հանձնախմբի ձևաթղթի վրա՝ Ավ. Իսահակյանի ստորագրությամբ:

Հայկական տարբեր համայնքներում ՀՕԿ-ը ուներ 200-ից ավելի մասնաճյուղեր, որոնցից մեկը Լոնդոնի մասնաճյուղն էր:

219. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆԵՑԱՆԻՆ
(էջ 297)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋԾ, 2774-I:

Տպագրվում է առաջին անգամ:

220. ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵՑԱՆԻՆ
(էջ 298)

Ինքնագրի տեղն անհայտ է: Արտատպվում է Սիմոն Վրացյան «Հին թղթեր նոր պատմության համար», Բեյրութ, 1962, էջ 367:

[1] Սիմոն Վրացյանը 1931 թ. հունիսի 31-ին նամակ էր գրել Իսահակյանին, որտեղ հարցնում էր, թե ինչպես է բանաստեղծի անունը հայտնվել հակադաշնակցական «Մեր ուղին» թերթի առաջին համարում՝ Տիգրան Զավենի անվան կողքին:

[2] 1931 թ. Ավ. Իսահակյանի «Էշն ու դյուղացին», «Կաքավն ու աղվեսը» առակները, ինչպես նաև «Հին հուշատետրից» հուշերը տպագրվել են «Մեր ուղին» թերթում, որն ունեցել է պրոսովետական կողմնորոշում:

221. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՑԱՆԻՆ

(էջ 298)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գարեգին Ամատյանի ֆոնդ, անմշակ: Առաջին անգամ տպագրվել է «Արև», Կահիրե, 1975, 1 հուլիս:

[1] «Մեր ուղին» – դրական, քաղաքական թերթ (Փարիզ, 1931 հուլիսից մինչև 1932 փետրվար): Թերթն ունեցել է պրոսովետական կողմնորոշում: Թերթին աշխատակցել են իրավաբան Գուրգեն Թահմազյանը, Զապել Եսայանը, Տիգրան-Զավենը և այլոք: «Մեր ուղին» փակվելուց հետո ստեղծվում է «Դարբնոց» (Փարիզ, 1932) դրական, քաղաքական թերթը, որի դրական բաժինը վարում էր Զ. Եսայանը:

[2] Գարեգին Ամատյանի «Ծուլությունը դիտական ակնոցով դիտուած» հոդվածը տպագրվել է «Մեր ուղին», Փարիզ, 1931, թ. 16, 28 օգոստոս:

222. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՑԱՆԻՆ

(էջ 299)

Ինքնագրի տեղն անհայտ է, արտատպվում է ԱԻՆ 1959, էջ 25:

[1] Խոսքը հավանաբար Սիմոն Վրացյանի մասին է:

223. ԳԱԼՈՒՍՏ ԿՑՈՒԼՊԵՆԿՑԱՆԻՆ

(էջ 299)

Ինքնագիրը պահվում է Լիսաբոն, Գ. Կյուլբենկյանի անձնական արխիվ, PRS N00321:

Գալուստ Կյուլպենկյան (1869, Ստամբուլ-1955, Լիսաբոն) – համաշխարհային մակարդակի մեծահարուստ, նավթարդյունաբերության արքաններից, ազգային բարերար: 1953 թ. Լիսաբոնում կառուցեց թանգարան՝ գեղարվեստական գործերի անձնական հավաքածուի համար, նույն թվին դրեց իր հայտնի կտակը՝ թողած դումարի օգտագործման բարեգործական ուղղություններն մասին: «Գալուստ Կյուլպենկյան» բարեգործական ֆոնդը մշտապես օգնություն է ցուցաբերում Հայաստանին:

Ավ. Իսահակյանը նամակով օգնություն է խնդրել ուրիշի համար, իրեն օգնելու խնդրանքով չի դիմել բարերարին:

[1] Գալուստ Կյուլպենկյանը մի անգամ Վեհափառին Ավ. Իսահակյանի մասին ասել է. «Սա այն հպարտ բանաստեղծն է, որ ինձանից ուրիշների համար օգնություն է խնդրել, բայց իր համար՝ երբեք» (ծանոթությունը Ավիկ Վիգենի Իսահակյանի):

224. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՑԱՆԻՆ
(էջ 300)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 228-I:՝

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 286-288:

Վահան Ջաքարյան *(Վազգ ծածկանունով) – Բեռլինում «Հայ-գերմանական ընկերության» հիմնադիրներից, «Նեմեսիս» գործողության մասնակից, պարսկահայ դաշնակցական գործիչ, Ավ. Իսահակյանի սիրելի և հոգեհարազատ մարդկանցից մեկը: Նա ապրել է Բեռլինում, աշխատել Ջեյմս Գրինֆիլդի հետ:*

[1] Խոսքը հավանաբար Հայկ Տեր-Օհանյանի մասին է, որի հետ մի լուսանկար-խմբանկար տպագրվել է նախորդ հատորում:

225. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՑԱՆԻՆ
(էջ 302)

Ինքնագիրը (նամակ-ծրար) պահվում է ԳԱԹ, Աննա Բուդաղյանի ֆոնդ, 307:

Տպագրվում է առաջին անգամ:

Բուդաղյան Աննա (1880. Շուշի-1964, Փարիզ) – թատերական դործիչ, ռեժիսոր, դերասանուհի: 1930-ական թթ. նա Փարիզում ստեղծել էր «Հայ բեմ» թատերախումբը և տարված էր թատերական ակտիվ գործունեությամբ: (Տես 90-րդ նամակի 2-րդ ծանոթագրությունը:)

*[1] **Արամ Զարըք** (Զարդ, Վտարանդի ծածկ. 1874, Կարին - 1947, Մոսկվա) – բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ: Կրթություն է ստացել Գևորդյան ճեմարանում, Ներսիսյան դպրոցում, Լայպցիգի համալսարանում: 1932-1946 թթ. նա ապրել է Փարիզում, որտեղ 1932 թ. հրատարակել է Օմար Խայամի քառյակների իր թարգմանությունը: 1946 թ. եղել է Խորհրդային Հայաստանում, մասնակցել հայ գրողների երկրորդ համագումարին, հետադարձի ճանապարհին եղել է Մոսկվայում, որտեղ մահացել է անհայտ հանգամանքներում, 1947 թ. մայիսին:*

226. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ
(էջ 303)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋՑ, 2772-I:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թիվ 2, էջ 172, այնուհետև՝ Աիեժ 1979, էջ 288:

[1] Թվագրվում է ըստ փոստային կնիքի:

[2] Գրիգոր Մեհրաբյանը Փարիզում հրատարակվող «Երևան» թերթի խմբագիրներից մեկն էր և ՀՕԿի վարչության անդամ:

[3] 1931 թ. Տիգրան Չավենը Ֆրանսիայի ՀՕԿ կենտրոնական վարչության փոխնախագահն էր:

*[4] **Թահմազյան Գուրգեն** – Փարիզում հայտնի դրական դործիչ, ՀՕԿի վարչության անդամ, աշխատել է «Երևան» թերթում:*

[5] Վահրամ Փափազյանը (1888-1968) Ռուսաստանի լուսժողկոմատի դործուղումով 1932 թ. մեկնել է Ֆրանսիա և ներկայացումներ տվել Փարիզի Հայ դրամատիկական թատրոնում: Այս հարցով շահադրգռված են եղել Զապել Եսայանը, Աննա Բուդաղյանը, Արշակ

Զոպանյանը և ուրիշներ: Հյուրախաղերից առաջ նա հեռագրով դիմել է ՀՕԿ-ին՝ իրեն ֆինանսապես աջակցելու խնդրանքով:

[6] Էլդորադո – առասպելական հարուստ երկիր Հարավային Ամերիկայում:

227. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՑԱՆԻՆ
(էջ 304)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԶՖ, 2773-I:
Տպագրվում է առաջին անգամ:
Տարեթիվը՝ ըստ բովանդակության:

1932

228. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ
(էջ 305)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, մմ. 2672:
Տպագրվում է առաջին անգամ

***Արշալույս Գրիգորյան** (1900, Թավրիզ - 1979, Փարիզ) – սիրողական թատրոնի դերասանուհի, ֆրանսացի գրող և Դիմադրության գործիչ Լուիզա Ասլանյանի (Լաս. 1906-1944) ավագ քույրը: Ա. Գրիգորյանը Թավրիզից Փարիզ տեղափոխվել է 1923 թ.՝ քրոջ և մոր հետ: Արշալույս Գրիգորյանը և Ավ. Իսահակյանը ծանոթացել են Փարիզում 1931 թ.: Նրանց միջև զգացմունք է ծնվել, սկսել են հանդիպել 1932 թ., որը տևել է մինչև 1936 թ.: Ա. Գրիգորյանը չատ գրավիչ և գեղեցիկ կին է եղել, երբեք չի ամուսնացել, մահացել է միայնության մեջ, Փարիզի հայերի բարեգործական միության ծերանոցում (պատերազմից հետո «Հայ Աղքատախնամ ընկերակցություն»):*

Ա. Գրիգորյանը 1971 թ. Վարպետի իրեն գրած 47 նամակները ուղարկել է Ա. Իսահակյանի տուն-թանգարանին՝ հասարակական գործիչ Դանիել Ճիզմեճյանի միջոցով:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] ՀՕԿ-ը Փարիզում ունեցել է 19 մասնաճյուղ, որոնցից մեկը Սենթ Միշելի «Բիւրակն» մասնաճյուղն է: Հիմնադրվել է 1926 թ. հունվարին («Արև», 1926, հունվարի 16):

[3] Փարիզի «Ֆլորիան» ճաշարանը որպես ռեստորան գործում է առայսօր:

229. ԱՐՇԱԼՈՒՑՍ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ
(էջ 306)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, մմ. 2675:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Սևր – քաղաք Ֆրանսիայում, Փարիզի հարավ-արևմտյան արվարձանում, Սեն գետի ափին:

[2] Ավ. Իսահակյանը Ա. Գրիգորյանին ուղղված չատ նամակներում նրան դիմել է Լուլու ձևով: Այս հատորում տպագրվում է նամակներից միայն 5-ը:

[3] Փարիզի Սևրի արվարձանում գտնվում է Սամվել Մուրադյան վարժարանը՝ հիմնադրված 1832 թ.:

230. ՆԻԿՈՂԱՑՈՍ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 307)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 245-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 289-290:

Նիկողայոսը (Կոլյան) Ավ. Իսահակյանի Ռուբեն եղբորորդին էր, որ 1923 թվականից ապրում էր Ամերիկայում:

[1] Խոսքը 20-րդ դարի 30-ական թթ. ամերիկյան տնտեսության մեծ դեպրեսիայի մասին է:

[2] Նկատի ունի հայ անվանի կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանին (1897, Թիֆլիս–1987, ԱՄՆ), որը 1920-1922 թթ. երաժշտական ու դրամատիկական ներկայացումներ էր բեմականացնում Փարիզում, Լոնդոնում, 1923 թվականից՝ Նյու-Յորքի թատրոններում: 1929

Թվականից Հոլիվուդում նկարահանել է կինոնկարներ, որտեղ օգտագործել է մի շարք նորարարական միջոցներ: 1935 թ. նա նկարահանել է «Բնքքի Շարփ» ֆիլմը, որն առաջին լիամետրաժ դունավոր ֆիլմն է համարվում:

Ռուբեն Մամուլյանի հորը՝ բանկի կառավարիչ Զաքար Մամուլյանին ու մորը՝ դերասանուհի Վերժինե Քալանթարյանին Իսահակյան ընտանիքը վաղուց է ճանաչել՝ դեռ Թիֆլիսից, նրանք «հին բարեկամներ» են եղել, ինչպես ասվում է նամակում: Սոֆյա Իսահակյանը Փարիզում մտերիմ է եղել Վերժինե Մամուլյանի հետ:

[3] Շուշիկը Նիկողոս Իսահակյանի կինն էր:

231. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ
(էջ 309)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Վահան Մալեզյանի ֆոնդ, 275:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 290-291:

***Վահան Մալեզյան** (1871, Սուլինա (Ռումինիա) - 1966, Նիցցա) – դրող, թարգմանիչ, հասարակական գործիչ, ռամկավար կուսակցության հիմնադիրներից, ապրել է Կահիրեում, Փարիզում, Նյու Յորքում, ապա Նիսում, որտեղ անընդմեջ վարել է ՀԲԸՄ ընդհանուր քարտուղարի պաշտոնը:*

232. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
(էջ 310)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՅ, 1448 ժը:

Առաջին անգամ հրապարակել է Արամ Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, թ. 4, էջ 185-186, այնուհետև «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1975, թ. 10, էջ 20-21, ապա՝ Աիեժ 1979, էջ 293-295:

[1] Խոսքը վերաբերում է «Հոկտեմբեր-նոյեմբեր» տարեգրքին, որը Ե. Զարենցի, Ա. Բակունցի և Ե. Չուբարի խմբագրությամբ լույս է

տեսել 1932 թ.: Տարեգրքում տպագրվել է մի ֆրագմենտ Իսահակյանի «Նրանք դրոշակ ունին» պատմվածքից (էջ 14–20):

[2] Ավ. Իսահակյանը նկատի ունի Գ. Լևոնյանի կազմած «Սայաթ Նովա «Հայերեն խաղերի լիակատար ժողովածու» դիրքը (Երևան, 1931):

[3] Խոսքը վերոնշյալ «Սայաթ Նովա» գրքի համար Պողոս Մակինցյանի գրած առաջաբանի մասին է:

[4] 1930 թ. Ավ. Իսահակյանը ֆրանսահայ գաղութում դարձավ ՀՕԿ փոխնախագահ՝ այդ աշխատանքը շարունակելով մինչև Հայաստան վերադառնալը (1936 թ.):

[5] 1931 թ. Թբիլիսիում լույս է տեսել Ավ. Իսահակյանի «Արու Լալա Մահարի» պոեմը՝ Տիգիան Տարիճեի վրացերեն թարգմանությամբ:

*[6] **Խաչատրյանց Հակոբ** (1884–1960) – թարգմանիչ, Մ. Շահինյանի ամուսինը, Ավ. Իսահակյանի ընկերներից:*

*[7] **Ավդալբեկյան Թադևոս** (1885-1937) – տնտեսագետ, բանասեր, թարգմանիչ:*

*[8] **Արշակ Տոնյան** – մաթեմատիկոս (տես 215-րդ նամակի 11-րդ ծանոթագրությունը):*

*[9] **Թորոմանյան Թորոս** (1864-1934) – հայտնի ճարտարապետ և հնագետ:*

*[10] **Ռիմա** – Գարեգին Լևոնյանի կինը:*

1933

233. ՓԱՐԻԶԻ ՀԱԱ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ
(էջ 313)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ հրապարակվել է «Սովետական Հայաստան» ամսագիր, 1975, թ. 10, այնուհետև՝ ԱԻԵԺ, հ. 5 (կազմող՝ Աբաս և Ավիկ Իսահակյաններ), 1977, էջ 301-304 և ԱԻԵԺ 1979, էջ 295-298:

[1] Թվարկվում են հայ մտավորականներ, որոնք կրթություն են ստացել եվրոպական հայանի համալսարաններում ու կրթօջախներում:

[2] Մանկավարժ և լուսավորիչ գրող Խաչատուր Աբովյանը (1809-1848) սովորել է Դորպատի համալսարանում:

[3] Արևելագետ, գրականագետ Ստեփանոս Նազարյանը (1812-1879) սովորել է Դորպատի (Տարտու) համալսարանում:

[4] Հայտնի բանաստեղծ Միքայել Նալբանդյանը (1829-1866) սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում:

[5] Գրող Ռափայել Պատկանյանը (1830-1892) սովորել է Մոսկվայի և Դորպատի համալսարաններում:

[6] Հրապարակախոս Գրիգոր Արծրունին (1845-1892) ուսումը շարունակել է Հայդելբերգի և Վիեննայի համալսարաններում:

[7] Գրող և մանկավարժ Նահապետ Ռուսինյանը (1819-1876) սովորել է Սորբոնի համալսարանում, Փարիզում հիմնադրել հայ ուսանողական «Արարատյան միություն»:

[8] Արևմտահայ բանաստեղծ և բանասեր Մատթեոս Մամուրյանը (1830-1901) ազատ ունկնդիր է եղել Քեմբրիջի համալսարանում:

[9] Քանդակագործ Երվանդ Ոսկանը (1855-1914) սովորել է Վեննտիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանում, ապա Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում:

[10] Օսմանահայ քաղաքական գործիչ Գրիգոր Օտյանը (1834-1887) կրթություն է ստացել Փարիզում:

[11] Բժիշկ և պատմավիպագիր Մերինջը (1822-1888) սովորել է Վեննետիկի Մխիթարյան վարժարանում, ապա Սորբոնի համալսարանի բժշկական ֆակուլտետում:

234. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՑԱՆԻՆ
(էջ 317)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1455, թ.10-11:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թ. 1, էջ 84-85:

[1] Հայաստանի ժողկոմխորհրդի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը հայրենադարձությունը կազմակերպելու խնդրով 1932 թ. մեկնել էր Ֆրանսիա, հանդիպումներ ունեցել ֆրանսահայության և

Հանրի Բարբյուսի հետ: Նրա այցից հետո Փարիզում այդ գործերով շարունակում էր զբաղվել ՀՕԿ վարչության նախագահ Գրիգոր Վարդանյանը:

[2] 1921 թ. ՀԲԸՄ նստավայրը կահիրեից տեղափոխվել է Փարիզ, իսկ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում՝ Նյու Յորք:

[3] Պողոս Նուբար Փաշա (1851, Պոլիս–1930, Փարիզ) – ականավոր քաղաքական գործիչ, Եգիպտոսի վարչապետ Նուբար Փաշայի որդին, 1906 թ. Կահիրեում հիմնված Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) առաջին նախագահը:

[4] Պողոս Նուբարի մահից հետո՝ 1930 թ. ՀԲԸՄ նախագահ դարձավ նավթային մագնատ Գալուստ Կյուլպենկյանը: Նա երկու տարի անց իր տեղը զիջեց Զարեհ Բեյին՝ Պողոս Նուբար փաշայի որդուն, որը Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը նախագահեց 8 տարի՝ 1932-1940 թթ.:

[5] 1933 թ. ՀՕԿ ամսագրի մայիսյան համարում պարզաբանումներ է տրվել Երևանի «Արմենիա» հյուրանոցի կառուցման վերաբերյալ և հանգանակություն կազմակերպվել հյուրանոցի շինարարության համար:

235. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 235)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ.Լ.Ց, 1448 ժթ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 300-301:

[1] Պարույրը Գարեգին Լևոնյանի եղբայրն էր, որ բոլշևիկյան իշխանության հաստատումից հետո հեռացել էր Հայաստանից և հաստատվել Բուխարեստում, 1922-1933 թթ. խմբագրել և հրատարակել է «Նոր արշալույս» եռօրյա թերթը:

236. ՋԱՊԵԼ ԵՍԱՑԱՆԻՆ
(էջ 320)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Զապել Եսայանի ֆոնդ, 675:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 301-303:

Զապել Եսայանը 1933 թ. մայիսից ապրում էր Երևանում, աշխատում պետական համալսարանում:

[1] 1933 թ. Տիգրան-Զավենը մեկնեց Խորհրդային Հայաստան՝ քաղաքական և մշակութային գործունեություն ծավալելու համար, բայց 4 տարի անց ստալինյան բռնության զոհ դարձավ: 1937 թ. լրտեսության մեղադրանքով նրան բանտարկել են, իսկ մեկ տարի անց գնդակահարել:

Ավ. Իսահակյանը Երևանում մշտապես հոգ է տարել Տիգրան Զավենի կնոջ՝ Սիրանի և դստեր ճակատագրով:

[2] 1933 թ. Զապել Եսայանը Փարիզից ընակության տեղափոխվեց Խորհրդային Հայաստան՝ Երևանի պետական համալսարանի աշխատանքային հրավերով: 1936 թ. Գրողների միությունում Զ. Եսայանի ելույթից հետո հետևեց նրա ձերբակալությունը, 1943 թվականին՝ մահը՝ ստալինյան ճամբարում:

[3] Զապել Եսայանի որդին՝ Հրանտը (1910, Փարիզ–1982, Երևան) սկզբում մնաց Ֆրանսիայում, Սորբոնի համալսարանի քիմիական ֆակուլտետում ուսումը շարունակելու համար: Մի տարի անց՝ 1934 թ. նա գալիս է Հայաստան և նվիրվում երկրի բարգավաճման գործին: Հրանտը երկար տարիներ աշխատել է կաուչուկի քիմիական գործարանում, պաշտպանել թեկնածուական դիսերտացիա, եղել Գիտությունների ակադեմիայի գիտական աշխատակից: Նա Երևանում ամուսնացել է երկրորդ անգամ մի ուկրաինուհու հետ, ունեցել զավակներ:

[4] «Խորհրդային արվեստ» – գեղարվեստական ամսագիր, որ լույս է տեսել Երևանում 1932 թվականից (1932–1938, 1940–1941 թթ.՝ «Խորհրդային արվեստ», 1943–1955 թթ.՝ «Սովետական գրականություն և արվեստ», խմբագիրներ Ա. Վչուունի, Ս. Մելիքսեթյան, Գ. Հովնան, Ս. Բայանդուր):

[5] Զապել Եսայանի դուստրը՝ Սոֆին (ծնվ. 1900 թ.) Հայաստան էր մեկնել 1933 թ., մոր հետ: Զապել Եսայանի 1943 թ. մահից հետո Սոֆիին նեցուկ է կանգնել Սերիկ Դավթյանը, որը Զ.Եսայանի հետ բանտում է եղել: Սոֆի Եսայանը շուրջ 20 տարի աշխատել է Հայաստանի գիտությունների ակադեմիայում և զբաղվել մոր գրական ժառանգության դասդասման և հրապարակման աշխատանքներով:

[6] *Հովհաննես Հակոբյան (1876-1938) – պատմաբան, հասարակական գործիչ, արժեքավոր է նրա «Ուղեգրություններ» (1932-1934 թթ.) աշխատությունը:*

[7] *Մամիկոն Գևորգյան (1977-1962) – մշակութային գործիչ, բանասեր, թարգմանիչ:*

237. ԱՐՄԵՆԱԿ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ
(էջ 323)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1191, թ. 68-69:

Առաջին անգամ հրապարակել է Լմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 28-30, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 270-271:

1933 թ. Արմենակ Թոքմաջյանը ՀԽՍՀ ժողկոմխորհի գործերի կառավարիչն էր: Նա է զբաղվել Ավ. Իսահակյանի կենսաթոշակի առաքման հարցերով:

[1] mauvais – *վատ դրություն, անհարմար վիճակ (ֆրանսերեն):*

[2] *Նկատի ունի Երվանդ Օտյանի «Ընկեր Բ. Փանջունի ի Մապլվար» վեպը, որտեղ գլխավոր հերոսը՝ հեղափոխական ընկեր Փանջունին, ամեն նամակի վերջում գրում էր՝ «Մի քիչ փող ղրկեք ինձ»:*

[3] *ՀՕԿ ֆրանսիական կենտրոնական վարչության նախաձեռնությամբ 1933-1935 թթ. հրատարակվել է «ՀՕԿ» ամսագիրը, որին գործուն մասնակցություն է բերել Իսահակյանը:*

[4] ***Ազատ Խանջյան** (1901-1936) – հայ կուսակցական և պետական գործիչ, 1930-1936 թթ. Հայաստանի կենտկոմի առաջին քարտուղար:*

238. ՋԱՐԵՀ ՈՐԲՈՒՆՈՒՆԻ
(էջ 325)

Ինքնագրի տեղն անհայտ է:

Առաջին անգամ տպագրվել է «Աշխարհ» օրաթերթ, Փարիզ, 1964, 28 նոյեմբեր, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 303-304:

Զարեհ Որբունի (Էոքսյուզյան. 1902-1980) – հայ վիպասան, արձակագիր, խմբագիր, 1922 թ. Պոլիսից տեղափոխվել է Ֆրանսիա, բնակություն հաստատել Մարսելում (1922-1924), Փարիզում (1924-1930), ապա Ստրասբուրգում (1930-1937): Եղել է Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության անդամ:

[1] 1929 թ. լույս է տեսել Զ. Որբունու «Հալածուածները» խորագրի տակ՝ 4 հատորով ծրագրված վեպի առաջին հատորը՝ «Փորձը» վերնագրով: Նամակում հավանաբար այս գրքի մասին է խոսվում: Հետագայում լույս են տեսել նաև մյուս երեք հատորները (1967 թ.՝ «Թեկնածուն», 1972 թ.՝ «Ասֆալտը» և 1974 թ.՝ «Սովորական օր մը»):

[2] Հավանաբար նկատի ունի «Ապագայ» թերթի խմբագիր Հրաչ Երվանդին (1885-1968), որը չատ է նպաստել սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդմանը:

239. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 326)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, լրացուցիչ, 111 պ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 304-305:

[1] Գարեգին Լևոնյանի եղբայր Պարույրը 1920 թվականից ապրում և աշխատում էր Բուխարեստում:

[2] Նկատի ունի Թամարա Էփրիկյանին:

[3] Խոսքը հրատարակիչ Միսաք Էփրիկյանի մասին է:

[4] Հաջորդ նամակում ևս խոսվում է այս գրքի մասին. դա «Յայսմավուրք»ն է, որ Գ. Լևոնյանը ցանկացել է, որպես հնատիպ գիրք, վաճառել Փարիզում

*[5] **Սեդրակ Աբգալյան** (1894, Սեբաստիա - 1963) – երկրաբանություն և ֆիզիկական աշխարհագրություն սովորել է Սորբոնի համալսարանում, ստացել գիտությունների դոկտորի աստիճան: 1925 թ. Փարիզից մեկնել է Հայաստան, Երևանի պետական համալսարանում աշխատել որպես հանքաբանության ամբիոնի պրոֆեսոր՝ միաժամանակ մասնակցելով Զանգեզուրի երկրաբանական հետազոտական աշ-*

խատանքներին: 1933 թ. վերադառնալով Փարիզ՝ Հայաստանի մասին դրքեր է տպագրել Սորբոնի համալսարանի հրատարակչությունում:

1934

240. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ
(էջ 328)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՖ, թղթ. 244/21, վավ. 65:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 242-243, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 272-273:

[1] Տարեթիվը վերականգնում ենք ըստ բովանդակության:

[2] Դուբյան Ղևոնդ ծայրագույն վարդապետ (1879, Կ. Պոլիս – 1933, Նյու Յորք) – բանասեր, հոգևոր գործիչ, ամերիկահայերի թեմի հոգևոր առաջնորդ: Նրան դանակահարել են 1933 թ. դեկտեմբերի 24-ին Նյու Յորքի Սուրբ Խաչ եկեղեցում: Սպանության մեղադրանքով ձերբակալել են 9 մարդու, որոնք դաշնակցականներ են եղել:

[3] Նկատի ունի Ե. Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն՝ տպագրված 1933 թ. Երևանում:

[4] Փարիզի Պարամոնդ Սինեման հիմնադրվել է 1927 թ. նոյեմբերին:

[5] Կոստան Զարյանը չդիմանալով Խորհրդային Հայաստանում տիրող բռնատիրությանը, հետ էր վերադարձել Եվրոպա: Այս նամակում մեկ անգամ ևս գծագրվում է բանաստեղծ Ավ. Իսահակյանի վերաբերմունքը ու ոչ այնքան բարեկամական դիրքորոշումը Կ. Զարյանի հանդեպ:

[6] Խորհրդային Հայաստան վերջնական վերադարձի որոշումն ընդունելուց հետո, մանավանդ ՀՕԿ-ի հետ Իսահակյանի համագործակցելուց հետո, ՀՅԴ որոշ գործիչներ, առաջին հերթին Ս. Վրացյանը, քննադատական վերաբերմունք և դիրքորոշում են ցուցաբերում բանաստեղծի հանդեպ:

[7] Արմինե Ավետովնան Կարեն Միքայելյանի կինն էր:

241. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 330)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ.Ճ, լրացուցիչ, 111 դ:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1962, էջ 186-187, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 305-307:

[1] Գարեգին Լևոնյանի եղբայրը՝ դաշնակցական գործիչ Պարույր Լևոնյանը (1883-1934) եղել է Ալեքսանդրապոլի վերջին քաղաքագլուխը (1920 թ. հունիս-նոյեմբեր): Սովետական կարգերի հաստատումից հետո հեռացել է Բուխարեստ, ամուսնացել Գայանե անունով մի հայուհու հետ, ունեցել 1 աղջիկ՝ Օլգա անունով: 1934 թ. նա լուրջ առողջական խնդիրներ ուներ և բուժվում էր երկար ժամանակ: 1934 թ. ապրիլին գրած մի նամակում Իսահակյանը Գ. Լևոնյանին հայտնում է եղբոր մահվան մասին: Պարույր Լևոնյանին թաղել են Ռումինիայում, տեղի հայ համայնքի ուժերով: Նրա մահից հետո, ինչպես վկայում են Ջիվանու ժառանգները, դաշնակցական գործիչ Դրոն (Դրաստամատ Կանայան) ամուսնացել է Պարույրի կնոջ՝ Գայանեի հետ: Տարիներ անց նրանք բնակության են տեղափոխվել ԱՄՆ:

[2] Թադևոս Ավդալբեկյան (1885-1937) – հայ տնտեսագետ, գրականագետ, հրապարակախոս, հայագետ: Նրա կատարած բազում աշխատանքներից ամենանշանակալիցը Կ. Մարքսի «Կապիտալի» թարգմանությունն է, որը տպագրվել է 1933 թվականին: Անգամ այդ անձնուրաց աշխատանքը չի փրկել Թ. Ավդալբեկյանին «կարմիր տեռորի» զոհը դառնալուց: Հայաստանի «առաջին» մարքսիստը ևս դնդակահարվում է НКВД-ի զնդաններում 1937 թ.:

[3] «Հայ գրականության պատմություն (ռուսահայ գրականություն 1930-60-ական թթ.)», հատոր երկրորդ, խմբագիրները՝ Հայկ Գյուլիքևխյան, Գ. Վանանդեցի և Դ. Սիմոնյան, Երևան, 1933 թ.:

[4] Խոսքը Ն. Բունիաթյանի Գառնու տաճարին նվիրված ռուսերեն աշխատության մասին է («Языческий храм при дворце Тиридата в крепости Гарни», Երևան, 1933 թ.):

[5] Թորոս Թորոմանյանը վախճանվել է 1934 թ. մարտի 1-ին, Երևանում:

[6] 1932-1933 թթ. իրար հետևից մահացել են հայ նշանավոր դեմքեր՝ դերասանուհի Սիրանուշը, պատմաբան Լեոն, երաժիշտ Սպիրիդոն Մելիքյանը, արձակագիր Նար-Դոսը:

[7] Խոսքը 1933 թ. Երևանում լույս տեսած Եղիշե Զարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուի մասին է:

[8] Խոսքը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքի մասին է, որի ճարտարապետն էր Ա. Թամանյանը: Շենքի հիմնադրման աշխատանքները սկսել են 1932 թ.: Ժողտան Զմեռային դահլիճի շինարարությունն ավարտվել 1939 թ.:

[9] Հայաստանի ազգային գրադարանի հին մասնաշենքը (այսօր՝ գլխավոր մասնաշենք) կառուցվել է ՀԽՍՀ կառավարության և «Գրիգոր ու Կարապետ Մելքոնյան» հիմնադրամի միջոցներով: Ա. Թամանյանի նախագծով շենքը կառուցվել է 1939 թվականին: Գրադարանի շենքի նախագիծը Ա. Թամանյանը մշակել էր դեռևս 1919-1920 թթ.: 1934 թ. գրադարանի կառուցապատման պլաններ էին կազմվում ու քննարկվում:

242. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՑԱՆԻՆ
(էջ 332)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 230-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 307-309:

Վահան Զաքարյանը աշխատում էր Բեռլինում, պարսկական դեսպանատանը:

[1] Պարսկական 1905-1912 թթ. հեղափոխությանը մասնակցած պարսկահայերից են Արշակ խան Գորոյանը՝ Թավրիզում հայանի որպես պահպանողական դործիչ, փոստի պաշտոնյա Վռամ Փիլոսյանը՝ Թավրիզում հայանի որպես սոցիալ-դեմոկրատ դործիչ, Վահան Զաքարյանը՝ Հայ հեղափոխական դաշնակցության ներկայացուցիչ: Արշակ խան Գորոյանը և Վռամ Փիլոսյանը աշխատում էին Փարիզի պարսկական դեսպանատանը:

[2] proces-verbal – արձանագրություն, վկայական (ֆրանսերեն):

[3] laissez-passer – տեղափոխման թույլտվություն, անձնագիր (ֆրանսերեն):

243. ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ
(էջ 334)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 239-Ի:

Առաջին անգամ հրապարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, թ. 3, էջ 35, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 309-311:

Աբաս Իսահակյանը Ավ. Իսահակյանի եղբոր որդին է, Արմենուհի Ղլտճյանը՝ Աբաս Իսահակյանի կինը: Աբասը ձերբակալվել է 1927 թ., ազատազրկման 2 տարիները Մոսկվայում կրելուց հետո 1929 թ. սեպտեմբերին ուղարկվել է Սիբիր: 1935-1954 թթ. Աբաս Իսահակյանը կնոջ և որդու հետ ապրել է Միջին Ասիայում (ազատ աքսոր):

[1] Կոլյան (Նիկողոս) Իսահակյանը որպես հայ կամավորական 1923 թ. Կ. Պոլսից փախել է Ամերիկա, ուր զբաղվել է մանր առևտրով: 1960 թ. վերադարձել է Հայաստան՝ մշտական բնակության:

[2] Աբասի որդին՝ Իսահակ Իսահակյանը դարձել է մասնագիտությամբ տնտեսագետ, Հայաստանի Հանրապետության Պետական բանկի առաջին նախագահը:

[3] Մինուսինսկ քաղաքը գտնվում է Սիբիրում, Կրասնոյարկի երկրամասում: Այստեղ Աբաս Իսահակյանի ընտանիքը ապրել է 1929-1934 թթ.:

[4] член ЦИКа Армении – *Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ:*

[5] Նկատի ունի Վիգեն Իսահակյանի 1927 թ. Սորբոնի համալսարանի հնագիտության դասընթացներին հաճախելու փաստը:

[6] Խոսքը հայտնի ռեժիսոր Սերգեյ Էյզենշտեյնի մասին է:

244. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 336)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, 1448 ի:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 311-312:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Պարույր Լևոնյանը Ջիվանու չորս զավակներից մեկն էր, Գարեգին Լևոնյանի եղբայրը, որ մահացել է 1934 թ. ապրիլին, 51 տարե-

կանում, օտարուհյան մեջ՝ Բուխարեստում: Նրա ընտանիքը հետագայում Ռումինիայից գնացել է Ամերիկա (տես նաև 241-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը):

[3] Ավետիս Ահարոնյանը 1934 թ. Մարսելում կուրծքի պահին կաթվածահար է եղել և այլևս չի ստեղծագործել: Դաժան ճակատագրի դատապարտված գործիչը այս վիճակով ապրել է 14 տարի, Մարսելում:

[4] Հրապարակախոս, ՀՅԴ գործիչ Միքայել Վարանդյանը մահացել է 1934 թ. ապրիլին Ֆրանսիայի Բոմոն քաղաքում, 64 տարեկանում:

[5] 1934 թ. տպագրվել է Արամ Չարըգի թարգմանությամբ «Օմար Խայամի քառյակները» գիրքը:

[6] Հիշյալ ամսաթվով նամակ՝ ուղղված Տիգրան Չավենին չի պահպանվել:

245. ԱՐՇԱԼՈՒՑՍ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 338)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, մմ 2680:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Ռուասսին Փարիզից 34 կմ հեռավորության վրա գտնվող հանգստավայրը է: Այստեղ Ավ. Իսահակյանը հանգստացել է 1934 թ. մայիսի 1-ից մինչև հունիսի 7-ը՝ չարաթը մեկ Փարիզ գնալ-վերադառնալով:

246. ՎԱՀԱՆ ՉԱՔԱՐՑԱՆԻՆ

(էջ 339)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 229-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 312-314:

[1] Նկատի ունի Վռամ Փիլոսյանին, որն աշխատում էր Փարիզի պարսկական դեսպանատանը:

[2] Նկատի ունի Ջեյմս Գրինֆիլդին (մոր կողմից՝ հայ, 1873, Թավրիզ - 1939, Թեհրան), ով 1934 թ. Բեռլինից տեղափոխվեց Պարսկաստան: Գրինֆիլդը 1914-1934 թթ. գործուն մասնակցություն է ունե-

ցել հայ համայնքի աշխատանքներին, 1934 թ. ընտրվել է Թեհրանի եկեղեցական խորհրդի նախագահ և մինչև կյանքի վերջ ապրել ու աշխատել է Թեհրանում:

247. ԿԱՐԵՆ ՄԻՔԱԵԼՅԱՆԻՆ
(էջ 342)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՖ, թղթ. 244/21, վավ. 66:

Առաջին անգամ կրճատումով հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 240-241, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 275-277:

[1] «Поэзия Армении» *Բ. հրատարակությունը իրականացավ 1940 թ., Մոսկվայում:*

[2] *«Ռավեննայում» բանաստեղծությունը գետեղված էր «Բանաստեղծություններ», Երևան, Պետհրատ, 1930 ժողովածուի մեջ:*

[3] «Поэзия Армении» *գիրքը տպագրվել է 1916 թ. Մոսկվայում Վ. Բրյուսովի խմբագրությամբ ու առաջաբանով: Ժողովածուն ընդգրկում է միջնադարից մինչև 1916 թ. հայ բանաստեղծների լավագույն ստեղծագործությունները:*

[4] *Գրականագետ և թարգմանիչ Հակոբ Խաչատրյանցը ռուսերեն է թարգմանել մի շարք հայ դասական գրողների, այդ թվում՝ Ե. Զարենցի «Երկիր Նաիրի» վեպը (1926,* «Страна Наири», *Մոսկվա,* «Худож. литература» *հրատ., 1935):*

[5] *Նկատի ունի ռուս արձակագիր Միխայիլ Շոլոխովի (1905-1984)* «Тихий Дон» *վեպը, որ գրվել էր 1924 թ. և Նոբելյան մրցանակ բերել հեղինակին 1965 թ.:*

[6] «Смерть Вазир-Мухтара» *գործը Յուրի Տինյանովի երկրորդ վեպն է, որ հրապարակվել էր 1927-1928 թթ. «Զվեզդա» ամսագրի մեջ: Այս վեպը պատմում է Ա. Գրիբոյեդովի կյանքի վերջին տարիների մասին:*

[7] *Գրող և դերասան Միքայել Մանվելյանը թատրոնում հայտնի էր Միշո անունով:*

[8] *Նկատի ունի Դավիթ Անանունին, որ աքսորված էր 1927 թվականից և հաճախ փոխվում էին նրա ապատազրկման վայրերը:*

[9] *Կարեն Միքայելյանը Մոսկվայում և Երևանում տպագրել է պատմվածքների մի քանի ժողովածուներ, թարգմանություններ է արել հատկապես ռուսերենից: Նա թարգմանել է Օսկար Ուայլդի ստեղծագործությունները, 1934 թ.՝ Ջոնաթան Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը» վեպը (Ակսել Բակունցի առաջաբանով), որը հետագայում մի քանի անգամ վերահրատարակվել է:*

[10] *1930-ական թթ. Խորհրդային իշխանությունները ցանկացել են կառուցել Երևան-Աղստաֆա (Ադրբեջան) երկաթգիծը, սակայն աշխատանքները ավարտին չեն հասել տարբեր պատճառներով: Երևանը Բաքվին միացնող այս երկաթգծի աշխատանքները ղեկավարում էր Բոգդան Փիրումովը:*

[11] *Խոսքը ներկայիս «Նաիրիտ» քիմիական գործարանի մասին է, որ չահագործման է հանձնվել 1936 թվականին:*

[12] *1930 թ. սկսել են կառուցել Սևան-Հրազդան կասկադը, որն ունի 7 հիդրոէլեկտրակայան: Կառուցումը տևել է մինչև 1965 թիվը: Բացի սրանից, ոռոգման նպատակով մեծ ծավալի քաղրցահամ ջուր էր գործածվում, որը պատճառ է դառնում լճի մակարդակի իջեցման համար: 1930-ական թթ. արդեն խախտվում է Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունը, խաթարվում ամբողջ համակարգը՝ ջրի անխնա օգտագործման արդյունքում (էներգիայի արտադրություն և ոռոգում): Մեր օրերից համարյա մեկ դար առաջ բանաստեղծը անհանգստացել է լճի ճակատագրով այնպես, ինչպես այսօր էկոլոգներն են ահազանգում մոտալուտ բնապահպանական վտանգի մասին:*

Այս առումով հատկանշական է բանաստեղծի 1948 թ. Նոր Բայազետում գրած «Մեր սպանված դիցուհին» բանաստեղծությունը՝ «Մեռնեի, Սևանը չորացած չտեսնեի» բնաբանով (Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու 14 հատորով, հ. 2, Երևան, 2011, էջ 369):

248. ՍԱԴՈ ՍՈՒՔԻԱՍՑԱՆԻՆ
(էջ 345)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ՍՍՖ, 397:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 315:

Սաքո Սուքիասյան (1896, Ախալքալաք-1965, Մոսկվա) – գրականագետ, թարգմանիչ, գրող: 1923-1965 թթ. ապրել է Մոսկվայում: 1930-ական թթ. աշխատել ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչությունում՝ կատարելով թարգմանություններ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն: 1941 թ. դառնում է ԽՍՀՄ Գրողների միության անդամ: Հայրենական պատերազմի տարիներին եղել է «Տեղեկագիր» հանդեսի խմբագիրն ու թարգմանիչը: 1946 թվականից սկսած ամբողջովին նվիրվում է գրական-ստեղծագործական և թարգմանական աշխատանքին: Շուրջ 30 տարի չարունակ զբաղվել է իր ընտանիքի պաշտելի բանաստեղծի՝ Վահան Տերյանի կյանքի և ստեղծագործության ուսումնասիրությամբ: 1959 թ. հրատարակվել է Ս.Սուքիասյանի «Էջեր Վահան Տերյանի կյանքից» 300 էջանոց գիրքը:

[1] Թվագրվում է փոստային կնիքից:

[2] Խոսքը բանաստեղծ և քաղաքական գործիչ Վահան Տերյանի (1885, Ախալքալաք - 1920, Օրենբուրգ) մասին է: 1930-ական թթ. Ս.-Սուքիասյանը նամակ ու խնդրագիր էր ուղարկում աշխարհի բոլոր կողմերում ապրող հայ մտավորականներին՝ խնդրելով իրեն ուղարկել Վ. Տերյանից մնացած ցանկացած նչխար, ձեռագիր թերթիկ: Նա մտադիր էր այդ ամենն ընդգրկել Տերյանի երկերի լիակատար ժողովածուի մեջ: Նման աշխատանքի չնորհիվ կորստից փրկվեց բանաստեղծի հարյուրավոր գրություններ ու նամակներ:

[3] Ավ. Իսահակյանը իր գրքերի և ձեռագրերի մի մասը ի պահ էր թողել Բեռլինում ապրող Զ. Գրինֆիլդի մոտ:

249. ՍԱԴՈ ՍՈՒՔԻԱՍՑԱՆԻՆ

(էջ 346)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍՍՖ, 397:

Առաջին անգամ տպագրվել է Արևիժ 1979, էջ 315-316:

[1] Սաքո Սուքիասյանի ֆոնդում այս նամակին կից պահվում է նաև Ավ. Իսահակյանի հուշերը Վահան Տերյանի մասին (ԳԱԹ, ՍՍՖ, 397): Ավ. Իսահակյանի «Վահան Տերյան» հուշը տպագրվել է Ավ. Ի-

սահակյան, «Իմ հուշերից», Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 29-37, ապա Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 5, Հոդվածներ, եր., Հայպետհրատ, 1977, էջ 112-121:

250. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՑԱՆԻՆ

(էջ 347)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍՍՖ, 397:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 316-319:

[1] ***Տյուտչև Ֆյոդոր*** *(1803-1873) – ռուս լիրիկ բանաստեղծ, հրապարակախոս:*

[2] ***Նեկրասով Նիկոլայ*** *(1821-1878) – ռուս բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս:*

[3] ***Նադսոն Սեմյոն*** *(1862-1887) – ռուս բանաստեղծ:*

[4] ***Բալմոնտ Կոնստանդին*** *(1867-1942) – ռուս սիմվոլիստ բանաստեղծ, էսսեիստ, ունի բանաստեղծությունների 35 ժողովածու:*

[5] ***Բրյուսով Վալերի*** *(1873-1924) – ռուս բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ:*

[6] ***Ֆեթ Աֆանասի*** *(1820-1892) – ռուս բանաստեղծ և թարգմանիչ:*

[7] ***Եսենին Սերգեյ*** *(1895-1925) – ռուս բանաստեղծ:*

[8] ***Մայակովսկի Վլադիմիր*** *(1893-1930) – սովետական ֆուտուրիստ բանաստեղծ:*

[9] *Նկատի ունի Մոսկվայում աշխատող Վահան Տեր-Վահանյանին (1893-1937), որը թարգմանել էր մարքսիստ Գ. Պլեխանովի գործերը, 1920-ական թթ. խմբագրել է ռուսական կոմունիստական տարբեր հանդեսներ, «Պրավդա» թերթը: 1937 թ. նրան մեղադրել են որպես «Իվան Սմիռնովի ընդհատակյա տրոցկիստական կազմակերպության» ղեկավար-անդամ, որի արդյունքում նա էլ է դառնում անհատի պաշտամունքի զոհերից մեկը:*

[10] *Վահան Տերյանի հղբայրներն են՝ դրող Ղազար Տեր-Գրիգորյանը (Զավախեցի), Արամ Տեր-Գրիգորյանը և Ներսես Տեր-Գրիգորյանը՝ գրականագետ Կամսար Գրիգորյանի հայրը:*

251. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ
(էջ 350)

Ինքնագիրը պահվում է Մատենադարան, ԱՀՖ, թղթ. 244/21, վավ. 67:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ադամյանը «Պատմա-բանասիրական հանդես», 1973, թ. 2, էջ 241-242, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 278-279:

[1] Նկատի ունի Սաքո Սուքիասյանին (տես նախորդ նամակը):

[2] 1934 թ. Կարեն Միքայելյանի թարգմանությամբ Երևանում հրապարակվել է Ջ. Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունը» վեպը: Գրքի առաջաբանը գրել է Ակսել Բակունցը:

Այս գրքին Ավ. Իսահակյանը անդրադարձել է իր «1934 թվի գրական հունձը խորհրդային Հայաստանում» հոդվածում (ՀՕԿ, Փարիզ, 1934, թ. 11, էջ 663-671):

[3] sic – հենց այսպես՝ հեգնական իմաստով (լատիներեն):

[4] Մրենի տաճար (կառուցված V դարում, իշխան Դավիթ Սահառունու կողմից) – գմբեթավոր բազիլիկ եկեղեցի Թուրքիայի տարածքում, պատմական Մրեն քաղաքի տարածքում: Ավերվել է 12-րդ դարում թուրք-սելջուկների կողմից:

[5] Տեկորի տաճար (կառուցված V դարում, հիմնադիր՝ Սահակ Կամսարական) – գմբեթավոր բազիլիկ եկեղեցի Շիրակ գավառի Համանուն գյուղում՝ այժմ Թուրքիայի Կարսի մարզում, ամրողջովին ավերված: 20-րդ դարասկզբին, դեռևս կանգուն վիճակում, հետազոտվել է Թ. Թորոմանյանի, Ն. Մառի կողմից:

[6] Նկատի ունի վանա լճի Ախթամար կղզում գտնվող հոգևոր կենտրոն Սուրբ Խաչ եկեղեցին, որ կառուցվել է 10-րդ դարում Ճարտարապետ Մանուելի կողմից:

[7] Մչո Սուրբ Կարապետ – վանքային համալիր Տուրուբերան նահանգի Տարոն գավառում, Արևմտյան Հայաստանում համարվել է ամենանվիրական սրբավայրը:

252. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 351)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, 1448 իա:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 319-320:

[1] Գարեգին Լևոնյանի «Հակոբ Կոջոյան» հոդվածը տպագրվել է «ՀՕԿ», Փարիզ, 1934, թ. 12, էջ 722-727:

[2] Նկատի ունի Գարեգին Լևոնյանի «Հայ պարբերական մամուլը» գիրքը (Երևան, 1934, «Պետհրատ» հրատարակչություն, 230 էջ):

[3] Հայտնի լեզվաբան Հրաչյա Աճառյանի (1876, Ստամբուլ-1953, Երևան) «Հայոց լեզվի պատմություն»ը (2 հատորով) տպագրվել է 1940 թ. և 1951 թ.: Դեռևս ձեռագիր վիճակում այս աշխատությունը 1934 թ. արժանացել է Երուսաղեմի Պատրիարքարանի «Եղիշե Դուրյան» առաջին մրցանակի:

1935 թ. Երևանում հրատարակվել է նրա «Հայերեն արմատական բառարանը» (ապակեհատիկ, 7 հատորով), որտեղ ստուգաբանվել է 5600 բառ: Այս գրքի վրա հեղինակը աշխատել է 10 տարի: 1935 թ. Հրաչյա Աճառյանին շնորհվել է Գիտության վաստակավոր գործչի կոչում, 1943 թ. նա ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի անդամ:

[4] Արամ Վիրապյանը Ավ. Իսահակյանի պատանեկան ընկերներից էր, «Ամբողջ բոքոնը տվեց» պատմվածքի նախատիպը:

[5] Աստվածատուր Խաչատրյան, «Հայաստանի սեպագրական չրջանի քննական պատմությունը հիմնված արձանագրական տվյալների վրա շուրջ 3000-600 Ն.Ք.», Երևան, Մխլքոնյան ֆոնդի հրատ., 1934, 556 էջ:

253. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՑԱՆԻՆ
(էջ 352)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 955, ց. 1, գ. 226, թ. 1-2:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 979, էջ 320-321:

***Սարգսյան Խորեն** (1891, Շուշի - 1970, Երևան) – գրականագետ, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, 1930-1936 թթ. ԵՊՀ դասախոս, 1937-1942 թթ. Արմֆանի գրականության և լեզվի ինստիտուտի տնօրեն, 1943-1947 թթ. ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, 1948-1970 թթ. նույն ինստիտուտի հին գրականության բաժնի վարիչ:*

[1] *Խոսքը վերաբերում է «Հայոց գրականության քրեստոմատիա» (Միջնակարգ դպրոցների համար: Իններորդ դասարան: Կազմող՝ Մ. Մկրյան և Խ. Սարգսյան) գրքին՝ Երևան, Պետհրատ, 1934, 500 էջ:*

[2] *Ավ. Իսահակյանը նկատի ունի մ.թ.ա. 4-րդ դարում Էվկլիդես Մեգարացու հիմնած հունական դպրոցի ակնառու ներկայացուցիչներին՝ Արիստոտել, Դեմոկրիտ, Դիոգենես, Թալես, Հերակլիտ, Սոկրատես, Պլատոն:*

[3] ***Րաֆֆի*** *(Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835, Փայաջուկ, Պարսկաստան-1888, Թիֆլիս) – Հայ պատմավիպասան, հասարակական գործիչ, հրապարակախոս: Նրա վեպերի հայրենասիրությամբ մի քանի սերունդ է սնվել ու առաջնորդվել:*

[4] *1930-1936 թթ. Խորեն Սարգսյանը դասավանդում էր համալսարանում, միաժամանակ աշխատելով Գրական թանգարանում՝ որպես գրական կապերի բաժնի վարիչ: Նա զբաղվում էր հայ գրողների արխիվները Երևանում հավաքագրելու աշխատանքներով: Շատ ջանքեր է գործադրել Րաֆֆու արխիվը Անգլիայից Հայաստան բերելու ուղղությամբ, բայց, ցավոք, այդ գործը հաջողությամբ չի ավարտվել:*

[5] ***Սաֆրաստյան Արշակ*** *(1885-1958) – Հայագետ, պատմաբան, դիվանագետ, հասարակական գործիչ: Նա 1928-1937 թթ. Լոնդոնում խմբագրել և հրատարակել է «Մասիս» ամսագիրը (անգլերեն լեզվով), պաշտոնավարել է Լոնդոնի Հայ Կարմիր Խաչի լիազորի պաշտոնը, եղել է Լոնդոնի հայ համայնքային ընկերության վարչության մշտական անդամը:*

[6] *Արշակը (1879-1946) Րաֆֆու կրտսեր որդին էր, որը մոր՝ Աննա Րաֆֆու (1848-1920) և եղբոր՝ Արամի (1875-1919) հետ 1895 թվականից ապրում էր Լոնդոնում: Նա մոտ 50 տարի աշխատել է Լոնդոնի Արքայական քոլեջում՝ որպես ռուսերենի ուսուցիչ:*

Րաֆֆիները Լոնդոնում 1898 թ. հիմնադրել են «Լոնդոնի հայ գործավորների և ուսանողների միությունը», որի մեջ ընդգրկված է եղել մոտ 400 հայ՝ այդ թվում մշակութային հայտնի գործիչ Զաքել Պոյաջյանը: Վերջինս դարձավ Րաֆֆի ընտանիքի բարեկամը: Նրա վկայությամբ Րաֆֆու զավակները փայլել են ջերմ հայրենասիրությամբ: Արամը հոր մահվան տարելիցին գրել է «Րաֆֆի» հոդվածը («Տարազ», 1908, թ.5), «Մի քանի խոսք Րաֆֆու նշանա-

կության մասին» հոդված-առաջաբանը՝ Պոյաճյանի «Պարսկական պատկերներ» դրքի համար (Վիեննա, 1913): Արշակը մոր և եղբոր մահից հետո մտածում էր հոր արխիվի պահպանութ յան մասին, բայց չէր վստահում խորհրդային պետութ յանը: Նրա մահից հետո թանկարժեք արխիվի ճակատագիրը ժառանգվեց Արշակի իւլան-դուհի կնոջը:

*[7] **Մկրտիչ Մկրյան** (1907-1983) – դրականագետ, ԵՊՀ դասախոս: 1930-ական թթ. Մ. Մկրյանը դպրոցական ծրագրերին համապատասխան դասագրքեր էր գրում բարձր դասարանների համար: Նա ունի Վարպետին նվիրված ուսումնասիրութ յուն՝ «Իսահակյանի հումանիզմը» վերնագրով (Երևան, «Հայաստան», 1975, 104 էջ):*

254. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՑԱՆԻՆ
(էջ 354)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1536, թ. 14-17:

Առաջին անգամ տպագրվել է «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1967, թ. 3, էջ 134-136, այնուհետև (կրճատումով)՝ Աիեժ 1979, էջ 322-324:

*[1] **Վազգեն Շուշանյան** (Օննիկ 1902-1941) – ֆրանսահայ գրող, հասարակական գործիչ, Պոլիսում 1915 թ. կորցրել է բոլոր հարազատներին: 1922 թվականից փոխադրվել է Ֆրանսիա, ապրել Մարսելում, Փարիզում, աշխատակցել «Մինք» (1931-1932, ունեցել է հինգ համար), «Մարտկոց» (1932-1933) գրական հանդեսներին: Շուշանյանի Հայաստան վերադարձը չի իրագործվել: Նա մահացել է Փարիզի հիվանդանոցում, թոքերի հիվանդութ յունից:*

[2] Ադասի Խանջյանին ուղղված նամակը չի պահպանվել:

*[3] **Մաքսիմ Լիտվինով** (1876-1951) – հրեական ծագմամբ ռուս խորհրդային կուսակցական և պետական գործիչ, դիվանագետ, 1930-1938 թթ. եղել է ԽՍՀՄ ներկայացուցիչը Ազգերի Լիգայում, 1941-1943 թթ. ԽՍՀՄ դեսպան ԱՄՆ-ում և Կուբայում:*

*[4] **Ռուզվելտ Ֆրանկլին** (1882-1945) – ԱՄՆ 32-րդ նախագահը (1933-1945):*

255. ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻՆ
(էջ 358)

Ինքնագիրը (սևագիր տարբերակ) պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 291-293 (1932, 5 օգոստոս թվագրումով):

***Ալազան Վահրամ** (Գաբուզյան. 1903, Վան-1966, Երևան) – սովետահայ գրող, գրական-հասարակական գործիչ, 1923-1932 թթ. պրոլետգրողների ասոցիացիայի նախագահ, 1932-1936 թթ. «Գրական թերթի» խմբագիր: 1937-1954 թթ. Ալազանն աքսորված է եղել Սիբիր, ստալինյան ճամբարներ:*

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Միսաք Մեծարենց «Երկերի լիակատար ժողովածու» (կազմեց, առաջաբանը գրեց և ծանոթագրեց Վ. Ալազան և Վ. Նորենց), Երևան, 1934, 376 էջ:

[3] Ավ. Իսահակյանի «1934 թվի գրական հունձը Խորհրդային Հայաստանում» հոդվածը տպագրվել է ՀՕԿ ամսագրի նոյեմբերյան համարում (էջ 663-671):

*[4] **Ռաֆայել Աթայան** (1907, Նոր Ջուղա - 1990, Երևան) – արձակագիր, գրականագետ, 1923 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան, աշխատել Արմենպրեսում, 1928-1934 թթ.՝ «Խորհրդային Հայաստան» թերթում եղել է բաժնի վարիչ, 1934-1935 թթ.՝ «Պետհրատ»ում գեղարվեստական բաժնի վարիչ և գլխավոր խմբագիր, այնուհետև զբաղվել է մանկավարժական գործունեությամբ՝ գիտական ասպարեզում:*

1935

256. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ
(էջ 361)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, մմ 2687:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Mosquñe – *Փարիզի կենտրոնում գտնվող ալժիրական Մեծ մզկիթ՝ հայտնի իր սրճարանով ու համամ-բաղնիքով:*

257. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՑԱՆԻՆ
(էջ 362)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԲՑ, 63-III:

Տպագրվում է առաջին անգամ:

***Բուդաղյան Աննա** (1880, Շուշի - 1964, Փարիզ) – դերասանուհի, ռեժիսոր, մշակութային գործիչ: 1910-1920 թթ. Բաքվում աշխատելուց հետո, գնում է Եվրոպա, լինում Բեռլինում, ապա Փարիզում, ուր ապրում է մինչև կյանքի վերջ և նվիրվում թատերական գործունեությանը:*

Շիրվանզադեի, Հ. Մասեհյանի, Զ. Եսայանի առաջարկով 1925-1930 թթ. Աննա Բուդաղյանը Փարիզում կազմակերպում և ղեկավարում է «Մայրենի բեմ» թատերախումբը: Նրա ջանքերով է ստեղծվել նաև «Ազգային ճակատ» թատերական մասնաճյուղը Փարիզում: Աննա Բուդաղյանը մտերիմ է եղել Արթյուր Ադամովի, Մամուլյանների ընտանիքի հետ:

[1] ***Սերով Վալենտին** (1865-1911) – ռուս դեղանկարիչ, գրաֆիկ, դիմանկարի վարպետ:*

[2] ***Կորովին Կոնստանտին** (1961-1939) – ռուս դեղանկարիչ, թատերական նկարիչ, մանկավարժ, գրող:*

[3] *Տիգրան Բուդաղյանը՝ Աննայի ամուսինը, աշխատում էր Խորհրդային Միության առևտրական նեկայացուցչությունում (տորգպրեդ), որպես ինժեներ:*

[4] *Ծարհատը Աննա Բուդաղյանի որդին է:*

258. ԵՐՎԱՆԴ <ՔՈՉԱՐԻՆ>
(էջ 362)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 279-I:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Երվանդ Քոչարը 1930 թ. ամուսնացել է նկարիչ Մելինե Օհանյանի հետ: Նրանք միասին ապրել են մինչև 1936 թ., երբ Քոչարը վերադարձել է Սովետական Հայաստան: Մելինեն նոր հանդիպմանը սպասել է երկար ժամանակ, ապա Պերսեի պատկերասրահում կազմակերպել Քոչարի Փարիզում թողած ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը: Հայաստան մտնելուց հետո Քոչարը այլևս չի կարողացել դուրս գալ Սովետական Միության սահմաններից:

Մելինե Օհանյանը մահացել է 1969 թ., Փարիզում:

259. ՊԵՏՐՈՍ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ

(էջ 363)

Արտատպվում է «Անդաստան գրականութեան և արուեստի», Փարիզ, 1969, թ. 18, էջ 76-77, «Անտիպ նամակ մը Ա.Ե. Իսահակեաններն» խորագրի տակ:

Տպագրվել է նաև ԱԻԵԺ 1979, էջ 325-326, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 280-281:

***Տոնապետյան Պետրոս** (1867, Տիգրանակերտ - 1949, Լոնդոն) – ՀՅԴ գործիչ, գրող, թարգմանիչ, մշակութային գործիչ, գրել է «25-ամյա բեմական գործունեություն Պ.Հ. Ադամյանի» գիրքը: Պ. Տոնապետյանը երկար ժամանակ ապրել է Լոնդոնում, ուսումնասիրել է Անգլիայում պահվող հայ ձեռագրերը («Ցուցակ հայ ձեռագրոց Բրիտանական Մուզէում», «Արարատ», 1914, թ. 2, փետրվար, էջ 167-170):*

[1] Հայաստանի Գրողների միության քարտուղար Վահրամ Ալազանը 1935 թ. հունիսին մասնակցել է Փարիզում կայացած Մշակույթի պաշտպանության միջազգային առաջին կոնգրեսին: Այդ օրերին նա հանդիպել է Ավ. Իսահակյանի հետ:

[2] Պետրոս Տոնապետյանը պարբերաբար գրքեր է ուղարկել Երևանի նորաստեղծ հանրային գրադարանին:

[3] 1947 թ. հրատարակվել է Պետրոս Տոնապետյանի «Հայաստանը և հայ ժողովուրդը դարերի միջով» (հատոր Ա, Մանկություն և պատանեկություն) ինքնակենսագրական ուշագրավ գիրքը, որի առաջաբանում

80-ամյա հեղինակը գրել է. «Ես տակավին երիտասարդ էի, երբ գաղափարակից հեղափոխականներ և ոչ-հեղափոխական բարեկամներ ջերմորեն փափաք էին արտահայտում, որ գրի առնեի հեղափոխական և բանտային կյանքիս հիշողությունները, մի փափաք, որ անշուշտ առարկա էր իմ մտածության... նրանց տված խոստումս մնում էր անկատար, և մտադրությունս անմեռանելի... եթե հարատևեմ այս անսթափելի ծուլությամբ, անշուշտ իմ անունը պիտի գրկվի փայլելուց Հայ Հեղափոխության փառավոր հերոսների շարքերում...»:

260. <ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ>
(էջ 364)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, մմ 2713:

Տպագրվում է առաջին անգամ:

Ավ. Իսահակյանը Ա. Գրիգորյանին դիմել է Լուլու փաղաքշական ձևով:

[1] Возрождение *(Փարիզ, 1925-1940) – ռուս էմիգրացիայի թերթը, 1925-1936 թթ.՝ օրաթերթ, 1936-1940 թթ.՝ շաբաթաթերթ: Թերթը հիմնադրվել և հրատարակվել է հայազգի բարերար Աբրահամ Ղուկասովի միջոցներով, խմբագիրներ՝ Ստրուվե (1925-1927), Յ.Սեմյոնով (1927 թվականից սկսած), գլխավոր գրաքննադատը եղել է Վ. Խոդասևիչը:*

[2] *1935 թ. հունվարի 27-ին* Возрождение *օրաթերթում տպագրվել է Լիլիթի անունով մի նորահայտ, «թվացյալ» մոլորակի հայտնաբերման մասին, որին աստղագետները՝ համարում էին Սև անցք - Երկրորդ Լուսին և նրա էներգետիկան համեմատում աստվածաշնչյան Լիլիթի կանացի էության հետ: Կարծում ենք, Ավ. Իսահակյանին հետաքրքրել է գիտության մեջ հայտնված այս նոր ինֆորմացիան:*

261. ՖՐԱՆՍԱՀԱՑ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ
(էջ 365)

Շրջաբերականը (մեքենագիր) պահվում է ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 2467, թ. 2:

(ՀՕԿ ամսագրի բլանկի վրա՝ HOC, Periodique Redaction-Administration, 9, Rue Bourdaloue, 9, Paris):

Տպագրվում է առաջին անգամ:

ՀՕԿ ամսագրի հոբելյանական համարում (1935 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր-նոյեմբեր՝ 9-10-11) տպագրվել են Ե. Քոչարի, Մ. Բաբայանի, Ա. Զոպանյանի, Պ. Զարոյանի, Ս. Խաչատուրյանի, Վ. Թեքեյանի, Վ. Թորգոմյանի և այլոց հոդվածները՝ նվիրված հայ ժողովրդին ու հայրենիքին:

[1] ***Հայկ Գալճյան*** *(1890, Վան - 1962, Փարիզ) – բժիշկ, դրող, հասարակական գործիչ, 1933-1935 թթ. ՀՕԿ նախագահ:*

262. ԳԵՂԱՄ ԱՖՐԻԿՑԱՆԻՆ

(էջ 366)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 236-237:

Գեղամ Աֆրիկյան (1904-1977) – Ավ. Իսահակյանի փեսրոնե քրոջ որդին, ՀՍՍՀ վաստակավոր դերասան:

[1] *Հեղինեն Գեղամ Աֆրիկյանի քույրն է:*

[2] *Նկատի ունի Գեղամի քույր Դշխուհի Աֆրիկյանին:*

[3] *Մարտինը Ավ. Իսահակյանի Հակոբ Հորեղբոր որդին է:*

263. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ

(էջ 367)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՑ, լրացուցիչ, 111 դ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 327:

[1] *Գրականագետ Յոլակ Խանզադյանը մահացել է Մոսկվայում 1935 թ. սեպտեմբերի 19-ին, թաղվել է Երևանում:*

[2] *Կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը մահացել է Թիֆլիսում 1935 թ. մարտի 30-ին, թաղվել է Երևանում:*

[3] *Ավ. Իսահակյանի երիտասարդության մտերիմ ընկեր Սիսակ Տեր-Սիմոնյանը, որ այդ տարիներին Հայմատառի (Հայաստանի մա-*

տակարարման առևտուր) դիրեկտորի տեղակալն էր, մահացել է 1935 թ. հուլիսի 10-ին:

[4] Խոսքը Ավ. Իսահակյանի մորաքրոջ տղայի՝ Ալեքսան Ջաուրճյանի մասին է:

*[5] **Արազի** (Մովսես Հարությունյան, 1878-1964) – հայ արձակագիր, թարգմանիչ, Ստեփան Շահումյանի դասընկերը:*

[6] Աթաբեկ Խնկոյանը՝ Խնկո Ապերը մահացել է 64 տարեկանում 1935 թ. հոկտեմբերի 8-ին:

1936

264. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՑԱՆԻՆ
(էջ 368)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 212-I:

Առաջին անգամ կրճատումներով հրապարակվել է «Հայրենիքի ձայն», Երևան, 1974, թ. 2, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 262-263:

***Սարգիս Ալթունյան** (ծնվ. 1900, Հաճըն) – հրապարակախոս, մանկավարժ, խմբագիր: 1918 թ. ծառայել է Ֆրանսիայի բանակում, ապա գնացել Կիպրոս և որբանոցում զբաղվել ուսուցչությամբ, 1924 թ. բնակություն է հաստատել Մարսելում, որտեղ 1928 թ. հիմնադրել է «Հաճընը» հայրենակցական միության մասնաճյուղը, 1930 թ.՝ «Հաճընը» պաշտոնաթերթը (հետագայում՝ Փասադենա, 1930-1940 թթ.): «Հաճընը» հայրենակցական միության կենտրոնը ստեղծվել է 1927 թ. մայիսին Նյու Յորքում: Սարգիս Ալթունյանը, ինչպես և շատ հաճընցիներ, մեծ ջանքեր է թափել հայրենիքում՝ Խորհրդային Հայաստանում կառուցված Հաճըն թաղամասը հիմնելու ուղղությամբ, այդ գործին նա նվիրաբերել է 10.000 ֆրանկ: Հաճընցիների երազանքը իրագործվեց 1958 թ. աշնանը, երբ մեծ շուքով նչվեց Արզնի բնակավայրին մոտ կառուցած Նոր Հաճըն թաղամաս-ավանի բացումը:*

[1] «Հայ սիրտ»ը 1935 թ. Մարսելում հրատարակվող անկախ շաբաթաթերթ էր, որի խմբագիրը և արտոնատերը «Հաճընը» միության նախագահ Եղիշե Թորոսյանն էր:

[2] *Տիրան Թեքեյան (1887-1967) – դրող, իրավաբան:*

[3] *Սարգիս Ալթունյանը նամակով դիմել է Ավ. Իսահակյանին և խնդրել նրա համաձայնությունը՝ Մարսելում նշելու սիրելի բանաստեղծի ծննդյան 60-ամյա հոբելյանը:*

[4] *1936 թ. Փարիզի «Ապագայ» թերթում Ավ. Իսահակյանի ծննդյան 60-ամյակի առթիվ հրատարակվել են Անայիսի «Փափաք մը» (1936, 16 հունվար), Գ. Վանանդեցու «Ավետիք Իսահակյան. 1975-1935. Պոեզիայի մասին» (1936, 21 հունվար), Ադ. Վարդանյանի «Շիրակի աննման երգիչը. ծննդյան 60-ամյակի առթիվ» (1936, 2 փետրվար) հոդվածները:*

[5] *Ավ. Իսահակյանը ստացել էր «Հաճըն» ամսագրի (1935-1936 թթ. 9-12) բացառիկ թիվը, որի մեջ տպագրված էին իր «Անի» և «Հայրենիքի կոչին» բանաստեղծությունները:*

[6] *Խոսքը «Հաճըն» հայրենակցական միության նախագահ դոկտոր Արմենակ Մանկրյանի «Ազգային ոգի» հոդվածի մասին է («Հաճըն» ամսագիր, 1936 թ. 9-12, բացառիկ թիվ, էջ 955-956):*

265. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՑԱՆԻՆ

(էջ 369)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 213-I:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Նկատի ունի «Գաղութահայ կյանք. Ավ. Իսահակյանի հոբելյանը Մարսելլի մեջ» տեղեկատվությունը («Ապագայ», Փարիզ, 1936, 22 ապրիլ):*

[2] *Ավ. Իսահակյանի 60-ամյակը Մարսելում նշելու համար կազմվել էր հոբելյանական 25 հոգանոց հանձնախումբ, որի նախագահներն էին Հ. Սահաթճյանը և Մ. Քեչյանը, ատենապետները՝ Ադդարյանը և Հ. Սուքիասյանը: Հետագայում այս տոնակատարության մասին Սարգիս Ալթունյանը պատմում է «Հուշատետրես փրկված էջեր: Մեծահամբավ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի ծննդյան 60-ամյակը Մարսելում տոնելու մասին» հուշերում («Սովետական Հայաստան», Երևան, 1975, թ. 7 և «Լրաբեր», Նյու-Յորք, 1975, 13 դեկտեմբեր):*

[3] **Փոլատյան Կարապետ** *(1911-1986) – ֆրանսահայ գրող, վիպագիր, 1931 թվականից ապրում էր Մարսելում և աշխատակցում «Հաճընն» հանդեսին, 1936 թ. Ավ. Իսահակյանի հոբելյանական հանձնախմբի քարտուղարն էր:*

[4] **Թափաքյան Վահան** *– ֆրանսահայ մշակութային գործիչ, «Հաճընն» հայրենակցական միության անդամ, Ավ. Իսահակյանի հոբելյանական հանձնախմբի նախագահ և գանձապահ:*

[5] *«Հաճընն» հայրենակցական միության անդամ Ս. Պուրճագյանի «Ավ. Իսահակյանի 60-ամյակը» հոդվածը տպագրվել է «Հաճընն», Մարսել, 1936, մայիս-օգոստոս, էջ 1016:*

266. ՌԱՖԱՑԵԼ ՇԻՇՄԱՆՑԱՆԻՆ

(էջ 371)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

Շիշմանյան Ռաֆայել *(1885, Ակն - 1959, Երևան) – նկարիչ, արվեստաբան: 1908 թվականից ապրել և սովորել է Փարիզում, 1919 թվից սկսած մասնակցել է Անկախների ամենամյա ցուցահանդեսներին, եղել է «Անի» նկարչական խմբակցության նախաձեռնող և անդամ, ունեցել է պրոսովետական հայացքներ, 1945 թվականից՝ ՀՕԿ անդամ, 1947 թ. մշտական բնակության է տեղափոխվել Հայաստան, զբաղվել գեղանկարչությամբ:*

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

[2] *Նկատի ունի Փարիզում Խորհրդային Միության առևտրային ներկայացուցիչ Դանիել (Դանուշ) Շահվերդյանին:*

267. ԿՈՍՏԱՆ ԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 372)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԿԶՑ, 38:

Առաջին անգամ տպագրվել է 2016, էջ 282-283:

Կոստան Զարյանը 1922 թ. եկել էր Խորհրդային Հայաստան, դասավանդել Երևանի պետական համալսարանում, 1925-ին նորից հեռացել այնտեղից և բնակություն հաստատել Փարիզում, ապա Վենետիկում: Հայաստան վերջնականապես տեղափոխվել է 1963 թ.:

268. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ
(էջ 372)

Ավ. Իսահակյանը Երևան դառնալուց առաջ, որպես հրաժեշտի խոսքեր, մակագրել է իր լուսանկարի (1936, Մարսել) վրա, որ պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, լուսանկարների բաժին:

269. ՀԱՑԿ ՊԵՐՊԵՐՑԱՆԻՆ
(էջ 373)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ.92, թ. 3-4:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 30-31, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 286-287:

***Հայկ Պերպերյան** (1887, Պոլիս - 1978, Փարիզ) – հայագետ-արևելագետ, մշակութաբան, թարգմանիչ, բնագրագետ: 1915-1920 թթ. աշխատել է Հունաստանում, Եգիպտոսում, 1921 թ. հաստատվել է Փարիզում, աշխատակցել գիտական և գրական ամսագրերի: Նրա գրած հայագիտական չատ աշխատություններ առայսօր մնացել են անտիպ: 1936 թ. Հայկ Պերպերյանը աշխատում էր Բարեգործական Ընդհանուր Միությունում, որի նախագահը Վահան Մալեզյանն էր:*

[1] լիցենզիա, թույլտվություն (ֆրանս.):

[2] 1936 թ. Ագատ Մարտիկյանը Երևանի Հանրային գրադարանի տնօրենն էր:

[3] Խոսքը վերաբերում է Խորհրդային Հայաստանի կողմից Ավ. Իսահակյանին հատկացրած ճանապարհածախսին, որ բանաստեղծին հասնում էր ՀԲՄ-ի միջոցով:

270. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՑԱՆԻՆ
(էջ 374)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 420, ց. 89, գ. 65, թ. 2-3

ՀԲԸՄ արխիվը պահվում է Փարիզի Նուպարյան մատենադարանում, որտեղ աշխատելիս Վարդգես Համազասպյանը գտել է Իսահակյանի այս ձեռագիրը և հրապարակել «Գրական թերթ», 1989, թ. 47, այնուհետև՝ արտատպվել է ԱԻՆ 2016, էջ 284-285:

Վահան Մալեզյանը 1936 թ. ապրում էր Փարիզում և տնօրինում Հայ Բարեգործական Ընդհանուր Միությունը:

*[1] **Հարություն Պարտիզյան** (1885, Պոլիս - 1945, Վենետիկ) – ավարտել է Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը, 1905 թ. սովորել է Թուրինի բժշկական համալսարանում, բնակություն հաստատել Վենետիկում և դարձել հայտնի բժիշկ-թերապևտ, Վիդոյում ունեցել է հիվանդանոց: Վենետիկում Հ.Պարտիզյանը Ավ. Իսահակյանի մտերիմ մարդկանցից մեկն է եղել:*

271. ՀԱՑԿ ՊԵՐՊԵՐՑԱՆԻՆ
(էջ 376)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ.92, թ. 1:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 31, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 288:

[1] Աթենքի Պարթենոն տաճարը՝ նվիրված քաղաքի պահապան Աթենաս Պալլաս աստվածուհուն, կառուցվել է մ.թ.ա. 5-րդ դարում և համարվում է անտիկ մշակույթի ուշագրավ հուշարձաններից մեկը:

272. ՌԱՖԱՑԵԼ ՇԻՇՄԱՆՑԱՆԻՆ
(էջ 377)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 328:

Նկարիչ Ռաֆայել Շիշմանյանը 1919 թվից ապրել և ստեղծագործել է Փարիզում: Հայ նկարիչների «Անի» (1926-1930) միության լուծարումից հետո, 1931 թ. նա կազմակերպել է «Հայ ազատ արվեստագետների միությունը» և նախագահել այն՝ մինչև 1947 թ. Սովետական Հայաստան տեղափոխվելը: Ուշագրավ են Շիշմանյանի որմնանկարները Նուպարյան մատենադարանի դահլիճում (1920-ական թթ.) և Հայ ուսանողների տանը (1930-ական թթ.) արված: 1930-1935 թթ. ընկերական ջերմ հարաբերություններ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ:

[1] Ալիսը Ռաֆայել Շիշմանյանի կինն էր:

273. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶԱՆԻՆ

(էջ 378)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 420, ց. 89, գ.65, թ. 4-5:

Փարիզի Նուպարյան մատենադարանում պահվող ՀԲՄ արխիվում նամակը գտել և առաջին անգամ հրապարակել է Վարդգես Համազասպյանը՝ «Գրական թերթ», 1989, թ. 47, այնուհետև՝ արտատպվել է ԱԻՆ 2016, էջ 289:

[1] 1936 թ. Խորհրդային Հայաստանում զանգվածային բռնությունների ալիք էր բարձրացել, սպանվել էր Աղասի Խանջյանը, երկրում տիրում էր անվստահության, մատնությունների մի չրջան, որ տիրելու էր դեռ երկար ժամանակ և տանելու էր ազնիվ մտավորականների ու համարձակ քաղաքացիների բազում կյանքեր: Տարիներ անց այդ տեռորը բնութագրվելու է որպես «անհատի պաշտամունք» և արդարացվելու են հազարավոր գնդակահարված, աքսորում ու բանտերում գտնվող բռնադատված մարդիկ:

274. ՀԱՑԿ ՊԵՐՊԵՐՑԱՆԻՆ

(էջ 379)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ. 92, թ. 5-6:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 32, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 290-291:

275. ՀԱՑԿ ՊԵՐՊԵՐՑԱՆԻՆ

(էջ 381)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ. 92, թ. 7:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 33, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 292:

276. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 381)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Լասի ֆոնդ, 47:

Տպագրվում է առաջին անգամ:

Լուիզա Ասլանյան-Գրիգորյան *(Լաս ծածկ., 1906-1944) – ֆրանսահայ գրող, Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, որպես Դիմադրության անդամ, պայքարել է ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի, մահացել համակենտրոնացման ճամբարում: Լուիզա Գրիգորյանը ծնվել է Թավրիզում, 1923 թ. ամուսնացել իրավաբան, ՀՅԴ անդամ Արփիար Ասլանյանի հետ, որը սովետական կարգերի հաստատումից հետո Հայաստանից փախել էր Պարսկաստան: Ամուսնությունից հետո նրանք Լուիզայի քրոջ՝ Արշալույսի և մոր՝ տիկին Մանյայի հետ տեղափոխվում են Փարիզ: Այստեղ Լ. Ասլանյանը թղթակցում է փարիզահայ մամուլին՝ Լաս ծածկանունով, ծանոթանում խմբագիր Միսաք Մանուչյանի հետ, որը հետագայում դառնում է Դիմադրություն շարժման առաջնորդը: Լասը կոմունիստական շարժման հետևորդ էր, 1937 թ. դարձել է ՀՕԿ նախագահ:*

277. ԱԶԱՏ ՄԱՐՏԻԿՑԱՆԻՆ
(էջ 382)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Նկատի ունի պետական գործիչ Աբրահամ Գուլոյանին (1893-1938), որը 1935 թ. դարձավ Հայաստանի ժողկոմխորհի նախագահը և ժամանակի թելադրանքով պայքարեց Ազասի Խանջյանի դեմ: Սակայն 1938 թ. ինքը ևս զոհ գնաց ստալինյան բռնաճնշումներին:

[2] Նկատի ունի Արսեն Եսայանին, որը 1936 թ. ՀՕԿ նախագահն էր: 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշումով Հայ Օգնության Կոմիտեն լուծարվեց, որակվելով որպես «օտարերկրյա գործակալների և լրտեսների կազմակերպություն», իսկ նրա ղեկավարները՝ Ա. Երզնկյան, Ա. Եսայան, Դ. Տեր-Սիմոնյան, որպես «ժողովրդի թշնամիներ» բռնադատվեցին:

ՀՕԿ-ի գործունեությունն ունեցել էր 3 փուլ.

1. 1921-1923 թթ. կարիքավոր բնակչությանը պարեն, դեղորայք, հագուստով օգնելու ծրագրով

2. 1923-1925 թթ. Սփյուռքի և հայրենիքի միջև կապեր ամրապնդելու ծրագրով

3. 1931-1937 թթ. հայրենադարձության կազմակերպման և նրանց բնակարաններով ապահովելու նպատակով ստեղծվել է «Ներգաղթի և բնակարանային ֆոնդի» կենտրոնական մարմին, որի նախագահը Ավ. Իսահակյանն էր:

278. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 383)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 232-I:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 120, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 328-329:

[1] Հեղինակը վրիպել է՝ նկատի ունենալով գրադարանի տնօրեն Ազատ Մարտիկյանին:

279. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՑԱՆԻՆ
(էջ 384)

Ինքնագիրը (Աթենքի պատկերով բացիկ) պահվում է ԳԱԹ, Լասի ֆոնդ, 48:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 293:

280. ՀԱՑԿ ՊԵՐՊԵՐՑԱՆԻՆ
(էջ 384)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 193, ց. 2, գ.92, թ. 8-9:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1987, թ. 3, էջ 33-34, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 294-295:

[1] Վ. Դ. «Մեր տեսակցությունը Ավ. Իսահակյանի հետ», «Նաիրի», Աթենք, 1936, թ. 9, էջ 153-154:

[2] «Նոր օր» (Ֆրեզնո, 1921-1964) – Ռամկավար ազատական կուսակցության քաղաքական, գրական թերթ, խմբագիր Վահե Հայկ:

1937

281. ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎԻՆ
(էջ 387)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գևորգ Աբովի ֆոնդ, 45:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 296:

Գևորգ Աբով *(Աբովյան, 1897-1965) – բանաստեղծ, թարգմանիչ, 1934 թ. ԽՍՀՄ Գրողների միության անդամ, 1937 թ. Խորհրդային Հայաստանի Գրողների ասոցիացիայի քարտուղար:*

[1] Նամակին կից ուղարկված է Ավ. Իսահակյանի ելույթի խոսքը, որի վերջում նշված է տարեթիվը և տեղանունը:

[2] 1937 թ. ապրիլի 17-21 Երևանում գումարվել է Հայաստանի խորհրդային գրողների ակտիվի ժողով, որտեղ ելույթ է ունեցել Հայ

գրողների ասոցիացիայի քարտուղար Գ. Աբովը. վերջինս կարդացել է նաև Վարպետի ուղարկած խոսքը՝ «Իմ ազատ ու ստեղծագործ ժողովրդի հետ» վերնագրով:

[3] Ավ. Իսահակյանի «Իմ ազատ ու ստեղծագործ ժողովրդի հետ» ելույթը տպագրվել է 1937 թ. «Գրական թերթ» և «Խորհրդային Հայաստան» թերթերի ապրիլի 23-ի համարում:

[4] Նամակը և ելույթը գրված են դասական ուղղագրությամբ:

282. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(էջ 387)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 329-330:

[1] Սոֆի Իսահակյանի եղբոր՝ Վանյա Քոչարյանի ընտանիքը և մայրը՝ Վարյա Քոչարյանը ապրում էին Մոսկվայում:

283. Վ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻՆ

(էջ 388)

Մեքենագիր օրինակը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 887-II:

Տպագրվում է առաջին անգամ:

Վ. Մուսայելյան *– գրական գործիչ, Մոսկվայի «Художественная литература» հրատարակչության աշխատակից, «Ստալինյան Սահմանադրությունը ՍՍՀՄ ժողովուրդների պոեզիայում» (Մոսկվա, 1937) գրքի կազմողը, խմբագիրն ու առաջաբանի հեղինակը:*

Մոսկվայում ցանկացել են «ՍՍՀՄ Գրողները ռուսերեն լեզվով» խորագրով հրատարակել Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների մի ժողովածու՝ Տեր-Մարտիրոսյանի թարգմանությամբ, ինչի չուրջ խոսվում է նամակում:

[1] ***Արտաշես Տեր-Մարտիրոսյան*** *(1892, Ալեքսանդրոպոլ - 1937, Մոսկվա) – բանաստեղծ, գրաքննադատ, կուսակցական գործիչ, 1924 թվականից բնակվել է Մոսկվայում, 1937 թ. դեկտեմբերի 12-ին նա*

մահացել է և թաղվել Մոսկվայում: Հավանաբար նրա մահվան պատճառով էլ չի իրագործվել նամակում քննարկվող գործը:

[2] Խոսքը 1930 թ. Երևանում, Պետհրատում տպագրված Ավ. Իսահակյանի «Բանաստեղծություններ» գրքի մասին է:

284. ԱՀԱՐՈՆ ՋՈԲԱՆՑԱՆԻՆ
(էջ 390)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 266-Ի:

Առաջին անգամ տպագրվել է «Գարուն», Երևան, 1968, թ. 7, էջ 60-61, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, 331-332:

Ահարոն Ջոբանյան *– հայոց լեզվի ուսուցիչ Վրաստանի ՍՍՀ Բոգդանովկա գյուղի դպրոցում:*

285. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ
(էջ 391)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 263-Ի:

Առաջին անգամ հրապարակել է Յ. Հովհաննիսյանը «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 119-120, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 330-331 և ԱԻՆ 2016, էջ 297-298:

Հովհաննես Շիրազ *(Օննիկ Կարապետյան. 1915, Ալեքսանդրոպոլ- 1984, Երևան) – բանաստեղծ, սովորել է Երևանում, Պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում, ապա Մոսկվայի Գորկու անվան Գրականության ինստիտուտում: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն տպագրվել է 1935 թ., նրա գրական Շիրազ ծածկանունը տվել է նովելագիր Ատրպետը: Երևանում ամուսնացել է բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի հետ, ունեցել մեկ զավակ՝ քանդակագործ Արա Շիրազը, երկրորդ կնոջից ունեցել է յոթ երեխա:*

[1] «Սասմա ՄՀեր (Հատված համանուն վիպերգից)» տպագրվում է «Խորհրդային Հայաստան», 1937, 6 մայիսի, «Գրական թերթ», 1937, 30 մայիսի, «Խորհրդային գրականություն», 1938, թիվ 10:

[2] Նկատի ունի Հ. Շիրազի «Բևեռի առումը» պոեմը, որ տպագրվել էր «Գրական թերթ», Երևան, 1937, օգոստոսի 28:

Ավ. Իսահակյանը բազմիցս է արտահայտել իր հիացական խոսքը Հովհաննես Շիրազի գրական տաղանդի ու տարբեր ստեղծագործությունների մասին: Նա ոգևորել է երիտասարդ բանաստեղծին, հանդիսացել նրա Վարպետ-խորհրդատուն:

1938

286. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՑԱՆԻՆ
(էջ 393)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Արամ Ինճիկյանի ֆոնդ, 46:
Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 332-334:

Արամ Ինճիկյան (1910, Ախալցխա - 1975, Երևան) – գրականագետ, տեքստաբան, 1932-1937 թթ. Երևանի պետական համալսարանում ստացել է հայագիտական կրթություն, 1937-1938 թթ. աշխատել Գրականության ինստիտուտում, 1938-1940 թթ. ծառայել է խորհրդային բանակում, 1941-1942 թթ.՝ աշխատել Գիտությունների Ակադեմիայում, 1942-1945 թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, 1946-1975 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ զբաղվելով հայ դասական գրողների ուսումնասիրությամբ: Մեծ ներդրում ունի Ավ.Իսահակյանի ստեղծագործության և կյանքի ուսումնասիրության մեջ. եղել է Վարպետի սիրելի գիտնականներից մեկը, Իսահակյան ընտանիքի բարեկամը:

[1] **Մելիքյան Հովիկ** (1902-1953) – խորհրդահայ արձակագիր, գրականագետ, 1934-1936 թթ. աշխատել է ՀԿԿ կենտկոմում, Երևանի քաղկոմում, քննադատել Զարենցին, Բակունցին, 1937-1938 թթ. եղել է «Գրական թերթ»-ի խմբագիր, 1938-1941 թթ.՝ ԳԱ Գրականության և լեզվի ինստիտուտի տնօրենը, 1941-1944 թթ. մասնակցել է Հայրենական պատերազմին, 1944-1946 թթ.՝ «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագիրը, մինչև իր կյանքի վերջը ռուս գրականություն է դասավանդել Երևանի պետական համալսարանում:

[2] ***Միանսարյան Միքայել*** *(1829-1880) – հայ նշանավոր մատենագիր, հայագետ, 1868 թ. կազմել և հրատարակել է «Քնար հայկական» ժողովածուն, որն ուներ աղբյուրագիտական և բանահյուսական ուղղվածություն: Ժողովածուի առաջաբանում դրվել են Ստեփան Պալասանյանցի «Երգեր» և Գարեգին Զարբհանալյանի «Գողթան երգեր» խորագրով արժեքավոր հետազոտությունները: Ներառված են հայկական բազմաբովանդակ երգեր (9 տեսակի բաժանած) և ժողովրդական 526 առած:*

287. ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՑԱՆԻՆ
(էջ 395)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հովիկ Մելիքյանի ֆոնդ, 192:

Առաջին անգամ հրապարակել է Ավիկ Իսահակյանը «Բագին», Բեյրութ, 2012, էջ 62, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 299-300:

Բորյան Գուրգեն *(1915, Շուշի - 1971, Երևան) – բանաստեղծ, դրամատուրգ, 1938-1941 թթ.՝ «Գրական թերթ»-ի խմբագիր, ապա՝ գինվորական թերթի թղթակից, 1938-1941 թթ. և 1950-1954 թթ.՝ Հայաստանի Գրողների միության քարտուղար, 1958-1968 թթ. «Սովետական Հայաստան» և «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագիր, 1968-1971 թթ.՝ ՀՍՍՀ Մշակույթի նախարարի տեղակալ:*

[1] ***Լուիջի Պիրանդելլո*** *(1867-1936) – իտալացի դրամատուրգ, 1934 թ. Նոբելյան մրցանակակիր: Նամակում խոսվում է նրա 1924 թ. գրած «Վեց դործող անձ հեղինակի որոնումներում» դրամայի մասին:*

[2] *Ավ. Իսահակյանի «Հայրենի հողը» լեգենդը տպագրվել է «Խորհրդային գրող», 1940, թ. 13, էջ 5-6:*

[3] *Ստենդալի «Սև և կարմիր» վեպի 1-ին հատորը հայերեն թարգմանությամբ հրատարակվել է 1941 թ., 2-րդ հատորը՝ 1949 թ. (թարգմանիչներ՝ Բ. Հարությունյան, Ա. Զրբաչյան, խմբագիր՝ Ավ. Իսահակյան):*

[4] ***Գրիգորյան Հրաչյա*** *(1907, Կարս - 1969, Երևան) – գրականագետ, 1938-1939 թթ.՝ Հայաստանի Գրողների միության առաջին*

քարտուղար, 1939-1944 թթ. «Կոմունիստ» թերթի խմբագիր, 1944-1946 թթ.՝ «Պրավդա» թերթի թղթակից, 1946-1948 թթ.՝ Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար, 1947-1957 թթ.՝ Նախարարների խորհրդին կից Եկեղեցու գործերի կոմիտեի նախագահ, 1964-1969 թթ.՝ գիտաշխատող ԳԱ Գրականության ինստիտուտում:

288. ՆԱԻՐԻ ԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 396)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 1570, ց. 1, գ. 153, թ.1-2:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 302-303:

***Զարյան Նաիրի** (1900, Վան-1969, Երևան) – հայ բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, 1920-1930-ական թթ.՝ մի շարք պարբերականների պատասխանատու քարտուղար և խմբագիր, 1944-1946 թթ. Հայաստանի Գրողների Միության վարչության քարտուղար:*

*[1] **Քոչար Հրաչյա** (Գաբրիելյան, 1910 - 1965) – արձակագիր, հրապարակախոս:*

*[2] **Միկոյան Անաստաս** (1895-1978) – ԽՍՀՄ պետական-քաղաքական գործիչ, Մոսկվայի Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ:*

[3] Տես նախորդ նամակի 4-րդ ծանոթագրությունը:

[4] Խոսքը վերաբերում է Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները Մոսկվայում տպագրելու ծրագրին (տես Վ. Մուսայելյանին ուղղված նամակը, թիվ 283):

1939

289. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 398)

Ինքնագիրը պահվում է ՌԶՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 304:

Ռուբեն Զարյան (1909-1994) – հայ գրականագետ, թատերագետ, 1937-1947 թթ. Հայպետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչ, 1941-1943 թթ. «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, 1948-1958 թթ. Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում բաժնի վարիչ, 1958 թվականից՝ ԳԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն:

[1] Անատոլ Ֆրանսի (1844-1924) «Սպիտակ քարի վրա», «Աստվածները ծարավի են» և «Հրեշտակների ապստամբությունը» վեպերը մի ժողովածուով հրապարակվել են 1959 թ., Հայպետհրատում: «Սպիտակ քարի վրա» վեպի թարգմանիչը Սամվել Տիրատուրյանն է, «Աստվածները ծարավի են»՝ Արբուն Տայանը, «Հրեշտակների ապստամբությունը»՝ Գ. Արեյանը:

Սամվել Տիրատուրյանը թարգմանել է նաև Ջովանյոլիի «Սպարտակը», Ժյուլ Վեռնի հինգ վեպերը և այլ մեծածավալ ստեղծագործություններ:

290. ՌՈՒԲԵՆ ԶԱՐԳԱՆԻՆ
(էջ 398)

Ինքնագիրը պահվում է ՌԶԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 305:

[1] Ֆրանսացի գրող Ալեն Ռենե Լեսաժի (1668-1747) «Ժիլ Բլաս» վեպը տպագրվել է 1735 թ. ժամանակի հայտնի նկարիչ Ժան Ժիգուի նկազարդումներով:

[2] Նկատի ունի Պոլսի հրատարակությունը (Լըսաժ Ալեն Ռենե, «Ժիլ Պլասը. վիպասանություն», Ֆրանսերեն բնագրից թարգմանությունը և ծանոթությունը Ս. Կ. Զալըխյանի, Կ. Պոլիս, Արամյան տպարան, 1867, Ժ, 768 էջ):

291. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՑԱՆՑԻՆ
(էջ 400)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 43:

Առաջին անգամ հրապարակել է Յ. Հովհաննիսյանը «Սովետական գրող», 1975, Երևան, թ. 10, էջ 121, այնուհետև՝ Ահեժ 1979, էջ 334-335:

Հակոբ Խաչատրյանց *(1884-1960) – գրականագետ, թարգմանիչ: 1920-ական թթ. աշխատել է Երևանում, որպես Արմենպրեսի տնօրեն, 1929 թ. տեղափոխվել է բնակության Լենինգրադ, ապա Մոսկվա, ԽՍՀՄ Գրողների միության անդամ էր 1939 թվականից, ամուսնացած է եղել Մարիետա Շահինյանի հետ, ունեցել են դուստր: Հ. Խաչատրյանը դարձել է հայ արձակի թարգմանիչը ռուսերեն լեզվով: Թարգմանել է Ավ. Իսահակյանի բազմաթիվ երկեր, այդ թվում նաև «Հայ ժողովրդական հեքիաթները» (1939 թ.):*

[1] Մարիետա Շահինյանը (1888-1982) 1939 թ. հունվարի 31-ին արժանացել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի:

[2] Ավ. Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգը Կ. Լիպսկերովի ռուսերեն թարգմանությամբ, տպագրվել է 1939 թ. Մոսկվայի «Նովիյ միր» ամսագրի 9-րդ համարում (էջ 47-57), ապա առանձին գրքով՝ Երևան, Հայպետհրատ (44 էջ) և Մոսկվա, «Советский писатель» հրատ. (51 էջ):

[3] 1939 թ. մեծ շուքով Երևանում նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյա հոբելյանը:

[4] Ինչպես գրել ենք 283-րդ նամակի ծանոթագրությունում, այս ծրագիրը չի իրագործվել թարգմանիչ Տեր-Մարտիրոսյանի մահվան պատճառով (1938 թ., դեկտեմբեր):

[5] ***Բարխուդարյան Ալեքսանդր*** *(Սաշա, 1889, Թիֆլիս - 1974, Մոսկվա) – թարգմանիչ, լրագրող:*

292. Մ<ԿՐՏԻՉ> ԱՍԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 401)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 214-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 306:

Մկրտիչ Ասլանյան *(1906-1984) – վրացահայ գրող, լրագրող, 1934 թվից՝ ԽՍՀՄ Գրողների միության անդամ, 1928-1935 թթ. աշ-*

խաոել է Թիֆլիսի «Պրոլետար» թերթում, 1935-1941 թթ. Վրաստանի ռադիոկոմիտեում՝ որպես խմբագիր:

293. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ
(էջ 402)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 264-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 335, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 308:

294. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՐՆԵՑՋՈՒԿԻՆ
(էջ 402)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 881- II:

Ալեքսանդր Կորնեյչուկ *(1905-1972) – ուկրաինացի խորհրդային դրամատուրգ, հասարակական գործիչ, 1938-1941 թթ. և 1946-1953 թթ. Ուկրաինայի Գրողների միության նախագահ, 1959 թ. ՈւՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահ:*

[1] Տարաս Շևչենկոյի ծննդյան 125-ամյա հոբելյանի առթիվ Ուկրաինայի Գիտությունների ակադեմիան նախաձեռնել է գրողի երկերի լիակատար ժողովածուի հրատարակությունը (10 հատորով), կիևում տպագրվել է «Տարաս Շևչենկո, 1814-1939» հոբելյանական գիրքը: Նամակում խոսվում է հենց այս գրքի մասին, որ ուղարկել են Ավ. Իսահակյանին (պահվում է ԱԻՏԹ, մմ 5226):

[2] Խոսքը 1939 թ. մարտին կայացած Տ. Շևչենկոյի 125-ամյակի հոբելյանի մասին է, որին մասնակցել է նաև Ավ. Իսահակյանը և խոսք ասել նրա գերեզմանի մոտ («Շևչենկոյի չիրիմի վրա», «Գրական թերթ», 1939, 25 մայիսի):

[3] ***Շևչենկո Տարաս*** *(1814-1861) – ուկրաինացի բանաստեղծ, նկարիչ, ժողովրդագետ: 1939 թ. մարտին Մոսկվայում, կիևում և ԽՍՀՄ այլ քաղաքներում նշվել է Տ. Շևչենկոյի ծննդյան 125-ամյակը:*

295. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ
(էջ 403)

Ինքնագիրը պահվում է Երևան, Հովհ. Թումանյանի Թանգարան, ՁԹգգ, 2191-1:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 335-337:

***Օլգա Թումանյան** (Օլյա, Մարիամ Մաճկալյան. 1870-1970) – Հովհաննես Թումանյանի կինը, ամուսնացել է 17 տարեկանում՝ 1887 թ., ունեցել 10 երեխա: 1939 թ. նրա և Թումանյանի երեխաների ջանքերով Հ. Թումանյանի արխիվը Թիֆլիսից տեղափոխվել է Երևան:*

[1] Նկատի ունի Հ. Թումանյանի դուստր Նվարդ Թումանյանին (1892-1957), որը 1934-1942 թթ. աշխատում էր Երևանի Արմֆանի գրականության և լեզվի ինստիտուտում, որպես գիտքարտուղար և ավագ գիտաշխատող:

[2] Հովիկ Մելիքյանը 1938-1941 թթ. Արմֆանի գրականության և լեզվի ինստիտուտի տնօրենն էր:

[3] 1939 թ. Երևանում նշվել է Հովհ. Թումանյանի ծննդյան 70-ամյակը: Այդ կապակցությամբ Ավ. Իսահակյանը գրել է «Անմահ Թումանյանի մասին» («Բանվոր», 1939, 15 ապրիլ), «Հովհաննես Թումանյան» («Գրական թերթ», Երևան, 1939, 15 ապրիլ) հոդվածները:

[4] Հովհաննես Թումանյանի գրական արխիվը այժմ գտնվում է Երևանում, Գրականության և արվեստի թանգարանում: 1939 թ. այս իրադարձություններով համալրվում է Հ. Թումանյանի ֆոնդը, որի սկզբնական արխիվային վաստաթղթերը նվիրաբերվել էին գրողի ընտանիքի կողմից դեռևս 1923 թ.: Բանաստեղծի անձնական իրերը Թիֆլիսից Երևան են բերվել ավելի ուշ՝ 1953 թ., երբ գրողի մահվան 30-ամյա տարելիցի կապակցությամբ Երևանում բացվեց Հ. Թումանյանի տուն-թանգարանը, որի առաջին տնօրենը դարձավ Աշխեն Թումանյանը (1953-1966):

[5] Հավանաբար ակնարկում է Մոսկվայում աշխատող պետական և քաղաքական գործիչ Անաստաս Միկոյանին, որը ծագումով Լոռեցի էր, Սանահինից:

296. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ
(էջ 404)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ.Ց, 1448 իգ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 307:
[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

297. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՑԱՆԻՆ
(էջ 405)

Ինքնագիրը պահվում է ՌԶՀԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 307:
[1] Խոսքը վերաբերում է 1939 թ. Մոսկվայում տպագրված «Սասմա Մհեր»-ի ռուսերեն թարգմանությանը (, Мгер из Сасуна», перевод поэмы К. Липскерова, М., «Советский писатель», 1939, 51 стр.), *որ հրատարակվել է նաև Երևանում (Հայպետհրատ, 1939, 44 էջ):*
[2] Նկատի ունի Ավ. Իսահակյան, «Ընտիր երկեր. 2 հատորով» (Առաջաբանը Խորեն Սարգսյանի) 1-ին հատորը, որ տպագրվել է Երևան, Հայպետհրատ, 1939, 318 էջ:

298. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ
(էջ 405)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ: Պարզ է, որ նամակն ուղարկվել է ռուսերեն թարգմանությամբ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 337-338:
1939 թ. մարտի 27-ին Մոսկվայում տեղի է ունեցել «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության ԽՍՀՄ Գրողների հորելյանական հանձնաժողովի նիստը՝ Ա. Ֆադեևի նախագահությամբ: Նիստը որոշել է՝ տոնակատարությունը նշանակել 1939 թ. սեպտեմբերին:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] **Ֆադեև Ալեքսանդր** (1901-1956) – ռուս խորհրդային գրող, հասարակական գործիչ, 1939-1954 թթ. Խորհրդային Միության Գրողների միության քարտուղար, ապա՝ վարչության նախագահ:

[3] Գ. Սունդուկյանի անվան թատրոնում 1939 թ. սեպտեմբերի 16-ին կայացել է ԽՍՀՄ Գրողների միության վարչության 7-րդ պլենումը, որտեղ ելույթ է ունեցել Ավ. Իսահակյանը՝ «Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին» խոսքով («Խորհրդային գրականություն», թ. 8-9, էջ 28-38):

[4] Ավ. Իսահակյանը «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության առթիվ գրել է նաև «Հայ ժողովրդական դյուցազնավեպը. «Սասունցի Դավիթ» էպոսի մասին» («Իզվեստիա», 1939, 14 սեպտ. և «Խորհրդային Հայաստան», 1939, 15 սեպտ.) և «Սասմա Մհերի մասին» («Լիտերատուրնայա գազետա», 1939, 15 սեպտ. և «Գրական թերթ», 1939, 15 սեպտեմբեր) հոդվածները:

299. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 406)

Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, ՀՂՖ, 32:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 338, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 309:

Հովհաննես Ղանալանյան (1911-1994) – սովետահայ գրականագետ: Հ. Ղանալանյանը բանասիրական ֆակուլտետում կրթությունը ստանալուց հետո 1937-1940 թթ. ուսումը շարունակել է ասպիրանտուրայում: 1942 թ. թեկնածուական դիսերտացիա է պաշտպանել «Իսահակյանի լիրիկան» թեմայով, 1947 թ. դոկտորական դիսերտացիա՝ «Ավ. Իսահակյանի կյանքն ու գործունեությունը» թեմայով, 1955 թ. գրել է «Ավետիք Իսահակյան» մենագրությունը, 1975 թ.՝ «Ավ. Իսահակյան. հուշեր» գիրքը:

[1] 1939 թ. հոկտեմբերի 20-30 Մոսկվայում անց է կացվել «Հայկական արվեստի տասնօրյակը (Դեկադա)». Հայաստանից գնացած պատգամավորների թվում է եղել նաև Ավ. Իսահակյանը: Այդ օրե-

բին Ավ. Իսահակյանը գրել է հոդվածներ, որոնք տպագրվել են Երևանում և Մոսկվայում. 1. «Դեկադայի գարդերից մեկը, «Երջանկություն» բալետի մասին», («Խորհրդային Հայաստան», 1939, 2 հոկտ. և «Կոմունիստ», 1939, 3 հոկտ.), 2. «Մտքեր հայ գրականության մասին» («Լիտ. գազետա», 1939, 26 հոկտ. և «Գրական թերթ», 1939, 10 նոյեմբեր), 3. «Մեր էպոսի մասին» («Լիտ. գազետա», 1939, 15 սեպտ.):

[2] Նկատի ունի Հովհաննես Ղանալանյանի «Իսահակյանի լիրիկան» հոդվածը, որն ընկած էր նրա դիսերտացիայի հիմքում («Խորհրդային գրականություն», Երևան, 1939, թ. 7, էջ 105-146):

[3] Նկատի ունի Հովհաննեսի եղբորը՝ գրականագետ Արամ Ղանալանյանին:

*[4] **Հարությունյան Հակոբ** (Արտենյան, 1888-1943) – հայ փիլիսոփա, երաժշտագետ, գրականագետ, լեզվաբան: 1927-1940 թթ. նա դասավանդել է Երևանի պետական համալսարանում և պետական մանկավարժական ինստիտուտում: 1941 թ. անհիմն բռնադատվել է և 1943 թ. մահացել անհայտ հանգամանքներում:*

300. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 407)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Հռիփսիմե Պողոսյան** (Ասիլյան, 1899-1972) – հայ բանաստեղծուհի, թարգմանչուհի, Երևանի համալսարանի ռեկտոր Հովհաննես Պողոսյանի կինը, 1934 թ. Թիֆլիսից տեղափոխվել է Երևան, 1937-1938 թթ. եղել է Հայաստանի Գրողների միության մանկական բաժանմունքի նախագահը:*

[2] Նկատի ունի Նաիրի Զարյանին:

*[3] **Ակակի Ծերեթելի** (1840-1915) – վրացի բանաստեղծ, արձակագիր, վրաց նոր գրականության և գրական նոր լեզվի հիմնադիր:*

[4] 1940 թ. Երևանում տպագրվել է Ակակի Ծերեթելու «Հատընտիր» գիրքը, որտեղ ներառված էին մի քանի բանաստեղծություն-

ներ՝ Ավ. Իսահակյանի թարգմանությամբ (էջ 17-18 և 57-62): Այդ բանաստեղծություններից «Հիվանդ գուսանը»ը հրապարակվել է «Գրական թերթ»ում (1940, 20 հունիս), իսկ «Սրբի պատկերի առաջ», «Քուեթայիս» և «Ապելյացիայի դիտակը» բանաստեղծությունները՝ «Խորհրդային Հայաստան» թերթում (1940, 22 հունիս):

[5] **Շալվա Դադիանի** (1874-1949) – վրացի սովետական գրող, չքանչանակիր դրամատուրգ, թատերական գործիչ, հրապարակախոս, դրել է շուրջ 50 պիես:

Ծերեթելուն նվիրված հանդիսության ժամանակ (1940 թ., հունիսի 20) հիմնական զեկուցումով ելույթ է ունեցել Շ. Դադիանին «Վրաց ժողովրդի սիրելի բանաստեղծը» վերնագրով:

1940

301. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

(էջ 408)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍՍՖ, 397:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1978, հուլիսի 28, թ. 30, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 338-340:

[1] Խոսքը Վ. Տերյանի Գանձայում գտնվող հայրական տան լուսանկարների մասին է:

[2] Սաքո Սուքիասյանի «Վահան Տերյանի անմոռանալի հիշատակին» հոդվածը տպագրվել է «Գրական թերթ», 1940, 10 հունվարի համարում:

[3] 1940 թ. հունվարի 9-ին Երևանի Գրողների տանը Ավ. Իսահակյանի անմիջական նախաձեռնությամբ կազմակերպվել է Վ. Տերյանի մահվան (1920 թ. հունվարի 7) 20-ամյա տարելիցին նվիրված երեկո:

[4] Ավ. Իսահակյանը խոսում է «Գրական թերթ»ի 1940 թ., հունվարի 10-ի համարի մասին, որտեղ տպագրվել են Հովհաննես (Օննիկ) Ղանալանյանի «Մեծ քնարերգուն» ելույթը, Գ. Լևոնյանի «Մթնշաղից մինչև կարմիր առավոտը» և Ստ. Զորյանի «Վահան Տերյան» հուշերը:

[5] *Հավանաբար խոսքը Ներսես Տեր Գրիգորյանի «Տերյանի մանկությունը» հուշային պատումի մասին է, որի ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԿԳՖ:*

[6] *Վահան Տերյան «Բանաստեղծությունների լիակատար ժողովածու», Երևան, 1940, 456 էջ:*

[7] *Խոսքը վերաբերում է Ավետիք Իսահակյանի «Ընտիր երկեր երկու հատորով, հ. 1, Բանաստեղծություններ, Թարգմանություններ» (Եր., Հայպետհրատ, 1939, 318 էջ) և հ. 2, «Լեգենդներ, Առակներ, Արձակ էջեր» (Երևան, Հայպետհրատ, 1940, 324 էջ) գրքերին:*

[8] ***Նիզամի Գյանջևի*** *(1140, Գյանջա–1209) – Արևելքի մեծագույն մտածող, բանաստեղծ: Նրա 800-ամյա հոբելյանը նշվել է Բաքվում, Մոսկվայում և ԽՍՀՄ այլ քաղաքներում: Գրականության մեջ հայտնի է նրա «Խոսրով և Շիրին» պոեմը՝ Սասանյան Խոսրով շահի և քրիստոնյա արքայադուստր Շիրինի սիրավեպի մասին:*

[9] *Ղազարոս Աղայանի ծննդյան 100-ամյակը նշվել է 1940 թ. ապրիլին:*

[10] *ՀԽՍՀ Գրողների միության որոշումով Ակակի Մերեթելիի (1840–1915) ծննդյան 100-ամյակը նշվել է նաև Երևանում, 1940 թ. ապրիլին: Հանձնաժողովի նախագահ և հիմնական զեկուցող նշանակվել էր Ավ. Իսահակյանը:*

[11] *Սովետական Հայաստանի 1920 թ. նոյեմբերի 29-ի խորհրդայնացման օրը տարիներ շարունակ երկրում տոնվել է որպես կարևոր իրադարձություն:*

302. ՊԱՀԱՐԵԻՆ

(էջ 409)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:

Առաջին անգամ տպագրվել է «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1975, թ. 10, էջ 21–22, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 310–311:

Պահարե *(Պետրոսյան Հայկ. 1885–1968) – Վրաստանի ԽՍՀ վաստակավոր դերասան, բանաստեղծ, դրամատուրգ, ԽՍՀՄ Գրողների միութ-*

յան անդամ: 1919 թվականից աշխատել է Թիֆլիսի հայկական դրամատիկական խմբում՝ որպես դերասան: Նա զբաղվել է նաև գրական գործունեությամբ, հրատարակել բանաստեղծությունների ժողովածուներ:

[1] Ավ. Իսահակյանը 1939 թ. դեկտեմբերին Մոսկվայից Երևան վերադառնալիս մի քանի օրով եղել է Բաքվում, ապա Թբիլիսիում (տես 300 նամակը): Այստեղ նա չփվել էր վրացահայ գործիչների հետ, նամակագրական կապ ստեղծել մշակութային գործիչներ Պահարեի, Մկրտիչ Ասլանյանի, Մարտին Քարամյանի հետ:

[2] Խոսքը Ավ. Իսահակյանի «Ընտիր երկեր»ի 2-րդ հատորի մասին է, որ տպագրվել է 1940 թ. սկզբին Երևանում:

[3] Նկատի ունի գրող Մկրտիչ Ասլանյանին:

[4] «Заря Востока» – օրաթերթ, Վրաստանի կոմունիստական կուսակցության օրգան, տպագրվել է Թբիլիսիում, 1922 թվականից:

[5] «Խորհրդային Վրաստան» – Վրաստանում լույս տեսնող հայալեզու թերթ, որ հիմնադրվել է 1920 թ. «Կարմիր աստղ» անունով, 1923 թ. վերանվանվել է «Մարտակոչ», 1927 թ.՝ «Պրոլետար», 1939 թ.՝ «Խորհրդային Վրաստան», 1940 թ.՝ «Սովետական Վրաստան», 1990 թ.՝ «Վրաստան»:

303. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 411)

Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, ՀՂՖ, 33:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 312:

Հովհաննես Ղանալանյանը 1940 թ. սովորում էր համալսարանի ասպիրանտուրայում՝ միաժամանակ աշխատելով «Խորհրդային գրականություն» ամսագրում, որպես բաժնի վարիչ:

[1] Ավ. Իսահակյանի «Խաչատուր Աբովյանը և «Վերք Հայաստանի» («Վերք Հայաստանի»ի 100-ամյակին նվիրված) հոդվածը տպագրվել է «Գրական թերթ», 1940, 1 մարտի:

[2] «Հայրենիքիս» բանաստեղծությունը առաջին անգամ տպագրվել էր «Գրական թերթ»-ում (1940, 10 փետրվար), որին հետևից «Խորհրդային գրականություն», 1940, թ. 3, էջ 41:

[3] *Նկատի ունի «Խորհրդային գրականություն» ամսագրի խմբագիր Վահան Գրիգորյանին:*

304. ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆՑԻՆ
(էջ 412)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 44:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 340-341:

Հակոբ Խաչատրյանցը՝ կնոջ Մարիետա Շահինյանի հետ ապրել և աշխատել է Մոսկվայում: 1940 թ. նա աշխատում էր Մոսկվայի Պետական գրական հրատարակչություններում, որտեղ ծրագրված էր տպագրել Հայ գրականության Անթոլոգիան՝ իր և Խլեբարովայի թարգմանությամբ:

[1] *Նկատի ունի Մոսկվայում 1939 թ. աշնանը անցկացված հայ մշակույթին նվիրված օրերը:*

[2] ***Խլեբարյան Սոֆյա*** *(Սուզան, 1908-1978) – Մոսկվայում հայտնի գրական գործիչ, խմբագիր, թարգմանչուհի, բանասեր: Ռուսերեն է թարգմանել շատ հայ դասականների, այդ թվում նաև Իսահակյանի գործերը: Մոսկվայում հրատարակվող անթոլոգիայում* (, Антология армянской поэзии с древнейших времен до нашйх дней», Москва, 1940, стр. 486-513) *զետեղված Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների թարգմանության և ընտրության հարցով զբաղվել են Ս. Խլեբարովան և Հ. Խաչատրյանը:*

[3] *Նկատի ունի Հայպետհրատում 1939 թ. տպագրված իր «Ընտիր երկեր»ի 1-ին հատորի (Բանաստեղծություններ: Թարգմանություններ) տպագրական մամուլները:*

[4] ***Եվգենով Սեմյոն*** *(1897-1973) – 1924 թ. Տամբովից տեղափոխվել է Մոսկվա, երկար տարիներ աշխատել Ռուսական հեռագրային ընկերությունում (ՌՕՍՏԱ, 1925-1935 թթ), «Պրավդա»ի խմբագրությունում, 1940 թ. Պետական գրական հրատարակչություններում և ՍՍՀՄ Գրողների միության վարչություններում: Նա եղել էր 1939 թ. Մոսկվայում հայկական պատվիրակությանը դիմավորող և ուղեկցող մտավորականներից մեկը:*

[5] Նկատի ունի Լուսիկ Սարյանին, որն ամուսնում՝ Մարտիրոս Սարյանի և որդու՝ Սարիկ Սարյանի հետ այդ ժամանակ Մոսկվայում էր գտնվում:

[6] Նկատի ունի Հովհ. Թումանյանի դուստր Արփիկ Թումանյանին (1899-1981), որը երկար տարիներ աշխատել է Մոսկվայի Վ. Լենինի անվան գրադարանում:

[7] Խոսքը վերաբերում է Մոսկվայում ուսանող Սարիկ Սարյանին:

305. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ

(էջ 413)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց.1, գ. 129, թ. 1-2:

Առաջին անգամ հրապարակվել է «Սովետական գրականություն», Երևան, 1975, թ. 10, էջ 122, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 341-342 և «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, թ. 1, էջ 89-90:

Աշոտ Գրաչի *(Գրիգորյան. 1910, Բաքու - 1973, Երևան) – խորհրդահայ բանաստեղծ, թարգմանիչ, 1933-1946 թթ. Ադրբեջանի Գրողների միության հայկական բաժանմունքի քարտուղար, Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթի գրականության բաժնի վարիչ, 1946 թ. տեղափոխվել է Երևան և մինչև կյանքի վերջ ապրել Հայաստանում: Նրա կինը գրականագետ Մարգարիտ Աթաբեկյանն էր:*

[1] *Խոսքը Աշոտ Գրաշու թարգմանած «Ադրբեջանական բայաթիներ» (Բաքու, 1940, 91 էջ) գրքի մասին է:*

[2] *Ավ. Իսահակյանի «Ադրբեջանական բայաթիներ» հոդվածը տպագրվել է «Գրական թերթ», 1940, 30 ապրիլ:*

306. ՄՈՍԿՎԱԾԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ

(էջ 414)

Ձեռագիրը պահվում ԳԱԹ, ԱԻՖ, 873- II:

Առաջին անգամ հրատարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, թ. 1, էջ 91:

«Детиздат» *հրատարակչությունը հաստատվել է 1933 թ. Մ.Գորկու, Ս.Մարշակի, Կ.Զուկովսկու ջանքերով և գործում է առայսօր:*

[1] Խոսքը Մոսկվայում տպագրվող «Антология...»-ի համար առաջարան գրելու առաջարկի մասին է, որ Ավ. Իսահակյանին արվել է հրատարակչության կողմից: Իսահակյանը հրաժարվել է զբաղված լինելու պատճառով և առաջարկել Դ. Դեմիրճյանի անունը: 1940 թ. լույս տեսավ Հայ պոեզիայի Անթոլոգիան՝ Վալերի Կիրպոտինի և Ս. Հարությունյանի խմբագրմամբ:

307. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՑԱՆԻՆ
(էջ 415)

Ձեռագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց.1, գ. 267, թ. 1-2:

Առաջին անգամ հրատարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, թ. 1, էջ 90:

***Մարգարիտա Աթաբեկյան** (1913, Բաքու - 1994, Երևան) – գրականագետ, բարձրագույն կրթությունը ստացել է Մոսկվայի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում, ապա ասպիրանտուրայում, 1940 թ. աշխատել է Մոսկվայի մանկական հրատարակչությունում, ամուսնու՝ Աշոտ Գրաշիի հետ 1946 թ. տեղափոխվել է Երևան, աշխատել Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտում:*

308. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՑԱՆԻՆ
(էջ 416)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 215-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 313-314:

Վրացահայ գրող Մկրտիչ Ասլանյանը 1940 թ. աշխատում էր Թիֆլիսի պետական ռադիոկոմիտեում:

[1] 1940 թ. գարնանը իրար հետևից Երևանում լույս տեսան Ավ. Իսահակյանի Երկերի 1-ին և 2-րդ հատորները:

309. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 417)

Ինքնագիրը (մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 343:

[1] Երկրորդ համաշխարհային պատերազմին գերմանաֆաշիստական զորքերը 1940 թ. հունիսի 14-ին օկուպացրել են Փարիզը:

*[2] **Մուսա** – Իսահակյան ընտանիքի Փարիզի տանը պահվող կատվի անունը:*

310. ՔՈԻԹԱՑԻՍԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՈԲԵԼՑԱՆԻՆ
(էջ 418)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 9482:

Պարզ է, որ խոսքը թարգմանվել է ռուսերենով, ապա ներկայացվել վրաց հանրությանը:

[1] Վրաստանի Իմերեթ մարզի Քութայիս քաղաքի դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1861 թ., բայց պրոֆեսիոնալ թատերախմբերի աշխատանքը՝ վրացի ռեժիսոր Վլադիմիր Ալեքսի-Մեսխիշվիլու գլխավորությամբ սկսել է 1880 թվականից: Թատրոնը միաժամանակ ղեկավարել է նաև Ա. Ռ. Մերեթելին: 1940 թ. թատրոնին տրվել է նշանավոր դերասան Լադո Մեսխիշվիլու անունը, երբ հունիսին նշվել է թատրոնի հիմնադրման 60-ամյակը:

*[2] **Ալեքսի-Մեսխիշվիլի Վլադիմիր** (Լադո Մեսխիշվիլի, 1857-1920) – Վրաստանում շատ սիրված դերասան, մշակութային գործիչ, Քութայիսի թատրոնի՝ 1897-1906 թթ. առաջին ղեկավար:*

*[3] **Մարջանաշվիլի Կոտե** (1872-1933) – վրաց թատրոնի հիմնադիր, ռեժիսոր, սովետական կինոյի և թատրոնի գործիչ:*

*[4] **Աբաշիձե Վասիլի** (Վասո, 1854-1926) – վրացի դերասան, դրամատուրգ, ռեժիսոր, 1922 թ. Վրացական ՍՍՀ ժողովրդական արտիստ, նրա անունով է կոչվում Թբիլիսիի երաժշտական կոմեդիայի թատրոնը: Այս գործիչը ևս իր ստեղծագործական ուղին սկսել է Քութայիսի դրամատիկական թատրոնում:*

[5] ***Մեսխի Կոստանդին*** *(1857-1914) – վրացի ռեժիսոր և առաջնակարգ դերասան, 1885-1894 թթ. Քութայիսի թատրոնում՝ նրաղեկավարությամբ են սկսել իրենց գործունեությունը Վրաստանի մի շարք անվանի դերասաններ:*

311. ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ
(էջ 419)

Ձեռագիրը պահվում է ԱԻԸԱ: (Ձեռագիրն ուղարկվել է ռուսերեն լեզվով):

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 343-344:

1940 թ. հունիսի 20-ին Թբիլիսիում տեղի է ունեցել հանդիսություն՝ նվիրված վրաց մեծ բանաստեղծ Ա. Ծերեթելու ծննդյան 100-ամյակին: Հոբելյանին մասնակցել է նաև հայ գրողների պատվիրակությունը՝ Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, Ն. Զարյան, Արազի, Հ. Շիրազ, Գ. Սարյան, Ս. Կասպուտիկյան: Հիվանդության պատճառով Ավ. Իսահակյանը չի կարողացել մասնակցել հանդիսությանը և Բորժոմից ձեռագիր է ուղարկել վրաց գործընկերներին:

[1] ***Բորժոմ*** *– կուրորտային քաղաք Վրաստանի կենտրոնական մասում, Սամցխե-Ջավախք մարզի վարչական կենտրոն, հայտնի է իր հանքային ջրերով:*

312. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՑԱՆԻՆ
(էջ 420)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Արամ Ինճիկյանի Ֆոնդ, 47:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 344-346:

[1] *Արամ Ինճիկյանը 1938 թվականից ծառայում էր խորհրդային բանակում, 1939-1940 թթ. մասնակցել է սպիտակ ֆիննների դեմ մղված կռիվներին, որի ընթացքում գերի է ընկել թշնամուն: Այդ փաստը չատ ծանր է տարել Ավ. Իսահակյանը, ինչպես պատմում են ժամանակակիցները: Նամակում Ավ. Իսահակյանը ծառայության մեջ գտնվող Ինճիկյանին տեղեկացնում է Երևանի գրական կյանքի նորություններ:*

[2] *Նկատի ունի Պոլսում 1922 թ. տպագրված Ավ. Իսահակյան «Արձակ էջեր» գիրքը:*

[3] *Նկատի ունի Րաֆֆու «Սամվել» վեպի 7-րդ հրատարակությունը՝ 1940, Հայպետհրատ, 468 էջ:*

[4] *Խոսքը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի «Տիգրան Բ. և Հռոմը» (Նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների) ուսումնասիրության (Երևան, Արմֆան-ի հրատ., 1940, 250 էջ) մասին է:*

[5] **Վահան Տերյան**, *«Բանաստեղծությունների լիակատար ժողովածու», Երևան, Հայպետհրատ, 1940, 456 էջ:*

[6] **Խաչատուր Կանայան**, *«Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն», Երևան, Արմֆան, 1940, 109 էջ:*

[7] **Ղանալանյան Հովհաննես**, *«Իսահակյանի լիրիկան», Երևան, Պետհրատ, 1940, 163 էջ:*

[8] **Սողոմոն Տարոնցի**, *«Բանաստեղծություններ», Երևան, Պետհրատ, 1940, 238 էջ:*

[9] **Հովհաննես Շիրազ**, *«Երգ Հայաստանի», Երևան, Պետհրատ, 1940, 18 էջ:*

[10] **Վահան Գրիգորյան**, *«Արևն ազդանշան» (բանաստեղծություններ, պոեմներ), Երևան, Պետհրատ, 1939, 230 էջ:*

[11] **Նաիրի Զարյան**, *«Դյուցազնապիրք: Ցարիցինյան դրվագներ», Երևան, Պետհրատ, 1940, 168 էջ:*

[12] **Վեսպեր**, *«Վեց հարված», Երևան, Պետհրատ, 1940, 18 էջ:*

[13] **Սարմեն**, *«Երգաստան», Երևան, Պետհրատ, 1940, 272 էջ:*

313. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՑԱՆԻՆ

(էջ 422)

Ինքնագիրը պահվում է ՌԴՀԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 316:

314. ԳԵՂԱՄ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 423)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գեղամ Սարյանի ֆոնդ, 149-լրացուցիչ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 317:

Գեղամ Սարյան (Բաղդասարյան, 1902, Թավրիզ–1976, Երևան) – սովետահայ բանաստեղծ, թարգմանիչ, ՍՍՀՄ Գրողների միության անդամ 1934 թվականից:

*[1] **Ծալկա** – քաղաք Վրաստանի հարավում, վարչական կենտրոն, հիմնադրվել է էրզրումի վիլայեթից գաղթած հայերի կողմից, 1829–1830 թթ. կոչվել է Բարմաքսըզ, 1936 թ. դարձել է շրջկենտրոն և վերանվանվել Ծալկա:*

315. ՄԱՐՏԻՆ <ՔԱՐԱՄՑԱՆԻՆ>

(էջ 424)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 9480:

Տպագրվում է առաջին անգամ:

***Քարամյան Մարտին** (1912–1993) – վրացահայ բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, 1931–1937 թթ. աշխատել է տարբեր թերթերում, 1937–1941 թթ. և Հայրենական պատերազմից հետո 1946–1964 թթ.՝ Վրաստանի ռադիոկոմիտեի հայկական հաղորդումների խմբագիր, 1964–1971 թթ.՝ Վրաստանի Գրողների միության հայկական մասնաճյուղի ղեկավար:*

316. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 424)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878–II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 346:

*[1] **Աբասթուման** – կուրորտային քաղաքատիպ ավան Վրաստանի հարավում, Ախալցխա երկաթուղային կայարանի մոտակայքում, Թբիլիսիից 287 կմ արևմուտք, հին անվանումն է Օձախե:*

*[2] **Բակուրիանի** – քաղաքատիպ ավան Ջավախք մարզում:*

*[3] **Բելի Կլյուչ** – Վրաստանի հարավում գտնվող Թեթրի-Ծղարո քաղաքի այլ անվանումներից մեկը, որտեղ եղել և լուսանկարվել են*

շատ հայ գրողներ՝ Հ. Թումանյան, Ղ. Աղայան, Փ. Վարդազարյան և այլն:

317. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 425)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 342-343 (7 հունիսի թվագրումով):

[1] ***Ախալցխա*** *– շրջկենտրոն, Սամցխե-Ջավախեթի մարզի վարչական կենտրոն:*

318. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 426)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 216-I:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *1940 թ. ամռանը Վրաստանում կատարած Ավ. Իսահակյանի ճանապարհորդության ժամանակ նրան մշտապես ուղեկցել է երիտասարդ վրացահայ բանաստեղծ Մարտին Քարամյանը, որն այդ մասին պատմել է «Բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Վրաստանում» հոդվածում («Արշավ», Թբիլիսի, 1940, թ. 4, էջ 48-51):*

319. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 426)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 347:

[1] ***Իսահակյան Բելլա*** *(Իզաբելլա. 1918-1996) – Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի դերասանուհի, 1963-1993 թթ.՝ Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի ֆոնդերի պահապան, Վիգեն Իսահակ-*

յանի կինը: «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանվել է Համո Բեկնազարյանի հետևյալ ֆիլմերում՝ «Հայկական կինոհամերգ», «Զանգեզուր», «Դավիթ-Բեկ», «Անահիտ»:

[2] sheviot – բաց դուլյնի բրդյա կտոր, որ ստանում են Սկոթլանդի Sheviot լեռներում ապրող չեվիոթ տեսակի ոչխարի բրդից:

[3] chifon – չատ թեթև, մետաքսյա կտոր:

[4] Խոսքը Տաբուծղուրի լճի մասին է, որ գտնվում է Ջավախքի բարձրավանդակի հյուսիսում, մոտ 2000 մ. բարձրության վրա: Ունի հրաբխային ծագում: Կողքին Տաբուծղուրի գյուղն է:

[5] Սուրամը քաղաքատիպ ավան է՝ Վրաստանի Խաշուրի շրջանում, Սուրամի լեռնաշղթայի հարավային լանջին: Երկաթուղագծով այն միացած է Խաշուրի կայարանին. ճամփան անցնում է Սուրամի թունելով: Այստեղ է գտնվում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին՝ կառուցված 19-րդ դարում:

320. ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՑԱՆԻՆ
(էջ 427)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 9481:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 318:

[1] Խոսքը հավանաբար վերաբերում է 1940 թ. ապրիլից տարածված այն «գաղտնի լուրերին», ըստ որի Ս.Վեհետական Միությունը՝ Ստալինի ղեկավարությամբ, որոշել էր աշխարհաքաղաքական այդ խառնաշփոթում, համաշխարհային երկրորդ պատերազմի իրավիճակից օգտվելով, Թուրքիայից հետ պահանջելու Կարսը, Արդահանը, Սուրմալուն: Փաստաթղթերը հավաստում են, որ այս թեմայով խոսել է Մոլոտովը Հիտլերի հետ՝ Գերմանիայում 1940 թ. նոյեմբերին կայացած հանդիպմանը: Գերմանիային էլ դուր չէր գալիս տարածաշրջանում Թուրքիայի ունեցած հեգեմոնիկ դերը, որը համաձայնության էր բերում Գերմանիային ու Սովետական Միությանը: Գերմանիան ուզում էր թուրքական ռազմակայանները փոխարինել սովետական բազաներով:

Այս հարցը նորից վերհանվեց 1945 թ. գարնանը: Կրեմլի քննարկումներին մասնակցում էին Հայաստանի հանրապետության կենտ-

կոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանը, Մոսկվայում ազգությամբ հայ պետական գործիչներ, հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչը: Հաղթանակին մեծ ծառայություն մատուցած հայ ազգը, հայ սփյուռքը սպասում էր՝ կրեմլյան հույսերով ներշնչված...

321. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՑԱՆԻՆ
(էջ 428)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 217-I:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 319:
[1] Տե՛ս նախորդ նամակի ծանոթագրությունը:
[2] Օֆիկը Մկրտիչ Ասլանյանի կինն էր:

322. ՊԱՀԱՐԵԻՆ
(էջ 429)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:
Տպագրվում է առաջին անգամ:
[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության:
[2] Թիֆլիսում հայանի կոջորսկայա փողոցի թիվ 3 հասցեում 1939-1960 թթ. ապրել է կենսաբան Սիմոն Յուզբաշյանը (1886, Շուշի-1960, Թիֆլիս), Կարեն Յուզբաշյանի հորեղբայրը: 1935 թ. նրա նախաձեռնությամբ հիմնադրվել է Երևանի կենսաբանության ինստիտուտը, որի տնօրենը ինքն էր մինչև 1939 թ.: 1939-1960 թթ. աշխատել է Թիֆլիսի մանկավարժական ինստիտուտում՝ որպես կենդանաբանության ամբիոնի վարիչ: Նրա տանն է հյուրընկալվել բանաստեղծ Ավ. Իսահակյանը:
[3] Տանյան Պահարեի կինն էր:

323. ՊԱՀԱՐԵԻՆ
(էջ 429)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:

Տպագրվում է առաջին անգամ:

324. ՀԱՑԿ ԴՌՆՈՑԱՆԻՆ
(էջ 430)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հ.Մուրադյանի ֆ., 41-լրացուցիչ:
Տպագրվում է առաջին անգամ:

Դռնոյան Հայկ *– 1939 թվականից Երևանի Պետական հրատարակչության տնօրեն, գրականագետ, «Արևմտաեվրոպական միջնադարյան հերոսավեպերի տիպաբանական հիմնական հատկանիշները» դրքի հեղինակ:*

325. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
(էջ 430)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 129, թ. 3:
Առաջին անգամ հրապարակվել է ԱԻԵԺ 1979, էջ 348, այնուհետև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, թ. 1, էջ 91:

[1] Ադրբեջանի գրողների մխուլթյան հայկական բաժանմունքի օրգան «Խորհրդային գրող» ամսագիրը հրատարակվել է Բաքվում, 1932-1940 թթ.: Ամսագրի պատասխանատու խմբագիրն էր Գ. Սևունցը, պատասխանատու քարտուղարը՝ բանաստեղծ Թ. Հուրյանը, խմբագրական կոլեգիայի անդամներ էին Ա. Գրաշին, Հ. Ամիրխանյանը և Ս. Գրիգորյանը:

[2] Ավ. Իսահակյանի «Հայրենի հողը» լեգենդը տպագրվել է «Խորհրդային գրող», Բաքու, 1940, թ. 13, էջ 5-6:

Քանի որ Գրաշին նաև «Կոմունիստ» հայալեզու թերթի խմբագիրն էր, որոշել էր մյուս «Հայրենիքիս» բանաստեղծությունը զետեղել «Կոմունիստ» թերթի դեկտեմբերի 23-ի համարում:

[3] ***Գարեգին Սևունց*** *(1911, Խնձորեսկ - 1969, Երևան) – սովետահայ արձակագիր, «Թեհրան» վեպի հեղինակ, 1935-1938 թթ. աշխատել է Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագրությունում,*

1938-1941 թթ. եղել է Բաքվի «Խորհրդային գրող» ամսագրի խմբագիր, պատերազմից հետո փոխադրվել է Երևան և 1946-1952 թթ. աշխատել որպես «Պիոներ» ամսագրի խմբագիր, 1952-1954 թթ.՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի հայկական ընկերության նախագահ:

*[4] **Թաթուլ Հուբյան** (Խաչատրյան, 1912-1942) – բանաստեղծ, 1931 թ. սովորել է Մոսկվայի հրատարակչական ինստիտուտի գրական ֆակուլտետում, 1938-1940 թթ. եղել է Բաքվի «Խորհրդային գրող» ամսագրի պատասխանատու քարտուղարը, 1941 թ. ուղարկվել է ռազմաճակատ, ուր զոհվել է 1942 թ. հունիսին՝ Սևաստոպոլի համար մղված մարտերում: Հուբյան ազգանունը Թաթուլին տվել է եղիչե Զարենցը:*

326. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

(էջ 431)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍՄՑ, 397:

Առաջին անգամ տպագրվել է Ահեժ 1979, էջ 348-349:

[1] Հաշտարխանը նույն Աստրախանն է՝ ՌՍՖՍՀ Աստրախանի մարզի վարչական կենտրոնը:

[2] 1940 թ. գրականագետ Սաքո Սուքիասյանը գնացել է Օրենբուրգ՝ գտնելու այն տունը, ուր իր կյանքի վերջին օրերն է ապրել Վահան Տերյանը: Ս. Սուքիասյանը գտնում է տունը, տեղի ղեկավարության համաձայնությամբ տան ճակատին փակցվում է մարմարե ցուցանակ՝ «Այս տանը իր կյանքի վերջին օրերն է ապրել հայ բանաստեղծ Վահան Տերյանը» վերտառությամբ: Նրա վկայությամբ՝ անհնար էր գտնե մոտավոր պարզել գերեզմանի տեղը, գտնել թաղման արարողության որևէ մասնակցի: Օրենբուրգի հին ու լքված գերեզմանատանը, բանաստեղծի չիբիմի վրա ժամանակին եղել է մի փայտե խաչ և հակիրճ մակագրություն... Այս դառը տպավորությունները նա պատմում է Ավ. Իսահակյանին, ով շատ է սիրել ու գնահատել վաղամեռիկ Վահան Տերյանին:

[3] *Ըստ ամենայնի, խոսքը գրականագետ Նշան Մուրադյանի (1908-1982) մասին է, որը 1933-1945 թթ. աշխատել է Երևանի Գրականության թանգարանում որպես գիտաշխատող և անձնապես կապ է պահպանել Սաքո Սուքիասյանի հետ:*

327. ՀԱՑԿ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 432)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 314, ց. 11, գ. 50, թ. 2:

Առաջին անգամ հրապարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1965, թ. 3, էջ 35, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 349-350:

Հայկ Իսահակյան *(1875-1947) – բանահավաք, Ավետիք Իսահակյանի Սիմոն հորեղբոր կրտսեր որդին, երկար տարիներ աշխատել է Ալեքսանդրապոլում որպես հայոց լեզվի ուսուցիչ:*

[1] ***Արամ Իսահակյան*** *(1867-1940) – Ավետիք Իսահակյանի Սիմոն հորեղբոր ավագ որդին, ողջ կյանքում ապրել է Ալեքսանդրապոլում, զբաղվել է դասավանդելով և թարգմանություններ անելով: Ավ. Իսահակյանը Արամի հետ առանձնապես մոտիկ է եղել դեռ մանկության տարիներից: Նրան ուղղված Ավ. Իսահակյանի նամակները զրված են ներկա հրատարակության 13-րդ հատորում:*

[2] ***Բագրատ Իսահակյան*** *(1869-1942) – Սիմոն հորեղբոր որդին, Արամի եղբայրը:*

[3] *Նուննիկը Արամ Իսահակյանի կինն է:*

328. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՍՄԱՆՑԱՆԻՆ
(էջ 433)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ալ. Արաքսմանյանի ֆոնդ, 498:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 320:

Ալեքսանդր Արաքսմանյան *(1911, Գյումրի - 1982, Երևան) – սովետահայ դրամատուրգ, արձակագիր, թարգմանիչ, լրագրող: 1940 թ.*

նա ուսուցիչ էր աշխատում Լենինականում, Երևան է տեղափոխվել 1943 թվականից:

[1] Նկատի ունի Ալեքսանդր Արաքսմանյանի «Իսահակյանի արձակը» հոդվածը՝ տպագրված «Բանվոր», Լենինական, 1940, 22 դեկտեմբեր:

329. ՄՈՍԿՎԱՑԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ

(էջ 434)

Ձեռագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 178, թ. 2:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, թ. 1, էջ 91-92:

[1] Տես 306, 307 նամակները:

330. ԱՇՈՏ ԳՐԱՇԻՒՆ

(էջ 435)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 129, թ. 4:

Առաջին անգամ հրապարակվել է «Սովետական գրականություն», Երևան, 1975, թ. 10, էջ 123, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 350-351:

[1] «Կոմունիստ» թերթում 1940 թ. նոյեմբերին տպագրվել է Ավ. Իսահակյանից երկու բանաստեղծություն:

[2] Խոսքը Աշոտ Գրաշու «Կարոտ մանկության» բանաստեղծության մասին է՝ տպագրված «Խորհրդային գրող», Բաքու, 1940, թ. 8, էջ 11:

[3] 1940 թ. օգոստոսի 15-ին Տերմինաբանական կոմիտեի նախագծով մասնակի բարեփոխումներ արվեցին 1922 թ. ընդունված Մանուկ Աբեղյանի ուղղագրական ռեֆորմի մեջ (վերականգնվում է հայոց այբուբենի o տառը, բառամիջի և բառավերջի դիրքերում գործածվում է և և ո տառերը, ա և ո տառերից հետո գրվում է յ, փոխվում է եմ օժանդակ բայի ուղղագրությունը և այլն):

[4] **Համո Ամիրխանյան** – գրականագետ, լրագրող: 1933-1944 թթ. աշխատել է Բաքվի հայերեն «Կոմունիստ» թերթում, որպես բաժնի վարիչ՝ ապա պատասխանատու քարտուղար, խմբագիր:

331. ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՑԱՆԻՆ

(էջ 436)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 10508:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 322-323:

***Արշալույս Մարգարյան** (1914, Թիֆլիս - 2008, Երևան) – մանկավարժ, բանաստեղծուհի, թարգմանիչ Սիմոն Կրկյաշարյանի կինը, 1931-1936 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, 1944 թվականից դարձել է Հայաստանի Գրողների միության անդամ:*

*[1] **Բալաբեկ Մարտիրոսյան** (1905-1972) – պետական գործիչ, 1938-1942 թթ. Հայաստանի Լուսավորության ժողկոմ:*

[2] Արշալույս Մարգարյանը համալսարանն ավարտելուց հետո գործուղվել է Սանահին՝ մանկավարժական աշխատանքի: Լոռիում տեսնելով հայկական պատմամշակութային հուշարձանների լքված և կիսավեր վիճակը, այդ մասին ցավով տեղեկացրել է Ավ. Իսահակյանին:

332. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 437)

Ինքնագիրը պահվում է ՌԶԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 324:

[1] 1937-1947 թթ. Հայպետհրատի գեղարվեստական բաժնի վարիչ Ռ. Զարյանը որոշ գրքեր տպագրությունից առաջ կարծիքի համար ուղարկում էր Ավ. Իսահակյանին: Այդ գրքերից մեկը Լեոյի «Անի (Ճամփորդական հիշատակարան)» աշխատությունն էր, որ Ռ. Զարյանի խմբագրմամբ տպագրվել է Երևան, Հայպետհրատ, 1946, 5000 տիրաժով:

*[2] **Մարմաշենի վանք** – վանական համալիր, որը գտնվում է Շիրակի մարզի Մարմաշեն գյուղից մոտ 2 կմ հյուսիս-արևմուտք, Ախուրյան գետի ձախ ափին:*

[3] Վահրամաշեն եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունին 11-րդ դարում, գտնվում է Արագած լեռան հարավային լանջին, Ամբերդ ամրոցում:

[4] Գրքի հեղինակը Առաքել Բաբախանյանն էր՝ Լեոն: Լեոն մահացել է 1932 թ. և մինչև 1940 թ. նրա «Անի...» աշխատությունը մնացել էր անտիպ: Մինչև գրքի տպագրությունը, որն իրագործվեց միայն պատերազմից հետո՝ 1946 թ., Ավ. Իսահակյանը գրել է «Լեոյի «Անի»ն (Լեոյի ձեռագիր անտիպ «Անի» աշխատության մասին)» հոդվածը («Սովետական գրականություն», Երևան, 1941, թ. 11, էջ 93):

333. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 439)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 28- III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 351:

Անդրանիկ Հովսեփյան (1914-1968) – հայ արձակագիր, դրամատուրգ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ 1939 թվականից, աշխատել է Լենինականի «Բանվոր» և «Մանածագործ» թերթերի խմբագրություններում, եղել է Հայաստանի Գրողների միության Լենինականի բաժանմունքի պատասխանատու քարտուղարը:

[1] Խոսքը վերաբերում է Ավ. Իսահակյանին ծննդյան 65-ամյակին նվիրված միջոցառումներին, որ կազմակերպվել են նաև բանաստեղծի ծննդավայր Լենինականում:

334. ՍԱՐԻԿ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 440)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 352-354:

Սարգիս Սարյան (Սարիկ. 1917-1962) – գրականագետ, Մարտիրոս Սարյանի ավագ որդին, 1939 թ. Երևանի պետական համալսա-

բանն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայում, Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում, թեկնածուական դիսերտացիան պաշտպանելուց հետո վերադարձել է Երևան և 1951-1962 թթ. աշխատել է ԳԱ Գրականության ինստիտուտում, գրել մի շարք գրքեր: 1962 թ. զոհվել է ավտովթարից:

[1] Ավետիք Իսահակյանի 65-ամյակի առթիվ հոբելյանական ցուցահանդեսներ ու հանդիսություններ են կազմակերպվել Երևանում, Մոսկվայում, Լենինականում, Թբիլիսիում, Բաքվում, Կիրովաբադում, Ստեփանակերտում և այլ քաղաքներում:

[2] Նկատի ունի Գ. Սունդուկյանի «Պեպո» դրամատիկական ստեղծագործության սյուժեի հիման վրա ստեղծված էկրանավորումը՝ առաջին հնչյունային ֆիլմը, որի պրեմիերան տեղի է ունեցել 1935 թ. հունիսի 15-ին (ֆիլմի ռեժիսոր՝ Համո Բեկնազարյան, Պեպոյի դերում՝ Հր. Ներսիսյան, Զիմզիմովի դերում՝ Ա. Ավետիսյան):

[3] Այժմ այդ գեղանկարը (կտավ, յուղաներկ, Երևան, 1940) Երևանի պետական պատկերասրահի մշտական ցուցադրությունում է:

*[4] **Հովիկ (Հովհաննես) Թումանյանը** (1915-1940) Հովհաննես Թումանյանի ավագ դստեր՝ Աչխենի և իրավաբան Գևորգ Խատիսյանի միակ զավակն էր:*

1941

335. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ

(էջ 442)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 129, թ. 5:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 354, այնուհետև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2004, էջ 92-93:

[1] 1940 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևանում և այլուր մեծ հանդիսությամբ նշվել է վարպետի ծննդյան 65-ամյա հոբելյանը, ամենուր մտավորականներով կազմակերպել են հավաքներ, խնջույքներ, որոնցից մեկի՝ ընտանեկան հավաքի մասին հիշատակվում է նամակում:

[2] Խոսքը վերաբերում է Մոսկվայում ապրող Մարգարիտ Աթաբեկյանին, որը Աչոտ Գրաչիի հետ ամուսնացել է 1941 թ. գարնանը, Մոսկվայում:

[3] Նկատի ունի բանաստեղծուհի Վարսենիկ Աղասյանին (1898-1974), ով 1941 թ. աշխատում էր Ա. Գրաչիի հետ Բաքվի «Կոմունիստ» թերթում, հետագայում՝ Բաքվի ռադիոկոմիտեում:

336. «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
(էջ 442)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 236ա լրացուցիչ:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», Երևան, 1940, 20 հունվար:

337. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 443)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 28- III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 355, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 328:

[1] 1941 թ. հունվարի 8-ին Լենինականում նշվել է Ավ. Իսահակյանի ծննդյան 65-ամյակի հոբելյանը:

[2] Նկատի ունի Լենինականում իր ծննդյան 65-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում կարդացած ելույթը («Հոբելյանական խոսք», «Բանվոր», Լենինական, 1941, հունվար և «Գրական թերթ», Երևան, 1941, 20 հունվար):

[3] Խոսքը վերաբերում է 1941 թ. Մոսկվայում կայանալիք հայ գրականության և մշակույթին նվիրված օրերին:

338. ՊԱՀԱՐԵԻՆ
(էջ 444)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 329:

[1] Վրաստանի Գրողների միության առաջարկով Թիֆլիսում ևս նշվել է Ավ. Իսահակյանի 65-ամյա հոբելյանը: 1941 թ. փետրվարի 5-25-ը բանաստեղծը հյուրընկալվել է Թիֆլիսում (Ավ.Իսահակյանին նվիրված երեկո Թիֆլիսում, «Գրական թերթ», 1941, 20 փետրվար):

339. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ

(էջ 444)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 129, թ. 6-7:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, թ. 1, էջ 93-94:

[1] 1941 թ. Մոսկվայում հրատարակվել է Ա. Գրաշու «Карабахская весна» գիրքը, որի առաջաբանը գրել է Ավ. Իսահակյանը:

[2] Նամակում հիշատակված Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների ռուսերեն գիրքը (թարգմանությունը, առաջաբանը Ս. Խիթարովայի) տպագրվել է Հայրենական պատերազմից հետո՝ 1945 թ. Մոսկվայում:

[3] Նկատի ունի Մոսկվայում իր ծննդյան 65-ամյակին նվիրված հանդիսություն կազմակերպելը: Չնայած նրա կամքին, 1941 թ. մայիսին Մոսկվայում կայացել է միջոցառում՝ նվիրված բանաստեղծին («երեկույթ նվիրված պոետ Ավետիք Իսահակյանին (Մոսկվայում)», «Գրական թերթ», 1941, 30 մայիսի):

[4] Квятковский А.П., «Словарь поэтических терминов», Москва, 1940.

340. ՍՈՂՈՄՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 446)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 885ա-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 330:

***Մելիք-Շահնազարյան Սողոմոն** (1862, Շուշի - 1942, Թիֆլիս) – արձակագիր, դյուղագիր, Շուշիում եղել է Ղ. Աղայանի աշակերտներից մեկը, ապա սովորել է Գևորգյան ճեմարանում, ապրել է Թիֆլիսում:*

[1] Ավ. Իսահակյանը իր խոստումը կատարել է հեղինակի մահից հետո. «Հայ դյուղագիրներ» ժողովածուի մեջ տպագրվել են Ս. Մելիք-Շահնազարյանի լուսանկարը, կենսագրությունը, հատված «Հայ դյուղացու սև օրը» վիպակից և «Վիթխարի ընկուզենին» պատմվածքը («Հայ դյուղագիրներ», Երևան, «Հայպետհրատ», 1950, 578 էջ):

341. ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻՆ

(էջ 448)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հրաչյա Քոչարի ֆոնդ, 357:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 331:

Հրաչյա Քոչար (Գաբրիելյան. 1910-1965) – արձակագիր, հրապարակախոս, ԽՍՀՄ Գրողների միության անդամ 1934 թվականից, 1941-1945 թթ. մասնակցել է Հայրենական պատերազմին, 1946-1951 թթ.՝ Հայաստանի Գրողների միության պատասխանատու քարտուղար, 1954 թ. «Ոգնի» երդիծական հանդեսի խմբագիր:

[1] 1941 թ. գարնանը Մոսկվայում անցկացված հայ մշակույթի տասնօրյակի (հայտնի՝ Դեկադա անվանումով) միջոցառումների մասին Ավ. Իսահակյանը գրել է հոդված «Բերկրալի օրեր (Հայ գրականության 10-օրյակը Մոսկվայում)» վերնագրով («Ավանդարդ», Երևան, 1941, 17 մայիսի, «Բանվոր», Լենինական, 1941, 20 մայիսի):

[2] Խոսքը վերաբերում է Հ. Քոչարի «Ժամանակներ» պատմվածքների ժողովածուին (Երևան, Հայպետհրատ, 1941, 308 էջ):

[3] **Ազատ Վշտունի** (Կարապետ Մամիկոնյան. 1894-1958) – սովետահայ բանաստեղծ, Զարենցի և Գ. Աբովի հետ կազմել է «Երեքի խմբակ» գրական միավորումը:

342. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՑԱՆԻՆ

(էջ 448)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԳԼՖ, 1448-իբ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 355-356:

[1] Ավ. Իսահակյանը հայ գրականության դեկադայի օրերին գրել է մի շարք հոդվածներ, որոնք տպագրվել են մոսկովյան թերթերում.

«Мысли о лирике» [Из истории армянской поэзии], «Лит. газета», 1941, 21 мая.

«Мысли поэта» [Культурный расцвет армянского народа] «Известия», 1941, 21 мая.

«Незабываемые дни» [О декаде армянской литературы в Москве], «Правда», 1941, 21 мая.

«Радостные дни» [Декада армянской литературы в Москве], «Коммунист», 1941, 17 мая.

[2] ***Լևոն Լևոնյան*** *(1898-1941) – Գարեգին Լևոնյանի կրտսեր եղբայրը, որ լուրջ գիտնական էր, ապրում էր Մոսկվայում և աշխատում որպես Մետրոյի նախագծման գլխավոր կոնստրուկտոր-ինժեներ: Նա ներգրում է ունեցել նաև Սովետական Միության ռազմարդյունաբերության զարգացման մեջ: Լևոն Լևոնյանը կապեր ուներ Մոսկվայի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, միշտ փայլել է իր հայանվեր գործունեությամբ, ունեցել է 1 աղջիկ՝ Ռուզաննա անունով:*

[3] ***Սեդա Թումանյան*** *(Հայկանուշ, 1905-1988) – գյուղատնտես, թարգմանչուհի, Հովհաննես Թումանյանի դուստրերից մեկը: Գայանյան ղպրոցն ավարտելուց հետո նա սովորել է Երևանի պետական համալսարանում՝ գյուղատնտեսական ֆակուլտետում: Ամուսնացել է բժիշկ Ռուբեն Սաֆրազբեկյանի հետ, ունեցել 1 դուստր՝ Իրմա անունով: Սեդան 1941 թ. Էսենտուկիում էր ամուսնու հետ, երբ նրան ուղարկեցին Վորոշիլովսկ՝ մասնակցելու ռենտգենոլոգիայի դասընթացներին:*

[4] *Սովետական մեծ հանրագիտարանի 1-ին հրատարակությունը (65 հատորով) տևել է մոտ 20 տարի՝ 1926-1947 թթ.: Մինչև 1941 թ. հրատարակության խմբագիրը եղել է Օտտո Շմիդտը: 1941 թվականին լույս են տեսել հանրագիտարանի 48 և 49 հատորները:*

343. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՑԱՆԻՆ

(էջ 450)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 267, թ. 3-4:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, թ. 1, էջ 94:

344. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 450)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 357-358:

[1] 1941 թ. հունիսի 22-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվել էր Սովետական Միության վրա և սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը:

[2] Բելլա Իսահակյանը ևս մասնակցել է Մոսկվայում կայացած հայ գրականության և մշակույթի դեկադային: Պատերազմը սկսելու պահին նա եղել է Մոսկվայում, միայն մեկ շաբաթ անց է նրան հաջողվել հայ դերասանների խմբով վերադառնալ Հայաստան:

[3] Էսենտուկի առողջարանում աշխատող բժիշկ Ռուբեն Սաֆրազբեկյանը Սեդա Թումանյանի ամուսինն է:

*[4] **Վահան Արծրունի** (1857-1947) – հայ անվանի բժիշկ, բժշկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի և Բժշկական ինստիտուտի հիմնադիրներից մեկը: Կրթություն է ստացել Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում, մասնագիտացել քիթ-կոկորդ-ականջ հիվանդությունների գծով: Աշխատել է Թիֆլիսում, 1921 թվականից՝ Երևանում:*

345. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 453)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

346. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 453)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

347. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ
(էջ 454)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԼԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, 358-359:

348. ԱՐԱՔՍ ԱՎԵՏԻՍՑԱՆԻՆ
(էջ 454)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Արաքս Ավետիսյանի ֆոնդ, 116:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 332:

***Արաքս Ավետիսյան** (1903-1978) – արձակագիր, 1939-1942 թթ.՝ «Գրական թերթ»-ի խմբագրի տեղակալ, 1942-1945 թթ.՝ խմբագիր ռադիոպետկոմում:*

[1] «Ավ. Իսահակյանի օգոստոսի 5-ին Գրողների տանը տեղի ունեցած գրող-ագիտատորների և տնտեսուհիների միացյալ երեկոյին ելույթից» ծանոթագրմամբ լույս է տեսել «Մենք հաղթությամբ կվերնենք այս սրբազան պատերազմից» վարպետի խոսքը («Գրական թերթ», Երևան, 1941, 10 օգոստոս):

[2] Նկատի ունի «Սովետական Հայաստան» թերթում 1941 թ. օգոստոսի 8-ին տպագրված «Ծաչիզմը պիտի խորտակվի» Ավ. Իսահակյանի հոդվածը:

349. Վ<ԱՐԴԱՆ> ԱՏՐՑԱՆԻՆ
(էջ 455)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Վարդան Ատրյանի ֆոնդ, 140:
Տպագրվում է առաջին անգամ:

***Վարդան Ատրյան** (1896, Թիֆլիս - 1974, Երևան) – արձակագիր, լրագրող, 1930-1934 թթ. Թիֆլիսի մի շարք ամսագրերի խմբագիր, 1942-1955 թթ. Վրաստանի խորհրդային գրողների միության հայկական բաժանմունքի նախագահ:*

[1] *Կարապետ Ղաֆադարյան (1907, Ախալցխա - 1976, Երևան) – վիմագրագետ, պատմաբան, հնագետ, 1931 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, 1932 թվականից զբաղվել է Հայաստանի պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ, եղել է Դվինի պեղումների ղեկավարը, 1941-1964 թթ.՝ Պատմության թանգարանի տնօրենը:*

[2] *Հավանաբար նկատի ունի պատմաբան և հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանին (1875-1943), որը 1925-1931 թթ. աշխատել է Թիֆլիսի Գիտությունների ակադեմիայում, 1931-1934 թթ.՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայում՝ գիտքարտուղար, 1937-1943 թթ.՝ Երևանում, ԽՍՀՄ ԳԱ հայկական բաժանմունքի գիտքարտուղար:*

350. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՆԻԿՈԼՈՊՑԱՆԻՆ

(էջ 455)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իվան Ենիկոլոպյանի ֆոնդ, 3:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 333:

***Ենիկոլոպյան Իվան** (Հովհաննես, 1888, Թիֆլիս - 1980, Թբիլիսի) – սովետական պատմաբան, գրականագետ, մշակութային գործիչ, աշխատել է Թիֆլիսի մի շարք թանգարաններում, զբաղվել ռուս-վրացական գրական կապերի ուսումնասիրությամբ, 30 տարի եղել է Թբիլիսիի հայ մտավորականների Պանթեոնի տնօրենը:*

[1] *Խոսքը 1941 թ. Թբիլիսիում «Գրուզխուդոժնիկ» մանկական հրատարակչության տպագրած* М. Лермонтов, «Ашик-Кериб» [турецкая сказка] *20 էջանոց գրքույկի մասին է, որ պահվում է Երևան, ԱԻՏԹ, 4735:*

[2] **М. Лермонтов**, «Ашик-Кериб» [турецкая сказка] *գրքի առաջաբանը գրել է Հովհաննես Ենիկոլոպյանը:*

1942

351. <ՌՈՒԲԵՆ ՋԱՐՑԱՆԻՆ>

(էջ 456)

Ինքնագիրը պահվում է ՌԶԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 334:

[1] Հ. Շիրազի «Սիամանթո և Խճեզարե» պոեմը առաջին անգամ տպագրվել է 1935 թ., երկրորդ անգամ՝ Ավ. Իսահակյանի և Ռ. Զարյանի խմբագրմամբ տպագրված «Երգերի գիրք (Բանաստեղծություններ)» ժողովածուի մեջ (Երևան, Հայպետհրատ, 1942):

352. ԺԵՆՑԱՑԻՆ

(էջ 456)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 229-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

***Ժենյա** – Հայպետհրատի տպարանի աշխատակից:*

*[1] **Հ. Շիրազ**, «Երգերի գիրք, բանաստեղծություններ», Երևան, Հայպետհրատ, 1942, 110 էջ:*

353. ՀԱՑԿ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 457)

Ձեռագիրը պահվում է ՀԱԱ, ց. 11, գ. 50, թ. 3:

Առաջին անգամ տպագրվել է Ա.Իեժ 1979, էջ 359-360:

[1] Բագրատը (1869-1942) Արամ Իսահակյանի ավագ եղբայրն էր:

[2] Արամ Իսահակյանը մահացել էր 2 տարի առաջ՝ 1940 թ.:

354. ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՑԻՆ

(էջ 458)

Ինքնագիրը պահվում է Վրաստանի ԳԱ կից ժողովուրդների պատմության թանգարանում, Կ. Գամսախուրդիայի ֆոնդում:

Առաջին անգամ հրապարակել է Գուրգեն Հովնանը «Գրական թերթ», 1984, թ. 3, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 336:

***Կոնստանտին Գամսախուրդիա** (1893-1975) – վրացի ականավոր արձակագիր, Վրացական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, կրթություն է ստացել*

Ս. Պետերբուրգում, ապա Բեռլինի համալսարանում, 1919 թ. վերադարձել է Հայրենիք, 1924 թ. հիմնադրել «Ակադեմիական ասոցիացիա» գրական միավորումը և ստեղծագործել մինչև կյանքի վերջ: Վրաստանում հյուրընկալել է Ավ. Իսահակյանին, ինքն էլ այցելել է Հայաստան ու շրջագայել, տիրապետել է հայերեն լեզվին: Նա վրացերեն է թարգմանել Ստեփան Զորյանի «Խնճորի այգին» ստեղծագործությունը:

1983 թ., երբ Վրաստանում նշվել է Գամսախուրդիայի ծննդյան 90-ամյակը, նրան ուղղված Իսահակյանի նամակները թարգմանվել են ռուսերեն և մամուլով ներկայացվել վրաց ժողովրդին՝ որպես երկու ժողովուրդների անկեղծ սիրո մի նմուշ:

355. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ

(էջ 459)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՖ, 45:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 360-361:

[1] *Ավ. Իսահակյանի պատմվածքները՝ Հակոբ Խաչատրյանի թարգմանությամբ զետեղվել են 1945 թ. Մոսկվայում հրատարակված* «Армянские новеллы» *գրքում (էջ 107-157), որ հետագայում վերատպվեց 1947 թ. Երևանում* («Избранная проза», 111 էջ) *և 1948 թ. Մոսկվայում* («Знамя надежды. Рассказы», 48 էջ):

[2] ***Սեյֆուլինա Լիդիա*** *(1889-1954) – ռուս բանաստեղծուհի, հասարակական գործիչ, 1934 թվականից՝ Գրողների միության անդամ, 1936 թվականից ապրել է Գրողների Միության Պերեդելկինո արվարձանում, ամուսինը՝ գրականագետ Վալերիան Պրավդուխինն էր, որ 1937 թ. զոհ էր գնացել ստալինյան բռնաճնշումներին:*

[3] *Խոսքը Սոֆյա Իսահակյանի եղբոր՝ Վանյա Քոչարյանի ընտանիքի մասին է:*

[4] ***Ռուսթավի*** *– Վրաստանի հնագույն քաղաքներից մեկը:*

356. ՊԱՀԱՐԵԻՆ

(էջ 460)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:

Առաջին անգամ հրապարակել է Յ. Հովհաննիսյանը «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 120-121, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 337-338:

*[1] **Հուսիկ Մուրադյան** (1912, Թիֆլիս - 1983, Երևան) – հայ դերասան, Պահարեի կրտսեր եղբայրը:*

[2] Պահարեն շնորհալի կոմիկ դերասան էր, 50 տարվա աշխատանքային գործունեության ընթացքում նա խաղացել է շուրջ 300 դերեր, երկար տարիներ աշխատել է Թիֆլիսի դրամատիկական թատրոնում, 1943 թ. նրան շնորհվել է Վրաստանի վաստակավոր արտիստի կոչում: Պահարեն միաժամանակ զբաղվել է գրականությամբ, ստեղծագործել և հրատարակել մի քանի գրքեր: Նամակում հիշատակվում է Պահարեի անտիպ մնացած «Ողբ հայրենասիրության» պոեմը (ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 49):

[3] Պահարեն Թիֆլիսից Երևան է տեղափոխվել 1966 թվականին:

[4] Նկատի ունի Ռափայել Պատկանյանի 1878 թ. գրած «Նոր տարի» բանաստեղծությունը:

1943

357. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 464)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 29-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 339:

Անդրանիկ Հովսեփյանը 1943 թ. աշխատում էր Լենինականի Գրողների միությունում:

[1] Խոսքը գրող Ալեքսանդր Արաքսմանյանի մասին է:

[2] Նկատի ունի Լենինականի քաղխորհրդի նախագահի տեղակալ Կարապետ Պետրոսյանին:

358. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 465)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 29-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 340:

[1] Նկատի ունի թատերագետ Սուրեն Հարությունյանին (1909-1989):

359. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 465)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 29-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 341:

[1] Կիրակոս Օհանյան (1910-1977) – աշխարհագրագետ, մանկավարժ:

360. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ

(էջ 466)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՖ, 46:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 361-362:

[1] Խոսքը «Избранные стихи» (авторизованные переводы с армянского. Подготовка текстов, вступ. статья С. Хитаровой), Москва, Гослитиздат, 1945, 235 стр. *գրքի մասին է, որի տպագրությունը հետաձգվել է պատերազմի պատճառով:*

[2] Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը հրատարակվել է 1944 թ. ապրիլին:

361. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(էջ 468)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 362-363:

[1] Իրինդ – գյուղ Արագածոտնի մարզի Թալինի շրջանում, Արագած լեռան հարավ-արևմտյան լանջին:

[2] *1943 թ. հուլիսի 20-ին Երևանում 54 տարեկանում մահացել էր դերասանուհի Արուս Ոսկանյանը:*

[3] ***Խաչիկ Դաշտենց*** *(Տոնոյան, 1909-1974) – հայտնի հայ արձակագիր, բանաստեղծ և թարգմանիչ, 1934 թվականից՝ Գրողների միության անդամ, դասավանդել է Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում: 1943 թ. ամռանը նա աշխատել է Իրինդի կոլտնտեսությունում, որպես նախագահի օգնական: Իրինդում անցկացրած օրերի մասին Դաշտենցը գրել է «Ավ. Իսահակյանը Թալինի Իրինդ գյուղում» հուշը:*

[4] *«Դավիթ Բեկ» 94 րոպեանոց կինոֆիլմը (ռեժիսոր և սցենարի հեղինակ՝ Համո Բեկնազարյան, երգերի տեքստի հեղինակ՝ Ավետիք Իսահակյան, երաժշտությունը՝ Աշոտ Սաթյանի, մոնտաժի ասիստենտ՝ Վիգեն Իսահակյան...) ստեղծվել է 1943 թ., պրեմիերան եղել է Մոսկվայում, 1944 թ. փետրվարի 14-ին: Ֆիլմի համար գրված Ավ. Իսահակյանի առաջին բանաստեղծությունը՝ «Ժողովրդի երգը» տպագրվել է «Սովետական գրականություն», Երևան, 1943, թ. 4-5, էջ 18:*

[5] ***Մխիթար Դավթյան*** *(1902-1978) – մշակութային գործիչ, 1937-1972 թթ. տնօրեն է եղել մշակութային տարբեր օջախներում (թատրոն, «Հայֆիլմ» կինոստուդիա, «Հայաստան» հրատարակչություն):*

362. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՑԱՆՑԻՆ
(էջ 469)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 47:

Առաջին անգամ հրապարակել է Հ. Հովհաննիսյանը «Վարպետի նամակները» խորագրով «Սովետական Հայաստան», 1975, թ. 9, էջ 9-10, այնուհետև՝ Աիեժ 1979, էջ 363-364:

[1] *Հ. Խաչատրյանցը Ավ. Իսահակյանին 1943 թ. հոկտեմբերի 8-ի նամակում գրում է, որ Ծադեևը չատ է զարմացել՝ իմանալով, որ Ավ. Իսահակյանի անունը չկա Ստալինյան մրցանակ ստացողների ցուցակում՝ համարելով դա մեծ բացթողում. «Հուսով է, գալիք տարի առաջին հերթին քո թեկնածությունն կառաջադրվի»:*

[2] *Նկատի ունի Հրաչյա Գրիգորյանին, որը 1942-1944 թթ. ՀԿԿ կենտկոմի մամուլի բաժնի վարիչն էր, միաժամանակ՝ ռուսերեն «Կոմունիստ» թերթի խմբագիրը: Նամակում հիշատակված թարգմանությունները տպագրվել են «Կոմունիստ» թերթում 1945 թ. հուլիսին, երբ թերթի խմբագիրն էր դրամատուրգ Արամ Պապայանը (1918-1945):*

363. ՍՈՖԻԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ

(էջ 470)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 878-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 364:

364. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 471)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 883-II:
Տպագրվում է առաջին անգամ:
Մաթևոս Հովսեփյան *– Իրինդի կոլտնտեսության նախագահ, որի տեղակալը Խաչիկ Դաշտենցն էր:*

365. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 472)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 883-II:
Տպագրվում է առաջին անգամ:
Օգոստոսի 30-ի ծրարով ուղարկված նամակից հետո, Ավ. Իսահակյանը հաջորդ օրը գրել է նույնաբովանդակ բացիկ-նամակ (բաց նամակ), քանի որ նամակները ճանապարհին կորում էին, տեղ չէին հասնում:

366. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 472)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 883-II:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] այժմ՝ Բազմաբերդ:

[2] այժմ՝ Սասնաշեն:

[3] Ավ. Իսահակյանի «Սասունցի կոլտնտեսականների մոտ» հոդվածը տպագրվել է «Մարտիկ», Երևան, 1943, 30 սեպտեմբեր:

*[4] **արմենՏԱԳ** – հապավում՝ արմյանսկոյե տելեգրաֆնոյե ագենտսվո:*

367. ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻՆ
(էջ 473)

Ինքնագիրը պահվում է ՌԳԸԱ:

Առաջին անգամ կրճատումով հրապարակել է Սերգեյ Դարոնյանը «Գրական թերթ», 1948, 30 հունվար, թիվ 5, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 342:

*[1] **Անտոնիո Բարիլլի** (1836-1908) – գրող, հրապարակախոս, «Սեմիրամիդա» (Շամիրամ) սիրային վեպի հեղինակ: Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հանդեսում 1875 թ. տպագրվել է այս վեպի հայերեն թարգմանությունը:*

368. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ
(էջ 474)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 209, թ. 1:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թ. 1, էջ 85:

***Գևորգ Զ. Զորեքչյան** (1868, Նոր Նախիջևան - 1954, Էջմիածին) – 1879-1889 թթ. սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, 1889-*

1894 թթ.՝ ուսանել է Լայպցիգի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում և Լայպցիգի կոնսերվատորիայում, 1922-1927 թթ. եղել է Վիրահայոց թեմի առաջնորդ, 1938 թ. Խորեն Մուրադբեգյանի մահից հետո դարձել է Էջմիածնի գործերի ղեկավար, 1941 թ.՝ կաթողիկոսական տեղապահ, 1945-1954 թթ.՝ Ամենայն Հայոց կաթողիկոս: Գ. Զորեքչյանը դեռևս ուսանողական տարիներից ընկերական հարաբերություններ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ:

[1] ***Արսեն արքեպիսկոպոս Ղլտճյան*** *(1868, Ալեքսանդրոպոլ - 1943, Վաղարշապատ) – հայ իրավագետ, հոգևոր գործիչ, Էջմիածնի հոգևոր խորհրդի անդամ, Ավ. Իսահակյանի մորեղբոր որդին: Նա 1894 թ. ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ընկերացել Հովհ. Թումանյանի հետ, 1907-1913 թթ. Եվրոպայում ստացել է իրավաբանական կրթություն, 1920-1928 թթ. ընտանիքով ապրել է Փարիզում, 1929 թ. վերադարձել է Էջմիածին, օծվել եպիսկոպոս և գնացել Պարսկաստան՝ որպես հայ համայնքի հոգևոր առաջնորդ, 1941-1943 թթ. արքեպիսկոպոս Ղլտճյանը եղել է Շիրակի թեմի առաջնորդը: Նա վարել է եկեղեցական տարբեր պաշտոններ, գրել է իրավագիտական չատ մենագրություններ:*

369. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՑԱՆԻՆ

(էջ 475)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 29-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 343:

370. Լ<ԵՎՈՆ> ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 476)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 254-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Լևոն Մելիք-Շահնազարյանը գրող, սատիրիկ Մելիք-Շահնազարյան Կոստանդինի (Տմբլաչի Խաչան, 1857-1940) որդին էր: Նա պա-

տերազմի տարիներին եղել է Երևան քաղաքի ռազմական կայազոր-ային հոսպիտալի գլխավոր բժիշկը: Նրա դուստրը՝ Թամարա Մելիք-Շահնազարյանը եղել է օպերային երգչուհի:

371. <ՎԱՀԵ ՎԱՀՑԱՆԻՆ>
(էջ 477)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Վահե Վահյանի ֆոնդ, 317:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 244-245:

***Սարգիս Ապտալյան** (Մեհյան Սարգիս, Պողպատ Ս., Վ. Վ., Վահե Վահյան ծածկ., 1908, Սեբաստիա - 1998, Բեյրութ) – բանաստեղծ, խմբագիր մանկավարժ, 1934 թ. մանկավարժությամբ է զբաղվել Բեյրութի դպրեվանքում, 1935 թվականից՝ Կիպրոսի Մելքոնյան վարժարանում, 1946 թ. Բեյրութում հիմնել է «Անի» գրական ամսագիրը:*

Նամակի ծրարի վրա գրված է՝ Կիպրոս, Նիկոսիա, Վահե Վահյանին:

Նամակի տեքստում ազգանվան փոփոխությունը հավանաբար արվել է չբացահայտվելու նկատառումով: Նամակի լուսանցքում այլ ձեռագրով հուշում կա՝ Բ. Մարգարեան անունին ետևն թաքնուած է Ս. Ապտալեան (Վահե-Վահեան):

[1] Նամակը գրվել է Նիկոսիայի «Հայաստանի բարեկամներ» միության կողմից:

[2] Խոսքը վերաբերում է 1943 թ. սփյուռքահայության կազմակերպած հանգանակության աշխատանքներին: Սփյուռքահայության հանգանակած միջոցներով ստեղծվել է «Սասունցի Դավիթ» առաջին տանկային չարասյունը, որը 1944 թ. սկզբին մարտերի մեջ է մտել՝ Մերձբալթյան ռազմաճակատի (հրամանատար՝ Հ. Բաղրամյան) 119-րդ տանկային գնդի կազմում: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Սփյուռքի մեր հայրենակիցները՝ 30.000-ից ավելի հայեր, Եվրոպայում մարտնչում էին ֆաշիստական Գերմանիայի դեմ՝ թե ճակատում, թե պարտիզանական պայքարում:

[3] Всесоюзная организация культурных связей ☐ВОКС.

[4] 1941 թ օգոստոսին Սովետական Հայաստանի մտավորականությունը սփյուռքահայությանը դիմել էր հատուկ կոչով. «...կոչ ենք ա-

նում համախմբել ձեր բոլոր ուժերը Հանուն Սովետական Միության պաշտպանության, Հանուն ամբողջ մարդկության խարդախ ու վտանգավոր թշնամու՝ ֆաշիզմի ոչնչացման...» («Սովետական դրականություն», 1941, օգոստոս, էջ 5): Կոչը լայն արձագանք է գտել հայկական բոլոր գաղթօջախներում: Տարբեր գաղթօջախներում ստեղծվել են առաջադիմական կազմակերպություններ, ինչպես ԱՄՆ-ում՝ «Ամերիկայի հայերի ազգային խորհուրդը», Ֆրանսիայում՝ «Հայերի ազգային ճակատը», Նիկոսիա քաղաքում՝ «Հայաստանի բարեկամների միությունը» և այլն:

372. Տ<ԻՐԱՆ> ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

(էջ 478)

Ինքնագիրը պահվում է Տ. Մարությանի ընտանեկան արխիվում: Առաջին անգամ տպագրվել է Տ. Մարության «Օրեր, տարիներ» գրքում (Երևան, 1999):

Տիրան Մարության *(1911, Վանաձոր - 2007, Երևան) – հայ ճարտարապետ, 1937 թ. ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության համալսարանը, Հայրենական պատերազմի տարիներին՝ 1942-1946 թթ. իր մասնագիտական ունակություններով ծառայել է Սովետական բանակում (Անդրկովկասյան ճակատ): Տ. Մարությանը ճարտարապետության պատմության և տեսական հարցերի շուրջ գրել է մի քանի ծավալուն մենագրություն:*

[1] Տ. Մարությանը հիշում է. «...1943 թ. ֆրոնտից արձակուրդ եկողներին պահեցին-ազատեցին, մինչ ինձ նույն 1943 թ. ուղարկեցին Զակֆրոնտ – այստեղ չփորձեցին պահել»: Նամակում խոսվում է արձակուրդից հետո Մարությանի ռազմաճակատ վերադառնալու փաստի մասին:

[2] Տ. Մարությանը մեծ սեր է ունեցել գրականության հանդեպ և ստեղծագործել է դպրոցական տարիներից սկսած, 1935-1937 թթ. մասնակցել է Հայաստանի Գրողների միությանը կից Գրական համալսարանի դասընթացին, արժանացել Ավ. Իսահակյանի սիրուն և ուշադրությանը: Հետագայում նրա բանաստեղծությունները տպագրվել են:

373. ՊԱՀԱՐԵԻՆ
(էջ 479)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 348:

[1] Գրականագետ Գուրգեն Հովնանը զբաղվել է հայ-ռուսական գրական կապերով, հիմնադրել և խմբագրել է «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» մատենաշարը:

[2] Այս մասին տեղեկատվություն տրվեց 1943 թ. նոյեմբերին (Академик А. С. Исаакян [Первый состав действительных членов Академии наук Арм. ССР]. □«Коммунист», Ереван, 1943, 26 ноября).

*[3] **Իսահակ Ալիխանյան** (1876-1946) – դերասան, 1923 թ.՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ:*

*[4] **Արմեն Տիգրանյան** (1879-1950) – կոմպոզիտոր, խմբավար:*

*[5] **Մարիամ Մոճուլյան** (1904-1972) – հայ դերասանուհի, 1958 թ.՝ Վրացական ԽՍՀ ժողովրդական արտիստուհի:*

374. ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՑԻՆ
(էջ 480)

Ինքնագիրը պահվում է Վրաստանի ԳԱ կից ժողովուրդների պատմության թանգարանում, Կ. Գամսախուրդիայի ֆոնդում:

Առաջին անգամ հրապարակել է Գուրգեն Հովնանը «Գրական թերթ», Երևան, 1984, թ. 3, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 346:

[1] Հայաստանի Գիտությունների ակադեմիան հիմնադրվել է 1943 թ. նոյեմբերի 25-ին՝ 1935 թվականից գործող ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիման վրա: Առաջին նախագահը եղել է Հովսեփ Օրբելին (1943-1947), Ավ. Իսահակյանի անունը գրանցված է ՀԳԱ հիմնադիր 23 ակադեմիկոսների ցանկում:

375. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 481)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 883-II:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 365:

376. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 483)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 30-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 349:

[1] Խոսքը վերաբերում է Աբասի որդուն՝ Իսահակ Իսահակյանին՝ Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր թոռին: Նրա ծնողները՝ Աբասը և Արմենուհին, աքսորավայրում էին՝ Միջին Ասիայում, իսկ ինքը պատերազմի դժվարին տարիներին ապրել է մորաքրոջ տանը, Լենինականում:

377. Լ<ԵՎՈՆ> ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ
(էջ 483)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 255-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Մելիք-Շահնազարյան Լևոն Կոստանդինովիչը Հայրենական պատերազմի տարիներին Երևանի կայազորային հոսպիտալի ղեկավարն էր, գլխավոր բժիշկը:

[1] Հակոբ Կպրյան (1923-1982) – Ավ. Իսահակյանի հարսի՝ Բելլայի կրտսեր եղբայրը, որ պատերազմից հետո ուսումը շարունակել է Բժշկական ինստիտուտում: Նա երկար տարիներ աշխատել է որպես զինվորական բժիշկ, ունեցել է մայորի կոչում:

378. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ
(էջ 484)

Ինքնագիրը պահվում է ՌԶՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 350:

[1] Ավ. Իսահակյանի «Հովհաննես Հովհաննիսյան (Հուշեր)» հոդվածը տպագրվել է «Սովետական գրականություն և արվեստ», 1944, թ. 9, էջ 59-60: Հետագայում այս հուշը ներառվել է Վարպետի «Իմ

հուշերից» գրքում (Երևան, Հայպետհրատ, 1946, 80 էջ), որի խմբագիրը Ռ. Զարյանն էր:

[2] Ռուբեն Զարյանը 1941-1944 թթ. «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էր և Իսահակյանից խնդրել էր հուշեր գրել Հ. Հովհաննիսյանի մասին:

379. ՌՈՒԲԵՆ ԳՑԱՆՋԵՑՑԱՆԻՆ
(էջ 485)

Ինքնագրի սևագիր տարբերակը պահվում է ԱԻԳԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

***Ռուբեն Գյանջեցյան** (1885-1954) – Ֆրանսիայում կրթություն ստացած թերապևտ-բժիշկ, 1935 թ.՝ պրոֆեսոր, 1941 թ.՝ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, 1933-1954 թթ. Երևանի Բժշկական ինստիտուտի թերապիայի ամբիոնի վարիչ, 1938-1941 թթ. ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1944-1945 թթ.՝ Բժշկական ինստիտուտի տնօրեն: Նրա անունով է կոչվում Դիլիջանի թիվ 1 առողջարանը:*

[1] Տես 377-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը:

380. ԽՈՐԵՆ <ՍԱՐԳՍՑԱՆԻՆ>
(էջ 486)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 955, ց. 1, գ. 226, թ. 3:

Տպագրվում է առաջին անգամ:

Խորեն Սարգսյանը 1944 թ. Գիտությունների Ակադեմիայի Գրականության ինստիտուտի տնօրենն էր:

381. ԱՇՈՏ <ԳՐԱՇԻԻՆ>
(էջ 486)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 129, թ. 8-9:

Առաջին անգամ հրապարակել է Յ. Հովհաննիսյանը «Սովետական գրականություն», 1975, թ. 10, էջ 123, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 367-368 և «Բանբեր Հայաստանի արխիվների», 2004, թ. 1, էջ 94-95:

[1] *Աշոտ Գրաչի, «Կռունկ (Բանաստեղծություններ և պոեմներ)», Բաքու, 1944:*

[2] *Ավ. Իսահակյանը շատ հայերի նման Հայրենական մեծ պատերազմի օրերին ապրում էր Արևմտյան Հայաստանը վերադարձնելու հույս ու հավատով:*

382. ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

(էջ 488)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հովիկ Մելիքյանի ֆոնդ, 192:

Հովիկ Մելիքյանը (1902-1953) խորհրդային բանակում 1941-1944 թթ. ծառայելուց հետո Երևանում շարունակել է դասախոսել Երևանի պետական համալսարանում, աշխատել ԳԱ Գրականության ինստիտուտում: Նա կազմել է Կռիլովի առակների հայերեն ժողովածուն՝ Իվան Կռիլով, «Առակներ (Հատընտիր)», Երևան, Հայպետհրատ, 1944, 125 էջ: Գրքի խմբագիրը Ավ. Իսահակյանն էր:

[1] *Նկատի ունի երգիծաբան գրող և թարգմանիչ Աշոտ Փալանջյանին (Աշփալ, Աշֆալ ծածկ., 1895, Կարս-1979, Երևան), որն 1944 թ. աշխատում էր «Սովետական Հայաստան» օրաթերթում: Ռուս գրողներից նա թարգմանել է Ն. Գոգոլին, Ա. Չեխովին, Մարշակին:*

383. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ

(էջ 488)

Ինքնագիրը (բացիկ) պահվում ԱԻՏԹ, 9818:

Առաջին անգամ հրապարակվել է ԱԻԵԺ 1979, էջ 366-367, ապա՝ Իրմա Սաֆրազբեկյանը, Գարուն, 1992, թ. 7, էջ 5:

1944 թ. սեպտեմբերին Ավ. Իսահակյանը հանգստացել է Թումանյանի ծննդավայր Դսեղ գյուղում, որտեղ նրան հյուրընկալել է Հ. Թումանյանի դուստրերից Սեդա Թումանյան-Սաֆրազբեկյանը:

[1] *Մեջբերումը Սայաթ Նովայի «Աշխարհըս մե փանջարա է...» խաղից է:*

384. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ
(էջ 489)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 365-366, ապա՝ Իրմա Սաֆրազբեկյանը, Գարուն, 1992, թ. 7, էջ 5:

*[1] **Նվարդ Թումանյան** (1892-1957) – գրականագետ, Հ. Թումանյանի դուստրը, Մուշեղ Աղայանի կինը: Նա աշխատել է Երևանում՝ Գիտությունների ակադեմիայում, Գրական թանգարանում:*

385. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ
(էջ 490)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 9817:

Առաջին անգամ հրապարակել է Իրմա Սաֆրազբեկյանը, Գարուն, 1992, թ. 7, էջ 5:

*[1] **Մանուկ Աբեղյան** (1865-1944) – հայագետ, գրականագետ, լեզվաբան, բառարանագիր, բանահավաք: Կրթություն է ստացել Գևորգյան ճեմարանում, 1893-1895 թթ.՝ Ենայի, Լայպցիգի, Բեռլինի համալսարաններում, 1895-1896 թթ.՝ Սորբոնի համալսարանում, 1898 թ. Ենայի համալսարանում գիտությունների դոկտորի աստիճան է ստացել «Հայ ժողովրդական հավատալիքը» աշխատության համար: Մեծ է նրա ավանդը հայ ժողովրդական երգերի, առասպելների, «Սասնա ծռեր» էպոսի պատումները հավաքելու և ուսումնասիրության բնագավառում: Վաստակաշատ բանասերի մասին Իսահակյանը ասել է. «Ի՞նչ էր մեզ համար նա. հայկական ավանդությունների մարմնացում, գիտնական բառիս ամենախորին իմաստով, անվախ, աննախապաշար...»: ՀԽՍՀ ակադեմիկոս Մ. Աբեղյանը վախճանվել է Երևանում, 1944 թ. սեպտեմբերի 25-ին:*

386. ԿԱՐԱՊԵՏ <ՊԵՏՐՈՍՑԱՆԻՆ>
(էջ 491)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 32-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 352:

Կարապետ Պետրոսյանը Լենինականի քաղխորհրդի նախագահի տեղակալն էր:

[1] Նկատի ունի Գրողների միության Լենինականի մասնաճյուղի նախագահ գրող Անդրանիկ Հովսեփյանին:

387. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 491)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 368:

*[1] **Լյուսի Թարգյուլ** (Թարգուլյան 1905, Վան-1955, Երևան) – հայ արձակագիր, թարգմանիչ:*

[2] Խոսքը բանաստեղծի հավերժ սիրելի Շուշիկի, Շուշանիկ Մատակյանի մասին է, որն ամուսնացած էր մանկավարժ Հովհաննես Տեր-Միրաքյանի հետ: Շուշիկը մահացել էր 67 տարեկանում, 1944 թ. հոկտեմբերի 16-ին:

[3] Նկատի ունի Լենինականի քաղխորհրդի նախագահի տեղակալ Կարապետ Պետրոսյանին:

388. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 492)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 30- III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 353:

1945

389. ՊԱՀԱՐԵԻՆ
(էջ 493)

Հեռագիրը պահվում է ԳԱԹ, Պահարեի ֆոնդ, 169:

[1] *Շնորհավորական հեռագիրը տրված է Պահարեի (Հայկ Սարգսյան, ծնվ. 1895, 25 փետր.) ծննդյան 50-ամյակի առթիվ:*

390. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ
(էջ 493)

Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, Հովհ. Ղանալանյանի ֆոնդ, 34:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 355:

[1] ***Արեչյան Սալոմե*** *(1913-1966) – գրականագետ, 1943-1946 թթ. եղել է ՀԿԿ կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչը:*

[2] ***Հարություն Մկրտչյան*** *(1903-1992) – արձակագիր, գրականագետ, 1945 թ. «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիրը:*

[3] *1945 թ. Հայպետհրատում հրատարակվել է Ավ. Իսահակյանի «Արձակ էջեր» գիրքը (խմբագիրը՝ Ռ. Զարյան, 160 էջ), իսկ 1947 թ.՝* «Избранная проза» [Перевод с арм. Я. С. Хачатрян], Ереван, Армгиз, 1947, 111 стр.

Երկու գրքերն էլ տպագրվել են առանց առաջաբանի՝ կենտկոմի ագիտացիայի բաժնի վարիչ Ս. Արեչյանի որոշմամբ: Մինչև տպագրությունը Ավ. Իսահակյանի և հրատարակչության միջև համաձայնություն է եղել, որ գրքի առաջաբանը պիտի գրեր Հովհ. Ղանալանյանը:

[4] *Ինքնագիրը (նախորդ նամակի չարունակությունը) պահվում է ԱԻՏԹ, 1689:*

Նամակի վերջում ավելացված այս պարբերությունը Հ. Ղանալանյանի ձեռագրով է: Հարցերին Ավետիք Իսահակյանը պատասխանում է նույն թերթի վրա:

[5] *Ավ. Իսահակյանի «Մեծ ճշմարտությունը» գրվել է 1931 թ. Փարիզում, առաջին անգամ տպագրել «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1931, ապրիլի 4, թ. 14, էջ 427: Այն ընդգրկված է 1945 թ. տպագրված «Արձակ էջեր» առանձին գրքում:*

[6] *Ավ. Իսահակյանը «Ամենասիտանի բանը» գրույցը՝ «Հայկական առակ» ենթախորագրով գրել է 1904 թ.: Այն առաջին անգամ*

տպագրվել է «Հասկեր», 1906, թ. 2, էջ 63-65: Առակը չի ընդգրկվել 1945 թ. տպագրված «Արձակ էջեր» (խմբ. Ռ. Զարյան) գրքում:

[7] Թատերական գործիչ, դրամատուրգ Էմին Տեր-Գրիգորյանը (1855-1939) նույն թեմայով մշակել է «Դժոխային պայման (կյանքից մի առակ)» չափածո երկը («Լումա» հանդես, Թիֆլիս, 1901, գիրք Բ, էջ 396-423):

391. ԼՈՒՍԻԿ ՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 494)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

***Լուսիկ Սարյան** (1893, Թիֆլիս - 1974, Երևան) – գրող Ղազարոս Աղայանի դուստրերից մեկը և նկարիչ Մարտիրոս Սարյանի կինը: Արվեստագետների շրջանում քիչ են պատահում ամուսնական զույգի սիրո և հավատարմության նման օրինակներ, ինչպիսին Սարյաններն էին: Նրանք ունեցել են երկու որդի՝ գրականագետ Սարգիս Սարյանը և կոմպոզիտոր Ղազարոս Սարյանը: 1945 թ. Մարտիրոս և Լուսիկ Սարյանները գտնվում էին Մոսկվայում իրենց ուսանող որդու՝ Սարիկ Սարյանի մոտ:*

[1] Տարևթիվը՝ ըստ բովանդակության:

[2] Վարսիկը հայ պատմաբան Կարեն Յուզբաշյանի (1927-2009) մայրն էր: Նա, Սոֆյա Իսահակյանը և Լուսիկ Սարյանը մոտ ընկերուհիներ են եղել:

[3] Ավետիք Վիգենի Իսահակյանը ծնվել է 1944 թ. նոյեմբերի 27-ին, կես տարին լրացել է 1945 թ. մայիսի 27-ին: Ըստ այս փաստի ենք թվագրել նամակը:

[4] Խոսքը քանդակագործ Այծեմնիկ Ուրարտուի մասին է, որն այդ օրը Իսահակյանների ընտանիքում հյուրընկալված հյուրերի մեջ էր:

392. «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

(էջ 495)

Արտատպվում է «Ժողովուրդ», Փարիզ, 1945, օգոստոսի 19:

«Ժողովուրդ» թերթը՝ ֆաշիզմի դեմ պայքարող «Հայ Ազգային ճակատի» օրգանը, տպագրվել է Փարիզում, 1944-1948 թթ.:

[1] Ավ. Իսահակյանն էլ, ինչպես ողջ հայ ժողովուրդը, հավատում էր, որ Սովետական Միությունը հաղթանակի դեպքում, թեկուզ մասամբ, Թուրքիայից հետ կվերցնի Արևմտյան Հայաստանի հողերը՝ Ղարսն ու Արդահանը: Այդպիսի հույսեր ծնվել էին 1940 թ. և 1945 թ., և այդ հույսերով հայ ժողովուրդը տոգորված էր Մեծ հայրենականի տարիներին:

393. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

(էջ 496)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 30-III: Միայն վերջին նախադասությունն է Ավ. Իսահակյանի ձեռքով գրված:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Հավանաբար խոսքը գրականագետ և թատերագետ Սուրեն Հարությունյանի մասին է:

[2] Խոսքը Ավ. Իսահակյանի 70-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյի մասին է, որ կայացել է Լենինականում, 1945 թ. հոկտեմբերի սկզբին: Հանդիսավոր երեկոյի բացման խոսքն ասել է հոբելյանական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Հովսեփյանը:

[3] Շմավոն Առուշանյանը 1938-1946 թթ. Լենինականի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղարն էր, նրա տեղակալն էր Կարապետ Պետրոսյանը:

394. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՑԱՆԻՆ

(էջ 497)

Ինքնագրի պատճենը պահվում է ԳԱԹ, ՀՂՖ, 35:

[1] Խոսքը վերաբերում է 1945 թ. Մոսկվայում Ս. Խիթարովայի ջանքերով հրատարակված «Избранные стихи» (авторизованные переводы с армянского) *236 էջանոց գրքին:*

[2] ***Ամատունի Բարսեղյան*** *(1904-1987) – մշակութային գործիչ, լրագրող, մշակութային խնդիրներին վերաբերող հոդվածներով հանդես է եկել հայ և ռուս մամուլում:*

395. ՌՈՒԶԱՆՆԱ <ՎԱՐԴԱՆՑԱՆԻՆ>

(էջ 497)

Լուսանկարը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, լուսանկարների բաժին:
Տպագրվում է առաջին անգամ:

Ռուզաննա Վարդանյան *(1898, Շամախի - 1957, Երևան) – հայ դերասանուհի և ասմունքող, 1927 թվականից Գ. Սունդուկյանի անվան թատրոնի դերասանուհի, 1945 թվականից՝ ժողովրդական արտիստուհի: Նա բեմադրիչ Վավիկ Վարդանյանի քույրն էր, գեղանկարիչ Խաչատուր Եսայանի կինը: Մահացել է հարազատ թատրոնի բեմի վրա՝ Ավ. Իսահակյանի «Բինգյոլ» բանաստեղծությունն արտասանելիս, երբ նշվել է դերասանուհի Սիրանույշի ծննդյան 100-ամյակը:*

Ավ. Իսահակյանը այս երկտող-մակագրությունն արել է իր լուսանկարի վրա և նվիրել Ռուզաննին՝ ժողովրդական արտիստուհու կոչում ստանալու կապակցությամբ:

1946

396. ՋԱՊԵԼ ՊՈՑԱՃՑԱՆԻՆ

(էջ 498)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 420, ց. 52, գ. 17, թ. 1-2:

Առաջին անգամ հրապարակել է Զ. Հովհաննիսյանը «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1985, թ. 8, էջ 74-75, այնուհետև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թ. 1, էջ 85-86:

Պոյաճյան Զապել *(1872-1957) – լոնդոնահայ նկարիչ, գրող, թարգմանիչ: Ավ. Իսահակյանը նրան ճանաչել է դեռ 1924 թվականից, երբ Վենետիկում ծանոթացել է նրա հետ: Իսահակյան ընտանի-*

քը Զ. Պոյաճյանին հյուրընկալել է իր տանը և՛ Վենետիկում, և՛ Սովետական Հայաստանում:

*[1] **Աղավնի Մեսրոպյան** (1881, Պոլիս - 1954, Երևան) – դաշնակահարուհի, 1906 թ. երաժշտական կրթությունը ստացել է Լոնդոնում, մտերմացել տեղի հայ համայնքի հայտնի դեմքերի՝ Զ. Պոյաճյանի, Րաֆֆու ընտանիքի անդամների հետ: Երևանում ապրելիս Ա. Մեսրոպյանը երկար ժամանակ նամակագրական կապ է պահպանել նրանց հետ:*

[2] Հավանաբար նկատի ունի Լոնդոնի հայ համայնքի անդամ, Մայր Աթոռի բարերար Սարգիս Քյուրքճյանին, որի հետ Վարպետը հանդիպել է Ս. Էջմիածնում: Նրանք եղել են նույն հանձնաժողովի անդամ 1955 թ. կաթողիկոսական ընտրությունների ժամանակ:

[3] Նկատի ունի 1916 թ. «Նյու Յորքում» հրատարակված «Հայկական լեգենդներ և պոեմներ» անգլերեն թարգմանությամբ անթոլոգիան, որը կազմել և նկարազարդել էր Զապել Պոյաճյանը: Գրքում զետեղված են Ավ. Իսահակյանից հինգ բանաստեղծություն: Գրքի առաջաբանը գրել է Րաֆֆու կրտսեր որդին՝ Արամ Րաֆֆին:

[4] Նկարչուհի Մոշելեսի անունն առաջին անգամ հանդիպում ենք Ավ. Իսահակյանի 1924 թ. դեկտ. 1-ին Սարգիս և Վավա Խաչատրյաններին ուղղված նամակում (տես 49-րդ նամակի 1-ին ծանոթությունը):

[5] Ավ. Իսահակյան «Աբու-Լալա Մահարի (Պոեմ)», թարգմանիչ Զապել Բոյաճյան, Նյու Յորք, 1948, Ամերիկահայ առաջնորդարանի հոբելյանական ժողովածու, էջ 40-48: Այն վերահրատարակվել է 1958 թ. Նյու Յորքում, 1975 թ. Երևանում:

397. ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՑՈՑ ԹԻՎ 5 ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ

(էջ 500)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 231-Ի:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան», 1975, թ. 9, էջ 10, այնուհետև՝ ԱԻԵԺ 1979, էջ 369:

Մինչև հիմա գործող Թիֆլիսի թիվ 104 հայկական դպրոցը կառուցվել է մոտ 80 տարի առաջ, Աթոնելի փողոցի թիվ 5 հասցեում՝ Վանքի տաճարի (փլուզված 1938 թ.) տարածքում:

398. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ
(էջ 501)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 209, թ. 2-3:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, թ. 1, էջ 86:

1945-1954 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ջորեքչյանը ջերմ հարաբերություններ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ՝ դեռ 1900 թ. Լայպցիգում ուսանելու տարիներից սկսած:

[1] Կաթողիկոսը ընդառաջել է Ավ. Իսահակյանին: Գևորգ Վաթյանը աշխատանքի է անցել Ս. Էջմիածնում, դարձել Շիրակի թեմի առաջնորդ: (Գևորգ Ծ. վ. Վաթյան, «Լույսի հաղթանակը», «Ս. Էջմիածին», 1955, ԺԲ (4), էջ 24-25):

399. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ
(էջ 501)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ. Հովնանի ֆոնդ:

Տպագրվել է Գ. Հովնանի «Ավետիք Իսահակյան» գրքում, Երևան, «Հայաստան», 1976, էջ 80-84, ապա ԱԻՆ 2016, էջ 360-361:

Գուրգեն Հովնանը Հայրենական պատերազմից հետո 1946-1964 թթ. աշխատել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտում, նախ՝ գրական կապերի բաժնում, ապա տնօրեն (1954-1964): Գ. Հովնանը Ավ. Իսահակյանի մասին տեղեկություններ է հավաքել իր գրելիք հոդվածի համար: Նա ունի մենագրություն Վարպետի մասին՝ «Ավետիք Իսահակյան», Երևան, «Հայաստան», 1976 թ.:

[1] Կարապետ Կոստանյանը (1853-1920) Ավ. Իսահակյանին դասավանդել է միջնադարյան մատենագրություն, գրաբար:

[2] *Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը (1864-1929) Գևորգյան ճեմարանում Իսահակյանին դասավանդել է ռուսաց լեզու, հունարեն, ոգևորել է իր սանին ստեղծագործական գրական առաջին քայլերն անելիս:*

[3] *Բաֆֆու աշակերտ Լևոն Մանվելյանը (1864-1919) Գևորգյան ճեմարանում Ավ. Իսահակյանին դասավանդել է պատմություն, լեզվագրություն:*

[4] *Ստեփան Լիսիցյանը (1861-1947) ազգագրագետ էր, աշխարհագրագետ, պատմաբան: 1889-1891 թթ. դասավանդել է Գևորգյան ճեմարանում:*

400. ՎԱՀԵ ՎԱՀՑԱՆԻՆ

(էջ 504)

Մեքենագիր տարբերակը (Հայաստանի Սովետական Գրողների Միության բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, Վահե Վահյանի ֆոնդ, 317:

Պաշտոնական այս չրջաբերականից ուղարկվել է նաև Միհրդատ Թիրաքյանին, Անդրանիկ Անդրեասյանին, Զապել Պոյաճյանին:

[1] *Հայաստանի Գրողների միության երկրորդ համագումարը տեղի է ունեցել Երևանում, 1946 թ. սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 1-ը: Համագումարում վարչության նախագահ է ընտրվել Ավ. Իսահակյանը: Հոկտեմբերի 2-ի նիստում ՀԳՄ քարտուղարներ են ընտրվել Հմայակ Սիրասը (պատասխանատու քարտուղար), Գուրգեն Բորյանը և Հրաչյա Քոչարը, «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագիր է նշանակվել Սողոմոն Սողոմոնյանը, «Գրական թերթ»-ի խմբագիր՝ Արշալույս Բաբայանը:*

[2] *Ստորագրված է Ավ. Իսահակյանի ձեռքով:*

401. ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՑԱՆԻՆ

(էջ 505)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հովսեփ Կուսիկյանի ֆոնդ, 799:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 363:

Հովսեփ Կուսիկյան *(1890, Մոսկվա–1964, Մոսկվա) – հայ լեզվաբան, բյուզանդագետ, դոկտոր-պրոֆեսոր, բանասեր Կարապետ Կուսիկյանի որդին, ապրելով և աշխատելով Մոսկվայում՝ ամեն տարի այցելել է Երևան, դասախոսություններ կարդացել պետական համալսարանում, 1950 թվականից աշխատել է ԽՍՀՄ ԳԱ լեզվի ինստիտուտում:*

[1] *1945 թ. Ավետիք Իսահակյանին չնորհվել է Ստալինյան մրցանակ (առաջին կարգի):*

[2] *Հովհաննես (Օննիկ) Ղանալանյանը 1946 թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա «Ավետիք Իսահակյանի կյանքն ու գործունեությունը» վերնագրով:*

[3] *Հովսեփ Կուսիկյանը աշխատում էր Մոսկվայում, Բարձրագույն որակավորման հանձնաժողովում (ԲՈՀ), որպես Հայաստանի գրախոս-ներկայացուցիչ և հնարավորություն ուներ աջակցելու Հայաստանից գնացած գիտնականներին:*

402. ՄԱՇԱ <ՄԻՐԶԱՑԱՆԻՆ>

(էջ 505)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 1530:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 369-370:

Մաշա Միրզայան *– պարսկահայ գործիչ: Ինչպես երևում է նամակի բնույթից, Ավ. Իսահակյանի և տիկին Միրզայանի միջև ժամանակին եղել են մտերմիկ հարաբերություններ:*

[1] ***Աչոտ Աբրահամյան*** *(1903-1983) – աղբյուրագետ, պատմաբան, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, 1945-1946 թթ. մեծ աշխատանք է կատարել Մերձավոր Արևելքի երկրներում հայրենադարձությունը կազմակերպելու գործում, 1944-1949 թթ. եղել է Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ:*

[2] ***Արամ Երեմյան*** *– պարսկահայ մշակութային գործիչ (մանրամասն տես 14-րդ նամակի 4-րդ ծանոթագրությունը):*

403. <ԴԱՆԻԵԼ> ԴԶՆՈՒՆՈՒՆ
(էջ 506)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 1304, ց. 29, գ. 17, թ. 1:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Դզնունի Դանիել** (Ուզունբաջաղյան, 1895-1967) – արվեստագետ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ: 1921 թ. Ղրիմից եկել է Հայաստան, աշխատել կուսակցական օրգաններում, 1923 թ. եղել է Երևանի առաջին պետական թատրոնի (այժմ Սունդուկյանի անվան) տնօրեն, 1924-1937 թթ.՝ Հայկինոյի տնօրեն, 1945-1949 թթ.՝ Երաժշտական թատրոնի տնօրեն:*

404. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋԵՑԱՆԻՆ
(էջ 507)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 454, ց. 1, գ. 209, թ. 4:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թ. 1, էջ 87:

405. ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻՆ
(էջ 507)

Հեռագիրը (ինքնագիր՝ ուղարկված պնևմատիկ փոստով) պահվում է ԳԱԹ, Ա. Գուլակյանի ֆոնդ, 669:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

***Արմեն Գուլակյան** (1899, Թիֆլիս - 1960, Երևան) – հայտնի թատերական գործիչ, դերասան, ռեժիսոր: Գուլակյանը ստալինյան առաջին մրցանակը ստացել է 1946 թվականին՝ Ալ. Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում Տ. Զուլոաջյանի «Արշակ Երկրորդ» օպերայի ներկայացման բեմադրության համար: Երկրորդ մրցանակը ստացել է 1950 թվականին:*

406. Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻՆ
(էջ 508)

Ինքնագիրը (գրված Գերագույն սովետի դեպուտատի բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 222ա-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 370-371:

[1] Ժողովրդի սիրելի բանաստեղծը՝ Ավ. Իսահակյանը ժամանակ և ջանքեր է գործադրել հայրենադարձության ալիքով Հայաստան եկած ազգակիցներին օգնելու, մասնագետներին աշխատանքի տեղավորելու ուղղությամբ:

407. ԽԱՉՐ ԷԼ ԴԻՆ ԷԼ ԱՍԱԴԻԻՆ
(էջ 509)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

***Խայրադդին ալ Ասադի** (1900-1971) – արաբ մտավորական, որպես արաբերենի ուսուցիչ աշխատել է Հալեպի Հայկազյան դպրոցում, Բարսեղ Զաթոյանի հետ թարգմանել է Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Մահարի» պոեմը:*

[1] «Աբու Լալա Մահարի» պոեմի արաբերեն թարգմանությունն առաջին անգամ հրատարակվել է 1940 թ. (Խայրադդին ալ Ասադիի ներածականով), վերահրատարակվել է 1952 թ.: Պոեմն արաբերեն թարգմանվել է նաև 1975 թ. Նազար Նազարյանի ջանքերով:

408. Ս<ԱՀԱԿ> ՄԱՆՎԵԼՑԱՆԻՆ
(էջ 510)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

Սահակ Մանվելյան *(Մանվել ծածկ. 1916, Թիֆլիս-?) – վրացահայ արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, մասնագիտությամբ ճարտարապետ, 1957 թվականից՝ ԽՍՀՄ Գրողների միության անդամ: Թարգմանել է Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը, ունի պատմվածքների մի քանի ժողովածու: 1947 թ. նա ցանկացել է դառնալ Վրաստանի Գրողների միության անդամ և այդ խնդրով դիմել է Ավ. Իսահակյանին:*

[1] 1947 թ. Վրաստանի Գրողների Միության հայկական սեկցիայի նախագահն էր արձակագիր Վարդան Ատրյանը:

[2] ***Արտաշես Կարինյան*** *(1896, Բաքու - 1982, Երևան) – դրականագետ, կուսակցական ու պետական գործիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս:*

[3] ***Մերուն Թորգոմյան*** *(1896, Վան - 1986, Թիֆլիս) – գրող, մի շարք թերթերի («Հրազդան» գրական ալմանախ, «Կարմիր աստղ») խմբագիր, ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ:*

409. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՑԱՆԻՆ
(էջ 511)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 231 լրացուցիչ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 364-365:

Արարատ Ղարիբյան *(1899-1977) – հայ լեզվաբան, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1943-1950 թթ. և 1956-1962 թթ. ԳԱ Լեզվի ինստիտուտի տնօրեն:*

[1] Այս առումով հետաքրքրական են 1948 թ. Խաչատուր Աբովյանի մահվան 100-րդ տարելիցի կապակցությամբ Ավ. Իսահակյանի գրած «Ժողովրդի լեզուն» («Ավանգարդ», 1948, 25 սեպտ.) և «Խաչատուր Աբովյան» («Գրական թերթ», 1948, 23 սեպտ.) հոդվածները:

[2] Նամակում քննարկվող Գ. Հովնանի կազմած ժողովածուն 1947 թ. չի տպագրվել, այն տպագրվել է 1985 թ., ԵՊՀ հրատարակչությունում՝ «Հայոց լեզու: Բանաստեղծություններ և ասույթներ հայոց լեզվի մասին» վերնագրով:

410. Տ<ԻԳՐԱՆ> ԱԼԵՔՍԱՆՑԱՆԻՆ

(էջ 512)

Ինքնագիրը պահվում է Տիգրան Ալեքսանյանի ընտանեկան արխիվում:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1965, 5 փետրվար (Գրական արխիվ խորագրի տակ, Հրատարակչության տնօրենին), ապա ԱԻԵԺ 1979, էջ 371-374:

Տիգրան Ալեքսանյան *(1906-1977) – հայ փիլիսոփա, 1937-1940 թթ. Կուսհրատարակչության տնօրեն, 1940-1941 և 1959-1976 թթ.՝ Բժշկական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, 1946-1947 թթ.՝ Հայպետհրատի տնօրեն:*

[1] ***Ֆրանց Վերֆել*** *(1890-1945) – ավստրիացի գրող, 1932-33 թթ. գրել է «Մուսա լեռան 40 օրը» վեպը, որը թարգմանվել է աշխարհի ավելի քան 34 լեզուներով, 1934 թ. արժանացել է «տարվա լավագույն վեպ» միջազգային մրցանակին:*

Ավ. Իսահակյանի ժառանգների վկայությամբ նա անձամբ ծանոթ է եղել Ֆ. Վերֆելի հետ:

[2] *Վիեննայի Մխիթարյանների միաբանությունում Ֆ. Վերֆելը ուսումնասիրել է հայոց պատմությունը, ծանոթացել հայ ժողովրդի անցյալին, պատմական տարբեր իրադարձություններին:*

[3] ***Մետրո-Գոլդվին-Մայեր*** *– ամերիկյան կինոարտադրության մեղիաընկերություն, 1924-1942 թթ. Հոլիվուդյան կինոարտադրության առաջատարներից մեկը:*

[4] ***Մամուլյան Ռուբեն*** *(1897, Թիֆլիս - 1987, Լոս Անջելես) – հայազգի ամերիկյան աշխարհահռչակ ռեժիսոր և բեմադրիչ, 20-րդ դարի նորարար կինոռեժիսոր, յոթ տարեկանից ապրել է Փարիզում, 1923 թվականից՝ Ամերիկայում: 1929 թ. սկսել է նկարահանել կինոնկարներ, որոնք առայսօր մնում են կինոարվեստի փայլուն օրինակներ: Ակտիվ ստեղծագործել է 1930-1960-ական թթ. և արժանացել մի շարք մրցանակների: 1968 թ. այցելել է Սովետական Հայաստան:*

[5] *1982 թ. ԱՄՆ-ում նկարահանվել է «Մուսա լեռան 40 օրը» գեղարվեստական ֆիլմը՝ Ալեքս Հակոբյանի սցենարով:*

[6] Նկատի ունի Ֆրանց Վերֆելի «Հայկական հերոսապատում: Մուսա լեռան քառասուն օրերը: Բախտորոշ դիւցազներգութիւն կռիւով, հերոսութեամբ, սիրով և յաղթանակով զեղուն» (թարգմանիչ՝ Երուանդ Անդրեասյան, Սոֆիա, «Մասիս» տպարան, 1935) գիրքը, որը վերահրատարակվել է 1949 թ. Բեյրութում:

[7] Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը ռուսերեն թարգմանությամբ (թարգմ. Նադեժդա Գնեդինա, Վսեվոլոդ Ռոզանով, առաջաբանը՝ Մ. Դուդինի) առաջին անգամ տպագրվել է Երևանում, 1984 թ.:

[8] Հայպետհրատը ցանկացել է կազմակերպել վեպի թարգմանությունը և հրատարակել, բայց դա չի իրագործվել հասկանալի պատճառներով: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» աշխարհահռչակ վեպը գերմաներենից արևելահայերեն է թարգմանել թարգմանիչ Պարույր Միքայելյանը: Վեպը Երևանում լույս է տեսել Էդ. Թոփչյանի առաջաբանով 1964 թ.:

411. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 516)

Ինքնագիրը պահվում է Արա Սարգսյանի ընտանեկան արխիվում:

Տպագրվում է առաջին անգամ:

Արա Սարգսյան (1902, Ստամբուլ - 1969, Երևան) – քանդակագործ, 1921-1924 թթ. սովորել է Վիեննայի Գեղարվեստի ակադեմիայի բարձրագույն դպրոցում, 1924 թ. ընդունել է խորհրդային քաղաքացիություն և 1925 թ. ժամանել Երևան, ուր ստեղծագործել է մինչև իր կյանքի վերջը: Նա 1932 թ. Երևանում հիմնադրեց և նախագահեց Նկարիչների միությունը: 1945 թ. Արա Սարգսյանը դարձավ Երևանի Գեղարվեստի ինստիտուտի հիմնադիրն ու առաջին ռեկտորը:

[1] Նկատի ունի սիրիահայ եղբայրների ձեռագործած պատկերավոր գորգը՝ «1947 Հալեպ Սուրիա: Սարգիս Թորգոմ Ե. Սեֆերեան եղբայրք: Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Ա. Յովսեփեան, կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ» արձանագրությամբ:

412. Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՑԱՆԻՆ
(էջ 516)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:
Ն. Համբարձումյան *– Իսահակյանների ընտանեկան բժշկուհին:*

413. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ
(էջ 517)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 256-I:
Առաջին անգամ տպագրվել է Լևոն Մելիքսեթ-Բեկի «Նյութեր Ավ. Իսահակյանի երկերի լիակատար հրատարակության համար», «Ալմանախ Վրաստանի Սովետական ԳՄ հայկական սեկցիայի», Թբիլիսի, 1960, էջ 363-364, այնուհետև «Իսահակյան-100», Երևան, 1978, էջ 295 և ԱԻՆ 2016, էջ 366-367:

Լևոն Մելիքսեթ-Բեկ *(1890, Թիֆլիս - 1963, Թբիլիսի) – վրացագետ, աղբյուրագետ, բանասեր, թարգմանիչ, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, հայոց պատմություն է դասավանդել Թբիլիսիի, Երևանի, Բաքվի, Քութայիսի պետական համալսարաններում, 1947 թ. աշխատել է նաև Գորիսի մանկավարժական ինստիտուտում:*

[1] Լ. Մելիքսեթ-Բեկի «Ավետիք Իսահակյանը և վրաց գրականությունը» ուսումնասիրությունը տպագրվել է «Տեղեկագիր ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների», Երևան, 1951, թ. 4, էջ 37-46:

[2] 1931 թ. «Աբու-Լալա Մահարի» պոեմի (թարգմ. Տաբիձե) վրացերեն հրատարակության առաջաբանում է գրվել այդ մասին: Ինքնակենսագրական բնույթի այդ առաջաբանում Ավ. Իսահակյանը նկատի է ունեցել ոչ թե կոնկրետ անմիջական ազդեցությունը, այլ բանաստեղծական ռոմանտիկ հերոսի հոգեհարազատությունը, անհատի աշխարհընկալումը:

[3] Առաջին անգամ «Մերանին» ռուսերեն թարգմանել են բանաստեղծ և թարգմանիչ Իվան Ֆելիքսովիչ Տխորժևսկին (1843-1910), և իր կինը՝ Ալեքսանդրա Ալեքսանդրովնան (Պալմ. 1855-1923): Նրանք

համատեղ՝ Իվան դա Մարիա ծածկանունով կազմել են վրացական պոեզիայի ժողովածու («Грузинские поэты в образьах», составили Иван-Да-Марья), *որն առաջին անգամ հրատարակվել է 1889 թ., Պետերբուրգում, երկրորդ լրացված հրատարկությունը՝ 1897 թ., Թիֆլիսում:*

[4] *Ադամ Միցկևիչի (1798-1855) «Ֆարիս» պոեմը լեհերենից հայերեն է թարգմանել Արշակ Զոպանյանը:*

1948

414. ԱՐԵՎ ԲԱՂԴԱՍԱՐՑԱՆԻՆ
(էջ 519)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 23:

Նամակը (գրված Հայպետհրատի բլանկի վրա) տպագրվում է առաջին անգամ:

Արև Բաղդասարյան *(1913, Շուշի - 1994, Երևան) – հայ պարուհի, երգչուհի, 1961 թ.՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի:*

415. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՑԱՆԻՆ
(էջ 519)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 230-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

Աշիկ Ղազարյան *(1904, Կարս - 1962, Երևան) – թարգմանիչ, լրագրող, 1948 թ. Պետհրատի տնօրեն:*

[1] ***Սիմոն Կրկյաշարյան*** *(1923, Ախենք - 2011, Երևան) – թարգմանիչ, աղբյուրագետ, պատմաբան: 1943 թ. մասնակցել է ֆաշիստների դեմ ծավալված պարտիզանական չարժմանը՝ ղեկավարելով երիտասարդական ընդհատակյա կազմակերպությունը: 1947 թ. վերջին ներգաղթել է Հայրենիք: 1950-1955 թթ. աշխատել է Հայպետհրատում՝ որպես թարգմանիչ, ապա՝ ԳԱ պատմության ինստիտուտում: 1957 թ.*

Երևանում հրատարակվել է Հոմերոսի «Ոդիսականը»՝ Ս. Կրկյաշարյանի թարգմանությամբ:

[1] Խոսքը բանասեր և թարգմանիչ Համազասպ Համբարձումյանի մասին է, ում թարգմանությամբ և ծանոթագրություններով 1950 թ. Հայպետհրատում հրատարակվել է «Հույն ողբերգակներ» գիրքը, 1951 թ. Հոմերոսի «Իլիականը»:

416. ՀՄԱՑԱԿ ՍԻՐԱՍԻՆ

(էջ 520)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 888-II (թերի):

Նամակը որոշ կրճատումով հրապարակել է Ռ. Գրիգորյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1979, թ. 3, այնուհետև Հ. Սիրաս, «21 տարի Ավ. Իսահակյանի հետ (հուշեր)», Երևան, 1984 և ԱԻՆ 2016, էջ 368:

***Հմայակ Սիրաս** (Ոսկանյան, 1902-1983) – արձակագիր, թարգմանիչ, 1928-1933 թթ.՝ Լենինականի «Բանվոր» թերթի խմբագիր, 1934-1940 թթ. և 1954-1957 թթ.՝ «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, 1939-1941 թթ. և 1946-1948 թթ.՝ Հայաստանի Գրողների միության վարչության քարտուղար: 1948 թ. նրան փոխարինել է Վարդգես Համազասպյանը, իսկ Սիրասը դարձել է ամսագրի խմբագիր: Հենց այս փոփոխությունների մասին է խոսվում նամակում:*

[1] Նկատի ունի գրող Վահան Գրիգորյանին՝ 1948 թ. «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրի տեղակալ:

[2] Նկատի ունի Վարդգես Համազասպյանին, որ 1948-1951 թթ. Հայաստանի Գրողների միության վարչության պատասխանատու քարտուղարն էր:

[3] Խոսքը գրող Հրաչյա Քոչարի մասին է:

417. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

(էջ 521)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 874-II:

Տպագրվում է առաջին անգամ:

418. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՑԱՆՑԻՆ
(էջ 521)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 48:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 374:

[1] Մոսկվայում հրատարակված «Армянские новеллы» գրքում ներառված էր Հակոբ Խաչատրյանցի թարգմանությամբ Ավ. Իսահակյանի թվով ութ պատմվածք (Մոսկվա, 1945, գիրք I, էջ 107-157): 1947 թ. Ավ. Իսահակյանի երեք արձակ ստեղծագործություն ևս՝ Հակոբ Խաչատրյանցի թարգմանությամբ, տպագրվել է «Армянские новеллы» գրքում (Մոսկվա, 1947, գիրք II, էջ 37-63):

[2] Խոսքը Ав. Исаакян, «Знамя надежды. Рассказы. Пер. с арм. Я. Хачатрянца», Москва, «Правда», 1948, 48 стр. *գրքի մասին է, որում զետեղված են Ավ. Իսահակյանի 4 պատմվածքներ՝ «Գարիբալդիականը», «Հայրենի ծուխը», «Համբերանքի չիբուխը» և «Հույսի աստղ»:*

[3] 1948 թ. Մոսկվայում նշվել է Հ. Խաչատրյանցի կնոջ՝ գրող, հրապարակախոս Մ. Շահինյանի ծննդյան 60-ամյակը

419. Վ<ԱՂԻՆԱԿ>՝ ՄՌԱՎՑԱՆԻՆ
(էջ 522)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 10507:

Նամակը (գրված ՀԳՄ բլանկի վրա) տպագրվում է առաջին անգամ:

***Վաղինակ Մռավյան** (1884-1965) – հայ հեղափոխական գործիչ, դեղագործ, խորհրդայնացումից հետո աշխատել է Հայաստանի առողջապահության ոլորտում, եղել է առողջապահության մինիստրի տեղակալ, դեղատների վարչության պետ:*

[1] Բանաստեղծուհի Արշալույս Մարգարյանը (1914-2008) ամուսնացել է թարգմանիչ Սիմոն Կրկյաշարյանի հետ: 1948 թ. ծնվել է նրանց զավակը՝ Արտաշեսը:

420. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ
(էջ 523)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Իվան Ենիկոլոպովի ֆոնդ, 3:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 369:

[1] 1936-1938 թթ. Լ. Բերիայի անմիջական նախաձեռնությամբ ոչնչացվեցին Խոջիվանքի հայ գերեզմանատան հազարավոր չիրմաքարեր, այնտեղ գտնվող եկեղեցիներ ու մատուռներ: 1940-ական թթ. այդ նույն տեղում հիմնվեց «Բարեկամություն» անունով զբոսայգին: Խոջիվանքի տապանաքարերի ոչնչացումը անհանգստացրեց վրացահայ մտավորականությանը, և որոշվեց նոր պանթեոն ստեղծել: Հետագայում նախկին Խոջիվանքի 32 չիրմաքարերով հիմնվեց այսպես կոչված «Հայ մշակույթի գործիչների պանթեոնը», որտեղ տապանաքարերի մեծ մասը տեղադրված են՝ առանց հողի տակ գտնվող աճյուններին: Պանթեոնի տնօրենը չուրջ 30 տարի Պահարեն էր:

[2] Հակոբ Հակոբյանի (1866-1937) գերեզմանը ևս գտնվում է Վրաստանի Հայ գործիչների Պանթեոնում:

421. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
(էջ 523)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 49:
Տպագրվում է առաջին անգամ:

Մոսկվայում 1945 թ. և 1948 թթ. հրատարակվել են «Հայկական նովելներ» վերնագրով ժողովածուի երկու հատորները, որոնք հետագայում թարգմանվել են 14 լեզուներով: Այս հատորներում ներառված չատ գործեր թարգմանել է Հակոբ Խաչատրյանցը:

422. ՄԵՐԻ <ՍԱՂՑԱՆԻՆ>
(էջ 524)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 234ա-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

Գրականագետ Մերի Սուրենի Սաղյանը 1950-1980 թթ. աշխատել է ԳԱ Գրականության ինստիտուտի նոր գրականության բաժնում, հիմնականում զբաղվել է Պատկանյանների կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ:

[1] «Փորձ» (Թիֆլիս, 1876-1881) – քաղաքական, տնտեսական ամսագիր, խմբագիր՝ Աբգար Հովհաննիսյան:

[2] Կաթողիկոս Գևորգ Զորնքչյանի չանքերով 1945 թ. նոյեմբերին վերաբացվել է Ս. Էջմիածնի ճեմարանը, տպարանը և գրադարանը: Վերջինիս համալրման գործին ակտիվ մասնակցել է նաև Ավետիք Իսահակյանը:

423. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՑԱՆՑԻՆ

(էջ 524)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՀԽՑ, 50:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] 1949 թ. մայիսին Երևանում նշվել է Ա. Ս. Պուշկինի ծննդյան 150-ամյակը: Հոբելյանական հանձնաժողովի նախագահն էր Ավ. Իսահակյանը: Նրա ելույթը՝ «Մեծահանճար Պուշկինը» վերնագրով տպագրվել է «Գրական թերթ», 1949, 5 հունիս և «Անի», Բեյրութ, 1949, թ. 8, էջ 436-438:

[2] Հավանաբար խնդիրներ էին առաջացել հրատարակչության տնօրեն Աշիկ Ղազարյանի և թարգմանիչ Հակոբ Խաչատրյանցի միջև՝ գրքի հոնորարի հետ կապված:

424. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 525)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԱԻՐԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Ավ. Իսահակյանը, որպես Սովետական Հայաստանի պատգամավոր, 1949 թ. օգոստոսին մասնակցել է Մոսկվայում կազմակերպված

խաղաղության կողմնակիցների համամիութենական I կոնֆերանսին և զեկուցում կարդացել («Գրական թերթ», 1949, թ. 31 օգոստոս, «Սովետական Հայաստան», Երևան, 1949, թ. 8, էջ 5-6):

[2] Խոսքը 1945 թ. Վարպետի ծննդյան 70-ամյակի առթիվ Հայաստանի կառավարության նվիրած առանձնատան (Պլեխանովի փողոց, տուն 32) մասին է, որ կառուցվել է ճարտարապետ Պերճանուշ Մսրյանի նախագծով: 1949 թ. Իսահակյանն ընտանիքով բնակության է հաստատել այդ տանը: 1958 թ. կառավարության որոշմամբ դրոշի հիշատակը հավերժացնելու նպատակով առանձնատունը վերածվել է տուն-թանգարանի: Թանգարանը բացվել է 1962 թ.:

*[3] **Վարդանյան Եղիշե** (1905-1958) – խորհրդային կուսակցական և պետական գործիչ: 1947 թվից նա եղել է Երևանի քաղսովետի գործկոմի նախագահը, ապա՝ ՀԽՍՀ չինանյութերի արդյունաբերության նախարարը:*

[4] Նկատի ունի թոռանը՝ Ավիկ Իսահակյանին (ծնվ. 1944 թ.), որ այդ ժամանակ 5 տարեկան էր:

425. <ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ>

(էջ 526)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 271-I:

Տպագրվում է առաջին անգամ:

1945-1954 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զորեքչյանի հետ Ավ. Իսահակյանը մտերիմ է եղել, կիսել նրա հայացքները և ողջունել նրա ակտիվ գործունեությունը՝ կապված Հայկական հարցի հետ: 1945 թ. նորընտիր կաթողիկոսը դիմել է ՍՍՀՄ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի կառավարություններին՝ հայկական հողերը Թուրքիայից հետ ստանալու խնդրանքով, նույն թվականի ապրիլին Ստալինի հետ հանդիպման ժամանակ բարձրացրել է Արևմտյան Հայաստանի խնդիրը, ակտիվ մասնակցություն է ունեցել սփյուռքահայության հետ կապեր հաստատելու և 1946-1948 թթ. հայրենադարձությունը կազմակերպելու գործին, վերաբացել է Գևորգյան հոգևոր ճեմարանը, 1947 թ. ապրիլին հրատարակել է հայտնի կոնդակը «Հայկական հարցի լուծման մասին»:

[1] Ամսաթիվը վերականգնվում է ըստ բովանդակության:

Հայ առաքելական եկեղեցին տարբեր տոներին կից նշում է նաև անվանական տոներ. խաչվերաց տոնի հետ կապված՝ սեպտեմբերի 24-ին, տոնվում է Սուրբ Գևորգ զորավարի անվանակոչության օրը:

426. ՎԱՐԴԱՆ ԱՏՐՑԱՆԻՆ
(էջ 526)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Վ. Ատրյանի ֆոնդ, 140:

Տպագրվում է առաջին անգամ:

Վարդան Ատրյան (1896, Թիֆլիս - 1974, Երևան) – հայ արձակագիր, լրագրող, 1930-1934 թթ. Վրաստանի հայալեզու թերթերի ու ամսագրերի խմբագիր, 1942-1955 թթ. Վրաստանի Գրողների միության հայկական բաժանմունքի նախագահ:

[1] 1929-1930 թթ. «Պրոլետար» թերթում Վարդան Ատրյանը հանդես է եկել Աչոտ Ծածկանունով:

[2] 1949 թ. «Սովետական գրականություն» ամսագրի խմբագրի տեղակալը Վահան Գրիգորյանն էր, խմբագիրը՝ Ռ. Զարյանը:

[3] Խոսքը հավանաբար Վ. Ատրյանի «Հողի ձայնը» վեպի մասին է, որ հրատարակվել է Երևան, Հայպետհրատ, 1959 թ.:

427. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ
(էջ 527)

Ինքնագիրը պահվում է Վ. Մամիկոնյանի ընտանեկան արխիվում, պատճենները պահվում են ԱԻՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 370-371:

Վահան Մամիկոնյան (1900-1961) – մշակութային գործիչ, թարգմանիչ, Մաքսիմ Ռիլսկու քարտուղար: Վ. Մամիկոնյանի թարգմանությամբ ուկրաիներեն լույս են տեսել Շիրվանզադեի «Քաոս», Ն. Զարյանի «Հացավան», Գ. Սևունցի «Գերիները», Հ. Քոչարի «Մեծ տան զավակները» և Վ. Անանյանի «Սևանի ափին» վե-

պերը: Նա մասնակցել է նաև Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների հրատարակման գործին՝ տողացի թարգմանությամբ:

[1] Ուկրաինացի բանաստեղծ Մաքսիմ Ռիլսկին 1941 թ. հոկտեմբերի սկզբին Ավ. Իսահակյանին գրած իր նամակում հայտնել էր, որ Ուկրաինայի պետական հրատարակչական պլանով նախատեսվել է 1950 թ. հրատարակել Ավ. Իսահակյանի հատընտիր ժողովածուն (10.000 տող): Թարգմանությունը հանձնարարվել էր Մ. Ռիլսկուն և Ա. Մալեչկոյին: Ռիլսկին առաջարկել էր Վարպետին ուղարկել նախընտրած գրքերն ու բանաստեղծությունները՝ թարգմանության համար: Միաժամանակ ուղարկել էր ռուսերեն թարգմանած իր բանաստեղծությունների ժողովածուն (Максим Рыльский «Избранное», Москва, Советский писатель, 1949):

[2] Նկատի ունի Ս. Խիթարովայի կազմած և թարգմանած բանաստեղծությունների ռուսերեն ժողովածուն, որ տպագրվել էր 1945 թ., Մոսկվայում:

[3] Նկատի ունի ուկրաինացի թարգմանիչ Անդրեյ Մալեչկոյին, ով Մ. Ռիլսկու հետ թարգմանել է Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները:

428. ՎԵՍՊԵՐԻՆ

(էջ 528)

Ինքնագիրը (գրված ԳԱ նախագահության նիստի արձանագրության 11 մարտ 1949 թվակիր բլանկի վրա, սևագիր, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, Գ.Ֆ, 2713:

Տպագրվում է առաջին անգամ:

Մարտիրոս Դաբաղյան (Վեսպեր ծածկ., 1893, Վան -1977, Երևան) – բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, 1934 թվից Հայաստանի Գրողների միության անդամ, ադրբեջաներեն լեզվի դասախոս Երևանի պետական համալսարանում, 1949-1955 թթ. բռնադատվել է և 6 տարի գտնվել ԽՍՀՄ բանտերում և համակենտրոնացման ճամբարներում:

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության:

[2] Խոսքը վերաբերում է Վեսպերին անհիմն պատճառներով ձերբակալելու փաստին: Ավ. Իսահակյանը 1947 թ. դարձել էր Հայկական ՍՍՀ Գե-

բագույն սովետի պատգամավոր, ինչը նրան թույլ էր տալիս գրող ընկերներին օգնելու համար դիմել բարձրաստիճան չատ պաշտոնյաների:

[3] ***Պապյան Մացակ*** *(1901-1962) – կուսակցական ազդեցիկ գործիչ, Խորհրդային Հայաստանի Կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ: Նա 1937-1958 թթ. եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր: 1938 թ. հուլիսին ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահ և այդ պաշտոնում մնացել մինչև 1954 թ.:*

[4] ***Զավեն Գրիգորյան*** *(1910-1992) – կուսակցական, պետական գործիչ, 1949 թ. նա Տեղեկատվական կենտկոմի քարտուղարն էր և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:*

[5] Министерство государственной безопасности *(Պետական անվտանգության նախարարություն):*

[6] *1947-1952 թթ. Հայաստանի Պետական Անվտանգության կառույցի մինիստրը Սերգեյ Արկադևիչ Կորխմազյանն էր:*

[7] *Մոսկվայի խաղաղության կողմնակիցների համամիութենական I կոնֆերանսը տեղի է ունեցել 1949 թ. օգոստոսին, որի ընթացքում կազմավորվել է 360 մարդուց բաղկացած խաղաղության Պաշտպանության ՍՍՀՄ կոմիտե՝ գրող Ն. Տիխոնովի նախագահությամբ: Հայաստանում կազմավորված 57 հոգանոց հայկական կոմիտեի նախագահն էր վ. Համբարձումյանը և Ն. Զարյանը: Կոմիտեի անդամ և պատգամավոր Ավ. Իսահակյանը ևս մասնակցել է Մոսկվայի կոնֆերանսին և ելույթ ունեցել խաղաղության պաշտպանության թեմայով:*

[8] *Նկատի ունի Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո ամերիկացիների՝ Տրումենի կողմից վեր բարձրացված նոր՝ ատոմային պատերազմի սպառնալիքը:*

1950

429. ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 530)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 238-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Աբաս Իսահակյան *(1900-1977) – բանաստեր, Ավ. Իսահակյանի Գևորգ եղբոր զավակը: Նա տարիներ շարունակ, սկսած 1927 թ. մինչև 1954 թ., եղել է բանտում ու տարբեր աքսորավայրերում: 1950 թ. նա դեռ աքսորավայրում էր՝ Միջին Ասիայում:*

*[1] **Իսահակ Իսահակյան** – Աբաս Իսահակյանի միակ որդին:*

*[2] **Արմիկ (Արմենուհի) Իսահակյան** (1902-1990) – Աբաս Իսահակյանի կինը, բժշկուհի:*

[3] Գեղամը Ավ. Իսահակյանի Ռուբենն եղբոր տղաներից մեկն է:

[4] 1945 թ. հուլիսին Գերագույն Սովետի նախագահության հրամանագրով Ղազարապատ գյուղը Վարպետի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ վերանվանվել է Ավ. Իսահակյանի անունով:

430. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ

(էջ 531)

Ինքնագիրը (սևագիր, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 885-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 372:

[1] Հակոբ Խաչատրյանցը ցանկացել էր մասնակցել Իսահակյանի բանաստեղծությունների ուկրաիներեն թարգմանության գործին:

431. ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒՆ

(էջ 532)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Ս. Տարոնցու ֆոնդ, 149:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 373:

Սողոմոն Տարոնցի *(1905-1971) – բանաստեղծ, թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ 1934 թվականից: 1950 թ. Տարոնցին Գրողների միությունում համակարգում էր երիտասարդ սկսնակ բանաստեղծների հետ կատարվող աշխատանքները:*

*[1] **Գեղամ Բաբսեղյան** (1883, Պոլիս - 1915, Այաս) – նահատակ գրող, հրապարակախոս, 1908 թ. Շ. Միսաքյանի հետ խմբագրել է*

«Ազդակ» հանդեսը, 1909-1914 թթ. եղել է «Սուրհանդակ» և «Ազատամարտ» թերթերի գլխավոր խմբագիրը, 1914 թ. Հակոբ Օշականի հետ խմբագրել է «Մեհեան» գրական հանդեսը: 1931 թ. Փարիզում հրատարակվել է Գ. Բարսեղյան, «Ամբողջական գործը, արձակ էջեր, պատմվածքներ, զանազանք» գիրքը՝ «Նահատակ գրագետներու բարեկամներ» մատենաշարով, որ սկսել էր 1929 թվականից:

432. ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՑԱՆԻՆ

(էջ 532)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Մ. Շահինյանի ֆոնդ, անմշակ:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», Երևան, 1976, 14 մայիս (1944 թ. թվագրումով):

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

[2] Խոսքը Մարիետա Շահինյանի «Путешествие по Советской Армении», Москва, «Молодая гвардия», 1950 *գրքի մասին է (վերահրատարակված 1951 թ. և 1952 թ.), որը հեղինակին բերել է Ստալինյան մրցանակ 1951 թ.: Գիրքը հրատարակվել է նաև Երևանում՝ «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» (խմբագիր՝ Ս. Պայազատ), 1952, Հայպետհրատ: Մ. Շահինյանի Իսահակյանին ուղարկած գիրքը, որի մասին խոսվում է նամակում, պահվում է ԱԻՏԹ, մմ 1052:*

433. ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 533)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 877-II:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Տարեթիվը և վայրը՝ փոստային կնիքից:

[2] Նկատի ունի իր Ռուբեն եղբոր որդուն՝ Նիկողայոս Իսահակյանին, որն այդ ժամանակ ապրում էր Ամերիկայում:

434. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

(էջ 534)

Ինքնագիրը պահվում է Արա Սարգսյանի ընտանեկան արխիվում:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Սովետական Միությունում նոյեմբերի 7-ին մեծ շուքով նշվում էր 1917 թ. Սոցիալիստական հեղափոխության տարեդարձը:

[2] Արա Սարգսյանը 1945 թ. հիմնել է Գեղարվեստի ինստիտուտը և դասավանդել այնտեղ: Երբ 1952 թ. միացվեցին Թատերական և Գեղարվեստի բաժինները, Արա Սարգսյանը դարձավ ինստիտուտի ռեկտորը:

435. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

(էջ 534)

Արտատպվում է ԱԻՆ 2016, էջ 374:

Կամսար Գրիգորյան *(Տեր-Գրիգորյան, 1911, Գանձակ - 2004, Սանկտ Պետերբուրգ) – գրականագետ, հայ-ռուս գրական կապերով զբաղվող գիտնական, Վահան Տերյանի եղբոր՝ Ներսես Տեր-Գրիգորյանի որդին, որ երկար տարիներ աշխատել է Լենինգրադում, Գրականության ինստիտուտում:*

[1] Կ. Գրիգորյանը 1950 թ. սեպտեմբերին Իսահակյանին ուղարկել է իր հոդվածը Վահան Տերյանի մասին՝ տպագրված «Вестник Ленинградского университета» *ամսագրում (առանձնատիպը՝ Կ. Գրիգորյանի մակագրությամբ պահվում է ԱԻՏԹ, մմ 1404):*

[2] Կամսար Գրիգորյանի «Հովհաննես Թումանյան. 1869-1923» ուսումնասիրությունը՝ «Жизнь замечательных людей» *մատենաշարով, առաջին անգամ հրատարակվել է Լենինգրադում, «Մոլոդայա Գվարդիա» հրատ., 1950 թ. (վերահրատ. 1953 թ.), իսկ հայերեն թարգմանությունը՝ Երևանում, 1969 թ.:*

[3] Կ. Գրիգորյանը մենագրություն է գրել նաև Ավ. Իսահակյանի մասին, որ տպագրվել է Մոսկվայում, 1954 թ. (92 էջ): 1960 թ. Մոսկվա-

յում «Սովետական պոեզիայի գրադարան» մատենաշարով հրատարակվել է Կ. Գրիգորյանի թարգմանությամբ և նախաբանով կազմած Ավ. Իսահակյանի «Բանաստեղծություններ և պոեմներ» գիրքը (391 էջ):

[4] Նկատի ունի հոր՝ Ներսես Տեր-Գրիգորյանի մահը 1949 թ.:

1951

436. ԷԴՎԱՐԴ ԱՂԱՅԱՆԻՆ

(էջ 536)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Է. Աղայանի ֆոնդ, 110:

Տպագրվում է առաջին անգամ:

***Էդվարդ Աղայան** (1913-1991) – հայ լեզվաբան, դոկտոր-պրոֆեսոր, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1932-1985 թթ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի լեզվաբանության ամբիոնի վարիչ և դասախոս, 1968-1991 թթ. հայագիտական կենտրոնի ղեկավար, աշխատել է նաև ԳԱ Լեզվի ինստիտուտում:*

437. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ

(էջ 536)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԻԵՖ, 3:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 375:

*[1] **Հարություն Մկրտչյան** (1903-1992) – սովետահայ գրող, գրականագետ, 1950-1968 թթ. Երևանի մանկավարժական ինստիտուտի դասախոս և հայ գրականության ամբիոնի վարիչ, աշխատել է նաև գրական ամսագրերում: 1951 թ. նա «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիրն էր:*

[2] Ենիկոլոպովը իր հոդվածում ուսումնասիրել է եվրոպական մշակութային գործիչների և ճանապարհորդների հետ հայ և վրացի գործիչների ունեցած կապերը:

[3] **Մորից Վագներ** (1813-1887) – գերմանացի ճանապարհորդ, բնագետ: 1843-1844 թթ. ճանապարհորդել է Հայաստանում, բարձրացել է Արարատ լեռը՝ Խ. Աբովյանի ուղեկցությամբ:

[4] **Ավգուստ Հաքստհաուզեն** (1792-1866) – պրուսական գրող, ազգագրագետ: Իր «Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու այն է ի Հայս և ի Վիրս» ուղեգրություն-ուսումնասիրության մեջ տեղեկություններ է տալիս հայ և վրաց ժողովրդի հեռավոր անցյալի, բանահյուսության մասին: Հայաստանում եղած ժամանակ Հաքստհաուզենին ուղեկցել է Խ. Աբովյանը, որին նա համարել է ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը:

[5] **Ֆրեդրիխ Բոդենշտեդտ** (1819-1892) – գերմանացի գրող, թարգմանիչ, գրականագետ: Աշխատել է Թիֆլիսում, ուսումնասիրել է Ռուսաստանի, Կովկասի և Արևելքի ժողովուրդներին: Ուսումնասիրել է պարսկական գրականությունը, թարգմանել Օմար Խայամի պոեզիան: Հայ գրականությունից էլ աշուղական երգեր է թարգմանել՝ Խ. Աբովյանի աջակցությամբ:

438. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ

(էջ 537)

Ձեռագիրը (ուկրաիներեն լեզվով) պահվում է Կիև, Գրականության թանգարան-ինստիտուտ, Մ. Ռիլսկու արխիվ:

Առաջին անգամ նամակը (հայերեն թարգմանությամբ) հրապարակել է Սեդա Ամիրյանը «Գրական թերթ», Երևան, 1971, թ. 36, այնուհետև՝ «Պավլո Տիչինա, Մաքսիմ Ռիլսկի «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գրքում (կազմող՝ Գ. Հովնան), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 198-200, ապա Ահեժ 1979, էջ 375 (1951, 2 օգոստոս թվագրմամբ) և ԱԻՆ 2016, էջ 376:

[1] Խոսքը ուկրաիներեն լեզվով Կիևում 1951 թ. հրատարակված «Ավետիք Իսահակյան. Ընտիր երկեր» գրքի (231 էջ) մասին է, որի կազմողը և առաջաբանի հեղինակը Մաքսիմ Ռիլսկին է:

[2] **Պավլո Գրիգորևիչ Տիչինա** (1891-1967) – ուկրաինացի բանաստեղծ, հասարակական գործիչ:

[3] **Վլադիմիր Սոսյուրա** *(1898-1965) – ուկրաինացի բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ:*

[4] **Լեոնիդ Պերվոմայսկի** *(1908-1973) – ուկրաինացի գրող, թարգմանիչ: Նա նաև հոդված է գրել Ավ. Իսահակյանի մասին, բազմիցս եղել է Հայաստանում:*

[5] **Օլեսկի Նիկոլաևիչ Նովիցկի** *(1914-1992) – ուկրաինացի բանաստեղծ, թարգմանիչ: Թարգմանել է նաև Դեղամ Սարյանի բանաստեղծություններից:*

439. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
(էջ 538)

Ինքնագիրը (մատիտագիր, սևագիր տարբերակ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 885-II:

Այս նամակը չի ուղարկվել Վ. Մամիկոնյանին, ինչը վկայում է Իսահակյանի 1951, 3 սեպտեմբեր թվակիր նամակը:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Տարեթիվը՝ ըստ բովանդակության:*

[2] **Սարոյան Արշալույս** *(1923-1974) – բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ: Նա 1951-1954 թթ. զբաղվում էր ուկրաինական գրականության թարգմանությամբ և հաճախ էր լինում Ուկրաինայում: 1951 թ. հրատարակվել է «Արևին ընդառաջ» ուկրաինացի մանկապիրների երկերի ժողովածուն՝ Ա. Սարոյանի թարգմանությամբ:*

[3] *Գրքի տողացի թարգմանության համար հոնորար պետք է ստանար Վահան Մամիկոնյանը: Այդ խնդրի հետ առնչվում էր նաև մոսկվաբնակ թարգմանիչ Հակոբ Խաչատրյանցի անունը:*

440. Ա<ՆՏՈՆ> ԿՈՒՋՑԱՆԻՆ
(էջ 538)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 245ա-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Անտոն Կուզյան *(Կզնունի ծածկ. 1880, Կարս–1951, Ստավրոպոլ) – իրավաբան, դրող, թարգմանիչ, կատարելապես տիրապետել է գերմաներեն լեզվին, 1918 թ. ընտանիքով Կարսից գաղթել են Հյուսիսային Կովկաս՝ Ստավրոպոլ: Կուզյանը դրել է հայ հանրութեանը լավ հայտնի «Օտարականը» վեպը:*

*[1] **Զուրաբ Ջամբալյան** – թարգմանիչ, ուսուցիչ: Ղարս ժամանելու օրերին Ավ. Իսահակյանը իջևանել է զարսեցի Զուրաբի տանը: Զուրաբին 1920 թ. սպանել են թուրքերը:*

[2] Ավ. Իսահակյանին ուղարկված Ա. Կուզյանի պատմվածքները չեն տպագրվել. հեղինակը մահացել է 1951 թ.:

441. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ

(էջ 539)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 257-I:

Առաջին անգամ տպագրվել է 1951 թ. ԳԱ Տեղեկագրում, ապա՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, «Նյութեր Ավ. Իսահակյանի երկերի լիակատար հրատարակության համար», «Ալմանախ Վրաստանի ԳՄ հայկական սեկցիայի», Թբիլիսի, 1960, էջ 364 և ԱԻՆ 2016, էջ 378-379:

[1] Մելիքսեթ-Բեկ Լ. «Ավետիք Իսահակյանը և վրաց գրականությունը», ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ, Երևան, 1951, թ. 4, էջ 37-46:

[2] Լ. Մելիքսեթ-բեկը Ավ. Իսահակյանին գրած իր պատասխան նամակում սխալը համարում է ոչ ճիշտ թարգմանության հետևանք:

[3] Ավ. Իսահակյանը հիշատակում է թարգմանիչ, բանաստեղծ Տիգյան Տարխճեին (1929,19 սեպտ.) իր գրած նամակի այս տողերը՝ «Աբու-Լալան Բայրոնի Ջայլդ Հարոլդի, Միցկևիչի Ֆարիսի և Բարաթաշվիլիի Մերանիի ոդուն չատ մտերիմ է, ինչպես և նրանք չատ հարազատ են իմ տրամադրություններին. հոգեկան հարազատություն կա»:

[4] Ըստ Մելիքսեթ-Բեկի պատասխան նամակում արված բացատրության՝ ««Տեղեկագրի» խմբագրությունը այդ ավելորդ էր համարել և հանել էր»:

442. ՀԵՂԻՆԵ <ՇԻՐԱԶՑԱՆԻՆ>
(էջ 540)

Ինքնագիրը պահվում է ԱԻՐԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

***Հեղինե (Հեղուշ) Շիրազյան** – 1948-1960 թթ. աշխատել է Հայաստանի Գրողների միությունում՝ որպես գործերի կառավարիչ, բարեկամական հարաբերություններ է ունեցել Վարպետի հետ:*

[1] Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպը լույս է տեսել Երևանում 1943 թ., վերահրատարակվել 1946, 1951, 1954 թվականներին, Ա. Թադեոսյանի ռուսերեն թարգմանությամբ հրատարակվել է Մոսկվայում 1956, 1961, 1974 թվականներին: Վեպը թարգմանվել է նաև ուկրաիներեն, վրացերեն, ֆրանսերեն լեզուներով:

443. ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ
(էջ 541)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 222-I:

Առաջին անգամ տպագրվել է «Կուլտուր-լուսավորական աշխատանք», Երևան, 1975, թ. 6, էջ 23-24, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 376-377:

***Մարգար Դավթյան** (1910-1964) – արձակագիր, թարգմանիչ: 1952 թ. Մարգար Դավթյանը Բաքվի «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագիրն էր:*

[1] Մարգար Դավթյանի «Ավետիք Իսահակյանի ընտիր երկերն ադրբեջաներեն» դրախոսությունը տպագրվել է «Կոմունիստ», Բաքու, 1951, 6 հուլիսի: Գիրքը տպագրվել է Ավ. Իսահակյանի ծննդյան 75-ամյակի առթիվ: Ժողովածուում ներառված «Աբու Լալա Մահարի» պոեմը և 81 բանաստեղծությունները թարգմանել է Մ. Ռահիմը, 20 պատմվածքները՝ Ք. Թարիվերդիևան:

*[2] **Աբշավիր Դարբնի** (Մնացականյան, 1910-1980) – առակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, 1948-1951 թթ. աշխատել է Հայաստանի Գրողների միությունում վարչության քարտուղար և «Սովետական դրականություն» ամսագրում:*

[3] Այդ մասին տեղեկատվություն կար նաև հայ մամուլում՝ «Ավետիք Իսահակյանի երկերը ադրբեջաներեն», «Գրական թերթ», 1951, 10 հուլիսի:

[4] Ավ. Իսահակյանի «Ընտիր բանաստեղծություններ և պատմվածքներ» (Թարգմանիչներ Մ. Ռահիմ, Ք. Թարվերդիևա), Բաքու, Ազերնեշր, 1951, 255 էջ:

[5] Մարգար Դավթյանն իր հոդվածում ոչ այնքան հաջողված է համարում պատմվածքների թարգմանությունը:

[6] Մ. Ռահիմի թարգմանությամբ «Կուզես լինիմ վչտի ցողեր» և «Մեծ հաղթանակի օրը» բանաստեղծությունները դրվել են նաև Մ. Ռահիմի կազմած «Բանաստեղծություններ և պոեմներ» ժողովածուում (Բաքու, Ազերնեշր, 1951, էջ 397-400):

[7] Հայ մամուլում այս մասին հոդված էր գրվել. Երևանլի Ա., «Իսահակյանի երկերը ադրբեջաներեն», «Գրական թերթ», Երևան, 1952, 31 մայիսի:

444. ՀՄԱՑԱԿ ՍԻՐԱՍԻՆ

(էջ 543)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Հմայակ Սիրասի ֆոնդ, անմշակ:

Առաջին անգամ հրատարակել է Ռ. Գրիգորյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», 1979, թ. 3, այնուհետև Հ. Սիրասի «Քսան-մեկ տարի Ավետիք Իսահակյանի հետ» գրքում, Երևան, 1975, էջ 73-75 և ԱԻՆ 2016, էջ 380-381:

[1] Սիրասի վերը նշված հուշերի գրքում կարդում ենք, որ Վարպետը ցավով է խոսել համատարած ռուսախոսության մասին, ինչին ականատես է եղել Կիսլովոդսկի առողջարանում: Ավ. Իսահակյանին միշտ հուզել և ցավ է պատճառել հայոց լեզվի հանդեպ ցուցաբերված անփութությունը, արհամարհական ու անտարբեր վերաբերմունքը մայրենիի նկատմամբ:

[2] Խոսքը Ավ. Իսահակյանի միակ թոռան՝ Ավիկ Վիգենի Իսահակյանի մասին է:

[3] 1950 թ. տպագրվել է Համլետ Սիրասի 750 էջանոց «Արարատ» դիրքը, 1951 թ. Հայպետհրատում հրատարակվել է «Եղբայրություն (պատմվածքներ, ակնարկներ)» վերնագրով դիրքը:

[4] Թամարա – Համլետ Սիրասի կինը, բժշկուհի:

445. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ

(էջ 544)

Ինքնագիրը պահվում է Վ. Մամիկոնյանի անձնական արխիվում, պատճենը՝ ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Ավ. Իսահակյանի «Ընտիր երկեր» ժողովածուի մասին ուկրաինական մամուլում տպագրված հոդվածներից մեկն էր Գ. Ջերնուխայի «Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները ուկրաիներեն լեզվով» գրախոսությունը («Ռադ. Ուկրաինա», Կիև, 1952, 12 հունվար):

446. ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ

(էջ 545)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Վ. Ատրյանի ֆոնդ, 140:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Հավանաբար խոսքը վերաբերում է Վ. Ատրյանի կազմած «Վրաստանի գարունը» (Երևան, Հայպետհրատ, 1951, 114 էջ) ժողովածուին, որի մեջ վրաց մանկագիրների ստեղծագործությունների մի մասը թարգմանել է Վ. Ատրյանը:

447. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ

(էջ 546)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 111: Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 377-378:

Խաչատուր Փորքչեյան (1886, Նոր Նախիջևան - 1970, Դոնի Ռոստով) – գրական գործիչ, ազգագրագետ, բանահավաք: «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարով լույս է տեսել Խ. Փորքչեյանի «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը. 2» ժողովածուն, Երևան, ԳԱ հրատ., 1965:

Փորքչեյանի հետ Իսահակյանի նամակագրությունը սկսվում է 1951 թ. նոյեմբերին՝ կիսլովոդսկյան համատեղ հանգստից հետո և տևել է 2 տարի՝ մինչև 1953 թ. հունիսը:

*[1] **Երվանդ Լալայան** (1864–1931) – հայ ազգագրագետ, բանահավաք, հնագետ, նրա թողած գրական ժառանգությունը՝ արխիվային փաստաթղթերը պահվում են Երևանի Գրականության և արվեստի թանգարանում: 1900 թ. Լալայանը Թիֆլիսում կազմակերպել է «Ազգագրական հրատարակչության ընկերությունը», որտեղ հրատարակվել են ժամանակի բանահավաք գիտնականների ազգագրական բնույթի աշխատություններն ու ուսումնասիրությունները: Փորխքչեյանի վկայությամբ, տպագրվելու նպատակով ինքն այս հրատարակչությանն է հանձնել իր ազգագրական, բանահավաքչական գրառումներով տետրերը՝ գրված Նոր Նախիջևանում:*

*[2] **Խաչիկ Սամվելյան** (1873, Կերչ - 1940, Երևան) – ազգագրագետ, իրավագետ, հայագետ, մանկավարժ: Նրա «Հայ հին իրավունքի պատմություն» գիրքը հրատարակվել է 1939 թ. Երևանում, «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր մենագրությունը, որի վրա աշխատել է շուրջ 40 տարի, տպագրվել է 1931թ:*

[3] Նկատի ունի Գևորգ կաթողիկոս Զորեքչյանին:

1952

448. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆՆԻՆ

(էջ 548)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ. Հովնանի ֆոնդ, 603:

Առաջին անգամ տպագրվել է Գուրգեն Հովնանի «Ավետիք Իսահակյան» գրքում (Երևան, «Հայաստան», 1976), այնուհետև ԱԻեԺ 1979, էջ 378-379 և ԱԻՆ 2016, էջ 382:

Գուրգեն Հովնան (1910, Շուշի - 2000, Երևան) – գրականագետ, արձակագիր, Հայրենական մեծ պատերազմի մասնակից, 1954-1964 թթ. Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի տնօրեն: Գ. Հովնանը զբաղվել է հայ-ռուսական գրական կապերով: Նա «Ն.Վ. Գոգոլը և հայ իրականությունը» (Երևան, 1952) գիրքը գրելիս դիմել է Ավ. Իսահակյանին՝ որոշ մանրամասներ իմանալու՝ Գոգոլի հետ ունեցած հայ գրողների գրական առնչությունների ու ազդեցությունների մասին: Հովնանի հարցումին ի պատասխան՝ Իսահակյանը նույն օրը գրել է երկու առանձին նամակ:

[1] Ավ. Իսահակյանը ռուս գրականագետ Յուրի Վեսելովսկուն նամակ էր գրել 1903 թ.:

449. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ
(էջ 549)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Գ. Հովնանի ֆոնդ, 604:

Առաջին անգամ տպագրվել է Գուրգեն Հովնանի «Ավետիք Իսահակյան. հուշեր» գրքում (Երևան, «Հայաստան», 1976), այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 379-380 և ԱԻՆ 2016, էջ 382-383:

*[1] **Գոգոլ Նիկոլայ** (1809-1852) – ռուս արձակագիր, դրամատուրգ, գրաքննադատ: Նրա ստեղծագործություններից մի քանիսը «Ռևիզոր», «Տարաս Բուլբա», «Մեռած հոգիներ» հիացրել են ոչ միայն ռուս, այլև աշխարհի շատ ժողովուրդների գրասեր հասարակությանը:*

[2] 1950 թ. տպագրվել է Գոգոլի «Մեռած հոգիներ» վեպի առաջին հատորը՝ Դերենիկ Դեմիրճյանի թարգմանությամբ, վեպի երկրորդ հատորը թարգմանել է Աշոտ Փալանջյանը 1952 թ.: Այդ թարգմանությունները ներառվել են Գոգոլի երկերի հրատարակության մեջ (Երևան, Հայպետհրատ, Գոգոլի երկերի ժողովածու 6 հատորով, 1955 թ., 5-րդ հատոր):

450. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ
(էջ 550)

Ինքնագիրը պահվում է Վ. Մամիկոնյանի ընտանեկան արխիվում:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Ավ. Իսահակյանին առաջարկել էին դիմել Ուկրաինայի Լուսավորության նախարարությանը՝ իր բանաստեղծությունների ուկրաիներեն ժողովածուի դիմաց հոնորար ստանալու խնդրանքով:

[2] Խոսքը վերաբերում է վրացի խորհրդային բանաստեղծ Գեորգի Լեոնձեին (1899-1966):

451. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՑԱՆԻՆ

(էջ 551)

Ինքնագրի պատճենը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 384:

452. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

(էջ 551)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 110:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 381-383:

Խաչերես Փորքչեյանը ուսումնասիրել է Նոր Նախիջևանի հայերի կյանքը, նրան հետաքրքրել է Ղրիմի հայերի վերաբնակեցման, ազգագրական ժառագությանն ու պատմությանն առնչվող հարցեր: Բանասիրական այս պրպտումների մեջ նրան օգնել է Ավ. Իսահակյանը՝ երևանից ուղարկելով անհրաժեշտ գրականություն ու արխիվային փաստաթղթեր: Խաչերես Փորքչեյանի «Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ» հոդվածը տպագրվել է «Պատմա-բանասիրական հանդես», 1968, թ. 2, էջ 105-117:

[1] Խ. Փորքչեյանը 1951 թ. դեկտեմբերի նամակով խնդրել էր Իսահակյանին, որ Գրական թանգարանում եր. Լալայանի ֆոնդում գտնեն իր ձեռագրով մի նյութ՝ «ժողովրդագրական տետրակը» և ուղարկեն իրեն՝ ուսումնասիրության համար: Այդ տետրակը չի գտնվել ֆոնդում, տարիներ անց Փորքչեյանը գրել է. «Մենք դեռ հույսով ենք, որ եր. Լալայանին մեր ուղարկած ձեռագիր ամբողջա-

կան հավաքածուն մի օր կգտնվի... շատ մոռացված ու անհետացած նյութեր կփրկվեն կորստից» («Հայ ազգագրություն և բանահյուսություն-2» մատենաշարով «Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը», Երևան, 1971, ԳԱ հրատ., էջ 10):

*[2] **Գարագաշյան Մատաթիա** (Անտոն, 1818-1903) – հայ պատմաբան, 1895 թ. Թիֆլիսում լույս է տեսել նրա «Քննական պատմութիւն հայոց» քառահատոր երկասիրությունը:*

[3] Երևանի Գրականության և արվեստի թանգարանի հիմնադիր Երվանդ Շահազիզի ջանքերով 1920-ական թթ. Նոր Նախիջևանից Երևան են բերվել հայ մշակույթի գործիչների մի շարք արխիվներ, այդ թվում Գաբրիել և Ռափայել Պատկանյանների արխիվային փաստաթղթերը:

[4] Նախորդ նամակում գրվել էր, որ «Ազգագրական հանդեսի» խմբագիր Երվանդ Լալայանը իրենից ստացել էր մի տետրակ-ժողովածու, որի մի մասը տպագրվել է ամսագրում՝ 1910 թ., «Ավետիսնեը» վերնագրով, մնացած մասը չկա: Դա էր պատճառը, որ Փորքշեյանը փնտրում էր իր անտիպ հավաքածուն:

[5] Խոսքը պատմաբան Հովհաննես Տեր-Աբրահամյանի երկհատորանոց մենագրության մասին է («Պատմութիւն Խրիմու Հանդերձ...», Թեոդոսիա, Խալիբյան ուսումնարան, 1865):

[6] Խոսքը վերաբերում է կազակ քաղաքական և հասարակական գործիչ Ֆյոդոր Շչերբինայի «История Армавира и черкесогаев» (Екатеринодар, изд. Традиция, 1916) *գրքին:*

[7] Բանաստեղծ Հարությունն Ալամդարյանը (1795-1834) կյանքի վերջին երկու տարիներին ապրել է Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում, որտեղ էլ դավադրաբար սպանվել է: Վանքն ունեցել է դպրոց, տպարան:

[8] Սահակ Մյասնիկյանը Ալեքսանդր Մյասնիկյանի եղբայրն էր: Մյասնիկյանները Նոր Նախիջևանից էին, 1903-1904 թթ. երկու եղբայր գործում էին Դաշնակցության շարքերում: Ինչպես վկայել է Խ. Փորքշեյանը, Ալ. Մյասնիկյանը Մոսկվայում ուսանելիս ապրել է իր հետ նույն սենյակում, ուր նրանք երկուսով ժամերով խոսել են ազգագրական, բանահյուսական թեմաների շուրջ:

[9] Խոսքը 1946 թ. Երևանում լույս տեսած Ռ. Պատկանյանի «Երկեր իր ժողովածու, Արձակ» գրքի մասին է:

[10] 1940 թվականից սկսվել էր Հովհ. Թումանյանի երկերի ակադեմիական հրատարակությունը վեց հատորով, որը տևեց մինչև 1956 թվականը:

[11] 1950-1951 թթ. «Հայպետհրատը» լույս է ընծայել Ավ. Իսահակյանի երկերի ժողովածուն 4 հատորով.

Հատ. 1 — Բանաստեղծություններ (կազմող Ա. Ինճիկյան), Երևան, 1950, 380 էջ,

Հատ. 2 — Պոեմներ, լեգենդներ, առակներ, թարգմանություններ (կազմող Ա. Ինճիկյան), Երևան, 1950, 240 էջ,

Հատ. 3 — Պատմվածքներ, արձակ պոեմներ, լեգենդներ, հեքիաթներ, առակներ (կազմող Ա. Ինճիկյան), Երևան, 1951, 328 էջ,

Հատ. 4 — Հուշեր և հոդվածներ (կազմող Ա. Ինճիկյան), Երևան, 1951, 240 էջ:

[12] Խաչատուր Փորքշեյանը մտերմություն է արել ինչպես Ալ. Մյասնիկյանի, այնպես էլ Վ. Տերյանի հետ: Տերյանի մասին գրած հուշերում Փորքշեյանը պատմում է, որ 1902 թ. Նոր Նախիջևանի աշակերտներն իր խմբագրությամբ հրատարակում էին «Լուսաբեր» թերթը, որին մասնակցում էր նաև Վ. Տերյանը՝ Շվին կեղծանունով:

453. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ

(էջ 553)

Հեռագիրը (մեքենագիր) պահվում է ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդում, 139-I:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1980, թ. 2, այնուհետև՝ ԱԻՆ 2016, էջ 335:

Կարապետ Սիտալը (1891-1972) Վանում 1911 թ. Հ. Ավագյանի և Ս. Ժամկոչյանի հետ հիմնադրել է «Վան-Տոսպ» պարբերականը, որն էլ դարձել է նրա հասարակական գործունեության սկիզբը: 1914 թ. մեկնել է ԱՄՆ, հիմնադրել տպարան, որ գործել է շուրջ 40 տարի: 1920-ական թթ. դարձել է ամերիկյան կոմունիստական կուսակցության անդամ, լավ հարաբերություններ է ունեցել Սովետական Միության հետ, մասնակցել է ՀՕԿ-ի աշխատանքներին, քանիցս եկել

է Խորհրդային Հայաստան, որտեղ նշել են նրա հասարակական գործունեության 40, 50 ամյակները:

[1] Հասարակական գործունեության սկիզբը համարվում է Կարապետ Սիտալի Վանում 1911 թ. «Վան-Տոսպ» պարբերականի հիմնումը:

454. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

(էջ 554)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 109: Տպագրվում է առաջին անգամ:

[1] Տե՛ս 452-րդ նամակի 11-րդ ծանոթագրությունը:

455. ՀԱՑԱՍՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

(էջ 554)

Արտատպվում է «Պիոներ կանչ», Երևան, 1952, 17 մայիսի («Իմ թոռնիկներին»), ապա Ումր-Շատ Գ. «Վարպետի նամակը Հայաստանի պիոներ-դպրոցականներին», Ավանգարդ, Երևան, 1975, 29 հոկտ.:

Համամիութենական պիոներական կազմակերպությունը հիմնադրվել է 1922 թ. մայիսի 19-ին: 1952 թ. մայիսին նշվել է պիոներիայի հիմնադրման 30-ամյակը, որին մասնակցություն է բերել Ավ. Իսահակյանը՝ պիոներ դպրոցականաններին ուղղած իր խոսքով:

456. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

(էջ 555)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 108: Առաջին անգամ տպագրվել է Աիեժ 1979, էջ 381-383:

[1] Նկատի ունի Կովկասում ռուսական ցարի դեմ զինված պայքար մղած Շամիլին (1797-1871), ով ռազմա-կրոնական Դաղստան պե-

տուԹյան գեկավարն էր՝ երրորդ իմամը: Շամիլի դեմ ռազմական գործողուԹյունները գեկավարել են ցարական բանակի հայազգի գեներալներ Բ. ԲեհբուԹովը և Ս. ԱրղուԹյան-Երկայնաբազուկը:

[2] ռելատիվիտե – հարաբերականուԹյուն (անգլ.):

[3] ռիգորիստ – խիստ, խստաբարո (անգլ.):

[4] Նկատի ունի իր հին ծանոԹներից մեկին՝ Եվգինե ԹիԹրյանին, որի հանդեպ առանձնապես ջերմ զգացմունքներ է տածել և նամակագրուԹյուն ունեցել տարիներ առաջ (Այդ մասին տես ակադեմիական հրատարակուԹյան XIII հատոր, 1904 թ., 15 օգոստոսի նամակը):

457. ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՑԱՆԻՆ

(էջ 558)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՓ, 248-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 383-384:

Համազասպ Համբարձումյան *(1880-1965) – գրականագետ, թարգմանիչ, աստղագետ Վիկտոր Համբարձումյանի հայրը: Նա 1952 թ. ստացել է բանասիրական գիտուԹյունների դոկտորի աստիճան «Հոմերոս» մենագրուԹյան համար: Համազասպ Համբարձումյանը թարգմանել է Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Ս. Կրկյաշարյանի հետ՝ «Հին հունական ողբերգուԹյունները», ունի նաև բանաստեղծուԹյունների ժողովածուներ:*

458. ԲԵՐՍԱԲԵ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 559)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 7337:

Տպագրվում է առաջին անգամ:

Բերսաբե Գրիգորյան *(1910, Ալեքսանդրապոլ - 2003, Երևան) – հասարակական գործիչ, Արտաշես Հմանի հետ կուլտուրական կապի Հայկական վարչուԹյան (ԱՕԿՍ) աշխատակից, 1958-1966 թԹ. ԱՕԿՍ նախագահ:*

[1] *Խոսքը Ավ. Իսահակյանի «Ալագյազի մանիներ» (Երևան, 1945, 45 էջ) ժողովածուի մասին է:*

[2] ***Լիսիցյան Սրբուհի*** *(1893, Թիֆլիս - 1979, Երևան) – հայ ազգագրագետ, արվեստաբան, պարագիտության դպրոցի սկզբնավորող, Ստեփան Լիսիցյանի դուստրը, 1930 թ. Թիֆլիսից տեղափոխվել է Երևան և 1936 թ. բացել պարարվեստի ուսումնարանը: Զբաղվել է նաև թարգմանական աշխատանքով՝ որոշ հայ դասական գործեր թարգմանելով ռուսերեն:*

[3] ***Տիգրանյան Էդմոնդ*** *(1911, Աքելսանդրոպոլ - 1994, Երևան) – ճարտարապետության դոկտոր, կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի որդին, Երևանի երկաթուղային կայարանի, Նուբրը օրգանական քիմիայի ինստիտուտի, Պետական համալսարանի և այլ շենքերի ճարտարապետ:*

459. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՑԱՆԻՆ

(էջ 560)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 107:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 384-385:

[1] *Նկատի ունի «Սովետական գրականություն» ամսագիրը, որին բաժանորդագրվել էր Ավ. Իսահակյանը՝ Խ. Փորքչեյանի հասցեով:*

[2] *Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը մահացել է 1952 թ. հունիսի 21-ին Անթիլիասում:*

460. ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՑԱՆ 15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

(էջ 561)

Մեքենագիրը տարբերակը պահվում է ԳԱԹ, Կ. Սիտալի ֆոնդ, 139-II:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ավետիսյանը «Գրական թերթ», 1980, թ. 2, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 388:

Նյու Յորքի Ամերիկահայ Հառաջադիմական միությունը առաջնորդվել է մարքսիստական դաղափարներով, միության օրգանը եղել է «Լրաբեր» ամսագիրը (1938-1990): Այս միության հրատարակչությամբ 1943 թ. լույս է տեսել Ավ. Իսահակյանի «Արկածախնդիրները (Մոսկվայեն անթելով «Լրաբեր»ին)» 16 թերթանոց հոդվածը: 1950-1960-ական թթ. Հառաջադիմական միության պատվավոր նախագահը Կարապետ Սիտալն էր: Հառաջադիմական Միության 15-րդ համագումարը հրավիրվել էր խաղաղության խնդիրները քննարկելու նպատակով:

461. ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՑԱՆԻՆ

(էջ 561)

Ինքնագիրը (առաջին տարբերակ) պահվում է ԱԻԸԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 385-386:
***Գաբրիել Մեհրաբյան** – Ծալկայի շրջանի ուսուցիչներից:*
*[1] **Ղուշչի** – Վրաստանի Ծալկայի շրջանի գյուղերից մեկը:*

ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՑԱՆԻՆ

(երկրորդ տարբերակ)

(էջ 563)

Ինքնագիրը (երկրորդ տարբերակ) պահվում է ԱԻՖ, 290-I:
Տպագրվում է առաջին անգամ:

462. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՑԱՆԻՆ

(էջ 564)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 31-III:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 387 (17 ապրիլ թվագրումով):
[1] Խոսքը վերաբերում է գյումրեցի սրախոս Մկրտիչ Ղազարոսի Մելքոնյանի գերեզմանի հուշաքարին: Մ. Մելքոնյանը (1881-1931) հայտնի

էր Պոլոզ Մուկուչ անունով, Պոլոզ անունը ստացել էր բարձրահասակ լինելու համար: Գյումրեցի զվարճաբան այս մարդու անվան հետ ժողովուրդը կապել ու պատմել է բազում առակներ, սրախոսություններ և անեկդոտներ: Գյումրիում գտնվող նրա գերեզմանը նորոգվել է Ավ. Իսահակյանի նախաձեռնությամբ ու միջոցներով:

463. ՄԱՄԻԿՈՆ ԱՎԱԳՑԱՆԻՆ

(էջ 564)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 867-II:

Մամիկոն Ավագյանը եղել է Ծալկայի Օզնի գյուղում գպրոցի տնօրեն, հետագայում տեղափոխվել է Երևան, աշխատել Րաֆֆու անվան գպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ, ապա տնօրենի տեղակալ:

Ըստ Մ. Ավագյանի վկայության՝ Ծալկայի Նարգևան գյուղում ապրել է Կարո անունով մի նալբանդ (պայտառ), որը տեղացի չի եղել: Նրա մահից հետո «Ուստա Կարո» վեպին ծանոթ ընթերցողները, գուցե նմանություններ գտնելով հերոսի և պայտառի միջև, Իսահակյանին հայտնել են Կարոյի մահվան լուրը:

464. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՑԱՆԻՆ

(էջ 565)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ՍՍՑ, 397:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 380-381 (22 մայիս թվագրումով):

[1] Գրականագետ Սաքո Սուքիասյանը ծնունդով Գանձայից էր, ապրում էր Մոսկվայում: Նա Իսահակյանին նամակով հայտնել էր, թե ախալքալաքցիները ինչ ոգևորությամբ են բանաստեղծին հրավիրում հայրենի Ծալկա:

[2] Խոսքը վերաբերում է Այծեմնիկ Ուրարտու և Աչոտ Հովհաննիսյան ամուսնական զույգին: Ա. Հովհաննիսյանը 1937 թ. Ստալինյան «Մեծ զտման» ժամանակ անհիմն բռնադատվել է, 1943 թ. բանտից ազատվել, աքսորավայր է ուղարկվել: 1949 թ. աքսորից վերադառ-

նալուց հետո 5 տարի հարկադրված ապրել է Կիրովականում (այժմ՝ Վանաձոր): Վերջնականապես արդարացվել է 1954 թ.:

465. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՑԱՆԻՆ

(էջ 567)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱՋՖ, 2775-1:

Առաջին անգամ հրապարակել է Ա. Ինճիկյանը «Բանբեր Երևանի համալսարանի», 1970, թ. 2, էջ 173, այնուհետև Աիեժ 1979, էջ 386:

*[1] **Արշակ Ջոպանյան** (1872, Պոլիս - 1954, Փարիզ) – հայ գրող, գրաքննադատ, խմբագիր: Ջոպանյանն իր գրական գործունեության սկզբում թղթակցել է Պոլսի «Բուրաստան մանկանց», «Մասիս» պարբերականներին: Նա 1895 թ. հիմնադրել է «Ծաղիկ» հանդեսը և նույն թվականին էլ հեռացել Պոլսից, հաստատվելով Փարիզում, ուր 1898 թ. հրատարակել է «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսը (1898-1911, նոր շրջան՝ 1929-1949):*

Արշակ Ջոպանյանը եղել է ամենավար ազատական կուսակցության անդամ, 1933 թ. այցելել է Սովետական Հայաստան, ողջունել հայրենիքում կատարվող փոփոխությունները:

Նրա գրական գործունեության 65-ամյա հոբելյանը նշվել է Փարիզում, Նյու Յորքում, Կահիրեում, Հալեպում, Բեյրութում և հայկական այլ գաղթօջախներում:

*[2] **Խադ արքեպիսկոպոս Աջապահյան** (1883, Սիս - 1968, Բեյրութ) – 1941-1945 թթ., ինչպես և 1952-1956 թթ. Կիլիկիո Աթոռի միաբանական ժողովով ընտրվել է կաթողիկոսական տեղապահ, իսկ 1946-1951 թթ.՝ Լիբանանի թեմի կաթողիկոսական փոխանորդ:*

1953

466. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ

(էջ 568)

Մեքենագիր տարբերակը պահվում է ԳԱԹ, Կարապետ Սիտալի ֆոնդ, 139-IV:

Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ», 1980, թ. 2, այնուհետև ԱԻՆ 2016, էջ 392-393:

*[1] **Կարապետ Սիտալ** (Շահինյան, 1891, Շատախ-1972, Ֆիլադելֆիա) – հայ բանաստեղծ, խմբագիր, հասարակական գործիչ: 1914 թվականից հաստատվել է ԱՄՆ, Ֆիլադելֆիա քաղաքում, 1920-ական թթ. մտել է Ամերիկայի Հայ բանվորական կուսակցության մեջ, հետագայում գործակցել ՀՕԿ-ին:*

[2] 1946 թ. Կ. Սիտալը Ավետիք Իսահակյանի հրավերով եկել է Հայաստան՝ մասնակցելու հայ գրողների երկրորդ համագումարին (1946, սեպտեմբերի 27-հոկտեմբերի 1): Խորհրդային Հայաստանից ստացած տպավորությունների մասին Սիտալը հրատարակել է «Տեսա մեր երկրի արևածագը» վերնագրով գիրքը (1948, Ամերիկահայ հառաջադիմական միության հրատարակչություն):

[3] Կարապետ Սիտալի «Պայքարի երգեր» բանաստեղծությունների ժողովածուն հրատարակվել է Երևան, «Հայպետհրատ», 1953 թ.: Երևանում Սիտալից տպագրվել է ևս երեք գիրք՝ «Լուսաբաց» (1936), «Դյուցազնական» (1957) և «Ոսկեհունձ» (1962):

467. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
(էջ 569)

Ինքնագիրը (բացիկ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 31-III:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 394:

[1] Գյումրեցի վարպետ Սեմիկը նորոգել է Պողոզ Մուկուչի գերեզմանը, վրան դրել հուշաքար՝ «Մելքոնյան Մկրտիչ Ղազարի, 1881-1931, Պողոզ Մուկուչ, Հիշատակ բանաստեղծ Ավետիք Իսահակյանից» մակագրությամբ:

468. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՉՅԱՆԻՆ
(էջ 570)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչյանի ֆոնդ, 106:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Ավ. Իսահակյանը Խ. Փորքչեյանին նամակներ է գրել սկզբում Գեորգիևսկ քաղաք, ապա Նալչիկ՝ Баксанская улица 5. Нальчик հասցեով:

469. ԲԱԴՎԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

(էջ 571)

Մեքենագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 880-II :

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Միրզա Ախունդով** (1812-1878) – ադրբեջանցի գրող, հասարակական գործիչ, լուսավորիչ: 1953 թ. Բաքվում նշվել է նրա մահվան 75-րդ տարելիցը:*

470. ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՆՉՑԱՆԻՆ

(էջ 571)

Ինքնագիրը (Գրողների մխության նոթատետրի էջի վրա) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 251-I:

Տպագրվում է առաջին անգամ:

***Վարդան Ղազանչյան** (1907, Վան-1990, Երևան) – գրականագետ, մշակութային գործիչ, ունեցել է մի շարք պատասխանատու պաշտոններ, 1951-1953 թթ. ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայության սեկտորի վարիչ, 1957 թվականից՝ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի թարգմանական բաժնի վարիչ:*

[1] Հայտնի ռուս դրամատուրգ Անտոն Չեխովի գործերից հայերեն են թարգմանել Դ. Դեմիրճյանը, Նար-Դոսը, Ս. Զորյանը, Վ. Միքայելյանը, Ա. Փալանջյանը, Ա. Խոնդկարյանը, Ա. Կարինյանը և այլոք:

471. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՉԵՑԱՆԻՆ

(էջ 571)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Խաչերես Փորքչեյանի ֆոնդ, 105:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Փորքչեյանն իր գրած նամակների ծրարների վրա ստորագրում է Христофор *(Խաչատուր անվան բառացի թարգմանություն): Ավ. Իսահակյանն էլ նրան դիմել է Քրիստափոր ձևով:*

[2] Ակնարկում է 1953 թ. մարտի 1-ի Ստալինի մահը, որից հետո քաղաքական և մշակութային կյանքում չեչտակի փոփոխություններ արձանագրվեցին. կարելի է ասել, սկսվեց «ձնհալի» երկար սպասված շրջանը:

[3] Նկատի ունի կաթողիկոս Գևորգ Զորեքչյանին, որը շատ է սիրել կիսլովոդսկյան հանգիստը: Կիսլովոդսկում ամեն տարի հանգստանում էր նաև Խաչատուր Փորքչեյանը:

472. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 573)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԿԳՖ, 410:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 395:

[1] Տե՛ս 435 նամակի 2-րդ ծանոթագրությունը:

[2] Խոսքը վերաբերում է Կամսար Գրիգորյանի «Հովհաննես Թումանյան» («Жизнь замечательных людей» մատենաշարով) գրքի վերահրատարակմանը՝ Լենինգրադ, 1953, «Մոլոդայա Գվարդիա»:

473. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 574)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Սոֆիկ Իսահակյանը մտերիմ է եղել Աշխեն Թումանյանի հետ, նրա հետ երկար ժամանակ է անցկացրել:

[2] Խոսքը խորհրդային շրջանում ստեղծագործող, Ստալինին մի քանի ձոներգեր նվիրած գուսան Սերոբի (Սերոբ Մանուկյան) որդու մասին է, որն ինչ-որ օրինազանցություն էր գործել, և Վարպետը փորձել էր նրան ազատել բանտից:

[3] *Թարգմանչուհի Արուս Թադևոսյանի (1907, Քութայիս–1983, Երևան) ընտանիքը Թիֆլիսից Երևան բնակության էր տեղափոխվել 1930-ական թթ.:*

[4] *Խոսքը մանկավարժ, պրոֆեսոր լեզվաբան Խաչատուր Կանայանի (1881–1976) մասին է:*

474. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 574)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Տարեթիվը՝ ըստ բովանդակության (Գևորգ անվան անվանակոչության օրը նշվում է սեպտեմբերի 24-ին):*

[2] *Նկատի ունի Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ VI Զորեքչյանին:*

[3] *Քրիստինեն Իսահակյանների տան աշխատողն էր, տնտեսուհին:*

[4] ***Փառանձեմ (Փառիկ) Քոչարյան*** *– Սոֆյա Իսահակյանի կրտսեր քույրը:*

475. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՑԱՆԻՆ

(էջ 575)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 31-III:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Անդրանիկ Հովսեփյանի դուստրը ցանկություն էր հայտնել սովորելու Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում: Այս հարցով դիմել են Վիկտոր Համբարձումյանին:*

476. ՆԻԿՈԼԱՑ ԵՎ ՇՈՒՇԻԿ ԻՍԱՀԱԿՑԱՆՆԵՐԻՆ

(էջ 576)

Ինքնագիրը (ծոցատետրի էջին) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 265-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Նիկոլայ (Կոլյա) Իսահակյանը կնոջ՝ Շուշիկի հետ ապրում էր Ամերիկայում: Նրանք Հայաստան են վերադարձել 1960 թ.:

[1] Ծոցատետրի էջի վրա դաջված է 1953:

477. ԵԿԱՏԵՐԻՆԱ ԴՈՒՐՅԱՆ-ԱՐՄԵՆՅԱՆԻՆ

(էջ 577)

Հեռագիրը պահվում է ԳԱԹ, Դուրյան-Արմենյանի ֆոնդ, 116:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Եկատերինա Դուրյան-Արմենյան** (1885, Թիֆլիս - 1969, Գյումրի) – դերասանուհի, բեմադրիչ Արմեն Արմենյանի կինը: 1903 թ. աշխատել է Բաքվի հայկական թատրոնում, 1908-1921 թթ. Աբելյան-Արմենյան թատերախմբում, Թիֆլիսի և Լենինականի թատրոններում, 1926-1928 թթ.՝ Բրյուսելում, Փարիզում, 1932 -ից՝ Գյումրիի Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, 1947 թ. ստացել է ժողովրդական դերասանուհու կոչում: 1953 թ. նշվել է դերասանուհու բեմական գործունեության 50-ամյակը:*

1954

478. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 578)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԿԳՑ, 411:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 397-398:

[1] 1953 թ. նոյեմբերին տեղի է ունեցել կենտկոմի լիագումար նիստ, որտեղ Գրիգոր Հարությունյանի փոխարեն կենտկոմի առաջին քարտուղար է նշանակվել Սուրեն Թովմասյանը:

[2] Ստալինի մահից հետո մեծ փոփոխություններ տեղի ունեցան Սովետական Միության բոլոր հանրապետություններում, վերանայվեցին հին հայացքներն ու հին կադրերը: Նամակում հիշատակվում

է պաշտոնից հանված կուսակցական գործիչ Զավեն Գրիգորյանի անունը (1910-1992), ով 1941-1953 թթ. վարել է կուսակցական և պետական ղեկավար պաշտոններ՝ կենտկոմի ագիտացիայի և քարոզչության բաժնի վարիչ, «Լենինյան ուղիով» ամսագրի խմբագիր, Տեղեկատվական կենտկոմի քարտուղար, ԽՍՀՄ կուլտուրայի մինիստր, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

[3] **Հովհաննես Մամիկոնյան** (1907-1970) – 1941-1948 թթ. «Սովետական Հայաստան» օրաթերթի խմբագիր, 1948-1953 թթ. ՀԿԿ կենտկոմում ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ:

[4] Ստալինի մահից հետո «կարմիր տեռորի» և մասսայական ռեպրեսիաների կազմակերպիչ, կրեմլյան հիմնական դահիճ Լավրենտի Բերիան հատուկ դատավարության կողմից հանցագործ ճանաչվեց և 1953 թ. դեկտեմբերին գնդակահարվեց:

[5] Դերենիկ Դեմիրճյանը ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ ընտրվել է 1953 թ.:

[6] **Խրիստո Բոթեւ** (1848-1876) – բուլղարացի հայտնի բանաստեղծ, հեղափոխական, ազգային հերոս: Ռուս-թուրքական պատերազմին նախորդել է բուլղարների ապստամբությունը Թուրքիայի դեմ: Այդ ազգային սուրբ պայքարին իր 275 հոգանոց չոկատով մասնակցել է նաև 28-ամյա բանաստեղծ Բոթեւը և զոհվել ռազմի դաշտում, թուրքի գնդակից՝ կրծքի շրջանում վիրավորվելով:

[7] Կ. Գրիգորյանը նամակով հայտնել էր Ն. Տիխոնովի մամուլում հայտնած կարծիքն այն մասին, որ Իսահակյանի «Սալոն ճորերում» բանաստեղծությունը ազատ փոխադրություն է Բոթեւի «Հայդուկի մահը» ստեղծագործության: Սակայն, – շարունակում է Գրիգորյանը, – նման վերնագրով բանաստեղծություն Բոթեւը չունի...» (տես Կ. Գրիգորյանի նամակը՝ 1954, 27 հունվար, ԳԱԹ, ԱԻՖ, 1094-II):

[8] **Նիկոլայ Տիխոնով** (1896-1979) – ռուս հայտնի բանաստեղծ, թարգմանիչ, հայ ժողովրդի բարեկամներից: Ավ. Իսահակյանի Հայ Գրողների Միության նախագահ աշխատելու տարիներին Տիխոնովը եղել է ՍՍՀՄ Գրողների Միության նախագահը: Հայ գրողներից հատկապես մտերիմ է եղել Կ. Միքայելյանի, Մ. Շահինյանի, Ավ. Իսահակյանի հետ: Ունի հոդվածներ Հայաստանի և հայ բանաստեղծների մասին: Իսահակյանի մասին Տիխոնովը գրել է մի քանի հոդված՝ , Его

стихи □голос самой армянской земли», Коммунист, 1947, 8 февраля, «Гордость народа (Об Ав. Исаакяне)», Москва, «Красная звезда», 1947, 8 февраля, Выдающиеся произведения Советской литературы», «Литературная газета», 1946, 29 июня: *Հոդվածներից մեկում Ն. Տիխոնովը Ք. Բոթևի «Հայդուկներ» անավարտ պոեմի և Ավ. Իսահակյանի «Հայդուկի երգեր» չարքի միջև համեմատություններ է անցկացրել:*

479. ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՑԻՆ
(էջ 579)

Ձեռագիրը (ռուսերեն) պահվում կիև, Գրական թանգարան-ինստիտուտ, Պավլո Տիչինայի արխիվում:

Առաջին անգամ (հայերենով) տպագրվել է Պ. Տիչինա և Մ. Ռիլսկի «Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գրքում, Երևան, 1973, էջ 176, այնուհետև Աիեժ 1979, էջ 387:

***Պավլո Գրիգորևիչ Տիչինա** (1891-1967) – ուկրաինացի բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական գործիչ: 1948 թ. կիևում հրատարակվել է «Խաչատուր Աբովյան. ընտիր երկեր» գիրքը Պավլո Տիչինայի ուկրաիներեն թարգմանությամբ: 1951 թ. նա թարգմանել է Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները, որոնք զետեղվեցին Մ. Ռիլսկու հետ կազմած «Ավետիք Իսահակյան. Ընտիր երկեր» ուկրաիներեն ժողովածուի մեջ:*

480. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՑԱՆԻՆ
(էջ 580)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 230-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

Աշիկ Ղազարյանը (1904-1962) 1948 թվականից Հայպետհրատի տնօրենն էր:

[1] Նկատի ունի Ռ. Թագորի «Զոհաբերության երգեր» կամ «Գիթանջալի» արձակ բանաստեղծությունների ժողովածուն, որի համար Թագորը

1913 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի: Թագորի «Գիթանջալի»ն երվանդ Փափազյանի թարգմանությամբ է տպագրվել՝ «Ռ. Թագոր, Պարտիզպանը: Գիթանջալի: Սիրո և կյանքի պոեմներ» (թարգմ. Համլիկ Թումանյան, երվանդ Փափազյան), Երևան, Հայպետհրատ, 1961:

[2] Աչիկ Ղազարյանը, ամենայն հավանականությամբ, չի մերժել Վարպետին, առաջադրանք է տվել թարգմանչին, ինչը վկայում է «Ն. Նոսով, Պատմվածքներ, թարգմ. Ա. Շահխաթունի» գիրքը (Երևան, Հայպետհրատ, 1959):

481. ԹՈՒՄԱՆՑԱՆԻՆ

(էջ 581)

Ինքնագիրը (թերի և սևագիր տարբերակ, Գերագույն սովետի դեպուտատի բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 875-II:

Տպագրվում է առաջին անգամ:

Այս նամակից երևում է, որ բազմազբաղ բանաստեղծը ժամանակ է տրամադրել դիմելու բարձրաստիճան պաշտոնյաներին՝ ոչ միայն ընկեր մտավորականներին, այլև սովորական մարդկանց օգնելու խնդրանքով: Նա դիմել է կենցաղային զանազան հարցերով՝ սկսած բնակարանով ապահովելուց, աշխատանքի տեղավորելուց, ինստիտուտ ընդունվելուց մինչև սովորական ջուր ունենալու հնարավորությունը:

*[1] **Ասլանյան Վարդգես** (1921, Արթիկ - 2010, Երևան) – գրող, ԵՊՀ գիտական դրադարանի տնօրեն:*

[2] Նամակի դարձերեսին արված գրությունը ցույց է տալիս, որ երբեմն Իսահակյանը հուսահատվել է ժամանակին հատուկ բյուրոկրատական քաշքշուկներից...

482. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 581)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Գրողների Միության III համագումարը տեղի է ունեցել Երևանում, 1954 թ. հուլիսի 21-27-ը:*

[2] ***Էդուարդ Թոփչյան*** *(1911-1975) – գրականագետ, մշակութային գործիչ, 1938-1939 թթ. «Գրական թերթ»-ի խմբագիր, 1939-1941 թթ. Արմֆանի գրականության ինստիտուտի դիտաշխատող, 1943-1944 թթ. «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրի խմբագիր, 1946-1952 թթ. Գրականության ինստիտուտի գիտաշխատող, 1953-1954 թթ. ինստիտուտի տնօրեն, 1954-1975 թթ. Գրողների միության վարչության առաջին քարտուղար:*

[3] ***Աղավնի Մեսրոպյան*** *(1881, Պոլիս - 1954, Երևան) – դաշնակահարուհի, գրող Լևոն Մեսրոպի քույրը, «Էջմիածին» հանդեսի թղթակից: 1906 թ. երաժշտական կրթությունը Լոնդոնում ստանալուց հետո 1911 թ. վերադառնում է Պոլիս, ուր հանդիպում է Կոմիտասին. այդ հանդիպումը չրջադարձային է դարձել նրա կյանքում, ինչի մասին գրել է «Հուշեր: Կոմիտաս» գիրքը (Երևան, «Հայպետհրատ», 1947): Ա. Մեսրոպյանը հուշ ունի գրած նաև Ավ. Իսահակյանի մասին («Մեծ վարպետին հետ դեպի Գառնի և Գեղարդ», «Էջմիածին» հանդես, 1951, թ. 8, էջ 71-74):*

[4] ***Կոնստանտին Սարաջև*** *(1877-1954) – դիրիժոր, մանկավարժ, 1940-1954 թթ. Երևանի Կոնսերվատորիայի տնօրեն:*

483. ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՑԻՆ

(էջ 582)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 893-II:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *Պատվական Ղազարյանի (1900, Սիսիան-1937) անունը մեզ հաջողվեց գտնել Ստալինյան բռնադատվածների ցուցակներում:*

484. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 582)

Արտատպվում է ԱԻՆ 2016, էջ 399: Ինքնագիրը չհաջողվեց գտնել ո՛չ Կ. Գրիգորյանի, ո՛չ Ավ. Իսահակյանի ֆոնդում:

[1] *1954 թ. սեպտեմբերին Ավ. Իսահակյանը Երևանում հյուրընկալել է ուկրաինացի գրող Մաքսիմ Ռիլսկուն և նրա հետ գնացել Դիլիջան՝ հանգստանալու:*

[2] *Սերո Խանզադյանի «Հողը» վեպը հրապարակվել է 1954 թ. Երևանում:*

[3] *Ազավնի Գրիգորյանի «Շիրակ» վեպը սիրով ընդունվեց հանրության կողմից, այդ պատճառով այն վերահրատարակվել է մի քանի անգամ (Երևան, «Հայպետհրատ», 1954, 1957, 1963, 1964, 1973):*

485. ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՑԱՆԻՆ

(էջ 583)

Ինքնագիրը (Գերագույն սովետի դեպուտատի բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 249-I:

Տպագրվում է առաջին անգամ:

486. ՀԱՐՈՒԹՑՈՒՆ <ԹՈՒՐՉԱՆԻՆ>

(էջ 583)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 876-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 387:

***Հարություն Թուրչյան** (1900, Վան-1978, Երևան) – պատմաբան, թարգմանիչ, 1931-1954 թթ. «Սովետական Հայաստան» օրաթերթի ոճաբան և թարգմանիչ:*

[1] *Հարություն Թուրչյանը ռուսերենից թարգմանել է Վ. Բելինսկու «Ընտիր երկերը» («Հայպետհրատ», 1948 թ.), Գերցենի «Եղերություններ և խոհերը» («Հայպետհրատ», մաս Ա, 1952, մաս Բ, 1953 և ամբողջականը՝ 1954 թ.):*

487. ՀԱՄԱԶԱՍՊ ԴԱԲԱՂՑԱՆԻՆ

(էջ 584)

Ինքնագիրը (Գրողների Միության բլանկի վրա) պահվում է ԳԱԹ, ԱԻՁ, 872-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 388:

Համազասպ Դաբաղյան *– գրող Վեսպերի՝ Մարտիրոս Դաբաղյանի ազգակիցներից, ով հետաքրքրվել է բռնադատված գրողին ազատելու գործով: Նման փորձեր Ավ. Իսահակյանը արել էր դեռևս 1949 թ.՝ դիմելով Գերագույն խորհրդի նախագահությանը, Պետական Անվտանգության մինիստրությանը և արդյունքի չէր հասել (տես Վեսպերին ուղարկած նամակը, 1949 թ. աշուն):*

[1] Մշակութային գործիչ, թարգմանիչ Վեսպերը՝ Մարտիրոս Դաբաղյանը վերադարձել է աքսորից 1954 թ.:

488. ՀԱԿՈԲ <ՆԱԶԱՐԵԱՆԻՆ>

(էջ 584)

Ինքնագիրը (առաջին տարբերակ) պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

Նազարյան Հակոբ *– J.N. ծածկանունով, ֆրանսահայ գրող, մշակութային գործիչ, ապրել է Մարսելում, ապա Փարիզում, 50-ական թվականներին նամակագրական կապ է ունեցել Ավ. Իսահակյանի հետ:*

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության:

[2] Խոսքը Մկրտիչ Հայրապետյանի «Հեթանոսական մտքեր. քառյակներ» գրքի մասին է, որ տպագրվել է Փարիզում, 1938 թ.: Այդ գիրքը պահվում է ԱԻՏԹ, մմ 3412:

[3] Նկատի ունի 1952 թ. Փարիզում հրատարակված «Աբու Լալա Մահարի» պոեմը Ժան Մինասյանի ֆրանսերեն թարգմանությամբ ու առաջաբանով:

[4] Խոսքը վերաբերում է Փարիզում 1945 թ. ստեղծված Ֆրանսահայ երիտասարդաց միությանը (Jeunesse Armenienne de France՝ JAF), *որը զբաղվում էր ֆրանսահայ համայնքի մշակութային, գրական հարցերով:*

[5] 1952 թ. Փարիզում հրատարակվել է «Աբու Լալա Մահարի» պոեմը Ժան Մինասյանի ֆրանսերեն թարգմանությամբ ու առաջաբանով: Ժան Մինասյանը խմբագրել է Պոլիսում (1908 թ. նոյեմբեր - 1913 թ. հունիս) հրատարակվող «La Patrie» (Հայրենիք) ֆրանսալեզու շաբաթաթերթը, (տնօրեն Ժակ Մ. Մինասեան): Ժան Մինասյանը

ամուսնացած է եղել ֆրանսագիր գրող Իսկուհի Մինասի հետ, ունեցել են 1 զավակ՝ Լևոն Մինասյան:

*[6] **Իսկուհի Մինաս** (1884, Պոլիս - 1953, Փարիզ) – արևմտահայ ֆրանսագիր նովելիստ գրող: Նրա որոշ նովելներ հայ մամուլում տպագրվել են Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի և Զ. Եսայանի թարգմանությամբ:*

*[7] **Լևոն Համբարձումյան** (Համբարձ կեղծանունով. 1884-1970) – բժիշկ, խմբագիր, 1917-1921 թթ. փարիզահայ «Վերածնունդ» ամսագրի տնօրեն-խմբագիր, 1920 թ. տպագրված «Վերածնունդ» տարեցույցի կազմող, 1954 թ. վերջերից-1970 թթ. «Խթան» շաբաթաթերթի խմբագիր:*

[8] «Խթան» (1954 վերջ-1970) – հայկական կյանքի լրատու շաբաթաթերթ, տնօրեն-խմբագիր Լևոն Համբարձումյան:

[9] Ինքնագիրը (երկրորդ տարբերակ) պահվում է ԱԻՀԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 393 (1957 թ. թվագրումով):

489. ՎԱՐԴԳԵՍ <ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ>

(էջ 586)

Ինքնագիրը (սևագիր, մատիտագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 882-II:

Տպագրվում է առաջին անգամ:

***Վարդգես Համազասպյան** (1911-1992) – կուսակցական, կրթական գործիչ, 1948-1951 թթ. Հայաստանի Գրողների միության պատասխանատու քարտուղար, 1951-1964 թթ. Մանկավարժական ինստիտուտի ռեկտոր, 1964-1990 թթ. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահ:*

1955

490. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ

(էջ 588)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 230-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Մաքրուհի Աղամյանը Թեհրանում կատարած իր թարգմանություններից մեկը (Ստ. Ցվայգ, «Հատընտիր երկերի ժողովածու», Թեհրան, 1944) պահվում է Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում (մմ 1375): Հայրենիք վերադառնալուց հետո Մ. Աղամյանը Իսահակյանի առաջարկով աշխատել է Հայպետհրատում, արել մի շարք թարգմանություններ, 1958 թ. հրատարակել իր պատմվածքների ժողովածուն:

491. ԵՂԻՇԵ <ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ>

(էջ 588)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 27-III:

Տպագրվում է առաջին անգամ:

***Եղիշե Հովհաննիսյան** (1908-1989) – արվեստագետ, մշակութային գործիչ, 1967 թ. տպագրվել է նրա «Մարդիկ, օրեր, ճամփաներ» պատմվածքների ժողովածուն, 1986 թ.՝ «Հուշեր Եղիշե Զարենցի մասին» գիրքը:*

[1] Ավ. Իսահակյանի տուն-թանգարանում (մմ 8873) պահվում է Թադորի «Բանաստեղծություններ» (Կալկաթա, 1946) անգլերեն գիրքը. նամակում հավանաբար այս գրքի մասին է խոսվում:

492. ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

(էջ 589)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 388-389:

Դարուհի Հակոբյան Վարժարանը աղջիկների կրթական հաստատություն է, որ հիմնվել է 1939 թ. Բեյրութում, Լ. Հակոբյանի նվիրատվությամբ՝ ի հիշատակ իր քրոջ Դարուհու:

[1] «Հանդիսավոր երեկո նվիրված Ավ. Իսահակյանին (Բեյրութում)», «Գրական թերթ», 1955, 29 հուլիսի:

493. ՆԻՆԱ ՆԵՐՍԻՍՑԱՆԻՆ

(էջ 590)

Ինքնագիրը պահվում է ԱԻՏԹ, 1532:

Առաջին անգամ տպագրվել է Ավիկ Իսահակյանի «Ավ. Իսահակյանը և ռուս գրականությունը» գրքում (Երևան, ԳԱ հրատ., 1984), այնուհետև ԱԻՆ 2016, էջ 400:

***Նինա Ներսիսյան** - 1955 թ. Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում ռուսաց լեզվի և գրականության դասախոս:*

[1] Ռուս մեծ բանաստեղծ Մ. Լերմոնտովը (1814-1841) «Երգ... Կալաշնիկովի մասին» պոեմը գրելիս (Կովկաս, 1838 թ.) օգտագործել է ռուսական բիլինաների ոճն ու մոտիվները: Պոեմը հայերեն է թարգմանել Սողոմոն Տարոնցին 1965 թ.:

494. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

(էջ 590)

Ինքնագիրը (սևագիր, ծոցատետրի էջին) պահպանվում է ԳԱԹ, ԱԻՖ, 891-II:

Տպագրվում է առաջին անգամ:

***Վազգեն Ա. կաթողիկոս Բուխարեստցի** (1908, Բուխարեստ - 1994, Երևան) – 1955-1994 թթ. Հայ Առաքելական եկեղեցու 130-րդ կաթողիկոս, հայագետ:*

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության (Իսահակյանը հիվանդ է եղել ապրիլին):

*[2] **Գարեգին Սրվանձտյանց** (1840, Վան - 1892, Ստամբուլ) – Հայ հոգևորական, բանասեր, բանահավաք, ազգագրագետ: 30 տարի շարունակ հավաքել ու գրի է առել հայ ժողովրդական բանավոր ստեղծագործությունները, նկարագրել ծեսերը, սովորույթներն ու հավատալիքները: Նրա հարուստ արխիվը դժվարությամբ է Պոլիսից հասել Երևան: Սրվանձտյանի արխիվային վաստաթղթերը Գրականության և արվեստի թանգարանին է տրամադրել գիտնականի եղբոր թոռը՝ Գարեգին Համազասպի Սրվանձտյանցը, որը դրանք ստացել է Կ.*

Պոլսից, մշակութային գործիչ Գևորգ Փամբուկչյանից («Հայրենիքի ձայն», 1972, թ. 42):

[3] Գարեգին Սրվանձտյանցի թողած կտակով 1000 ոսկի էր նվիրաբերվում Վանում հիվանդանոց հիմնելու նպատակով և 40 ոսկի՝ Ոստանի Զարահան Ս. Նշան վանքի՝ Ս. Եղիշե պատմագրի գերեզմանի վրա մատուռ կառուցելու նպատակով:

[4] Բառը հուշում է, որ հիվանդության պատճառով տանն է, իր բնակարանում:

495. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 591)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԿԳՖ, 412:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 401:

[1] Խոսքը Կամսար Գրիգորյանի «Аветик Исаакян. Очерки творчества. (В частности о связях писателя с русской и восточными литературами)», Москва, Гослитиздат, 1954, 92 стр. *գրքի մասին է:*

[2] **Вардапетова П.**, «Книга об Аветике Исаакяне. (Рец. на кн. Григорян К. Н. Аветик Исаакян. М. 1954)», «Коммунист», Ереван, 1955, 17 апреля.

[3] Lumbago *(լատիներեն) – գոտկացավ, որ առաջանում է ողնաշարի գոտկային հատվածի մկանների բորբոքումից (միոզիտ) կամ նյարդարմատների բորբոքումից (ռադիկուլիտ):*

[4] Նկատի ունի աշուղ Ջիվանիի 1892 թ. գրած «Կուգան ու կերթան» երգից «Այսպես է կանոնը բնական, կուգան ու կերթան» տողը:

496. ԱՂԱՒԻ ՎԱՐԴԱՆՑԱՆԻՆ

(էջ 592)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 272-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, էջ 389:

***Աղասի Վարդանյան** (1891, Ալեքսանդրոպոլ - 1968, Երևան) – բանաստեղծ, թարգմանիչ, պետական գործիչ, աշխատել է Հայաստա-*

նից դուրս: Եղել է Պյատիգորսկի օկրուգային գործկոմի նախագահ, Թերեքի մարզի ֆինանսների կոմիսար, Համկ(բ)կ Անդրերկոմի բաժնի վարիչ, Մոսկվայում Զակկնիգա հրատ. տնօրեն, Թիֆլիսում «Մարտակոչ», «Պրոլետար» թերթերի խմբագիր, 1955 թ.՝ Բաքվում «Կոմունիստ» թերթի խմբագիր:

497. ԲԱԲԼՈՒՄՑԱՆԻՆ

(էջ 592)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 218-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Բաբլումյան *– Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի նախագահության նախագահի աշխատակազմի անդամ:*

*[1] **Շմավոն Առուշանյան** (1903-1982) – պետական գործիչ, 1938-1946 թթ. Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, 1948-1953 թթ. ՀԽՍՀ ավտոտրանսպորտի նախարար, 1954-1963 թթ. ՀՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահ:*

[2] 1950-ական թթ. վարպետի նամակների զգալի մասը տարբեր բնույթի դիմումներ, գրություններ են եղել ուղղված Խորհրդային Հայաստանի վարչակարգի պետական անձերին՝ օգնելու դժվարին վիճակում գտնվող համաքաղաքացիներին:

498. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 593)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 233-I:

Տպագրվում է առաջին անգամ:

499. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՑԱՆԻՆ

(էջ 593)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 230-լրացուցիչ:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Մկրտիչ Խերանյան** (1899, Վան – 1970, Երևան) – բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ: Նամակում հիշատակված է նրա «Սասնա տուն. Դյուցազնավեպ» գիրքը (Երևան, Հայպետհրատ, 1958, 300 էջ):*

500. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 594)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

[1] 1955 թ. Երևանում, «Հայպետհրատ» հրատարակչությունում լույս են տեսել Ավ. Իսահակյանի «Երկեր» (կազմող՝ Ա. Ինճիկյան, 400 էջ) և «Արձակ էջեր» (Մինչին տարիքի համար, 58 էջ) գրքերը:

*[2] **Ռուբեն Ցոլյան** (1894-1955, Հուլիսի 1) – վիրաբույժ, Բժշկական ինստիտուտի վիրաբուժության ամբիոնի վարիչ, Հայաստանում արյան փոխներարկման ինստիտուտի հիմնադիր և տնօրեն (1947-1955 թթ.):*

501. ՍՈՖՑԱ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 595)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Քրխտինե** (Քրխտա) – 1954-1956 թթ. Իսահակյանների ընտանեքի տնտեսուհին, ծագումով արաբկիրցի, հայրենդարձ:*

502. ԳԵ ԲԱՌ-ՑՑՈՒԱՆԻՆ

(էջ 595)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 895ա-II:

Առաջին անգամ որոշ կրճատումով տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 390:

Գե Բաո-Ցյուան – չին բանաստեղծ, չին-սովետական բարեկամության ընկերության գլխավոր քարտուղարի տեղակալ, 1955 թ. այցելել է Երևան, ծանոթացել Ավ. Իսահակյանի հետ, չինարեն թարգմանել Ավ. Իսահակյանի չատ ստեղծագործություններ: Նա Վարպետի մասին բարձր կարծիքներ է հայտնել տարբեր առիթներով:

[1] Չինացի բանաստեղծ Գե-Բաո-Ցյուանի թարգմանության մասին ինֆորմացիա տրվեց «Ավանգարդ» թերթում, 1957 թ. հոկտեմբերի 22-ին:

503. Գ. ԲԱՂԴԱՍԱՐՑԱՆԻՆ

(էջ 596)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, 219-I:

Տպագրվում է առաջին անգամ:

Գ. Բաղդասարյան – անձը ճշտել չհաջողվեց. հավանաբար եղել է պետական պաշտոնյա, գլավլիտի աշխատակից:

[1] **Մկրտիչ Ներսիսյան** *(1909-1999)* – հայ պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, դիտության վաստակավոր գործիչ, 1944-1946 թթ. ԳԱ պատմության ինստիտուտի, ապա 1946-1950 թթ. մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրենի տեղակալ, 1966-1977 թթ. ԵՊՀ ռեկտոր, 1977-1999 թթ. ԳԱ պատմության ինստիտուտում բաժնի վարիչ: Մեծ է նրա վաստակը Օսմանյան կայսրության կազմակերպած հայոց Մեծ եղեռնի լուսաբանման գործում:

Այս նամակում հավանաբար խոսվում է 1955 թ. լույս տեսած Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ.» աշխատության մասին:

504. ՌԱԴԻՈՆԱՄԱԿ ՍՓՑՈՒՌՔԱՀԱՑՈՒԹՑԱՆԸ

(էջ 597)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվել է «Հայրենիքի ձայն», 1975, թ. 44 և ԱԻՆ 2016, էջ 403:

Ավ. Իսահակյանի այս խոսքը ռադիոյով հեռարձակվել է սիրիահայ համայնքի մի խումբ աշակերտների համար, ովքեր Վարպետի 80-ամյակի առթիվ շնորհավորական նամակ էին ուղարկել Երևանի ռադիոյին:

505. ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՑԱՆԻՆ
(էջ 598)

Հեռագիրը (մեքենագիր տարբերակ) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 886-II:
Տպագրվում է առաջին անգամ:

***Անաստաս Միկոյան** (1895, Սանահին - 1978, Մոսկվա) – Սովետական Միության քաղաքական և պետական գործիչ, 1919-1974 թթ. եղել է քաղաքական կյանքի կենտրոնում, 1926-1949 թթ. և 1953-1955 թթ. աշխատել է ԽՍՀՄ կառավարության կազմում, 1964-1965 թթ.՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ: 1955 թ. նա ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալն էր:*

1955 թ. նոյեմբերի 13-ին նշվել է նրա ծննդյան 60-ամյա հոբելյանը:

506. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՑԱՆԻՆ
(էջ 599)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:
Առաջին անգամ տպագրվել է ԱԻեԺ 1979, էջ 390-391:

***Հովհաննես Բաղրամյան** (1897, Ջարդախլու - 1982, Մոսկվա) – խորհրդային Միության նշանավոր զորահրամանատար, մարշալ, խորհրդային Միության հերոս: Նա 1955 թ. ԽՍՀՄ պաշտպանության մինիստրի տեղակալն էր:*

507. ՍԻՐՎԱՐԴԻՆ
(էջ 599)

Ինքնագիրը (սևագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՃ, 890-II:

Տպագրվում է առաջին անգամ:

Սիրվարդ *– Հայպետհրատի աշխատակից, որ զբաղվել է Ավ. Իսահակյանի գրքի («Երկեր», Երևան, Հայպետհրատ, 1955, 400 էջ, 7 ներդիր էջ նկար և 2 ներդիր էջ ֆակս) հրատարակության տեխնիկական հարցերով:*

[1] Նկատի ունի Հայպետհրատում հրատարակված «Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու 4 հատորով» (1950-1951, կազմող Ա. Ինճիկյան) գրքերը:

508. Ա<ՆԴՐԱՆԻԿ> ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

(էջ 600)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 870-II:

Տպագրվում է առաջին անգամ:

Անդրանիկ Բաղդասարյան *(1918, Գորիս - 1991, Երևան) – հայ աշխարհագրագետ, կլիմայագետ, դոկտոր-պրոֆեսոր, քարտեզների հեղինակ, 1955-1975 թթ.՝ Հայկական աշխարհագրական ընկերության նախագահ, 1975-1986 թթ.՝ ԳԱ բաժանմունքի քարտուղարի տեղակալ:*

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության:

[2] Հայկական աշխարհագրական ընկերությունը հիմնադրվել է 1935 թ. Երևանում, 1947-1995 թթ. գործել է Գիտությունների Ակադեմիային առընթեր, 1995-ից՝ ինքնակառավարվող: Ընկերության պատվավոր անդամներից են՝ Ավ. Իսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Իսակովը, Վ. Համբարձումյանը և այլ հայ մեծեր:

1956

509. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ

(էջ 601)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 262-I:

Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» («Երկու խոսք սիյուռքի հայության»), 1956, թ. 10, էջ 3 և 1957, թ. 6, էջ 18, «Նոր աշխարհ», Նյու Յորք, 1957, 16 նոյեմբեր, այնուհետև Աիեժ 1979, էջ 391-392:

[1] Այդ մասին տեղեկատվություն է տրվել՝ «Ավետիք Իսահակյանի 80-ամյակը պիտի տոնվի Բոստոնի մեջ», «Պայքար», Բոստոն, 1956, 25 փետրվար:

*[2] **Ազնակյան Եղնիկ** (1905, Ալեքսանդրիա - 1975, Ֆլորիդա) – գրող:*

*[3] **Փանոսյան Զապել** (Տեր Մեսրոպյան Թագուհի, ծածկ. Արամ, Զապել) (1893, Պարտիզակ - 1986, Նյու Յորք) – երգչուհի:*

[4] Հավանաբար նկատի ունի «Հայաստանի կոչնակ» ամսագրի թղթակից Արմեն Միրճանյանին:

*[5] **Սարյան Օգսեն** – մշակութային գործիչ Ամերիկայում՝ հայտնի իր կումունիստական հակումներով:*

*[6] **Արշավիր Շամլյան** – Նյու Յորքում հնչակյան կուսակցության օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթի հիմնադիրներից:*

510. ԱՆՏՈՆ ՔՈՋԻՆՑԱՆԻՆ

(էջ 602)

Ինքնագիրը պահվում է ՀԱԱ, ֆ. 1127, ց. 1, գ. 73, թ. 3-4:

Առաջին անգամ հրապարակել է Էմմա Հովսեփյանը «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2009, թ. 1, էջ 88:

***Անտոն Քոչինյան** (1913, Երևան - 1990, Երևան) – կուսակցական և պետական գործիչ, 1952-1966 թթ. ՀԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ, 1966-1974 թթ. ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար:*

511. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ

(էջ 603)

Արտատպվում է ԱԻՆ 2016, էջ 404: Ինքնագիրը՝ ԳԱԹ, ԱԻՓ, 1094 հղումով, մեզ չի հաջողվել գտնել:

[1] **Камсар Григорян**, «Неизданные письма А. Н. Добролюбова и к Добролюбову» (стр. 249-269). в книге «Литературное наследие (Текст)», М. 1936, т. 25-26, 697 стр. *(պահվում է ԱԻՏԹ, մմ 9977):*

512. ԻՈԱՆՆԱ ԲՐՅՈՒՍՈՎԱՑԻՆ

(էջ 604)

Հեռագիրը (մեքենագիր) պահվում է Մոսկվա, ռուսական հանրային գրադարան, ֆ. 386, քարտ 149, թ. 18:

Տպագրվում է առաջին անգամ:

***Իոաննա Մատվեևնա Բրյուսովա** (1876, Պրագա - 1965, Մոսկվա) – թարգմանիչ, հուշագիր, բանաստեղծ Վ. Բրյուսովի կինը: 1956 թ. փետրվարի 2-ին լրացել էր նրա ծննդյան 80-ամյակը:*

Կամսար Գրիգորյանը մամուլում («Գրական թերթ», 1956, 30 սեպտեմբեր) հրապարակեց Իսահակյանից Վ. Բրյուսովի կատարած մի անհայտ թարգմանություն, որ հայանաբերել էր նրա կինը՝ Իոաննա Մատվեևնան ամուսնու գրական արխիվում: Խոսքը Ավ. Իսահակյանի «Դարդըս լացեք...» բանաստեղծության թարգմանության մասին է, որը Վյաչեսլավ Իվանովի թարգմանությամբ զետեղվել էր Բրյուսովի 1916 թ. կազմած «Հայաստանի պոեզիա» անթոլոգիայում (տես Կ. Գրիգորյանի նամակը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 1094-II):

[1] *Վալերի Բրյուսովը գրել է. «Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Թումանյանը և Հովհաննես Հովհաննիսյանը կազմում են ամենավառ եռաստեղությունը հայ գրականության երկնակամարում, որի պատմական ուղիներն անցնում են այդ երեք գրողների գործունեության միջով»:*

513. ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻՆ

(էջ 604)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 269-I:

Տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 405:

Էդվարդ Զրբաչյան *(1923-1999) – գրականագետ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, 1950-1972 թթ. ԵՊՀ դասախոս, 1972-1982 թթ. ԵՊՀ գրականության տեսության ամբիոնի վարիչ, 1967-1977 թթ.՝ «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագիր, 1977-1999 թթ. ԳԱ Գրականության ինստիտուտի տնօրեն:*

[1] Նկատի ունի Արմաչի դպրեվանքը (1889-1915), որը հիմնվել է Արմաշ գյուղի Ս. Աստվածածին վանքում՝ որպես Կ.Պոլսի պատրիարքարանի հոգևոր բարձրագույն ուսումնական հաստատություն: Դպրեվանքում պատրաստվում էին հոգևորականներ և ուսուցիչներ:

514. ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ

(էջ 605)

Ինքնագիրը (բլոկնոտի էջի վրա) պահվում է ԱԻԸԱ:

Տպագրվում է առաջին անգամ:

Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյան *(ծնվ. 1944 թ.) – գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ավարտել է Երևանի պետական համալսարանը, ապա Մոսկվայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ասպիրանտուրան, 2008-2016 թթ. ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, Ավ. Իսահակյանի երկերի լիակատար ակադեմիական ներկայիս հրատարակության գիտական խմբի ղեկավար, Ավ. Իսահակյանի թոռը:*

[1] Վարպետի նամակը ուղարկված է Կիսլովոդսկ, որտեղ հանգստանում էր Ավիկը մոր հետ:

515. ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՑԱՆԻՆ

(էջ 605)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 869-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 406:

Շմավոն Առուշանյանը 1938-1946 թթ. Լենինականի քաղկոմի առաջին քարտուղարն էր, 1954-1963 թթ. ՀՍՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահը (տես 497-րդ նամակի 1-ին ծանոթագրությունը):

516. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՑ ԳՐՈՂՆԵՐԻՆ

(էջ 606)

Ինքնագիրը (սևագիր) պահվում է ԱԻԼԱ:

Առաջին անգամ տպագրվել է «Պայքար», Բոստոն, 1956, 25 դեկտ. «Վարպետին խոսքը» վերնագրով, արտատպվել է «Լրաբեր», Նյու Յորք, 1957, 10 հունվար և «Խթան», Փարիզ, 1957, 14 մարտ:

517. Գ<ՈՒՐԳԵՆ> ԶՈԼԱԽՅԱՆԻՆ

(էջ 608)

Ինքնագիրը (սևագիր տարբերակ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 866-II:

Տպագրվում է առաջին անգամ:

***Զոլախյան Գուրգեն** (1909-1992) – ճարտարապետ, պետական գործիչ, 1955-1956 թթ. Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:*

[1] Թվագրվում է ըստ բովանդակության:

518. Ա<ԼԵՔՍԱՆ> ԱԼԵՔՍԱՆՑԱՆԻՆ

(էջ 608)

Ինքնագիրը (սևագիր) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 866-II: Գրված է նախորդ նամակի դարձերեսին:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 413:

***Ալեքսանյան Ալեքսան** (1910, Գյումրի-1991, Երևան) – 1938 թվականից աշխատել է Գերագույն դատարանում, պատերազմից հետո 1945-1952 թթ. եղել է ՀՍՍՀ Արդարադատության նախարարը, 1952-1965 թթ.՝ ՀՍՍՀ Գերագույն դատարանի նախագահ:*

519. ԼԵՎՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
(էջ 610)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 408:

Լևոն Համբարձումյան *(1884, Կ.Պոլիս - 1970, Փարիզ) – ֆրանսահայ մշակութային գործիչ: Նա Հ. Նշանյանի հետ 1920-1921 թթ. խմբագրել է փարիզահայ «Խարազան» երդիծաթերթը, Ա. Զոպանյանի հետ 1917-1921 թթ. տնօրինել և խմբագրել է «Վերածնունդ» ամսագիրը, 1955-1970 թթ. խմբագրել է «Խթան» պարբերականը:*

520. ՀԱՑՊԵՏՀՐԱՏԻ ՏՆՕՐԵՆԻՆ
(էջ 610)

Ինքնագիրը պահվում է ԱԻԸԱ:

Առաջին անգամ տպագրվել է Լ. Աթաբեկյան, «Բանաստեղծություններ», Երևան, Հայպետհրատ, 1970, էջ 3-4, այնուհետև ԱԻԵԺ 1979, էջ 392-393:

Հայպետհրատի 1957-1961 թթ. տնօրենը արձակագիր Գրիգոր Բալասանյանն էր:

*[1] **Լևոն Աթաբեկյան** (1877, Շուշի - 1918, Բաքու) – բանաստեղծ, բժիշկ, հասարակական գործիչ: Բժշկական կրթությունը ստացել է Բեռլինի և Յուրիևի համալսարաններում, եղել է Ավ. Իսահակյանի ուսանողական սիրելի ընկերներից մեկը, 1903 թվականից աշխատել է Բաքվում, Թիֆլիսում, Երևանում: Քաղաքական հայացքներով սկզբում եղել է ՀՅԴ անդամ, ապա էսէռական, 1917 թվականից աշխատել է Անդրկովկասյան կոմխարհատում, 1918 թ. սպիտակ դրոշով Աթաբեկյանի, Թաթար Աղաևի հետ շրջել է Բաքվի փողոցներում՝ ձգտելով վերջ տալ ազգամիջյան կռիվներին ու հայկական ջարդերին, բայց հաշտարար բանախոսի առաքելությունը կատարելիս էլ զոհվել է Բաքվում, 43 տարեկանում:*

[2] Նկատի ունի Լ. Ալթաբեկյանի «Բանաստեղծություններ» ժողովածուն, որ տպագրվել էր Բաքվում, 1913 թ.:

[3] Ավ. Իսահակյանի առանձնացրած այս երեք ստեղծագործությունները գրված են Ղարաբաղի բարբառով և պատկերում են Ղարաբաղի հայության դառը կյանքը:

521. «ԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
(ՀՂ 611)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 223-I:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻԵԺ 1979, ՀՂ 394:

1957-1964 թթ.՝ «Երևան», 1964 թվականից «Երեկոյան Երևան» օրաթերթ – Երևանի քաղաքային կոմիտեի օրգան, որ լուսաբանում էր մայրաքաղաքի կուսակցական և խորհրդային մարմինների գործունեությունը:

522. Գ<ԵՎՈՐԳ> ԳԱՆՋԱՆԱԿՑԱՆԻՆ
(ՀՂ 612)

Ձեռագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 871-II:

Առաջին անգամ տպագրվել է ԱԻՆ 2016, ՀՂ 407:

Գևորգ Գանձանակյան *(1890, Արաբկիր - 1961, Դիտրոյթ) – ամերիկահայ մշակութային և հասարակական գործիչ, հնչակյան կուսակցության անդամ, 1943 թ. հակաֆաշիստական պայքար մղելու նպատակով հիմնադրված «Ազգային խորհրդի» քարտուղար: «Ազգային խորհրդի» մեջ հետագայում մտան Ամերիկահայ առաջադիմական ընկերությունը, հնչակյաններն ու ռամկավարները:*

[1] *Թվագրվում է ըստ Արամ Ինճիկյանի վկայության, որ արված է նամակի վերջում՝ «1957 թ. ամառը, հիվանդության պատճառով չկարողացավ գրել. այս նամակը թելադրեց ինձ՝ ես գրեցի: Ա. Ինճիկյան 1960, մայիսի 5»:*

[2] *Սիյուռքում ընդունված է հոբելյաններից հետո կազմել հուշամատյան, որտեղ ընդգրկվում են հիմնական զեկուցումները, ելույթներն ու ուղերձները: Այսպիսի մի գիրք-հուշամատյան կազմել են Դիտրոյթ քաղաքում արաբկիրցիների կազմակերպած հոբելյանական հանդեսից հետո, որը նվիրված է եղել Ավ. Իսահակյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին: Հուշամատյանը ուղարկվել է Երևան, Ավետիք Իսահակյանին:*

523. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՑԱՆԻՆ
(էջ 613)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:
Տպագրվում է առաջին անգամ:

524. ԳԵՈՐԳԻ ՍՎԻՐԻԴՈՎԻՆ
(էջ 614)

Մեքենագիր տարբերակը պահվում է ՀԱԱ, ֆ. 403, ց. 1, գ. 177, թ. 2:
Տպագրվում է առաջին անգամ:

[1] ***Սվիրիդով Գեորգի Վասիլևիչ*** *(1915-1998) – ռուս անվանի կոմպոզիտոր: Սվիրիդովը 1949 թ. ծանոթանալով Ավ. Իսահակյանի ստեղծագործություններին՝ մեծ հիացմունք է ապրում, և օգտվելով Ալ. Բլոկի, Վ. Դերժավինի ու այլ ռուս բանաստեղծների կատարած թարգմանություններից, գրում է ռոմանսներ, որոնք հետագայում ամփոփվել են «Հայրերի երկիրը» վոկալ պոեմի՝ երգերի շարքի մեջ:*

[2] *Խոսքը* **Свиридов Г.**, «Страна отцов, Поэма для тенора и баса с ф-п, слова Ав. Исаакяна», М., Сов. музыка, 1957, 74 стр. *գրքի մասին է:*

525. ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊԻՆ
(էջ 614)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, Կարապետ Սիտալի ֆոնդ, 139-5, սևագիր տարբերակը՝ 139-6:

Առաջին անգամ հրապարակել է Արփիկ Ավետիսյանը «Գրական թերթ», 1980, թ. 2, այնուհետև տպագրվել է ԱԻՆ 2016, էջ 410-411:

Լևոն Մեսրոպ *(Մեսրոպյան, 1880, Պոլիս-1960, Փարիզ) – արձակագիր գրող, բանասեր, հասարակական գործիչ: Հայոց ջարդերից հետո հաստատվել է Ֆրանսիայում: Նրա գեղարվեստական ստեղծագործությունները տպագրվել են ֆրանսահայ և ամերիկահայ մամուլում: Գրել է նաև գիտական ուսումնասիրություններ («Քուրդիստան և քուրդերը», «1915. Ազետ և վերածնունդ», «Տեր-Զոր»), թարգմանել է Օմար Խայամի ռուբայաթները, 1946 թ. և 1954 թ. մասնակցել է Սովետական Հայաստանի Գրողների միության համագումարներին:*

[1] *Իսահակյանի սփյուռքահայ մտերիմներից մեկը՝ Զապել Պոյաճյանը 1957 թ. հունվարի 26-ին մահացել էր Լոնդոնում, բարեգործական հիվանդանոցում: Նրա թողած մշակութային ժառանգությունը՝ գեղանկարներ, գրքերի նկարազարդումներ, թարգմանություններ, հիացրել են հայ արվեստի գործիչներին: Բազմաշնորհ Պոյաճյանը 1901 թ. գրել է «Եսթեր» անգլերեն վեպը՝ թուրքական ջարդերի մասին, 1916 թ. կազմել է «Armenian Legends and Poems» գիրքը, Արամ Րաֆիի առաջաբանով՝ «An Anthology of Legends and Poems of Armeni», ժողովածուն, 1924 թ.՝ «Գիլգամեշ» ավանդավեպը, 1938 թ.՝ «Գրչով և ներկապնակով Հունաստանում» նոթերը, 1943 թ.՝ «Էջմիածին» դրաման: Նամակում խոսվում է վերջինիս մասին:*

[2] *Խոսքը «Աբու-Լալա Մահարի» պոեմի (թարգ. Զ. Բոյաջյան, «Էյթանյուըլ փրեզենթեյշըն» գրքում, Նյու Յորք, էջ 40-48) 1948 թ. անգլերեն լեզվով հրատարակության մասին է: Այս թարգմանությունը վերահրատարակվել է նաև Ավ. Իսահակյանի մահից ամիսներ անց՝ «Ավետիք Իսահակյան. հայ մեծ գրողը» գրքում (Նյու Յորք, 1958, էջ 7-22):*

[3] *Նկատի ունի Լևոն Մեսրոպի քրոջը՝ Աղավնի Մեսրոպյանին, որ մահացել էր 1954 թ. (տես 482 նամակի 3-րդ ծանոթագրությունը):*

[4] *Րաֆֆու արխիվի մասին խոսվում է նամակի միայն սևագիր տարբերակում:*

Լոնդոնահայ մշակութային գործիչ Զապել Պոյաճյանը աջակցել է Ավ. Իսահակյանին և Լևոն Մեսրոպին՝ Րաֆֆու արխիվը Հայաստան

ուղարկելու գործում, որն այդպես էլ չիրագործվեց: Զ. Պոյաճյանը մտերիմ է եղել Րաֆֆու կնոջ՝ Աննայի, և որդիների՝ Արամի ու Արշակի հետ, թարգմանել է Րաֆֆու ստեղծագործություններից ու տպագրել անգլիական մամուլում: Նկարչուհին կերտել է նաև Րաֆֆու դիմանկարը:

[5] Լևոն Մեսրոպը իր արխիվը Փարիզից Երևան է ուղարկել 1959 թ. ամռանը՝ մահից մի տարի առաջ: Նրա գրական ժառանգությունը պահվում է Ե.Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանում:

526. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ
(էջ 616)

Ինքնագիրը պահվում է ԱԻԼԱ:

Տպագրվել է «Պ. Տիչինան և Մ. Ռիլսկին Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գրքում (կազմող՝ Գ. Հովնան, Երևան, ԳԱ հրատ, 1973, էջ 200):

Ըստ Գ. Հովնանի վկայության, նամակը ուկրաիներեն է թարգմանել գրականագետ Հակոբ Սալախյանը: Նամակը՝ ռուսերեն լեզվով հրապարակել է Մ. Ղորղանյանն Ավ. Իսահակյանի մասին գրած իր հուշերում («Լիտերատուրնայա Արմենիա» ամսագիր, 1958, թիվ 1):

[1] Նկատի ունի Մաքսիմ Ռիլսկու «Մեր վարպետը» հոդվածը («Наш варпет. О творчестве армянского поэта А. Исаакяна, «Огонек», 1957, 37, стр. 16).

1956 թ. Կիևում հրապարակվել էր Ավ. Իսահակյանի «Երկերի ժողովածու»ն՝ Մաքսիմ Ռիլսկու թարգմանությամբ ու առաջաբանով:

[2] Ավ. Իսահակյանը 1939 թ. Կիևում մասնակցել էր Տ. Շևչենկոյի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությանը, ծանոթացել Մաքսիմ Ռիլսկու հետ, նրան հրավիրել Հայաստան: Մ. Ռիլսկին Հայաստան է եկել 1954 թ. օգոստոսին, հյուրընկալվել Վարպետի հարկի տակ, նրա հետ հանգստացել Դիլիջանում, Ջերմուկում:

527. ԳՈՒՐԳԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՑԱՆԻՆ
(էջ 616)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 274-I:

Տպագրվում է առաջին անգամ:

***Փահլևանյան Գուրգեն** (1908, Կարս - 1986, Երևան) – պետական գործիչ, 1957-1960 թթ. Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:*

*[1] **Իսահակ Իսահակյան** (1933, Կուրգան - 2017, Երևան) – տնտեսագետ, Աբաս Իսահակյանի որդին: 1957 թ. ավարտել է Տաշքենտի ֆինանսատնտեսական ինստիտուտի ֆինանսական ֆակուլտետի վարկային բաժինը և գործուղվել Երևան, ԽՍՀՄ Պետական բանկի հայկական գրասենյակ: 1957 թվականից աշխատել է բանկային համակարգում, 1991-1994 թթ. դարձել Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի առաջին նախագահը:*

[2] Ահա նման բյուրոկրատական քաշքշուկի մեջ է ընկել Վարպետը 1957 թ. հոկտեմբեր ամսին Երևանի քաղաքապետի և միլիցիայի պետի պաշտոնները զբաղեցնող անձանց հետ. և դա բանաստեղծի մահից ընդամենը երկու շաբաթ առաջ:

528. ՍԵՐԳԵՑ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ
(էջ 617)

Ձեռագիրը (ձեռագիր) պահվում է ԳԱԹ, Գորոդեցկու ֆոնդ, 46:

***Սերգեյ Գորոդեցկի** (1884-1967) – ռուս բանաստեղծ, թարգմանիչ, հայ ժողովրդի բարեկամ, դարասկզբին աշխատել է Կովկասում, հայերեն սովորել Համլիկ Թումանյանի մոտ, գրել է հայոց ցեղասպանությանը նվիրված «Հայաստանի հրեշտակը» գիրքը: Նամակում հավանաբար խոսվում է նրա «Բանաստեղծություններ. 1905-1955», Մոսկվա, 1956 թ. ժողովածուի մասին:*

529. Զ<ԱՎԵՆ> Վ<ԱՐԴԱՆՑԱՆԻՆ>
(էջ 617)

Ինքնագիրը (սևագիր տարբերակ) պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 892-II:

[1] *Թվագրվում է ըստ բովանդակության:*

Վարդանյան Զավեն *(1907–1977) – երաժշտագետ, մանկավարժ, կլառնետահար, 1938–1941 թթ. Հայֆիլհարմոնիայի տնօրեն, 1956–1958 թթ. Հայաստանի Կուլտուրայի մինիստրության ուսումնական հաստատությունների վարչության պետ և Մինիստրության կոլեգիայի անդամ:*

[2] ***Ահարոնյան Գրիգոր*** *(1896–1980) – հայ անվանի քանդակագործ, ժողովրդական նկարիչ, Երևանում մի շարք արձանների հեղինակ: Ահարոնյանների ընտանիքը Երևան է եկել 1946 թ. հայրենադարձության ալիքով:*

[3] ***Ահարոնյան Վահե*** *(1933, Սոֆիա - 1994, Երևան) – հայտնի դաշնակահար, կոնսերվատորիան ավարտել է 1957 թվականին, ուսումը շարունակել Մոսկվայում: Ասպիրանտուրան ավարտելուց հետո վերադարձել է, 1960–1994 թթ. դասավանդել է Երևանի կոնսերվատորիայում:*

ԱՆԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ

530. ԱՐՄԵՆՈՒՀՈՒՆ
(էջ 619)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, 868-II:
Տպագրվում է առաջին անգամ:

531. ԱՆԺԻԿԻՆ
(էջ 619)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՖ, անմշակ: Գրված է ռուսական բացիկի վրա (ծառին հենված կնոջ պատկերով):

Տպագրվում է առաջին անգամ:

[1] *1903 թ. դեկտեմբերին Ալեքսանդրոպոլում Իսահակյանի գրած «Մենակ մանկության օրերն են անո՜ւշ...» սկսվածքով բանաստեղծությունից մի տող:*

532. ԻՎԱՆ ԿԱՆԴԱՐՑԱՆԻՆ

(էջ 619)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, անմշակ: Գրված է իտալական բացիկի վրա (Վենետիկի Հառաչանքի կամուրջի պատկերով):

Տպագրվում է առաջին անգամ:

533. <ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՑԱՆԻՆ>

(էջ 620)

Ինքնագիրը պահվում է ԳԱԹ, ԱԻՑ, անմշակ: Գրված է գերմանական բացիկի վրա (զանգի պատկերով):

Տպագրվում է առաջին անգամ:

[1] Բերված տողերը Շվեյցարիայի Շաֆհաուզեն քաղաքի Ալերհեյլիգեն եկեղեցու զանգի վրա 1486 թ. արված լատիներեն «Vivos voco. Mortuos plango. Fulgura frango» փորագրության թարգմանությունն է: Գերմանացի բանաստեղծ Շիլլերը այս տողերը 1799 թ. դարձրել է իր «Զանգի երգը» բանաստեղծության բնաբան, որից հետո զանգը կոչել են Շիլլերի անունով:

ՀԱՎԵԼՈՒՄ XIII ՀԱՏՈՐԻ

1. ՀՑԴ ԱՐԵՎՄՏՑԱՆ ԲՑՈՒՐՈՑԻՆ

(էջ 621)

Ինքնագիրը պահվում է Բեյրութ, ՀՑԴ արխիվ, թղթ. 39-57:

Տպագրվում է առաջին անգամ:

*[1] **Քյուսնախտ** – քաղաք Շվեյցարիայում, Ցյուրիխի կանտոնում:*

[2] Բնագրում հասցեատիրոջ անունը Ավ. Իսահակյանը գրել է, սակայն հետագայում անհայտ անձի կողմից այն ջնջվել է և դարձել անընթեռնելի: Հասցեատերը կարող է լինել «Դրօշակ» թերթի խմբագրական կազմից որևէ մեկը (Քրիստափոր Միքայելյան, Էդուարդ Ակնունի, Միքայել Վարանդյան):

[3] «Դրոշակ» պարբերականը ՀՅԴ պաշտոնաթերթն է, որի առաջին երկու համարները տպագրվել են 1891 թ. (մայիս և սեպտեմբեր), Թիֆլիսում, երրորդ համարը՝ 1892 թ.՝ Ռումինիայում, այնուհետև թերթի տպագրությունը տեղափոխվել է Ժնև, ուր տպագրվել է մինչև 1914 թ.: Պարբերականի գլխավոր խմբագիրը եղել է Քրիստափոր Միքայելյանը՝ մինչև իր վախճանը (1905 թ.): Խմբագրական աշխատանքներին մասնակցել են Ռոստոմը, Ս. Զավարյանը, Ա. Ահարոնյանը և ուրիշներ: «Դրոշակը», որպես ամսաթերթ, վերահրատարակվել է Փարիզում, 1925-1933 թթ.՝ Ս. Վրացյանի և Ա. Ջամալյանի խմբագրությամբ:

[4] ***ուժանակ*** — դինամիտ:

2. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՑԵԼՑԱՆԻՆ

(էջ 622)

Ինքնագիրը պահվում է Բեյրութի Համազգային ճեմարան, Սիմոն Վրացյանի արխիվ, թղթածրար 150-14:

Քրիստափոր Միքայելյան (1859-1905) — հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ հիմնադիրներից, 1891 թ. Թիֆլիսում «Դրոշակ» թերթի հրատարակիչ և խմբագիր: 1893 թ. թերթը հրատարակվել է Ժնևում դարձյալ Ք. Միքայելյանի գլխավորությամբ. նրան օգնում էին Մ. Վարանդյանը, Է. Ակնունին: Դարասկզբին այս թերթին էին թղթակցում այնպիսի գրական դեմքեր, ինչպիսիք էին Ավետիք Իսահակյանը (Հայ Գուսան), Ավետիս Ահարոնյանը (Ղարիբ), Սիմանթոն:

Ք. Միքայելյանը զոհվել է 1905 թ. մարտի 1-ին ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ, Վիտոշ լեռան փեշերին: Թաղված է Սոֆիայում:

[1] Տարեթիվը՝ ըստ բովանդակության: Դեռ 1900 թ. նոյեմբերին Ք. Միքայելյանը Իսահակյանին դիմել էր Հայ Հեղափոխական Դաշնակցությանը նվիրված մի բան գրել, քանի որ մտադիր են 1901 թ. հունվարին ՀՅԴ 10-ամյակի առթիվ բացառիկ թիվ հրատարակել (այս մասին տես Հ. Տասնապետյան, Ք. Միքայելյանի նամակները,

Բեյրութ, 1993, էջ 193): Ավ. Իսահակյանը պատասխանում է 3 ամիս անց՝ 1901 թ. փետրվարին՝ նամակի հետ ուղարկելով պոեմը Հայ գուսան ստորագրությամբ: Սակայն, ինչպես երևում է, 1901 թ. հունվարի բացառիկ թիվը հրատարակվել է ուշացումով, առնվազն փետրվարի 22-ից հետո, մարտ ամսին: Ի դեպ, «Դրօշակ»ի հաջորդ համարը՝ թիվ 2, տպագրվել է 1901 թ. ապրիլին:

[2] Խոսքը Ավետիք Իսահակյանի «Գողթան քնարը, որ ազատության» սկսվածքով, «Սազը չթողեց, որ կտրիճ դառնամ,/Թուրը չթողեց, որ գուսան դառնամ» բնաբանով պոեմի մասին է, որ որոշել էր նվիրել «Դրօշակ» թերթի տասնամյակին, սակայն հեղինակը բնագրում ուղղում է արել՝ «Դրօշակ» բառի փոխարեն դրելով «Դաշնակցության»: Քր. Միքայելյանն այն տպագրել է «Դրօշակ» թերթում «Դաշնակցության տասնամյակին» վերնագրով («Դրօշակ», Ժնև, 1901, թ. 1, էջ 4-6):

[3] Նկատի ունի պոեմի («Դաշնակցության տասնամյակին») «Ա՛յ սարե՛ր, ձո՛ւն ձորե՛ր,/Ջավահի՛ր սարեր...» տողերը («Դրօշակ», 1901, թ. 1, էջ 5):

[4] Դաշնակցական գործիչ Ջավահիր Ներսիսյանը 1900 թ. սովորում էր Ժնևի համալսարանում, ընկերական շրջապատում հայտնի էր Ջավո անունով: Ուսանողական տարիներին նա մտերմացել էր Ավետիք Իսահակյանի հետ: Վերջինիս Վենետիկ գնալուց հետո էլ նրանց հոգևոր կապը չարունակվել է նամակագրության միջոցով (1900-1901 թթ.): 1903 թ. Ջավոն ամուսնացել է գրող, ՀՅԴ գործիչ Լևոն Շանթի հետ:

[5] 1901 թ. մարտ-հունիս ամիսներին Ավ. Իսահակյանը գտնվում էր Վենետիկում՝ Ս. Ղազար կղզու Ջեռագրատանը պարապելու և բուժման նպատակով:

[6] 1899-1901 թթ. Ավ. Իսահակյանը «Դրօշակ»ին ուղարկել էր 11 բանաստեղծություն (Հայ Գուսան ստորագրությամբ), սա 7-րդն էր, որ տպագրվել է «Հայդուկի երգերից» ընդհանուր խորագրի տակ:

[7] 1890 թ. «Դրօշակ» թերթի շուրջը ճևավորվեց Հայ հեղափոխական դաշնակցության Եվրոպայում գործող թևը՝ Արևմտյան բյուրոն, որի կազմում ընտրվեցին Ռոստոմը, Քր. Միքայելյանը, Ա. Վռամյանը, Արմեն Գարոն և Սմբատ Խաչատրյանը (Բորիս Ծածկանունով):

Այս խմբից միայն Ռոստոմը տեղափոխվեց Բուլղարիա, իսկ մնացածը շարունակեցին գործել Ժնևում կազմավորված Արևմտյան բյուրոյում:

ՆՎԵՐ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՑԱՆ ՏԱՍՆԱՄՑԱԿԻՆ
(էջ 624)

Ինքնագիրը պահվում է Բեյրութ, Սիմոն Վրացյանի ֆոնդ, թղթ. 150-15:

Առաջին անգամ տպագրվել է «Դրոշակ», 1901, թ. 1, էջ 4-6: Հետագայում տպագրվել է նաև Ավետիք Իսահակյանի «Հայդուկի երգեր» գրքում (կազմող և ծանոթագրող՝ Ավիկ Իսահակյան), Երևան, Արևիկ, 1990, էջ 100-110:

Ավ. Իսահակյանի ներկայիս հրատարակության երկերի լիակատար ժողովածուի IV հատորում (Պոեմները) թյուրիմացաբար չի ընդգրկվել 1901 թ. Վիեննայում բանաստեղծի գրած «Գողթան քնարը, որ ազատության...» սկսվածքով պոեմը: Հայցելով մեր ընթերցողի ներողամտությունը, հրապարակում ենք այն ակադեմիական հրատարակության XIV հատորում՝ Քրիստափոր Միքայելյանին ուղղված նամակին զուգահեռաբար՝ որպես հավելում:

[1] Ինքնագիրը պահվում է Բեյրութ, ՀՅԴ արխիվ, Սիմոն Վրացյանի ֆոնդ, թղթ. 150-13:

[2] Ավ. Իսահակյանը Ք. Միքայելյանին 1901 թ. փետրվարի 22-ին գրած նամակի հետ ուղարկել է նաև ՀՅԴ հիմնադիրին նվիրված այս բանաստեղծությունը «Մեր Քրիստափորը, որ ինքը ժընևև...» սկսվածքով: Ցավոք, ձոնը առ այսօր տպագրված չէ, ուստի այն ընդգրկում ենք այս հատորում, հավելում բաժնում:

3. «ԴՐՈՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՑԱՆԸ
(էջ 634)

Ինքնագիրը պահվում է Բեյրութ, ՀՅԴ արխիվ, 40-46:

[1] Ժնևում ստեղծված ՀՅԴ Արևմտյան բյուրոյի և Բուլղարիայի ազատագրական շարժման գործիչների միջև ակտիվ համագործակցություն է ստեղծվել հատկապես 1899-1900 թթ.: Հայ և բուլղարմակեդոնական համագործակցությանն ակտիվորեն մասնակցել ու քաջալերել է դաշնակցական գործիչ Ռոստոմը (Ստ. Զորյան): Բուլղարիայում մեր հայդուկային խմբերը զինավարժություններ էին անցկացնում, ական ու պայթուցիկ ռումբեր պատրաստել սովորում, խմբեր թրծում՝ Արևմտյան Հայաստան ուղարկելու համար: Հայ-մակեդոնական զինակցությունը ընդհատվում է 1901 թ. հուլիսին (ահաբեկչական մի գործողությունից հետո), երբ հայերի 10 հոգանոց հայդուկային խումբը հայտնվում է 1500 զինվորների շրջափակման մեջ. հերոսաբար կռվելուց հետո 6-ը զոհվում են, իսկ կենդանի մնացած 4 հայ հայդուկի Ադրիանապոլսում հրապարակավ կախաղան են բարձրացնում:

«ԵՐԿՈՒ ՔԱՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ»

(Վերջաբան)

Երբ ավարտում ես Իսահակյանի Նամականու XIII և XIV հատորների ընթերցումը, մեկ անգամ ևս հավաստում ես՝ Իսահակյանի Նամականու երկու հատորում այնքան խոհեմություն, իմաստություն է պարփակված, որ այդ նյութը պարզապես մեկ ընթերցմամբ հնարավոր չէ յուրացնել, ընկալել, անհրաժեշտ է այստեղ խորությամբ ուսումնասիրել:

Նամակը ո՛չ վեպ է, ո՛չ պոեմ, ո՛չ պատմվածք և ո՛չ էլ բանաստեղծություն, բայց նամակը Իսահակյանի ձեռքի տակ դառնում է այն բանալին, որ թույլ է տալիս ըմբռնել նրա վիթխարի ստեղծագործության ներքին լիցքերը, որ թույլ է տալիս հասկանալ մեծ Վարպետի կյանքի պատմությունը: Զորս մասի ծալած թուղթը հաճախ, ինչպես բանաստեղծի ձեռքի գավազանը, օգնում է մեզ Վարպետի հետ անցնել նրա կյանքի դրամատիկ ու արարիչ, հերոսական ու մարտնչող կյանքի ճամփեքով: Դրանք հազվագյուտ լուսատուներ են, որ ճշմարիտ լուսավորում են նրա կյանքի ուղին:

Եվ նամակը ինքնին ինքնախոստովանություն է և օգնում է ստեղծել հեղինակի ճշմարիտ ինքնադիմանկարը:

Շնորհիվ նամակի բացահայտվում է հեղինակի՝

Հայրենյաց աշխարհը,

Ստեղծագործական աշխարհը,

Սիրո աշխարհը:

Այն աշխարհը, որտեղ ապրել է մեծ հայրենասերը, պոետհայդուկը, խոհուն փիլիսոփան, մեծ սիրահարը:

Որքան հարուստ է Իսահակյանի կյանքի պատմությունը, այնքան հարուստ է նրա Նամականու ներկապնակը:

«Ինչո՛ւ եկա Եվրոպա՝ այդ նպատակն այնքան ուժեղ չէ, որքան այն, որ ձիով մի դյուղից անցնեի, և վրես շները հաչեին, ու մի դռնից մի սառը ջուր խնդրեի, և հայ աղջիկը ինձ ջուր տար: Մտածում եմ, որ մայիսին վերադառնամ, ես չեմ կարող Եվրոպա մնալ, հոգիս դուրս է գալիս... Ես հայ ժողովրդից հեռու չեմ կարող ապրել: Երազումս միշտ թառի ձեներ եմ լսում և չա՛տ ուրախանում եմ, երբ գիշեր է գալիս. քնել ու հայրենիքի կարմիր, սիրուն երազները տեսնել...» *(XIII, 51-52):*

Ջավահիր Ներսիսյանին, 1900, դեկտեմբերի 2-ին Ցյուրիխից գրված նամակի այս տողերը թերևս առաջին հայտն են այս մորմոքի, որ հետագայում ամբողջ կյանքում պիտի տանջի Իսահակյանին՝ հայրենիքից դուրս ապրելու պարտադրանքը և կարոտն առ հայրենիք:

Ճակատագրի այս պարտադրանքն օրինաչափ էր քաղաքական մարտիկի ճամփան ընտրած բանաստեղծի համար: Այս խնդիրը նրա առջև ծագելու էր յուրաքանչյուր անգամ, երբ նա ստիպված հայտնվում էր օտար երկնքի տակ:

Անցյալի մեծ գրողները, որպես օրինաչափություն, սիրում էին նամակ գրել, հազվադյուտ դասական կգտնեք, որն իր գեղարվեստական ստեղծագործությունների կողքին չունենա հարուստ նամակագրական ժառանգություն: Ռուս դասականների շարքում նամակ գրելու տեսակետից առաջատարներն են Լև Տոլստոյը, Չեխովը, Մաքսիմ Գորկին:

Հայ բանաստեղծներից սիրել են նամակ գրել Թումանյանը, Իսահակյանը, Տերյանը:

Ինչքան մեծ են գրողի շրջապատը, նրա կյանքի աշխարհագրական քարտեզը, ուղևորությունները, այնքան շատ են բնականաբար նրա գրած նամակները: Այդ տեսակետից 19-րդ

դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսերը հայ մեծ հեղինակներից ամենաշատ ճանապարհորդած, աշխարհ տեսած մարդը Իսահակյանն էր: Չի եղել մի տասնամյակ նրա կյանքի տարեգրությունից, որ նա երկիր փոխած չլինի, որ նա անվրդով, խաղաղ ապրի նույն բնակավայրում: Այդ, ըստ երևույթին, նրա էությանը (նատուրային) անհարիր էր: Այդպիսին էր մեծ բանաստեղծի խառնվածքը հենց ուսանողության օրերից՝ եվրոպական քաղաքներ՝ Վիեննա, Լայպցիգ, Բեռլին, Ցյուրիխ, Վարշավա: Ռուսաստանի հարավում ու հյուսիսում ճամփորդելիս՝ Թիֆլիս, Բաքու, Ռոստով, Նախիջևան, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Ռիգա, Օդեսա...

Եվ կրկին եվրոպական երկրներ՝ Վիեննա, Փարիզ, Ժնև, Ցյուրիխ, Վենետիկ, Սուրբ Ղազար կղզի...

Կյանքի առավել հասուն շրջանները՝ կապված հայ ազգային-ազատագրական շարժման հետ, Հայկական հարցի հետ, որի ընթացքում կլինեն նամակներ և՛ բանտից, և՛ աքսորից, և՛ քաղաքական վտարանդիության առաջին կայանից՝ Կոստանդնուպոլսից, և օտար երկրի փոստային կնիքը կդառնա նրա կյանքի անբաժան ընկերը, մի երկար, չա՜տ երկար շրջան՝ Գերմանիա՝ Բեռլին, Շվեյցարիա՝ Ժնև, Իտալիա՝ Վենետիկ, և վերջին օտար կանգառը՝ Ֆրանսիա՝ Փարիզ: Այսպես քառորդ դար, հետհասցեն Ժնև՝ «Դրոշակ»-ի խմբագրություն, Մխիթարյան միաբանության սրբավայր կացարաններ՝ Վիեննա և Վենետիկ, ապա հյուրանոցներ ու վարձով տներ, Ժնև-Ցյուրիխ և մեծ ու փոքր շվեյցարական գյուղեր, ապա Փարիզ Դենֆեր Ռոշրու թաղամաս, Հանրի Բարբյուսի փողոց... Շատ նամակներ էլ ուղարկվում էին օտար փոստատներ Msr Avetik Isahakian ց՝ պահանջ:

Աշխարհի հետ, հայրենիքի հետ, ընկերների ու հարազատների հետ պոետի կապի հիմնական միջոցը եղել է նամակը:

Իսահակյան-նամակ փոխհարաբերությունն էլ ունի իր ներքին մի շարք առանձնահատկությունները: Ինչպես իր բազում բանաստեղծություններում որպես օրենք խոսքը, հանգն ու վանկը, բառը ուղղված են եղել իր հայրենիքին, իր բնօրրանին, «Հայաստան» քաղցր անվանը, ինչպես Իսահակյանի բոլոր հուշերը պատմում են հայ մարդկանց մասին, այնպես էլ պոետի նամակները բացառապես ուղղված են իր ժողովրդի զավակներին, իր հայրենակիցներին, և կարծես այս մեծ աշխարհում Իսահակյանի հիմնական հասցեատերերը էլի կրկին հայերն են: Անշուշտ, նա գրել է նամակներ և օտարերկրացիներին, սակայն դրանք երբեք առաջնային նշանակություն չեն ունեցել, այն, ինչի մասին նա էր գրում, առաջին հերթին ուղղված էր հայ մարդուն՝ հայությանը:

Ա. «ՀԱՑՈՒԹՑՈՒՆ... ՈՒՐԻՇ ՈՋԻՆՋ»

Նամակը բանաստեղծի ստեղծագործական կյանքում չափազանց անհատական, չափազանց անկեղծ ու ճշմարիտ մի ճյուղ է: Սովորաբար նամակներում չափածոյից են հատվածներ բերվում, բայց Իսահակյանի նամակների շատ տողեր կարող են ընկալվել որպես չափածո կտորներ:

«Մի մոմենտ ևս՝ Ադամ գրկած ունի Եվային, բայց տեսնում է հեռվում Լիլիթին՝ սավերային, երազային, մշուշային... Այս կետը իմ պոեմայիս հիմնական գաղափարներից մեկն է, որ մարդ հաճախ (հեռու լինի մեղնից և մեր կիներից) մեկին գրկած մյուսին է երազում, նրան՝ որ թռավ, որ անմատույց էր» *(Ս. Խաչատրյանին գրած նամակից, XIII հ., էջ 479)*

Լինելով մեր դասականների շարքում լակոնիկ խոսքի, թևավոր մտքի, աֆորիզմի ժանրի ճանաչված վարպետ՝ Իսահակյանն իր նամակների գերակշռող մասում երևան է բերում այս կամ այն խնդրի կապակցությամբ այնպիսի եզրահանգումներ, մտորումներ, որոնք կարելի է անվանել հանճարեղ մտքի առկայծումներ: Իսահակյանի նամակն ունի իր ստույգ ոճաբանությունը՝ հակիրճ խոսք, ոչ մի ավելորդություն և քնարական զեղումներ: Այդպիսիք իրենց չարադրանքով արգասիք են մեծ պոետի մտածողության, ասելիքի խոհական ուղղվածության և կազմում են տվյալ հարցի առնչությամբ նրա մտածելակերպի կվինտէսենցիան: Նման տողերը, եթե հանենք նամակի համատեքստից, կդառնան կատարյալ թևավոր խոսք կամ էլ հակիրճ ստեղծագործական էսյուդ, գուցեև հասցեատիրոջ դիմանկարի վարպետ ձեռքով արած ճեպանկար, և մեկ այլ դեպքում՝ հեղի-

նակի ինքնադիմանկարի փորձ: Հենց իր արվեստով է նամակագիր Իսահակյանը ուժեղ, որովհետև չափազանց անկեղծ է ու ազնիվ, չէ՞ որ, ի վերջո, յուրաքանչյուր նամակ յուրահատուկ խոստովանանք է, և նամակների հատորն իր ամբողջությամբ ճշմարիտ ինքնադիմանկար ստեղծելու փորձ է, ինչպես և ինքնաբացահայտման հազվագյուտ միջոց: Մեկը (նամակագիրը) խոսում է մյուսի հետ (հասցեատիրոջ), արդյունքում սա մենախոսություն է՝ գրված երկխոսություն դառնալու միտումով, զրուցակցի դերում էլի մեկն է հանդես գալիս, նա, ով իր գրավոր խոսքն ուղղում է նամակն ստացողին՝ ակնկալելով, որ իր ասածը պետք է դառնա նաև սեփականությունը՝ սկզբում մեկ ընթերցողի, իսկ հետո (կախված նրանից, թե ով է գրողը) նաև հանրության: Այս է նամակի տողի տակ թաքնված ուժը:

Իսահակյանի հետևյալ տողերը Սարյանին գրված նամակից (1924, 12/XII).

«...ռուսական մի կարմիր գինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե 1000 Վիլսոն ու Ազգերի լիգա, 1000 Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է»: *Ի վերջո, ոչ միայն Մ. Սարյանին են ուղղված, այլև ողջ հայ ժողովրդին:*

Ուրեմն, գրում ես մեկ մարդու, բայց քեզնից անկախ այն դառնում է հանրության սեփականությունը: Նման մեծություններ, ինչպիսիք են Իսահակյանը, Թումանյանը, Սարյանը (յուրաքանչյուր անվանի նամակագիր), անշուշտ գիտակցում են, որ իրենց գրածը մի օր դառնալու է հազարավոր ընթերցողների սեփականությունը, ինչպես ասենք նրանց գրած մի բանաստեղծությունը, պոեմը, նայուրմորաը: Ուրեմն՝ նամակ գրելը նաև բարձր պատասխանատվություն է:

Եթե ասելիք չունենար, Իսահակյանը նամակ չէր գրի: Սա էլ է խառնվածքի գիծ: Եվ ևս մի կարևոր էթիկական հանգա-

մանք, ում էլ գրեր նամակը Իսահակյանը՝ սիրած կնոջը թե ոչ համակրելի անձի, մոտ ընկերոջը թե քաղաքական ընդդիմախոսի, նա իր նամակներում վերին աստիճանի նրբանկատ էր, բառի արժեքն իմացող:

«Սա է իմ նամականին»,— ինչ-որ մի տեղ նշանակում է «Սա եմ ես», կարդացե՛ք, ես գաղտնիք չունեմ, չէ՞ որ նամակը ևս բարձրաձայն ասված խոսք է:

Սովորաբար մի վեպը գրվում է 3-5 տարի, մի պատմվածքը՝ 3-5 ամիս, մի բանաստեղծությունը՝ 3-5 օր, գրեցիր և վերջացրիր, իսկ նամականին գրվում է մի ողջ կյանք, սա մի վեպ է, որը վերջ չունի և չունի մի ստույգ հասցեատեր, նա նույնպես ուղղված է բոլոր նրանց, ովքեր կբացեն Նամականու հատորները, սակայն այն ունի ստույգ մեկ հեղինակ, նա, ով ստորագրում է նամակի տակ: Եվ եթե դասականի պատմվածքների հատորն ես կարդում և մտածում ես, թե որքան հետաքրքիր ու տարատեսակ պատմվածքներ կան այս գրքում, ապա Վարպետի Նամականին կարդալիս մտածում ես, թե որքան տարբեր է, հակասական ու ինքնատիպ այս նամակների հեղինակը, որովհետև այդ նամակների հատորի ժամանակագրական տևողությունը մի ամբողջ կյանք է՝ երկու դարաշրջան՝ 1889 թվականից մինչև 1957 թվականը: Եվ այս ընթացքում ինչ ֆորմացիաներ անցավ Հայաստանը՝ ռուսական ցարական կայսրություն, Հայաստանի Առաջին անկախ Հանրապետություն, Անդրկովկասյան Ֆեդերացիա՝ սովետների կազմում, Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Իսկապես որ միշտ՝ «Երկու քարի արանքում...»:

* * *

Բանաստեղծի Նամականու հատորները յուրահատուկ հանրագիտարան են: Նրանք եզակի աղբյուրագիտական արժեք

ունեն մեծ անհատի կյանքի պատմության ուսումնասիրության, նրա գիտական կենսագրության և, իհարկե, լայն շրջանի ընթերցողների հոգու ծարավը հագեցնելու համար: Հազար ու մեկ հարցի պատասխան կա Իսահակյանի նամակներում: Նրանք հսկայական ինֆորմացիա են պարունակում առաջին հերթին հայագիտության խնդիրների վերաբերյալ:

Ինքնին գերագույն հաճույք է կարդալ մեծ ստեղծագործողների նամակները՝ Թումանյանի նամակները, Իսահակյանի նամակները, Սարյանի նամակները: Ոճի մասին հակիրճ ասացի, բայց այդ ոճն էլ հարափոփոխ է, անընդհատ փոխվում է, ընթերցողը եթե ուշադիր է, Իսահակյանի ոճից անգամ կարող է ըմբռնել՝ համակրո՞ւմ է պոետը իր հասցեատիրոջը, թե՞ հակառակը: Իսկ եթե հասցեատերը հակառակ սեռին է պատկանում՝ սիրո՞ւմ է արդյոք Իսահակյանն իր հերոսուհուն, իսկ եթե սիրում է, ապա ի՞նչ աստիճանի, խոսքերը երբեմն կարելի է թաքցնել, բայց ոճը՝ երբեք.

«Համբուրում եմ տ. Վավայի ձեռքերը, գիտնալով, որ աչքերին պիտի տանի համբուրածս ձեռքերը»,— գրում է Իսահակյանը՝ 1923, հոկտեմբերի 13, նկարչուհի Վավա Խաչատրյանի առնչությամբ (բանաստեղծի կյանքի պատմության ամենահանելուկային հերոսուհիներից մեկի վերաբերյալ):

Գեղեցիկի նկարագրություններ, բացառիկ տաղանդավոր արձակագրի գրչով է նկարագրված Եվգինե Թերյանին ուղղված նամակում (<1904>, 15 օգոստոսի) հեղինակի վերելքը մի խումբ ընկերների հետ դեպի Արագած լեռան գագաթը.

«Ահա և գագաթը, բա՛րձր սա՛ր, ազա՛տ վե՛հ և միստիկական-փիլիսոփայական... Կեսօրին լեռան գլխումն էինք. հրացանի որոտմունքով ողջունեցինք մեր վերելքը. արծիվները չփոթված պոռչյտ գործեցին մեր գլխավերևը, միայն երկինքը և արևը մնացին լուռ, անտարբե՛ր և ազա՛տ... Փչում էր ազա՛տ քամին

այդ բարձունքում և դնում դեպի Հիմալայ կամ ավելի հեռու՝ դալով ավելի հեռու՝ տեղերից...» *(XIII, 88)*:

Հայտնի է, որ երկար տարիներ օտար ափերում ապրելով՝ Իսահակյանը չատ է տառապել նոստալգիայով (կարոտախտով): Վիթխարի է նրա սերը առ հայրենիք, անգամ Գերմանիայում սովորելու տարիներին, երբ նա հայրենիքից պիտի բացակայեր ընդամենը 2-3 տարի, էլ չենք խոսում հայրենիքից բացակա լինելու 10-15 տարիների մասին, երբ նա կայսերական Ռուսաստանի պատժիչ մեքենայի հետապնդումներից խուսափելու համար ստիպված էր տարագրության մեջ ապրել Թուրքիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, իսկ հետո և Ֆրանսիայում: Առավել է ամրանում բանաստեղծի նոստալգիան Ժնևում և Վենետիկում ապրած տարիներին:

* * *

Բանաստեղծը վիթխարի ողբերգություն ապրեց 1915 թվականի Մեծ եղեռնի և նրան հաջորդած տարիներին:

Ահա բանաստեղծի առաջին արձագանքը Մեծ եղեռնի վերաբերյալ (Գարեգին Լևոնյանին Ժնևից, 1916 թ., 2 ապրիլի գրած նամակից).

«Նզովված, հազար անգամ նզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց. Օ՛, ի՛նչ սարսափելի օրեր եմ անցրել և անցնում եմ. այս ի՛նչ արյունոտ խելագարություն է,— սպանություն, սպանություն, արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն. Հայաստանն այլևս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան...

Ամբողջ հոգով ու սրտով ռուս քաջարի զինվորների հետ եմ հայոց լեռներում: Նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի դլուխը ջարդել և ազգեր ազատել –

Հունաստան, Ռումանիա, Սերբիա, <...>, Բոլգարիա, այսօր հերթը հայերիս հասավ» *(XIII, 264)*:

Իսկ ահա տողեր ռուս-թուրքական պատերազմի ընթացքում Կարինի բերդը գրոհելիս հերոսաբար ընկած բանաստեղծի եղբորորդու՝ 22-ամյա Իսահակի հիշատակին.

«Միակ մխիթարությունը այն է, որ հերոսի պես ընկավ մեծ դաղափարի համար, հայրենիքի համար, սուրբ նահատակ, անմահ դարձավ, հայ ազգը հավիտյան կհիշե իր ազնիվ, իր սիրուն զավակին, որ իր տաղանդը և դալար կյանքը զոհ բերեց, հավիտյան համբուրելի կմնա նրա սուրբ գերեզմանը»[1]:

Եվ այսպես շարունակ՝ հայոց պատմությունը, ազգային ապատամարտը, Հայոց Հարցը. հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը այն միակ ուղեցույցն է (կոմպաս), որի սլաքով ընթացել է Իսահակյանի ուղին: Եվ պատմության անիվն էլ, 20-րդ դարից սկսած պետք է տաներ մեր ժողովրդին իր բազմադարյան գոյության ամենածանր ու ողբերգական ուղիով՝ Մեծ եղեռն, Առաջին համաշխարհային պատերազմ, Հայաստանի անկախ Հանրապետություն, Սոցիալիստական հեղափոխություն և ռուսական կայսրության փլուզում, խորհրդային կարգերի հաստատում Հայաստանում, հայոց պատմական հողերի մասնատում, բոլշևիկյան Հայաստան:

Ինչպես պիտի այս ամենին արձագանքեր Իսահակյանը: Կամփոփեմ երկու բառով. «Կարդացե՛ք Իսահակյանի նամակները»:

---

[1] *Իսահակ Իսահակյան – 1894-1916, երիտասարդ բանաստեղծ, հետմահու պարգևատրվել է «Գեորգիևյան խաչ» շքանշանով: Թաղված է Գյումրիի Խոմչեսաի գինվորական գերեզմանոցում:*

* * *

Նրա հասցեատերերի շարքում 20-րդ դարի ամենաազդեցիկ ու խոշոր հայ քաղաքական գործիչներն են (երիտասարդության տարիներից հավատարմված «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությանը): Երկար տարիներ նա մշտական նամակագրության մեջ է եղել Քրիստափոր Միքայելյանի, Ավետիս Ահարոնյանի, Սիմոն Վրացյանի, Ռուբեն Դարբինյանի, Վահան Նավասարդյանի, Համո Օհանջանյանի, Նիկոլ Ադբալյանի, Երվանդ Խաթիսյանի, Վարդգես Ահարոնյանի, Վահան Զաքարյանի, Հակոբ Նևրուզի և այլոց հետ: Մեծ պոետը, բացառությամբ Հովհաննես Թումանյանին, Մ. Սարյանին, Գ. Լևոնյանին գրած նամակների, այնքան անկեղծ, հստակ ու ծանրակշիռ չի արտահայտել իր քաղաքական հայացքները, որքան իր դաշնակցական ընկերներին: 1959 թ.՝ բանաստեղծի մահից երկու տարի անց, Կահիրեի «Յուսաբեր» տպարանը հրատարակեց «Ավետիք Իսահակյանի նամակները» 170-էջանոց ժողովածուն, որտեղ զետեղված էին Ավետիք Իսահակյանի գրած նամակները ՀՅԴ երևելի դեմքեր Վ. Նավասարդյանին, Ռ. Դարբինյանին, Ե. Խաթիսյանին և Վ. Ահարոնյանին, ինչպես և Սիմոն Վրացյանը, 1962 թ. Բեյրութում իր «Հին թղթեր նոր պատմության համար» գրքում հրատարակեց իրեն գրած Իսահակյանի նամակները:

Ցանկանում եմ այստեղ նշել Իսահակյանի «հին ընկերներ» հասցեատերերի բարձր բարոյական կեցվածքը, նրանցից ոչ մեկը անգամ մեկ տող չէր հրատարակել Վարպետից ստացած նամակներից բանաստեղծի կենդանության օրոք՝ հրաշալի գիտակցելով, որ դրանով իսկ իրենք կարող էին մահացու վտանգի ենթարկել 1936 թ. ի վեր Խորհրդային Հայաստանում ապրող Իսահակյանին: Ոչ մի ակնթարթ նրանք չեն տարակուսել,

չեն դայթակղվել սենսացիոն հրապարակում աներով, հավատարիմ մնալով թե՛ ընկերության կողեքսին, թե՛ Դաշնակցության սկզբունքներին: Իրենց մոտ պահվող նամակներից ոչինչ երևան չհանեցին, քանի կենդանի էր Իսահակյանը: Ինչպես չասել. «Հին ընկերները չեն դավաճանում»:

Մինչդեռ եթե 1936-1939 թթ. որոշ հատվածներ տպագրվեին վարպետի գրած նամակներից, դժվար չէ ենթադրել ի՛նչ հաշվեհարդար կտեսնեին բանաստեղծի հետ բոլշևիկ կոմիսարները:

Որպեսզի հայ ընթերցողը ճշմարիտ տպավորություն կազմի Հայաստանի խորհրդայնացումից հետո Իսահակյանի այդ շրջանում ձևավորված քաղաքական հայացքների, պատմական այդ դառը հատվածի վերաբերյալ, որ հայ ժողովուրդը վերապրեց 1915 թ., 1917-1921 թթ., թե ինչպես փրկեց բոլշևիզմը կործանվող Թուրքիային, և եվրոպական պետությունները դավաճանեցին Հայաստանին, ես կբերեմ մի շարք ընտիր հատվածներ Իսահակյանի Նամականիից իր դաշնակցական ընկերներին.

Վ. Նավասարդյանին.

«...այսօր Կովկասում հեգեմոնիան խալամի ձեռքն է, և թող ոչ մի հայ չհուսա, որ քանի բոլշևիզմը կա, Հայաստանի հողի վրա մի թիզ հող կավելանա, երբե՛ք, դեռ պիտի խլեն: Ղարսը, Իգդիրը և այլն, կորած են մինչև Սովետների անկման օրը» *(1924, 3 ապրիլ, XIV):*

«Եվ իմ կարծիքով՝ ոչ Իթթիհատը, ոչ ցարիզմը, ոչ Գերմանիան ու Անտանտը ավելի հիմքով չկործանեցին մեր տունը, ինչպես բոլշևիզմը, այդ գազանական շարժումը, որ մուկ դարձած թուրքերին հասցրեց մինչև Բաքու» *(2 ապրիլի, 1924, XIV, 29):*

Ռուբեն Դարբինյանին.

«Այդ շների հետ գլուխ ելնելը դժվար է, նույնիսկ անկարելի, ոչ օրենք կա, ոչ դատ, միայն տեռոր: Մի լաթի կտոր՝ միլիոնավոր-

ների արյունով կարմրացրած՝ չինել են մի փետիշ, տակը մի հիմար, անհեթեթ դաղափար մոնղոլական, անպիտական, նախնական-անասնական կոմունիզմ, որին իբրև բանալի՝ սերունդներ ու կուլտուրաներ են զոհում՝ չնախատեսելով, որ սրա վերջը հանգելու է մի չտեսնված ուժեղ ցարիզմի, մի ազգայնական Ռուսիայի... Եվ դեռ Լենինին հռչակում են հանճար: Ոճրագործ ավանտյուրիստներ են՝ նույնիսկ հակառակ իրենց մարքսիզմի: Թաղեցին ամեն բան, և՛ սոցիալիզմ, և՛ դեմոկրատիա, և՛ ապագայի հավատ, և՛ երազ: Մարդ չգիտե, թե ինչպես վարվի այդ թալեաթների հետ» (1923, 25 փետրվար, *XIII, 481*):

«Եվ վերջապես, սոցիալիզմը մի բարեգործական բան է, ոչ թե մետաֆիզիկա, փիլիսոփայություն, ընդգրկող աշխարհայացք: Մարքսը գրոշանոց փիլիսոփա է, շատ նախ: Սոցիալիզմը մեծ քաղաքների արդյունք է: Գյուղացին երբեք սոցիալիստ չի դառնա, և սոցիալիզմը երբեք մարդու հոգեբանության հետ չի հարմարվի... Ես խղճում եմ բանվորին – միայն այսքան: Բայց նրա պաշտամունք, նրա դիկտատուրա – գարշում եմ» *(1923, 15 սեպտեմբեր, XIII, 506)*:

«Բոլշևիզմի տևողությունը շատ է ջղայնացնում ինձ: Նրա դիմանալը չեմ կարող բացատրել, թեև հակառակ է իմ լսած ու կարդացած սոցիոլոգիկ տեսություններին: Մինչև ե՞րբ պիտի մնա: Ավտոս չէ՞ր ցարիզմը: Ի՞նչ բռնեց սրա տեղը – թաթարական հեգեմոնիա Կովկասում: Երևի մինչև որ վերջին բոլշևիկ-կոմունիստ շունը չսատկի Լենինի պես, օր չենք տեսնելու» *(1924, 3 ապրիլի, XIV, 25)*:

Վարդգես Ահարոնյանին.

«Պարզ է, որ բոլշևիզմը թշնամի է Հայաստանի միացման և անկախության: Նրա սրիկա ռուս և ջհուդ չեֆերը Հայաստանը զոհեցին Մ. Քեմալի բարեկամության համար, թքելով ոչ միայն հայերի վրա, այլև իրենց սոցիալիստական ծրագրի վրա. ուրեմն

մեզ մնում է պայքարել, զարկել, ինչքան կարող ենք, դուցե մինչև այդ լիրբ բոլշևիզմը ընկնի սովի ճիրանների տակ սատկած, և Մ. Քեմալը՝ հույների ոտքի տակ պարտված, և մենք նորից չունչ քաշենք. գալիք նոր Ռուսիան դուցե ուրիշ կերպ վերաբերի մեզ» *(1921, 18 օգոստոսի, XIII, 367)*:

«Բայց բոլոր նշաններից այնպես է երևում, որ բոլշևիկները մտադիր չեն թուրքերի հետ գեշանալու և եթե մեր ունեցածը չտան, թուրքերի խլածից մի թիզ հող խլելու չեն. սա պարզ է ինձ:

...Բացի այդ, եթե գնամ Ռուսիա, արդյոք հանգիստ պիտի թողնեն ինձ նրանք, թե պիտի լրտեսեն ու երբեմն էլ լակոտ բոլշևիկները ծաղրեն, քանի որ Լենին ասած հրեշը ռուս երիտասարդությանը վերացրեց ամբարտավանությամբ, լրբությամբ, նախանձությամբ:

...Իմ կարծիքով հայությանը այնքան չհարվածեց ո՛չ սուլթան Համիդը, ո՛չ Գերմանիան, ո՛չ Թեթիհատն ու Միլլին, ո՛չ Ցարիզմը, ո՛չ Անտանտը, ո՛չ մեծ պատերազմը, որքան, դուցե ակամայից, բոլշևիզմը. եթե բոլշևիզմը չգար, ռուսները հիմա ամուր նստած էին Մուշ ու Երզնկա, և մենք էլ մեր տանը, և հայոց հարցն էլ իր տրամաբանական ելք-լուծումը ստացել էր» *(1924, 21 փետրվար, XIV, 15)*:

Իսահակյանը հաստատուն է և չափազանց կայուն իր սկզբունքներում, նա արդեն ՀՅԴ Ջորրորդ ընդհանուր ժողովից չի ընդունել ՀՅԴ կուսակցության որոշակի սոցիալիստական հակումները՝ համարելով սոցիալիզմը «ստամոքսի փիլիսոփայություն», և ենթարկել է քննադատության Դաշնակցության այսպես կոչված սոցիալիստական պլատֆորմը: Չի ընդունել Հոկտեմբերյան մեծ հեղաշրջումը նրա առաջին իսկ քայլերից, երբ պարզ դարձան բոլշևիկների թուրքոֆիլական քաղաքականությունը և Հայաստանի Հանրապետության կործանման ծրագիրը՝ Լենին-Քեմալ դաշինքը:

* * *

Իսահակյանի Նամականու երկհատորյակի՝ 13-րդ և 14-րդ, շուրջ 850 նամակների շարքում Հայաստանի քաղաքական ճակատագրի, Հայկական հարցի, հայոց նոր պատմության վերաբերյալ բանաստեղծի նամակների գերակշռող մասն ուղղված է ՀՅԴ ղեկավար անվանի գործիչներին:

Ուրիշ ո՞ւմ հետ պիտի ավելի անկեղծ լիներ Իսահակյանը, եթե ոչ իր դաշնակցական ընկերների, որոնցից շատերի հետ նա սկսել էր իր առաջին քայլերը. Քրիստափոր Միքայելյան, որի խմբագրած «Դրոշակ» թերթում նա սկսել է տպագրել իր «Հայդուկի երգեր» շարքի առաջին բանաստեղծությունները և «Գողթան քնարը, որ ազատության...» հայրենասիրական պոեմը՝ ձոնված ՀՅԴ «Դրոշակ» թերթի հիմնադրման տասնամյակին: Այդ Քրիստափոր Միքայելյանի մասին է Իսահակյանը գրել (1905. 11 մարտի իր նամակում).

«Ջոհվե՛լ է իմ պաշտած-հարգած-աստվածացրած ընկերը – Քրիստափոր Միքայելյանը, հեղափոխության մարգարեն, «Դրոշակի» խմբագիրը, մեր հոգու տերը, մեր կուռքը... Ես ինձ հիմա որբ եմ զգում, դնա՛ց այն մեծ մարդը, որի համար կյանքը միայն մտածողության, ուրիշների մասին հոգս, ազգի և հայրենիքի համար անհոգնելի և անչահասեր ծառայություն էր, և մենք բոլորս պաշտում էինք նրան – և մեռնելու վտանգվելու գնում նրա գաղափարի համար» *(XIII, 120-121):*

Սիմոն Զավարյան. այդ նրան է ձոնել Իսահակյանն իր լավագույն բանաստեղծություններից մեկը՝ «Սիմոն Զավարյանի հիշատակին».

Նա գալիս էր հին հեռավոր դարերից,
Պատմուճանը փոշիներով թաթավուն,

Մուճակները պատառ-պատառ քարերից,
Ճակատը՝ բաց ցուրտ հովերուն, արեվուն:

Նա նստել էր ոտների տակ Հիսուսի,
Ունկնդրել աստվածային Կտակին,
Հոգում երկինք անհուն սիրո և հույսի,—
Եվ նա եկավ այնպես հեզ ու կաթոդին...

Խնդիրն այն չէ, թե ում և ինչ չափով է իր ժամանակակիցներից վստահել Իսահակյանը, կարևորն այն է, որ այդ նամակներում՝ գրված Ս. Վրացյանին, Վ. Նավասարդյանին, Ռ. Դարբինյանին, Ս. Հակոբյանին, Համո Օհանջանյանին, Վ. Ահարոնյանին, Դավիթ Անանունին, բացահայտվում է սեփական ժողովրդի քաղաքական ճակատագրի մի ողջ կոնցեպցիա, նրա ապագայի տեսլականը: Եթե մենք փորձենք մեր վերջաբանում գոնե հակիրճ ներկայացնել այդ կոնցեպցիան, բանաստեղծի հայացքները, մենք ստիպված կլինենք առնվազն կեսդարյա տևողականությամբ փուլ առ փուլ վերլուծել թե՛ մեծ պոետի աշխարհայացքը, թե՛ նրա գործունեությունը, այն ամենը, ինչ ճշգրիտ հետևողականությամբ շարադրված է նրա նամակներում: Գերադասելի է, անշուշտ, որ ընթերցողն ինքը կարդա այդ նամակները:

Փաստելով մի շարք առաջնային ճշմարտություններ՝ Հայկական հարցը, Հայ ազատամարտը, Հայաստանի քաղաքական ճակատագիրը, կարմիր թելի նման անցնում են Իսահակյանի ողջ Նամականիի միջով, ոչ մի այլ խնդիր՝ փիլիսոփայական, գրական, կենցաղային, այդքան չի զբաղեցրել, գրավել Իսահակյանի միտքը:

Ոչ մի հայ գրող այդքան չի տառապել թուրքերին, որքան Իսահակյանը: Իսահակյանը հիվանդագին պաշտել է հայ ժո-

ղովրդին ու Հայաստանը: Ողջ կյանքում տքնել ու աշխատել է իր «Կյանքի գիրք» Ուստա Կարոյի վրա, հազարավոր են ձեռագրերը, թերթիկները, ծոցատետրերը բանաստեղծին տանջող այս վեպի վերաբերյալ, որ ինքնին պետք է լիներ «Հայկական հարցի» գեղարվեստական արտացոլումը:

* * *

Իսահակյանը մեր հայ գրողներից ամենաշատ երկրներ տեսած, ճանապարհորդած հեղինակն է: Ընդհանրապես և ոչ միայն ճակատագրի բերումով, այլև իր բնավորության թելադրանքով, ասես նա չի կարողացել, ժողովրդի լեզվով ասած՝ «մի տեղում տիտիկ տալ». եթե անգամ Հայրենի Գյումրիում է, պիտի գնա Անի, Մարմաշեն, Տեկոր, Ղազարապատ, Հառիճ... Եթե Դսեղում է, ապա ընկերոջ՝ Թումանյանի հետ պիտի թափառեին Սանահին, Օձուն, Հաղպատ, Ծովեր, Ղարաքիլիսա...

Նամակները՝ որպես «հոգու թարգմաններ» ճշմարիտ ու գեղատեսիլ պատկերներով, վառ գույներով, ինքնատիպ ընկալումով, ցայտուն ու տաղանդավոր պատկերում են այն երկրները, որտեղ եղել է իր «թափառ կյանքում» Իսահակյանը: Արտակարգ գունեղ ու վարպետորեն է պատկերված իր մեծ ճամփի առաջին երկիրը՝ Թուրքիան: Բանաստեղծը Կ. Պոլսից և Պրինկիպո (Իշխանաց) կղզիներից գրում է իր համար շատ թանկ տիկնոջը՝ Վիկտորիա Աբովյանին (1911. 24 նոյեմբերի).

«Պոլիսը ապրելու քաղաք է, հազվագյուտ գեղեցկություններ հետ թեև ունի զզվելի կողմեր, բայց առավելություններն անուրանալի են. ամենից առաջ սքանչելի բնական գեղեցկություններ. կախարդական Բոսփորը. զմրուխտյա կղզիներ. մինչև այսօր ձյուն չէ եկել. վառարանները չենք վառում, տաք, արևոտ օ-

րեր և լուսնակ գիշերներ ենք վայելում, ծովափերը մշտադալար, <ծառերով>, ծաղիկներով փողոցները լի: Քաղաքը աներևակայելի կենդանություն մեջ է. հսկա քաղաք՝ 1.500.000 բնակիչ. տարբեր ազգություններ, խենթացուցիչ գեղեցկուհիներ. Եվրոպայից միշտ գալիս են նշանավոր արտիս<տ>ներ: Ունի անթիվ ամենաշքեղ պալատներ, դղյակներ, ապարանքներ, մարմարյա ու ոսկե: Նավերի անծայր անտառ է չուրջդ. լեզուների Բաբելոն, քաղաքական անակնկալների խառնարան, հրաբուղխի կրատեր: Ամենասիրուն կանանց հետ մրցում են արաբական ձիերը. սակայն այս բոլորի հետ միաժամանակ մտավոր քիչ կյանք կա. չկա կարծին բիբլիոտեկա, համալսարան և այլն»:

Ահա նա պատմում է Վիկտորիային Մարմարա ծովի հիասքանչ կղզիներից (1912, 24 ապրիլի).

«Սիրելիս, ես ապրում եմ Մարտի վերջերից, Մարմարյա ծովում, Իշխանաց Հին պատմական կղզիներից մեկի վրա – Պրինկիպո կղզին: Պոլսից ժամ ու կես հեռու է այս կղզին, որ ուղղակի զմրուխտ է ծովի մեջ. խաղաղ, անդորր և չողչողուն, ալիքները միշտ դուրդուրում են կղզու չորս կողմը. կղզին ծածկված է մայրի անտառով և հազար ու մի տեսակ ծաղիկներով, վարդերով, թզենի, դափնի և այլն, և այլն: Իմ տունը գտնվում է [կղզի] կղզու վերև, բլրի գլխին, անտառի ափին, մեկ լուսամուտս անտառի վրա է բացվում, մեկելը՝ ծովի»:

Պատմում է և իր փոքրիկ արկածներից.

«Պոլսի բուրժուաների լակոտները՝ հայ, թուրք, հույն՝ իրենց մետրեսները – սիրուհիները այստեղ են պահում. և ամեն քայլափոխի տեսնում ենք զարմանալի գեղեցկուհիներ – ֆրանսուհի, իտալուհի, հույնուհի, իսպանուհի և չերքեզթրքուհի. երբեմն նրանց հետևից ենք ընկնում մեր մակույկներով ծովի մեջ. սակայն այստեղ վտանգավոր են սիրային արկածները. արևելյան խանդոտ մարդիկ են»:

Հաջորդը գրված է 1912 թ. ապրիլի 24-ին, մի բացիկ է Սուրբ Սոֆիա տաճարի պատկերով, Իսահակյանը գալիս է իրեն շատ բնորոշ մի եզրակացության.

«Սա Բոսփորի այն տեղն է, որտեղից երևում է Այա-Սոֆիան: Երեք մզկիթ է երևում, միջինը, մեծ, դեղին գույնով – դա է Այա-Սոֆիան (սուրբ Սոֆիան). իսկապես գեղարվեստական մի հրաշք, արտաքինը – ոչինչ. հրաշքը ներսն է. շենքը IV դարուց է, իհարկե, գիտես: Գեղեցիկ, շատ գեղեցիկ է Պոլիսը, բայց ափսոս որ անպիտան ձեռքերի մեջ է գտնվում: Այսպիսի սքանչելի դիրքով քաղաք չեմ տեսած և չկա աշխարքի վրա, բայց մարմարների վրա շներ են ապրում:

Միջազգային քաղաք, դարերի մեջ. չկա մորալ, չկա պատիվ, չկա ճշմարտություն – այլ միայն և միայն ոսկի, հաճույք, խարդախություն, կեղծիք, և զզվելի տեսակի պոռնկություն: Պոլիսը, սկսած բյուզանդական կայսրերից – հսկա պոռնկանոց է» *(XIII, 192, 196, 197, 200):*

1912 թ. հուլիսին Իսահակյանը Կ.Պոլսից մեկնում է Վիեննա, նա գրում է այնտեղից կրկին Վիկտորիա Աբովյանին.

«Վիեննան հրաշալի է, և արդեն սկսել եմ պարապմունքս, սքանչելի սենյակ ունիմ, սակայն այս երկու միլիոն բնակիչ ունեցող ծով-քաղաքում միայնակ եմ, հայեր միայն վարդապետներն են» *(XIII, 208):*

Ընկերոջը՝ մանկավարժ Տիգրան Ռաչմաճյանին, Վիեննայից (1912, 6 օգոստոս) գրում է.

«...վերջին ամիսներս շատ խառն էր Պոլսի վոստան, գնում ու գալիս. մեկ Դարդանելն էր գոց, մեկ Ռումելլի երկաթուղիները էին բոմբերի չնորհիվ քանդվում. վերջապես գոնե մի առ ժամանակով ազատվեցի այդ դժոխային պայմաններից, որոնք Թուրքիան են կազմում: Էհ, մեր տերն էլ Աստված» *(XIII, 210):*

Նոր-նոր անդորը Շվեյցարիային ընտելացող Իսահակյանը հնարավորություն է ստանում ծննդյան տոները և 1914 թվի Նոր տարին դիմավորելու «համաշխարհային գժանոցում»՝ Փարիզում, իր ստացած «գրանցվող տպավորության» (Ա. Իսահակյանի խոսքերն են) բանաստեղծը գրում է իրեն շատ հարազատ Վիկտորիա Աբովյանին (1913, 31 դեկտեմբերի, Փարիզ).

«Սիրելի՛ Վիկտորիա, այսօր վերջանում է մեր՝ եվրոպացիներիս տարին. ամբողջ Փարիզը հրեղեն ծով է դարձել, ասեղ ձգելու տեղ չկա. պարզկա, աստղավառ երեկո է. դուրսը – աղմուկ ու ծիծաղ, մի րոպե քաշվել եմ հոտելս նամակներ գրելու, ապա ընկերներով գնալու ենք Cabare՝ Նոր տարին դիմավորելու: Հոգիս, այս երրորդ տարին է, որ մեր երկրից դուրսն եմ ընդունում Նոր տարին՝ Կ. Պոլիս, ժնև, Փարիզ, ո՞վ գիտե մյուս տարին, երբ ողջ մնացի, ուր եմ լինելու – Բեռլին, Վիեննա, թե Լոնդոն, այսուհետև թափառական եմ. ինչ լինելու է, թող լինի:

Գիշեր է, ժամը 3-ը, վերադարձել եմ տուն հոգնած, ջարդված, ներվերս գրգռված, բայց քունս չի տանում. Փարիզում քնել անկարելի է. այս 4 միլիոնանոց քաղաքը հազար [հողմ] փոթորիկների տակ հուզված, կատաղած օվկիան է. ամեն լեզու, ամեն ազգ. ի՞նչ են ուզում, ինչո՞ւ են թափվել այս զարմանալի փողոցները անգլիական լորդն ու հնդկական ռաջին, ռուս կնյազն ու բրազիլիացի միլիոնատերը, իտալացի բոսյակը և ամերիկացի միլիարդերը և ես... Ո՞ւր ենք վազում, ի՞նչ ենք որոնում այս ծովածավալ ամբոխի մեջ. շուրջս փրփրած գինու ծով է, ասես, պար, կանկան, tango, անդուսպ, բոցեղեն կիրք. 1000 000 կանայք՝ չքեղ, քնքուշ և գայթակղիչ աչքերով. 1000 աչք հրապուրում է քեզ իր գիրկը – մի րոպեի, մի ժամի, մի գիշերի համար, որպեսզի մյուս օրը քեզ չճանաչէ... Ակրաբատներ, ցիրկ, մուզիկ, օռնոց, խաղ, ծափ, ծիծաղ, գոհար ու ցնցոտի իրար կողք կողքի, իրար վրա – ահա Փարիզը... Եղել եմ Բեռլին,

Վիեննա, Բուդապեշտ, Հռոմ, Միլան, Պոլիս, Մոսկվա, Պետերբուրգ, և այլն... դրանք միատեղ հավաքես՝ Փարիզի աղմուկը չի ստացվի...»:

Գրում եմ անկապ, ինչ որ միտքս է գալիս.– դեռ մի 10 օր էլ մնալու եմ, ապա նորից ժընևա, այս գեղեցիկ Լեմանի ափերի քաղաքը, խաղաղ, մաքուր, երեխաս և գրասեղանս, գրում եմ ու կարդում, կարդում եմ ու գրում. և համբերանքս ծով է. թեև սիրո կողմից դժբախտ եմ, բայց տրամադրությունս չեմ փչացնում. և ես գիտեմ, որ ինձ պես մարդը արժանի է, որ ապրի: Իմ գրիչը ինձ հավիտյան կապահե. չեմ կորչի Եվրոպայի միլիոնավոր մարդկանց մեջ. անվախ քայլում եմ առաջ. թող գան տարիները և գնան, ես կանգնած եմ գրանիտի վրա և ձեռքս իմ անխորտակելի սուրը – գրիչս: Որոշել եմ տեղափոխվել Բերլին, այս նորագույն կուլտուրայի լուրջ քաղաքը: Ի՜նչ լավ կլիներ՝ հետս լինեիր – սիրած կնոջ հետ այս հեքիաթի քաղաքներում, հրաշքների երկրներում» *(XIII, 242-243)*:

Այնուհետև 1914 թվի մարտից՝ Բեռլին ընտանիքով: Ի՜նչ նպատակով, ահա ինչ է գրում Իսահակյանը Սիմոն Վրացյանին (1914, 23 ապրիլի).

«Ես երկու ամսից ավելի է, որ Բեռլին եմ. հայկական և գերմանական կոմիտեի գործերն եմ վարում, քարտուղարն եմ, և ամսաթերթ ենք հրատարակելու հայերեն և գերմաներեն բաժիններով, շուտով կտանաս կոչը, որ թե՛ թերթումդ հրատարակես և թե՛ մեզ աշխատակցես: Շատ անվանի մարդիկ ունենք մեզ հետ, շատ հայտնի անձեր՝ ամբողջ Գերմանիայում հռչակավոր և ազդեցիկ: Վստահ կարելի է ասել, որ եթե հայ-գերման ընկերությունը չլիներ, այս ռեֆորմները ջուրն էին ընկնելու: Մեր բարեկամ գերմանացիք համոզում և ճնշում գործ դրին գերման դիպլոմատների վրա, որ համաձայնվեն ռուսներին» *(XIII, 250)*:

Սակայն 1914 թ. հունիսի 28-ին բռնկված Առաջին համաշխարհային պատերազմի պատճառով «Հայ-գերման ընկերությունը» դադարում է գործել, և Իսահակյանը Հովհաննես Խան-Մասեհյանի օգնությամբ ստացած պարսկահպատակի անձնագրով 1915 թ. օգոստոսին ընտանիքով Բեռլինից նորից տեղափոխվում է Ժնև:

* * *

Ժնևում ապրում է մինչև 1921 թ. մարտը, մոտավորապես վեց տարի: Եվ լավագույն տեղեկատվական աղբյուրը (չվեյցարական) կյանքի շրջանի մասին, լավագույն ուղեցույցը կրկին Իսահակյանի նամակներն են: Քանդի մեծ հաշվով բավական կցկտուր են տեղեկությունները Ժնևյան կյանքին վերաբերող: Ժնևն Իսահակյանի համար կապակցվում էր «Դրոշակ»-ի խմբագրության հետ, այն հանդիպումների հետ, որ տակավին 1901 թվականին Ժնևում ունեցել է ՀՅԴ հիմնադիր, «Դրոշակ»-ի խմբագիր Քրիստափոր Միքայելյանի հետ. պաշտելի անուն երիտասարդ բանաստեղծի համար: Ժնևում հայությունը փոքր թիվ էր կազմում: Պահպանվել էր «Դրոշակ»-ի շենքը, իր անփոխարինելի պահապանով՝ Տիար Անտոն Գոշով, հին դաշնակցական, Իսահակյանի ընկերը: Բուն Ժնևի մասին տեղեկությունները քիչ են բանաստեղծի նամակներում, գերիշխող մասը Իսահակյանի հայրենասիրական խորհրդածություններն են: Ովքե՞ր են Ժնևից գրված՝ Իսահակյանի 1916-1920 թթ. նամակների հիմնական հասցեատերերը. ռուսահայերից՝ Գարեգին Լևոնյան, Ցոլակ Խանզադյան, Կարեն Միքայելյան, Հովհաննես և Նվարդ Թումանյաններ, ինչպես և ՀՅԴ Բյուրո: Ապա եվրոպական հասցեատերերը՝ առաջին տեղում Սիմոն Հակոբյանն է (հայագետ, «Արեգ» ամսագրի խմբագիրը, Իսա-

հակյանի մտերիմ ընկերը), Հայր Բառնաբաս Պիլեզիկճյանը (Վիեննա, Մխիթարյան միաբանությունից), Արշակ Զոպանյան, Համո Օհանջանյան, Վահան Զաքարյան:

Հենց ժնևում ապրած տարիներին հայ ժողովրդի ճակատագրի համար մի շարք կարևոր, ավելի ճիշտ բախտորոշ պատմական իրադարձություններ տեղի ունեցան, որոնք չէին կարող անարձագանք թողնել քաղաքական վտարանդի բանաստեղծին: Առաջինն այն հսկայական ողբերգությունն էր, որ տեղի ունեցավ 1915-1921 թթ., Մեծ եղեռնը: Եվ այս ֆոնի վրա՝ «Հայկական հարցի» նոր գարթոնքը: Երկրորդը՝ Հայաստանում 1918 թ. մայիսին՝ առաջին անկախ հայոց հանրապետության ստեղծումը և նրա ողբերգականորեն կարճ (1921) տևողությունը և վերջին ակորդը՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը բոլշևիկյան Ռուսաստանի և կարմիր բանակի օգնությամբ: Այս դարակազմիկ եղելությունները դարձան Իսահակյանի ամենօրյա մտորումների ու խորհրդածությունների հիմքը՝ գտնելով իրենց արձագանքը Իսահակյանի Նամականիում: Հայկական հարցը, Իսահակյանի ծրագրային դոկտրինը դառնալով, մշտապես առկա է նրա նամակներում, որոնք պարբերական հետևողականությամբ, ինչպես բարոմետրը, արձագանքում և դուշակում են քաղաքական մթնոլորտի փոփոխությունները:

Իսահակյանի՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Համո Օհանջանյանին (1919, 30 մայիսի) ժնևից ուղղված և այսօր ևս շատ արդիական հետևյալ նամակը.

«Գրում ես, որ շատ վրդովված եմ, ինչպե՞ս չվրդովվել, երբ տեսնում ես մի կողմից դաշնակիցները (Անտանտի պետությունները – Ա. Ի.) ուզում են (կամ ցույց են տալիս, թե ուզում են) հայությունը ազատել թյուրքերի ճանկից, մյուս կողմից 3-400.000 ամենաընտիր հայերի դնում են թյուրքի լծի տակ. իրենց

աչքի առջև, իրենց անտարբերությամբ կոտորեցին Բագուն, ջնջեցին Նուխիի և Արեշի հայությանը... Ուզում են Կովկաս ունենալ, դրա համար իրենց հովանավորած վրացի և թյուրք ժողովուրդների սահմանները մեծացնում են, գրավելով Լոռիի հանքերով հարուստ գավառը, Ղարաբաղը, հերոսական Ղարաբաղը իր հարուստ հանքերով. ձգտում են Նոր Բայազետի հյուսիսային ափերը գրավել, ուր հարուստ, ճոխ են մանգանեզի, խրոմի, երկաթի, գրաֆիտի, անագի հանքերով, իսկ Գետաբեկը, որ հայ չրջանի մեջ է, Անգլիա, անկուշտ, անհագ, հիպոկրիտ, վամբիր»:

Եվ նույն նամակում.

«Ձեզ մատաղ, ամեն բան արեք, Ղարաբաղ, Լոռի չկորցնեք: Սեբաստիա, Կեսարիա, հայերիս սրտին բան չի ասի, իսկ Ղարաբաղ, Այունիք, Դավիթ Բեկ, Դուման, Թուման, Մենակ... Անկարելի է. և վերջապես ղարաբաղցուն չի կարելի ընկճել. մելիքների որդիները նորեն ռուսներին կբերեն, թյուրքերը չեն կարող նրանց տեր լինեն... երբե՛ք» *(XIII, 322-324):*

Այս տողերը կարդալիս, ընդհանրապես Իսահակյանի ողջ Նամականին կարդալիս, անկարելի է չասել. «Իսահակյանը կարծես մեր օրերի համար գրած լինի...»:

Հայոց պատմությունը ցավալիորեն կրկնվելու հակում ունի: Եվ բանաստեղծի մեծությունը ոչ միայն բանաստեղծական տաղանդի մեջ է, այլ նաև ապագան տեսնելու մարգարեական կանխատեսության մեջ: Այս բացառիկ ինտուիցիայով Վարպետը կարծես ի վերուստ էր օժտված: Ասածիս մեջ մենք դեռ շատ կհամոզվենք նրա Նամականին ընթերցելիս:

Իմ մի հոդվածում՝ գրված 1995 թվին, մեր ազատագրական կռիվների առիթով ես բերել էի Վարպետի՝ 1919 թվի նամակից հետևյալ տողերը (ժնևից՝ Նվարդ Թումանյանին).

«Ես, եթե ճակատագիրը ուզենա, մարտ ամսին Հայրենիքում կլինեմ — ապա՛տ, ապահով Հայրենիքում, որի համար ընկան,

մարեցին մեր ամենալավ աստղերն ու ծաղիկները. անուններ չեմ ուզում տալ... Մեր չրթունքները պիտի մոռանան նրանց անունները, բայց մեր հոգիները միշտ պիտի այրվեն նրանց վշտով, կսկիծով ու կարոտով» *(XIII, 329)*:

Հարյուր տարի անց էլ մենք ազգովին կարող ենք Վարպետի հետ չշնջալ նույն խոսքերը:

* * *

Այո՛, այդպիսին է մեր ճակատագիրը: Երբ կործանված Թուրքիային բոլշևիզմը փրկեց և զինեց Հայաստանի, Հունաստանի և Բալկանյան երկրների դեմ, Իսահակյանը հետևյալն էր գրում իր ընկերոջը՝ սոցիալիստ Սիմոն Հակոբյանին (1920, 5 սեպտեմբերի, Ժնև).

«Թոթռափի՛ր աչքերիցդ վարագույրը. և աչքերիդ առջև կտարածվի դաժան իսկությունը — այն, ինչ որ Մուսաֆաթը չկարողացավ, բոլշևիզմը արեց: Իթթիհատը բոլշևիստ է.— սա իրականությունն է, անհերքելի փաստ ունիմ, որ Բեռլինում Թալեաթ փաշան գործում է սպարտակիստ բանվորների մեջ. սրան չես հավատում, սակայն նույնքան իրական է, որ Քեմալը (Մուսթաֆան) իր մասսաները ոգևորում է բոլշևիզմով...» *(XIII, 351)*:

Երկու տարի անց, երբ արդեն չկար Հայաստանի անկախ Հանրապետությունը, Իսահակյանը կրկին գրում է նույն հաստեատիրոջը՝ Սիմոն Հակոբյանին (1922, 14 մայիսի).

«...բայց դեռ չեմ կարող նավերս այրել, քեզ գրեցի, որ Քրիստ., Զավարյան, Ռոստոմ, Վռամ՝ իրականություն են հոգուս մեջ, միշտ խոսում եմ հետները, երազի մեջ տեսնում, չեմ կարող նրանց սովերի, հիշատակի դեմ դուրս գալ, դեռ քաշ կուգամ, տեսնենք, ո՛չ Դաշնակցության հետ կգործեմ, ոչ էլ նրանց դեմ կգործեմ <...> և բոլշևիկներից էլ բավարար զոհ չեմ

– Կարս, Իգդիր, Նախջևան... վերքեր են հոգուս մեջ, Անին քանդում են թուրքերը, հզոր Ռուսիան մի ցուրտ խոսք չի ասում թյուրքերին, ինձ թվում է, որ Լենինը Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի պես թքում է մեզ վրա, իբրև թույլի վրա, և արյունարբու Էնվեր-Քեմալին է ընկերակցում» *(XIII, 440-441)*:

Ի վերջո պոետի նամակն արտահայտում էր այն, ինչ իրականում կատարվում էր հայ-եվրոպական, հայ-ռուսական հարաբերություններում:

Պատկերն ամբողջական դարձնելու համար բերենք մի հատված Իսահակյանի նամակից՝ գրված Հայր Ներսես Ակինյանին (1923, 29/XII).

«Ի՞նչ է բոլշևիզմը հայերիս համար, ի՞նչ բերեց նա. ահա պատասխանը.

Ո՛չ Սուլթան Համիդ, ո՛չ Իթթիհատ, ո՛չ Ցար և ո՛չ աշխարհն ամբողջ այնպես վերջնականապես չթաղեցին Հայաստանն իր հարցով, ինչքան բոլշևիզմը, որովհետև Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը (որի մի հետևողական էջն է Կարսի դաշնագիրը) մեր սգավոր գոյության ամենաապանիչ ակտն է, դործը. Լոզանի դաշնագիրը բղխած է դրանից. ինչ կա ավելի որոշ և հաստատուն, քան այն, թե Ցարը արդեն գրավել էր հայկական նահանգները և անդարձ միացրել Կովկասի Հայաստանին, և թեև ջարդված էր այդ նահանգների հայության մի մասը, սակայն մնացած մասը ավելի շատ էր, քան թուրքն ու քուրդը միասին: Եվ մի 20-30 տարվա մեջ բոլորովին կհայանային այդ նահանգները, սակայն բոլշևիկները այդ դիվական դաշնագրով հետ տվին գրավածները, և դեռ ավելին՝ Կարս, Իգդիր...

Ահա՛ այս բերին բոլշևիկները» *(XIII, 521)*:

Անկախ Հայաստանի Առաջին Հանրապետության գոյությունը հավասարապես ձեռնտու չէր քեմալական Թուրքիային, որը

երազում էր հայ ժողովրդի գենոցիդը վերջնական ավարտի բերել, ինչպես և բոլշևիկյան Ռուսաստանին, որը չէր ուզում, որ նախկին կայսրության մաս կազմող կովկասյան ժողովուրդները ստեղծեին իրենց ազգային հանրապետությունները, և ուղղակի ռազմական ագրեսիայի միջոցով բռնազավթում էր այդ երկրները: Ազատ, անկախ Հայաստանին դեմ էին թե՛ Գերմանիան, թե՛ Անտանտի պետությունները, որոնցից յուրաքանչյուրն իր շահերն էր հետապնդում: Ահա ինչ էր պատմական այս իրավիճակի մասին գրում Իսահակյանը հայ անվանի մշակութաբան Արշակ Զոպանյանին (1921, 26 դեկտեմբերի).

«Միլիոնի արյունը եվրոպացու խղճի վրա է ընկած, և նրանց կերած հացի մեջ հայ մանուկի արյունը կա... Բոլորովին անմիտ, վնասակար եմ գտնում Փարիզի երկու պատվիրակությունների գործունեությունը, Ամերիկա կամ Պապին դիմումները. մամուլին,– այդ բոզերի ոհմակին,– դիմումներն ու կոկորդիլոսի արցունքները, հայասերների ճառերը և Ազգերի լիգայի կեղծավորությունը. հայերիս համար կոզակը ավելի իրական է, քան Վիլսոնը, Ջեյմս Բրայսը, և բոլորը, վերջացած է ամեն ինչ, խաբված ենք ապուշի պես, պարտված ենք չարաչար. նոր ուղիներ պիտի փնտռել...» *(XIII, 389):*

Կոզակի մասին խոսելը պատահականություն չէ, խորապես կշռադատելով պատմական իրավիճակը՝ Իսահակյանը քայլ առ քայլ մի մտայնություն է սկսում ձևավորել.

«Մեր փրկությունը Ռուսիայից է, բայց ավելի շուտ ցարական, քան բոլշևիկյան, բայց ռուս զինվորի ներկայությունը սահմանի վրա, այդ է մեզ փրկողը, հետո բարեկամություն դրացիների հետ և երես դարձնել Եվրոպայից» *(Վարդգես Ահարոնյանին, 1923, 12 սեպտեմբերի):*

«Հիմա խաղալիք ենք թյուրքի ձեռքին, և նրա մշտական սպառնալիքի տակ, մեզ պետք է զորեղ Ռուսիա, անկախ գո-

յուԹյուն չենք կարող ունենալ» *(Վարդգես Ահարոնյանին, 1922, 13 հուլիսի, XIII, 455)*:

«Մենք Ռուսիայի Թևի տակ կամրանանք, կշատանանք և 50 տարվա մեջ կհասանենք մեր տենչանքին՝ Մեծ Հայաստանին մինչև Վան ու Մուշ. բոլշևիզմը միայն մեզ է նպաստավոր, այսինքն՝ ներկա բոլշևիզմը, որ վելիկոռուսի իշխանուԹյունն է. վրացուն և Թաթարին վնասակար են նրանք, ինչ որ հիմա կատարվում է Ռուսիայում, նրանց այս էվոլյուսիոնը, իմ սրտովս է» *(Վահան Նավասարդյանին, 1923, 18 դեկտեմբերի, XIII, 518, 519)*:

Որքան խորանում ենք Իսահակյանի Նամականու մեջ, այնքան խորանում ենք Հայկական հարցի մեջ, համոզվում ենք բանաստեղծի մարգարեական կանխատեսումների ճշմարտացիուԹյան մեջ:

«Հայկական հարցի», Հայաստանի ճակատագրի և նրա քաղաքական կողմնորոշման մասին նա գրել է մշտապես՝ 20 տարեկանից սկսած: Նա իր կյանքն է կապել Հայաստանի ազատագրական պայքարի հետ, դա է եղել նրա պոեզիայի հիմնական ասելիքը, լեյտմոտիվը, «Հայդուկի երգեր»-ից սկսած մինչև «Ա՛խ, ինչքան, ինչքան կուզեի լինել գինվոր հասարակ» (1955) բանաստեղծուԹյունը:

* * *

Բանաստեղծի կանգառը Վենետիկում տևեց շատ երկար՝ 1921 Թ. մարտից մինչև 1926 Թ. սեպտեմբեր: Եվ եԹե Իսահակյանը «Հիշատակարանյան» իր գրառումներում, 1924 Թ. «Աջենդա» իր ծոցատետրում շատ ջերմ ու սիրով է խոսում Վենետիկ քաղաքի գեղեցկուԹյունների, ճարտարապետական չքնաղ կոթողների, Սուրբ Մարկոս տաճարի և հրապարակի մասին, իր անմահ բանաստեղծուԹյան մեջ հայերիս համար սիրելի դարձ-

նում «Ռեալտո» կամուրջը, ապա նամակներում պատկերը մի քիչ ուրիշ է, բանն այն է, որ ինքը հոգնել էր այդ երազային քաղաքի միապաղաղությունից: Իսահակյանն այդ մասին գրում է Ռուբեն Դարբինյանին (1925, 17 նոյեմբեր, Վենետիկ).

«Ձորս տարուց ավելի է, որ Վենետիկ եմ: Այս քաղաքը հեռաքրքրական է մի երկու ամիս ապրելու համար, իսկ երկար մնացողի համար մարմարյա դերեզման է, չքեղ դերեզման:

Բացարձակ մենակ եմ այստեղ, ընկեր չունեմ, բարեկամ չունեմ, խոսակից չունեմ, օրերով մարդու հետ չեմ խոսում, օրերով մռայլ եմ, լուռ, անքուն, ջղային: Պառկում եմ անկողնուս վրա և ծխում, միայն ծխում: Ամիսներից ի վեր ընդհատել եմ իմ «Ուստա Կարոն»: Աչքիս բան չի երևում: Վենետիկ այլևս չեմ կարող ապրել... Դու չգիտես, թե սա ինչ մեռելություն է, ինչ ճահիճ, մանավանդ ձմեռը – կղերական քաղաք, մի պարահանդես չկա, մի ժամանցի տեղ: Ամբողջ օրը տանը, տանը, տանը կնոջ չունչի տակ» *(XIV, 120):*

Գրում է և Հովհաննես Ավագյանին (1923, 3 հուլիսի).

«Վենետիկը միջնադարյան քաղաք է, անձուկ իր գաղափարներով ու փողոցներով. խեղդվում եմ հոս, գրեթե նոր գիրք՝ ֆրանսերեն և գերմաներեն, գոյություն չունի. և ապրուստն էլ Մուսոլինիի չնորհիվ, օր օրի վրա սղում է» *(XIII, 501):*

«Վենետիկն էլ դարձել է աչքիս դրողը,– գրում է Իսահակյանը Վարդգես Ահարոնյանին,– ձանձրանում եմ անսահման և հնար չունեմ հեռանալու. և ոչ մի տեղ էլ չեմ ճգտում. ա՛խ, հայրենիք ունենայինք մարդավարի, երթայինք, մի օր ապրեինք, մեռնեինք...» *(XIII, 492):*

Իսահակյանի ընկերը, զրուցակիցը դառնում է փոստային նամակը, և ամենից շատ նամակներ Իսահակյանը գրել է Վենետիկից՝ 208 նամակ մոտ վեց տարվա ընթացքում (իհարկե, սա միայն մեզ հասածներն են – Ա. Ի.): Քաղաքները չեն կա-

րող մրցել, թե որ քաղաքից գրած նամակներն են լավագույնը, նույնն է, թե փորձենք որոշել, թե որ քաղաքում է Իսահակյանը գրել իր լավագույն բանաստեղծությունները, սակայն մի բան աներկբա է, որ հենց Վենետիկից գրած նամակներն են իրենց ասելիքով կարևորագույնը և նշանակալիցը, երկրորդ տեղում են Ժնևից գրված նամակները: Եվ այս հանգամանքն ունի իր պարզաբանումը. այն բացատրվում է մի պարզ ճշմարտությամբ, այն է՝ ի՞նչ քաղաքական ժամանակաշրջանում են դրանք չարադրված:

1921 թվից՝ Հայաստանի Առաջին Հանրապետության անկումից հետո, Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո (1921 թ.) Իսահակյանը շատ հարցեր ուներ տալու իր հին ընկերներին: Ահա այս տեսանկյունից Վենետիկը մի հարմար նավահանգիստ էր՝ փոթորկից հետո հարցումներն ու տեսակետներն ուղարկելու նրանց, ովքեր ընդամենը մի 2-3 տարի առաջ որոշում էին Հայաստանի Հանրապետության բախտը:

Իսահակյանը գրում է Սիմոն Վրացյանին (1922, 30/V).

«Ի՞նչ ասել, ո՞րտեղից սկսել. ամենից առաջ ասեմ, որ ես 1912 թվից սկսած չեմ բաժնել Դաշնակցության տակտիկան. Վիեննայի ժողովից արդեն 1907 թ., ես հրաժարված էի Թուրքահայաստանի անկախության գաղափարից, համարելով դա վտանգավոր ցնորք, իսկ իմ մի տարվա կյանքը Պոլսում (1911-12) ինձ վերջնականապես համոզեց, որ հայ ժողովուրդը ոչ մի հնար չունի, տերիտորիալ մտքով, բաժանվել Թյուրքիայից. հիմարությունից վեր մի բան է հույս դնել դիպլոմատիայի վրա, Թյուրքահայը ազգային ուրույն պոլիտիկ պետք չէ ունենա. մի տեսակ ապոլիտիկ գոյություն, սպասելով Թյուրքիայի քայքայմանը, որ պիտի դար անհրաժեշտորեն, սակայն ոչ մեր միջոցով. մեր իմաստությունը պիտի կայանար նրա մեջ, որ քանդվող Թյուրքիան փուլ չգար մեր վրա, ինչպես եղավ.

Կարճ, ինչ որ դուշակում էի, եղավ – ջարդ, բնաջնջում: Ես ատող եմ Անտանտին, և դիպլոմատիայի. իմ նպատակս էր փրկել հայի ֆիզիկ. գոյությունը: Այժմ էլ նույն տեսակետն ունեմ. հայի ֆիզիկ. գոյությունը բարձր է իր անկախությունից, և ուրեմն ավելի կուսակցական չահերից. այս տեսակետից ես Դաշնակցությունը գտնում եմ հանցավոր, տղայամիտ և տհաս, ենթակա բուրժուազիայի և ամբոխի թելադրությունների:

Ա.Հարոնյանը տիպ է, սիմբոլ դաշնակցական, մեծախոսիկ, ստախոս, բլլբֆ, տգետ և անբարեխիղճ. Դաշնակցության մասսան և զինվորները, անշուշտ, մեղավոր չեն, նրանք հլու և անձնվեր ենթարկվողներ են, բայց ղեկավարները (քիչ բացառությամբ)՝ ավանտյուրիստներ...

Ես բոլշևիկ չեմ և ատում եմ նրանց, բայց ի՞նչ խելք էր, որ չընդունել բոլշևիկյան օրիենտացիան, ինչպես Բագվում 1918 թ. եղել էին Ռոստոմը և մյուսները, սրիկա անգլիացիներին բերելուց առաջ: Ձեզ ո՞վ ասաց, թե Անտանտը պիտի ազատե Հայաստանը և Միացյալ Հայաստանը. ի՞նչ հիմք կար հավատալու խենթ Վիլսոնին և հայասերների դատարկաբանություններին: Ամբողջ ջանքը պիտի լիներ մերոնց գոնե եղածը պահել, 1914 թ. սահմանները, և Շանթի պես միամիտ և օպտիմիստ մարդու ապիկար առաքելությունը Մոսկվա, Դարբինյանի էգոիզմը, Համոյի անճկունությունը... ահա աղետի հիմքը. փոխանակ Ատրպեյջանի հետ միասին ընկնելու բոլշևիզմի համեմատաբար փրկարար գիրկը, Հայաստանը՝ հացից, ջրից զուրկ այդ ողբալի երկիրը. զենք է խաղցնում խենթացած Ռուսիայի դեմ... ի՞նչ անկախություն, ի՞նչ մեծ Հայաստան. իրականություն գոյություն ունի՞, թե՞ միայն բաղձանքներ, բանաստեղծություն» *(XIII, 446-448):*

Այն, որ վերջին տարիներին Իսահակյանի մշտական մտորումների, տագնապների պատճառն էր, այն, որ հանգիստ չէր

տալիս բանաստեղծին, այն, որ նա տառապագին ուղիներ էր ո-րոնում ելք գտնելու ստեղծված իրավիճակից, դա աներկբա ճշմարտություն էր: Բանաստեղծի ստեղծագործական ու հոգե-կան դեգերումները ամենից ստույգ ու համակողմանիորեն երևում էին նրա նամակներում: Եվ այդ բնույթի նամակների, այնտեղ բարձրացված խնդիրների ներկապնակն այնքան լայն էր, որ բնականաբար հոդված-վերջաբանը չի կարող այդ ամե-նին, հաճախ և բանաստեղծի հակասական եզրահանգումներին բացահայտում տալ: Մենք կարող ենք բավարարվել բանաս-տեղծի առավել ցայտուն հարցադրումներով և առավել հեռա-տես կանխատեսումներով:

Ահա երկու դրվագ Վարդգես Ահարոնյանին և նրա տիկնո-ջը՝ բանաստեղծուհի Արմենուհի Տիգրանյանին ուղղված նա-մակներից (1922, 23 մայիսի).

«Ոչ մի հույս չունիմ, դրեթե հուսահատ եմ թե՛ Ռուսաս-Հայաս-տանից և թե՛ մանավանդ Թրքահայաստանի նկատմամբ: Դաշնա-կիցների խոստումներին գոռշի արժեք չեմ տալիս, նույնիսկ եթե պահանջեն թուրքերից և ստանան՝ ստորագրել տան Հայաստանի սահմանները. որովհետև իսկույն տակից Հայտնում են թուրքե-րին, թե տեղդ ամուր նստի, քեզ դուրս անող չկա. ո՞վ պիտի վռնդե թուրքին Կարսից, Վանից, Մուշից, մե՞նք – ցնորք. Ան-տա՞նտը – միամտություն. Ռուսիա՞ն... ո՞ր, ո՞ր Ռուսիան. ինչքան ժամանակ, որ թյուրք-բոլշևիկյան բարեկամությունը կա, հայերը Արփաչայից այն կողմը ոտք չեն դնելու, գուցե գժտվին իրար հետ և թյուրք, և ռուս, այն ժամանակ, այո՛, Կարմիր բանակը սահմանը կանցնի, բայց կգժտվե՞ն, լսում ենք, բայց և տեսնում ենք, որ ավելի են բարեկամանում...

Ի՞նչ հույսեր կարելի է ունենալ... այնքան տարի է կասկա-ծողն էլ հուսաց, բայց վերջ ի վերջո ապարդյուն, բոլորն էլ՝ թե անգլիացի, ամերիկացի, ֆրանսացի, իտալացի և բոլշևիկ թքում

են մեր վրա: Հավասար չափով ատում եմ բոլորին և մանավանդ ատում եմ մեր դաշնակցական կուսակցությունն էլ նույնպես, որ երեխայի պես հավատաց և ժողովրդին ոգևորեց ու նետեց կռվի մեջ» *(XIII, 443)*:

Երբ արտագրում էի Իսահակյանի նամակից այս հատվածը, ինձ մի պահ թվաց, թե հիմա է գրված այն: Իսահակյանը մարդկայնորեն մեծ դրամա է ապրում թե՛ պատմությունից, թե՛ գերտերությունների ապիկարությունից և թե՛ իր հարազատ կուսակցության անճարակությունից: Որքա՞ն և մինչև ե՞րբ: Այս իմաստով բանաստեղծի գրական ժառանգության մեջ չկա ավելի տխուր գիրք, քան նրա Նամականին: Բայց հենց Իսահակյանի մեծությունը նրա մեջ է, որ հարազատ ժողովրդի ճակատագրի ամենադժվար պահերին նա փորձում է չնորհիվ իր մոգական ինտուիցիայի տեսնել լույսը թունելի վերջում: Անգամ եթե գրելու պահին նրա տեսիլը թվա ֆանտաստիկ, գուցեև երազային, բայց և այնպես, ոչ զուրկ պատմական օրինաչափություններից: Ահա և մյուս գրվագը՝ գրված Վ. Ահարոնյանին (1921, 21 դեկտեմբերի, Վենետիկից).

«...միակ փրկությունը դժբախտ հայ ժողովրդի – ռուսն է՝ լինի ցար, կադետ, թե բոլշևիկ. ընտրությունը ռուսի և թուրքի միջև է.– դա է մեր ճակատագիրը. մեր ուժերով անկախություն չենք կարող ունենալ, ոչ մի օգնող դրսի ուժ չկա, ամեն բան սուտ, փրփուր դուրս եկավ. Անգլիա, Ֆրանսիա, Ամերիկա թքեցին վրաներս. ինչի՞ վրա է հույսը. իհարկե, քեզ համար նոր խոսքեր չեն սրանք, ամեն հայ գրեթե սա գիտե և այն էլ գիտե, որ Եվրոպան ոչ թե միայն չի փրկի հային, այլև կուզենա և գործադրում է հայի ոչնչացումը (Ֆրանսիան՝ Կիլիկիայում, Անգլիան՝ Ղարաբաղում...) այս այս է, ուրեմն մեզ մնում է ռուսը. պիտի անվերջ նրանց հետաքրքրել մեզնով. պարզել, պարզաբանել, թյուրքերի մասին նրանց ճիշդ տեղեկություն-

ներ տալ, անճամբ տեսնելով նրանց հետ, ծանոթանալով, նրանց մեջ մտնելով, նրանց հետ գործելով: Վերջիվերջո ռուս-թյուրք բախվելու են իրար, և Անատոլիան գրավվելու է ռուս-ների կողմից, ուշ կամ կանուխ. դաշնակիցների հաշտությունը և սիրաշահումը թյուրքերին դրանով պիտի վերջանա, որ ռուս-ները պիտի արշավեն Թյուրքիա: Ֆրանկո-անգլիական նպա-տակն է մուսուլմաններին կանգնեցնել ռուսների դեմ, ինչպես և ռուսների նպատակն է, բայց էության մեջ թյուրքը Եվրոպա-յի համակիր է...» *(XIII, 384-385):*

Անցել է ուղիղ 100 տարի այս նամակը գրելու օրից, և մի՞թե այսօր մեր ժողովուրդը նույնը չի երազում...

* * *

Մի տևական ժամանակ՝ 1921 թ. մինչև 1926 թ. փետրվարի սկիզբը, պոետը Վենետիկից ոչ մի տեղ դուրս չէր եկել և, բնա-կանաբար, հոգնած ու ձանձրացած էր այդ քաղաք-անուրջից: 1926 թվի փետրվարի սկզբներին նա հնարավորություն է ունե-նում մոտ մեկ ամսով Փարիզ գնալու: Իր առաջին նամակում Փարիզից (1926 թ., 9 փետրվար) բանաստեղծը տիկնոջը գրում է.

«Սիրելի Սոֆի.

Ներողություն, որ մինչև օրս չգրեցի, օրերը այնպես են անց-նում Փարիզում, որ չես իմանում՝ ե՛րբ լուսացավ, ե՛րբ մթնեց:

Հաջող տեղ հասա: Հյուրանոցում եմ, մի փոքր սենյակում, տաք ջուր, վճարում եմ 15 ֆրանկ, ծառայությամբ 16,50:

Ճաշեր – մի՛շտ հյուր եմ:

Գաբոյին տեսա, լավ է, բայց չսիրեցի: Ոտքից գլուխ սուտ: Ամիսը 17.000 ֆրանկ է չահում...

Ադոնցը սառն ընդունեց սկզբում (ո՛չ համբույր, ո՛չ ուրա-խություն). չուզեցավ միջնորդել Ղուկասյանի մոտ: Մեկնելիս՝

Հրավիրեց նորից գնամ, ասացի, թե՝ ես բարեկամների մոտ միայն կարող եմ երկրորդ անգամ գալ:

Լեզուն բռնվեց, դես-դեն, թե տրամադրությունս գեչ էր, կինս հիվանդ էր (Հարբուխ. երեսը դեռ չեմ տեսել):

Ես Ադոնցին ասացի, որ մերժում եմ նրանց թերթին գրել:

Գնացի Ղուկասյանի մոտ. մենակ. շատ լավ ընդունեց. երկար խոսեցինք. ասաց.— Գնա՛, եթե կարող ես այնտեղ ապրել և ընտանիքդ ապրեցնել, շատ լավ, եթե չես կարող՝ վերադարձիր: Միայն այնպես անես, որ կարողանաս վերադառնալ: Ես կօգնեմ կնոջդ նույն չափով, ինչպես որ օգնել եմ:

Դուրս եկավ, որ Ադոնցը ոչ մի անգամ իմ մասին նրա հետ խոսակցություն չէ ունեցել, թե Փարիզ բերենք, և այլն: (Այդ ձեր ցեղի հատկությունն է, չնեղանաս): Սուտ խոսող:

Ադոնցը ինձ ուզում է հավատացնել, որ ինձնից մի տարի է մեծ. 51 տարեկան է, մազերը ճերմակ, երեսը կնճռոտ...

Հա՛, Ղուկասյանն ասաց.— Փիրումյանից խորհուրդ հարցրու. ընկերաբար, ինչպես և Կարեն Միքայելյանից (Բելճիկա է, գալու է վաղը). լավ մտածիր, և նորից արի մոտս: Ասաց՝ Ադոնցի հետ խորհուրդ արա: Ասացի՝ նա ինձ վատ ընդունեց, ոչ ընկերաբար:

Ասաց.— Փող չտեսած մարդը այդպես կլինի:

Համբույրներով քեզ և Վիգենիս, քո Ավետիք» (XIV, 146-148):

Երկրորդ նամակում (1926, 15 փետրվար, Փարիզ).

«Սիրելի Սոֆիկ. Փարիզը մի վիշապ է, որ օրերդ կլանում է՝ անձդ կլանելու չափ: Գիշերը ժամը 2-ին եմ տուն գալիս և առավոտ 8-9-ին ոտքի եմ: Հսկա քաղաքի մի ծայրից մյուս ծայրը կանչում են ինձ, ճաշե՛ր, ճաշե՛ր, ճաշե՛ր»:

Գրում է, որ եղել է Սիմոն Փիրումյանի տանը հյուր, որտեղ եղել են թվով 15 մեծամասնականներ, որոնք ասել են իրեն.

«Դու Հայ ժողովրդի մի կտորն ես, նրա ոսկորից ու նրա մարմնից, և Թումանյանի կողքին հավասար տեղ ունես, սիրում ենք քեզ հիմա, որովհետև սիրել ենք միշտ... Հիմա եմ զգում, որ ես չա՛տ մեծ տեղ եմ գրավում: Մեծամասնականներն էլ, բուրժուաներն էլ, դաշնակներն էլ ասում են – ամենախելացին դու ես, որ մնում ես կոչմանդ վրա, պատվավոր, և խոսքդ արժեք ունի» (XIV, 150):

Եվ հենց Փարիզում Իսահակյանը վերջնականապես որոշում է, որ ինքը պետք է մի որոշ ժամանակով Խորհրդային Հայաստան գնա՝ իր աչքով տեսնի երկրի վիճակը: Բանաստեղծի կանգառը Խորհրդային Հայաստան, որ նախապես ծրագրված էր մեկ տարով, անկախ Իսահակյանի կամքից ձգվեց 4 տարի՝ 1926 թ. սեպտեմբերից մինչև 1930 թ. ապրիլ: Ի վերջո մեծ բարեբախտություն էր, որ Իսահակյանին թույլ տրվեց դուրս գալ երկրից:

Խորհրդային Հայաստանից վերադարձից հետո բանաստեղծի վերջին կանգառը Արևմտյան Եվրոպայում պիտի հանդիսանար «աշխարհի մայրաքաղաք» Փարիզը: Այդտեղ էր, որ պիտի անցներ ոչ այնքան տարեց հայ գրականության «Նահապետի աշունը»՝ 1930-1936 թթ.: 6 տարի այն քաղաքում, որն էռնեստ Հեմինգուեյի թեթև ձեռքով կնքվեց «Տոն, որ միշտ քեզ հետ է» անվամբ:

Ուսումնասիրելով Իսահակյանի նամակագրությունը՝ ես կուզեի ընդգծել երկու կարևոր փաստ. առաջինը՝ Փարիզյան շրջանը եղավ Իսահակյանի էպիստոլյար ժառանգության վերջին ազատ, անկաշկանդ, գրաքննությունից հեռու շրջանը: Այս քաղաքից նա կարող էր գրել ում որ ուզեր՝ իր «հին ընկերներին», որոնք այլևս երբեք չէին կարողանա մուտք գործել Խորհրդային Հայաստան՝ Վահան Նավասարդյան, Նիկոլ Աղբալյան, Սիմոն Վրացյան, Վահան Զաքարյան...

* * *

«Ավետիք Իսահակյանի նամակները» (1959, տպարան «Յուսաբեր», Կահիրե) ժողովածուում կա մի ուշագրավ նամակ և բացիկ՝ ուղղված Վահան Նավասարդյանին: «Յուսաբեր»-ի խմբագրությունն այդ կապակցությամբ հակիրճ մեկնաբանություն է տվել. «Հիշենք նաև այն պարագան, թե Ավ. Իսահակյանի երկու նամակները ուղղված ընկ. Վ. Նավասարդյանին, գրի առնված են բանաստեղծին Հայաստան վերադարձեն ետք, երբ կը վարաներ կրկին հոն դառնալ, նկատի առնելով բոլշևիկյան հալածանքները»[1]:

Նույն այդ նամակի առթիվ ծանուցում է տալիս նաև Վահան Նավասարդյանը. «Ավետիք Իսահակյան երեքևկես տարի ետք, 1930-ին Հայաստանեն կուգա արտասահման, և կը վարանի կրկին Հայաստան երթալու, այդ առթիվ կը գրե հետևյալ նամակը և բացիկ մը, նախքան կրկին հայրենիք վերադարձը»[2]:

Ահա Իսահակյանի հիշյալ նամակի հարվածային հատվածը, որի վրա առավել ուշադրություն են սևեռել բանաստեղծի «հին ընկերները» (1930, 11 օգոստոսի, Փարիզ).

«Գալով իմ մասին – ի՞նչ գրեմ: 3 ու կես տարի տանջվելուց հետո թուլլտվություն ստացա արտասահման գալու: Եկա և ղրջացի: Այնտեղ տառապանքը ծովածավալ է, բայց մխիթարված ես, որ հայրենի հողի վրա ես, ժողովրդիդ հետ խմում ես դառնության բաժակը, մենակ չես, պայքարում ես, հալածվում ես, բայց համակիր աչքեր սիրով հսկում են քեզ և նրանց

---

[1] «Ավետիք Իսահակյանի նամակները», 1959, տպարան «Յուսաբեր», Կահիրե, էջ 1:

[2] Նույն տեղում, էջ 23:

սրտերի մեջ պատսպարան ունես: Իսկ այստեղ – օտար ես ու մենակ, գոյությունդ՝ աննպատակ, օրերդ – ժժգույն և չնչին հոգսերով փչացած: Գաղութում հայությունը այլասերվում է, կորչում է: Բուրժուազիան խոզացած, անտարբեր, անասուն: Նրանց գրողների (ռամկավար) գրչի ծայրն է միայն Հայաստանը:

Սիրտս ճմլվում է, թևերս վար ընկնում:

Ջգիտեմ՝ ինչ պիտի անեմ: Հայաստանից մեկնելուց ինձնից խոսք առան վերադառնալու համար: Խոսք տվի: Վերադառնալ ուզում եմ և չեմ ուզում: Ջեմ ուզում խոսքս դրժել, սա ծանր կդա տեղում ապրող ինտելիգենցիային, վատ կանդրադառնա, բայց գնալ և ընկնել նորից բռնության տակ, գազազվել, իրար ուտել, գալարվել իր վրա և լռել – այդ էլ չեմ ուզում, բայց մնալ այստեղ, այս զզվելի Փարիզում, սա ևս անհանդուրժելի է, և հետո ինչո՞վ ապրել, ի՞նչ միջոցներով պահել ընտանիքս և դրականությունն անել (հին կապերը կտրված են, և ինքնասպանություն է նորից դիմել հին կապերին), իհարկե, խոսքը ձեր մասին չէ՝ դաշնակցական ընկերներիս, այլ ուրիշ – բուրժուական կապերը:

Գրելիքներ ունիմ, նոր և հին, «Ուստա Կարոն» մնաց անկատար, բայց ո՞ւր պիտի ավարտեմ, Հայաստանում կարելի չէ – չեն հրատարակի այնտեղ, իսկ եթե հանուն այդ գրությունների մտնեմ էմիգրանտի ծանր լծի տակ, ինչո՞վ ապրեմ, տնտեսական ի՞նչ ռեսուրսներ ունեմ, որ ինձ ազատ ժամանակ տա գրականությամբ զբաղվելու... Բարոյական սահմանագծեր կան, որոնցից չեմ կարող անցնել, կան պատասխանատվություններ – ժողովրդի առջև, իտեալների առջև, խղճմտանքի առջև: Այսպիսի ծանր հարցերի տակ ճզմված եմ և տակավին ելք չեմ գտնում: Նույն դրության մեջ էի և Հայաստանում... Ինձ համար մի բան է ցանկալի – միայն մի բան – լինել աշխարհի մի հեռավոր

անկյունում, չտեսնել հայուհյան տառապանքը, չլսել հայուհյան ձայնը, բայց մինչև այնտեղ էլ անշուշտ պիտի երկարին նրանք, որովհետև իմ մեջն են նրանք: Ո՞ւր պիտի փախչեմ ես ինձանից» *(XIV, 288)*:

Վերոշարադրյալը Նամականու այն կարևոր հատվածն է, որը կարող է բացահայտել, թե ինչու այս վերջաբանի համար ես վերնագիրը ընտրեցի՝ «Երկու քարի արանքում» դարձվածքը:

Բ. «ԻՄ ՎԵՊՍ ԻՄ ԱՐԵՎՍ Է»

Եվ այս հանգույցում, քանի որ խոսքը հայ գրականության ամենամեծ գրողներից մեկի մասին է, մեզ չեն կարող չհետաքրքրել Իսահակյանի Նամականիում արծարծված գրական ստեղծագործության հարցերը, մեծ բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիային բնորոշ խնդիրները: Գրողի նամակ հասկացության տակ ընթերցողին հետաքրքրում է, թե հեղինակն ինչ մտահղացում է ունեցել կամ ինչպես է ստեղծել այս կամ այն հայտնի գործը: Նամակը թերևս լավագույնս է մեկնաբանում տվյալ հեղինակի ստեղծագործական լաբորատորիան, տվյալ երկի ստեղծման պատմությունը: Քանզի էլ ո՞վ հեղինակից լավ կարող է բացահայտել իր գրածը: Եվ եթե խոսքն Իսահակյանի պոեզիայի մասին է, մեզ առաջին հերթին հետաքրքրում են տվյալները, փաստերը նրա գլուխգործոցի՝ «Աբու-Լալա-Մահարի» պոեմի կերտման վերաբերյալ:

Առաջին հիշատակումը պոեմի մասին մենք հանդիպում ենք Վիկտորիա Աբովյանին ուղղված Իսահակյանի նամակում (1910, 22 մարտի, Ղազարապատ).

«Սկսել եմ մի նոր մեծ պոեմա. առհասարակ լավ պարապում եմ. վառում եմ օճախս և նստում, աշխատում, լավ բան է սիրած աշխատանքը» *(XIII, 162):*

«Աբու-Լալա-Մահարի» պոեմի ծագումնաբանության և պատմական ակունքների մասին է գրում Իսահակյանն իր ընկերոջը՝ հայագետ Կարեն Միքայելյանին, Մոսկվա, երբ որ նրանից ստանում է Բրյուսովյան «Поэзия Армении» ժողովածուն (1916 թ., Մոսկվա), որտեղ զետեղված էր «Աբու-Լալա-

Մահարի» պոեմը Վալերի Բրյուսովի թարգմանությամբ (1917, 18 մարտի, Ժնև).

«Խորին շնորհակալությունները հայտնելով պ. Բրյուսովին, ասա, որ նա հայ ժողովրդի անկեղծ և մեծ բարեկամներից մեկն է:

Գրում ես, թե «Մահարին» չի համապատասխանում պատմական դեպքին. դա, սիրելիս, ես լավ գիտեմ. ինձ միայն անունն էր պետք, հնությունը, կոլորիտը և մասամբ էլ նրա պեսիմիստ-փիլիսոփա հոգին: Նրա դրածները կարդացել եմ և՛ գերմաներեն լեզվով, և՛ ֆրանսերեն. գիտեմ, որ նա կույր է եղել, Բաղդադ չի եղել, բայց այդ չէ կարևորը. այնտեղ ես եմ, ուրիշ ոչ ոք, միայն ուրիշի վերարկուի տակ:

Պրոֆեսորը սխալվում է «քասիդա, քասիդ» նշանակության մասին. նա կնշանակե Պոեմ, այդպես են վկայում բառարանները և կենդանի մարդիկ. արաբագետներ: Ծանոթ եմ Բեռլին՝ նշանավոր պրոֆ. Մարտին Հարտմանին՝ (նույնն է ասում): Ծանոթ եմ արաբ սենատոր և դրող Էլ-Բոստանիին. նույնն է ասում. «Սուրա»ի մասին ճիշտ է. նա դործածվում է Ղուրանի մեջ և մեր «սրահ» բառն է. «սրահ» կնշանակե հերթ, կարդ, բայց ես ուզեցել եմ նոր Ղուրան դրել (մանիա դրանդիոզա, մեծամտություն): Ջէ՞ որ ասել եմ «Օ՛, ազատություն, դու դրախտային վառ բլբուլների անմահ Ալ -Կորան»: Վրաս չծիծաղես» *(XIII, 290):*

Պոեմին անդրադառնալու մոտիվների մասին է դրում Իսահակյանը Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» թերթի խմբագիր Հովհաննես Ավագյանին (1926, 31 հունվար, Վենետիկ).

«Գալով Աբու Լալա Մահարիին, սիրելի Հ. Ավագյան, իմ հոդու զավակն է սա, խորթ չէ ինձ այդ դժբախտ հոռետեսությունը:

Արաբ նշանավոր բանաստեղծի գրուքյունների մի փոքր գիրք, գերմաներեն, ձեռս անցավ, կարդացի և դտա իմ Հոգիս նրա Հոգուն նման... և նրա ապրած միջավայրը համաձայն գտնելով իմ ռոմանտիկ խառնվածքին,– քարվան, անապատ, արևելք, խորհրդավորություն,– ընտրեցի նրան իմ հույզերս մարմնացնող: Արաբ բանաստեղծից միայն երկու տող եմ առել, և ուրիշ ոչ մի բառ, ոչ մի պատկեր, որ չլինի վերարտադրություն: Նույնիսկ նրա կյանքի հանգամանքները փոխել եմ. աղքատ է եղել նա, կույր, Բաղդադից դուրս չի եկել, միայն էությունն եմ [պահել] առել, իմ էությունը միևնույն ժամանակ:

Հաջողած է թե ոչ, չգիտեմ, ճշմարտությունն այն է, որ ես դժբախտաբար, շատ տառապած մարդ եմ, երկար ժամանակ հիվանդ եմ եղել, և հիմա ջղերով քայքայված, բանտեր նստած, աքսորված, վտարանդի, միշտ անապահով վիճակ, ունեցել եմ շատ թանկագին մարդկային կորուստներ, և վերջապես հայության աղետը, որ մոռցնել է տալիս անհատական վիշտ ու ցավ: Եվ Մահարին դրանց արդյունքն է:

Պետք չէ, որ կոտորածները երգեմ, ցույց տալու համար իմ վիշտը (Սիամանթոյից հետո դժվար է երգել), սակայն Աբու Լալայիս ռուս և գերման թարգմանությունների մասին զրախոսները ասացին, որ միայն հայ մարդը կարող է այսքան սև հոռետես լինել: Անբացատրելի, զարհուրելի ջարդերը միայն կարող են այսպես մթագնել մի հոգի, հայ մարդու հոգին...

Այսքա՛ն, սիրելի բարեկամ» *(XIV, 145.):*

Կ. Պոլսում իր «Աբու-Լալա-Մահարի» պոեմի տպագիր երկու հրատարակությունների մասին է գրում Իսահակյանը ՀՅԴ անդամ, «Յառաջ»-ի խմբագիր Շավարշ Միսակյանին (1924 թ., 24 մարտի, Վենետիկ), որում մասնավորապես նկատում է.

«...դառն դասեր ունիմ հատկապես Կ. Պոլսի հրատարակչական տուներից: Փաստեր...

II. «Զարդարյան» դրատունը հրատարակեց «Աբու Լալաս», ո՛չ միայն ոչինչ չվճարեց, այլև դիմումներիս չպատասխանեց, նույնիսկ մի օրինակ դրքույկիցս չուղարկեց

III. «Կիլիկիա» դրատունը նույնպես հրատարակեց «Աբու Լալաս», բայց գերմանական մարկեր ուղարկեց, որ բռնեց 20 ֆրանկ: Երևի այդպես են Պոլսի բարքերը» *(XIV, 21)*:

Նամակը ևս մի կես էջ շարունակվում է: Բայց էականն այս նամակում «Աբու Լալաս» անվան կողքին Իսահակյանի ձեռքով աստղանիշ դրված տողատակի ծանոթագրությունն է: Ահավասիկ ինչ է գրում Իսահակյանը հիշյալ տողատակում.

«Անշուշտ սրա քննադատության համար «արևմտահայ նշանավոր կրիտիկ» Էշականը ավելի դրամ ստացավ, քան ես բոլոր հրատարակություններից» *(XIV, 21)*:

Այո՛, Օշականի փոխարեն Էշական՝ յոթերորդ, չչաձև է-ով: Բանաստեղծը չի կարողացել բառախաղի ընձեռած գայթակղությունից հեռու մնալ: Սակայն արդեն շատ ավելի լուրջ և ըստ էության է քննադատում Իսահակյանը Օշականին և «նրա խմբին» Բոստոնի «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն (Արտաշես) Դարբինյանին գրած նամակում (1925, 12 փետրվարի, Վենետիկ).

«Սիրելի Արտաշես,

այս նամակը պիտի չգրեի, եթե Մ. Պարսամյանի դրախոսականը («Հայրենիք» ամսագրի մեջ) առիթ չտար:

Ես առհասարակ ուշք չեմ դարձնում իմ մասին եղած դրախոսականների վրա: Ամենալավ քննադատը ես ինքս եմ իմ գրվածքների մասին: Դրա համար էլ, օրինակ, երբեք ականջ չեմ կախում Օշականի՝ տարիներից ի վեր իմ մասին գրածներին: Նախ և առաջ պիտեմ թրքահայ գրողների փչացած, ֆրանսացած ճաշակը: Գիտեմ Օշականի ամբարտավան բնավորությունը, նրա հատվածական աչառությունը և իմ դեմ ունե-

ցած թշնամությունը, որ վաղուց է, այն օրվանից, երբ Պոլիս էի և քննադատում էի նրանց սիմբոլիզմն ու ֆրանսական գրականության կողոպուտը նրանց մեծ ու փոքր գրողների կողմից:

Ճշմարտությունն այն է, որ եթե ես, Հ. Թումանյանը կամ Հ. Հովհաննիսյանը օգտվում ենք հայ ժողովրդի ոճերից, ձևերից, այն մտածումով, թե հայ տոհմիկ գրականություն ենք մշակում, իսկ թրքահայ գրողները նույնը անում են ֆրանսական և օտար գրականություններից: <...>

Ջարժե այդ մասին խոսել: Թող հրճվեն, ճաշակի հարց է: Ինձ համար Գյոթեի «Ueber allen Gipfeln ist Ruhe»-ն ամենաթանկ գոհարն է տիեզերական գրականության, դրան չի հասել ողջ ֆրանսական գրականությունը: Եվ դա իմ իդեալն է, կաղապարը: Դրան եմ բերում աչքիս առաջ, երբ մի բան եմ գրում: Պարզ, անպաճուճ, նաիվ, բայց խորն ու զգացած...

Սակայն Պարսամյանի գրախոսականն ինձ զայրացրեց... Երկինք հանել Օշականի բռնազբոսիկ Շահպազը իր անբնական հանգույցով – ելքով, անբնական նյութով (ո՞ւր է տեսնված, որ այր մարդը էգ դառնա վշտից), իր անհասկանալի ոճով ու լեզվով...

Այստեղ էր Վահան Նավասարդյանը, երեկ գնաց Եգիպտոս, ասում էր, թե Օշականը իր թրքահայ խմբով ատելով ատում է ռուսահայերին և նրանց գրողներին, ու բղավում է, թե՝ «մոխիր պիտի դարձնեմ Իսահակյանին. նա ո՞վ է, որ իրեն մարգարե է ծախում, անապատ գնում...»:

Անշուշտ, գլուխ չունեմ նրանց հետ ընկնելու: Բայց սիրտս ցավում է, որ գտնվում եմ այս անպիտան մթնոլորտում, գաղութում, ուր իշխում է այս ստոր մտայնությունը <...>:

Վերջապես, Աստված բոլորիդ բարի տա: Հայությունը երկու ազգից է կազմված՝ իրար ատող, իրար չհասկացող: Սա գալիս է

միանգամայն ինձ համոզելու, որ իմ տեղը Արագածի լանջերի վրա է, ինձ ծնող ու ինձ հասկացող ժողովրդի մոտ...

Քո Ավետիք Իսահակյան» *(XIV, 97-100.)*:

* * *

Իսահակյանի ստեղծագործությամբ զբաղվողների, հայ ընթերցասեր լայն շրջանակի համար վաղուց ի վեր մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարո» վեպը (առաջին տարբերակը տպագրված է, տե՛ս ներկա ակադեմիականի VII հատորը, երկրորդ տարբերակը կզետեղվի VIII հատորում՝ երկու գրքով): Բնականաբար այս հարցում ևս Իսահակյանի Նամականին եզակի արժեք ունի թե՛ վեպի ասելիքի, կառուցվածքի, գեղարվեստական առանձնահատկությունների մեկնաբանման, թե՛ վեպի ստեղծագործական պատմության տեսակետից:

Եվ քանի որ վեպը գրվել է զուգահեռ բանաստեղծի գրական կենսագրությանը, այնպես և Նամականիում նրա մասին խոսքը 1910-ական թվականներից մինչև բանաստեղծի արևամուտն է:

Ինչպես «Աբու-Լալա-Մահարու» դեպքում, Իսահակյանն առաջինը կրկին Վիկտորիա Աբովյանին է հայտնում իր նոր մեծ մտահղացման մասին (1910, 2 մայիսի, Ղազ.).

«Սիրելիս, շա՜տ հոգնած եմ, ամբողջ օրը պարապում եմ. օրական 14 ժամ սեղանիս առաջն եմ – գրում եմ, գրում եմ, գրում եմ, իսկի չեմ կարդում, սկսել եմ մի մեծ վեպ, որ հավատացնում եմ, հանճարեղ բան է. մինչև այժմ այդպես բան չեմ գրել, և ոչ մի մարդ չի գրել. չասես պարծենկոտ Ավետիք.– ո՛չ – ճիշտն եմ ասում. «Աբուլ-Մահարին» նրա մի գլուխը չարժե... Մինչև մայիսի վերջը կլինի բոլորովին պատրաստ...» *(XIII, 169)*:

Այս նամակում Իսահակյանը վեպի անունը դեռ չի տալիս: Չի տալիս և հաջորդ նամակում (1910, 21 մայիսի, Ղազարապատ).

«Գրեմ ինձնից. կյանքս անցնում է ամբողջապես աշխատանքի մեջ. օրը մի 15 ժամ սեղանիս առաջ եմ և գրում եմ. իսկի մի տող էլ չեմ կարդում. վեպս լավ առաջ է գնում. երևում է, որ 500 երեսի կհասնի, չեմ ուզում՝ մեծ լինի, բայց հնար չկա. մեծ պլանով եմ սկսել, թեև նկատում եմ, որ ոչ մի ճանճրալի տեղ չկա. ամեն երեսն էլ կարդացվում է հետաքրքրությամբ» *(XIII, 170):*

Եվ մխայն Վիկտորիային գրած երրորդ նամակում է նա տալիս վեպի վերնագիրը (1910, 11 հունիսի, Ալեքսանդրապոլ).

«Գալով ինձ՝ իմ մխիթարությունն էլի մնում է «Ուստա Կարոն», որ հաչող կերպով հառաջ է գնում, տեսնենք՝ ինչ դուրս կգա» *(XIII, 172):*

Իսկ 1912 թվականի ապրիլի 24-ին Իսահակյանը Պրինկիպոյից (Պոլիս) գրում է Վիկտորիային.

«Ուստա Կարոն» վերջացած է, բայց մի 2-3 ամսվա աշխատանք է պետք, որ լեզուն ուղղեմ, հղկեմ, կոկեմ, երբ որ ձեռքս մի քիչ փող անցնի, որ մի քանի ամիս ապահով լինեմ, «Ուստա Կարոն» լույս աշխարհ կելնի» *(XIII, 198):*

Եվ հետո ուղիղ մեկ տարի լուր չկա «Ուստա Կարոյի» մասին, և 1913 թ. ապրիլի 23-ին Ժնևից Գարեգին Լևոնյանին ուղղված նամակում մենք կարդում ենք.

«Ուստա Կարոն» համարյա անմշակ ընկած է պորտֆելիս մեջ, և չեմ ձեռք զարկում մշակելու. ո՞ւմ համար, ինչո՞ւ համար գրեմ.– Հայ հասարակության համար, որը կարիք չի զգում գրականության, փառքի համա՞ր – այդ ինձ երբեք չի հետաքրքրել, ուրեմն գրել խմբագիրների համար – դրա համար էլ այնքան հիմար չեմ» *(XIII, 219):*

Մեկ ամսից մի քիչ անց Իսահակյանը, ինչպես երևում է կրկին Գ. Լևոնյանին ուղղված նամակից, միտքը փոխում է.

(1913, 30 մայիսի, Կոլլոնժ).

«Ուստա Կարոն» երկուշաբթի օրվանից սկսում եմ նորից գրել, մշակել և չգիտեմ քեզ երբ հարկավոր կլինի, որ մի գլուխ, մի լավ գլուխ հասցնեմ... Շատ ծանր աշխատանք է այդ «Ուստա Կարոն». 500 երես[1] նորից գրել, անթիվ նյութերս նորից քրքրել, տող-տող սրբագրել, ուղղել, հղկել, մշակել» *(XIII, 222)*:

Վեպի առաջին տարբերակն ավարտված էր, բայց պատմական դարակազմիկ իրադարձությունների, փոփոխությունների ներքո Իսահակյանը որոշում ընդունեց ձեռնամուխ լինել վեպի երկրորդ տարբերակին: Հայոց պատմությունն այնպես սրընթաց և ողբերգական փուլեր էր անցնում, որ վիպագրին հնարավորություն չէր տալիս վերջակետ դնելու. 1915 թ., Մեծ եղեռն, 1917 թ. հեղափոխություն Ռուսաստանում, 1918 թ. Հայաստանի Առաջին անկախ հանրապետության ստեղծում, Հայաստանի խորհրդայնացում, Արևմտյան Հայաստանի ողջ տարածքների կորուստ և 1.5 միլիոն հայության բնաջնջում: Այնինչ առաջին տարբերակն ավարտվում էր 1912 թ. իրողությամբ: Այն, ինչ որ եղել էր, և անորոշ ապագան գրողի առջև դժվարին խնդիրներ էր դնում:

1921 թ. 14 սեպտեմբերին Իսահակյանը գրում է Վարդգես Ահարոնյանին.

«Միակ մխիթարանքս այն է, որ լծվել եմ «Ուստա Կարոն» վերջնականապես ավարտելուն, իսկ տալե... այդքան փող որտեղի՞ց...» *(XIII, 373)*:

---

[1] *Հենց այս բնագրի հիման վրա տողերիս հեղինակը և լուսահոգի տեքստաբան Անահիտ Վարդանյանը հրատարակության պատրաստեցին և տպագրեցին Ավ. Իսահակյանի ակադեմիական VII հատորը («Ուստա Կարո» վեպի առաջին տարբերակը, Ե., «Գիտություն», 2016 թ., 636 էջ):*

Իհարկե, հենց Վենետիկում պետք է Իսահակյանը որոշում ընդուներ ավարտել «վերջնականապես» «Ուստա Կարոն»: Վենետիկն իր օլիմպիական հանգստությամբ և Իսահակյանն էլ «միայնության» մթնոլորտում պիտի նպաստեին, որ վեպն ավարտվեր: Բայց... Ահա նա գրում է սիրելի ընկերոջը՝ Սիմոն Հակոբյանին (1922, 1-10 հունվարի, Վենետիկ).

«Ես չա՜տ զբաղված եմ, չա՜տ բան ունիմ գրելու, անիծյալ «Ուստա Կարոն» չվերջացրի, որ ուրիշ բաների ձեռք զարկեմ... «Ուստա Կարոն» անհաղթելի դժվարություններ ունի, մեծ է, էպոպեա, համայնապարփակ, 700-800 երես... թեև ավարտած եմ, բայց անվերջ սրբագրում եմ, գրում, ջնջում, ավելացնում, պակասեցնում... այդպես է Տոլստոյը 8 անգամ է գրել Война и мир ... Բայց նա հոգով հանդիստ է եղել և ապահով. ապարանքի մեջ նստած, նորապսակ...» *(XIII, 394):*

Եկավ մի պահ Վենետիկում, երբ Իսահակյանին թվաց, որ վեպն ավարտել է, նա որոշեց այս երկրորդ տարբերակը տպագրել առանձին գրքով կամ գոնե թերթում: Այդ մասին նա գրում է իր հին ընկերոջը՝ «Հայրենիքի» խմբագիր Ռուբեն Դարբինյանին (1922, 24 սեպտեմբերի).

«Սիրելի Արտաշես,

Անցյալ օրը քեզ նամակ գրեցի վեպիս՝ «Ուստա Կարոյի» հրատարակության մասին: Երևի ստացար: Հիմա գրում եմ մի քանի գործնական մանրամասներ:

Վեպս ունի մոտավորապես մեկ միլիոն տառ: Եթե գիրք անենք, մեծադիր էջով կբռնե մոտ 750-800 էջ, ավելի փոքր գիրքով՝ 1000 էջ, տառերն էլ կարծեմ ոչ մեծ:

Մտածի՛ր, թե կարո՞ղ եք այդպիսի մի մեծ վեպ մի տարվա մեջ տպել, երկու հատորով: Նյութը շատ հետաքրքրական է. Շիրակի կյանքից, գյուղ ու քաղաք, շատ տիպեր, Դաշնակցության գործունեություն, իբրև ֆոն, բայց բարդ

կազմվածքով և, հավատացած եմ, լավ դրված: Կծախվի, մնայուն գործ է:

Հաշվել եմ, որ վեպս կբռնե 1000 այուն. ուրեմն, եթե մի ամբողջ տարի տեղ տաս ինձ, չաթաթը երկու թերթոն պիտի դրավեմ, ամսական՝ 8: Ավելին չեմ կարող հասցնել: Սա էլ պիտի շուտ աշխատեմ, որովհետև առնվազը պետք է դրեմ 60 կամ 80 էջ, նույն չափ էլ արտագրեմ, որ դժվար բան է, մանավանդ որ ես ծանր եմ գրում, մտածելով, խնամքով (դոնե այդպես եմ ուզում անել):

Ինձ համար ավելի հարմար է առանձին տպելը, որովհետև չեմ շտապի և, վերջապես, գիրք կունենամ, ոչ թե լրագրի թերթոններ» *(XIII, 463)*:

Վենետիկում, իրոք, Իսահակյանն ամբողջ ժամանակ կլանված էր «Ուստա Կարո» վեպի ավարտով և տպագրությամբ: Նա երջանիկ էր, որ մեծ վեպն ավարտել էր, այժմ տեխնիկական հարցեր էին մնում. սրբագրել, խմբագրել և այլն և ամբողջությամբ տպագրել, դոնե «Հայրենիքում»: Այդ մասին է գրում Իսահակյանն իր հին բարեկամներին՝ Երվանդ և Վերժինե Խաթանասյաններին (1924, 3 հոկտ., Վենետիկ).

«Ուստա Կարոյի» առաջին գլուխը դնաց, երևի «Հայրենիք»ի Դեկտեմբերի կամ Հունվարի թվին մեջ կլինի, և հետզհետե մյուսները ասպարեզ կգան, տեսնենք՝ ինչ է դուրս գալու:

Այստեղ սկսվել են խոնավ և տխուր օրերը, բայց ինձ համար արև է, տաք ու պայծառ, որովհետև միայն ատամոքսով (ներողություն անքաղաքավարության) եմ կապված իրական աշխարհի հետ. ամբողջապես վեպիս հերոսների հետ եմ, մեր արևին մոտիկ՝ Հայաստանում, լսում եմ զանգակ աղբյուրների ձայնը, զգում եմ լեռների ծաղիկների բույրը և ապրում եմ հին լավ օրերս: Իմ Ուստա Կարոն ասում է, թե «արևը աղքատի

վերարկուն է», իսկ իմ վեպս – իմ կյանքս ու սերս ու մեծագիր հաճույքս: Ջնանախանձիք ու աչքով չտաք» *(XIV, 59-60.):*

Վենետիկում, անընկեր ու տխուր մտքերի հետ, կապված «Հայկական հարցի» ողբերգական հանգուցալուծման հետ՝ բանաստեղծի անձնական երջանկության միակ աղբյուրը և ստեղծագործության հարատև բերկրանքը «Ուստա Կարո» վեպն էր: Այնպես որ Իսահակյանը չէր ուզի, որ այն չուտ ավարտվեր:

Նույն 1922 թվականին (22 օգոստոսի, Վենետիկ) բանաստեղծը գրել է Ռ. Դարբինյանին վեպի գլխին եկած անկասելի դժվարությունների մասին.

«Ձեռքիս տակ ունիմ բաներ, որ գրում եմ կամաց-կամաց: Բայց ուզում եմ բոլորը կիսատ թողնել և ձեռք զարնել «Ուստա Կարո» վեպիս ավարտելուն: Վեպս թեև ավարտած է, բայց մշակության շատ պետք կա:

Ավելորդ չէ ասելը, որ պատերազմի ընթացքին նա մնաց Գերմանիա. ուրեմն, 4-5 տարի մի տող չեմ գրած ու ջնջած նրա մասին. զինադադարից հետո գնացի Բեռլին, բայց այդ շրջանում էլ միայն 300 երես եմ ուղղել: Իսկ վեպս լինելու է առնվազը 700 երես, մոտ Րաֆֆիի «Սամվել»ի չափ, նույն գիրքով: Ուզում եմ այս տարի աշունքից՝ սեպտեմբերի վերջերից, դրանով զբաղվել և վերջացնել: Ծանր կոշմարի պես նստել է վրաս, պրծնեմ, որ մյուս գործերիս էլ վերջ տամ, որոնք ծավալով մեծ չեն. 100-150 երեսից մեծ բան չունեմ: Դյուրությամբ պիտի կարողանամ ամեն տարի մի երկու բան վերջացնել, եթե ողջ մնամ:

Լսել եմ, որ մեր դաշնակցական ընկերների մեջ խոսք է եղել, թե ես բոլշևիկ եմ: Երբե՛ք, չհավատաս: Բոլշևիզմը եղավ Հայության գերեզմանը, սկսած 1918 թ.. ուրիշ բան է մեր կողմից պոլիտիկայով վարվելը, որ գոնե այդ գազանների տիրա-

պետութեան տակ փրկենք Հայութիւնը և մեր ընկերների կյանքը, որ նրանց ձեռքի տակն են» *(XIII, 457-459)*:

Թվում է, թե Իսահակյանը Վենետիկում կավարտի վեպը, բայց ինչ-որ բան բանաստեղծին խանգարում էր, չէ՞ որ ինքը հենց քանիցս ասում էր, որ վեպը մի երկու տարի սրբագրելուց-մշակելուց հետո կհասնի իր ավարտին: Ահա նա գրում է նոր ոգևորությամբ իր հավատարիմ Ռուբեն Դարբինյանին (1925, 20 մայիսի, Վենետիկ).

«Ստացա Մայիս 6 թվակիր նամակդ և այսօր ուղարկում եմ «Ուստա Կարոյի» վեցերորդ գլուխը:

Քեզ չատ սիրելուցս է, որ վճիռս լուծեցի և նույնպես Համաստեղի խաթերը, որ այդպես գնահատում է գործս: Այլապես ի՞նչ միտք ուներ գրել այս հասարակության համար, որ մեռած սիմվոլիզմով է տարվում և ֆուտուրիզմով ոգևորվում: Անմահը ռեալիզմն է – Հոմերոս, Սերվանտես, Գյոթե, Տոլստոյ, Դոստոևսկի և ոչ Բոդլեր կամ Օ. Ուայլդ...

Սակայն Օշականը անշուն գյուղ է գտել, առանց փայտի ման է գալիս, կլլացնել տալիս հասարակությանն իր հիվանդ պլկյուլները, և մարդ չկա նրան ծակը դնող: Իսկ դու բոլորովին ասիմիլյասիոնի ես ենթարկվել թրքահայ մտայնությամբ: Մի խոսքով...

Ավետիք:

Հ.Գ. «Ուստա Կարոն» բռնելու է 1000 մեծադիր էջ, ընդգրկելու է մեր ողջ կյանքը, բոլոր դասերը, մաքերը, հոսանքները: Էպոսը այս գլխից սկսած է ավելի մշակված դուրս գալ՝ բարբառով, բոլորովին ֆոտոգրաֆիկ: Առաջին գլուխները հին էին գրված, վերջերս մշակեցի:

Գիտես, սարսափելի դժվար գործ է – 1000 էջի վրա խաղալ, ուր հարյուրավոր մարդիկ կան, գյուղ ու քաղաք իրար խառնված, անկիրթ ու կրթված մարդիկ, անթիվ գավառաբարբառներ,

մանրակրկիտ ճշդությամբ գրված, ոչ թե հիշողությամբ գրված, այլ բազմաթիվ հում նյութեր նայելով:

Անթիվ մտքեր, անթիվ դաղափարներ, հոսանքներ կան այնտեղ՝ Դաշնակցությունը, Հնչակը, Սոցիալ-Դեմոկրատը, կղերականը, պեսիմիզմ, օպտիմիզմ, քահանա, վարդապետ, ինժիներ, վարժապետներ, քուրտեր... մի խոսքով՝ մի քաոս, բայց ներքին մի հզոր կապով կապված:

Հաջող է: Ում մոտ որ կարդացել եմ, հավանել են:

Համենայն դեպս մի տարվա չափ շատ ծանր աշխատանք ունեմ: Մի տարի ևս կյանք ունենամ, հետո ինչ կլինի՝ թող լինի» *(XIV, 108.)*:

Հիրավի, չկա ավելի լավ միջոց հասկանալու հեղինակի մտադրությունները, ծրագրերը, տեսակետները իր ստեղծագործության վերաբերյալ, քան նրա նամակները: Այսպիսի նամակների շարքից է Իսահակյանի նամակը ՀՅԴ գաղափարախոս, իր հին ընկեր Վահան Նավասարդյանին: Այն գրված է Վենետիկից 1925 թվին, հուլիսի 21-ին, թվում էր, թե հինգերորդ տարին Վենետիկում արդեն բավական ժամանակ պետք է լիներ, որ վեպն ավարտված ու մշակված լիներ, բայց այդպես չէր: Ըստ հեղինակի՝ վեպը պիտի պատկերեր 1904-1925 թթ. շրջանակը, և ինչպես Իսահակյանն էր պատկերացնում, ինքը մի որոշ ժամանակով պետք է դնար Խորհրդային Հայաստան: Ավարտեր վեպը բարեհպաստ Վենետիկում և տուն երթար... Բայց ինչպե՞ս ավարտեր վեպը, ինչպե՞ս դներ մոտ քառորդ դար իր տառապանքի վերջակետը: Մի՞թե սա էր Իսահակյանի իդեալը. Արևմտահայաստանը՝ ոչնչացված, պատմական հայրենիքը՝ ամայի, հայերը՝ սփռված աշխարհով մեկ, Կովկասահայաստանը՝ խորհրդայնացված, բզկտված, Դաշնակցությունը՝ արգելքի տակ հայրենիքում: Մի՞թե այս իրավիճակում պիտի ավարտվեր վեպը: Եվ որքան ժամանակն առաջ է գնում, այն-

քան հօդս է ցնդում անկախ, ազատ Հայաստանի գաղափարը, մնում է երազ՝ Զատիկի անվան տակ.

«Հազիվ կարողանում եմ «Ուստա Կարոյի» տակից դուրս գալ, ամսեամիս մի-մի դլուխ հասցնելով «Հայրենիք»ին. հազիվ եմ ասում, որովհետև այդ սարսափելի «Ուստա Կարոն» բռնում է մոտ 1700-2000 էջ, սակայն այդ 2000 էջը գրել եմ 5-6000 էջերի մեջ ու այդ քաոսից ու ծովից կազմում եմ գլուխները, չես իմանում, թե ինչ տաժանելի աշխատանք է, բայց ես ոգևորված եմ, որ անկարելի, մեծ, հզոր գործի եմ ձեռնարկել, մարդ պետք է հզոր գործեր կատարե, անպարտելի դժվարություններ (ПОДВИГ – սխրագործություն) հաղթե իր կյանքում, իմացած եղիր, որ տպվելուց հետո եմ մշակում, մշակված դիրք պիտի դառնա, երկու հատոր:

«Ուստա Կարո»ի մեջ մեր կյանքի վերջին 20-25 տարին է ամփոփված, սկսած 1904 թվից, մինչև այսօր, մինչև վերջացած տարին, իսկ վեպս կվերջանա 2-3 տարուց հետո, առաջին հատորը՝ մի տարուց հետո, 1000 էջը, իսկ մնացած..., հետո... այ, թե վեպս ավարտված լինի բոլշևիզմի փլումով, դու տե՛ս Զատիկը: Վեպիս մեջ հյուսած են դյուղ ու քաղաք, Դաշնակցություն, ռուս հեղափոխություն, թրքահայ ժողովրդի ջարդն ու վչացումը, տեղահանություն, բոլշևիզմ և այլն, և այլն: Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլիսոփայական և շատ տարրեր կան մեջը՝ էպոս, րոման, լիրիկա, հումոր... դա օվկիանոս է, վեպ չէ» *(XIV, 111.):*

1925 թվականի վաղ գարնանը՝ մարտ ամսին, Վենետիկ է գալիս Եղիշե Զարենցը: Երիտասարդ Զարենցը հենց առաջին հանդիպումից, հենց առաջին օրից սիրելի և հարազատ դարձավ Իսահակյանի համար: Եվ նրանք համարյա մեկ ամիս Վենետիկում օրերը միասին են անցկացնում ու ընկերանում, իսկ ընկերությունն այդ շարունակվում է մինչև Զարենցի ողբերգական վախճանը:

Իսահակյանը 1925 թ. ապրիլի 22, Վենետիկից Մարտիրոս Սարյանին ուղղված նամակում գրում է.

«Մարտ ամսին այստեղ էր Ե. Զարենցը. ամեն օր միասին էինք. շատ քիչ կուվեցինք, միշտ արիշ-բարիշ էինք, հաշտ ու սիրով: Նրա մասին շատ դեշ, չար խոսքեր էի լսել, բայց ես նրան լավ տղա գտա. ընկերական սիրտ ունի, դարդիման է: տարիքից ավելի զարգացում ունի և կարդացած ու կարդալ սիրող տղա և չա՛տ հառաջ կդնա» *(XIV, էջ 106.)*:

Վենետիկում Իսահակյանը Զարենցին տալիս է կարդալու «Ուստա Կարո» վեպից մի շարք գլուխներ, այդ մասին նա գրում է Վահան Նավասարդյանին՝ մեր հիշված նամակում՝ 1925 թ., հուլիսի 21.

«Զարենցը հիացավ, զարմացավ և դասեց հավասար Դոն-Քիշոթի, «Война и мир», Հոմերոսի հետ: Միայն թե ապրիմ մի երեք տարի և հաց ունենամ: Այդ վեպի համար անսահման բան եմ կարդում – բարբառները, ազգագրական նյութեր, գիտական դրքեր, սոցիոլոգիա, պատմություն և վեպեր, քննադատություններ: Ոճի խնդիր կա, ոճ պիտի ստեղծեմ ինձ համար և բազմատեսակ վեպ:

Սրանից դուրս էլ մի՞թե ժամանակ ունեմ, մանավանդ որ ծույլ եմ բնությունից և հաճախ մելանխոլիա... Այդ վեպիս համար պետք է մի 6 ամսով լինեմ Հայրենիք և դրա համար բոլշևիկների հետ կապեր եմ պահում, իսկ վեպիցս հետո նրանք գլուխս կտրելու հրաման պիտի արձակեն, որովհետև անտիբոլշևիկ վեպ է (այս չասացի Զարենցին, մյուս կտորները կարդացի):

Ինձ Հայաստան կթողնեն իբրև գրողի, որովհետև նրանք համարում են ինձ ռեակցիոներ, նացիոնալիստ: Զարենցն ասաց, եթե այսօր Նավասարդյանը իրեն հայտարարե կոմունիստ, երկու ձեռքով կգրկենք և կընդունենք, որովհետև նա մարքսիստ

է, սոցիալիստ է, իսկ եթե ես ինձ կոմունիստ հայտարարեմ, վրաս կխնդան, որովհետև ծովերով հեռու եմ սոցիալիզմից:

Տեսնո՞ւմ ես վերաբերմունքը: Թեև ուզում եմ և պետք է Հայաստան գնամ, բայց կարծում եմ, որ չեմ գնալու: Մինչդեռ չափազանց կարոտցել եմ հայ հողին ու ժողովրդին» *(XIV, 112.)*:

Հատակ է հետևյալ ճշմարտությունը. Իսահակյանը կամ պետք է իր ուզած ձևով ավարտեր վեպը և այրեր Հայրենիք տանող կամուրջները, կամ չպետք է ավարտեր վեպը և գնար Հայրենիք. ինչ որ եղավ: Այն Զատիկը, որի մասին երազում էր Իսահակյանը (1925, Հուլիս 21) նամակում, եկավ միայն յոթ տասնամյակ անց:

Վեպի առաջին տարբերակն ամբողջությամբ տպագրվեց միայն 2006 թվականին, իսկ երկրորդ տարբերակի համար պատվավոր տեղ է նախատեսված ներկա ակադեմիականի ութերորդ հատորում, որը բաղկացած կլինի երկու գրքից: Բանաստեղծի Նամականիում թերևս խոսք է գնում իր գրած բազմաթիվ այլ գործերի մասին, սակայն բավարարվենք այսքանով: Մնացյալի մասին ընթերցողը ինքը կկարդա Նամականիում:

Գ. «ՔՈՒՅՐ ԻՄ ՆԱԶԵԼԻ...»

Իսահակյանի Նամականիում հատուկ տեղ են գրավում բանաստեղծի սիրային նամակները: Թվում էր, թե դրանք առավել կապված պիտի լինեին Իսահակյանի անձնական կյանքի խնդիրների հետ, սակայն այս Նամականիում տեղի է ունենում սիրային թեմայի այնպիսի բանաստեղծացում, որ այդ նամակները հաճախ ինքնին դառնում են արվեստի գործեր: Մեծ քնարերգուի մոտ այդպես էլ պիտի լիներ: Թեև Իսահակյանի սիրած կանանցից միայն մեկը՝ Շուշանիկ Մատակյանն էր (1876-1944) դարձել նրա պոեզիայի հերոսուհին, նրա սիրերգության հիմնական մուսան: Շուշիկին գրած Իսահակյանի նամակներից պահպանվել են միայն երկուսը, այն էլ շնորհիվ այն բանի, որ Իսահակյանը պահպանել էր նրանց սևագրերը:

Սիրային նամակները ևս ճիշտ կլիներ մեկնաբանել ըստ ժամանակագրական կարգի: Մեզ հասած առաջին նամակը (1893 թ. մարտի 20, Շուշիկին) գրված է Էջմիածնից՝ Գևորգյան ճեմարանից:

Շուշանիկին ուղղված Իսահակյանի մնացած նամակները մինչև օրս գտնված չեն: Վարկած կա, որ դրանք եղել են Շուշանիկի ճամփորդական ճամպրուկում, որը նա կորցրել էր Բաթումիից Տրապիզոն ճանապարհին: Վարկած էլ կա, որ դրանք ոչնչացրել է Շուշանիկի ամուսինը: Մինչդեռ Շուշանիկի բոլոր նամակները՝ ուղղված Ավետիքին, բանաստեղծը պահպանել է: Նամակների փոխարեն գուցե կխոսեն Իսահակյանի բանաստեղծությունները՝ ուղղված իր մեծ սիրո հերոսուհուն.

Շուշան աղջի՛կ, քու դերին եմ,
Կալ ու կապված անչղթա...

Որևէ մեկին իր սիրած էակներից Իսահակյանն այնքան բանաստեղծություն չի նվիրել, որքան Շուշանիկին:

Ինչպես երևում է 1893 թ. մարտին գրված նամակի ամսաթվից, Իսահակյանն այն գրել է Գերմանիա մեկնելուց 4 ամիս առաջ, և ինչպես երևում է, բանաստեղծը փորձում է իր մտաշխարհից վանել Շուշիկի կերպարը:

«Նա» ձեզ համար մեռնում է, բայց ինձ համար՝ ո՛չ. «Նա» միշտ կենդանի կմնա և ի՛մ սրտում, իմ երգերու՛մ, իմ աղոթքներում – ավելի մաքու՛ր, ավելի սու՛րբ... Իսկ գաղտնի տանջանքով ավելի շուտ կհասնեմ կյանքի նպատակին – գերեզմանին, քան թե դու՛... և Հավիտյանս «Նա» սիրում և օրհնում է ինձ և ես՝ «Ներան»: Ավետիք»: *(XIII, 22):*

Այսպես է ավարտվում 18-ամյա Իսահակյանի նամակը՝ ուղղված իր «Սիրելի՛ քույրիկ» Շուշանիկին:

Այս նամակից հետո ընթերցողն ի զորու էր մտածելու, որ Ավետիքն այլևս Շուշանիկին նամակ չի գրելու: Սակայն կանցնեն տարիներ, և իրերի բերումով 1904 թվի սեպտեմբերին Ղազարապատից 29-ամյա Իսահակյանը կգրի Շուշանիկին «Հրաժեշտի» հայտնի նամակը.

«Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս»:

Սա Ավետիքի գրած երկրորդ նամակն է, մնացածները, ինչպես ասացինք, անհետ կորած են: Եթե փրկված առաջին նամակը գրելու ժամանակ Իսահակյանն ընդամենը 18 տարեկան էր, էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան և այդ շրջանում ուներ միայն տասը բանաստեղծություն՝ տպագրված Թիֆլիսի

«Տարազ» ամսագրում, ապա 1904 թվականին Շուշանիկին գրում էր ժողովրդական բանաստեղծի կոչում ունեցող «Երգեր ու վերքեր», «Բանաստեղծություններ» հանրահայտ գրքերի հեղինակ, բանտ ու աքսոր անցկացրած, հայության չրջանում հեղինակություն վայելող, «Վերնատան» անդամ Ավետիք Իսահակյանը:

Մինչդեռ Շուշանիկը մնացել էր նույնը՝ գավառական քաղաքի քաղքենիական մտածելակերպով երբեմնի գեղեցկուհի և հայտնի էր նրանով, որ նախկինում մեծամտաբար կոտրել էր երիտասարդ բանաստեղծի սիրտը: Եվ ըստ էության մնացել էր նույնը, չնայած փորձում էր դրել քնարական բանաստեղծություններ... Խոստովանանք հրաժեշտից առաջ, այսպես հակիրճ կարելի է անվանել այս նամակը.

«Ա՛խ, ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ, ողջ ուղեղը, հոգին և սրբապղծել ես իմ ողջ երկինքը...

Ինձ դուրս կանչեց ժողովուրդը, հեղափոխությունը... Ես տեսա իմ աչքում բոլոր իլյուզիաները ցրված, վարագույրները բացված և քեզ՝ որպես ամենավատ կինը բոլոր կանանցից...

Դու ինձ համար մեռա՛ր, մեռա՛ր... Արտասվելով համբուրում եմ քո դերեզմանը և ճամբա ընկնում նոր Աստված գտնելու» (XIII, 91-93):

Այլևս երբեք Իսահակյանը Շուշիկին չէր գրելու:

Մատակյան ազգանունն ինչ-որ տեղ ճակատագրական նշանակություն պետք է ունենար Իսահակյանի համար, Շուշանիկի դեպքում դա չստացվեց (և հարկ է ասել, որ սիրո այդ պատմության մասին մինչև օրս շատ բան դեռ հայտնի չէ – Ա. Ի.):

Կանցնի ոչ պակաս, ոչ ավել 11 տարի, և նույն ազգանվամբ, նույն Գյումրիից Իսահակյանի նամակների հասցեատերերի ցանկում կերևա Շուշանիկի կրտսեր քրոջ՝ Աննա (Անիկ) Մատակյանի անունը: Եվ 1904 թվի հոկտեմբերի 8-ից մինչև

1905 թվի սեպտեմբերը մի պատկառելի թիվ՝ 27 նամակ կգրի Իսահակյանը: Ասենք միանգամից, հանուն ճշմարտության, սա պլատոնական սեր էր և իհարկե չուներ ո՛չ այն ուժը, ո՛չ այն թափը, ինչ Ավետիքի սերը Շուշանիկի հանդեպ: Դա երևում է թե՛ նամակների ընդհանուր տոնից, թե՛ Իսահակյանի հայտնած մտքերից, բայց և բոլոր դեպքերում դա սեր էր, և այս փաստը կհաստատի նաև այն հանգամանքը, որ հիշատակված տարիներին, բացի Շուշիկին ուղղված երկու նամակից և Ջավահիր Ներսիսյանին գրած 4 նամակից, բանաստեղծն այլ կանանց նամակներ չի գրել: Գոնե այդպիսիք չեն պահպանվել:

Հապա ի՞նչը Շուշանիկի պահվածքից հետո «կնատյաց» դարձած Ավետիքին ստիպեց հայացքը դարձնել Աննայի կողմը: Գեղեցկությո՞ւնը, հազիվ թե, Շուշիկը շատ ավելի գեղեցիկ էր: Ուրեմն ի՞նչը: Հավանաբար դեռևս իններցիայով գնացող Իսահակյանի սերը Շուշիկի հանդեպ: Շուշիկի կերպարը դեռ մխում էր նրա հոգում, և բանաստեղծին սկզբնական շրջանում գուցե թվացել էր, թե Աննան սպեղանի կղնի իր վիրավոր հոգուն, թերևս ինչ-որ մի հանգույցում քույրերի գենետիկական հարազատությունը կամ աղջկա ինչ-որ անհայտ բույր կքաշի իրեն... Փակի՛ր աչքերդ և գուցե զգաս, թե Շուշիկն է: Բայց այդպես չեղավ: Ու՛ հետզհետե կիրքը սկսեց մարել Ավետիքի մեջ, Անիկի աչքերում բնավ չկար Շուշանիկի աչքերի ցոլքը, նրա ձայնում չկար այն թաքնված կանչը, իսկ բույրը, բույրը բնավ նրան չէր խենթացնում: Ուստի և այս սերը մնաց լոկ սիրավեպ նամակներում: Մնաց պլատոնական և առանց ձևականությունների: Եվ այնպես չի եղել, որ առաջին նամակներում Իսահակյանը բուռն սեր է խոստովանել, իսկ վերջիններում՝ ոչ: Իսահակյանը միշտ շատ անկեղծ է եղել. հենց այս նամակագրության սկզբնական շրջանում (1904 թ. նոյեմբերի 2) պոետը խոստովանում է.

«...ե՛ս աստվածային, տիեզերական սիրով սիրել եմ, պաշտել եմ Ջերոնցից մեկին, որի համար այնքան եմ տանջվել ու լացել, որ դեռ արցունքս չի չորացել, և տանջանքից աչքերս չեն փայլել երիտասարդական կրակով...» *(XIII, 99)*:

Այս խոսքերից հետո, եթե անգամ Իսահակյանը Աննային գրում էր.

«Դու չգիտես, որ քեզ անսահման սիրում եմ... ինչու ամենաուժեղ կերպով չհավատանք իրար, ինչո՞ւ...» *(1905, 19 հունվարի, XIII, 113)*:

Միևնույնն է, հավատ չի ներշնչում: Վերջապես ինքը՝ Իսահակյանն էլ խոստովանում է (1905, 29 փետրվար, Թիֆլիս).

«...բայց զգում եմ, որ այն նախկին հավատով լի, առողջ զգացմունքը չի տաքացնում սիրտս դեպի քեզ, ինչպես այն ժամանակ» *(XIII, 118)*:

Չի բացառվում, որ ինչ-որ մի հանգույցում մեր երկու նամակագիրների միջև բռնկվել է սիրո կայծը, համենայնդեպս Ավետիքի գրած բոլոր 27 նամակները Աննան սրբությամբ պահել է, և նաև, ի տարբերություն քրոջ, Աննան չի ամուսնացել... Այսպես թե այնպես, Իսահակյանի ստեղծագործական ժառանգության մեջ կպահպանվեն Աննային գրված 27 երբեմն բոցաշունչ, իսկ երբեմն էլ երկարաշունչ նամակները, իսկ Աննա անունը կմնա կապված պոետի երիտասարդության տարիների հետ:

* * *

Շուշանիկ Մատակյանից հետո, ինչպես ես նշել էի, գեղեցիկ սեռի Իսահակյանի հաջորդ հասցեատերը Ջավահիր (Ջավո) Ներսիսյանն էր (1875-1945):

Իսահակյանը Ջավահիրի հետ ծանոթացել է Ժնևում, ուր 1900-1902 թթ. աղջիկը սովորում էր տեղի համալսարանում

և ՀՅԴ անդամ էր: Նրանց միջև չուտով ջերմ ընկերական հարաբերություններ են հաստատվում: Նրանք հասակակիցներ էին, երիտասարդ, եռանդով լի: Ժնևում, բնականաբար անտարբեր չէին կարող իրար կողքից անցնել... Սիրո հատուկ, անուրջների շրջան, ռոմանտիկ հերոսներ, ո՞վ էր խանգարելու նրանց զգացմունքների զարգացմանը... Եվ մոտ երկու տարի, որ քաղաքում էլ որ Իսահակյանը եղել է, նա գրել է Ջավահիրին, ըստ երևույթին հանձին նրա գտնելով թե՛ գաղափարական ընկերոջ, թե՛ արտակարգ խելքով, հետաքրքիր անձնավորության, դարդիման ընկերոջ, ում առաջ բանաստեղծը սիրել է սիրտը բացել: Եվ հենց առաջին նամակում՝ գրված Յյուրիխից (Ժնև, 1900, դեկտեմբերի 2), Իսահակյանն ամենայն անկեղծությամբ իր քարտերը բացում է Ջավահիրի առաջ.

«Քեզ տարօրինակ կթվա այս, դուցեև (ավելի լավ է պարզ խոսել) կարծես, որ ես սիրահարված եմ քեզ, բայց դժբախտաբար այդպես բան, այդպես զգացմունք չկա սրտումս դեպի քեզ, եթե լիներ, ուրախ կլինեի և լի կապրեի: Դու ինձ թվում ես միայն քրոջ պես և չա՜տ վաղուց ծանոթ» *(XIII, 50-51):*

Ավելի հստակ դժվար է ասել:

Բայց և այնպես Իսահակյան ռոմանտիկ բանաստեղծի հոգին այս երկու տարվա ընկերության ճամփին, և առավել նամակների մեջ, իրեն զգալ է տալիս՝ խոստովանելով, որ ինքը Շուշիկին է սիրում.

«Դու ինձ մեղադրում ես, որ ես քեզ չեմ սիրում կամ քիչ եմ սիրում, կամ քիչ եմ սիրել,– ընդունենք, որ դա այդպես է, և իրոք էլ, ես քեզ իսկական սիրո, այն մեծ, տիեզերական, անհուն սիրո, որով սիրում էի Շուշանիկին, մի 100-ական մասով էլ չեմ սիրել...» *(XIII, 70):*

Միաժամանակ Իսահակյանն ընդունում է.

«...Դու արժանի ես իմ աչքում մեծ սիրո ու Շուշանիկից շա՛տ և շա՛տ բարձր մարդ ես...

Եվ որքան անմատչելի, անհասանելի լինի օբյեկտը, այնքան զորեղ կլինի սերը իր վշտով, որ սիրո անքաժան ընկերն է.— որպիսի սիրով ես սիրում եմ Շուշանիկին» *(XIII, 71)*:

Այդպես էր գրում Իսահակյանը, բայց և նույն ժամանակ գրում՝ Վենետիկից (1901, 6 հունիսի).

«Եթե լավի նշաններ նկատեմ... սրտիս ուրախությունից կրկնակի կլավանամ... Թև կառնեմ ու կթռնեմ. ինչ որ լինի՝ ձմեռը կլինեմ մոտդ, ժնև, ու՛ր որ լինես...

Այժմ ես վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շա՛տ տանջվես, ինչքա՛ն կուզես ինձ սիրիր, ազատ ես, բայց սեր, սիրահարություն մտքեդ հեռու պահիր: Ֆո վերջին նամակներից ես վախենում եմ, և ինձ դատապարտում եմ, որ այդպես մոտեցա քեզ, նամակներ գրեցինք իրար:

...Նույնիսկ լավ կլինի, որ էլ չպատահենք իրար. շուտ դնա, և Վենեցիայով մի՛ արի. քեզ շա՛տ եմ ուզում տեսնել, բայց և շա՛տ եմ վախենում. օ՛ֆ, ինչե՛ր եմ գրում. դու որտեղի՞ց ինձ պատահեցիր...» *(XIII, 59, 60, 61)*:

Իրոք, որ անիմանալի են Աստծո ուղիները...

Ավելի հանելուկային է Ջավահիրին գրած նամակներից բանաստեղծի վերջին նամակը՝ 1902 թ. դեկտեմբեր, Բաքվից: Այստեղ Իսահակյանը մի չատ հետաքրքիր տեսակետ է բարձրացնում.

«...ասա՛, ինչ հոգեբանական օրենքով, իմ քեզ չսիրելը քեզ հիմք է տալիս ինձ չսիրելու. սերը, ինչպես հասկացվում է վեհ, բարձր մտքով, որ բղխում է հոգու անհուն խորքերից, բջիջների ցանկությունը՝ դա մի տարերք, հզոր ուժ է, պահանջ է, որի առաջ խելքը, կամքը ոչինչ են...

Բայց քո սերը… բայց քո սերը, որքան էլ դու կարծում ես, հավատացած ես, թե ինձ սիրել ես բուռն ու խորը, չա՛տ քիչ է, սովորական, առօրյա և իսկույն փոխանցելի ուրիշի սիրով…

– Դու ինձ չես սիրել,– եզրակացնում եմ» *(XIII, 71-72)*:

Ուրեմն, ըստ Իսահակյանի, եթե մեկը մյուսին սիրում է, կարևոր չէ, որ այդ մյուսն էլ նրան սիրի, և բերում է իր և Շուշանիկի դժբախտ սիրո օրինակը. երբ բանաստեղծը մի օր դադարեց սիրված լինել Շուշանիկի կողմից, մինչդեռ բանաստեղծը շարունակում էր նրան սիրել:

Բնության անբացատրելի օրինաչափություն: Ինչպես որ եղել է բանաստեղծի կյանքում, ինչը, որ վերջին հաշվով բանաստեղծի հոգում խսպառ վերացրեց հավատը կնոջ հանդեպ: Իսկ ինչո՞ւ Ջավահիրը պետք է պատրաստ լիներ նման «անձնազոհ» սիրո…

Եվ հենց որ Ջավահիրի տեսադաշտում երևում է մեկ ուրիշը, որի կողմ աղջիկն ուղղում է հայացքը, Իսահակյանը չափազանց բարկանում է և խանդում.

«Ես սիրել եմ քո մեջ մարդը, այդ ամենը, բայց… այսօր այդ իմ բոլոր հավատալիքը ձևակերպվում է Զարքի (դրող Զարըքյան – Ա.. Ի.) մեջ, և արտահայտվում Շանթով. ահա թե ի՛նչն է վիրավորում ինձ և հուսախաբում, հիասթափեցնում, թեև չեմ ուզում այդպես լինել» *(XIII, 74)*:

Կարճ ասած՝ Իսահակյանն առաջարկում է՝ ոչ ինձ, ոչ քեզ: Պլյուս այս ամենին բանաստեղծը խանդում է.

«Ասա՛, որ ես քեզ չեմ սիրում, չեմ սիրել, որ նախանձում եմ, չար եմ, բայց լսիր ինձ իբրև հին [ընկեր] սերի, դու հիմա ընկեր ես ասում – լսիր իբրև լավ ընկերի իմ խորհուրդս՝ ձեռք քաշիր «դրանցից» *(XIII, 75)*:

Բուռն զգացմունքների այս ոլորաններում դժվար է դատավոր լինել: Սակայն այս վերջին նամակից, որ գրված է 1902 թվա-

կանի դեկտեմբերին, մի որոշ ժամանակ անց՝ 1903 թվականին Ջավահիրն ամուսնանում է գրող Լևոն Շանթի հետ: Սակայն Ավետիքը և Ջավահիրը մինչև վերջ մնում են լավ ընկերներ: Կարևոր է նաև արձանագրել, որ երբ 1926 թ. փետրվարին Ավետիքը և տիկին Ջավահիրը Փարիզում հանդիպում են, Իսահակյանն իր հին ընկերուհուն խնդրում է հետ տալ իրեն դարասկզբին ժնև գրած նամակները: Տիկին Ջավահիրը, որ միշտ եղել է վեհանձն անձնավորություն, չի մերժում բանաստեղծին և հետ է տալիս նրան իր համար այդքան թանկագին նամակները:

* * *

Բանաստեղծի հաջորդ սերը ես կանվանեի «սահմաններ չճանաչող սեր»: Խոսքս Ավետիք Իսահակյանի և Խաչատուր Աբովյանի թոռնուհի Վիկտորիա Աբովյանի (1883-1978) միջև բռնկված իրոք տարերային սիրո մասին է:

Շուշանիկ Մատակյանին ուղղված վերջին նամակը (1904 թ. սեպտեմբեր) Իսահակյանն ավարտում է հետևյալ խոսքերով.

«Արտասվելով համբուրում եմ քո գերեզմանը և ճամբա ընկնում նոր Աստված գտնելու» *(XIII, 93): («Նոր Աստված» այս համատեքստում պետք է հասկանալ «Նոր Սեր» – Ա. Ի.):*

Երեք տարի չանցած՝ 1907 թ. հունվարին, Թիֆլիսում Իսահակյանը գտնում է իր «նոր Աստծուն»՝ հանճին Վիկտորիա Աբովյանի:

Վիկտորիան եղել է Իսահակյանի պաշտելի Խաչատուր Աբովյանի թոռնուհին: Ծնվել է 1883 թ. Ալեքսանդրապոլում, որտեղ մի փոքր տուն են ունեցել: Վիկտորիան արտակարգ գեղեցիկ կին էր: Նրանք Իսահակյանի հետ առաջին անգամ հանդիպել են Թիֆլիսում 1907 թ. ձմռանը: Այդ հանդիպումից քիչ անց Իսահակյանը մեկնել է Վիեննա՝ որպես ՀՅԴ «Քարի»

կազմակերպության պատվիրակ մասնակցել է կուսակցության 4-րդ ընդհանուր ժողովին:

Առաջին նամակը՝ ուղղված Վիկտորիային, գրված է 1907 թ. ապրիլի 10-ին Վիեննայից.

«Տիկին Վիկտորիա.

Վերջապես բախտ ունեցա Ձեզ նամակ գրելու. օրը մի քանիսը ուղարկում եմ բարեկամներին՝ հիշեցնելու, որ ինձ չմոռանան. ուրեմն Դուք էլ ինձ չմոռանաք:

Բարևներով և հարգանքներով՝ Ավ. Իսահակյան: 10 Ապրիլ, Վիեննա» *(XIII, 151):*

Ուրեմն 1907 թ. փետրվար-մայիս ամիսներին Իսահակյանը գտնվել է Վիեննայում և իր մասնակցությունն է բերել ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին: «Նյութեր ՀՅԴ Դաշնակցության պատմության համար» ժողովածուում կան վկայություններ ընդհանուր ժողովին Իսահակյանի մասնակցության մասին, ավելին՝ այդ գրքում բերվում է Իսահակյանի մի բանաստեղծության բնագիրը: Ահա այն.

Շափա՛ղ կուտաս բաղի միջին,
Ա՛յ, կարմիր վա՛րդ, շաղի միջին,
Բուրմունքի պես հյուսվում ես վեր
Իմ զառ ու լալ խաղի միջին...

Խելքս է տարվել քո ալ-վարդին,
Ճար չես անում իմ ծով-դարդին,
Բլբուլի պես թռնիմ քեզ մոտ –
Կարոտել եմ ծոցիդ վարդին...
29 մարտի, Վիեննա[1]

---

[1] *Բանաստեղծության վերը բերված ինքնագիրը պահպանվում է Բոստոն (ԱՄՆ), ՀՅԴ արխիվ, թղթակար 1536: Այս ինքնագրում վերջին տողն է՝ «Կարո-*

Վիկտորիա Աբովյանին ուղղված նամակից ուղիղ 12 օր առաջ է գրված այս բանաստեղծությունը: Եվ ինչպես երևում է, այն անմիջապես ներշնչված է Վիկտորիայի վառ կերպարով: Նա անընդհատ հիշել է Վիկտորիային և իրենց առաջին հանդիպման ազդեցության ներքո գրել իր լավագույն քնարական գոհարներից մեկը:

Բանաստեղծության մեջ անկեղծաբար ասում է. «կարոտել եմ...», իսկ նամակում. «Դուք էլ ինձ չմոռանաք»:

Հնարավո՞ր էր արդյոք մոռանալ Իսահակյանին: Հանդիպել են նրանք Վիեննայից պոետի վերադարձից հետո, արդյո՞ք ցույց է տվել նա Վիկտորիային Վիեննայում գրած բանաստեղծությունը: Մենք հստակ պատասխան չունենք: Սակայն մի բան ակնհայտ է, որ մինչև 1910 թվի մարտի 22-ը (Վիկտորիային գրած Իսահակյանի նամակների երկրորդ շրջանի առաջին նամակը) մեր հերոսները հանդիպել են: Այդ է վկայում հիշատակած նամակի սկզբնամասը.

«Սիրելի Վիկտորիա: Զնայելով, որ մոտ 15 օր է, որ հեռացել եմ Ձեզանից և ոչ մի տող չեմ գրել, բայց այդ չի նշանակում, թե Ձեզ մոռացել եմ – առհասարակ վերջերս այնքան հաճախ էի լինում Ձեզ մոտ, որ մի ուժեղ պահանջ էր եղել իմ մեջ Ձեզ մոտ լինելը, և հիմա միշտ հիշում եմ Ձեզ և Ձեր ներկայությունը, մի տեսակ կարոտ զգում» *(XIII, 161):*

Երեք տարի՝ 1907 թ. մինչև 1910 թ. մարտը կարող էին իհարկե հանդիպել: Այդ մասին են վկայում Իսահակյանի նամակի. «...Դուք, և իմ հոգում վերջին տեղը չեք բռնում...». ո՞վ գիտե, եթե Դուք տղամարդ լինեիք, մենք չա՛տ մտերիմներ կլինեինք. ավելի ազատ կլինեինք դեպի իրար. և հիմա ի՞նչը

տել եմ ծոցիդ վարդին»: Մինչդեռ բանաստեղծությունը Իսահակյանի գրքերում տպագրվում է «Կարոտել եմ ծոցիդ զարդին» վերջնատողով (Ա. Ի.):

պետք է արգելե մեզ, որ մենք իրար մոտ գդանք» *խոսքերը: Ինչպես և հետևյալ հանգամանքը.* «...երբ գամ, անպատճառ կմկրտենք Կոտիկին. տեսե՛ք, Ձեր խոստումը չմոռանաք. քավորը ես եմ» (XIII, 161-162):

Սակայն դա մի շրջան էր, որ Վիկտորիան նոր ամուսնացել էր հայտնի դերասան Արշավիր Շահխաթունու հետ (1906), և 1907 թ. ծնվել էր նրանց որդին՝ Էրիխ (Կոտիկ) Շահխաթունին: Ճիշտ է, այդ ամուսնությունը երկար չի տևում, և 1909 թ. նրանք բաժանվում են, իսկ 1911 թ. սկզբին Վիկտորիան ամուսնանում է ճանաչված բժիշկ Թովմաս Ասլանյանի հետ: Իր հերթին 1910 թվականին Անիում՝ Սուրբ Աստվածամոր տաճարում, տեղի է ունենում Ավետիք Իսահակյանի պսակադրությունը զարաբաղյան անվանի մելիքներից մեկի ուղիղ շառավիղ Սոֆյա Մինայի Քոչարյանցի հետ: Բնականաբար այս բուռն իրադարձությունները չէին կարողանա հաջողակ ֆոն դառնալ Վիկտորիա և Ավետիք սիրո զարմանալի պատմության մեջ: Բայց ինչ որ նախատեսված էր վերուստ, պետք է լիներ: Ճակատագիրը պետք է 1905-1912 թթ. Վիկտորիային բերեր Ալեքսանդրապոլ քաղաք, որտեղ նա և՛ ուսուցչուհի է աշխատել դպրոցում, և՛ մասնակցել Զուբալովի անվան ժողտան թատերական խմբի ներկայացումներին, մի շարք գլխավոր դերեր կատարել:

Ցավոք և՛ Իսահակյանը, և՛ Վիկտորիան կարծես ի սկզբանե չպիտի ունենային բարենպաստ հանգամանքներ՝ իրենց անձնական կյանքը իրենց կամոք տնօրինելու:

Վիկտորիային գրած Իսահակյանի նամակները մի տեսակ տարբերվում են բանաստեղծին թանկ այլ կանանց գրած նամակներից: Այնպիսի տպավորություն է, որ Իսահակյանը երկար, շա՛տ երկար սպասել է նման մի հանդիպման, մի կնոջ, որը կարծես իր իդեալն է, կնոջ մասին նրա ամենաբարձր պատկերացումների մարմնացումը:

1910 թվի ապրիլի 5-ի նամակում Ղազարապատից Իսահակյանը գրում է՝ հիշելով իրենց երանելի հանդիպումը Ալեքսանդրապոլում, ապրիլի 2-ին, Վիկտորիայենց տանը.

«Դուք չգիտեք, թե ինչ հաճույքով եմ Ձեզ գրում. արդյոք ի՞նչ եք անում հիմա. օ՛, ինչ լավ էր, երբ գնում էինք Արփաչայ: Դուք չգիտեք, թե երբ դյուղ եկա, առաջին օրը ի՛նչ ծանր էր, և տխուր... Կարծես մի մշտական երազի մեջ լինեմ. երբեմն ինձ թվում է, որ Ձեր մոտն եմ, Ձեր սենյակում, նայում եմ չուրջս և – չկաք: [Զատկի] Մեծ պասի վերջին շաբաթը կլինեմ այդտեղ, և բաղդ կունենամ Ձեր մոտ լինելու» *(XIII, 163, 164):*

Ալեքսանդրապոլյան անմոռանալի հանդիպումից հետո Իսահակյանը Ղազարապատից գրում է երկրորդ նամակը (1910, 2 մայիսի).

«Սիրելի Վիկտորիա. գրում եմ մայիսի 2-ին. հիշեք ապրիլի 2-ը, անմահական դիշեր էր ինձ համար. մի ամիս է անցել, և մի տարի է Ձեզ չեմ տեսել և որ մի գանձ եմ գտել, որ... չգիտեմ ո՞ւմն է լինելու...

Եթե վիրավորվում ես նամակիցս և նամակներիցս՝ ներողություն եմ խնդրում, ես մտածելով չեմ գրում նամակներս, այլ գրիչս գնում է անզուսպ...

Բարևներով՝ Ձեր Իսահակյան, 2 ապրիլի» *(XIII, 169):*

Նամակի վերջում Իսահակյանը միտումնավոր դնում է ամսաթիվը՝ 2 ապրիլի, մեկ անգամ ևս ընդգծելու համար այդ բախտորոշ օրը...

6-րդ նամակից հետո Իսահակյանը Վիկտորիային դիմում է Դու-ով, բայց մինչ այդ 1910 թ. հունիսի 11-ից մինչև 1 հոկտեմբերի, նա Վիկտորիային նամակ չի գրել: Պատճա՞ռը: Պատճառը Իսահակյանի հետապնդումն էր «Դաշնակցության գործով», ինչի համար նա ստիպված էր մեկնել Նովոչերկասկ և Ռոստով՝ քննիչներին ցուցմունքներ տալու:

Այդ հետապնդումները և ժանդարմերիայի անվերջ հարցաքննությունները դատավարությունից հետո սպառնում էին երկարաձև սիբիրյան աքսորով: Եվ հեռու չէր օրը (1911, հունիս), որ Իսահակյանը՝ որպես քաղաքական վտարանդի, պետք է լքեր Կովկասը: Եվ հենց այդ շրջանը՝ 1910 թվականի ապրիլ – 1911 հունիս, պետք է լիներ մեր հերոսների սիրավեպի ամենաբուռն շրջանը: Ինչպես ցույց էին տալիս Իսահակյանի նամակները, Վիկտորիան մի առանձնահատուկ դեր է ունեցել Իսահակյանի կյանքում.

«...խիստ կարոտցել եմ քեզ, քո ներկայությանը, իմ այս ներկա անարև կյանքում դու հեռվում փայլող և ինձ ջերմացնող մի հեռավոր, հեռավոր հույս ես, աստղ ես...»*(1911, 31 հունվարի, XIII, 177):*

«Ամեն օր նայում եմ «Մեծ արջին» և թվում է, որ քո հայացքն էլ է հառած այնտեղ – ա՛յ այս աստղին» *(1911, 25 հուլիսի, Կարին, XIII, 181):*

«Իսկ երեկոները՝ երբ աստղերը վառվում են երկնքի և ծովի վրա, ես խոսում եմ քեզ հետ, և ինձ թվում է, որ այլևս քեզ չեմ տեսնելու, անդարձ, անդա՛րձ դնում եմ...» *(1911, 11 օգոստոսի, Տրապիզոն, XIII, 182):*

«Վիկտորիա ջան, հավերժական սիրելի Վիկտորիա ջա՛ն... Նամակդ ամեն օր կարդում եմ, արդարև, ես ինչքա՛ն եմ քեզ սիրում, և քանի հեռանում եմ, այնքան խորն եմ սիրում, ա՛խ, չա՛տ եմ սիրում քեզ, և մենք հեռու ենք իրարուց. թեև դու ինձ այնքան չես սիրում, ինչքան ես քեզ. միայն այս իմացի՛ր, որ քեզ հետ ամենավատ պայմաններում էլ բախտավոր կլինեմ. դու իմ սիրելիս, վաղուց, վաղուցվա սիրելիս, չա՛տ սիրելիս...» *(1911, 11 սեպտ., Կ. Պոլիս, XIII, 183-184):*

«Բոլոր սրտով կուզեի այստեղ լինեիր. այն ժամանակ Պոլիսը ինձ համար դրախտ կլիներ: Մեր աստղը միշտ տեսնում եմ

և միշտ խոսում եմ Հետը – քեզ հետ: Շա՜տ խոստումներ է նա ինձ անում, շա՜տ երազներ է հյուսում ինձ համար, սակայն եթե իմ երազներիս մի չնչին մասը կատարվեր, ես հիմա Աստծու չափ երջանիկ կլինեի, բայց նորից քաղցր է հավատալ երազներին և հեքիաթներին... Իսկ դու ինձ համար ամենաչքեղ երազն ես ու հեքիաթը. և կաս և չկաս, մոտիկ ես ինձ, շա՜տ ես մոտիկ, բայց և չափազանց շա՜տ ես հեռու՝ մեր աստղի պես հեռո՜ւ, հեռո՜ւ» *(1911, 24 նոյեմբերի, Կ. Պոլիս, XIII, 194)*:

«...բայց զգացմունքս դեպի քեզ լցնում է հոգիս մշտնջենական հույսով և մի զեղեցիկ, մխիթարիչ դուրգուրանքով. մի՞թե կարող էր պատահել, որ տարիներ՝ ես համարյա անտարբեր անցնեի մոտովդ և հանկարծ այդպիսի լուրջ հակում տածեի դեպի քեզ. զարմանալի է, իրավ, և ճակատագրական է...» *(1912, 24 ապրիլի, Պրինկիպո, XIII, 195-196)*:

Եվ վերջին նամակը՝ 1913, 31 դեկտեմբեր, Փարիզ.

«...արդյո՞ք նույն կարոտն ունիս դու դեպի ինձ. երջանիկ կլինեի, թե այդ հաստատ գիտակցությունն ունենայի» (*XIII, 242*):

Մեզ հայտնի նամակներից Վիկտորիա Աբովյանին սա վերջինն է:

Ջլինեին պահպանված Վիկտորիա Աբովյանի մոտ պոետի այս նամակները, որոնց ընդհանուր թիվը 27-ն է, մենք շատ և շատ բան չէինք իմանա նրա անձնական կյանքից, նրա վառ ու ռոմանտիկ անանց զգացմունքներից: Եվ մենք խորապես շնորհակալ ենք, որ այս եզակի նամակները տիկին Վիկտորիան սրբությամբ պահել է և արդեն պատկառելի հասակում՝ 1970-ական թթ. սկզբներին, նվիրաբերել Հայաստանի գրականության և արվեստի պետական թանգարանին:

Տիկին Վիկտորիան, շրջապատված իր հարազատներով, ապրել է երկար և բովանդակալից կյանք, կնքել իր մահկանացուն Երևանում, 95 տարեկան հասակում:

Լինել մեծ բանաստեղծի մուսա նշանակում է ներշնչանքի աղբյուր հանդիսանալ և ունենալ ուրույն դեր նրա ստեղծագործական ճակատագրում:

* * *

Սերն անպայման չէ, որ արտահայտվի բոցավառ խոսքերով, անզուսպ տենչով, կրքոտ զգացմունքներով... Սերը կարող է արտահայտվել շատ զուսպ, թաքնված մղումներով, երկիմաստ միտումներով, հոգու ջերմությամբ, թաքուն կրքով, բայց իրականում այն ոչ պակաս զորեղ է, ոչ պակաս վառ ու գունեղ, և որ ամենակարևորն է՝ մնայուն է, տևական ու զսպվածության տակ այն վիթխարի պոտենցիա է պարունակում:

Եվ նման զգացմունքն էլ գեղեցկացնում է պոետի կյանքը, հաղորդում որոշակի խորհրդավորություն: Քանզի սիրո խաղն էլ կայանում է, երբ գտնում է դիմացի կողմի հավանությունը: Ես նկատի ունեմ իմ այս մուտքի խոսքում Ավետիք Իսահակյանի զգացմունքները և մշտական հիացմունքը՝ իր ժամանակի հայ ամենահրապուրիչ կանանցից մեկի՝ Վավա Խաչատրյանի հանդեպ: Սկսենք այն բանից, որ Վավան Իսահակյանին քաջ ծանոթ նկարիչ Սարգիս Խաչատրյանի կինն էր: Ինչ արած, հենց առաջին հանդիպումից այդ կինն ասես գերել էր պոետի սիրտը... Իսահակյանին հղած իր առաջին նամակում (1923 թ., հունվար) Սարգիս Խաչատրյանը մի դեղեցիկ մտահղացում էր հայտնել պոետին՝ ձևավորել նրա «Լիլիթ» լեգենդը:

Որոշակի այլաբանական եղանակով բանաստեղծը հղում է իր պատասխան նամակը Սարգիս Խաչատրյանին (1923, 17 փետրվար).

«Սիրելի Սարգիս, կամ ինչպես տիկ. Վավան է հնչում՝ սիրելի Սեարգիս.

Նշանակածդ նկարների մոմենտները իմ մտածումին համապատասխան են, միայն մի բան, մի մոմենտ ևս (եթե հավանես և սինեմատիկ չդտնես). Ադամ գրկած ունի Եվային, բայց տեսնում է հեռվում Լիլիթին՝ ստվերային, երազային, մշուշային... Այս կետը իմ պոեմայիս[1] հիմնական գաղափարներից մեկն է, որ մարդ հաճախ (հեռու լինի մեզնից և մեր կիներից) մեկին գրկած մյուսին է երազում, նրան՝ որ թռավ, որ անմատույց էր... Համբուրում եմ տ. Վավայի ձեռքը» *(XIII, 479)*:

Ինչպե՞ս են ծանոթացել Վավա և Սարգիս Խաչատրյանները Իսահակյանի հետ: Այդ մասին պատմում է «Վարպետը իմ ալբոմի էջերից» հուշերում՝ տիկին Վավան.

«Առաջին անգամ Ավետիք Իսահակյանին հանդիպեցինք Վենետիկում (1922 թ. գարնանը – Ա. Ի.): Ամուսնուս՝ գեղանկարիչ Սարգիս Խաչատրյանի հետ նոր էինք վերադարձել Եգիպտոսից... Շրջում էինք ս. Մարկոսի հրապարակում, երբ հեռվից նկատեցինք Ավետիք Իսահակյանին, շրջապատված աղավնիներով: Նա կերակրում էր աղավնիներին, որոնցից մի քանիսը թառել էին ուսերին: Իհարկե, անմիջապես մոտեցանք նրան, ծանոթացանք: Կարճ ժամանակում դարձանք լավ բարեկամներ:

1923-ին, երբ մենք կրկին հանդիպեցինք, այս անգամ արդեն Վիեննայում, ես մի ալբոմ էի դնել և որոշել էի նրա էջերում ունենալ իմ հանդիպած մտավորականների և արվեստագետների ինքնագրերը: Ահա թե ինչ է գրել Վարպետը 1923 թ. օգոստոսի 7-ին իմ ալբոմում.

«Եթե ծովը չլիներ, արևի պատկերը երկրի մեջ չէր լինի, իսկ առանց արևի երկրի դեմքը շատ մռայլ կլիներ – բանաստեղծի

---

[1] *Ուրեմն Իսահակյանն այնուամենայնիվ իր «Լիլիթը» համարել է պոեմա:*

սիրտը ծովն է, իսկ կնոջ սերը՝ աշխարհը զարդարող արևը» Ավ. Իսահակյան»:

Դժվար չէ հասկանալ, թե այս գեղեցիկ մետամորֆոզը գրեթե որը «կնոջ» կերպարն է նկատի ունեցել Իսահակյանը, և թե որ բանաստեղծի սիրտն է զարդարում այն...

Վիեննայում նրանք պայմանավորվում են, որ սեպտեմբերին՝ 1923 թվականի, իրենք գալու էին Վենետիկ, և Սարգիսը պետք է Իսահակյանին «Լիլիթի» ձևավորումներից մի քանի էսքիզ ցույց տա: Սակայն Վավան ու Սարգիսն այդ աշուն Վենետիկ չեն այցելում: Իսահակյանը Սարգսից նամակ է ստանում և իսկույն պատասխանում (1923 թ., 27 սեպտեմբերի).

«Ցավում եմ, որ Վենետիկ չեկար. դոնե քեզ տեսնելով տիկին Վավայից կարոտս կառնեի: Տիկնոջդ բախտ չունեցա Վենետիկում, անցյալ տարի մոտիկից ծանոթանալու. միայն Վիեննա ծանոթացա և չա՛տ սիրեցի. քնարական քնքուշ հոգի ունի. երիտասարդ լինեի, կփախցնեի ձեռքիցդ: Լա՛վ պահիր, եթե իմանամ, որ նեղացնում ես, հոգիդ կհանեմ» *(XIII, 511):*

Իհարկե, ինչպես ասում են, ամեն կատակի տակ կա ճշմարտության մի մասնիկ... Բանաստեղծը չի թաքցնում իր զգացածը, ամենից ազնիվը հենց անկեղծ լինելն է, և սրտով անցածը նա հանձնում է նամակի էջերին, իհարկե, այս ամենին հումորիկ երանգ հաղորդելով: Այս նամակից կես ամիս անց՝ 1923 թ. հոկտեմբերի 13-ին, Իսահակյանը ևս մի նամակ է գրում Սարգսին, և պատմում, որ Ս. Ղազարի միաբանությունում ինքը որոշակի բանակցություններ է տանում, որպեսզի վանքի տպարանում հրատարակեն «Լիլիթ» լեգենդը՝ Սարգիս Խաչատրյանի ապագա պատկերազարդումներով, բայց անօգուտ, մի հաստատուն որոշում հայրերն այդպես էլ չեն կայացնում: Նկարիչն էլ, հավանաբար, երկմտանքի մեջ էր, ո՞վ կաներ

գործ առանց հոնորարի, և այդպես էլ «Լիլիթի» ծրագիրը չիրագործվեց:

Նամակի վերջում բանաստեղծն անկեղծանում է.

«...ձանձրացել եմ այս անհամ կյանքից. գրել-կարդալ. զզվեցի, ապրել եմ ուզում, կյանք՝ իր բոլոր հորդուբյամբ: Մազերս ճերմակում են, բայց սիրտս ծաղկում է. սրա մեջն է իմ ողջ տրագեդիան»:

Եվ ապա տողեր՝ գրված «ծաղկուն սրտով».

«Համբուրում եմ տ. Վավայի ձեռքերը, գիտնալով, որ աչքերին պիտի տանի համբուրածս ձեռքերը: Ավետիք» *(XIII, 514):*

Հստակ պատկերացնելով այս պատկերը՝ դժվար չէ կռահել պոետի բաղձանքը այսպես նրբորեն թաքցրած ողջույնի խոսքերում: Ճիշտ է, Սարգիսը չնկարեց «Լիլիթի»-ն, սակայն դա փորձեց անել տիկին Վավան: Նորից վերադառնանք տիկին Վավայի վերոհիշյալ հուշագրությանը.

«Սարգիսը գտնում էր, որ Լիլիթի կերպարը հաղթահարելու համար ժամանակ է պետք, ստեղծագործական հանգիստ մտորումների խաղաղ մթնոլորտ: Մի բան, որ այդ և հետագա տարիներին միշտ պակասում էր մեզ: Հետագայում, երբ ես սկսեցի նկարել, իմ չորրորդ ստեղծագործությունը Լիլիթը եղավ: Կտավին հանձնեցի բոցերի պես օդի միջով սուրացող և անհետացող Լիլիթին, անհաղթելի կնոջը, որը երազ է, հիացք ու դյութանք: Զգիտեմ, թե Վարպետն ինչ կասեր իմ Լիլիթի մասին, բայց ես սիրում եմ այդ ստեղծագործությունը և երբեք չեմ բաժանվել նրանից»:

Վավայի շարադրած տողերից համոզիչ երևում է, որ Վավան, համենայն դեպս, ավելի լավ էր ըմբռնել «Լիլիթի» կերպարը, քան հայտնի նկարիչը: Վավան տեսնում էր «Լիլիթին» Իսահակյանի աչքերով, և, որ ամենագլխավորն է, Վավան շատ

որոնելու հարկ չուներ, նրան բավական էր «Լիլիթին» պատկերելու համար ստեղծել իր դիմանկարը:

1924 թվականին նույնպես չարունակվում է Իսահակյան – Վավա – Սարգիս նամակագրությունը: Հունվարի 16-ին Վեննեից Իսահակյանը Վավային նամակ է գրում, բայց ինչպես երևում է, մինչ այդ նամակը՝ 1924 թ. հունվարի սկզբին, Վիեննայից Իսահակյանը տիկին Վավայից նամակ է ստացել: Հենց այդ նամակը հիշատակելով՝ Իսահակյանն սկսում է իր չարադրանքը.

«Շնորհակալությամբ և ուրախությամբ ստացա Ձեր նամակը, երևում է, որ ոչ միայն գիտեք գրել, այլև չա՛տ լավ եք գրում. և Ձեր ասածի պես բոլորովին լավ գրել պետք չէ, կիսատ գրածից ավելի կարելի է չա՛տ բան երևակայել. երազելու պատճառ է ստեղծվում»:

(Ինչպես երևում է, մեր հերոսներն ավելի նախընտրում են անավարտ երանգները – Ա. Ի.):

Հաջորդ տողերում բանաստեղծը գրածի ենթատեքստն ավելի է խորացնում, կրկին հիշատակելով հենց Վավայի գրածը.

«...Սարգիսը ահագին տաղանդ ունի, խնդրում եմ, ազատ ժամերը նվիրե Լիլիթին, ուղղակի ոսկով ու լույսով ու բոցերով պիտի նկարե այդ իսկական կնոջը, հոգի և մարմին այրող: Եվ միշտ երազ, միշտ կարոտ մնացող. ինչպես Դուք էիք գրել, որ փափագները լավ են, որ անկատար մնան: *(Ակնհայտ է, որ այս տողերի հետևում երևում է Վավայի ուրվականը, և եթե «Լիլիթը» պոեմի ֆանտազիան էր, ապա տիկին Վավան իրական էր: Ունե՞ր արդյոք Իսահակյանը չանս, թե նրան վիճակված էր Ադամի դերությունը: Մենք չունենք սրա պատասխանը: Բայց ակնհայտ է՝ պոեմի երազանքն անպատասխան չէր կարող մնալ...):* Նամակը չարունակվում է.

...Ցավում եմ, որ Վիեննայից հեռանում եք, Վիեննան մոտիկ էր և միշտ հույս ունեի գալ Ձեզ տեսնելու. եթե Փարիզ

կամ Լոնտոն գնաք, ինչպե՞ս գամ: Գրում եք, որ ծովին կարոտել եք. կիրակի օրը հրաշալի արև կար. գնացի ծովափ (Լիդո), չրջում էի ու Ձեզ հիշում, չէ՞ որ Դուք թույլ տվիք, որ ծով գնալուս Ձեզ հիշեմ, անշուշտ, Ձեզ միշտ հիշելու իրավունք ևս ունիմ, սակայն ինչո՞ւ չեք որոշում Իտալիայում ապրել, օրինակ՝ Վենետիկ կամ Հռոմ, ուր նկարելու հարուստ նյութ կա... բայց չեք գա, գիտեմ, ուրեմն Ձեր նամակները, կուզեմ ասել Ձեր անուշ նամակները, անպակաս արեք, նրանք մի տեսակ սիրելի այցեր են, վիզիտներ այս օտար երկրում» *(XIV, 9)*:

Եթե Վավան գրել է բանաստեղծին. «Երազները լավ են, որ անկատար մնան», կնշանակե, որ ինքը հասկանում է Իսահակյանին: Նրանց միջև թարգմանչի կարիք չկար...

Մի՞թե Վավայի և Ավետիքի տողերում չի զգացվում փոխադարձ վստահություն, մի «չմարող կարոտ» ու «երազելու պատճառ»...

Սիրո գույները նույնպես նրբերանգներ ունեն: Ամեն ինչ չէ, որ ստեղծվում է յուղաներկերով, «երազի ու փափագների» պատկերով ողողված՝ Իսահակյանի նամակները մեզ հիշեցնում են Մարտիրոս Սարյանի վաղ շրջանի «Երազներ և հեքիաթներ» շարքը, ոչ միայն հիշեցնում, այլև հիացնում, մի դեպքում պաստելային գույների, մյուս դեպքում խոսքի կատարյալ նրբերանգների զուգադիպումով:

Զուգահեռաբար կուզեի այն միտքն ընդգծել, որ նկարիչ Սարգիս Խաչատրյանն իր հերթին մեծ հարգանքի արժանի անճանավորություն է, մեծ հայրենասեր, հայ գեղարվեստի պատմությունը հարստացրած իր տասնյակ ու տասնյակ հայկական թեմատիկայով արված կտավներով, մեր եկեղեցիների բազում արժեքավոր պատկերներով: Իսահակյանը շատ էր սիրում Վիեննայում 1924 թ. տպագրված Սարգսի "Armenia" մեծադիր ալբոմը: Իհարկե, խորհրդածելով հեռվից հեռու տիկին Վավայի հանդեպ

տածած Իսահակյանի զգացմունքների չուրջ, մենք չպետք է մոռանանք, որ գործ ունենք մեծ պոետի, այն էլ մեծ սիրերգակի հետ: Իսկ ինչ որ եղրահանգումների գալ, դա մեր նպատակը, մեր խնդիրը չէ, մենք պարզապես ներկայացնում ենք մեծ բանաստեղծի նամակագրական ժառանգության քնարական ընտիր հատվածները, որոնց մեջ միևնույն ժամանակ երևան են գալիս անթաքույց, զորեղ զգացումով կերտված տողեր:

Ահա Իսահակյանը գրում է կարոտով ու թախիծով ընկերոջը՝ Սարգսին (1924 թ., 11 մարտի, Վենետիկից).

«Ես այդ ճահիճների մեջ փտա, ինչքան էլ որ գեղեցիկ է Վենետիկը, բայց ամեն օր նույնը տեսնել այլևս զզվեցրել է, և ինձ համար ամենավատն այն է, որ մենակ եմ այստեղ, անընկեր, մենակ, միշտ ինձ հետ, իմ մտքերիս, իմ վշտերիս, իմ սովերիս հետ...

Կուզեի այս նամակի հետ տ. Վավային ևս գրել, բայց տխուր եմ շատ և տխուր սրտով ի՞նչ գրեմ, ես գիտեմ, որ տիկին Վավան բարի և սիրող սիրտ ունի, ինչո՞ւ վշտացնել, երբ տրամադրությունս պայծառանա, այն ժամանակ կգրեմ, ես գիտեմ, որ նա կներե իմ երկար լռությունը, թեև ինձ ուղղակի գեղեցիկ հաճույք է նրա հետ նամակներով խոսակցելը, բայց կան չրջաններ,– և հատկապես իմ աններդաշնակ հոգուս մեջ,– որ ամենաասիրած էակների հետ իսկ, որոնց հաշվի մեջ է և սիրելի տիկին Վավան,– չեմ ուզում մի խոսք փոխանակել» *(XIV, 18):*

«Ամենաասիրած էակների հետ...», այդպես էլ կա, պոետը չի թաքցնում: Ի՞նչ անել, դա ուժն էր հավիտենական կնոջ:

Հաջորդ նամակում՝ գրված Վենետիկից, 1924 թ. 1 դեկտեմբեր, Իսահակյանը մեծ դոհունակությամբ հայտնում է.

«Շա՛տ սիրելի Վավա և Սարգիս,

Վերջապես Ձեր մասին մի բան լսեցի, սուզվել էիք ուղղակի և ձայներդ ու հետքերդ խորունկ թաղել: Այսօր եղա լոնդոնցի

մի ծեր տիկինի մոտ, MmMocheles, նաև նկարչուհի, օր. Զ. Պոյաճյանի ընկերուհին, որ Լոնդոն ծանոթացել է Ձեզ հետ և շա՛տ գովեստով խոսեց նկարներիդ մասին և հայտնեց, որ բավական հաջողություն ունեցել ես: Ասաց, որ նույնպես մի շա՛տ գեղեցիկ ուրս կին ունի, ես վիրավորված ուղղեցի նրա սխալը, նաև հպարտությամբ, թե հայուհի է և բարեկամուհիս է: Տիկինը խորհուրդ տավ, որ փախցնեմ տ. Վավային, ես էլ ասացի, թե զարմանալի կերպով գուշակել եք հոդիս, մտադիր եմ փախցնել... միայն եթե ամուսինը համաձայնի: Այս խոսքի վրա տիկինին բոլորովին հուսահատեցրի:

Ի՞նչ եք անում, ո՞ւր էիք մինչև հիմա, ինչպե՞ս անցավ պատկերահանդեսդ» *(XIV, 74):*

Որոշ ժամանակ անց Լոնդոնից տեր և տիկին Խաչատրյանները հրավիրում են Իսահակյանին հյուր իրենց մոտ: Բանաստեղծը շատ չնորհակալ է, սակայն գրում է.

«...սիրելիներս, շա՛տ դժվարություններ կան. վիզա, թուլլտվություն և այլն, դրամն էլ իր կարգին: Մնում է, որ Դուք գաք և շա՛տ լավ կանեք» (XIV, 92):

Ապա գրում է Անգլիայի դաժան ձմեռների վերաբերյալ.

«Ի սեր Աստծո Վավայիդ (կամ Վավայիս) լավ պահի՛ր, այդ անպիտան Լոնդոնը գեչ օդ ունի, բայց մեր Վավան ֆլամանդական-ռուբենսական ֆեռների կազմվածքն ունի, և հանդիստ եմ այդ մասին» *(1925, 1 փետրվար), (XIV, 93):*

Երբ գրվում էին այս խոսքերը, մեր հերոսները դեռ բավական երիտասարդ էին, Վավան՝ 35 տարեկան, Իսահակյանը՝ 49, երկուսն էլ գեղեցիկ, կյանքով լեցուն: Եվ բանաստեղծի համար համարյա նույնն էր, իրեն էր պատկանում Վավան, թե ոչ: Նա սիրում էր նրա երազային կերպարը: Համենայն դեպս նա էր Վենետիկյան «ճգնավորի» բաղձանքների բարձրակետը:

Կանցնի տասը տարի, Իսահակյաններն ու Խաչատրյանները հանդիպում են 1935 թվին Փարիզում:

Կրկին վերադառնանք տիկին Վավայի հուշագրությանը.

«1935 թվականին, երբ Սարգսի հետ հաստատվել էինք Փարիզում, նորից երջանկություն ունեցանք վայելելու Վարպետի մտերմությունը: Վարպետը ավելի մտայլ էր դարձել, հայրենիքի կարոտն ավելի խոր արմատներ էր գցել նրա հոգում և տանջում էր նրան»:

Եվ կրկին Վավայի խնդրանքով Իսահակյանը տիկնոջ ալբոմում նոր հիշատակներ է թողնում.

«Սիրածներիս կորստի հետ / Ջհաշտվեցի ես երբեք...» բանաստեղծության և «Ինչ պիտի լինեմ մահից հետո...» քառյակի ինքնագրերը:

Բայց էլ ավելի խոսուն է Իսահակյանի խոստովանությունը, արված նույն օրը՝ 1935 թ. հունիսի 16-ին, տիկին Վավայի նույն ալբոմում.

«Սիրելի Վավային

Կյանքի իմաստն է երջանիկ լինել: Եվ երջանկությունը կազմված է հարյուր բաներից: Մենք, այսինքն՝ մարդու հոգին, վայելում է միայն մեկը, և երազում – 99-ը, ուրեմն 1-ը վայելում ենք, 99-ը երազում: Երազում ենք երջանկություն, սեր, գեղեցկություն, հրաշալիքներ, հաղթանակներ, զորություններ, հուշակ, ազատություն և անմահություն: Պահի՛ր երազելու հատկությունը և կլինես 100 տոկոսով լիուլի երջանիկ: Ավ. Իսահակյան, 16. 6. 1935, Փարիզ»[1]:

---

[1] *Բոլոր մեջբերումները տ. Վավայի հուշերից քերվում են Վավա Խաչատրյան. «Վարպետը իմ ալբոմի էջերից» (հուշեր), «Հայրենիքի ձայն», Ե., 29 հոկտեմբերի, 1975 թ.:*

Հարկ է ասել, որ Վավա Խաչատրյանը միակն է եղել Իսահակյանի երկրպագած կանանցից, որ բանաստեղծի մասին հուշեր է գրել: Տիկին Վավան ամուսնու մահից հետո՝ 1947 թվին, Նյու Յորքից Երևան՝ Գրականության և արվեստի թանգարան է ուղարկել Սարգիս Խաչատրյանի ողջ արխիվը, որի մեջ նաև Իսահակյանի ինքնագրերը: 1975 թվին տիկին Վավան պատկառելի հասակում՝ 85 տարեկանում, եկել է Երևան, անձամբ մասնակցել Իսահակյանի ծննդյան 100-ամյակի տոնակատարություններին: Այդ շրջանում Երևանում նրան հանդիպած բոլորը պնդում էին. «Որքա՜ն է նա գեղեցիկ»: Ինչպե՞ս չհիշել Վարպետի խոսքերը նրա մասին.

«Համարյա ամեն ոք, ով տեսել է Վավային, սիրահարվել է նրան»:

Ստացվեց այնպես, որ 1999 թվականին ես և կինս՝ Ռուզան Սարյանը, եղանք Մարսելում: Տեղի հայ համայնքի ղեկավար պարոն Բաբայանն ինձ հայտնեց, որ մեզ հետ հանդիպելու ցանկություն է հայտնել Մարսելում բնակվող Վավա Խաչատրյանի փոքր եղբայրը՝ պարոն Կարապետ (Կարո) Սարյանը, որը ժամանակին եղել է հորս դասընկերը Վենետիկի Մուրադ-Ռափայելյան վարժարանում: Ես բոլոր ժամադրությունները մի կողմ թողեցի, և անհապաղ գնացինք հանդիպման տիկին Վավայի կրտսեր եղբոր հետ, որի մասին, ի դեպ, մի քանի հիշատակումներ ունի Իսահակյանը Վենետիկից Վավային և Սարգսին գրած նամակներում: Պարոն Կարոն և նրա տիկինը՝ Ալիսը, շատ համակրելի մարդիկ դուրս եկան: Նա շատ ուրախացավ, երբ իմացավ, որ հայրս՝ Վիգենը, ողջ է և ապրում է մեզ հետ Երևանում: Նրանք նույն թվականի ծնունդ էին՝ 1910 թիվ և շատ մոտ ընկերներ էին եղել նաև հետո Փարիզում:

Պարոն Կարոն ինձ ասում էր.

«Գիտե՞ս, հայրդ, իմիջիայլոց, հեռվից հեռու սիրահարված էր Վավային»:

Ես ասացի՝ գիտեի, որ պապս է «սիրահարված եղել նրան»:

Պարոն Կարոն անկեղծացավ.

«Այդ մասին շատերը գիտեին, դե ասենք՝ ո՛վ չէր սիրահարված Վավային»:

Եվ որպես հիշատակ մեր հանդիպման՝ նա ինձ նվիրեց Սարգիս Խաչատրյանի կերտած (1922 թ.) տիկին Վավայի մի հրաշալի դիմանկար: (Ի դեպ, այդ յուղաներկով արված կտավն արտատպվում է այս հատորում): Այն ներկայումս պահվում է մեր տանը: Դիմանկարից մեզ է նայում բոլոր ժամանակների հայ ամենագեղեցիկ և խորհրդավոր կանանցից մեկը, որին անկարելի էր չսիրահարվել...

* * *

1926-1930 թթ. Իսահակյանը համարյա 4 տարի ապրում է Երևանում: Եվ թեև ոչ այնքան երկար տարիներ են մեզ բաժանում այդ շրջանից, սակայն որքան էլ զարմանալի չթվա, մենք բավական քիչ տեղեկություններ ունենք բանաստեղծի կյանքի այդ շրջանից: «Հիշատակարանում» այդ շրջանի մասին մի քանի գրառումներ կան, այն էլ միայն 1927-1929 թվականների մասին և շատ կցկտուր: Եվ ամենաշատ ինֆորմացիա պարունակող աղբյուրը էլի նամակներն են, այդ շրջանում Խորհրդային Հայաստանից Իսահակյանը գրել է շուրջ 91 նամակ, որոնց գերիշխող մասը հասցեագրված է Սոֆյա և Վիգեն Իսահակյաններին: Եվ Սոֆյայից բացի, ուրիշ կին հասցեատեր մեզ չի պատահում: Սակայն ամենախոսուն վկայությունը, ինչպես հաճախ է պատահում պոետի դեպքում, նրա բանաստեղծություններն են: Մոտ տասնյակ բանաստեղծություն է գրված

այդ շրջանում: Այդ բանաստեղծությունների մեջ մեր ուշադրությունն է գրավում Իսահակյանի մի բացառիկ խոստովանությունը, և այդ երկն իր հերթին հուշում է մեզ մի հանգամանք, որ անշուշտ եղել են և նամակներ: Ես նկատի ունեմ Իսահակյանի «Վերջին հորձա՛նք իմ ցնորքի...» բանաստեղծությունը՝ գրված 1927 թվին, Երևան, և նվիրված Հովհաննես Թումանյանի դուստր Սեդա Թումանյանին (1905-1988):

Վերջին հորձա՛նք իմ ցնորքի,
Գրոհ տվիր կյանքիս վերջին,
Ջեռիդ անհուն բաժակ ոսկի՝
Արբեցումի հրով վերջին:

Սեդ մազերդ օձախռիվ
Խճըճեցին ուղիս վերջին.
Անհագ հոգիս լցվեց լրիվ
Մահասարսուռ սիրով վերջին:

Արյունս հիմի աչքս առած՝
Դեմդ եմ կանգնել դողով վերջին.
Սիրտս փուված՝ սիրուդ առաջ,
Մահ խոցեցիր սրով վերջին...

1927 ապրիլի 18,
Երևան

Այս երկի կապակցությամբ խոսքը տանք գրականագետ, Հովհաննես Թումանյանի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանին.

«Մորս արխիվում պահպանվել է նաև Ավ. Իսահակյանի՝ 1927 հունիսի 23-ին գրված հուզիչ մի բանաստեղծություն՝ նվիրված մորս, ինչպես նաև մի քանի ջերմ նամակներ: Նախա-

պես բանաստեղծությունը վերնագրված էր «Իմ վերջին սերը»: Հետո բանաստեղծը որոշել էր փոխել անվանումը, և այն սկսել էր տպագրվել՝ որպես վերնագիր ունենալով առաջին տողը: Բանաստեղծության տպագրված տարբերակի և ընագրի միջև կան թեթևակի տարբերություններ.

Վերջին հորձա՛նք իմ ցնորքի,
Դեմըս ելար կեանքիս վերջին,
Ձեռքիդ անհուն բաժակ ոսկի՝
Արբեցումի հըրով վերջին:

Սեգ մազերդ օձախուիվ
Խճըճեցին ուղիս վերջին.
Անհագ հոգիս լցվեց լրիվ
Մահասարսուռ սիրով վերջին:

Արյունս հիմա աչքըս առած՝
Դեմըդ եմ կանգնել դողով վերջին.
Սիրտս անվահան՝ սիրուդ առաջ,
Մահ խոցեցիր սրով վերջին...[1]

23 հունիսի, 1927
Ավ. Իսահակյան

Ահա այսպիսի արժեքավոր ինֆորմացիա է մեզ տալիս տիկին Իրման, որն, ի դեպ, Սեդա Թումանյանի դուստրն է, վաստակաշատ թումանյանագետ, և ինչպես տեսնում ենք, գրքում

---

[1] *Իրմա Սաֆրազբեկյան. «Հ. Թումանյանի ընտանիքի կյանքի էջերից», եր., «Էդիթ Պրինտ», 2009, էջ 242:*

նա տեղադրել է Իսահակյանի ձեռագրի պատճենը, իսկ ինքնագիրը պահվում է Թումանյանի ընտանեկան արխիվում:

Սա իրապես մի ցնցող բանաստեղծություն է, Իսահակյանի ուշ շրջանի լավագույն քնարական գործերից մեկը: Բառիս բուն իմաստով ողջ երկը ողողված է զորեղ զգացմունքով ու կրքով, ինչպիսի մետաֆորներ՝ մեկընդմիշտ խոցող ընթերցողի գիտակցությունը: Հիրավի գյուտ-պատկեր է երկի սկզբնատողը.

«Վերջին հորձա՛նք իմ ցնորքի...»:

Ինչպիսի՛ չքեղ կանացի կերպար է գծում Իսահակյանը՝ հպարտ, հաղթանակող, հավերժական...

Ինչպիսի՛ հզոր սեր է իրեն պատել, ի՛նչ անկեղծությամբ է նա բացում իր սիրատոչոր սիրտը.

«Վերջին» բառ-ռեֆրենի վրա է կառուցված բանաստեղծությունը՝ իսկապես որ այն պետք է վերնագրված լիներ «Իմ վերջին սեր» (Սեդա Թումանյանին):

Մենք կարդում ենք տիկին Իրմայի գրքում, որ եղել են նաև «մի քանի ջերմ նամակներ» Ավետիք Իսահակյանից: Արդյո՞ք դրանք, ինչպես և հետագա տարիներին Իսահակյանի՝ իրեն գրած նամակները, նկատի չուներ տիկին Սեդա Թումանյանը, որ մորս՝ Բելլա Իսահակյանին՝ պատմել էր, թե իր մոտ պահվում է Վարպետից մոտ 20 նամակ, և որ ինքը մտադրվել է այդ նամակները մորս միջոցով նվիրել Իսահակյանի տուն-թանգարանին, սակայն վրա հասած մահը խափանեց տիկին Սեդայի ծրագրերը: Հետագայում Իրմա Սաֆրազբեկյանը, ինչպես ինքն է գրում իր գրքում[1]. «Իսահակյանի նամակների մի

[1] Նույն տեղում, էջ 243 (№ 35 ծանոթագրությունը):

մասն իմ կողմից հանձնվել է նրա տուն-թանգարանին»: *Բայց ինչպես հստակ գրված է՝ «մի մասն», և խոսքը միայն մեկ նամակի և մեկ բացիկի մասին է, որոնք այսօր պահվում են թանգարանում, իսկ մյուս մա՞սը...*

Իսահակյանի և տիկին Սեդայի փոխհարաբերությունների մասին տիկին Իրման չարունակում է իր գրությունը.

«Թումանյանի դուստրերի հետ Իսահակյանը միշտ լավ հարաբերությունների մեջ էր: Իսկ մորս նկատմամբ միշտ ուներ պայծառ զգացմունքներ և քնքուշ վերաբերմունք: Կարծում եմ դա, ավելի շուտ երկար ու հետաքրքիր ճանապարհ անցած արդեն ոչ երիտասարդ բանաստեղծի հրապուրանքն էր երիտասարդ, գեղեցիկ աղջկա նկատմամբ, որը նոր էր կյանք մտնում:

Պահպանվել են Իսահակյանի՝ 1944 թ. ամռանը մորս հասցեագրված նամակները: Մենք մորս և Սուրմայի հետ Դսեղում էինք, երբ եկավ Իսահակյանը: Հիշում եմ, որ շատ էինք զբոսնում, թափառում անտառային արահետներով, դիտում վանքերը, լսում սառը աղբյուրի ջրից, նստում ու հիանում դսեղյան «լճերով»[1]:

Անշուշտ, Իսահակյանը վերհիշում է զբոսանքները իր «սիրելի Օհաննեսի» հետ՝ Դսեղում, Հայոց բնության այս եզակի անկյունում, ինչպես գրել է բանաստեղծը.

«Հնքիաթի նման է գեղեցիկ Լոռին, Տաշիրի աշխարհը, կախարդանքի, հոմերական երկիր. անտառն ունի իր չահապետը, որ հսկում է եղնիկներին, այրերը լեցուն են գժերով և չարքերով, գետերը՝ ջրի հարսներով, և այս ամենը բաց աչքով տեսել է լոռեցին և, իբրև ականատես, պատմել է մանուկ Հովհաննեսին» *(XI, 208). այսպես է գրել Իսահակյանը ընկերոջ մահից ընդամենը 10 օր անց, 1923 թ. ապրիլի 5-ին, Վենետիկում:*

---

[1] *Նույն տեղում, էջ 243:*

Այդ այցը Դսեղ՝ պատերազմի տարին՝ 1944 թվի սեպտեմբերին, Իսահակյանի համար իրապես մի ափ կենարար ջուր էր, ինչպես ինքը դա կընդգծի՝ «իմ կյանքիս վերջալույսի չքեղ ժամեր»... Եվ անշուշտ այդ պահերի մասին նա սիրով հիշատակում է տիկին Սեդային գրած իր երեք նամակում: (Ի դեպ, հիշյալ երեք նամակներից երկուսը՝ 1944 թ. սեպտեմբերի 15-ին և 20-ին, առաջին անգամ տպագրվել է Արամ Ինճիկյանի կազմած Իսահակյանի երկերի ժողովածուի 6-րդ (Նամակներ) հատորում, Երևան, 1979 թ. (էջ 365-367): Իսկ Իրմա Սաֆրազբեկյանն այդ երկուսը և նաև մի բացիկ (1944թ. 27/IX) տպագրել է «Գարուն» ամսագրում, 1992 թ.:

Անշուշտ, սա միայն մի դրվագ է Սեդային ուղղված Վարպետի նամակների գեղեցիկ փնջից: Այսպիսով մեզ հասած առաջին նամակը գրված է 1944 թ. սեպտեմբերի 15-ին, երբ Իսահակյանը, երկու շաբաթ հյուրընկալվելով Դսեղում, վերադառնում էր Գյումրիով Երևան:

«Սիրելի Սեդա.

Գրում եմ Լենինականից. հասա թե ոչ՝ հեռախոսեցի Երևան և արտի ցավով իմացա, որ մինչև ամսուս 20-ը կարող էի մնալ, որովհետև Ջանգեզուր գնալներս հնարավոր է նրանից (20-ից) հետո: Կարող էի մի երկու օր էլ Դսեղի զեփյուռը վայելել. ափսո՜ս, հազար ափսո՜ս...

Հիմա անվերջ կրկնում եմ՝ անցած օրին օր չի հասնի, և երեկ լավ էր, քանց որ էսօր[1]: Մնաք բարև Ծովերի, Կաթնաղբյուրի և ս. Գրիգորի աղբյուր, երջանկալից պահեր, իմ կյանքիս վերջալույսի չքեղ ժամեր, անցաք անդառնալի:

Լենինականից գնում եմ կիրակի օրը մեր գյուղը՝ Ղազարապատ, որը ջրի տակն է անցնելու՝ ծրագրված և իրականացվելիք

[1] *Սայաթ-Նովայի խոսքերն են:*

լճի հետևանքով. իմ մանկության վայրերը էլ արև չեն տեսնելու. թաղվելու են խավարի և խոնավության մեջ, ինչպես մի օր էլ ինձ է վիճակված այդպես թաղվելու:

Հիմա՛ր սենտիմենտալիզմ: Դու՛ ողջ լինես՝ մի՛շտ լավ, ջահել և գեղեցիկ:

Միշտ քո՝ Ավետիք»:

(XIV, 489):

Վաղուց բանաստեղծը ոչ մեկի նման խոսքեր չէր ուղղել, որոնք ավելի շուտ ոչ թե խոսքեր են, այլ խոստովանություններ...

5 օր անց նույն Գյումրիից նա նորից գրում է Սեդա Թումանյանին (1944. 20 սեպտեմբերի)՝ համարյա կրկնելով առաջին նամակի տողերը, սակայն անելով մի շարք սիմվոլիկ և վառ հավելումներ.

«Սիրելի Սեդա.

...Դու էլ ինձ արդեն ճանաչում ես Համլետի ասածի պես, ես մի այնպիսի սրինգ եմ (ֆլեյտա), որի վրա ամեն ոք կարող է նվագել, և դրանով, կարծես, ավելի կատարյալ է լինում հարմոնիան (ներդաշնակությունը): Մի խոսքով շտապեցի եկա, ցավում եմ, որ շուտ թողեցի Դսեղը, չքնաղ էր, գեղեցիկ էր, անուշ էր Դսեղը ամեն կողմերով, ամեն խորություններով, բարձրություններով և լայնություններով. 16-17 տարուց ի վեր այսպիսի հաճելի, քաղցր մոմենտներ, պահեր չէի ապրել, ինչ որ ապրեցի գեղեցիկ Լոռիի գեղեցիկ գրկում: Դսեղի համը բերանս մնաց, բախտ ունենամ և ժամանակ՝ նորից կգամ:

Սեդա ջան, ինձ հյուրընկալող Արմենակի սեղանի վրա մոռացա, թողեցի մի տետրակ. եթե Նվարդի հետ չեք ճամփել ինձ հանձնելու համար. խնդրում եմ շատ՝ որոնիր, գտիր և մոտդ պահիր:

Համբույրներ աչիկիդ և քեզ:

Միշտ Ձեր բարեկամը՝ Ավետիք Իսահակյան:

Հասցես՝ Երևան, կամ մեր տունը, կամ Գրողների տունը, կամ Նվարդին» *(XIV, 490)*:

Բանաստեղծն, իրոք, չի կարողանում մոռանալ Դսեղը.

«16-17 տարուց ի վեր այսպիսի հաճելի, քաղցր մոմենտներ, պահեր չէի ապրել, ինչ որ ապրեցի գեղեցիկ Լոռիի գեղեցիկ գրկում»: Մենք գիտենք, որ Իսահակյանը պանթեիստ է, բայց և գիտենք, որ նա շատ ավելի զորեղ ռոմանտիկ, սիրերգակ է՝ «Լիլիթի», «Սաադիի վերջին գարնան» հեղինակը, վերջապես այդ նա է ասել. «Կնոջ մարմինը շաղախել կնշանակե երկինք շոշափել»:

Մենք միանշանակ ոչինչ չենք կարող պնդել և իրավունք էլ չունենք: Մեկ շաբաթ անց՝ սեպտեմբերի 27-ին, արդեն Երևանից գրած երրորդ նամակում բանաստեղծը կրկին և կրկին «քաղցր ու գեղեցիկ օրեր ու վայրկյաններն» է հիշում.

«Ցավում եմ, որ չտապեցի Դսեղից հեռանալու, ուր վայելեցի շատ քաղցր և գեղեցիկ օրեր և վայրկյաններ: Անմոռանալի էին Ծովերը, Կաթնաղբյուրը, Ս. Գրիգորը: Անցած օրին օր չի հանի, և իրոք, որ երեկ լավ էր, քանց որ էսօր:

Դուք ո՞նց եք, հուսով եմ, որ առողջ եք և լավ, կարծես Թիֆլիզ գնալուց առաջ մի երկու օրով ուզում էիր Երևան գալ. շա՛տ լավ կլիներ:

Ջերմ բարևներ:

Ձեր Ավետիք» *(XIV, 490)*:

Վարպետի դսեղյան այցից մի գեղեցիկ դրվագ է պատմում այս թվին դեռևս բոլորովին աղջնակ Իրման.

«Ձրոսանքներից մեկի ժամանակ տեղատարափ անձրև սկսվեց, ճայթեց կայծակն ու որոտացին ամպերը: Մենք հազիվ հասցրեցինք պատսպարվել ժայռերեն մի տանիքի տակ: Այսօրվա պես հիշում եմ Վարպետի ուրախությունը. նրա դեմքը

պայծառացավ. հիացմունքով նայում էր բնության տարերքին»[1]:

Հատկանշական է, որ իր գրքում տիկին Իրման ևս մեկ անգամ հիշատակում է Դսեղը՝ վարպետի առնչությամբ.

«Դսեղում անցկացրած օրերը նա (Վարպետը – Ա. Ի.) դեռ երկար է հիշում. այդ մասին են խոսում 1944 թ. ամռանը Սեդային հասցեագրված թախծոտ ու քնքուշ տողերը, որոնցում նա հիշում է Լոռվա սարերն ու անտառները, Դեբեդի աղմուկը, Կաթնաղբյուրը և ընկերոջ տունը»[2]:

Ի դեպ, ևս մի ուշագրավ փաստ. Սեդան, ի տարբերություն իր քույրերի՝ Աչխենի և Նվարդի, հուշեր չի սիրել գրել, այնպես որ նրա կողմից Իսահակյանի անվան հիշատակում մենք չենք հանդիպել, բայց ահա Իրմայի հիշյալ գրքում մենք մի հետաքրքիր վկայություն ենք կարդում.

«Իսահակյանի Դսեղում անցկացրած օրերի մասին է գրում նաև մայրս Մոսկվայում գտնվող Արփիկին (քրոջը -Ա. Ի.) 1944 թ. «Ավոն 10 օրով եկել էր գյուղը, շատ լավ անցկացրինք, ինքն էլ բավականին գոհ էր: Գնացինք Ծովերը ու Գրիգոր Կաթնաղբյուրը և այլն»[3]:

Իսահակյանի և տիկին Սեդայի ռոմանտիկ հարաբերությունները, որոնց արմատները գցված էին 1927 թվականին Երևանում՝ Սեդային ճոնած զորեղ բանաստեղծությամբ, ունեցավ իր տրամաբանական շարունակությունը՝ 1944 թվականին «դսեղյան էլեգիան»: Ինչպես չասել. դեռ ուժի մեջ էր «Վերջին հոր-

---

[1] *Նույն տեղում, էջ 243:*

[2] *Մեզ հայտնի Իսահակյանի մեկ նամակում և մեկ բացիկում, որոնք Իրման նվիրել է բանաստեղծի տուն-թանգարանին, ոչ մի տեղ չկա հիշատակում «Դեբեդի աղմուկի» մասին: Ուստի պետք է մտածել, որ Իսահակյանի մի այլ նամակում գրված է այդ մասին, այսինքն՝ կան և ուրիշ նամակներ:*

[3] *Իրմա Սաֆրազբեկյանի հիշյալ գիրքը, էջ 243:*

ձանքի» գրոհը, բոլոր դեպքերում հենց «Արքեցումի հրով» լցված զգացմունքներն են կյանքը դարձնում երազային:

Մի հիշարժան դրվագ էլ պատկերված է Մարտիրոս Սարյանի՝ 1957 թ. օգոստոսի 18-ին Երևանում՝ իր առանձնատան հյուրասենյակում, արված գրաֆիկական ճեպանկարում. երեք հարազատ դեմքեր են ջերմ զրույցի պահին՝ Վարպետը, կողքին՝ նկարչի կինը՝ Լուսիկը, դիմացը՝ Սեդա Թումանյանը: Վարպետը բարձր տրամադրության մեջ է, իսկ կանայք հիացական հայացքները հառել են բանաստեղծին: Մ. Սարյան ստորագրության տակ հեղինակը ռուսերեն գրել է. "Исаакян, Лусик, Седа".

Մեծ ոգեշնչումով կերտված այս նկարն արված է Վարպետի մահվանից ընդամենը երկու ամիս առաջ: Սարյանի պատկերից մեզ է նայում կյանքի ավյունով լեցուն, կյանքը սիրող և կյանքով հիացող մեծ իմաստունը: Ո՞ւմ մտքով կանցներ...

* * *

Բայց հիմա մենք Փարիզում ենք, և այնտեղ տիրում էին «խեղճ տարիները» (Հերտրուդա Ստոյանի խոսքերն են):

Իսահակյանի նամակագրությունը բանաստեղծի կյանքի ամենակարևոր ու ճշմարիտ վկայություններից է: Եվ ինչքա՜ն լավ է, որ բանաստեղծի կյանքում եղավ նման մի չրջան: Իսկ որպեսզի «Տոնը» լիներ լիարժեք, պիտի կրկին վառվեր այն «աստղը», որն իրենց նամակներում հիշատակում էին Ավետիքն ու Վիկտորիան, բայց հիմա պետք է լինեին Ավետիքն ու Արշալույսը՝ Ա + Ա...

...1971 թվի օգոստոսին Փարիզից Իսահակյանի երևանյան տուն-թանգարան եկավ մի պատկառելի պարոն՝ Դանիել Ճիզմեճյանը և մորս՝ Բելլա Իսահակյանին, որն այդ ժամանակ

թանգարանի գլխավոր ֆոնդապահն էր, հանձնեց Վարպետի ինքնագիր նամակների մի տրցակ և կից մի գրություն այդ նամակների հասցեատիրոջից՝ տիկին Արշալույս Գրիգորյանից:

Ահա ինչ էր գրում Վարպետի բարեկամուհին.

«1.7.1971, Փարիզ.

Բանաստեղծ Ավ. Իսահակյանի տուն-թանգարանի հարգելի անօրինություն.

Տիկին Գոհար Ազնավուրյանից բավական ժամանակ է՝ ստացել եմ նամակ, որին դժբախտաբար չկարողացա պատասխանել անմիջապես, շատ հարգելի պատճառով:

Հարգելի տիկինը տեղյակ լինելով, որ անմահ բանաստեղծ Ավ. Իսահակյանը գրագիտուհի Լասի և իմ, որ Լասի քույրն եմ, լավագույն բարեկամներ եղած ենք Փարիզ եղած ժամանակ, խնդրել է ինձմեն, որ եթե Վարպետից հիշատակներ և նամակներ ունեմ, ուղարկեմ իրեն՝ հանձնելու համար բանաստեղծի անվան տուն-թանգարանին: Մեր գաղութի գործունյա և նվիրյալ ընկ. Դանիել Ճիզմեճյանը, որ այցի պիտի գա Երևան օգոստոս ամսին, սիրով հանձն առավ Վարպետի ինձ գրած նամակները բերի և հանձնի բանաստեղծի թանգարանին:

Հարգանքներով՝ Արշալույս Գրիգորյան (գրագիտուհի Լասի քույրը)»:

Եվ պարոնը հանձնեց թանգարանին մի տրցակ՝[1] 46 նամակ և բացիկ, բոլորը գրված Վարպետի ձեռքով՝ 1932-1936 թթ. տիկին Արշալույս Գրիգորյանի փարիզյան բնակարանի կամ որևէ սրճարանի հասցեներով: Մի քանի բացիկ տիկնոջը հանձնելու համար թողել են նախօրոք պայմանավորված սրճարանում, M[el] A. Grigorian *մակագրությամբ: Երբ ես ծանոթացա*

---

[1] *Բոլոր այդ ձեռագիր նամակներն ու բացիկները պահվում են Իսահակյանի տուն-թանգարանի ձեռագրային ֆոնդում:*

այդ նամակներին, իմ մոտ մտահղացում ծագեց մի օր այդ նամակները ի մի բերել և հրապարակել, սակայն ոչ միայն նամակները, այլև մի փոքր գիրք գրել Վարպետի կյանքի, գուցեև վերջին սիրավեպի մասին, բնականաբար բոլոր նամակները և բացիկներն այնտեղ հրապարակելով: Անցան տարիներ՝ և ես անընդհատ հետաձգում էի այդ գրքի ստեղծումը, ես ուզում էի, որ որոշակի ժամանակ անցներ, որ տարիները պատասպարեին այդ զորեղ զգացմունքի չատ անմիջական արտացոլումը:

Եվ այժմ երբ լրիվ (հնարավորության չափով) ավարտված է Իսահակյանի նամակների հավաքագրումը, և արդեն XIII հատորն էլ լույս է տեսել, և տպարան է իջնում XIV հատորը, մեղք կլիներ ասպարեզ չհանել գոնե լավագույն նմուշները Արշալույսին գրած Վարպետի նամակներից և բացիկներից: Իսկ այդ գեղեցիկ սիրո պատմությունը՝ արտացոլված 46 միավոր ինքնագրերում, անպայման ամբողջությամբ լույս կտեսնի իմ ծրագրած գրքում՝ հնարավորինս մոտ ժամանակներում:

Եվ կամ թե «Իսահակյան. հրապարակումներ և ուսումնասիրություններ» ժողովածուում, որը կտպագրվի Վարպետի ակադեմիականից հետո:

Դեռևս հայրս՝ Վիգեն Ավետիքովիչը, ինձ 2000-ական թթ. պատմել էր, որ Հայրիկն իրոք ունեցել է մի թաքուն սիրավեպ բանաստեղծուհի Լուիզա Ասլանյանի (Լասի, ֆրանսիական հակաֆաշիստական դիմադրության ակտիվ անդամ) փոքր քրոջ՝ Արշալույսի հետ, որին մտերիմները կոչել են նաև Լուլու: Նա Փարիզի հայկական սիրողական թատերախմբերից մեկի անդամ է եղել և մասնակցել է մի շարք ներկայացումների: Հայրս ինքն էլ լավ ծանոթ է եղել Լասի և նրա կրտսեր քրոջ հետ:

Հայրս պատմում էր. «Տարօրինակ բան. Լասը շատ տգեղ էր, իսկ Արշալույսը հակառակը՝ շատ գեղեցիկ, բարձրահասակ,

մեծ սև աչքերով, փարթամ կազմվածքով, շատ կանացի: Նրան լավ ճանաչում էին Ջանանը, Արշակ Զոպանյանը, Ռաֆայել Շիշմանյանը, Միսակ Մանուչյանը, Լևոն Հարությը, Զարեհ Որբունին: Մայրս՝ Սոֆիկը, երկար ժամանակ չէր իմանում այդ պատմության մասին, բայց կարծես Փարիզից մեկնելուց մեկ տարի առաջ ինչ-որ բան իմացավ: Եվ ես ադոտ հիշում եմ, որ նա հայրիկիս հետ երկար, դժվար խոսակցություն ունեցավ»:

Այդքանը հայրս ինձ պատմեց, մի որոշ չափով ես տեղեկություններ առա նաև նկարիչ Շիշմանյանի այրուց՝ տիկին Ալիսից, ում հատուկ խնդրել էի պատմել իմացածը: Երբ ես ասացի, որ այդպիսի նամակներ կան, որոնք ամենախոսուն վկաներն են, տիկին Ալիսը շատ զարմացավ՝ ասելով, որ, այո՛, նրանք նույն ժամանակ են ապրել Փարիզում, ինքն էլ մի քիչ ծանոթ է եղել Արշալույսի հետ, բայց երբեք չի լսել, որ «Պարոն Ավետիքը կապ է ունեցել նրա հետ, նույնիսկ չենք էլ կասկածել, ո՛չ ես, ո՛չ ամուսինս՝ Ռաֆայելը»:

«Ուրեմն Վարպետը շատ լավ կոնսպիրատոր է եղել», — իսկույն մտածեցի ես:

Բայց և միաժամանակ ավելացրեց.

«Արշալույսը, ընդհանրապես, տղամարդկանց շատ էր դուր գալիս, մանավանդ տարիքով իրենից մեծ տղամարդկանց»:

Միակ նկարը, որ հայրս գտավ իր արխիվում, խմբակային մի լուսանկար էր հիշատակած սիրողական թատերախմբի, և այնտեղ Վիգենը շատ երիտասարդ էր, երևի 22 տարեկան, նստած մի շատ գեղեցիկ տիկնոջ կողքը, և նա տիկին Արշալույսն էր: Ես երկար նայում էի այդ նկարին ու մտածում, բացառությամբ Մատակյան քույրերի, Ավետիքի բոլոր սիրած կանայք իրար նման են եղել՝ բոյով, փարթամ, ազնվատեսք, սևաչյա, և մի կարևոր օրինաչափություն էլ նկատեցի. Իսահակյանի բոլոր լուրջ սիրավեպերի հերոսուհիները հայուհիներ

են եղել: Կարծես բանաստեղծն ի զորու է եղել սիրահարվելու միայն հայ կնոջը: Լինի դա Թիֆլիս, Բաքու, Ռոստով, Բեռլին, Ժնև, Վենետիկ, Փարիզ...

Թավրիզում 1900 թվին ծնված և 1915 թվին ընտանիքով Փարիզ փոխադրված Արշալույսը պարսկահայերի հայտնի գերդաստանից էր և առաջին հերթին աչքի էր ընկնում իր գեղեցկությամբ և դերասանական տաղանդով: Ըստ ամենայնի բանաստեղծն ու Արշալույսը ծանոթացել են հենց Փարիզում, հայկական մշակութային երեկոներից մեկում՝ 1931-1932 թթ.: Համենայն դեպս մեզ հասած Իսահակյանի առաջին նամակը թվագրված է 1932 թ. 18 մայիսի: Բայց նամակից հասկացվում է, որ իրենք արդեն լավ ծանոթ են, որ սա առնվազն մի կես տարվա ծանոթություն է, որ արդեն Արշալույսը շատ բան էր նշանակում բանաստեղծի համար.

«Իմ շատ սիրելի ընկերս,

Այնքա՜ն տխուր եմ, այնքա՜ն տխուր եմ, որ եթե գիտենայիր, իսկույն պիտի վազեիր, գայիր մոտս: Եվ մի՛այն դու: Ամբողջ աշխարհի մեջ միայն քեզ եմ տենչում ինձ մոտ տեսնել, միայն քո ձեռքը իմ ձեռքիս մեջ և միայն քո քնքուշ ափի տակ իմ ճակատը:

Ամբողջ աշխարհի մեջ քեզնից ավելի մոտիկ, մտերիմ, հարազատ հոգի չունեմ. միայն քեզ մոտ կարող եմ սիրտս բանալ, միայն քեզ խոստովանել, քեզ հավատալ, հոգով քեզ հանձնվել:

Քառս է հոգիս այժմ՝ տակն ու վրա, պայքարով, հակասություններով լի, խռովակոծ, մրրկածեծ, միայն քո մոտ կխաղաղվեմ, կհնազանդվեմ ու կպայծառանամ:

Ինչքա՜ն եմ սիրում քեզ, ի՜նչ ցավագին զգացումով, ի՜նչ անհույս սիրով: Կորցրել եմ կյանքիս ռիթմը...

Ման եմ գալիս այս հսկա քաղաքում, փողոցեփողոց, մենակ եմ այս միլիոնավոր մարդկանց մեջ.— և այս միլիոնավոր դեմ-

քերի մեջ միայն մի նվիրական դեմք կա, որի հայացքը ինձ ապրեցնում է, որի անուշ ձայնը փայփայում է հոգիս, վերստին ստեղծում է ինձ. իմ մխիթարությունը, իմ հացն ու օդը:

Ա՛խ, եթե զգայիր իմ զգացմունքների քաոտրդը...

Երեկ քեզ չգտա, բայց խնդրում եմ վաղը, ուրբաթ, բարի լինես ներկա լինել «Բյուրակնի» ժողովին, ժամը 8զ -9, Ցլորիան ճաշարանի վերնահարկը. ժողով կա. գոնե այս չաբաթ քեզ տեսնեմ, հիվանդապին կարոտս առնեմ:

Գրում եմ չտապ, դողդոջուն սրտով և դողդոջուն ձեռքերով:

Միշտ քո, միշտ քեզ նվիրված

Ավ. Իս.» *(ԱԻԹ. № 2673, XIV, 306):*

Յուրաքանչյուրի մոտ յուրովի է բախտավորության հանրահաշիվը: Վարպետն էլ այդպիսին էր՝ գերզգայուն, դրամատիկացնող, տառապող ու անհամբեր...

Արշալույսը 32 տարեկան էր, Իսահակյանը՝ 57: Ի՞նչ ապագա ուներ սիրո այս քաղաքին այնքան հատկանշական այս սիրավեպը: Եթե Արշալույսի համար այն ավելի շատ զգացմունք էր, կիրք, ապա Իսահակյանի համար՝ մի անշեջ սեր, երբ.

«...քեզ հետ զրույց եմ անում, քո արքայական կեցվածքդ աչքերիս առաջն է, և քո քաղցր ու չնորհով լի աչքերը նայում են հոգուս մեջ»:

Բանաստեղծին թվում էր, Սևրի իշխանական պարտեզում զբոսնելիս, ինչպես որ ինքն է դիմում Արշալույսին.

«Վարդերով ու ծաղիկներով վառված՝ շրջում եմ նրանց մեջ և քեզ եմ երազում, քո բույրն եմ առնում... <...> թռչունները երգում են ծառերի միջից, սիրո և կարոտի երգեր: Ինձ թվում է, որ նրանք իսկապես որ անսխալ, անթերի թարգմանում են իմ զգացումս դեպի քեզ, քան թե դժգույն տողերս, որ անկարող

են արտահայտել սերս, որ ունիմ քեզ համար, այն կրակը, որ այրում է ինձ, մխայն ինձ...» *(XIV, 306-307.)*:

Մեծ սիրո քառուղիներով անցած, «Աբու Լալա-Մահարիի», «Լիլիթի» հեղինակը նախատում է նոր կյանք մտնող երես-նամյա փարիզահայ դեղեցկուհուն.

«Ինձ հզոր, մեծ սիրով չես սիրում, տիեզերք չկա քո սիրո մեջ. տարերք, բնության ուժեր չկան, սառը մտածում չատ կա: Սերը պիտի ճակատագիր, рокъ, լավա, հրաբուխ, մահ... Իսկ ինձ համար դու ամեն ինչ ես – լինի մի վրան դաշտի մեջ, դու և ես, և տիեզերքը մեզ հետ կլինի... Ե՞րբ պիտի այս զգաս դու, իմ թագուհիս, իմ տիրուհիս» *(XIV, 307)*:

Բանաստեղծն այս սիրո պատմության մեջ կատարելագործություն է պահանջում, նա չափազանցնում է այն, ինչ որ կա իրականում: Իսկ իրականում կա «աստվածային երկուչաբթին», երբ մեր սիրահարները փարիզյան որևէ կաֆեում հերթական ժամադրությունից հետո առանձնանում են... Իհարկե, եղել է, որ Արշալույսը Ավետիքի մոտ ամառանոցային գյուղ է գնացել, ասենք՝ Ռուասի, հաճախ եղել են Լուվրի թանգարանում կամ զբոսնել են Բուլոնյան անտառում, սիրել են հաճախել ալժիրյան մզկիթին կից գործող արևելյան սրճարանը (որտեղ, ի դեպ, մենք ևս եղանք Ռուզանի հետ):

Բայց, իհարկե, ավելի հաճախ Փարիզի մոնպառնասյան անմրցելի սրճարաններում: Նրանք ունեցել են և իրենց սիրելի վայրերը՝ «Կոմեդի Ֆրանսեզ»-ին կից կամ էլ Մյուսեի սրճարանները:

Ահա մի նմուշ Արշալույսին ուղարկած Իսահակյանի ժամադրության բացիկներից (ի դեպ, բացիկներն ավելի չատ են, քան նամակները).

«1 օգոստոսի, երկուշաբթի 5 <1935>

Սիրելի Լուլու ջան.

Երեկ չկարողացանք իրար հետ խոսել: Այսօր ժամը 4-ից ես քեզ կսպասեմ Palais Royal Լուվրի առաջը. Կոմեդի Ֆրանսեզի դեմը Regance (Ռեժանս) սրճարանում: Այնտեղ կգնանք պարտեզը շրջելու, Լուվրի պարտեզները:

Հույս ունեմ, որ բախտ կունենամ քեզ տեսնելու: Մինչև 5-ը եկար՝ լավ, չեկար – անշուշտ մի արդարացնող պատճառ կունենաս:

Ջմռռանաս հետդ բերել Возрождение հոդվածը Լիլիթի մասին:

Միշտ քո Ավ. Իս.» *(XIV, 365.):*

Ծանոթության առաջին տարվա ընթացքում, Իսահակյանի վառ ու ռոմանտիկ տոներով գրված նամակների վկայությամբ, նրանց զգացմունքը ուժեղ է եղել, և որքան էլ Ավետիքը գանգատվեր, եղել է երկկողմանի ձգողություն, համակրանք: Եվ հանուն ճշմարտության պետք է ասել, որ որքան էլ անհամաչափ լիներ թե՛ նրանց մարդկային խառնվածքը և թե՛ վերաբերմունքը սիրո հանդեպ, նրանց սիրավեպը տևել է բավականին երկար... Եվ որքան էլ Իսահակյանը պնդեր, որ Արշալույսն իրեն այնպես չի սիրում, ինչպես ինքը Արշալույսին, սակայն մենք կարող ենք պնդել, թե 46 նամակ և բացիկ, այն էլ այդպիսի վառ զգացմունքով գրված, երեք տարում բնավ քիչ չէ:

Կարելի է ասել՝ նրանք իրապես վայելել են Փարիզը, և առանց մեկը մյուսի այդ տարիներին, մանավանդ Իսահակյանի համար, Փարիզը չատ տխուր կլիներ: Արշալույսը որոշ չափով զարդարել է Ավետիքի կյանքը...

Ահա նրանց նամակագրությանը չատ բնորոշ Իսահակյանի մի բացիկը (16 դեկտեմբերի, 1932).

«Սիրելի Լուլու.

Գրում եմ չա՛տ չտապ, հոգի ջան և ցավում եմ, որ այս երկու օրը չպիտի կարողանամ քեզ տեսնել:

Իսկ ե՞րբ պիտի գա դրախտի օրը՝ երկուշաբթին: Հոգիս պիտի դուրս գա մինչ այդ օրը: Ուրեմն հույսով, սիրով և հավատով և համբույրներով սպասում եմ երկուշաբթի օրը, ժամը 3-ին, կամ քիչ անց կը գամ քեզ համբուրելու...»:

Եվ այսպես շարունակ...

Հարկ է ասել, որ 1934 թվի աշնանից նրանց հանդիպումները սկսում են ավելի սակավաթիվ դառնալ, այս հանգամանքը Իսահակյանը շատ ծանր է տանում.

«4 ապրիլի, Փարիզ, <1934>

Սիրելի Արշալույս.

Վերջին անգամ ինձ թվաց, թե դու դժդոհ բաժանվեցիր ինձնից. այսինքն, կարծես, այնպես գնացիր, որպես թե էլ չես ուզենալու ինձ տեսնել. քո աչքերիդ մեջ այլևս սիրո ներկայությունը չեմ տեսնում, ավելի պարզ, սովորական լեզվով ասած՝ էլ ինձ չես սիրում և նույնիսկ տրամաբանում ես, թե ինչու չես սիրում. անհուն ցավ է այդ ինձ համար. իսկ ես այնպես սիրում եմ քեզ... Հիմա գարուն է, ծառերը կանաչում են և ա՛յնպես ուզում եմ ես քեզ, ուզում եմ հետդ լինել, խոսել, աչքերիդ նայել, քո բույրը շնչել, մոտդ այրվել, հալվել...

Այս երկուշաբթի օրը, ամսի 9-ին, կսպասեմ քեզ, լավ լսիր. mosqueě □(ալժիրական մոսքեի) սրճարանում, ժամը 4-ին. միասին լինենք, լսենք արևելյան երգ ու նվագ. եկ, Հոգիս, անպատճառ եկ:

Եթե նույնիսկ այս վերջին անգամը լինի՝ ի պատիվ հին սերերի, հին երազների և համբույրների, ե՛կ այս անգամ, կատարի՛ր խնդիրս, եթե չգաս, անսահման կդառնանամ և չպիտի կարողանամ մոռանալ այդ ժխտումը. այդ ցավը և չպիտի կարողանամ ներել քեզ:

Կարոտով և համբույրներով

Ավ. Իս.»: *(XIV, 361):*

Ծոնդային համար՝ 2687:

Իհարկե, դժվար է ենթադրություններ անել, թե օրինակ 1935 թվականին մեր հերոսները որքան են հանդիպել, տիկին Արշալույսին ուղարկածներից կա միայն մեկ նամակ՝ թվագրված 1935 թ.

«(17. II 1935, Փարիզ).

Սիրելի Արշալույս.

Եթե վաղը, երկուշաբթի, փետրվարի 18-ին, նամակս ձեռքդ հասավ, երեկոյան ժամը 6-ին կսպասեմ քեզ Denfert houshrau-ի հրապարակի սրճարանում Unipress-ի անկյունը, ուր որ եղանք առաջին անգամ, և բարի նշան էր: Իսկ եթե չհասավ, ուրեմն երեքշաբթի Palais Royal-ի փոքրիկ սրճարանը Museet, ժամը 5-ին: Եթե զբաղված ես՝ ժամը 9-ին: Այդ վայրն էլ պեշ չէր, այնտեղ էլ հաշտվեցինք:

Մշտական հավատարիմ տրամադրությամբ համբուրում եմ քեզ, քո Ներսես: (Գաղտնապահ լինելու համար Ավետիքը ստորագրել է Ներսես)»:

Մենք տեսնում ենք, որ աննկատելիորեն սեր բառը փոխվում է տրամադրության: Ամեն ինչ օրինաչափ է, սիրավեպի 4-րդ տարին է:

Կրկնում եմ, որքան տխուր կլիներ Փարիզն Ավետիքի համար, եթե չլիներ Արշալույսը... Իսահակյանը, թե որպես ստեղծագործող, թե որպես մարդ հեռու էր բոհեմիկ կյանքից, «պոետական խենթություններից», ինչով այդպես չնչում էր «արտիստական Փարիզը», ստեղծագործողի ազատությունը Իսահակյանի մոտ կոմպենսացվում էր մեծ սիրո, սիրահարության մեջ ընկղմվելու զորեղ տենչով, կուզեք դա անվանեք ցնորք թե երազ, արբեցում թե էֆորիա: Ենթադրելով, թե որևէ չափածո գործ կարող է Իսահակյանը ձոնած լինել Արշալույսին: Եվ որքան մենք որոնեցինք Իսահակյանի ձեռագրերում, անտիպներում, սակայն չգտանք գեթ մի բանաստեղծություն՝

նվիրված Արշալույսին: Փոխարենը քնարական խոսքը ներդրել էր նամակներում:

Եվ վերջապես վերջին նամակը՝ թվագրված. <1936>, 17 փետրվարի, չաբաթ, Փարիզ. 11. Av. Ste Rosalie.

«Սիրելի Արշալույս

Շա՜տ ուրախ եմ, որ պիտի տեսնեմ Ձեզ: Ուրեմն, խնդրում եմ, երկուշաբթի ժամը 5-ին (ամսի 19-ին) գալ cofe Musset, որը եթե հիշում եք, եղանք վերջին անգամ Palais Royal հրապարակի վրա: Կսպասեմ ձեզ: Շնորհակալություն և բարևներս.

Ձեր Ավ. Իս.»:

Հիշյալ հասցեով Իսահակյանն այլևս նամակ չի գրի: Սակայն Լասի արխիվում պահպանվել է երկու նամակ, որ Իսահակյանը գրել է նրան Վենետիկից Բաթում ճանապարհին 1936 թվի հոկտեմբերի 5-ին և 7-ին: Արշալույսի անունը բանաստեղծը չի հիշատակում, փոխարենը երկու անգամ էլ գրում է.

«Ջերմագին բարևներ բոլորիդ.

Ձեր Ավետիք Իսահակյան» *(XIV, 382, 384):*

Տիկին Արշալույսն իրեն համեստորեն անվանել է «գրագիտուհի Լասի քույրը»: Սակայն, ըստ մեզ, շնորհիվ նրա ազնվասիրտ արարքի, որ «անմահ բանաստեղծ Ավ. Իսահակյանի» բոլոր նամակները սրբորեն պահել և ընծայել է տուն-թանգարանին, նրա անվանը պիտի հավելել «Պոետի վերջին սերը» տիտղոսը:

Դ. «ՊԻՏԻ ՓԱՐՎԻՄ ՋՔՆԱՂ ԼԱՆՋԻԴ...»

Եթե Իսահակյանը ձեռնամուխ լիներ մի հոդված գրելու, թե ինչ ուժեր և ինչ հանգամանքներ նրան դրդեցին 1926 կամ 1936 թվին թողնել Արևմտյան Եվրոպան՝ Փարիզը կամ թե Վենետիկը և վերադառնալ հայրենիք, որն արդեն խորհրդային (բոլշևիկյան) երկրի մի մասն էր՝ ՀԽՍՀ անվան տակ, մեր այս վերջաբանը գուցե վերածվեր մի մեծ տրակտատի, քանզի որը գրես, որը թողնես, որ ընթերցողը ճշգրիտ պատկերացում ունենա բանաստեղծի նման ընտրության վերաբերյալ: Եվ դժվար կլիներ նման մի նյութ գրելը՝ դասդասելով, մեկնաբանելով հեղինակին հուզող բոլոր մտքերը, շարժառիթները, վաստերը, տրամադրությունները: Այս անգամ էլ բանասերին օգնության է գալիս նամակը:

Ահա շատ կարևոր և շա՜տ բան ասող նամակը՝ Վահան Նավասարդյանին (1926, 26 հունվարի, Վենետիկ).

«Հիմա լուրջ ուզում եմ գնալ: Քո երկյուղներդ իմ մասին իրական չեն. ես գնում եմ հավատարիմ իմ Եսիս, և մեծամասնականները ինձ հարգում են, հենց դրա համար: Ես արդեն նրանց հայտնել եմ, թե գալիս եմ հայ ժողովրդի մոտ և ոչ թե ձեզ մոտ. ես ինձ հատուկ տեսակով սիրում եմ հայ ժողովուրդը և ոչ մի «համաշխարհային մասշտաբ» չեմ ճանաչում, ես պիտի երգեմ հայ բուխարիկը, իմ առջևս մի ցցեք Նյու Յորքի ծխնելույզները: Հայաստանը միայն ձերը չէ, և ում սրտի մեջ որ կա Հայաստանը, նա էլ գլուխ դնելու տեղ պիտի ունենա այնտեղ: Եվ նրանք ասում են.

«Եկ, մենք սիրում ենք քեզ, թե հներն են սիրում քեզ և թե կոմսոմոլը: Մենք ուզում ենք, որ քո անկեղծ սիրտը լինի այս-

տեղ, քո համով խոսքն ու զրույցը, դու երիտասարդ գրողների նահապետը լինես և մեր սեղանների թամադան: Մենք գիտենք, որ 1903 թվին, երբ Դաշնակցությունից հեռացան անջատողականները, դու հալածում էիր Մարքսին: Դու 1907 Վիեննայի 4-րդ ժողովին պայքարել ես սոցիալիզմին դեմ. մենք գիտենք, որ դուն նույնիսկ սոցիալիստ չես, բայց գիտենք, որ դու բանաստեղծ ես, խորամանկ չես, կեղծավոր չես, ընկերներից սիրված ես, և ամեն ոք Երևանում ամեն մտավորական՝ Եր. Շահազիզ, Լեո, Ա. Տերտերյան, Եր. Լալայան, Մանանդյան, Աբեղյան, Ս. Զորյան, Դ. Դեմիրճյան, Մ. Մանվելյան, Գ. Լևոնյան և կումունիստներս՝ Ա. Հովհաննիսյան, Կարինյան, Մռավյան և այլն, և այլն, ուզում ենք որ դաս, փափագում ենք քեզ ունենալ մեր մեջ՝ մեր սեղաններին, մեր թեյարաններում, մեր պատույտներում, և եթե մի որևէ բանով քեզ հաճելի չի լինի հայրենի միջավայրը, նորից դարձի քո վենետիկդ»:

Այսպես են գրում նրանք:

«Ինչպես չգնամ. 15 տարի է՝ հեռացել եմ, կարոտը խեղդում է ինձ, ոչ մի երկիր չի քաշում ինձ, ո՛չ Փարիզը, ոչ Բերլինը, ոչ Գահիրեն, հասկանո՞ւմ ես այս: Ո՛չ մի երաժշտություն, ո՛չ բալետ, միայն մեր թառը, չվին, զուռնան, մեր աղջիկների պարերը... մեր խորովածը, քյուֆթեն, մեր թարխունը, լավաշ հացը... Դու այդ լավ ես հասկանում, և գիտեմ, որ պիտի նախանձես: Այս էլ իմացիր, որ իմ բոլոր լավ ընկերները այնտեղ են. նույնիսկ դաշնակցական ընկերները (չվիրավորվիս, քո մասին չէ խոսքը), Արտաշահմանի դաշնակցական ընկերներից շատերը չեն դնահատել ինձ, նրանք բոլորը Ահարոնյանի համհարզներն են, իսկ իմ դաշնակցական ընկերները գավառի տղաներն էին, և ես գավառի, գյուղերի գործիչ էի: Թողնենք այս, հին դարման է, թող մնա փեթի» *(XIV, 140)*

Այս նամակը գրված է 1926 թվին, սակայն նրա տակ Իսահակյանը հանգիստ կարող էր ստորագրել և 1936 թ. աշնանը՝

Խորհրդային Հայաստան վերջնական մեկնելուց առաջ, քանզի Իսահակյանի մտադրություններում և հայացքներում այդ ընթացքում ոչ մի վճռորոշ փոփոխություն չկար: Իհարկե, մեկ օրում չհասունացավ այս որոշումը, նա թերևս 1926 թ. ավելի տարակուսանքներ ուներ գնալուց առաջ:

Իսահակյանը նույն օրը Փարիզից իր կնոջը՝ Սոֆյային գրած մի նամակում երեք անգամ փոխում է իր կարծիքը: Եվ եթե 1926 թվին ինչ-որ մի բան դեռ իր համար պարզ չէր, նա որոշեց աշնանը մեկնել Խորհրդային Հայաստան, իր աչքով տեսնել ամեն ինչ, ինչպես և ճշտել որոշ փաստեր իր «Ուստա Կարո» վեպի համար, մեկ անգամ ևս թաթախվել իր հայրենիքի մթնոլորտում, որին ինքն այնքան կարոտել էր, սակայն, նախնական մի քանի ամսով Հայրենիք գնալը, բանաստեղծի ուղևորությունը 1926 թ. սեպտեմբերին ձգվեց շատ երկար ժամկետով՝ մինչև 1930 թ. ապրիլը: Բոլոր այդ 4 տարիներին Իսահակյանը ստիպված էր կնոջն ու որդուն հազար ու մի պատճառ բերելով, հավաստիացնել, որ վերջապես գալու եմ, «քիչ մնաց»... մի քիչ էլ մնաց... «Աշնանը ճանապարհ կընկնեմ ձեզ մոտ», շուտով մեկնում եմ... Վերջին ամիսն է... մի քիչ էլ համբերիր:

Եվ այսպես շարունակ:

Երևանից գրած նամակներն ինչ-որ հանգույցում իրար բավական նման են: Առաջին նամակներում՝ 1926 թ., Իսահակյանը չա՛տ է ոգևորված երկրի չինարարական վերելքով.

«Տեսա Խորհրդային Հայաստանի չինուԹյունները, պանրադործարանը. հրաչալի էր: Երևանը չա՛տ է փոխված. եռուզեռ, կենդանի, բազմամարդ: Անվերջ քանդում են ու չինում, մեծ աշխատանք են Թափում: Զարմանալի ժողովուրդ է հայը, ապրելու ընդունակ, լալիս է, բայց նորից չինում ու ստեղծում, քարից հաց հանում» *(1926.12 հոկտեմբերի) (XIV, 176):*

Երկու ամիս անց.

«Այն, ինչ որ անում է կառավարությունը, նրանից ավել ի՞նչ կարող է անել. երկիրը աղքատ, քանդած, անընդհատ պատերազմներ տեսած: Ի՞նչ է, եթե մի ուրիշը լիներ, ուրիշ կառավարություն, ավելի՞ն պիտի գործեր: Երբե՛ք: Անվերջ նոր, հսկա չենքեր են շինում, տներ, հիվանդանոցներ, դպրոցներ, ֆաբրիկաներ, ջրանցքներ և հազարումեկ բաներ: Վրաստանն ու Ադրբեջանը ժառանգեցին չեն ու հարուստ երկիր, քաղաքներ, ճանապարհներ, իսկ Հայաստանը – միայն ավերակներ, որբեր և հիվանդություններ, սով և մերկություն...» *(1926, 7 դեկտեմբերի):*

Օրից օր, նամակից նամակ երևում է՝ ինչ հպարտություն է ապրում պոետը Փյունիկի պես մոխիրներից բարձրացող իր հայրենիքի հանդեպ.

«...Սա իմ տեղն է ու իմ տարերքը: Ինչ պիտի անեմ Եվրոպայում: Զզվել եմ ու երբեք փափագ չունիմ նորից այնտեղ ճանճրանալու: Իմ իդեալս է ապրել Հայաստանում մշտապես և երբեմն գալ Եվրոպա, կարճ ժամանակով: Դու դիտես, թե ինչքա՜ն էի զզվել Եվրոպայից և ինչքա՜ն էի տխուր» *(XIV, 184.):*

Տիկին Սոֆիկը, երկար տարիներ լինելով բանաստեղծի կինը, այն էլ Իսահակյանի նման հայտնի ու սիրված բանաստեղծի կինը, տարիների ընթացքում կարծես ավելի իմաստուն ու համբերատար էր դարձել, և Վարպետը գրելով նրան, սիրտը բացելով, կարծես չարունակում էր տարիների զրույցը իր աղնվասիրտ, պարկեշտ կնոջ հետ, որի համար աշխարհի ամենաթանկ մարդը իր ամուսինն էր՝ իրենց ծանոթության օրից մինչև նրա կյանքի վերջը: Այնպես որ Իսահակյանը գրում էր տիկնոջը՝ որպես իր կյանքի ամենամտերիմ մարդուն (1927, 3 մայիսի).

«Գրում ես Զ<ապել> Եսայանի մասին, թե նա ասում է, որ Հայաստանը արքայություն է: Սխալ մեթոդ է այդ. ոչ ոքի էլ չի

կարող խաբել, և դրանով վնասում է ժողովրդին: Վերքերը ծածկելով չեն բժշկում հիվանդին, այլ ցույց տալով: Հայաստանը վերքերով ծածկված հիվանդ է, բայց սրտացավ բժիշկների ձեռքին է դառնում նա, որ օր ու գիշեր աշխատում են բժշկել ծանր վիրավորին, և եթե խաղաղությունը տևե, մի քանի տարիների ընթացքում ոտքի կկանգնի նա, որովհետև չատ են աշխատում, և առողջ հիմքերի վրա է դրված գործը:

Նամակներիդ մեջ փիլիսոփայություն մի՛ անիր, գրի՛ր ինձ միայն քո և Վիդենի մասին, բարեկամների մասին և գաղութի մեջ անց ու դարձի: Ինձ միայն փաստեր և դեպքեր են պետք: Դատողություններդ մի կողմ թո՛ղ:

Գրում ես, որ ասում են, թե այստեղ ես ուրախ ու քեֆով կյանք եմ անցնում, իսկ նամակները տխուր եմ գրում: Ճիշտ է և ճիշտ չէ: Երբ լինում եմ ընկերների և հասարակության մեջ՝ բնական է, որ ուրախ եմ լինում, բայց երբ մենակ եմ լինում, իհարկե, տխուր: Այդպես եմ եղել միշտ, այդպես էի և՛ Վենետիկում, և՛ ամեն տեղ» *(XIV, 202)*:

Սա գրում է գարնանը, իսկ սա՝ աշնանը (1927, 3 սեպտեմբերի).

«Ես կարող եմ գալ Եվրոպա կարճ ժամանակի համար. ես չեմ ուզում Եվրոպայում ապրել, որովհետև թե՛ հոգնած եմ եվրոպական դաղթական կյանքից, և թե ի՞նչ միտք հայրենիքից միշտ հեռու լինել: Ես հայրենիքում չա՛տ հարդված եմ ամեն կողմից: Ես տեսնում եմ, որ այստեղ՝ Հայաստանում, միայն կարող եմ ինձ բախտավոր զգալ և նպատակահարմար: Ինչքան էլ որ խորհրդային իշխանությունը բացասական կողմեր ունենա (և ունի անշուշտ), բայց և այնպես նրա դրական կողմերը գերակշռում են: Երկրի այս ավերված, թալանված և բնությունից աղքատ ու չոր երկրում, ամեն անկյունում տեսնում ես նոր իշխանության ստեղծագործ չունչը. անհուն եռանդ է թափվում երկիրը բարձրացնելու, տնտեսական, ջրային աշխա-

տանքները չտեսնված գործեր են նույնիսկ ամբողջ Միության մեջ, քանի կանալներ են չինել...

Հայերիս գլխին թափված զարհուրանքներից հետո ներկա դրությունը մի օրհնություն է, որին պիտի քացի չտալ և պիտի պաշտպանել:

Ես այսպես եմ զգում ու մտածում, և այսպես լինելով՝ ես չեմ կարող երկար ժամանակ հեռու լինել Հայաստանից: Եվ ուր էլ որ լինեմ, պիտի պաշտպանեմ այն, լավին լավ ասելով, վատին՝ վատ, ձգտելով իմ ներկայությամբ և իմ խոսքով վատը չեզոքացնել, ուղղել սխալները:

Երկրի բախտը ուղիղ ճանապարհի վրա է, և ապագան՝ մխիթարիչ: 5-10 տարվա մեջ չէր կարող մի երեսի վրա լքած երկիր Զվիցերիա դառնալ, բայց այդ կարճ միջոցում, դու հիմա կարող ես երկրի մի ծայրից մյուս ծայրը գնալ, լեռները բարձրանալ, լինել թուրքերի և քրդերի մեջ – և ամեն տեղ ապահով, անվտանգ. սա մի երազ է, որ առաջ միայն դիշերները քնի մեջ կարող էիր ունենալ: Դու կարո՞ղ էիր երևակայել, որ Սևանի վրա ամեն օր նավապնացություն, չոգենավակներ են բոլոր ափերը: Համբուրյուներ և կարոտալի բարևներ: Ավետիք» *(XIV, 212):*

Նամակները Երևանից, անկախ Իսահակյանի կամքից, շարունակվում են մոտ 4 տարի: Ի վերջո, նա հրաշքով թույլտվություն է ստանում մեկնել Եվրոպա: Եվ չնայած իր մաշկի վրա զգացած արգելքներին, նա վճռել էր վերջնականապես մշտական բնակություն հաստատել հայրենիքում:

* * *

Փարիզում 1930 թվականից մինչև 1936 թվականը Իսահակյանի ապրած ժամանակաշրջանը իսկապես կարելի է անվանել կյանք «Երկու քարի արանքում»՝ արտասահման առանց հայ-

բենիքի, և հայրենիք առանց ազատության: Եվ իհարկե քնարական բնույթի ռոմանտիկ բանաստեղծի մոտ ըստ ամենայնի պիտի հաղթեր զգացմունքը («Զգացմունքն է գերիշխանը, խելքը նրա լոկ ծառան»): Պարզապես հասունացավ մի պահ, որ առանց Արագածի բարձունքների, Արարատյան դաշտի, Սևանի և Էջմիածնի, առանց իր հարազատ ժողովրդի թիկունքն զգալու Իսահակյանը չէր կարող ապրել. «Պիտի փարվիմ չքնաղ լանջիդ» բանաստեղծը ոչ թե հայ էր ազգությամբ, այլ հենց հայը ինքն էր... Եվ եթե 1926 թվին նա Փարիզում թերևս տատանվում էր գնալ Խորհրդային Հայաստան, թե չէ, ապա 1936 թվին հենց նույն Փարիզում (եվրոպահայության յուբրահատուկ կենտրոնում) նա արդեն լավ գիտեր, որ իր տեղը «Արագածի փեչերի տակ է»՝ իր ժողովրդի կողքին: Թերևս նա գիտեր, որ այնտեղ՝ Հայաստանում, իր ուզած ձևով չէր ավարտելու «Ուստա Կարո» վեպը, և այդ «բռնության տակ» իրեն չափազանց դժվար էր լինելու նոր բաներ ստեղծելը: Նա պիտի մոռանար իր «հին ընկերներին», որոնք ոչ միայն ընկերներ էին, այլև նրա կյանքի, գոյության, պայքարի անքակտելի մասը: Եվ դեռ ավելին, նրանք պիտի խռովեին բանաստեղծից: Ո՞ւմ պիտի այսուհետ Իսահակյանը սրտաբաց նամակ գրեր և ումի՞ց պիտի պատասխան ստանար: Նա ոչ կարող էր գրել իր «հին ընկերներին», որոնց առջև փակ էին Խորհրդային Հայաստանի դռները, և ոչ էլ նոր ընկերներին, որոնց, մինչ Իսահակյանը կհասցներ տեղավորվել Երևանում, ստալինյան ռեժիմը մահվան դատապարտեց մեկ-երկու (1937-1938 թթ.) տարում: Իսահակյանի աչքի առաջ ոչնչացվեցին Սիմոն Հակոբյանը, Պողոս Մակինցյանը, Կարեն Միքայելյանը, Սահակ Տեր-Գաբրիելյանը, Արամայիս Երզնկյանը, Միսակ Էփրիկյանը, Տիգիան Տաբիճեն, Զապել Եսայանը: Եվ 1938 թ. նոսրացան, քչացան Իսահակյանի հասցեատերերի անունները: Եվ համապա-

տասխանաբար պիտի փոխվեին նրա նամակների բովանդակությունը և թեման: Եվ ստեղծագործողի ազատությունը, որը մշտապես եղել է պոետի գոյության իմաստը, նա պիտի թողներ անվերադարձ, նա պիտի «բարի ու հին» Եվրոպայում թողներ Ջավահիրին, Վավային, Արշալույսին... Եվ իր կնոջը պիտի տաներ մի երկիր, որտեղ քաղաքակրթության նորմերը դիտվում էին որպես հակահեղափոխական դրսևորումներ: Եվ նա պատրաստ էր դառնության բաժակը ըմպել մինչև վերջ՝ միայն իր ժողովրդի հետ: Եվ նա այնտեղ մենակ չէր, նրա երգերը վաղուց ի վեր օգնում էին ժողովրդին թե՛ վշտի, թե՛ ուրախության պահերին: Ինչպես նա էր պետք իր ժողովրդին, ուրիշ մեկը չկար... Նրան սպասում էին թե՛ Շիրակում, թե՛ Ջավախքում, թե՛ Արցախում... Ինչպես Վարպետը ինքն է ասել. «Բարոյական սահմանագծեր կան, որոնցից չեմ կարող անցնել...»:

Իսկ իր գնալուց դեռ մեկ տարի առաջ՝ 1935 թ., Իսահակյանը միակ որդուն՝ Վիգենին, ճանապարհ էր դրել Խորհրդային Հայաստան: Եվ կրկին մեր թեմայի շրջանակներում. անմիջականության ու անկեղծության տեսակետից նամակն ու բանաստեղծությունը մրցում են իրար հետ, սակայն արվեստի ու կատարելության իմաստով հաղթում է բանաստեղծությունը.

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Պիտի փարվիմ հնաղ լանջիդ՝
Գարնան վարդով ցնծո՛ւն.
Եվ մայրական անհուն ջնջիդ՝
Ցորեն արտով ծըփու՛ն:

Կանչում ես ինձ լուսաբարբառ
Քո սիրազեղ կոչով՝

Դեմքդ եմ տեսնում՝ նոր ու պայծառ,
Քո հնագեղ ոճով:

Վա՜ռ ու հզո՜ր քո ապագան
Կայծակում է իմ դեմ.
Դու՛, հավերժող իմ Հայաստան,
Անուն քա՛ղցր ու վսե՛մ:
1926, ապրիլի 25, Վենետիկ (I, 461):

Եվ Վարպետը վերադարձավ, առաջին պատկերը, որ նա տեսավ Սև ծովի վրա իրենց Բաթումի բերող իտալական նավից, Ղրիմի ափերն էին.

«Նոյեմբերի 28, 1936 թ. Սև ծովի վրա.

Նորից տեսա Ղրիմի ափերը: Առաջին անգամ որ տեսա՝ 20 տարեկան էի և սիրահարված. սիրահարվածի աչքերով էի նայում աշխարհին: Եվ մեծապես բանաստեղծական էին այդ ափերը՝ ժայռերը, ժայռոտ պատերը, լեռները...

Իհարկե, հիմա այն չէ՛, այն չէ՛...

...Եվրոպայից հեռանում եմ, մտաենում եմ հայրենիքին, օտար ափերը հեռանում են, մոտենում են հարազատ ափերը, մայրենի ափերը...» *(Հ. 420):*

Հայրենիքում ապրած իր կյանքի վերջին 20 տարիներին Իսահակյանը մոտ 250 նամակ է գրել, նկատի ունեմ այն նամակները, որոնց բնագրերը հայտնի են, անշուշտ կլինեն նաև նամակներ, որ մեզ չեն հասել: Այդ շրջանի նամակների հիմնական հասցեատերերն են Իսահակյանի կինը՝ տիկին Սոֆիկը, և որդին՝ Վիգենը: Նամականու երկրորդ գրքի (XIV հատորի) մոտավորապես կեսը խորհրդային երկրում գրած Իսահակյանի նամակներն են: Հայաստանյան հին ընկերների կողքին՝ Գարեգին Լևոնյան, Մարտիրոս Սարյան, Կաթողիկոս Գևորգ Ջո-

րեքչյան, Ստեփան Զորյան, Կարա-Դարվիշ, Երվանդ Քոչար, Դերենիկ Դեմիրճյան, Նիկոլ Աղբալյան, Սաքո Սուքիասյան, երևան են գալիս նոր ընկերներ՝ Խորհրդային Հայաստանի նոր սերնդի գրողներ, քննադատներ՝ Շիրազ, Ռուբեն Զարյան, Արամ Ինճիկյան, Հակոբ Խաչատրյանց, Նաիրի Զարյան, Հրաչյա Քոչար, Աշոտ Գրաչի, Անդրանիկ Հովսեփյան, Խորեն Սարգսյան, Հովհաննես Ղանալանյան, Գուրգեն Հովնան, Համայակ Սիրաս, Կամսար Գրիգորյան, Վահան Մամիկոնյան, Խաչերես Փորքչեյան: Շատ հայտնի անուններ, սակայն հարց է ծագում՝ այս ընկերներից ո՞ւմ հետ խոսեր Իսահակյանը «Հայկական հարցից», Սևրի պայմանագրից, անպատիժ մնացած թուրքական կոտորածներից, Հայաստանի պատմական հողերի բռնագրավումից, բոլշևիկյան-քեմալական դաշինքից, Հայաստանի առուծախից, Առաջին Հանրապետության անկումից, բոլշևիկյան վարչակարգի բռնություններից: Եթե անգամ Իսահակյանը կամ նրա նոր հասցեատերերն ունենային էլ նման մտադրություն, ապա, միևնույնն է, սիրտ չէին անի այդպիսի բովանդակությամբ նամակներ գրել, հիանալի իմանալով, որ նամակների մեծ մասը, այն էլ անվանի մարդկանց, գրաքննության (ցենզուրայի) կողմից պարտադիր կարդացվում է:

Բնական է, որ Վարպետն իր հին կուսակցական ընկերներից էլ ոչ մեկին չէր կարող գրել: Ինչպես և նրանք, հիանալի հասկանալով վիճակը, չէին կարող գրել, դա մեղմ ասած, արջի ծառայություն կլիներ Վարպետին: Այնպես որ, Իսահակյանի Նամականին 1930-ական թթ. երկրորդ կեսից հորդառատ գետից վերածվեց վտակի, զորեղ ազգային թեմաներին փոխարինելու եկան երկրորդական նշանակություն ունեցող հարցեր, ըստ էության չընչապատի ամենօրյա խնդիրներ, գրական կյանքի առօրյայի հոգսեր, տարբեր կարիքավոր մարդկանց անվերջանալի դիմումներ և դրանց պատասխաններ, այս ամենը որևէ

առնչություն չունեին բանաստեղծի մտաշխարհի, նրա նվիրական զգացմունքների հետ: Հասցեատերերը նոսրանում էին: Նամակները չունեին նախկին զորեղությունն ու հնչեղությունը: Եվ նրա հասցեատերերի ցանկում այլևս չկային Հայրենիքի ճակատագիր որոշող անհատներ: Ասենք, որ այդպիսի անհատներ արդեն գոյություն չունեին ողջ Հայաստանում, նրանց փոխարինելու էին եկել խորհրդային պաշտոնյաներ՝ ԿԿ առաջին քարտուղար, կառավարության նախագահ, Գերագույն խորհրդի նախագահ, պրեզիդենտ, նախարար, դեպուտատ...

Բանաստեղծն իր կյանքի վերջին 30 տարիներին ամենաանկեղծ ու անաչառ նամակագրությունն ունեցել է իր կնոջ և որդու՝ Սոֆյա և Վիգեն Իսահակյանների հետ:

* * *

Յուրաքանչյուր օր Վարպետը բազմաթիվ նամակներ էր ստանում: Շատերը ծրարի վրա պարզապես գրում էին «Հայաստան, Երևան, Ավետիք Իսահակյանին», գրում էին, իրենց սրտի խոսքն ուղղում Վարպետին: Անթիվ են նրան նվիրված բանաստեղծական ճոները, ինչպես և երիտասարդ սկսնակ հեղինակների գրվածքները, բանաստեղծությունները, որոնք խնդրում էին, որ Վարպետը որևէ կարծիք տա իրենց գրվածքների վերաբերյալ:

Ապագայում մենք կտպագրենք թե՛ անվանի մարդկանց գրած նամակները Իսահակյանին, թե՛ իր սիրելի ժողովրդից ստացած հազարավոր նամակներից լավագույն նմուշները: Նամակն իր հերթին հաստատում և վկայում է այն վիթխարի սիրո մասին, որ մեր ժողովուրդը տածել է իր Վարպետի հանդեպ:

Զարմանք է առաջ բերում, որ այն պարզ ճշմարտությունը, որ՝ Իսահակյանի խառնվածքի տեր մարդը չէր կարող ապրել առանց հայրենիքի, չըմբռնեցին նրա հին ընկերները, բանաստեղծին տարիներ շարունակ լմացած, բայց ի վերջո ճշմարտությունը խեղաթյուրող Սիմոն Վրացյանը և Վարդգես Ահարոնյանը, որոնք Իսահակյանի՝ իրենց գրված նամակները հրատարակելիս կից առաջաբաններում բանաստեղծի վերադարձը Խորհրդային Հայաստան բնութագրել էին որպես քայլ՝ արած իզիվ հացի:

Սիմոն Վրացյանը գրում էր.

«Նա չէր ծածկում, որ եթե կարողանա արտասահմանում մնայուն եկամուտ ունենալ, չի երթա Երևան: Բայց գնաց՝ հետևելով «ուր հաց, հոն կաց» փիլիսոփայության»[1]:

Հարց է ծագում, Սիմոն Վրացյանը, եթե ինքը կարողանում էր իր գոյությունը պահել արտասահմանում, ապա արդյո՞ք չէր մտածում, թե Իսահակյանը, որը շատ ավելի մեծ ճանաչում ուներ, քան «Դաշնակցության վետերանը», մի՞թե չէր կարողանա Փարիզում, առավել ևս Ամերիկայում (որտեղից նրան վաղուց հրավիրում էին) ունենալ ապահով կյանք: Նման նեղ (տենդեցիոզ) մտածողությունն էր պաշարել նաև Վարդգես Ահարոնյանին:

Ի՛նչ խոսք, որ դա Վրացյանի և Ահարոնյանի իրավունքն էր, թե ինչպես կգնահատեին Իսահակյանի վերադարձը Խորհրդային Հայաստան:

Սակայն բացեիբաց մեղանչել ճշմարտության դեմ, ինչպես դա անում է Սիմոն Վրացյանը՝ գրելով իր գրքում.

«Բացի պալատական քնարերգությունից, Երևանում Իսահակյանը մեկ տող չհորինեց, որ հարստացներ հայոց գրակա-

---

[1] Ս. Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ, 1962, տպարան «Մշակ», էջ 336:

նուիրյունը ու ունէ բան ավելցներ նախկին Իսահակյանի ստեղծագործության վրա»[1]:

Այս չարամիտ կարծիքին կպատասխանենք Իսահակյանի 1936-1957 թթ. գրված հարյուրավոր չքնաղ ստեղծագործություններից միայն մեկով.

ՄԵՐ ՊԱՏՄԻՉՆԵՐԸ ԵՎ ՄԵՐ ԳՈՒՍԱՆՆԵՐԸ

Նվեր մեր ժողովրդական վեպի՝
«Սասունցի Դավիթ»-ի հազարամյակին:

I

Մեր հոյակապ հին վանքերի մութ խուցերում՝ մենության մեջ,
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,
Մի նշխարով, մի կում ջրով և ճգնությամբ պիշերն անքուն,
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վըրա դժգույն –
Եղեռնները, նախճիրները հորդանների արյունըռուշտ,
Փլուզումը հայրենիքի և ոսոխի սուրը անկուշտ:
Եվ ողբացին լալահառաչ դժխեմ բախտը Հայաստանի
Եվ հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի:

II

Մեր դեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օջախի շուրջը նստած՝
Գուսանները մեր խանդավառ, առջևները դինի և հաց,
Վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծազոր
Եվ ծաղրեցին պարտությունը ոսոխների մեր բյուրավոր:
Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող ժողովուրդի,
Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդուց որդի.

---

[1] ***Սիմոն Վրացյան***, *Ավետիք Իսահակյանի նամակների առնչությամբ. «Հին թղթեր նոր պատմության համար» գրքում, Բեյրութ, 1962, էջ 337:*

Տեսան չքեղ մեր ապագան, անընկճելի ագատ ոգին,
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացած Թուր-Կայծակին:

1939 օգոստոսի 3,
Ծաղկաձոր

16 տողում խտացված է ողջ հայ ժողովրդի ողբերգական պատմությունը և հերոսական մաքառումը:

Միևնույն ժամանակ ուզում եմ ասել, որ ո՛չ Սիմոն Վրացյանի, և ո՛չ էլ Վարդգես Ահարոնյանի մասին չպիտի դատել Խորհրդային Հայաստան Վարպետի վերադարձի և խորհրդային իշխանությունների հետ ունեցած հարաբերությունների գնահատականով:

Այդ գնահատականները, քաղաքական առումով, հաճախ կարող էին լինել սուբյեկտիվ և միտումնավոր: Պարզունակացնել Իսահակյանի վերադարձը Հայրենիք հանուն մի կտոր հացի, նշանակում է ցույց տալ սեփական մտածելակերպի խեղճությունը: Իսահակյանի նման մեծության անունը տալիս ընդհանրապես պետք է զգույշ լինել. մտածել, թե ով որքան է հիշվելու, և երբ հիշվելու է, ի՞նչ ենթատեքստում և ինչ գնահատականով:

Մինչդեռ ուզում եմ հիշել Սիմոն Վրացյանի գրածը Իսահակյանի մասին նրա հենց նույն գրքի՝ «Ավետիք Իսահակյանի նամակների առնչությամբ» առաջաբան-հոդվածում.

«Ավետիքը և ես երկար տարիներ եղել ենք գաղափարի և անձնական մտերիմ ընկերներ: Ապրել ենք սիրտ սրտի, մտածել ու երազել, ուրախացել ու տխրել ենք միասին. ոգևորվել ու պայքարել ենք միևնույն իդեալների համար: Մեր կյանքի այդ ժամանակաշրջանից հիշատակ են մնացել Ավետիք Իսահակյանի անկեղծ և սրտալի նամակները»[1]:

---

[1] *Ս. Վրացյան. «Հին թղթեր նոր պատմության համար», Բեյրութ, տպարան «Մշակ», 1962, էջ 335:*

Ինչպես և Վարդգես Ահարոնյանի տողերը, որ նա գրել է «Ավետիք Իսահակյանի նամակները» (Գահիրե, 1959) ժողովածուի՝ «Ի՞նչ են ասում Ավետիք Իսահակյանի նամակները» իր ծավալուն վերջաբանում: Վ. Ահարոնյանն իր գրվածքի եզրափակիչ մասում բերում է Իսահակյանի հետևյալ խոսքերը Հովհ. Թումանյանի մասին.

«Այս տողերս գրելուս մի վայրկյան մտքես չի հեռանում խեղճ Օհաննեսը: Ինչքան էլ թերի կողմեր ունենար Օհաննեսը (հասարակական-քաղաքական տեսակետից), բայց և այնպես մի լուսավոր աստղ էր, հայության հանճարին դարերով պատիվ բերող»:

Ապա Վ. Ահարոնյանը շարունակում է.

«Հովհաննես Թումանյանի մասին Ավետիք Իսահակյանի այդ տողերը ամենայն իրավամբ և արդարությամբ մենք կարող ենք վերադարձնել իրեն՝ – Հայ դուսան – Վարպետ Ավետիք Իսահակյանին»[1]:

* * *

Միաժամանակ դժվար չէ գիտակցել, որ Խորհրդային Հայաստանում կյանքի վերջին քսանամյակը անցկացրած բանաստեղծի գլխով շատ բան է անցել՝ 1937 թ անհատի պաշտամունքի տարիների աննախադեպ բռնությունները, Հայրենական մեծ պատերազմը, որի ընթացքում 300.000 հայ ռազմիկներ հերոսաբար զոհվեցին, 1949 թ հազարավոր անմեղ մարդկանց աքսորը՝ Ալթայի երկրամաս, և նաև հայրենադարձության եր-

---

[1] *«Ավետիք Իսահակյանի նամակները» գրքի՝ Վ. Ահարոնյանի «Ի՞նչ են ասում Ավետիք Իսահակյանի նամակները», վերջաբանից, Գահիրե, 1959, էջ 168-169:*

կու խոշոր քարավաններ՝ 1936 և 1949 թթ., էջմիածնում՝ երկար տարիներ թափուր մնացած Ամենայն հայոց գահակալի ընտրությունն, Հայաստանի դիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրում (1943 թ.):

Մի ամբողջ դրական համաստեղության Վարպետը ցույց տվեց «Տաճար տանող ճամփան», հոգևոր հայր հանդիսացավ, չթողեց հայության կանթեղը մարի Արցախում և Ջավախքում...

Պատերազմի ավարտից անմիջապես հետո հավատացած, որ Արևմտյան Հայաստանի բռնագրավված հողերը հետ կտրվեն մայր-հայրենիքին, Իսահակյանը ոգևորված գրում է Փարիզում լույս տեսնող «Ժողովուրդ» հայկական թերթի խմբագրությանը (1945 թ. 10 հուլիսի, Երևան).

«Բարբարոսների սրից մազապուրծ փրկված թափառական, հալածական հայերը պիտի ստանան իրենց անպարտելի իրավունքը – ազատագրված հայրենիքը: Եվ պիտի իրականանա մեր դարերի բաղձանքը – մեր հայրերի նվիրական հողերում կարողանալ աշխատել և վայելել հայրենիքի քաղցրությունը: Արտասահմանի հայությունը բոլորանվեր մի սիրտ ու մի հոգի, պիտի նպաստեն այս վսեմ, այս ամենաարդար գործին» *(XIV, 496):*

Իսահակյանի ուշ շրջանի նամակներում, ինչպես հատուկ է նրա ողջ ստեղծագործությանը, շաղ են տված մտքի մարգարիտներ, որոնք կարող են և՛ յուրահատուկ աֆորիզմներ համարվել: Ինչպես օրինակ, նոր նախիջևանցի մշակութաբան Հաչերես Փորքչեյանին գրած նամակում (1952, 26 մայիսի).

«Ես չեմ սիրում դավաճան, անհավատարիմ մարդկանց: Մարդ պետք է հավատարիմ լինի իրեն, իր խոսքին, իր բարեկամին, իր ընկերին, ազգին, հայրենիքին: Արաբական առակն ասում է. «Մի դավաճանիր այն մարդուն, որը քեզ հավատում է, եթե դու նույնիսկ պաշտոնով լրտես լինես»:

«Ուխտադրուժը ամենամեծ մեղքն էր արխական կրոնի և ժողովուրդների մեջ: Իմ կարծիքով մորալի մեջ, էթիկայի նկատմամբ, ռելատիվիտ (հարաբերականություն – ֆրանսերեն) չպետք է լինի, այլ բացարձակություն, աբսոլյուտ» *(XIV, 557)*:

1953 թվից՝ Ստալինի մահից հետո, ինչպես և նրա վասալ Բերիայի դատապարտումից հետո, Իսահակյանը, ժողովրդի լեզվով ասած, «Ազատ շունչ քաշեց...»:

Մի առանձին ոգևորությամբ պոետը գրում է Ս. Պետերբուրգում ապրող հայ գրականագետ Կամսար Գրիգորյանին (1954, 14 փետրվարի).

«Երևի գիտես, որ վերջին ամիսներս Հայաստանում մեծ աշխուժություն է տիրում... Բերիայի խայտառակ անկումը և արժանի պատիժը շատ ուրախացրեց մեզ, այլևս հայ ժողովրդի գլխին չարիք նյութող չկա. հայ ժողովրդի դահիճը չկա» *(XIV, 578)*:

Շուրջ 68 տարի հետևողականորեն Իսահակյանը նամակներ է գրել, նամակներ, իհարկե, գրել են միլիոնավոր մարդիկ, սակայն միլիոնավոր մարդիկ կարդում են միայն մեծ, անվանի, ականավոր մարդկանց նամակները: Եվ նման անհատների նամակները համարվում են նրանց դասական ժառանգության անքակտելի մասը: Այդ թվում և Ավետիք Իսահակյանի նամակները, որոնք պահվում են թե՛ մեծ թանգարանների ֆոնդերում, թե՛ մեծ ստեղծագործողների տուն-թանգարաններում, թե՛ կրոնական հաստատությունների ձեռագրատներում, թե՛ ազգային կուսակցությունների, կրթական կենտրոնների և հայանի պարբերականների արխիվներում:

Մեծ է Իսահակյանի Նամականու ինքնագրերի գտնվելու աշխարհագրական քարտեզը: Ինչպես և պատկառելի է Իսահակյանի նամակների հասցեատերերի ցանկը:

Ակադեմիականի XIII և XIV հատորներում մենք ընթերցողին ենք ներկայացնում 14-ից մինչև 82 տարեկան Ավետիք

Իսահակյանի գրած չուրջ 850 նամակ: 850 այցեքարտ և 850 խոստովանություն: Մեծ կյանքի պատմություն, որ կպատմեն նրա լավագույն դեսպանները:

Եվ հարկ է արձանագրել, որ նամակը գրողի ստեղծագործության այն միակ ժանրն է, որ ինքը չի կարող ընթերցել: Նամակը գրեցիր, և այն գնաց՝ պատկանելով հավերժությանը:

Ինչ խոսք, Իսահակյանին շատ հետաքրքիր կլիներ կարդալ իր նամակները: Հեղինակի փոխարեն այդ հաճույքը կվայելեն Իսահակյանի ակադեմիականի հազարավոր ընթերցողները:

Հունվար, 2021 թ., Երևան

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ[1]

Ա

Աբաշիձե Վասո - 418
Աբաս, Աբբաս (տե՛ս Իսահակյան Աբաս)
Աբասթուման - 212, 423-425, 427, 435
Աբդալյան Սեդրակ - 327
Աբել վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 149
Աբելյան Հովհաննես - 16, 177
Աբելյան Պողոս - 58, 293, 312, 320, 329, 367
Աբեղյան Մանուկ - 38, 72, 126, 140, 490
Աբով Գ§որգ - 387, 459
Աբովյան Խաչատուր - 61, 80, 215, 227, 279, 314, 411, 511
Աբովյան Սոֆիկ - 178
Աբովյան Վիկտորիա - 176, 178
Աբրահամ (տե՛ս Ղուկասյան Աբրահամ)
Աբրահամյան Աշոտ - 506
Աբրահամյան Հովհաննես (Տեր-Աբրահամյան) - 552
Ադամյան Սուրեն - 149, 154
Ադոնց Նիկողայոս, Նիկոլայ - 17, 146, 147, 148, 152, 153, 154, 155, 180, 181, 184, 185, 188, 192, 193, 194, 196, 199, 202, 204, 207, 209, 212, 214, 216, 218, 220, 226, 230, 235, 237, 239, 241, 243, 247, 248, 251, 255, 258, 259, 262
Ադրբեջան - 29, 183, 267-269, 281, 431, 435, 488
Ազնակյան Եզնիկ - 602
Ազոլո - 50, 75
Աթաբեկյան Լ§ոն - 610, 611
Աթաբեկյան Մարգարիտա - 415, 442, 445, 446, 450, 487
Աթայան Ռաֆայել - 359
Աթենք - 375, 376, 378, 380, 382-389, 519
Աթթարյան - 370
Աթիլլա - 451
Ալազան Վահրամ - 162, 320, 358, 363
Ալալիմճյան Միհրան - 119
Ալամդարյան Հարություն - 552
Ալբերոնի - 173
Ալեմշահ Գուրգեն - 156
Ալեքսան (տե՛ս Իսահակյան Ալեքսան)
Ալեքսան (տե՛ս Զատըրճյան Ալեքսան)
Ալեքսանդրապոլ - 29, 69, 89, 180, 300, 501
Ալեքսանյան Ալեքսան - 608
Ալեքսանյան Նվարդ - 612, 613

[1] Անվանացանկում ընդգրկված են միայն բնագրերում կիրառված անձնանունները § տեղանունները:

Ալեքսանյան Տիգրան - 512
Ալթունյան Սարգիս - 368, 369
Ալիխան - 557
Ալիխանյան Իսահակ - 480
Ալիշան Ղ§ոնդ - 394
Ալիս (Ռաֆայել Շիշմանյանի կինը) - 377
Ալիս - 232
Ալմագուլյան - 536
Ալմաստ (Ավ. Իսահակյանի մայրը) - 501
Ալյանաքյան Լյութֆի - 56, 132
Ալոյան Աշիկ - 483
Ալպյան լեռներ - 112
Ախալցխա - 385, 421-426, 432, 435, 566
Ախալքալաք - 59, 164, 425, 431, 432
Ախիկյան Վրթանես - 39
Ախուրյան - 393
Ակինյան Ներսես - 23
Աճարոնյան Ավետիս - 29, 121, 140, 147, 150, 337, 343, 344
Աճարոնյան Վահե - 618
Աճարոնյան Վարդգես - 27
Աճարոնյան Վուրիկ - 150
Աղամյան Մաքրուհի - 558
Աղայան Էդվարդ - 536
Աղայան Հայկ - 262
Աղայան Ղազարոս - 409
Աղաջանյան Ստեփան - 193, 320, 351
Աղասեր(յան) Հակոբ - 104, 105
Աղասյան Վարսենիկ - 442
Աղաստաֆա - 344
Աղավնի (տե՛ս Գրիգորյան Աղավնի)
Աղավնի (տե՛ս Մեսրոպյան Աղավնի)
Աղբալյան Նիկոլ - 30, 49, 99, 113, 121, 130, 160, 170, 290
Աղ-Բուլախ, Աղ-Բուրախ - 422, 423
Աղթամար - 351
Աղջաղալե - 473
Աճառյան Հրաչյա - 352
Աճեմյան, Աջեմյան Հարություն (Փոյուգյան Սրինգ) - 38, 46, 47, 62, 187, 189
Ամատյան Գարեգին - 160, 298
Ամերիկա - 11, 14, 20, 22, 45, 46, 50, 53, 86, 95, 132, 204, 209, 240, 255, 308, 318, 322, 329, 333, 473, 514, 515, 557, 561, 568
Ամիրխանյան Համո - 436
Այզենշտեյն Ս. - 335, 356
Այվազյան Եղիշե - 26
Այրարատ - 171
Անահիտ (Ջիթողցոնց) - 178
Անանիկյան Մարտիրոս - 51
Անանուն Դավիթ (Տեր-Դանիելյան) - 39, 62, 115, 123, 124, 129, 133, 134, 136, 139, 157, 162, 164, 287, 344
Անգլիա - 102, 349, 451
Անդալուզիա - 93
Անդրանիկ (տե՛ս Հովսեփյան Անդրանիկ)
Անդրեյ (Իրինդից) - 471, 472
Անժիկ - 619

Անի - 15, 33, 143, 168, 169, 351, 432, 437, 438, 487
Անուսցիո Գաբրիելե - 298
Անուշ (տե՛ս Թումանյան Անուշ)
Անտոն վարդապետ - 178, 187, 188
Աշիկ (տե՛ս Ղազարյան Աշիկ)
Աշխեն (տե՛ս Թումանյան Աշխեն)
Աշխեն - 147, 149
Աշոտ (տե՛ս Գրաշի Աշոտ)
Աշոտ (տե՛ս Հովհաննիսյան Աշոտ)
Աշֆալ (Աշոտ Փալանջյան) - 488
Աջեմ (տե՛ս Աճեմյան Հարություն)
Առուշանյան (Առուշան) Շմավոն - 496, 593
Առստամյան Գ§որգ - 127
Ասլանյան Թովմաս - 176
Ասլանյան Լուիզա, Լաս - 381, 384
Ասլանյան Մկրտիչ - 401, 410, 422, 424, 424, 426, 428,
Ասլանյան Վարդգես - 581
Աստղիկ (Դսեղից) - 90
Աստղիկ (Եփրեմ խանի դուստր) - 96
Աստղիկ (Տեր-Օհանյան ընտանիքից) - 272
Աստվածատուրյան Գ§որգ - 39
Աստվածատուրյան Խաչատուր - 38
Ասրի-բեկյան Ալեքսանդր - 149
Ասքանազ (տե՛ս Տեր-Սիմոնյան Ասքանազ)
Ավագյան Հովհաննես - 7, 17, 51, 141, 145, 171
Ավագյան Մամիկոն - 564, 565
Ավդալբեգյան Թադ§ոս - 312, 331
Ավետիս (Փարիզից) - 243
Ավետիսյան Արաքս - 454
Ավետիսյան Սմբատ - 455
Ավետիք (Վենետիկի Մխիթարյան հայրերից) - 178
Ավիկ (տե՛ս Իսահակյան Ավետիք)
Ավստրիա - 40
Ատլանտյան օվկիանոս - 95, 569
Ատրյան Վարդան, Վարդան-Աշոտ - 455, 545
Ատրունի - 388
Ատրպատական - 341
Արագած, Ալագյազ - 87, 100, 286, 467, 469, 481, 559
Արազի Մովսես - 367
Արամ (տե՛ս Իսահակյան Արամ)
Արամ (տե՛ս Ղանալանյան Արամ)
Արամ Զապել - 602
Արարատ - 87, 143, 343
Արարատյան դաշտ - 105, 128
Արաքս, Արազ - 344, 394, 481, 627-629
Արաքսի (Փարիզից) - 259
Արաքսմանյան Ալեքսանդր - 433, 464
Արգենտինա - 262
Արեշյան Սալոմե - 493
Արզնի - 236
Արթիկ - 255
Արծրունի Գրիգոր - 314
Արծրունի Վահան - 39, 452
Արղության Հովսեփ, Իշխան - 148, 149, 154
Արման (տե՛ս Սարյան Արման)
Արմաշ - 605
Արմավիր - 552

Արմեն Գարո - 95, 113
Արմենակ (Դսեղից) - 489, 490
Արմենակ (Իրինդից) - 471, 473, 482, 490
Արմենուհի (տե՛ս Տիգրանյան Արմենուհի)
Արմենուհի, Արմիկ (Իսահակյան Աբասի կինը) - 334, 619
Արմինե Ավետովնա (Կարեն Միքայելյանի կինը) - 330
Արշակ - 468
Արշակ թագավոր - 124
Արշակ խան (տե՛ս Գորոյան Արշակ)
Արշավիր (տե՛ս Տեր-Սիմոնյան Արշավիր)
Արուս (Իրինդից) - 471, 473, 482
Արուս (տե՛ս Ոսկանյան Արուս)
Արսեն (տե՛ս Եսայան Արսեն)
Արսեն քեռի, Արսեն եպիսկոպոս (տե՛ս Ղլտճյան Արսեն)
Արսեն, հայր Արսեն (տե՛ս Ղազիկյան Արսեն)
Արտաշես (Ռումինիայից) - 336
Արտաշես (տե՛ս Դարբինյան Ռուբեն)
Արտեմիս (տե՛ս Տեր-Օհանյան Արտեմիս)
Արտո (տե՛ս Եղիազարյան Արտավազդ)
Արփաչայ, Գարեգետ - 292, 391
Արփիկ (տե՛ս Թումանյան Արփիկ)
Արփինե (տե՛ս Մելիք-Ազարյան Արփինե)
Աֆրիկյան Գեղամ - 366, 384, 387
Աֆրիկյան Գ§որգ - 175
Աֆրիկյան Դշխուն - 201, 366, 388
Աֆրիկյան Հեղինե - 201, 366

Բ

Բաբա§ Անտոնինա - 69
Բաբա§ Գրիգորիս - 40, 68, 70
Բաբա§ Մարիա - 70
Բաբա§ Նինա - 69
Բաբայան Ադոլֆ - 69
Բաբայան Կ. (դերձակ) - 173, 174
Բաբայաններ - 75, 175, 178
Բաբիկյան Եղիշե - 81, 300
Բաբլումյան - 592
Բագու, Բաքու - 40, 235, 237, 249, 250, 269, 270, 271, 407, 413, 451, 487, 488, 543, 575, 592, 611
Բագրատ (տե՛ս Իսահակյան Բագրատ)
Բագրատունի Հակոբ - 93
Բադիկյան Լ§ոն - 486
Բաթում - 29, 174-177, 300, 373, 375, 376, 380, 382, 383, 385, 386, 427
Բալաքյան Գրիգոր եպիսկոպոս - 147, 148, 152
Բալտոուշյոտիս Յուրգիս - 260
Բախշի (տե՛ս Իշխանյան Բաշխի)
Բակունց Ակսել - 162, 322
Բակուրիանի - 417, 424
Բաղդասարյան Անդրանիկ - 600
Բաղդասարյան Ար§ - 519
Բաղդասարյան Գ. - 596
Բաղրամյան Հովհաննես - 599
Բայլմոնտ Կոնստանդին - 98

Բարաթաշվիլի Նիկոլոզ - 274, 517, 540
Բարխուդարյան Աշխեն - 401
Բարխուդարյան Սաշա (Ալեքսանդր) - 401
Բարսեղյան Ամատունի - 497
Բարսեղյան Գեղամ - 532
Բեգլար (Վահան Նավասարդյանի տղան) - 113
Բելա, Բելլա (տե՛ս Իսահակյան Իզաբելլա)
Բելառուսիա - 191
Բելգիա (Բելճիկա) - 147
Բելի-Կլյուչ - 425, 427
Բեկզադյան Ալեքսանդր, Սաշա - 58, 81
Բեկզադյան Տիգրան - 152
Բեկլարյան-Զավրյան Նինա - 204
Բեյրութ - 567
Բեռլին, Բերլին - 236, 237, 240, 245, 246, 248, 256, 264, 281, 283, 332
Բերգամո - 30
Բերիա Լավրենտի - 578
Բիթլիս - 29
Բինե Ալֆրեդ - 64
Բյորնս Ռոբերտ - 144
Բոդենշտետ Ֆրիդրիխ - 537
Բոդլեր Շառլ - 98, 107, 143
Բոթ§ Խրիստո - 579
Բոճն Ջորջ - 64
Բոստոն - 11, 42, 84, 95, 371, 499
Բորժոմ - 417, 419, 420, 422, 428, 435
Բորիս (տե՛ս Խաչատրյան Սմբատ)
Բորյան Գուրգեն - 395, 396, 408, 546
Բջնի - 458
Բրյուսով Վալերի - 98, 276, 348, 604
Բրյուսովա Իոաննա - 604
Բրյուքսել - 242
Բուդաղյան Աննա - 148, 302, 362
Բուդաղյան Արմենակ - 150, 154
Բուդաղյան Հովակիմ - 129
Բուենոս Այրես - 262, 340
Բուլգարիա - 340, 515, 579
Բունիաթյան Ն. - 331

Գ

Գաբիկյան Խորեն - 175, 178, 187, 188, 192
Գաբրիել (տե՛ս Նահապետյան Գաբրիել)
Գաբրիել, Գաբո (տե՛ս Քոչարյան Գաբրիել)
Գաբրիելյան Սահակ (տե՛ս Տեր-Գաբրիելյան Սահակ)
Գալճյան Հայկ - 366
Գալուստ (տե՛ս Քոթանյան Գալուստ)
Գահիրե (Կահիրե) - 140
Գամառ-Քաթիպա (տե՛ս Պատկանյան Ռաֆայել)
Գամսախուրդիա Կոնստանտին, Կոտե - 458, 459, 480, 481
Գանձա - 269
Գանձակ - 164
Գանձասարակյան Գ§որգ - 612
Գառնի - 207, 331, 458
Գասպարյան Արշավիր - 507
Գասպարյան Երվանդ - 39
Գարաքաշյան Մադաթիա - 552

Գարեգին կաթողիկոս - 516, 560
Գարեգին վարդապետ - 68
Գարիբյան - 282
Գարուշ (տե՛ս Իսահակյան Գարուշ)
Գե Բաո Ցյուան - 595
Գեղամ (տե՛ս Իսահակյան Գեղամ)
Գեղամ (տե՛ս Կոստանյան Գեղամ)
Գեղարդ - 207, 458
Գեորգ վարդապետ (Մխիթարյան միաբանության հայրերից) - 36
Գ§որգ (տե՛ս Աֆրիկյան Գ§որգ)
Գ§որգյան Մամիկոն - 39, 178, 322
Գերմանիա - 16, 29, 125, 348, 349, 362, 466, 502, 503, 515
Գերցեն - 584
Գինոսյան Մուշեղ - 563
Գինովաբե (տե՛ս Ջաոիֆյան Գինովաբե)
Գյանջուցյան Ռուբեն - 485
Գյոթե Վոլֆգանգ - 46, 98, 107, 144, 347-349, 390
Գյուլ-Նազարյան Պոլինա - 40, 41, 46
Գյուլ-Նազարյան Տատյանա - 40
Գյուլիզար - 427, 451
Գյուլխանդանյան - 121
Գոգոլ Նիկոլայ - 162, 548-550
Գոլդսմիթ Ոիխարդ - 64
Գոլիա (տե՛ս Օհանջանյան Գալյա)
Գորիս - 205
Գորկի Մաքսիմ - 232
Գորոդեցկի Սերգեյ - 617
Գորոյան Արշակ խան - 93, 332
Գրանադա - 93
Գրաշի Աշոտ - 413, 430, 435, 442, 444, 445, 446, 450, 486, 487
Գրիգորյան Աղավնի - 583
Գրիգորյան Արշալույս, Լուլու - 305, 306, 338, 361,364
Գրիգորյան Բերսաբե - 559
Գրիգորյան Եվգենյա - 70
Գրիգորյան Ջավեն - 528, 578
Գրիգորյան Լուսիկ - 70
Գրիգորյան Կամսար - 534, 573, 578, 582, 591, 603, 613
Գրիգորյան Հրաչյա - 396, 397, 401, 470
Գրիգորյան Ջուլետա - 586
Գրիգորյան Ռոբերտ - 70
Գրիգորյան Ս. - 436
Գրիգորյան Վահան - 41, 423, 520
Գրիգորյան - 534
Գրինֆիլդ Ջեյմս - 301, 341, 342
Գրիշաշվիլի Իոսիֆ - 277
Գրքեշարյան Հակոբ - 506
Գրքյաշարյան Սիմոն - 519
Գուլակյան Արմեն - 507
Գուլոյան Աբրահամ - 382, 383
Գույումճյան Միսակ - 105
Գույումճյան Վահե - 104

Դ

Դաբաղյան Համազասպ - 584
Դադիանի Շալվա - 407
Դամասկոս - 513
Դանիել, Դանուշ (տե՛ս Շահվերդյան Դանիել)
Դանիել-Բեկ - 251
Դանտեկ Ֆելիքս - 64

Դաշտենց Խաչիկ - 468, 470, 472, 473
Դավթյան Մարգար - 541
Դավթյան Մխիթար - 468
Դավթյան Ցոլակ - 524
Դավիթ (տե՛ս Անանուն Դավիթ)
Դարալագյազ (Վայոց Ջոր) - 560
Դարբինյան Արտակ - 289
Դարբինյան Ռուբեն, Արտաշես - 9, 24, 36, 42, 43, 46, 61, 75, 88, 90, 97, 107, 112, 119, 121, 162, 168, 170
Դարբնի Արշավիր - 541
Դարո - 574
Դե-Մարքիներ - 187, 189
Դեմիրճյան Դերենիկ - 9, 73, 107, 114, 115, 161, 177, 293, 312, 320, 322, 329 331, 337, 344, 352, 367, 413, 467, 541, 543
Դեպերե Շառլ - 64
Դերբեդարյաններ - 188, 196
Դերենիկ (տե՛ս Դեմիրճյան Դերենիկ)
Դզնունի Դանիել - 506
Դիլիջան - 176, 582, 583, 616
Դիլ Շարլ - 260
Դիտրոյտ - 84
Դյուրեր - 94
Դշխուն, Դոշո (տե՛ս Աֆրիկյան Դշխունի)
Դոբրոլյուբով Նիկոլայ - 604
Դոդե Ալֆոնս - 172
Դոդե Լեոն - 172
Դոստոևսկի Ֆյոդոր - 26, 107
Դոնոյան Հայկ - 430
Դսեղ - 488-490
Դրամբյան Ռուբեն - 238
Դրաստամատ (տե՛ս Տեր-Սիմոնյան Դրաստամատ)
Դուման - 127
Դուրյան Եղիշե (եպիսկոպոս) - 328
Դուրյան-Արմենյան Եկատերինա, Կատյա - 577

Ե

Եգիպտոս - 99, 131, 280, 340, 362
Եղիա (Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ) - 178
Եղիազարյան Արտո, Արտավազդ - 279, 280
Եղիազարյան Ջաքո - 39
Եղիազարյան (Ջարյան) Լ§ոն - 53, 66, 67, 70
Եղիազարյան Հովհաննես - 50
Եղիշե - 291
Եհիկոլոպյան Հովհաննես (Իվան Էհիկոլոպով) - 455, 521, 523, 536
Եսայան Արսեն - 268, 383
Եսայան Զապել - 320
Եսայան Հրանտ - 321
Եսայան Սոֆի - 322
Եսենին Սերգեյ - 348
Եվգենով Սեմյոն - 412
Եվրոպա - 29, 42, 54, 77, 84, 129-131, 138, 143, 154, 158, 164, 166, 172, 177, 184, 195, 200, 210, 217, 219-223, 238, 242, 243, 253, 277, 301, 308, 319, 329, 343, 378, 396, 502, 503, 514, 557, 622

Երեմյան Արամ - 23, 506
Երֆան - 9, 15, 40, 57, 60-62, 72, 81, 83, 99, 105, 106, 109, 114, 115, 121, 125, 126, 138-141, 148, 151, 166-168, 171, 174-176, 179, 180-188, 190-195,197, 198, 200-208, 212-230, 232-244, 246-271, 273-277, 279-287, 290, 291, 295, 296, 311, 312, 317, 319, 321, 322, 325, 329, 331, 335, 341, 344, 351, 354, 358, 362, 367, 370, 371, 373-382, 385-388, 390-392, 394-398, 400-418, 420-424, 426-440, 442-446, 449-451, 454-460, 464-468, 470-481, 483-498, 500-512, 516-528, 530-551, 553-555, 557-575, 578-619
Երզնկա - 16
Երզնկյան Արամայիս - 80, 87, 241
Երվանդ (տե՛ս Խաթանասյան Երվանդ)
Երվանդ (տե՛ս Քոչարյան Երվանդ)
Երվանդյան (Տիգրան Զավենի կինը) - 248
Երուսաղեմ - 352
Եփրեմ խան - 96

Զ

Զանգեզուր - 205, 207, 406, 459, 481, 488, 491
Զաուտներ - 80
Զաուիֆյան Գինովաբե - 231
Զավեն (տե՛ս Գրիգորյան Զավեն)
Զավեն (տե՛ս Տիգրան-Զավեն)
Զարգարյան Գուրգեն - 593
Զարդարյան Ռուբեն - 607
Զարեհ Պեյ - 318
Զարիկ (Եր. Լալայանի կինը) - 178
Զարիֆյան Հովհաննես - 16
Զարյան Կոստան - 58, 66, 71, 72, 80, 147, 154, 155, 329, 372
Զարյան Նաիրի - 396, 401, 413, 421, 434, 448, 467, 469, 473
Զարյան Ռուբեն - 398, 405, 422, 450, 484
Զարուհի (տիկին) - 292
Զաքարյան Ժորժ - 12, 34, 35, 94, 95, 117
Զաքարյան Հովակիմ - 605
Զաքարյան Վահան - 300, 301, 332, 339, 341
Զմյուռնիա - 33, 385, 399
Զոհրապ Գրիգոր - 607
Զոհրապյան Հովհաննես - 207
Զորյան Ստեփան - 39, 58, 72, 73, 106, 140, 408
Զվիցերիա - 211
Զուրաբ - 539

Է

Էլդորադո - 303
Էլզա - 49
Էլիզե (Փարիզից) - 147, 149, 202
Էլլա - 113
Էջմիածին - 184, 364, 474, 501, 502, 524, 526, 575

Էսենտուկի - 450, 453, 454
Էրզրում - 29
Էփրիկյան Միսակ - 268, 270, 293, 326

Թ

Թագոր Ռաբինդրանաթ - 173, 588
Թագուհի (Գեղամ Կոստանյանի քույրը) - 263
Թադեոսյան Սամսոն - 147, 149
Թադֆոսյան Արուս - 574
Թաթուլ (տե՛ս Հուրյան Թաթուլ)
Թալես - 353
Թալիշ - 473
Թահմազյան Գուրգեն, Թահմազ - 284, 303
Թաղիվերդիֆա Ռովսար - 542
Թամանյան Ալեքսանդր - 39, 290, 332, 344
Թամարա (ժնֆից) - 179, 185
Թամարա (Հմայակ Սիրասի կինը) - 544
Թամարա (Միսակ Էփրիկյանի կինը) - 268, 270, 326
Թամարա (տե՛ս Թումանյան Թամարա)
Թամարա - (Իսահակյանների հարսը) - 199, 201, 208, 219, 223
Թապաքյան Վահան - 370
Թավրիզ - 45, 341
Թարգյուլ Լյուսի - 491
Թելավ - 501
Թեհրան - 280
Թեոդիկ - 20, 238
Թեոլեմեզ, Թերլեմեզյան Ռուբեն - 23, 24, 320
Թերլեմեզյան Փաոոս - 255, 293, 312, 320, 322, 352
Թեքեյան Վահան - 290
Թեքեյան Տիրան - 368-370
Թիեպոլո Ջիովաննի - 110
Թիթրովա Ժենյա - 558
Թինթորետո - 110
Թիրոլի լեռներ - 80
Թիֆլիզ, Թիֆլիս - 9, 15, 17, 69, 70, 78, 96, 100, 101, 110, 115, 132, 167, 168, 175, 177-179, 181, 185, 194, 200, 202-204, 208, 217, 218, 221, 223-225, 227-230, 235, 239, 248, 249, 262, 268, 271, 272, 277, 280-283, 287, 291, 371, 407, 420, 422, 423, 425, 427, 429, 431, 445, 451, 461, 471, 479, 491, 503, 519, 551, 581
Թլկատինցի Հովհաննես - 99
Թոթովենց Վահան - 38, 58, 61, 72, 73, 320, 322, 367
Թորամանյան Թորոս - 312, 320, 331
Թորգոմյան Ծերուն - 511
Թորգոմյան Վահրամ - 149, 226, 231, 235, 237, 248, 251, 258, 259, 264
Թորոսյան Եղիշե - 369
Թոփչյան Էդուարդ - 581
Թոքմաջյան Արմենակ - 323
Թրիեսթ - 52, 53, 56, 57, 126
Թուման (ֆիդայի) - 127
Թումանյան (պաշտոնյա) - 581
Թումանյան Անուշ - 176, 201, 205

Թումանյան Աշխեն - 175, 213, 574
Թումանյան Արփիկ - 176, 412
Թումանյան Թամարա - 175
Թումանյան Համբարձում - 148, 155
Թումանյան Համլիկ - 17, 150, 175
Թումանյան Հովիկ - 441
Թումանյան Հովհաննես, Օհաննես - 15, 38, 98, 136, 150, 175, 176, 190, 201, 207, 403, 404, 523, 535, 542, 553, 573, 604
Թումանյան Մուշեղ - 175
Թումանյան Նվարդ - 175, 403, 404, 490
Թումանյան Սեդա - 175, 452, 488-490
Թումանյան Օլյա, Օլգա - 176, 403, 404
Թուրշյան Հարություն - 583
Թուրքիա - 29, 125, 292, 357, 451, 503

Ժ

Ժան - 476
Ժենյա (տպարանի աշխատակից) - 456
Ժիդ Անդրե - 173
Ժյուստ (աբբա) - 187, 188
Ժնջ, Ժընջ - 49, 62, 155, 179, 322, 339, 503, 619, 623, 633
Ժորժ (տե՛ս Զաքարյան Ժորժ)

Ի

Իգդիր - 28, 29
Իմերեթիա - 418-420, 422, 423
Ինդիանա Հարբըր - 42, 84
Ինճեյան Լազար - 508
Ինճիկյան Արամ - 393, 420, 421, 602, 603
Իշխանյան Բախշի - 48, 103, 113, 125
Իսագյան Լուսիկ - 45, 46
Իսահակյան Աբաս - 72, 183, 199, 200, 201, 205, 208, 217, 219, 228, 231, 272, 275, 307, 334
Իսահակյան Ալեքսան - 166, 175, 179, 185
Իսահակյան Ավիկ (Ավետիք) - 495, 526, 530, 544, 575, 581, 593, 594, 595, 605
Իսահակյան Արամ - 432, 433, 457, 531
Իսահակյան Բագրատ - 433, 457, 458, 531
Իսահակյան Գեղամ - 16, 200, 208, 219, 530, 533
Իսահակյան Իզաբելլա, Բելլա - 427, 451-453, 464, 488, 530, 544, 575, 581, 595
Իսահակյան Իսիկ, Իսահակ - 616
Իսահակյան Հայկ - 379, 432, 433, 457, 458, 531
Իսահակյան Մարտին - 366
Իսահակյան Նիկողայոս, Կոլյա - 16, 185, 188, 193, 209, 240, 257, 307, 309, 334, 533, 576
Իսահակյան Ռուբեն - 178, 179, 183, 185, 187, 188, 192, 255
Իսահակյան Սոֆյա, Սոֆիկ, Սոֆի -

30, 146, 148, 152, 155, 173-175, 179, 182, 187, 191, 193-195, 198, 200, 203, 204, 206-208, 212, 246, 247, 249, 250, 254, 256, 257, 259, 262, 263, 265-268, 270, 271, 274, 277-279, 282, 336, 366, 387, 396, 407, 417, 424-426, 449, 450, 453, 454, 468, 470, 488, 525, 530, 531, 543, 574, 594, 595
Իսահակյան Վիգեն, Վիգի, Վիգուշ - 12, 15, 52, 59, 73, 81, 95, 148, 150, 153, 154, 156, 173-179, 184-188, 192, 193, 196-198, 200-202, 205, 207-209, 212-252, 254-260, 262-268, 270-272, 274, 275, 278-282, 308, 309, 312, 322, 332, 335, 336, 366, 367, 383, 387, 407, 427, 451, 452, 464, 487, 525, 530, 575, 581, 593
Իսահակյան Վիգո - 175
Իսկենդարյան Գրիգոր - 621, 622
Իսպանիա, Սպանիա - 81, 93, 131, 253, 333, 335
Իսրայելյան Սկուին, Իսկուին, Սրբուին - 156, 157
Իվան դը Մարիե - 517
Իտալիա - 9, 31, 70, 100, 101, 103, 115, 116, 175
Իրան, Պարսկաստան - 45, 62, 96, 155, 275, 481
Իրինդ 468-470

Լ

Լազարյան Արտավազդ - 63, 66-68
Լալայան Երվանդ - 178
Լամընե - 98
Լայպցիգ - 118, 502
Լենին - 15, 25, 28, 409
Լենինական - 176, 182, 187, 190, 192, 195, 207, 223-225, 227, 228, 231, 237-246, 248, 255, 262, 263, 267-271, 278, 280-283, 300, 345, 366, 383, 392, 420, 439, 442, 443, 457, 464-467, 471, 475, 481, 483, 488, 489, 560
Լենինգրադ - 238
Լեո - 136, 140, 438
Լեոնիձե Գեորգի - 550
Լեոպարդի - 98
Լ§ոն (տե՛ս Համբարձումյան Լ§ոն)
Լ§ոն-Մեսրոպ - 614
Լ§ոնյան Գարեգին - 38, 115, 140, 178, 238, 242, 245, 252, 283, 284, 291, 310, 312, 319, 326, 330, 336, 337, 351, 367, 404, 408, 418, 449, 498
Լ§ոնյան Լ§ոն - 449
Լ§ոնյան Պարույր - 319, 326, 330, 337
Լերմոնտով Միխայիլ - 347, 348, 390, 517, 590
Լը Սաժ Ալեն-Ռենե - 399
Լի Թայ Պո - 595
Լիբանան - 509
Լիբանի - 424
Լիբարիտ - 288
Լիդո, Լիտո - 8, 81, 156, 157, 173
Լիզա (Փարիզից) - 147, 149, 153, 155, 156, 185, 188, 202, 220, 241

Լիսիցյան Ստեփան - 502
Լիսիցյան Սրբուհի - 559
Լիտվինով - 357
Լոնդոն - 8, 9, 56, 74, 80, 89, 92, 93, 235, 296, 297, 353, 498
Լոռի - 242, 490, 560
Լութֆիկ, Լյութֆի (տե՛ս Ալլանաքյան Լյուդվիգ)
Լուկաշին - 39, 106, 241
Լունաչարսկի - 80
Լուսիկ (տե՛ս Սարյան-Աղայան Լուսիկ)
Լուսիկ - 206

Խ

Խադ արքեպիսկոպոս Աջապահյան - 567
Խաթանասյան Երվանդ - 55, 56, 59, 63, 64, 130, 131, 172,
Խաթանասյան Վերժինե - 55, 56, 59, 63, 65
Խայամ Օմար - 337
Խայրադդին Ալ Ասադի - 509
Խանզադյան Սերո - 583
Խանզադյան Ցոլակ - 39, 136, 293, 312, 320, 329, 331, 344, 352, 364
Խանլարյան Հակոբ - 261
Խանոյան Սարգիս - 38, 272
Խանջյան Աղասի - 324, 344, 356, 359, 360
Խաշմանյան Հակոբ - 46
Խաչատրյան Աստվածատուր, Խաչ - 291, 352
Խաչատրյան Սարգիս - 99, 148, 185, 188, 196, 202, 226, 231, 237
Խաչատրյան Սմբատ, Բորիս - 623
Խաչատրյան Վավա - 8, 18, 19, 74, 92-94
Խաչատրյանց Հակոբ - 312, 400, 412, 459, 466, 469, 521, 523, 524, 532, 545, 560
Խաչիկ (տե՛ս Դաշտենց Խաչիկ)
Խաչիկ, Խեչո (տե՛ս Քոթանյան Խաչիկ)
Խատիսյան Ալեքսանդր - 100, 121, 149, 159
Խատիսյան Գ§որգ - 100
Խերանյան Մկրտիչ - 593
Խերյան Մատթեոս - 124
Խիթարովա Սյուզան (Սոֆյա) - 412, 445, 460, 469, 470
Խնկո-Ապեր - 367
Խոջա Էֆենդի - 178, 187, 189
Խորեն (տե՛ս Սարգսյան Խորեն)
Խորհրդային Միություն, Սովետական Միություն - 180, 196, 206, 211, 251, 253, 256, 277, 315, 334, 357, 367, 375, 379, 403, 416, 417, 459, 477, 495, 510, 554, 568, 573
Խրիստ (տե՛ս Քրիստիանե)
Խուճուճց Հ. - 149

Ծ

Ծալկա - 422, 423, 562-565,
Ծաղկաձոր - 207, 393, 395, 396, 404, 405, 430

Ծատուրյան (Փարիզից) - 148, 154
Ծատուրյան Ալեքսանդր - 348
Ծերեթելի Ակակիա - 407, 409, 410, 419, 423, 425
Ծերենց - 314
Ծով եր - 489, 490
Ծովինկյաններ (Վենետիկ) - 178

Կ

Կաբիրու Բխակտի - 172
Կաթնաղբյուր - 489, 491
Կալիֆորնիա - 340
Կալոֆ Բագո - 580
Կախեթիա - 269, 416, 419, 420, 422, 423,
Կաղզվան - 562, 563
Կամսարական Սպանդարատ - 138, 150
Կանայան Խաչատուր - 421, 422, 574
Կանդարյան Իվան - 619
Կառվարենց Գֆորգ - 19
Կասյան Սարգիս - 241
Կարա-Դարվիշ (Հակոբ Գենջյան) - 182, 275, 276, 279, 280, 292
Կարաբեկյան Միշա, Ղարաբեկյան Միքայել - 240, 244-246
Կարաբեքիր - 29, 57
Կարաքեշիշյան (տե՛ս Կարաբեկյան)
Կարդուչի - 98
Կարին - 25,
Կարինյան Արտաշես - 140, 337, 511
Կարիքյան Եսայի - 242
Կարո (տե՛ս Պետրոսյան Կարապետ)
Կարո (տե՛ս Սարյան Կարապետ)
Կարս - 13, 15, 29, 37, 42, 44, 84, 126, 135, 351, 562, 563
Կի§ - 530, 580, 616
Կիպրոս - 154
Կիսլովոդսկ - 245-249, 530, 532, 540, 541, 543-545, 556, 566, 573
Կիրակոսյան - 449
Կյուլպենկյան Գալուստ - 299
Կոլյա (տե՛ս Իսահակյան Նիկողայոս)
Կողբ - 15
Կոճոյան, Կոջոյան Հակոբ - 293, 320, 351, 367, 441
Կոնդայան Սիրարփի - 11
Կոնչալովսկի Պ. - 73
Կոնստանտինե, Կոտե (տե՛ս Գամսախուրդիա Կոնստանտին)
Կոնֆուցիուս - 23
Կոոֆու - 22
Կոստանյան Գեղամ - 147, 148, 150, 152, 155, 188, 192, 195, 196, 202, 208, 212, 229, 231, 239, 240, 243, 247, 248, 250, 251, 255, 256, 258, 259, 263-265
Կոստանյան Կարապետ - 502
Կոստանյան Հովհաննես - 250
Կոստանցա - 376, 382, 384
Կովկաս - 10, 12, 25, 28, 50, 51, 61, 77, 99, 139, 149, 362, 364
Կորգանյաններ - 185, 188
Կորդովա - 93

Կորնելչուկ Ալեքսանդր - 402
Կորովին Կոնստանդին - 362
Կպրիյան, Կպրյան Հակոբ - 484, 485
Կոիլով Իվան - 488
Կրասին Լեոնիդ - 81
Կուզյան Անտոն - 538
Կուպեցյաններ - 566
Կուպրին Ալեքսանդր - 98
Կուսիկյան Կարապետ - 138, 114
Կուսիկյան Հովսեփ - 470

Հ

Հազարապետյան Լ.Ֆոն - 115, 154
Հախումյան Սիմոն - 39
Հախվերդյան Գ.Ֆորգ - 292
Հակոբ (Իրինդից) - 471, 473, 482
Հակոբ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 178
Հակոբ (տե՛ս Խաչատրյանց Հակոբ)
Հակոբ (տե՛ս Կարա Դարվիշ)
Հակոբ-Գրիգոր (տե՛ս Ճրճրյան Հակոբ-Գրիգոր)
Հակոբյան Հակոբ (ուսանող) - 609
Հակոբյան Հակոբ - 38, 523
Հակոբյան Հովհաննես - 322
Հակոբյան Սիմոն - 26, 81, 136, 150, 177, 322, 388
Հակստհաուզեն Ավգուստ - 537
Հաճըն - 369
Համազասպյան Վարդգես - 520
Համաստեղ - 26, 45, 89, 90, 92, 107, 108, 122, 165, 243, 247, 248
Համբարձումյան Լ.Ֆոն - 585, 610
Համբարձումյան Համազասպ - 519, 558, 583
Համբարձումյան Ն. - 516
Համբարձումյան Վիկտոր - 575, 576, 583
Համլիկ (տե՛ս Թումանյան Համլիկ)
Հայաստան, Սովետական Հայաստան - 13, 15, 26, 28, 30, 37, 40, 42, 44, 48, 51, 55, 57, 60-62, 68-70, 72, 77-81, 83, 87, 88, 99, 103, 104, 106, 112, 113, 120, 121, 127-131, 134, 135, 137, 139, 146, 149, 151, 155, 157-161, 163-165, 170-173, 176, 177, 180, 183-185, 191, 195, 197, 198, 200, 201, 205, 210, 211, 219-221, 223, 224, 233, 236, 237, 241, 250, 252-255, 260, 264, 266-268, 274, 276, 281, 285-288, 294-296, 300, 301, 308, 309, 311, 315, 324, 325, 327, 329, 331, 335, 337, 340-344, 347, 353-359, 365, 369, 372, 373, 380, 382, 384, 409, 454, 456, 458, 459, 474, 477, 481, 495, 503, 504, 506, 510, 523, 529, 533, 534, 547, 552, 553, 556, 557, 560, 568, 569, 572, 578, 579, 589, 592, 593, 597, 598, 601, 608, 613, 615, 617, 618, 633, 635
Հայկ (Բեղինից) - 301, 342
Հայկ (տե՛ս Իսահակյան Հայկ)
Հայկանուշ - 474
Հայնե Հայնրիխ - 144, 347, 348, 390, 517
Հաշտարխան - 431

Հասան-Ջալալյան Ռուբեն - 608, 609
Հասմիկ - 574
Հարություն (Իրինդից) - 471-473
Հարությունյան - 485
Հարությունյան Հակոբ - 406
Հարությունյան Հարություն - 482
Հարությունյան Սուրեն - 465
Հեբոյան Գ.Ֆորգ - 482
Հեղինե (տե՛ս Աֆրիկյան Հեղինե)
Հեղինե - 428, 574
Հեղուշ - 204, 206, 212, 292, 473
Հեսսե Հերման - 118
Հերակլիտ - 353
Հերիո - 72
Հերոդոտոս - 47
Հիճ Նախիջևան - 164, 552
Հիտլեր - 451, 453, 459, 515
Հլո (Իրինդից) - 471, 473, 482
Հմայակ (Իրինդից) - 471, 473, 482
Հոլիվուդ - 308
Հոմերոս - 107, 111
Հոռոմոս - 438
Հովակիմ (տե՛ս Բուդաղյան Հովակիմ)
Հովիկ (տե՛ս Մելիքյան Հովիկ)
Հովհաննես (տե՛ս Կոստանյան Հովհաննես)
Հովհաննես խան (տե՛ս Մասեհյան Հովհաննես)
Հովհաննիսյան Աշոտ - 39, 58, 115, 140, 179, 187, 330, 349, 351, 566
Հովհաննիսյան Եղիշե - 588
Հովհաննիսյան Հովհաննես - 38, 98, 190, 275, 348, 354, 393, 394, 485, 502, 553
Հովնան Գուրգեն - 479, 503, 511, 548, 549
Հովսեփ վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանությունից) - 12, 17, 178, 192, 203
Հովսեփյան Անդրանիկ - 439, 443, 464, 465, 475, 483, 491, 492, 496, 564, 569, 575
Հովսեփյան Մաթոս - 471, 472, 481
Հոոմ - 9, 11, 12, 53, 60, 63, 66, 72, 79, 80, 86, 110, 115, 166, 199, 200
Հրանուշ - 291
Հրանտ (տե՛ս Եսայան Հրանտ)
Հրաչ (տե՛ս Քոչար Հրաչյա)
Հրաչիկ, Հրաչյա (տե՛ս Գրիգորյան Հրաչ)
Հրարփի - 290
Հունաստան - 131, 340, 385, 386, 515, 519
Հուսիկ (Պահարեի եղբայրը) - 460
Հուսիկ - 404
Հուրյան Թաթուլ - 431, 435, 442

Ղ

Ղազանչյան Վարդան - 571
Ղազար (Իրինդից) - 471, 472
Ղազարապատ - 432, 475, 489, 502
Ղազարյան (ինժեներ) - 219
Ղազարյան Աշիկ - 519, 525, 580, 588, 593
Ղազարյան Մարֆել - 582
Ղազիկյան Արսեն, հայր Արսեն - 76, 86, 118, 123, 173, 178

Ղանալանյան Արամ - 406
Ղանալանյան Հովհաննես (Օննիկ) - 406, 408, 411, 421, 493, 497, 505
Ղարաբաղ - 61, 164, 205, 207, 431, 435, 487
Ղարաղորմազ - 473
Ղարաքիլիսա - 267
Ղարիբյան Արարատ - 511
Ղաֆադարյան Կարո - 455
Ղլտճյան Արսեն - 256, 259, 271, 275, 280, 474, 475
Ղրիմ, Կրիմ - 362, 552
Ղուկասյան Աբրահամ - 35, 146, 147, 149, 150, 152, 153, 154, 155, 184, 199, 220
Ղուկասյան Ղուկաս - 439, 478, 499
Ղուշչի - 563
Ղփչախ - 502

Ճ

Ճրճրյան Հակոբ-Գրիգոր - 118, 122

Մ

Մադրիդ - 93
Մազմանյան Հեղինե - 194
Մազմանովա (բժշկուհի) - 426
Մաթֆոս (տե՛ս Հովսեփյան Մաթֆոս)
Մաթոսյան Վարդան - 42
Մալարմե Ստեֆան - 143, 144
Մալեզյան Վահան - 309, 373, 374, 377, 378, 380, 385
Մալիշկո Անդրեյ - 528
Մակդոնալդ (Ջեյմս) - 72
Մակեդոնսկայա Օլգա - 571
Մակինցյան Պողոս - 39, 106, 110, 114, 120, 121, 123, 133, 134, 136, 156, 161, 165, 167, 174, 175, 184, 192, 196, 201, 204, 206, 208, 212, 217, 220, 221, 223, 235, 237, 241, 245, 269, 283, 311
Մահարի Գուրգեն - 320, 342, 348
Մամիկոնյան Օննիկ (Հովհաննես) - 578
Մամյան Ռիմա - 188, 201, 205
Մամուլյան Ռուբեն - 514
Մամուլյաններ - 308, 309
Մամուրյան Մատթեոս - 314
Մայակովսկի Վլադիմիր - 349, 409
Մայիլյաններ (Փարիզում) - 153, 154
Մանանդյան Հակոբ - 38, 140, 421
Մանկրյան Արմենակ - 369
Մանյա (Զուպարի կինը) - 219, 226, 231, 237, 249, 263, 322
Մանուկյան Ազատ (տե՛ս Մարտիկյան Ազատ)
Մանվելյան Լ.Ֆոն - 348, 502
Մանվելյան Միքայել, Միշա - 38, 140, 178, 252, 293, 312, 320, 322, 329, 331, 344, 352, 367
Մանվելյան Սահակ - 510
Մանվելյաններ - 122
Մաո Նիկողայոս - 351
Մասեհյան Հովհաննես, խան - 93, 155, 235
Մասիս - 187, 215, 624, 627
Մասիսյան Հակոբ - 508
Մատակյան-Միրաքյան Շուշիկ - 263, 491

Մատինյան Սահակ - 178
Մարգարիտա Լ.ֆոնովնա (տե՛ս Աթաբեկյան Մարգարիտա)
Մարգարյան Արշալույս - 436, 522
Մարգարյան Բ. (տե՛ս Վահյան Վահե)
Մարդրյուս Ժոզեֆ-Շառլ - 172
Մարիամ (Իրինդից) - 471, 481
Մարիետա (տե՛ս Շահինյան Մարիետա)
Մարմարաշեն - 438
Մարության Տիրան - 478
Մարջանաշվիլի Կոտե - 418
Մարսել, Մարսելլ - 218, 298, 300, 310, 621
Մարտիկյան Ազատ - 373, 382
Մարտին (տե՛ս Քարամյան Մարտին)
Մարտին (տե՛ս Իսահակյան Մարտին)
Մարտիրոս (տե՛ս Սարյան Մարտիրոս)
Մարտիրոսյան (Թիֆլիսից) - 521
Մարտիրոսյան Աշոտ - 468
Մարտիրոսյան Բալաբեկ - 436
Մարտիրոսյան Նատալիա - 41, 46, 63, 68, 71, 75, 79, 80
Մարտունի (տե՛ս Մյասնիկյան Ալեքսանդր)
Մարտունի - 405
Մարքիներ (դը Մարքիներ) - 187, 189
Մարքս Կարլ - 140, 331
Մացակ (տե՛ս Պապյան Մացակ)
Մելինե (Ե. Քոչարի կինը) - 363
Մելիք-Ազարյան Աղ. - 96
Մելիք-Ազարյան Արփինե - 96
Մելիք-Հակոբյան Մ. - 285
Մելիք-Շահնազարյան Լ.ֆոն - 476, 483
Մելիք-Շահնազարյան Սողոմոն - 446
Մելիք-Օհանջանյան Կարապետ - 38
Մելիքյան Համբարձում - 148
Մելիքյան Հովիկ - 393, 403, 488
Մելիքյան Ռոմանոս - 194
Մելիքսեթ-Բեկ Լ.ֆոն - 517, 539
Մելոյան Ղ.ֆոնդ - 290
Մեծատուրյան (Փարիզից) - 241
Մեծարենց Միսակ - 98
Մեհրաբյան Գաբրիել - 561
Մեհրաբյան Գրիգոր - 303
Մեղրի - 205, 475, 476, 481
Մեսխի Կոնստանդին - 418
Մեսխիեշվիլի Վլադիմիր - 418
Մեսրոպ վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 23
Մեսրոպյան Աղավնի - 498, 581, 615
Մետալնիկով Սերգեյ - 59
Մերեժկովսկի - 98, 125
Մերձավոր Արֆելք - 607
Միաևսարյան Միքայել - 394
Միլան - 114, 118, 123, 156, 173, 174, 381
Միկոյան Անաստաս - 397, 598
Միհրան (Իրինդից) - 471, 473, 482
Միհրդատյան Մաքսուդ - 219, 221
Մինաս(յան) Իսկուհի - 586
Մինասյան Ժան - 585

Մինուսինսկ - 334
Միշել (Փարիզից) - 621
Միշո (տե՛ս Մանվելյան Միքայել)
Միսակյան Շավարշ - 20, 32
Միրանդա (Կ. Գամսախուրդիայի կինը) - 459, 481
Միրզայան Մաշա - 505
Միրջանյան Արմեն - 602
Միցկ§իչ Ադամ - 517, 540
Միքայել (Վենետիկի Մխիթարյան հայրերից, հունգարացի) - 24
Միքայել, Միշա (տե՛ս Կարաբեկյան, Ղարաբեկյան Միքայել)
Միքայելյան (ինժեներ) - 219
Միքայելյան Կարեն - 38, 53, 137, 147, 149, 152, 188, 200, 203, 216, 225, 227, 286, 328, 342, 349, 350
Միքայելյան Քրիստափոր - 622
Մխեյան Ամալյա - 608
Մխիթար (Իրինդից) - 471, 473
Մխիթարյան Գուրգեն - 113
Մխիթարյան Օննիկ (Հովհաննես) - 113, 117
Մկրյան Մտրտիչ - 354
Մկրտիչ (տե՛ս Ասլանյան Մկրտիչ)
Մկրտիչ (տե՛ս Իսահակյան Մկրտիչ)
Մկրտչյան Հարություն - 493, 536
Մյասնիկյան Ալեքսանդր, Մարտունի - 38, 103, 105, 121, 126, 135
Մյասնիկյան Սահակ - 552
Մյունխեն - 96
Մյուսե Ալֆրեդ - 157
Մոճոյան Մարիամ - 480
Մոշելես Մարգարիտ - 74, 93, 498
Մոսկվա, Մոսկովա - 28-30, 39, 53, 57, 59, 71, 73, 84, 103, 109, 114, 115, 126, 135, 138, 157, 166-168, 178, 181, 224, 225, 227, 228, 230, 233, 238, 249, 251, 256, 260, 264-267, 271, 272, 274, 277, 278, 280-283, 301, 328, 335, 344, 356, 357, 362, 366, 367, 397, 400, 404, 406, 441-450, 452, 453, 459, 460, 473, 487, 495, 505, 525, 527-529, 547, 550, 552, 556, 566, 572, 575, 576, 602, 618
Մոավյան Ասքանազ - 247, 275
Մոավյան Վաղինակ - 522
Մրեն - 351
Մուշ - 16, 33
Մուշեղ (տե՛ս Թումանյան Մուշեղ)
Մուսա լեռ - 513
Մուսայելյան Վ. - 388
Մուրադ (ֆիդայի) - 127
Մուրադյան Ավետիս - 10, 22, 79
Մուրացան - 354, 512, 549, 617

Յ

Յաշվիլի Պաոլո - 277
Յոլյան Ռուբեն - 594
Յուզբաշյան - 429

Ն

Նադիա (Ռ. Դարբինյանի կինը) - 27, 62, 108, 122
Նադսոն Սեմյոն - 348
Նազարեթյան Հմայակ - 241

Նազարյան Հակոբ - 584, 585
Նազարյան Ստեփանոս - 314
Նազարյանց Լ. - 122
Նաիրի (տե՛ս Զարյան Նաիրի)
Նալբանդյան Միքայել - 189, 195, 198, 203,314, 541
Նալպանդյան Հարություն - 297
Նահապետ Քուչակ - 343, 540
Նահապետյան Գաբրիել վարդապետ - 175, 178, 203, 264
Նավասարդյան Բեգլար - 113
Նավասարդյան Վահան- 27, 48, 97, 99, 101-103, 110, 112, 117, 121, 128, 138, 157, 170, 286, 299
Նար-Դոս - 38, 549
Նարզան - 238
Նեապոլ, Նապոլի - 57, 60, 115
Նեկրասով Նիկոլայ - 348
Ներսես (տե՛ս Տեր-Գրիգորյան Ներսես)
Ներսիսյան Մտրտիչ - 597
Ներսիսյան Նինա - 590
Ներսիսյան Ջավահիր - 149, 153-155, 243, 247, 248, 251, 290, 623
Նիզամի - 409
Նիկալայ, Նիկոլայ (տե՛ս Ադոնց Նիկողայոս)
Նիկոլ (տե՛ս Աղբալյան Նիկոլ)
Նիկողոս (տե՛ս Իսահակյան Նիկողայոս)
Նինա (Քոչարյան ընտանիքից) - 388, 581
Նիցշե Ֆրիդրիխ - 88, 98
Նիցցա, Նիս - 93, 149, 154, 321
Նյու Յորք - 139, 340
Նշան - 431
Նովիցկի Օլեսկի - 538
Նոր Նախիջևան - 362
Նորա - 301
Նորայր - 479
Նորատունկյան - 235
Նորենց Վաղարշակ - 320
Նվարդ (Իրինդից) - 471, 473, 481, 482
Նվարդ (տե՛ս Թումանյան Նվարդ)
Նուխի - 435
Նունիկ (Իսահակյանների հարս) - 433

Շ

Շադինով - 155
Շահազիզ Երվանդ - 39, 140, 552, 553
Շահազիզ Սմբատ - 347, 348, 354, 371
Շահան Նաթալի - 149, 159
Շահինյան Մարիետա - 400, 401, 412, 460, 467, 470, 522, 524, 525, 532
Շահխաթունի - 101
Շահխաթունյան Ա. - 380
Շահվերդյան Դանիել, Դանուշ - 174, 212, 214, 216, 217, 221, 230, 232, 233, 235, 252, 272
Շահումյան Ստեփան - 126
Շամախի - 50, 435
Շամիլ - 556, 557

Շամլյան Արշավիր - 602
Շամոնե (Իսահակյան ընտանիքից) - 533
Շանթ Լ§ոն - 99, 121, 130, 160, 170, 291
Շավիլ - 248
Շարբաբչյան - 38
Շելլի - 390
Շ§չենկո Տարաս - 102
Շիշմանյան Ռաֆայել - 371, 377
Շիրազ Հովհաննես - 391, 402, 421, 456, 553
Շիրազյան Հեղուշ - 540, 541
Շիրակ - 54, 58, 71, 79, 143, 180, 197, 292, 391, 393, 432, 438, 481, 559, 583
Շիրինյան Աստղիկ - 178
Շիրինյան Մարի - 178
Շիրվանզադե - 37, 78, 136, 149, 177, 280, 549
Շվեյցարիա - 503
Շտայն - 461
Շտայներ - 15
Շուշանյան Ստեփան - 309
Շուշանյան Վազգեն - 37, 355, 358, 359
Շուշի - 61, 68, 69, 205
Շուշիկ (Իսահակյան Նիկողայոսի կինը) - 309, 576
Շուշիկ (տե՛ս Մատակյան Շ.)

Ո

Ոսկան Երվանդ - 314
Ոսկանյան Արուս - 468
Որբունի Զարեհ - 325

Չ

Չալխուշ(յան) Գրիգոր - 14, 28
Չատըրճյան Ալեքսան - 352, 367
Չարենց Եղիշե - 55, 101-103, 106, 109, 111-114, 116, 121, 149, 161, 328, 332, 337, 342-344, 347-349, 359
Չարըք Արամ - 302, 337
Չելլինի Բենվենուտո - 11
Չեխո-Սլովակիա - 591
Չեխով Անտոն - 571
Չիլինկարյան (տիկին) - 271
Չիկաքո - 340
Չինաստան - 596
Չիչերին - 33
Չոբանյան Ահարոն - 390
Չոբանյան, Չոպանյան Արշակ - 61, 82, 85, 149, 152, 226, 235, 265, 285, 297, 304, 343, 615
Չոլախյան Գուրգեն - 608
Չորեքչյան Գ§որգ կաթողիկոս - 474, 501, 507, 526
Չուբար Եղիա - 167, 185, 196, 202, 212, 213, 218-221, 226, 229-231, 237, 244, 249, 251, 258, 272, 320, 322

Պ

Պագանիներ (Վենետիկից) - 187, 189

Պադովա - 100
Պալասանյան Ստեփան - 394
Պալըգճյան Սեդրակ - 30, 49, 110, 112, 113, 130, 138, 170, 288
Պալըքճյան Գ.Նորգ (Գեղարքունի) - 187, 189
Պահարե (Հայկ Պետրոսյան) - 409, 429, 444, 460, 462, 479, 480
Պաղեստին - 131
Պայան Գ.Նորգ - 35, 175, 178, 187, 188
Պապաջանյան Միքայել - 149, 202
Պապյան Մացակ - 528
Պաստուրմաճյան Մ. - 96
Պավել (տե՛ս Քոչարյան Պավել)
Պատկանյան Ռաֆայել, Գամառ-Քաթիպա - 314, 354, 394, 552, 553
Պարիլլի - 474
Պարույր (տե՛ս Լ.Նոնյան Պարույր)
Պարսամյան Մկրտիչ - 97-99
Պարսկաստան (տե՛ս Իրան)
Պարտեզյան Հարություն - 375, 380, 383
Պեշիկթաշլյան Նշան - 7, 22, 31
Պետրոսյան Բենիկ - 453
Պետրոսյան Կարո - 466, 491, 496
Պետրոսյան Հակոբ - 482
Պերճուհի (Ծ.Միսակյանի կինը) - 27, 34
Պերպերյան Հայկ - 373, 375, 376, 381, 384
Պերվոմայսկի Լեոնիդ - 538
Պիկար Էմիլ - 64
Պիրանդելո Լուիջի - 395
Պո Էդգար - 144
Պոլիս, Կ.Պոլիս - 14, 21, 70, 76, 78, 80, 97, 174, 208, 212, 362, 371, 375
Պոլոզ Մուկուչ - 576
Պողոս (տե՛ս Աբելյան Պողոս)
Պողոս (տե՛ս Մակինցյան Պողոս)
Պողոս Նուպար փաշա - 318
Պողոսյան Հռիփսիմե - 407
Պողոսյան Սարգիս - 285
Պոմպեյ - 60
Պոյաճյան, Պոյաջյան Զապել - 74, 89, 93, 498, 614
Պոստումիա - 52, 57
Պոռշյան Պերճ - 512
Պուշկին Ալեքսանդր - 348, 390, 524

Ջ

Ջալալօղլի - 287
Ջամալյան Արշակ - 16, 27, 42, 76, 84, 121, 149, 158, 299
Ջանյան Մկրտիչ - 39
Ջավո (տե՛ս Ներսիսյան Ջավահիր)
Ջեմմա (Իրինդից) - 475
Ջեյմս (տե՛ս Գրինֆիլդ Ջեյմս)
Ջրբաշյան Էդվարդ - 604

Ռ

Ռահիմ Մ. - 542
Ռայնախ Սոլոմոն - 260
Ռաշմաճյան Տիգրան - 39
Ռաֆֆի (տե՛ս Րաֆֆի)

Ռաֆֆի Արշակ (տե՛ս Րաֆֆի Արշակ)
Ռեբեկա (Դսեղից) - 490
Ռզա Ռասուլ - 431, 436, 488
Ռիգա - 24
Ռիզա խան - 341
Ռիլսկի Մաքսիմ - 527, 528, 531, 538, 545, 550, 551, 616
Ռիմա (Գարեգին Լֆոնյանի կինը) - 367, 449, 450
Ռոբակիձե Գրիգոլ - 277
Ռոզա (տե՛ս Քոչարյան Ռոզա)
Ռոստոմ (փիդայի) - 127
Ռոտովա - 608
Ռուասսի - 338, 339, 342
Ռուբեն (Տեր-Միհասյան) - 121, 149, 158, 160, 299
Ռուբեն (տե՛ս Մամուլյան Ռուբեն)
Ռուբինա (Հ. Օհանջանյանի կինը) - 30, 49
Ռուբչիկ (Ն. Աղբալյանի տղան) - 29
Ռուզվելտ Ֆրանկլին - 357
Ռումանիա - 66, 337, 340, 383, 384, 515
Ռուսթավելի Շոթա - 274
Ռուսիա, Ռուսաստան - 12, 15, 40, 53, 55, 63, 72, 75, 84, 132, 167, 177, 197, 201, 238, 249, 259, 96, 504, 557
Ռուսինյան Նահապետ - 314
Ռուստավի - 460

Ս

Սադոյան (բժիշկ) - 484
Սաթենիկ (Իսահակյանների հարսը) - 183, 199, 201, 208, 219, 223
Սալոնիկ - 385
Սահաթճյան Հ. - 370
Սահակ (Ավ. Իսահակյանի հայրը) - 501
Սահակ (տե՛ս Տեր-Գաբրիելյան Սահակ)
Սահակ վարդապետ (Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան դպրոցի տեսուչ) - 175, 178, 187, 188, 192, 193, 197, 203
Սաղաթելյան Հովհաննես - 24
Սաղյան Մերի - 524
Սաղյան Սուրեն - 524
Սամվելյան Խաչիկ - 547
Սայաթ Նովա - 142, 292, 310, 311, 319, 342, 394
Սանահին - 437
Սանդ Ժորժ - 157
Սարաջ§ Կոնստանդին - 581
Սարգիս (տե՛ս Խաչատրյան Սարգիս)
Սարգսյան Արա - 516, 534
Սարգսյան Գարեգին - 464, 465
Սարգսյան Լյուդվիգ - 332
Սարգսյան Խորեն - 352, 359, 486
Սարգսյան Շուշանիկ (Ն.Ադոնցի քույրը) - 309
Սարգսյան Վ. (Դիթրոյթից) - 84
Սարգսյան Վարդգես - 190
Սարդարապատ - 471
Սարիկ (տե՛ս Սարյան Սարգիս)
Սարմեն - 89

Սարյան Արմաև - 10, 11, 31, 39, 40, 45, 52, 63, 65, 66, 68, 75, 79, 100
Սարյան Գեղամ - 423
Սարյան Լուսիկ - 39, 107, 167, 401, 412, 494, 495
Սարյան Կարապետ, Կարո - 74
Սարյան Մարտիրոս - 38, 50, 57, 58, 60, 71, 72, 79, 105, 106, 109, 110, 114, 115, 166, 167, 362, 494, 560
Սարյան Սարիկ (Սարգիս) - 412, 438, 494
Սարյան Օգսեև - 602
Սարոյան Արշալույս - 538
Սաֆրազբեկյան Ռուբեև - 452
Սաֆրաստյան Արշակ - 353
Սեբար (Պողոս Մակինցյանի կինը) - 124, 133, 157, 162, 174, 196, 221
Սեդա (Ե. Խաթաևասյանի դուստրը) - 132, 172
Սեդա (տե՛ս Թումանյան Սեդա)
Սեդրակ (տե՛ս Պալըգճյան Սեդրակ)
Սեմիկ (վարպետ) - 570
Սեյլանյան Արշալույս - 155
Սեյֆուլինա Լիդիա - 460
Սֆան - 39, 176, 212, 267, 344, 390-392, 405, 431, 459, 575, 599
Սֆիլիա - 93
Սֆումյան Լյուսի - 56
Սֆունց Գարեգին - 523
Սֆր - 29, 306
Սերյոժա (Պահարեի տղան) - 429, 444
Սերոբ (աշուղ) - 574
Սերոբյան Բագրատ - 291, 407
Սերով Վալենտին - 362
Սերվանտես - 107
Սեֆերյան Թորգոմ - 516
Սըմեն Ալ. - 143
Սիամանթո - 98, 145, 607
Սիբիր - 229, 335
Սիմոն (տե՛ս Վրացյան Սիմոն)
Սիմոն (տե՛ս Փիրումյան Սիմոն)
Սիմոնյան Հրանուշ - 563
Սիոն - 139
Սիսակ (տե՛ս Տեր-Սիմոնյան Սիսակ)
Սիտալ Կարապետ - 553, 568, 569, 602
Սիրանուշ (Գեղամ Կոստանյանի կինը) - 240, 251, 258
Սիրաս Հմայակ - 520, 543
Սիրիա, Սյուրիա - 56, 131, 340, 509
Սիրվարդ (Իտալիայից) - 30, 31, 174
Սիրվարդ (Հայպետհրատի աշխատակից) - 599
Սիցիլիա - 46, 80
Սլովացկի - 98
Սմբատ (տե՛ս Քոչարյան Սմբատ)
Սյունիք - 405, 459
Սնար - 177
Սոչի - 519-521, 534
Սոսյուրա Վլադիմիր - 538
Սովետ Ինգա - 536
Սորբոն - 213, 260, 333
Սուլթան Համիդ - 15
Սուխումի - 429
Սունդուկյան Գաբրիել - 523, 549
Սուրամ - 427
Սուրբ Գրիգոր - 489, 491
Սուրբ Կարապետ - 351
Սուրբ Ղազար - 24, 33, 86, 174, 248

Սուրեն (տե՛ս Ադամյան Սուրեն)
Սուրխաթյան (Թումանյան) Հարություն - 38
Սուրմալու - 37
Սուքիասյան Հակոբ - 370
Սուքիասյան Սաքո - 345-347, 350, 408, 431, 565, 566
Սոֆի (Զապել Եսայանի աղջիկը) - 322
Սոֆի, Սոֆիկ (տե՛ս Իսահակյան Սոֆյա)
Սոֆիա - 515
Սվիրիդով Գեորգի - 614
Ստամբուլ - 385
Ստենդալ - 396
Ստեփանյան - 465
Սրապիոն վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 175, 178, 187, 188
Սրվանձտյան Գարեգին - 591

Վ

Վագներ Մորից - 537
Վազգեն Ա. կաթողիկոս - 590
Վաթյան Գ§որգ - 501
Վահան (տե՛ս Զաքարյան Վահան)
Վահան (տե՛ս Նավասարդյան Վահան)
Վահան (տե՛ս Տերյան Վահան)
Վահան (տե՛ս Փափազյան Վահան)
Վահանյան Վահան (տե՛ս Տեր-Վահանյան Վահան)
Վահյան Վահե, Մարգարյան Բ. - 477, 504
Վահրամ սպարապետ - 438
Վահրամաշեն - 438
Վայմար - 461
Վայոց Ձոր - 405, 560
Վան - 29, 33, 40, 126
Վանյա (տե՛ս Քոչարյան Վանյա)
Վաշինգտոն - 95
Վաչյան Աստվածատուր - 148, 152
Վառնա - 385
Վավա (տե՛ս Խաչատրյան Վավա)
Վատիկան - 110
Վարանդյան Միքայել - 10, 31, 35, 39, 40, 49, 51, 66, 67, 79, 99, 100, 112, 113, 121, 149, 154, 337, 344
Վարդան (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 178
Վարդան-Աշոտ (տե՛ս Ատրյան Վարդան)
Վարդանյան Աղասի - 592
Վարդանյան Գրիգոր - 38, 138, 150, 242, 317, 318, 322
Վարդանյան Եղիշե - 525
Վարդանյան Զավեն - 528, 578
Վարդանյան Ռիմա - 586, 587
Վարդանյան Սարգիս - 38
Վարդապետովա - 591
Վարդգես (տե՛ս Ահարոնյան Վարդգես)
Վարուժան Դանիել - 98, 607
Վարսիկ - 425, 427
Վարվառա Կարպովնա - 349
Վեզուվ - 60
Վենետիկ, Վենեցիա - 7-12, 17-20, 22-25, 27, 31, 32, 34, 36, 38-48,

50-55, 57, 59-63, 65, 66, 68, 71, 74-76, 79-89, 92, 94, 95, 97, 100-107, 109, 110, 114, 116-120, 122-124, 127-134, 137, 138, 140, 141, 153, 156, 157, 160-168, 170-173, 185, 192, 199, 200, 202, 207, 209, 210, 213, 216, 222, 243, 332, 336, 345, 346, 360, 371, 373-379, 381-383, 385, 619, 623
Վեսելովսկի Ցուրի - 548
Վեսպեր - 421, 528, 584
Վերածին (Գասապյան Մինաս) - 16
Վերլեն Պոլ - 347
Վերհարն Էմիլ - 98, 143
Վերոնա - 24
Վերոնեջե - 110
Վերֆել Ֆրանց - 512, 514
Վիգեն (տե՛ս Իսահակյան Վիգեն)
Վիեննա - 8, 14, 23, 42, 62, 14, 371, 502, 513, 514, 591, 622, 634, 635
Վիլսոն Վուդրո - 72
Վիկտոր (տե՛ս Համբարձումյան Վիկտոր)
Վիկտորիա (տե՛ս Աբովյան Վիկտորիա)
Վիրապյան Արամ - 352
Վիրապյան Սմբատ - 430
Վոլգա - 362
Վոլո - 385
Վորոշիլովսկ - 452
Վռամ խան (տե՛ս Փիլոսյան Վռամ)
Վռամյան Արշակ (Վահապ) - 96
Վրաստան - 183, 267-269, 281, 369, 411, 416, 418-420, 423, 431, 445, 458
Վրացյան Սիմոն - 76, 78, 121, 149, 158, 330
Վրթանես վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 12, 178
Վուրիկ (տե՛ս Ահարոնյան Վրույր)
Վուրղուն Սամեդ - 431, 436, 488

Տ

Տաբիձե Տիցիան - 275-277
Տաբուցիայի լիճ - 427
Տաթ§ - 205
Տանյա (Պահարեի կինը) - 429, 444
Տաշկենտ - 616, 617
Տարագրոս (տե՛ս Տեր-Վարդանյան Տարագրոս)
Տարոնցի Սողոմոն - 348
Տեկոր - 351
Տեննյան - 296
Տեր-Աբրահամյան Հովհաննես - 552
Տեր-Անդրեասյան Երվանդ - 515
Տեր-Գաբրիելյան Սահակ - 230, 234, 240, 241, 251, 254, 263, 271, 277, 295, 300, 323, 359, 360
Տեր-Գրիգորյան Էմին - 494
Տեր-Գրիգորյան Ներսես- 349
Տեր-Դավթյան (բժիշկ) - 159
Տեր-Մարտիրոսյան Արտաշես - 389
Տեր-Սարգիսյան Վարդան - 69
Տեր-Սիմոնյան Ասքանազ - 39
Տեր-Սիմոնյան Արշավիր - 39
Տեր-Սիմոնյան Դրաստամատ - 39, 124, 240, 241, 251, 252, 258, 263, 322

Տեր-Սիմոնյան Սիսակ - 38
Տեր-Վահանյան Վահան - 349
Տեր-Վարդանյան Տարագրոս - 39
Տեր-Օհանյան Անահիտ - 93
Տեր-Օհանյան Արտեմիս - 272
Տեր-Օհանյան Վարդգես - 272
Տեր-Օհանյաններ - 154, 156, 185, 188, 196, 202, 216, 220, 226, 231, 237, 241, 243, 247, 248, 251, 272
Տերյան Վահան - 98, 190, 342, 347-349, 421, 422, 511, 553
Տերնովեց Բորիս - 73, 80
Տերտերյան Արսեն - 39, 140
Տիգրան-Զավեն, Զավեն - 21, 149, 154, 202, 207, 220, 226, 237, 241, 243, 247, 248, 251, 258, 264, 294, 297, 303, 321, 338, 356
Տիգրանակերտ - 364
Տիգրանյան Արմեն - 480
Տիգրանյան Արմենուհի - 16, 43, 85
Տիգրանյան Էդմոն - 559
Տիգրանյան Սիրական - 38
Տիխոնով Նիկոլայ - 579
Տինտորետտո - 110
Տիչինա Պավլո - 579, 582
Տիրատուրյան Սամվել - 398
Տիրուհի (Կ.Կոստանյանի կինը) - 230, 240
Տիցիան - 110
Տյուտչ§ Ֆյոդոր - 348
Տոլստոյ Լ§ - 107, 118
Տոնապետյան Պետրոս - 363
Տոնյան Արշակ - 293, 312, 320

Ր

Րաֆֆի (Մելիք-Հակոբյան Հակոբ) - 23, 42, 76, 179, 285, 353, 354, 421, 512, 523, 549, 615
Րաֆֆի Արշակ - 354

Ց

Ցամոյան - 160
Ցաքվերա - 424
Ցյուրիխ - 104, 503, 621,
Ցոլակ (տե՛ս Խանզադյան Ցոլակ)
Ցվայգ Ստեֆան - 514

ՈՒ

Ուայլդ Օսկար - 98, 107
Ուգո Նեբիա - 110
Ուզբեկստան - 617
Ուիթման Ուոլթ - 173
Ուկրաինա - 181, 550
Ուրարտու Այծեմնիկ - 293, 352, 450, 494, 566

Փ

Փահլֆանյան Գուրգեն - 616
Փանոս (տե՛ս Թեոլեմեզյան Փանոս)
Փառիկ (Սոֆյա Իսահակյանի քույրը) - 575, 581, 593, 594
Փարիզ - 8, 9, 11, 12, 19, 22, 29, 35, 36, 42, 50, 56, 62, 63, 67, 80, 81, 86, 120-122, 129, 131, 134, 140,

146-148, 150-155, 158, 160, 164, 166, 167, 172, 174, 199, 200, 202, 205, 207, 210, 213, 219, 221, 224, 225, 236, 242, 244, 246, 248, 249, 257-260, 263-266, 269, 272, 274, 278, 282-286, 289-300, 302-305, 307-311, 313, 314, 317, 319-326, 328, 330-336, 341, 342, 345-347, 350-354, 358, 361-380, 417, 508, 514, 585, 610, 621, 622
Փափազյան Վ. - 508
Փափազյան Վահան (Կոմս) - 149, 153, 154, 156, 159
Փափազյան Վահրամ - 303
Փիլոսյան Վռամ - 332, 339
Փիրումյան Սիմոն, Սիմոնիկ - 127, 155, 167, 176, 199
Փոլատյան Կարապետ - 370
Փորքշեյան Խաչերես, Քրիստափոր - 546, 547, 551, 554, 555, 560, 570, 571, 622
Փոյուգյան Սրինգ (տե՛ս Ամեմյան Հարություն)

Ք

Քաջազնունի Հովհաննես - 14, 27, 28, 77, 121, 150, 177
Քարամյան Մարտին - 422, 424, 426, 427, 480
Քեմալ Մուստաֆա - 135, 343
Քեչյան Միհրան - 370
Քերովբե վարդապետ (Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից) - 46, 178
Քյուսնախտ - 621
Քյուրքճյան - 444
Քյուրքճյան Ս. - 498, 499
Քոթանյան Գալուստ - 471, 473, 482
Քոթանյան Խաչիկ, Խեչո - 471
Քոչար Հրաչյա - 397, 448, 520
Քոչար, Քոչարյան Երվանդ - 11, 17, 34, 36, 38, 61, 94, 95, 116, 261, 362
Քոչարյան Գաբրիել, Գաբո - 146, 148, 153, 156, 185, 188, 196, 212, 216, 220, 226, 231, 237, 239, 241, 243, 247, 248, 258, 259, 264
Քոչարյան Հակոբ - 160
Քոչարյան Հովսեփ - 221, 225
Քոչարյան Պավել - 388
Քոչարյան Ռոզա - 460
Քոչարյան Վանյա - 227, 388, 460
Քոչարյան Վարյա - 282
Քոչինյան Անտոն - 602
Քովսար խանում (տե՛ս Թաղիվերդիֆա Քովսար)
Քութայիս - 416-419, 422, 424
Քուչակ Նահապետ - 343, 540
Քրիստափոր (տե՛ս Փորքշեյան Խաչերես)
Քրիստինե, Քրիստի, Խրիստ - 571, 581, 595

Օ

Օդեսա - 375, 378, 385, 581, 623
Օլիկ (Ավ. Իսահակյանի զարմիկը) - 334

Օլյա (տե՛ս Թումանյան Օլգա)
Օհան Կարո (Կարապետյան Հովհաննես) - 94
Օհանյան Կիրակոս - 465, 466
Օհաննես (տե՛ս Թումանյան Հովհաննես)
Օհանջանյան Արմեն - 101
Օհանջանյան Գալյա, Գոլյա - 101, 287
Օհանջանյան Համո - 29, 96, 100, 113, 121
Օննիկ (տե՛ս Ղանալանյան Հովհաննես)
Օշական - 206, 276
Օշական Հակոբ - 26, 97-99, 107
Օտյան Գրիգոր - 314
Օտյան Երվանդ - 324
Օֆիկ (Մկրտիչ Ասլանյանի կինը) - 428

Ֆ

Ֆադեյ Ալեքսանդր - 405, 467, 469
Ֆասիլոն Հենրի - 260
Ֆարհատ - 362
Ֆենիքս (տե՛ս Միսիթարյան Օննիկ)
Ֆետ Աֆանասի - 348
Ֆիրենցիա (Ֆլորենցիա) - 86
Ֆրանս Անատոլ - 88, 398
Ֆրանսիա, Գաղիա - 39-41, 50, 68, 72, 200, 205, 210, 249, 253, 281, 296, 297, 340, 349, 355, 356, 362, 503, 515, 585
Ֆրոյդ - 160

Ա

ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1950, 12 սեպտեմբերի, Կիսլովոդսկ
ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1950, 5 նոյեմբերի, Երևան
ԱԶԱՏ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ, 1936, 13 հոկտեմբերի, Վիեննաիկ
ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ, 1956
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՍՄԱՆՅԱՆԻՆ, 1940, 27 սեպտեմբերի, Երևան
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ, 1910, 20 ապրիլի, Ղազարապատ
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ, 1914, 31 մայիսի, Բեռլին
ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՐՆԵՅԶՈՒԿԻՆ, 1939, 19 ապրիլի, Երևան
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻՆ, 1921, 5 սեպտեմբերի, Վիեննաիկ
ԱՀԱՐՈՆ ՋՈՐԱՆՅԱՆԻՆ, 1937, 30 օգոստոսի, Սևան
ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, 1955, 1 հունիսի, Երևան
ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ, 1956, 12 հունվարի, Երևան
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ, 1952, 26 օգոստոսի, Երևան
«ԱՆԱՀԻՏ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1921, 16 ապրիլի, Վիեննաիկ
ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻՆ, 1955, 24 նոյեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, 1955
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1940, 8 դեկտեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1941, 27 հունվարի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 5 մարտի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 3 ապրիլի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 12 ապրիլի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 1 նոյեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1944, 31 մարտի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1944, 28 հոկտեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1944, 11 դեկտեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1945, 11 օգոստոսի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1952, 17 սեպտեմբերի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1953, 12 հունվարի, Երևան
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1953, 27 հոկտեմբերի, Երևան
ԱՆԺԻԿԻՆ
ԱՆՀԱՅՏԻՆ, 1897, 9 սեպտեմբերի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՀԱՅՏԻՆ, 1905, 25 հուլիսի, Երևան
ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ, 1931, 19 հոկտեմբերի, Փարիզ
ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ, 1935, 2 մայիսի, Փարիզ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 8 հոկտեմբերի, Թիֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 15 հոկտեմբերի, Թիֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 18 հոկտեմբերի, Թիֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 2 նոյեմբերի, Թֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 10 նոյեմբերի, Թֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 20 նոյեմբերի, Կարս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, 29 նոյեմբերի, Բորժոմ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, նոյեմբեր, Թիֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 17 հունվարի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 19 հունվարի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 20 հունվարի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 29 փետրվարի, Թիֆլիս
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 11 մարտի, Ղազարապատ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 16 մարտի, Ղազարապատ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 29 մարտի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 5 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 7 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 14 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 7 մայիսի, Ախալցխա
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 15 մայիսի, Ախալցխա
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 25 հունիսի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 14 հուլիսի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 4 օգոստոսի, Ախալքալաք
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, 18 օգոստոսի, Ալեքսանդրոպոլ
ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1905, սեպտեմբեր
ԱՆՏՈՆ ԿՈՒՉՅԱՆԻՆ, 1951, 3 հուլիսի, Երևան
ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ, 1956, 12 հունվարի, Երևան
ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, 1948, 1 հոկտեմբերի, Երևան
ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, 1954, 29 հուլիսի, Երևան
ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, 1955, 26 մարտի, Երևան
ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, 1955, 2 հուլիսի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1940, 24 մարտի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1940, 12 սեպտեմբերի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1940, 15 հոկտեմբերի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1941, 4 հունվարի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1941, 2 ապրիլի, Երևան
ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ, 1944, 22 օգոստոսի, Երևան
ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆԻՆ, 1928, 8 հոկտեմբերի, Կիսլովոդսկ
ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1903, 28 հուլիսի, Ղազարապատ
ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1911, 2 հոկտեմբերի, Պոլիս
ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆԻՆ, 1894, 1 հունիսի, Լայպցիգ

Ա.ՎԵՏԻՔ Ա.ՐԱ.ՍԽԱՆՅԱՆԻՆ, 1895, 17 սեպտեմբերի, Ալեքսանդրոպոլ
Ա.ՎԵՏԻՔ Ա.ՐԱ.ՍԽԱՆՅԱՆԻՆ, 1900, 2 փետրվարի, Բաքու
Ա.ՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1956, 12 օգոստոսի, Երևան
Ա.ՐԱ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1947, 10 սեպտեմբերի, Երևան
Ա.ՐԱ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1950, 9 նոյեմբերի, Երևան
Ա.ՐԱՄ ԵՐԵՄՅԱՆԻՆ, 1923, 17 հունիսի, Վիեննաիկ
Ա.ՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ, 1938, 25 օգոստոսի, Ծաղկաձոր
Ա.ՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ, 1940, 24 հունիսի, Բորժոմ
Ա.ՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1889, 3 դեկտեմբերի, Էջմիածին
Ա.ՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1890, 11 փետրվարի, Էջմիածին
Ա.ՐԱՄ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1890, 6 մայիսի, Էջմիածին
Ա.ՐԱ.ՐԱ.Տ ՂԱ.ՐԻԲՅԱՆԻՆ, 1947, 21 ապրիլի, Երևան
Ա.ՐԱ.ՔՍ Ա.ՎԵՏԻՍՅԱՆԻՆ, 1941, 6 օգոստոսի, Երևան
Ա.ՐԵՎ. ԲԱ.Ղ.ԴԱ.ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1948, 26 ապրիլի, Երևան
Ա.ՐԻՍՏԱԿԵՍ Վ.Ա.ՐԴԱՆՅԱՆԻՆ, 1895, 28 փետրվարի, Լայպցիգ
Ա.ՐԻՍՏԱԿԵՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ, 1905, 4 փետրվարի, Ալեքսանդրոպոլ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1922, 17 հոկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1922, 4 դեկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1922, 31 դեկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1923, 12 ապրիլի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1923, 18 ապրիլի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1923, 4 հունիսի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 28 հունվարի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 4 փետրվարի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 26 մարտի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 29 ապրիլի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 5 օգոստոսի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 9 օգոստոսի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 19 օգոստոսի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 28 օգոստոսի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 12 սեպտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 20 հոկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 26 հոկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 29 հոկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 8 նոյեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 9 դեկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1924, 16 դեկտեմբերի, Վիեննաիկ
Ա.ՐՄԱՆ ՍԱ.ՐՅԱՆԻՆ, 1925, 23 փետրվարի, Վիեննաիկ
Ա.ՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻՆ, 1946, Երևան
Ա.ՐՄԵՆՈՒԿ ԹՈՌՄԱՋՅԱՆԻՆ, 1934, 2 սեպտեմբերի, Փարիզ
Ա.ՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ Ա.ՐԱ.Ս ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1934, 25 ապրիլի, Փարիզ

ԱՐՄԵՆՈՒՀՈՒՆ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1932, 19 մայիսի, Փարիզ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1932, 4 հունիսի, Փարիզ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1934, 21 մայիսի, Ռուասսի
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1935, 4 ապրիլի, Փարիզ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1935, 1 օգոստոսի, Փարիզ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ, 1940, 17 հոկտեմբերի, Երևան
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1899, 9 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1918, 5 դեկտեմբերի, Ժնև
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1918, 13 դեկտեմբերի, Ժնև
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1921, 26 դեկտեմբերի, Վենետիկ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1923, 29 դեկտեմբերի, Վենետիկ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1924, 24 դեկտեմբերի, Վենետիկ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1925, 29 հունվարի, Վենետիկ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1926, 19 փետրվարի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1930, 15 հուլիսի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1931, 28 հունվարի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1931, 27 ապրիլի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1931, 25 հոկտեմբերի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1931, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1936, 29 հուլիսի, Փարիզ
ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ, 1952, 30 դեկտեմբերի, Երևան
ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1930, 6 հոկտեմբերի, Փարիզ

Բ

ԲԱԲԼՈՒՄՅԱՆԻՆ, 1955, 23 հունիսի, Երևան
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1901, 27 մարտի, Վենետիկ
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1901, 8 ապրիլի, Վենետիկ
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1901, 28 նոյեմբերի, Թիֆլիս
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1902, 27 հունվարի, Էջմիածին
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1912, 27 հունիսի, Պոլիս
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1912, 2 սեպտեմբերի, Յուրիխ
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1913, 4 հունիսի, Կոլոնժ
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1913, 3 հուլիսի, Կոլոնժ
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1916, 23 դեկտեմբերի, Ժնև
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1917, 10 փետրվարի, Ժնև
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1917, 16 մայիսի, Ժնև
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1919, 31 մարտի, Ժնև
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1919, 30 մայիսի, Ժնև
ԲԱՌՆԱԲԱՍ ՊԻԼԵՋԻԿՃՅԱՆԻՆ, 1919, 7 հունիսի, Ժնև

ԲԱԴՎԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1953, 3 մարտի, Երևան
ԲԵՐՍԱԲԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1952, 4 օգոստոսի, Երևան

Գ

ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ, 1952, 12 սեպտեմբերի, Երևան
ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ, 1931, 16 սեպտեմբերի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ, 1926, 12 մայիսի, Վենետիկ
ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ, 1931, 13 օգոստոսի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1908, 13 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1911, 12 նոյեմբերի, Պոլիս
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 23 ապրիլի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 30 մայիսի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 23 հունիսի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 15 հուլիսի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 12 օգոստոսի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 30 օգոստոսի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 5 հոկտեմբերի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 7 նոյեմբերի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1913, 30 նոյեմբերի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1914, 3 մայիսի, Բեռլին
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1916, 2 ապրիլի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1916, 20 հուլիսի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1916, 21 սեպտեմբերի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1916, 8 դեկտեմբերի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1917, 28 մարտի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1917, 25 հունիսի, Ժնև
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1928, 24 հունիսի, Երևան
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1928, 25 սեպտեմբերի, Կիսլովոդսկ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1930, 1 ապրիլի, Թֆիլիս
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1930, 21 մայիսի, Բեռլին
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1930, 14 հունիսի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1930, 23 դեկտեմբերի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1932, 7 օգոստոսի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 29 մարտի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 30 ապրիլի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 18 օգոստոսի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 13 սեպտեմբերի, Փարիզ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 26 հոկտեմբերի, Կոլլոնժ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1934, 3 նոյեմբերի, Փարիզ

ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1939, 29 հուլիսի, Ծաղկաձոր
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ, 1941, 9 հունիսի, Մոսկվա
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ, 1955, 22 սեպտեմբերի, Երևան
ԳԵ ԲԱՌ-ՑՅՈՒՆՆԻՆ, 1955, 8 սեպտեմբերի, Երևան
ԳԵՂԱՄ ԱՖՐԻԿՅԱՆԻՆ, 1935, 1 նոյեմբերի, Փարիզ
ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻՆ, 1940, 25 հունիսի, Բորժոմ
ԳԵՈՐԳԻ ՍՎԻՐԻԴՈՎԻՆ, 1957, 27 օգոստոսի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎԻՆ, 1937, 19 ապրիլի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԳԱՆՋԱՆԱԿՅԱՆԻՆ, 1957, հունիս, Երևան
ԳԵՎՈՐԳ ԶՈՐԵՔՋՅԱՆԻՆ, 1943, 26 սեպտեմբերի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԶՈՐԵՔՋՅԱՆԻՆ, 1946, 3 ապրիլի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԶՈՐԵՔՋՅԱՆԻՆ, 1946, 15 նոյեմբերի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԶՈՐԵՔՋՅԱՆԻՆ, 1949, 24 սեպտեմբերի, Երևան
ԳԵՎՈՐԳ ԿԱՌԱՎԱՐԵՆՑԻՆ, 1924, 22 մարտի, Վենետիկ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻՆ, 1918, 2 մայիսի, ժնև
ԳԻՆՈՎԱԲԵ ԶԱՐԻՖՅԱՆԻՆ, 1913, 29 հուլիսի, Կոլլոնժ
ԳԻՆՈՎԱԲԵ ԶԱՐԻՖՅԱՆԻՆ, 1914, 4 հունիսի, Բեռլին
ԳԻՆՈՎԱԲԵ ԶԱՐԻՖՅԱՆԻՆ, 1914, 15 հուլիսի, Բեռլին
«ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1941, 13 հունվարի, Երևան
ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆԻՆ, 1938, 31 օգոստոսի, Ծաղկաձոր
ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ, 1946, 20 ապրիլի, Երևան
ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ, 1952, 14 հունվարի, Երևան
ԳՈՒՐԳԵՆ ՁՈԼԱԽՅԱՆԻՆ, 1956
ԳՈՒՐԳԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ, 1957, 2 հոկտեմբերի, Երևան

Դ

ԴԱՆԻԵԼ ԴԶՆՈՒՆՈՒՆ, 1946, 31 հոկտեմբերի, Երևան
ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ, 1925, 1-12 դեկտեմբերի, Վենետիկ
ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ, 1926, 15 հունվարի, Վենետիկ
ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ, 1955, 12 ապրիլի, Երևան
«ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1901, 16 մարտի, Վիեննա

Ե

ԵԿԱՏԵՐԻՆԱ ԴՈՒՐՅԱՆ-ԱՐՄԵՆՅԱՆԻՆ, 1953
ԵՂԻՇԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, 1955, 11 ապրիլի, Երևան
ԵՎԳԻՆԵ ԹԻԹՐՅԱՆԻՆ,1904, 15 օգոստոսի, Ալեքսանդրոպոլ
ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1899, Սարիղամիշ

ԵՐԵՄԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, 1891, 1 օգոստոսի, Էջմիածին
«ԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1957, 26 հունիսի, Երևան
ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՑՅԱՆՆԵՐԻՆ, 1924, 19 սեպտեմբերի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՑՅԱՆՆԵՐԻՆ, 1924, 3 հոկտեմբերի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՑՅԱՆՆԵՐԻՆ, 1924, 25 հոկտեմբերի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՑՅԱՆԻՆ, 1925, 25-30 դեկտեմբերի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՑՅԱՆԻՆ, 1926, 15 սեպտեմբերի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1924, 12 փետրվարի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1924, 23 փետրվարի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1924, 2 հունիսի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1924, 4 հուլիսի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1924, 30 հուլիսի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1925, 3 փետրվարի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1925, 31 հուլիսի, Վենետիկ
ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ, 1935, 22 մայիսի, Փարիզ

Զ

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ, 1926, 18 փետրվարի, Փարիզ
ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ, 1934, 22 օգոստոսի, Փարիզ
ԶԱՊԵԼ ՊՈՅԱՃՅԱՆԻՆ, 1946, 6 հունվարի, Երևան
ԶԱՎԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, 1957
ԶԱՐԵՀ ՈՐԲՈՒՆՈՒՆ, 1934, 5 հոկտեմբերի, Փարիզ
«ԶԱՐԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1906, 23 հոկտեմբերի, Թիֆլիս

Է

ԷԴՎԱՐԴ ԱՂԱՅԱՆԻՆ, 1951, 31 մայիսի, Երևան
ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻՆ, 1956, 25 հուլիսի, Երևան
ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՈԴԻՆ, 1892, 15 նոյեմբերի, Թիֆլիս

Թ

ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՅՈՑ ԹԻՎ 5 ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ, 1946, 8 հունվարի, Երևան
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ, 1897, 5 օգոստոսի, Արգինա
ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1954, 29 հուլիսի, Երևան

Ժ

ԺԵՆՅԱՅԻՆ, 1942, 6 հունիսի, Երևան
«ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1945, 10 հուլիսի, Երևան

Ի

ԻՈԱՆՆԱ ԲՐՅՈՒՍՈՎԱՅԻՆ, 1956, 14 մայիսի, Երևան
ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1913, 29 հուլիսի, Կոլլոնժ
ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆԻՆ, 1941, 15 հոկտեմբերի, Երևան
ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ, 1948, 24 նոյեմբերի, Երևան
ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ, 1949, 14 փետրվարի, Երևան
ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ, 1951, 13 հունիսի, Երևան
ԻՎԱՆ ԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ, Վենետիկ

Լ

ԼԵՎՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, 1957, 12 մարտի, Երևան
ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ, 1943, 28 նոյեմբերի, Երևան
ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ, 1944, 5 մայիսի, Երևան
ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ, 1947, 29 դեկտեմբերի, Երևան
ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ, 1951, 3 հուլիսի, Երևան
ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊԻՆ, 1957, 6 սեպտեմբերի, Երևան
ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1903, 8 օգոստոսի, Ղազարապատ
ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1936, 5 հոկտեմբերի, Վենետիկ
ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1936, 27 հոկտեմբերի, Աթենք
ԼՈՒՍԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ, 1945, 27 մայիսի, Երևան
ԼՈՒՍԻԿԻՆ, 1927, 21 հունիսի, Օչական
ԼՈՒՍՆԹԱԳ ՄԱՏԻՆՅԱՆ-ՇԻՐԻՆՅԱՆԻՆ, 1916, 8 հունիսի, Ժնև

Խ

ԽԱՅՐԷԼԴԻՆ ԷԼ ԱՍԱԴԻՆ, 1947, 12 մարտի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1951, 27 նոյեմբերի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1952, 2 փետրվարի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1952, 3 ապրիլի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1952, 26 մայիսի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1952, 5 օգոստոսի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1953, 12 հունվարի, Երևան
ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՓՇԵՑԱՆԻՆ, 1953, 22 հունիսի, Երևան
ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1934, 7 դեկտեմբերի, Փարիզ

ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1944, 8 օգոստոսի,Վալարշապատ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ, 1929, 13 նոյեմբերի, Երևան

Կ

ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1950, 2 դեկտեմբերի, Երևան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1953, 3 օգոստոսի, Երևան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1954, 14 փետրվարի, Երևան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1954, 5 սեպտեմբերի, Դիլիջան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1955, 3 մայիսի, Երևան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1956, 20 հունվարի, Երևան
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ, 1957, 26 հուլիսի, Երևան
ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ, 1926, 23 նոյեմբերի, Երևան
ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ, 1929, 19 նոյեմբերի, Երևան
ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ, 1929, 30 հոկտեմբերի, Երևան
ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ, 1930, 2 հունվարի, Երևան
ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ, 1930, 11 փետրվարի, Երևան
ԿԱՐԱՊԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, 1944, 19 հոկտեմբերի, Երևան
ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ, 1952, 15 մարտի, Երևան
ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ, 1953, 3 հունվարի, Երևան
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1916, 12 օգոստոսի, Ժնև
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1917, 8 մարտի, Ժնև
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1924, 12 սեպտեմբերի, Վենետիկ
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1926, 15 հունվարի, Վենետիկ
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1927, 17 մայիսի, Երևան
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1930, 2 օգոստոսի, Փարիզ
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1934, փետրվար, Փարիզ
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1934, 6 հունիսի, Ռուասի
ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1934, 31 օգոստոսի, Փարիզ
ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ, 1942, 10 հուլիսի, Երևան
ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ, 1943, 29 դեկտեմբերի, Երևան
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ, 1921, 6 մայիսի, Վենետիկ
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ, 1921, 31 մայիսի, Վենետիկ
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ, 1921, 28 հունիսի, Վենետիկ
ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ, 1936, 28 հունիսի, Վենետիկ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1912, 8 մայիսի, Պրինկիպո
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1912, 4 հուլիսի, Պոլիս

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1912, 3 օգոստոս, Վիեննա

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1912, 4 սեպտեմբերի, Ցյուրիխ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ, 1913, 1 հուլիսի, Կոլլոնժ

Կ. ՈՒՐԱԽՅԱՆԻՆ, 1921, 29 դեկտեմբերի, Վենետիկ

Հ

ՀԱԿՈԲ ԽԱՆԼԱՐՅԱՆԻՆ, 1929, 28 հունվարի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1939, 3 փետրվարի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1940, 7 մարտի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1942, 10 դեկտեմբերի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1943, 12 հուլիսի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1943, 16 օգոստոսի, Իրինդ

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1948, 4 դեկտեմբերի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1949, 16 փետրվարի, Երևան

ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՅԱՆՑԻՆ, 1949, 8 հունիսի, Երևան

ՀԱԿՈԲ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ, 1954, հոկտեմբեր, Երևան

ՀԱԿՈԲ ՆԵՎՐՈՒԶԻՆ, 1922, 30 օգոստոսի, Վենետիկ

ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ, 1925, 23 հոկտեմբերի, Վենետիկ

ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ, 1925, 19 նոյեմբերի, Վենետիկ

ՀԱՄԱԶԱՍՊ ԴԱԲԱՂՅԱՆԻՆ, 1954, 20 հոկտեմբերի, Երևան

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, 1952, 6 հուլիսի, Երևան

ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, 1954, 10 սեպտեմբերի, Դիլիջան

ՀԱՄԱՍՏԵՂԻՆ, 1925, 2 փետրվարի, Վենետիկ

ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1919, 28 մայիսի, Ժնև

ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1919, 30 մայիսի, Ժնև

ՀԱՄՈ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1919, 11 հունիսի, Ժնև

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1906, 27 հուլիսի, Ալեքսանդրոպոլ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1917, 9 հունվարի, Ժնև

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1919, 24 հունվարի, Ժնև

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1921, 20 հունիսի, Վենետիկ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1922, 10 մարտի, Վենետիկ

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1922, 8 ապրիլի, Վենետիկ
ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1925, 10 փետրվարի, Վենետիկ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ, 1952, 17 մայիսի, Երևան
ՀԱՅԿ ԴՌՆՈՅԱՆԻՆ, 1940, 6 օգոստոսի, Երևան
ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1940, 18 սեպտեմբերի, Երևան
ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1942, 8 հուլիսի, Երևան
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ, 1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ, 1936, 7 սեպտեմբերի, Վենետիկ
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ, 1936, 26 սեպտեմբերի, Վենետիկ
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ, 1936, 3 հոկտեմբերի, Վենետիկ
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ, 1936, 26 նոյեմբերի, Կոստանցա
ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ ՏՆՕՐԵՆԻՆ, 1957, 26 հունիսի, Երևան
«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1917, 6 հուլիս, Ժնև
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1909, 28 նոյեմբերի, Ախալցխա
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1913, 25 հունիսի, Կոլլոնժ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1913, 2 օգոստոսի, Կոլլոնժ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1913, 30 օգոստոսի, Կոլլոնժ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1913, 15 սեպտեմբերի, Կոլլոնժ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1913, դեկտեմբեր, Փարիզ
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1914, 26 ապրիլի, Բեռլին
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1915, 28 մարտի, Բեռլին
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1915, 1 սեպտեմբերի, Ժնև
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1916, 6 ապրիլի, Ժնև
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1916, 29 հունիսի, Ժնև
ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻՆ, 1919, դեկտեմբերի 15-25, Փարիզ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՇԱՆԻՆ, 1954, 20 սեպտեմբերի, Երևան
ՀԵՂԻՆԵ ՇԻՐԱԶՅԱՆԻՆ, 1951, 23 հուլիսի, Կիսլովոդսկ
ՀՄԱՅԱԿ ՍԻՐԱՍԻՆ, 1948, 26 հոկտեմբերի, Սոչի
ՀՄԱՅԱԿ ՍԻՐԱՍԻՆ, 1951, 28 օգոստոսի, Կիսլովոդսկ
ՀՅԴ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ, 1900, 14 սեպտեմբերի, Քյուսնախտ
ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ, 1944, 29 օգոստոսի, Երևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1923, 25 փետրվարի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1923, 26 ապրիլի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1923, 3 հուլիսի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1923, 8 հոկտեմբերի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1923, 27 հոկտեմբերի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1924, 5 հունվարի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1924, 9 մարտի, Վենետիկ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1924, 30 օգոստոսի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1926, 31 հունվարի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1926, 15 օգոստոսի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ, 1955, դեկտեմբեր
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1900, 21 հոկտեմբերի, Ցյուրիխ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1901, 12 սեպտեմբերի, Ղազարապատ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1901, 29 հոկտեմբերի, Բաքու
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1901, 3 դեկտեմբերի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1902, 18 հունվարի, Էջմիածին
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1902, 30 մարտի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1902, 4 հոկտեմբերի, Բաքու
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1902, 11 դեկտեմբերի, Բաքու
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1903, 7 հուլիսի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1903, 21 հուլիսի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1903, 30 նոյեմբերի, Էջմիածին
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1904, 8 հունվարի, Վլադիկավկազ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1904, 17 փետրվարի, Նոր Նախիջևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1904, 23 փետրվարի, Նոր Նախիջևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1904, 10 մայիսի, Մոսկվա
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1904, 23 դեկտեմբերի, Մոնպելյե
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1905, 5 հունվարի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1908, 21 ապրիլի, Ալեքսանդրոպոլ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1908, 20 հունիսի, Ղազարապատ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1912, 8 մայիսի, Պոլիս
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1912, 28 մայիսի, Պոլիս
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1912, 4 հունիսի, Պոլիս
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ, 1919, 3 հուլիսի, Ժնև
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1919, 5 դեկտեմբերի, Ժնև
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1921, 1 հուլիսի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1921, 8 նոյեմբերի, Վենետիկ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, 1913, 30 ապրիլի, Ժնև
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ, 1939, 27 հոկտեմբերի, Մոսկվա
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ, 1940, 27 փետրվարի, Երևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ, 1945, 29 մարտի, Երևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ, 1945, 1 հոկտեմբերի, Երևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ, 1937, 30 օգոստոսի, Սևան
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ, 1939, 19 ապրիլի, Երևան
ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՅԱՆԻՆ, 1946, 12 հուլիսի, Երևան
ՀՐԱԶԱՏ ՔՈՉԱՐԻՆ, 1941, 15 մայիսի, Մոսկվա

ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 30 օգոստոսի, Երևան
ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 31 օգոստոսի, Երևան
ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 14 սեպտեմբերի, Երևան
ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ, 1943, 29 դեկտեմբերի, Երևան
ՄԱՄԻԿՈՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ, 1952, 12 հոկտեմբերի, Երևան
ՄԱՇԱ ՄԻՐԶԱՅԱՆԻՆ, 1946, 10 հոկտեմբերի, Երևան
ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ, 1951, 2 օգոստոսի, Կիսլովոդսկ
ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆԻՆ, 1914, 14 հունվարի, Ժնև
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ, 1940, 10 ապրիլի, Երևան
ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ, 1941, 19 հունիսի, Մոսկվա
ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ, 1950, սեպտեմբեր, Երևան
ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ, 1940, 29 հունիսի, Բորժոմ
ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ, 1940, 15 հուլիսի, Բորժոմ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1924, 4 օգոստոսի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1924, 28 սեպտեմբերի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1924, 8 հոկտեմբերի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1924, 12 նոյեմբերի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1924, 18 դեկտեմբերի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1925, 22 ապրիլի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1925, 26 մայիսի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1925, 10 հունիսի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1925 28 հուլիսի, Վենետիկ
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ, 1926, 3 օգոստոսի, Վենետիկ
ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ, 1928, 2 ապրիլի, Երևան
ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ, 1951, 18 հունիսի, Երևան
ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ, 1957, սեպտեմբեր, Երևան
ՄԵՐԻ ՍԱՂՅԱՆԻՆ, 1949, 15 մարտի, Երևան
ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ, 1929, 17 հունիսի, Թիֆլիս
ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ, 1929, 3 հուլիսի, Լենինական
ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1939, 10 փետրվարի, Երևան
ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1940, 17 մայիսի, Երևան
ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1940, 9 հուլիսի, Ախալցխա
ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, 1940, 15 հուլիսի, Բորժոմ
ՄԿՐՏԻՉ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1890, 1 սեպտեմբերի, Էջմիածին
«ՄՇԱԿԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1917, 10 փետրվարի, Ժնև
ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ, 1940, 10 ապրիլի, Երևան
ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ, 1940, 2 հոկտեմբերի, Երևան

Ց

ՅՈՒՐԻ ՎԵՍԵԼՈՎՍԿՈՒՆ, 1903, 6 նոյեմբերի, Ալեքսանդրոպոլ

Ն

ՆԱԻՐԻ ՋԱՐՅԱՆԻՆ, 1938, 23 սեպտեմբերի, Երևան
ՆԱԻՐԻ ՋԱՐՅԱՆԻՆ, 1943, 23 սեպտեմբերի, Երևան
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1900, 26 դեկտեմբերի, Բեռլին
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1907, 4 հունիսի, Ալեքսանդրոպոլ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1908, 6 մայիսի, Ալեքսանդրոպոլ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1912, 12 հունիսի, Պոլիս
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1914, 9 հոկտեմբերի, Բեռլին
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1921, 23 հունիսի, Վենետիկ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1922, 23 մայիսի, Վենետիկ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1922, 4 դեկտեմբերի, Վենետիկ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1923, 29 դեկտեմբերի, Վենետիկ
ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ, 1924, 31 մարտի, Վենետիկ
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ, 1898, Օդեսա
ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ, 1930, 17 նոյեմբերի, Փարիզ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ, 1926, 30 հոկտեմբերի, Երևան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1932, 6 հունիսի, Փարիզ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1953
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԻՆ, 1906, 4 օգոստոսի, Ղազարապատ
ՆԻՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, 1955, 12 ապրիլի, Երևան
Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, 1947, 7 հոկտեմբերի, Երևան
«ՆՈՐ ԿՅԱՆՔ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ, 1907, 16 հուլիսի, Ալեքսանդրոպոլ
ՆՎԱՐԴ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1919, Հուլիս, ժնև

Շ

ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ, 1924, 24 մարտի, Վենետիկ
ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ, 1924, 14 մայիսի, Վենետիկ
ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ, 1956, 14 դեկտեմբերի, Երևան
ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ, 1907, 11 հոկտեմբերի, Թիֆլիս
ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻՆ, 1907, 11 դեկտեմբերի, Թիֆլիս
ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1893, 28 մարտի, Էջմիածին
ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ, 1904, սեպտեմբեր, Ղազարապատ

Պ

ՊԱՀԱՐԵԻՆ, 1940, 26 հունվարի, Երևան

ՊԱՀԱՐԵԻՆ, 1940, 25-27 հուլիս, Թիֆլիս
ՊԱՀԱՐԵԻՆ, 1940, 29 հուլիսի, Երևան
ՊԱՀԱՐԵԻՆ, 1941, 29 մարտի, Երևան
ՊԱՀԱՐԵԻՆ, 1942, 30 դեկտեմբերի, Երևան
ՊԱՀԱՐԵԻՆ, 1943, 29 դեկտեմբերի, Երևան
ՊԱՀԱՐԵԻՆ, 1945, փետրվար, Երևան
ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՅԻՆ, 1954, 13 հուլիսի, Երևան
ՊԱՎԼՈ ՏԻՋԻՆԱՅԻՆ, 1954, 7 օգոստոսի, Երևան
ՊԵՏՐՈՍ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ, 1935, 6 հուլիսի, Փարիզ
ՊՈԼՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ, 1918, 4 օգոստոսի, Բեռլին
ՊՈԼՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ, 1918, 9 օգոստոսի, Բեռլին
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1921, 1 հուլիսի, Վենետիկ
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1925, 23 նոյեմբերի, Վենետիկ
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1926, 4 հունվարի, Վենետիկ
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1926, 18 ապրիլի, Վենետիկ
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1926, 29 մայիսի, Վենետիկ
ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ, 1926, 2 օգոստոսի, Վենետիկ

Ջ

ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, 1900, 2 դեկտեմբերի, Ցյուրիխ
ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, 1901, 11 մարտի, Վիեննա
ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, 1901, 6 հունիսի, Վենետիկ
ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ, 1902, դեկտեմբեր, Բաքու

Ռ

ՌԱԴԻՈՆԱՄԱԿ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ, 1955, 29 հոկտեմբերի, Երևան
ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ, 1936, մայիս, Փարիզ
ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ, 1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ
ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ, 1927, 5 փետրվարի, Երևան
ՌՈՒԲԵՆ ԳՅԱՆՋԵՑՅԱՆԻՆ, 1944, 14 հուլիսի, Երևան
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1922, 22 օգոստոսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1922, 24 սեպտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 25 փետրվարի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 20 մարտի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 25 մարտի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 4 մայիսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 7 հունիսի, Վենետիկ

ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 15 սեպտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 24 սեպտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 8 նոյեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1923, 2 դեկտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 25 Հունվարի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 3 ապրիլի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 15 Հուլիսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 9 օգոստոսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 24 օգոստոսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 14 Հոկտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1924, 10 դեկտեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1925, 2 փետրվարի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1925, 12 փետրվարի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1925, 20 մայիսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1925, 17 նոյեմբերի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1926, Հուլիս, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1926, 1-5 օգոստոսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ, 1926, 6 օգոստոսի, Վենետիկ
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1939, 12 Հունվարի, Երևան
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1939, 13 Հունվարի, Երևան
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1939, 30 Հուլիսի, Ծաղկաձոր
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1940, 24 Հունիսի, Բորժոմ
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1940, 6 դեկտեմբերի, Երևան
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1942, 3 Հունվարի, Երևան
ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ, 1944, 4 Հուլիսի, Երևան
ՌՈՒԶԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, 1945, 28 դեկտեմբերի, Երևան

Ս

ՍԱՀԱԿ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ, 1947, 29 մարտի, Երևան
ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ, 1930, 8 սեպտեմբերի, Փարիզ
ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ, 1931, 20 փետրվարի, Փարիզ
ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ, 1934, 5 օգոստոսի, Փարիզ
ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ, 1934, 11 դեկտեմբերի, Փարիզ
«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՄԲԻՆ, 1939, 4 օգոստոսի, Ծաղկաձոր
ՍԱՐԳԻՍ ԱԹԱՅԱՆՑԻՆ, 1918, 5 դեկտեմբերի, Ժնև
ՍԱՐԳԻՍ ԱԹԱՅԱՆՑԻՆ, 1918, 20 դեկտեմբերի, Ժնև
ՍԱՐԳԻՍ ԱԹԱՅԱՆՑԻՆ, 1918, 23 դեկտեմբերի, Ժնև
ՍԱՐԳԻՍ ԱԹԱՅԱՆՑԻՆ, 1919, 11 փետրվարի, Ժնև
ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ, 1936, 28 փետրվարի, Փարիզ

ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ, 1936, 22 ապրիլի, Փարիզ
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1923, 1 փետրվարի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1923, 12 փետրվարի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1923, 27 սեպտեմբերի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1923, 13 հոկտեմբերի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1924, 11 մարտի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ, 1924, 1 դեկտեմբերի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ, 1925, 3 փետրվարի, Վիեննական
ՍԱՐԳԻՍ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ, 1930, 24 հունիսի, Փարիզ
ՍԱՐԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ, 1940, 9 դեկտեմբերի, Երևան
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1934, 9 հուլիսի, Փարիզ
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1934, 27 հուլիսի, Փարիզ
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1934, 30 օգոստոսի, Փարիզ
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1940, 25 հունվարի, Երևան
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1940, 12 սեպտեմբերի, Երևան
ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ, 1952, 22 հոկտեմբերի, Երևան
ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1944, 15 սեպտեմբերի, Լենինական
ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1944, 20 սեպտեմբերի, Լենինական
ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1944, 27 սեպտեմբերի, Երևան
ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ, 1957
ՍԻԱՄԱՆԹՈՅԻՆ, 1914, 21 ապրիլի, Բեռլին
ՍԻՄՈՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ, 1913, դեկտեմբեր, Փարիզ
ՍԻՄՈՆ ԵՐԵՄՅԱՆԻՆ, 1921, 2 հոկտեմբերի, Ազոլո
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1919, 24 նոյեմբերի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1919, 3 դեկտեմբերի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1919, 30 դեկտեմբերի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 8 փետրվարի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 2 մարտի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 24 մարտի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 28 ապրիլի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 1 մայիսի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 5 մայիսի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 12 մայիսի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 14 մայիսի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 29 օգոստոսի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1920, 5 սեպտեմբերի, Ժնև
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 14 ապրիլի, Վիեննական
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 24 օգոստոսի, Ազոլո
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 8 նոյեմբերի, Վիեննական
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 14 նոյեմբերի, Վիեննական
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 26 նոյեմբերի, Վիեննական

ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 2 դեկտեմբերի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1921, 28 դեկտեմբերի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 1-10 հունվար, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 12 հունվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 20 հունվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 21 հունվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 23 հունվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 2 փետրվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 10 փետրվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 14 փետրվարի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, փետրվար, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 2 մարտի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 14 մարտի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 4 ապրիլի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 16 ապրիլի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 28 ապրիլի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 1 մայիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 14 մայիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 31 մայիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1922, 12 հունիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, 1923, 21 հունիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1912, 19 հոկտեմբերի, Ցյուրիխ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1912, 26 հոկտեմբերի, Ցյուրիխ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1912, 4 նոյեմբերի, Ցյուրիխ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1913, 5 հունվարի, Ժնև
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1913, 23 ապրիլի, Ժնև
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1914, 23 ապրիլի, Բեռլին
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1922, 30 մայիսի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1923, 15 փետրվարի Վենետիկ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1924, 10 դեկտեմբերի, Վենետիկ
ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ, 1931, 25 հուլիսի, Փարիզ
ՍԻՐՎԱՐԴԻՆ, 1955
ՍՈՂՈՄՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ, 1941, 2 մայիսի, Երևան
ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒՆ, 1950, 21 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1926, 15 սեպտեմբերի, Լիդո
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 3 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 8 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 29 հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 4 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 10 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 11 նոյեմբերի, Երևան

ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 17 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 21 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 30 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 6 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1927, 23 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 25 փետրվարի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 25 ապրիլի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 21 մայիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 31 մայիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 15 Հունիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 9 Հուլիսի, Լենինական
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 2 օգոստոսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 29 օգոստոսի, Լենինական
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 13 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 26 սեպտեմբերի, Կիսլո-
վոդսկ
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 22 Հոկտեմբերի, Կիսլո-
վոդսկ
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 17 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 12 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 19 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1928, 29 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 5 մարտի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 13 ապրիլի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 25 ապրիլի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 20 մայիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 10 Հունիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 2 Հուլիսի, Լենինական
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 23 Հուլիսի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 6 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 29 Հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1929, 5 դեկտեմբերի, Լենինա-
կան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1930, 7 մարտի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1930, 19 մարտի, Երևան
ՍՈՖՅԱ, ԵՎ, ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ, 1930, 29 Հունվարի, Երևան
ՍՈՖՅԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1914, 10 նոյեմբերի, Բեռլին
ՍՈՖՅԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1924, 14 ապրիլի, Բերգամո
ՍՈՖՅԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 9 փետրվարի, Փարիզ
ՍՈՖՅԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 15 փետրվարի, Փարիզ
ՍՈՖՅԱ, ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 25 փետրվարի, Փարիզ

ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 1 մարտի, Փարիզ
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 26 սեպտեմբերի, Սև ծով
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 12 հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 30 հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 7 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 26 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 23 հունվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 31 հունվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 16 փետրվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 27 փետրվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 5 ապրիլի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 3 մայիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 26 մայիսի, Թիֆլիս
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 8 հունիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 9 հուլիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 21 հուլիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 3 հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 3 հոկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 5 հունվարի, Լենինական
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 16 հունվարի, Լենինական
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 13 փետրվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 2 մարտի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 5 ապրիլի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 19 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 8 դեկտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1929, 25 հունվարի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1929, 25 նոյեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1937, 10 մայիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1939, 16 դեկտեմբերի, Բաքու
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1940, 18 հունիսի, Քութայիս
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1940, 2 հուլիսի, Աբաստումանի
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1940, 7 հուլիսի, Ախալցխա
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1940, 13 հուլիսի, Բորժոմ
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1941, 26 հունիսի, Էսենտուկի
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1941, 1 հուլիսի, Էսենտուկի
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1941, 3 հուլիսի, Էսենտուկի
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1941, 10 հուլիսի, Էսենտուկի
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1943, 28 հուլիսի, Իրինդ
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1943, 22 օգոստոսի, Իրինդ
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1949, 15 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1953, 10 սեպտեմբերի, Երևան

ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1953, 23 սեպտեմբերի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1954, 5 օգոստոսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1955, 6 հուլիսի, Երևան
ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1955, 5 օգոստոսի, Երևան
ՍՏԵՓԱՆ ՋՈՐՅԱՆԻՆ, 1930, 14 հունիսի, Փարիզ
ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ, 1893, 18 մայիսի, Ալեքսանդրոպոլ
ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ, 1893, 30 հոկտեմբերի, Լայպցիգ
ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ, 1893, 20 նոյեմբերի, Լայպցիգ
ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ, 1910, 17 ապրիլի, Ղազարապատ
ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԻՆ, 1910, 24 ապրիլի, Ղազարապատ
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ, 1956, 25 դեկտեմբերի, Երևան

Վ

ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, 1955, ապրիլ, Երևան
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1919, 26 նոյեմբերի, Ժնև
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1919, 30 դեկտեմբերի, Ժնև
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1921, 3 նոյեմբերի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1922, 6 ապրիլի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1931, 7 հոկտեմբերի, Փարիզ
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1934, 25 ապրիլի, Փարիզ
ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ, 1934, 6 հունիսի, Ռուասսի
ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ, 1932, 5 հուլիսի, Փարիզ
ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ, 1936, 7 սեպտեմբերի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ, 1936, 19 սեպտեմբերի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1949, 29 հոկտեմբերի, Երևան
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1950, 20 սեպտեմբերի, Երևան
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1951, հունիս, Երևան
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1951, 3 սեպտեմբերի, Կիսլովոդսկ
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1952, 17 հունվարի, Երևան
ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ, 1952, 1 փետրվարի, Երևան
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1923, 18 դեկտեմբերի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1924, 3 ապրիլի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1924, 28 օգոստոսի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 6 մարտի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 16 մարտի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 25 մարտի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 21 հուլիսի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 3 օգոստոսի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1925, 12 դեկտեմբերի, Վիեննաիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1926, 26 հունվարի, Վիեննաիկ

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1926, 30 ապրիլի, Վենետիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1926, 6 օգոստոսի, Վենետիկ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1930, 11 օգոստոսի, Փարիզ
ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ, 1931, 29 օգոստոսի, Փարիզ
ՎԱՀԵ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻՆ, 1925, 1 ապրիլի, Վենետիկ
ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆԻՆ, 1943, 1 դեկտեմբերի, Երևան
ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆԻՆ, 1946, 6 հունիսի, Երևան
ՎԱՀՐԱՄ ԱԼԱՋԱՆԻՆ, 1934, Փարիզ
ՎԱՂԻՆԱԿ ՄՌԱՎՅԱՆԻՆ, 1948, 7 դեկտեմբեր, Երևան
ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ, 1924, 16 հունվարի, Վենետիկ
ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ, 1941, 9 օգոստոսի, Երևան
ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ, 1949, 4 հոկտեմբերի, Երևան
ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ, 1951, 9 նոյեմբերի, Երևան
ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ, 1953, 28 մարտի, Երևան
ՎԱՐԴԱՆ ՄԵԼԵՔՍԵԹԵԿՅԱՆԻՆ, 1900, 13 մայիսի, Ցյուրիխ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1921, 18 օգոստոսի, Ազոլո
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1921, 14 սեպտեմբերի, Ազոլո
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1921, 24 դեկտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1921, 25 դեկտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 24 հունվարի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 9 մայիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 23 մայիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 8 հունիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 13 հուլիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 25 օգոստոսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 1 սեպտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 6 սեպտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 3 նոյեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 29 նոյեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 8 դեկտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1922, 28 դեկտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 30 հունվարի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 5 մայիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 27 մայիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 10 հունիսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 12 օգոստոսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 12 սեպտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1923, 25 սեպտեմբերի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1924, 21 փետրվարի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1924, 9 օգոստոսի, Վենետիկ
ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ, 1925, 18 հունվարի, Վենետիկ

ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ, 1954, Երևան
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, 1927, 14 Հունվարի, Երևան
ՎԱՐՅԱ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, 1930, 7 Մարտի, Երևան
ՎԵՍՊԵՐԻՆ, 1949, աշուն, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1922, 27 սեպտեմբերի, Հոմ
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1924, 5 սեպտեմբերի, Թրիեստ
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1924, 8 սեպտեմբերի, Պոստումիա
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 7 դեկտեմբերի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1926, 26 դեկտեմբերի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 23 Հունվարի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 1 Մարտի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 1 Մարտի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 1 Մարտի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 12 Մայիսի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, 10 Հունիսի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1927, սեպտեմբեր, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1928, 8 դեկտեմբերի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1929, 25 Հունվարի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1936, 13 հոկտեմբերի, Վենետիկ
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, 1955, 29 Հունիսի, Երևան
ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ, Շաֆհաուզեն
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1907, 10 ապրիլի, Վիեննա
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 22 մարտի, Ղազարապատ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 5 ապրիլի, Ղազարապատ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 2 մայիսի, Ղազարապատ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 21 մայիսի, Ղազարապատ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 11 Հունիսի, Ալեքսանդրոպոլ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 1 հոկտեմբերի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 8 հոկտեմբերի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1910, 31 դեկտեմբերի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 13 Հունվարի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 31 Հունվարի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 8 փետրվարի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 3 ապրիլի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 5 Հունիսի, Թիֆլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 25 Հուլիսի, Կարին
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 3 օգոստոսի, Տրապիզոն
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 11 օգոստոսի, Տրապիզոն
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 12 օգոստոսի, Պոլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 11 սեպտեմբերի, Պոլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 19 սեպտեմբերի, Պոլիս

ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1911, 24 նոյեմբերի, Պոլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1912, 24 ապրիլի, Պոլիս
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1912, 24 ապրիլի, Պրինկիպո
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1912, 24 ապրիլի, Պրինկիպո
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1912, 16 հուլիսի, Վիեննա
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1913, 26 դեկտեմբերի, Փարիզ
ՎԻԿՏՈՐԻԱ ԱԲՈՎՅԱՆԻՆ, 1913, 31 դեկտեմբերի, Փարիզ
Վ. ՄՈՒՍԱՑԵԼՅԱՆԻՆ, 1937, 2 հունիսի, Երևան
ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ, 1940, 22 հունիսի, Բորժոմ
Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻՆ, 1947, 9 հունվարի, Երևան

Տ

ՏԵՆՃՅԱՆԻՆ, 1931, 9 մարտի, Փարիզ
ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ, 1947, 29 օգոստոսի, Երևան
ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, 1916, 19 հուլիսի, Ժնև
ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃՅԱՆԻՆ, 1912, 6 օգոստոսի, Վիեննա
ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ, 1943, 1 դեկտեմբերի, Երևան
ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՋԵԻՆ, 1929, 19 սեպտեմբերի, Երևան

Ց

ՑՈԼԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆ, 1916, 28 նոյեմբերի, Ժնև
ՑՈԼԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆ, 1917, 28 հունվարի, Ժնև
ՑՈԼԱԿ ԽԱՆԶԱԴՅԱՆԻՆ, 1917, 24 մարտի, Ժնև

ՈՒ

ՈՒՂԵՐՁ ԱՎԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆՅԱՆՑԻՆ, 1898, հոկտեմբեր, Օդեսա

Փ

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ, 1933, 1 ապրիլի, Փարիզ
ՓԱՐՍԱԴԱՆ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1915, 25 հունվարի, Ժնև
ՓԱՐՍԱԴԱՆ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1915, 21 նոյեմբերի, Ժնև
ՓԱՐՍԱԴԱՆ ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, 1917, 8 նոյեմբերի, Ժնև

Ք

ՔՈՒԹԱՅԻՍԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՈՒԲԵԼՅԱՆԻՆ, 1940, 18 հունիսի, Քութայիս

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, 1901, 22 փետրվարի, Վիեննա

Օ

ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ, 1939, 28 մայիսի, Երևան

Ֆ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ, 1935, 23 հոկտեմբերի, Փարիզ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ըստ էջերի
Ըստ նամակների

1924

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1924, 5 հունվարի, Վենետիկ 7 640
2. ՎԱՎԱ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ
1924, 16 հունվ<արի>, Վենետիկ 8 640
3. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1924, 25 հունվարի, Վենետիկ 9 642
4. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 28 հունվարի, Վենետիկ 10 643
5. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 4 փետրվ<արի>, Վենետիկ 11 644
6. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
1924, 12 փետրվ<արի>, Վենետիկ 11 644
7. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
1924, 21 փետրվարի, Վենետիկ 13 645
8. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
<1924> 23 փետրվ<արի, Վենետիկ> 17 647
9. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1924, 9 մարտի, Վենետիկ 17 648
10. ՍԱՐԳԻՍ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ
1924, 11 մարտի, Վենետիկ 18 648
11. ԳԵՎՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑԻՆ
1924, 22 մարտի, Վենետիկ 19 649
12. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ
1924, 24 մարտի, Վենետիկ 20 650
13. <ԱՐՄԱՆ> ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 26 մարտի, Վենետիկ 22 651
14. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԻՆ
1924, 31 մարտի, Վենետիկ 23 651

15. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 3 ապրիլի, Վենետիկ 24 652
16. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1924, 3 ապրիլի, Վենետիկ 27 653
17. ՍՈՓՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1924, 14 ապրիլի, Բերգամո> 30 656
18. ԱՐՄԱՆ <ՍԱՐՅԱՆԻՆ>
1924, 29 ապրիլի, Վենետիկ 31 656
19. ՇԱՎԱՐՇ ՄԻՍԱՔՅԱՆԻՆ
1924, 14 մայիսի, Վենետիկ 32 656
20. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
<19>24, 2 հունիսի, Վենետիկ 34 657
21. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
<1924, 4 հուլիսի>, Վենետիկ 36 658
22. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 15 հուլիսի, Վենետիկ 36 659
23. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
<19>24, 30 հուլիսի, Վենետիկ 38 659
24. <ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ>
<1924>, 4 օգ<ոստոսի>, Վենետիկ 38 660
25. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 5 օգոստ<ոսի>, Վենետիկ 39 660
26. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
<1924>, 9 օգոստոսի, Վենետիկ 40 661
27. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
1924, 9 օգոստոսի, Վենետիկ 41 661
28. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 9 օգոստոսի, Վենետիկ 43 661
29. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 19 օգոստ<ոսի>, Վենետիկ 45 662
30. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 24 օգոստոսի, Վենետիկ 46 662
31. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1924, 28 օգոստոսի, Վենետիկ 48 663
32. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 28 օգոստ<ոսի>, Վենետիկ 50 664

33. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1924, 30 օգոստ<ոսի>, Վենետիկ 51 664
34. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1924, 5 սեպտեմբերի, Թրիեստ> 52 664
35. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1924, 8 սեպտեմբերի>, Պոստումիա 52 665
36. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 12 սեպտեմ<բերի>, Վենետիկ 52 665
37. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1924, 12 սեպ<տեմբերի>, Վենետիկ 53 665
38. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ
1924, 19 սեպտ<եմբերի>, Վենետիկ 55 667
39. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 28 սեպ<տեմբերի>, Վենետիկ 57 667
40. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ
1924, 3 հոկտ<եմբերի>, Վենետիկ 59 669
41. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 8 հոկտեմբերի, Վենետիկ 60 669
42. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 14 հոկտեմբերի, Վենետիկ 61 670
43. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 20 հոկտեմբ<երի>, Վենետիկ 63 671
44. ԵՐՎԱՆԴ ԵՎ ՎԵՐԺԻՆԵ ԽԱԹԱՆԱՍՅԱՆՆԵՐԻՆ
1924, 25 հոկտ<եմբերի>, Վենետիկ 63 671
45. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
<1924>, 26 հոկտ<եմբերի>, Վենետիկ 65 672
46. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 29 հոկտ<եմբերի>, Վենետիկ 66 673
47. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 8 նոյեմբ<երի>, Վենետիկ 68 673
48. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 12 նոյեմբ<երի>, Վենետիկ 71 673
49. ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ
1924, 1 դեկտեմբ<երի>, Վենետիկ 74 675
50. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 9 դեկտեմբ<երի>, Վենետիկ 75 676

51. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1924>, 10 դեկտեմբերի, Վենետիկ 75 676
52. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ
1924, 10 դեկտեմբերի, Վենետիկ 76 677
53. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 16 դեկտեմբերի, Վենետիկ 79 678
54. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1924, 18 դեկտեմբերի, Վենետիկ 79 678
55. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
1924, 24 դեկտեմբ<երի>, Վենետիկ..... 81 679

1925

56. ՎԱՐԴԳԵՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻՆ
1925, 18 հունվարի, Վենետիկ 83 680
57. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
1925, 29 հունվարի, Վենետիկ 85 680
58. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1925, 2 փետրվարի, Վենետիկ.....88 681
59. ՀԱՄԱՍՏԵՂԻՆ
1925, 2 փետրվ<արի>, Վենետիկ 89 681
60. ՍԱՐԳԻՍ ԵՎ ՎԱՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆՆԵՐԻՆ
1925, 3 փետրվարի, <Վենետիկ> 92 682
61. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
1925, 3 փետրվ<արի>, Վենետիկ 94 683
62. ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
1925, 10 փետրվարի, Վենետիկ.....95 683
63. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1925, 12 փետրվարի, Վենետիկ.....97 684
64. ԱՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԻՆ
1925, 23 փետրվ<արի>, Վենետիկ 100 685
65. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 6 մարտի, Վենետիկ 101 686
66. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 16 մարտի, Վենետիկ 102 686

67. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 25 մարտի, Վենետիկ 103 686
68. ՎԱՀԵ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆԻՆ
1925, 1 ապրիլի, Վենետիկ 104 687
69. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1925, 22 ապրիլի, Վենետիկ 105 688
70. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1925, 20 մայիսի, Վենետիկ 107 688
71. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
<1925>, 26 մայիսի, Վենետիկ 109 689
72. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1925, 10 հունիսի, Վենետիկ 110 689
73. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 21 հուլիսի, Վենետիկ 110 690
74. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
1925 28 հուլիսի, Վենետիկ 114 691
75. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻՆ
<1925>, 31 հուլիսի, Վենետիկ 116 692
76. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 3 օգոստոսի, Վենետիկ 117 692
77. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ
1925, 23 հոկտեմբ<երի>, Վենետիկ 118 693
78. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1925, 17 նոյեմբերի, Վենետիկ 119 694
79. ՀԱԿՈԲ-ԳՐԻԳՈՐ ՃՐՃՐՅԱՆԻՆ
1925, 19 նոյեմբերի, Վենետիկ 122 694
80. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ
1925, 23 նոյեմբերի, Վենետիկ 123 695
81. <ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻՆ>
<1925, 1-12 դեկտեմբերի, Վենետիկ> 124 696
82 ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1925, 12 դեկտեմբերի, Վենետիկ 128 698
83. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆԻՆ
<1925, 25-30 դեկտեմբերի, Վենետիկ> 130 698

84. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ
1926, 4 հունվարի, Վենետիկ 133 699
85. ԴԱՎԻԹ <ԱՆԱՆՈՒՆԻՆ>
<1926, 15 հունվարի, Վենետիկ> 134 699
86. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1926, 15 հունվարի, Վենետիկ 137 699
87. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
<1926>, 26 հունվարի, Վենետիկ 138 701
88. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1926, 31 հունվարի, Վենետիկ 141 701
89. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1926, 9 փետրվարի, Փարիզ> 146 702
90. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 15 փետրվարի, Փարիզ 148 703
91. ՋԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ
<1926>, 18 փետրվարի, Փարիզ 151 706
92. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
1926, 19 փետրվարի, Փարիզ 152 707
93. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 25 փետրվ<արի, Փարիզ> 152 707
94. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 1 մարտի, Փարիզ 155 708
95. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ
1926, 18 ապրիլի, Վենետիկ 156 709
96. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1926, 30 ապրիլի, Վենետիկ 157 709
97. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ
1926, 12 մայիսի, Վենետիկ 160 710
98. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ
1926, 29 մայիսի, Վենետիկ 161 710
99. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1926, հուլիս>, Վենետիկ 162 711
100. ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՑՅԱՆԻՆ
<1926, 2 օգոստոսի>, Վենետիկ 165 711

101. ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻՆ
<19>26, 3 օգոստոսի, Վենետիկ 166 711
102. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
<1926, 1-5 օգոստոսի>, Վենետիկ 168 712
103. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1926, 6 օգոստոսի, Վենետիկ 170 713
104. ՌՈՒԲԵՆ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1926, 6 օգոստոսի, Վենետիկ 170 713
105. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1926, 15 օգոստ<ոսի>, Վենետիկ 171 713
106. ԵՐՎԱՆԴ ԽԱԹԱՆԱՍՅԱՆԻՆ
1926, 15 սեպտեմբերի, Վենետիկ 172 714
107. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1926, 15 սեպ<տեմբերի>, Լիդո 173 714
108. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 26 սեպտեմբերի, Սև ծով 174 715
109. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 12 հոկտեմբերի, Երևան 175 716
110. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 30 հոկտեմ<բերի>, Երևան 179 717
111. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻՆ
1926, 30 հոկտեմբերի, Երևան 180 718
112. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
<1926, 23 նոյեմբերի>, Երևան 182 718
113. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 7 դեկտեմբ<երի>, Երևան 182 718
114. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 7 դեկտեմբերի, Երևան 185 719
115. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 26 դեկտեմբերի, Երևան 187 720
116. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1926, 26 դեկտեմբերի, Երևան 188 720

1927

117. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
1927, 14 հունվարի, Երևան 190 721

118. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 23 հունվարի, Երևան 191 721
119. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 23 հունվարի, Երևան 192 721
120. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 31 հունվարի, Երևան 193 722
121. ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ
1927, 5 փետրվարի, Երևան 194 722
122. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 16 փետրվարի, Երևան 194 723
123. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 27 փետրվարի, Երևան 195 723
124. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 1 մարտի, Երևան 197 724
125. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927, 1 մարտի, Երևան> 198 724
126. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927, 1 մարտի, Երևան> 198 724
127. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927>, 5 ապրիլի, Երևան 198 725
128. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 3 մայիսի, Երևան 200 725
129. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 12 մայիսի, Երևան 202 725
130. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1927, 17 մայիսի, Երևան 203 725
131. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927, 26 մայիսի>, Թիֆլիս 203 726
132. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927>, 8 հունիսի, Երևան 204 726
133. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 10 հունիսի, Երևան 205 726
134. ԼՈՒԻԿԻՆ
1927, 21 հունիսի, Օշական 206 727
135. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 9 հուլիսի, Երևան 206 727

136. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 21 հուլիսի, Երևան 207 727
137. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 3 սեպտեմբերի, Երևան 208 728
138. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 8 սեպտեմբ<երի>, Երևան 212 728
139. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1927, սեպտեմբեր, Երևան> 213 729
140. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 3 հոկտ<եմբերի>, Երևան 214 729
141. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1927, 3 հոկտեմբերի, Երևան 215 729
142. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
<1927>, 29 հոկտեմբ<երի>, Երևան 215 729
143. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 4 նոյեմբերի, Երևան 216 730
144. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
<1927, 10 նոյեմբերի, Երևան> 217 730
145. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 11 նոյեմբ<երի>, Երևան 218 730
146. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 17 նոյեմբ<երի>, Երևան 218 730
147. . ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 21 նոյեմբ<երի>, Երևան 219 731
148. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
<1927>, 30 նոյեմբ<երի>, Երևան 220 731
149. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 6 դեկտեմբ<երի>, Երևան 222 731
150. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1927, 23 դեկտեմբերի, Երևան 224 732

1928

151. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 5 հունվարի, Լենինական 227 732
152. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 16 հունվարի, Լենինական 228 732

153. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 13 փետրվ<արի>, Երևան 229 733
154. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 25 փետրվարի, Երևան 229 733
155. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 2 մարտի, Երևան 231 733
156. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒՆ
1928, 2 ապրիլի, Երևան 232 734
157. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 5 ապրիլի, Երևան 232 735
158. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 25 ապրիլի, Երևան 233 735
159. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 21 մայիսի, Երևան 234 735
160. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 31 մայիսի, Երևան 236 735
161. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 15 հունիսի, Երևան 237 735
162. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1928, 24 հունիսի, Երևան 239 736
163. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 9 հուլիսի, Լենինական 239 736
164. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 2 օգոստ<ոսի>, Երևան 241 738
165. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 29 օգոստոսի, Լենինական 242 738
166. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 13 սեպ<տեմբերի>, Երևան 243 738
167. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1928, 19 սեպտեմբերի>, Երևան 244 739
168. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
<1928>, 25 սեպտեմբերի, Կիսլովոդսկ 245 739
169. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 26 սեպտեմբերի, Կիսլովոդսկ 246 739
170. ԱՍՔԱՆԱԶ ՄՌԱՎՅԱՆԻՆ
1928, 8 հոկտեմբերի, Կիսլովոդսկ 247 740

171. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 22 հոկտեմբ<երի>, Կիսլովոդսկ 247 740
172. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 17 նոյեմբ<երի>, Երևան 249 740
173. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1928, 8 դեկտեմբերի, Երևան 250 740
174. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1928, 8 դեկտեմբերի>, Երևան 252 741
175. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 12 դեկտեմբերի, Երևան 254 741
176. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 19 դեկտեմբերի, Երևան 256 741
177. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1928, 29 դեկտեմբերի, Երևան 257 742

1929

178. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1929, 25 հունվարի, Երևան 259 742
179. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1929, 25 հունվարի, Երևան 260 742
180. ՀԱԿՈԲ ԽԱՆԼԱՐՅԱՆԻՆ
1929, 28 հունվարի, Երևան 261 743
181. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 5 մարտի, Երևան 262 743
182. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 13 ապրիլի, Երևան 263 744
183. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 25 ապրիլի, Երևան 265 744
184. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 20 մայիսի, Երևան 266 744
185. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 10 հունիսի, Երևան 267 744
186. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ
1929, 17 հունիսի, Թիֆլիս 268 745
187. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 2 հուլիսի, Լենինական 268 745

188. ՄԻՍԱԿ ԷՓՐԻԿՅԱՆԻՆ
1929, 3 հուլիսի, Լենինական 270 746
189. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 23 հուլիսի, Երևան 270 746
190. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 6 սեպտեմբ<երի>, Երևան 271 746
191. ՏԻՑԻԱՆ ՏԱԲԻՋԵԻՆ
1929, 19 սեպտեմբերի, Երևան 273 747
192. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 29 հոկտեմբ<երի>, Երևան 274 747
193. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
1929, 30 հոկտեմբերի, Երևան 275 748
194. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ
1929, 13 նոյեմբերի, Երևան 276 748
195. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
1929, 19 նոյեմբերի, Երևան 276 748
196. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1929, 25 նոյեմբերի, Երևան 277 749
197. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1929, 5 դեկտեմբերի, Լենինական 278 749

1930

198. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
1930, 2 հունվարի, Երևան 279 749
199. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1930, 29 հունվարի, Երևան 279 750
200. ԿԱՐԱ ԴԱՐՎԻՇԻՆ
1930, 11 փետրվ<արի>, Երևան 280 750
201. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
<1930, 7 մարտի, Երևան> 281 750
202. ՎԱՐՅԱ ՔՈՋԱՐՅԱՆԻՆ
1930, 7 մարտի, Երևան 282 750
203. ՍՈՖՅԱ ԵՎ ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1930, 19 մարտի, Երևան 282 751
204. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1930, 1 ապրիլի, Թիֆլիս 283 751

205. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1930, 21 մայիսի, Բեռլին 283 751
206. ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻՆ
1930, 14 հունիսի, Փարիզ 284 751
207. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1930, 14 հունիսի, Փարիզ 284 752
208. Ս<ԱՐԳԻՍ> ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
1930, 24 հունիսի, Փարիզ 285 752
209. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ
1930, 15 հուլիսի, Փարիզ 285 752
210. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1930, 2 օգոստոսի, Փարիզ 286 752
211. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1930, 11 օգոստոսի, Փարիզ 286 753
212. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
1930, 8 սեպտեմբերի, Փարիզ 289 753
213. ԱՐՏԱԿ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ
1930, 6 հոկտ<եմբերի>, Փարիզ 289 753
214. ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻՆ
1930, 17 նոյեմբերի, Փարիզ 290 754
215. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1930, 23 դեկտեմբերի, Փարիզ 291 755

1931

216. <ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ>
1931, 28 հունվարի, Փարիզ 294 756
217. ՍԱՀԱԿ ՏԵՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
1931, 20 փետրվարի, Փարիզ 295 756
218. ՏԵՆՃՅԱՆԻՆ
1931, 9 մարտի, Փարիզ 296 757
219. ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻՆ
<1931>, 27 ապրիլի, Փարիզ 297 757
220. ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ
1931, 25 հուլիսի, Փարիզ 298 757
221. ԳԱՐԵԳԻՆ ԱՄԱՏՅԱՆԻՆ
1931, 13 օգոստոսի, Փարիզ 298 758

222. ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
1931, 29 օգոստոսի, Փարիզ 299 758
223. ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻՆ
1931, 16 սեպտեմբերի, Փարիզ 299 758
224. ՎԱՀԱՆ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ
1931, 7 հոկտեմբերի, Փարիզ 300 759
225. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ
1931, 19 հոկտեմբերի, <Փարիզ> 302 759
226. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
<1931>, 25 հոկտեմբերի, Փարիզ 303 760
227. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
<1931, Փարիզ> 304 761

1932

228. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
<1932>, 19 մայիսի, Փարիզ 305 761
229. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1932, 4 հունիսի, Փարիզ 306 762
230. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1932, 6 հունիսի, Փարիզ 307 762
231. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ
1932, 5 հուլիսի, Փարիզ 309 763
232. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1932, 7 օգոստոսի, Փարիզ 310 763

1933

233. ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆԸ
1933, 1 ապրիլի, Փարիզ 313 764
234. ՍԱՀԱԿ ՏԵՐ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
1934, 5 օգոստոսի, Փարիզ 317 765
235. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1934, 18 օգոստոսի, Փարիզ 319 766
236. ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻՆ
1934, 22 օգոստոսի, Փարիզ 320 766

237. ԱՐՄԵՆԱԿ ԹՈՔՄԱՋՅԱՆԻՆ
1934, 2 սեպտեմբերի, Փարիզ 323 768
238. ՋԱՐԵՀ ՈՐԲՈՒՆՈՒՆԻ
1934, 5 հոկտեմբերի, Փարիզ 325 768
239. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1934, 26 հոկտեմբերի, Կոլլոնժ 326 769

1934

240. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
<1934, փետրվար, Փարիզ> 328 770
241. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1934, 29 մարտի, Փարիզ 330 771
242. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ
<1934>, 25 ապրիլի, Փարիզ 332 772
243. ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՎ ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆՆԵՐԻՆ
1934, 25 ապրիլի, Փարիզ 334 773
244. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
<1934>, 30 ապրիլի, Փարիզ 336 773
245. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
<1934>, 21 մայիսի, Ռուասսի 338 774
246. ՎԱՀԱՆ ՋԱՔԱՐՅԱՆԻՆ
1934, 6 հունիսի, Ռուասսի 339 774
247. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1934, 6 հունիսի, Ռուասսի 342 775
248. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
<1934, 9 հուլիսի, Փարիզ> 345 776
249. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
1934, 27 հուլիսի, Փարիզ 346 777
250. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
1934, 30 օգոստոսի, Փարիզ 347 778
251. ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
1934, 31 օգոստոսի, Փարիզ 350 779
252. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1934, 13 սեպտեմբերի, Փարիզ 351 779
253. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
1934, 7 դեկտեմբերի, Փարիզ 352 780

254. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ
1934, 11 դեկտեմբերի, Փարիզ 354 782
255. ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆԻՆ
<1934, Փարիզ> 358 783

1935

256. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
<1935>, 4 ապրիլի, Փարիզ 361 783
257. ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂՅԱՆԻՆ
1935, 2 մայիսի, Փարիզ 362 784
258. ԵՐՎԱՆԴ <ՔՈՉԱՐԻՆ>
1935, 22 մայիսի, Փարիզ 362 784
259. ՊԵՏՐՈՍ ՏՈՆԱՊԵՏՅԱՆԻՆ
1935, 6 հուլիսի, Փարիզ 363 785
260. ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
<1935>, 1 օգոստոսի, Փարիզ 364 786
261. ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ
1935, 23 հոկտեմբերի, Փարիզ 365 786
262. ԳԵՂԱՄ ԱՖՐԻԿՅԱՆԻՆ
1935, 1 նոյեմբերի, Փարիզ 366 787
263. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1934, 3 նոյեմբերի, Փարիզ 367 787

1936

264. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ
1936, 28 փետրվարի, Փարիզ 368 788
265. ՍԱՐԳԻՍ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ
1936, 22 ապրիլի, Փարիզ 369 789
266. ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ
<1936, մայիս, Փարիզ> 371 790
267. ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻՆ
1936, 28 հունիսի, Վենետիկ 372 790
268. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
1936, 29 հուլիսի, Փարիզ 372 791

269. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ
1936, 7 սեպտեմբերի, Վենետիկ 373 791
270. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ
1936, 7 սեպտեմբերի, Վենետիկ 374 792
271. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ
1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ 376 792
272. ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԻՆ
1936, 15 սեպտեմբերի, Վենետիկ 377 792
273. ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆԻՆ
1936, 19 սեպտեմբերի, Վենետիկ 378 793
274. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ
1936, 26 սեպտեմբերի, Վենետիկ 379 793
275. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ
1936, 3 հոկտեմբերի, Վենետիկ 381 794
276. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1936, 5 հոկտեմբերի, Վենետիկ 381 794
277. ԱԶԱՏ ՄԱՐՏԻԿՅԱՆԻՆ
1936, 13 հոկտեմբերի, Վենետիկ 382 795
278. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1936, 13 հոկտեմբերի, Վենետիկ 383 795
279. ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1936, 27 հոկտեմբերի, Աթենք 384 796
280. ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐՅԱՆԻՆ
1936, 26 նոյեմբերի, Կոստանցա 384 796

1937

281. ԳԵՎՈՐԳ ԱԲՈՎԻՆ
<1937, 19 ապրիլի, Երևան> 387 796
282. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1937, 10 մայիսի, Երևան 387 797
283. Վ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆԻՆ
1937, 2 հունիսի, Երևան 388 797
284. ԱՀԱՐՈՆ ՋՈՐԱՆՅԱՆԻՆ
1937, 30 օգոստոսի, Սևան 390 798
285. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ
1937, 30 օգոստոսի, Սևան 391 798

1938

286. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ
1938, 25 օգոստոսի, Ծաղկաձոր 393 799
287. ԳՈՒՐԳԵՆ ԲՈՐՅԱՆԻՆ
1938, 31 օգոստոսի, Ծաղկաձոր 395 800
288. ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻՆ
1938, 23 սեպտեմբերի, Երևան 396 801

1939

289. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ
1939, 12 հունվարի, Երևան 398 801
290. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ
1939, 13 հունվարի, Երևան 398 802
291. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
1939, 3 փետրվարի, Երևան 400 802
292. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1939, 10 փետրվարի, Երևան 401 803
293. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻՆ
1939, 19 ապրիլի, Երևան 402 804
294. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՐՆԵՑՋՈՒԿԻՆ
1939, 19 ապրիլի, Երևան 402 804
295. ՕԼԳԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
1939, 28 մայիսի, Երևան 403 805
296. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
1939, 29 հուլիսի, Ծաղկաձոր 404 806
297. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ
1939, 30 հուլիսի, Ծաղկաձոր 405 806
298. «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ
ՀԱՆՋՆԱԽՄԲԻՆ
1939, 4 օգոստոսի, Ծաղկաձոր 405 806
299. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ
1939, 27 հոկտեմբերի, Մոսկվա 406 807
300. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1939, 16 դեկտեմբերի, Բաքու 407 808

301. ՍԱՔՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
1940, 25 հունվարի, Երևան 408 809
302. ՊԱՀԱՐԵԻՆ
1940, 26 հունվարի, Երևան 409 810
303. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ
1940, 27 փետրվարի, Երևան 411 811
304. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
1940, 7 մարտի, Երևան 412 812
305. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
1940, 24 մարտի, Երևան 413 813
306. ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ
1940, 10 ապրիլի, Երևան 414 813
307. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ
1940, 10 ապրիլի, Երևան 415 814
308. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1940, 17 մայիսի, Երևան 416 814
309. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1940, 18 հունիսի, Քութայիս 417 815
310. ՔՈՒԹԱՅԻՍԻ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀՈՒԲԵԼՅԱՆԻՆ
1940, 18 հունիսի, Քութայիս 418 815
311. ՎՐԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ
1940, 22 հունիսի, Բորժոմ 419 816
312. ԱՐԱՄ ԻՆՃԻԿՅԱՆԻՆ
1940, 24 հունիսի, Բորժոմ 420 816
313. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ
1940, 24 հունիսի, Բորժոմ 422 817
314. ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆԻՆ
1940, 25 հունիսի, Բորժոմ 423 817
315. ՄԱՐՏԻՆ <ՔԱՐԱՄՅԱՆԻՆ>
1940, 29 հունիսի, Բորժոմ 424 818
316. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1940, 2 հուլիսի, Արաքսուման 424 818

317. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1940, 7 հուլիսի, Ախալցխա 425 819
318. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1940, 9 հուլիսի, Ախալցխա 426 819
319. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1940, 13 հուլիսի, Բորժոմ 426 819
320. ՄԱՐՏԻՆ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ
1940, 15 հուլիսի, Բորժոմ 427 820
321. ՄԿՐՏԻՉ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
1940, 15 հուլիսի, Բորժոմ 428 821
322. ՊԱՀԱՐԵԻՆ
<1940, 25-27 հուլիս>, Թիֆլիս 429 821
323. ՊԱՀԱՐԵԻՆ
<1940, 29 հուլիսի, Երևան> 429 821
324. ՀԱՅԿ ԴՌՆՈՅԱՆԻՆ
1940, 6 օգոստոսի, Երևան 430 822
325. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
1940, 12 սեպտեմբերի, Երևան 430 822
326. ՍԱԴՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
1940, 12 սեպտեմբերի, Երևան 431 823
327. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1940, 18 սեպտեմբերի, Երևան 432 824
328. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՄԱՆՅԱՆԻՆ
1940, 27 սեպտեմբերի, Երևան 433 824
329. ՄՈՍԿՎԱՅԻ «ДЕТИЗДАТ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ
1940, 2 հոկտեմբերի, Երևան 434 825
330. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
1940, 15 հոկտեմբերի, Երևան 435 825
331. ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ
1940, 17 հոկտեմբերի, Երևան 436 826
332. ՌՈՒԲԵՆ ՋԱՐՅԱՆԻՆ
1940, 6 դեկտեմբերի, Երևան 437 826
333. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
1940, 8 դեկտեմբերի, Երևան 439 827
334. ՍԱՐԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ
1940, 9 դեկտեմբերի, Երևան 440 827

335. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
1941, 4 հունվարի, Երևան 442 828
336. «ԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
1941, 13 հունվարի, Երևան 442 829
337. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>41, 27 հունվարի, Երևան 443 829
338. ՊԱՀԱՐԵԻՆ
1941, 29 մարտի, Երևան 444 829
339. ԱՇՈՏ ԳՐԱՇԻԻՆ
1941, 2 ապրիլի, Երևան 444 830
340. ՍՈՂՈՄՈՆ ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ
1941, 2 մայիսի, Երևան 446 830
341. ՀՐԱՉՅԱ ՔՈՉԱՐԻՆ
1941, 15 մայիսի, Մոսկվա 448 831
342. ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻՆ
<19>41, 9 հունիսի, Մոսկվա 448 831
343. ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԻՆ
1941, 19 հունիսի, Մոսկվա 450 832
344. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1941, 26 հունիսի, Էսենտուկի 450 833
345. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<19>41, 1 հուլիսի, Էսենտուկի 453 833
346. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1941, 3 հուլիսի, Էսենտուկի 453 833
347. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1941, 10 հուլիսի, Էսենտուկի 454 834
348. ԱՐԱՔՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ
<19>41, 6 օգոստոսի, Երևան 454 834
349. Վ<ԱՐԴԱՆ> ԱՏՐՅԱՆԻՆ
1941, 9 օգոստոսի, Երևան 455 834
350. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՅԱՆԻՆ
1941, 15 հոկտեմբերի, Երևան 455 835

1942

351. <ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ>
1942, 3 հունվարի, Երևան 456 835
352. ԺԵՆՅԱՅԻՆ
1942, 6 հունիսի, Երևան 456 836
353. ՀԱՅԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1942, 8 հուլիսի, Երևան 457 836
354. ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ
1942, 10 հուլիսի, Երևան 458 836
355. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
<19>42, 10 դեկտեմբերի, Երևան 459 837
356. ՊԱՀԱՐԵԻՆ
1942, 30 դեկտեմբերի, Երևան 460 837

1943

357. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 5 մարտի, Երևան 464 838
358. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 3 ապրիլի, Երևան 465 838
359. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 12 ապրիլի, Երևան 465 839
360. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
1943, 12 հուլիսի, Երևան 466 839
361. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1943, 28 հուլիսի, Իրինդ 468 839
362. ՀԱԿՈԲ ԽԱԶԱՏՐՅԱՆՑԻՆ
1943, 16 օգոստոսի, Իրինդ 469 840
363. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<19>43, 22 օգոստոսի, Իրինդ 470 841
364. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 30 օգոստոսի, Երևան 471 841
365. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 31 օգոստոսի, Երևան 472 841
366. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 14 սեպտեմբերի, Երևան 472 842

367. ՆԱԻՐԻ ԶԱՐՅԱՆԻՆ
1943, 23 սեպտեմբերի, Երևան 473 842
368. ԳԵՎՈՐԳ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ
1943, 26 սեպտեմբերի, Երևան 474 842
369. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 1 նոյեմբերի, Երևան 475 843
370. Լ<ԵՎՈՆ> ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ
<19>43, 28 նոյեմբերի, Երևան 476 843
371. ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆԻՆ
1943, 1 դեկտեմբերի, Երևան 477 844
372. Տ<ԻՐԱՆ> ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ
1943, 1 դեկտեմբերի, Երևան 478 845
373. ՊԱՀԱՐԵԻՆ
1943, 29 դեկտեմբերի, Երևան 479 846
374. ԿՈՆՍՏԱՆՏԻՆԵ ԳԱՄՍԱԽՈՒՐԴԻԱՅԻՆ
1943, 29 դեկտեմբերի, Երևան 480 846
375. ՄԱԹԵՎՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>43, 29 դեկտեմբերի, Երևան 481 846

1944

376. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>44, 31 մարտի, Երևան 483 847
377. Լ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻՆ
<19>44, 5 մայիսի, Երևան 483 847
378. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ
1944, 4 հուլիսի, Երևան 484 847
379. ՌՈՒԲԵՆ ԳՅԱՆՋԵՑՅԱՆԻՆ
1944, 14 հուլիսի, Երևան 485 848
380. ԽՈՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
<19>44, 8 օգոստոսի, Վաղարշապատ 486 848
381. ԱՇՈՏ <ԳՐԱՇԻԻՆ>
1944, 22 օգոստոսի, Երևան 486 848
382. ՀՈՎԻԿ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ
1944, 29 օգոստոսի, Երևան 488 849
383. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
1944, 15 <սեպտեմբերի>, Լենինական 488 849

384. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
1944, 20 սեպտեմբերի, Լենինական 489 850
385. ՍԵԴԱ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
1944, 27 սեպտեմբերի, Երևան 490 850
386. ԿԱՐԱՊԵՏ <ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ>
<19>44, 19 հոկտեմբերի, Երևան 491 850
387. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
1944, 28 հոկտեմբերի, Երևան 491 851
388. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>44, 11 դեկտեմբերի, Երևան 492 851

1945

389. ՊԱՀԱՐԵԻՆ
<1945, փառվար, Երևան> 493 851
390. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ
1945, 29 մարտի, Երևան 493 852
391. ԼՈՒՍԻԿ ՍԱՐՅԱՆԻՆ
<1945, 27 մայիսի, Երևան> 494 853
392. «ԺՈՂՈՎՈՒՐԴ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
1945, 10 հուլիսի, Երևան 495 853
393. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
<19>45, 11 օգոստոսի, Երևան 496 854
394. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՅԱՆԻՆ
1945, 1 հոկտեմբերի, Երևան 497 854
395. ՌՈՒԶԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
<19>45, 28 դեկտեմբերի, Երևան 497 855

1946

396. ՋԱՊԵԼ ՊՈՅԱՃՅԱՆԻՆ
1946, 6 հունվարի, Երևան 498 855
397. ԹԲԻԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԹԻՎ 5 ԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ
1946, 8 հունվարի, Երևան 500 856
398. ԳԵՎՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ
1946, 3 ապրիլի, Երևան 501 857

399. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ
1946, 20 ապրիլի, Երևան 501 857
400. ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆԻՆ
1946, 6 հունիսի, Երևան 504 858
401. ՀՈՎՍԵՓ ԿՈՒՍԻԿՅԱՆԻՆ
<19>46, 12 հուլիսի, Երևան 505 858
402. ՄԱՇԱ <ՄԻՐՋԱՅԱՆԻՆ>
1946, 10 հոկտեմբերի, Երևան 505 859
403. <ԴԱՆԻԵԼ> ԴՋՆՈՒՆՈՒՆ
1946, 31 հոկտեմբերի, Երևան 506 860
404. ԳԵՎՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՋՈՐԵՔՋՅԱՆԻՆ
1946, 15 նոյեմբերի, Երևան 507 860
405. ԱՐՄԵՆ ԳՈՒԼԱԿՅԱՆԻՆ
<1946, Երևան> 507 860

1947

406. Վ. ՓԱՓԱԶՅԱՆԻՆ
1947, 9 հունվարի, Երևան 508 861
407. ԽԱՅՐԷԼԴԻՆ ԷԼ ԱՍԱԴԻԻՆ
1947, 12 մարտի, Երևան 509 861
408. ՍԱՀԱԿ ՄԱՆՎԵԼՅԱՆԻՆ
1947, 29 մարտի, Երևան 510 861
409. ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ
1947, 21 ապրիլի, Երևան 511 862
410. Տ<ԻԳՐԱՆ> ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
1947, 29 օգոստոսի, Երևան 512 863
411. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
1947, 10 սեպտեմբերի, Երևան 516 864
412. Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
1947, 7 հոկտեմբերի, Երևան 516 865
413. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ
1947, 29 դեկտեմբերի, Երևան 517 865

1948

414. ԱՐԵՎ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
1948, 26 ապրիլի, Երևան 519 866

415. Ա.ՇԻԿ Ղ.Ա.ՋԱՐՅԱՆԻՆ
1948, 1 հոկտեմբերի, Երևան 519 866
416. ՀՄԱՅԱԿ ՍԻՐԱՍԻՆ
1948, 26 հոկտեմբերի, Սոչի 520 867
417. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ
1948, 24 նոյեմբերի, Երևան 521 867
418. ՀԱԿՈԲ ԽԱ.ՋԱ.ՏՐՅԱՆՑԻՆ
1948, 4 դեկտեմբերի, Երևան 521 868
419. Վ<Ա.ՂԻՆԱԿ> ՄՌԱՎՅԱՆԻՆ
1948, 7 դեկտեմբեր, Երևան 522 868

1949

420. ԻՎ.Ա.Ն ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ
<19>49, 14 փետրվարի, Երևան 523 869
421. ՀԱԿՈԲ ԽԱ.ՋԱ.ՏՐՅԱՆՑԻՆ
1949, 16 փետրվարի, Երևան 523 869
422. ՄԵՐԻ <ՍԱ.ՂՅԱՆԻՆ>
1949, 15 մարտի, Երևան 524 869
423. ՀԱԿՈԲ ԽԱ.ՋԱ.ՏՐՅԱՆՑԻՆ
1949, 8 հունիսի, Երևան 524 870
424. ՍՈՖՅԱ ԻՍԱ.ՀԱԿՅԱՆԻՆ
1949, 15 սեպտեմբերի, Երևան 525 870
425. ԳԵՎՈՐԳ ԿԱ.ԹՈՂԻԿՈՍ ՋՈՐԵ.ՔՋՅԱՆԻՆ
1949, <24 սեպտեմբերի>, Երևան 526 871
426. Վ.Ա.ՐԴԱՆ Ա.ՏՐՅԱՆԻՆ
<19>49, 4 հոկտեմբերի, Երևան 526 872
427. Վ.Ա.ՀԱՆ ՄԱ.ՄԻԿՈՆՅԱՆԻՆ
1949, 29 հոկտեմբերի, Երևան 527 872
428. ՎԵՍՊԵՐԻՆ
<1949, աշուն, Երևան> 528 873

1950

429. Ա.ԲԱ.Ս ԻՍԱ.ՀԱԿՅԱՆԻՆ
1950, 12 սեպտեմբերի, Կիսլովոդսկ 530 874

430. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
1950, 20 սեպտեմբերի, Երևան 531 875
431. ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՈՆՑՈՒՆ
1950, 21 սեպտեմբերի, Երևան 532 875
432. ՄԱՐԻԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ
<1950, սեպտեմբեր, Երևան> 532 876
433. ԱԲԱՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1950, 5 նոյեմբերի, Երևան 533 876
434. ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
1950, 9 նոյեմբերի, Երևան 534 877
435. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1950, 2 դեկտեմբերի, Երևան 534 877

1951

436. ԷԴՎԱՐԴ ԱՂԱՅԱՆԻՆ
1951, 31 մայիսի, Երևան 536 878
437. ԻՎԱՆ ԵՆԻԿՈԼՈՊՈՎԻՆ
1951, 13 հունիսի, Երևան 536 878
438. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ
1951, 18 հունիսի, Երևան 537 879
439. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
<1951, հունիս, Երևան> 538 880
440. ԱՆՏՈՆ ԿՈՒՋՅԱՆԻՆ
1951, 3 հուլիսի, Երևան 538 880
441. ԼԵՎՈՆ ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿԻՆ
1951, 3 հուլիսի, Երևան 539 881
442. ՀԵՂԻՆԵ <ՇԻՐԱԶՅԱՆԻՆ>
1951, 23 հուլիսի, Կիսլովոդսկ 540 882
443. ՄԱՐԳԱՐ ԴԱՎԹՅԱՆԻՆ
1951, 2 օգոստոսի, Կիսլովոդսկ 541 882
444. ՀՄԱՅԱԿ ՍԻՐԱՍԻՆ
1951, 28 օգոստոսի, Կիսլովոդսկ 543 883
445. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
1951, 3 սեպտեմբերի, Կիսլովոդսկ 544 884
446. ՎԱՐԴԱՆ ԱՏՐՅԱՆԻՆ
1951, 9 նոյեմբերի, Երևան 545 884

447. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ
1951, 27 նոյեմբերի, Երևան 546 884

1952

448. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ
<19>52, 14 հունվարի, Երևան 548 885
449. ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆԻՆ
1952, 14 հունվարի, Երևան 549 886
450. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
1952, 17 հունվարի, Երևան 550 886
451. ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ
1952, 1 փետրվարի, Երևան 551 887
452. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ
1952, 2 փետրվարի, Երևան 551 887
453. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ
1952, 15 մարտի, Երևան 553 889
454. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ
1952, 3 ապրիլի, Երևան 554 890
455. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԻՈՆԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ
1952, 17 մայիսի, Երևան 554 890
456. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ
1952, 26 մայիսի, Երևան 555 890
457. ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
1952, 6 հուլիսի, Երևան 558 891
458. ԲԵՐՍԱԲԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1952, 4 օգոստոսի, Երևան 559 891
459. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐՔՇԵՅԱՆԻՆ
1952, 5 օգոստոսի, Երևան 560 892
460. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՌԱՋԱԴԻՄԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
15-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ
1952, 26 օգոստոսի, Երևան 561 892
461. ԳԱԲՐԻԵԼ ՄԵՀՐԱԲՅԱՆԻՆ
1952, 12 սեպտեմբերի, Երևան 561 893
462. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
1952, 17 սեպտեմբերի, Երևան 564 893

463. ՄԱՄԻԿՈՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ
1952, 12 հոկտեմբերի, Երևան 564 894
464. ՍԱՌՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
1952, 22 հոկտեմբերի, Երևան 565 894
465. ԱՐՇԱԿ ՋՈՊԱՆՅԱՆԻՆ
1952, 30 դեկտեմբերի, Երևան 567 895

1953

466. ԿԱՐԱՊԵՏ ՍԻՏԱԼԻՆ
1953, 3 հունվարի, Երևան 568 895
467. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
1953, 12 հունվարի, Երևան 569 896
468. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐԴՇԵՑՅԱՆԻՆ
1953, 12 հունվարի, Երևան 570 896
469. ԲԱԴՎԻ «ԿՈՄՈՒՆԻՍՏ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
1953, 3 մարտի, Երևան 571 897
470. ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՆՉՅԱՆԻՆ
1953, 28 մարտի, Երևան 571 897
471. ԽԱՉԵՐԵՍ ՓՈՐԴՇԵՑՅԱՆԻՆ
<19>53, 22 հունիսի, Երևան 571 897
472. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1953, 3 օգոստոսի, Երևան 573 898
473. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1953, 10 սեպտեմբերի, Երևան 574 898
474. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1953, 23 սեպտեմբերի, Երևան> 574 899
475. ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ
1953, 27 հոկտեմբերի, Երևան 575 899
476. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
<1953> 576 899
477. ԵԿԱՏԵՐԻՆԱ ԴՈՒՐՅԱՆ-ԱՐՄԵՆՅԱՆԻՆ
1953 ..... 577 900

1954

478. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1954, 14 փետրվարի, Երևան 578 900

479. ՊԱՎԼՈ ՏԻԶԻՆԱՅԻՆ
1954, 13 հուլիսի, Երևան 579 902
480. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
<19>54, 29 հուլիսի, Երևան 580 902
481. ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
1954, 29 հուլիսի, Երևան 581 903
482. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1954, 5 օգոստոսի, Երևան 581 903
483. ՊԱՎԼՈ ՏԻԶԻՆԱՅԻՆ
1954, 7 օգոստոսի, Երևան 582 904
484. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1954, 5 սեպտեմբերի, Դիլիջան 582 904
485. ՀԱՄԱԶԱՍՊ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
1954, 10 սեպտեմբերի, Դիլիջան 583 905
486. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ <ԹՈՒՐՇՅԱՆԻՆ>
1954, <20 սեպտեմբերի>, Երևան 583 905
487. ՀԱՄԱԶԱՍՊ ԴԱԲԱՂՅԱՆԻՆ
1954, 20 հոկտեմբերի, Երևան 584 905
488. ՀԱԿՈԲ <ՆԱԶԱՐՅԱՆԻՆ>
<1954, հոկտեմբեր, Երևան> 584 906
489. ՎԱՐԴԳԵՍ <ՀԱՄԱԶԱՍՊՅԱՆԻՆ>
<1954, Երևան> 586 907

1955

490. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
1955, 26 մարտի, Երևան 588 907
491. ԵՂԻՇԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
1955, 11 ապրիլի, Երևան 588 908
492. ԴԱՐՈՒՀԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ
1955, 12 ապրիլի, Երևան 589 908
493. ՆԻՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ
1955, 12 ապրիլի, Երևան 590 909
494. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
<1955, ապրիլ, Երևան> 590 909
495. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1955, 3 մայիսի, Երևան 591 910

496. ԱՂԱՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ
1955, 1 հունիսի, Երևան 592 910
497. ԲԱԲԼՈՒՄՅԱՆԻՆ
<19>55, 23 հունիսի, Երևան 592 911
498. ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1955, 29 հունիսի, Երևան 593 911
499. ԱՇԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
1955, 2 հուլիսի, Երևան 593 911
500. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1955, 6 հուլիսի, Երևան 594 912
501. ՍՈՖՅԱ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1955, 5 օգոստոսի, Երևան 595 912
502. ԳԵ ԲԱՈ-ՑՅՈՒԱՆԻՆ
1955, 8 սեպտեմբերի, Երևան 595 912
503. Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
1955, 22 սեպտեմբերի, Երևան 596 913
504. ՌԱԴԻՈՆԱՄԱԿ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ
1955, 29 հոկտեմբերի, Երևան 597 913
505. ԱՆԱՍՏԱՍ ՄԻԿՈՅԱՆԻՆ
1955, 24 նոյեմբերի, Երևան 598 914
506. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ
<1955, դեկտեմբեր> 599 914
507. ՍԻՐՎԱՐԴԻՆ
<1955> 599 914
508. Ա.<ՆԴՐԱՆԻԿ> ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
<1955> 600 915

1956

509. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ
1956, 12 հունվարի, Երևան 601 915
510. ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ
1956, 12 հունվարի, Երևան 602 916
511. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1956, 20 հունվարի, Երևան 603 916
512. ԻՈԱՆՆԱ ԲՐՅՈՒՍՈՎԱՅԻՆ
1956, 14 մայիսի, Երևան 604 917

513. ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻՆ
<19>56, 25 հուլիսի, Երևան 604 917
514. ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
1956, 12 օգոստոսի, Երևան 605 918
515. ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ
1956, 14 դեկտեմբերի, Երևան 605 918
516. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՆ
1956, 25 դեկտեմբերի, Երևան 606 919
517. Գ<ՈՒՐԳԵՆ> ՋՈՒԼԱԽՅԱՆԻՆ
<1956> 608 919
518. ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ
<1956> 608 919

1957

519. ԼԵՎՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ
1957, 12 մարտի, Երևան 610 920
520. ՀԱՅՊԵՏՀՐԱՏԻ ՏՆՕՐԵՆԻՆ
1957, 26 հունիսի, Երևան 610 920
521. «ԵՐԵՎԱՆ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
1957, 26 հունիսի, Երևան 611 921
522. Գ<ԵՎՈՐԳ> ԳԱՆՁԱՆԱԿՅԱՆԻՆ
<1957, հունիս, Երևան> 612 921
523. ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ
1957, 26 հուլիսի, Երևան 613 922
524. ԳԵՈՐԳԻ <ՍՎԻՐԻԴՈՎԻՆ>
1957, 27 օգոստոսի, Երևան 614 922
525. ԼԵՎՈՆ ՄԵՍՐՈՊԻՆ
1957, 6 սեպտեմբերի, Երևան 614 922
526. ՄԱՔՍԻՄ ՌԻԼՍԿՈՒՆ
1957, սեպտեմբեր, Երևան 616 924
527. Գ<ՈՒՐԳԵՆ> ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ
1957, 2 հոկտեմբերի, Երևան 616 925
528. ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ
1957 ..... 617 925
529. Զ<ԱՎԵՆ> Վ<ԱՐԴԱՆՅԱՆԻՆ>
1957 ..... 617 925

ԱՆԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿՆԵՐ

530. ԱՐՄԵՆՈՒՀՈՒՆ 619 926
531. ԱՆԺԻԿԻՆ 619 926
532. ԻՎԱՆ ԿԱՆԴԱՐՅԱՆԻՆ
Վենետիկ 619 927
533. <ՎԻԳԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ>
Շաֆհաուզեն 620 927

ՀԱՎԵԼՈՒՄ XIII ՀԱՏՈՐԻ

1. ՀՅԴ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ
1900, 14 սեպտ<եմբերի>, Քյուսնախտ 621 927
2. ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ
<1901>[1], 22 փետր<վարի>, Վիեննա 622 928
3. «ԴՐՈՇԱԿ»Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ
1901, 16 մարտի, Վիեննա 634 930

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 639

«ԵՐԿՈՒ ՔԱՐԻ ԱՐԱՆՔՈՒՄ»
(Վերջաբան) – ԱՎԻԿ ԻՍԱՀԱԿՅԱՆ 932

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ 1050

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ
ՏԱՍՆՋՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ ՏԱՍՆՋՈՐՍԵՐՈՐԴ

ՆԱՄԱԿՆԵՐ
(1924–1957)

Համակարգչային էջադրումը
ԳՈՒՐԳԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

Պատվեր № 116 :
Ստորագրված է տպագրության 15.03.2021:
Չափս՝ 60×84 1/16: Տպագրական 71 մամուլ + 2 մամուլ ներդիր:
Տպաքանակ՝ 500:
Գինը՝ պայմանագրային:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ հրատարակչություն
Թումանյան 12, 3,
(37410) 52 08 48
56 08 41
info@editprint.am

[4'000m.]

II
109514